Հավելված N 2
ՀՀ կառավարության 2019 թվականի
մայիսի 16 -ի N 650 -Լ որոշման

# Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN | ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ |
|---|---|
| | **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** |
| **1** | **<u>1.1 «Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող պետական քաղաքականության հիմնական առաջնահերթությունների սահմանման, ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման, այդ թվում՝ սոցիալական պաշտպանության ոլորտի տարբեր բնագավառներում վարվող քաղաքականությունները փոխկապակցելու նպատակով անհրաժեշտ է մշակել աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ռազմավարություն: Սույն միջոցառման մշակման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշման հավելվածի 4.2-րդ՝ «Աղքատության հաղթահարումը, սոցիալական պաշտպանությունը և ժողովրդագրությունը» բաժնի պահանջներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**<br>Աշխատանքի և սոցիալական պաշտպանության տարբեր բնագավառներում իրականացվող բարեփոխումների համատեքստում, հաշվի առնելով նաև, որ ՀՀ պետական բյուջեի ծախսերի շուրջ 30 տոկոսն ուղղվում է սոցիալական պաշտպանության ոլորտին, արդիական է սոցիալական պաշտպանության ոլորտում առաջիկա տարիների տեսլականի՝ մեկ միասնական ռազմավարության առկայության խնդիրը, որը միաժամանակ համահունչ կլինի երկրում՝ սոցիալ-տնտեսական և այլ ոլորտներում վարվող քաղաքականությունների հիմնական ուղղություններին:<br>Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի տարբեր բնագավառներում վարվող քաղաքականությունները առավել արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է նաև ապահովել դրանց փոխկապակցվածությունը՝ բացառելով տրամադրվող ծառայությունների կրկնությունները և ապահովելով դրանց առավել հասցեականությունն ու որակը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ռազմավարությամբ կամրագրվեն առաջիկա 5 տարիների սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման հիմնական գերակայությունները/ առաջնահերթությունները, նպատակները, դրանց հասնելու համար անհրաժեշտ առանցքային բարեփոխումներն ու քաղաքականության գործիքները, ինչպես նաև առկա խոչընդոտները և հիմնական ռիսկերը:<br>Ռազմավարությունը սոցիալական պաշտպանության առանձին բնագավառներին առնչվող մանրամասներ չի ներառի, սակայն ապահովելու է բավարար ուղենիշեր ժողովրդագրության, աշխատանքի և զբաղվածության, կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության բնագավառներում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց, կանաց և երեխաների, տարեցների հիմնահարցերին առնչվող ծրագրերի մշակման ժամանակ ընդհանուր տրամաբանությամբ առաջնորդվելու համար:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախագծով ակնկալվում է ունենալ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլոտի զարգացմանն ուղղված համապարփակ փաստաթուղթ, որը հիմք կհանդիսանա սոցիալական պաշտպանության առանձին բնագավառներում փոխկապակցված և արդյունավետ քաղաքականության իրականացման համար: |
| 2 | **<u>2.1 «Տարեցների խնամքի ապաինստիտուցիոնալացման և այլընտրանքային համայնքային ծառայությունների զարգացման հայեցակարգը և դրա իրականացումն ապահովելու միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Սույն որոշման նախագծի ընդունումը բխում է ՀՀ Ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն |

որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4.2. գլխի՝ «Աղքատության հաղթահարումը, սոցիալական պաշտպանությունը և ժողովրդագրությունը» դրույթներից:

Նախագծի նպատակն է ստեղծել բարենպաստ և առողջ միջավայր տարեց մարդկանց համար, ապահովելով նրանց արժանապատիվ ծերացման գործընթացը՝ միաժամանակ իրականացնելով խնամքի ինստիտուցիոնալ ծառայություններից աստիճանաբար և անցնցում անցում համայնքային ծառայությունների մատուցմանը, շեշտադրելով համայնքի և ընտանիքի դերը տարեցի կյանքում, ինչպես նաև տարեցի մասնակցությունը համայնքային կյանքում և որոշումների կայացմանը:

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածն ամրագրում է, որ տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակի ապահովումը տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներից մեկն է և պետությունը պարտավոր է իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել նշված հոդվածում ամրագրված խնդիրների իրականացման համար:

Սույն նախագիծը մշակելիս հաշվի են առնվելու նաև հետևյալ միջազգային փաստաթղթերի հիմնարար դրույթները, որոնց միացել է մեր երկիրը՝

1)ՄԱԿ-ի «Ծերության խնդիրների վերաբերյալ Մադրիդի միջազգային գործողությունների պլանի ռեգիոնալ իրականացման ռազմավարությունը» (2002թ.), որն ամրագրում է ծերացման խնդիրներին առնչվող՝ մասնակից երկրների համար 10 հանձնառություն:

2)Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Ծերացման և առողջության զեկույցը» (2015 թ.)

3)Վիեննայի նախարարների հռչակագրի հիմնական նպատակները (2012թ.)

4) ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Կայուն հասարակություն բոլոր տարիքի անձանց համար. երկարակեցության ներուժի իրացումը» խորագրով նախարարական համաժողովում ընդունված փաստաթուղթ (Լիսաբոն, 2017թ.), որտեղ արձանագրված է, որ առաջադեմ երկրներում ծերացման հիմնահարցերի ոլորտում գրանցված հաջողությունները հիմնականում պայմանավորված են հետևյալ ուղղություններով կատարված աշխատանքներով,

- Տարեց անձանց համար առողջապահական ծառայությունների որակի և մատչելիության ապահովում.
- Տարեց անձանց կրթության ապահովում՝ ողջ կյանքի ընթացքում.
- Տարեց անձանց ավելի երկար աշխատանքային կյանքի ապահովում.
- Սոցիալական այլընտրանքային ծառայությունների (տնային խնամք, ցերեկային կենտրոններ և այլն) համակարգի ներդնում:

Միաժամանակ, 2014թ. փետրվարի 19-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունվել է Տարեցների իրավունքների պաշտպանության խթանման վերաբերյալ առաջարկ-հանձնարարականը (CM Recommendation (2014) 2), որով վերահաստատվում է տարեցների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, և անդամ պետություններին առաջարկվում են մի շարք միջոցառումներ տարիքային խտրականության դեմ պայքարելու համար: Փաստաթղթում նշված են տարեցների առջև ծառացած հիմնական մարտահրավերները և առաջարկվում հետևյալ քայլերը՝ խտրականության բացառում, ինքնավարության և մասնակցության ապահովում, բռնությունից և չարաշահումից պաշտպանություն, սոցիալական պաշտպանություն և զբաղվածություն, խնամք և արդարադատության իրականացում:

Վերը նշված փաստաթղթերը հիմնվում են տարեցների առողջության և ակտիվ ապրելակերպի իրավունքի վրա, ընդգծում են տարեցների ներուժն ու փորձը և նրանց պոտենցիալ ներդրումները՝ անկախ ֆիզիկական և մտավոր խոչընդոտներից:

**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ըստ վիճակագրական տվյալների, Հայաստանի Հանրապետության մշտական բնակչությունը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2 965,1 հազ. մարդ, 63 տարին լրացած անձանց թիվը 328 410 է (որից կին՝ 243 071): Տարիքային կենսաթոշակառուները կազմում են բնակչության ընդհանուր թվաքանակի ավելի քան 11%-ը : Կյանքի միջին տևողությունը 75,4 տարի է (կանանց համար՝ 78,7, տղամարդկանց համար՝ 71,9): Աշխատող տարիքային կենսաթոշակառուների թիվը 47 789 է, կամ նրանց ընդհանուր թվի 14,5 %-ը:

Հայաստանի Հանրապետությունը, ինչպես և ողջ աշխարհը, կանգնած է բնակչության ծերացման և դրա հետևանքները հաղթահարելու մարտահրավերի առջև: Եթե տարիներ առաջ մեր պետությունը իր պարտավորությունն էր համարում միայն տարեցների սոցիալական ու նյութական կարիքները բավարարելը, ապա այսօր տարեց բնակչության պահանջմունքների սպեկտրը դիտարկվում է ավելի բազմաշերտ և բազմազան՝ պայմանավորված ժամանակակից զարգացած երկրների փորձի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության մեծացման, մարդկանց գիտակցական մակարդակի բարձրացման և այլ գործոնների հետ: Այս համատեքստում, մենք խնդիր ունենք փոխելու տարեցերի նկատմամբ մեր մարտավարությունը և մինչ այժմ առաջնահերթ համարվող՝ տարեցների սոցիալական պաշտպանությունից ու խնամքից անցում կատարել (պահպանելով, իհարկե, ըստ անհրաժեշտության, նաև այդ բաղադրիչը) դեպի առողջ և ակտիվ կենսակերպ վարելով ծերացմանն ուղղված գործողությունների իրականացում, խնամքի ավանդական հաստատություններից՝ դեպի համայնքային ծառայություններ, ինչը հնարավոր կդարձնի, որ մարդիկ հասկանան, զարգացնեն և օգտագործեն իրենց

| | |
|---|---|
| | ֆիզիկական, սոցիալական և մտավոր ներուժը ողջ կյանքի ընթացքում ու ըստ իրենց նախասիրությունների և հնարավորությունների՝ մասնակցեն հասարակական կյանքին և որոշումների կայացմանը:<br>Ներկա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գործում է տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող (այդ թվում՝ հոգեկան առողջության կամ մտավոր խնդիրներ ունեցող) անձանց շուրջօրյա խնամքի ծառայություն մատուցող 12 հաստատություն (տուն-ինտերնատ, խնամքի կենտրոն, խնամքի տուն), այդ թվում 7-ը՝ ոչ պետական: Բոլոր հաստատություններում միասին բնակվում է շուրջ 1390 մարդ (որից՝ ոչ պետական հաստատություններում 180 մարդ), իսկ տնային պայմաններում սպասարկվում է ավելի քան 3800 մարդ, իսկ ցերեկային կենտրոններ հաճախում է շուրջ 2000-ը: Միաժամանակ 150 տարեց ընդգրկված է Լոռու և Շիրակի մարզերի 10 համայնքներում 2018թ. ստեղծված ակտիվ երկարակեցության խմբերում, որոնք ակտիվորեն զբաղվում են համայնքի խնդիրներով, օգնում համայնքի խնամքի կարիք ունեցող տարեցներին: Յուրաքանչյուր խումբ ունի իր լիդերը, իսկ նրանց աշխատանքը համակարգվում է մարզային համակարգողի կողմից:<br>Անկախ այն հանգամանքից, որ ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում վերջին տարիներին իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, միջոցառումներ, ընդունվել՝ իրավական ակտեր, դեռևս առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ և նոր մարտահրավերներ.<br>1) գործող սոցիալական ծառայությունների տրամադրման ներկա համակարգի կողմից՝ տարեցների սոցիալ-հոգեբանական, իրավական, առողջապահական, բնակարանային ապահովության կարիքներն ամբողջ ծավալով բավարարելու անկարողությունը.<br>2) տարեցներին տրամադրվող սոցիալական ծառայությունների աշխարհագրորեն անհամաչափ բաշխվածությունը (դրանք հիմնականում տեղակայված են քաղաքային համայնքներում և սպասարկում են սահմանափակ թվով տարեցների).<br>3) Հայաստանում տարեցների ակտիվության ցուցանիշների ամբողջական հավաքագրման մեխանիզմի բացակայությունը. (ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի վիճակագրական բաժանմունքի կողմից տարածաշրջանի երկրների տարեցների ակտիվության իրավիճակի գնահատման համար առաջարկված 22 հիմնական ցուցանիշներով բնութագրվում են տարեցների զբաղվածության մակարդակը, նրանց մասնակցությունը հասարակական կյանքին, անկախ, առողջ և անվտանգ կյանքը, տարեցների ակտիվ կենսակերպ վարելու համար հնարավորություններն ու բարենպաստ միջավայրը, սակայն Հայաստանում ներկայումս հավաքագրվում է ընդամենը 11 ցուցանիշ: Քանի որ ժամանակակից հասարակություններում տարեցների ակտիվության ցուցանիշները համարվում են անհրաժեշտ գործիք տարեց մարդկանց ներուժի չափման համար, ուստի Հայաստանում բացակայող ցուցանիշները խոչընդոտ են հանդիսանում տարեցների ակտիվությունը լիարժեք գնահատելու համար).<br>4) տարեցներին մատուցվող սոցիալական և առողջապահական ծառայությունների ոչ բավարար որակը և մատչելիությունը.<br>5) տարեցների՝ սեփական իրավունքների և գործող ծառայությունների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը.<br>6) տարեցների՝ առավել երկար աշխատանքային կյանքի ապահովման բավարար հիմքերի բացակայությունը.<br>7) պետական և համայնքային մակարդակներում որոշումների կայացմանը տարեցների մասնակցության ապահովման մեխանիզմների բացակայությունը.<br>8) տարեցներին համայնքային պատշաճ ծառայություններ մատուցելու համար պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստացվող ֆինանսավորման ոչ բավարար լինելը.<br>9) ծառայությունների պատվիրակման համար ռեսուրսների և «մրցակցային» մեխանիզմների անբավարար լինելը և այլն.<br>10) համայնքային և այլընտրանքյաին ծառայությունների անբավարար լինելը.<br>11) ծերաբանության և ծերաբուժության (գերիատրիա, գերոնտոլոգիա) ինստիտուտների անկատարությունը և այլն:<br>**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրները համակարգային փոփոխություններն ու հայեցակարգային մոտեցումների նորովի սահմանումն են, որին միտված է սույն նախագծի ընդունումը: Մասնավորապես, այսօր արդեն հրամայական է խնամքի ապաինստիտուցիոնալացումը և դրա փոխարինումը այլընտրանքային համայնքային ծառայություններով: Սույն նախագծով հաստատվող հայեցակարգը կտա մի շարք հարցերի պատասխանը: Միաժամանակ պետք է ամրագրել այն փաստը, որ համայնքային ծառայությունների զարգացումը մի պետական մարմնի մենաշնորհ չէ, այս գործընթացում պետք է ներգրավված լինեն պետական և տարածքային կառավարման տարբեր մարմիններ, ինչպես նաև իմպերատիվ միջոցներով շատ արագ փոխել տասնամյակներով գործող խնամքի հաստատությունները նույնպես հնարավոր և իրատեսական չէ, քանի որ այսօր դեռ չկան համարժեք ծառայությունները և ռեսուրսները: Միջազգային փորձը ցույց է տվել, որ նման գործընթացը պետություններում իրականացվում է տասնյակ տարիներով (օրինակ՝ Հունգարիայում, Չեխիայում, Բուլղարիայում ապաինստիտուցիոնալացման գործընթացն իրականացվել է մոտ 20 տարում): Ուստի սույն հայեցակարգը առաջին հերթին կապահովի տարեցների խնամքի ապաինստիտուցիոնալացման գործընթացի իրավական կողմը՝ սահմանելով մոդելներ և մեխանիզմներ |

| | |
|---|---|
| | համայնքներում ներդրվող այլընտրանքային տարբեր ծառայությունների մատուցման համար, այդ թվում՝ ֆինանսավորման տարբեր մոդելներ, նաև կամրագրվեն հստակ գործողություններ և կատարման ժամկետներ առաջիկա հինգ տարիների համար:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Սույն իրավական ակտի ընդունման արդյունքում, ակնկալվում է, որ<br>1)յուրաքանչյուր տարի, խնամքի հաստատությունների կարողությունների և շահառուների կարիքների անհատական գնահատման հիման վրա շահառուների առնվազն 5%-ը կվերադառնա ընտանիք (ի դեպ՝ ընտանիք ունեցող շահառուները կազմում են շուրջօրյա խնամքի հաստատություններում բնակվողների ավելի քան 50%-ը), առնվազն 10%-ը կօգտվի համայնքային այլընտրանքային ծառայություններից: Ակնկալվում է, որ յուրաքանչյուր տարի առնվազն 3 համայնքում կմատուցվեն այլընտրանքային ծառայություններ նվազագույնը 70 տարեցի: Գործընթացի սկզբնական փուլում այն կվերաբերի միայն շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի հաստատությունների խնամվողներին: Արդյունքում 5 տարվա ընթացքում ընդհանուր տիպի հաստատություններում բնակվող 640 շահառուից ընտանիք կվերադառնա կամ համայնքային տարբեր ծառայություններից կօգտվի 480 մարդ:<br>2)Կսահմանվեն և կներդրվեն ծառայությունների ֆինանսավորման այլընտրանքային մոդելներ (պետություն-համայնք-մասնավոր-հասարակական կազմակերպություն-շահառու և այլ ձևաչափերով համագործակցության շրջանակներում):<br>3)Կզարգանան և կհզորանան համայնքի կարողություններն ու ռեսուրսները՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման համատեքստում: |
| 3 | **3.1. Յուրաքանչյուր տարի պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի քննարկման արդյունքներով նվազագույն աշխատավարձի բարձրացման համապատասխան հնարավորության առկայության պարագայում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշման դրույթներից, որի 4-րդ «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» բաժնի 4.2-րդ «Աղքատության հաղթահարումը, սոցիալական պաշտպանությունը և ժողովրդագրությունը» ենթաբաժնի 8-րդ պարբերությամբ նախատեսված է, որ արժանապատիվ աշխատանքի իրավունքի իրականացման նպատակով, հաշվի առնելով երկրի մակրոտնտեսական ցուցանիշները, կիրականացվի նվազագույն ամսական աշխատավարձի շարունակական բարձրացում:<br>Նվազագույն աշխատավարձի բարձրացումը բխում է նաև ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով (Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիա, Աշխատանքի միջազգային կազմակերպության N 131 կոնվենցիա) ստանձնած պարտավորություններից:<br>«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման նպատակը նվազագույն աշխատավարձի չափի բարձրացման համար համապատասխան իրավական հիմքի ապահովումն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանում աշխատավարձերի պետական կարգավորման հիմնական գործիքը նվազագույն աշխատավարձն է, որը սահմանվում է օրենքով՝ Հայաստանի ողջ տնտեսության համար: Նվազագույն աշխատավարձը պետության կողմից սահմանվող նվազագույն երաշխիք է, որը պետք է ապահովի աշխատողի և աշխատողի ընտանիքի անդամների կենսագործունեության համար բավարար եկամուտ:<br>2015թ. հուլիսի 1-ից մինչ օրս նվազագույն աշխատավարձի չափի փոփոխություն տեղի չի ունեցել: Ներկայումս այն կազմում 55000 դրամ, որը բարձր է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ հաշվարկված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից (2018թ. 4-րդ եռամսյակում կազմել է 44 199.2 դրամ), սակայն ցածր է առողջապահության նախարարության կողմից մշակված պարենային զամբյուղի հիման վրա հաշվարկվող նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից (2018թ. 4-րդ եռամսյակում կազմել է 61 113.6 դրամ):<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթների համաձայն՝ երկրի մակրոտնտեսական իրավիճակից ելնելով, ՀՀ պետական բյուջեի միջնաժամկետ ծախսերի ծրագրերի շրջանակներում նվազագույն աշխատավարձի չափի բարձրացման հնարավորությունը քննարկելուց և համապատասխան պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում նվազագույն աշխատավարձի չափի բարձրացում նախատեսելուց հետո՝ մշակել «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: |

| | |
|---|---|
| | **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նվազագույն աշխատավարձի բարձրացում, ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի՝ նվազագույն աշխատավարձի բարձրացման վերաբերյալ դրույթների, ինչպես նաև ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի դրույթների ապահովում, զբաղված անձանց շրջանում աղքատության կրճատում, նվազագույն և միջին աշխատավարձերի միջև հարաբերակցության նվազում, բնակչության կենսամակարդակի բարձրացում: |
| 4 | **<u>4.1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի բարեփոխումների հայեցակարգի նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 4-րդ «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» բաժնի 4.2-րդ «Աղքատության հաղթահարումը, սոցիալական պաշտպանությունը և ժողովրդագրությունը» ենթաբաժնի 8-րդ պարբերությամբ նախատեսված է, որ արժանապատիվ աշխատանքի իրավունքի իրականացման նպատակով շարունակաբար կպարզեցվեն աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմները, կհամապատասխանեցվեն միջազգային պայմանագրերով ամրագրված պահանջներին:<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի առանձին դրույթների՝ միջազգային պայմանագրերով ամրագրված պահանջներին համապատասխանեցման, ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման տեղիք տվող դրույթների հստակեցման, ինչպես նաև որոշակի խմբերի համար աշխատանքային պայմանագրի լուծման պարագայում առանձին երաշխիքների սահմանման անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2015 թվականի հունիսի 22-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-96-Ն օրենքով ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարվեցին բավականին մեծ թվով փոփոխություններ, որոնց զգալի մասը ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթները միջազգային իրավունքի նորմերին, այդ թվում՝ նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի և ԱՄԿ-ի կոնվենցիաների դրույթներին համապատասխանեցնելու գործընթացի համատեքստում էր: Օրենքի ընդունումը պայմանավորված էր նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի որոշակի դրույթների կիրարկման ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:<br>ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ առկա կարգավորումների շարունակական բարելավման ու կատարելագործման, աշխատանքային հարաբերությունների կարգավորման առավել ճկուն մեխանիզմներ նախատեսելու, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի առանձին դրույթներին՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների համապատասխանեցման անհրաժեշտությունից ելնելով հարկավոր է առանձին հայեցակարգ, որով կնախանշվեն այն խնդիրներն ու ուղղությունները, որոնց անհրաժեշտ է տալ համապատասխան օրենսդրական կարգավորումներ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառման շրջանակներում աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթների անհամապատասխանությունների, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների վերլուծության արդյունքում կբացահայտվեն խնդիրներն ու առաջնահերթությունները, որոնց հիման վրա կմշակվի ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նախագիծ:<br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը այն խնդիրների և ուղղությունների մատնանշումն է, որոնց լուծումներին միտված համապատասխան առաջարկությունների ներկայացման պարագայում ՀՀ աշխատանքային օրենսգիրքը կհամապատասխանեցվի ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին, ինչպես նաև կհստակեցվեն ՀՀ աշխատանքային օրենսգրքի ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման տեղիք տվող դրույթները: |
| | **<u>4.2. Աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթների համապատասխանության վերլուծության, իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների վերհանման արդյունքում, ինչպես նաև որոշակի խմբերի համար աշխատանքային պայմանագրի լուծման պարագայում առանձին երաշխիքների սահմանման նպատակով ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 4-րդ «Ազատ, արժանապատիվ և |

երջանիկ քաղաքացի» բաժնի 4.2-րդ «Աղքատության հաղթահարումը, սոցիալական պաշտպանությունը և ժողովրդագրությունը» ենթաբաժնի 8-րդ պարբերությամբ նախատեսված է, որ արժանապատիվ աշխատանքի իրավունքի իրականացման նպատակով շարունակաբար կպարզեցվեն աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմները, կհամապատասխանեցվեն միջազգային պայմանագրերով ամրագրված պահանջներին:

Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի առանձին դրույթների՝ միջազգային պայմանագրերով ամրագրված պահանջներին համապատասխանեցման, ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման տեղիք տվող դրույթների հստակեցման, ինչպես նաև որոշակի խմբերի համար աշխատանքային պայմանագրի լուծման պարագայում առանձին երաշխիքների սահմանման անհրաժեշտությամբ:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

2015 թվականի հունիսի 22-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-96-Ն օրենքով ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարվեցին բավականին մեծ թվով փոփոխություններ, որոնց զգալի մասը ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթները միջազգային իրավունքի նորմերին, այդ թվում՝ նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի և ԱՄԿ-ի կոնվենցիաների դրույթներին համապատասխանեցնելու գործընթացի համատեքստում էր: Օրենքի ընդունումը պայմանավորված էր նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի որոշակի դրույթների կիրարկման ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ առկա կարգավորումների շարունակական բարելավման ու կատարելագործման, աշխատանքային հարաբերությունների կարգավորման առավել ճկուն մեխանիզմներ նախատեսելու, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի առանձին դրույթներին՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների համապատասխանեցման անհրաժեշտությունից ելնելով հարկավոր է մշակել ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նախագիծ:

Մասնավորապես անհրաժեշտ է նախատեսել սոցիալական գործընկերությանը, կոլեկտիվ պայմանագրերին, արհմիությունների դերին, աշխատանքային հարաբերություններում խտրականության արգելմանը, հարկադիր աշխատանքին, գործադուլին, ամենամյա արձակուրդներին, որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրերին, աշխատանքային պայմանագրի բովանդակությանը վերաբերող, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների մի շարք այլ կարգավորումների համապատասխանեցում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին:

Միաժամանակ, օբյեկտիվ անհրաժեշտությամբ պայմանավորված հարկավոր է որոշակի խմբերի համար աշխատանքային պայմանագրի լուծման պարագայում սահմանել առանձին երաշխիքներ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Միջոցառման շրջանակներում աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթների անհամապատասխանությունների վերլուծության և բացահայտման, իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների վերլուծության արդյունքում կմշակվի ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նախագիծ, որով կնախատեսվի սոցիալական գործընկերությանը, կոլեկտիվ պայմանագրերին, արհմիությունների դերին, աշխատանքային հարաբերություններում խտրականության արգելմանը, հարկադիր աշխատանքին, գործադուլին, ամենամյա արձակուրդներին, աշխատանքային պայմանագրի բովանդակությանը վերաբերող, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների մի շարք այլ կարգավորումների համապատասխանեցում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին, կհստակեցվեն ՀՀ աշխատանքային օրենսգրքի այն դրույթները, որոնք իրավակիրառական պրակտիկայում ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման տեղիք են տալիս, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի լուծման պարագայում որոշակի խմբերի համար կսահմանվեն առանձին երաշխիքներ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի առանձին դրույթներին ՀՀ աշխատանքային օրենսգրքի համապատասխանեցումը, աշխատանքային հարաբերությունների մի շարք կարգավորումների հստակեցումը, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների կարգավորումն ու որոշակի խմբերի համար աշխատանքային պայմանագրի լուծման պարագայում առանձին երաշխիքների սահմանումն է:

**4.3. Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման պահանջները սահմանող ՀՀ օրենսդրության կատարելագործման և ամբողջականացման համար համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում ու Վարչապետի աշխատակազմ ներկայացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ

| | |
|---|---|
| | հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 4-րդ «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» բաժնի 4.2-րդ «Աղքատության հաղթահարումը, սոցիալական պաշտպանությունը և ժողովրդագրությունը» ենթաբաժնի 8-րդ պարբերությամբ նախատեսված է, որ արժանապատիվ աշխատանքի իրավունքի իրականացման նպատակով շարունակաբար կպարզեցվեն աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմները, կհամապատասխանեցվեն միջազգային պայմանագրերով ամրագրված պահանջներին:<br>Առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններում աշխատելու իրավունքն առաջին հերթին ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, որի 82-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:<br>ՀՀ աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքների շարքում թվարկվում է նաև յուրաքանչյուր աշխատողի համար աշխատանքի արդարացի պայմանների իրավունքի ապահովման (ներառյալ՝ անվտանգության ապահովման և հիգիենայի պահանջները բավարարող պայմանները, հանգստի իրավունքը) սկզբունքը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հարկ է նկատել, որ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման պահանջները սահմանող ՀՀ գործող ակտերը շատ հաճախ կազմակերպություններում գործնականում կիրառելու տեսանկյունից էական դժվարություններ են առաջացնում, քանի որ դրանք որոշ դեպքերում բարդ են, անհարկի ծանրաբեռնված, երբեմն կրում են խիստ տեսական բնույթ և չեն համապատասխանում գործնական արդի պահանջներին:<br>Բացի այդ, ՀՀ աշխատաքային օրենսգրքով աշխատողների առողջությանն ու անվտանգությանը վերաբերող մի շարք պահանջների մասով առկա չեն համապատասխան կարգավորումներ:<br>Միաժամանակ, հարկ է նշել, որ համապատասխան կարգավորումների անհրաժեշտությունը բխում է նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային մի շարք պարտավորությունների կատարման պահանջներից:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ աշխատաքային օրենսգրքով աշխատողների առողջությանն ու անվտանգությանը վերաբերող մի շարք պահանջների մասով համապատասխան կարգավորումների նախատեսման, ինչպես նաև այս մասով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային մի շարք պարտավորությունների կատարման նպատակով՝ նախատեսվում է աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման պահանջները սահմանող ՀՀ օրենսդրության վերլուծության և առկա բացերի վերհանման արդյունքում՝ համապատասխան առաջարկությունների ներկայացում Վարչապետի աշխատակազմ:<br>Որպես միջոցառման համակատարող նշված է Առողջապահության նախարարությունը:<br>Միջոցառման համակատարողից ակնկալվում է նախատեսված աշխատանքների իրականացման ժամանակ համատեղ քննարկումների անցկացում աշխատանքների իրականացման ողջ ընթացքում, ինչպես նաև վերջնական փաստաթղթերի վերաբերյալ կարծիքի ամփոփում՝ մինչև փաստաթղթի ներկայացումը Վարչապետի աշխատակազմ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման արդյունքում ակնկալվում է աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման պահանջները սահմանող ՀՀ օրենսդրության կատարելագործում և ամբողջականացում, առկա բացերի վերացում, աշխատողների համար անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններում աշխատելու իրավունքի իրացում: |
| 5 | **<u>5.1. Աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ գործող վերահսկողական համակարգի կատարելագործման նպատակով համապատասխան աշխատանքների ճանապարհային քարտեզի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որտեղ որպես կառավարության նպատակադրում ամրագրված է աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ամբողջական և արդյունավետ վերահսկողության համակարգի ներդրումը:<br>Միջոցառման նպատակը աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողական համակարգ ունենալուն ուղղված աշխատանքների նախանշումն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 755-Լ որոշմամբ հաստատված Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությամբ վերջինիս վերապահված է միայն աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունների նկատմամբ վերահսկողությունը |

և մինչև 18 տարեկան անձանց, ինչպես նաև հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց և երեխա խնամող աշխատողների համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման նկատմամբ վերահսկողությունը:
Այսինքն, ներկայում վերահսկողություն է իրականացվում միայն աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունների նկատմամբ և մինչև 18 տարեկան անձանց, ինչպես նաև հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց և երեխա խնամող աշխատողների համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման նկատմամբ:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

«Արդյունաբերության և առևտրի մեջ աշխատանքի տեսչության մասին» Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 81 կոնվենցիայի պահանջների, ինչպես նաև այդ պահանջներին ՀՀ օրենսդրության համապատասխանության վերլուծության և ՀՀ-ում աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության համակարգի մարմինների գործառույթների ուսումնասիրության, ոլորտում առկա խնդիրների բացահայտման արդյունքում՝ կմշավի համապատասխան աշխատանքների ուղղությունների և հաջորդական քայլերի ճանապարհային քարտեզ:
Համակատարողներից ակնկալվում է նախատեսված աշխատանքների իրականացման ժամանակ համատեղ քննարկումների անցկացում աշխատանքների իրականացման ողջ ընթացքում, ինչպես նաև վերջնական իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի ամփոփում՝ մինչև փաստաթղթի ներկայացումը շահագրգիռ մարմիններ և Վարչապետի աշխատակազմ:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողական համակարգ ունենալուն ուղղված աշխատանքների ուղղությունների և հաջորդական քայլերի սահմանում:

**<u>5.2. Աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ գործող վերահսկողական համակարգի կատարելագործման նպատակով համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որտեղ որպես կառավարության նպատակադրում ամրագրված է աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ամբողջական և արդյունավետ վերահսկողության համակարգի ներդրումը:
Միջոցառման նպատակը «Արդյունաբերության և առևտրի մեջ աշխատանքի տեսչության մասին» Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 81 կոնվենցիայի պահանջներին համապատասխան՝ ՀՀ-ում աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության համակարգի ապահովման համար անհրաժեշտ իրավական հիմքերի ապահովումն է:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 755-Լ որոշմամբ հաստատված Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությամբ վերջինիս վերապահված է միայն աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունների նկատմամբ վերահսկողությունը և մինչև 18 տարեկան անձանց, ինչպես նաև հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց և երեխա խնամող աշխատողների համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման նկատմամբ վերահսկողությունը:
Այսինքն, ներկայում վերահսկողություն է իրականացվում միայն աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունների նկատմամբ և մինչև 18 տարեկան անձանց, ինչպես նաև հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց և երեխա խնամող աշխատողների համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման նկատմամբ:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

«Արդյունաբերության և առևտրի մեջ աշխատանքի տեսչության մասին» Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 81 կոնվենցիայի պահանջների, ինչպես նաև այդ պահանջներին ՀՀ օրենսդրության համապատասխանության վերլուծության և ՀՀ-ում աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության համակարգի մարմինների գործառույթների ուսումնասիրության, ոլորտում առկա խնդիրների բացահայտման արդյունքում՝ համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում և ընդունում, որով կապահովվի աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն:
Համակատարողներից ակնկալվում է նախատեսված աշխատանքների իրականացման ժամանակ համատեղ

| | |
|---|---|
| | քննարկումների անցկացում աշխատանքների իրականացման ողջ ընթացքում, ինչպես նաև վերջնական իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի ամփոփում՝ մինչև փաստաթղթի ներկայացումը շահագրգիռ մարմիններ և Վարչապետի աշխատակազմ:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ բարելավված և արդյունավետ վերահսկողության համակարգի առկայություն, ինչն անուղղակիորեն կնպաստի նաև աշխատողների իրավունքների խախտման դեպքերի նվազմանը: |
| 6 | **<u>6.1 ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանն ուղղված նոր ծրագրերի ներդրմամբ և բխում է ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշման հավելվածի 4.2-րդ՝ «Աղքատության հաղթահարումը, սոցիալական պաշտպանությունը և ժողովրդագրությունը» բաժնի պահանջներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**<br>Ժողովրդագրական իրավիճակի ու մարտահրավերների տեսանկյունից կարևորվում են զբաղվածության ռազմավարական մոտեցումները և հիմնախնդիրների համալիր լուծումները: Իրականացվող բարեփոխումների գործնական կիրառումն ապահովելու տեսանկյունից էապես կարևորվում են զբաղվածության ակտիվ նոր ծրագրերի փորձարկումը և դրանց ներդրումը, գործող ծրագրերի վերաիմաստավորումը, որն ուղղակիորեն միտված կլինի նաև ժողովրդագրական և աշխատանքային միգրացիայի դրական միտումների պահպանմանն ու հետևողական բարելավմանը: Զբաղվածության կարգավորվման նոր ակտիվ ծրագրերի ներդրմամբ երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց և կանանց համար կստեղծվեն նաև օբյեկտիվ հնարավորություններ իրենց բնակավայրում ամրանալու և կայուն եկամուտ ստեղծելու համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով առաջարկվում է սահմանել նոր ծրագրային ուղղություններ՝ ուղղված աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանը և զբաղվածության ապահովմանը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախագծով ակնկալվում է մեծացնել գործազուրկների, աշխատանք փնտրող անձանց կայուն զբաղվածության ապահովման հնարավորությունները, ինչպես նաև ներդնել նոր ծրագրեր՝ ուղղված նրանց մրցունակության բարձրացմանը: |
| | **<u>6.2. Զբաղվածության էլեկտրոնային հարթակի ներդրում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Զբաղվածության էլեկտրոնային հարթակի մշակման նպատակն է ապահովել աշխատանք փնտրողների և գործատուների համար առցանց միասնական հարթակ, որը այլընտրանքային հնարավորություն է՝ ուղղված աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի հավասարակշռմանը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս աշխատաշուկայում աշխատանք փնտրողների համար առաջնային խնդիր է իրենց հմտություններին և կարողություններին համապատասխան արժանապատիվ աշխատանք գտնելը, իսկ գործատուների համար՝ իրենց կողմից ներկայացվող թափուր աշխատատեղերի արագ համալրումը համապատասխան գիտելիքներ և հմտություններ ունեցող մասնագետներով, որն այսօր հնարավոր է ապահովել տեղեկատվական տեխնոլոգիական լուծումների ներդրմամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Զբաղվածության ծառայությունների մատուցման արդյունավետության տեսանկյունից կարևոր դեր կարող են խաղալ ժամանակակից տեխնոլոգիական լուծումները, որոնք հնարավորություն կտան առցանց եղանակով ծանոթանալու աշխատաշուկայի հիմնական միտումներին, առանց ժամանակ ծախսելու և բյուրոկրատական քաշքշուկների փնտրելու աշխատանք կամ աշխատողի, ինքնաշխատ եղանակով կազմելու ինքնակենսագրական, ծանոթանալու զբաղվածության ոլորտում առաջարկվող ծրագրերին, անցնելու առցանց դասընթացներ և այլն: Ինտերնետի լայն հասանելիությունը և խելացի հեռախոսների տարածվածությունը անհրաժեշտ է օգտագործել զբաղվածության խթանման նպատակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զբաղվածության ծառայությունների ներկայիս |

մատուցման ձևը երբեմն գրավիչ չէ աշխատանք փնտրողների համար մի շարք պատճառներով, առաջարկվող նոր լուծումները թույլ կտան ներգրավելու առավել մեծ թվով մարդկանց: Ուստի առաջարկվում է ստեղծել նոր առցանց հարթակ, որը հնարավորություն կտա մեքենայական ուսուցման և այլ ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով ապահովել աշխատանք փնտրող-գործատու կապը և հստակ թիրախավորել առաջարկվող զբաղվածության ծրագրերը:

Համակատարողից ակնկալվում է նախատեսված աշխատանքների իրականացման ժամանակ համատեղ քննարկումների անցկացում աշխատանքների իրականացման ողջ ընթացքում, աջակցություն էլեկտրոնային հարթակի նախագծման, մշակման և ներդրման հարցում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Զբաղվածության էլեկտրոնային հարթակի ներդրմամբ կբարելավվի զբաղվածության ոլորտում մատուցվող էլեկտրոնային ծառայությունների որակը, հասարակության լայն շերտերի իրազեկվածության մակարդակը, կբարձրանա ծրագրերի հասցեականությունը, ինչպես նաև առցանց տիրույթում գործատու-աշխատանք փնտրող համագործակցությունը:

**6.3. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը պայմանավորված է վերոհիշյալ որոշմամբ հաստատված կարգերի կիրարկման ընթացքում ծագած խնդիրների լուծման, ժողովրդագրական արդի մարտահրավերներին արձագանքելու, իրավիճակի վերլուծություն իրականացնելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև բխում է ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշման հավելվածի 4.2-րդ՝ «Աղքատության հաղթահարումը, սոցիալական պաշտպանությունը և ժողովրդագրությունը» բաժնի պահանջներից:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**

Զբաղվածության պետական քաղաքականության բարեփոխումների, այդ թվում՝ իրավակիրառական պրակտիկայի ընթացքում վեր հանված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների մշակում, ինչպես նաև զբաղվածության պետական նոր ծրագրերի ներդրում՝ նպատակաուղղված շահառուների շրջանակների ընդլայնմանը և հասցեականության բարձրացմանը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախագծով առաջարկվում է սահմանել համապատասխան դրույթներ, որոնցով կլրամշակվեն արդեն իսկ իրավական կարգավորում ունեցող զբաղվածության պետական ծրագրերի իրականացման մեխանիզմներն ու գործիքները, որոնց գործադրումը բխում է պետական քաղաքականության սոցիալական հիմնական նպատակից և սկզբունքներից: Ըստ նախապես սահմանված առաջնահերթությունների և առկա օբյեկտիվ հնարավորությունների, կմշակվեն և կներդրվեն նոր ծրագրեր՝ նպատակաուղղված ՀՀ-ում առկա թափուր աշխատատեղերը գործազուրկ անձանցով համալրելուն:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Նախագծով ակնկալվում է զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության բարձրացում, նոր ծրագրերի ներդրում՝ նպատակաուղղված աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանը, «կրթություն-աշխատաշուկա» փոխառնչությունների խթանմանը, առկա թափուր աշխատատեղերի համալրմանը, հետևաբար՝ գործազրկության մակարդակի նվազմանը:

**7**

**7.1 «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում**

**1. Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 2006թ. դեկտեմբերի 13-ին ընդունվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, որը վավերացվել է Հայաստանի Հանրապետության ԱԺ կողմից և ուժի մեջ մտել 2010 թվականի հոկտեմբերի 22-ից:

Վավերացնելով ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, կառավարությունը միջազգային պարտավորություն է ստանձնել ՀՀ օրենսդրության և պետական քաղաքականությունը համապատասխանեցնել Կոնվենցիայի սկզբունքներին և պահանջներին:

**1.1.կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի

| | |
|---|---|
| | Հանրապետությունում հաշմանդամների հիմնախնդիրների հետ կապված հարցերը կարգավորվում են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» 1993 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքով, որով հիմնականում սահմանվում են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության սկզբունքները և մոտեցումները:<br>Գործող օրենքում ամրագրված մոտեցումները չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման միջազգայնորեն ընդունված սկզբունքներին և մոտեցումներին:<br>Հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովված չեն մատչելի պայմաններ, ինչը նույնպես լուրջ խոչնդոտ է հանդիսանում նրանց սոցիալական ներառման համար:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)**<br>Նախատեսվում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակում: Նախագծում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները պետք է սահմանվեն Կոնվենցիայի դրույթներին և սկզբունքներին համապատասխան՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող անձանց՝ այլ անձանց հետ համահավասար հիմունքներով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին համապատասխան՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ու ազատությունների իրականացումը, հասարակական կյանքում նրանց հավասար մասնակցությունը և արդյունավետ սոցիալական ներառումը:<br>Հաշվի առնելով, որ նախագծով սահմանվելու են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման պետական քաղաքականության նպատակները, սկզբունքները և ուղղությունները, հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման, իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման համար մատչելի պայմանների և հավասար հնարավորությունների ապահովման հետ կապված այլ հարաբերությունները և որ նշյալ հարաբերությունները վերաբերում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներին, ուստի նախագծի մշակման աշխատանքներին ներգրավվելու են նաև շահագրգիռ նախարարություններ և գերատեսչություններ, հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձինք:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց համար հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովման իրավական պահանջների սահմանում, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նրանց իրավունքների ապահովում՝ բացառելով հաշմանդամության հիմքով խտրականությունը: |
| **8** | <u>**8.1 Հաշմանդամություն ունեցող անձի կարիքի գնահատման նոր մոդելի ներդրում**</u><br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված բարեփոխումները հիմնված են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2006թ. Կոնվենցիայի (այսուհետ՝ կոնվենցիա) պահանջների վրա, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2010 թվականին:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս հաշմանդամության սահմանման մեխանիզմները և չափորոշիչները հիմնված են առավելապես բժշկական մոդելի վրա՝ հիմնականում հաշվի են առնում անձի առողջական խնդիրները: Հաշմանդամության գնահատման գործընթացին մասնակցում են միայն բժիշկներ, ովքեր չեն կարողանում անձի համար համապարփակ ծառայությունների փաթեթ մշակել, ինչը կապահովի անձի լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին:<br>**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշմանդամություն ունեցող անձի կարիքի գնահատման համակարգի հիմքում պետք է դրված լինի հաշմանդամության սոցիալական մոդելը, այսինքն հաշմանդամություն սահմանելիս պետք է հաշվի առնվեն ոչ միայն առողջական խնդիրները, այլ բոլոր այն գործոնները, որոնք այս կամ այն կերպ ազդում են անձի գործունեության վրա: Միաժամանակ, այդ գնահատման արդյունքում պետք է յուրաքանչյուր անձի համար երաշխավորվեն այն ծառայությունները (ծառայությունների փաթեթը), որոնք անհրաժեշտ են առողջական խնդիրների հաղթահարման, միջավայրային խոչընդոտների վերացման համար:<br>Նախատեսվում է բժշկասոցիալական փորձաքննության համակարգում կատարել արմատական փոփոխություններ և Բժշկասոցիական փորձաքննության հանձնաժողովների փոխարեն ստեղծել հաշմանդա-մություն ունեցող անձի կարիքի գնահատման կենտրոններ: Նոր մոդելի ներդրման համատեքստում անձի գնահատման տեղեկատվական համակարգը առցանց տեղեկատվություն է փոխանակում կրթության և գիտության և առողջապահության նախարարությունների հետ: Կրթության և գիտության նախարարությունից ստացվում է տեղեկատվություն մինչև 18 տարեկան անձանց գործունեության, մասնակցության և միջավայրային գործոնների վերաբերյալ, |

| | |
|---|---|
| | առողջապահության նախարարությունից՝ անձի կարիքի գնահատման համար ուղեգիր, հետազոտությունների արդյունքներ, բժշկական եզրակացություններ: Միաժամանակ ձևավորվելու է մասնագետների ռեեստր, որտեղ գրանցված առողջապահական համակարգի բժիշկները համատեղության կարգով կիրականացնեն անձի առողջական բաղադրիչի գնահատումը:<br>Հաշմանդամություն ունեցող անձի կարիքի գնահատման նոր մոդելի ներդրման ուղղությամբ 2015-2018թթ. ընթացքում մշակվել են հաշմանդամության սահմանման նոր գործիքներ, մեթոդական ուղեցույցեր՝ հիմնված ԱՀԿ ՖՄԴ սկզբունքների վրա: Այս միջոցառման շրջանակներում՝ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում կներդրվեն նոր մեխանիզմներ և գործընթացային մոտեցումներ՝ տեղայնացնելով այլ երկրների լավագույն փորձը: Նոր մոդելի հիմքում կլինի հաշմանդամություն ունեցող անձի կարիքների գնահատումը:<br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Իրավական հենքի առկայություն, հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների գնահատման համակարգի բարեփոխումների ծրագիր, մասնագետների ռեեստրի առկայություն, վերապատրաստված մասնագետներ, հաշմանդամություն ունեցող անձի կարիքի գնահատման նոր մոդելի փորձնական գործարկում, միասնական էլեկտրոնային համակարգի գործարկում, հաշմանդամություն ունեցող անձի գնահատված կարիքին համարժեք ծառայությունների փաթեթի մշակում, հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների գնահատման կենտրոնների ստեղծում: |
| **9** | **9.1 «Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 4-րդ կետի և «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրարկման անհրաժեշտությամբ: Միջոցառման նպատակը Հայաստանի Հանրապետությունում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման ապահովումն է: Դրան հասնելու համար անհրաժեշտ է սահմանել պետական քաղաքականության առաջնահերթ ուղղությունները, քաղաքականության և նպատակային ծրագրերում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման համար գործուն մեխանիզմների ներդումը:<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած մարդու իրավունքներին վերաբերող, մասնավորապես, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինի 4-րդ Համաշխարհային համաժողովի /1995թ./ հանձնարարականների, Եվրախորհրդի Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերի, ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրի պահանջների կատարման անհրաժեշտությամբ:<br>Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը 2014-2016թթ. ստորագրել է Եվրոպայի Միության տնտեսական աջակցության փաստաթղթեր՝ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ» («GSP+») առևտրային ռեժիմի մասին (2014թ.), «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» (2015թ.) և «Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրերը, ըստ որի պարտավորվել է ապահովել «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կատարումը և մշտադիտարկումը, ընտիքում բռնության երևույթի կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման պետական քաղաքականությունն իրականացվում է պետական կառավարման մարմինների կողմից մշակվող և իրականացվող միջնաժամկետ և երկարաժամկետ պետական նպատակային ծրագրերի միջոցով:<br>Այդ համատեքստում ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 20-ի որոշմամբ հաստատվեց «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը», որը սահմանեց կանանց և տղամարդկանց նկատմամբ պետական քաղաքականության առաջնահերթ ուղղությունները, իսկ ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ՝ «Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ. ազգային ծրագիրը», որի հիմնական նպատակն էր նպաստել սեռի հատկանիշով բռնության կրճատմանը Հայաստանի Հանրապետությունում:<br>Յուրաքանչյուր տարի ռազմավարական ծրագրերով նախանշված նպատակներն իրականացնելու համար ՀՀ կառավարության կողմից հաստատվում էին համապատասխան տարեկան ծրագրեր: Դրանցում ներառված միջոցառումներն ուղղված էին կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում, սոցիալ-տնտեսական, կրթության, առողջապահության, մշակույթի և հանրային տեղեկատվության ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասարության հաստատմանը և ընտանեկան բռնության երևույթի կանխարգելմանը: |

| | |
|---|---|
| | Վերոհիշյալ ռազմավարական ծրագրերի մոնիթորինգի արդյունքները, ինչպես նաև 2015 թվականի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ և ՄԱԿ-ի՝ ՄԱԶԾ, ՄԱԲՀ և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ իրականացված ««Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի» և «Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ազգային ծրագրի» գնահատման հետազոտության» արդյունքում գնահատման փորձագիտական խմբի եզրակացությունները վկայում են, որ պլանավորված և անցկացված միջոցառումները հիմնականում համապատասխանում են պետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանը և ռազմավարական ծրագրերը նպաստել են հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման ուղղված ինստիտուցիոնալ մեխանիզմների զարգացմանը: Ըստ էության իրականացված աշխատանքների շրջանակում ստեղծվել են այն անհրաժեշտ հիմքերը, որոնք հաջորդ ծրագրային փուլում կարող են ստեղծել ներգործուն միջավայր ուղղորդված ոլորտային և միջոլորտային քաղաքականության իրականացման համար:<br>Սակայն, գենդերային հավասարության հասնելու և խտրականությունը կանխելու նպատակով անհրաժեշտ է ներդնել այնպիսի մեխանիզմներ և գործիքներ, որոնք կնպաստեն կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանմանը:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հավասարության քաղաքականության շարունակականությունն ապահովելու համար անհրաժեշտ է նոր ռազմավարական ծրագրի ընդունում 2019-2023 թվականների համար, որն ուղղված կլինի.<br>• կանանց և տղամարդկանց անհատական ներուժի ինքնադրսևորման համար հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ստեղծմանը,<br>• իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության իրական հավասարության ապահովմանը,<br>• հասարակական կյանքի բոլոր ոլորտներում երկու սեռերի հավասար մասնակցության ապահովմանը,<br>• գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Ռազմավարության դրույթների իրացումը կնպաստի հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային խտրականության հաղթահարմանը և կանանց հավասար մասնակցության ապահովմանը կառավարման և որոշումների կայացման ոլորտում, տնտեսության ոլորտում կանանց հնարավորությունների ընդլայնմանը՝ կանանց ձեռներեցությունը խթանող ծրագրերի իրականացման միջոցով, կրթական և առողջապահական ծրագրերի հավասար մատչելիությանը, կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի հզորացմանը: |
| **10** | **10.1 Ընտանիքում բռնության կանխարգելման իրավական դաշտի բարելավում, ընտանիքում բռնության դեպքերի հաշվառման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց ուղղորդման համակարգի և աջակցության տրամադրման մեխանիզմների ներդրում, ինչպես նաև խնդրով զբաղվող տարբեր մարմինների և կառույցների միջև գործընկերային հարաբերությունների ամրապնդում**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով և դրա կիրարկումն ապահովող իրավական ակտերով սահմանված մեխանիզմների ներդրման անհրաժեշտությամբ:<br>Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը 2015թ. ստորագրել է «Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրերը, ըստ որի պարտավորվել է ստեղծել՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց ուղղորդման և աջակցության արդյունավետ մեխանիզմներ և ստեղծել Հայաստանի բոլոր մարզերում և մայրաքաղաքում գործող, պետության կողմից ֆինանսավորվող աջակցության կենտրոններ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Շարունակելով միջազգային իրավական փաստաթղթերի պահանջներին համապատասխան և ժամանակի մարտահրավերներին համահունչ օրենսդրության կատարելագործման աշխատանքները Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունվել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի նպատակն է ձևավորել ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց անվտանգության և պաշտպանության, նրանց իրավունքների և օրինական շահերի ապահովման, ինչպես նաև հոգեբանական, նյութական և սոցիալական աջակցության տրամադրման և նրանց սոցիալական վերականգնման համար անհրաժեշտ իրավական կառուցակարգեր: Օրենքի համաձայն Աշխատանքի և սոցիալական հարցերի |

նախարարությունը հանդիսանում է սոցիալական հարցերի ոլորտում ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության լիազոր մարմին և մշակում է պետական ռազմավարությունը և համակարգում դրանից բխող միջոցառումների իրականացումը: Ի թիվս այլ լիազորությունների՝ Լիազոր մարմինը ստեղծում է ընտանիքում բռնության ենթարկված անձանց ծառայություններ տրամադրող աջակցության կենտրոններ և հիմնադրում ապաստարաններ:

2018 թվականի ընթացքում օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մշակվել և ընդունվել են մի շարք իրավական ակտեր, աշխատանքներ են տարվել ընտանիքում բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայությունների ստեղծման ուղղությամբ: Մասնավորապես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի վեց հաստատությունների՝ ի թիվս այլ գործառույթների, վերապահվել են նաև օրենքով սահմանված ընտանիքում բռնության ենթարկված անձանց «աջակցության կենտրոնների» գործառույթներ:

Վերոնշյալ ծառայություններ տրամադրող կենտրոններից երեքը գտնվում են Երևան քաղաքում, իսկ երեքը՝ համապատասխանաբար ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Սյունիքի մարզերում.

- «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ,
- «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ,
- «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» հիմնադրամ,
- «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ,
- «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ,
- «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ կենտրոնները ոչ բոլոր մարզերում են ստեղված, անհրաժեշտ է հանրապետության ևս 7 մարզերում ստեղծել նման ծառայություններ մատուցող ծառայություններ, ինչը հնարավորություն կտա ապահովել օրենքով սահմանված ընտանիքում բռնության ենթարկված անձանց հաշվառման, նրանց ուղղորդման և համապատասխան ծառայությունների տրամադրման գործընթացը:

Ընտանիքում բռնության ենթարկված անձանց մասնագիտական ծառայություններ տրամադրելու և նրանց անվտանգությունն ապահովելու հարցում մեծ կարևորություն ունեն նաև ապաստարանները՝ իբրև անվտանգ ժամանակավոր կացարան՝ ուղեկցող սոցիալական ծառայություններով: Ներկայում հանրապետությունում ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ տրամադրվում են ՀԿ-ների կողմից: Տարեկան կտրվածքով, ՀԿ-ների կողմից տրամադրվող առկա 2 ապաստարաններն ընդհանուր առմամբ ծառայություններ են տրամադրում ընտանիքում բռնության ենթարկված շուրջ 200 անձանց: Սակայն նման գործունեություն ծավալող ՀԿ-ների ցանցը և ծրագրերի բաշխվածությունը հանրապետության տարածքում հավասարաչափ չէ, ինչպես նաև բավարար չէ՝ հաշվի առնելով ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ տարբեր պետական մարմինների և հասարակական կառույցների կողմից վարվող վիճակագրությունը, որի համաձայն այդ թիվը գնահատվում է տարեկան շուրջ 2000 դեպքի սահմանում: Կան մարզեր, որտեղ ՀԿ-ները հիմնախնդրին առնչվող ծրագրեր չեն իրականացնում և ծառայություններ չեն մատուցում: Հետևաբար ընտանիքում բռնության ենթարկված անձանց ուղղված ծառայությունները շահառուների մի զգալի մասի հասանելի չեն: Բացի այդ, ընտանիքում բռնության կանխարգելման և անհրաժեշտ ծառայությունների տրամադրման երաշխավորը, համաձայն օրենքի, պետությունն է:

Հաշվի առնելով ապաստարանների կողմից տրամադրվող ծառայությունների կարևորությունը և ՀԿ-ների կողմից իրականացվող ծրագրերի շարունակականության երաշխիքի բացակայությունը, անհրաժեշտ է ստեղծել պետական ֆինանսավորմամբ ապաստարաններ և աջակցության կենտրոններ՝ հիմք դնելով ընտանիքում բռնության երևույթի համակարգված կանխարգելմանը՝ նպաստելով կանանց և տղամարդկանց իրապես հավասար հնարավորությունների և իրավունքների արմատավորմանը: Ընդ որում, այս գործընթացը ենթադրում է սերտ համագործակցություն քաղաքացիական դաշտի հետ, քանի որ անհրաժեշտ ծառայությունները կարող են նաև պատվիրակվել համապատասխան հասարակական կազմակերպություններին:

**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ընտանիքում բռնության ենթարկված անձանց օրենսդրությամբ սահմանված աջակցության տրամադրման նպատակով առաջարկվում է ապահովել դրա իրականացման համար համապատասխան իրավական հիմքերը, իրավաբանական անձանց հետ կնքել ապաստարանի ֆինանսավորման պայմանագրեր և ստեղծել պետության կողմից ֆինանսվորվող ապաստարաններ:

**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**

Կապահովվի ընտանիքում բռնության ենթարկված անձանց անվտանգ միջավայրի, ինչպես նաև օրեսդրությամբ սահմանված սոցիալական այլ ծառայությունների տրամադրման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով ամրագրված դրույթների կատարումը:

11 **11.1 ՀՀ օրենսդրական դաշտի կատարելագործում և «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայով ստանձնած հանձնառություններին համապատասխանեցում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է 2015 թվականի դեկտեմբերի 29-ին ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման 2016-2018 թվականների համաձայնագրի 4.3 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 483-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված Մարդու իրավունքների պաշտպա-նության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 74-րդ կետի կատարմամբ, ըստ որի նախատեսվում է ստորագրել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան և այն վավերացման ներկայացնելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ քայլեր:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա պայքարի մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան (այսուհետ՝ կոնվենցիա) կանանց իրավունքների և գենդերային հավասարության խթանման միջազգային գործիքակազմում մարդու իրավունքների պաշտպանության փաստաթղթերից մեկն է, որով կարևոր չափորոշիչներ են ամրագրվում կանանց դեմ բռնության ոլորտում:

Կոնվենցիան ուղղված է Հայաստանի Հանրապետության կողմից վավերցված միջազգային մի շարք այլ փաստաթղթերի, մասնավորապես, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (1966թ), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (1966թ.), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի (1979թ.) և դրա Կամընտիր արձանագրության (1999թ.), ինչպես նաև Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի (1989թ.) և դրա Կամընտիր արձանագրությունների (2000թ.) դրույթների ամրապնդմանը և դրանցում սահմանված չափանիշների կիրառմանը:

Կոնվենցիայի հիմնական նպատակն է կանանց պաշտպանությունը բռնությունից, ընտանեկան բռնության կանխարգելումը, քրեական հետապնդումը և երևույթի վերացումը, ընտանեկան բռնության բոլոր զոհերի պաշտպանությունը և նրանց աջակցությունը, միջազգային համագործակցության խթանումը, կոնվենցիայի դրույթների արդյունավետ իրականացումն ապահովող վերահսկողության հատուկ մեխանիզմի ստեղծումը:

**Կոնվենցիան ՀՀ-ի կողմից ստորագրվել է 2018թ. հունվարի 18-ին** և ներկայում գտնվում է վավերացման փուլում:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կոնվենցիան վավերացրած յուրաքանչյուր երկիր պարտավորվում է ձեռնարկել օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները, անհրաժեշտ կլինեն քայլեր ձեռնարկել.

- որպեսզի ընդունվեն և երկրի ամբողջ տարածքում իրականացվեն արդյունավետ, համակողմանի և համակարգված քաղաքականություններ, հատկացվեն դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ,
- ապահովելու համար կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության գործողությունների կանխարգելումը (կարծրատիպերի հաղթահարումը) և իրազեկության բարձրացումը,
- բռնության հետագա գործողություններից բոլոր տուժողների պաշտպանությունը և օժանդակությունը և այլն:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ օրենսդրական դաշտի կատարելագործում և ՀՀ միջազգային հանձնառություններին համապատասխանեցում:

12

**<u>12.1 Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման Ազգային ծրագրի միջոցառումների իրականացում</u>**

**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ թրաֆիքինգի դեմ պայքարը իրականացվում է եռամյա ծրագրերի շրջանակում: Նոր, եռամյա ծրագրի նախագիծն արդեն պատրաստ է և ներկայացվելու ՀՀ կառավարության հաստատմանը: Ծրագրի ժամանակացույցով նախատեսված միջոցառումների նպատակն է մշակել և իրականացնել ընթացիք, փոփոխվող իրավիճակին և միջազգային պարտավորություններին համահունչ քաղաքականություն՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման, թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց աջակցության և պաշտպանության ոլորտում, ինչպես նաև մշակել լրացուցիչ մեխանիզմներ երեխաների իրավունքների պաշտպանության մասով:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**

Այսօր հանրապետությունում գործում է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի եռաստիճան համակարգ, որի միջոցով կազմակերպվում են աշխատանքները, ապահովվում է միջգերատեսչական համագործակցությունը, իրականացվում են տարբեր ծրագրեր: Աշխատանքներն ուղղված են դեպքերի հայտնաբերմանը և բացահայտմանը, զոհերի նույնացմանը, ուղղորդմանը, ինչպես նաև թրաֆիքինգի կանխարգելմանը՝ մասնագիտական վերապատրաստումների և իրազեկման աշխատանքների միջոցով: Սակայն

| | |
|---|---|
| | թրաֆիքինգի և շահագործման ձևերը ենթարկվել են փոփոխությունների, դրանց նոր դրսևորումները պահանջում են լրացուցիչ պարզաբանում՝ յուրաքանչյուր դեպքը գնահատելու համար: Որոշակի բարդություններ առաջանում են նաև երեխաների պաշտպանության մեխանիզմների անկատարության հետ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագիծը հնարավորություն կտա նոր մոտեցումներ դրսևորել, տարանջատել թրաֆիքինգի և շահագործման դեպքերը և ձևերը, սահմանել ուղղորդման մեխանիզմներ, ելնելով զոհի տարիքային առանձնահատկություններից, տալ օրենսդրական նոր կարգավորումներ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախագծով ակնկալվում է բարելավել թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման և ուղղորդման գործընթացները, բարձրացնել ոլորտում աշխատող պատասխանատուների մասնագիտական որակը և պատրաստվածությունը: |
| **13** | **<u>13.1 «Սեռական շահագործումից և սեռական բնույթի չարաշահումներից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի վավերացմանն ուղղված միջոցառումներին մասնակցություն</u>**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Կոնվենցիայի վավերացման հարցը մտավ օրակարգ դեռևս 2010 թվականին, երբ Հայաստանը ստորագրեց փաստաթուղթը, որում շեշտը դրված էր երեխայի սեռական անձեռնմխելիության ապահովման հարցերին: Ստորագրմանը հաջորդեցին մի շարք ուսումնասիրություններ՝ պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ, որոնք հաստատեցին խնդրի առկայությունը Հայաստանում:<br>Կոնվենցիայի վավերացումը նախատեսված է Հայաստանի Հանրապետությունում 2019-2021 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի և միջոցառումների ժամանակացույցի նախագծում, որը առաջիկայում ներկայացվելու է ՀՀ կառավարության հաստատմանը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**<br>«Սեռական շահագործումից և սեռական բնույթի չարաշահումներից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան գործիք է երեխայի նկատմամբ հանցագործությունը կանխելու և տուժողի պաշտպանությունն ապահովելու համար:<br>Կոնվենցիան սահմանում է «մանկական մարմնավաճառություն, մանկական պոռնոգրաֆիա և երեխայի նկատմամբ սեռական բռնություն» հասկացությունները և նախատեսում է քրեական պատասխանատվության խստացում երեխային մարմնավաճառության մեջ ներգրավելու, նրա հետ սեռական բնույթի գործողություններ կամ հանցագործություններ կատարելու համար: Միևնույն ժամանակ այն կնպաստի հատուկ հարմարեցված ծրագրերի մշակմանը՝ սեռական բնույթի հանցագործություններ կատարած անչափահասների համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>2015-2017թթ. ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ ժամանակահատվածում սեռական բռնության զոհ են դարձել շուրջ 500 անձ, որոնց մոտ 70%-ը կազմել են 12 - 17 տարեկան անչափահասներ, իսկ դրանց գրեթե 90%-ը աղջիկներ են:<br>Կոնվենիցայի վավերցմամբ կիրականացվեն տեղեկատվական քարոզարշավներ, կրթական ծրագրեր, կպատրաստվեն մասնագետներ, երեխաները կներգրավվեն քաղաքականության մշակմանը, ծրագրերի և տարբեր միջոցառումների իրականացմանը, կսահմանվի ֆինանսական պատասխանատվություն քաղաքականության իրականացումն ապահովելու համար, կմշակվեն ուղղորդման և մշտադիտարկման մեխանիզմներ և այլն:<br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կսահմանվի ներգրավված կողմերի պատասխանատվության շրջանակը, կվերանայվեն երեխայի լավագույն շահից բխող քննության սկզբունքները (փակ դատական լսումներ, երեխայի հարցաքննության հատուկ ընթացակարգեր, կներդրվեն առանց երեխայի մասնակցության քննության նոր մեթոդներ), կստեղծվեն պաշտպանության և վերահսկման նոր մեխանիզմներ: |
| **14** | **<u>14.1 Երեխաներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող այլընտրանքային ծառայությունների ընդլայնում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Սույն միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 30 արձանագրային որոշման N 2 հավելվածի 1.2.4. կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. սեպտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 36 արձանագրային որոշման հավելվածի 1.2 կետի կատարման անհրաժեշտությամբ: |

| | |
|---|---|
| | Միջոցառման նպատակը՝ երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացումն է, երեխաներին ուղղված այլընտրանքային ծառայությունների որակի բարելավումն ու զարգացումն է, ոլորտի հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրվող ծառայությունների ընդլայնումը:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2006 թվականից սկսած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ծառայություններ տրամադրելու նպատակով հասարակական կազմակերպություններին պատվիրակվել են ծրագրեր և դրանց թիվը տարիների ընթացքում ընդլայնվել է:<br>Իրականացվող ծրագրերի դրական փորձի հիման վրա և երեխաների շուրջօրյա հաստատությունների վերակազմակերպման արդյունքում պատվիրակվող ծրագրերի ընդլայնումը առաջնահերթություն է: Ներկայում խնդիր է առկա ռեսուրսների գնահատումը, համապատասխան իրավական դաշտի ձևավորումը:<br>Այս քաղաքականությանն է ուղղված նաև 2019 թվականի Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն ծախսային ծրագրում որպես նոր նախաձեռնություն ներառված՝<br>ա) «Սպիտակ քաղաքի երեխաների զարգացման կենտրոնի» միջոցառումը (5 հաստիքային միավոր (այդ թվում հոգեբան) նախատեսված աշխատողի միջոցով՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաներին բազմամասնագիտական ծառայություններ տրամադրելու նպատակով),<br>բ) ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող սոցիալական հոգածության ծառայություններ» միջոցառումը,<br>գ)«Համայնքահեն ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար» միջոցառումը՝ Արմավիրում և Գավառում:<br>2019 թվականից սույն միջոցառումները կիրականացվեն մասնակի պետական ֆինանսավորմամբ հասարակական կազմակերպությունների միջոցով:<br>2019 թվականին սույն ծրագրերը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի 163-Ա/1 հրամանի համաձայն՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնդիրներով մասնագիտացված կազմակերպություններին պատվիրակելու նպատակով՝ դրամաշնորհի տրամադրման համար մրցույթ է հայտարարվել www.azdarar.am կայքում:<br>Մրցույթներն իրականացվել են իսկ արդյունքների մասին եզրակացությունները տեղադրված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության www.mlsa.am կայքում:<br>Այլընտրանքային ծառայությունների ընդլայնման ողջ գործընթացում (օրենսդրության բարելավում, ծառայությունների ընդլայնում) համակատարող են նաև ՀՀ կրթության և գիտության, առողջապահության, տարածքային կառավարման և զարգացման նախարարությունները:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սույն միջոցառման կարգավորման առարկան երեխաներ ունեցող ընտանիքների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելելումն է, այդ թվում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխաներին խնամքի տրամադրումը, այդ երեխաների՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի իրականացմանն աջակցությունը:<br>Երեխաների և նրանց ընտանիքների համար կստեղծվեն այլընտրանքային ծառայություններ, այլընտրանքային հնարավորություն կընձեռնվի նաև վերակազմակերպված հաստատության սաների կենսաբանական ընտանիքներին և սոցիալական հրատապ աջակցության կարիք ունեցող սոցիալապես անապահով ընտանիքներին<br>Կստեղծվեն երեխայի խնամքի ցերեկային կենտրոններ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց մասնաճյուղերը, որոնք մասնագիտացված ծառայություններ կտրամադրեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, կամ նման իրավիճակում հայտնվելու ռիսկի ենթակա՝ այդ թվում հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված անձանց:<br>Նախագծի ընդունմամբ կապահովվի պետության և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության լայն շրջանակ, կստեղծվեն գործուն և թափանցիկ մեխանիզմներ ոլորտում առկա խնդիրների լուծման գործընթացում:<br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում կապահովվի երեխաների հետագա խնամքի կազմակերպումը ընտանիքում, կբարելավվի նրանց կյանքի որակը, կնպաստի նրանց ինտեգրմանը հասարակություն, ինչպես նաև կապահովվի հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելմանը:<br>Իրավական ակտի ընդունման արդյունքում կապահովվեն երեխաներին և նրանց ընտանիքներին բազմաբնույթ, հասցեական ծառայություններ, կկանոնակարգվի իրավական դաշտը:<br>Կստեղծվեն հասարակական կազմակերպություններին պատվիրակվող ծրագրերի նոր մեխանիզմներ, կկանոնակարգվի իրավահարաբերությունները:<br>Կվերակազմակերպվեն, կլուծարվեն նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները (Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն, Գյումրու երեխաների խնամքի |

| | |
|---|---|
| | և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն, Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն). դրանցում խնամվող երեխաները կվերադառնան կենսաբանական ընտանիքներ, կստեղծվեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և ընտանիքներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող այլընտրանքային կառույցներ: Ինչպես նաև շուրջօրյա խնամքի կարիք ունեցող երեխաների հետագա խնամքը կկազմակերպվի փոխարինող ընտանիքներում, (խնամակալի, հոգաբարձուի, խնամատար ծնողի), իսկ դրա անհնարինության դեպքում՝ շուրջօրյա խնամք տրամադրող փոքր տներում: Կավելացվի խնամատար ընտանիքների թիվը, ինչպես նաև միջոցներ կտրամադրվեն հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման ծրագրերին: |
| 15 | **<u>15.1 Երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի գործառույթների վերանայում</u>**<br><br>Սույն միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի նիստի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 30 արձանագրային որոշմամբ նախատեսված միջոցառումներից և պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով՝ երեխաների խնամքի հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելմամբ և այդ հաստատություններում երեխաների թվի նվազեցմամբ, ինչպես նաև խնամքի տրամադրման այլընտրանքային սոցիալական ծառայությունների ցանցի զարգացման անհրաժեշտությամբ: Գործընթացի նպատակը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կյանքի որակի բարելավումը, երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի, երեխայի և նրա ընտանիքի սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովումը:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում երեխաների իրավունքների պաշտպանությունը իրականացվում է եռաստիճան համակարգով, որի առաջին օղակը համայնքներում՝ խնամակալության և հոգաբարձության մարմիններն են, մարզերում՝ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները և երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը: Պայմանավորված մի շարք հանգամանքներով՝ վերջին տարիներին եռաստիճան համակարգի գործունեությունը լիարժեք չի իրականացվում: Ներկայում անհրաժեշտ է ուսումնասիրել և գնահատել եռաստիճան համակարգի գործունեության արդյունավետությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է գնահատել համակարգի արդյունավետությունը բարելավել Երեխաների իրավունքների պաշտպանության իրավական դաշտը այն համապատասխանեցնելով «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի և Հայաստանի Հանրապետության միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարման պահանջներին համապատասխան:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կապահովվի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վիճակի բարելավումը:<br>Կբարելավվի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի տեղեկատվական համակարգը: |
| 16 | **<u>16.1 «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժնի առաջին պարբերությունով սահմանված նպատակից՝ քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավելում:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պետական նպաստների, այդ թվում ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման իրավակարգավորումները սահմանված են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով: «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների նշանակման հիմքում ընկած է տվյալ ընտանիքի աղքատությունը, բացարձակ հաշվի չառնելով այդ ընտանիքի աշխատանքային տնտեսական ներուժը, որը երբեմն ծնում է սոցիալական խնամառություն:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ վարչապետի 2019թ.ի փետրվարի 26-ի N180-Ա որոշմամբ ընտանեկան և սոցիալական նպաստների համակարգում առկա խնդիրների բացահայտման, համակարգի հասցեականության և արդյունավետության բարձրացման, նպաստառուների համար կայուն եկամտի ստեղծմանն ուղղված համակարգի ներդրման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ, որն առաջարկությունները ներկայացնելու է մինչև նոյեմբերի 30-ը:<br>Աշխատանքային **խմբի առաջարկությունների հաշվառմամբ** ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվելու ««Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի |

նախագիծ:
**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**
Օրենքի նախագծի ընդունումով ձևավորվելու է անապահով ընտանիքների կարողությունների զարգացման՝ նրանց ինքնաբավ դարձնելուն ուղղված և արժանապատիվ ու սեփական վաստակ ունեցող ընտանիք ձևավորելու, այդ ընտանքիների պետական աջակցությունից՝ երկարատև կախվածությունից ձերբազատվելու իրավական հենքը, ինչպես նաև կապահովվի աստիճանական և սահուն անցում՝ նպաստների անկանխիկ վճարմանը՝ մինչև 2023թ. տարեվերջ:

**<u>16.2 «ՀՀ կառավարության 30.01.2014թ. N145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**
Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժնի առաջին պարբերությունով սահմանված նպատակից՝ քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավելում:
**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**
Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների նշանակման և վճարման գործընթացը կազմակերպվում է ՀՀ կառավարության 30.01.2014թ. N 145-Ն որոշմամբ, որն ապահովում է «Պետական նպաստների մասին» ՀՀ գործող օրենքով սահմանված դրույթների կատարումը:
**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**
Օրենքում փոփոխությունների և լրացումների կատարումից հետո, դրանց կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել «ՀՀ կառավարության 30.01.2014թ. N145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:
**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**
ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ սահմանվելու են ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների նշանակման և վճարման հստակեցված ընթացակարգ, նոր մոտեցումներ, որոնց կիրառմամբ բարելավվելու են ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության տրամադրման արդյունավետությունը և հասցեականությունը:

**<u>16.3 Ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի գործարկում՝ ընտանիքի գնահատված սոցիալական կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի ապահովում</u>**

**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժնի առաջին պարբերությունով սահմանված նպատակից՝ քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավելում:
**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)**
Գործող օրենսդրության շրջանակներում սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական ծառայությունները հիմնականում իրականացվում են աղքատության, կամ ընտանիքի անապահովության գնահատման հիմքով, հաշվի չառնելով ընտանիքների ոչ նյութական կարիքներն ու ռեսուրսները:
**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**
1) Նախատեսվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով.
Ընտանիքների անապահովության գնահատման համակարգը վերաձևավորվում է որպես՝ ընտանիքի սոցիալական գնահատման համակարգ, դրա մեկ բաղադրիչը դիտարկելով ընտանիքի անապահովության մակարդակի որոշումը, նախատեսելով նաև սոցիալական աշխատողի կողմից ընտանիքի սոցիալական խնդիրների ու ռեսուրսների գնահատում, որոնց համադրմամբ՝ ռեսուրսների անբավարար լինելու պարագայում, սոցիալական խնդիրը կդիտարկվի որպես սոցիալական կարիք:
Նախագծով առաջարկվում է վերանայել նաև տարբեր սոցիալական ծառայությունների տրամադրման ընթացակարգերի որոշակի դրույթներ՝ հնարավորինս հստակեցնելով դրանք՝ կրճատելով թե՛ շահառուի, թե՛ տարածքային կենտրոնների կողմից իրականացվող կրկնվող գործողությունները (դիմում, փաստաթղթերի ներկայացում, տվյալ սոցիալական ծառայությունը տրամադրելու որոշումը կայացնելու համար՝ անձնական գործի կազմում և այլն): Միաժամանակ, գործող օրենսդրությամբ երբեմն նույն շահառուի նույն խնդրի լուծման համար նախատեսվում են պատասխանատու մասնագետներ՝ տարբեր մարմիններից, որոնց լիազորությունների շրջանակը միահյուսվում է և խանգարում դրանց արդյունավետ իրականացմանը: Օր.՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի կազմակերպման (տեղավորման՝ ընտանիք, խնամատար ընտանիք, խնամակալի ընտանիք կամ շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպություն) գործընթացում ներառված են սոցիալական աջակցության տարածքային մարմնի, խնամակալության և հոգաբարձության մարմնի, մարզպետարանի կամ Երևանի

քաղաքապետարանի ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան ստորաբաժանման (չհաշված այդ ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների) մասնագետները, կամ՝ գրեթե նույն իրողությունն է միայնակ տարեցների և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների տրամադրման գործընթացում:
Ընդ որում նշված ընթացակարգերը սահմանվել են ՀՀ կառավարության տարբեր որոշումներով, որոնցում երբեմն առկա են կրկնություններ և (կամ) հակասություններ:
Նախագիծը նախատեսում է սոցիալական աջակցության հայցող ընտանիքի սոցիալական կարիքների գնահատում, այդ թվում նաև անապահովություն, որով հաշվի է առնվում այն հանգամանքը, որ մեկ ընտանիքում սոցիալական խնդիրներն ու կարիքները բազմազան են, նաև՝ միջոլորտային, այդ խնդիրների լուծումներն ու բավարարումը պահանջում են մեկից ավելի սոցիալական ծառայությունների տրամադրում, ընդ որում տարբեր մարմինների և կազմակերպությունների միջոցով՝ ապահովելով դրանց միաժամանակյա կամ հաջորդական տրամադրման բնականոն ընթացք:
Սոցիալական դեպքի վարումը, այն է ընտանիքի սոցիալական գնահատումը, ինչպես նաև դրա արդյունքներով տարբեր մարմինների և կազմակերպությունների կողմից սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի համակարգումը, հնարավոր կլինի արդյունավետ իրականացնել, եթե յուրաքանչյուր սոցիալական դեպքի համար նշանակվի մեկ պատասխանատու և նա աշխատի տվյալ դեպքի համար ձևավորված աջակցող ցանցի (տարբեր մարմինների և կազմակերպությունների մասնագետների) հետ՝ համակարգելով դրանք ժամանակի և մարմինների ու կազմակերպությունների աշխատանքների համատեքստում: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս նաև սոցիալական աջակցություն ստացողին (շահառուին) շփվել, առնչվել միայն մեկ մասնագետի հետ, բացառելով նրա դռնեդուռ՝ տարբեր մարմիններ և կազմակերպություններ դիմելը, խուսափել բյուրոկրատական քաշքշուկներից, իսկ սոցիալական աշխատողին (սոցիալական դեպք վարողին)՝ իրազեկ լինել իր կողմից սպասարկվող ընտանիքի (սոցիալական աջակցություն ստացողի) ամբողջ պատմությանը և գիտակցել ինչպես իր լիազորությունների, այնպես էլ պատասխանատվության հստակ շրջանակները:
2) Ընտանիքների անապահովության գնահատման և նպաստների համակարգերը, որպես ընտանիքի սոցիալական գնահատման առանձին բաղադրիչ, զուգահեռելով թիրախային մեխանիզմներով հայտնաբերված ծայրահեղ աղքատ ընտանիքների հետ, հնարավորություն է ընձեռելու սոցիալական աշխատողներին՝ սոցիալական աջակցության ծառայությունները կապել սոցիալական պաշտպանության, առավելապես ակտիվ աշխատաշուկայի քաղաքականության, ինչպես նաև սոցիալական խնամքի և աջակցության ծառայությունների հետ, դրանք համակարգված, ըստ ընտանիքի սոցիալական կարիքների, փաթեթով տրամադրել՝ զարգացնելով այդ ընտանիքների աշխատանքային տնտեսական ներուժը:
3) Տնտեսության փոփոխությունները (զարգացում, անկում, ճգնաժամ և այլն) հանգեցնում են ընտանիքների աղքատացման կամ աղքատությունից դուրս գալու հարցում նշանակություն ունեցող որոշակի հանգամանքների ազդեցության կշռի փոփոխության:
Նշված տենդենցները գնահատվում են տնային տնտեսությունների կենսապայմանների հետազոտություններով: ՀՀ-ում նման հիմնական հետազոտությունն իրականացնում է ՀՀ վիճակագրական կոմիտեն յուրաքանչյուր տարի: Այդ և նման այլ հետազոտությունների, ներառյալ նախարարության տնօրինման տիրույթում գտնվող տարբեր տեղեկատվական համակարգերի տվյալների հիման վրա, վերլուծական աշխատանքների արդյունքում հասցեական ծրագրերի թիրախավորման բանաձևում օգտագործվող աղքատության և զրկանքների բնութագրիչների կշիռները կվերանայվեն, կկիրառվեն լրացուցիչ այլ ցուցանիշներ:
Ընտանիքների սոցիալական խոցելիության, աղքատության, սոցիալական զրկանքների և բացառումների գնահատման մեթոդաբանության փոփոխությունների հիման վրա փոխվում են նաև սոցիալական դեպքի վարման ժամանակ կիրառվող ցուցանիշները:
4) ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի տեղեկատվական ենթահամակարգը մշակված է, որի արդյունքում ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի տեղեկատվական ենթահամակարգը շահագործվում է ՀՀ 55 ՍԱՏՄ-ների կողմից, տվյալները ստացվում են առցանց ինքնաշխատ եղանակով, սոցիալական կարիքների գնահատումն իրականցվում է արդյունավետ եղանակով՝ սոցիալական ծառայությունների համախումբը ընտրվում է ելնելով ընտանիքի սոցիալական կարիքներից, արդյունավետորեն արձագանքում է ընտանիքների, առավելապես մանկական աղքատության և զրկանքների նվազեցմանը:
5) Սոցիալական դեպքի վարման համար սոցիալական աշխատողը կատարում է տնային այցելություններ՝ միջինում տարեկան 5-8 անգամ: Այդ այցելությունը կարող է լինել ինչպես ՍԱՏՄ գտնվելու բնակավայրում, այնպես էլ այդ բնակավայրից դուրս (մինչև 65-70 կմ): Միաժամանակ, սոցիալական աշխատողը համագործակցում է այլ կազմակերպությունների մասնագետների հետ՝ թե այցելությունների, թե հեռախոսազանգերի միջոցով: Այս աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ են որոշակի ֆինանսական միջոցներ: Սոցիալական դեպքի վարման մեկ միավորի կազմակերպական ծախսերի արժեքը որոշված լինելու պարագայում հնարավոր կլինի ՀՀ պետական բյուջեում նախատեսել համապատասխան ֆինանսական միջոցներ՝ հիմնավորված հայտի հիման վրա:

6) կյանքի դժվարին իրավիճակում գտնվող շահառուն ունի բազմաբնույթ սոցիալական խնդիրներ, որոնց լուծում է պահանջում է տարբեր մոտեցումներ՝ իրենց համապատասխան ֆինանսական միջոցներով: Ներկայումս նման ծրագրեր իրականացնում են աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գործընկեր ոչ պետական տեղական և միջազգային կազմակերպությունները՝ զարգացնելով այդ անձանց (ընտանիքների) տնտեսական աշխատանքային կարողությունները: Աջակցության այդ փաթեթն ունի դրամական որոշակի արժեք և ծրագրերի շարունակականությունն ապահովելու համար անհրաժեշտ է հաշվարկել սոցիալական փաթեթի միջին արժեք՝ դրա նվազագույն և առավելագույն չափերով: Այս մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ յուրաքանչյուր շահառու ունի իր կարիքները՝ թեթև, միջին և ծանր ու քրոնիկ կարգավիճակով:

7) ՀՀ պետական բյուջեում «Սոցիալապես անապահով ընտանիքների աջակցություն» ծրագրում ներառված են նաև «Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում», «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց (ընտանիքներին) սոցիալական աջակցության փաթեթի տրամադրում» միջոցառումները: Վերջին միջոցառումը կարող է ունենալ ենթամիջոցառումներ՝ ըստ սոցիալական կարիքների կամ շահառուների հիմնական խմբերի:

8) Սույն ծրագրի 7-րդ կետով նախատեսված միջոցառումների իրականացվելու են մրցութային հիմունքներով ընտրված կազմակերպությունների միջոցով: Մրցույթին մասնակցելու իրավասություն կունենա այն կազմակերպությունը, որը կբավարարի ծրագրի համար սահմանված չափորոշիչներով ծառայությունների տրամադրման պահանջներին:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ա. ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը չի գերազանցի բնակչության 14%-ը

բ. . ՍԱՏՄ համակարգչային պարկն ամբողջությամբ կվերազինվի, 55 ՍԱՏՄ-ների բոլոր աշխատողները կշահագործեն արդիական համակարգիչներ

գ. կապահովվի պետական բյուջեից ֆինանսավորումը

Կսահմանվեն սոցիալական պաշտպանության ոլորտում պատվիրակման ենթակա ծրագրերի չափորոշիչները

դ. կկնքվեն մրցութային հիմունքով սոցիալական ծառայությունների պատվիրակման պայմանագրերը:

**16.4 Սոցիալական պաշտպանության համակարգի՝ արտակարգ անհետաձգելի իրավիճակների, աղետների և ցնցումների արձագանքման, դիմակայունության մեխանիզմների ներդրում**

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը** բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժնի առաջին պարբերությունով սահմանված նպատակից՝ քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավելում:

1.1 **կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանում արտակարգ անհետաձգելի իրավիճակների, աղետների, ռիսկը բարձր է, սակայն սոցիալական պաշտպանության համակարգի արագ արձագանքման մեխանիզմները խիստ անբավարար են:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

1) ընտանիքի, անձի համար առաջացած արտակարգ, կյանքին, առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակի առաջացման դեպքում սոցիալական պաշտպանության համակարգի կողմից արագ արձագանքման մեխանիզմ կարող է հանդես գալ սոցիալական շտապ օգնության, այդ թվում մթերային բանկի ստեղծումը: Նախատեսվում է, որ սոցիալական շտապ օգնության, այդ թվում մթերային բանկի, ստեղծումն իրականացվելու է պետություն-մասնավոր գործակցության միջոցով: Այս ծրագրում իր ներդրումը կարող է ունենալ յուրաքանչյուր ոք, համակարգին նվիրաբերելով որոշակի նյութական՝ կենցաղային առաջին անհրաժեշտության ապրանքներ, հագուստ, մթերք և այլն, օգնություն, որը պահեստավորվելուց հետո վերաբաշխվելու է դրանց կարիքն ունեցող ընտանիքներին, անձանց: Պետություն-մասնավոր հատված գործակցության միջոցով ներդրվելու է արագ արձագանքման գործիք՝ տեղեկատվական հարթակ, որտեղ կգրանցվեն շտապ օգնության կարիքները և համագործակցող կողմերը կկարողանան արագ հասցնել անհրաժեշտ օգնությունը:

2) ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի տեղեկատվական ենթահամակարգում ներառված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, հատուկ կարիք ունեցող (տեսողության, լսողության, տեղաշարժման խնդիրներ ունենալու հանգամանք) տվյալները, որը հնարավորություն կտա աղետների, ռիսկերի դեպքում անմիջական և թիրախային աջակցություն ցույց տալ նրանց:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ա. կձևավորվի է սոցիալական շտապ օգնության, այդ թվում՝ մթերային բանկի, համակարգը

բ. ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի տեղեկատվական ենթահամակարգում կներառվի է աղետների, ռիսկերի դեպքում արագ արձագանքման մեխանիզմների ծրագրային փաթեթը:

**16.5 Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ամբողջական ներդրում**

**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժնի առաջին պարբերությունով սահմանված նպատակից՝ քաղաքացիների

կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավելում:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը ներդրվում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի բաղադրիչներն են՝ լիազորած պետական մարմինը, միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերը, աջակցող ցանցը (սույն օրենքով սահմանված սոցիալական համագործակցության համաձայնագրի կողմերը), համալիր կենտրոնը, տարածքային մարմինները, ընտանիքի սոցիալական գնահատման համակարգը և միասնական տեղեկատվական համակարգը:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հանրապետությունում գործում են դեռևս 24 համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ նախատեսված 55-ի դիմաց: Դեռևս չի գործում միասնական տեղեկատվական համակարգը և ամբողջությամբ չի ներդրված ընտանիքի սոցիալական գնահատման համակարգը: Առաջարկվող լուծումները միջոցառումների ծրագրի 15.3 և 16.1 կետերով նախատեսված ընտանիքի սոցիալական գնահատման և միասնական տեղեկատվական համակարգերի ներդրումն է:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Կբարելավվի սոցիալական աջակցության տարածքային մարմինների կառավարման համակարգը՝ ապահովելով դրանց միասնական ենթակայություն, կձևավորվեն ընտանիքի սոցիալական գնահատման և միասնական տեղեկատվական համակարգերը, որոնց արդյունքով 2023թ. տարեվերջ կգործեն բոլոր 55 ՀՍԾՏԿ-ները:

**16.6 Բնակարանային ապահովության համալիր ծրագրի իրականացում սոցիալական առանձին խմբերի համար**

**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժնի առաջին պարբերությունով սահմանված նպատակից՝ քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավելում:

1.1. **կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ կառավարության 10.09.2015թ. N1069-Ն որոշմամբ սահմանված կարգով կացարանում տեղավորվելու իրենց հերթին են սպասում մանկատան 219 շրջանավարտներ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին դասված 128 և սոցիալապես անապահով 59 անձինք: Որոշմամբ սահմանված կարգով կացարանում բնակվելու իրավունքը իրացվում է պայմանագրային հիմունքով՝ առավելագույնը 10 տարի ժամկետով:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Սոցիալական բնակարանային հերթացուցակում առանձին խումբ է մանկատան շրջանավարտ լինելը: Ընդ որում ներկայումս մանկատներում շարունակում են բնակվել 18 տարեկանը լրացրած անձինք, որի պատճառը բնակարան չունենալն է: Մանկատան շրջանավարտները, մնացած սոցիալական խմբերը, որպես կանոն, բացի բնակարանային խնդրից ունեն նաև հասարակության ներառման, ուսման, աշխատանքի տեղավորման, ինքնիրացման խնդիրներ, որոնց լուծումն ապահովելու է արժանապատիվ կյանք ունենալը: Բնակարանային ապահովման համալիր ծրագիրն իր մեջ ներառելու է տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչ յուրաքանչյուր ընտանիքի, անձի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա ձևավորված սոցիալական ծառայությունների փաթեթի տրամադրում՝ կացարանի տրամադրմանը զուգահեռ:

Այս համատեքստում նաև նախատեսվելու են կացարանի ձեռք բերման այլընտրանքային մեխանիզմներ՝ բնակարանի գնման վկայագրերի տրամադրում, հիպոտեքային վարկի սպասարկում՝ պետական բյուջեի միջոցներից, վարձակալության գումարի մասնակի հատուցում և այլն: Ծրագրի իրականացման պայմաններից է լինելու պետություն մասնավոր հատված գործակցությունը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ա.մանկատան շրջանավարտներին ասրժանապատիվ կյանքի հնարավորությունների ընձեռում՝ այդ թվում բնակարանի տրամադրում (219 շրջանավարտ)

բ.գործող մանկատներում բնակվող 18 տարեկանը լրացրած անձանց բնակարանի տրամադրում

գ.սոցիալապես խոցելի, միջին և ցածր վճարունակ ընտանիքների համար բնակ.տարածության տրամադրման այլըտրանքային մեխանիզմները սահմանված են:

**16.7 Բնակչության սոցիալական իրավական գիտելիքների շրջանակի ընդլայնում**

**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժնի առաջին պարբերությունով սահմանված նպատակից՝ քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավելում:

| | |
|---|---|
| | **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս իրականացվում է հիմնականում իրազեկման աշխատանքներ՝ գործող ծրագրերի մասով:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է զանգվածային լրատվամիջոցներով, այդ թվում՝ մարզային, իրականացնել ուսուցողական բնույթի հաղորդումներ և հրապարակումներ, որոնք բնակչության լայն զանգվածներին կսովորեցնի իրենց սոցիալական իրավունքները, դրանց իրականացման մեխանիզմները և կարևորությունը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Բնակչության սոցիալական իրավագիտակցության բարձր մակարդակ: |
| **17** | **<u>17.1 . «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժնի առաջին պարբերությունով սահմանված նպատակից՝ քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավելում:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սոցիալական պաշտպանության հավանության արժանացած ռազմավարությամբ սահմանված հիմնական ուղղություններից սոցիալական աջակցության բնագավառը կարգավորող իրավական դաշտը կունենա հնարավոր հակասություններ ռազմավարությամբ սահմանված հիմնական դրույթների հետ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված հակասությունները վերացնելու, սոցիալական աջակցության բնագավառի իրավակարգավորումները ռազմավարությամբ սահմանված դրույթներին համապատասխանեցնելու համար մշակվելու է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով ձևավորվելու է սոցիալական պաշտպանության ոլորտի սոցիալական աջակցության բնագառին վերաբերող հատվածի իրավական հենքը<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը կներկայացվի Վարչապետի աշխատակազմ: |
| | **<u>17.2 «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժնի առաջին պարբերությունով սահմանված նպատակից՝ քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավելում:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում մեծ դերակատարում ունեն սոցիալական աշխատողները: Սոցիալական աշխատանքը մասնագիտական գործունեություն է, այն ուղղված է մարդու իրավունքների պաշտպանությանը, մարդու կարողությունների զարգացմանը, ինքնիրացմանն ու ինքնորոշմանը:<br>Ներկայումս պետական համակարգում հիմնականում, ոչ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաճախ, որպես սոցիալական աշխատողներ են աշխատում մասնագիտական կրթություն չստացած անձինք:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>1) նախատեսվում է մշակել «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով կարգավորվելու են սոցիալական աշխատանքի մասնագետների իրավունքներ, պարտականություններ, սոցիալական երաշխիքներ, սոցիալական աշխատանքի ստանդարտների մշակման և հաստատման մեխանիզմներ, մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման համակարգը:<br>2) Օրենքի ընդունմամբ սոցիալական աշխատանքի մասնագետների որակի վերահսկողության մեխանիզմների կիրառմամբ սոցիալական աշխատուժն ու ծառայությունները ավելի պրոֆեսիոնալ կլինեն՝ որակավորման ծրագրերի զարգացման, դասընթացների հնարավորությունների և բարելավված աշխատանքային պայմանների միջոցով, ներառյալ համարժեք փոխհատուցումը, ինչպես նաև սոցիալական ծառայությունների մատուցման և սոցիալական աշխատանքի վերաբերյալ նվազագույն ստանդարտների սահմանմամբ:<br>2) կձևավորվի սոցիալական աշխատանքի մասնագիտական կրթություն իրականացնող ԲՈՒՀ-երի կոնսորցիումը<br>3) կմշակվի սոցիալական աշխատողի որակավորման կրեդիտային սանդղակը,<br>4) կսահմանվի սոցիալական աշխատողների հավաստագրման ընթացակարգը,<br>5) սոցիալական աշխատողների վերապատրաստման դասընթացները կկազմակերպվեն աշխատողների վերապատրաստումների կարիքների գնահատման արդյունքների հաշվառմամբ |

| | |
|---|---|
| | 6) քաղաքացիական ծառայության և համայնքային ծառայության վերապատրաստումների դասընթացներում կներառվեն սոցիալական աշխատողների կատարելագործման դասընթացներ<br>7) սոցիալական աշխատանքի մասնագիտական կրթական չափորոշիչը կսահմանվի մասնակցային գործընթացի արդյունքում<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների, անձանց տրամադրվում են որակյալ սոցիալական ծառայություններ: |
| | **<u>17.3 Տնտեսության բոլոր ճյուղերում հանրային զգայուն, մարդու կենսապայմանների և կյանքի որակի վրա հնարավոր ազդեցություն ունեցող նոր ներդրվող, կամ գործողներում փոփոխություններ կատարող ծրագրերի, ռազմավարությունների իրավական ակտերի նախագծերի (այսուհետ՝ Ծրագիր) սոցիալական ազդեցության գնահատման իրականացում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման հավելվածի 4.2 բաժնի առաջին պարբերությունով սահմանված նպատակից՝ քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավելում:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Տնտեսության բոլոր ճյուղերում հանրային զգայուն, մարդու կենսապայմանների և կյանքի որակի վրա հնարավոր ազդեցություն ունեցող նոր ներդրվող, կամ գործողներում փոփոխություններ կատարող ծրագրերի, ռազմավարությունների իրավական ակտերի նախագծերի (այսուհետ՝ Ծրագիր) ծրագրերից ոչ բոլորն գնահատվում դրանց սոցիալական ազդեցությունը տեսանկյունից, գնահատումն էլ կատարվում է արագ, առանց հետազոտության:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>1) Ծրագրերի սոցիալական ազդեցության գնահատման մեթոդաբանությունը մշակվելու է հաշվի առնելով միջազգային և հայաստանյան փորձը՝ մասնակցային ակզբունքով: Ծրագրերի գնահատումը իրականացվելու է գիտականորեն հիմնավորված մեթոդաբանությամբ:<br>2) Ծրագրերը սոցիալական ազդեցության գնահատումը կրում է բնականոն ընթացք<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Տնտեսության տարբեր ճյուղերում իրականացվող բարեփոխումները կատարվում են առանց բնակչության շրջանում սոցիալական լարվածության: |
| **18** | **<u>18.1 «Երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի (փաթեթը) Վարչապետի աշխատակազմ ներկայացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Սահմանադրության պահանջներով և նպատակ ունի մեղմել նախորդ ժամանակահատվածում արձանագրված և առաջիկայում կանխատեսվող ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները :<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Անկախության շրջանում ՀՀ ժողովրդագրական իրավիճակում արձանագրվել են բացասական միտումները: Մասնավորապես, 1992-2018թթ. ժամանակահատվածում ծնունդների թիվը նվազել է գրեթե կրկնակի և կազմել է 1992թ.՝ 70 581 ծնունդ, 2018թ.՝ 36502 ծնունդ, իսկ բնական աճի ցուցանիշը (ծնունդների և մահերի դրական տարբերությունը) նվազել է շուրջ 4 անգամ և կազմել է 1992թ.՝ 44 757, 2018թ.՝ 10857:<br>Խնդրո առարկա ժամանակահատվածում էական անկում է գրանցել ծնելիության գումարային գործակիցը և կազմել է 1992թ.՝ 2,347, 2018թ.՝ 1,556, իսկ ՀՀ-ում բնական աճի ցուցանիշը կազմել է շուրջ 490 000 անձ, որից 1991-2000թթ.՝ 263811 անձ, 2001-2010թթ.՝ 119042 անձ, 2011-2018թթ.՝ 107867 անձ:<br>Խնդիրը հատկապես խորն է գյուղական բնակավայրերում, որտեղ ծնելիության գումարային գործակիցը 1992թ. 3,242-ից նվազել է մինչև 1,465 (քաղաքային բնակավայրերում նույն ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 2,342 և 1,627).<br>Միաժամանակ, նույն ժամանակահատվածում ՀՀ բնակչության թիվը նվազել է շուրջ 500 000 անձով և կազմել է 1992թ.՝ 3,463.7 հազ. անձ, 2018թ.՝ 2965.1 հազ. անձ, ինչը հետևանք է արտագաղթի բարձր տեպերի. 1992-2018թթ. ՀՀ-ից հեռացել է շուրջ 1 մլն անձ:<br>Հարկ է նկատի ունենալ, որ վերը նշված գործոնների ազդեցության արդյունքում առաջիկայում իրավիճակն էլ ավելի կվատթարանա. նույնիսկ զրոյական արտագաղթի դեպքում, եթե չարձանագրվի ծնելիության ցուցանիշի բարելավում, սկսած 2020-ական թվականներից ՀՀ-ում մահերի թիվը կգերազանցի ծնունդների թվին, այսինքն կարձանագրվի բնակչության թվաքանակի բնական անկում:<br>Միաժամանակ, համաձայն ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են ծնելիության և բազմազավակության |

խթանումը, իսկ ՀՀ կառավարության ծրագրի 4.2-րդ մասի համաձայն նախատեսվում է մշակվել և կյանքի կոչել ծնելիության խրախուսման, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության նոր ծրագրեր:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերը նշված իրողությունները՝ առաջարկվում է ՀՀ ԱԺ-ում քննարկել «Երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը (փաթեթը):

Օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների, բազմազավակ ընտանիքների աջակցության հիմնական ուղղությունները (սկզբունքները) և ծրագրերը:

Մասնավորապես, նախատեսվում են քննարկել աջակցության հետևյալ տեսակները.

1) Երիտասարդ և երեխաներ ունեցող (խնամող) ընտանիքների հիպոթեկային վարկով բնակարան ձեռք բերելու համար կանխավճարի մասնակի կամ ամբողջական ֆինանսավորում (օրինակ՝ անտոկոս վարկի միջոցով), հիպոթեկային վարկի մայր գումարի և տոկոսների մասնակի կամ ամբողջական սուբսիդավորում,
2) Երեխաների թվից և ծնողների վճարած եկամտային հարկի գումարից կախված՝ նպաստների համակարգ,
3) Երեխա խնամող վարձու աշխատողների (ծնողների) համար լրացուցիչ աշխատանքային արտոնությունների և երաշխիքների սահմանում,
4) Գյուղական բնակավայրում բնակվող՝ Երիտասարդ և երեխաներ ունեցող (խնամող) ընտանիքների համար թիրախային ծրագրերի իրականացում,
5) Վերարտադրողական առողջության խնդիր ունեցող անձանց համար աջակցության տեսակների սահմանում և այլն:

Աջակցության ծրագրերի ընտրությունը կկատարվի՝ հաշվի առնելով ՀՀ վարչապետի ղեկավարությամբ գործող ազգային խորհրդի շրջանակներում ծավալված քննարկումները:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում ակնկալվում է խթանել ծնելիությունը և նվազեցնել արտագաղթի տեմպերը՝ հաստատուն հիմքեր և նախապայմաններ ձևավորելով բնակչության թվաքանակի հետագա կայուն աճն ապահովելու համար:

**<u>18.2 «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (փաթեթը) Վարչապետի աշխատակազմ ներկայացում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Սահմանադրության պահանջներով և նպատակ ունի մեղմել նախորդ ժամանակահատվածում արձանագրված և առաջիկայում կանխատեսվող ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով կարգավորվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի և երեխայի խնամքի նպաստի նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները:

Մասնավորապես, համաձայն օրենքի՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը տարբերակվում է նոր ծնված երեխայի հերթական կարգաթվով՝ հաշվի առնելով նոր ծնված երեխայի ծնողների մյուս երեխաների և զավակների թիվը:

Միաժամանակ, երրորդ և հաջորդ երեխայի ծնվելու դեպքում (եթե երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է ընտանիքում ծնված երրորդ և հաջորդ երեխայի համար սահմանված չափով) երեխայի ծննդյան միանվագ նպաստի մի մասը վճարվում է բանկում նոր ծնված երեխայի անվամբ բացված հատուկ հաշվին (պետական աջակցության հաշվին) մուտքագրելու միջոցով:

Մյուս կողմից, վերը նշված օրենքի համաձայն՝ մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունեն երեխայի՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողը:

Հաշվի առնելով նախընթաց ժամանակահատվածում ՀՀ ժողովրդագրական իրավիճակում արձանագրված բացասական միտումները՝ գործող իրավակարգավորումները և տրամադրված երաշխիքները համահունչ չեն ժողովրդագրության բնագավառում մեր երկրի առջև ծառացած մարտահրավերներին:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերը նշված իրողությունները՝ առաջարկվում է ՀՀ ԱԺ-ում քննարկել «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության փոփոխություններ կատարելու մասին» օրենքում ՀՀ օրենքի նախագիծը (փաթեթը)

Օրենքի նախագծով առաջարկվում է.

1) վերանայել երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափի տարբերակման սկզբունքը՝ ավելացնելով 1-ին և 2-րդ երեխաների դեպքում տրվող նպաստի չափը,
2) վերացնել ընտանեկան դրամագլխի համակարգը՝ այն ինտեգրելով «Երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով սահմանված երաշխիքներին,

3) ընդլայնել խնամքի նպաստի ծածկույթը և չափը: Ի լրումն դրա, կներդրվի մեխանիզմ, որը հնարավորություն կտա Կառավարությանը որոշակի չափորոշիչների հիման վրա սահմանել նպաստի վճարման այլ պայմաններ, օրինակ, բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում ակնկալվում է խթանել ծնելիությունը և նվազեցնել արտագաղթի տեմպերը՝ հաստատուն հիմքեր և նախապայմաններ ձևավորելով բնակչության թվաքանակի հետագա կայուն աճն ապահովելու համար:

**18.3 «ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի Վարչապետի աշխատակազմ ներկայացում**

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Նախագծի անհրաժեշտությունը բխում է ՀՀ օրենքի պահանջներից և նպատակ ունի մեղմել նախորդ ժամանակահատվածում արձանագրված և առաջիկայում կանխատեսվող ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Համաձայն «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշմամբ սահմանված է երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը.

1) Առաջին երեխայի ծննդյան դեպքում՝ 50 000 դրամ,
2) Երկրորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 150 000 դրամ,
3) Երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1 000 000 դրամ,
4) Հինգերորդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1 500 000 դրամ,

Հաշվի առնելով նախընթաց ժամանակահատվածում ՀՀ ժողովրդագրական իրավիճակում արձանագրված բացասական միտումները՝ ակնհայտ է, որ երեխայի ծննդյան միանվագ սահմանված չափերը համահունչ չեն ժողովրդագրության բնագավառում մեր երկրի առջև ծառացած մարտահրավերներներին:

Միաժամանակ, համաձայն ՀՀ ԱԺ հավանությանն արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4.2-րդ մասի՝ նախորդ ժամանակահատվածում արձանագրված ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները մեղմելու նպատակով մշակվելու և կյանքի են կոչվելու ծնելիության խրախուսման, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության նոր ծրագրեր, որոնց շրջանակներում, *ըստ անհրաժեշտության, կվերանայվեն նաև գործող ծրագրերը:*

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերը նշվածը և «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում կատարված՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափի տարբերակման սկզբունքներին վերաբերող փոփոխությունները՝ նախատեսվում է համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ և սահմանել երեխայի ծննդյան միանվագ նպաստի նոր չափեր:

Միաժամանակ, հաշվի առնելով «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի դրույթները (կատարված փոփոխությունները)՝ համապատասխան փոփոխություններ կակատարվեն նաև երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման կարգում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում ակնկալվում է խթանել ծնելիությունը և նվազեցնել արտագաղթի տեմպերը՝ հաստատուն հիմքեր և նախապայմաններ ձևավորելով բնակչության թվաքանակի հետագա կայուն աճն ապահովելու համար:

**18.4 «ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի Վարչապետի աշխատակազմ ներկայացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Նախագծի անհրաժեշտությունը բխում է ՀՀ օրենքի պահանջներից և նպատակ ունի մեղմել նախորդ ժամանակահատվածում արձանագրված և առաջիկայում կանխատեսվող ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)**

Համաձայն «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշմամբ սահմանված է երեխայի խնամքի նպաստի չափը՝ 18000 դրամ:

Հաշվի առնելով նախընթաց ժամանակահատվածում ՀՀ ժողովրդագրական իրավիճակում արձանագրված բացասական միտումները՝ ակնհայտ է, որ սահմանված չափը համահունչ չէ ժողովրդագրության բնագավառում մեր երկրի առջև ծառացած մարտահրավերներներին:

Միաժամանակ, համաձայն ՀՀ ԱԺ հավանությանն արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4.2-րդ մասի՝ նախորդ ժամանակահատվածում արձանագրված ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները

| | |
|---|---|
| | մեղմելու նպատակով մշակվելու և կյանքի են կոչվելու ծնելիության խրախուսման, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության նոր ծրագրեր, որոնց շրջանակներում, ըստ անհրաժեշտության, կվերանայվեն նաև գործող ծրագրերը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)**<br>Հաշվի առնելով վերը նշվածը և «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում կատարված՝ խնամքի նպաստին վերաբերող փոփոխությունները՝ նախատեսվում է համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման մեջ՝ համապատասխան փոփոխություններ կատարելով նաև խնամքի նպաստի նշանակման և վճարման կարգում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման արդյունքում ակնկալվում է խթանել ծնելիությունը և նվազեցնել արտագաղթի տեմպերը՝ հաստատուն հիմքեր և նախապայմաններ ձևավորելով բնակչության թվաքանակի հետագա կայուն աճն ապահովելու համար: |
| **19** | <u>**19.1 «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն և 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և Վարչապետի աշխատակազմ ներկայացում**</u><br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Նախագծի անհրաժեշտությունը նպատակ ունի ապահովել ՀՀ կառավարության ծրագրի 4.2-րդ մասի՝ կենսաթոշակների բարձրացմանը վերաբերող դրույթների իրականացումը:<br>«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափից և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքից (հաշվի առնելով աշխատանքային ստաժի տևողությունը):<br>Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափից և զինվորական ստաժի մեկ տարվա արժեքից (հաշվի առնելով զինվորական ստաժի տևողությունը):<br>Աշխատանքային և զինվորական կենսաթոշակների չափերը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակների չափերը, նվազագույն կենսաթոշակի չափը, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը, զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը, ինչպես նաև՝ օրենքով սահմանված դեպքերում կենսաթոշակների չափերը սահմանված են ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշմամբ:<br>Համաձայն «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշմամբ սահմանված են ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների (նախկին սոցիալական կենսաթոշակներ) չափերը:<br>Ըստ այդմ, կառավարության ծրագրի վերը նշված դրույթի իրականացումն ապահովելու՝ կենսաթոշակների և նպաստների չափերը բարձրացնելու համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն և 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշումներում՝ բարձրացնելով հիմնական կենսաթոշակների չափերը, նվազագույն կենսաթոշակի չափը, աշխատանքային և զինվորական ծառայության ստաժների մեկ տարվա արժեքները, նպաստների չափերը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության ծրագրի 4.2-րդ մասի համաձայն՝ նախատեսվում է պարբերաբար բարձրացնել պետական կենսաթոշակների չափերը՝ ապահովելով գնաճի նկատմամբ միջին կենսաթոշակի չափի առաջանցիկ աճ:<br>Ըստ այդմ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնական կենսաթոշակների չափերը, նվազագույն կենսաթոշակի չափը, աշխատանքային ստաժի և զինվորական ծառայության ստաժների մեկ տարվա արժեքը, նպաստների և օրենքով սահմանված դեպքերում՝ կենսաթոշակների չափերը սահմանելու լիազորություններն օրենքներով վերապահված է ՀՀ կառավարությանը, դրանց պարբերաբար բարձրացման միջոցով կապահովվի կենսաթոշակների և նպաստների չափերի բարձրացումը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վերը նշվածը՝ նախատեսվում է 2019-2022թթ. ժամանակահատվածում, յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ին տասնօրյակում (Բյուջեի մասին օրենքն ընդունվելուց հետո) ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն և 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ 2020 թվականի հունվարի 1-ից, 2021 թվականի հունվարի 1-ից, 2022 թվականի հունվարի 1-ից և 2023 թվականի հունվարի 1-ից վերանայել կենսաթոշակների չափերը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական ցուցանիշները, այդ թվում՝ նվազագույն կենսաթոշակի չափը՝ այն սահմանելով ծայրահեղ (պարենային) աղքատության գծի չափ:<br>ՀՀ 2019թ. պետական բյուջեով աշխատանքային և զինվորական կենսաթոշակների, ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստների համար հատկացվել է ավելի քան 270 մլրդ դրամ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Միջոցառման արդյունքում ակնկալվում է ապահովելով աշխատանքային և զինվորական միջին կենսաթոշակի չափի աճ՝ յուրաքանչյուր տարի 10 %-ով, ինչպես նաև՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերի աճ՝ յուրաքանչյուր տարի շուրջ 4 %-ով (կանխատեսվող գնաճի չափով):<br>Արդյունքում, նվազագույն կենսաթոշակի չափը (ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը) և միջին աշխատանքային կենսաթոշակի չափը համապատասխանաբար կկազմեն.<br>2020թ.՝ շուրջ 26500 դրամ և շուրջ 44000 դրամ,<br>2021թ.՝ շուրջ 27500 դրամ և շուրջ 48000 դրամ,<br>2022թ.՝ շուրջ 28500 դրամ և շուրջ 52000 դրամ,<br>2023թ.՝ շուրջ 29500 դրամ և շուրջ 57000 դրամ:<br>Աշխատանքային և զինվորական կենսաթոշակների, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների վճարման համար անհրաժեշտ լրացուցիչ միջոցները կկազմեն.<br>2020թ.՝ 27 մլրդ դրամ,<br>2021թ.՝ 28 մլրդ դրամ (2019թ. նկատմամբ՝ 55 մլրդ դրամ),<br>2022թ.՝ 31 մլրդ դրամ (2019թ. նկատմամբ՝ 86 մլրդ դրամ),<br>2023թ.՝ 34 մլրդ դրամ (2019թ. նկատմամբ՝ 120 մլրդ դրամ):<br>Ծայրահեղ աղքատության գծի հաշվարկման համար հիմք են ընդունվել յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի օրենքով սահմանվող՝ 12-ամսյա գնաճի տատանումների թույլատրելի միջակայքը՝ 4 +/-1.5 տոկոսային կետ և ծայրահեղ աղքատության գծի 2019թ. կանխատեսվող մեծությունը՝ 25500 դրամ: |
| **20** | **20.1 Կենսաթոշակ և դրամական այլ վճարների վերաբերյալ որոշումներ կայացնելու ընթացակարգերի վերակազմակերպում, նոր ընթացակարգերի ամրագրում ՀՀ օրենսդրությամբ և կիրարկում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումը նպատակ ունի կատարելագործել բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցման ընթացակարգերը՝ բարելավելով շահառուներին մատուցվող ծառայությունների որակը, շարունակական նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը՝ շահառուի և որոշում ընդունողների միջև շփումը նվազագույնի հասցնելու միջոցով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման՝ կենսաթոշակների և այլ դրամական վճարների վերաբերյալ որոշումները կայացնում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը՝ տարածքային ստորաբաժանումների միջոցով:<br>Գործող իրավակարգավորումների շրջանակներում առկա են հետևյալ հիմնական խնդիրները.<br>1) նույն օղակն է իրականացնում թե ոչ մասնագիտական գործառույթը (դիմումների հաշվառում և այլն), թե բուն մասնագիտական գործառույթը՝ կենսաթոշակների և այլ դրամական վճարների նշանակման և վճարման վերաբերյալ որոշումների կայացումը, ինչը խնդրահարույց է ռեսուրսների արդյունավետ օգտագործման տեսանկյունից,<br>2) տարածքային բաժինները ձևավորված են նախկին վարչատարածքային բաժանման (շրջանների) հիման վրա և արդյունքում առկա է ծանրաբեռնվածության խիստ անհավասարակշռվածություն տարբեր ստորաբաժանումների (աշխատակիցների) միջև,<br>3) գործող կառուցակարգերը (սահմանված ընթացակարգերը) անհնար են դարձնում առանձին ծառայությունների (գործառույթների) պատվիրակումը մասնավոր հատվածին և այլն:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վերը նշվածը՝ նախատեսվում է վերակազմակերպել կենսաթոշակների և այլ դրամական վճարների վերաբերյալ որոշումներ կայացնելու ընթացակարգերը:<br>Մասնավորապես, Ծառայության կողմից իրականացվող վարչարարության արդյունավետությունը բարելավելու նպատակով առաջարկվում է Ծառայության տարածքային բաժինների փոխարեն ձևավորել սպասարկման գրասենյակներ, որտեղ իրականացվելու է դիմումների հաշվառման, ոչ մասնագիտական ծառայությունների մատուցման գործընթացը (օրինակ՝ վճարման եղանակի փոփոխություն կամ լիազորագրով կենսաթոշակի վճարում) և կենսաթոշակների և այլ դրամական վճարների նշանակման կենտրոններ (որտեղ կայացվելու են կենսաթոշակ կամ այլ դրամական վճար նշանակելու վերաբերյալ որոշումները):<br>Ըստ այդմ, նախատեսվում է.<br>1) իրականացնել նոր ընթացակարգերի կիրարկման փորձնական ծրագիր և փորձնական ծրագրի արդյունքների հաշվառմամբ՝ լրամշակել ընթացակարգերը,<br>2) փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ՝ նոր ընթացակարգերն ամրագրելով ՀՀ օրենսդրությամբ,<br>3) համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հունիսի 14-ի N 74-Լ հրամանում՝ Ծառայության կառուցվածքը համապատասխանեցնելով |

նոր իրողություններին,

4) հաստատել Սպասարկման կենտրոնների և նշանակման կենտրոնների կանոնադրությունները՝ տարանջատելով սպասարկման գրասենյակների և նշանակման կենտրոնների գործառույթները (լիազորությունները, պատասխանատվության շրջանակը),
5) համապատասխան փոփոխություններ կատարել «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում ակնկալվում է.

մասնագիտական ներուժի համախմբման միջոցով բարելավել կայացվող որոշումների իրավաչափությունը,
ձևավորել նախապայմաններ՝ առանձին գործառույթներ պատվիրակելու միջոցով իրականացնելու համար:
Ծառայության 51 տարածքային բաժինների փոխարեն ձևավորել շուրջ 50 սպասարկման գրասենյակներ և շուրջ 10 կենսաթոշակների և այլ դրամական վճարների նշանակման կենտրոններ:

**20.2 «ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի Վարչապետի աշխատակազմ ներկայացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Նախագիծը նպատակ ունի կատարելագործել բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցման ընթացակարգերը՝ բարելավելով շահառուներին մատուցվող ծառայությունների որակը, շարունակական նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը՝ շահառուի և որոշում ընդունողների միջև շփումը նվազագույնի հասցնելու միջոցով:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Համաձայն «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշմամբ սահմանված է երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը, այդ թվում՝ նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Հարկ է նաև նկատի ունենալ, որ նախընթաց ժամանակահատվածում մշակվել և գործարկվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստը առցանց դիմումի հիման վրա նշանակելն ու վճարելն ապահովող ենթահամակարգ (եթե երեխայի ծնունդը գրանցել է ՀՀ ՔԿԱԳ մարմինը), որի շրջանակներում նպաստը, անկախ երեխայի կարգաթվից, նշանակվում և վճարվում է առանց որևէ փաստաթուղթ ներկայացնելու՝ ընդունելով այլ տեղեկատվական համակարգերից ստացված տվյալները:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերը նշվածը՝ նախատեսվում է համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ՝ վերացնելով երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար փաստաթուղթ ներկայացնելու պահանջը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում ակնկալվում է վերացնել երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար փաստաթուղթ ներկայացնելու պահանջը (եթե երեխայի ծնունդը գրանցել է ՀՀ ՔԿԱԳ մարմինը) և թեթևացնել շահառուների վարչական բեռը:

**20.3 Գործատուների մոտ գտնվող Աշխատանքային գրքույկների թվայնացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումը նպատակ ունի կատարելագործել բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցման ընթացակարգերը՝ բարելավելով շահառուներին մատուցվող ծառայությունների որակը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2015 թվականի հունիսի 22-ի ՀՕ-96-Ն օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերացվել է աշխատանքային գրքույկների պարտադիր կիրառությունը: Ըստ այդմ, հիմնական աշխատավայրի գործատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իր մոտ վարվող աշխատանքային գրքույկները ներկայացնել ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն՝ աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու նպատակով:

2017-2018թթ. թվայնացվել են գործատուների մոտ գտնվող Աշխատանքային գրքույկների մի մասը միայն:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերը նշվածը՝ նախատեսվում է շարունակել և ավարտին գործատուների մոտ գտնվող աշխատանքային գրքույկները սոցիալական ապահովության ծառայություն ներկայացնելու և սկանավորելու գործընթացը:

Գործատուների մոտ գտնվող աշխատանքային գրքույկները թվայնացնելու (սկանավորելու) համար անհրաժեշտ

միջոցները կազմում են շուրջ 73 մլն. դրամ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում ակնկալվում է թվայնացնել գործատուների մոտ գտնվող աշխատանքային գրքույկները և գրքույկում առկա տեղեկատվությունը ներառել պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան, ինչը հնարավորություն կտա ունենալ անձանց աշխատանքային գործունեության՝ մինչև 2013թ. ընկած ժամանակահատվածի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն՝ բացառելով ոչ իրավաչափ փաստաթղթերի հիման վրա կենսաթոշակ նշանակելու հավանականությունը և նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

**<u>20.4 Կենսաթոշակների, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպ¬քում, մայրության, երեխայի ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների բնագավառում ռիսկերի վրա հիմնված վերահսկողության համակարգի մոդելի կիրարկում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումը նպատակ ունի նվազեցնել ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մայրության, երեխայի ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների բնագավառներում առկա կոռուպցիոն ռիսկերը և, ռիսկերի վրա հիմնված վերահսկողության համակարգի անցում կատարելու միջոցով բարձրացնել ՀՀ պետական բյուջեի ծախսերի հասցեականությունը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Տարեցտարի աճում են սոցիալական ապահովության ծրագրերին ուղղվող բյուջետային միջոցները: Մասնավորապես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության միջոցով տրամադրվող գումարները՝ կազմել են 2014 թվականին՝ 250,051,278.3 հազ. դրամ, 2015 թվականին՝ 285,966,371.8 հազ. դրամ, 2016 թվականին՝ 293,340,730.0 հազ. դրամ, 2017 թվականին՝ 291,775,171.1 հազ. դրամ:

Ակնհայտ է, որ վերը նշված ծավալների պարագայում անհնար է միայն վարչական մեթոդներով արդյունավետ կերպով կառավարել առկա ռիսկերը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ նախատեսվում է հզորացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության աշխատակազմի վերլուծական կարողությունները՝ անցում կատարելով ռիսկերի վրա հիմնված վերահսկողության համակարգի:

Նախընթաց ժամանակահատվածում ձևավորվել են վերը նշվածի իրականացման համար բավարար նախապայմաններ: Մասնավորապես, կատարվել են կենսաթոշակների և նպաստների նշանակման և վճարման գործընթացների արդյունավետությունն ապահովող օրենսդրական փոփոխությունները, կատարելագործվել է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգը, որի շրջանակներում կիրառվող տեխնոլոգիաներն ու առաջադրված լուծումները բավարար հիմքեր են ստեղծել շահառուներին մատուցվող ծառայությունները որակական նոր հարթություն տեղափոխելու, պետական կենսաթոշակային ապահովության և նպաստների ոլորտի կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համար:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Կենսաթոշակային ապահովության և պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետության հետագա բարելավումը ենթադրում է անցում կատարել ռիսկերի վրա հիմնված վերահսկողության համակարգի:

Ըստ այդմ, նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

1) նկարագրել ռիսկերի կառավարման ինստիտուցիոնալ շրջանակը,

2) սահմանել ռիսկերի կառավարման գործընթացի փուլերը և նկարագրել այդ փուլերից յուրաքանչյուրը,

3) նկարագրել ռիսկերի բացահայտման և կառավարման համար անհրաժեշտ, ինչպես նաև ռիսկերի հավանականության աստիճանի գնահատման համար անհրաժեշտ ցուցանիշները և ցուցիչները, ինչպես նաև

4) նկարագրել անհրաժեշտ ցուցանիշների ու ցուցիչների ստացման պարբերականությունը և ընթացակարգերը, ստացվող հաշվետվությունները և դրանցում առկա տեղեկատվության կազմն ու բովանդակությունը),

5) նկարագրել ՌԿՏ-ի տեղեկատվական բաղադրիչը (այդ թվում՝ «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում անհրաժեշտ փոփոխությունները) և մշակել «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում նախատեսվող փոփոխությունների տեխնիկական առաջադրանքը,

6) մշակել ՌԿՏ կիրարկումն ապահովող իրավական ակտի նախագիծ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջացառման արդյունքում կներդրվի Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության, մայրության, երեխայի ծննդյան միանվագ և խնամքի նպաստների ոլորտների գործառնական ռիսկերի կառավարման ենթահամակարգ:

**<u>20.5 Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում դիմումը մերժելու դեպքում՝ մերժման մասին ծանուցումը (ներառյալ՝ պատճառները) ինքնաշխատ եղանակով ձևավորելու, խնամքի նպաստը նշանակելու կամ մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը գործատուի էլեկտրոնային փոստի</u>**

**հասցեին ուղարկելու ենթահամակարգի մշակում և գործարկում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումը նպատակ ունի կատարելագործել բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցման ընթացակարգերը՝ բարելավելով շահառուներին մատուցվող ծառայությունների որակը, շարունակական նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս կենսաթոշակների, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մայրության, երեխայի ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների նշանակում ու վճարումն իրականացվում է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի միջոցով:

Արդյունքում էապես բարելավվել է ոլորտի կառավարման համակարգի արդյունավետությունը՝ բավարար նախապայմաններ ստեղծելով շահառուներին մատուցվող ծառայությունները որակական նոր հարթություն տեղափոխելու համար:

Մասնավորապես, «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում.

1) անձի նույնականացումն իրականացվում է բնակչության պետական ռեգիստրի տվյալների հիման վրա,
2) ինքնաշխատ եղանակով է իրականացվում աշխատանքային ստաժի տևողության հաշվարկը՝ հիմք ընդունելով աշխատանքային գործունեության ժամանակահատվածի սկիզբը և ավարտը, ինչպես նաև գործունեության ժամանակահատվածի բնույթը,
3) անձի բնակության (հաշվառման) վայրի հասցեի, մահվան վերաբերյալ տեղեկատվությունը կիրառվում է ինքնաշխատ եղանակով,
4) ավտոմատացված են կենսաթոշակի իրավունքը որոշելու ընթացակարգերը՝ հիմք ընդունելով բնակչության պետական ռեգիստրից ներբեռնված՝ անձի ծննդյան օրվա (տարիքի) վերաբերյալ տվյալները, աշխատանքային ստաժի տևողությունը և աշխատանքային գործունեության ժամանակահատվածի բնույթը,
5) հնարավորինս ավտոմատացված են վճարման ցուցակների ձևավորման գործընթացը և այլն:

Միաժամանակ, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշմաբ հաստատված կարգի՝ եթե խնամքի նպաստի դիմումը մերժվում է խնամքի արձակուրդի մասին տեղեկատվության բացակայության հիմքով կամ անձին նշանակվում է նպաստ, ապա տարածքային բաժինը դիմումը մերժելու կամ նպաստ նշանակելու մասին որոշում ընդունելու օրվանից հետո 15 օրվա ընթացքում գրությամբ տեղեկացնում է գործատուին (գործատուներին): Գրության օրինակելի ձևը սահմանում է ծառայությունը:

Հարկ է նկատի ունենալ, որ խնդրո առարկա գրությունն ամբողջությամբ ձևավորվում է ինքնաշխատ եղանակով:

Սակայն հարկ է նկատի ունենալ, որ դեռևս ոչ բոլոր գործառույթներն են ավտոմատացված:

Մասնավորապես, ինքնաշխատ եղանակով է ձևավորվում դիմումը մերժելու մասին ծանուցումը (ներառյալ՝ պատճառները) խնամքի նպաստի դիմումի դեպքում (կենսաթոշակի, այլ նպաստների դեպքում մերժման մասին ծանուցումը, ներառյալ՝ պատճառները, ձևավորում է աշխատակիցը):

Իսկ խնամքի նպաստի դեպքում գրությունը գործատուին է առաքվում փոստով, թղթային եղանակով, չնայած այն հանգամանքին, որ արդեն իսկ հասանելի է գործատուի էլեկտրոնային փոստի պարտադիր հասցե, որին կարող է առաքվել մերժման մասին ծանուցման էլեկտրոնային տարբերակը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է կատարելագործել «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգը:

Մասնավորապես, նախատեսվում է՝

1) մշակել և ներդնել կենսաթոշակ, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մայրության, երեխայի ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների դիմումը մերժելու մասին ծանուցումը (ներառյալ՝ պատճառները) ինքնաշխատ եղանակով ձևավորելու մոդուլ,
2) մշակել և ներդնել խնամքի նպաստը նշանակելու կամ մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը գործատուի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու ենթահամակարգ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում ակնկալվում է բարելավել տարածքային ստորաբաժանումների աշխատանքների արդյունավետությունը՝ էապես նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերն ու ապահովելով անձանց իրավունքների իրականացումը:

**20.6 Բանկերի հետ միանվագ դրամական վճարների և սոցիալական ապահովության հաշիվների վերաբերյալ տեղեկատվության ինքնաշխատ եղանակով փոխանակության համակարգի մշակում և գործարկում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումը պայմանավորված է բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցման ընթացակարգերը

կատարելագործելու անհրաժեշտությամբ և նպատակ ունի ավտոմատացնել որոշումների կայացման գործընթացը, ինչպես նաև բարելավել շահառուներին մատուցվող ծառայությունների որակը և կենսաթոշակային ապահովության, պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետությունը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս կենսաթոշակների, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մայրության, երեխայի ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների նշանակում ու վճարումն իրականացվում է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի միջոցով:

Արդյունքում էապես բարելավվել է ոլորտի կառավարման համակարգի արդյունավետությունը՝ բավարար նախապայմաններ ստեղծելով շահառուներին մատուցվող ծառայությունները որակական նոր հարթություն տեղափոխելու համար:

Սակայն հարկ է նկատի ունենալ, որ դեռևս ոչ բոլոր գործառույթներն են ավտոմատացված:

Դեռևս ինքնաշխատ եղանակով չի իրականացվում բանկերի հետ տեղեկատվության փոխանակության և այդ տեղեկատվությունը «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում կիրառելու ընթացակարգերը:

Վերը նշվածն էական խոչընդոտ է հանդիսանում սոցիալական ծառայությունների մատուցման ընթացակարգերը կատարելագործելու ճանապարհին:

Մասնավորապես, հնարավոր չէ ապահովել առցանց դիմումի հիման վրա վճարման եղանակի (բանկի) ընտրության հնարավորությունը:

Միաժամանակ, ներդրվել և կիրարկվում է թաղման նպաստը առցանց դիմումի հիման վրա բանկի միջոցով վճարելու ընթացակարգ: Այն էապես կրճատել է թաղման նպաստի ժամկետները, սակայն դեռևս ամբողջությամբ չեն բավարարում շահառուների կարիքներին, քանի որ թաղման արարողությունը ենթադրում է անհետաձգելի ծախսեր: Ընդ որում, խնդրո առարկա ժամկետի հետագա կրճատումը ևս փոխկապակցված է բանկերի հետ տեղեկատվության փոխանակության ինքնաշխատ համակարգի ներդրմանը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է մշակել և ներդնել (գործարկել) բանկերի հետ միանվագ դրամական վճարների և սոցիալական ապահովության հաշիվների վերաբերյալ տեղեկատվության ինքնաշխատ փոխանակության համակարգ՝ հնարավորություն վճարման եղանակի (բանկի) ընտրությունը կատարել առցանց դիմումի հիման վրա, իսկ թաղման նպաստը՝ վճարել մեկ օրվա ընթացքում:

Ըստ այդմ, նախատեսվում է.

1) մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝
2) մշակել և բանկերի հետ փոխհամաձայնեցնել միանվագ դրամական վճարների և սոցիալական ապահովության հաշիվների վերաբերյալ տեղեկատվության ինքնաշխատ փոխանակության ընթացակարգերը,
3) մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում փոփոխություններ կատարելու (համապատասխան ծրագրային ապահովություն մշակելու) համար անհրաժեշտ միջոցներ հատկացնելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
4) հիմք ընդունելով բանկերի հետ փոխհամաձայնեցված ընթացակարգերը և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման մեջ առաջարկվող փոփոխությունները՝ մշակել և ներդնել (գործարկել) համապատասխան տեղեկատվական գործիքը (ներառյալ՝ առցանց դիմումի մոդուլը):

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում ակնկալվում է բարելավել տարածքային ստորաբաժանումների աշխատանքների արդյունավետությունը՝ էապես նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը, պատահական և միտումնավոր սխալների հավանականությունը, ինչպես նաև ապահովելով անձանց իրավունքների իրականացումը:

Միաժամանակ, կձևավորվեն իրավական հիմքեր՝ Կենսաթոշակների և նպաստների վճարման եղանակի (բանկի) ընտրության համար առցանց դիմում ներկայացնելու և Թաղման նպաստը մեկօրյա ժամկետում վճարելու համար և (կնկարագրվի գործընթացը), ինչպես նաև բանկերի հետ կկնքվի համապատասխան համաձայնագիր:

<u>**20.7 ՍԷԿՏ համակարգի հետ տեղեկատվության փոխանակության և դրա կիրառության ընթացակարգերի կատարելագործում**</u>

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումը պայմանավորված է բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցման ընթացակարգերը կատարելագործելու անհրաժեշտությամբ և նպատակ ունի բարելավել շահառուներին մատուցվող ծառայությունների որակը, ինչպես նաև ավտոմատացնել որոշումների կայացման գործընթացը և կենսաթոշակային ապահովության, պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետությունը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս կենսաթոշակների, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մայրության,

երեխայի ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների նշանակում ու վճարումն իրականացվում է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի միջոցով:
Արդյունքում էապես բարելավվել է ոլորտի կառավարման համակարգի արդյունավետությունը՝ բավարար նախապայմաններ ստեղծելով շահառուներին մատուցվող ծառայությունները որակական նոր հարթություն տեղափոխելու համար:
Սակայն հարկ է նկատի ունենալ, որ դեռևս ոչ բոլոր գործառույթներն են ավտոմատացված:
Մասնավորապես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ օրենսդրության համաձայն՝ հանդիսանում է ՍԷԿՏ համակարգի օգտվող և տեղեկատվություն է ստանում կենսաթոշակառուների սահմանահատում իրականացնելու վերաբերյալ:
Սակայն, փոխանակվող տեղեկատվության կազմն ու բովանդակությունը հնարավորություն չեն տալիս այդ տեղեկատվությունն ինքնաշխատ եղանակով կիրառել «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում, ինչն էլ իր հերթին խոչընդոտ է հանդիսանում սոցիալական ծառայությունների մատուցման ընթացակարգերը կատարելագործելու ճանապարհին:
Հարկ է նկատի ունենալ, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով առանձին դեպքերում սահմանված է ՀՀ-ում փաստացի գտնվելու պահանջ՝ որպես կենսաթոշակային ապահովության իրավունքի իրականացման նախապայման:
Ըստ այդմ, գործում է առանձին դեպքերում անձամբ դիմում ներկայացնելու (ըստ էության՝ ՀՀ-ում գտնվելը հավաստելու) պահանջ:
Մասնավորապես, կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուների օբյեկտիվ դժգոհությունն է առաջացնում տարեկան մեկ անգամ բանկ ներկայանալու պահանջը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է կատարելագործել ՍԷԿՏ համակարգի հետ տեղեկատվության փոխանակության և այդ տեղեկատվությունը «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում կիրառելու ընթացակարգերը:
Ըստ այդմ, նախատեսվում է.

1) մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում և ՍԷԿՏ համակարգում փոփոխություններ կատարելու (համապատասխան ծրագրային ապահովություն մշակելու) համար անհրաժեշտ միջոցներ հատկացնելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
2) մշակել համապատասխան ծրագրային ապահովություն և ապահովել փոփոխությունների իրականացումը «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում և ՍԷԿՏ համակարգում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում ակնկալվում է կենսաթոշակառուի՝ ՀՀ-ում գտնվելու փաստը ճշտել առցանց եղանակով (իրական ժամանակում):
Վերը նշվածը հնարավորություն կտա բարելավել իրականացվող վարչարարության արդյունավետությունը, ինչպես նաև նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, պատահական և միտումնավոր սխալների հավանականությունը, իսկ կենսաթոշակառուներին՝ ազատելով վարչական պարտականություններից:

**<u>20.8 ՀՀ պետական բյուջե վերականգնված՝ սխալմամբ (ՀՀ օրենսդրության խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակների և նպաստների գումարների հաշվառման ենթահամակարգի գործարկում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումը պայմանավորված է որոշումների կայացման գործընթացը ավտոմատացնելու անհրաժեշտությամբ և նպատակ ունի բարելավել կենսաթոշակային ապահովության, պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետությունը:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս կենսաթոշակների, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մայրության, երեխայի ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների նշանակում ու վճարումն իրականացվում է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի միջոցով:
Արդյունքում էապես բարելավվել է ոլորտի կառավարման համակարգի արդյունավետությունը՝ բավարար նախապայմաններ ստեղծելով շահառուներին մատուցվող ծառայությունները որակական նոր հարթություն տեղափոխելու համար:
Սակայն հարկ է նկատի ունենալ, որ դեռևս ոչ բոլոր գործառույթներն են ավտոմատացված:
Մասնավորապես, դեռևս համակարգի շրջանակներում չի տարվում սխալմամբ ավել վճարված, ինչպես նաև ՀՀ պետական բյուջե վերականգնված՝ սխալմամբ (ՀՀ օրենսդրության խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակների և նպաստների գումարների հաշվառում:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է ներդնել ՀՀ պետական բյուջե վերականգնված՝ սխալմամբ (ՀՀ օրենսդրության խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակների և նպաստների գումարների հաշվառման ենթահամակարգ:

Ըստ այդմ, նախատեսվում է.

1) մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել ՀՀ պետական բյուջե վերականգնված՝ սխալմամբ (ՀՀ օրենսդրության խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակների և նպաստների գումարների հաշվառման ենթահամակարգ (համապատասխան ծրագրային ապահովություն) մշակելու համար անհրաժեշտ միջոցներ հատկացնելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
2) մշակել և ներդնել (գործարկել) համապատասխան ենթահամակարգը (ծրագրային ապահովությունը):

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում ակնկալվում է բարելավել իրականացվող վարչարարության արդյունավետությունը, ինչպես նաև նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, պատահական և միտումնավոր սխալների հավանականությունը:

**<u>20.9 Առցանց դիմումի հիման վրա աշխատող կենսաթոշակառուի կենսաթոշակը վերահաշվարկելն ապահովող ենթահամակարգի մշակում և գործարկում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումը պայմանավորված է բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցման ընթացակարգերը կատարելագործելու անհրաժեշտությամբ և նպատակ ունի ավտոմատացնել որոշումների կայացման գործընթացը, ինչպես նաև բարելավել շահառուներին մատուցվող ծառայությունների որակը և կենսաթոշակային ապահովության, պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետությունը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս կենսաթոշակների, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մայրության, երեխայի ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների նշանակում ու վճարումն իրականացվում է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի միջոցով:

Արդյունքում էապես բարելավվել է ոլորտի կառավարման համակարգի արդյունավետությունը՝ բավարար նախապայմաններ ստեղծելով շահառուներին մատուցվող ծառայությունները որակական նոր հարթություն տեղափոխելու համար:

Միաժամանակ, Սոցիալական ապահովության ծառայությունը Հարկային մարմնից ստանում է անձնավորված տեղեկատվություն անձանց աշխատանքային գործունեության վերաբերյալ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է ներդնել Առցանց դիմումի հիման վրա աշխատող կենսաթոշակառուի կենսաթոշակը վերահաշվարկելն ապահովող ենթահամակարգ:

Ըստ այդմ, նախատեսվում է.

1) մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը,
2) մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել Առցանց դիմումի հիման վրա աշխատող կենսաթոշակառուի կենսաթոշակը վերահաշվարկելն ապահովող ենթահամակարգ (համապատասխան ծրագրային ապահովություն) մշակելու համար անհրաժեշտ միջոցներ հատկացնելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
3) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները՝ մշակել և ներդնել (գործարկել) համապատասխան ենթահամակարգը (ծրագրային ապահովությունը):

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում ակնկալվում է բարելավել տարածքային ստորաբաժանումների աշխատանքների արդյունավետությունը՝ էապես նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը, պատահական և միտումնավոր սխալների հավանականությունը, ինչպես նաև ապահովելով անձանց իրավունքների իրականացումը:

Միաժամանակ, կձևավորվեն իրավական հիմքեր՝ Առցանց դիմումի հիման վրա աշխատող կենսաթոշակառուի կենսաթոշակը վերահաշվարկելու համար:

**<u>20.10 «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի Վարչապետի աշխատակազմ ներկայացում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումը նպատակը կենսաթոշակի վճարման գործընթացի արդյունավետության բարձրացումն է անկանխիկ վճարման համակարգի ներդրման միջոցով, ինչը կնպաստի վճարումների հասցեականությունը բարձրացնելուն, առկա ռիսկերը էապես նվազեցնելուն, ինչպես նաև բյուջետային ռեսուրսներն արդյունավետ օգտագործելուն:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է տվյալ ամսվա ընթացքում կենսաթոշակառուի դիմումի հիման վրա՝ անկանխիկ կամ կանխիկ եղանակով:

Կենսաթոշակի համար սահմանված կարգով են վճարվում նաև «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով սահմանված կենսաթոշակները, «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստները, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված պարգևավճարները:

Հարկ է նշել, որ կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ ձեռքբերելու ծախսերի ավելի քան 92%-ն ուղղվում է կանխիկ եղանակով վճարումներ կատարելու ծառայությունների ձեռքբերմանը՝ պայմանավորված ծառայության ձեռք բերման վճարի չափով (վճարվող գումարի մեկ տոկոսը):

Ըստ այդմ, նպատակահարմար է օրենսդրորեն ամրագրել կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարումները անկանխիկ եղանակով կատարելը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է փոփոխություններ կատարել «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում՝ ստեղծելով կենսաթոշակների անկանխիկ վճարման համակարգի իրավական հիմքերը:

Ընդ որում, անցնցում իրականացնելու համար անցումը կենսաթոշակների վճարման անկանխիկ համակարգի կիրականացվի փուլային՝ նախ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում, ապա մնացած քաղաքային բնակավայրերում, իսկ վերջում՝ 1000-ից ավել բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում:

Կենսաթոշակների վճարումը կանխիկ եղանակով կշարունակվի՝

ա. կենսաթոշակների անկանխիկ եղանակով վճարման պահանջն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կանխիկ եղանակով վճարվելու (օրենքով քաղաքացուն տրված՝ կենսաթոշակի վճարման եղանակն ընտրելու իրավունքն իրացված լինելու) դեպքում՝ մինչև կենսաթոշակի վճարման եղանակը փոխելու դիմում ներկայացնելը կամ կենսաթոշակ վճարելը կամ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը,

բ. եթե կենսաթոշակառուն ունի ազատ տեղաշարժվելու սահմանափակում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում ակնկալվում է աստիճանաբար անցում կատարել կենսաթոշակների վճարման անկանխիկ համակարգին՝ ապահովելով վճարումների հասցեականությունը, էապես նվազեցնելով առկա ռիսկերը և արդյունավետ օգտագործել բյուջետային միջոցները:

**Առողջապահության նախարարություն**

21

**21.1 Առողջ ապրելակերպի, այդ թվում՝ ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի վնասակար ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկման արշավի իրականացում (հեռուստատեսությամբ՝ հաղորդումներով, սոցիալական տեսահոլովակներով, ռադիո հաղորդաշարերի, տպագիր մամուլի և ցուցապաստառների միջոցով)**

**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը.**

Համաձայն ԱՀԿ-ի և միջազգային փորձագետների գնահատման արդյունքների Հայաստանի Հանրապետությունում առավել տարածված ՈՎՀ-երի (արյան շրջանառության համակարգի հիվանդություններ, չարորակ նորագոյացություններ, շաքարային դիաբետ, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություններ) հետ կապված համատեղ ընդհանուր գնահատված ծախսերը կազմում են 356,4 մլրդ դրամ (ՀՆԱ-ի 6.4%): Պետության կողմից կատարվող անուղղակի ծախսերը կազմում են 67,7 մլրդ դրամ, իսկ տնտեսության անուղղակի ծախսերը 288,8 մլրդ դրամ:

Ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարձրացումը և առողջ ապրելակերպի խթանումը կնպաստի ոչ վարակիչ հիվանդություններով պայմանավորված հիվանդացության բեռի և վաղաժամ մահացության նվազեցմանը, ինչպես նաև ոչ վարակիչ հիվանդություններով պայմանավորված

| | |
|---|---|
| | տնտեսական բեռի նվազեցմանը:<br><br>**1.1. 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում, ապրելակերպն ու վարքագիծը պայմանավորում են հիվանդությունների գլոբալ բեռի ավելի քան 25%-ը: Մահացության, հիվանդացության և հաշմանդամության բարձր մակարդակների համար պատասխանատու հիվանդությունների (սիրտ-անոթային հիվանդություններ, նորագոյացություններ, մահվան արտաքին պատճառներ, շնչառական և մարսողական համակարգերի հիվանդություններ) զարգացման ռիսկի գլխավոր գործոնները կապված են ապրելակերպի և վնասակար վարքագծային սովորությունների հետ: Առողջ ապրելակերպի ձևավորումը կարևորագույն առողջապահական կարողություն է, որի ուղղությամբ զգալի և բազմոլորտ գործողություններ են անհրաժեշտ:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Իրականացնել առողջ կենսակերպի վերաբերյալ հանրային տարբեր խմբերին ուղղված թիրախային իրազեկման ծրագրեր, ներառյալ՝ հեռուստա-հաղորդումներ, ռադիո- հաղորդաշարեր, տպագիր մամուլով իրազեկում և այլն:<br>Հանրային իրազեկման միջոցառումների իրականացման հարցում անհրաժեշտ է միջճյուղային համագործակցություն՝ բոլոր շահագրգիռ գերատեսչությունների, այդ թվում Կրթության և գիտության նախարարության, Պաշտպանության նախարարության, Ոստիկանության, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ մարզպետարանների հետ՝ իրենց լիազորությունների շրջանակներում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Անառողջ սնուցման, ֆիզիկական թերակտիվության, ալկոհոլի չարաշահման, ծխելու և ծխախոտի երկրորդային ծխի հետևանքով առողջությանը հասցված վնասների վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը և առողջ ապրելակերպի խթանումը կնպաստի ոչ վարակիչ հիվանդություններով պայմանավորված հիվանդացության բեռի և վաղաժամ մահացության նվազեցմանը, ինչպես նաև ոչ վարակիչ հիվանդություններով պայմանավորված տնտեսական բեռի նվազեցմանը:<br><br>**21.2. Առողջության առաջնային պահպանման օղակի թերապևտների/ընտանեկան բժիշկների վերապատրաստման դասընթացների իրականացում՝ ծխելու դադարեցմանն ուղղված բուժման և խորհրդատվության վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Ծխախոտի օգտագործումը ռիսկի գործոն է ՈՎՀ-ի զարգացման հարցում և դրա հետևանքով առաջացած ՈՎՀ-ի հիվանդացության և մահացության բարձր ցուցանիշները առողջապահական և տնտեսական լուրջ խնդիրներ են ստեղծում: Ծխախոտի ռիսկի գործոնի տարածվածության կրճատումը նպաստում է առողջության ցուցանիշների բարելավմանը, մասնավորապես, կյանքի սպասվող տևողության աճին, ՈՎՀ-ի տարածվածության և մահացության կրճատմանը:<br>Համաձայն ԱՀԿ-ի՝ այն պետությունները, որոնք իրականացնում են ծխելու հակազդմանն ուղղված ռազմավարություններ և ծրագրեր, ներառյալ ծխելը դադարեցնելու վերաբերյալ բժշկական անձնակազմի կողմից խորհրդատվության տրամադրման ծառայությունները, հետագայում ստանում են զգալի դրական արդյունքներ՝ ազգաբնակչության առողջության և բարեկեցության, աշխատանքի արտադրողականության բարձրացման և սոցիալական զարգացման առումով:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վիճակագրական տվյալների համաձայն ՀՀ մեծահասակ (սկսած 16 տարեկանից) բնակչության 25%-ից ավելին կանոնավոր (ամենօրյա) ծխող է, որտեղ տղամարդկանց մասնաբաժինը գերազանցում է 50%-ը:<br>Ամեն օր ծխող տղամարդկանց թիվն վերջին տարիներին ավելացել է 48.7%-ից մինչև 53.4%, իսկ կանանց թիվը՝ 1.3%-ից մինչև 2.3%: Ոչ վարակիչ հիվանդությունների (այսուհետ՝ ՈՎՀ) զարգացումն ասոցացվում է կենսակերպային առանձնահատկությունների և դրանց հետ կապված՝ ռիսկի գործոնների հետ: Ծխախոտի |

օգտագործումը հանդիսանում է ՈՎՀ-ի առաջացման հիմնական ռիսկի գործոններից մեկը: Հայաստանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների մահացության կառուցվածքը կրկնօրինակում է եվրոպական տարածաշրջանի մահացության պատկերը: Բնակչության մահացության ընդհանուր կառուցվածքում ՈՎՀ մահացության բեռը կազմում է մոտ 80%, ընդ որում սրտանոթային հիվանդություններից (ՍԱՀ) մահացությունը զբաղեցնում է առաջատար տեղը (55.6%), որոնց հաջորդում են չարորակ նորագոյացությունները՝ 20,4%, շաքարային դիաբետը (ՇԴ)՝ 3%, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունները (բրոնխիտ, ասթմա, քրոնիկական այլ թոքային և բրոնխոէկտատիկ հիվանդություններ)՝ 2.4%: Ընդհանուր մահերի կառուցվածքում առավել տարածված ՈՎՀ-ով պայմանավորված վաղաժամ մահացությունը կազմում է 18.6%:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ծխախոտային արտադրատեսակների օգտագործման և ծխախոտի ծխի վնասակար ազդեցության նվազմանն ուղղված առողջապահության նախարարության ներկայիս քաղաքականության արդյունավետ իրականացման համար խիստ անհրաժեշտ է ծխելու դադարեցմանն ուղղված բուժման և խորհրդատվության տրամադրման հարցերում վերապատրաստված առողջության առաջնային պահպանման օղակի մասնագետների առկայություն:
Ֆինանսավորումն կիրականացվի ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրի միջոցառումների համար նախատեսված միջոցների հաշվին:

ԱԱՊ օղակի մասնագետների վերապատրաստման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ է ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցություն՝ վերոնշյալ կառույցների ենթակայության տակ գտնվող բժշկական կազմակերպությունների համապատասխան մասնագետների մասնակցությունն ապահովելու համար:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) մասնագետները (թերապևտներ և ընտանեկան բժիշկներ) քաղաքացու կողմից առողջապահական ծառայությունների հետ առնչման առաջին օղակն են: Այս մասնագետների կողմից պացիենտներին ծխելու դադարեցմանն ուղղված բուժման և խորհրդատվական ծառայությունների տրամադրումը կնպաստի ծխախոտ օգտագործողների թվի նվազեցմանը, որի արդյունքում կբարելավվեն առողջության ցուցանիշները:

**21.3 «Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**

Հայաստանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) մահացության կառուցվածքը կրկնօրինակում է եվրոպական տարածաշրջանի մահացության պատկերը: Բնակչության մահացության ընդհանուր կառուցվածքում ՈՎՀ մահացության բեռը կազմում է մոտ 80%, ընդ որում սրտանոթային հիվանդություններից (ՍԱՀ) մահացությունը զբաղեցնում է առաջատար տեղը (48%), որոնց հաջորդում են չարորակ նորագոյացությունները՝ 20,0%, շաքարային դիաբետը (ՇԴ)՝ 4,2%:
Անառողջ սնունդը, ֆիզիկական թերակտիվությունը, ալկոհոլը, ծխելը ռիսկի գործոններ են ոչ վարակիչ հիվանդությունների զարգացման հարցում, որոնք աշխարհի պետությունների առողջապահական համակարգերի համար մեծ տնտեսական բեռ են համարվում:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ոչ վարակիչ հիվանդություններից առաջացած վաղաժամ մահերի դեպքերի մի զգալի մասը հնարավոր է կանխել առողջ կենսակերպի համար համապատասխան նպաստավոր պայմաններ և շրջանակներ ապահովելու միջոցով, և այդ հարցում առանցքային նշանակություն ունեն առողջ ապրելակերպի՝ ներառյալ առողջ սնուցման, ֆիզիկական ակտիվության խթանմանն ուղղված, ալկոհոլի չարաշահմանը և ծխելու դեմ ուղղված միջոցառումների իրականացումը:

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Մշակվելու և ներդրվելու են առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- \- առողջության ամրապնդմանը նպաստող և անառողջ սնուցման սահմանափակմանն ուղղված քաղաքականության և օրենսդրության կատարելագործում,
- \- առողջ ապրելակերպի քարոզչությանն ուղղված, առողջ ապրելակերպը սատարող մասնագիտացված ծառայությունների զարգացում,
- \- միջճյուղային համագործակցության իրականացում՝ առողջ ապրելակերպի խթանման ուղղությամբ,
- առողջ ապրելակերպի խթանման և անառողջ սնուցման սահմանափակման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների գործադրման մոնիթորինգի համակարգի ձևավորում և ներդնում՝ ապահովելով համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ:
- Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված ռազմավարական ծրագրի մշակման նպատակով անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ գերատեսչությունների մասնակցությունը՝ ռազմավարությամբ ներառված միջոցառումների վերաբերյալ կարծիքների տրամադրման հարցում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման կատարման դեպքում ակնկալվող արդյունքը ներառում է.

- \- առողջ ապրելակերպի խթանման ուղղությամբ բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ համագործակցության ապահովում,
- \- առողջ ապրելակերպի խթանման վերաբերյալ ազգաբնակչության իրազեկության բարձրացում:
- \- անառողջ սնուցման, ֆիզիկական թերակտիվության, ալկոհոլի չարաշահման, ծխելու հետևանքով առողջությանը հասցված վնասների տվյալների ու մասշտաբների վերլուծության արդյունքների առկայություն:

22

**22.1 «Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացումը կարևոր է սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդություններից արտաընդերային հեպատիտների դեմ պայքարի, համաճարակաբանական հսկողության, կանխարգելման, կադրային ներուժի զարգացման կազմակերպման և իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ-ում նշյալ վարակներից հիվանդացությունն ու մահացությունը նվազեցնելու նպատակով:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Արտաընդերային հեպատիտները ՀՀ-ում սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդություններ են և ունեն արտահայտված համաճարակային ներուժ, լայն տարածում և զգալի սոցիալ-տնտեսական բեռ: ՀՀ-ում վիրուսային հեպատիտ Բ-ի նկատմամբ հետազոտություններն իրականացվում են ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի թիվ 347-Ն որոշման պահանջներին համապատասխան, իսկ վիրուսային հեպատիտ Ց-ի նկատմամբ հետազոտությունների գործընթացը դեռևս կանոնակարգման խնդիր ունի: ՀՀ-ում հեպատիտների դեմ պայքարի և կանխարգելման ուղղությամբ աշխատանքները կատարվում են հիմնականում վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և ընդհանուր մոտեցումների հիման վրա, սակայն դրանց առաջացման ռիսկերն առանձնահատուկ են՝ յուրօրինակ փոխանցման գործոններով և տարածման առանձնահատկություններով, ինչպես նաև հաճախ զարգացող ծանր բարդություններով /լյարդի ցիռոզ, առաջնային քացկեղ/: Ուստի հեպատիտների դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների սահմանումը շատ կարևոր է հիվանդության համաճարակաբանական հսկողության համակարգի կատարելագործման, ինչպես նաև վերջիններիս հետևանքով առաջացող ծանր բարդությունների հսկողության տեսանկյունից:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հեպատիտներին հակազդումն արդյունավետ կլինի պայքարի համալիր և համակարգված միջոցառումների կիրառման դեպքում: Հատկապես կարևորվում է վարակի վերահսկման, կանխարգելման, ախտորոշման և բուժման համակարգերի ստեղծումը, կադրային ներուժի զարգացումը՝ դրանց իրականացման համար իրավական դաշտ ապահովելով:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ-ում արտաընդերային հեպատիտների կանխարգելում, հիվանդացության և մահացության մակարդակների նվազում:

**22.2 «Տուբերկուլոզին և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ծրագրերի (տուբերկուլոզ՝ 2021-2023 թթ., ՄԻԱՎ/ՁԻԱՀ՝ 2022-2023թթ.) հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումների իրականացումը կարևոր է սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդություններից տուբերկուլոզի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի, համաճարակաբանական հսկողության, բնակչության շրջանում այդ հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ գիտելիքների տարածման, ախտորոշիչ, բուժական օպտիմալ և մարդակենտրոն համակարգերի ներդրման, կադրային ներուժի զարգացման կազմակերպման և իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ-ում նշյալ վարակներից հիվանդացությունն ու մահացությունը նվազեցնելու նպատակով:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Տուբերկուլոզը և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը ՀՀ-ում սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդություններ են: Մասնավորապես բարձր է տուբերկուլոզի դեղակայուն ձևերի բեռը, որը հանգեցնում է համաճարակային իրավիճակի բարդացմանը: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ն առայժմ սահմանափակված է ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերի շրջանում, սակայն վերջին տարիներին արձանագրված դեպքերում գերակշռում են հետերոսեքսուալ ճանապահով փոխանցված դեպքերը, մասնավորապես այլ երկրներ արտագնա սեզոնային աշխատանքի մեկնող միգրանտ բնակչության և նրանց զուգընկերների շրջանում, ինչը լուրջ մարտահրավերներ է առաջացնում բնակչության այս հատուկ խմբի համար վարակի կանխարգելման արդյունավետ ծառայությունների մշակման անհրաժեշտության իմաստով: ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 24-ի նիստի թիվ 11 արձանագրային որոշմամբ ընդունվել է ՀՀ-ում տուբերկուլոզի կառավարման 2016-2020 թթ. ազգային ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը, իսկ 2017 թվականի հունիսի 15-ի նիստի թիվ 25 արձանագրությամբ՝ ՀՀ-ում 2017-2021 թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիրը և առաջնահերթ միջոցառումների ցանկը: Անհրաժեշտ է մշակել նոր ծրագրեր՝ հետագա տարիների համար:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Տուբերկուլոզին և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդումն արդյունավետ կլինի պայքարի համալիր և համակարգված միջոցառումների կիրառման դեպքում: Հատկապես կարևորվում է վարակի վերահսկման, կանխարգելման, ախտորոշման և բուժման արտահիվանդանոցային մարդակենտրոն ծառայությունների համակարգերի ստեղծումը, կադրային ներուժի զարգացումը, հանրային իրազեկման միջոցառումները, բնակչության խոցելի խմբերի շրջանում հիվանդությունների կանխարգելմանն ուղղված գիտելիքների տարածումը, խնդիրների լուծմանն ուղղված միջգերատեսչական, ինչպես նաև համայնքահեն, հասարարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ դրանց իրականացման համար իրավական դաշտ ապահովելով:

ՀՀ առողջապահության կողմից մշակված ռազմավարական ծրագրերը, միջոցառումները և տարեկան բյուջեները նախատեսվում է քննարկել և համաձայնեցնել շահագրգիռ նախարարությունների՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության, ֆինանսների և տարածքային կառավարման նախարարությունների հետ, ինչպես նաև ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի հետ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ-ում տուբերկուլոզի, մասնավորապես հիվանդության դեղակայուն ձևերի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, կանխարգելում, հիվանդացության և մահացության մակարդակների նվազում:

23 **23.1 «Առողջության համապարփակ բժշկական ապահովագրության մասին» օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է առողջության համապարփակ բժշկական ապահովագրության ներդրման նպատակով օրենսդրական հիմքերի ամրագրման անհրաժեշտությամբ:<br><br>**1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են ապահովագրության ոլորտը կանոնակարգող «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքները, իսկ առողջության համապարփակ բժշկական ապահովագրության մասին որևէ օրենսդրական կանոնակարգում չկա:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է օրենքի ընդունումով լրացնել և կանոնակարգել առողջության ապահովագրության ոլորտը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>«Առողջության համապարփակ բժշկական ապահովագրության մասին» օրենքի ընդունումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետությունում ներդնել առողջության համապարփակ բժշկական ապահովագրությունը, որը բժշկական օգնության և սպասարկման անհրաժեշտություն ունեցող յուրաքանչյուր ապահովագրված քաղաքացու հնարավորություն կտա օգտվելու առողջապահական ծառայությունների փաթեթից՝ անկախ սեռից, տարիքից, բնակության վայրից և սոցիալական կարգավիճակից: |
| 24 | **24.1 «Էլեկտրոնային առողջապահության համակարգի զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է առողջապահական և բժշկական տվյալների ամբողջական համակարգի ստեղծումով: Էլեկտրոնային առողջապահության համակարգի ամբողջական ներդրումը նպատակ ունի դառնալ առողջապահական տվյալների կառավարման միասնական համակարգ, որտեղ կմուտքագրվեն և կպահվեն բնակչի առողջությանը վերաբերվող ամբողջական տվյալներ: Էլեկտրոնային առողջապահության համակարգը կբարձրացնի պացիենտի՝ սեփական առողջությանը իրազեկվածության և դրա բարելավմանը մասնակցության մակարդակը: ՀՀ-ում առողջապահության ոլորտում միասնական տեղեկատվական համակարգը հանդես կգա որպես տվյալների փոխանցման համապարփակ և համաժամանակյա հարթակ երեք տեսակի տվյալների համար՝ կլինիկական, վարչական և ֆինանսական:<br><br>**1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս էլեկտրոնային առողջապահության համակարգը ներդրված է ոչ ամբողջությամբ (մասնակի), միաժամանակ կանոնակարգված չեն համակարգի ամբողջական ներդրման և շահագործման վերաբերյալ իրավական հիմքերը, մշակված և հաստատված չեն բժշկական ստանդարտները, ներգրավված չէ բժշկական անձնակազմը: Համակարգը ինտեգրված է միայն Բնակչության պետական ռեգիստրին:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Էլեկտրոնային առողջապահության ռազմավարության և ներդրման ճանապարհային քարտեզի նախագծի մշակում, ոլորտը կարգավորող իրավական դաշտի կանոնակարգում և նոր իրավական ակտերի ընդունում, ստանդարտների մշակում, հաստատում և ներդնում, բժշկական անձնակազմին համակարգիչներով ապահովման ծրագրի մշակում և շարունակական վերապատրաստումների կազմակերպում: Բացի այդ, նախատեսվում է տվյալների ամբողջականության և հավաստիության ապահովման նպատակով կառավարչական այլ համակարգերի և տվյալների կրկնօրինակումից և անհամապատասխանությունից խուսափելու համար բժշկական կազմակերպությունների ներքին կառավարման համակարգերի հետ ինտեգրում:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>- Էլեկտրոնային առողջապահության ամբողջական ներդրում՝ հաստատված ստանդարների ներառումով, |

| | |
|---|---|
| | - Առողջապահական և բժշկական տվյալների ամբողջական թվայնացում,<br>- Իրական ժամանակում տվյալների մուտքագրում՝ բժշկական անձնակազմին ներառելով,<br>- Ցուցանիշների, գնահատման, վերլուծության, վերահսկման և կանոնկարգման լայն հնարավորություն,<br>- Ոլորտը կանոնակարգող իրավական դաշտի ստեղծում: |
| 25 | **25.1 «Առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է երկրում առկա ժողովրդագրական իրավիճակով, ծնելիության գնացող ավելի ահագնացող բացասական միտումներով: Խնդրի արդիականությունն արտացոլված է նաև Կառավարության կողմից հավանություն արժանացած Վերարտադրողական առողջության բարելավման 2016-2020թթ. ազգային ռազմավարության (հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 23-ի N24 որոշմամբ) դրույթներում:<br>Միջոցառման նպատակն է՝ ծննդօգնության ծառայությունների մատչելիության և որակի բարձրացման միջոցով նպաստել առողջապահական գործոնով պայմանավորված վերարտադրողական կորուստների նվազեցմանը և հետևաբար՝ ծնելիության բարձրացմանը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ըստ ԱՎԾ պաշտոնական տվյալների, 1990-2017թթ. ժամանակահատվածում Հայաստանում գրանցվել է ծնելիության մակարդակի զգալի անկում: Ընդ որում, բնակչության 1000 շնչին ընկնող ծնելիության ցուցանիշը կրճատվել է գրեթե կիսով չափ, իսկ բնական աճի ցուցանիշը՝ ավելի քան 4,6 անգամ (ծնելիություն՝ 1990թ.- 22.5, 2017թ.–12.7, բնական աճ՝ 1990թ.-16,3, 2017թ.-3,5):<br>Երկրի ժողովրդագրական իրավիճակը բնորոշվում է ծնելիության գումարային գործակցի 1,7 ցուցանիշով, որը չի ապահովում անգամ պարզ վերարտադրությունը: 2017թ. ընթացքում հանրապետությունում ծնվել է 37699 երեխա՝ 2893 նորածնով պակաս 2016թ. համեմատությամբ (բնական աճի ցուցանիշը կազմել է՝ 3,1), ինչն արդեն իսկ ժողովրդագրական լուրջ խնդիր է՝ ազգային անվտանգության տեսանկյունից:<br>Վերարտադրողական առողջությանն առնչվող խնդիրները, որոնք ազդեցություն ունեն ծնելիության վրա, հետևյալն են.<br>1) ծնելիության ցածր, անգամ պարզ վերարտադրություն չապահովող մակարդակ: Ծնելիության անկման առկա միտումների պահպանման դեպքում, ըստ կանխատեսումների 2024թ. կարծանագրվի ընդամենը 25 000 ծննդաբերություն,<br>2) դեռահաս աղջիկների վերարտադրողական ախտաբանությունների բարձր մակարդակ և բուժման համար միջոցների բացակայություն,<br>3) զույգերի մինչամուսնական հետազոտման և նախաբեղմնավորման խնամքի ծառայությունների բացակայություն,<br>4) տարեկան շուրջ 4500 պերինատալ կորուստներ (ինքնաբեր վիժումներ, պտղի ներարգանդային մահ, վաղածնություն, մեռելածնություն, պտղի ներարգանդային ինֆեկցվածություն), պայմանավորված հղիության հսկողության և հետազոտությունների ոչ բավարար մակարդակով,<br>5) անպտղության, ժողովրդագրության վրա ազդող բարձր մակարդակ, 14.9 տոկոս, հետազոտման և բուժման սահմանափակ միջոցներ: Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների անհասանելիություն բնակչության սոցանապահով խմբերի համար,<br>6) հղիության նախածննդյան հսկողության սկրինինգների սահմանափակ ծավալներ, ախտաբանությունների հայտնաբերման դեպքում հղիությունը պահպանող բուժման սահմանափակ միջոցներ,<br>7) զարգացման բնածին արատների բարձր մակարդակ, կապված պտղի անտենատալ ախտորոշման ոչ բավարար հնարավորությունների հետ,<br>8) մանկական մահացության կառուցվածքում նորածնային մահացության դեպքերի մեծ տեսակարար կշիռ՝ շուրջ 70%,<br>9) անհաս, ցածր քաշով և ախտաբանություններով ծնված նորածինների ապրեցման, բուժման և |

| | |
|---|---|
| | խնամքի միջոցների անբավարարություն:<br>Համակարգային հիմնախնդիրների շարքում օրակարգային հարց է մասնագետների պատրաստման և շարունակական հմտությունների ու գիտելիքների զարգացման, մարզերում երիտասարդ մասնագետների աշխատելու գրավիչ պայմանների ու խրախուսման միջոցների անբավարարությունը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող լուծումը վերարտադրողական առողջության բարելավմանը և պերինատալ կորուստների նվազեցմանն ուղղված համալիր ծրագրի մշակումը և ներդրումն է: Ծրագիրը կունենա հետևյալ հիմնական բաղադրիչները.<br>1. հղիների ախտաբանության վաղ ախտորոշման և բուժման բարելավում,<br>2. հղիների վարման և հսկողության որակի բարելավման ծրագիր,<br>3. անհաս, ցածր քաշով և ախտաբանություններով նորածինների խնամքի բարելավում,<br>4. ծննդօգնության որակի բարելավում,<br>5. պրենատալ ախտորոշման բարելավում,<br>6. դեռահաս աղջիկների հետազոտման և բուժման բարելավման ծրագիր,<br>7. անպտուղ զույգերի հետազոտման և բուժման բարելավում, ներառյալ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառումը,<br>8. զույգերի մինչամուսնական հետազոտման և նախաբեղմնավորման խնամքի ծրագիր:<br>Համակատարողը ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամն է, որը կաջակցի ծրագրի մշակմանը՝ այդ թվում միջազգային փորձի ուսումնասիրության գործընթացին, իր մանդատի շրջանակներում կտրամադրի փորձագիտական աջակցություն:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է, որ վերարտադրողական առողջության բարելավմանը և ծննդօգնության ծառայությունների մատչելիության և որակի բարձրացմանն ուղղված առողջապահական ծրագրային միջացառումների իրականացման միջոցով կբարելավվեն ծնելիության ցուցանիշները, քանզի վերարտադրողական առողջության ոլորտի հիմնախնդիրները բացի բժշկասոցիալական նշանակությունից ունեն նաև որոշիչ ազդեցություն ժողովրդագրության վրա և այդ ոլորտի կորուստների նվազեցումը կարող է անուղակիորեն նպաստել ծնելիության բարձրացմանը: |
| 26 | **26.1 «Մանկական վերականգնողական բժշկական օգնության և սպասարկման մատչելիության բարելավման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին»**<br>**Առողջապահության նախարարի հրամանի հաստատում**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Կառավարության կողմից հավանություն արժանացած Երեխաների և դեռահասների առողջության բարելավման 2016-2020թթ. ազգային ռազմավարության (հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2016թ. սեպտեմբերի 2-ի N34 որոշմամբ) դրույթներից, ինչպես նաև երեխաների, մասնավորապես՝ հատուկ կարիքներով և հաշմանդամ երեխաների համար վերականգնողական ծառայությունների սահմանափակ մատչելիությամբ պայմանավորված ներկայիս իրավիճակով:<br>Միջոցառման նպատակը՝ Հատուկ կարիքներով և հաշմանդամ երեխաների համար վերականգնողական ծառայությունների հասանելիության, մատչելիության և որակի բարելավումն է, պետական պատվերով մատուցվող ծառայությունների հնարավորությունների ընդլայնման ճանապարհով:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում երեխաների վերականգնողական բուժօգնության հետ կապված ծառայությունները տրամադրվում են առավելապես պետական պատվերի շրջանակներում (0-7տարեկան և 7-18տ. սոցանապահով ու հատուկ խմբերի ցանկում ընդգրկված երեխաներ)՝ վերականգնողական հիվանդանոցային և արտահիվանդանոցային, ինչպես նաև առողջարանային բուժօգնության կազմակերպման միջոցով: Սակայն այս ծառայությունների հնարավորությունները գրեթե մի քանի անգամներ զիջում են առկա պահանջարկին: |

| | |
|---|---|
| | Մանկական վերականգնողական ծառայությունների հետ կապված ներկայիս հիմնախնդիրներ են.<br>1) Պոլիտրավմաներին և/կամ այլ ծագման (օր. նեյրովիրաբուժություն, օնկոլոգիա, ՄՈՒԿ՝ բարդություններով, գենետիկ հիվանդություններ և այլն) վիրահատական միջամտություններից հետո երեխաներին անհրաժեշտ հիվանդանոցային սուր և ենթասուր վերականգնողական/inpatient բուժօգնության ծառայությունների գրեթե բացակայություն, այն թվում բազմապրոֆիլ հիվանդանոցներու, որի արդյունքում երեխաները հաճախ դուրս են գրվում երկրորդային և անդառնալի բարդություններով՝ հետագա վերականգնման խիստ դժվարություններով:<br>2) Հիվանդանոցային վերականգնողական ծառայություններ մատուցող կենտրոնների շենքային պայմանների բարելավման անհրաժեշտություն, մասնավորապես, հաշմանդամների տեղաշարժման (սայլակներ, քայլակներ, այլ), ինչպես նաև օժանդակ ծառայություններից օգտվելու հնարավորությունների տեսանկյունից:<br>3) Հիվանդանոցային վերականգնողական և առողջարանային բուժօգնության համար հատկացվող բյուջետային հատկացումների խիստ սահմանափակ հնարավորություններ: Պետական պատվերով բուժվող երեխաների տարեկան միջին թիվը չի գերազանցում 700-1000 երեխան՝ շուրջօրյա (յուրաքանչյուր երեխան տարեկան 1-2 էպիզոդից ոչ ավելի), 1300 երեխան՝ ամբուլատոր բուժման (տարեկան շուրջ 24 000 այցերի թվով/յուրաքանչյուր երեխան տարեկան 70 այցից ոչ ավելի) և 100-150 երեխան՝ առողջարանային բուժման պարագայում՝ շուրջ 400 մլն դրամ տարեկան բյուջետային ծախսերով:<br>4) Մանկական վերականգնողական ծառայությունների պահանջարկը 3-4 անգամ գերազանցում է առկա հնարավորությունները: Ըստ փորձագիտական գնահատականների, շարունակական վերականգնողական բուժօգնության կարիք ունի մինչև 6000 երեխա: Պաշտոնապես հաշվառված շուրջ 8000 հաշմանդամ երեխաների 70 տոկոսը ունի հենաշարժական կամ մենտալ խնդիրներ, որոնք գրեթե բոլորը ունեն վերականգնողական բուժման կարիք:<br>5) Տարեկան գրանցվում է տրավմաների 2250 և ավելի դեպք՝ հոսպիտալացման ելքով, որից մոտ 20%-ը՝ գանգուղեղային տրավմաներ, որոնց շուրջ 60-70 % կարիք է ունենում հետագա վերականգնողական բուժման՝ ինչի հնարավորությունը գրեթե բացակայում է:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մանկական վերականգնողական ծառայությունների կարողությունների ներկայիս վիճակի գնահատման հիման վրա իրավիճակի բարելավման առաջարկությունների մշակում, որտեղ տեղ կգտնեն առաջարկներ՝ մանկական վերականգնողական ծառայություն մատուցող նոր բժշկական կենտրոնի ստեղծման, պետական պատվերի համապատասխան ծավալների մեծացման, պետպատվերի շրջանակներում մանկական վերականգնողաբանության նպատակային կլինիկական օրդինատուրայի տեղերի հատկացման ուղղությամբ:<br>Համակատարողը Ջինիշյան հիշատակի հիմնադրամն է, որը պատրաստակամություն է հայտնել ստեղծել վերականգնողական մարզային 1 կենտրոն և ապահովել վերջինիս գործունեության ընթացիկ ծախսերը շուրջ 1 տարի:<br><br>**2. 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կբարելավվի հատուկ կարիքներով և հաշմանդամ երեխաների համար վերականգնողական ծառայությունների հասանելիությունը, մատչելիությունը և որակը, Այս երեխաների համար կստեղծվի նոր վերականգնողական կենտրոն՝ վերականգնման համար ավելի նպաստավոր պայմաններով: |
| 27 | **27.1 «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման ռազմավարության ներդրման նպատակն է հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բժշկական օգնության որակի բարելավման և վերահսկման մեխանիզմներ սահմանելը: |

| | |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում առողջապահական ոլորտում առկա են սակավաթիվ նորմատիվ իրավական ակտեր, որոնք ուղղված են բժշկական օգնության որակի բարելավման: Լիարժեք և թափանցիկ չեն ուսումնասիրվում բժշկական օգնության որակի վերաբերյալ դիմում-բողոքները, կրկնակի հոսպիտալացումների հիմնավորումները, ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանական իրավիճակը, հակաբիոտիկների կիրառման հսկողությունը, առանձնահատուկ ուշադրության արժանի, բժշկական օգնության և սպասարկման դեպքերը (կոնսերվատիվ կամ վիրաբուժական բուժման մեթոդներ, նորարարություններ և այլն):<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման ռազմավարության ներդրմամբ նախատեսվում է.<br>1) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործող իրավական ակտերին համապատասխանությունը պարզելու, ինչպես նաև իրականացված աշխատանքների որակի վերահսկման նպատակով ստեղծել որակի բարելավման և վերահսկման խորհուրդներ,<br>2) սահմանել խորհրդի գործառույթները, որոնք կքննարկեն քաղաքացիների կամ կազմակերպությունների կողմից բժշկական օգնության որակի վերաբերյալ դիմում-բողոքները, հաշվետու ժամանակահատվածում կրկնակի հոսպիտալացման դեպքերը, այն մահվան դեպքերը, որոնց կլինիկական ախտորոշումները և ախտաբանաանատոմիական դիահերձումների եզրակացությունները չեն համընկել, այն դեպքերը, երբ բժշկական օգնության և սպասարկման աշխատանքները չեն կազմակերպվել Հայաստանի Հանրապետության օրենքներին, Կառավարության որոշումներին, Առողջապահության նախարարի նորմատիվ և անհատական հրամաններին (ներառյալ դրանցով հաստատված կարգերին, չափորոշիչներին, մեթոդական ցուցումներին, ուղեցույցներին և գործելակարգերին) համապատասխան, բժշկական օգնությունը և սպասարկումն ուշացնելու կամ դրա կասկածի յուրաքանչյուր դեպք, վարակի հսկողության ծրագրի իրականացման արդյունքները, ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանական իրավիճակը, հիվանդների բուժման ընթացքում բարդությունների առաջացման հնարավոր ռիսկերը, դրանց նվազեցման ուղղությամբ միջոցառումները, բուժանձնակազմի՝ վարակի հսկողության հարցերի ուղղությամբ ուսուցման հարցերը, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների, ախտահանման և մանրէազերծման աշխատանքների, մեկուսացման և այլ կանխարգելիչ միջոցառումների հարցեր, հակաբիոտիկների օգտագործման և կայունության մշտադիտարկման համակարգի ներդրման հարցեր,<br>3) սահմանել հիվանդանոցային որակի ցուցանիշները, որակի գնահատման և բարելավման գործիքակազմ և խորհուրդների կողմից կատարած աշխատանքների և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ հաշվետվության ներկայացման ձևաչափը:<br>Նախատեսվում է մշակված փաստաթղթերը և իրականացվող միջոցառումները քննարկել և կարծիք ստանալ բոլոր շահագրգիռ կառույցներից, մասնավորապես, Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից, ՀՀ մարզպետարաններից և Երևանի քաղաքապետարանից:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման ռազմավարության ներդրման դեպքում ակնկալվում է բարելավել բժշկական օգնության և սպասարկման որակը հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում՝ որակի բարելավման և վերահսկման խորհուրդների աշխատանքի և հիվանդանոցային բուժօգնության որակի ցուցանիշների, մեթոդների/գործիքների հաստատման միջոցով, ինչը կնպաստի բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների վերահսկմանը, կանխարգելմանը, ինչպես նաև պացիենտների անվտանգության բարձրացմանը: Ակնկալվում է հիվանդանոցային բուժօգնության որակի ցուցանիշների և մեթոդների/գործիքների ներդրումից առնվազն 5 տարի անց ունենալ միջազգային ստանդարտներին համապատասխան ցուցանիշներ:<br><br>**27.2 «Արյան ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման, օգտագործման և տրամադրման կարգը** |

**հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

«Արյան ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման, օգտագործման և տրամադրման կարգը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից (հոդված 6, մաս 1, կետ 4)՝ նպատակ ունենալով կանոնակարգել արյան ռեեստրի գործունեության, դրանում տեղեկատվությունների գրանցման, օգտագործման և տրամադրման հետ կապված հարաբերությունները:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ Արյան ծառայության ստորաբաժանումներում տարեկան մոտ 10 000 անձից հավաքվում է ավելի քան 25 000 միավոր արյան բաղադրամաս: Ներկայումս յուրաքանչյուր ստորաբաժանում գործում է ինքնուրույն, չեն տիրապետում այլ ստորաբաժանումներում առկա պաշարների վերաբերյալ տեղեկատվությանը, ինչի հետևանքով հնարավոր չէ օպերատիվ կերպով ճշտել անհրաժեշտ բաղադրամասի առկայությունը: Բացի այդ, բավականին բարձր է արյան բաղադրամասերի խոտանումը ժամկետը լրանալու պատճառով:

Արյան ծառայության ստորաբաժանումների և ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի, Մաշկային և սեռավարակաբանական գիտաբժշկական կենտրոնի, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի, Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի միջև կապի բացակայության պարագայում բարդանում է արյան դոնորների ընտրության հարցը, դժվարանում է վարակակիր անձանց հայտնաբերումը, ինչը բերում է լրացուցիչ ֆինանսական ծախսերի:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Արյան ռեեստրի ստեղծման արդյունքում արյան ծառայության ստորաբաժանումները և փոխներարկումային բուժօգնություն իրականացնող բուժհաստատությունները մշտապես տեղեկացված կլինեն օգտագործման համար պիտանի առկա արյան բաղադրամասերի մասին և ժամանակին կլրացնեն արյան պաշարները, ինչը կարևորվում է հատկապես արտակարգ իրավիճակների դեպքում:

Հնարավորություն կընձեռվի ռացիոնալ օգտագործել հավաքված արյան բաղադրամասերը, ինչի շնորհիվ կնվազի արյան բաղադրամասերի խոտանումը: Հնարավոր կլինի վաղաժամ հայտնաբերել վարակակիր դոնորներին և ձեռնարկել անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ վարակի տարածման դեմ: Դոնորի մոտ հակացուցումների հայտնաբերման փաստը հասանելի կլինի արյան ծառայության այլ ստորաբաժանումներին, ինչն էլ թույլ կտա բացառել դոնորի արյունատվությունը այլ տեղերում:

Արյան ռեեստրի ստեղծումը թույլ կտա վերահսկել դոնորների արյունատվությունների հաճախականությունը և նրանց առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչը կնպաստի դոնորի առողջության պահպանմանը: Հնարավորություն կստեղծվի վերլուծել արյունատվության և փոխներարկման ժամանակ առաջացած բարդությունները և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

Նախատեսվում է Նախագիծը քննարկել և կարծիք ստանալ բոլոր շահագրգիռ կառույցներից, մասնավորապես, տարածքային կառավարման և զարգացման, պաշտպանության, արտակարգ իրավիճակների նախարարություններից, Ոստիկանությունից, Ազգային անվտանգության ծառայությունից և Ազգային անվտանգության խորհրդից:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

«Արյան ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման, օգտագործման և տրամադրման կարգը հաստատելու մասին» կառավարության որոշման ընդունման արդյունքում ակնկալվում է ապահովել փոխներարկումային բժշկական օգնության որակը, փոխներարկման անվտանգությունը:

**27.3 «ՀՀ առողջապահական համակարգի հնգամյա զարգացման ռազմավարությունը հաստատելու տալու մասին» Կառավարության որոշման նախագիծը**

**վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հայաստանում ընթացող սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունների համատեքստում անհրաժեշտություն է առաջանում վերագնահատել առողջապահության բնագավառի զարգացման գերակայությունները և սահմանել նորերը՝ ելնելով մարդակենտրոն համակարգ ձևավորելու անհրաժեշտությունից, որի հիմքում է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածը: Այն սահմանում է պետության քաղաքականության հիմնական նպատակները, այն է՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը, ինչպես նաև հաշմանդամության կանխարգելման, բուժման, հաշմանդամների առողջության վերականգնման ծրագրերի իրականացումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Վերջին տարիներին իրականացվել են առողջապահության համակարգի բարեփոխմանն ուղղված զգալի աշխատանքներ, այնուամենայնիվ, առողջապահության համակարգի առջև ծառացած են լուրջ ժողովրդագրական, համակարգի կառավարման և առողջապահական խնդիրներ:

Դեռևս լուծված չէ Հայաստանի ամբողջ բնակչությանը բժշկական ծառայությունների համընդհանուր ծածկույթով ապահովելու (universal health coverage) հիմնախնդիրը:

Միևնույն ժամանակ, բավարար չէ բժշկական ծառայությունների մատչելիությունը Հայաստանի բնակչության համար: Այսպես, ֆինանսական անմատչելիությամբ պայմանավորված՝ բուժօգնության չդիմելու ցուցանիշը 2016թ.-ին կազմել է 17.2%, որը 2.2%-ով ավելի է 2009թ. ցուցանիշից, իսկ համաձայն որոշ փորձագիտական գնահատականների հասնում է մինչև 30%:

Միաժամանակ, չնայած միջազգայնորեն ընդունված է, որ գրպանից կատարված ուղիղ վճարումների տեսակարար կշիռը չպետք է գերազանցի 15-20%-ը, Հայաստանում, ըստ առողջապահության բնագավառի ֆինանսական գործակալի, 2013թ.-ին ֆինանսավորվել է առողջապահությանն ուղղված միջոցների ընդհանուր ծավալի 55.6%-ը: Նույն ժամանակահատվածում, մասնավոր հատվածի ֆինանսավորման ընդհանուր կառուցվածքի առյուծի բաժինը՝ 94.9%-ը կազմել են տնային տնտեսությունների կողմից կատարված ուղղակի վճարումները: Իրենց հերթին, «գրպանից» վճարումները ծառայությունների մատուցման վայրում առաջացնում են վերջիններիս ավելցուկային սպառման և բերում համակարգի անարդյունավետության՝ բժշկական որոշ ծառայությունների, հետազոտությունների և միջամտությունների ավելորդ օգտագործման, չհիմնավորված հոսպիտալացումների, առկա ենթակառուցվածքների անբավարար օգտագործման՝ հատկապես մարզերում, բժշկական օգնության և սպասարկման որակի անվերահսկելիության և դրա արդյունքում առաջացած ֆինանսական կորուստների հետևանքով:

Խնդիրներ են առկա նաև բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման տեսանկյունից. մարզային բժշկական հաստատությունները, որպես կանոն գործում են թերբեռնված, ցածր է սեփական բնակավայրին մոտ բուժում ստացող մարզային բնակչության տեսակարար կշիռը, մարզերում բժշկական կադրերով հագեցվածության ցուցանիշները, մեծ է հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների տեսակարար կշիռը:

Բնակչության հարաբերական ծերացման գործընթացին զուգահեռ ի հայտ են գալիս նոր մարտահրավերներ՝ պայմանավորված բժշկական օգնության և սպասարկման պահանջարկի, հիվանդացության կառուցվածքի փոփոխության՝ դեպի ոչ վարակիչ հիվանդությունների ավելացում, ինչպես նաև համակարգի ընդհանուր բեռի ավելացման հետ: Համաձայն վիճակագրական տվյալների, ՀՀ բնակչության մահացության կառուցվածքում գերակշռում են ոչ վարակիչ հիվանդությունները (ՈՎՀ) (75%), այդ թվում՝ արյան շրջանառության համակարգի հիվանդությունները (ԱՇՀՀ) (46%), չարորակ նորագոյացությունները (21.9%), շաքարային դիաբետը (4.6%), թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունը (4.2%): Լուրջ գործոն է նաև վաղաժամ մահացությունը չարորակ նորագոյացություններից, արյան շրջանառության համակարգի հիվանդություններից, շնչառական համակարգի հիվանդություններից և շաքարային դիաբետից:

Ըստ ԱՀԿ տվյալների, Հայաստանում առողջ կյանքի սպասվող տևողությունը կազմել է 66.9 տարի, որը զիջում է արևմտյան Եվրոպայի երկրների ցուցանիշին, ուստի առողջապահության համակարգի տեսանկյունից կարևորվում է հայաստանցիների առողջ կյանքի տևողության երկարացնելու անհրաժեշտությունը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ռազմավարությամբ նախատեսվող բարեփոխումների հիմքում առողջապահական ծառայությունների մատչելիության և արդյունավետության բարձրացումն է՝ առաջնային բուժօգնության օղակի հզորացման միջոցով:

Առողջության առաջնային պահպանման օղակը դառնալու է առողջապահության համակարգի անկյունաքարը, որն իր գործունեությամբ նպաստելու է Հայաստանում հիվանդությունների կանխարգելմանը, վաղ հայտնաբերմանը և արդյունավետության բարձրացմանը՝ դառնալով դարպաս դեպի պահանջված բժշկական ծառայություններ:

Առաջարկվող բարեփոխումների հիմքում է նաև Հայաստանի բնակչության հիվանդացության ու մահացության ցուցանիշների վերլուծությունը, այն միտված է վերջինների բարելավմանն ու դրական դինամիկայի ապահովմանը: Ներդրվելու են առաջնային օղակի բժիշկների աշխատանքը վերահսկող չափորոշիչների (թերապևտիկ հոսպիտալացումներ, անաշխատունակության և հաշմանդամության ցուցանիշներ, ծխող դեռահասների թվաքանակ), որոնք ենթարկվելու են մշտադիտարկման ԱՆ կողմից:

Բնակչությանն առողջապահական ծառայությունների համընդհանուր ծածկույթ ապահովելու նպատակով, բժշկական օգնության ժամկետային հասանելիության սկզբունքից ելնելով, առաջարկվում է Հայաստանում ներդնել բժշկական օգնության եռամակարդակ համակարգ, որը լավագույնս կապահովի բուժօգնության կազմակերպումը՝ արդյունավետության ու հասանելիության սկզբունքների հիման վրա, ինչպես նաև ելնելով գումարների արդյունավետ օգտագործման և հաստատուն ծախսերի նվազեցման սկզբունքից՝ ապահովել մահճակալային ֆոնդի օպտիմալ 70-80% զբաղվածություն:

Համակարգի զարգացման տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում գործունեության շեշտադրումը տեղափոխել բուժումից դեպի կանխարգելում, թիրախային միջոցառումների իրականացման միջոցով՝ հիմնված առողջ ապրելակերպի սկզբունքների ներդրման, կանխարգելման, ռիսկի գործոնների բացահայտման և շրջակա միջավայրի ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկողական մեխանիզմների վրա:

Միջոցառման համակատարողները մշակված նախագծի վերաբերյալ ներկայացնում են կարծիք, անհրաժեշտության դեպքում մասնակցում եմ նախագծի վերաբերյալ կազմակերպված քննարկումներին և տրամադրում մասնագիտական կարծիք:

**2. 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ առողջապահական համակարգի հնգամյա զարգացման ռազմավարության ներդրման արդյունքում կունենանք առողջապահական համակարգի զարգացման երկարաժամկետ հստակ տեսլական, որը կբերի առողջապահության բնագավառի զարգացման գերակայությունների վերագնահատման և նորերի սահմանման՝ ելնելով մարդակենտրոն համակարգ ձևավորելու անհրաժեշտությունից, հիմնական մարտահրավերների և ռիսկերի գնահատման, հիմնական խնդիրների և նպատակների, առաջնահերթությունների, առողջապահության համակարգի զարգացման մեխանիզմների սահմանման:

28.

**28.1 Վայոց Ձորի մարզում նոր բժշկական կենտրոնի կառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մարզային բժշկական հաստատությունների շենքերը գտնվում են անմխիթար պայմաններում և ենթակա են արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացման նպատակը բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացումն է:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային մի շարք բժշկական կենտրոններ և առողջության առաջնային պահպանման հաստատությունների շենքեր: Բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական

սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Սակայն ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու ուղղություններից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2019-2023թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ Վայոց Ձորի մարզն ընդգրկում է 3 քաղաք՝ Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ, ինչպես նաև 41 գյուղական համայնք և 52 գյուղ:

Եղեգնաձորի տարաշաշրջանում գործում է «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն՝ 45 մահճակալային ֆոնդով, որը սպասարկում է Եղեգնաձորի տարածաշրջանի շուրջ 32.2 հազար ազգաբնակչությանը: Բժշկական կենտրոնը գտնվում է ոչ բարվոք վիճակում և կարիք ունի կապիտալ հիմնանորոգման, իսկ սարքավորումները, կահույքը և պարագաները ֆիզիկապես մաշված են, մեծ մասն արտադրված է դեռևս Խորհրդային Միության տարիներին:

Վայքի տարածաշրջանում գործում է «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ-ն՝ 35 մահճակալային ֆոնդով, որը սպասարկում է Վայքի և Ջերմուկի տարածաշրջանների բնակչությանը՝ շուրջ 17.3 հազար մարդ: Ծառայություններն իրականացվում են հիմնական, ծննդատան և ինֆեկցիոն ծառայության մասնաշենքերում: Գլխավոր մասնաշենքը երկհարկանի է, զբաղեցնում է շուրջ 1620 քմ ընդհանուր մակերեսով տարածք, որը կառուցվել է 1962-70-ական թվականներին և մասնակի վերանորոգվել պետական բյուջեի միջոցներով: Բուժմիավորման մյուս եռահարկ մասնաշենքում տեղակայված է ծննդօգնության ծառայությունը, որը համեմատաբար նոր՝ 1994 թվականի, շուրջ 2259 քմ ընդհանուր մակերես տարածքով կառույց է:

Ելնելով վերոնշյալից, ինչպես նաև կենտրոնների մահճակալների ծանրաբեռնվածության ցուցանիշներից՝ նպատակահարմար չէ արդիականացնել մարզի 2 բուժհաստատությունները:

Ուստի՝ նպատակահարմար է միավորել Եղեգնաձորի և Վայքի բժշկական հաստատությունների հիվանդանոցային և ծննդօգնության ծառայությունները (ընդհանուր՝ 80 մահճակալ հզորությամբ)՝ կառուցելով Եղեգնաձորում նոր հիվանդանոց (36 ստացիոնար մահճակալ հզորությամբ), որը կապահովի երկրորդային մակարդակի հիվանդանոցային ծառայությունները, պահպանելով պոլիկլինիկական ծառայությունները Վայքում և Եղեգնաձորում:

**28.2 Գեղարքունիքի մարզի նոր բժշկական կենտրոնի կառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մարզային բժշկական հաստատությունների շենքերը գտնվում են անմխիթար պայմաններում և ենթակա են արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացման նպատակը բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացումն է:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային մի շարք բժշկական կենտրոններ և առողջության առաջնային պահպանման հաստատությունների շենքեր: Բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Սակայն ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում

գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու ուղղություններից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2019-2023թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական կենտրոնը՝ 95 մահճակալ հզորությամբ, բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտորի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Մարտունու տարածաշրջանի 88.9 հազար բնակչությանը, որից 11.7 հազարը քաղաքային է, 77.2-ը՝ գյուղական:

Մարտունու բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1987 թվականին կառուցված, եռահարկ պանելային շինությունում, որը շահագործման հանձնելուց ի վեր չի ենթարկվել կապիտալ հիմնանորոգման, և ներկայում գտնվում է անբարեկարգ վիճակում:

Ելնելով վերոնշյալից, շինության չափսերից, ինչպես նաև կենտրոնի մահճակալների ծանրաբեռնվածության ցուցանիշներից՝ տնտեսապես արդյունավետ չէ Մարտունու բժշկական կենտրոնի ներկայիս մասնաշենքի հիմնանորոգումը:

Ուստի՝ նպատակահարմար է Մարտունու բժշկական կենտրոնի տարածքում կառուցել հիվանդանոցային և պոլիկլինիկական ծառայություններ մատուցող բժշկական կենտրոնի նոր մասնաշենք՝ 55 ստացիոնար մահճակալ հզորությամբ:

### 28.3 Սյունիքի մարզի Սիսիանի բժշկական կենտրոնի վերակառուցում

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մարզային բժշկական հաստատությունների շենքերը գտնվում են անմխիթար պայմաններում և ենթակա են արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացման նպատակը բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացումն է:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային մի շարք բժշկական կենտրոններ և առողջության առաջնային պահպանման հաստատությունների շենքեր: Բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Սակայն ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու ուղղություններից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2019-2023թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող

հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի բժշկական կենտրոնը՝ 50 մահճակալ հզորությամբ բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտորի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Սիսիանի տարածաշրջանի 29.9 հազար բնակչությանը, որից 15.1 հազարը քաղաքային է, 14.8-ը՝ գյուղական:

Սիսիանի բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1967 թվականին կառուցված հիվանդանոցային և պոլիկլինիկական մասնաշենքերում: Հիվանդանոցային մասնաշենքը մասամբ վերանորոգվել է 2006թ. և ներկայում ունի հիմնանորոգման կարիք (պոլիկլինիկական մասնաշենքը հիմնանորոգվել է 2012թ.):

Ելնելով վերոնշյալից, շինության չափսերից, կենտրոնի մահճակալների ծանրաբեռնվածության ցուցանիշներից, ինչպես նաև մարզում երրորդային մակարդակի ծառայություն տրամադրող բուժհաստտոթյունների առկայությունից, առաջարկվում է կենտրոնի մահճակալային ֆոնդը կրճատել մինչև 25 մահճակալ՝ ծառայությունները տեղակայելով հիմնական մասնաշենքի շուրջ 2100քմ մակերեսով տարածքում (կազատվի շուրջ 3900 քմ տարածք), և իրականացնել վերակառուցման աշխատանքներ:

**28.4 Կոտայքի մարզի Նաիրիի բժշկական կենտրոնի կառուցում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մարզային բժշկական հաստատությունների շենքերը գտնվում են անմխիթար պայմաններում և ենթակա են արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացման նպատակը բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացումն է:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային մի շարք բժշկական կենտրոններ և առողջության առաջնային պահպանման հաստատությունների շենքեր: Բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Սակայն ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու ուղղություններից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2019-2023թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

1) ՀՀ Կոտայքի մարզի Նաիրիի բժշկական կենտրոնը՝ 40 մահճակալ հզորությամբ, բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտորի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Նաիրիի տարածաշրջանի 57.3 հազար բնակչությանը, որից 21.2 հազարը քաղաքային է, 36.1-ը՝ գյուղական:

Նաիրիի բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1984 թվականին կառուցված երեք մասնաշենքում, որոնք շահագործման հանձնելուց ի վեր չեն ենթարկվել կապիտալ հիմնանորոգման, և ներկայում գտնվում են անբարեկարգ վիճակում (2007-2008թթ.. իրականացվել են գլխավոր մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքներ):

Ելնելով վերոնշյալից, շինության չափսերից, ինչպես նաև կենտրոնի մահճակալների ծանրաբեռնվածության

ցուցանիշներից՝ տնտեսապես արդյունավետ չէ Նաիրիի բժշկական կենտրոնի ներկայիս մասնաշենքերի հիմնանորոգումը:

Ուստի՝ նպատակահարմար է կրկին օպտիմալացնել Նաիրիի բժշկական կենտրոնի մահճակալային ֆոնդը մինչև 25 մահճակալ և կառուցել հիվանդանոցային ու պոլիկլինիկական ծառայություններ մատուցող բժշկական կենտրոնի նոր տիպային մասնաշենք՝ զբաղեցնելով ընդամենը շուրջ **2300քմ** տարածք:

## 28.5 Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ

### 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մարզային բժշկական հաստատությունների շենքերը գտնվում են անմխիթար պայմաններում և ենթակա են արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացման նպատակը բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացումն է:

### 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային մի շարք բժշկական կենտրոններ և առողջության առաջնային պահպանման հաստատությունների շենքեր: Բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Սակայն ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

### 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու ուղղություններից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2019-2023թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

### 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

2) ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնը՝ 45 մահճակալ հզորությամբ բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտորի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Աշտարակի տարածաշրջանի 59.8 հազար բնակչությանը, որից 17.2 հազարը քաղաքային է, 42.6-ը՝ գյուղական: Ներկայում կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1974թ. կառուցված թիվ 1 և հիմնական պոլիկլինիկական մասնաշենքերում (թիվ 2 մասնաշենքը, որը միջանցքով միացված է թիվ 1 մասնաշենքին, ՀՀ Արագածոտնի մարզպետի 2017թ. թիվ 213-Ա կարգադրությամբ հանձնվել է ՀՀ կառավարությանն առընթեր գույքի կառավարման վարչությանը): 2005-2007թթ., 2018-2019թթ.. ընթացքում իրականացվել են ու ներկայում իրականացվում են մասնակի վերանորոգումներ: 2019թ. ապրիլին նախատեսվում են վիրաբուժական բաժանմունքի վերանորոգման և վերազինման աշխատանքները (համաձայն ԱՄՆ Ֆրեզնո քաղաքի պատվավոր հյուպատոս Պերճ Աբգարյանի հետ համատեղ ստորագրված հուշագիրը):

Ներկայում ՀՀ ԱՆ մասնագետների կողմից ուսումնասիրվում է բժշկական կենտրոնին 2-րդ մասնաշենքը (գտնվում է անբարեկարգ վիճակում) վերադարձնելու նպատակահարմարությունը և հնարավորությունը:

Հաշվի առնելով կենտրոնի ներկա ֆիզիկական վիճակը, տարածաշրջանի ազգաբնակչության թիվը, վիրաբուժական բաժանմունքի զբաղվածության ցածր ցուցանիշները, առաջարկվում է արդեն իսկ կրճատված մահճակալների թիվը հասցնել մինչև **40** (վիրաբուժական բաժանմունքի մահճակալների թիվը կրճատելով մինչև 10),

առաջարկվում է Աշտարակի բժշկական կենտրոնին 2-րդ մասնաշենքը վերադարձնելու դեպքում՝ **վերակառուցել թիվ 1 և թիվ 2 մասնաշենքերը** (շուրջ **3.860քմ** տարածք)՝ **տեղակայելով հիվանդանոցային և ամբուլատոր բոլոր ծառայությունները վերոնշված երկու մասնաշենքում**: Նշված միջոցառումների գնահատված արժեքը կազմում է շուրջ՝ 883 մլն ՀՀ դրամ, որից նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ շուրջ 30 մլն ՀՀ դրամ, շինարարական աշխատանքներ՝ շուրջ 853 մլն ՀՀ դրամ: Նախատեսված ժամանակաշրջանում, սակայն, պլանավորվում է ծախսել շինարարական աշխատանքների համար նախատեսված արժեքի շուրջ 50 տոկոսը:

**28.6 Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մարզային բժշկական հաստատությունների շենքերը գտնվում են անմխիթար պայմաններում և ենթակա են արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:

ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացման նպատակը բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացումն է:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային մի շարք բժշկական կենտրոններ և առողջության առաջնային պահպանման հաստատությունների շենքեր: Բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Սակայն ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու ուղղություններից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:

2019-2023թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնը՝ 35 մահճակալ հզորությամբ բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտորի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Չարենցավան քաղաքի 20.5 հազար բնակչությանը:

Չարենցավանի բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1971 թվականին կառուցված գլխավոր և պոլիկլինիկական մասնաշենքերում: 2011թ. և 2018թվականից մինչև առ այժմ իրականացվում են կապիտալ վերակառուցման աշխատանքներ:

Ելնելով վերոնշյալից, սպասարկվող բնակչության թվից՝ առավել նպատակահարմար է հիվանդանոցային և ամբուլատոր բոլոր ծառայությունները տեղակայել միայն հիվանդանոցային մասնաշենքի հատվածում՝ կրճատելով վերանորոգման ենթակա տարածքը և ծախսերը: Ներկայում կենտրոնը կարիք ունի սարքավորումներով և կահույքով վերազինման:

**28.7 Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մարզային բժշկական հաստատությունների շենքերը գտնվում են անմխիթար պայմաններում և ենթակա են արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացման նպատակը բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացումն է:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային մի շարք բժշկական կենտրոններ և առողջության առաջնային պահպանման հաստատությունների շենքեր: Բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Սակայն ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու ուղղություններից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:
2019-2023թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնը՝ 40 մահճակալ հզորությամբ բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտրի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Թալինի տարածաշրջանի 32.2 հազար բնակչությանը, որից 4.3 հազարը քաղաքային է, 27.9՝ գյուղական: Թալինի բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1969 թվականին կառուցված մեկ եռահարկ մասնաշենքում: 2003թ. և 2011թ. կենտրոնը մասնակի վերանորոգվել է:
Հաշվի առնելով կենտրոնի ներկա ֆիզիկական վիճակը, տարածաշրջանի ազգաբնակչության թիվը, զբաղվածության ցածր ցուցանիշները, նպատակահարմար է արդեն իսկ կրճատված մահճակալների թիվը հասցնել մինչև **30**(5), ինչպես նաև առաջարկվում է բժշկական կենտրոնի **մասնաշենքի վերակառուցումը՝** շուրջ **3526.6 քմ** տարածք:
Նշված միջոցառումների գնահատված արժեքը կազմում է շուրջ՝ 808 մլն ՀՀ դրամ, որից նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ շուրջ 28 մլն ՀՀ դրամ, շինարարական աշխատանքներ՝ շուրջ 780 մլն ՀՀ դրամ: Նախատեսված ժամանակաշրջանում կիրականացվեն նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները, իսկ քննարկվող ժամանակաշրջանի ավարտին, մեկնարկեն շինարարական աշխատանքները:

**28.8 Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի վերակառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Մարզային բժշկական հաստատությունների շենքերը գտնվում են անմխիթար պայմաններում և ենթակա են արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացման նպատակը բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացումն է:

| | |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային մի շարք բժշկական կենտրոններ և առողջության առաջնային պահպանման հաստատությունների շենքեր: Բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Սակայն ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մարզերում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը բարձրացնելու ուղղություններից է բժշկական հաստատությունների արդիականացումը՝ կառուցում, հիմնանորոգում և հագեցում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով:<br>2019-2023թթ-ին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնը՝ 110 մահճակալ հզորությամբ բազմապրոֆիլային բժշկական հաստատություն է, որը լայն սպեկտրի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Մասիսի տարածաշրջանի 79.1 հազար բնակչությանը, որից 20.6 հազարը քաղաքային է, 58.5՝ գյուղական:<br>Մասիսի բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1975 թվականին կառուցված երեք մասնաշենքում, Կենտրոնի սեփական միջոցներով իրականացվել են մասնակի վերանորոգումներ, սակայն մասնաշենքերը ներկայում գտնվում են անբարեկարգ վիճակում և հիմնանորոգման կարիք ունեն:<br>Ուստի, առկա մահճակալների զբաղվածության պարագայում նպատակահարմար է **կրկին օպտիմալացնել** մահճակալային ֆոնդը՝ **մինչև 55 մահճակալ**, ինչպես նաև **հիվանդանոցային ու ամբուլատոր բոլոր ծառայությունները տեղադրելով մեկ մասնաշենքում՝ վերակառուցել վերջինս,** զբաղեցնելով ընդամենը շուրջ **4,300քմ** տարածք:<br>Նշված միջոցառումների գնահատված արժեքը կազմում է շուրջ՝ 1,253.8 մլն ՀՀ դրամ, որից նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ շուրջ 33.8 մլն ՀՀ դրամ, շինարարական աշխատանքներ՝ շուրջ 1,220.0 մլն ՀՀ դրամ: Նախատեսված ժամանակաշրջանում կիրականացվեն նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները, իսկ քննարկվող ժամանակաշրջանի ավարտին, մեկնարկեն շինարարական աշխատանքները: |
| 29 | **29.1 «Մարզային բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձնման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձնման աշխատանքների իրականացումը բխում է մարզային բնակչության բժշկական օգնության և սպասարկման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վերջին տարիներին ՀՀ մարզերում գործող բժշկական կազմակերպությունների արդիականացման ուղղությամբ կառավարության կողմից իրականացվել են զգալի ներդրումներ, մասնավորապես՝ կառուցվել կամ հիմնանորոգվել են շուրջ 15 մարզային բժշկական հաստատություն, որոնք հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով, անհրաժեշտ կահույքով և պարագաներով: Այնուամենայնիվ, շատ դեպքերում անգամ այդ բժշկական կենտրոնները գործում են թերծանրաբեռնված, ցածր է տեղում՝ սեփական բնակավայրին մոտ բուժում ստացող մարզային բնակչության տեսակարար կշիռը, ցածր են մարզերում բժշկական կադրերով հագեցվածության ցուցանիշները, մասնավորապես՝ մարզերում աշխատում են բժիշկների ընդամենը շուրջ 29%-ը, միջին բուժանձնակազմի համապատասխան ցուցանիշը կազմում է 51%, մարզային բժշկական հաստատությունների գործունեության կառուցվածքում գերակշռում է թերապևտիկ ծառայությունը (ՀՀ մարզային բժշկական հաստատություններում |

իրականացվում է վիրահատությունների ընդհանուր թվի ընդամենը 23,6%-ը): Մարզային բժշկական հաստատություններում եկամուտների ընդհանուր կառուցվածքում ցածր է նաև (միջինում շուրջ 10%) վճարովի ծառայությունների տեսակարար կշիռը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Կոնցեսիոն կառավարման մոդելը, որը ենթադրում է գույքի առևտրային շահագործման իրավունքի փոխանցում կոնցեսիոներներին, համարվում է քաղաքական տեսանկյունից առավել օպտիմալ մոդել, քանի որ, ի տարբերություն մասնավորեցմանը, գույքը շարունակում է մնալ պետության սեփականություն:

Մարզերում գործող բժշկական հաստատությունների սպասարկման որակի բարելավման, կազմակերպությունների արդյունավետ կառավարման, բուժ. անձնակազմի հաստիքների համալրման, եկամտաբերության ապահովման տեսանկյունից առավել նպատակահարմար տարբերակը դրանք կոնցեսիոն պայմանագրի համաձայն կառավարման հանձնելն է:

Առաջարկվում է պիլոտային կարգով կոնցեսիոն կառավարմանը հանձնել պետության կողմից արդիականացված 2 մարզային բժշկական կենտրոն: Այնուհետև, կոնցեսիոն կառավարման հաձնման գործընթացը նախատեսվում է դադարեցնել 1 տարով, որի ընթացքում հավաքագրված բժշկական կենտրոնների բժշկական և ֆինանսական տվյալների հիման վրա կկատարվի վերլուծություն և որոշում կկայացվի հետագայում պետական բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձման նպատակահարմարությունը:

Նախատեսվում է մշակված փաստաթղթերը և իրականացվող միջոցառումները քննարկել և կարծիք ստանալ բոլոր շահագրգիռ կառույցներից, մասնավորապես, Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունից, Արդարադատության նախարարությունից և ՀՀ մարզպետարաններից:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Հաշվի առնելով մարզային բժշկական կենտրոններում առկա խնդիրների և պետություն-մասնավոր սեկտոր համագործակցության առավելությունները՝ մարզերում գործող բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձնելու արդյունքում ակնկալվում է.

- առավել լայն տարածված հիվանդությունների վաղ հայտնաբերման աճ,
- բժշկական ծառայությունների սպառման ավելացում՝ սեփական բնակավայրի մոտ,
- մարզերում բժշկական կադրերով համալրման խնդրի լուծում,
- պետության կողմից կատարված ներդրումների երկարակեցության ապահովում՝ իրականացնելով սարքավորումների սերունդափոխությունը կոնցեսիոների կողմից հատկացվող ամորտիզացիոն ծախսերի հիման վրա:

Նախագծի ընդունումը կնպաստի բժշկական կազմակերպությունների գույքը կոնցեսիոն կառավարման հանձնելու նպատակով հայտարարվող մրցույթների հայտարարմանը, անցկացմանը և ամփոփմանը ՀՀ օրենքով սահմանված կարգով, մրցութային հանձնաժողովի կողմից հնարավորինս փորձառու, սահմանված չափանիշներին բավարարող և տվյալ մարզում կոնցեսիոն կառավարման հանձնվող բժշկական կազմակերպության առավել արդյունավետ գործունեություն ապահովող կոնցեսիոների ընտրությանը:

30

**30.1 «Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) դեմ պայքարի ռազմավարության ներդրումը բխում է ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման համար արդյունավետ մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունից:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ըստ վիճակագրական տվյալների, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունը (ԹՔՕՀ) զբաղեցնում է 3-րդ տեղը մահաբերության և 4-րդ տեղը հաշմանդամության առաջացման առումով՝ սիրտ-անոթային և ուռուցքային հիվանդություններից հետո: Որպես ԹՔՕՀ առաջացման գլխավոր ռիսկի գործոն են համարվում ծխախոտի

| | |
|---|---|
| | օգտագործումը և օդի աղտոտվածությունը: Հայաստանի Հանրապետությունում ԹՔՕՀ վերաբերյալ վիճակագրական տվյալների ոչ լիարժեքությունը, ԹՔՕՀ տարածվածության, պացիենտների խնամքի ու բուժման ոչ բավարար վերահսկողականությունը և հասարակության ցածր տեղեկացվածությունը ռիսկի գործոնների և ախտանիշների վերաբերյալ անհրաժեշտություն են ստեղծել ԹՔՕՀ դեմ պայքարի ռազմավարության մշակմանը:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) դեմ պայքարի ռազմավարության ներդրման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը ԹՔՕՀ ռիսկի գործոնների և ախտանիշների վերաբերյալ՝ հատկապես ռիսկի խմբում գտնվող անձանց մոտ, հաշվի առնելով, որ ԹՔՕՀ վաղ փուլերում դրսևորվում է ոչ սպեցիֆիկ ախտանիշներով: Մշակել ԹՔՕՀ կանխարգելման, ախտորոշման և բուժման միասնական մոտեցումներ: Օգտագործելով էլեկտրոնային բժշկության հնարավորությունները՝ գնահատել ԹՔՕՀ ներկայիս առողջապահական վիճակը, վերահսկել ԹՔՕՀ տարածվածությունը, պացիենտների խնամքն ու բուժումը՝ ներառյալ վերականգնողական բուժումը, ուսումնասիրել և ներդնել ախտորոշման, բուժման նորարարությունները: Աջակցել ԹՔՕՀ բնագավառում գիտական հետազոտությունների իրականացմանը՝ հիվանդության կանխարգելման, ախտորոշման և բուժման նոր և առավել արդյունավետ միջոցների մշակման նպատակով:<br>Նախատեսվում է մշակված փաստաթղթերը և իրականացվող միջոցառումները քննարկել և կարծիք ստանալ բոլոր շահագրգիռ կառույցներից, մասնավորապես, տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից, ՀՀ մարզպետարաններից և Երևանի քաղաքապետարանից:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) դեմ պայքարի ռազմավարության ներդրման արդյունքում, բարձրացնելով հասարակության տեղեկացվածությունը ԹՔՕՀ ռիսկի գործոնների և ախտանիշների վերաբերյալ, վերահսկելով ԹՔՕՀ տարածվածությունը, պացիենտների խնամքն ու բուժումը, ակնկալվում է իջեցնել ԹՔՕՀ մահաբերության և հաշմանդամության ցուցանիշները, բարելավել պացիենտների կյանքի որակը: Մասնավորապես, իրականացման ավարտին, 5 տարի անց ԹՔՕՀ-ի ռիսկի գործոնների մասին բնակչության իրազեկվածության բարձրացում մինչև 50%, ԹՔՕՀ-ից մահացության ցուցանիշի նվազում 5%-ով:<br><br>**30.2 «Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարության ներդրումը բխում է քաղցկեղի կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման համար արդյունավետ մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունից:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Չնայած վերջին տարիներին ՀՀ բնակչության շրջանում արձանագրվել է քաղցկեղով հիվանդացության որոշակի կայունացում, մասնավորապես, եթե 2014թ. բնակչության շրջանում գրանցվել է առաջին անգամ ախտորոշված նորագոյացությունների թիվը կազմել 8.365 դեպք, 2015թ-ին՝ 8.372, իսկ 2016թ-ին դեպքերի թիվը նախորդ տարվա նկատմամբ ավելացել է ընդամենը 0.04%-ով, այնուամենայնիվ, բնակչության մահացության ընդհանուր կառուցվածքում չարորակ նորագոյացություններով պայմանավորված մահացության բեռը կազմում է 20,0%:<br>ՀՀ-ում տարեցտարի ավելացող չարորակ նորագոյացություններով պայմանավորված հիվանդությունների կանխարգելման նպատակն է բնակչության շրջանում վաղ հայտնաբերել և կանխարգելել չարորակ նորագոյացություններով պայմանավորված հիվանդությունների հետագա զարգացումը:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարության ներդրման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է մասնագիտական քննարկումների կազմակերպում, չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի |

միջազգային փորձի ուսումնասիրություն, Հայաստանում համաճարակաբանության (տարածվածությունն ըստ ախտահարված օրգանհամակարգի և տեսակի) ուսումնասիրություն և վերլուծություն: Ռազմավարության ներդրման շրջանակներում չարորակ նորագոյացությունների կանխարգելմանը, վաղ հայտնաբերմանը, բուժմանը, վարմանն (ներառյալ ժամանակակից հետազոտությունների մեթոդների կիրառում) ուղղված միջոցառումների մշակում, ինչպես նաև աշխարհագրական տեղակայման և հանրության իրազեկման վերաբերյալ միջոցառումների մշակում և ներդնում: Ռազմավարության հաստատման դեպքում վերջինիս ներդրման համար անհրաժեշտ կլինի շուրջ 17 մլրդ ՀՀ դրամ, որը ԱՆ բյուջեով նախատեսված չէ. ակնկալվում է ֆինանսավորման պլանավորում 2019 թվականի ընթացքում:

Նախատեսվում է մշակված փաստաթղթերը և իրականացվող միջոցառումները քննարկել և կարծիք ստանալ բոլոր շահագրգիռ կառույցներից, մասնավորապես, Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից, ՀՀ մարզպետարաններից և Երևանի քաղաքապետարանից:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարության ներդրման արդյունքում նախատեսվում է բարելավել բնակչության առողջապահական ցուցանիշները, մասնավորապես չարորակ նորագոյացությունների կանխարգելման և բուժման արդյունավետության բարձրացում և մահաբերության նվազեցում: Միջոցառումների իրականացման ավարտին, 5 տարի անց չարորակ նորագոյացություններից մահացության ցուցանիշի նվազում 5%-ով, վաղ հայտնաբերման ցուցանիշի բարելավում՝ 10%-ով, ապրելիության ցուցանիշների բարելավում:

**30.3 «Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի ռազմավարության ներդրումը բխում է է ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման համար արդյունավետ մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունից:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Համաձայն 2016 թվականի Առողջապահության նախարարության առողջապահության տեղեկատվական վերլուծական ազգային կենտրոնի (ԱՏՎԱԿ) և Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տվյալների, բնակչության շրջանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններից մահացության բեռը կազմում է մոտ 80%, ընդ որում, մահացության բուրգում արյան շրջանառության համակարգի հիվանդությունները (ԱՇՀՀ) զբաղեցնում են առաջին տեղը՝ 48%: Հանրապետության բնակչության «կյանքի անաշխատունակ տարիների» ցուցանիշի ավելացման (DALY, disability adjusted life years) 10 հիմնական պատճառներից չորսը պատկանում են ԱՇՀՀ (սրտի իշեմիկ հիվանդություն, ուղեղանոթային հիվանդություններ, զարկերակային գերճնշում (ԶԳ), սրտի այլ հիվանդություններ):

Հանրապետությունում տարեցտարի ավելացող սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելման նպատակն է բնակչության շրջանում վաղ հայտնաբերել և կանխարգելել սիրտ-անոթային հիվանդությունների հետագա զարգացումը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի ռազմավարության ներդրման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է մասնագիտական քննարկումների կազմակերպում, սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջազգային փորձի ուսումնասիրություն, Հայաստանում սիրտ-անոթային հիվանդությունների համաճարակաբանության ուսումնասիրություն և վերլուծություն: Ռազմավարության ներդրման շրջանակներում սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելմանը, վաղ հայտնաբերմանը, բուժմանը, վարմանն (ներառյալ ժամանակակից հետազոտությունների մեթոդների կիրառում) ուղղված միջոցառումների մշակում, ինչպես նաև աշխարհագրական տեղակայման և հանրության իրազեկման վերաբերյալ միջոցառումների մշակում և ներդնում:

Նախատեսվում է մշակված փաստաթղթերը և իրականացվող միջոցառումները քննարկել և կարծիք ստանալ բոլոր շահագրգիռ կառույցներից, մասնավորապես, տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից, ՀՀ մարզպետարաններից և Երևանի քաղաքապետարանից:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի ռազմավարության ներդրման արդյունքում նախատեսվում է բարելավել բնակչության առողջապահական ցուցանիշները, մասնավորապես, ակնկալվում է սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելման և բուժման արդյունավետության բարձրացում և մահաբերության նվազեցում: Միջոցառումների իրականացման ավարտին, 5 տարի անց սիրտ-անոթային հիվանդություններից մահացության ցուցանիշի նվազում 5%-ով:

31

**31.1 «Երեխաների և դեռահասների համար հոգեբուժական ծառայությունների մատչելիության և որակի բարելավման ծրագրային միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Ծրագրի մշակման անհրաժեշտությունը բխում էկառավարության կողմից հավանություն արժանացած Երեխաների և դեռահասների առողջության բարելավման 2016-2020թթ. ազգային ռազմավարության դրույթներից, ինչպես նաև երեխաների և դեռահասների համար հոգեբուժական ծառայությունների խիստ սահմանափակ մատչելիությամբ պայմանավորված ներկայիս իրավիճակով:

Միջոցառման նպատակը՝ Երեխաների և դեռահասների համար հոգեբուժական ծառայությունների մատչելիության և որակի բարելավումն է, հոգեկան առողջության խնդիրներով տառապող երեխաների համար մինչ այժմ գոյություն չունեցող առանձին հիվանդանոցային ծառայության և բուժման նպաստավոր պայմանների ստեղծում:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ի կատարումն ՀՀ վարչապետի 23.04.2014թ. N14.7/[188565]-14 հանձնարարականի՝ 2015թ. դեկտեմբերին ՀՀ կառավարություն է ներկայացվել երեխաների և դեռահասների հոգեբուժական ծառայությունների /բաժանմունքների ձևավորման կարողությունների գնահատումը և դրա բարելավման ուղղությամբ առաջարկությունները: Խնդրի լուծմանն ուղղված առաջարկությունները ներառվել են նաև 2017-2020թթ. Միջին ժամկետ ծախսային ծրագրում, սակայն չեն հաստատվել համապատասխան ռեսուրսների սահմանափակ լինելու հիմնավորմամբ:

Ըստ ԱԱԻ պաշտոնական տվյալների, արձանագրվել է հոգեկան հիվանդություններով 0-14 տարեկան երեխաների թե առաջին անգամ ախտորոշված հիվանդացության թե ընդհանուր հիվանդացության ցուցանիշի աճ: Արդյունքում, հոգեկան առողջության խնդիրներով երեխաներին տրամադրվող բուժօգնության պահանջարկը վերջին տարիների ընթացքում՝ էապես մեծացել է, մինչդեռ ծառայությունների մատչելիությունը՝ ոչ:

Թեև ամբուլատոր սպասարկման մասով ՀԿ սեկտորում հնարավորությունները մի փոքր ավելացել են, սակայն մանկական հիվանդանոցային հոգեբուժական ծառայության իրավիճակը շատ ավելի խնդրահարույց է և լեցուն օրակարգային լուծում պահանջող հարցերով: Առավել արդիական են հոգեկան հիվանդ, հատկապես սուր փսիխոտիկ վիճակներով և վարքի արտահայտված խանգարումներով տառապող երեխաների, հատկապես դեռահասների (որոնք առավել խոցելի են հոգեկան և վարքագծային խնդիրների դրսևորման տարիքային առանձնահատկություններից ելնելով) հիվանդանոցային բուժօգնության կազմակերպման և տևական մասնագիտական խնամքի կազմակերպման խնդիրները՝ գործնականում հանրապետությունում այդ ծառայությունների և ենթակառուցվածքների բացակայության պատճառով:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Երեխաների և դեռահասների հոգեբուժական ծառայությունների/բաժանմունքների կարողությունների ներկայիս վիճակի գնահատման հիման վրա իրավիճակի բարելավման առաջարկությունների մշակում, որտեղ տեղ կգտնեն առաջարկներ՝ մանկական հոգեբուժական ծառայություն մատուցող բուժհաստատությունների շինվերանորոգման աշխատանքների իրականացման, պետական պատվերի համապատասխան ծավալի տեղադրմամբ երեխաների

| | |
|---|---|
| | պսիխոսոմատիկ ծառայության գծով նոր բաժանմունքի ստեղծման, պետական պատվերի շրջանակներում մանկական հոգեբուժության նպատակային կլինիկական օրդինատուրայի տեղերի հատկացման ուղղությամբ:<br>Որպես համակատարողներ կարող են հանդես գալ հոգեբուժության և հոգեբանության ոլորտի ասոցիացիաները, որոնք ծրագրի մշակման և/կամ իրականացման ընթացքում կտրամադրեն մասնագիտական/փորձագիտական աջակցության:<br><br>**2. Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հոգեկան առողջության խնդիրներով տառապող երեխաների համար կբարելավվի հոգեբուժական ծառայությունների մատչելիությունը և որակը: Շահառուների համար կստեղծվի մինչ այժմ գոյություն չունեցող առանձին հիվանդանոցային ծառայության և բուժման նպաստավոր պայմաններ: |
| 32 | **32.1 ՀՀ բնակչության ռիսկային խմբերի շրջանում սքրինինգային հետազոտությունների իրականացում ըստ հետևյալ հիվանդությունների՝ հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) մահացության կառուցվածքը կրկնօրինակում է եվրոպական տարածաշրջանի մահացության պատկերը: Բնակչության մահացության ընդհանուր կառուցվածքում ՈՎՀ մահացության բեռը կազմում է մոտ 80%, ընդ որում սրտանոթային հիվանդություններից (ՍԱՀ) մահացությունը զբաղեցնում է առաջատար տեղը (48%), որոնց հաջորդում են չարորակ նորագոյացությունները՝ 20,0%, շաքարային դիաբետը (ՇԴ)՝ 4,2%:<br>Հանրապետությունում տարեց տարի ավելացող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակն է բարելավել մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունները և ռիսկային բնակչության շրջանում վաղ հայտնաբերել և կանխարգելել այդ հիվանդությունների հետագա զարգացումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2015թ.-ին մեկնարկել և մինչև 2020թ. ավարտը շարունակաբար ՀՀ ողջ տարածքում իրականացվելու են Սքրինինգային հետազոտություններ, որոնք ուղղված են արյան գերճնշման, շաքարային դիաբետի և արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելմանն ու վաղ ախտորոշմանը: 35-68 տարեկան բոլոր քաղաքացիները հնարավորություն ունեն անվճար հետազոտվել զարկերակային գերճնշման և շաքարային դիաբետի, իսկ 30-60 տարեկան բոլոր կանայք՝ ՊԱՊ թեստի հետազոտության միջոցով արգանդի պարանոցի նախաքաղցկեղի վաղ ախտորոշման եւ քաղցկեղի կանխարգելման նպատակով:<br>01.01.2015թ.-ից 31.12.2017թ. ընկած ժամանակահատվածում, սքրինինգային հետազոտությունների իրականացման 1-ին փուլում, բնակչության ռիսկային խմբերում իրականացվել է շուրջ 1 մլն 383 հազար սքրինինգային հետազոտություններ: Մասնավորապես. շուրջ 170 հազար կանանց շրջանում իրականացվել է ՊԱՊ թեստի հետազոտություն, շուրջ 455 հազար քաղաքացիների շրջանում՝ արյան մեջ քաղցի գլյուկոզի հետազոտություն և շուրջ 713 հազար քաղաքացիներ անցել են զարկերակային գերճնշման հայտնաբերման սքրինինգ, ինչպես նաև հղիության 36-38 շաբաթական ժամկետում իրականացվել է շուրջ 44 հազար մեզի և արյան երրորդ հետազոտություն:<br>2018-2020թթ. ընթացքում իրականացվելու է ՈՎՀ սքրինինգային հետազոտությունների իրականացման երկրորդ փուլը:<br>01.01.2018թ.-ից 28.02.2019թ. ընկած ժամանակահատվածում բնակչության ռիսկային խմբերում իրականացվել է շուրջ 498 հազար սքրինինգային հետազոտություններ: Մասնավորապես. շուրջ 56 հազար կանանց շրջանում իրականացվել է ՊԱՊ թեստի հետազոտություն, շուրջ 155 հազար քաղաքացիների շրջանում՝ արյան մեջ քաղցի գլյուկոզի հետազոտություն և շուրջ 268 հազար քաղաքացիներ անցել են զարկերակային գերճնշման հայտնաբերման սքրինինգ, ինչպես նաև հղիության 36-38 շաբաթական ժամկետում իրականացվել է շուրջ 19 հազար մեզի և արյան երրորդ հետազոտություն:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** |

Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության բնակչության ռիսկային խմբերում շարունակաբար իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների (հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) զանգվածային սքրինինգներ, որոնք ուղղված կլինեն վերը նշված հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և վերահսկմանը, ինչպես նաև մահացության նվազեցմանը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը Հայաստանի Հանրապետության շուրջ 1մլն. բնակչության ռիսկային խմբերում սքրինինգային հետազոտությունների իրականացումն է՝ նպաստելով ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և վերահսկմանը, ինչպես նաև մահացության նվազեցմանը:

**32.2 Շարժական մամոգրաֆ սարքի ձեռքբերում և կրծքագեղձի սքրինինգային հետազոտությունների իրականացում ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի բնակչության ռիսկային խմբերի շրջանում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Կրծքագեղձի չարորակ նորագոյացություններն ամբողջ աշխարհում ամենահաճախ ախտորոշվող չարորակ նորագոյացություններն են կանանց շրջանում, կազմելով ավելի քան երկու միլիոն նոր դեպք 2018թ.:

Հայաստանում կրծքագեղձի քաղցկեղը կանանց շրջանում գրավում է առաջին տեղը՝ քաղցկեղային հիվանդությունների շարքում: Վերջին տարիներին նկատվում է կրծքագեղձի քաղցկեղով հիվանդացության աճ՝ մասնավորապես 2010թ.-ին կյանքում առաջին անգամ հայտնաբերված կրծքագեղձի քաղցկեղով կանանց թիվը կազմել է 982, իսկ 2014թ.-ին, 2015թ.-ին, 2016թ.-ին և 2017 թ.–ին արձանագրվել է համապատասխանաբար 1,210, 1,093, 1,039 և 1,118 դեպք:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության 3 սահմանամերձ մարզերի կանանց մոտ կրծքագեղձի չարորակ նորագոյացությունների վաղ հայտնաբերումը և կանխարգելումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայում Հայաստանի Հանրապետությունում կրծքագեղձի կանոնակարգված սքրինինգ չի իրականացվում, իսկ մարզերում նշված հիվանդության կանխարգելման նպատակներով դիմելիությունը բժշկական հաստատություններ շատ ցածր է:

Արդյունքում, հիվանդությունը բացահայտվում է վերջին փուլերում, երբ դրա բուժման գործընթացը առավել բարդ է և թանկ:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև 2018թ. ստորագրված Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» դրամաշնորհային Ծրագրի (այսուհետ Ծրագիր) շրջանակներում նախատեսվում է սահմանամերձ ՀՀ Տավուշի, Սյունիքի և Լոռու մարզերում իրականացնել կրծքագեղձի մամոգրաֆիկ սքրինինգային հետազոտություններ: Հետազոտությունները նախատեսվում են իրականացնել կանանց 50-69 տարիքային խմբում՝ ապահովելով առնվազն 50% ընդգրկվածություն (շուրջ 26 հազար հետազոտություն):

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի խնդիրն է ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր մարզում ապահովել առնվազն 50% 50-69 տարիքային խմբի կանանց ընդգրկվածություն իրականացվող սքրինինգին, կանխարգելիչ հետազոտությունների միջոցով հայտնաբերելով հիվանդությունը և հնարավորություն ընձեռնելով հնարավորինս շուտ սկսել դրա բուժումը:

Իրականացվող ծրագիրը պիլոտային է: Դրա արդյունավետ իրականացման և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում նախատեսվում է ձեռքբերված շարժական մամոգրաֆիայի սարքավորման միջոցով շարունակել կրծքագեղձի վաղ հայտնաբերման սքրինինգային հետազոտությունները Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

| | |
|---|---|
| 33 | **33.1 «Ավագ և միջին բուժաշխատողների շտեմարանի ձևավորման և վարման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>2015 թվականի հոկտեմբերի 6-ին ընդունվեց «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով սահմանվեց ավագ և միջին բուժաշխատողների վերաբերյալ համապարփակ տվյալներ պարունակող շտեմարան ստեղծելու պահանջ:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում որևէ իրավական ակտով ՀՀ-ում մասնագիտական գործունեություն ծավալող բուժաշխատողների շտեմարան ձևավորելու և վարելու պահանջ սահմանված չէ, ինչը խոչընդոտում է ոլորտում մարդկային ներուժի արդյունավետ և տարածքային համաչափ պլանավորմանը:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է առողջապահության համակարգում ստեղծել և ներդնել մարդկային ներուժի էլեկտրոնային շտեմարան, որը կնպաստի արդյունավետ կադրային քաղաքականության մշակմանը և իրականացմանը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Բարելավել առողջապահության ոլորտում առկա կադրային ներուժի մասով վարվող քաղաքականությունը, ունենալ բուժաշխատողների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: |
| 34 | **34.1 «2021-2023 թվականների Իմունականխարգելման ազգային ծրագիրը և Իմունականխարգելման ազգային ծրագրի առաջնահերթ միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Վերոհիշյալ միջոցառմամբ նախատեսված իրավական ակտն ընդունելու լիազորությունը կառավարությանը վերապահված է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով: Նպատակը Իմունականխարգելման ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների շարունակական իրականացման ապահովումն է, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցում, դրանց հետևանքով մահվան դեպքերի կանխարգելում, և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարենպաստ է: Հանրապետությունում չեն արձանագրվում պատվաստումներով կանխարգելվող մի շարք հիվանդություններ՝ դիֆթերիա, պոլիոմիելիտ, նորածնային փայտացում, կարմրուկի և կարմրախտի տեղական դեպքեր, իսկ կապույտ հազը և համաճարակային պարոտիտն արձանագրվել են եզակի դեպքերի տեսքով: 1995 թվականից հանրապետությունում պոլիոմիելիտի դեպք չի արձանագրվում: 2000թ. չեն արձանագրվում դիֆթերիայի դեպքեր: Փայտացման եզակի դեպքերն արձանագրվում են հիմնականում չպատվաստված կամ թերի պատվաստված մեծահասակ ազգաբնակչության շրջանում: Կարմրուկի տեղական դեպքեր չեն գրանցվում, բերովի դեպքերը գերազանցապես արձանագրվում են չպատվաստված, պատվաստումներից հրաժարված կամ թերի պատվաստված անձանց շրջանում: Հեպատիտ Բ-ի նվազում, մինչև 14 տարեկանների շրջանում սուր դեպքերի բացակայություն: Ռոտավիրուսային վարակների դեմ պատվաստումների ներդրման արդյունքում բոլոր տարիքային խմբերում դիտվեց ռոտավիրուսային վարակներով պայմանավորված հոսպիտալացումների կտրուկ նվազում՝ մոտ 5 անգամ (2011թ. հունվար-մարտին՝ 60.3%, 2017թ հունվար-մարտին՝ 12%): Նվազումն ակնառու է հատկապես պատվաստման ենթակա տարիքային խմբում՝ մինչև 1 տարեկան երեխաների շրջանում:<br>Վերջին տարիներին ընդհանուր առմամբ դիտվում է կառավարելի վարակիչ հիվանդությունների դեմ կատարվող |

| | |
|---|---|
| | պատվաստումներում բնակչության նպատակային խմբերի ընդգրկման ցուցանիշների աճ (նպատակային ցուցանիշը՝ 90%). 1 տարեկան երեխաների շրջանում անհրաժեշտ պատվաստումների ամբողջական փաթեթը (ԲՑԺ, հեպատիտ Բ, հնգավալենտ, պոլիոմիելիտ, ռոտավիրուսային, պնևմակոկային) ստացած երեխաների ընդգրկվածությունը 86%-ից (2008 թ.) աճել է մինչև 90% (2018թ.), 2 տարեկան երեխաների շրջանում անհրաժեշտ պատվաստումների ամբողջական փաթեթը (ԿԿԽ, ԱԿԴՓ, պոլիոմիելիտ) ստացած երեխաների ընդգրկվածությունն 82 %-ից (2008 թ.) աճել է մինչև 92% (2018թ.), 7 տարեկան երեխաների շրջանում անհրաժեշտ պատվաստումների ամբողջական փաթեթը (ԿԿԽ, ԱԿՓ-Մ, պոլիոմիելիտ) ստացած երեխաների ընդգրկվածությունն աճել է 93%-ից (2008 թ.) մինչև 96% (2018թ.):<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում, հակապատվաստումային տարբեր խմբավորումների ակտիվացման և տարածման միտումը տարեցտարի նպաստում է պատվաստումներից հրաժարվողների թվի աճին: Պատվաստումներից հրաժարվողների թվի շարունակական աճը կհանգեցնի պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների նվազեցմանը և կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով անբարենպաստ համաճարակային իրավիճակի առաջացմանը: Վերոհիշյալ խնդրի լուծման նպատակով՝ անհրաժեշտ է բարձրացնել բուժաշխատողների, ինչպես նաև բնակչության իրազեկվածությունը՝ պատվաստումների կարևորության, անվտանգության և արդյունավետության վերաբերյալ:<br>Միջոցառման համակատարողները մշակված նախագծի վերաբերյալ ներկայացնում են կարծիք, անհրաժեշտության դեպքում մասնակցում եմ նախագծի վերաբերյալ կազմակերպված քննարկումներին և տրամադրում մասնագիտական կարծիք:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցում, դրանց հետևանքով մահվան դեպքերի կանխարգելում և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովում:<br><br>**34.2 Մարդու սպառման համար նախատեսված խմելու ջրի որակի մասին հրահանգի պահանջների համաձայն ՀՀ առողջապահության նախարարի հրամանների լրամշակում և հաստատում**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 5-րդ մասի 16-րդ «Առողջապահություն» գլխի 1-ին կետի կատարումն ապահովելու նպատակով, որի կատարումն պետք է ապահովի Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը, համաձայն «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս, խմելու ջրով պայմանավորված վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործում է ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 և 2002 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 803 հրամանները, որոնցով սահմանված են խմելու ջրի որակին և մոնիտորինգի իրականացմանը ներկայացվող պահանջները, սակայն վերջիններով ամրագրված պահանջները ամբողջությամբ չեն համապատասխանում ԵՄ չափանիշներին:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետությունում գործող ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանի վերանայում, համապատասխանեցնելով 03.11.1998թ. N98/83 ԵՄ Մարդու կողմից օգտագործման ջրի որակի դիրեկտիվ պահանջներին:<br>Միջոցառման համակատարողները մշակված նախագծի վերաբերյալ ներկայացնում են կարծիք, |

| | |
|---|---|
| | անհրաժեշտության դեպքում մասնակցում եմ նախագծի վերաբերյալ կազմակերպված քննարկումներին և տրամադրում մասնագիտական կարծիք:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետությունում Մարդու սպառման համար նախատեսված խմելու ջրի որակի և դրա հսկողական մոնիտորինգի վերանայված պահանջներ՝ արդյունքում խմելու ջրով պայմանավորված վարակիչ հիվանդությունների կանխարգելում միջազգային մոտեցումներին համապատասխան: |
| 35 | **35.1 «ՀՀ առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ՀՀ առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների միջոցառումների ծրագիրը նախատեսվում է ներդնել մարդակենտրոն, մրցունակ, արդյունավետ, անվտանգ, որակյալ առողջապահական համակարգի ստեղծման նպատակով:<br>Սույն ծրագրի ընդունումը բխում է ՀՀ սահմանադրության 86 Հոդվածի 7-րդ կետի և կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի պահանջների կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակում առկա են մի շարք լուծում պահանջող խնդիրներ, որոնք չեն նպաստում բնակչության առողջության ցուցանիշների բարելավմանը. չնայած այն հանգամանքին, որ դեռևս 2006թ.-ից ԱԱՊ օղակում մատուցվող հիմնական ծառայությունները անվճար են բնակչության համար, դրանց սպառումը դեռևս մնում է ոչ գոհացուցիչ մակարդակի վրա՝ կազմելով տարեկան մեկ բնակչի հաշվով շուրջ 4.3 հաճախում, ինչը շուրջ 2 անգամ ցածր է 1990թ., ինչպես նաև Եվրոմիության 27 երկրների ներկայիս ցուցանիշից, առանձնանում է ԱԱՊ համակարգի պասիվ դերակատարումը բնակչությանը ծառայություններ մատուցելու գործում և ակտիվ գործողությունների սահմանափակ լինելը, լուրջ մարտահրավեր են նաև ԱԱՊ օղակի բժիշկների ծերացումով պայմանավորված խնդիրները:<br>Թեև առողջության առաջնային պահպանումը դիտարկվում է առողջապահության համակարգի գերակա ուղղություններից մեկը և որպես բարեփոխման իրականացման ճանապարհ է ընտրվել այլ երկրներում գործարկված ու առավել արդյունավետ ճանաչված ընտանեկան բժշկության ներդրումը, ներկայումս՝ բարեփոխումների սկզբից շուրջ 20 տարի անց, արձանագրվում է, որ չնայած այն բերել է զգալի առաջընթացի հանրապետության մարզերում (մասնավորապես գյուղական վայրերում), մեծ քաղաքներում և հատկապես, մայրաքաղաքում, այն դեռևս լիարժեք չէ:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների ծրագրի ներդրում.<br>Բարեփոխումների իրագործումը նախատեսում է.<br>" առաջնային օղակի մասնագետների պատասխանատվության բարձրացում՝ բնակչության առողջության պահպանման գործում,<br>" ԱԱՊ բժշկի գործառույթների ուժեղացում,<br>" բնակչության շրջանում առողջ ապրելակերպի խթանում,<br>" մասնագիտացված բուժօգնությունից դեպի առաջնային բուժօգնություն անցում,<br>" կանխարգելիչ բժշկության հզորացում (կանխարգելիչ միջոցառումների իրականացման նոր մոտեցումների և մեթոդաբանության ներդրում)՝ հենվելով միջազգային փորձի վրա,<br>" հիվանդանոցային դեպքերի թվի նվազեցում,<br>" ԱԱՊ օղակում մատուցվող բժշկական ծառայությունների որակի վերահսկման նոր համակարգի ներդրում,<br>" ԱԱՊ ծառայությունների հասանելիություն (աշխարհագրական դիրքը), |

| | |
|---|---|
| | "  պացիենտի կողմից բժշկի ազատ ընտրության սկզբունքի ապահովում,<br>"  գործող նորմատիվների վերանայում:<br>Առաջարկվում է քաղաքային վայրերում զարգացնել ընտանեկան բժշկության ինստիտուտը, բարելավել առողջության առաջնային պահպանման օղակում մատուցվող բժշկական ծառայությունների որակը, նվազեցնել հիվանդանոցային դեպքերի թիվը:<br><br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների միջոցառումների ծրագրի ներդրման արդյունքում համապատասխան իրավական ակտերի ընդունումով կսահմանվեն բարեփոխումների ուղիները, առողջության առաջնային պահպանման օղակում վերհանված խնդիրների առաջարկվող լուծումները, առաջարկվող քաղաքականության հիմնական դրույթները:<br>Կանխատեսվում է, որ միջոցառումների իրականացման արդյունքում 5 տարի անց ԱԱՊ օղակում հիվանդանոցային, ինչպես նաև շտապ և անհետաձգելի բուժօգնության դեպքերի թիվը կնվազի 10%-ով, ԱԱՊ այցելությունների կառուցվածքում աշխատանքային տարիքի անձանց այցերի տեսակարար կշիռը կավելանա 20%-ով, մեկ բնակչին բաժին ընկնող ԱԱՊ այցերի թիվը կբարելավվի մինչև 6 այց/տարեկան: |
| **Արդարադատության նախարարություն** | |
| **36** | **36.1 ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՍՏԵՂԾՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Վճռաբեկ դատարանի մասնագիտացված՝ վարչական պալատի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է մասնագիտացված արդարադատության իրականացման արդյունավետության երաշխավորմամբ, ինչը կհանգեցնի նաև գործերի արագ քննության:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրվեց վարչական դատարանը՝ որպես մասնագիտացված դատարան՝ այդպիսով ստեղծելով երաշխիքներ տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ ապահովելու համար: Այդուհանդերձ, վարչական արդարադատության ոլորտում ապահովված չէ մասնագիտացված պալատի կողմից վերաքննիչ դատարանի դատական ակտերի վերանայումը, քանի որ այդ լիազորությունը վերապահված է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատին:<br>Պետք է նկատել, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորների վերաբերյալ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ պալատի 11 դատավորներից միայն 5-ը ունի վարչական մասնագիտացում, որի ներքո դիտարկվում է նաև տնտեսական դատարանում դատավորի փորձառությունը, քանի որ տնտեսական դատարանը Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով իրավասու էր քննել հանրային իրավահարաբերություններից բխող գործեր: Արդյունքում ստացվում է, որ վարչական գործերով Վճռաբեկ դատարանի որոշումների կայացման հարցում որոշիչ դեր ունեն քաղաքացիական մասնագիտացում ունեցող դատավորները:<br>Բացի այդ, Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար պահանջվում է համապատասխան մասնագիտացում՝ քաղաքացիական, վարչական կամ քրեական, ինչը ենթադրում է, որ Վճռաբեկ դատարանում դատավոր է նշանակվում այս մասնագիտացումներից որևէ մեկն ունեցող դատավորը, սակայն Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում նշանակված դատավորը պետք է ունենա 2 մասնագիտացում: Ըստ այդմ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածում իրավական ֆիկցիայի միջոցով փորձ է արվել հաղթահարել նշված իրավիճակը՝ սահմանելով, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորները համարվում են միաժամանակ քաղաքացիական և վարչական մասնագիտացումներ ունեցող:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի հիման վրա ստեղծել երկու ինքնուրույն, առանձին մասնագիտացումներ ունեցող պալատներ, կարգավորել Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատների կազմավորման և բնականոն գործունեության մեկնարկի հետ կապված |

| | |
|---|---|
| | հարցեր:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Մասնագիտացված արդարադատության իրականացման երաշխավորում: |
| 37 | **37.1 ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Կատարողական վարույթի մասին» օրենքի մշակումը պայմանավորված է կատարողական վարույթի արդյունավետությունը բարձրացնելու և առկա խնդիրները վերացնելու անհրաժեշտությամբ: Նշվածը կարևորվում է նաև Եվրոպական դատարանի՝ ՀՀ վերաբերյալ կայացրած մի շարք վճիռների կատարման համատեքստում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**<br>«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն (այսուհետ՝ Օրենք) ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, որից հետո Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը կրել է բազմաթիվ ինստիտուցիոնալ փոփոխություններ: Արդյունքում Օրենքը պարունակում է մի շարք թերություններ և հակասություններ, ինչպես նաև չի համապատասխանում Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի որոշումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ձևավորված պրակտիկային: Նշված խնդրի հաղթահարման համար Օրենքում պարբերաբար կատարվում են փոփոխություններ, ինչը չի ապահովում առկա խնդիրների համակարգային լուծումը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է մշակել «Կատարողական վարույթի մասին» օրենք:<br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Երաշխավորել դատական ակտերի կատարման արդյունավետությունը, վարույթի մասնակիցների իրավունքների առավելագույն պաշտպանվածությունը և դատական ակտերի կամավոր կատարումը: |
| 38 | **38.1 ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելը պայմանավորված է դատաիրավական բարեփոխումներով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վարչական դատավարության՝ որպես դատական պաշտպանության ինքնուրույն ձևի կայացումը իրավական պետության անքակտելի տարրերից է և պահանջում է վարչական գործերի քննության ընթացակարգերի կատարելագործում և անձանց հանրային իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխիքների նախատեսում: Այնինչ, ներկայումս Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի մի շարք ինստիտուտներ, ինչպես օրինակ ծանուցումը, էլեկտրոնային արդարադատությունը, գրավոր ընթացակարգի կիրառումը կատարելագործման կարիք ունեն, քանի որ չեն համապատասխանում դատաիրավական բարեփոխումների արդյունքում ներդրված նոր մոտեցումներին և ինստիտուտներին:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության բարեփոխում՝ ծանուցման, գրավոր ընթացակարգերի կիրառման բարելավում, էլեկտրոնային արդարադատության իրականացման նախադրյալների սահմանում: |
| 39 | **39.1 ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ կատարելը նպատակ է հետապնդում ապահովել սնանկության կառավարիչների հաշվետվողականությունը, նրանց կողմից վարքագծի նորմերի կամ օրենքի և այլ իրավական ակտերի խախտումներ կատարելու դեպքերում նրանց ենթարկել կարգապահական պատասխանատվության:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սնանկության կառավարչի գործունեության ընդհանուր վերահսկողությունը ներկայումս «Սնանկության մասին» օրենքը վերապահել է սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությանը (այսուհետ՝ Կազմակերպություն), որը դրա շրջանակներում ունի կարգապահական պատասխանատվություն կիրառելու իրավասություն: Այնինչ, իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ նման վերահսկողությունը բավարար համարվել չի կարող: Մասնավորապես, Կազմակերպության ողջ գործունեության ընթացքում կառավարիչների նկատմամբ հարուցվել է 23 կարգապահական վարույթ, որից 6-ը կարգապահական հանձնաժողովի կողմից մերժվել է, 10-ը՝ կարճվել, 7-ով հարուցվել է կարգապահական վարույթ և կիրառվել է նկատողություն: Ընդ որում, կիրառված նկատողություններից չորսը տրվել են Կազմակերպության նկատմամբ |

| | |
|---|---|
| | սնանկության կառավարիչների ունեցած անդամավճարի հետ կապված պարտավորությունները չկատարելու համար: Միևնույն ժամանակ, Արդարադատության նախարարություն պարբերաբար ներկայացվում են բազմաթիվ դիմում-բողոքներ՝ սնանկության կառավարիչների գործունեության օրինականության բացահայտման խնդրանքով: Այնինչ, Արդարադատության նախարարությունը չունի բավարար լծակներ դիմումներում բարձրացված հարցերն իրավական առումով ուսումնասիրելու և վերջնական լուծում տալու համար այն պարագայում, երբ սնանկության կառավարիչների որակավորումն իրականացվում է հենց նախարարության կողմից:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է փոփոխություններ կատարել «Սնանկության մասին» օրենքում՝ նախատեսելով սնանկության կառավարիչների կողմից հաշվետվություններ ներկայացնելու պարտականություն, ինչպես նաև Արդարադատության նախարարությանը վերապահել սնանկության կառավարիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորություն:<br>**2 . Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Սնանկության կառավարիչների հաշվետվողականության բարձրացում, Արդարադատության նախարարության՝ սնանկության կառավարիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորության ամրագրում, սնանկության կառավարիչների վարձատրության վերանայում: |
| 40 | **40.1 ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ**<br><br>**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ապահովել նորմատիվ իրավական ակտերի մշտադիտարկման անհրաժեշտ կառուցակարգեր:<br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս նորմատիվ իրավական ակտերի մշտադիտարկման իրականացման կարգն ամրագրող ակտի բացակայության պայմաններում այս գործընթացը շարունակում է մնալ չկարգավորված և չիրացված:<br>**1.1. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ամրագրելով, որ Կառավարությունն իրավասու է ընդունելու նորմատիվ իրավական ակտերի մշտադիտարկման կարգը սահմանելու մասին որոշում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է ամրագրել Կառավարության՝ նորմատիվ իրավական ակտերի մշտադիտարկման կարգը սահմանելու լիազորություն: |
| 41 | **41.1 ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Նորմատիվ իրավական ակտերի մշտադիտարկման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է նորմատիվ իրավական ակտերի մշտադիտարկման կարգը սահմանելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս նորմատիվ իրավական ակտերի մշտադիտարկման իրականացման կարգն ամրագրող ակտի բացակայության պայմաններում այս գործընթացը շարունակում է մնալ չկարգավորված և չիրացված:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ընդունել «Նորմատիվ իրավական ակտերի մշտադիտարկման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է ապահովել Կառավարության որոշմանը համապատասխան նորմատիվ իրավական ակտերի մշտադիտարկման իրականացումը: |
| 42 | **42.1-42.3 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունն ընդունվել է 2012թ., որից հետո ՀՀ-ում տեղի են ունեցել սահմանադրական, քաղաքական և օրենսդրական լուրջ բարեփոխումներ, անհրաժեշտություն է առաջացել մշակելու Մարդու իրավունքների պաշտպանության նոր ազգային ռազմավարություն՝ սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլի առանձնահատկություններին, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի նոր զարգացումներին, ՀՀ կառավարության քաղաքականության առաջնահերթություններին և միջազգային պարտավորություններին համահունչ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միասնական քաղաքականությունն իրականացվում է ՀՀ նախագահի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի ՆԿ-159 կարգադրությամբ հաստատված Մարդու իրավունքների |

պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2017-2019թթ. Գործողությունների ծրագրով, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 483-Ն որոշմամբ: Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումն ավարտվում է 2019 թվականի դեկտեմբերին: Յուրաքանչյուր ոլորտի համար նախատեսվել են հստակ միջոցառումներ, սահմանվել են յուրաքանչյուր միջոցառման ակնկալվող արդյունքն ու կատարման օբյեկտիվ վերստուգելի չափանիշը, միջոցառման կատարման համար պատասխանատու մարմինը և համակատարողները, կատարման վերջնաժամկետները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել տվյալ միջոցառման կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների աղբյուրներին:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է մշակել մարդու իրավունքների պաշտպանության նոր ազգային ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագիր՝ 3-ամյա կտրվածքով՝ 2020-2022թթ, այնուհետ 2023-2025թթ. համար, որի նպատակն է առավել համակարգված և արդյունավետ դարձնել հանրապետական գործադիր և օրենքով ստեղծված պետական մարմինների գործողությունները, որոնք հնարավոր կդարձնեն ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով և ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված նպատակների իրագործումը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ բարեփոխումների ներկա փուլի առանձնահատկություններով և ՀՀ կառավարության քաղաքականության առաջնահերթություններով պայմանավորված՝ Ռազմավարության և դրանից բխող Գործողությունների ծրագրի ընդունման արդյունքում կմշակվի  միասնական մեկ քաղաքական փաստաթուղթ, որը կհամակարգի մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում տարվող հիմնական քաղաքականությունը՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի զարգացումներին համահունչ, կստեղծվեն լրացուցիչ երաշխիքներ քաղաքացիների սոցիալական իրավունքների և խոցելի խմբերի (հաշմանդամների, երեխաների ու կանանց) իրավունքների պաշտպանության համար, կբարելավվի գործողությունների կատարման համակարգման և մշտադիտարկման ինստիտուցիոնալ համակարգը:

**43**

**43.1 ԲՈԼՈՐԻ՝ ՕՐԵՆՔԻ ԱՌՋԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ 2015թ. սահմանադրությունն ընդգծում է խտրականության համընդհանուր արգելքի կարևորությունը: խտրականության բացառումը չի կարող սահմանափակվել իրավական ակտերում խտրականության զուտ հռչակագրային արգելքով: Այս ոլորտում նույնպես անհրաժեշտ են առավել համապարփակ կարգավորումներ, որոնք հնարավորություն կտան երաշխավորել բոլորի իրավահավասարությունը, դրա խախտման դեպքում կանխատեսելի և արդյունավետ ընթացակարգերի միջոցով իրավունքները վերականգնելու, փոխհատուցում ստանալու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ: Իրավահավասարության ապահովմանն ուղղված օրենսդրական կառուցակարգերի ստեղծումն ամրագրված է նաև 2019թ. փետրվարի 9-ին ընդունված ՀՀ կառավարության ծրագրում:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հարկ է նշել, որ խտրականության դեմ պայքարի ոլորտում անհրաժեշտ են առավել համապարփակ կարգավորումներ, որոնք հնարավորություն կտան երաշխավորել բոլորի իրավահավասարությունը, դրա խախտման դեպքում կանխատեսելի և արդյունավետ ընթացակարգերի միջոցով իրավունքները վերականգնելու, փոխհատուցում ստանալու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներ: Հիշյալ նպատակներին է միտված իրավահավասարության ապահովմանը ուղղված միասնական օրենսդրություն մշակելը, ինչը բխում է նաև ՀՀ միջազգային պարտավորություններից:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է մշակել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր անձի և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորություններ՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

«Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է երաշխավորել Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր անձի իրավունքների ու ազատությունների իրականացման

| | |
|---|---|
| | հավասար հնարավորությունները, կատարելագործել խտրականության դեմ պայքարի բնագավառի օրենսդրությունը, ապահովել խտրականության կանխարգելման, դրանից իրավական և դատական պաշտպանության իրավական հիմքերը: |
| 44 | **44.1 ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԱՄՐԱԳՐՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ՀՀ սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով կարևորվել է նաև ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների իրականացման ապահովմանն ուղղված օրենքի ընդունումը: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանությունն ամրագրվում է նաև ՀՀ կառավարության Ծրագրում, որպես Կառավարության գործունեության հիմնական ուղենիշներին, նպատակներին հասնելու համար առանցքային նշանակություն ունեցող դրույթ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հատկանշական է, որ անկախության հռչակումից ի վեր ՀՀ չի ունեցել օրենք ազգային փոքրամասնություններին պաշտպանության մասին, այլ տարբեր օրենքներում և այլ իրավական ակտերում տեղ են գտել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ու ազատությունների իրականացման վերաբերյալ առանձին դրույթներ, ինչի պատճառով համապատասխան կարգավորումները կրում են ոլորտային և հատվածական բնույթ:<br>Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների օրենսդրական ապահովման պահանջներ ամրագրված են նաև բազմաթիվ միջազգային համաձայնագրերով, որոնց միացել է ՀՀ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ կսահմանվի Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շրջանակը, նրանց իրավունքները և պաշտպանության անհրաժեշտ մեխանիզմները, կսահմանվեն հանրապետական գործադիր մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրները այդ ոլորտում: Առաջարկվող նախագծի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունը հաստատում է իր պատրաստակամությունը և հաստատուն կամքը ապահովել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ միջազգային փաստաթղթերով ամրագրված իրավունքների իրականացումը Հայաստանում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է հստակեցնել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շրջանակը, սահմանել ազգային փոքրամասնությունների հիմնական իրավունքները և ազատությունները, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունները դրանց իրականացման ապահովման գործում, կազմավորել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց խնդիրները և իրավունքների իրացման հետ կապված հարցերը քննարկելու համար խորհրդակցական մարմին: |
| 45 | **45.1 ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Անվաճար իրավաբանական օգնություն ցուցաբերելը կամ տրամադրելը պետության պարտավորությունն է, իսկ այդ իրավունքից օգտվելը քաղաքացու իրավունքը: Ուստի՝ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել այս իրավունքի լիարժեք իրացման համար:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գույքային պահանջների գործերի համար նախատեսված անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար գումարային սահմանափակման շեմը թույլ չի տալիս որպեսզի մի շարք շահառուներ, որոնք օբյեկտիվորեն ունեն իրավաբանական օգնություն ստանալու կարիք, օգտվեն անվճար իրավաբանական օգնությունից:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է նաև գույքային պահանջների գործերի համար նախատեսված անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար գումարային սահմանափակման նվազագույն շեմը բարձրացնել:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Բարձրացնել գույքային պահանջների գործերի համար նախատեսված անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար գումարային սահմանափակման նվազագույն շեմը: |
| 46 | **46.1-46.2 ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԱԼԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՆԵՐԴՆՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** |

| | |
|---|---|
| | Հաշվի առնելով փաստաբանության ինստիտուտի դերն անձանց իրավական օգնության ցուցաբերման միջոցով նրանց իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում անհրաժեշտություն է առաջացել այս ոլորտում իրականացնել բարեփոխումներ՝ հաշվի առնելով նաև իրավունքի և արդարադատության վերաբերյալ հանրային ընկալումների ձևավորմանը նպաստավոր պայմանների ստեղծման կարևորությունը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Այս ոլորտում բարեփոխումների իրականացմամբ իսկ կապահովի նաև դատաիրավական ոլորտի բարեփոխումների տրամաբանական ամբողջականությունը: կարևորվում է այս ինստիտուտի զարգացման և արդյունավետ գործունեության ապահովման ուղղությամբ որոշակի քայլերի ձեռնարկումը՝ ելնելով ոլորտում առկա մի շարք խնդիրներից:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ամրապնդել փաստաբանական ծառայություններից օգտվողների պաշտպանվածությունը և վնասների հատուցման հնարավորությունը, ինչը նպաստելու է հասարակության ներսում անհատական մակարդակում իրավական անվտանգության համոզվածության ամրապնդմանը:<br>Զարգացնել փաստաբանական ինստիտուտը և բարելավել փաստաբանական ծառայությունների որակը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ուսումնասիրել փաստաբանական սխալի ապահովագրության ինստիտուտի ներդրման իրավական և կազմակերպական ընթացակարգերի, այդ թվում՝ վնասի հատուցման չափանիշների վերաբերյալ առաջադեմ փորձը և դրա հիման վրա մշակել փաստաբանական սխալի ապահովագրության ինստիտուտի ներդրման հայեցակարգ: Հայեցակարգի հիման վրա մշակել համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթը, կազմակերպել հանրային քննարկումներ: Նախագիծը ներկայացնել Ազգային ժողով: |
| 47 | **47.1-47.2 ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ՝ ՆԵՐԱՌԵԼՈՎ ՎԿԱՅԻ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ՎԿԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՆՈՏԱՐԻՆ ՍՈՒՏ ՑՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը պայմանավորված է արդարադատության մատչելիության և արդյունա-վետության բարձրացման նպատակով ՀՀ նոտարիատի ինստիտուտի ներգրավման շրջանակների ընդլայնման անհրաժեշտությամբ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործող իրավակարգավորումների համաձայն՝ նոտարներին վերապահված է առանձին տեսակների իրավաբանական փաստերի հաստատման լիազորություն՝ պահպանելով դատարանի կողմից նշված վարույթների իրականացումը, սակայն այն առավել արդյունավետ իրագործելու համար անհրաժեշտ է ընդլայնել փաստը հաստատող ապացույցների շրջանակը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող նախագծով նախատեսվում է նոտարի կողմից իրավաբանական փաստերի հաստատման գործառույթի արդյունավետ և ամբողջական իրացման համար ընդլայնել փաստը հաստատող ապացույցների շրջանակը՝ ներառելով վկայի ցուցմունքները, դրա հետ մեկտեղ քրեական պատասխանատվություն նախատեսելով վկայի կողմից նոտարին սուտ ցուցմունք տալու համար:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում կընդլայնվեն ՀՀ նոտարիատի ինստիտուտի ներգրավման շրջանակները՝ նոտարները ապահովելով համապատասխան գործիքակազմով, այդ թվում՝ ապացույցների ընդունման և գնահատման տեսանկյունից: |
| 48 | **48.1-48.2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԻԿԱ 5 ՏԱՐԻՆԵՐԻ ԿՏՐՎԱԾՔՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՒ ԴԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանի հանրապետությունում դատաիրավական ոլորտի բարեփոխումները պետք է կրեն շարունակական բնույթ՝ հաշվի առնելով ինչպես ներպետական առանձնահատկությունները, այնպես էլ առաջադեմ միջազգային փորձը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Դատականիրավական համակարգի խնդիրները բազմազան են, ինչն էլ պատճառն է նոր ռազմավարության և գործողությունների մշակման, որոնց մեջ հստակեցվել են ինչպես առկա խնդիրները, այնպես էլ դրանց լուծման մեխանիզմները:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2024 թվականների |

| | |
|---|---|
| | ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) մշակվելու է՝ հաշվի առնելով դատաիրավական ոլորտում բարեփոխումների ռազմավարական պլանավորման, մշտադիտարկման, հաշվետվողականության և առաջընթացի պարբերական գնահատման անհրաժեշտությունը ոլորտի վերընթաց զարգացման ապահովման համար: Ռազմավարությունը դատաիրավական ոլորտի բարեփոխումների նախորդ ծրագրերի շարունակությունն է լինելու և նախորդների ձեռքբերումների հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով իրավունքի բնագավառի ժամանակակից զարգացումները, ՀՀ դատական իշխանության և իրավական համակարգի առկա խնդիրներն ու զարգացման հեռանկարները, սահմանելու է՝ դատական և իրավական ոլորտի բարեփոխումների ընդհանուր նպատակը, ուղղությունները և առաջիկա հինգ տարիների համար այդ ուղղություններից յուրաքանչյուրով սահմանված ռազմավարական նպատակները, դրանց ուղենիշերը և ռազմավարության իրագործմամբ ակնկալվող վերջնարդյունքները, որոնց ցանկանում է հասնել Կառավարությունը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նոր ռազմավարությունը հնարավորություն կընձեռի հստակ սահմանել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են էլ ավելի կատարելագործված դատական և իրավական համակարգ ունենալու համար: |
| 49 | **ՊԱՅՔԱՐԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ**<br>**49.1 «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Կոռուպցիայի դեմ պայքարը հանդիսանում է ՀՀ կառավարության գործունեության առաջնային և կարևորագույն ուղղություններից, ուստի, պատահական չէ, որ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Պայքար կոռուպցիայի դեմ» վերտառությամբ 3-րդ բաժնի շրջանակներում թիրախավորվել են կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում անհրաժեշտ մի շարք միջոցառումներ: Միաժամանակ, նշված բաժնի շրջանակներում ընդգծվում է, որ, ի թիվս այլնի, կոռուպցիայի դեմ պայքարը պետք է իրականացվի ռազմավարական միջոցառումների իրականացման միջոցով:<br>Այս համատեքստում հարկ է նշել, որ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության գլխավոր երաշխիքներից է գործուն և թիրախային հակակոռուպցիոն ռազմավարության առկայությունը, որով կանխատեսելի կլինի կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում ՀՀ որդեգրած քաղաքականությունը: Ուստի, անհրաժեշտ է մշակել և իրականացնել հակակոռուպցիոն նոր ռազմավարություն և դրանում ներառել տվյալ ժամանակահատվածին համահունչ, ներքին իրավիճակը բարելավող, միջազգային պահանջներին համապատասխան հակակոռուպցիոն միջոցառումներ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1141-Ն որոշմամբ:<br>Հատկանշական է, որ հակակոռուպցիոն նշված ռազմավարությունն ավարտվել է 2018 թվականին: Ըստ այդմ՝ անհրաժեշտություն է առաջանում, հակակոռուպցիոն ոլորտում ՀՀ կառավարության որդեգրած նոր քաղաքականությանը համահունչ, մշակել հակակոռուպցիոն նոր ռազմավարություն:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հանրային քննարկումների, ռիսկերի գնահատումների, ոլորտային հետազոտությունների, միջազգային գործընկերների հետ համագործակցության արդյունքում կընդունվի հակակոռուպցիոն նոր ռազմավարությունը և ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունմամբ կորոշվեն հետագա՝ 2019-2022 թվականների տարիների հակակոռուպցիոն ուղղությունները՝ հստակ միջոցառումներով:<br>Փաստաթուղթը կսահմանի կոռուպցիայի դեմ պայքարում պետության հիմնական ռազմավարական ուղղությունները, ներառյալ՝ կոռուպցիոն խնդիրների վերհանմանը և լուծմանը, միջազգային պարտավորությունների իրականացմանն ուղղված քայլերը: Նախագծի շրջանակներում կսահմանվեն ՀՀ կառավարության ծրագրի «Պայքարը կոռուպցիայի դեմ» վերտառությամբ 3-րդ բաժնի ներքո գտնվող հակակոռուպցիոն միջոցառումների կատարումն ապահովող անհրաժեշտ քայլերը:<br><br>**49.2 Կոռուպցիոն_հանցագործությունների բացահայտման և անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմով օժտված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը** |

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Պայքար կոռուպցիայի դեմ» վերտառությամբ 3-րդ բաժնի համաձայն՝ կոռուպցիայի դեմ պայքարը պետք է իրականացվի ինչպես ռազմավարական միջոցառումների իրականացմամբ, այնպես էլ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացման և վերափոխման միջոցով: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի տեսանկյունից կարևորվում է մասնագիտացված, անկախության երաշխիքներով օժտված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ստեղծումը, որը կիրականացնի ուսումնասիրություններ, օժտված կլինի կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման համար անհրաժեշտ գործիքակազմով:

Խնդրո առարկայի վերաբերյալ ՀՀ կառավարության դիրքորոշմանը համահունչ՝ անհրաժեշտ է մշակել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմով օժտված՝ մասնագիտացված, անկախության երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթ:

Հատկանշական է, որ սույն միջոցառման նախատեսման հիմքում ընկած են նաև ոլորտային միջազգային կազմակերպությունների՝ հակակոռուպցիոն մասնագիտացված և անկախության երաշխիքներով օժտված ինստիտուցիոնալ համակարգի ստեղծման առնչությամբ ներկայացված հորդորները:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են հանցագործությունների նախաքննություն իրականացնող մի շարք քննչական մարմիններ, որոնց գործունեության ինստիտուցիոնալ արդյունավետությունը վերջին տարիներին լուրջ մասնագիտական գնահատման չի ենթարկվել: Միաժամանակ, չի քննարկվել քննչական գործառույթներ իրականացնող մարմինների համակարգի արդիականացման և օպտիմալացման հարցը:

Այս համատեքստում հարկ է ընդգծել այն հանգամանքը, որ ներկայումս կոռուպցիոն հանցագործություններով օպերատիվ-հետախուզական գործունեություն, հետաքննություն և նախաքննություն իրականացնում են տարբեր մարմիններ, ինչը գործնականում կարող է ստեղծել խնդիրներ՝ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման արդյունավետության, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության միասնական մեթոդաբանության բացակայության տեսանկյունից:

Խնդրո առարկայի առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունից հետևում է, որ կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետությունը կարող է երաշխավորված լինել միայն այն պարագայում, երբ այդ գործառույթը վերապահված է մեկ մարմնի: Ավելին, միջազգային գործընկեր կազմակերպությունները ևս բազմիցս բարձրացրել են նշված հարցը՝ պնդելով, որ Հայաստանում կոռուպցիոն հանցագործությունների քննության ապակենտրոնացվածությունը կոռուպցիոն հանցագործությունների արդյունավետ քննության հիմնական մարտահրավերներից է:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ելնելով տարբեր կադրային ռեսուրսներով աշխատող և միասնական հակակոռուպցիոն քաղաքականութան բացակայության պայմաններում առաջացող ռիսկերից՝ առաջարկվում է կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացման գործառույթները կենտրոնացնել անհրաժեշտ գործիքակազմով օժտված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի շրջանակներում: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացման անհրաժեշտ գործիքակազմով օժտված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Սույն միջոցառումը նպատակ է հետապնդում արդիականացնել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման ինստիտուցիոնալ համակարգը, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմանն ուղղված գործառույթները կենտրոնացնել հակակոռուպցիոն մարմնում՝ այդպիսով ապահովելով կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվող մարմնի մասնագիտացումը, կոռուպցիոն հանցագործությունների քննության միասնական մեթոդիկան և բարձրացնելով այդպիսի հանցագործությունների քննության արդյունավետությունը:

**49.3 Ակտիվների վերադարձի վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթը**
**Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Սույն միջոցառման նախատեսման անհրաժեշտությունը բխում է 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Պայքար կոռուպցիայի դեմ» վերտառությամբ 3-րդ բաժնի բովանդակությունից: Վերջինիս համաձայն՝ ակտիվները վերադարձնելու նպատակով ՀՀ կառավարությունը մտադիր է վերանայել ակտիվների վերադարձի ինստիտուտի վերաբերյալ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությունը և ամրապնդել միջազգային համագործակցությունը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ ակտիվների վերադարձին առնչվող կառուցակարգերը գործնականում առաջացնում են մի շարք խնդիրներ՝ հնարավորություն չտալով ամբողջ ծավալով վերադարձնել Հայաստանից դուրս բերված ակտիվները:

Միաժամանակ, գործնականում ակտիվների վերադարձման հարցում առկա են խնդիրներ նաև միջազգային արդյունավետ համագործակցության տեսանկյունից: Ակտիվների վերադարձի հարցում միջազգային արդյունավետ համագործակցության բացակայության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ ակտիվների վերադարձի ինստիտուտի ներպետական կարգավորումները չեն համապատասխանում միջազգային չափանիշներին, մասնավորապես՝ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի կարգավորումներին՝ այդպիսով հանգեցնելով նշված կոնվեցիայի կողմ հանդիսացող պետությունների կողմից գործադրվող կառուցակարգերի անհամապատասխանությանը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ակտիվների վերադարձի վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթ, որով կվերանայվի նշյալ ինստիտուտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Սույն միջոցառման արդյունքում կվերանայվի ակտիվների վերադարձի ինստիտուտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և կամրապնդվի միջազգային համագործակցությունը:

**50** **ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ԳՈՒՅՔԻ և ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ**

**50.1 «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Պայքար կոռուպցիայի դեմ» վերտառությամբ 3-րդ բաժնի «Հանրային ծառայության մեջ գտնվող անձանց գործունեության, գույքի և եկամուտների թափանցիկությունը» վերատառությամբ 3.1-րդ գլխի համաձայն՝ կոռուպցիայի կանխարգելման գործում կարևորագույն նշանակություն ունի պետության առաջին դեմքերի, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հանրային ծառայության մեջ գտնվող բոլոր անձանց, նրանց ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների գործունեության և ունեցվածքի նկատմամբ իրական հանրային վերահսկողության իրականացման համար համարժեք թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմների ստեղծումը:

Նրանց կոռուպցիոն ներգրավվածությունը բացառելու համար անհրաժեշտ է նաև իրականացնել որոշակի օրենսդրական նորամուծություններ, որոնցից առանձնապես կարևորվում են՝

- այնպիսի նոր համակարգի ներդրումը, համաձայն որի Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնի հավակնող և նման պաշտոն զբաղեցնող անձինք համապատասխան լիազոր մարմնին նոտարական կարգով կլիազորեն աշխարհի ցանկացած բանկում և ֆինանսական կազմակերպությունում, ցանկացած երկրի տարածքում իրենց անունից փնտրել և ստանալ տեղեկություններ իրենց անունով հաշվեհամարների առկայության, ստեղծման օրից դրանց շարժի և մնացորդի, ինչպես նաև իրենց անունով շարժական, անշարժ գույքի և արժեթղթերի առկայության մասին: Նման լիազորագիր տալուց հրաժարվող անձինք չպետք է կարողանան լինել բարձրաստիճան պաշտոնյա.
- պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի՝ հրապարակման ենթակա տվյալների ցանկի ընդլայնումը (եկամուտ վճարողների անունները (անվանումները), գույքի գտնվելու երկիրը և այլն)՝ ապահովելով կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման արդյունավետությունը.

Հաշվի առնելով վերոգրյալի վերաբերյալ ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությունը՝ անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գործնականում պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների վերաբերյալ ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրության ընթացքում ծագում են մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում են ցանկացած երկրի տարածքում գտնվող բանկից և ֆինանսական կազմակերպությունից պաշտոնատար անձանց անունով հաշվեհամարների առկայության, ստեղծման օրից դրանց շարժի և մնացորդի, ինչպես նաև նրանց անունով շարժական, անշարժ գույքի և արժեթղթերի առկայության ստուգմանը: Խնդիրներն ավելի ցայտուն են արտահայտվում, երբ տվյալների ստուգման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում այլ երկրից ձեռք բերել բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն:

Այս համատեքստում հարկ է շեշտադրել այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում

այնպիսի կառուցակարգ, որի միջոցով ՀՀ պետական պաշտոնի հավակնող և պաշտոն զբաղեցնող անձինք համապատասխան լիազոր մարմնին նոտարական կարգով կլիազորեն աշխարհի ցանկացած բանկում և ֆինանսական կազմակերպությունում, ցանկացած երկրի տարածքում իրենց անունից փնտրել և ստանալ տեղեկություններ իրենց անունով հաշվեհամարների առկայության, ստեղծման օրից դրանց շարժի և մնացորդի, ինչպես նաև իրենց անունով շարժական, անշարժ գույքի և արժեթղթերի առկայության մասին: Արդյունքում՝ նվազում է գույքի և եկամուտների հայտարարագրերի վերլուծության արդյունավետությունը և դրա արդյունքում կոռուպցիոն դեպքերի բացահայտման հավանականությունը:

Միաժամանակ, գույքի և եկամուտների հայտարարագրերի վերլուծությունից զատ՝ առկա է նաև նշված հայտարարագրերի նկատմամբ իրական հանրային վերահսկողության իրականացման համար համարժեք թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմների բացակայության խնդիրը: Այս առումով հարկ է նշել, որ գույքի և եկամուտների հայտարարագրերը հրապարակվում են ոչ ամբողջական ծավալով, ինչի արդյունքում հանրային վերահսկողության առարկայից կարող են դուրս մնալ այնպիսի տվյալներ, ինչպիսին են եկամուտ վճարողների անունները (անվանումները), գույքի գտնվելու երկիրը և այլն:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետություն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով՝

1) կսահմանվեն համապատասխան կարգավորումներ, որոնց համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնի հավակնող և պաշտոն զբաղեցնող անձինք համապատասխան լիազոր մարմնին նոտարական կարգով լիազորում են աշխարհի ցանկացած բանկում և ֆինանսական կազմակերպությունում, ցանկացած երկրի տարածքում իրենց անունից փնտրել և ստանալ տեղեկություններ իրենց անունով հաշվեհամարների առկայության, ստեղծման օրից դրանց շարժի և մնացորդի, ինչպես նաև իրենց անունով շարժական, անշարժ գույքի և արժեթղթերի առկայության մասին.

2) կընդլայնվի պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի՝ հրապարակման ենթակա տվյալների ցանկը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետություն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կսահմանվի պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների բացահայտմանն ուղղված նոր գործիքակազմ, ինչպես նաև կընդլայնվի պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերում ներառված տվյալների հրապարակման ծավալը՝ ապահովելով այդպիսի տվյալների նկատմամբ իրական հանրային վերահսկողությունը:

**50.2 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Պայքար կոռուպցիայի դեմ» վերտառությամբ 3-րդ բաժնի «Հանրային ծառայության մեջ գտնվող անձանց գործունեության, գույքի և եկամուտների թափանցիկությունը» վերատառությամբ 3.1-րդ գլխի համաձայն՝ կոռուպցիայի կանխարգելման գործում կարևորագույն նշանակություն ունի պետության առաջին դեմքերի, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հանրային ծառայության մեջ գտնվող բոլոր անձանց, նրանց ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների գործունեության և ունեցվածքի նկատմամբ իրական հանրային վերահսկողության իրականացման համար համարժեք թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմների ստեղծումը:

Նրանց կոռուպցիոն ներգրավվածությունը բացառելու համար անհրաժեշտ է նաև իրականացնել որոշակի օրենսդրական նորամուծություններ, որոնցից, ի թիվս այլնի, առանձնապես կարևորվում է այնպիսի նոր համակարգի ներդրումը, որի համաձայն հակակոռուպցիոն համապատասխան մարմինն իրավասություն կունենա ստուգելու նշանակման ենթակա՝ Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքության կանոնների պահպանումը (չպահպանումը) ու կոռուպցիոն իրավախախտումներում ներքաշված լինելը (չլինելը) և, ըստ այդմ, նշանակման նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան խորհրդատվական բնույթի եզրակացություն ներկայացնելու տվյալ անձին նշանակելու իրավասություն ունեցող անձին: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է իրավական ակտի նախագծի միջոցով խնդրո առարկա գործառույթը վերապահել իրավասու մարմնին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնի հավակնող անձին պաշտոնի նշանակման դեպքում խորը վերլուծության չի ենթարկվում տվյալ անձի կողմից բարեվարքության կանոնները պահպանելու (չպահպանելու), կոռուպցիոն իրավախախտումներում ներքաշված լինելու (չլինելու) կամ հանրային ճանաչում

| | |
|---|---|
| | ունենալու (չունենալու) հանգամանքը: Այլ կերպ՝ չկա որևէ մասնագիտացված մարմին, ով կկարողանա նշված հարցերի վերաբերյալ նախապես ներկայացնել խորհրդատվական եզրակացություն:<br>Արդյունքում՝ կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ Հայաստանի Հանրապետության պետական պաշտոն զբաղեցնի այնպիսի անձ, ով նախկինում օրինակ՝ չի պահպանել բարեվարքության կանոնները կամ ներքաշված է եղել կոռուպցիոն իրավախախտումներում:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին կվերապահվի նշանակման ենթակա՝ Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքության կանոնների պահպանումը (չպահպանումը) ու կոռուպցիոն իրավախախտումներում ներքաշված լինելը (չլինելը) ստուգելու և, ըստ այդմ, տվյալ անձին նշանակելու իրավասություն ունեցող անձին նշանակման նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան խորհրդատվական բնույթի եզրակացություն ներկայացնելու գործառույթ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Սույն միջոցառման կատարման արդյունքում կբարձրանա պաշտոնի նշանակվող անձանց հանրային պատկերի նկատմամբ հասարակության վստահությունը, ինչպես նաև կապահովվի նշված անձանց բարեվարքությունը: |
| **51** | **ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**<br>**51.1. «Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրման ճանապարհային քարտեզը հաստատելու վերաբերյալ» ՀՀ Վարչապետի որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Պայքար կոռուպցիայի դեմ» վերտառությամբ 3-րդ բաժնի «Տնտեսական գործունեության թափանցիկությունը» վերտառությամբ 3.3-րդ գլխի համաձայն՝ կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր գործիքներից են նաև օրենքով սահմանված որոշակի ոլորտներում գործունեություն ծավալող, պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտումը և նրանց վերաբերյալ տեղեկությունների ընդհանուր և հանրամատչելի հարթակի ներդրումը՝ ապահովելով իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալների հրապարակայնությունը: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է հաստատել իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրման ճանապարհային քարտեզ, որով կանխատեսելի կդարձվի խնդրո առարկա ինստիտուտի ներդրման գործընթացը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս իրական սեփականատերերի բացահայտման առումով որոշակի կառուցակարգեր առկա են ինչպես «Գնումների մասին», այնպես էլ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքների շրջանակներում: Այդուհանդերձ, առկա չէ իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված միասնական կառուցակարգ, ներդրված չէ իրական սեփականատերերի բացահայտման միասնական գրանցամատյան, որի շնորհիվ ներկայացված տվյալները հասանելի կլինեն հանրությանը՝ այդպիսով չապահովելով իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի թափանցիկությունը և հանրային հաշվետվողականությունը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրման ճանապարհային քարտեզը հաստատելու վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով կհստակեցվեն այն ոլորտները, որոնց ներկայացուցիչ իրավաբանական անձինք փուլային կարգով կստանձնեն պարտավորություն իրենց իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում իրական սեփականատերերի բացահայտման գործընթացը կկրի թիրախավորված բնույթ՝ այդպիսով հստակեցնելով այն ոլորտները, որոնց ներկայացուցիչ իրավաբանական անձինք կստանձնեն պարտավորություն իրենց իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ:<br><br>**51.2 «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Պայքար կոռուպցիայի դեմ» վերտառությամբ 3-րդ բաժնի «Տնտեսական գործունեության |

| | |
|---|---|
| | թափանցիկությունը» վերտառությամբ 3.3-րդ գլխում սահմանվել է, որ անհրաժեշտ է վերանայել պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց՝ միասնական պետական գրանցամատյանում առկա տեղեկությունների՝ հանրությանը հասանելի դարձնելու մեխանիզմները՝ վերացնելով օրենքով նախատեսված պետական տուրք վճարելու պայմանը՝ սահմանված կարգով հաշվառված լրատվամիջոցների համար և ապահովելով հանրային շահերին վերաբերող հարցերի շուրջ հավաստի և ամբողջական տեղեկատվության ազատությունը: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է իրավական ակտի նախագծի միջոցով վերանայել նշված մեխանիզմները:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի շրջանակներում ամրագրված են այլ ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի գծով արտոնությունները: Նշված հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ ՀՀ պետական ռեգիստրում պահվող տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատվում են օրենսդիր և գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամը, Մարդու իրավունքների պաշտպանը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: ՀՀ պետական ռեգիստրում պահվող և ինտերնետային կայքում տեղադրված ամբողջական տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատվում են նաև դատական իշխանության մարմինները, ՀՀ դատախազական մարմինները, օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինները, նոտարները, բանկերը և այլ կազմակերպություններ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:<br>Նշված շարքում ընդգրկված չեն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգով հաշվառված լրատվության միջոցները՝ հանգեցնելով նրան, որ նշված լրատվամիջոցները պարտավոր են հանրային շահերին վերաբերող հարցերի շուրջ հավաստի և ամբողջական տեղեկատվության ստացման համար վճարել պետական տուրք: Արդյունքում՝ այդպիսի լրատվամիջոցների վրա դրվում է լրացուցիչ ֆինանսական բեռ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով կառաջարկվի Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրում պահվող տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգով հաշվառված լրատվության միջոցներին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մեկ ամսվա ընթացքում պահանջվող տեղեկությունների քանակը գերազանցում է տպագրված կամ պատճենահանված 10 էջը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում կվերացվի սահմանված կարգով հաշվառված լրատվամիջոցների՝ իրավաբանական անձանց միասնական պետական գրանցամատյանում առկա տեղեկությունների ստացման նպատակով պետական տուրք վճարելու պարտականությունը՝ այդպիսով վերանայելով միասնական պետական գրանցամատյանում առկա տեղեկությունների՝ հանրությանը հասանելի դարձնելու մեխանիզմները և ապահովելով հանրային շահերին վերաբերող հարցերի շուրջ հավաստի և ամբողջական տեղեկատվության ազատությունը: |
| 52 | **ՕՐԵՆՔԻ ԱՌՋԵՎ ԲՈԼՈՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**<br>**52.1 ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում առանձնակի կարևորվում է քրեական պատիժների համակարգի արդիականացումը և դրա նպատակայնության ապահովումը, քրեական պատիժների ոլորտում անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը, դրանց լիարժեք իրացման երաշխիքների ստեղծումը: Պատահական չէ, որ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» վերտառությամբ 4-րդ բաժնի «Օրենքի առջև բոլորի հավասարությունը, արդարադատությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ 4.1-րդ գլխում ևս շեշտադրված է այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը վճռական է վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորման հարցում: Միաժամանակ, կարևորելով ազատությունից զրկված անձանց իրավունքների անխոչընդոտ իրացումը՝ ընդգծվել է, որ պետք է շարունակական քայլեր ձեռնարկվեն ազատությունից զրկված անձանց հիմնական իրավունքների երաշխավորման, այդ թվում՝ արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդման, պահման պայմանների բարելավման, նրանց տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարձրացման, վերասոցիալականացման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով: |

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ քրեակատարողական օրենսգիրքն ընդունվել է դեռևս 2004 թվականին: Նշված օրենսգրքի նորմերի գիտական վերլուծության և գործնական կիրառման արդյունքները ամուր հիմք են տալիս այն պնդման համար, որ քրեական պատիժների համակարգը վերաիմաստավորման և արդիականացման կարիք ունի:

Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող մայր օրենքի՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի վերանայման և բարեփոխման անհրաժեշտության մասին են վկայում նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները (այդ թվում՝ ընդդեմ Հայաստանի կայացված), Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) առաջարկությունները և ԽԿԿ զեկույցներում (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետություն կատարած այցերի վերաբերյալ) տեղ գտած դիտարկումները, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցները, այդ թվում՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմ ներկայացված դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի հիատապ, ընթացիկ և տարեկան հաշվետվությունները:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների (այդ թվում՝ ընդդեմ Հայաստանի կայացված), Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) առաջարկությունների և ԽԿԿ զեկույցներում (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետություն կատարած այցերի վերաբերյալ) տեղ գտած դիտարկումների, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցների, այդ թվում՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմ ներկայացված դիրքորոշումների, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի հիատապ, ընթացիկ և տարեկան հաշվետվությունների հաշվառմամբ առաջարկվում է մշակել ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագիծ, որով քրեակատարողական ոլորտը կանոնակարգող մայր օրենքը կկատարելագործվի և կհամապատասխանեցվի միջազգային չափանիշներին:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծով առաջարկվող հիմնարար և սկզբունքային նորամուծությունների շնորհիվ քրեակատարողական գործող համակարգը կկատարելագործվի, կարդիականացվի քրեական պատիժների համակարգը և կապահովվի դրա նպատակայնությունը:

**52.2 ՀՀ քրեակատարողական ոլորտի ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում առանձնակի կարևորվում է քրեական պատիժների ոլորտում անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը, դրանց լիարժեք իրացման երաշխիքների ստեղծումը:

Այս համատեքստում հարկ է ընդգծել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում դեռևս արդիական են մնում կալանավորված և դատապարտված անձանց իրավունքների իրացմանն ուղղված արդյունավետ կառուցակարգերի ներդրման, վերասոցիալականացման և հասարակությունում վերաինտեգրման, քրեակատարողական համակարգում որակյալ կադրերի ապահովման խնդիրները: Կարևորվում է, որ նշված խնդիրներն իրենց լուծումները ստանան ոչ թե պատժողական քաղաքականության արմատավորման, այլ վերականգնողական արդարադատության գաղափարախոսության ամրապնդման ուղիով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» վերտառությամբ 4-րդ բաժնի «Օրենքի առջև բոլորի հավասարությունը, արդարադատությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ 4.1-րդ գլխում ևս շեշտադրված է այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը վճռական է վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորման հարցում: Միաժամանակ, կարևորելով ազատությունից զրկված անձանց իրավունքների անխոչընդոտ իրացումը՝ ընդգծվել է, որ պետք է շարունակական քայլեր ձեռնարկվեն ազատությունից զրկված անձանց հիմնական իրավունքների երաշխավորման, այդ թվում՝ արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդման, պահման պայմանների բարելավման, նրանց տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարձրացման, վերասոցիալականացման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հատկանշական է, որ ներկայումս առկա չէ որևէ փաստաթուղթ (ռազմավարություն, գործողությունների

ծրագիր կամ հայեցակարգ), որով համապարփակ կերպով անդրադարձ կկատարվի քրեակատարողական համակարգի խնդիրներին և կնախանշվեն այդ խնդիրների լուծմանն ուղղված ուղիները: Ըստ այդմ՝ ոլորտային բարեփոխումները որոշ դեպքերում կարող են կրել հատվածային բնույթ:

Հիմք ընդունելով ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծով պատժի նպատակների վերաբերյալ որդեգրված հայեցակարգային նոր մոտեցումները, հաշվի առնելով Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (սույն ենթակետում այսուհետ՝ ԽԿԿ) առաջարկությունները և ԽԿԿ զեկույցներում (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետություն կատարած այցերի վերաբերյալ) տեղ գտած դիտարկումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները (այդ թվում՝ ընդդեմ Հայաստանի կայացված), ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցները, այդ թվում՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմ ներկայացված դիրքորոշումները, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի հրատապ, ընթացիկ և տարեկան հաշվետվությունները, ոլորտային հասարակական կազմակերպությունների կողմից բարձրացված խնդիրները, ինչպես նաև ելնելով քրեակատարողական համակարգի արմատական, կայուն և շարունակական բարեփոխումն ապահովելու, համակարգն ամբողջությամբ արդիականացնելու հրատապությունից՝ անհրաժեշտ է համապարփակ կերպով, մեկ ռազմավարական փաստաթղթի տեսքով սահմանել առանցքային այն ուղղություններն ու դրանցից բխող միջոցառումները, որոնց արդյունավետ իրագործումը լուծելու է ոլորտի առջև ծառացած կարևորագույն խնդիրները:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով ոլորտային ռազմավարություն ունենալու անհրաժեշտությունը՝ առաջարկվում է մշակել քրեակատարողական համակարգի բարելավմանն ուղղված ռազմավարություն, որը կապահովի քրեակատարողական ոլորտի կանխատեսելի զարգացումն ու կատարելագործումը: Քրեակատարողական ոլորտի ռազմավարությամբ կնախատեսվեն բոլոր այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորման, ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացման գործընթացի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև քրեակատարողական համակարգի կատարելագործման համար:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Քրեակատարողական ոլորտի ռազմավարության և դրանից բխող միջոցառումների ցանկի ընդունման դեպքում մեկ միասնական փաստաթղթի միջոցով կապահովվի քրեակատարողական ոլորտի կանխատեսելի զարգացումն ու կատարելագործումը:

**52.3 «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Վերականգնողական արդարադատության սկզբունքներից բխում է, որ արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է ենթադրեն ազատազրկման ավանդական գաղափարախոսությունից անցում դեպի վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսությանը: Այդ գաղափարախոսության որդեգրման արդյունքը եղավ այն, որ 2016 թվականին մայիսի 17-ին ընդունված «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց պրոբացիայի ինստիտուտը և ստեղծվեց Քրեակատարողական ծառայությունից անկախ Պրոբացիայի ծառայություն:

«Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի ընդունումը հիմնավորված էր նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ պրոբացիայի մասին հանձնարարականների կատարմամբ: Այդպիսի հանձնարարականներից են օրինակ՝ պրոբացիայի ոլորտում հիմնարար համարվող «Պրոբացիայի մասին Եվրոպայի խորհրդի կանոնների վերաբերյալ» թիվ CM/Rec(2010)1 հանձնարարականը, «Էլեկտրոնային մոնիթորինգի վերաբերյալ» թիվ CM/Rec(2014)4 հանձնարարականը, «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների վերաբերյալ» թիվ R (92) 16 հանձնարարականը և այլ հանձնարարականներ:

Այդուհանդերձ, հաշվի առնելով պրոբացիայի ոլորտի կատարելագործման և գործնականում վերականգնողական արդարադատության արմատավորման անհրաժեշտությունը՝ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» վերտառությամբ 4-րդ բաժնի «Օրենքի առջև բոլորի հավասարությունը, արդարադատությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ 4.1-րդ գլխում ևս շեշտադրվեց այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը վճռական է վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորման հարցում: Այլ կերպ՝ ՀՀ կառավարությունը ջանքեր է գործադրելու վերականգնողական արդարադատության արմատավորման, պրոբացիայի ոլորտի կատարելագործման և Պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա 2016 թվականի մայիսի 25-ի N

555-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում ստեղծվեց Պրոբացիայի ծառայությունը: Պրոբացիայի ծառայության կողմից արդեն ավելի քան երկու տարի ծավալած գործունեության ընթացքում գործնականում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, որոնք ինչպես իրավական, այնպես էլ կազմակերպատեխնիկական բնույթի են և պահանջում են համապատասխան լուծումներ:

Այս համատեքստում հարկ է նշել, որ Պրոբացիայի ծառայության ողջ գործունեության կամ Պրոբացիայի ծառայության առանձին գործառույթների վերաբերյալ իրականացվել են որոշ ուսումնասիրություններ ինչպես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, այնպես էլ միջազգային փորձագետների և ոլորտային հասարակական կազմակերպությունների կողմից: Հատկանշական է, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2018 թվականին հրապարակվեց «Հայաստանի Հանրապետության պրոբացիայի պետական ծառայության գործունեության մշատադիտարկում» արտահերթ հրապարակային զեկույցը, որում համապարփակ կերպով անդրադարձ է կատարվել ինչպես Պրոբացիայի ծառայության գործառույթներին, այնպես էլ Պրոբացիայի ծառայության նյութական և կադրային ռեսուրսներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմքում ունենալով նաև նշված ուսումնասիրությունները՝ անհրաժեշտ է խորը վերլուծության և գնահատման ենթարկել Պրոբացիայի ծառայության գործունեության արդյունքները, թիրախավորել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծմանն ուղղված հստակ առաջարկներ:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմքում ունենալով Պրոբացիայի ծառայության գործունեության գնահատման արդյունքները՝ կմշակվեն «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը, որոնցով համապարփակ կերպով անդրադարձ կկատարվի պրոբացիայի ոլորտում առկա խնդիրներին և կներկայացվեն դրանց լուծմանն ուղղված առաջարկներ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

«Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի ընդունման արդյունքում կկատարելագործվի պրոբացիայի ոլորտը և կբարձրացվի Պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետությունը՝ այդպիսով նպաստելով վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորմանը:

**52.4 «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Քրեական դատավարության խնդիրների հաջող լուծումը գործնականում հաճախ պայմանավորված է լինում քրեական դատավարության սուբյեկտների իրավունքների սահմանափակման անհրաժեշտությամբ: Այդպիսի սահմանափակումները կարող են հանդես գալ դատավարական հարկադրանքի այնպիսի միջոցների տեսքով, ինչպիսին խափանման միջոցներն են:

Խափանման միջոցների համակարգում թերևս ամենախիստը կալանավորումն է: Չնայած այդ հանգամանքին՝ խնդրո առարկա խափանման միջոցը գործնականում մեծ կիրառություն ունի: Մարդու իրավունքների ոլորտում գործող կոնվենցիոն մեխանիզմները ևս բազմիցս արձանագրել են կալանավորում խափանման միջոցի կիրառման բավականին մեծ տարածվածությունը: Ավելին, այդպիսի կոնվենցիոն մեխանիզմներից մեկի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կալանքի ժամկետների երկարաձգման համար բավարար և հիմնավոր հիմքերի բացակայություն, և, ըստ այդմ, Մարդու իրավունքների հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտումներ են արձանագրվել Հայաստանի Հանրապետության դեմ կայացված մի շարք վճիռներում:

Այդուհանդերձ, հարկ է փաստել, որ միջազգային հարթակում առկա մոտեցումները բոլորովին չեն բացառում կալանավորման կիրառումը, սակայն գործնականում այն պետք է խափանման միջոցների համակարգում դիտարկվի որպես բացառիկ խափանման միջոց, որը ենթակա է կիրառման, եթե տվյալ համակարգում առկա մյուս խափանման միջոցները, այդ թվում՝ կալանավորմանն այլընտրանք հանդիսացողները, ունակ չեն ապահովելու մեղադրյալի պատշաճ վարքագիծը: Այդ գաղափարախոսության որդեգրման արդյունքում է, որ միջազգային փորձում տարբեր երկրներ ներդրել են կալանավորմանն այլընտրանք հանդիսացող մի շարք խափանման միջոցներ, որոնք կապված չեն անձին ազատությունից զրկելու հետ: Որպես այդպիսի միջոց՝ կիրառվում է օրինակ՝ տնային կալանքը կամ վարչական հսկողությունը:

Միջազգային փորձում առկա մոտեցումներին համահունչ՝ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» վերտառությամբ 4-րդ բաժնի «Օրենքի առջև բոլորի հավասարությունը, արդարադատությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ 4.1-րդ գլխում նախատեսված է, որ ՀՀ կառավարությունը պետք է միջոցներ ձեռնարկի ազատազրկման այլընտրանք հանդիսացող պատիժների և

| | |
|---|---|
| | կալանավորմանն այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների կիրառման համար անհրաժեշտ օրենսդրական երաշխիքների նախատեսման, դրանց գործնական կիրառման համար անհրաժեշտ միջոցների ապահովման ուղղությամբ, ինչպես նաև քաջալերի նման միջոցների կիրառումը:<br>Ըստ այդմ՝ անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ներդնել կալանավորմանն այլընտրանք հանդիսացող խափանման նոր միջոցներ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կալանավորմանն այլընտրանք հանդիսացող ընդամենը մեկ խափանման միջոց է նախատեսված՝ գրավը: Այդուհանդերձ, գրավը չի հանդիսանում որպես առանձին խափանման միջոց, այն կիրառվում է միայն այն ժամանակ, երբ անձի նկատմամբ արդեն իսկ նշանակվել է կալանավորումը որպես խափանման միջոց: Այլ կերպ՝ գրավը լիարժեք կերպով չի փոխարինում կալանավորմանը:<br>Վերոգրյալի համատեքստում հաշվի առնելով կալանավորմանն այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների ներդրման անհրաժեշտությունը՝ «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքով, որպես Պրոբացիայի ծառայության լիազորություն, նախատեսվեց նաև այլընտրանքային խափանման միջոցներ հանդիսացող տնային կալանքի և վարչական հսկողության իրականացումը, որոնք կարող են զուգակցվել էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ: Այդուհանդերձ, այդպիսի խափանման միջոցների կիրառման համար անհրաժեշտ է քրեադատավարական օրենսգրքի շրջանակներում ապահովել այն իրավական հիմքերը, որոնց ուժով դատարանը կարող է կիրառել խնդրո առարկա խափանման միջոցները:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ներդնել կալանավորմանն այլընտրանք հանդիսացող խափանման նոր միջոցներ՝ այդպիսով ապահովելով նշված միջոցների կիրառման համար անհրաժեշտ իրավական հիմքերը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կալանավորմանն այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների ներդրման օրենսդրական հիմքերի ամրագրմամբ խափանման միջոցների համակարգը կհամալրվի կալանավորմանն այլընտրանք հանդիսացող նոր խափանման միջոցներով, որոնց կիրառման արդյունքում գործնականում կնվազեն կալանավորման կիրառման դեպքերը:<br><br>**52.5 Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» վերտառությամբ 4-րդ բաժնի «Օրենքի առջև բոլորի հավասարությունը, արդարադատությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ 4.1-րդ գլխում կարևորելով ազատությունից զրկված անձանց իրավունքների անխոչընդոտ իրացումը՝ ընդգծվել է, որ ՀՀ կառավարությունը պետք է շարունակական քայլեր ձեռնարկի ազատությունից զրկված անձանց հիմնական իրավունքների երաշխավորման, այդ թվում՝ արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդման, պահման պայմանների բարելավման, նրանց տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարձրացման, վերասոցիալականացման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով:<br>Ազատությունից զրկված անձանց հիմնական իրավունքների երաշխավորման և դրանց անխոչընդոտ իրացման տեսանկյունից հատկանշական է, որ ներկայումս ՀՀ քրեակատարողական և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերը չեն նախատեսում պատիժ կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության կամ ընդունած որոշման դեմ բերված բողոքների քննության հստակ կառուցակարգ: Այդպիսի կառուցակարգի բացակայության փաստն ընդգծվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2019 թվականի հունվարի 22-ի ՍԴՈ-1439 որոշմամբ:<br>Ըստ այդմ՝ որպես ազատությունից զրկված անձանց հիմնական իրավունքների իրացման երաշխիք՝ անհրաժեշտ է նախատեսել պատիժ կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության կամ ընդունած որոշման դեմ բերված բողոքների քննության հստակ կառուցակարգ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ քրեակատարողական օրենսգրքի «Դատական վերահսկողությունը» վերտառությամբ 18-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է առ այն, որ օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանը քննարկում է դատապարտյալի բողոքները՝ պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի գործողությունների դեմ:<br>Քրեակատարողական օրենսդրությունը թեև ամրագրում է դատապարտյալի՝ իր իրավունքների խախտումների մասով դատարան բողոք ներկայացնելու իրավունքը, սակայն չի հստակեցնում՝ դատապարտյալը |

վարչակա՞ն, թե՞ ընդհանուր իրավասության դատարան կարող է դիմել: Ըստ այդմ՝ իրավական անորոշություն է առաջանում նաև այն հարցի շուրջ, թե ինչ դատավարական կարգով պետք է առաջնորդվել դատապարտյալի կողմից օրինակ՝ քրեակատարողական հիմնարկի պետի որոշումները դատական կարգով բողոքարկելիս և դրանք դատական վերահսկողության առարկա դարձնելիս:

Վերոգրյալ հարցերի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը 2019 թվականի հունվարի 22-ի ՍԴՈ-1439 որոշմամբ նշել է, որ մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից նշված որոշմամբ արտահայտված՝ առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը փաստել է, որ քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերի քննության դատավարական կարգի սահմանումը վերապահված է օրենսդրին՝ հավելելով, որ պատժի կրման ընթացքում դատապարտյալի իրավունքների դատական պաշտպանության վերաբերյալ իրավակարգավորումները կարող են նախատեսվել ինչպես վարչական դատավարության, այնպես էլ քրեական դատավարության կամ այլ օրենսդրության շրջանակներում:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ոլորտային օրենսդրությամբ նախատեսել պատիժները կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության կամ ընդունած որոշման դեմ բերված բողոքների քննության հստակ կառուցակարգ, որի շրջանակներում, ի թիվս այլնի, կհստակեցվի՝ իր իրավունքների պաշտպանության նպատակով դատապարտյալը կարող է դիմել վարչակա՞ն, թե՞ ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ այդմ լուծելով նաև դատավարական կարգին առնչվող անհստակությունները:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Պատիժները կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության կամ ընդունած որոշման դեմ բերված բողոքների քննության հստակ կառուցակարգի ներդրմամբ, իրավական որոշակիության սկզբունքին համահունչ, կերաշխավորվի ազատությունից զրկված անձանց հիմնական իրավունքների իրացումը:

**52.6. ՀՀ քրեական օրենսգրքում ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատիժների ներդրման նպատակով ՀՀ կառավարությանն առաջարկություն ներկայացնելը**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Սույն միջոցառման իրականացումը բխում է 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» վերտառությամբ 4-րդ բաժնի «Օրենքի առջև բոլորի հավասարությունը, արդարադատությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ 4.1-րդ գլխից, որի համաձայն՝ ՀՀ կառավարությունը պետք է միջոցներ ձեռնարկի ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատիժների և կալանավորմանն այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների կիրառման համար անհրաժեշտ օրենսդրական երաշխիքների նախատեսման, դրանց գործնական կիրառման համար անհրաժեշտ միջոցների ապահովման ուղղությամբ, ինչպես նաև քաջալերի նման միջոցների կիրառումը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածի շրջանակներում նախատեսված պատժատեսակները հետևյալն են.

1) տուգանքը.
2) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը.
3) հանրային աշխատանքները.
4) հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը.
5) զինվորական ծառայության մեջ սահմանափակումը.
6) գույքի բռնագրավումը.
7) կալանքը.
8) կարգապահական գումարտակում պահելը.
9) ազատազրկումը որոշակի ժամկետով.
10) ցմահ ազատազրկումը:

Քրեական պատիժների համակարգում առկա պատժատեսակների վերլուծության համատեքստում հարկ է ընդգծել այն, միջազգային և ոլորտային հասարակական կազմակերպությունների կողմից մշտապես բարձրացվում է գործնականում ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատիժների հաճախակի կիրառման, ինչպես նաև պատիժների համակարգը ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող նոր պատիժներով համալրելու անհրաժեշտության հարցը: Խնդրո առարկայի առումով հիմնարար համարվող՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական

կանոնների վերաբերյալ» թիվ R (92) 16 հանձնարարականի էությունից ևս բխում է, որ պետությունները պետք է խթանեն ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կիրառումը՝ հանգեցնելով վերականգնողական արդարադատության արմատավորմանը:

Ըստ այդմ՝ անհրաժեշտ է վերլուծել և գնահատել քրեական պատիժների առկա համակարգը՝ վերջինս համադրելով միջազգային լավագույն փորձի հետ:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատիժների ներդրման նպատակով քրեական պատիժների առկա համակարգի և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա ՀՀ կառավարությանը ներկայացնել համապատասխան առաջարկություն:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ քրեական օրենսգրքում ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատիժների ներդրման նպատակով քրեական պատիժների առկա համակարգի և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա ՀՀ կառավարությանը կներկայացվի համապատասխան առաջարկություն, որի հիման վրա կորոշվի քրեական պատիժների առկա համակարգում ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող նոր պատժատեսակների ներդրման հնարավորության հարցը:

**52.7 «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան (108 կոնվենցիա) փոփոխող արձանագրության (108 կոնվեցիա) ստորագրում և վավերացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Սույն միջոցառման իրականացումը բխում է 2019 թվականի փետրվարի 14-ի ԱժՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» վերտառությամբ 4-րդ բաժնի «Օրենքի առջև բոլորի հավասարությունը, արդարադատությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ 4.1-րդ գլխից, որի համաձայն՝ ՀՀ կառավարությունը, ի թիվս այլնի, միջոցներ է ձեռնարկելու անձնական տվյալների պաշտպանության ոլորտի զարգացմանը նպաստելու ուղղությամբ:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան (108 կոնվենցիա) անձնական տվյալների պաշտպանության ոլորտում գործող հիմնական միջազգային փաստաթղթերից է: Կոնվենցիան Հայաստան Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2012 թվականի սեպտեմբերի 1-ին: Այն ընդունվել է 1981 թվականին, փոփոխվել 1999 և 2001 թվականներին՝ լրացուցիչ արձանագրությամբ: Հաշվի առնելով այն, որ գիտության և տեխնոլոգիայի զարգացման պայմաններում անձնական տվյալների պաշտպանության ոլորտը նույնպես արագ է զարգանում՝ անհրաժեշտություն էր առաջացել արդիականացնել Կոնվենցիան: Կոնվենցիան փոփոխող արձանագրությունն ըստ էության արդիականացնում է Կոնվենցիան, ընդ որում՝ այնքան հիմնովին, որ արդիականացված Կոնվենցիան ստացել է ինքնուրույն անվանում՝ 108+ Կոնվենցիա: Միաժամանակ, Արձանագրությունը, ի թիվս այլնի, նախատեսում է մի շարք կարևոր փոփոխությունները անձնական տվյալների պաշտպանության ոլորտում:

Չնայած 2015 թվականանին «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում անձնական տվյալների պաշտպանությունը նոր մակարդակի է բարձրացվել, որոշակիորեն սահմանվել են տվյալների մշակման սկզբունքները, ստեղծվել է նաև անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին (Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը)՝ այդուհանդերձ, անձնական տվյալների պաշտպանության ոլորտի զարգացման միջազգային միտումներին անհաղորդ չմնալու համար կարևոր է նաև Կոնվենցիան փոփոխող արձանագրության վավերացումը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով, որ Կոնվենցիայի արդիականացված տարբերակն արտացոլում է անձնական տվյալների պաշտպանության ոլորտում եվրոպական իրավունքի զարգացման միտումները և վերաբերում է անձնական տվյալների պաշտպանության իրավունքին, որը որպես մարդու հիմնարար իրավունք՝ ներառված է ՀՀ Սահմանադրության համապատասխան գլխում՝ առաջարկվում է ստորագրել և վավերացնել Արձանագրությունը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Կոնվենցիան փոփոխող արձանագրությունն ստորագրելը և վավերացնելը Հայաստանի Հանրապետության համար կապահովի համապատասխանեցում անձնական տվյալների պաշտպանության միջազգային արդի զարգացումներին:

**52.8 Անձնական տվյալների մշակում նախատեսող նոր ընդունվող, ինչպես նաև գործող իրավական ակտերի համապատասխանեցում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ անձնական տվյալների մշակման սկզբունքներին**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Անձնական տվյալների մշակում նախատեսող ներպետական օրենսդրությունը դեռևս ամբողջությամբ համապատասխանեցված չէ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին կամ դրանք ոչ միշտ են հաշվի առնում անձնական տվյալների մշակման սկզբունքները: Այս առումով հատկանշական է, որ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» վերտառությամբ 4-րդ բաժնի «Օրենքի առջև բոլորի հավասարությունը, արդարադատությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ 4.1-րդ գլխում ևս շեշտադրված է այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը, ի թիվս այլնի, պետք է միջոցներ ձեռնարկի անձնական տվյալների պաշտպանության ոլորտի զարգացմանը նպաստելու ուղղությամբ: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է անձնական տվյալների մշակում նախատեսող ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել անձնական տվյալների մշակման սկզբունքներին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կիրարկման պրակտիկան (այդ թվում՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության որոշումները, վերլուծությունները և այլն) վկայում է, որ անձնական տվյալների մշակմանը վերաբերող ներպետական օրենսդրությունը որոշակիորեն համահունչ չէ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին և բավարար չափով միասնական չէ, ինչն էլ հանգեցնում է նրան, որ տարբեր դեպքերում Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը անձնական տվյալների այս կամ այն մշակումը խնդրահարույց է համարում անձնական տվյալների մշակման սկզբունքների տեսանկյունից: Օրինակ, մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը («Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը) ընդունված և անձնական տվյալների մշակում նախատեսող տարբեր իրավական ակտեր կամ առհասարակ անձնական տվյալների մշակման որևէ առանձնահատկություն հաշվի չեն առնում, կամ հիմնված են «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրած է ճանաչվել) վրա, որը բավարար չափով չէր արտացոլում անձնական տվյալների պաշտպանության սկզբունքները:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմքում ունենալով անձնական տվյալների պաշտպանության իրավունքի պատշաճ կիրառումը՝ առաջարկվում է մինչև 2020 թվականի ավարտը և այդուհետ՝ պարբերաբար վերանայել ներպետական օրենսդրությունը՝ անձնական տվյալների մշակում նախատեսող օրենսդրական դաշտը միասնականացնելու և անձնական տվյալների մշակում նախատեսող իրավական ակտերն անձնական տվյալների մշակման սկզբունքներին համապատասխանեցնելու համար:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Սույն միջոցառման կատարման արդյունքում անձնական տվյալների մշակում նախատեսող իրավական ակտերը կհամապատասխանեցվեն անձնական տվյալների մշակման սկզբունքներին, ինչպես նաև կձևավորվի անձնական տվյալների մշակման միատեսակ կանոններ սահմանող ներպետական օրենսդրական դաշտ՝ ապահովելով անձանց անձնական տվյալների պաշտպանության բավարար մակարդակ, իրավական որոշակիություն և բացառելով անձնական տվյալների մշակում նախատեսող տարբեր իրավական ակտերի միջև հակասությունները և թյուրըմբռնումները:

53

**53.1-53.8 ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (E-JUSTICE.AM) ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄ**

**1. Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**

Արդարադատության ոլորտի մարմինները բախվում են մի շարք խնդիրների որոնց արդյունավետ լուծումը կապված է էլեկտրոնային համակարգերի ստեղծման հետ: Տարիներ շարունակ տարբեր մարմինների կողմից ստեղծվել և գործում են էլեկտրոնային համակարգեր և տվյալների շտեմարաններ, որոնց փոխգործելիությունը ապահովված չէ կամ մասամբ է ապահովված: Միջոցառման իրականացման նպատակը միասնական էլեկտրոնային համակարգի ստեղծումն է, որի միջոցով կլուծվեն ոլորտային բոլոր խնդիրները:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

- թղթային եղանակով փաստաթղթաշրջանառության մեծ ծավալ,
- առկա էլեկտրոնային համակարգերի ոչ ամբողջական թվային աշխատանք,
- տեխնիկական, կադրային և ֆինանսական ռեսուրսների վատնում,
- տվյալների կորստի հնարավորություն և գաղտնիության ապահովման ոչ բավարար մակարդակ,
- բարդացված վարչարարություն,
- գործող համակարգերի վարման միասնական քաղաքականության բացակայություն:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է ստեղծել կենտրոնացված էլեկտրոնային կառավարման համակարգ արդարադատության ոլորտի խնդիրների համապարփակ լուծման համար: Համակարգը ուղղված կլինի արդարադատության ոլորտի բոլոր մարմինների աշխատանքը կարգավորելուն, այն հասանելի կլինի նաև քաղաքացիների համար, այսպիսով ապահովելով պետություն քաղաքացի մատչելի կապը:

**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**

- Ամբողջովին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն
- Ոլորտի մոնիտորինգի և գնահատման հիման վրա տվյալների ճշգրիտ վերլուծություն
- Ոլորտային լայն համագործակցություն, գործերի ժամանակին և կազմակերպված փոխանցում
- Մարդկային և այլ ռեսուրսների կառավարման արդյունավետություն
- Ոլորտի արդիականացում
- Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում
- Ծառայությունների մատուցման որակի բարձրացում
- Թվային արխիվների ստեղծումը

54

**54.1 ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ**

**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Խոշտանգում կատարած անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելու, այդ անձանց նկատմամբ համաներում, ինչպես նաև այդ արարքի անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելու արգելք նախատեսող օրենսդրական հիմքերի ամրապնդման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից՝ նպատակ հետապնդելով երաշխավորել վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված կարգավորումների ամբողջական իմպլեմենտացիան ազգային մակարդակում:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքն ամրագրված է մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքին առնչվող մի շարք միջազգային պայմանագրերում (որոնց կողմ է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետությունը) և ընկալվում է որպես ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունք՝ *jus cogens* նորմ, ինչը նշանակում է, որ այն պարտադիր է բոլոր պետությունների համար, եթե նույնիսկ այդ պետությունները չեն վավերացրել որևէ կոնկրետ պայմանագիր: Միջազգային կամ ներպետական որևէ այլ կանոն չի կարող հակասել *jus cogens* սկզբունքին:

Միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում, դրանց կատարումը երաշխավորող մարմինների ձևավորած իրավական դիրքորոշումներում առանձնակի ուշադրություն է հատկացվում **պաշտոնատար անձանց** կողմից խոշտանգումների և դաժան վերաբերմունքի խնդրին՝ հատուկ շեշտադրմամբ առ այն, որ ոչ ոք չի կարող միայն իր պաշտոնական դիրքով պայմանավորված հավակնել պատասխանատվությունից ազատվելու արտոնությանը: Վերոնշյալ արարքներ կատարած պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելն, այդ անձանց նկատմամբ համաներում, ինչպես նաև այդ արարքի անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելն ուղղակիորեն հանգեցնում է պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների խախտմանը:

Համապատասխան նախադեպային իրավունքի ուսումնասիրությունն ու վերլուծությունը նույնպես վկայում է այն մասին, որ նշված հարցի վերաբերյալ հստակ դիրքորոշում ունի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան):

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում **կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:**

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությամբ ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարվելու օրվանից անցել են սույն հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետները: ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով նախատեսված վաղեմության առավելագույն ժամկետը 15 տարի է:

ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի համաձայն՝ անձն ազատվում է պատժից մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով: Սույն հոդվածով նախատեսված վաղեմության առավելագույն ժամկետը կրկին 15 տարի է:

Քրեադատավարական օրենքը (35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ) վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

Գործող օրենսդրությամբ խոշտանգման հանցակազմի նկատմամբ վաղեմության ժամկետները կիրառելի են:

Անդրադառնալով համաներման և խոշտանգման անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցների խնդրին՝ անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ Ազգային ժողովը 2018 թվականի մարտի 7-ին ընդունեց «Ներման մասին» ՀՀ օրենքը, որի 7-րդ հոդվածի 4-րդ մասով հստակ ամրագրվեց, որ ներում չի շնորհվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված անձին: Համաներման մասով ՀՀ գործող օրենսդրությամբ նման բացառություն սահմանված չէ:

Ի վերջո, հաշվի առնելով միջազգային և տարածաշրջանային մարմինների հանձնարարականները, ինչպես նաև այդ մարմինների կողմից ընդհանուր փաստաթղթերում որդեգրված մոտեցումները՝ անհրաժեշտ է նաև ներպետական օրենսդրության և պրակտիկայի համապարփակ վերլուծության արդյունքում վեր հանել այն բոլոր կարգավորումները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել խոշտանգման անպատժելիությանը:

Ամփոփելով վերը թվարկված դիտարկումները՝ կարելի է եզրակացնել, որ խոշտանգում կատարած պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելը, այդ անձանց նկատմամբ համաներում, ինչպես նաև այդ արարքի անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելը հանգեցնում է պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների խախտմանը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Մշակել օրենսդրական փոփոխության փաթեթ՝ ամրապնդելով խոշտանգում կատարած անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելու, այդ անձանց նկատմամբ համաներում, ինչպես նաև այդ արարքի անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելու արգելք նախատեսող օրենսդրական հիմքերը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների պայմաններում կապահովվի լիարժեք համապատասխանություն ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների և ներպետական օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումների միջև: Միաժամանակ, կբարձրանա խոշտանգման դեպքերի քննության և անպատժելիության դեմ պայքարի արդյունավետությունը, իրավական բնույթի որակական նոր հիմքերի վրա կդրվի պաշտոնատար անձանց կողմից բռնությունների գործադրման դեմ պետության կողմից տարվող քրեական քաղաքականությունը:

**55** **55.1 ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱՁԱՅՆԱԳՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՆՈՒՄ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հարցաքննությունների տեսաձայնագրման ինստիտուտի ներդնմանն ուղղված օրենսդրական նախագծի մշակումը պայմանավորված է միջազգային չափանիշներին և արտասահմանյան առաջադեմ փորձին համահունչ անձի իրավունքների՝ մասնավորապես, անձի արդար դատաքննության իրավունքի, դրա անքակտելի մաս կազմող պաշտպանության իրավունքի ապահովման, ինքնամերկացման պարտականությունից ազատ լինելու, ինչպես նաև խոշտանգման կանխարգելման, այդ դեպքերի քննության և անպատժելիության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու, միջազգային և տարածաշրջանային մարմինների զեկույցներում ամփոփված հանձնարարականների կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկավիճակը և առկախնդիրները**

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ընթացող դատաիրավական բարեփոխումների շրջանակներում կարևորվում է միջազգային չափանիշներին և արտասահմանյան առաջադեմ փորձին համահունչ անձի իրավունքների հուսալի պաշտպանության ապահովումը: Հարցն առավել արդիական է դառնում, երբ խոսքը վերաբերում է քրեական վարույթի ընթացքում անձի իրավունքների և օրինական շահերի ապահովմանը:

Անդրադառնալով գոյություն ունեցող կարգավորումներին՝ հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության գործող քրեական դատավարության օրենսգիրքը քննչական գործողությունների, մասնավորապես, հարցաքննությունների տեսաձայնագրման կարգ չի սահմանում: Փոխարենը, քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումները նախատեսում են քննչական գործողություններից հարցաքննության գրավոր արձանագրման կարգը:

Հատկանշական է, որ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը ևս հարցաքննությունների տեսաձայնագրման պարտադիր կարգ չի սահմանում: Միայն թե, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի, Նախագիծը քննչական գործողությունների կատարման արդյունավետությունն ապահովելու նպատակի համար սահմանում է, որ այն քննչական գործողությունները, որոնց կատարմանը ընթերակայի

մասնակցությունն անհնար է, ենթակա են պարտադիր տեսաձայնագրման: Սակայն, այս նորմը տարածելի չէ հարցաքննությունների նկատմամբ, քանի որ հարցաքննությունների իրականացման ժամանակ ընթերակաների մասնակցությունը պարտադիր չէ: Ստացվում է, որ Նախագիծը որպես լուծում ևս պահպանել է հարցաքննությունների ավանդական՝ գրավոր արձանագրման ձևը:

Ինչ վերաբերում է հարցաքննությունների տեսաձայնագրման միջազգային փորձի և միջազգային չափանիշների վերլուծության ամփոփմանը, ապա այն վկայում է այս ինստիտուտի նպատակահարմարության և արդյունավետության մասին:

Մասնավորապես, այս ինստիտուտն արդեն իսկ ներդրված է արտասահմանյան ոչ միայն զարգացած, այլև զարգացող իրավական համակարգ ունեցող երկրներում, այդ թվում՝ Բուլղարիա, Ռումինիա, Բելառուս, Ուկրաինա:

Խնդրի առնչությամբ միջազգային տարաբնույթ չափանիշների ուսումնասիրությունը ևս վկայում է, որ թե՛ համընդհանուր, թե՛ տարածաշրջանային միջազգային իրավական փաստաթղթերում խոսվում է հարցաքննությունների տեսաձայնագրման մասին և ընդգծվում դրանց կարևորությունը ոչ միայն քրեական արդարադատության շրջանակներում, այլև որպես խոշտանգումների դեմ պայքարի գործուն միջոց:

Այսպես, 2010 թվականի **Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտների՝ խոշտանգումների կանխարգելմանն ուղղված գործառնական ուղեցույցում** նշվում է, որ հարցաքննությունների տեսաձայնագրումը հարցաքննության ընթացքը դարձնում է առավել թափանցիկ, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնի համար ունի էական նշանակություն: Ուղեցույցում մեկնաբանվում է, որ հարցաքննությունների տեսաձայնագրումն առավել նախընտրելի տարբերակ է, քան գրավոր արձանագրումը, քանի որ այն իրականում արտացոլում է առավել ամբողջական և ճշգրիտ պատկեր: Ամեն դեպքում վարույթն իրականացնող մարմինը ինչ մեթոդ էլ ընտրի հարցաքննության արդյունքների ամրագրման համար (տեսաձայնագրում, թե գրավոր արձանագրում) պետք է լինի հարցաքննվող անձի համաձայնությունը:

**ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման հարցերով հատուկ զեկուցողի ընդհանուր հանձնարարականներում** նշվում է, որ բոլոր հարցաքննությունները պետք է արձանագրվեն, ընդ որում, նախընտրելի է հարցաքննությունների արձանագրումը տեսանկարահանման եղանակով:

«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների կատարման մասին Հայաստանի Հանրապետության 4-րդ պարբերական զեկույցի պաշտպանությունից հետո, **ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն**, վերահաստատելով իր նախորդ առաջարկությունները, ընդգծել է, որ կողմ պետությունը պետք է ձեռնարկի օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցառումներ, ինչպես նաև համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնի քրեական գործերով բոլոր հարցաքննությունների պարտադիր տեսաձայնագրումն ապահովելու նպատակով, և ոստիկանության բաժիններում ու ազատազրկման այլ վայրերում հարցաքննության բոլոր սենյակները հագեցնի տեսաձայնագրող սարքերով: Նաև պետք է ապահովվի տեսաձայնագրության պահպանությունն այնքան ժամանակ, որպեսզի հնարավոր լինի օգտագործել այն որպես ապացույց, այդ թվում՝ դատարանում, որպեսզի տեսաժապավենները վերանայվեն՝ խոշտանգումների և դրա արգելքի չափանիշների այլ խախտումներ արձանագրելու և բացահայտելու համար, և որպեսզի տեսաերիզները հասանելի դարձվեն պաշտպանյալներին և նրանց պաշտպաններին:

ԵԱՀԿ անդամ-պետությունների շրջանակներում 2014 թվականի ապրիլի Խոշտանգումների կանխարգելմանն ուղղված ժողովի վերջնական զեկույցում արված առաջարկություններից մեկը հետևյալն է.

«ԵԱՀԿ անդամ-պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն հարցաքննությունների և այլ դատավարական գործողությունների կատարման աուդիո և վիդեո ձայնագրում ներդնելու ուղղությամբ այն վայրերում, որտեղ առկա է խոշտանգման և վատ վերաբերմունքի բարձր ռիսկ:»:

**Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն**, անդրադառնալով հարցաքննությունների տեսաձայնագրման անհրաժեշտությանը, այն դիտարկում է որպես խոշտանգումների կանխարգելման գործուն կառուցակարգ: Մասնավորապես, **ԽԿԿ-ի չափանիշներով** նշվում է, որ ոստիկանության կողմից կատարված հարցաքննությունների էլեկտրոնային (այսինքն՝ աուդիո և (կամ) վիդեո) ձայնագրությունները ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեմ լրացուցիչ երաշխիք են: Նման տեխնիկական միջոցները կարող են ապահովել հարցաքննության ընթացքի լիարժեք և արժանահավատ ձայնագրությունը՝ դրանով իսկ նշանակալիորեն հեշտացնելով դաժան վերաբերմունքի դեմ բողոքների քննությունը: ԽԿԿ-ն խրախուսում է հարցաքննությունների տեսաձայնագրման հնարավորության նախատեսումը, ինչն իր հերթին գործուն երաշխիք կծառայի մի կողմից կալանավորված անձանց համար խոշտանգման ենթարկվելուց կամ դրա սպառնալիքից, մյուս կողմից հարցաքննություն իրականացնող պաշտոնատար անձանց համար ֆիզիկական կամ հոգեկան բռնության վերաբերյալ անհիմն հայտարարություններից պաշտպանվելու համար: Ավելին, դատական քննության փուլում ապացույցը գնահատելիս այդպիսի տեղեկատվական կրիչը կարող է նվազագույնի հասցնել հավանականությունն առ այն, որ հարցաքննվողները հետագայում կհերքեն իրենց կողմից տված խոստովանությունը:

**Այս հարցի կապակցությամբ ԽԿԿ-ն դիրքորոշում է արտահայտել նաև Հայաստանի վերաբերյալ 2010 թվականի իր զեկույցում**, որում նշել է ոստիկանության աշխատակիցների համար հարցաքննությունների իրականացման չափանիշների և ընթացակարգերի ներդնման անհրաժեշտության մասին, մասնավորապես՝ ոստիկանության կողմից կատարվող հարցաքննությունների ճշգրիտ արձանագրման մասին, որը, հնարավորության դեպքում, պետք է իրականացվի էլեկտրոնային (տեսա կամ ձայնային արձանագրում) սարքավորումների միջոցով:

Հարցաքննությունների տեսաձայնագրման նախընտրելիության մասին դրույթներ են առկա նաև **Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուժնիեկսի՝ 2014 թվականի հոկտեմբերին Հայաստան կատարած այցի վերաբերյալ 2015 թվականի մարտի 10-ին հրապարակած զեկույցում:** Հանձնակատարը զեկույցում բարձրացված մի շարք խնդիրների շարքում խրախուսում է հայկական իշխանություններին խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնող միջոցառումների շարքում ներդնել նաև ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 303-Ն որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրով նախատեսված հարցաքննությունների տեսաձայնագրման համակարգը:

Հարցաքննությունների տեսաձայնագրման կառուցակարգերի ներդնման հիմնախնդրի շրջանակներում կարևոր նշանակություն ունի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, ինչը, թերևս, հիմք է տալիս եզրակացնելու, որ թեև հարցաքննությունների տեսաձայնագրումը Եվրոպական դատարանի կողմից չի դիտվում իբրև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ և 6-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների պաշտպանության անհրաժեշտ և պարտադիր պայման, այդուհանդերձ Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում անդրադարձել է այդպիսի կառուցակարգի սահմանման կանխարգելիչ նշանակությանը:

Հաշվի առնելով Եվրոպական դատարանի իրավական մոտեցումներն ու մեկնաբանություններն անձի արդար դատաքննության իրավունքի, դրա անքակտելի մաս կազմող պաշտպանության իրավունքի և ինքնամերկացման պարտականությունից ազատ լինելու, ինչպես նաև խոշտանգման չենթարկվելու արգելքի երաշխավորման հարցում՝ կարելի է թերևս եզրակացնել, որ պետությունների կողմից հարցաքննությունների տեսաձայնագրման համակարգի ներդնումն անուղղակիորեն կարող է հանդես գալ իբրև պետության պոզիտիվ պարտականությունների պատշաճ կատարում:

**1.2 Առկախնդիրների առաջարկվող լուծումները**

Ներդնել հարցաքննությունների տեսաձայնագրման համակարգ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների պայմաններում կապահովվի միջազգային և տարածաշրջանային մարմինների զեկույցներում ամփոփված հանձնարարականների կատարումը, ինչպես նաև անուղղակիորեն կբարձրանա անձի արդար դատաքննության իրավունքի, դրա անքակտելի մաս կազմող պաշտպանության իրավունքի ապահովման, ինքնամերկացման պարտականությունից ազատ լինելու, ինչպես նաև խոշտանգման կանխարգելման, այդ դեպքերի քննության և անպատժելիության դեմ պայքարի արդյունավետությունը:

56

**56.1 ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության պահանջներից, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից՝ այդ թվում Եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացրած մի շարք վճիռների կատարման համատեքստում քրեադատավարական օրենսդրության բարեփոխման առանցքայնությունից:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ է դրվել 2003 թվականի օգոստոսի 1-ից: Սույն օրենսգրքի նորմերի գիտական վերլուծության ու կիրառման պրակտիկայի արդյունքում բացահայտվեց, որ օրենսգրքում առկա են բազմաթիվ թերություններ, իսկ օրենսգրքով առաջարկվող կարգավորումներն անհրաժեշտ է համապատասխանեցնել քրեական իրավունքի տեսության ու օրենսդրության ժամանակակից միտումներին համահունչ հայեցակարգային նոր կառուցակարգերին ու ինստիտուտներին:

Գործող Քրեական դատավարության օրենսգրքի կիրառման տարիների ընթացքում երկրի հասարակական և քաղաքական կյանքում տեղի ունեցան մի շարք իրադարձություններ, որոնք անխուսափելի փոփոխություններ էին ենթադրում քրեական գործերի քննության և լուծման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող հիմնական իրավական ակտում:

Մասնավորապես, 2002 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիան, ինչի հետևանքով երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ ձևափոխություններ պետք է կատարվեն ներպետական համապատասխան ոլորտներում, այդ թվում՝ քրեական արդարադատության բնագավառում:

Երկրի հիմնական օրենքում կատարվեցին հիմնարար փոփոխություններ, որոնք էապես շոշափեցին

քրեական արդարադատության ոլորտը՝ անխուսափելի դարձնելով քրեական արդարադատության բնագավառում համապատասխան փոփոխություններն ու լրացումները:

Քրեադատավարական իրավահարաբերությունների կարգավորման գործընթացի վրա նշանակալի ազդեցություն ունեցավ նաև դատական պրակտիկան: Մասնավորապես, Քրեական դատավարության գործող օրենսգրքի գործածության ընթացքում բացահայտված մի շարք թերություններ ու բացթողումներ իրենց գնահատականը ստացան ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում:

Ուստի, ներկայումս առկա են բոլոր այն օբյեկտիվ նախադրյալները (իրավական, տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլն), որոնց ամբողջությունը թույլ է տալիս խոսել ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերիի անհրաժեշտության մասին:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նոր քրեական օրենսգիրքը նպատակ է հետապնդում լուծել հետևյալ խնդիրները՝

- ապահովել անձի, հասարակության և պետության անվտանգությունը հանցավոր ոտնձգություններից.
- հնարավորինս նվազեցնել հանցավորությամբ պայմանավորված սոցիալական լարվածությունը.
- ապահովել քրեական օրենսդրության համապատասխանությունը հանցավորության զարգացման ժամանակակից միտումներին և կրիմինալ սպառնալիքներին.
- ամրագրել հանցավոր արարքները ոչ հանցավորներից սահմանազատելու հստակ հատկանիշներ, որոնք կբացառեն օրենքի տարածական մեկնաբանությունը.
- երաշխավորել հանցագործության զոհի (տուժողի) իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, առավելագույն պայմաններ ստեղծել հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքն իրականացնելու համար.
- կատարելագործել քրեաիրավական ներգործության միջոցների համակարգը՝ հարկադրանքի, կանխման և վերականգնողական գործառույթների հավասարակշռությունն ապահովելու նպատակով.
- ապահովել քրեական օրենսդրության համապատասխանությունը վավերացված միջազգային պայմանագրերի նորմերին, միջազգային իրավունքի սկզբունքներին, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությանը:

Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով առաջարկվում են ՀՀ քրեադատավարական օրենսդրության զարգացման հետևյալ հիմնական ուղղությունները՝

- քրեական գործերի քննության ընթացքում (հատկապես մինչդատական վարույթում) անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների ամրապնդում, մասնավորապես, պաշտպանության կողմի իրավունքների ընդլայնում և դատական վերահսկողության ինստիտուտի ուժեղացում ու հստակեցում.
- դատավարական հարկադրանքի միջոցների, մասնավորապես, ձերբակալման և կալանավորման կիրառման հիմքերի, պայմանների և ընթացակարգերի վերանայում՝ ուղղված դրանց օրինականության նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև կալանավորման այլընտրանքային խափանման միջոցների կիրառելիության ընդարձակում.
- քրեական հետապնդման ինստիտուտի հիմնարար կարգավորում, դրա դերի և նշանակության, ինչպես նաև իրականացման ձևերի (եղանակների) հստակեցում.
- տուժողի իրավական վիճակի վերանայում՝ ուղղված սեփական շահերն արդյունավետ պաշտպանելու նրա հնարավորության մեծացմանը.
- արդարացվածին և դատական սխալներից տուժածներին փոխհատուցում տրամադրելու արդյունավետ մեխանիզմների նախատեսում և ընթացակարգի կատարելագործում.
- մինչդատական վարույթի ձևերի (հետաքննություն և նախաքննություն) տարբերակման արդյունավետ մեխանիզմի մշակում, մինչդատական վարույթին 8 մասնակցող պաշտոնատար անձանց (դատախազ, քննիչ, քննչական ստորաբաժանման ղեկավար, հետաքննիչ) գործառույթների հստակեցում, տարանջատում և ներդաշնակում, գործառույթ-ինստիտուտ-լիազորություն շղթայի օրգանական ամբողջականության և լիարժեքության ապահովում.
- տարբերակված վարույթների շրջանակի ընդլայնում և կատարելագործում, դրանց նկատմամբ հավասարակշռված մոտեցման մշակում՝ ուղղված մի կողմից ռեսուրսների և ժամանակի խնայողությանը, իսկ մյուս կողմից՝ արդարադատության շահերի ներդաշնակ ապահովմանը.
- միջանկյալ դատական վարույթի (նախնական դատական լսումների) ինստիտուտի հիմնադրում՝ մինչդատական վարույթի արդյունքների ամփոփումն ավելի ռացիոնալ դարձնելու և ապագա դատական քննությունն առավել արդյունավետ անցկացնելու համար.
- քրեական գործերի քննության ծանրության տեղափոխում մինչդատական վարույթից դատարան,

| | |
|---|---|
| | նախաքննության ծավալների ու ազդեցության նվազեցում, դատարանում մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքի առավել բարձր երաշխավորվածություն, ապացույցների թույլատրելիության և հավաստիության երաշխիքների ընդարձակում.<br>- դատական ակտերի վերանայման համակարգի և դրա տարրերի (վերաքննություն, վճռաբեկություն, նոր ի հայտ եկած և նոր հանգամանքներով, ինչպես նաև հիմնարար խախտումների հիմքով վերանայում) իրավական կարգավորման կատարելագործում՝ ուղղված վերանայման մեխանիզմներից յուրաքանչյուրի գործառնական նշանակության ապահովմանը և ողջ համակարգի արդյունավետության բարձրացմանը.<br>- ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ միջազգային-իրավական համագործակցությանն առնչվող քրեադատավարական ինստիտուտների (հանձնում, օտարերկրյա պետությունների և միջազգային դատարանների դատավճիռների ճանաչում, քրեական վարույթի փոխանցում և այլն) և դրանց իրացումն ապահովող ընթացակարգերի կատարելագործում:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախագծերով առաջակվող հիմնարար և սկզբունքային նորամուծությունների շնորհիվ կկատարելագործվի քրեական և քրեադատավարական գործող համակարգը և կբարձրանա քրեական արդարադատության արդյունավետությունը: |
| 57 | 57.1 ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է որոշ տարածքներում դատարանի շենքի բացակայության, շենքերի նվազագույն պայմանների ապահովման անհրաժեշտությունից:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վերջին 30 տարում 12 դատարաններում որևէ հիմնանորոգում չի իրականացվել, վերակառուցումներ են կատարվել շուրջ 20 շինություններում, սակայն նոր խնդիրներ են առաջացել:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Դատարանների կամ դրանց նստավայրերի վարչական շենքերի թվի ավելացում, վարչական շենքերի վերակառուցում և վերանորոգում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կապահովվի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրականացումը: |
| 58 | 58.1 ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների ծանր վիճակով պայմանավորված անհրաժեշտ է դադարեցնել ՀՀ ԱՆ Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկի հետագա շահագործումը, որի արյունքում հարկավոր է կառուցել նոր քրեակատարողական հիմնարկ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ ԱՆ Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկի շենքային անբարենպաստ պայմաններին անդրադարձ է կատարել Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Քրեակատարողական հիմնարկի և դատապարտյալների հիվանդանոցի կառուցում, քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավում՝ վերակառուցումներ և կապիտալ վերանորոգում<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Օրենքի առջև բոլորի հավասարության, արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության ապահովում, ազատությունից զրկված անձանց հիմնական իրավունքների երաշխավորում: |
| 59 | 59.1 ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄՇԱԿՈՒՄ<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք ծանրակշիռ փաստարկներով: Ներկա տեսքով ոլորտին առնչվող հասարակական հարաբերությունների կարգավորմանը նվիրված օրենսդրական ակտերը չեն բավարարում միասեռ հարաբերությունների կարգավորման միասնականության նվազագույն պահանջներին և որևէ հիմքով համակարգված չեն: Հայեցակարգային մոտեցումների բացակայության պայմաններում ստեղծվել է մի վիճակ, երբ ոչ միայն օրենսգրքում, այլև դրանում կատարված փոփոխություններում անհարկի մեծ քանակ են կազմում միջազգային իրավական չափանիշներին, այդ թվում՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի դրույթներին հակասող նորմերը՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ: |

| | |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքն ընդունվել է դեռևս 1985թ. դեկտեմբերի 6-ին և, թերևս, ամենաշատն է ենթարկվել փոփոխությունների ու լրացումների: Այն եզակի հիմնարար օրենսդրական ակտերից է, որը երբևէ համակարգված քննարկման առարկա չի դարձել և ընդգրկված չի եղել իրավական բարեփոխումների ծրագրերում, այսինքն՝ ըստ էության, բացակայում էր այդ ոլորտի օրենսդրական կարգավորման որևէ ամփոփ հայեցակարգ, որը կկանխորոշեր հետագա օրենսդրական զարգացումները: Արդյունքում՝ ոլորտը կանոնակարգող օրենսդրական ակտերում պարբերաբար անխուսափելիորեն կատարվել են տարաբնույթ, երբեմն էլ անհարկի իրարամերժ ու հակասական փոփոխություններ, լրացումներ, ինչպես նաև ընդունվել են նոր օրենսդրական ակտեր, որոնք հիմնականում առաջադրել են իրավիճակային լուծումներ, հղնթացս էլ ավելի խրթին դարձնելով իրավակիրառ պրակտիկան:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է մշակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգիրք, որով կկարգավորվեն վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի առանձնահատկությունները, կսահմանվեն միասնական կանոններ և պայմաններ, կապահովվի վարչական զանցանքների հիմնավորված դասակարգումը և դրանց համար նախատեսված սանկցիաների ներդաշնակությունը, կկատարելագործվի վարչական հարկադրանքի օժանդակ միջոցները՝ համապատասխանեցնելով դրանք իրավական պետության պահանջներին և մի շարք այլ հարցեր:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը իրենից ներկայացնում է այդ ոլորտի բոլոր իրավահարաբերությունների կանոնակարգմանը նվիրված մեկ ամբողջական կոդիֆիկացված իրավական փաստաթուղթ: |
| **60** | **60.1 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Քաղաքացիական դատավարության օրենսդրության անընդհատ կատարելագործումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2018թ. փետրվարի 9-ին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունումից հետո դրա կիրառման կապացությամբ պրակտիկայում առաջացել են գործնական խնդիրներ, որոնք ունեն վերհանման, ուսումնասիրության և դրանց համարժեք լուծումներ տալու կարիք:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է լրացումներ և փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Քաղաքացիական դատավարության իրավակիրառ պրակտիկայում ծագած խնդիրների գույքագրման արդյունքներով արձանագրված խնդիրների լուծում: |
| **61** | **61.1-61.2 ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Առաջարկվող միջոցառման անհրաժեշտությունը բխում է դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման և գործերի քննության ժամկետների կրճատման անհրաժեշտությունից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Դատարանների կողմից քննվող գործերի շրջանակում մեծ թիվ են կազմում ֆինանսական կազմակերպությունների մասնակցությամբ վեճերը, որոնք ազդում են դատարանների ծանրաբեռնվածության և գործերի քննության ժամկետների վրա, ընդ որում ՀՀ իրավական համակարգում ֆինանսական կազմակերպությունների մասնակցությամբ վեճերի լուծման այլընտրանքային եղանակների արդյունավետ մեխանիզմներ չեն գործում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերոնշյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է մշակել «Ֆինանսական համակարգում արբիտրաժային հաստատության մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծեր:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման արդյունքում ակնկալվում է ֆինանսական կազմակերպությունների մասնակցությամբ դատական գործերի քննության ժամկետների և ծախսերի կրճատում, դատարանների ծանրաբեռնվածության թեթևացում: |
| **62** | **62.1-62.2 ՍՏԵՂԾԵԼ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ունենալ արդարադատության իրականացմանն աջակցող մարմինների իրավական փաստաթղթերի միասնական |

| | |
|---|---|
| | արխիվացման կարգ և արխիվ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս նոտարիատի, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, դատական ակտերի հարկադիր կատարման, քրեակատարողական և իրավաբանական անձանց գրանցման ռեգիստրի ոլորտներում, ինչպես նաև դատարանների իրավական փաստաթղթերի համար չկա արխիվացման միասնական կարգ և միասնական արխիվ: Արդյունքում կարևոր իրավական փաստաթղթեր կամ չեն պահպանվում, կամ պահպանվում են ոչ ճիշտ պայմաններում և կարճ ժամկետով: Բացի այդ դրանց որոնումն ու հայտնաբերումը բավականին դժվար է:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է սահմանել միասնական արխիվացման կարգ, ունենալ արխիվի պահպանման շենք՝ արխիվացման համար անհրաժեշտ պայմաններով:<br>**Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կունենանք արդարադատությանն աջակցող մարմինների իրավական փաստաթղթերի միասնակն արխիվ: |
| **63** | **63.1-63.2 ՍՏԵՂԾԵԼ ՄԵԿ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ, ՈՐՏԵՂ ԴԻՄՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԵՂԾՎԻ «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆԻ» ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՍՏԱՆԱԼ ՔԿԱԳ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԱՅԼ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ստեղծել մեկ տարածքում տեղակայված քաղաքացիների սպասարկման կենտրոն, որտեղ դիմողների համար հնարավորություն կստեղծվի «մեկ պատուհանի» սկզբունքով դիմել և ստանալ ՔԿԱԳ , իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և ծառայություններ մատուցող պետական այլ հիմնարկների կողմից մատուցվող ծառայություններ<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ արդարադատության նախարարությունը ապահովում է քաղաքացիների սպասարկումը՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող իրավաբանական անձանց՝ (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների), իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների, անհատ ձեռնարկատերերի, հասարակական միավորումների և օրենքով նախատեսված այլ կազմակերպությունների պետական գրանցման ու հաշվառման ոլորտներում:<br>Ընդ որում ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, օբյեկտիվ պատճառներից ելնելով, տեղակայված է միայն ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության քաղաքացիների սպասարկում իրականացնող երկու ստորաբաժանումներ՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման աշխատանքների և մեթոդոլոգիայի բաժինը, որի մասնագետները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք են տալիս ՔԿԱԳ տարածքային մարմիններից կողմից կազմված քաղաքացիական կացության ակտային գրանցումներում փոփոխություններ, լրացումներ և ուղղումներ կատարելու, դրանք վերականգնելու և անվան փոխման գործերը, ինչպես նաև տրամադրում են ընտանեկան կարգավիճակի տեղեկանքները և ուսումնասիրում է օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և ՀՀ տարածքից մշտապես դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների՝ ՀՀ տարածքում ամուսնության պետական գրանցման դիմումները: Եվ երկրորդ ստորաբաժանումը, որը ապահովում է ՀՀ պաշտոնական փաստաթղթերը ապոստիլով վավերացման գործընթացը: Ընդ որում, այս գործառույթների մեծ մասը իրականացվում է աշխատասենյակներում (նվազագույնը 3 աշխատակից)՝ հաշվի առնելով ՀՀ արդարադատության նախարարության ընդունարանի տարածքում բոլոր մասնագետների տեղավորման անհնարինությունը:<br>Գործակալությունը ունի ևս երեք ստորաբաժանումներ, որոնք տեղակայված են այլ տարածքներում և իրականացնում են քաղաքացիների սպասարկում՝ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում: Դրանք են՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման հանրապետական արխիվ բաժինը (հասցե՝ Դավթաշեն 2 թաղ. 16/3 (Դավթաշեն վարչ. շրջան)), Երևանի հատուկ սպասարկում բաժինը (հասցե՝ Երևան, Էրեբունու 2/2 (Էրեբունի վարչ. շրջան)), Ամուսնության պալատ բաժին (Երևան, Զաքյան փող.3 (Կենտրոն վարչ. շրջան)):<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հիմք ընդունելով այն փաստը, որ դեռևս 2014 թվականից ՀՀ արդարադատության նախարարությունում գործում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման կառավարման միասնական էլեկտրոնային համակարգ, որը հասանելի է ինչպես Գործակալության բոլոր ստորաբաժանումներին, այնպես էլ ՔԿԱԳ տարածքային մարմիններին և գրեթե ամբողջ փաստաթղթաշրջանառությունը իրականցվում է այդ համակարգի շրջանակներում, առաջարկում ենք ստեղծել մեկ տարածքում տեղակայված քաղաքացիների սպասարկման կենտրոն, որտեղ դիմողների համար հնարավություն կստեղծվի նույն տարածքում դիմել և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ հայցվող գործառույթի կատարումը:<br>1.3. **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** |

Արդյունքում ստեղծելով միասնական տարածքում քաղաքացիների ընդունելության սպասասրահ՝ յուրաքանչյուր գործառույթի համար առանձին պատուհաններով, հնարավորություն կընձեռվի փաստաթղթերի ընդունումը կազմակերպել front offi ce-ում, ընդ որում հերթի էլեկտրոնային համակարգով և համապատասխան խորհրդատուներով, իսկ փաստաթղթերի ուսումնասիրությունը և գործառույթների կատարումը կազմակերպել նույն տարածքում կամ կենտրոնական գրասենյակներում տեղակայված back offi ce-ում, որը նաև իրականացնելու է տարածքից դուրս գտնվող սպասարկման կենտրոնների կողմից ստացված կամ էլեկտրոնային դիմումների քննարկումը և գործարքների հաստատումը:

**Արտակարգ իրավիճակների նախարարություն**

64

**64.1 Տավուշի և Վայոց ձորի մարզերի սահմանամերձ բնակավայրերում 4-ական քաղաքացիական պաշտպանության հենակետերի ստեղծում**

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման հիմք է հանդիսանում «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի ը) և 5-րդ հոդվածի 3) ենթակետերը և «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4) ենթակետը: Նախատեսվում է 2021-2023 թվականների ընթացքում Տավուշի մարզի քաղաքացիական պաշտպանության 10 հենակետերի կարողությունների զարգացում, ինչպես նաև Տավուշի մարզում 6 և Վայոց ձորի մարզում 4 քաղաքացիական պաշտպանության հենակետերի ստեղծում:

Քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի նշված հենակետերը ստեղծվում են հետևյալ գործառույթների իրականացման նպատակով՝

1) քաղաքացիական պաշտպանության հետախուզության անցկացում՝ քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի կողմից հիմնավորված որոշումներ ընդունելու համար.

2) բնակչության, քաղաքացիական պաշտպանության ուժերի լրիվ սանիտարական մշակում, վարակված հագուստի և կոշիկների վարակազերծում.

3) ճառագայթային և քիմիական վարակված տեխնիկայի հատուկ մշակման անցկացում.

4) բնակչության (այդ թվում պատսպարված) և քաղաքացիական պաշտպանության ուժերի անձնակազմի դոզիմետրիկ հսկողության իրականացում.

5) ականապատ տարածքների հայտնաբերում, արգելանշանների տեղադրում (ականազերծման միջոցառումների իրականացում) և տարածքի հսկողության կազմակերպում.

6) ջրաղբյուրների հայտնաբերում, ջրհանման և մաքրման, հորատման աշխատանքների կատարում.

7) ավերված, խարխլված և այրվող շինություններից, փլատակներից տուժածների որոնում, հայտնաբերում, հանման և տեղափոխման կազմակերպում ու իրականացում.

8) վթարների և խոցման օջախներում տուժածներին առաջին բժշկական օգնության ցուցաբերում.

9) բնակչության տարահանման միջոցառումների աջակցում, այդ թվում՝ ճառագայթային աղտոտման և քիմիական ու կենսաբանական վարակված գոտիներից.

10) պարեկապահակային ծառայության կազմակերպում ու իրականացում.

11) Մասնակցություն՝ ՀՀ Զինված ուժերի զորամասերի հետ հակառակորդի կողմից ներթափանցած հետախուզական խմբերի հայտնաբերման, շրջափակման և վնասազերծման գործողություններին.

12) պաշտպանիչ մատույցների և դիրքերի կառուցման աշխատանքների կատարում:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս՝ ԱԻՆ ՓԾ ՔՊ վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի բազայի վրա ստեղված են 2 ջոկատների 12 հենակետեր (Տավուշի ջոկատ՝ Ազատամուտ, Չինարի, Ն.Կամիրաղբյուր, Այգեպար, Մովսես, Պառավաքար, Չորաթան, Նոյեմբերյանի ջոկատ՝ Ոսկեվան, Սարիգյուղ, Բերդավան, Կոթի, Դովեղ):

2019 թվականի ընթացքում, նախատեսվում է Տավուշի մարզում ստեղծել ևս 4 քաղաքացիական պաշտպանության հենակետեր՝ Վազաշեն, Ոսկեպար, Կիրանց, Բերքաբեր բնակավայրերում (յուրաքանչյուրը՝ 25 հաստիք), Վայոց ձորի մարզում՝ Չիվա, Խաչիկ, Բարձրունի և Խնձորուտ բնակավայրերում (յուրաքանչյուրը՝ 17 հաստիք):

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

| | |
|---|---|
| | Տավուշի մարզում գործող 12 հենակետերի պատասխանատվության տակ գտնվող բնակավայրերում և օբյեկտներում (կամուրջներ, ջրամբարներ, կապտաժներ) առաջարկվում է նախատեսել տեսահսկման տեխնիկական միջոցներ (նախնական հաշվարկով 1 հենակետի համար կպահանջվի մոտ 1,5 մլն. դրամ): Հենակետերում տեխնիկական միջոցներ տեղադրելու դեպքում կառաջանա հնարավորություն նշված հենակետերում ծառայությունը կազմակերպել 21 հաստիքներով՝ 25-ի փոխարեն:<br>Նախատեսվում է քաղաքացիական պաշտպանության հենակետերը ստեղծել Արտակարգ իրավիճակների նախարարությանը համապատասխան քանակությամբ հաստիքների տրամադրման դեպքում: Հաշվարկներում ներառված չեն նախատեսվող թվով 248 փրկարար ծառայողների հաստիքները, սպասարկման և պահպանման ծախսերը, սպառազինության, հանդերձանքի, շենք-շինությունների պահպանման ծախսերը՝ ընդհանուր առմամբ 850 մլն դրամ:<br>Ընդհանուր առմամբ ՔՊ ուժերի հավաքական կենտրոնում 8 հենակետերի ստեղծման և 3 հենակետերի համալրման նպատակով անհրաժեշտ են 221 հաստիքներ: Տեսահսկման տեխնիկական միջոցների տեղադրման դեպքում 8 հենակետերի ստեղծումը և 3 հենակետերի համալրումը հնարավոր կլինի իրականացնել 147 հաստիքներով:<br>Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, Տավուշի և Վայոց ձորի մարզպետարանները, համայնքապետարանները իրենց լիազորությունների շրջանակներում պետք է աջակցություն ցուցաբերեն միջոցառումների իրականացմանը: Մասնավորապես՝ ստեղծեն իրենց մարզերում, համայնքներում քաղաքացիական պաշտպանության ուժեր, իրականացնեն համայնքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը, բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը, ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների անվտանգություն ապահովումը::<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Սահմանամերձ բնակավայրերում քաղաքացիական պաշտպանության հենակետերի ստեղծումը հնարավորություն կտա ապահովել նշված բնակավայրերի բնակչության, կարևորագույն օբյեկտների և ենթակառուցվածքների պաշտպանությունը, սահմանամերձ համայնքներում փրկարարական և հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը:<br>Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2021-2023 թվականների ընթացքում՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներառելով ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ըստ յուրաքանչյուր տարվա նախահաշվի: Ստույգ հաշվարկները կներկայացվեն համապատասխան հայտերով՝ ֆինանսական միջոցների առկայության դեպքում: |
| **65** | **65.1 ԱԻՆ Պահեստային կառավարման կետի վերանորոգում և կահավորում**<br>**1. Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի դ) կետը որպես քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական միջոցառում սահմանում է. «կառավարման, կապի և ազդարարման համակարգերի հիմնումը և դրանց բնականոն գործնեության ապահովումը»:<br>Քաղաքացիական պաշտպանության կառավարման համակարգի փոխկապակցված ամբողջականության մասն են կազմում նաև կառավարման կետերը, որոնք հանդիսանում են խաղաղ և ռազմական դրության ժամանակ կառավարման մարմինների տեղակայման և նրանց աշխատանքների ապահովման համար նախատեսված՝ հատուկ սարքավորված և տեխնիկական միջոցներով հագեցված շինություններ կամ տրանսպորտային միջոցներ:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս որպես պահեստային կառավարման կետ նախատեսվող պաշտպանական կառույցը, ինչպես նաև իր մեջ տեղադրված սարքերն ու սարքավորումներն ունեն վերանորոգման կարիք, անհրաժետ է նոր ջրամատակարարման, էլեկտրամատակարարման և կապի գծերի անցկացում, կապի միջոցներով և անհրաժեշտ գույքով հագեցում:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 1225-ՆԳ և թիվ |

| | |
|---|---|
| | 1226-ՆԳ որոշումների պահանջներով սահմանվում է կառույցի վերանորոգմանը, անհրաժեշտ գույքով և սարքավորումներով ապահովմանը, օրենսդրական կարգով շահագործմանը ներկայացվող պահանջները:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է ռազմական դրության ժամանակ կառավարման, ինչպես նաև պահպանության, պաշտպանության մակարդակի բարձրացումը, կառույցում հերթապահության իրականացումը:<br>Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2021-2022 թվականների ընթացքում՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներառելով ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ըստ յուրաքանչյուր տարվա նախահաշվի: Ստույգ հաշվարկները կներկայացվեն համապատասխան հայտերով՝ ֆինանսական միջոցների առկայության դեպքում: |
| 66 | **66.1 ԱԻՆ ՓԾ Սյունիքի, Լոռու, Շիրակի մարզային ստորաբաժանումների հակահրդեհային գույքով ապահովում**<br><br>**1. Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Հայաստանը գտնվում է բազմաթիվ բնածին և տեխնածին վտանգների բարձր ռիսկային գոտում և խոշոր աղետների դեպքում ենթակա է պոտենցիալ լուրջ մարդկային, նյութական և տնտեսական կորուստների: Հանրապետության տարածքին առանձնահատուկ բնական աղետների առկայությունը բացատրվում է բարդ ռելիեֆային և բնակլիմայական բազմազանությամբ: Ամռան ամիսներին հրդեհավտանգ իրավիճակ է ստեղծվում անտառային տարածքներում: Դիմակայել հրդեհներին առկա միջոցներով դժվար է՝ եթե հաշվի առնենք բարդ ռելիեֆը:<br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հրշեջ-փրկարարական ջոկատների տեղակայվածությունը, տեխնիկայի անբավարար քանակությունը խոչնդոտում են արագ արձագանքմանը, հրդեհաշիջման աշխատանքների ժամանակին և արդյունավետ կազմակերպմանը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է զարգացնել և կատարելագործել փրկարարական համակարգը համապատասխան ժամանակակից պահանջներին, զուգահեռաբար ապահովելով հրշեջ-փրկարար ջոկատներին հրդեհաշիջման ժամանակակից տեխնիկայով:<br>Ճապոնիայի կառավարության Զարգացմանն ուղղված պաշտոնական օգնության ծրագրերի շրջանակներում Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության կողմից (JICA) տրամադրվել է 36 հրշեջ, 3 շարժասանդուղք և 1 կարգավար ավտոմեքենաներ՝ միլիոն ճապոնական իեն ընդհանուր արժողությամբ: Ծրագիրը իրականացվելու է 3 փուլերով, 1-ին փուլը իրականացվել է, մայիսի 6-ին, մյուս երկու փուլերը կիրականացվեն 2019 թվականի մարտ-ապրիլ և 2020 թվականի հունվար-փետրվար ամիսներին:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հանրապետության ամբողջ տարածքում անհրաժեշտ ուժերի և միջոցների արդյունավետ տեղաբաշխվածություն՝ բարդ իրավիճակներում լայնամասշտաբ աղետներին արձագանքելու, արագ կողմնորոշվելու և ճիշտ որոշումներ կայացնելու, աղետալի հետևանքներից խուսափելու նպատակով: |
| 67 | **67.1 Երևանում, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում կամավորական արձագանքման խմբերի ստեղծում, դասընթացների և վարժանքների իրականացում**<br><br>**1. Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի ստեղծումն ու զարգացումն անհրաժեշտ է տարեցտարի աճող արտակարգ իրավիճակներին ավելի արդյունավետ արձագանքելու համար: Փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի ստեղծման ու զարգացման հիմնական նպատակներն են՝ կանխել արտակարգ իրավիճակների հետագա տարածումը կամ մարդկանց կյանքին սպառնացող վտանգը, վերացնել արտակարգ իրավիճակների հետևանքները, իրականացնել փրկարարական աշխատանքներ կամ մարել դեռևս զարգացման սկզբնական փուլում գտնվող հրդեհը, տուժածներին ցույց տալ առաջին օգնություն, փրկել ինչպես մարդկային կյանքեր, այնպես էլ նյութական և մշակութային արժեքներ, բարձրացնել արտակարգ իրավիճակներում բնակչության իրազեկվածության ու կրթվածության մակարդակը: |

| | |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս արտակարգ իրավիճակների արձագանքումն իրականացվում է Փրկարար ծառայության հերթապահ ստորաբաժանումների ուժերով, որոնց միջոցները բավարար չեն լայնածավալ աղետների արձագանքման համար: Հայաստանի Հանրապետությունում տարեկան արձանագրվող հազարավոր հրդեհների, բնական, տեխնածին աղետների և պատահարների հետևանքով զոհվում են հարյուրավոր մարդիկ, մի քանի հազարը՝ ստանում տարբեր աստիճանի վնասվածքներ, բնակչությանը և պետությանը պատճառվում է միլիարդավոր դրամների հասնող նյութական վնաս: Ամռան շոգ և չոր եղանակային պայմաններում Արտակարգ իրավիճակների նախարարության գրեթե բոլոր ստորաբաժանումներն աշխատում են գերբեռնվածությամբ, մի դեպքի վայրից մյուս դեպքի վայր մեկնում՝ անցնելով տասնյակ կիլոմետրեր, երբեմն էլ միաժամանակյա մի քանի դեպքերի արձագանքում: Սահմանամերձ և հեռավոր բնակավայրերը գտնվում են սպասարկող հրշեջ-փրկարարական ջոկատներից մինչև 48 կիլոմետր հեռավորության վրա, և հրշեջ-փրկարարական ջոկատների մարտական հաշվարկները, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների արտակարգ իրավիճակների դեպքերի սպասարկման համար, ոլորաններով անցնելիս առավելագույնը 20-30 կմ/ժամ արագությամբ են ընթանում՝ կանչի վայր հասնելով մինչև 50-60 րոպե ուշացումով, ուստի տեղի բնակիչները, շատ անգամ, չեն ահազանգում արտակարգ իրավիճակների դեպքերի վերաբերյալ, քանի որ, գիտակցում են, որ հեռավորության և ժամանակի կորուստի պատճառով արձագանքումն արդյունավետ չի կարող լինել:<br>Ներկայումս  համայնքների խոշորացման հանգամանքից ելնելով, անհրաժեշտ է վերանայել և կազմավորել այն համայնքների ցանկը, որտեղ կստեղծվեն կամավորական հրշեջ-փրկարարական նոր հենակետեր:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում ստեղծել կամավորական հրշեջ-փրկարարական հենակետեր, կամավորներին ուսուցանել, որպեսզի մինչև հիմնական ուժերի դեպքի վայր ժամանելը, ուսուցանված  անձնակազմը  կանխի հրդեհի հետագա տարածումը՝  դեռևս զարգացման սկզբնական փուլում:<br>Մարզպետարանները, տեղական ինքնակառավարման մարմինները պետք է օժանդակեն մարզերում, համայնքներում կամավորական արձագանքման խմբերի ստեղծմանը, աջակցություն ցուցաբերեն այդ խմբերի ուսուցման կազմակերպման և վարժանքների իրականացման հարցերում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Լայնածավալ աղետների և հրդեհների կանխարգելումը, արձագանքումը և հետևանքների վերացման աշխատանքների համակարգումը դարձնել ավելի արդյունավետ: Արտակարգ իրավիճակներից և հրդեհներից մարդկային զոհերը և նյութական կորուստները նվազեցնել, բարձրացնել արտակարգ իրավիճակներում բնակչության իրազեկվածության ու կրթվածության մակարդակը: Կրճատել արտակարգ իրավիճակների արձագանքման ժամանակահատվածը: |
| **68** | **68.1  «Աղետների վաղ ազդարարման համակարգի ձևավորման հայեցակարգի» լրամշակված նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br>***68.2 Աղետների վաղ ազդարարման  կենտրոնացված համակարգի ներդրում***<br><br>**1. Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Աղետների վաղ ազդարարման համակարգի ձևավորման հայեցակարգի» որոշման նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռի կանոնակարգել արտակարգ իրավիճակների բնագավառում բնակչության և ղեկավար կազմի ազդարարման ու իրազեկման հիմնախնդիրները, ինչպես նաև կազմակերպել բնակչության ազդարարման ու իրազեկման համակարգի ձևավորումը: Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսանում «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դ. կետը, և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դ. կետը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության տարածքում խորհրդային տարիներին կառուցված ազդարարման համակարգը չի գործում կենտրոնացված «Վեոն-Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ավտոմատ հեռախոսային կայանների թվայնացման, անալոգային կապուղիների շահագործումից հանելու և ապամոնտաժելու պատճառով:  Հանրապետության տարածքում տեղադրված թվով 744 շչակներից սարքին են 477-ը, որոնց  90%-ը գործում են ինքնավար (ավտոնոմ) |

| | |
|---|---|
| | և ընդգրկված չեն մեկ ընդհանուր ցանցում:<br>Համայնքներին սպառնացող աղետների ռիսկի վերլուծության արդյունքներով՝ կատարված միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների կողմից փաստում են, որ համայնքների մեծ մասը անհրաժեշտ է համարում ազդարարման համակարգի արդյունավետ գործունեությունը, տեղեկատվության ապահովումը:<br>Հաշվարկներում ներառված չեն նախագծային աշխատանքների կատարման, ազդարարման սարքավորումների մոնտաժման և տեղադրման հետ կապված ծախսերը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջանում իրավական ակտով կանոնակարգելու Հայաստանի Հանրապետության բնակչության ազդարարման և իրազեկման ուղղությամբ իրականացվող միջոցառումները՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում:<br>Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, մարզպետարանները, Երևանի քաղաք-ապետարանը (համաձայնությամբ) իրենց լիազորությունների շրջանակներում պետք է աջակցություն ցուցաբերեն միջոցառումների իրականացմանը: Մասնավորապես՝ ազդարարման համակարգերի տեղադրման վայրի, կոմունիկացիաների հետ կապված կարգավորումների, տեղադրված համակարգերի պահպանության և պատասխանատուների հետ կապված գործառույթների իրականացման հարցերում:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>«Աղետների վաղ ազդարարման համակարգի ձևավորման հայեցակարգի» ընդունումը, հայեցակարգից բխող միջոցառումների իրականացումը հնարավորութուն կընձեռի ներդնել աղետների վաղ ազդարարման գործուն համակարգ, որը կնպաստի տնտեսական վնասների և մարդկային կորուստների նվազեցմանը: Հայեցակարգից բխող միջոցառումների իրականացումը կնպաստի համայնքներն (հատկապես սահմանամերձ) ապահովելու ազդարարման ժամանակակից համակարգով:<br>Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2021-2023 թվականների ընթացքում՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներառելով ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ըստ յուրաքանչյուր տարվա նախահաշվի: Ստույգ հաշվարկները կներկայացվեն համապատասխան հայտերով՝ ֆինանսական միջոցների առկայության դեպքում: |
| 69 | **69.1 1000 մարդու կենսաապահովման համար անհրաժեշտ վրանների քանակի հաշվարկ, համապատասխան քանակի վրանների ձեռքբերում և պահեստավորում**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Վրանային ավանի ստեղծման նպատակն է ստեղծել վրանային տնտեսության պահուստ, որը հնարավորություն կտա արտակարգ իրավիճակի պայմաններում իրականացնել տուժածների առաջնային կենսաապահովումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հիմք ընդունելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N919-Ն որոշման հավելված 1-ի 4-րդ կետի 3) ենթակետի ը պարբերությունը, ԱԻ նախարարության գործառույթն է արտակարգ իրավիճակներում, ռազմական դրության ժամանակ անօթևան մնացած բնակչության տարահանումն և կացարաններով ապահովումը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>1000 մարդու կենսաապահովման համար անհրաժեշտ վրանների քանակի հաշվարկ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է ստեղծել վրանային տնտեսության պահուստ, որը հնարավորություն կտա արտակարգ իրավիճակի պայմաններում իրականացնել տուժածների առաջնային կենսաապահովումը:<br>Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2020-2022 թվականների ընթացքում՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներառելով ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ըստ յուրաքանչյուր տարվա նախահաշվի: Ստույգ հաշվարկները կներկայացվեն համապատասխան հայտերով՝ |

| | |
|---|---|
| | ֆինանսական միջոցների առկայության դեպքում: |
| 70 | **70.1 «Նյութական պահուստի մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների լրամշակված նախագծերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br>**70.2 «Նյութական պահուստի մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի նախագծերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանի Հանրապետության նյութական պահուստի համակարգի զարգացումն ու բարեփոխումներն ապահովող իրավական դաշտի ստեղծման ու նյութական պահուստի արդիականացման և ընդլայնման կարիքից ելնելով <<Հայաստանի Հանրապետության <<Նյութական պահուստի մասին>> և **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին**>> Հայաստանի Հանրապետության օրենքների, ինչպես նաև դրանցից բխող իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջացել:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետության նյութական պահուստի ձևավորման, տեղաբաշխման, պահպանման, օգտագործման, համալրման և թարմացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են <<Պետական նյութական պահուստի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և դրանից բխող այլ իրավական ակտերով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական դիրքով պայմանավորված պարենային ապրանքների գերակշռող մասը ներմուծվող են, ապրանքների մատակարարման նույնիսկ կարճատև խափանումը կարող է առաջացնել ճգնաժամ, որի պատճառով առաջին պլան է մղվում ռազմական գործողությունների ժամանակ ճանապարհային շրջափակման պայմաններում բնակչության և Զինված ուժերի կարիքների ապահովումը: Խնդիր է առաջանում բարձրացնել պետական նյութական պահուստի արդյունավետությունը, արդիականացնել դրա ձևավորման մոտեցումները և կառավարման համակարգը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախորդ տարիների փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում ձևավորված ազատական տնտեսական հարաբերությունների պայմաններում որդեգրված մոտեցումները այլևս չեն կարող համարվել բավարար և չեն ապահովում նյութական պահուստի զարգացման գործընթացը: Ներկայումս պետական նյութական պահուստի ձևավորման, պահպանման, թարմացման, փոխարինման գործառույթները իրականացվում են բացառապես բյուջետային ֆինանսավորման հաշվին: Ռազմավարական նշանակություն ունեցող պաշարների ձևավորման համար պահանջվում են զգալի ֆինանսական միջոցներ, իսկ գործող իրավական դաշտը շուկայական հարաբերությունների պայմաններում բավարար չափով չի ապահովում պետական պահուստի նյութական արժեքների թարմացման և փոխարինման գործընթացի արդյունավետությունը, որի հետևանքով առաջանում են կորուստներ և պահանջվում մեծ ֆինանսական ներդրումներ: Ներկայումս պետական նյութական պահուստի ձևավորման համար չի օգտագործվում մասնագիտացված առևտրային կազմակերպությունների պոտենցիալը, իսկ պետական պահուստի նյութական արժեքների թարմացման ընթացքում կորուստներ են առաջանում ոչ միայն ձեռք բերվող և իրացվող ապրանքների պիտանելիության ժամկետների տարբերության, այլ նաև իրավական դաշտի անկատարելիության պատճառով: Օրենքի նախագծով նախատեսվում է նյութական պահուստի ձևավորման մասնակից դարձնել ռազմավարական նշանակություն ունեցող նութական արժեքները (ավտոմոբիլային բենզին, դիզելային վառելիք, պարենային ցորեն, շաքարավազ, բուսական յուղ) ներմուծող կազմակերպությունները, ինչպես նաև զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունները:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Օրենքի նախագծի ընդունմամբ ակնկալվում է ձևավորել Հայաստանի Հանրապետության նյութական պահուստի բարեփոխումները և զարգացումը ապահովող իրավական դաշտ, որը կնպաստի Հայաստանի Հանրապետության նյութական պահուստի բարելավմանը և ընդլայնմանը, համակարգի արդիականացմանը, և, որպես արդյունք՝ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների հետևանքների վերացմանը կամ նվազեցմանը: |
| 71 | **71.1 Կառավարման, կազմակերպական կարողությունների զարգացում, կանխատեսման մոդելների** |

**ուսուցանում**

**71.2 Հիդրոօդերևութաբանական ավտոմատ կայանների տեղադրում և տեղեկատվության գրանցման, փոխանցման և վիզուալիզացման համակարգի ստեղծում**

**71.3 Հիդրոօդերևութաբանական երևութներից առաջացած կորուստների և վնասի հաշվառման, վերլուծության և արխիվացման միասնական համակարգի ձևավորում և տեղեկատվության հասանելիության ապահովում**

**1. Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման նպատակն է կլիմայի փոփոխության և հիդրոօդերևութաբանական երևույթների գնահատման, կանխատեսման և տեղեկատվության տրամադրման ծրագրերի մշակման կարողությունների զարգացումը՝ Հիդրոմետ ծառայության արդիականացման միջոցով և Հայաստանի դիմակայունության բարձրացումը կլիմայի փոփոխության և հարմարվողականության ուղղությամբ: Հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների վաղ ազդարարաման, դրանց արագ արձագանման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ձևավորել հիդրոօդերևութաբանական երևույթներից առաջացած կորուստների և վնասների հաշվառման, վերլուծության, արխիվացման միասնական բազա, ինչպես նաև ստեղծել տեղեկատվության գրանցման, փոխանցման համակարգ:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի պետական հիդրոօդերևութաբանական ծառայության համակարգում ներկայում գործում են 46 օդերևութաբանական կայաններ, 7 գետավազանային հիդրոլոգիական կայաններ՝ 94 հիդրոլոգիական դիտակետերով: Հիդրոօդերևութաբանական դիտարկումները կատարվում են Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան, սակայն դիտարկումների պետական ցանցում ներկայում շահագործվող մասնագիտական գործիքների ու սարքավորումների 70-80%-ը բարոյապես և ֆիզիկապես մաշված են և ցանցն ունի վերազինման խիստ կարիք:

Զարգացած և պարբերաբար արդիականացվող, դիտարկումների համաշխարհային ցանցում ինտեգրված հիդրոօդերևութաբանական կառույց ունենալու համար անհրաժեշտ է հիդրոօդերևութաբանական դիտարկումների պետական ցանցի տեխնիկական վերազինում և արդիականացում, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդնում, տեղեկատվության հավաքման և փոխանակման համակարգի արդիականացում, տվյալների մշակման և կառավարման նոր ծրագրային փաթեթների ներդնում ինչը կնպաստի ՀՀ պետական և տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ազգաբնակչությանը և տնտեսության ճյուղերին հիդրոօդերևութաբանական տեղեկատվությամբ և շրջակա միջավայրի վիճակի մասին ժամանակին և հուսալի տվյալներով ապահովման բարձրացմանը, վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթներից տնտեսության, ազգաբնակչության կյանքի, առողջության և ունեցվածքի հնարավոր կորուստների նվազեցմանը, հիդրոօդերևութաբանական դիտարկումների գնահատման և կանխատեսման համակարգի զարգացմանը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հիդրոօդերևութաբանական դիտարկումների, կանխատեսումների, տեղեկատվության մշակման, վերլուծության, արխիվացման և տրամադրման ենթահամակարգերի արդիականացում, կառավարման, կազմակերպական և կադրային կարողությունների զարգացում այդ թվում կանխատեսման մոդելների ուսուցանում

**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացումից ակնկալվում է Հիդրոմետ ծառայության տեխնիկական և մասնագիտական կարողությունների զարգացում և արդիականացում համապատասխան կանխատեսումների և տեղեկատվության տրամադրման արդյունավետ համակարգ ապահովվելու համար: Հիդրոօդերևութաբանական ավտոմատ կայանների տեղադրում և տեղեկատվության գրանցման, փոխանցման և վիզուալիզացման համակարգի ստեղծում Հիդրոօդերևութաբանական երևութներից առաջացած կորուստների և վնասի հաշվառման, վերլուծության և արխիվացման միասնական համակարգի ձևավորում և տեղեկատվության հասանելիության ապահովում:

Հիդրոօդերևութաբանական դիտարկումների, կանխատեսումների, տեղեկատվության մշակման, վերլուծության, արխիվացման և տրամադրման ենթահամակարգերի արդիականացում, կառավարման, կազմակերպական և

| | |
|---|---|
| | կադրային կարողությունների զարգացում այդ թվում կանխատեսման մոդելների ուսուցանում |
| 72 | **72.1 Քասախի և Հրազդանի գետավազանների 7 (2 ջրամբարային, 5 գետային) և սահմանային Արաքս-Սուրմալու հիդրոլոգիական դիտակետերի արդիականացում, տվյալների գրանցման և առցանց փոխանցման համակարգերով զինված չափիչ սարքավորումների տեղադրում**<br>**72.2 Ախուրյանի ավազանի հիդրոլոգիական դիտակետերի արդիականացում**<br>**1. Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ԱԻՆ հիդրոմետ ծառայությունը հանրապետություն միակ պետական կառույցն է որն իրականացնում է մակերևութային ջրային ռեսուրսների քանակական մոնիտորինգ և այդ դիտակետերի դիտարկումների տվյալները կարևոր դեր ունեն ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարաման տեսանկյունից, հետևապես անհրաժեշտ է այդ հիդրոլոգիական դիտակետերի վերազինում/արդիականացում:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները:**<br>Հիդրոլոգիական դիտակետերում շահագործվող գործիք-սարքավորումները հնամաշ են, ինժեներական կառուցվածքները ֆիզիկապես մաշված են:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները:**<br>Դիտակետերում իրականացնել ինժեներական կառուցվածքների հիմնանորոգում, ինչպես նաև տեղադրել ավտոմատ գործիք սարքավորումներ և չափիչ միջոցներ:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը:**<br>Միջոցառման իրականացումից ակնկալվում է մակերևութային ջրային ռեսուրսների մոնիտորինգի տվյալների արժանահավատության բարձրացում, հետևապես որոշում կայացնողներին առավել ճշգրիտ տեղեկատվությամբ ապահովում, ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում: Պետք է նշել, որ հիդրոլոգիական դիտակետերն ավտոմատ կայաններով զինելը կբերի ջրային օբյեկտների հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ առավել մեծ հաճախականությամբ տեղեկատվության ստացման, որը ներկայիս գործող դիտարկման համակարգի նկատմամբ ունի հետևյալ առավելությունները.<br>- համակարգը հնարավորություն է տալիս ստանալ ջրի մակարդակի վերաբերյալ տվյալներ Հիդրոմետ ծառայության ներկայիս ֆիքսված դիտարկումների միջև ընկած ժամանակահատվածների համար<br>- բարձրանում է տվյալների արժանահավատությունը՝ մարդկային գործոնով պայմանավորված սխալմունքների նվազեցման հետևանքով:<br>- բարձրացնում է շահառուներին տրամադրվող հիդրոլոգիական տեղեկատվության որակը<br>- բարձրացնում է ստացվող տեղեկատվության օպերատիվությունը<br>- հիդրոլոգիական դիտացանցի ավտոմատացված համակարգը կնպաստի ջրային օբյեկտներում հիդրոլոգիական ռեժիմի կանխատեսումների արդարացվածության բարձրացմանը: |
| 73 | **73.1 Սևանա լճի ավազանում 6 ավտոմատ օդերևութաբանական կայանների ձեռքբերում և տեղադրում**<br>**73.2 Ջրային մակերևույթից գոլորշացման ճշգրիտ գնահատման նպատակով Սևանա լճի ավազանում (ГГИ-3000) գոլորշաչափերի տեղադրում**<br>**1. Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման նպատակն է բարելավել հիդրոօդերևութաբանական դիտարկումների համակարգը Սևանա լճի ավազանում ինչը խիստ կարևոր է Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և պահպանության տեսակետից՝ Սևանա լճի ավազանում ավտոմատ օդերևութաբանական կայանների և ջրային մակերևույթից գոլորշաչափերի տեղադրման միջոցով:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները:**<br>Սևանա լճի ավազանի դիտարկումների ցանցում ներկայումս շահագործվող մասնագիտական գործիքների ու սարքավորումների 70-80%-ը բարոյապես և ֆիզիկապես մաշված են և ցանցն ունի վերազինման խիստ կարիք:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները:**<br>Սևանա լճի ավազանում 6 ավտոմատ օդերևութաբանական կայանների ձեռքբերում և տեղադրում, Ջրային մակերևույթից գոլորշացման ճշգրիտ գնահատման նպատակով Սևանա լճի ավազանում (ГГИ-3000) գոլորշաչափերի տեղադրում:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը:**<br>Միջոցառման իրականացումից ակնկալվում է Սևանա լճի ջրային հաշվեկշռի կազմման բարելավում և հաշվեկշռի բաղադրիչների հուսալիության բարձրացում ինչպես նաև լճի ջրային ռեսուրսների կանխատեսումների |

| | |
|---|---|
| | որակի բարելավում:<br>Միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2021-2023 թվականների ընթացքում՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներառելով ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ըստ յուրաքանչյուր տարվա նախահաշվի: Ստույգ հաշվարկները կներկայացվեն համապատասխան հայտերով՝ ֆինանսական միջոցների առկայության դեպքում: |
| 74 | **74.1 Հակակարկտային պաշտպանության զարգացման համար նոր սերնդի դոպլերային ԴՄՌԼ-10 տեսակի ռադիոլոկացիոն 2 կայանների ձեռք բերում և տեղադրում Արմավիրի և Շիրակի մարզերում**<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքներն իրականացվում են ռադիոլոկացիոն կայանների դիտարկման արդյունքում ստացվող տյալների հիման վրա: Այդ կայաններն իրական ժամանակում հայտնաբերում են օդերևութաբանական վտանգավոր երևույթները, որոշում ամպի վտանգավորության աստիճանը, կառուցվածքը, պարունակությունը, տեղաշարժման ուղղությունը, արագությունը, ինչպես նաև գնահատում ամպագոյացության զարգացման էվոլյուցիան:<br>Ռադիոլոկացիոն կայաններից ստացվող տվյալների բացակայության դեպքում ցանկացած տեսակի ներգործման աշխատանքների իրականացումը կդառնա անհնարին:<br>Հակակարկտային պաշտպանության զարգացման և վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների գերկարճաժամկետ կանխատեսումների համակարգի ներդնման համար անհրաժեշտ է ձեռք բերել 2 հատ նոր սերնդի դոպլերային ԴՄՌԼ-10 տեսակի ռադիոլոկացիոն կայան, որոնք կտեղադրվեն ՀՀ Արմավիրի և Շիրակի մարզերում:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հիդրոմետ ծառայության համակարգում գործող երկու ՄՌԼ-5 տեսակի ռադիոլոկացիոն կայանները շահագործվում շուրջ 30 տարի և ունեն զգալի ֆիզիկական մաշվածություն:<br>Գործող ռադիոլոկացիոն կայանների դիտարկման տարածքները սահմանափակվում են Հայաստանի Հանրապետության բարդ երկրապատկերի պատճառով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մթնոլորտային երևույթների դիտարկումների և հակակարկտային պաշտպանության զարգացման համար անհրաժեշտ է առաջնահերթ ձեռք բերել 2 հատ նոր սերնդի դոպլերային ԴՄՌԼ-10 տեսակի ռադիոլոկացիոն կայան, որոնք կտեղադրվեն ՀՀ Արմավիրի և Շիրակի մարզերում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացումից ակնկալվում է երկու նոր ռադիոլոկացիոն կայանների տեղադրման արդյունքում կընդլայնվեն մթնոլորտային երևույթների դիտարկումների տարածքները, ինչը թույլ կտա հանրապետությունում զարգացնել հակակարկտային պաշտպանությունը և ներդնել վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների գերկարճաժամկետ կանխատեսումների համակարգ:<br>Բացի այդ, նոր ռադիոլոկացիոն կայանների տեղադրմամբ կդիտարկվեն նաև գործող կայանների տարածքները՝ դրանց խափանման դեպքերում:<br>Միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2020-2022 թվականների ընթացքում՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներառելով ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ըստ յուրաքանչյուր տարվա նախահաշվի: Ստույգ հաշվարկները կներկայացվեն համապատասխան հայտերով՝ ֆինանսական միջոցների առկայության դեպքում: |
| 75 | **75.1 Ազգային մոնիթորինգային դիտացանցի հիդրոերկրաքիմիական, ռադոնաչափական, մագնիսաչափական կայանների և ԱԻՆ «ՍՊՏԾ» ՊՈԱԿ-ի հիդրոերկրաքիմիական լաբորատորիայի վերազինում, GPS նոր սարքերի տեղադրում**<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանը գտնվում է երկու հզոր Եվրասիական և Արաբական ցամաքային սալերի բախման գոտում և համարվումէտարածաշրջանի ամենավտանգավոր և բարձր սեյսմիկ ռիսկով բնութագրվող տարածքներից մեկը: Պարբերաբար տեղի ունեցող ուժեղ և ավերիչ երկրաշարժերից պաշտպանվելու լավագույն միջոցը սեյսմիկ վտանգի հուսալի մոնիթորինգի ապահովումն է, որն էլ Հայաստանի սեյսմիկ անվտանգության կարևորագույն հիմնախնդիրներից է (2002թ. հուլիսի 6-ի «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՕ-376-Ն ՀՀ օրենք, հոդվածներ՝ |

| | |
|---|---|
| | 5, 20):<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Այսօր մոնիթորինգի ապահովման հրատապ խնդիրներից է ռադոնաչափական և մագնիսաչափական սարքերի փոխարինումը թվային սարքավորումներով, GPS նորագույն սարքերի տեղադրումը, հիդրոերկրաքիմիական կայանների (հորատանցքերի) արդիականացումը և ԱԻՆ «ՍՊՏԾ» ՊՈԱԿ-ի հիդրոերկրաքիմիական լաբորատորիայի վերազինումը ժամանակակից սարքերով ու սարքավորումներով: Արդիականացված ցանցերի առկայությամբ և կապի ժամանակակից միջոցներով փոխանցվող տվյալները հանդիսանում են կարևոր բաղադրիչներ ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման համար:<br>**1.2Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գործող կայանների վերազինումը նոր սարքավորումներով կնպաստի միջազգային ժամանակակից ստանդարտներին համապատասխան դիտացանց ստեղծելուն: Հարկ է նշել, որ Ազգային սեյսմիկ մոնիթորինգի դիտացանցի մի շարք դիտակետերում (օրինակ, հիդրոերկրադինամիկական, սեյսմիկ, գրունտի ուժեղ շարժումների և այլն) սարքերը և սարքավորումներն արդեն արդիականացվել են միջազգային գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Խնդրի իրականացումը զգալիորեն կբարձրացնի սեյսմիկ վտանգի մոնիթորինգի մակարդակը Հայաստանում և կնպաստի սեյսմիկ վտանգի գնահատման հուսալիության բարձրացմանը: |
| 76 | **76.1 Հայաստանի Հանրապետության պետական հատուկ նշանակության ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության գնահատման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ծրագրի ընդունմամբ կսահմանվի սեյսմիկ պաշտպանության հատուկ նշանակության օբյեկտի՝ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության գնահատման մոտեցումները և առաջնահերթությունները: (2002 թ. հուլիսի 6-ի «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՕ-376-Ն ՀՀ օրենք, հոդվածներ՝ 8, 9, 10):<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատում հատուկ նշանակության ջրամբարների համար չի իրականացվել և սեյսմիկ ռիսկի նվազեցումը պահանջում է գոյություն ունեցող ջրամբարների պատվարների մանրակրկիտ հետազննում:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագրի ընդունումը հնարավորություն կտա իրականացնելու պետական հատուկ նշանակության ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման համակարգված աշխատանքներ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա զգալիորեն բարձրացնել սեյսմիկ պաշտպանվածության մակարդակը: |
| | ***76.2*** **«Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմիկ խոցելիության գնահատման պիլոտային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքների վերլուծությունը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող շենքերի գերակշռող մասի սեյսմակայունությունն ավելի ցածր է, քան սպասվող սեյսմիկ վտանգի մակարդակը, և փաստորեն նրա ամբողջ տարածքը գտնվում է բարձր սեյսմիկ ռիսկի գոտում: (2002 թ. հուլիսի 6-ի «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՕ-376-Ն ՀՀ օրենք, հոդվածներ՝ 8, 9, 21, 23, 24):<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ համար սեյսմիկ ռիսկը հասել է իր առավելագույն մակարդակին, ինչը պայմանավորված է սեյսմիկ ակտիվության նոր ցիկլով, շենքերի և շինությունների ցածր սեյսմակայունությամբ, ուրբանիզացման բարձր մակարդակով, հատուկ և կարևոր նշանակության կառույցներին (բազմաբնակարան բնակելի շենքեր, դպրոցներ, ջրամբարներ, կենսապահովման գծեր, առողջապահական հիմնարկներ և այլն) հատկացված ոչ բավարար ուշադրությամբ, բնակչության վատ տեղեկացմամբ, սոցիալ-տնտեսական վիճակով և այլ գործոններով: |

| | |
|---|---|
| | Չնայած այն հանգամանքին, որ ընդունվել են բազմաթիվ օրենքներ և որոշումներ ուղղված ազգաբնակչության առողջության ու անվտանգության ապահովմանը, սակայն շատ խնդիրներ այս բնագավառում դեռևս մնում են չլուծված, մասնավորապես շենքերի ու շինությունների բարձր խոցելիությունը:<br>**1.2Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սույն ծրագրի իրականացումը հնարավորություն կտա բարձրացնել ինչպես բնակչության, այնպես էլ պետական օրգանների պատրաստվածության մակարդակը դիմակայելու ուժեղ երկրաշարժերին, զգալիորեն ցածրացնել տարածաշրջանի սեյսմիկ ռիսկը, ապահովել ՀՀ տնտեսական և սոցիալական կայունությունը: Ծրագրի ընդունումը հնարավորություն կտա իրականացնելու ՀՀ քաղաքների բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման համակարգված աշխատանքներ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Բազմաբնակարան շենքերի սեյսմիկ ռիսկի գնահատման բաղադրիչների բազա, սեյսմիկ խոցելիության գնահատման նպատակով առաջնահերթ հետազոտվող շենքերի ցանկը: Օբյեկտների ուժեղացման առավել օպտիմալ տարբերակների առաջարկում, ինչը կսահմանափակի հակասեյսմիկ միջոցառումների կատարման ծավալը և ծախսերը: |
| | **76.3 «Հայաստանի Հանրապետության բնակչության տարբեր խմբերի և կառավարման մարմինների նախապատրաստման համար ուժեղ երկրաշարժի վերաբերյալ բազմակողմանի ուսուցողական ծրագրերի մշակման և ներդրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանի Հանրապետության սեյսմիկ ռիսկի նվազեցման իրավական դաշտի ամրագրում՝ (2002 թ. հուլիսի 6-ի «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՕ-376-Ն ՀՀ օրենք, հոդվածներ՝ 5, 12, 14, 25, 26):<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության բնակչության տարբեր խմբերի և կառավարման մարմինների նախապատրաստման համար ուժեղ երկրաշարժի վերաբերյալ բազմակողմանի ուսուցողական ծրա-գրերի մշակման և ներդրման կարգի սահմանում, սեյսմիկ պաշտպանության բնագավառում շահագրգիռ մարմինների հետ իրականացվելիք ծրագրերի արդյունավետ կազմակերպում և իրականացման գործընթացում ներգրավված պետական կառույցների աշխատանքների համակարգում:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության բնակչության տարբեր խմբերի և կառավարման մարմինների նախապատրաստման համար ուժեղ երկրաշարժի վերաբերյալ բազմակողմանի ուսուցողական ծրագրերի մշակում և ներդրում: Բնակչության տարբեր տարիքային խմբերի և կառավարման մարմինների իրազեկության բարձրացում և սեյսմապաշտպանության վարքականոնների ուսուցում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվում են սեյսմիկպաշտպանության ոլորտում շահագրգիռ մարմինների համակարգված աշխատանքներ, սեյսմիկ ռիսկի նվազեցմանն առնչվող հարցերում պետական կառավարման հանրապետական, տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների և գիտական ու այլ կազմակերպությունների միջև համագործակցության զարգացում: |
| 77 | **77.1 Արտակարգ իրավիճակներում բնակչության վարքականոնների վերաբերյալ դասընթացների, վարժանքների ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում**<br>**77.2 Տավուշի մարզի 11 սահմանամերձ համայնքների քաղաքացիական պաշտպանության թիմերի անդամների վերապատրաստում և առաջին օգնության գիտելիքների թարմացում, համալրված անդամների ուսուցում, առաջին օգնության գույքի տրամադրում**<br><br>1. **Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը և նպատակը՝**<br>Արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ բնակչության վարքականոնների վերաբերյալ գիտելիքների, հմտությունների ձևավորումը՝ այդ թվում առաջին օգնության հմտություններին տիրապետելը: Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հարցերով բնակչության իրազեկվածության և կրթվածության մակարդակի բարձրացումը բխում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 20-րդ հոդվածների, |

| | |
|---|---|
| | «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 11-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված մի շարք որոշումների պահանջներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները՝**<br>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությանը սպառնում են բազմաբնույթ վտանգներից բնածին, տեխնածին, սոցիածին և այլ արտակարգ իրավիճակներ, ուստի վերոգրյալ խնդիրը խիստ արդիական է, քանի որ նման իրավիճակներից և ռազմական դրությունից կարող են լինել տարաբնույթ կորուստներ (մարդկային, տնտեսական, նյութական, մշակութային):<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները՝**<br>Բնակչության մոտ ձևավորված անհրաժեշտ հմտությունների, վարքականոնների վերաբերյալ գիտելիքները, ինչպես նաև արտակարգ իրավիճակներին պատրաստվածության վերաբերյալ գիտելիքների առկայությունը կապահովի իրազեկվածության և պատրաստվածության համապատասխան մակարդակ:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը՝**<br>Միջոցառումից ակնկալվող արդյունքը՝ արտակարգ իրավիճակներում և ռազմական գործողությունների ժամանակ անհրաժեշտ վարքի կանոններ և պահելաձև ձևավորած քաղաքացիներ, սահմանամերձ համայնքների քաղաքացիական պաշտպանության վերապատրաստված՝ առաջին օգնության գիտելիքներով վերազինված կազմավորումներ: |
| **78** | **78.1 «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br>**78.2 «Առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Կառավարության որդեգրած քաղաքականության համաձայն՝ Կառավարությունը կարևորում է բնական և տեխնածին աղետների արդյունավետ կանխատեսումն ու վաղ ազդարարումը, դրանց արագ արձագանքման համակարգի կատարելագործումը, արտակարգ իրավիճակներում բնակչության իրազեկվածության ու կրթվածության մակարդակի բարձրացումը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներին պատկանող վտանգավոր օբյեկտները, որոնք իրենց բնութագրիչներով համապատասխանում են «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին և դիտարկվում են որպես ԱՎՕ-ներ, դասակարգված չեն ըստ վտանգավորության աստիճանների և դրանց նկատմամբ չի իրականացվում տեխնիկական անվտանգության խստացված փորձաքննություն:<br>**Կախված** ԱՎՕ-ներ**ում տեղի ունեցող վթարների պոտենցիալ վտանգավորության աստիճանից, հասարակության և անձի կյանքի կենսական շահերի պաշտպանության համար,** միջազգային, միջպետական նորմերին համապատասխան **օրենքում բացակայում են** ԱՎՕ-ների վտանգավորության աստիճանի դասերը: Վիճակագրությունը ցույց է տվել, որ արտակարգ իրավիճակների առաջացման հնարավոր պատճառներն առկա են մեծամասամբ առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտներում, որոնց տեխնածին վթարների կամ արտադրական պատահարների արդյունքում կարող են գրանցվել անդառնալի հետևանքներ: Նշված տեխնածին վթարների և արտադրական պատահարների արդյունքում ֆիզիկական անձանց պատճառված վնասների փոխհատուցման մեխանիզմները ներկայումս գործող օրենսդրական կարգավորումներով բացակայում են: Նշված խնդիրների կարգավորումը հնարավոր է ոլորտում օրեննդրական դաշտի կարգավորմամբ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով, որ Արտակարգ իրավիճակների նախարարությունը տեխնիկական անվտանգության ոլորտում իրականացվող փորձաքննությունների պատշաճ կատարման համար կրում է ՀՀ Սահմանադրությամբ սահմանված պատասխանատվություն, պարտավոր է ապահովել այդ փորձաքննությունների որակն ու դրանից բխող անվտանգությունը, ուստի որպես ոլորտում քաղաքականությունը մշակող պետական լիազոր մարմին անհրաժեշտ է համարում առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների փորձաքննությունն իրականացվի բացառապես պետական մակարդակով: Բնական և տեխնածին աղետների արդյունավետ |

կանխատեսման և վաղ ազդարարման նպատակով առաջարկվում է առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների համար պարտադիր դարձնել հրդեհային և հրդեհապայթյունավտանգավորության փորձաքննությունը, որը նույնպես պետք է իրականացվի պետական մակարդակով:

Միջոցառման շրջանակներում անհրաժեշտ է՝

1. Ըստ վտանգավորության աստիճանի ներդրվի առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների պարտադիր ապահովագրությունը.
2. Առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների տեխնիկական, հրդեհային անվտանգության և հրդեհապայթյունավտանգավորության փորձաքննության իրականացումը պետական մակարդակով.
3. Ներդրվի փորձագետների մասնագիտական պատասխանատվության պարտադիր ապահովագրման ինստիտուտը.
4. Սահմանվի պատասխանատվության հստակ միջոցներ օրենքի դրույթների խախտման համար:

**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացումից ակնկալվում է առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների շահագործման նկատմամբ խիստ հսկողություն, որը պետք է իրականացվի պետության կողմից համապատասխան փորձաքննությունների իրականացմամբ, ինչով կկանխարգելվի այդ օբյեկտներում հնարավոր տեխնածին վթարների և արտադրական պատահարների առաջացումը:

Ակնկալվում է նաև ապահովագրական կազմակերպությունների կողմից փոխատուցման մեխանիզմների ներդրում նշված վթարների կամ փորձագետի մասնագիտական գործունեության հետևանքով անձանց պատճառված վնասների փոխհատուցման համար: Պարտադիր ապահովագրության հետ կապված իրավական կարգավորումների մշակման գործընթացում մասնակցություն պետք է ունենա Կենտրոնական բանկը:

Միջոցառման իրականացման համար որպես համակատարող ներգրավված Կենտրոնական բանկի կողմից մշակվելու են պարտադիր ապահովագրության հետ կապված մեխանիզմները և համապատասխան իրավադրույթները:

**78.3«Վերելակային տնտեսության մեջ տեխնիկական անվտանգության ապահովման և պետական կարգավորման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հայեցակարգը կհանդիսանա Հայաստանի Հանրապետությունում շահագործվող վերելակային տնտեսության նկատմամբ տեխնիկական անվտանգության ապահովման և տեխնիկական պետական հսկողության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության նոր մոտեցումներն ու ոլորտում իրականացվող պետական քաղաքականության սկզբունքները արտացոլող փաստաթուղթ:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետությունում շահագործվող վերելակային տնտեսությունը գտնվում է անմխիթար վիճակում, վերելակների գերակշռող մասը շահագործվում են սպառված ծառայության ժամկետներով, որոնք ժամանակին նորերով չփոխարինելու դեպքում կարող են վերածվել կամ արդեն վերածվել են շահագործող անձնակազմի, բազմաբնակարան բնակելի շենքերի և ազգաբնակչության համար վտանգավոր ռիսկերի, դիտարկվել որպես տեխնածին վթարների, դժբախտ դեպքերի և այլ ռիսկերի ծագման հնարավոր հավանական աղբյուրներ:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Անհրաժեշտություն է որպեսզի անցյալ դարի կեսերից մինչև օրս Հայաստանի Հանրապետությունում շահագործվող վերելակային տնտեսության համար նպատակաուղղված հստակ քաղաքականություն իրականացվի և մշակվի երկարաժամկետ միջոցառումների ծրագիր վերելակները միջազգային նորմերով սահմանված անվտանգության պահանջներին համապատասխան նորերով փոխարինելու:

**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**

Վերելակների անվտանգ շահագործման տեխնիկական անվտանգության պահանջները ներդաշնակեցնել Եվրոպական միության (ԵՄ), անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) անդամ պետությունների, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ)՝ միջազգային և միջպետական նորմերին ու չափանիշներին: Վերելակների շահագործման հետ կապված տեխնածին վթարների, դժբախտ դեպքերի և պատահարների նվազեցում,կանխարգելում և բացառում:

79

**79.1 ՌԴ ուսումնական հաստատություններում և Ռուս-հայկական հումանիտար արձագանքման կենտրոնում ԱԻՆ փրկարար ծառայության անձնակազմի որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում ՌԴ մասնագետների ներգրավմամբ, այդ նպատակով բազմաֆունկցիոնալ վարժահրապարակի կառուցում**

**79.2 Ռուս-հայկական հումանիտար արձագանքման կենտրոնի տարածքի ցանկապատում և տեսադիտարկման համակարգի ներդրում, ճանապարհների ասֆալտապատում**

**Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ, ՌԴ և երրորդ երկրների տարածքում ծագած արտակարգ իրավիճակների արձագանքման նպատակով ՀՀ և ՌԴ կառավարությունների կողմից ստորագրված համաձայնագրով ստեղծված «Ռուս-Հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն» միջկառավարական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՌՀՄԱԿ կամ Կենտրոն) շարունակական զարգացման անհրաժեշտությամբ և նպատակ ունի ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումների ժամանակակից տեխնիկայով հագեցման և հրշեջ-փրկարարների մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների կատարելագործման միջոցով բարձրացնել արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պաշտպանվածության մակարդակը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Կենտրոնը հիմնադրվել է 2015 թ. մայիսի 19-ին՝ Մոսկվայում ստորագրված «Ռուս-Հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի ստեղծման մասին» միջկառավարական համաձայնագրի հիման վրա: Կենտրոնը ստեղծվել է կողմերի պետությունների մասնային վճարների հիման վրա: Այն իր մեջ ներառում է ՀՀ և ՌԴ բյուջետային միջոցները, ինչպես նաև կողմերի պետությունների կողմից օգտագործման իրավունքով Կենտրոնին տրամադրված շարժական և անշարժ գույքը: Ըստ Համաձայնագրի հայկական կողմը տրամադրել է համապատասխան տարածք, շենքեր, շինություններ, իրականացնում է Կենտրոնի սպասարկման և պահպանման ծախսերը: Ռուսական կողմը տրամադրում է արտակարգ իրավիճակների արձագանքման համար անհրաժեշտ հրշեջ-փրկարարական տեխնիկա, սարքավորումներ, գործիքներ, գույք և սարքավորումներ: Կենտրոնը տեղակայված է ՀՀ Կոտայքի մարզի Գետարգել համայնքում գտնվող (նախկին «Ռադիոկայան 1» հիմարկի) ավելի քան 17 հա տարածքում, ունի վարչական և օժանդակ 4 շինություններ, պահեստային և տեխնիկայի կայանման շինություններ:

Ռուսական կողմն ամբողջությամբ կատարում է Միջկառավարական համաձայնագրով իրեն վերապահված պարտավորությունները: Արդեն իսկ ձեռք է բերվել ավելի քան 16 մլն. դոլար ընդհանուր արժեքի 42 անվանում հրշեջ և փրկարարական տեխնիկա, սարքավորումներ, գործիքներ տարբեր նշանակության գույք և 282 տ. սննդամթերք: 42 անվանումից 37 անվանում գույքը փոխանցվել է ԱԻՆ ստորաբաժանումներին: Անցած տարիների ընթացքում ռուսական կողմի ֆինանսավորմամբ ՌԴ ԱԻՆ մասնագիտացված ուսումնական հաստատություններում և Կենտրոնում՝ ՌԴ մասնագետների ներգրավմամբ, ուսուցում են անցել ՀՀ ԱԻՆ ավելի քան 600 մասնագետներ: Կենտրոնի անձեռնմխելի պաշարներից 60տ. սննդամթերք Կարմիր Խաչի հայկական ընկերության միջոցով բաշխվել է ՀՀ կարիքավոր բնակչությանը, իսկ 100տ. սննդամթերը ՌԴ ԱԻՆ ավիացիայով և Կարմիր Խաչի և Կարմիր մահիկի միջազգային կազմակերպության օժանդակությամբ ուղարկվել է Սիրիայի Արաբական Հանրապետության պատերազմից տուժած ազգաբնակչությանը, այդ թվում և հայկական համայնքին:

2019-2021 թթ. համար ռուսական կողմը՝ տեխնիկայի, սարքավորումների, գույքի ձեռքբերման և ՀՀ ԱԻՆ մասնագետների ուսուցման կազմակերպման նպատակով, կներդնի ևս ավելի քան 10 մլն. դոլար:

Դրան զուգահեռ հայկական կողմը ոչ լրիվ ծավալով է կատարել Միջկառավարական համաձայնագրով ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ Կենտրոնի տարածքը ցանկապատված է մասնակի, պահեստների հատվածն ասֆալտապատված չէ, միջոցներ չեն տրամադրվել հրշեջ-փրկարարների պատրաստման համար վարժահամալիրի կառուցման նպատակով, չկան միջոցներ շենքերի ընթացիկ վերանորոգումների համար:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առկա խնդիրների լուծման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- ՌՀՄԱԿ տարածքի ցանկապատում և տեսադիտարկման համակարգի ներդրում,
- ՀՀ ԱԻՆ մասնագետների վերապատրաստում ՌԴ ԱԻՆ ուսումնական հաստատություններում և ՌՀՄԱԿ տարածքում՝ ՌԴ մասնագետների ներգրավմամբ,

| | |
|---|---|
| | բազմաֆունկցիոնալ վարժահրապարակի կառուցում:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Առկա խնդիրների լուծման դեպքում հայկական կողմը կատարած կլինի Միջկառավարական համաձայնագրով ստանձնած իր պարտականությունները.<br>- ՌՀՄԱԿ տարածքի ցանկապատումը և տեսադիտարկման համակարգի ներդրումը կպապահովի պահեստներում առկա նյութական արժեքների հուսալի պահպանությունը,<br>- ՀՀ ԱԻ նախարարությունը կունենա բարձրակարգ փրկարարներով համալրված, արտակարգ իրավիճակների արձագանքմանը պատրաստ ստորաբաժանումներ: |
| 80 | **80.1 Համայնքներին սպառնացող վտանգների դասակարգում ըստ առաջնայնության՝ վտանգների, խոցելիության և կարողությունների վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա**<br>**80.2 Համայնքներում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների դասակարգում՝ համայնքի բյուջետային միջոցներին համապատասխան**<br>**80.3 Համայնքային զարգացման ծրագրերի վերանայում՝ աղետների ռիսկի նվազեցման բաղադրիչի ներառման նպատակով**<br>**1. Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման նպատակն է բարձրացնել համայնքների դիմակայունությունը՝ ներառելով աղետների ռիսկի կառավարման բաղադրիչը համայնքների զարգացման ծրագրերում: Վերջինիս համար հիմք պետք է հանդիսանա ԱՌՆ Սենդայի 2015-2030թթ. գործողությունների ծրագրի հետևյալ գերակայությունները՝<br>- աղետների ռիսկի գիտակցում<br>- աղետների ռիսկի պետական կառավարման հզորացում՝ աղետների ռիսկի հաղթահարման համար<br>- ներդրում աղետների ռիսկի նվազեցման ոլորտում՝ դիմակայունության բարձրացման համար:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համայնքների զարգացման ծրագրերում վեր են հանված համայնքների սպառնացող վտանգները և դրանց հետևանքներից բնակչությանը, ենթակառուցվածքներին և տնտեսությանը հասցված վնասները: Բայց ծրագրում առկա չեն վեր հանված սպառնալիքների և վտանգների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Ինչը համայնքը դարձնում է խոցելի, անպաշտպան:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համայնքներին սպառնացող վտանգների ինչպես նաև աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների դասակարգումը՝ համայնքի բյուջետային միջոցներին համապատասխան թույլ կտա իրականացնելու աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումներ: Այդ նպատակով անհրաժեշտություն կառաջանա վերանայելու համայնքների զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերը, մարզերի զարգացման ռազմավարությունները, դրանց մեջ աղետների ռիսկի կառավարման բաղադրիչի ներառումը:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքն է՝ Հայաստանը դարձնել աղետներին դիմակայուն երկիր՝ նվազեցնելով աղետներից մարդկանց կյանքին և առողջությանը, երկրի տնտեսությանը և համայնքներին սպառնացող կորուստներն ու վնասները՝ ձևավորելով ամուր հիմքեր երկրի կայուն զարգացման համար: |
| 81 | **81.1 Առավել վտանգավոր սողանքային տեղամասերի պարբերական դիտարկումների իրականացում, առկա թվով 131 ակտիվ սողանքներից 14-ի գործիքային հետազոտություն**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հանրապետությունում սողանքային աղետի հետ կապված հիմնախնդրի կարգավորումն ունի ռազմավարական նշանակություն, պահանջում է կառավարության միջամտություն և վերահսկողություն՝ ապահովելու համար հանրապետության սողանքավտանգ տարածքներում գտնվող բնակավայրերի կայուն զարգացումը, ենթակառուցվածքների և կենսաապահովման օբյեկտների անխափան և անվտանգ շահագործումը՝ դրանով իսկ ապահովելով տնտեսության բնականոն գործառումը և սողանքների հետևանքով հասցվող վնասների նվազեցումը: Միջոցառման հիմք է հանդիսանում «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքները:<br>**1. 1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սողանքային աղետից պաշտպանությունը բարդ ինժեներատեխնիկական համալիր խնդիր է, որը պահանջում է |

| | |
|---|---|
| | մեծ ֆինանսական ներդրումներ: Ուստի խնդրի լուծումն ակնկալում է համալիր ու համակարգված մոտեցում, որի հիմքում պետք է դրված լինի սողանքային պրոցեսների մշտադիտարկման /մոնիտորինգ/, կանխատեսման և կանխարգելման սկզբունքը: Տնտեսության սահմանափակ ֆինանսական հնարավորությունները, անհրաժեշտ կադրերով և տեխնիկական միջոցներով համալրված մասնագիտական կազմակերպությունների բացակայությունը, եղածների սահմանափակ հնարավորությունները լուրջ խոչնդոտներ են սողանքային աղետի կառավարման գործընթացում:<br>**1. 2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առավել վտանգավոր սողանքային տեղամասերի պարբերական դիտարկումները մշտական հսկողություն կապահովվեն սողանքային սպառնալիքի կամ ակտիվացման նկատմամբ: Թվով 14 սողանքների գործիքային ուսումնասիրությունների արդյունքում կիրականացվի սողանքային երևույթների կանխարգելում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացումը հնարավորություն կտա օպերատիվ արձագանքելու, մշակել, կազմակերպել և իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ, բարձրացնել համայնքների դիմակայունությունը: |
| 82 | **82.1 «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության իրականացման գործընթացի մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային համակարգի ներդրման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br>**82.2 Մոնիթորինգի համակարգի փորձարկում, ուսուցում, ներդրում**<br>**1. Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Նախագահի 2007.թ փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության «Բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների՝ ժամանակակից մոնիտորինգով և կանխարգելմամբ զբաղվող միջազգային կառույցներում ներգրավումը, բնական և տեխնածին վտանգների հուսալի կանխատեսումը, կանխարգելումն ու չեզոքացումը, քաղաքաշինական համակարգերի անվտանգության, հուսալիության և կայունության ապահովում» կետը, Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030 թվականների գործողությունների ծրագիրը և Կայուն զարգացման համաշխահային նպատակները, 2015-2016թթ. ընթացքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) առաջնորդությամբ և «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի գործընկերների աջակցությամբ մշակվեց և ՀՀ Կառավարության հաստատմանը ներկայացվեց Հայաստանի աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) ազգային ռազմավարությունը: 2017 թ. ապրիլին ԱՌԿ ռազմավարությունն արժանացավ ՀՀ կառավարության հավանությանը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ռազմավարության գործընթացի մոնիթորինգի և գնահատման համար «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի ներքո, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ստեղծվում են մոնիթորինգի և գնահատման աշխատանքային խմբեր:<br>Հաջորդ քայլով, 2018թ. ընթացքում սույն ռազմավարությունը մշակող թիմը ձեռնամուխ եղավ ԱՌԿ ազգային ռազմավարության իրականացման գործողությունների մոնիտորինգային ցուցանիշների մշակմանը: Մոնիտորինգային ցուցանիշների համակարգի նպատակն է ԱՌԿ ազգային ռազմավարության իրականացման գործողությունների իրավիճակային, ընթացիկ և շարունակական ուսումնասիրություն, վերլուծություն ու արդյունքների արձանագրման ապահովումը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Երրորդ քայլով 2018-2019թթ. ընթացքում ԱՌԿ ազգային ռազմավարության իրականացման իրավիճակային, ընթացիկ և շարունակական ուսումնասիրությունն ու արդյունքների արձանագրման ապահովումը ավտոմատացնելու, համակարգելու, վերլուծելու և սույն տեղեկատվությամբ զբաղվող կառույցների, ստորաբաժանումների աշխատանքը հեշտացնելու նպատակով՝ ԱՌՆԱՊ հիմնադրամի և ՄԱԶԾ-ի նախաձեռնությամբ, ինչպես նաև ՀՀ ԱԻՆ աշխատակիցների ներգրավվմամբ պատրաստվել է ԱՌԿ ազգային ռազմավարության տեղեկատվության կառավարման համակարգ:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Տեղեկատվության կառավարման համակարգը աշխատելու է առցանց տիրույթում: Այն նախագծված է այնպես, որ յուրաքանչյուր կառույց, որն ունի անելիք ԱՌԿ ազգային ռազմավարության ուղղությամբ, կարող է աշխատել միայն ռազմավարության այն կետերով, որոնցով ունի հստակ պարտավորություններ: Այն իրենից ներկայացնում է |

| | |
|---|---|
| | եռաշերտ համակարգ (տեղեկատվությունը մուտքագրող, տեղեկատվությունը վավերացնող և տեղեկատվությունը հաստատող): Կախված նրանցից, թե ռազմավարության որ կետին է վերաբերում տեղեկատվությունը՝ այն մուտքագրողը, վավերացնողը և հաստատողը կարող են լինել տարբեր կառույցներ: <br> Առցանց մոնիտորինգային համակարգը շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներին ներկայացնելու, ինչպես նաև համակարգից օգտվելու կարգը, և մեխանիզմները ուսուցանելու նպատակով՝ ԱՌՆԱՊ հիմնադրամը ՀՀ ԱԻՆ և ՄԱԶԾ աջակցությամբ ս.թ. փետրվարի 25-27-ը կազմակերպել և իրականացնում է եռօրյա իրահանգչային դասընթաց: Դասընթացը նախատեսված է ՀՀ ԱԻՆ-ի, ՀՀ ԱԻՆ ՓԾ Երևանի և մարզային փրկարարական վարչությունների և ԱՌՆԱՊ հիմնադրամի ներկայացուցիչների համար: |
| **83** | **83.1 Հրշեջ-փրկարար ջոկատների թվով 46 շենքերի մասնակի նորոգում** <br><br> **1. Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** <br> Փրկարար ծառայության ստորաբաժանումների զգալի մասն ունեն հիմնանորոգման, շենքային պայմանների բարելավման, փողրակների չորանոցների վերականգման, ավտոկայանատեղերի և տանիքների վերանորոգման, ինչպես նաև սանիտարահիգիենիկ նվազագույն պայմանների ապահովման կարիք: <br> **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Ստորաբաժանումներում հիմնական վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել շուրջ 30 տարի, իսկ ընթացիկ նորոգում՝ շուրջ 15 տարի, ինչի հետևանքով շատ ջոկատներում բացակայում են առօրյա ծառայության կազմակերպման համար անհրաժեշտ նվազագույն պայմանները:՝ փակ տանիք, ջեռուցվող ավտոկայանատեղ, սանհանգույց և այլն: <br> Վերանորոգման աշխատանքները ժամանակին չիրականացնելը հանգեցրել է հիմնանորոգման համար անհրաժեշտ ծախսերի տարեցտարի ավելացմանը: <br> **2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը** <br> Միջոցառման իրականացման արդյունքում կունենանք հրշեջ-փրկարար ջոկատների տարածքային ստորաբաժանումների շենքային բարելավված պայմաններ: |
| **84** | **84.1 «Բնակչության պատսպարման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը** <br><br> **1. Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը և նպատակը** <br> Միջոցառման հիմք է հանդիսանում «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը և «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի գ) կետը: Տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների, պահեստային կառավարման կետերի ֆոնդը պատրաստ վիճակում պահելը դարձնում է տվյալ ոլորտի գերակա խնդիրներից մեկը: Ռազմական դրության ժամանակ բնակչության պատսպարումը կազմակերպվում է ապաստարաններում, հակաճառագայթային, պարզագույն թաքստոցներում և մետրոպոլիտենի տարածքում: Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո բաց է մնացել քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների՝ մասնավորապես ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների իրավական կարգավիճակի հստակեցման հարցը, որի արդյունքում բազմաթիվ պաշտպանական կառույցներ օտարվել են, փոխվել է դրանց օգտագործման նպատակային նշանակությունը, և ներկայումս անհրաժեշտ է իրականացնել պաշտպանական կառույցների նախապատրաստում, կահավորում, պահպանում, բարեկարգում և դրանց արդիականացում: <br> **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների՝ մասնավորապես ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների իրավական կարգավիճակը հստակեցված չէ, որի արդյունքում բազմաթիվ պաշտպանական կառույցներ օտարվել են, փոխվել է դրանց օգտագործման նպատակային նշանակությունը: Անհրաժեշտության դեպքում բնակչության պատսպարումը հիմնականում նախատեսված է իրականացնել բնակելի շենքերի նկուղային հարկերում, որոնք ներկայումս մեծամասամբ զբաղեցված են բնակիչների կողմից և օգտագործվում են որպես խորդանոցներ: <br> **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգով խնդիրների կարգավորում: |

| | |
|---|---|
| | **2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Պաշտպանական կառույցների ֆոնդի կուտակում, գոյություն ունեցող կառույցների պահպանում, նախապատրաստումում և դրանց արդիականացում: |
| **85** | ***85.1 «Արտակարգ իրավիճակների նախարարության զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին » ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը***<br><br>**1. Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման հիմք է հանդիսանում ՀՀ Ազգային ժողովի 2019 թվականի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «2.2. Ներքին անվտանգությունը» բաժնում վեր հանված ԱԻ նախարարության ոլորտային խնդիրները: Մասնավորապես՝ Կառավարությունը կարևորում է է բնական և տեխնածին աղետների արդյունավետ կանխատեսումն ու վաղ ազդարարումը, դրանց արագ արձագանքման համակարգի կատարելագործումը, արտակարգ իրավիճակներում բնակչության իրազեկվածության ու կրթվածության մակարդակի բարձրացումը, ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների անվտանգության ապահովումը, նյութական արժեքների պետական պահուստի պահպանման, թարմացման, սպասարկման ու արդիականացման համար ֆինանսական միջոցների ուղղորդման միջոցառումները:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Աղետների ռիսկի նվազեցման գործառույթների ու չափորոշիչների ոչ բավարար չափով ներառումն երկրի զարգացման ծրագրերում, ֆինանսական սահմանափակ միջոցները, բնակչության իրազեկվածության ոչ բավարար մակարդակը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համակարգի կառավարման կարողությունների զարգացում, տեխնիկական միջոցների համալրում, ֆինասական միջոցների հայթայթում և այդ միջոցների նպատակային ներդրում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունք**<br>Նախագծի ընդունմամբ ակնկալվող արդյունքն է՝ Հայաստանը դարձնել աղետներին դիմակայուն երկիր՝ նվազեցնելով աղետներից մարդկանց կյանքին և առողջությանը, երկրի տնտեսությանը և համայնքներին սպառնացող կորուստներն ու վնասները՝ ձևավորելով ամուր հիմքեր երկրի կայուն զարգացման համար: |
| **Արտաքին գործերի նախարարություն** | |
| **86** | **86.1-86.21 ՀՀ կառավարության ծրագրի Արտաքին քաղաքականություն 2.3 բաժնից բխող միջոցառումների**<br>**Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը**<br>Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի արտաքին քաղաքականության դրույթների՝ միջազգային պարտավորությունների ու հանձնառությունների, այլ երկրների հետ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով հարաբերությունների զարգացման և արտաքին քաղաքական նախաձեռնությունների իրականացումը<br>**Միջոցառումների իրականացման նպատակը**<br>Միջոցառումների իրականացման նպատակը Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության պաշտպանությունն է, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովումը, Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության բարձրացումը, բոլոր պետությունների հետ փոխշահավետ հարաբերությունների հաստատումը, միջազգային ու տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ներգրավվածության ավելացումը, երկկողմ և բազմակողմ ձևաչափերում Հայաստանի կայուն զարգացմանը և տնտեսության արդիականացմանը, նոր շուկաների ձեռքբերմանը և դեպի Հայաստան և Արցախ ներդրումային ծրագրերի նախաձեռնմանը միտված ակտիվ գործունեության ծավալումը: |
| **Բնապահպանության նախարարություն** | |
| **87** | **Ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում,**<br>**Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանություն և կառավարում** |

**87.1 «Ջրային ռեսուրսների ողջամիտ օգտագործման և պահպանության նպատակով ջրային ռեսուրսների, այդ թվում Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների, քանակական, որակական գնահատում, տնտեսական արժեքի ձևավորում և հիդրոլոգիական ու քիմիական կանխատեսումների մշակում»**

*1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը*

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում» ուղղությունը:

Ջրային ռեսուրսները մեծ նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության համար: Ռազմավարության մշակման նպատակն է ջրային օրենսդրությամբ ամրագրված ջրային ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու պահպանության նպատակին ուղղված հստակ գործողությունների հերթականության ձևավորումը, ըստ ջրավազանային կառավարման տարածքների առանձնահատկությունների և ելնելով տվյալ շրջանի զարգացվածության միտումներից ջրային ռեսուրսների տնտեսական արժեքի ձևավորումը, ինչպես նաև ելնելով կլիմայի փոփոխության միտումներից ջրային ռեսուրսների կանխատեսումների մշակումը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

2002 թ.-ից ջրային ռեսուրսների կայուն և արդյունավետ կառավարման նպատակով Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, սակայն դեռևս առկա են բազմաթիվ մարտահրավերներ, որոնք ունեն հրատապ լուծման անհրաժեշտություն:

Ներկայումս ջրային ոլորտի բարեփոխումները գտնվում են անցումային ամենակարևոր փուլում, ինչը կապված է ջրային ռեսուրսների քանակական, որակական հստակ գնահատման, ջրային ռեսուրսի աղտոտումը և հյուծումը սպառնալիքների վերացման հետ: Միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել պետական բյուջեից, որի համար անհրաժեշտ է մոտ 96.000,0 հազ. դրամ:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Մշակվելիք ռազմավարության շրջանակներում հստակ կսահմանվեն ջրային ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու պահպանության առաջնահերթությունները և կտրվի հստակ ժամանակացույց ջրային ռեսուրսների որակական, քանակական հատկանիշների բարելավման ուղղությամբ, ինչպես նաև ըստ տարբեր բաղադրիչների կտրվի ջրային ռեսուրսի տնտեսական արժեքը, կմշակվեն հիդրոլոգիական, քիմիական, հիդրոկենսաբանական և այլ կանխատեսումները՝ ելնելով կլիմայի փոփոխությունից:

Ռազմավարության մշակման ընթացքում համակատարող ԷԵԲՊՆ ջրային կոմիտեն, իր իրավասությունների սահմաններում տրամադրում է ռազմավարության մշակման համար անհրաժեշտ տվյալներ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ռազմավարության մշակմամբ և ընդունմամբ կբարելավվեն ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և պահպանության մոտեցումները, որը իր հերթին դրական ազդեցություն կունենա ջրային ռեսուրսների հատկանիշների վրա

**87.2 «Սևանի և Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանների մշակում և նախագծերը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»**

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում» ուղղությունը:

Սևանի (Սևանա լիճն իր ջրհավաք ավազանով) և Հրազդանի (Հրազդան, Մարմարիկ, Քասախ և Ամբերդ գետերն իրենց ջրհավաքներով) ջրավազանային տարածքների կառավարման պլանների մշակումը իրականացվում է համապարփակ պլանավորման սկզբունքով, ինչը նպատակաուղղված է հավասարակշռելու ջրօգտագործողների՝ ներառյալ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության և գյուղատնտեսության փոխկապակցված

| | |
|---|---|
| | փոխհարաբերությունները: Ջրավազանային կառավարման պլանի նպատակն է հավասարակշռել ջրավազանում ջրի առաջարկը և պահանջարկը<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաձայն ՀՀ ջրային օրենսգիրքի, 2006թ. նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 2016-2017թ.թ. ընթացքում 6 ջրավազանային կառավարման պլաններից մշակվել և հաստատվել է 3-ը՝ Արարատյան,Հարավային և Ախուրյան ջրավազանային կառավարման պլանները: Սևանի և Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանները մշակման ընթացքում են:<br>Միջոցառման իրականացման ֆինանսավորման աղբյուրը «Արևելյան համագործակցության Եվրոպայի ջրային նախաձեռնություն պլյուս» (EUWI+) ծրագիրն է՝ կանխատեսվող չափը մոտ 50. 000,0 հազ. դրամ:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սևանի և Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանների մշակում և հաստատում:<br>Սևանի և Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանների մշակման ընթացքում համակատարող՝ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, գյուղատնտեսության, արտակարգ իրավիճակների, տարածքային կառավարման և զարգացման, առողջապահության, ֆինանսների, տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունները յուրաքանչյուրը իր իրավասությունների սահմանմաններում տրամադրում է պլանի նախագծի մշակման համար անհրաժեշտ տվյալներ: Մասնակցում են նախագծի մշակման ընթացքում կազմակերպվող քննարկումներին, լսումներին և տալիս եզրակացություններ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Սևանի, Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանների կազմումը կնպաստի համապատասխան ջրավազաններում ջրի ազգային ու ռազմավարական պաշարների հստակեցմանը, ջրի առաջարկի և պահանջարկի հավասարակշռմանը, որը իր հերթին կբերի ջրային ռեսուրսի արդյունավետ և ճիշտ կառավարմանը, ինչպես նաև ջրային ռեսուրսի խնայողությանը:<br><br>**<u>87.3 «Հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման պլանի մշակում և նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»</u>**<br><br>***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում» ուղղությունը:<br>Հյուսիսային (Դեբեդ, Աղստև գետերը՝ իրենց ջրհավաքներով, և Քուռ գետի վտակները՝ իրենց ջրհավաքներով) ջրավազանային տարածքի կառավարման պլանի մշակումը իրականացվում է համապարփակ պլանավորման սկզբունքով, ինչը նպատակաուղղված է հավասարակշռելու ջրօգտագործողների՝ ներառյալ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության և գյուղատնտեսության փոխկապակցված փոխհարաբերությունները: Ջրավազանային կառավարման պլանի նպատակն է հավասարակշռել ջրավազանում ջրի առաջարկը և պահանջարկը<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաձայն ՀՀ ջրային օրենսգիրքի, 2006թ. նոյեմբերի 27-ի«Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 2016-2017թ.թ. ընթացքում 6 ջրավազանային կառավարման պլաններից մշակվել և հաստատվել է 3-ը՝ Արարատյան,Հարավային և Ախուրյան ջրավազանային կառավարման պլանները: Մշակման ընթացքում է Սևանի և Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանները: Ներկայում Հյուսիսային ջրավազանային կառավարման պլանը մշակված չէ՝ համապատասխան միջոցների բացակայության պատճառով:<br>Միջոցառման իրականացման համար անհրաժեշտ է մոտ 34.000.0 հազ. դրամ, որի ֆինանսավորման աղբյուրը դեռևս հստակեցված չէ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման պլանի մշակում և հաստատում:<br>Հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման պլանի մշակման ընթացքում համակատարող՝ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, գյուղատնտեսության, արտակարգ իրավիճակների, տարածքային |

կառավարման և զարգացման, առողջապահության, ֆինանսների, տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունները յուրաքանչյուրը իր իրավասությունների սահմանմաններում տրամադրում է պլանի նախագծի մշակման համար անհրաժեշտ տվյալներ: Մասնակցում են նախագծի մշակման ընթացքում կազմակերպվող քննարկումներին, լսումներին և տալիս եզրակացություններ:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման պլանի կազմումը կնպաստի Հյուսիսային ջրավազանում ջրի ազգային ու ռազմավարական պաշարների հստակեցմանը, ջրի առաջարկի և պահանջարկի հավասարակշռմանը, որը իր հերթին կբերի ջրային ռեսուրսի արդյունավետ և ճիշտ կառավարմանը, ինչպես նաև ջրային ռեսուրսի խնայողությանը:

**87.4 «Գետի ինքնամաքրման կարողության գնահատման մեթոդը և վերջինիս կիրարկման մեխանիզմները սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»**

***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում» ուղղությունը և ՀՀ ջրային օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 23-ի N751-Ն որոշումը և «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի հավելվածի 6-րդ կետի համաձայն:

«Գետի ինքնամաքրման կարողության գնահատման մեթոդը և վերջինիս կիրարկման մեխանիզմները սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի պահանջից:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանում ջրային ռեսուրսները, հատկապես մակերևութային ջրերը, տնտեսության զարգացմանը զուգընթաց, առավել խոցելի են դարձել: Երկրում չի իրականացվում կենցաղային և արդյունաբերական և/կամ արտադրական կեղտաջրերի ամբողջական մաքրում, իսկ արդյունքում կեղտաջրերն հիմնականում առանց մաքրման թափվում են մակերևութային ջրային ռեսուրսներ, ոռոգման առուներ՝ աղտոտելով և դեգրադացնելով էկոհամակարգերը, վնաս հասցնելով մարդու առողջությանը: Կեղտաջրերի մաքրման բացակայության հետևանքով գետերի վերին հոսանքներում գտնվող հանգստի, զբոսաշրջության, սննդի օբյեկտների գործունեության արդյունքում վնասը հիմնականում հասցվում է ջրային էկոհամակարգերին: Այդ գետերի ստորին հոսանքները նույնպես օգտագործվում են որպես հանգստի գոտիներ, որտեղ մարդիկ անմիջապես շփվում են աղտոտված ջրի հետ: Գետի ինքնամաքրման կարողության գնահատման մեթոդի առկայությունը հնարավորություն կտա գնահատելու գետի ինքնամաքրման կարողությունը, կանոնակարգելու գետը աղտոտող տնտեսական օբյեկտների գործունեությունը, մեղմելու կամ կանխելու գետերի աղտոտումը: Համակատարող գերատեսչությունները մասնակցում են կազմակերպվող քննարկումներին, ներկայացնում են ոլորտային մասնագիտական կարծիքներ:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Նախագծի ընդունումը կնպաստի գետի աղտոտման կանխմանը, գետային էկոհամակարգի պահպանությանը, գետի ջրի որակի բարելավմանը:

**87.5 «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար արգելված գետերի ցանկը հաստատելու մասին» Կառավարության նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»**

***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության

Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում» ուղղությունը, ՀՀ ջրային օրենսգրքի 10-րդ հոդվածի 10-րդ և 15-րդ կետերը և 30.1 հոդվածը և «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի հավելվածի 6-րդ կետի համաձայն:

«Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար արգելված գետերի ցանկը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի պահանջից:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Փոքր հիդրոէլեկտրակայանների շինարարությունը էական վնաս է հասցնում բնությանը: Փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացմանը զուգընթաց նկատվում է կենսաբազմազանության կորուստ, վտանգվում են Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակները, գետերը ծանրաբեռնվում են դերիվացիոն խողովակներով և հայտնվում ճգնաժամային վիճակում: Ստեղծված բնապահպանական խնդիրները լուծելու, ջրօգտագործման ժամանակ ջրաէկոհամակարգի պահպանությունը և հավասարակշռությունը ապահովելու համար անհրաժեշտ է սահմանել փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար արգելված գետերի ցանկը, որով կկանխարգելվի շրջակա միջավայրի վրա փոքր հիդրոէլեկտրակայանների վնասակար ազդեցությունը, կնպաստի գետերի ծանրաբեռնվածության կանխմանը, գետային էկոհամակարգի պահպանությանը: Համակատարող գերատեսչությունները մասնակցում են կազմակերպվող քննարկումներին, ներկայացնում են ոլորտային մասնագիտական կարծիքներ:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Նախագծի ընդունումը կնպաստի գետերի ծանրաբեռնվածության կանխմանը, գետային էկոհամակարգերի պահպանությանը և հավասարակշռության ապահովմանը:

**88** **Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնում և պահպանություն**

**88.1 «Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացում»**

***1. Միջոցառման իրակացման անհրաժեշփությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռութ-յան վերականգնում և պահպանություն. Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանություն և կառավարում» ուղղությունը:

2001 թվականի դեկտեմբերի 14-ին ընդունված «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով 5000 հա ջրածածկման ենթակա անտառածածկ տարածքների մաքրման աշխատանքներ:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

2005-2018 թվականների ընթացքում մաքրվել է 2064.17 հա, որից 1740,23 հա մաքրվել է ՀՀ պետ. Բյուջեից հատկացված միջոցներով, իսկ 323.94 հա ջրածածկի ենթակա անտառածածկ տարածք մաքրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և ֆիզիկական անձանց միջև կնքված ջրածածկի ենթակա անտառների մաքրման պայմանագրերով:

Դեռևս առկա է ջրածածկի ենթակա 2935.83 հա անտառածածկ տարածք, որից 111.7 հա արդեն իսկ ջրածածկ եղած ու անտառներից չմաքրված և 72.9 հա ճահճացած տարածքներ են:

Աշխատանքներն իրականացվելու են պետական բյուջեի միջոցների հաշվին՝ 351186.0հազ. դրամ գումարով, այդ թվում՝ 2019թ.՝ 117062.0 հազ. դրամ, 2020թ.՝ 117062.0 հազ.դրամ, 2021թ.՝ 117062.0 հազ.դրամ:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Սևանա լճի ջրի որակի վրա խիստ բացասական ազդեցություն ունեն ջրածածկված անտառային տարածքները, որտեղից հեռացված չեն ջրի տակ մնացած ծառերը, թփերը, կոճղերը և այլն, ինչպես նաև ջերմաստիճանը և ջրհավաք ավազանից մուտք գործած կենսածին տարրերը: Ջրի տակ գտնվող ծառերի, թփերի ու

կոճղերի նեխման և փտման գործընթացը նպաստում է լճի ճահճացմանը (օր. 2018թ. ամռանը լճում տեղի ունեցած կապտականաչ ջրիմուռների ծաղկումը):

Այդ պատճառով ներկայումս հրատապ է 111.7 հա արդեն իսկ ջրածածկ եղած ու անտառներից չմաքրված և 72.9 հա ճահճացած տարածքների մաքրումը:

*2 Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*

Անտառմաքրման աշխատանքների իրականացման արդյունքում լճի մակարդակի բարձրացման հետևանքով կկանխարգելվի Սևանա լճի ջրի որակի վատթարացումը և լճի ճահճացումը:

Աշխատանքներ են տարվում անտառմաքրման աշխատանքներում օրենքով չարգելված ֆինանսական այլ աղբյուրներ ներգրավելու ուղղությամբ, ինչը նախատեսվածից ավելի մեծ ծավալներով մաքրման աշխատանքներ իրականացնելու հնարավորություն կընձեռի:

89

**Անտառների կայուն կառավարում, անտառածածկ տարածքների ընդլայնում, անտառվերականգ-նում և անատառապատում, դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական զարգացում**

**89.1 «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»**

*1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը*

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Անտառների կայուն կառավարում, անտառածածկ տարածքների ընդլայնում, անտառվերականգնում և անատառապատում, դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական զարգացում» ուղղությունը:

«Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է իրավական նոր հիմքեր ամրագրելու հանգամանքով, ըստ որոնց անտառները կկառավարվեն բնական միջավայրին համապատասխան, անտառային տարածքների հետևողական ընդլայնմամբ, անտառային պաշարների բնական, շարունակական և անսպառ օգտագործմամբ:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ անտառային օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանվում են ըստ հիմնական նպատակային նշանակության անտառների դասակարգման դրույթներ, որը հակասության մեջ է գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի հետ, մասնավորապես՝ անտառային հողերի գործառնական նշանակությունը սահմանվում է ՀՀ անտառային օրենսգրքով: Բացի նշվածից ՀՀ անտառային օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասով պահանջվում է, որ ըստ հիմնական նպատակային նշանակության՝ անտառների դասակարգման կարգը սահմանի ՀՀ կառավարությունը, ինչը գործնականորեն հնարավոր չէ:

ՀՀ անտառային օրենսգրքում բացակայում են անտառային տնտեսության վարման իրականացումն ապահովող դրույթներ, ինչպես նաև այնպիսի կարևոր սահմանափակումներ, որոնք կխոչընդոտեն անտառային հողերի տարածքների կրճատմանը:

ՀՀ անտառային օրենսգրքում չեն նախատեսվում անտառային տնկադաշտերի հիմնման, անտառային և տնկարանային տնտեսության կազմակերպման նպատակներով անտառօգտագործման դրույթներ և այլն:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՀՀ անտառային օրենսգրքի վերանայում և համապատասխանեցում ոլորտային ներկա քաղաքականությանը: Անտառային տնտեսության վարման իրականացումն ապահովող դրույթների ամրագրում, ինչպես նաև անտառային հողերի տրամադրման սահմանափակումների ամրագրում, նոր անտառօգտագործման դրույթների ամրագրում՝ կապված տնկարանային տնտեսությունների կազմակերպման հետ:

*2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*

Անտառային ոլորտի իրավական դաշտի կատարելագործում, լիազորությունների հստակեցում, անտառային տնտեսության վարման համակարգի բարեփոխում:

**89.2 «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «անտառտնտեսություն» մասնաճյուղերի համար անտառակառավարման**

**պլանների մշակում և հաստատում նախարարի հրամանով»**

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Անտառների կայուն կառավարում, անտառածածկ տարածքների ընդլայնում, անտառվերականգնում և անատառապատում, դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական զարգացում» ուղղությունը, ՀՀ Անտառային օրենսգրքի 15-րդ հոդվածը և համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի հավելվածի 6-րդ կետի:

Անտառային տնտեսության վարման հիմք է հանդիսանում անտառաշինական նախագիծը (անտառակառավարման պլանը), որն իրենից ներկայացնում է անտառաշինության արդյունքում մշակված և հաստատված տեխնիկական փաստաթուղթ: Անտառաշինական նախագծում պլանավորվում է անտառային տնտեսության վարման առաջիկա 10 տարիներին իրականացվելիք միջոցառումները:

**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ գյուղատնտեսության նախարարի 16 նոյեմբերի 2017 թվականի N253-Ա հրամանով անտառաշինական նախագծերը սառեցվել են, և ներկայումս անհրաժեշտություն է առաջացել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 19 «անտառտնտեսություն» մասնաճյուղերի համար մշակել և հաստատել նոր անտառաշինական նախագծեր (անտառակառավարման պլաններ): Անտառակառավարման պլանների բացակայությունը լուրջ խոչընդոտ է հանդիսանում անտառների կայուն կառավարման համար:

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին և կկազմեն 432349,5 հազ. դրամ, որից 2019թ. համար պետական բյուջեում նախատեսվել է 113677,2 հազ. դրամ և 2020թ.՝ 318.672.3հազ.դրամ:

**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Անտառաշինական նախագծերի (անտառակառավարման պլանների) մշակում և հաստատում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 19 «անտառտնտեսություն» մասնաճյուղերի համար:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Անտառակառավարման պլանների մշակումը և հաստատումը թույլ կտա հստակեցնել անտառային տարածքների սահմանները, անտառների ներկա վիճակը և պլանավորել անտառային տնտեսության վարման առաջիկա 10 տարիների համար անհրաժեշտ միջոցառումները:

**89.3 «Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների կազմակերպում, այդ թվում անտառային տնկարանների հիմնում և սերմնային տնտեսության զարգացում»**

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Անտառների կայուն կառավարում, անտառածածկ տարածքների ընդլայնում, անտառվերականգնում և անատառապատում, դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական զարգացում» ուղղությունը:

ՄԱԿ–ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի շրջանակներում ընդունված «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ներդրումը» (INDC) փաստաթղթով (ՀՀ կառավարության 10.09.2015թ. N41 արձանագրային որոշում) Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է միջազգային պարտավորություն մինչև 2050 թվականը երկրի անտառապատվածությունը ներկայիս 11.2 %-ի փոխարեն հասցնել օպտիմալ 20.1%-ի:

**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակների որակյալ տնկանյութ, ինչի համար պետք է զարգացնել տնկարանային և սերմնային տնտեսությունները: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական

բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին և կկազմեն 2618187.8 հազ. դրամ:

2019 թվականին նախատասեվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում իրականացնել շուրջ 800 հա անտառվերականգնման և անտառապատման և տնկարանների հիմնման աշխատանքներ, ինչի համար պետական բյուջեից հատկացվել է 425842.8 հազ. դրամ:

2020-2022թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված է 2192345.0հազ. դրամ, որից 2020թ.՝ 539520.0 հազ. դրամ, 2021թ.՝ 706233.0 հազ. դրամ, 2022թ,՝ 946592.0 հազ. դրամ:

**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Անտառվերականգնման և անտառապատման ենթակա տարածքների ընտրություն (անտառակառավարման պլանների առկայության դեպքում հիմք ընդունելով կառավարման պլանի տվյալները), նախագծում և կազմակերպում, անտառային տնկարանների հիմնում և սերմնային տնտեսության զարգացում: Անհրաժեշտ քանակությամբ որակյալ տնկանյութ ստանալու նպատակով ջերմոցային համալիրներ են հիմնվելու Լոռու մարզում 2 հատ, Սյունիքի մարզում 2 հատ, Կոտայքի մարզում ևս 2 հատ: Սերմերի և տնկանյութի երկարատև պահպանության համար անհրաժեշտ է ձեռք բերել սառնարաններ:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Անտառածածկ տարածքների ընդլայնում:

**89.4 «Անտառների կառավարման ոլորտում անտառպահպանության, անտառվերականգնման և անտառօգտագործման նորագույն տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում»**

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Անտառների կայուն կառավարում, անտառածածկ տարածքների ընդլայնում, անտառվերականգնում և անատառապատում, դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական զարգացում» ուղղությունը: Նորագույն տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերման նպատակն է բարձրացնել անտառների պահպանության արդյունավետությունը, նվազեցնել անտառխախտումների դեպքերը, կանխարգելել անտառային հրդեհները, ինչպես նաև նպաստել անտառային տնտեսության զարգացմանը և կայուն օգտագործմանը:

**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Անտառտնտեսություններում հակահրդեհային սարքավորումներով անբավարար հագեցվածություն:

Քանի որ Հայաստանը հանդիսանում է լեռնային երկիր, և անտառները գտնվում են հիմնականում թեք լանջերի վրա, ապա ներկայումս կիրառվող հնացած (դեռևս Խորհրդային Միության տարիներից) տեխնոլոգիաները թույլ չեն տալիս հատատեղերի շահագործումն իրականացնել էկոլոգիապես անվտանգ եղանակով, որը հանգեցնում է բազմաթիվ խնդիրների:

Անտառապատման աշխատանքները նույնպես հիմնականում կատարվում են ձեռքով, քանի որ տարածքները գտնվում են թեք լանջերի վրա և չկան համապատասխան (մեծ թեքությունների վրա աշխատող տրակտորներ և այլն) տեխնիկական միջոցներ:

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին և կկազմեն 1470900,0 հազ. դրամ:

2019թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել աշխատանքներ 461400,0 հազ. դրամի չափով:

**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Անտառպահախմբի աշխատողների ժամանակակից տեխնիկական և տրանսպորտային միջոցներով վերազինում (արտահագուստ, զենք, ձիեր, ամենագնաց մեքենաներ, ֆոտո և տեսախցիկներ, դրոններ, գիշերային տեսանելիության հեռադիտակներ և այլն), հրդեհների արագ արձագանքման խմբերի ստեղծում, անտառային որոշ հատվածներում փոքր ջրամբարների կառուցում, ուղեփակոցների, հակահրդեհային թեմաներով ցուցանակների տեղադրում և այլն:

Հատատեղերը էկոլոգիապես անվտանգ եղանակներով շահագործելու նպատակով անհրաժեշտ է ներդնել

| | |
|---|---|
| | լեռնային երկրներում կիրառվող՝ փայտանյութի մթերման նորագույն տեխնոլոգիաներ (անտառային ճոպանուղի (Cable crane), անիվավոր տրակտորներ և այլն), ինչպես նաև ստեղծել փայտանյութը վերամշակող ժամանակակից արտադրություններ՝ շարժական սղոցարաններ, փայտածուխի, մանրահատակի արտադրություններ և այլն:<br>***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Կնվազեն ապօրինի հատումները, անտառային հրդեհների դեպքերը, կբարձրանա անտառային ռեսուրսների օգտագործման և անտառապատման աշխատանքների արդյունավետությունը, կավելանան անտառային տնտեսության եկամուտները:<br><br>**<u>89.5 «Վնասատուներից և հիվանդություններից անտառների պաշտպանության նպատակով անտառպաթոլոգիական ուսումնասիրությունների իրականացում. անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի իրականացման կազմակերպում»</u>**<br><br>***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Անտառների կայուն կառավարում, անտառածածկ տարածքների ընդլայնում, անտառվերականգնում և անատառապատում, դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական զարգացում» ուղղությունը:<br>Միջոցառման իրականացման նպատակն է ապահովել անտառպաշտպանական աշխատանքների արդյունավետությունը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս «Հայանտառ» ՊՈԱԿ-ի շուրջ 11000 հա անտառներում առկա են վնասատուների և հիվանդությունների օջախներ, բացի այդ նկատվում են ասեղնատերևավոր ծառատեսակների մասսայական չորացման դեպքեր:<br>Աշխատանքները նախատեսվում է իրականացնել ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին և կկազմեն 437109.0հազ. դրամ, որից 2019թ. պետական բյուջեում նախատեսվել է 43710,9 հազ. դրամ: 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում նախատեսված է 393398.1հազ.դրամ, որից 2020թ.՝ 131132.7 հազ.դրամ, 2021թ.՝ 131132.7հազ.դրամ, 2022թ.՝ 131132.7հազ.դրամ գումար:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ իրականացնել բացառապես կենսաբանական պայքարի աշխատանքներ, ստեղծել համապատասխան լաբորատորիաներ և այլն:<br>***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Առողջ անտառների առկայություն:<br><br>**<u>89.6 «Անտառների կադաստրի ստեղծման և վարման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում, կադաստրի վարում»</u>**<br><br>***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Անտառների կայուն կառավարում, անտառածածկ տարածքների ընդլայնում, անտառվերականգնում և անատառապատում, դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական զարգացում» ուղղությունը:<br>Անտառների կադաստրի վարումն իրականացվում է անտառների կայուն կառավարման, անտառների քանակական և որակական փոփոխությունների պարբերական գրանցման, ինչպես նաև ՀՀ կառավարությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, շահագրգիռ իրավաբանական անձանց և քաղաքացիներին անտառային հողերի մասին տեղեկություններով ապահովելու նպատակով:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս անտառների կադաստրի վարման համակարգը դեռ չի ստեղծվել, ինչի արդյունքում անտառային |

| | |
|---|---|
| | և կադաստրային քարտեզներում առկա են մեծ քանակությամբ անճշտություններ և անհամապատասխանություններ, ինչի շտկման նպատակով ստեղծվելու է անտառների կադաստրի համակարգը:<br>Աշխատանքները նախատեսվում է իրականացնել ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին և կկազմեն 60000,0 հազ. դրամ, որից 2019թ. պետական բյուջեից հատկացվել է 15000,0 հազ. դրամ: 2020-2021թթ. 45000,0 հազ. դրամ գումարը նախատեսված է Միջնաժամկետ ծախսային ծրագրով (ՄԺԾԾ), որից 2020թ.՝ 15000.0հազ.դրամ, 2021թ.՝ 15000.0հազ.դրամ, 2022թ.՝ 15000.0հազ.դրամ:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անտառների կադաստրի վարման համար անհրաժեշտ հենքի ստեղծում:<br>***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Անտառների կադաստրի համակարգի ստեղծում և վարում:<br><br>**<u>89.7 «Անտառների պետական հաշվառում»</u>**<br><br>***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Անտառների կայուն կառավարում, անտառածածկ տարածքների ընդլայնում, անտառվերականգնում և անատառապատում, դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական զարգացում» ուղղությունը:<br>Անտառների պետական հաշվառումն իրականացվում է ՀՀ Անտառային օրենսգրքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ 5 տարին մեկ անգամ, անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման, որակական և քանակական փոփոխությունների գրանցման, տեղեկատվության տրամադրման, հաշվարկային հատատեղերի սահմանման, անտառների օգտագործման, զարգացման, անտառատնտեսական այլ միջոցառումների ծրագրավորման, ինչպես նաև անտառների նպատակային կամ գործառնական նշանակության փոփոխման նպատակով:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Անտառների պետական հաշվառումն իրականացվում է 5 տարին մեկ, սակայն 1993 թվականից հետո չի կատարվել ֆինանսական միջոցների, ինչպես նաև անտառների և անտառային տարածքների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության բացակայության պատճառով (ոչ բոլոր անտառտնտեսություններն ունեին անտառակառավարման պլաններ):<br>**1. 2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանում անտառների պետական հաշվառում վերջին անգամ իրականացվել է մոտ 15 տարի առաջ, ինչի արդյունքում առկա տվյալները կորցրել են իրենց արդիականությունը և անհրաժեշտություն է առաջացել իրականացնել անտառների պետական նոր հաշվառում: Սակայն հաշվի առնելով, որ անտառների պետական հաշվառումն իրականացվում է հիմք ընդունելով անտառաշինական նախագծերը (անտառակառավարման պլաններ), ապա անհրաժեշտ է այն իրականացնել անտառակառավարման պլանների մշակումից հետո, ինչի վերջնաժամկետն է սահմանված 2022 թվականը: Անտառների պետական հաշվառման համար 2023 թվականին պետական բյուջեից անհրաժեշտ կլինի հատկացնել 200000.0 հազ. դրամ:<br>***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման, որակական և քանակական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության առկայություն: |
| 90 | **Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների մեղմման և կանխարգելման, ինչպես նաև հարմարվողականության գործողությունների իրականացում՝ համաձայն միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների, շրջակա միջավայրի կառավարման ոլորտում գործող միջազգային կառույցների հետ շարունակական համագործակցության ապահովումը, մասնակցությունը նոր նախաձեռնություններին**<br><br>**<u>90.1 «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ</u>** |

**ներկայացնելը»**

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների մեղմման և կանխարգելման, ինչպես նաև հարմարվողականության գործողությունների իրականացումը՝ համաձայն միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների» ուղղությունը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) մշակվել է ի կատարումն ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 22-ի նիստի N11 արձանագրային որոշման Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման 2018-2022 թվականների միջոցառումների ծրագրի առաջին կետի:

Մշակվել և 2016 թվականի դեկտեմբերի 15 նիստի N 50 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հայեցակարգը: Հայեցակարգում հստակ նշվել են այն փոփոխությունները և լրացումները, որոն էլ իրավական հենք է հանդիսացել տվյալ Նախագծի մշակման համար:

Նախագծի նպատակն է իրավական հենքի ստեղծման միջոցով ապահովել մթնոլորտային օդի պահպանության արդյունավետ կառավարումը՝ ժամանակակից մոտեցումներին համապատասխան և կայուն զարգացման համատեքստում:

**1. 1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս մթնոլորտային օդի պահպանության կառավարումն իրականացվում է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության 1994 թվականի հոկտեմբերի 11-ի օրենքով (այսուհետ՝ Օրենք): Դեռևս 2015-2016 թվականների ընթացքում ուսումնասիրվել և բացահայտվել էին Օրենքում առկա մի շարք խնդիրներ: Մասնավորապես՝ հին նորմերի վերանայման և նոր պահանջների ամրագրման անհրաժեշտությունը, որն առաջացել է հասարակական և միջազգային հարաբերություններում տեղի ունեցող որոշակի զարգացումների արդյունքում: Բացի այդ, Օրենքի իրավակիրառման գործընթացում բացահայտվել էին թերություններ ու բացթողումներ, որոնք շտկելը նույնպես անհրաժեշտություն է:

**1. 2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օրենքը լրջորեն լրամշակվել է: Ավելացվել են մի շարք հասկացություններ, որոնք կիրառվում են այլ երկրներում՝ օդի որակի գնահատման համար: Ավելացվել են դրույթներ, կապված արտանետումների տեխնիկական նորմավորման հետ, արտանետումների հաշվառման, լիազորությունների բաշխման և այլն:

Նկատի ունենալով, որ փոփոխությունները ծավալուն էին, առաջարկվում է ընդունել Նախագիծը, որպես «Մթնոլորտային օդի պահպանության մասին» նոր խմբագրությամբ օրենք, իսկ Օրենքը ամբողջությամբ ուժը կորցրած ճանաչել: Օրենքի որևէ դրույթ չի անտեսվել և դուրս չի մնացել Նախագծից, դրանք միավորվել են կամ խմբագրվել:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Նախագծի ընդունումը կամրագրի մթնոլորտային օդի պահպանության ժամանակակից մոտեցումները, մասնավորապես՝

ա. մթնոլորտային օդի որակի գնահատման մասով.

«կրիտիկական մակարդակ» հասկացությունը, ինչպես նաև դրա որոշման մեթոդները, կիրառումն, աղտոտվածության մոնիթորինգի և վերահսկողության լիազորությունների սահմանումը,

բ. անշարժ աղբյուրներից արտանետումների սահմանափակման մասով.

«տեխնիկական նորմատիվների» և «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» որոշման մեթոդների կիրառումը,

գ. շարժական աղբյուրներից արտանետումների սահմանափակման մասով.

արգելքի պահանջները և դրանք կիրառելու իրավասությունները:

դ. արտանետումների հաշվառման մասով.

վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների (անշարժ և շարժական աղբյուրներից) միանական հաշվառման դրույթը:

Այսպիսով, կներդաշնակեցվեն աշխարհում ընդունված և ներկայումս երկրում գործող օդի որակի

գնահատման չափանիշներն, արտանետումների սահմանափակման նպատակով և  զարգացած երկրներում լայնորեն կիրառվող «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» ներդրման պահանջարկն՝ այն համատեղելով արտանետումների սահմանափակման էկոլոգիական (այդ թվում տարածքային) սկզբունքի հետ: Այն ավելի արդյունավետ կդարձնի մթնոլորտային օդի պահպանության  կառավարումը, և կնպաստի միջազգային պայմանագրերով ամրագրված պարտավորությունների պատշաճ կատարմանը:

**<u>90.2 «Արթիկ քաղաքի փակ քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարումծրագրի իրականացում» միջոցառման</u>**

### *1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը*

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների մեղմման և կանխարգելման, ինչպես նաև հարմարվողականության գործողությունների իրականացումը՝ համաձայն միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների»  ուղղությունը:

Ծրագրի իրականացման տարածքը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմուտքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում: Մարզը արևմուտքից սահմանակից է Թուրքիային, հյուսիսից՝ Վրաստանին: Մարզի տարածքում է գտնվում «Արփի լիճ» ազգային պարկը: Մարզի կլիման մեղմ լեռնային է, զով ամառներով և երկար ձմեռներով: Տարեկան տեղումների քանակը 500-600 մմ է: Այստեղ արձանագրվել է Հայաստանում բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -46˚C:

Ծրագրի տարածքն ընդգրկում է Շիրակի մարզի հարավային հատվածում գտնվող Արթիկի տարածաշրջանը, որը հայտնի է տուֆի, պեմզայի, կրաքարի հանքավայրերով: Տարածքը ներկայացված է հրաբխային հարթավայրերով, որը հացահատիկային մշակաբույսերի և անասնաբուծության զարգացման համար աչքի է ընկնում բարենպաստ պայմաններով: Տարիներ շարունակ շահագործվող քարի հանքերը բացասաբար են անդրադարձել շրջակա միջավայրի վրա: Ավելի վաղ Արթիկում և նրա հարակից համայնքներում արտադրվել է հանրապետության շինարարական քարի ընդհանուր ծավալից ավելի քան 60 %-ը: Շատ հանքեր փակվեցին, քանի որ շինարարական քարերի սպառման ծավալները կրճատվել էին, հանքավայրերի պահպանության և վերականգնման աշխատանքներ չեն իրականացվել, որոնք բազմաթիվ բնապահպանական խնդիրներ առաջացրեցին: Հանքավայրերի շահագործման պատճառով գյուղատնտեսական և բնական լանդշաֆտների հարյուրավոր հեկտարներ դեգրադացվեցին: Ուժեղ քամիների միջոցով հանքավայրերի թափոնների փոշին և ամուր մնացորդները ձնհալի ու անձրևի միջոցով տարածվում են մեծ հեռավորությունների վրա՝ աղտոտելով բնական և գյուղատնտեսական լանդշաֆտները: Արդյունքում նկատվում է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության, որակի և կլիմայի փոփոխության նկատմամբ բնական լանդշաֆտի հարմարվողականության մակարդակի նվազում:

Մեկ այլ խնդիր է վերջին 20 տարիներին ջրհեղեղների աճող հաճախականությունը, որը պայմանավորված է տարածաշրջանին ոչ բնորոշ գարնանային բարձր ջերմաստիճանով: Մինչև 1980-ական թվականները գարնան մեկուկես ամսվա ընթացքում օդի ջերմաստիճանը հասնում էր 20-25 աստիճանի, ապա ներկայումս այն աճում է արագ և անհավասար, որի հետևանքով արագանում է ձնհալը՝ առաջացնելով ուժեղ հեղեղներ, որոնք զգալի վնաս են հասցնում բնակելի և հասարակական շինություններին, գյուղատնտեսական հողերին, տնամերձերին և այգիներին: Հեղեղների հզորացմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ հանքավայրերի արդյունաբերական թափոնները լցվում են Արթիկ քաղաքի տարածքով անցնող երկու հեղեղատար ջրանցքների մեջ և նվազեցնում են դրանց թողունակությունը  տարրողունակությունը: Այս երևույթը կրկնվում է ամեն տարի: 2016 թ. հունիսին տեղի ունեցած ջրհեղեղը Արթիկ քաղաքի ենթակառուցվածքներին և բնակչությանը պատճառել է ավելի քան 210 000 ԱՄՆ դոլարի վնաս, որի հետևանքների վերականգնումը չի կարող կատարվել միայն քաղաքային բյուջեի միջոցներով: Արթիկ քաղաքի և հարակից համայնքների բյուջեն թույլ չի տալիս վերացնել կրկնվող ջրհեղեղների և քարի թափոնների բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա:

Միջոցառման իրականացման նպատակներն են՝

1. բարձրացնել բնական և գյուղատնտեսական լանդշաֆտների հարմարվողականության մակարդակը.
2. կառավարելի դարձնել ջրհեղեղները՝ նվազեցնելով դրանց հետևանքները.
3. վերականգնել կլիմայի փոփոխության և մարդածին ազդեցությունների հետևանքով վնասված բնական

լանդշաֆտը՝ ցուցադրելով դեգրադացված բնական լանդշաֆտի հարմարվողականության բարձրացման հնարավորությունները.

4. ստեղծել բնական աղետների կանխարգելման վաղ արձագանքման համակարգ.

5. կլիմայի փոփոխության ներկայիս պայմաններում բարելավել համայնքի հաստատությունների և այլ շահագրգիռ կողմերի հարմարվողական ներուժը.

6. բարձրացնել բնակչության գիտելիքների մակարդակը կլիմայի փոփոխության պայմաններում բնական աղետների կանխարգելման և հարմարվողականության վերաբերյալ: նպատակն է անտառային և անտառային հողերի ընթացիկ վիճակի ուսումնասիրության միջոցով օժանդակել անտառների կայուն կառավարմանը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային տարիներին Արթիկում արդյունահանվել է հանրապետությունում արտադրվող շինաքարի ամբողջ ծավալի ավելի քան 60 % -ը, որից միայն 35-40 %-ն է օգտագործվել որպես ստանդարտին համապատասխանող շինանյութ, իսկ մյուս մեծ մասը հիմնականում նետվել է շրջակա միջավայր որպես թափոն: Քանի որ թափոնների կուտակման համար հատուկ վայրեր չեն առանձնացվել, դրանք անկանոն կերպով լցվել են հանքերին հարակից տարածքներում: Խորհրդային տարիներին օգտագործվել են Արթիկ քաղաքի և հարակից համայնքների բնական լանդշաֆտները, իսկ հետխորհրդային տարիներին՝ նաև գյուղատնտեսական նշանակության այն հողերը, որոնք սեփականաշնորհվել և հետագայում լքվել են սեփականատերերի կողմից: Հիմնականում աղտոտվել են լեռնատափաստանային սևահողերը, ձորակները և թեք լանջերը, որտեղ տարածված են տարախոտա-հացազգի խոտաբույսերը և թփուտները: Որպես ուղղակի ազդեցություն՝ այս և հարակից տարածքներում էականորեն աղքատացել է բուսական և կենդանական աշխարհը, վատացել է հողերի ֆիզիկա-քիմիական կազմը և ջրակուտակիչ հատկությունը: Այս պայմաններում արագանում է ձնհալի և անձրևաջրերի մակերեսային հոսքը, վատանում է հողի ջուր կլանելու և խոնավությունը պահելու հատկությունը, որի արդյունքում արագանում է բուսական և կենդանական աշխարհների տեսակային և քանակական կազմի կորուստը: Այսպիսի փոփոխությունները արագացնում են բնական լանդշաֆտների դեգրադացման պրոցեսները:

Որպես քարհանքների երկրորդային ազդեցություն առկա է քամու, ձնհալի և անձրևաջրերի միջոցով քարի փոշու, լուծվող նյութերի և համեմատաբար մանր ֆրակցիաների տարածումը հարակից բնական և գյուղատնտեսական լանդշաֆտներ: Տարիների ընթացքում դրանց աստիճանական կուտակումը բացասական ազդեցություն է թողել բնական լանդշաֆտների կայունության և գյուղատնտեսական լանդշաֆտների բերքատվության վրա:

Նշված ազդեցությունների հանրագումարը մեծ չափով թուլացնում է լանդշաֆտների ինքնավերականգնման հատկությունը և հարմարվողականության մակարդակը կլիմայի կանխատեսվող փոփոխությունների նկատմամբ:

Կարելի է ընդհանրացնել, որ չռեկուլտիվացված քարհանքերի և թափոնների բացասական ազդեցությունը կարելի է նմանեցնել մի շղթայի, որի օղակներն են բնական, գյուղատնտեսական և մարդկային գործունեության արդյունքում ձևափոխված լանդշաֆտները, ջրային էկոհամակարգերը, հարակից համայնքները և ենթակառուցվածքները:

Մինչ այժմ Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվել փակված քարհանքերի ռեկուլտիվացիա և կլիմայական փոփոխություններին հարմարվողականության տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում: Հաշվի առնելով տարածքի կլիման և հողի պայմանները՝ հողի շերտի վերականգնումը և անտառտնկումը կլիմայի փոփոխության դեմ պայքարի առավել արդյունավետ միջոցն են, որոնք կնպաստեն շրջակա լանդշաֆտների հարմարվողականության բարձրացմանը:

Աշխատաքները նախատեսվում իրականացնել օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին՝ ՄԱԿ-ի Հարմարվողականության հիմնադրամի միջոցներով՝ 698 893.7 հազ. դրամ: 2019թ. համար նախատեսված է 122000.0 հազ.դրամ:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում բնական և գյուղատնտեսական լանդշաֆտների հարմարվողականության բարձրացում, ջրհեղեղների կանխարգելում, մարդածին ազդեցությունների հետևանքով խախտված բնական լանդշաֆտի վերականգնում, կլիմայի փոփոխության և հարմարվողականության վերաբերյալ բնակչության գիտելիքների բարձրացում

*2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքները*

Նախատեսվող միջոցառումները կնպաստեն Արթիկ քաղաքում ջրհեղեղների կանխարգելմանը, հանքավայրի ազդեցության գոտում գտնվող ավելի քան 300 հա վարելահողերի, 190 հա արոտների, 15 հա խոտհարքների, 640 հա արհեստական անտառի, 80 հա մակերեսով արհեստական ջրամբարի և բնական լանդշաֆտների պայմանների բարելավմանը, ինքնավերականգնման և կլիմայի փոփոխության պայմաններում կայունության ու հարմարվողականության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև 40,0հա փակ քարհանքի լանդշաֆտի վերափոխմանը անտառայգու և հանգստի գոտու:

**<u>90.3 «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագրի մշակում և նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»</u>**

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների մեղմման և կանխարգելման, ինչպես նաև հարմարվողականության գործողությունների իրականացումը՝ համաձայն միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների» ուղղությունը:

«Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագրի» ընդունման անհրաժեշտությունը պայմանվորված է Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման նպատակներից, քանի որ տնտեսության շատ ճյուղեր խոցելի են ներկա և կանխատեսվող կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերից: Այն պայմանավորված է նաև ՀՀ կառավարության 2016թ. դեկտեմբերի 8-ի N49 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Ազգային մակարդակով նախատեսված գործողությունների/ներդրումների»-ից և բխում է ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Փարիզյան համաձայնագրի դրույթներից:

Հարմարվողականության ազգային ծրագրի նպատակն է վեց գերակա ոլորտներում ներդրումների առաջնահերթության սահմանումը և ծրագրով նախատեսված գերակա գործողությունների իրականացման նպատակով ֆինանսական ռեսուրսների հասանելիության հնարավորության ապահովումը:

**1. 1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հարմարվողականության գործողությունները պետք է ընդգրկեն կլիմայի փոփոխությամբ պայմանավորված խոցելի ոլորտները (տնտեսական ճյուղերից՝ ջրային ռեսուրսները, գյուղատնտեսությունը, էներգետիկան, ենթակառուցվածքները, զբոսաշրջությունը, բնական էկոհամակարգերը՝ ջրային ու ցամաքային, այդ թվում անտառային էկոհամակարգերի կենսաբազմազանությունը և մարդու առողջությունը):

Սակայն, հարմարվողականությանն ուղղված միջոցառումների մշակման ու առաջնահերթությունների սահմանման համար հստակ ընթացակարգերի բացակայությունը, կլիմայի փոփոխության և հարմարվողականության առումով իրազեկության և կարողությունների պակասը կարող է լրջորեն վտանգել համապարփակ կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային ծրագրի մշակմանը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ներկայումս աշխատանքներ են իրականացվում «Էկոհամակարգային մոտեցմամբ կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային ծրագրի ու պլանի» մշակման համար: Մասնավորապես, Կլիմայական կանաչ հիմնադրամին ներկայացվել է «Հարմարվողականության ծրագրի և գործողությունների պլանավորման» անվամբ հայտ: Մոտ 3 մլն ԱՄՆ դոլարի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված են նաև կոնկրետ հարմարվողականության ցուցադրական միջոցառումներ:

Այդ դրամաշնորհի շրջանակներում, բացի հարմարվողականության ազգային ծրագրի մշակումից, նաև նախատեսվում է միջազգային փորձի ներգրավում հարմարվողականության կոնկրետ միջոցառումների տեխնիկատնտեսական գնահատումների իրականացման համար: Տեխնիկատնտեսական գնահատումներն անհրաժեշտ են ներդրումային միջոցների ներգրավման համար:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Հայաստանի հարմարվողականության ազգային ծրագրի ընդունման դեպքում հնարավորություն կստեղծվի միջազգային փորձագետների և տեղական մասնագետների անմիջական մասնակցությամբ մանրամասն ուսումնասիրել հարմարվողականությանն ուղղված միջոցառումները (ըստ ոլորտների), կազմակերպել լայնածավալ

քննարկումներ հանրության մասնակցությամբ: Ուսումնասիրությունների արդյունքում ստացված տեղեկատվությունը և դրա վերլուծությունը կնպաստի մշակել Կլիմայի փոփոխության նկատմամբ էկոհամակարգային մոտեցմամբ հարմարվողականությանը նպատակաուղղված համապարփակ Ազգային գործողությունների ծրագրի մշակմանը:

91 **Բնության հատուկ պահպանվող տարածքների հզորացում, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացում**

**91.1 «Բնության հատուկ պահպանվող տարածքների քարտեզագրում և կադաստրային իրավունքի վերագրանցում»**

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Բնության հատուկ պահպանվող տարածքների հզորացում, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացում» ուղղությունը:

Սույն միջոցառման նպատակն է բնության հատուկ պահպանվող տարածքների քարտեզագրման, գոտևորման սխեմայի կազմման, ու դրա պահպանման գոտու սահմանների ճշգրտման աշխատանքների իրականացումը:

Միջոցառման իրականացման համար հիմք են հանդիսացել Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Բնության հատուկ պահպանվող տարածքների գործառույթներն առաջիկայում պետք է ուղղորդվեն պարկի եզակի անտառների, լանդշաֆտների և կենսաբազմազանության, ինչպես նաև բնական և մշակութային հուշարձանների պահպանության արդյունավետության բարձրացմանը՝ ի շահ բնության և բնակչության:

Խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցներ հայթայթելու աշխատանքների իրականացման նպատակով բանակցություններ են տարվում մի շարք միջազգային կառույցների /KFW, UNFCCC AF, CNF, WWF, TGS և այլն/ հետ:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել մրցութային կարգով՝ շահող կազմակերպության կողմից, որը պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները.

ա/ ելակետային տվյալների հավաքագրում.

- Բնության հատուկ պահպանվող տարածքների դրա պահպանման գոտում ներկա սահմանների վերաբերյալ նախորդ անտառաշինական (տաքսացիոն-անտառագնահատում և պլան-քարտեզագրական) և արխիվային նյութերի ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն:
- Բնության հատուկ պահպանվող տարածքների դրա պահպանման գոտում տնտեսավարող սուբյեկտների ֆիզիկական գույքագրում և քարտեզագրում:
- Նախատեսվող տարածքների վարչատնտեսական միավորների և հարակից համայնքային հողերի սահմանների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:
- Նախորդ հողաշինարարության ու անտառաշինության և դրան հաջորդած ժամանակահատվածում անտառային ֆոնդի, գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքների, գույքագրման և փոփոխությունների վերաբերյալ անհրաժեշտ տվյալների ձեռք բերում:

բ/ Բնության հատուկ պահպանվող տարածքների սահմանների և ներքին գործառնական գոտիների սահմանների ճշգրտում և նկարագրում.

- Բնության հատուկ պահպանվող տարածքների դրա պահպանման գոտում հանդիպող հազվագյուտ և արժեքավոր բույսերի և կենդանիների տեսակների արեալների ուսումնասիրում և նկարագրություն /քարտեզագրական նկարագրում/:
- Կադաստրի ստեղծման նպատակով արխիվային նյութերի և քարտեզների ուսումնասիրում, դրանց պատճենների ձեռքբերում:
- ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և բուսաբանության ինստիտուտներից Բնության հատուկ

պահպանվող տարածքների բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերում:

- Դաշտային դիտարկումներ և հետազոտություններ բնության հատուկ պահպանվող տարածքների և դրանց պահպանման գոտու տարածքում:
- Բնության հատուկ պահպանվող տարածքների սահմանների համաձայնեցում հարակից համայնքների հետ:
- Բնության հատուկ պահպանվող տարածքների արտաքին սահմանների, ներքին գործառնական գոտիների և պահպանման գոտու սահմանների նկարագրությունը 1:25 000 մասշտ.քարտեզներով:

գ/ Քարտեզագրական աշխատանքների իրականացում:

դ/ Համապատասխան նորագույն տեխնոլոգիաների կիրառում, սարքավորումների և այլ տեխնիկական միջոցների ձեռքբերում կիրառում:

ե/ Սահմանների ամրակայում:

զ/ Բնության հատուկ պահպանվող տարածքների կադաստրային քարտեզի նախապատրաստում՝ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում պետական գրանցում ստանալու համար:

Համագործակցության ընթացքում համակատարողների հետ աշխատանքները կապված են տարածքների և սահմանների համաձայնեցման խնդրո առարկայով՝ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ, համապատասխան ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակաման համար, իսկ պետական գրացում ստանալու համար՝ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի հետ:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Միջոցառման իրականացման արդյունքում կստեղծվի ճշգրիտ տեղեկատվություն բնության հատուկ պահպանվող տարածքների, այնպես էլ բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների տարածման արեալների վերաբերյալ, ինչը կստեղծի նախադրյալներ վերը նշված տարածքների կենսաբազմազանության արդյունավետ պահպանման, հարակից համայնքների զարգացման, տարածքներում պահպանության և օգտագործման ռեժիմների ապահովման համար:

**91.2 «Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների մշակում»**

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Բնության հատուկ պահպանվող տարածքների հզորացում, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացում» ուղղությունը:

Բնության հատուկ պահպանվող տարածքների կայուն կառավարում՝ կառավարման պլանների վերանայման ու նոր կառավարման պլանների մշակման միջոցով:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանները ժամկետանց են կամ ընդհանրապես չունեն կառավարման պլաններ, ինչն էլ խոչընդոտում է տվյալ տարածքի արդյունավետ կառավարմանը: Մասնավորապես «Սևան» ազգային պարկի կառավարման պլանը նախատեսված էր 2007-2011 թվականների համար, «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման պլանը նախատեսված էր 2011-2015 թվականների համար, և այլն:

Բնապահպանության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի <<Կառավարման պլանների մշակման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին>> N 392-Ա հրամանի 3-րդ բաժնով սահմանված է, որ՝

- Կառավարման պլանների նախագծի կազմմանը նախորդում է տվյալ բնության հատուկ պահպանվող տարածքի (գոյություն ունեցող կամ ստեղծվող), ներառյալ դրա պահպանման գոտու, բազմակողմանի ուսումնասիրությունը, առկա տեղեկատվության հավաքը և վերլուծությունը:
- Կառավարման պլանի մշակման ժամանակ ամփոփվում և վերլուծվում է ԲՀՊՏ-ի տարածքային կառուցվածքի, կազմակերպչական առանձնահատկությունների, ենթակառուցվածքների, ֆինանսական գործունեության (ֆինանսավորման ծավալները և աղբյուրները, դրամական ելքերը և մուտքերը), վերջին 5 տարվա ընթացքում ԲՀՊՏ-ի կազմակերպման և գործունեության ուժեղ ու թույլ կողմերի, հիմնական հաջողությունների ու

անհաջողությունների, դրանց պատճառների, տեղական ինքնակառավարման մարմինների և ԲՀՊՏ-րին սահմանակից բնակավայրերի բնակչության հետ փոխհարաբերությունների և համագործակցության մասին տեղեկատվությունը:

- Կառավարման պլանի մշակման ընթացքում կատարվում է.

1) էկոհամակարգերի և բնական օբյեկտների արդի վիճակի վերլուծություն.

2) ԲՀՊՏ-ների զարգացմանը և կենսաբանական բազմազանության ու պատմամշակութային ժառանգության պահպանությանը խոչընդոտող հիմնախնդիրների որոշում.

3) տարածքի զարգացման հնարավորությունների և կառավարման կատարելագործման ուղիների որոշում՝ հաշվի առնելով առկա ռեսուրսները և փաստացի իրավիճակը.

4) գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծման ու սպառնալիքների մեղմացման կամ վերացման ուղիների և մեթոդների մշակում:

Նշված պահանջների կատարումը ենթադրում է ֆինանսական միջոցների ներգրավում:

Այս փուլում հնարավոր չէ հստակ գնահատել աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ միջոցները, քանի որ դրանք կապված են յուրաքանչյուր օբյեկտում կատարվելիք գործողությունների տեսակից և ծավալներից: Աշխատանքներ են տարվում միջոցառման իրականացման համար դոնոր կազմակերպություններին ներգրավելու և ֆինանսական միջոցների ապահովման ուղղությամբ:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է վերլուծել բնության հատուկ պահպանվող տարածքների առկա խնդիրները, կառավարման պլաններ մշակել այն բնության հատուկ պահպանվող տարածքների համար, որոնց կառավարման պլանները ժամկետանց են, վերանայել և անհրաժեշտության դեպքում լրամշակել ներկայումս գործող կառավարման պլանները:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Բոլոր բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների առկայություն մինչև 2023 թվականի ավարտը:

**91.3 «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» նոր օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»**

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Բնության հատուկ պահպանվող տարածքների հզորացում, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացում» ուղղությունը:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նոր նախագծի ընդունման հետևանքով կկարգավորվեն բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման, պահպանության, օգտագործման և կառավարման հարաբերությունները:

Միջոցառման նպատակն է վերհանել գործող օրենքի կարգավորման բացերը, անհամապատասխանությունները, օրենքը համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներով սահմանված պահանջներին թե կառավարման և թե ստեղծման ասպեկտներով:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նոր նախագծի մշակումը պայմանավորված է գործող օրենքի հետևյալ բացերով՝

- օրենքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման նպատակները և հիմքերը.
- հստակ չեն շարադրված բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման սկզբունքները.
- բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքների կատեգորիաների խնդիրները.
- բացակայում են բնության հուշարձանի դասակարգումը, ստեղծման չափանիշները և պահպանության ռեժիմը.
- բացակայում է արգելավայրի պահպանության ռեժիմը.

- բացակայում են պահպանման գոտու, էկոլոգիական միջանցքի և էկոլոգիական ցանցի կառավարման սկզբունքները և պահպանության ռեժիմը.
- բացակայում են կենսոլորտային արգելոցի ստեղծման և կառավարման հարցերը:

Ինչպես նաև՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի միջև առկա են անհամապատասխանություններ և հակասություններ:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» նոր օրենքի նախագծով առաջարկվում է գործող օրենքի բացերի վերացում, նոր կարգավորումների ամրագրում, մասնավորապես բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման նպատակների և հիմքերի: Առաջարկվում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը միջազգային չափանիշներին համապատասխանեցում մասնավորապես՝ «Բնության պահպանության միջազգային միության» (IUCN) կողմից սահմանված բնության հատուկ պահպանվող տարածքների 5-րդ (պահպանվող լանդշաֆտ) կատեգորիայի ստեղծման հիմքերի ամրագրում, տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավմանը ուղղված իրավական հիմքի ամրագրում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման գործընթացում:

Միջոցառման իրականացման համակատարող է հանդիսանում տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, քանի որ նախագծով նախատեսվելու է տեղական ինքնակառավարման մարմիններին ևս ներգրավել որոշ բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման գործընթացում:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Միջազգային չափորոշիչներին և արդի հասարակական հարաբերություններին համահունչ օրենքի առկայություն, որի միջոցով առավել արդյունավետ կդառնան բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման գործընթացները:

**<u>91.4 «Բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի և համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում»</u>**

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Բնության հատուկ պահպանվող տարածքների հզորացում, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացում» ուղղությունը:

Բնության հատուկ պահպանվող տարածքներից օգտվելու օրենքով ամրագրված սահմանափակումներին գումարվում է հողային և ջրային ռեսուրսների օգտագործման անբավարար մակարդակը (սոցիալական վատ պայմանները հնարավորություն չեն տալիս բնակիչների մեծ մասին օգտվելու հեռագնա արոտներից և խոտհարքներից, կիրառելու ոռոգման ջրի խնայող տեխնոլոգիաներ), կլիմայի փոփոխությունը և արդյունքում՝ զգալիորեն մեծանում է բնական և մարդածին ճնշումը համայնքներին հարակից բնական էկոհամակարգերի (անտառներ, գյուղամերձ արոտներ և խոտհարքներ, ջրային տարածքներ և այլն) վրա: Այս պայմաններում արագանում է համայնքներին համեմատաբար մոտ գտնվող բնական էկոհամակարգերի դեգրադացումը և դրանք կորցնում են կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությունը: Մյուս կողմից կլիմայի դիտվող փոփոխությունները (ջերմաստիճանի բարձրացում, տեղումների քանակի նվազում, ջերմային ալիքների, հեղեղների և կարկուտի հաճախականության մեծացում և այլն) նվազեցնում են գյուղատնտեսական արտադրանքի քանակը, որակը և իջնում է բնակչության կենսամակարդակը:

Միջոցառման նպատակն է նվազեցնել «Խոսրովի անտառ» պետական արգելոցին և «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայքների խոցելիությունը կլիմայական ռիսկերի նկատմամբ, այդ տարածքներում հզորացնել գյուղատնտեսության ոլորտի հարմարվողական կարողությունները, ամրապնդել ինստիտուցիոնալ ու պլանավորման հնարավորությունները, համայնքներում իրականացնել կլիմայի փոփոխության նկատմաբ հարմարվողականության միջոցառումներ:

Այդ տեսակետից անհրաժեշտ է մշակել հարմարվողական ռազմավարական միջոցառումներ, որոնք կլիմայական խելացի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրման, նպատակային արտադրանքի արժեքային շղթայի բարելավման, պլանավորման կարողությունների ուժեղացման միջոցով համայնքներում կամրապնդեն

| | |
|---|---|
| | կենսապահովման մակարդակը՝ կանխելով հողերի հետագա դեգրադացիան: Ծրագիրն ապահովում է հողի չեզոք դեգրադացիային հասնելու գաղափարի և կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության բարձրացման փոխկապակցվածությունը:<br>1.1 **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գյուղատնտեսությունից և անասնապահությունից ստացվող եկամուտների նվազումը հնարավորություն չի տալիս բնակիչների մի մասին կենցաղային կարիքների համար բավարար օգտվելու գազից և էլեկտրաէներգիայից: Որպես վառելանյութ է օգտագործվում փայտը և չորացված գոմաղբը: Այս պայմաններում առկա է 2 հիմնական բացասական արդյունք:<br>1. Մեծանում է ճնշումը անտառային էկոհամակարգի վրա, որի հետևանքով նվազում է անտառի կլիմայակարգավորիչ և ջրակուտակիչ հատկությունները: Հատումների հետևանքով առաջանում են էկոհամակարգին ոչ հատուկ բացատներ, նոսրուտներ, ցածրարժեք թփուտներ, որտեղ խիստ վատանում է անտառին հատուկ ծառատեսակների սերմերի ծլումը և նոր անտառի զարգացումը: Էկոհամակարգը աստիճանաբար թուլանում է և կորցնում կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությունը:<br>2. Գյուղատնտեսության մեջ նվազում է օրգանական պարարտանյութերի օգտագործման ծավալները: Աստիճանաբար վատանում են հողի որակական հատկությունները և շատ հաճախ դրանք դուրս են մնում մշակությունից, դեգրադացվում են՝ վերածվելով կիսաանապատային կամ շատ նոսր խոտածածկով հողատեսքերի:<br>Համայնքների ինքնակառավարման մարմինները չունենալով բավարար ֆինանսական միջոցներ չեն կարողանում կլիմայի փոփոխության պայմաններում իրականացնել բնական էկոհամակարգերի և գյուղատնտեսական լանդշաֆտների կայունության բարձրացմանն ուղղված էներգախնայողության (մրգերի, դեղաբույսերի արևային չորանոցների, բանջարային մշակաբույսերի սածիլների արտադրության թեթև կոնստրուկցիաներով ժամանակակից ջերմոցների կառուցում և այլն) և արտադրանքի ծավալների մեծացման (ոռոգման համակարգի նորոգում, գյուղատնտեսության դիվերսիֆիկացիա, դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում, արոտներում ջրարբիացման կետերի կառուցում և այլն) միջոցառումներ: Այս և այլ նման միջոցառումները բնակիչների և տեղական ինքնակառավարման մարմինների համար կստեղծեն եկամուտի ստացման այլընտրանքային հնարավորություններ, որի արդյունքում կնվազի ճնշումը բնական էկոհամակարգերի վրա և դրանք ավելի արդյունավետ կարող են հարմարվել կլիմայի փոփոխությանը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Խոսրովի անտառ» պետական արգելոցին և «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքների դեգրադացված տարածքներում համայնքահեն խելացի գյուղատնտեսական գործելակերպի կիրառում և կլիմայական ռիսկերի նկատմամբ խոցելիության նվազեցում, գյուղատնտեսական արտադրության արժեքային շղթաների ամրապնդում, համայնքներին կլիմայական խելացի տեխնոլոգիաների փոխանցում, գյուղատնտեսության վարման կլիմայական խելացի գործելակերպի վերաբերյալ իրազեկվածության, պլանավորման, մոնիթորինգի և որոշումների կայացման ներուժի հզորացում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառումը կնպաստի. հարմարվողական ռազմավարական միջոցառումների մշակմանը, կլիմայական խելացի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրմանը, նպատակային արտադրանքի արժեքային շղթայի բարելավմանը, պլանավորման կարողությունների ուժեղացման միջոցով համայնքներում կենսապահովման մակարդակի բարձրացմանը, հողերի դեգրադացիայի կանխարգելմանը, ոռոգման ջրի խնայողական նոր տեխնոլոգիաների ներդրմանը, բնական կերհանդակների արտադրողականության բարձրացմանը, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը և բնակչության եկամուտների բազմազանացմանը: Միջոցառումն ապահովում է հողիրի չեզոք դեգրադացիային հասնելու գաղափարի և կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության բարձրացման փոխկապակցվածությունը: Մասնավորապես՝<br>▪ դեգրադացված արոտավայրերում և խոտհարքներում բուսածածկի վերականգնմանը և կմեծանա դրանց հարմարվողականությունը կլիմայի փոփոխության նկատմամբ:<br>▪ կստեղծվի անասնակերի ձմեռային անհրաժեշտ քանակ, որի դեպքում հնարավորություն կլինի նվազեցնել ճնշումը արոտավայրերի և տարածքին բնորոշ այլ էկոհամակարգերի վրա:<br>▪ ջրարբիացման կետերի կառուցմամբ կբարելավվեն կենդանիների պահվածքի պայմանները և կբարձրանա կաթնատվությունը:<br>▪ ոռոգման ջրի մատակարարման բարելավումը և նոր խնայողական տեխնոլոգիաների կիրառումը |

| | |
|---|---|
| | հնարավորություն կտա բարձրացնել մշակաբույսերի բերքատվությունը և օգտագործել վարելահողերի մեծ մասը:<br>▪ անասնապահները և հող մշակողները կստանան լրացուցիչ եկամուտներ:<br>▪ ընդհանուր օգտագործման արևային ջերմոցները կնպաստեն նոր չորադիմացկուն և շուկայում մեծ պահանջարկ ունեցող մշակաբույսերի սածիլների աճեցմանը և տրամադրմանը գյուղացիներին: Ամռանը այդ ջերմատներում կարտադրվի բանջարեղեն, որի մի մասը կվաճառվի, իսկ մի մասը կտրամադրվի մանկապատեզին և դպրոցին:<br>▪ ընդհանուր օգտագործման արևային չորանոցները հնարավորություն կտան արագ չորացնել շուկայում մեծ պահանջարկ ունեցող մրգերը, հատապտուղները, դեղաբույսերը և թեյում օգտագործվող բուսատեսակները, դրանք վաճառելով նաև աշնանը և ձմռանը:<br>▪ դեպի արոտներ, խոտհարքներ և վարելահողեր տանող գրունտային ճանապարհների վերանորոգումը հասանելի կդարձնի դժվարամատչելի տարածքները և հնարավորություն կստեղծի բարձրացնել առավել դեգրադացված էկոհամակարգերի վերականգնման արդյունավետությունը:<br>• 1.3.9 համայնքներում կցուցադրվի էկոհամակարգերի այն հատվածների օգտագործման հնարավորությունները, /մասուրի կամ այլ վայրի հատապտուղների պլանտացիայի հիմնում, կաթիլային ոռոգմամբ պտղատու այգու հիմնում/ որոնք կորցրել են հարմարվողականությունը և բնական ճանապարհով չեն կարող վերականգնվել:<br>▪ կցուցադրվի հողերի չեզոք դեգրադացիային հասնելու հնարավորությունները: |
| 92 | **Կենսաբազմազանության պահպանությունը և կենսաանվտանգության ապահովումը, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառում**<br><br>**<u>92.1 «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»</u>**<br><br>1. ***Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Կենսաբազմազանության պահպանություն և կենսաանվտանգության ապահովում, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառում» ուղղությունը:<br>«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) ընդունման անհրաժեշտությունը բխում է այն Միջազգային պահանջներին և ԵՄ դիրեկտիվների հետ համապատասխանեցնելու, դաշտը կարգավորող ներպետական օրենսդրության ներդաշնակեցման, անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների պահելու և օգտագործելու իրավահարաբերությունները կանոնակարգելու պահանջից:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա**<br>«Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N 54 արձանագրային որոշման պահանջից ելնելով նախաձեռնվել է Օրենքի մշակման գործընթաց՝ նպատակ հետապնդելով սահմանել կենսաբանական պաշարների գնահատման և օգտագործման ենթակա չափաքանակների որոշման մեխանիզմները, կենդանիների անազատ և կիսաազատ պայմաններում պահման թույլտվության տրամադրման և հաշվառման կարգը և կանոնակարգել կենսառեսուրսների օգտագործման իրավունքները:<br>Խիստ կարևոր հանգամանք է հանդիսանում նաև 2018 թվականի ապրիլի 11-ին վավերացված Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը: Սրա շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել ձեռնարկել միջոցառումներ ՀՀ ներպետական օրենսդրության և ԵՄ դիրեկտիվների համապատասխանեցման ուղղությամբ:<br>2015 թվականին միջազգային մամուլում (Daily Mail) տպագրված Գյումրու մասնավոր կենդանաբանական այգում պահվող կենդանիների թշվառ վիճակին վերաբերող աղմկահարույց հոդվածի հրապարակումից հետո: Բնապահպանության նախարարի 2016 թվականի հունվարի 14-ի N5-Ա հրամանով ստեղծվեց աշխատանքային խումբ |

(կազմած նախարարության, հասարակական սեկտորի և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից), որի կողմից վերլուծվեց վայրի կենդանիների անազատ պայմաններում պահման դաշտում առկա բացերը և ներկայացվեց խնդրի լուծման առաջարկությունների փաթեթ:

**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օրենքի համապատասխան հոդվածներում նախատեսվում է կատարել համապատասխան փոփոխություններ՝ նպատակաուղղված դրանց վայրի կենդանիների պահելու գործընթացն առավել կանոնակարգված դարձնելուն, նախատեսվում է սահմանել անցումային դրույթներ, որով Օրենքի ընդունումից հետո վայրի կենդանիներ անազատ պայմաններում պահողներին (անկախ տվյալ վայրի կենդանու ձեռքբերումը հաստատող փաստաթղթի առկայությունից) տրամադրվում է 12 ամիս ժամանակ՝ գալու և լիազոր մարմնից դրանց պահման թույլտվություն ստանալու և դրանց հաշվառման տվյալները լիազոր մարմնին տրամադրելու համար:

Առաջարկվող փոփոխությունների միջոցով նախատեսվում է կարգավորել նաև կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման տեսակներին առնչվող Օրենքի համապատասխան հոդվածները՝ օգտագործման գործընթացի կանոնակարգման և վարչարարության նվազեցման նպատակով: Կա նաև ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու պահանջ՝ գործող օրենքի նախաբանում «ՀՀ կենդանական աշխարհը պետության բացառիկ սեփականությունն է» նախադասությունից անհրաժեշտ է հանել է «բացառիկ» բառը:

Առկա է նաև գործող օրենքում օգտագործված որոշ հասկացությունների ճշգրտման և մի շարք նոր հասկացությունների ավելացման անհրաժեշտություն:

Համակատարող կազմակերպությունները պետք է օժանդակեն նախագծի մշակման աշխատանքներին:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Միջազգային պահանջներին և ԵՄ դիրեկտիվների հետ համահունչ օրենքի առկայություն, անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ. այդ թվում՝ ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու գործընթացի հստակեցում, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման գործընթացի կանոնակարգում և վարչարարության նվազեցում: Լրամշակվել են Օրենքում օգտագործված որոշ հասկացություններ, ավելացվել են նաև մի շարք նոր հասկացություններ, որոնց վերաբերյալ Օրենքում ներառվել են դրույթներ:

***92.2 «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»***

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Կենսաբազմազանության պահպանություն և կենսաանվտանգության ապահովում, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառում» ուղղությունը:

«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) ընդունման անհրաժեշտությունը բխում է այն Միջազգային պահանջներին և ԵՄ դիրեկտիվների հետ համապատասխանեցնելու, դաշտը կարգավորող ներպետական օրենսդրության ներդաշնակեցման, բուսական աշխարհի օբյեկտների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված բույսերի *օգտագործելու* իրավահարաբերությունները կանոնակարգելու պահանջից:

**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N 54 արձանագրային որոշման պահանջից ելնելով նախաձեռնվել է Օրենքի մշակման գործընթաց՝ նպատակ հետապնդելով սահմանել կենսաբանական պաշարների գնահատման և օգտագործման ենթակա չափաքանակների որոշման մեխանիզմները, կանոնակարգել կենսառեսուրսների օգտագործման իրավունքները, արտահանման և ներմուծման գոծընթացները:

Խիստ կարևոր հանգամանք է հանդիսանում նաև 2018 թվականի ապրիլի 11-ին վավերացված Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը: Սրա

շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել ձեռնարկել միջոցառումներ ՀՀ ներպետական օրենսդրության և ԵՄ դիրեկտիվների համապատասխանեցման ուղղությամբ:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվող փոփոխությունների միջոցով նախատեսվում է կարգավորել բուսական աշխարհի օբյեկտների օգտագործման տեսակներին առնչվող Օրենքի համապատասխան հոդվածները՝ օգտագործման գործընթացի կանոնակարգման, վարչարարության նվազեցման, ինչպես նաև դրանց արտահանման, ներմուծման գործընթացները կարգավորելու նպատակով:

Համակատարող կազմակերպությունները պետք է օժանդակեն նախագծի մշակման աշխատանքներին:

Առկա է նաև գործող օրենքում օգտագործված որոշ հասկացությունների ճշգրտման և մի շարք նոր հասկացությունների ավելացման անհրաժեշտություն:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Միջազգային պահանջներին և ԵՄ դիրեկտիվների հետ համահունչ օրենքի առկայություն, բուսական աշխարհի օբյեկտների. այդ թվում՝ ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բույսերի օգտագործման գործընթացի կանոնակարգում և վարչարարության նվազեցում: Լրամշակվել են Օրենքում օգտագործված որոշ հասկացություններ, ավելացվել են նաև մի շարք նոր հասկացություններ, որոնց վերաբերյալ Օրենքում ներառվել են դրույթներ:

**<u>92.3 «Բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների հաշվառում. կադաստրների կատարելագործում»</u>**

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Կենսաբազմազանության պահպանություն և կենսաանվտանգության ապահովում, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառում» ուղղությունը:

Միջոցառման հիմնական նպատակը՝ ՀՀ տարածքում բուսական և կենդանական աշխարհի պետական հաշվառման կազմակերպումն է: Աշխատանքների իրականացման փուլում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել բուսական և կենդանական աշխարհի, ներառյալ օգտագործման իմաստով առավել խոցելի խոշոր խմբերի՝ դեղաբույսերի, ուտելի բույսերի և ուտելի սնկերի, խոշոր և մանր կաթնասունների, թռչունների, ձկների և խեցգետնի ուսումնասիրություններ և հաշվառում՝ ըստ ՀՀ մարզերի, որն իր մեջ կներառի տեսակային կազմի, տարածվածության, քարտեզագրման և հնարավորինս նաև պաշարների գնահատման, տվյալների էլեկտրոնային բազայի ձևավորման, կադաստրի ստեղծման աշխատանքներ:

Վերոնշյալ հաշվառման արդյունքների հիման վրա միայն հնարավոր կլինի ապահովել բուսական և կենդանական տեսակների գիտականորեն հիմնավորված շարունակական օգտագործումն ու վերարտադրությունը, ձևավորել բուսական և կենդանական աշխարհի կադաստրն ու ստեղծել նախադրյալներ մոնիթորինգի իրականացման համար, վերանայել Կարմիր գրքում ներառված բուսական և կենդանական տեսակների ցանկը:

Բուսական և կենդանական աշխարհի հաշվառման արդյունքում հնարավոր կլինի նաև բացահայտել բուսական և կենդանական տեսակների աճելավայրերի և ապրելավայրերի քանակական և որակական փոփոխությունները:

Հաշվառման իրականացման պահանջն ամրագրված է «Բուսական աշխարհի մասին» և «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքներում, որոնց համաձայն՝ ոչ ուշ քան տաս տարին մեկ պետք է իրականացվի բուսական աշխարհի պետական և ոչ ուշ քան հինգ տարին մեկ անգամ կենդանական աշխարհի պետական հաշվառում:

Սակայն ՀՀ տարածքում բուսական և կենդանական աշխարհի միասնական պետական հաշվառում երբևիցե չի կատարվել: Միայն գիտական թեմաների շրջանակներում ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի, կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, ՀՀ պետական համալսարանի և այլ կազմակերպությունների կողմից կատարվել են առանձին թեմատիկ ուսումնասիրություններ, որոնք նույնպես ամբողջականացման, համախմբման և կարգավորման կարիք ունեն:

Բացի այդ ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը, համաձայն «Բուսական աշխարհի մասին» և «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքների կազմվում է՝ հիմք ընդունելով բուսական և կենդանական աշխարհի պետական հաշվառման արդյունքները և արդեն իսկ լրացել է վերջին Կարմիր գրքի կազմման 10 տարին:

Բուսական և կենդանական աշխարհի հաշվառման աշխատանքները նախատեսվում է իրականացնել պետական բյուջեի միջոցների հաշվին կամ, որպես հավանական /հնարավոր ֆինանսական աղբյուր կարող է հանդիսանալ ԵՄ «Կենսաբազմազանություն և կայուն տեղական զարգացում-Հայաստան» ծրագիրը (KfW), ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներ:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Բուսական և կենդանական աշխարհը հանդիսանում է երկրի տնտեսությանն աջակցող առանցքային աղբյուրներից մեկը, հատկապես գյուղատնտեսության և ռեկրեացիայի, ինչպես նաև սննդային, առողջապահության և այլ արդյունաբերական ոլորտներին հումքի տրամադրման առումով: Սակայն վերջին տասնամյակում բուսական և կենդանական աշխարհի օգտագործումը մեծամասամբ ընթացել է տարերայնորեն, առանց հաշվի առնելու կենսապաշարների վերարտադրության բնական հնարավորությունները և դրա ապահովման անհրաժեշտ նախապայմանները:

Այդ տեսանկյունից չափազանց կարևորվում է հաշվառման իրականացումը, ստացված տվյալների հիման վրա պետական կադաստրի ձևավորումն ու վարումը, որն էլ իր հերթին հնարավորություն կընձեռի ՀՀ տարածքի բուսական և կենդանական աշխարհի բազմազանության, դրանց պաշարների, աճելավայրերի, ապրելավայրերի քանակական և որակական փոփոխությունների վերաբերյալ հավաստի տեղեկատվության միջոցով կանոնակարգելու արդեն իսկ օգտագործման ենթակա չափաքանակները, ինչպես նաև վերանայելու Կարմիր գիրքը, քանի որ այն կազմվել է 2007-2009 թթ. ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, Երևանի պետական համալսարանի մասնագետների կողմից իրականացված գիտական հետազոտությունների հիման վրա (հիմք՝ բույսերի և կենդանիների Կարմիր գիրք): Այս աշխատանքների իրականացումից արդեն իսկ անցել է 10 տարուց ավել և հետևաբար հաշվառման իրականացումը կարևորագույն պահանջ և արդյունք է հանդիսանալու Կարմիր գրքի վերանայման հարցում:

Հաշվառման անհրաժեշտությունը կարևորվել է նաև ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 արձանագրային և ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի պետական հաշվառման ծրագիր» N975-Ն և ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 13-ի «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի պետական հաշվառման ծրագիր» N974-Ն որոշումներով:

Այսպիսով.

Ըստ ՀՀ մարզերի բուսական և կենդանական տեսակների հաշվառման իրականացումը կնպաստի բուսական և կենդանական աշխարհի պետական կադաստրների ստեղծմանը, վարմանը, ինչպես նաև հիմք կհանդիսանա բուսական և կենդանական աշխարհի մոնիթորինգի իրականացման համար, կապահովի ՀՀ Կարմիր գրքի վերանայման հիմքերը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Բուսական և կենդանական աշխարհի հաշվառման աշխատանքները նախատեսվում է իրականացնել ոլորտի մասնագիտացված, գիտահետազոտական ուսումնասիրությունների իրականացման գործառույթներ ունեցող՝ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի մասնագետների հետ համատեղ, առավել ևս, որ նրանց միջոցով են իրականացվել Հայաստանի Հանրապետությունում գործող Կարմիր գրքի ստեղծման աշխատանքները:

Այսպիսով.

Վերը նշված կազմակերպությունների միջոցով ըստ ՀՀ մարզերի իրականացվելու են դաշտային ուսումնասիրություններ հետևյալ խնդիրների լուծման նպատակով.

- տեսակային կազմի որոշում,
- տարածվածություն, քարտեզագրում /GIS/
- պաշարների հաշվառում, օգտագործման ենթակա չափաքանակների վերաբերյալ հիմնավորումների առկայություն,
- Կարմիր գրքում ընդգրկված տեսակների ցանկի վերանայում,
- հաշվառման արդյունքների ամփոփում և տվյալների էլեկտրոնային բազայի ձևավորում, կադաստրի

| | |
|---|---|
| | ստեղծում:<br>Կարևորագույն գերակայություններից են.<br>• ՀՀ բուսական և կենդանական աշխարհի վիճակի վերաբերյալ արդիականացված, հավաստի և համակարգված տեղեկատվական բազայի առկայությունը:<br>• ՀՀ բուսական և կենդանական աշխարհի աճելավայրերի, ապրելավայրերի պահպանությանն ու կայուն կառավարման համար նախադրյալների ստեղծումը:<br>• ՀՀ բուսական և կենդանական աշխարհի օգտագործման ենթակա չափաքանակների կանոնակարգումը:<br>• Մոնիթորինգի համար նախադրյալների ապահովումը:<br>• ՀՀ բուսական և կենդանական աշխարհի հաշվառման արդյունքների հիման վրա ՀՀ Կարմիր գրքի վերանայման հիմքերի ապահովում:<br>***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Ներկայացված գերակայություններից բխող միջոցառումների իրականացման արդյունքում Հանրապետությունը կունենա ըստ մարզերի բուսական և կենդանական աշխարհի միաժամանակյա, լիարժեք նկարագիրը, ներառյալ պաշարների և օգտագործման ենթակա չափաքանակների վերաբերյալ հիմնավորումները, ինչպես նաև միջազգային չափանիշներով արդյունավետ գործող և նպատակային տեղեկատվություն տրամադրող բուսական և կենդանական տեղեկատվական համակարգ, ձևավորված բուսական և կենդանական աշխարհի կադաստր, ՀՀ Կարմիր գրքի վերանայման համար հավաստի հիմքեր: |
| **93** | **Հողային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակում և իրականացում**<br><br>**<u>93.1 «Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի կենսաբանական վերականգնման իրականացման ուղեցույցը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»</u>**<br><br>***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Հողային ռեսուրսների արդյունավետ կառավարում, հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակում և իրականացում» ուղղությունը:<br>«Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի կենսաբանական վերականգնման իրականացման ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը ամրագրված է ամրագրված է Կառավարության 08.02.2019թ.-ի N65-Ա որոշման 4.8 գլխում՝ որպես հողերի աղտոտման և դեգրադացման նվազմանն ուղղված քաղաքականության մշակում, Կառավարության 22.03.2018թ.-ի N 11 արձանագրային որոշմամբ հաստատված շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարությամբ, կառավարման միջոցառումների 2018-2022 թվականների ծրագրով և Կառավարության 01.06.2018թ.-ի N 626-Լ որոշմամբ հաստատված ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգն ապահովող միջոցառումների ցանկով:<br>Որոշման նախագծի նպատակն է մշակել և հաստատել մեթոդական հենք ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների նպատակային, կենսաբանական վերականգնման համար և ապահովել վերականգնված հողատարածքների վերադարձը տնտեսական շրջանառության համակարգ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ընդերքօգտագործողներ գերակշռող մասը (մոտ 90%) մշակում են միայն խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնման նախագծեր՝ սահմանափակվելով ռեկուլտիվացվող տարածքներում մակաբացման ապարների, հազվադեպ՝ նախապես կուտակված հողաբուսական շերտի փռման, հարթեման աշխատանքներով: Նման մոտեցումը չի նպաստում վերականգնվող տարածքներում նոր լանդշաֆտային միավորների ստեղծմանը, բացառվում է այդ տարածքներում որևիցե այլ տնտեսական գործունեության իրականացումը, ինչպես նաև դրանք շարունակում են մնալ շրջակա միջավայրի աղտոտման աղբյուր: |

Ուղեցույցի մշակման համար անհրաժեշտ է իրականացնել ռեկուլտիվացիոն աշխատանքներ մի քանի փորձարարական հարթակներում: Աշխատանքների կատարման համար պահանջվող ֆինանսավորումը տվյալ փուլում հստակեցնել և գնահատել հնարավոր չէ, քանի որ դա կախված է հարթակների աշխարհագրական տեղադիրքից, մակերեսից, կենսաբանական վերականգնման աշխատանքների ծավալից, մեթոդաբանությունից,

Ընտրված բուսատեսակների կպչողականությունից և այլն: Հայտնի չէ նաև հնարավոր ֆինասավորման աղբյուրը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի կենսաբանական վերականգնման իրականացման ուղեցույցի մշակման համար նախատեսվում է ընտրել փորձարարական հարթակներ, այդտեղ իրականացնել փոքրամասշտաբ պիլոտային ծրագրեր՝ կատարելով հարթակներում ոչ միայն լեռնատեխնիկական վերականգնում, այլ նաև փորձարկել վերականգնված վերին, հողաբուսական շերտի ամրացում յուրաքանչյուր տարածաշրջանին բնորոշ բուսական տեսակների (խոտային ծածկույթ, թփուտներ, ծառապատում) տնկման միջոցով:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Մշակել ՀՀ տարածքին համարժեք, գիտելիքահենք մեթոդաբանություն, որը թույլ կտա ընդերքօգտագործման արդյունքում խախտված տարածքների համար մշակել և իրականացնել կենսաբանական ռեկուլտիվացիայի ծրագրեր, ապահովել վերականգնված տարածքների հետագա տնտեսական յուրացումը:

**93.2 «ՀՀ տարածքում աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի իրականացում»**

***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Հողային ռեսուրսների արդյունավետ կառավարում, հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակում և իրականացում» ուղղությունը:

Հողերի վիճակի ուսումնասիրության, գնահատման և դրա փոփոխության ժամանակին բացահայտման (աղտոտվածության մոնիթորինգը) անհրաժեշտությունը բխում է ՀՀ հողային օրենսգրքի 32-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 19.02.2009թ.-ի N 276-Ն դրույթներից: Աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի իրականացման անհրաժեշտությունը ամրագրված է Կառավարության 08.02.2019թ.-ի N65-Ա որոշման 4.8 գլխում՝ որպես շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություն, ինչպես նաև Կառավարության 22.03.2018թ.-ի N 11 արձանագրային որոշմամբ հաստատված շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ն միջոցառումների 2018-2022 թվականների ծրագրում:

Միջոցառման իրականացման նպատակներն են.

1) հողերի վիճակի ուսումնասիրություն, գնահատում և դրա փոփոխության ժամանակին բացահայտում, այդ փոփոխությունների կանխատեսում և բացասական գործընթացների հետևանքների կանխարգելում,

2) տեխնածին աղտոտված հողատարածքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, կադաստրի ստեղծում,

3) քարտեզագրական նյութերի թվայնացում և ներկայացում թվային տեղեկատվական միջավայրերում,

4) դիտակետերի ցանցի ստեղծում,

5) մոնիթորինգի տեղեկատվության հավաքագրում և գրանցում:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Օրենսդրորեն հստակ սահմանված են հողերի մոնիթորինգի իրականացման ցուցանիշները, սակայն ներկայումս իրականացվում է հողերի աղտոտվածության ոչ կարգավորված և էպիզոդիկ բնույթ կրող մոնիթորինգ: Հողերի աղտոտվածության դիտարկման աշխատանքները կատարվում են տարբեր մակարդակներով, ոչ լիարժեք, ինչի արդյունքում բացակայում է հողերի որակի մոնիթորինգի և դրա վերաբերյալ տեղեկատվության մշտական գործող ու կանոնակարգված համակարգ:

Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ գումարները գնահատվել են ըստ հողերի տեխնածին աղտոտվածությամբ գնահատվող հարթակների (ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներ, բացահանքեր, հանքահորային ջրերի բեռնաթափման վայրեր և այլն) քանակի, դրանցից յուրաքանչյուրում նվազագույն նմուշների

քանակի և կազմել են մոտ 100300.0 հազ.դրամ: Ֆինանսավորման աղբյուրը այս փուլում դեռևս որոշված չէ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Իրականացնել աղտոտված, դեգրադացված հողերի դաշտային ուսումնասիրություններ, առանձնացված տարածքները կապակցել կոորդինական առանցքներով տոպոհիմքերի հետ, զարգացնել նմուշարկման դիտացանց, հատկապես պոչամբարներին և մետաղական հանքավայրերի լցակույտերին հարող տարածքներում, իրականացնել հողերի աղտոտվածությունը բնութագրող շուրջ 30 պարամետրերի որոշում, լրացնել հողերի աղտոտվածության վիճակի վերաբերյալ մոնիթորինգային շարքեր:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Միջոցառման իրականացման արդյունքում կձևավորվի ՀՀ տարածքին համարժեք, միջազգային չափանիշներով արդյունավետ գործող և նպատակային ինֆորմացիա արտադրող մոնիթորինգային համակարգ, ինչպես նաև կմշակվեն ՀՀ բնակլիմայական պայմաններին և հողային շերտի աղտոտվածության որակական բաշխման առանձնահատկություններին համապատասխան քարտեզներ:

***93.3 «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներում և անտառային հողերում սողանքային և սողանքավտանգ տեղամասերի գույքագրում»***

***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Հողային ռեսուրսների արդյունավետ կառավարում, հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակում և իրականացում» ուղղությունը:

ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներում և անտառային հողերում սողանքային և սողանքավտանգ տեղամասերի գույքագրման իրականացման անհրաժեշտությունը ամրագրված է Կառավարության 08.02.2019թ.-ի N65-Ա որոշման 4.8 գլխում՝ որպես շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություն, ինչպես նաև Կառավարության 22.03.2018թ.-ի N 11 արձանագրային որոշմամբ հաստատված շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման միջոցառումների 2018-2022 թվականների ծրագրում, ՀՀ կառավարության 2013թ.-ի հուլիսի 10-ի նիստի N 27 արձանագրային որոշման հավելվածով հաստատված ՀՀ սողանքային աղետի կառավարման հայեցակարգում:

Միջոցառման իրականացման նպատակն է բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքներում բնապահպանական աղետի աղբյուր հանդիսացող սողանքային և սողանքավտանգ տեղամասերի կադաստրի ստեղծումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ կառավարության 2013թ.-ի հուլիսի 10-ի նիստի N 27 արձանագրային որոշման հավելվածով հաստատվել է ՀՀ սողանքային աղետի կառավարման հայեցակարգը, որի VIII-րդ գլխի 35-րդ կետի 7)-րդ ենթակետի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի նիստի N 22 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած սողանքային աղետի կառավարման պլանի հավելվածի 6-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներին համաձայն բնապահպանության նախարարությունն իրականացնում է բնության հատուկ պահպանվող տարածքներին (բնության հուշարձան, արգելավայր, արգելոց) սպառնացող սողանքների մոնիթորինգ, գույքագրում է իր ոլորտի օբյեկտներին (որպես հնարավոր բնապահպանական աղետների աղբյուր) վտանգ սպառնացող սողանքների տեղամասերը և պարբերաբար թարմացնում դրանց ակտիվացումների մասին տեղեկատվական բազան: Սողանքային մարմինների վերաբերյալ համակարգված տեղեկատվության բացակայությունը բացասաբար է անդրադառնում բնության հատուկ պահպանվող տարածքների արդյունավետ կառավարման, էկոլոգիական աղետների կանխալգելման նախադրայլների ստեղծման վրա:

Գույքագրման աշխատանքների առաջին փուլի՝ ֆոնդային և հրատարակված նյութերի վերլուծության, դաշտային ուսումնասիրությունների, առաջնային տեղեկատվական փաթեթի կազմման համար լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում: Դրանք իրականացվում են բնապահպանության նախարարության մասնագետների կողմից: Հիմնական փուլի աշխատանքների՝ ակտիվ սողանքային մարմինների տարածքում դիտակետերի ցանցի ստեղծման

և սողանքային երևույթների մոնիթորինգի իրականացման համար նախնական հաշվարկներով անհրաժեշտ է շուրջ 122535.0 հազ.դրամ գումար: Ֆինանսավորման աղբյուրը այս փուլում դեռևս որոշված չէ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Միջոցառման իրականացումն ապահովելու համար նախատեսվում է. ֆոնդային և հրատարակված նյութերի ուսումնասիրություն, դաշտային ուսումնասիրություններ՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում սողանքային/սողանքավտանգ տեղամասերի բացահայտում, ուսումնասիրություն, գույքագրում, կադաստրի ստեղծում, դիտակետերի ցանցի ստեղծում, սողանքային երևույթների մոնիթորինգի իրականացում (որպես հեռանկարային ծրագրային գործընթաց):

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Հանրապետության տարածքին համարժեք, միջազգային չափանիշներով արդյունավետ գործող և նպատակային ինֆորմացիա տրամադրող բնության հատուկ պահպանվող տարածքներում, անտառային հողերում սողանքային երևույթների և սողանքավտանգ տեղամասերի կադաստր:

**<u>93.4 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի N22-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»</u>**

***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Հողային ռեսուրսների արդյունավետ կառավարում, հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակում և իրականացում» ուղղությունը:

Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման կարգի մշակումը համաձայն ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի ՀՀ բնապահպանության նախարարության իրավասությունն է: Որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը ամրագրված է Կառավարության 08.02.2019թ.-ի N65-Ա որոշման 4.8 գլխում՝ որպես շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություն:

Միջոցառման նպատակն է մշակել իրավական հիմք ընդերքօգտագործողների կողմից արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար կատարվող հատկացումների վերահաշվարկման, հանքի վերջնական փակման ծրագրի դրույթներին համապատասխանեցման համար:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Համաձայն ներկայումս գործող ընթացակարգերի՝ ընդերքօգտագործողը կատարում է տարեկան հատկացումներ հանքի փակումից հետո արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար: Սակայն հաշվի առնելով ընդերքօգտագործման թույլտվությունների գործողությունների ժամկետները՝ մինչև 50 տարի, հանքի փակման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում վերանայել հատկացված գումարները և դրանք համապատասխանեցնել հանքի փակման վերջնական ծրագրին և մշտադիտարկման իրականացման փաստացի ծախսերին:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Կառավարության որոշման նախագծում կներկայացվեն հանքի փակման ծրագրին համապատասխան մոնիթորինգի համար անհրաժեշտ գումարների հաշվարկման, վերջնական հատկացումների կատարման մեխանիզմներ:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Հանքի փակումից հետո շրջակա միջավայրի, հարակից բնակավայրերի բնակչության անվտանգության և առողջության վրա բացասական ազդեցությունների մոնիթորինգի արդյունավետ և նպատակային իրականացման համար անհրաժեշտ գումարների առկայություն:

**<u>93.5 «Հայաստանի Հանրապետության Արարատյան դաշտում հողերի չեզոք դեգրադացիայի գաղափարի իրականացում»</u>**

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը:***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Հողային ռեսուրսների արդյունավետ կառավարում, հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակում և իրականացում» ուղղությունը:

Հայաստանի հողային բոլոր գոտիներում դիտվում է հողի բերրիության անկում և էրոզիոն պրոցեսների ակտիվացում՝ պայմանվորված հիմնականում մարդածին և մասամբ բնական գործոնների ազդեցությամբ: Առավել խոցելի են կիսանապատային, չոր տափաստանային, տափաստանային և անտառային գոտիները, որտեղ մարդածին ներգործության և տարածքի բնական պայմանների (լանջերի թեքություն) փոփոխության հետ կապված մեծանում է հողերի էրոզացվածության աստիճանը:

Միջոցառման նպատակն է Արարատյան դաշտավայրի նախալեռնային ջրասակավ գոտում ցուցադրել հողերի չեզոք դեգրադացիային գաղափարի հասնելու հնարավորությունները:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հողերի չեզոք դեգրադացիան ազգային մակարդակով քաղաքականության մեջ ներառելու նպատակով դրա դրույթները ընդգրկվել են ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի 10-ամյա ռազմավարությանը ներդաշնակեցված «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրում», որը ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել 2015 թ. մայիսի 27-ի N 23 արձանագրային որոշմամբ: Սույն փաստաթղթում, որպես առաջնահերթ գործողություն, ամրագրված է Հայաստանում ՀՉԴ-ի իրականացման ծրագրի մշակումը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Կաթիլային համակարգի ներդրում, հողերի բարելավում կենսահումուսի կիրառմամբ, քամու ուժը մեղմող ծառաշերտերի ստեղծում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

- Արարտի մարզի Նարեկ համայնքում 10,0հա կաթիլային ոռոգմամբ պտղատու նոր այգու հիմնում,
- Արարտի մարզի Նարեկ համայնքում 20,0հա նորատունկ այգիներում կաթիլային ոռոգման համակարգի ներդրում,
- Տարածքի բերքատվության բարձրացում կենսահումուսով պարարտացման եղանակով,
- ճանապարհների եզրով ծառերի տնկում

**94**

**Հանքերի փակման (ռեկուլտիվացիայի) ժամանակակից մեխանիզմների կիրառման խթանում**

**<u>94.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»</u>**

***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Հանքերի փակման (ռեկուլտիվացիայի) ժամանակակից մեխանիզմների կիրառման խթանում» ուղղությունը:

Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման, հատկացումների չափերի հաշվարկման մեխանիզմների մշակումը, ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ որոշումների ընդունումը

համաձայն ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի ՀՀ բնապապանության նախարարության իրավասությունն է: «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը ամրագրված է Կառավարության 08.02.2019թ.-ի N65-Ա որոշման 4.8 գլխում՝ որպես շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություն, ինչպես նաև Կառավարության 01.06.2018թ.-ի N 626-Լ որոշմամբ հաստատված ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգն ապահովող միջոցառումների ցանկով:

Միջոցառման նպատակն է մշակել իրավական հիմք ընդերքօգտագործողների կողմից խախտված հողատարածքների վերականգնման համար շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարվող հատկացումների վերահաշվարկման, հանքի վերջնական փակման ծրագրի դրույթներին համապատասխանեցման, ինչպես նաև դրամագլխի միջոցները խախտված տարածքներում բիզնես-ծրագրերի ծավալման նպատակով օգտագործելու համար:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Համաձայն ներկայումս գործող ընթացակարգերի՝ ընդերքօգտագործողը կատարում է տարեկան հատկացումներ երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման աշխատանքների ավարտից հետո խախտված հողատարածքների վերականգնման՝ ռեկուլտիվացիայի համար: Սակայն հաշվի առնելով ընդերքօգտագործման թույլտվությունների գործողությունների ժամկետները՝ մինչև 50 տարի, հանքի փակման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում վերանայել հատկացված գումարները և դրանք համապատասխանեցնել հանքի փակման վերջնական ծրագրին և ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման փաստացի ծախսերին: Միաժամանակ, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխում կուտակված գումարների օգտագործման հնարավորությունները խիստ սահմանափակված են՝ միայն խախտված հողերի վերականգնման համար:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Կառավարության որոշման նախագծում կներկայացվեն հանքի փակման ծրագրին համապատասխան ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ գումարների վերահաշվարկման, վերջնական հատկացումների կատարման մեխանիզմներ: **Կստեղծվեն իրավական հիմքեր, որոնք թույլ կտան օգտագործել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացված գումարները խախտված տարածքներում նոր բիզնես ծրագրերի իրականացման համար (օրինակ՝ ռեկրեացիոն գոտիների ստեղծում, ձկնաբուծական տնտեսություններ և այլն):**

*2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*

Ռեկուլտիվացիոն աշխատանքների արդյունավետ և նպատակային (այդ թվում՝ բիզնես-ծրագրերի ծավալման) իրականացման համար անհրաժեշտ գումարների առկայություն:

**94.2 «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»**

*1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը*

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Հանքերի փակման (ռեկուլտիվացիայի) ժամանակակից մեխանիզմների կիրառման խթանում» ուղղությունը:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (ՀՕ-280-Ն, 28.11.2011թ.) 17-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ ընդերքօգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի (բնապահպանության նախարարության) իրավասություններից է ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգի հաստատումը:

«Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը ամրագրված է ամրագրված է Կառավարության 08.02.2019թ.-ի N65-Ա որոշման 4.8 գլխում՝ որպես հողերի աղտոտման և դեգրադացման

նվազմանն ուղղված քաղաքականության մշակում, Կառավարության 01.06.2018թ.-ի N 626-Լ որոշմամբ հաստատված ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգն ապահովող միջոցառումների ցանկով:

Որոշման նախագծի նպատակն է մշակել և հաստատել իրավական հենք ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների նպատակային, արդյունավետ վերականգնման նախագծերի կազմման համար, ինչպես նաև ներդնել մեխանիզմներ հանքի վերջնական փակման ծրագրի մշակման ընթացքում հողերի լիարժեք վերականգնման ապահովման համար անհրաժեշտ գումարների վերահաշվարկման համար:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս ընդերքօգտագործողներ գերակշռող մասը (մոտ 90%) մշակում են միայն խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնման նախագծեր՝ սահմանափակվելով ռեկուլտիվացվող տարածքներում մակաբացման ապարների, հազվադեպ՝ նախապես կուտակված հողաբուսական շերտի փռման, հարթեման աշխատանքներով: Նման մոտեցումը չի նպաստում վերականգնվող տարածքներում նոր լանդշաֆտային միավորների ստեղծմանը, բացառվում է այդ տարածքներում որևիցե այլ տնտեսական գործունեության իրականացումը, ինչպես նաև դրանք շարունակում են մնալ շրջակա միջավայրի աղտոտման աղբյուր:

Միաժամանակ, հաշվի առնելով ընդերքօգտագործման թույլտվությունների գործողությունների ժամկետները՝ մինչև 50 տարի, հանքի փակման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում վերանայել ռեկուլտիվացիայի ծրագիրը և այն համապատասխանեցնել հանքի փակման վերջնական ծրագրին, վերականգնման աշխատանքների իրականացման փաստացի ծավալներին:

1.2 **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առկա խնդիրների լուծման նպատակով կվերանայվի գործող իրավական ակտը, որով սահմանվում են ռեկուլտիվացիոն արժեքների կառուցվածքը, ծախսատեսակները, աշխատանքների արժեքների հաշվարկման մեթոդաբանությունը, կսահմանվեն գումարների ինդեքսավորման նոր մոտեցումներ:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի ռեկուլտիվացման իրատեսական և արդյունավետ աշխատանքների նախագծերի կազմման, աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման գործուն մեխանիզմների առկայություն:

95

**Քիմիական նյութերի և թափոնների**
**(այդ թվում՝ ընդերքօգտագործման) էկոլոգիապես անվտանգ կառավարում**

**95.1 «Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»**

***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Քիմիական նյութերի և թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործման) էկոլոգիապես անվտանգ կառավարում» ուղղությունը:

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի նպատակը քիմիական նյութերի՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից անվտանգ գործածության ապահովումն է:

Նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կոնվենցիաներից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածից, որի համաձայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Հետևաբար՝ քիմիական նյութերի գործածության ոլորտում պետական կառավարման մարմինների իրավասությունները պետք է բխեն օրենքից:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի գործածության բնագավառում ընդունված են բավականին մեծ թվով իրավական ակտեր, որոնք հիմնականում բխում են Հայաստանի Հանրապետության

միջազգային պայմանագրերից և կարգավորում են քիմիական նյութերի բնագավառի առանձին, երբեմն միմյանց հետ չկապակցվող իրավահարաբերություններ: Քիմիական նյութերի գործածության բնագավառում ընդունված և՛ միջազգային կոնվենցիաները, և՛ ներպետական օրենսդրությունը, և՛ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդունված իրավական ակտերը հիմնականում կարգավորում են որոշ քիմիական նյութերի արգելման, ներմուծման և արտահանման գործընթացները կամ կարգավորում են սահմանափակ թվով քիմիական նյութերի գործածությունը, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի գրանցման, մակնշման հետ կապված հարաբերությունները կարգավորված չեն:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի Հանրապետությունում բացակայում է քիմիական նյութերի միասնական գրանցման համակարգը և ներկայումս քիմիական նյութերի կարգավորման բնագավառում առաջնային լուծում պահանջող խնդիրը քիմիական նյութերի միասնական գրանցման համակարգի ստեղծումն է, քանի որ քիմիական նյութերի հատկությունների, քանակության, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության, քիմիական նյութեր արտադրողների, ներմուծողների, իրացնողների վերաբերյալ տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալու պետական մարմիններին արդյունավետ կարգավորել բնագավառը:

Քիմիական նյութերի գործածության բնագավառում չափազանց կարևոր է քիմիական նյութերի հատկությունների, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց ունեցած ազդեցության վերաբերյալ վերջնական սպառողներին, քիմիական նյութերի գործածության մեջ ներգրավված աշխատողներին, ազդակիր այլ անձանց իրազեկելը:

Վերը նշված խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է մշակել և ընդունել «Քիմիական նյութերի մասին» օրենք, որով կկարգավորվեն քիմիական նյութերի անվտանգ շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում և քիմիական նյութերի ներմուծման և արտահանման համակարգը, կստեղծվի քիմիական նյութերի գրանցման միասնական համակարգ, կսահմանվեն՝ քիմիական նյութերի դասակարգման և մակնշման պահանջները, քիմիական նյութերի գործածության մեջ ներգրավված անձանց իրավունքները և պարտականությունները, պատասխանատվություն՝ քիմիական նյութերի գործածության օրենսդրության պահանջները խախտելու համար:
Օրենքի նախագծի մշակման ընթացքում կներգրավվեն առողջապահության, տնտեսական զարգացման և ներդրումների, արտակարգ իրավիճակների, գյուղատնտեսության նախարարությունները և պետական եկամուտների կոմիտեն՝ քիմիական նյութերի գործածության ոլորտում յուրաքանչյուր մարմնի իրավասությունները սահմանելու համար:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի ընդունմամբ կկարգավորվեն Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի գործածության հետ կապված իրավահարաբերությունները՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցության նվազեցման ու անվտանգության ապահովման նպատակով:

**95.2 «Ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրում»**

***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Քիմիական նյութերի և թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործման) էկոլոգիապես անվտանգ կառավարում» ուղղությունը:

Մետաղական օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոնների գույքագրման իրականացման անհրաժեշտությունը ամրագրված է Կառավարության 08.02.2019թ.-ի N65-Ա որոշման 4.8 գլխում՝ որպես թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործման) էկոլոգիապես անվտանգ կառավարման բնագավառի առաջնահերթ ուղղություն, ինչպես նաև Կառավարության 22.03.2018թ.-ի N 11 արձանագրային որոշմամբ հաստատված շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման միջոցառումների 2018-2022 թվականների ծրագրում:

Միջոցառման նպատակն է դասակարգել ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտներ և

թափոնների տեղամասերը ըստ վտանգավորության՝ գնահատելով դրանք տարածքում շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակը և շրջակա միջավայրին հասցված վնասը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտները և տեղամասերը հանդիսանում են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության աղբյուր լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության վրա, հանգեցնում է էկոհամակարգի դեգրադացմանը, աղտոտվում են մակերևութային և ստորգետնյա ջրերը, փոխվում է դրանց ջրաբանական ռեժիմը, ֆիզիկական ու քիմիական բաղադրությունները, տեղի է ունենում մթնոլորտային օդի աղտոտում՝ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների մակերևույթից փոշեգոյացման հետևանքով:

Լքված և տիրազուրկ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների և տեղամասերի կառավարման, շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումների ծրագրերի մշակման համար անհրաժեշտ են մի շարք բնութագրիչ տվյալներ, որոնց լիազոր մարմինը ներկայումս չի տիրապետում:

Սակայն ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների և տեղամասերի վտանգավորության աստիճանի գնահատման նպատակոն անհրաժեշտ են  մի շարք հետազոտական աշխատանքներ՝ բնական միջավայրի բաղադրիչների նմուշառում, նմուշների քիմիական վերլուծություն և այլն, որի համար նախնական հաշվարկով անհրաժեշտ է շուրջ 33120.0հազ.դրամ գումար: Աշխատանքների ֆինասավորման աղբյուր այս փուլում չկա:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների և տեղամասերի գույքագրման նպատակով նախատեսվում է իրականացնել.

1) ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների հարակից տարածքներում շրջակա միջավայրի աղտոտման ուսումնասիրությունը,

2) ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների  և դրանց հարակից տարածքերի շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տեղեկատվական բազային ստեղծումը, դրանց վերաբերյալ ամփոփ տեղեկատվական թերթիկների լրացումը,

3) ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների դասակարգումն ըստ վտանգավորության,

4) շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցման նպատակով օգտահանման, վերամշակման, կոնսերվացման, այլ միջոցառումների նախագծման և իրականացման անհրաժեշտության հիմնավորման և միջոցառումների առաջնահերթությունների որոշումը:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման արդյունքում շրջակա միջավայրի աղտոտվածության վերաբերյալ տվյալների ստացում, շրջակա միջավայրի բնական բաղադրիչների աղտոտվածության բնույթի և մարդկանց առողջության վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ համապարփակ տեղեկատվական հենքի առկայություն:

**95.3 «Ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասերի/օբյեկտների ռեկուլտիվացիա»**

***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Քիմիական նյութերի և թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործ-ման) էկոլոգիապես անվտանգ կառավարում»  ուղղությունը:

Ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի, դրա արդյունքում հողերի աղտոտման և դեգրադացման նվազմանն ուղղված քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը ամրագրված է Կառավարության 08.02.2019թ.-ի N65-Ա որոշման 4.8 գլխում:

Միջոցառման նպատակն է կատարել ներկայիս դրությամբ տիրազուրկ կամ լքված համարվող ընդերքօգտագործման թափոններով զբաղեցրած տարածքների, ինչպես նաև թափոնների օբյեկտների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա՝ դրանք չեզոքացնելով որպես շրջակա միջավայրի աղտոտման աղբյուր, նվազեցնելով տեխնածին աղտոտման մակարդակը և բնությանը հասցվող վնասը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

2017 թվականին բնապահպանության նախարարության կողմից իրականացված դաշտային

ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ ՀՀ Լոռու, Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում դիտարկվել են երեք տասնյակ ընդերքօգտագործման թափոնների տեղամասեր և օբյեկտներ, դրանց վերաբերյալ ստեղծվել է սկզբնական տեղեկատվական հենք:

Առանձնացվել են տասնյակից ավել տեղամասեր, որտեղ ռեկուլտիվացիոն աշխատանքների, կենսաբանական ռեմեդացիայի միջոցառումների իրականացումն ավելի քան հրատապ է:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախագծման, թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծման համար անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ազդեցությունների մի շարք բնութագրիչ տվյալներ (հողային և ջրային միջավայրերի աղտոտվածության մակարդակ, թափոններով զբաղեցրած տարածքների տոպոգրաֆիական հանույթներ, տարածքների կամ օբյեկտների տարածական-ծավալային եռաչափ մոդելներ և այլն): Վերը նշված աշխատանքների կատարման ֆինասավորման աղբյուր այս փուլում չկա: Այս փուլում հնարավոր չէ նաև հստակ գնահատել աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ միջոցները, քանի որ դրանք կապված են յուրաքանչյուր օբյեկտում կատարվելիք միջոցառումների տեսակից և ծավալներից:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի նպատակով նախատեսվում է.

1) իրականացնել ընդերքօգտագործման թափոնների տեղամասերի և օբյեկտների շրջակա միջավայրի բնական բաղադրիչների աղտոտվածության մոնիթորինգ:

2) Չափագրել ռեկուլտիվացման ենթակա տարածքները:

3) Յուրաքանչյուր տեղամասում կատարել տոպոգրաֆիական մանրակրկիտ հանույթ:

4) Մշակել յուրաքանչյուր տեղամասի/օբյեկտի եռաչափ համակարգչային մոդել՝ դրանց տարածական դիրքի, ծավալային պատկերի, կազմող ապարների, ինֆիլտրացվող ջրային հոսերի և դրանց բեռնաթափման օջախների և այլ վերաբերյալ հստակ ելակետային տվյալներ ապահովելու նպատակով:

5) Մշակել լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի նախագիծ և իրականացնել այն:

6) Համապատասխան գիտական հաստատությունների հետ քննարկել և ընտրել կենսաբանական ռեկուլտիվացիայի առավել նպաստավոր մեթոդները՝ կենտրոնանալով տարածքներին բնորոշ էնդեմիկ բուսատեսակների կիրառման հնարավորությունների վրա:

7) Մշակել կենսաբանական ռեկուլտիվացիայի նախագիծ և իրականացնել այն:

8) Ապահովել ռեկուլտիվացված տարածքներում շրջակա միջավայրի հետնախագծային մոնիթորինգ (առնվազն 5 տարի)՝ վերահսկելով կենսաբանական ռեկուլտիվացիոն աշխատանքների արդյունավետությունը:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցում, ընդերքօգտագործման թափոնների տեղամասերի և օբյեկտների հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովում:

## <u>95.4 Թափոնների կառավարման հայեցակարգային մոտեցումների մշակում</u>

***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Քիմիական նյութերի և թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործման) էկոլոգիապես անվտանգ կառավարում» ուղղությունը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Թափոնների հետևյալ խմբերի տեսակների՝ արդյունաբերական, գյուղատնտեսական, բժշկական, շինարարության և քանդման, թափոնների կառավարման նպատակով անհրաժեշտ է մշակել թափոնների առաջացման կանխարգելման կամ կրճատման, վերամշակման և օգտահանման խնդիրները կարգավորող մոտեցումներ:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Արդյունաբերական, գյուղատնտեսական, բժշկական, շինարարության և քանդման թափոնների կառավարման ոլորտը կարգավորող մոտեցումների մշակում՝ նպատակաուղղված այդ թափոնների առաջացման կանխարգելմանը կամ կրճատմանը, վերամշակմանը և օգտահանմանը:

| | |
|---|---|
| 96 | **Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքնական գործընթացի արդյունավետ իրականացումը. բնապահպանական օրենսդրության ներդաշնակեցում, ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի դիրեկտիվներին և այդ համատեքստում միջազգային համագործակցության ընդլայնումը՝ ճանապարհային քարտեզով նախանշված գործողությունների իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով**<br><br>**<u>96.1 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»</u>**<br><br>1. ***Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքնական գործընթացի արդյունավետ իրականացում» ուղղությունը:<br>ՄԱԿ-ի ԵՏՀ քարտուղարության կողմից տրամադրված կարողությունների զարգացմանն ուղղված աջակցությամբ, Հայաստանը իրականացրել է «Ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) արձանագրության դրույթների համապատասխանեցումը ազգային օրենսդրության դրույթներին, ազգային փորձի զարգացումը, ՌԷԳ ուղեցույցների մշակումը, ՌԷԳ-ի արդյունավետ իրականացումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագիրը, որի նպատակն էր Էսպո կոնվենցիայի և արձանագրության կիրարկման ապահովումը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների նախագիծը, Օրենքի նախագիծը 2017թ.դեկտեմբերի 26-ին ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: ՀՀ կառավարության կողմից ստացվել են առաջարկություններ և դիտողություններ, այժմ կատարվում են նախագծի վերանայման աշխատանքները:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների նախագծի վերանայում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում:<br>2. ***Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Օրենքի հասկացությունները կհամապատասխանեցվի Կոնվենցիաների հասկացություններին:<br>Օրենքի գնահատման և փորձաքննության սկզբունքներում կկատարվեն համապատասխան փոփոխություններ:<br>Գործունեությունների ցանկում /14-րդ հոդված/, առաջարկվել են կոնվենցիաներում ամրագրված մի քանի գործունեության տեսակներ: Օրենքում կներառվի է Ձեռնարկողի նախաձեռնությամբ փորձաքննության իրականացման հնարավորությունը և այլն: ՌԷԳ -ը կառանձնացվի ՇՄԱԳ-ից և կներկայացվի առանձին գլխով: Օրենքում կամրագրվեն ՌԷԳ ենթակա լինելու մեխանիզմները, համաձայն արձանագրության դրույթների: Փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերի ցանկից կհանվեն բնապահպանության և առողջապահության ոլորտները: Ամբողջովին նոր խմբագրմամբ կներկայացվի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման» հոդվածը:<br>Միջոցառման իրականացման արդյունքում գործընթացները կմոտարկվեն միջազգային չափորոշիչներին, կկարգավորվի Ռազմավարական էկոլոգիական գնահատման /ՌԷԳ/ և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ գործընթացները:<br>Գործընթացները կհամապատասխանեցվեն Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային կոնվենցիաների դրույթներին:<br>Միջոցառումների իրականացման արդյունքում կկարգավորվեն Օրենքով դեռևս չկարգավորված գործընթացները, ինչը կորոշակիացնի և թափանցիկ կդարձնի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացները, կհեշտացնի Ձեռնարկողների և ոլորտի կառավարումն իրականացնող մարմինների աշխատանքը: |

**96.2 «Ռազմավարական էկոլոգիական գնահատման իրականացման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»**

1. ***Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքնական գործընթացի արդյունավետ իրականացում» ուղղությունը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1 մասի 16 կետը և «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի հավելվածի 6-րդ կետի համաձայն:

ՄԱԿ-ի ԵՏՀ քարտուղարության կողմից տրամադրված կարողությունների զարգացմանն ուղղված աջակցությամբ, Հայաստանը իրականացրել է «Ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) արձանագրության դրույթների համապատասխանեցումը ազգային օրենսդրության դրույթներին, ազգային փորձի զարգացումը, ՌԷԳ ուղեցույցերի մշակումը, ՌԷԳ-ի արդյունավետ իրականացումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագիրը, որի նպատակն էր Էսպո կոնվենցիայի և արձանագրության կիրարկման ապահովումը:

Մշակվել է «ՌԷԳ իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Այժմ կատարվում են նախագծի վերանայման աշխատանքները:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

«Ռազմավարական էկոլոգիական գնահատման իրականացման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերանայում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում:

2. ***Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

ՌԷԳ գործընթացը կհանվի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից, ինչի արդյունքում Օրենքը կպարզեցվի:

Կպարզեցվի նաև բոլոր ոլորտների հիմնադրութային փաստաթղթերի փորձաքննությունը՝ այն կիրականացվի միայն հաշվետվության փուլում: Կպարզեցվեն քաղաքաշինության ոլորտի փոքր տարածքների պլանավորման փաստաթղթերի փորձաքննական գործընթացը:

Միջոցառման արդյունքում կկարգավորվի Ռազմավարական էկոլոգիական գնահատման /ՌԷԳ/ գործընթացը, կմոտարկվի միջազգային չափորոշիչներին և կհամապատասխանեցվի Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային կոնվենցիաների դրույթներին, ինչը որոշակի և թափանցիկ կդարձնի նաև փորձաքննության գործընթացը, կհեշտացնի Ձեռնարկողների և ոլորտի կառավարումն իրականացնող մարմինների աշխատանքը:

**96.3 «Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության հիմնական գնահատման մեթոդիկան հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»**

1. ***Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքնական գործընթացի արդյունավետ իրականացում» ուղղությունը:

«**Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության հիմնական գնահատման** մեթոդիկան հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է 2014 թվականի հունիսի 21-ի «**Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին**» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջից:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

**Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության հիմնական գնահատման** մեթոդիկայի մշակումը անհրաժեշտ է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների, բնական ռեսուրսների, պայմանների հնարավոր փոփոխությունների և դրանց ծավալների հնարավոր ազդեցության ամբողջական, գումարային գնահատման գործընթացը ճշգրիտ, հիմնավորված կազմակերպելու համար, ինչը նաև փորձաքննության կարևորագույն սկզբունք է: Համակատարող գերատեսչությունը մասնակցում է կազմակերպվող քննարկումներին, ներկայացնում է համապատասխան ոլորտային առաջարկություններ:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության հիմնական գնահատման մեթոդիկայի առկայություն, գնահատման գործընթացի ճշգրիտ, հիմնավորված կազմակերպում, փորձաքննության պատշաճ իրականացում:

**97 Շրջակա միջավայրի մոնիթորինգի, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը**

<u>**97.1 «Բնապահպանության նախարարության կողմից լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում»**</u>

***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Շրջակա միջավայրի մոնիթորինգի, թույլտվություն¬ների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրում, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարում» ուղղությունը:

Բնապահպանության նախարարությունը ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման 5-րդ կետով հաստատված կարգով ապահովում է մասնավորապես՝ վտանգավոր թափոնների, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի պրեկուրսորներ չհամարվող թունավոր նյութերի և օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման և արտահանման մեկանգամյա լիցենզիաների տրամադրումը:

Միջոցառման նպատակը բնապահպանության բնագավառում լիցենզիաների և թույլտվությունների տրամադրումն էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացնելն է:

Թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումն ընդգրկված է ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման հավելվածի «4.8 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ» կետով սահմանված շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղությունների թվարկվող շարքում:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության կողմից արտաքին առևտրի դեպքում սահմանափակումների ենթակա ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման մեկանգամյա լիցենզիաները բնապահպանության նախարարությունը տրամադրում է թղթային տարբերակով: Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) մասին պայմանագրի 7-րդ հավելվածի արձանագրության՝ երրորդ երկրների հետ արտաքին առևտրի դեպքում սահմանափակումների ենթակա ապրանքների արտահանման և(կամ) ներմուծման լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման կանոնակարգը սահմանում է, որ լիցենզիան հնարավոր է տրամադրել (ձևակերպել) էլեկտրոնային փաստաթղթի տեսքով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) սահմանած կարգով, իսկ մինչ այդ ԵԱՏՄ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան: Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն և 2015 թվականի փետրվարի 5-ի N90-Ն որոշումներով լիցենզիաների և թույլտվությունների էլեկտրոնային փաստաթղթի տեսքով տրամադրման համար հայտերի և պահանջվող փաստաթղթերի (տեղեկությունների) առցանց ներկայացման և էլեկտրոնային փաստաթղթի տեսքով տրամադրման ընթացակարգեր սահմանված չեն:

Բնապահպանության նախարարության կողմից լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային

| | |
|---|---|
| | համակարգի ներդրման համար պահանջվող ֆինանսական միջոցներ ներկայումս առկա չեն:<br>Ակնկալվում է ֆինանսական միջոցներ ստանալ օրենքով չարգելված այլ աղբյուրներից:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Բնապահպանության նախարարության կողմից լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է մեկանգամյա լիցենզիաների տրամադրումն կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերում կատարել համապատասխան լրացումներ, ապահովել էլեկտրոնային համակարգի գործարկման համար անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական միջոցների առկայությունը:<br>Միջոցառման համակատարողներ են հանդիսանում՝ արդարադատության նախարարությունը և«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն (համաձայնությամբ):<br>Ակնկալվում է համակատարողների խորհրդատվությունը և օժանդակությունը էլեկտրոնային համակարգի ներդրման իրավական և տեխնիկական հարցերում:<br>***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Միջոցառման իրականացումը հնարավորություն կստեղծի էլեկտրոնային հարթակի միջոցով իրականացնել մեկանգամյա լիցենզաների համար լիազոր մարմնին հայտերի և պահանջվող փաստաթղթերի ներկայացումը և լիազոր մարմնի կողմից էլեկտրոնային լիցենզիաների տրամադրումը, որը կնվազեցնի փաստաթղթաշարժի վրա ծախսվող ժամանակը և կավելացնի աշխատանքի արդյունավետությունը: Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով տրամադրված մեկանգամյա լիցենզիաները հասանելի կլինեն տվյալ ապրանքների մաքսային բացթողում, ինչպես նաև հսկողություն իրականացնող մարմինների համար:<br><br>**97.2 «Ջրային ռեսուրսների, հողերի, մթնոլորտային օդի, կենդանական ու բուսական աշխարհի վիճակի պետական մոնիթորինգի իրականացման. ստացված տվյալների հավաքագրման, վերլուծության, գնահատման և տեղեկատվության տարածման օրենսդրական դաշտի կարգավորում»**<br><br>1. **Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Շրջակա միջավայրի մոնիթորինգի, թույլտվություն¬ների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրում, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարում» ուղղությունը:<br>Մշակված միջոցառման հաստատման համար հիմք են հանդիսացել՝ Ջրային օրենսգրքի 19.1-րդ և 19.2-րդ հոդվածները, Անտառային օրենսգրքի 6-րդ և 16-րդ հոդվածները, ՀՀ հողային օրենսգրքի 36-րդ հոդվածը, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկա դրությամբ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների տարբեր բաղադրիչների (մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրային ռեսուրսների, հողերի կենդանական և բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների ու անտառների) և այդ բաղադրիչների վրա ազդեցություն ունեցող գործոնների վիճակը բնութագրող դիտարկումները, պետական բյուջե միջոցների հաշվին, իրականացվում են տարբեր պետական կառավարման մարմինների կողմից՝ իրենց կանոնադրական խնդիրների շրջանակներում: Այդպիսի դիտարկումներն իրականացվում են ինչպես բնապահպանության նախարարության ենթակայության գործող՝ «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից (մթնոլորտային օդի ու մակերևութային ջրային ռեսուրսների նկատմամբ որակական, իսկ ստորերկրյա քաղցրահամ ջրային ռեսուրսների նկատմամբ՝ որակական ու քանակական և մասամբ հողերի աղտոտվածության նկատմամբ դիտարկումներ, թափոնների հեռացման վայրերի դիտարկումներ ու թափոնների ուսումնասիրություններ) և «Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (անտառների և անտառային հողերի վիճակի, դրանց վրա տարբեր տեսակի մարդածին և բնական ներգործությունների, այդ թվում՝ ապօրինի հատումների, անտառային հրդեհների, հիվանդությունների ու վնասատուների տարածվածության և բացասական ա |

գործողությունների ու երևույթների, ինչպես նաև դրանց հետևանքով առաջացած քանակական ու որակակա փոփոխությունների նկատմամբ դիտարկումներ) կողմից, այնպես էլ՝ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտայի երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից (մակերևութային ջրերի և մթնոլորտ քանակական հատկությունների նկատմամբ, ներառյալ՝ աերոլոգիական/մթնոլորտի վերին շերտերի/, կլիմայակա /կլիմայական պայմանների ու անոմալիաների/, օզոնաչափական /ընդհանուր պարունակության/ հելիոերկրաֆիզիկական/ ուլտրամանուշակագույն ճառագայթման/, ակտինոմետրական/ արեգակնայի ճառագայթման/, ագրոօդերևութաբանական /գյուղատնտեսական մշակաբույսերի աճի և զարգացման, խոտհարքների և արոտավայրերի ագրոօդերևութաբանական պայմանների/, ռադիոլոգիական /մթնոլորտի, հողի և ջր ռադիոակտիվության աստիճանի/ դիտարկումներ):

Շրջակա միրավայրի և բնական ռեսուրսների վիճակի հավաստի և ամբողջական գնահատում իրականացնելո նպատակով անհրաժեշտ են ոչ միայն վերը նշված դիտարկումների արդյունքներով ըստ տարբեր ցուցանիշների ստացված տեղեկատվությունը, այլ նաև առողջապահության, ավտոտրանսպորտի, էներգետիկ ռեսուրսների և ջրատնտեսական համակարգերի վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Շրջակա միրավայրի վիճակի ամբողջական գնահատման անհրաժեշտ տեղեկատվության ստացման, տվյալների հավաքագրման, դրանց վերլուծման, գնահատման և այդ տեղեկատվության տրամադրման համար անհրաժեշտ է ՀՀ կառավարության որոշմամբ ամրագրել ընթացակարգ, հստակ սահմանելով՝ պահանջվող տեղեկատվության տեսակ ու բովանդակությունը և դրանց տրամադրման ձևն ու ժամկետները՝ ըստ տեղեկատվությունը տնօրինո համապատասխան պետական կառավարման մարմինների, որոնք հանդիսանում եմ միջոցառման գործողությունների իրականացման համակատարողներ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Շրջակա միրավայրի և բնական ռեսուրսների իրական վիճակի վերաբերյալ՝ հավաստի տեղեկատվության առկայություն, առկա տեկեկատվության փոխանակման հասանելության ապահովում, շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում,բնապահպանական ազգային պորտալի ստեղծման հիմքերի ապահովում ուազգային պորտալի առկայությունև ՀՀ կողմից միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովում:

**<u>97.3 «Շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդի. ջրային ռեսուրսների՝ ներառյալ քաղցրահամ և ստորերկրյա ջրերի. հողերի. կենսաբազմազանության) և թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգի դիտացանցերի արդիականացում»</u>**

***Միջոցառման իրակացման անհրաժեշպությունը և նպապակը***

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Շրջակա միջավայրի մոնիթորինգի, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրում, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարում» ուղղությունը:

Շրջակա միջավայրի պահպանության համար կարևորագույն հիմք է հանդիսանում շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ ճշգրիտ գնահատականների առկայությունը, ինչը ստացվում է բաղադրիչների մոնիթորինգի արդյունքում:

Ներկայումս, օրինակ՝ մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում եմ հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 16 ակտիվ և ավտոմատ հիմնական անշարժ և 229 շարժական (պասիվ) նմուշառման դիտակետից: Դիտակետերի վերազինումը ավտոմատ սարքավորումներով տեղի է ունեցել 2006-2007 թվականներին: Այդ սարքավորումներից շատերը կարիք ունեն հիմնովին վերանորոգման կամ փոխարինման, որոնց համար պետական բյուջեով ֆինանսավորում չի հատկացվում: Բացի այդ, մթնոլորտային օդի դիտակետերի գոյություն ունեցող քանակը և դիտակետերում անընդհատ ռեժիմով որոշվող աղտոտիչների տեսակը չի համապատասխանում ՀՀ նորմատիվային պահանջներին (ՀՀ կառավարության 14.09.2017թ. 1120-Ն որոշում), ինչպես օրինակ Գյումրի քաղաքում նվազագույն դիտակետերի քանակը ըստ բնակչության թվի պետք է լինի երեք

ներկայիս մեկի փոխարեն:

ՀՀ և միջազգային պահանջների համաձայն հիմնական անշարժ դիտակետերում պետք է կատարվեն հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, կախված մասնիկների ($PM_{10}$ և $PM_{2.5}$) և գետնամերձ օզոնի (երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում, շարժական և անշարժ դիտակետերում որոշվող աղտոտիչների ցանկը մասամբ է համապատասխանում նշված պահանջներին: Օդի աղտոտիչների դիտարկումներից ստացված տեղեկատվությունը իրական ժամանակին (real-time) հասանելիության և ժամանակային գնահատականների տեսանկյունից ևս մասամբ է համապատասխանում միջազգային պահանջներին:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի պաշարների գնահատման համար գործող մոնիթորինգի դիտացանցը կարիք ունի ընդլայնման: Ներկայումս, մի շարք գետավազաններում բացակայում են հիդրոերկրաբանական ազգային ցանցի դիտակետերը, այդ թվում՝ Դեբեդ, Հախում, Տավուշ, Խնձորուտ, Ողջի, Մեղրի և այլ գետավազաններում, ինչպես նաև արարատյան արտեզյան ավազանի նախալեռնային գոտիներում:

Հողերի աղտոտվածության մոնիթորինգն իրականացվում է ընդամենը 10 դիտակետում, ինչը բավարար չէ հողերի աղտոտվածության ամբողջական պատկերի գնահատման համար:

Ծրագիրը իրականացնելու համար անհրաշետ է 725000.0 հազ.դրամ գումար, սակայն ֆինանսավորման աղբյուրը դեռևս հայտնի չէ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները ժամանակակից տեխնոլոգիաներով իրականացնելու, ՀՀ և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտակետերը համալրել օդի հիմնական աղտոտիչների՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, գետնամերձ օզոնի, կախված մասնիկների ($PM_{10}$ և $PM_{2.5}$) հետազոտությունների ավտոմատ սարքավորումներով: Մթնոլորտային օդի դիտարկումների ավտոմատացումը հնարավորություն կտա առցանց տեղեկանալ օդի աղտոտվածության վիճակի մասին, արագ բացահայտել մարդու առողջության համար վտանգավոր իրավիճակները և կանխատեսել հետագա աղտոտվածության պատկերը:

Ֆինանսավորման առկայության դեպքում հնարավոր կլինի ստորերկրյա ջրերի ազգային ցանցի, հողերի աղտոտվածության մոնիթորինգի դիտացանցի ընդլայնում:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Շրջակա միջավարի բաղադրիչների՝ մոնիթորինգի դիտակայանների և դիտացանցերի արդի տեխնոլոգիաներով հագեցվածության առկայություն և շրջակա միջավարի վերաբերյալ ժամանակին, ճշգրիտ ու անընդհատ տեղեկատվության ապահովում:

**97.4 «Շրջակա միջավայրի մոնիթորինգի լաբորատորիայի կարողությունների զարգացում»**

***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Շրջակա միջավայրի մոնիթորինգի, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրում, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարում» ուղղությունը:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վերաբերյալ ճշգրիտ և հավաստի տվյալների աղբյուր է հանդիսանում բաղադրիչների որակի լաբորատոր հետազոտությունները: Բնապահպանության նախարարության ենթակայությամբ գործող «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության» ՊՈԱԿ-ի լաբորատորիան իրականացնում է մակերևութային և ստորերկրյա ջրերի, մթնոլրատային օդի, մթնոլորտային տեղումների, հողերի և հատակային նստվածքների որակի լաբորատոր հետազոտություններ:

Սկսած 2004 թվականից, միջազգային և պետական ծրագրերի շրջանակում լաբորատորիան համալրվել է ժամանակակից սարքավորումներով: Լաբորատորիայի մասնագետները երկարամյա փորձառության, ինչպես նաև մասնակցելով որակավորման դասընթացների, ձեռք են բերել բարձր որակի մասնագիտական կարողություններ: Առկա լաբորատոր և մասնագիտական կարողությունները բավարար հիմք են հանդիսանում լաբորատորիայի

միջազգային հավատարմագրման համար: Սակայն լաբորատորիայի միջազգային հավատարմագրման համար լաբորատորիայի ներկայիս շենքային պայմանները (լաբորատորիան տեղակայված է վարձակալությամբ Կոմիտաս 29 հասցեում) չեն բավարարում անհրաժեշտ պահանջներին:

ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 7-ի «Տարածք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N 1584-Ա որոշմամբ Երևան քաղաքի Պարույր Սևակի 5/2 հասցեում գտնվող Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գլխավոր մասնաշենքի 539.1 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածք է հատկացվել «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական լաբորատորիային:

Եվրոպական միության Ջրային նախաձեռնություն պլյուս ծրագրի շրջանակում 2019-2020թթ. նախատեսվում է լաբորատորիայի տարածքի վերանորոգում, սարքավորումների համալրում, մասնագետների վերապատրաստում և լաբորատորիայի միջազգային հավատարմագրման գործընթացի նախապատրաստում:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Վերոնշյալ տարածքի վերանորոգման համար ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 13-ի N 1452- Ն որոշման 2.2 կետի համաձայն 2019թ. ընթացքում «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացված 73542.0 հազ. դրամ գումարի շրջանակներում 539.1 քառ. մետր տարածքի վերանորոգման, կահավորման և լաբորատորիայի տեղափոխման աշխատանքների իրականացում:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Շրջակա միջավայրի մոնիթորինգի լաբորատորիաների վերանորոգված շենքի, ժամանակակից սարքավորումներով հագեցվածության և միջազգային հավատարմագրված լաբորատորիայի առկայություն:

**97.5 «Շրջակա միջավայրի վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում»**

***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Շրջակա միջավայրի մոնիթորինգի, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրում, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարում» ուղղությունը:

ՀՀ-ում «Եվրոպական Հարևանության և Համագործակցության Գործիք–Բնապահպանական տեղեկատվական միասնական համակարգ» (ԵՀՀԳ-ԲՏՄՀ/ENPI-SEIS) ծրագրի աջակցությամբ մշակվում է ԲՏՄՀ/SEIS սկզբունքներին համապատասխան շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգ, որով շրջակա միջավայրի տեղեկատվության հավաքագրումը և հրապարակումը կիրականացվի մեկ հարթակում՝ մատչելի և հասանելի դարձնելով հանրությանը:

***1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները***

Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգի հիմք են կազմում թեմատիկ շտեմարանները և ինդիկատորային ցուցանիշները: ԵՄ Ջրային նախաձեռնություն ծրագրի շրջանակում նախատեսվում 2019-2020թթ. ջրային տվյալներ ստեղծող կազմակերպություններում հիմնել շտեմարաններ, որոնք ՀՀ Բնապահպանության Ջրային կադաստի մաս կկազմեն: «Եվրոպական Հարևանության և Համագործակցության Գործիք–Բնապահպանական տեղեկատվական միասնական համակարգ» (ԵՀՀԳ-ԲՏՄՀ/ENPI-SEIS) ծրագրի աջակցությամբ կմշակվի Ջրային կադաստրի և պորտալի ինտեգրումը:

Մինչդեռ, շրջակա միջավայի մյուս բաղադրիչների թեմատիկ շտեմարանների ստեղծման գործընթացները կամ նախատեսման փուլում են կամ բացակայում են:

Միջոցառման համակատարող մարմինները հանդիսանում են շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության ստեղծողներ և որոնցում առկա թեմատիկ շտեմարանները մաս են կազմելու ստեղծվող պորտալի:

***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

Շրջակա միջավայրի ազգային պորտալի առկայություն, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ շրջակա միջավայրի վերաբերյալ միասնական հավաքագրված տվյալների առկայություն և դրանց հասանելիության ապահովում:

**97.6 «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման համար անտառների գույքագրման իրականացում՝ անօդաչու թռչող սարքի կիրառմամբ հանույթի միջոցով»**

*1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.*

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Շրջակա միջավայրի մոնիթորինգի, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրում, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարում» ուղղությունը:

«Սևան» ազգային պարկի ափամերձ տարածքներում՝ մինչև 1901,5 մ ծովի մակերևույթից բարձր մակարդակում 2019-2023 թվականների համար մաքրման տարածքների տարածական տվյալների ստացում:

Ընտրված տեղամասերի համար ստանալ տեղանքի օրթոֆոտոհատակագիծ 10սմ/պ լուծաչափով, մակերևույթի թվային մոդել: Վեգետացիոն ցուցիչների հաշվարկի և վերլուծության արդյունքում առաջնային տարածքների վերհանում, /ջրածածկ ճահճապատ / վեկտորային շերտերով /shp. ֆորմատով/:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Հայաստանի Հանրապետությունում անօդաչու թռչող համակարգերի շահագործումը ներկայումս կանոնակարգվում է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 11-ի N56-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ուսումնական և հատուկ բնույթի թռիչքների իրականացման կարգով»:

Հաշվի առնելով ոլորտի զարգացման միտումները, շահագործման ոլորտների բազմազանությունը, ինչպես նաև դրանց կողմից ավիացիային սպառնացող հնարավոր ռիսկերը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից մշակվել է ԱԹՀ-ի գրանցումը, հաշվառումը և շահագործման սահմանափակումները կանոնակարգող նոր կարգի նախագիծ:

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

Կենտրոնի կողմից կիրառվող անօդաչուի բարձրությունը /Ebee Sensefly/ ընտրված տեղամասերում հանույթ իրականեցնելիս հասնելու է առավելագույնը 85 մետրի:

***2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.***

Բազմասպեկտրալ տեսախցիկի առկայությունը հնարավորություն է ընձեռելու ստանալ տեղեկատվություն գունային 4 տիրույթներում, որի վերլուծության արդյունքում հստակ առանձնացվելու է ճահճապատ, ջրածածկ տարածքները ցամաքայինից, առանձնացնելու նախատեսված տարածքներում անտառածածկի հստակ սահմանները: Վեգետացիոն ցուցիչների հաշվարկի արդյունքում նախատեսված տարածքներում առանձնացնելու մաքրման ենթակա նախնական տարածքները:

**97.7 «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների 2019թ հեղինակային հսկողության իրականացում՝ դաշտային դիտարկումներ. ուսումնասիրություններ. GPS հանույթ»**

*1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.*

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Շրջակա միջավայրի մոնիթորինգի, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրում, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարում» ուղղությունը:

«Սևան» ազգային պարկի ափամերձ տարածքներում՝ մինչև 1901,5 մ ծովի մակերևույթից բարձր մակարդակում 2019-2023 թվականների համար մաքրման համար ընտրված նախնական տարածքներում դաշտային ուսումնասիրություններ, սահմանների ճշգրտում:

Իրականացնել դիտարկում ուսումնասիրություններ՝ ապահովելու նախորոշված տարածքներում մաքրման աշխատանքների պատշաճ իրականացում:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

| | |
|---|---|
| | Գրասենյակային պայմաններում վերլուծությունների արդյունքում առանձնացված նախնական տարածքների սահմանների ճշգրտման նպատակով կատարվելու է GPS հանույթ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>Կենտրոնում առկա Trimble GPS գործիքի շեղում կազմում է առավելագույն 1.5 մետր:<br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.**<br>Կատարված աշխատանքների վերլուծություն, առկա խնդիրների և բացթողումների վերհանում, տարածքների վեկտորային շերտեր/Shp. ֆորմատի/: |
| **98** | **Կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը**<br><br>**<u>98.1 «Կանաչ տնտեսության» սկզբուների ներդրման հայեցակարգի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»</u>**<br><br>***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացում» ուղղությունը:<br>Կանաչ տնտեսության քաղաքականության տրամաբանությունը և միջոցառումները առավելապես բխում են կայուն զարգացման և աղքատության նվազեցման նպատակներից՝ ամրագրելով գործառնական օրակարգ տնտեսության և շրջակա միջավայրի ներդաշնակ զարգացման չափելի և կոնկրետ արդյունքների հասնելու հնարավորությունները:<br>Կանաչ տնտեսության օրակարգի ձևավորումն առավել կարևորվում է այն հիմքով, որ բնական կապիտալի շարունակական սպառման հաշվին ազգային եկամտի ավելացման ընթացքում ավելի են սրվում ապագա զարգացման ռիսկերը և սահմանափակումները: Կանաչ տնտեսության մոդելին անցումը պահանջում է համարժեք քաղաքականություն և ինստիտուցիոնալ կարգավորում:<br>Հայեցակարգի մշակման նպատակն է կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ ռազմավարության հիմնական բաղադրիչների և ուղղությունների սահմանումը և հետագա գործողությունների ուրվագծումը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանում «Կանաչ տնտեսության» ներդրման գործընթացին խոչընդոտում են համապատասխան օրենսդրական և մեթոդաբանական հիմքերի բացակայությունը, հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներում շրջակա միջավայրի աղտոտման և բնական ռեսուրսների գերշահագործման բաղադրիչի մասով համապատասխան ուսումնասիրությունների և գնահատումների բացակայությունը: Գործընթացին խանգարում են բնապահպանական խնդիրների թույլ ինտեգրումը տնտեսության տարբեր ճյուղերի մեջ (տրանսպորտը, էներգետիկան, գյուղատնտեսություն և այլն):<br>Դեռևս բավարար չեն գնահատվում «կանաչ տնտեսության» անցման տնտեսական և սոցիալական առավելությունները՝ էկոլոգիական արդյունավետության և սոցիալական արդարության ապահովման պայմաններում, արդյունավետ չեն օգտագործվում «կանաչ» նորամուծությունների խթանման մեխանիզմները և միջազգային բնապահպանական համաձայնագրերի շրջանակներում զարգացող երկրներին «Կանաչ» տեխնոլոգիաների և նորամուծությունների փոխանցման հնարավորությունները:<br>«Կանաչ տնտեսության» ներդրման գործընթացում առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնք աստիճանական լուծում և օժանդակություն են պահանջում՝ բոլոր հնարավոր կամ հասանելի ձևերով և մեխանիզմներով:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայեցակարգի մշակման արդյունքում կամրագրվեն կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման համար անհրաժեշտ հիմնական քայլերը, հիմք ընդունելով հետևյալ առաջնահերթությունները.<br>- Մարդկային բարեկեցության աճ, |

| | |
|---|---|
| | - Հավասար հնարավորություններ,<br>- Շրջակա միջավայրի ռիսկերի նվազեցում,<br>- Բնական կապիտալը՝ որպես արտադրության գործոն և ռեսուրսների արդյունավետ օգտագործում,<br>- Կանաչ տնտեսությանն անցման գործընթացում ներքևից վերև գործելակերպի գերակայություն.<br>- Պետություն-մասնավոր համագործակցություն ի շահ ինովացիոն նախաձեռնությունների առաջմղման և էներգախնայող տեխնոլոգիաներում ներդրումների ներգրավման<br>- Տնտեսական աճի ներառական մոդելի որդեգրում՝ որպես աղքատության կրճատման և եկամուտների վերաբաշխման ամենաարդյունավետ մեխանիզմ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքները**<br>«Կանաչ» տնտեսության զարգացումն ապահովող տնտեսական մեխանիզմների և ցուցանիշների կառավարման համակարգի սկզբունքների կիրառում և «կանաչ» նորամուծությունների ներդրման խրախուսման տնտեսաիրավական մեխանիզմների ներդրում: |
| 99 | **Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային արտադրանքի գործածության աստիճանական կրճատում և արգելում**<br><br>**<u>99.1 «Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի փաթեթը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»</u>**<br><br>***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային արտադրանքի գործածության աստիճանական կրճատում և արգելում» ուղղությունը:<br>Հայաստանի Հանրապետության «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) լրացումներ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է պոլիէթիլենային պարկերի և տոպրակների (բացառությամբ ապրանքների կշռափաթեթավորման համար օգտագործվողների և երկրորդային հումքից պատրաստվածների) օգտագործման ծավալների կրճատմանն ուղղված իրավական կարգավորման հետ:<br>Միջոցառման հիմնական նպատակն է տնտեսական մեխանիզմների կիրառման միջոցով պլաստիկ թափոնների ծավալների կրճատումը, մասնավորապես՝ մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակների ծավալների կտրուկ կրճատումը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հանրապետությունում առևտրի և սպասարկման ոլորտներում պոլիէթիլենային տոպրակների լայն կիրառումը հանգեցրել է բնապահպանական խնդիրների առաջացման: Շրջակա միջավայր արտանետված պոլիէթիլենային փաթեթները պահպանվում են երկար ժամանակ և չեն ենթարկվում կենսաբանական քայքայման, որի հետևանքով դրանք առաջացնում են կայուն աղտոտվածություն:<br>Պոլիէթիլենային տոպրակների օգտագործման միջին ժամանակահատվածը 10-15 րոպե է, իսկ բնության մեջ դրա քայքայման համար անհրաժեշտ է ավելի քան 100-400 տարի: Ըստ որոշ ուսումնասիրությունների՝ հանրապետությունում պլաստիկ թափոնները կազմում են կենցաղային թափոնների ծավալի ավելի քան 30%-ը: Օգտագործված պոլիէթիլենային փաթեթներով և դրանց մնացորդներով աղտոտված է Հայաստանի Հանրապետության գետերի հիմնական մասը, հանգստավայրերին և զբոսաշրջության վայրերին կից տարածքները: Հանրապետությունում արտադրվող և ներկրվող պոլիէթիլենից փաթեթների ողջ քանակությունն ի վերջո հանգրվանում է բնության մեջ և նույնիսկ աղբավայրերում դրանք շարունակում են վնաս պատճառել շրջակա միջավայրին: Արևի ազդեցությամբ և ինքնայրման հետևանքով արտազատում են դիօքսին եւ ֆուրան գազեր:<br>Առկա վիճակը պայմանավորված է նաև հասարակության բնապահպանական մշակույթի անբավարար ձևավորմամբ և սույն նախաձեռնությամբ նախատեսվում է տնտեսական լծակների միջոցով փոխել սպառողի վարքագիծը, ինչը կստիպի սպառողին օգտագործել այլընտրանքային (էկոլոգիական տեսանկյունից անվտանգ), բազմակի օգտագործման պարկեր և տոպրակներ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** |

| | |
|---|---|
| | «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացում կատարելու միջոցով նախատեսվում է կարգելվի մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների (բացառությամբ կշռափաթեթավորման համար օգտագործվողների և երկրորդային հումքից արտադրվածների) օտարումը:<br>***2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Ներկայացված միջոցառման արդյունքում նպաստավոր պայմաններ կստեղծվեն երկրում պլաստիկ թափոնների ծավալների կրճատման համար, մասնավորապես, ակնկալվում է պոլիէթիլենային տոպրակների օգտագործման ծավալների կտրուկ կրճատում, ինչը կհանգեցնի շրջակա միջավայրի և դրա բաղադրիչների աղտոտման նվազեցմանը, հանրապետության էկոլոգիական վիճակի բարելավմանը: |
| **100** | ***Շրջակա միջավայրի կառավարման տնտեսական մեխանիզմների և լծակների ճկուն համակարգի ներդրում, միջազգային կառույցների հետ համատեղ ֆինանսավորման նորարարական մեխանիզմների (ներառյալ բնապահպանական ծրագրերով պարտավորությունների հաշվանցման մեխանիզմի) մշակում և ներդրում***<br><br>***100.1 «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»***<br><br>***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Շրջակա միջավայրի կառավարման տնտեսական մեխանիզմների և լծակների ճկուն համակարգի ներդրում, միջազգային կառույցների հետ համատեղ ֆինանսավորման նորարարական մեխանիզմների (ներառյալ բնապահպանական ծրագրերով պարտավորությունների հաշվանցման մեխանիզմի) մշակում և ներդրում» ուղղությունը:<br>«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման հիմնական նպատակն է շրջակա միջավայրի կառավարման տնտեսական մեխանիզմների և լծակների ճկուն համակարգի ներդրումը՝ բնապահպանական հարկարկավորման գործող համակարգի վերանայման և առաջավոր միջազգային փորձի վերլուծությամբ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործող բնապահպանական հարկավորման համակարգը չի համապատասխանում ռեսուրսի/վնասի իրական տնտեսական արժեքին եւ այդ պատճառով բավարար չափով չի ազդում տնտեսավարող սուբյեկտների և հասարակությանայլ անդամների բնապահպանական եւ բնօգտագործման վարքագծի վրա: Ներկայումս կիրառվող բնօգտագործման և բնապահպանական հարկերը զիջում են փաստացի պատճառվող վնասը մի քանի տասնյակ անգամ: Որոշ ոլորտների համար բնապահպանական հարկերի և ռեսուրսների օգտագործման դիմաց սահմանված 0-ական կամ ցածր դրույքաչափերի գծով արտոնությունների հետագա կիրառումը չի նպաստում բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և շրջակա միջավայրի պահպանությանը: Այդ պատճառով բնապահպանության ոլորտում գործող տնտեսական մեխանիզմները պետք է վերանայվեն:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է ՀՀ հարկային օրենսգրքի դրույթներով սահմանված բնապահպանական հարկերի ու բնօգտագործման վճարների տեսակների, դրույքաչափերի, դրանց հաշվարկման, վճարման, գանձման կարգի և ժամկետների, ինչպես նաև հարկային արտոնությունների վերանայում, մասնավորապես բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների դրույքաչափերի աստիճանական բարձրացում՝ մոտեցնելով դրանք ռեսուրսների իրական տնտեսական արժեքին և /կամ/ շրջակա միջավայրին պատճառվող վնասի իրական չափերին, որը մի կողմից հնարավորություն կտա բարձրացնելու բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, իսկ մյուս կողմից կրճատելու շրջակա միջավայրի աղտոտման ծավալները: Միաժամանակ, կատարվող փոփոխությամբ նախատեսվում է նաև տարբերակված մոտեցում ցուցաբերել փոքրածավալ և նվազ վտանգավորություն ներկայացնողի, շրջակա միջավայրը աղտոտող ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ՝ բնապահպանական հարկի հաշվարկման (այդ թվում՝ հաշվետվությունների ներկայացման) և վճարման ընթացակարգերի պարզեցմամբ՝ ըստ գործողության տեսակի ընդհանրացված և տիպային հարկի (վճարների): |

*2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*

Օրինագծի ընդունումից ակնկալվում են հետևյալ նպատակների իրականացումը.

- բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում,
- մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների կանխարգելում և նվազեցում,
- մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածության վերացում, կենսաբազմազանության պահպանություն,
- վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալների և բնական հավասարակշռվածությանն նպաստող պայմանները ապահովում,
- չվերականգնվող բնական ռեսուրսների բանական և արդյունավետ օգտագործման ապահովումը և այլն:

**<u>100.2 «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»</u>**

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Շրջակա միջավայրի կառավարման տնտեսական մեխանիզմների և լծակների ճկուն համակարգի ներդրում, միջազգային կառույցների հետ համատեղ ֆինանսավորման նորարարական մեխանիզմների (ներառյալ բնապահպանական ծրագրերով պարտավորությունների հաշվանցման մեխանիզմի) մշակում և ներդրում» ուղղությունը:

Նախագծի մշակման անհրաժեշտությունը ամրագրված է «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ կետում, որի համաձայն՝ նախատեսվում է ջրային ռեսուրսների երկրորդային օգտագործման համար հարկային արտոնությունների սահմանում:

Վերոնշյալ օրենքի ընդունման հիմնական նպատակն է ջրային ռեսուրսների երկրորդային օգտագործման տնտեսապես խթանելը:

**1.1 Ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության ոլորտում բացակայում է ջրային ռեսուրսների երկրոդային օգտագործումը խրախուսող մեխանիզմների և արտոնությունների կիրառման համակարգը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախատեսվում է «Հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում, որի նպատակն է հանրապետությունում ջրային ռեսուրսների երկրոդային օգտագործման ծավալների ավելացմանն ուղղված տնտեսական մեխանիզմի ներդրումը:

**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Կանխատեսվում է, որ օրենքի ընդունումից հետո կբարձրանա ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության արդյունավետությունը, մասնավորապես ջրային ռեսուրսների երկրոդային օգտագործման ծավալների ավելացման շնորհիվ կկրճատվի ջրառը:

**101.** **Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի զարգացում**

**<u>101.1 «էկոտուրիստական երթուղիների մշակում»</u>**

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում

| | |
|---|---|
| | էկոտուրիզմի զարգացում» ուղղությունը:<br>Միջոցառման իրականացման համար հիմք է համդիսացել աշխարհում լայն տարածում ստացած անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի զարգացումը և դրա մասսայականացումը, ինչպես նաև կառավարության կողմից հաստատված գերակա ճյուղը, Հայաստան այցելած զբոսաշրջիկների աճը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Բնության հատուկ պահպանվող տարածքներում գործում են էկոերթուղիներ, սակայն կանոնակարգված չեն, նոր էկոերթուղիները կհանդիսանան ժամանակակից, գրավիչ և այլ առանձնահատկություններով օժտված:<br>**1.1. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>Նոր էկոերթուղիների նախագծման ժամանակ հաշվի կառնվեն միջազգային չափորոշիչները, գրավչության աստիճանը, հաշվի կառնվեն քայլարշավային առավելագույն տարածությունները մեկ մարդու հաշվով: Միջոցառման իրականացման համակատարողներ են հանդիսանում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեն, ինչպես նաև ակնկալվում է ստանալ աջակցություն Հայաստանի տուրիզմի ֆեդերացիայի և տուրիստական կազմակերպությունների (ըստ ցանկության) կողմից: Նախատեսվում է, որ համակատարողները կօժանդակեն համապատասխան գովազդների պատրաստման հարցում:<br>***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.***<br>Հիմնական արդյունքն է՝<br>- բնության հատուկ պահպանվող տարածքներում և անտառներում էկոտուրիզմի զարգացում,<br>- զբոսաշրջիկների ներգրավվածությունը բնության մեջ,<br>- էկոկրթվածության մակարդակի բարձրացում,<br>-տեղական բնակչության զարգացում: |
| 102 | **Էկոլոգիական իրազեկման, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացում, էկոլոգիական գիտության դերի բարձրացում**<br><br>**<u>102.1 «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»</u>**<br><br>***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Էկոլոգիական իրազեկման, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացում, էկոլոգիական գիտության դերի բարձրացում» ուղղությունը:<br>Միջոցառման նպատակը Հայաստանի Հանրապետությունում էկոլոգիական կրթության, դաստիարակության և իրազեկման համակարգի կատարելագործումն է, պետական կառավարման մարմինների իրավասությունների հստակեցումը՝ ուղղված էկոլոգիական կրթության որակի բարելավմանը, հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և էկոլոգիական գիտակցության ձևավորմանը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ոլորտում դեռևս առկա է օրենքների, սկզբունքների ներդաշնակ կիրառման պակաս, որը պայմանավորված է բնապահպանական կրթության համակարգի պետական լիազոր մարմինների իրավասությունների ոչ բավարար հստակեցումից և ոչ արդյունավետ փոխհամագործակցությունից: Բավարար չափով ուշադրություն չի դարձվում ընտանեկան և նախադպրոցական հաստատություններում էկոլոգիական դաստիարակության ներդաշնակության վրա, ինչպես նաև հանրակրթական մակարդակում էկոլոգիական կրթության շարունակականության վրա: Այն պետք է իրականացնել տարրական դպրոցից մինչև ավագ դպրոց ներառյալ: Առաջացել է ոլորտի օրենսդրական բազայի կատարելագործման, բնապահպանական կրթության ոլորտում «Կրթությունը հանուն կայուն զարգացման» ռազմավարության գաղափարների և սկզբունքների ինտեգրման, պետական կառավարման մարմինների լիազորությունների վերանայման և հստակեցման անհրաժեշտություն:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ոլորտի խնդիրների արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է.<br>• Բնապահպանական կրթության անընդհատության ապահովում, ոլորտի կառավարման արդյունավետության |

| | |
|---|---|
| | բարձրացում և օպտիմալացում,<br>• Հասարակության լայն խավերի համար բնապահպանական կրթության և իրազեկման մատչելիության ապահովում,<br>• Պետական կառավարման մարմինների միջև սերտ համագործակցություն, միասնական քաղաքականության իրականացում:<br>• Կրթության և գիտության նախարարության աշխատակիցների հետ համատեղ քննարկումների իրականացում՝ օրենքի հոդվածներում փոփոխություններ կատարելու և պետական կառավարման մարմինների լիազորությունների վերանայման և հստակեցման վերաբերյալ:<br>***2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը***<br>Կբարելավվի էկոլոգիական կրթության օրենսդրությունը և կառավարման համակարգը, կստեղծվի կայուն զարգացման սկզբունքներին բավարարող էկոլոգիական կրթության արդյունավետ գործող համակարգ:<br><br>**<u>102.2 «Ոչ ֆորմալ էկոլոգիական կրթության համակարգի զարգացում՝ հանրային իրազեկման մեխանիզմների կիրառմամբ»</u>**<br><br>***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Էկոլոգիական իրազեկման, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացում, էկոլոգիական գիտության դերի բարձրացում» ուղղությունը:<br>Ոչ ֆորմալ կրթությունը կարող է իրականացվել տարաբնույթ կրթական միջոցառումների տեսքով, որոնք տեղի են ունենում ֆորմալ կրթական համակարգից դուրս:Միջոցառման նպատակը ոչ ֆորմալ կրթության միջոցով զարգացնել հասարակության էկոլոգիական գիտելիքները, բարձրացնել իրազեկվածության մակարդակը և նպաստել էկոլոգիական գիտակցության ձևավորմանը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Որպես կրթության յուրահատուկ ձև՝ ոչ ֆորմալ կրթությունը թույլ է տալիս սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներին ձեռք բերել և զարգացնել շարունակ փոփոխվող միջավայրի պահանջներին /պայմաններին/ համապատասխան հմտություններ, կարողություններ և գիտելիքներ:<br>Համաձայն ոչ ֆորմալ կրթության մեջ ընդունված սկզբունքների՝ դրանք կարող են ձեռք բերվել կամավոր հիմունքներով, տարաբնույթ կրթական միջոցառումների տեսքով, որոնք տեղի են ունենում ֆորմալ կրթական համակարգից դուրս: Ոչ ֆորմալ կրթության իրականացման մեջ էական դեր են խաղում հասարակական կազմակերպությունները, որոնք առավելապես ներգրավված են համայնքային և երիտասարդության հետ կատարվող կրթական ծրագրերի իրականացման աշխատանքներում: Բնապահպանության նախարարությունը նախաձեռնում է ոչ ֆորմալ էկոլոգիական կրթության իրականացում բնության հատուկ պահպանվող տարածքներում հանրության ուսուցման և բնապահպանական թեմայով հաղորդաշարերի ստեղծման միջոցով:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ոլորտի խնդիրների արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է.<br>• Հասարակության լայն խավերի համար բնապահպանական կրթության և իրազեկման մատչելիության ապահովում,<br>• Պետական կառավարման մարմինների միջև սերտ համագործակցություն, միասնական քաղաքականության իրականացում:<br>• Ոչ ֆորմալ էկոլոգիական կրթության ոլորտում Կրթության և գիտության նախարարության հետ համատեղ ծրագրերի իրականացում:<br>***2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը***<br>Կստեղծվի կայուն զարգացման սկզբունքներին բավարարող ոչ ֆորմալ էկոլոգիական կրթության արդյունավետ գործող համակարգ, առավել արագ և օպերատիվ արձագանք կլինի բնապահպանական հիմնախնդիրներին և արտակարգ իրավիճակներին:<br><br>**<u>102.3 «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»</u>** |

***1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը***

Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Էկոլոգիական իրազեկման, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացում, էկոլոգիական գիտության դերի բարձրացում» ուղղությունը:

Օրենսդրական փոփոխության նպատակն է լիազոր մարմնին տալ իրավասություն չտրամադրել շրջակա միջավայրի վերաբերյալ հայցվող այնպիսի տեղեկատվություն, որի հրապարակման արդյունքում շրջակա միջավայրի կամ հանրային անվտանգության վրա դա կունենա բացասական ազդեցություն:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է տեղեկատվության տրամադրման սահմանափակումները, 3-րդ մասը նախատեսում է սահմանափակման ոչ ենթակա տեղեկատվության շրջանակը: Մասնավորապես, նշյալ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝ 2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը:

Օրհուսի կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում սահմանված են մի քանի հիմքեր, որոնց պարագայում շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվություն ստանալու կապակցությամբ կատարված հարցումը կարող է մերժվել: Այդ հիմքերից են՝

- տեղեկատվության հրապարակումը բացասաբար կարող է անդրադառնալ հանրային անվտանգության վրա,
- տեղեկատվության հրապարակումը բացասաբար կարող է անդրադառնալ շրջակա միջավայրի վրա, որին վերաբերում է այդ տեղեկատվությունը: Շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող արտանետումների մասին տեղեկատվությունը ենթակա է բացահայտման:

Այսինքն, Օրհուսի կոնվենցիան հնարավորություն է ընձեռում տեղեկատվությունը տիրապետող սուբյեկտին որոշել տեղեկատվության հասանելիության սահմանները, հաշվի առնելով որոշ օբյեկտիվ հանգամանքներ, մասնավորապես տեղեկատվության հրապարակման արդյունքում շրջակա միջավայրի կամ հանրային անվտանգության վրա դրա բացասական ազդեցությունը: Իսկ ներպետական օրենսդրության կարգավորումների լույսի ներքո այս իրավական լծակն իր գործիքակազմը չունի, չնայած որ միջազգային իրավական ակտին տրվում է գերակա իրավական ուժ:

Այսպես, վերոնշյալ բացառություն կազմող հիմքերից ոչ մեկն ամրագրված չեն ազգային օրենսդրության մեջ, մինչդեռ դրանց ամրագրումն անհրաժեշտ է հաշվի առնելով երկու պայման. նախ՝ միջազգային իրավական նորմի ազգային օրենսդրության մեջ կիրարկման տեսանկյունից և երկրորդ՝ որպես իրավական բավարար հիմք պաշտպանելու հանրային շահն ու անվտանգությունը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Վերոնշյալ խնդիրների կարգավորման, պրակտիկայում առկա իրավիճակի բարելավման նպատակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում առաջարկվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները՝

1) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով, որով կնշվեն Օրհուսի կոնվենցիայով ամրագրված սահմանափակումներից մի քանիսը, որոնց միջոցով տեղեկատվությանը տիրապետող մարմինը կարող է գնահատել տեղեկատվության բացահայտման արդյունքում առաջացող ռիսկը և այդ հիմքով մերժել տեղեկատվության տրամադրումը:

2) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ, որով կտրվի «շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվություն» հասկացության բովանդակությունը, որի միջոցով ավելի հստակ կլինի տեղեկատվության շրջանակը և նման տեղեկատվությունը զերծ կլինի կամայական մեկնաբանությունների հնարավորությունից:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունումը կնպաստի Օրհուսի կոնվենցիայի ամբողջական կիրարկման, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթների շրջանակներում շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվությունը տնօրինող սուբյեկտին կընձեռի հնարավորություն պաշտպանելու հանրային շահն ու անվտանգությունը ոլորտին վերաբերելի խնդիրների

| | |
|---|---|
| | կարգավորման հարցում: |
| 103 | **Պետական կառավարման արդյունավետության բարձրացում, այդ թվում՝ կրկնվող գործառույթների վերհանում՝ դանդաղ, ոչ արդյունավետ, անհարկի բյուրոկրատական ընթացակարգերի կրճատում, տարբեր պետական հիմնարկներում և ստորաբաժանումներում իրականացվող միևնույն տեսակի գործառույթների կենտրոնացում և մեկտեղում, գործառույթների ծախսատարության գնահատում և ծախսերի նվազեցմանն ուղղված շարունակական բարեփոխումների իրականացում**<br>**<u>103.1 «Նախարարության գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում»</u>**<br><br>***1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը***<br>Միջացառման իրականացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության ԱԺ 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 4.8 բաժնի «Պետական կառավարման արդյունավետության բարձրացում, այդ թվում՝<br>- կրկնվող գործառույթների վերհանում՝ դանդաղ, ոչ արդյունավետ, անհարկի բյուրոկրատական ընթացակարգերի կրճատում, տարբեր պետական հիմնարկներում և ստորաբաժանումներում իրականացվող միևնույն տեսակի գործառույթների կենտրոնացում և մեկտեղում, գործառույթների ծախսատարության գնահատում և ծախսերի նվազեցմանն ուղղված շարունակական բարեփոխումների իրականացում» ուղղությունը:<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է Կառավարության որդեգրած քաղաքականությամբ և Կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման 1-ին բաժնի 2-րդ կետի 1-ին պարբերության կատարման անհրաժեշտությունից: Միջոցառման նպատակն է իրականացնել բնապահպանական ոլորտի համակարգի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելը՝ ստորաբաժանումների միացման և պետական ոչ առևտրային կազմակերպությունների (Այսուհետ՝ ՊՈԱԿ) օպտիմալացման միջոցոցով:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխան, առաջանում է բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտություն, ինչով կհամապատասխանեցվեն նախարարության կառուցվածքն ու վերապահված գործառույթները՝ ապահովելով նախարարության առավել արդյունավետ գործունեությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների՝ ջրերի, մթնոլորտային օդի, հողի և անտառի մոնիթորինգի իրականացումն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով նախատեսվում է մոնիթորինգ իրականացնող ՊՈԱԿ-ների գործառույթները համախմբել մեկ կառույցում:<br>Շրջակա միջավայրի ոլորտում միասնական քաղաքականության մշակման նպատակով նախատեսվում է իրականացնել ՊՈԱԿ-ներում իրականացվող միանման գործառույթների կենտրոնացում:<br>Միաժամանակ նախատեսվում է իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ նախարարության ներսում՝ կառուցվածքային ստորաբաժանումների խոշորացում, վերակազմակերպում կամ ստեղծում:<br>2. ***Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների՝ ջրերի, մթնոլորտային օդի, հողի և անտառի արդյունավետ կառավարման ապահովում: |
| **Գյուղատնտեսության նախարարություն** | |
| 104 | **Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակայնորեն օգտագործելու ուղղությամբ խթանների ու մեխանիզմների մշակում**<br><br>**<u>104.1 Գյուղատնտեսական նշանակության չօգտագործվող հողերը շրջանառության մեջ ներառելու ուղիների մշակում, մասնավորապես չօգտագործվող հողերը շրջանառության մեջ դնելու վերաբերյալ իրավական ակտի նախագծի մշակում և ընդունում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** |

Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 2-րդ պարբերություն), ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունից» (III բաժին կետ 38.5, V բաժին կետ 62) և ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ծրագրից» (9.4. Գյուղատնտեսությունը և գյուղի զարգացումը, կետեր 218.1, 220, 221):

Միջոցառումների իրականացման հիմնական նպատակը գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացումն է, չմշակվող հողատարածքները գյուղատնտեսական շրջանառության մեջ վերադարձնելը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետությունում առկա 445,6 հազար հեկտար վարելահողերից 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ նպատակային օգտագործվել է 242.8 հազ. հա-ն (54.5%), կամ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չի մշակվել 202,7 հազ. հա հողատարածք (45,5 %):

Գյուղատնտեսական հողերի չմշակման պատճառները բազմազան են՝ ցածր եկամտաբերություն, շրջանառու միջոցների անբավարարություն, ոռոգման ջրի անհասանելիություն կամ անբավարար մատակարարում, գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման անմատչելիություն, հողի բերրիության ցածր մակարդակ, հողօգտագործողի՝ սեփականատիրոջ բացակայություն և այլն:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողամասը երեք տարվա ընթացքում չօգտագործելը՝ հողամասի յուրացման, մելիորատիվ շինարարության, տարերային աղետներից հետո վերականգնման և նման օգտագործումը բացառող այլ հանգամանքների վերացման համար անհրաժեշտ ժամկետի հաշվանցով, հողամասի նկատմամբ իրավունքների դատական կարգով հարկադրաբար դադարեցման հիմք է հանդիսանում: Նշված հիմքով հողամասի նկատմամբ իրավունքների հարկադիր դադարեցման դրույթը գործնականորեն չի կիրառվել մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:

Սեփականության իրավունքից զրկելը որևէ պարագայում ընդունելի չհամարելով, անհրաժեշտ է կարգավորել օրենսդրական դաշտը՝ հնարավորություն ստեղծելով տնօրինելու սեփականացված չմշակվող հողատարածքները, այդ թվում՝ հանրապետությունից ընտանիքներով արտագաղթած հողօգտագործողներինը (մինչև իրենց կողմից հողերի մշակմանը ձեռնամուխ լինելը), դրանք գյուղատնտեսական շրջանառության մեջ ներառելու համար: Կմշակվի չօգտագործվող հողերը շրջանառության մեջ դնելու վերաբերյալ իրավական ակտի նախագիծ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Իրավական ակտերի մշակման և կատարելագործման արդյունքում յուրաքանչյուր տարի գյուղատնտեսության ոլորտում շրջանառության մեջ նոր հողերի ներառում:

**<u>104.2 Գյուղատնտեսական նշանակության հողերի տվյալների թվայնացված համակարգի ներդրում, մոնիթորինգի վարում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակայնորեն օգտագործելու ուղղությամբ խթանների և մեխանիզմների մշակման միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 2-րդ պարբերություն), ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունից» (III բաժին կետ 38.5, V բաժին կետ 62) և ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ծրագրից» (9.4. Գյուղատնտեսությունը և գյուղի զարգացումը, կետեր 218.1, 220, 221):

Միջոցառումների իրականացման հիմնական նպատակը գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացումն է, չմշակվող հողատարածքները գյուղատնտեսական

շրջանառության մեջ վերադարձնելը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս չտիրապետելով գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ լիարժեք տեղեկատվությանը, նախարարության առջև խնդիրներ են առաջանում, մի կողմից՝ օբյեկտիվ պատճառներով չօգտագործվող կամ ոչ նպատակային օգտագործվող վարելահողերի գյուղատնտեսական շրջանառության մեջ ներառումը խթանող գործուն մեխանիզմների (ոռոգման համակարգերի և այլ ենթակառուցվածքների վերականգնում, կառուցում ու արդիականացում, գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման մատչելիության բարձրացում, ցածր բերրիությամբ հողերի մելիորատիվ վիճակի բարելավում, աղուտ-ալկալի հողերի յուրացում և այլն) մշակման ու ներդրման համար, մյուս կողմից՝ պոտենցիալ ներդրողներին անհրաժեշտ հողատարածքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու հարցում:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Գյուղատնտեսական հողերի առկա վիճակի վերաբերյալ տեղեկատվությանը տիրապետելու համար նպատակահարմար է կիրառել արբանյակային լուսանկարման ու այդ լուսանկարների վերծանման մեթոդը: Նշված տեղեկատվության առկայության պարագայում հնարավոր կլինի գյուղատնտեսական հողերի օգտագործման նկատմամբ վարել մոնիթորինգ՝ համադրելով վերծանված լուսանկարները կադաստրային քարտեզների հետ:

**2. Ակնկալվող արդյունքները**

Գյուղատնտեսական հողերի՝ վարելահողերի և բազմամյա տնկարկների, առկա (փաստացի) վիճակի վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի՝ թվայնացված քարտեզների առկայություն, որը կնպաստի հողօգտագործման արդյունավետության բարձրացմանը, հողի շուկայի և գործարար միջավայրի բարելավմանը:

Գյուղատնտեսական հողերի՝ վարելահողերի և բազմամյա տնկարկների վիճակի վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի տվյալների հիման վրա չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերը հնարավոր կլինի տարանջատել երեք հիմնական խմբերի՝ ըստ դրանց չմշակման պատճառների՝

1) ենթակառուցվածքների բացակայության պատճառով չմշակվող հողեր,
2) դեգրադացված հողեր,
3) հողօգտագործողի բացակայության կամ այլ սուբյեկտիվ պատճառներով չմշակվող հողեր:

Ըստ համայնքների՝ հողերի չմշակման կամ ոչ նպատակային օգտագործման պատճառների բացահայտումից հետո կմշակվեն գյուղատնտեսական շրջանառության մեջ ընդգրկմանն ուղղված միջոցառումներ՝ յուրաքանչյուր խմբի հողերի համար, հնարավորություն կառաջանա վաճառքի և վարձակալությամբ տրամադրման ենթակա հողատարածքների տեղեկատվական շտեմարանի ստեղծման, մասնատված հողերի միավորման ու խոշորացման ծրագրերի մշակման համար:

**<u>104.3 Գյուղատնտեսական նշանակության հողերի կոնսոլիդացման ծրագրի նախագծի մշակում և ընդունում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակայնորեն օգտագործելու ուղղությամբ խթանների և մեխանիզմների մշակման միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 2-րդ պարբերություն), ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունից» (III բաժին կետ 38.5, V բաժին կետ 62) և ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ծրագրից» (9.4. Գյուղատնտեսությունը և գյուղի զարգացումը, կետեր 218.1, 220, 221):

Միջոցառման իրականացման հիմնական նպատակը գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացումն է, չմշակվող հողատարածքները գյուղատնտեսական շրջանառության մեջ վերադարձնելը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հողերի չօգտագործման կարևոր հիմնախնդիրներից մեկը՝ ցածր եկամտաբերությունը, ի թիվս այլ

| | |
|---|---|
| | պատճառների, պայմանավորված է հողերի մասնատվածությամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ հողերի միավորման հստակ բանաձևեր ու մեխանիզմներ չկան, և տարբեր երկրներում այս գործընթացներն իրականացվում են տեղական առանձնահատկությունների ու ձևավորված փորձի հիման վրա, պետության կամ մասնավոր ընկերությունների կողմից, որոշ երկրներում կիրառվում է հողերի միավորման կամավորության, այլ երկրներում՝ պարտադրման սկզբունքը:<br>Առաջարկվում է մշակել և ընդունել գյուղատնտեսական նշանակության հողերի կոնսոլիդացման ծրագրի նախագիծ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Գյուղատնտեսական նշանակության հողերի կոնսոլիդացման ծրագրի իրականացմամբ մասնատված հողերը միավորման ու խոշորացման արդյունքում կօգտագործվեն առավել արդյունավետ, կբարձրանա դրանց եկամտաբերությունը:<br>Գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործման արդյունավետության բարձրացմանը միտված՝ վերը նշված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է հողօգտագործման արդյունավետության բարձրացում, հողի շուկայի և գործարար միջավայրի բարելավում, ներդրումային գրավչության բարձրացում, վարելահողերի շուրջ 80% նպատակային օգտագործում:<br><br>**<u>104.4 Գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության ծրագրերից օգտվող տնտեսավարողների ռեգիստրի ձևավորում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 2-րդ պարբերություն):<br>Միջոցառումների իրականացման հիմնական նպատակը գյուղացիկան տնտեսությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի ստեղծումն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ագրարային քաղաքականության իրականացման և արդյունքների գնահատման հիմնական խնդիրներից մեկը տնտեսավարողների գործունեության վերաբերյալ տեղեկատվության պակասն է, որը թույլ չի տալիս ծրագրային բարեփոխումներ իրականացնելիս արդյունավետ որոշումներ կայացնել:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ֆերմերային ռեգիստրների ձևավորումը հնարավորություն է տալիս տեղեկատվություն ստանալ պետական աջակցություն ստացած բոլոր տնտեսությունների վերաբերյալ: Այս առումով առաջարկվում է ստեղծել ֆերմերների գրանցման համակարգ, որում կզետեղվի տեղեկատվություն գյուղացիական տնտեսությունների ընդհանուր տնտեսական գործունեության փոփոխության վերաբերյալ, ինչպես նաև կներդրվի կենդանիների համարակալման և հաշվառման համակարգ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացումը հնարավորություն կտա տիրապետելու տնտեսավարողների գործունեության վերաբերյալ հստակ տեղեկատվության, որը կբարձրացնի պետական կառավարման որոշումների կայացման արդյունավետությունը: |
| 105. | **Գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառում**<br><br>**<u>105.1 Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրի իրականացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրակա-նացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 4-րդ պարբերություն), ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության |

գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունից» (V-րդ բաժին, կետ 63) և ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ծրագրից» (227.2 ենթակետ):

Ծրագրի իրականացման հիմնական նպատակը նոր տեխնոլոգիաների և գիտական հենքի վրա հիմնված մրցունակ և արդյունավետ գյուղատնտեսության ստեղծումն ու կաթիլային և անձրևացման համակարգերի ներդրման խթանումն է նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման և համաֆինանսավորման միջոցով:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում՝ կապված կլիմայի գլոբալ փոփոխությունների և Արարատյան հարթավայրի ստորգետնյա ջրերի աննախադեպ սպառման հետ, ստեղծվել է ջրային ռեսուրսների խիստ դեֆիցիտ, որը զգալի բացասական ազդեցություն է թողնում գյուղատնտեսական մշակաբույսերի կայուն ջրամատակարարման վրա:

Չնայած կառավարության կողմից հիմնախնդրի լուծման ուղղությամբ քայլեր են ձեռնարկվում՝ նոր ջրամբարների կառուցման և ստորերկրյա ջրային պաշարների օգտագործման կրճատման ճանապարհով, այնուամենայնիվ դրանք զգալի ժամանակ և ֆինանսական միջոցներ են պահանջում: Ջրային պաշարների դեֆիցիտի լրացումը Սևանա լճի ջրային պաշարների հաշվին հանգեցնում է էկոլոգիական խնդիրների, որը լուրջ մտահոգություն է առաջացնում հասարակության շրջանում:

Ստեղծված իրավիճակում ջրային պաշարների պահպանման և արդյունավետ օգտագործման գործում պետության դերը տարեց տարի առավել է կարևորվում: Այն ընդգրկում է ոռոգման քաղաքականության մշակում, այդ թվում՝ ոռոգման արդիական (ջրախնայողական) համակարգերի ներդրման խթանում՝ մակերեսային ոռոգման համե-մատությամբ դրանց առավելություններին ծանոթացման միջոցով, ջրօգտագործողների իրազեկության մակարդակի բարձրացմամբ, ինչպես նաև համակարգերի ներդրման համար անհրաժեշտ ֆինանսավորման պետական աջակցության իրականացմամբ:

ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի նիստում N 53 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):

Մի կողմից՝ հաշվի առնելով կաթիլային ոռոգման համակարգի առավելությունները մակերեսային ոռոգման նկատմամբ, վերջին տարիներին ահագնացող տեմպերի հասնող ոռոգման ջրի դեֆիցիտի գործոնը, պոտենցիալ շահառուների բավական մեծ շահագրգռվածությունը, մյուս կողմից էլ համակարգերի ներդրման համար հիմնական խոչընդոտ հանդիսացող անհրաժեշտ ֆինանսական միջոցների (նախնական կապիտալի) բացակայությունը, Ծրագրի մշակման փուլում ընդունվել էր միջին լավատեսական սցենար՝ թիրախային տարածք էր ընտրվել տարեկան 1600-1700 հա-ը: Սակայն 2018 թվականին կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար պայմանագիր է կնքել ութ շահառու՝ 146 հա ընդհանուր հողատարածքով:

Վերլուծելով Ծրագրի դանդաղ ընթացքը, կարելի է առանձնացնել նախատեսված սահմանաքանակների (հողատարածքների) չիրացման հետևյալ պատճառները՝

- Ծրագրի ուշ մեկնարկ՝ պայմանավորված ՀՀ գյուղատնտեսության նախարարության, Գյուղատնտեսության ֆինանսավորման կառույցի (ԳՖԿ), ֆինանսական կառույցների և կապալառուների միջև իրավահարաբերությունները կարգավորող փաստաթղթերի՝ հուշագրերի, պայմանագրերի մշակման ու կնքման ժամանակատար գործընթացներով,
- շահառուների իրազեկվածության դեռևս ցածր մակարդակ,
- շահառուների վարկունակության հիմնախնդիր,
- կապալառուների ներգրավվածություն:

Հարկ է նշել նաև, որ Ծրագրի իրազեկման նպատակով մարզային այցելությունները ցույց են տալիս, որ ջրօգտագործողների մոտ հետարքրքվածությունը բավական մեծ է, արձագանքները՝ դրական, ինչն էլ հիմք է տալիս հավաստելու, որ աստիճանաբար ավելի ու ավելի շատ շահառուներ են օգտվելու տրամադրվող վարկերից:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքները, տնտեսավարող-ների ավելի լայն շրջանակի ծրագրից օգտվելու հնարավորություն ընձեռելու նպատակով՝ մշակվել է Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիրը, որում լրացվել են անձրևացման համակար-գերի վերաբերյալ դրույթներ, հանվել է համակարգերի ներդրման աշխատանքները կապալառուների միջոցով

իրականացնելու պարտադիր դրույթը, ինչպես նաև նախատեսվել են համաֆինանսավորման նոր տարբերակներ՝ սուբսիդավորում կամ փոխհատուցում:

Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին աջակցություն ցուցաբերել ոռոգման արդիական համակարգերի ներդրման գործընթացին՝ կիրառելով (ըստ համակարգը ներդնող տնտեսավարողի հայեցողության) ներքոհիշյալ տարբերակներից որևէ մեկը՝ ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար նպատակային վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով բարձրացնել վարկավորման մատչելիության մակարդակը կամ մասնակի փոխհատուցել կատարված ծախսերը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրով նախատեսված թիրախային քանակությունը՝ 9000 հա ապահովվելու դեպքում ներդրված տարածքներում 2019-2023թթ. ժամանակահատվածում ակնկալվում է շուրջ 80 մլն խմ ջրի տնտեսում, շուրջ 10 մլրդ հավելյալ եկամուտ բերքատվության աճի հաշվին, բերքի որակի բարելավում, արդյունավետ գյուղատնտեսություն, շրջակա միջավայրի պահպանում: Ակնկալվում է նաև ՀՀ պետական բյուջեի մուտքերի ավելացում՝ տարեկան ներդրվող գումարի առնվազն 17%-ի չափով՝ ավելացված արժեքի և շրջանառության հարկերի տեսքով, ինչպես նաև, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման շնորհիվ՝ եկամտահարկի տեսքով:

**<u>105.2 Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնան համար պետական աջակցության ծրագրի իրականացում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

«Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիման համար պետական աջակցություն» (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման անհրաժեշտությունն պայմանավորված է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 4-րդ պարբերություն), «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու հանգամանքով և ՀՀ սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան ՀՀ վարչապետի 2019 թվականի փետրվարի 13-ի 02/16.7/5578- 2019 թվականի հանձնարարականով:

Ծրագրի նպատակն է խթանել ինտենսիվ այգեգործության զարգացումը, մասնավորապես՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի կամ ներդրված կապիտալի սուբսիդավորման մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսությունում տնտեսավարողներին ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար պետական աջակցություն տրամադրելու միջոցով:

**. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ-ում պտղաբուծությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների մեծ մասն իրենց փոքր չափերի ու արտադրանքի իրացման դժվարությունների հետևանքով վերածվել են բնամթերային տնտեսությունների, որտեղ անհնարին է կազմակերպել արդյունավետ ապրանքային արտադրություն: Արդյունքում արտադրանքի ինքնարժեքը ստացվում է բարձր և անմրցունակ: Նման պայմաններում լուրջ խնդիրներ են առաջանում զանազան տեսակների պտուղների իրացման, վերամշակող ձեռնարկությունների հզորությունների օգտագործման, մարքեթինգային գործունեության բավարար կազմակերպման և վերամշակվողների կողմից հումքի գնման հարցերում: Հաճախ արտադրվող տնկիները չեն համապատասխանում այգեհիմնում կատարող տնտեսավարողների պահանջներին: Չնայած վերջին տարիներին ավելացել են ինտենսիվ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ պտղատու և հատապտղատու այգիների տարածությունները, այնուամենայնիվ դեռևս անհրաժեշտություն կա խթանելու ինտենսիվ այգիների հիմնումը:

ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի N 53 արձանագրային որոշմամբ հավանության էր արժանացել «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում» պիլոտային ծրագիրը այսուհետ՝ (Պիլոտային ծրագիր), որի շրջանակներում նախորդ տարվա ընթացքում գրանցվել է ընդամենը 2 հայտ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Պիլոտային ծրագրում առկա խոչընդոտները պարզելու նպատակով նախարարությունում և մարզերում

կազմակերպվել են քննարկումներ բանկերի, կապալառու կազմակերպությունների, այգեգործությամբ զբաղվող տնտեսավարողների ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկումների ընթացքում ներկայացված առաջարկների հիման վրա պիլոտային ծրագիրը լրամշակվել է:

Ներկայացվող ծրագրով նախատեսվում է բացի ինտենսիվ այգու հիմնման համար տրամադրված վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումից, տնտեսավարողներին տրամադրել փոխհատուցում: Ծրագրի շահառուն կարող է օգտվել պետական աջակցության միայն մեկ տեսակից:

Միաժամանակ Պիլոտային ծրագրից հանվել է այգեհիմնումը պարտադիր կապալառուների միջոցով իրականացման պայմանը, ինչպես նոր ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում նախատեսվել է իրականացնել այնպես, որպեսզի տնտեսավարողին վարկը 5 տոկոսի փոխարեն տրամադրվի 2 տոկոսով:

Նախագծի ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման մեջ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի նախագծի ընդունմամբ հնարավորություն է ստեղծվում ինտենսիվ պտղատու այգետնկումների խթանման միջոցով հանրապետությունում պտղաբուծու-թյան զարգացման, պտղի արտադրության և արտահանման ծավալների ավելացման համար հնարավորությունների ստեղծում: Կարկտապաշտպան ցանցերով պատված պտղատու և խաղողի այգիների տարածքը յուրաքանչյուր տարի կավելանա 250 հա-ով:

***<u>105.3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման ծրագրի իրականացում</u>***

**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

**«Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորում»** ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 4-րդ պարբե-րություն):

Ծրագրի հիմնական նպատակը՝ մատչելի պայմաններով, մասնավորապես՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից կարկտապաշտպան ցանցերի ներդրման խթանումն է, վերջնարդյունքում՝ պտղատու և խաղողի այգիների կարկուտից արդյունավետ պաշտպանությունը, տնտեսավարողների եկամուտների պահպանումն ու այգեգործության արդյունավետության բարձրացումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտները տարբեր բնական աղետների, այդ թվում կարկտահարության հետևանքով զգալի կորուստներ են կրում:

Յուրաքանչյուր տարի կարկուտի պատճառով վնասվում են հանրապետության այգետարածքների 10-15 %, որոշ դեպքերում կարկտահարված տարածքներում բերքի կորուստը կազմում է 80-100 %: Կարկտահարությունից վնասված բերքը կորցնում է ապրանքային տեսքը, որի պատճառով դժվարանում է դրա իրացումը, զգալիորեն նվազում է տնտեսավարողների եկամուտները: Ուժեղ կարկտահարված այգիների վերականգնման համար պահանջվում է առնվազն մեկ տարի և լրացուցիչ ֆինանսական ներդրումներ՝ այգիներում լրացուցիչ էտի, պարարտացման և ագրոտեխնիկական այլ միջոցառումների իրականացման համար: Հակակարկտային ակտիվ ներգործության մեթոդների հետ միասին կարևորվում է կարկտապաշտպան ցանցային համակարգերի (այսուհետ՝ կարկտապաշտպան ցանցեր) կիրառումը, որի համար պահանջվում է մատչելի մեխանիզմներով դրանց ներդրում և օգտագործում: Կարկտապաշտպան ցանցերի ներդրմանը հիմնականում խոչընդոտում են վերջիններիս բարձր գինը, ֆինանսական միջոցների բացակայությունը, վարկերի դժվարամատչելիությունը (կարճաժամկետ և բարձր

տոկոսադրույքներ), ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության պակասը: Ուստի կարկտապաշտպան ցանցային միջոցների ներդրման համար անհրաժեշտություն է առաջանում մշակել նպատակային երկարաժամկետ, մատչելի (ցածր տոկոսադրույքներով և երկարաժամկետ) վարկավորման մեխանիզմներ:

ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 31-ի նիստի N 37 արձանագրային որոշմամբ հավանության էր արժանացել «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր), որով նախատեսվում էր մատչելի պայմաններով, մասնավորապես՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մեխանիզմների կիրառմամբ, աջակցել գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից կարկտապաշտպան ցանցերի ներդրմանը: Սակայն Ծրագրի ծրջանակներում նախորդ տարվա ընթացքում գրանցվել է ընդամենը 3 հայտ: Ծրագրի շրջանակներում կարկտապաշտպան ցան-ցային համակարգերը պարտադիր պետք է տեղեկայվեր կապալառու կազմակերպության կողմից:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առկա խոչընդոտները պարզելու նպատակով նախարարությունում և մարզերում կազմակերպվել են քննարկումներ բանկերի, կապալառու կազմակերպությունների, այգեգործությամբ զբաղվող տնտեսավարողների ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկումների ընթացքում ներկայացված առաջարկների հիման վրա ծրա-գիրը լրամշակվել է: Ներկայացվող ծրագրով նախատեսվում է, որ կարկտապաշտպան ցանցային համակարգերը կարող են տեղեկայվել ինչպես կապալառու կազմակերպության, այնպես էլ տնտեսավարողի կողմից: վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկը տնտե-սավարողին տրամադրվի 2 % տոկոսադրույքով, վարկի մարման 6 ամիս պարբերականությամբ. իսկ առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոոպերատիվներին՝ 0 % տոկոսադրույքով, մարման ժամկետը մինչև 7 տարի: Ծրագրի շրջանակներում նույն վարկառուին տրամադրվող վարկի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի 100.0 մլն դրամը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու հանգամանքը անհրաժեշտություն է առաջացել ընդունել «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորում ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավա-րության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ):

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի իրականացման արդյունքում՝

- նախադրյալներ կստեղծվեն մատչելի մեխանիզմների կիրառմամբ 2019 թվականին շուրջ 395 հա խաղողի և պտղատու այգիների կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար,
- կսուբսիդավորվի 224 հա պտղատու և 171 հա խաղողի այգիներում կարկտապաշտպան ցանցերի տեղակայման նպատակով տրամադրված վարկերի տոկոսադրույքը,
- կարկտապաշտպան ցանցեր կիրառած տնտեսավարողների մոտ գրեթե կբացառվի կարկուտի ռիսկը, կբարելավվի բերքի որակը, կավելանա տնտեսավարողների եկամուտները,
- նախադրյալ կհանդիսանա այլ տնտեսություններում տվյալ տեխնոլոգիայի ներդրման համար:

**<u>105.4. Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագրի իրականացում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

**Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների** ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին), ՀՀ հողային օրենսգրքի ընդհանուր մասի 1-ին գլխի 2-րդ հոդվածի 5-րդ կետից:

Հողերի սեփականաշնորհումից հետո դրանք մշակվել են առանց ագրոքիմիական կանոնների պահպանման, միակողմանի պարարտացման, ցանքաշրջանառության բացակայության, որը հանգեցրել է հողի որակական հատկանիշների բերրիության հետընթացի (դեգրադացիա): Արդյունքում իջել է մշակաբույսերի բերքատվությունը,

| | |
|---|---|
| | ստացված բերքի որակը, բույսերի դիմացկունությունը ցրտերի, երաշտի, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ: Դրա հետ կապված նվազել է եկամտաբերությունը և հետաքրքրությունը գյուղատնտեսության ոլորտում, որը հանգեցրել է ցանքատարածությունների կրճատման:<br>Այդ ամենի հետ կապված անհրաժեշտություն է առաջացել իրականացնել Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումները:<br>Ծրագրի նպատակն է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության մոտ 170 համայնքներում իրականացնել գյուղատնտեսական նշանակության հողերի ագրոքիմիական հետազոտություն, որը հնարավորություն կտա ունենալ հետազոտված հողերի սննդատարրերով ապահովվածությունն արտացոլող տվյալներ, որոնց հիման վրա կազմված մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերը հիմք կհանդիսանան հողօգտագործողներին գյուղատնտեսական կուլտուրաների մշակության ժամանակ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Ագրոքիմիական Ծառայությունը» իր գործունեությունը և հարաբերությունները կարգավորում և իրականացնում է պայմանագրերի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և յուրաքանչյուր տարում ագրոքիմիական հետազոտման ծրագրում ընդգրկված համայնքների հետ: Ներկա պահին կնքված է պայմանագիր Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և «Ագրոքիմիական Ծառայության» ՊՈԱԿ-ի միջև՝ պայմանագիր № ԲԲՊՎ-16, միևնույն ժամանակ պատրաստված են 170 բնակավայրերի հետ ենթակա պայմանագրերի նախագծերը, որոնք ընթացիք տարվա ապրիլի 1-ից կտրամադրվեն ծառայության սեզոնային աշխատակիցներ հանդիսացող տարածքային մասնագետներին համայնքների հետ պայմանագրերի կնքման և դաշտային հետազոտման աշխատանքները սկսելու նպատակով:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներկայումս նախատեսված աշխատանքները ընդանում են ըստ սահմանված գրաֆիկի և խնդիրներ առկա չեն:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծառայության կողմից մշակված պարարտացման երաշխավորագրերի կիրառման արդյունքում պարարտանյութերը կօգտագործվեն խնայողաբար և նպատակային: Կբարձրանա հողերի բերրիությունը, մշակաբույսերի բերքատվությունը, բերքի որակը, բույսերի դիմացկունությունը, ցրտերի, երաշտի, հիվանդությունների, վնասատուների նկատմամբ, բերքում կբացառվի պարարտանյութերի մնացորդային քանակությունը, կբարձրանա հողի մշակությունից ակնկալվող շահույթաբերությունը կավելանա ցանքատարածությունները, համախառն արտադրանքը և պարենային ինքնաբավության մակարդակը:<br>Յուրաքանչյուր տարի շուրջ 170 համայնքի համար ագրոքիմիական քարտեզների մշակում, որոնք հիմք կծառայեն գյուղատնտեսական մշակաբույսերի գիտականորեն հիմնավորված նորմաներով պարարտացման համար:<br><br>**<u>105.5 Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը, 7-րդ պարբերության 4-րդ դրույթ):<br>Ծրագրի հիմնական նպատակն է փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցութան միջոցով բարելավել կենդանիների պահվածքի պայմանները՝ արդյունքում բարձրացնելով կենդանիների մթերատվության ցուցանիշները:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կենդանիների պահվածքի և խնամքի ոչ ճիշտ կազմակերպումը, նորմավորված կերակրման բացակայությունը, ինչպես նաև սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններն այսօր ստեղծել են մի իրավիճակ, որի պայմաններում հնարավոր չէ ապահովել կաթի պահանջարկը տեղական արտադրության հաշվին: Այսինքն, ցածր արտադրողականության գլխավոր պատճառը, հիմնականում, արտադրության հանդեպ էքստենսիվ մոտեցումն է, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաների, կառավարման, տեղեկատվության և գիտելիքների պակասը: Եվ, |

| | |
|---|---|
| | նույնիսկ, ինտենսիվ ֆերմաների համար այսօր կենդանիների պահվածքի հետ կապված վերը նշված խնդիրների լուծումը մնում է առաջնահերթ հարց: Հանրապետության տավարաբուծական արտադրանքի արժեշղթայի բոլոր փուլերում առկա խնդիրները խոչընդոտում են ճյուղի զարգացմանը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անասնապահական տնտեսությունների արդիականացման համար, այդ թվում պահվածքի պայմանների բարելավման, կաթնատվության մակարդակի բարձրացման, տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացման և ճյուղի շահութաբերության մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտություն է առաջանում պետական աջակցությամբ իրականացնել Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիրը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝<br>- հանրապետությունում փոքր և միջին տավարաբուծական տնտեսությունների զարգացում՝ շուրջ 230 անասնաշենքերի կառուցում կամ վերակառուցում,<br>- տավարաբուծության վարման արդիական տեխնոլոգիաների ներդրում, ճյուղի ինտենսիվացում,<br>- կենդանիների պահվածքի համար բարենպաստ պայմանների ստեղծում (զոոհիգիենիկ պայմանների ապահովում, գենետիկ ներուժի արդյունավետ օգտագործում),<br>- մեկ գլուխ կովի հաշվով կաթնատվության մակարդակի բարձրացում՝ մինչև 3500-4000 կգ,<br>- անասնագլխաքանակի ավելացում,<br>- կաթի ինքնարժեքի իջեցում, արտադրության ծավալների ավելացում,<br>- կաթի որակական հատկանիշների բարելավում,<br>- տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացում, մրցունակության մակարդակի բարձրացում,<br>- տնտեսավարող սուբյեկտների մասնագիտական կարողությունների բարձրացում,<br>- ստեղծվող տնտեսությունները կարող են օրինակ ծառայել ֆերմերների լայն շերտերի համար տավարաբուծության արդի մոտեցումներին ծանոթացնելու առումով, ինչպես նաև ուսումնական բազա՝ ուսանողների համար: |
| **106** | **Մեքենատրակտորային համակազմի թարմացման և գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ գյուղատնտեսության կարիքների բարելավում**<br><br>**<u>106.1 Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի իրականացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 5-րդ պարբերություն):<br>Ծրագրի հիմնական նպատակը գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումն է, արդյունքում՝ գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործման և ապրանքային արտադրության կազմակերպման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գյուղատնտեսության զարգացման հիմնական նախապայմաններից է գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացումը: Վերջինս ագրարային ոլորտի մրցունակության և արդյունավետության բարձրացման, գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ծավալների աճի և ճյուղի արտադրական ներուժի լիարժեք օգտագործման հիմնական գործոններից է: Սակայն, ներկայումս գյուղատնտեսության ոլորտում առկա գյուղատնտեսական տեխնիկան բնութագրվում է ցածր արդյունավետությամբ, ծախսատարությամբ՝ կապված վերջիններիս բարձր մաշվածության, սարքինության ցածր մակարդակի և պարտադրված պարբերական վերանորոգման հավելյալ ծախսերի հետ: Տնտեսավարող սուբյեկտների մի մասը փորձում են թարմացնել գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմը, սակայն ֆինանսական սուղ հնարավորությունների, ներմուծվող |

| | |
|---|---|
| | մեքենայացման միջոցների բարձր գների պատճառով դիմում են ֆինանսական կառույցների օգնությանը՝ լիզինգով գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու համար: Լիզինգը տրամադրվում է հիմնականում ոչ նախընտրելի տոկոսադրույքով՝ 9-13%:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գյուղատնտեսության մեքենայացման ներկա վիճակի գնահատումը ցույց է տալիս, որ ոլորտում առաջնահերթ խնդիր է գյուղատնտեսության տեխնիկական վերազինման նպատակային ծրագրերի մշակումը և դրանց իրականացումը, խնդրի վերաբերյալ նոր մոտեցումների և մեխանիզմների կիրառմամբ պետական աջակցության քաղաքականության իրականացումը:<br>Ծրագրով նախատեսվում է գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար առաջարկել գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման հնարավորինս մատչելի և արդյունավետ մոտեցումներ: Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական տեխնիկան տնտեսավարողներին կտրամադրվի լիզինգի պայմանագրով՝ 20% կանխավճարով: Մարման ժամկետը կոմբայնների համար՝ 10 տարի, տրակտորների համար՝ 6 տարի, հավաքիչ-մամլիչների, շարքացանների համար՝ 3-6 տարի, այլ գյուղատնտեսական գործիքների համար՝ 3 տարի: Լիզինգի տարեկան մինչև 9 % տոկոսադրույքի 7 տոկոսային կետը սուբսիդավորում է: Սահմանվում է մինչև 6 ամիս արտոնյալ ժամկետ:<br>Ծրագիրը նախատեսվում է իրականացնել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ռեսուրսների, իսկ սուբսիդավորման գումարը՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացման արդյունքում՝<br>- նախադրյալներ կստեղծվեն մատչելի մեխանիզմների կիրառմամբ գյուղատն-տեսությունում տնտեսավարողների վճարունակ պահանջարկի բավարարման՝ գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի որոշակի նորացման համար,<br>- ծրագրի իրականացումը հնարավորություն կտա նորացնել ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի տարեկան շուրջ 2.0 տոկոսը, սակայն այն նախադրյալներ կստեղծի առաջիկա տարիներին մատչելի մեխանիզմների կիրառմամբ իրականացնել տեխնիկայի համալրման առավել ընդգրկուն ծրագրեր, որոնք զուգահեռ հնարավորություններ կստեղծեն համայնքներին կից մեքենատրակտորային կայանների ստեղծման համար,<br>- որոշակիորեն կբարձրանա գյուղատնտեսությունում մեքենայացման մակարդակը, տնտեսապես կամրապնդվեն շահառու գյուղացիական տնտեսությունները և պայմաններ կստեղծվեն վերջիններիս կողմից ապրանքային արտադրության կազմակերպման և հետագա զարգացման համար: |
| 107 | **Գյուղատնտեսական և գինեգործական արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանն աջակցող մեխանիզմների մշակում և ներդրում**<br><br>**<u>107.1 Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանը</u>**<br><br>1. **Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱժՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 6-րդ պարբերություն):<br>Ներկայիս ազատ տնտեսական հարաբերությունների պայմաններում շուկայի պահանջարկը ուղղված է դեպի բարձրորակ գինիները: Բացի այդ շուկայական հարաբերությունների արդի պայմաններում խաղողի արժեքավոր սորտերից բարձրորակ գինիների արտադրության ընդլայնումը միանշանակ կխթանի արտադրանքի տեսականու համալրմանը և որակի բարձրացմանը: Մրցունակ գինիների արտադրությունը պահանջում է տարածքի մասնագիտացում և կայուն որակյալ հումքի առկայություն՝ կախված հատուկ խաղողի սորտերից և իրենց մշակման տեխնոլոգիաներից: Ուստի, խաղողագործության զարգացումը պետք է դիտարկվի գինեգործական արտադրանքի համընդհանուր զարգացման համատեքստում, որպես գինու արտադրության որակի գրավական: |

Հայաստանի Հանրապետության խողողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության և զարգացման ծրագրերի իրականացման նպատակներից են՝ խաղողի տնկարկների կադաստրի հիմնումը, պատշաճ մշակված և ֆիլոքսերադիմացկուն սորտապատվաստակալների այգիների հիմնումը, աշխարհագրական նշումով գինիների արտադրության համակարգի ներդնումը, միջազգային շուկաներում հայկական գինիների առաջմղումը և ճանաչելիության բարձրացումը, արտահանման ծավալների աճը և այլն:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանում խաղողի գինի արտադրվում է մի քանի հազարամյակ շարունակ: Անցյալ դարում գինու արտադրության ծավալները կտրուկ աճ են ունեցել Հայաստանում: Վերջին տարիների տեղական և օտարերկրյա ներդրումների շնորհիվ գինու արտադրության ծավալի աճ գրանցվեց: Վերջին մի քանի տարիների ընթացքում մեծածավալ ներդրումներ են արվել գինեգործության ոլորտում, հատկապես՝ առաջադիմական տեխնոլոգիաների ձեռք բերման և արտադրական գործընթացների արդիականացման համար: Սակայն, ներկայումս ամբողջովին լուծված չէ գինու որակյալ հումքի մատակարարման խնդիրը արտադրողներին: Ներկայումս մեր հանրապետությունում խաղողը հիմնականում ստացվում է Խորհրդային միությունից ժառանգած այգիներից: Դրանք հիմնականում ոչ մաքրասորտ են, տնկվել են առանց հաշվի առնելու տարածքների մասնագիտացումը, սորտերի հասունացման ժամկետները, պտուղների գույնը, բերքի սպառողական և տեխնիկական արժեքները և այլն:

Խնդիրներ են ծագում որակյալ մասնագետների ներգրավվածության հարցում: Ֆերմերային տնտեսությունները մեծամասամբ լինելով ինքնուսույց կամ կիառելով հին՝ արդի պահանջներին չհամապատասխանող մշակության մոտեցումներ ունեն արդյունավետության ցածր մակարդակ: Այն հանգեցնում է համակարգային խնդիրների, օրինակ՝ խաղողագործ-վերամշակող հարաբերությունների վատթարացմանը:

Ի հավելումն, արդիական է արտահանման շուկաներում հայկական գինու պատվավոր տեղի զբաղեցման խնդիրը՝ բարձր մրցակցության պայմաններում և հայկական գինու ճանաչելության բարձրացումը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՀՀ-ի խաղողի տնկարկներիի կադաստրի համակարգի ստեղծում, որը թույլ կտա ոլորտում իրականացնել ավելի արդյունավետ քաղաքականություն:

Հայկական տեղածին սորտերի գենոֆոնդի պահպանմանն ուղղված աշխատանքների իրականացում:

Կոլլեկցիոն, ցուցադրական և ֆիլոքսերադիմացկուն սորտ-պատվաստակալների այգիների խնամքը և կառավարում,

ՀՀ մարզերում մոնիտորինգի իրականացում՝ նպատակ ունենալով վերհանել պետական ֆոնդին պատկանող չմշակվող հողերը, որոնք պիտանի կլինեն բարձրարժեք գինեգործության տեսանկյունից: Դա կստեղծի ներդրումային ավելի բարենպաստ միջավայր:

Խաղողի և գինու որակի բարձրացման նպատակով մասնագիտական խորհրդատվություն իրականացում գինու արտադրությամբ զբաղվող ընկերություններին:

Ֆերմերների և մասնագետների միջև հմտությունների և գիտելիքների փոխանակման կազմակերպում:

Հայկական գինիների մասնակցության ապահովում միջազգային բարձր վարկանիշ ունեցող գինու մրցույթներին և միջազգային գինեգործական ցուցահանդեսներին, հայկական գինիների համտեսի կազմակերպում միջազգային ոլորտի մասնագետների համար, նպատակային շուկաներում գինու համտեսներին մասնակցություն:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Հանրապետության խաղողոագործության և գինեգործության կայուն զարգացում, ըստ սորտային կազմի և այլ կարևոր բնութագրիչների մշակվող խաղողի տնկարկների մակերեսների պարզաբանում, ըստ սորտային կազմի խաղողի տարեկան արտադրության միջին ծավալների աճ, արտադրվող գինեգործական արտադրանքի մասին ճշգրիտ տեղեկատվության տիրապետում, խաղողի յուրաքանչյուր տնկարկի ճշգրիտ տեղադրության և պատկանելիության բացահայտում, դրա անձնագրավորում:

Կոլեկցիոն այգու համալրում նոր սորտերով, խաղողի գենոֆոնդի պահպանում, քիչ տարածված տեղածին սորտերի տեխնոլոգիական ներուժի բացահայտում, խաղողի հայկական սորտերի միասնական էլեկտրոնային տեղեկատվական բազայի առկայություն և միջազգային հարթակներում հայկական սորտերի ճշգրիտ նկարագրության հասանելիություն:

Աշխարհագրական նշումով գինիների արտադրության համակարգի լիիրավ կիրարկման ուղեցույց, որակական չափորոշիչների հետազոտման համար աշխարհագրական նշումով գինիների էտալոնների առկայություն, նոր ներդրումներ համայնքներում, գինու տուրիզմի զարգացում:

Բարձրորակ գինու արտադրության կազմակերպում, մրցունակ նոր տեսակի արտադրանքի թողարկում: Բացի այդ միջազգային փորձի փոխանակում մասնակից ընկերությունների մասնագետների մասնակցությամբ:

Խաղող մշակող ֆերմերային տնտեսությունների կարողությունների զարգացում, ինչը կնպաստի որակյալ խաղողի արտադրությանը: Դա հատկապես կարևոր է հաշվի առնելով ներկայիս շուկայական խիստ մրցակցային պայմաններում օրեցօր ավելացող բարձրորակ խաղողի պահանջարկը:

Հայկական գինիների ճանաչելիության բարձրացում և արտահանման աճ:

**107.2 Գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկայի ստեղծման ներդրումային ծրագրի մշակման նպատակով հանրապետության մարզերի տարածաշրջաններում հետբերքահավաքային կարիքների (իրացման և մթերման կետեր, պահեստարաններ, սառնարանային տնտեսություն և այլն) և մթերման կետերի ստեղծման համար անհրաժեշտ հողատարածքների և շինությունների գնահատում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 6-րդ պարբերություն),

Միջոցառման իրականացման հիմնական նպատակը գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկայի ստեղծումն է, արդյունքում՝ գյուղատնտեսական մթերքների իրացման հիմնախնդիրների կարգավորումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գյուղացիական տնտեսությունները գյուղատնտեսական մթերքները հիմնականում իրացնում են գյուղատնտեսական մթերքների շուկաներում և առևտրի այլ ցանցերում միջնորդավորված անձանց միջոցով, առանց պատշաճ տեսակավորման և փաթեթավորման: Այս դեպքում գյուղացիական տնտեսությունների եկամուտները ցածր են և միջնորդները հաճախ ունենում են գյուղացիական տնտեսություններից ավելի մեծ շահույթներ, չվճարելով որևէ հարկ և պատճառ հանդիսանալով իրացման գների գրեթե կրկնակի աճին: Վերջինս հանգեցնում է գյուղացիական տնտեսությունների արդարացի դժգոհություններին և սպառողների ներկայումս ձևավորված գնողունակության մակարդակի պայմաններում դժվարանում է արտադրված բերքի իրացումը: Միաժամանակ արտադրողը չի կարողանում մշակել արտադրության և սպառման հստակ ռազմավարություն, պլանավորել իր արտադրության տեսականին ու ծավալները: Արդյունքում ամբողջությամբ չի օգտագործվում ոչ միայն ներքին սպառման ներուժը, այլև բացակայում է հայկական գյուղմթերքի շուկա արտասահմանյան գնորդների մուտքն ապահովող մեխանիզմը: Հայկական արտադրության գյուղմթերքի իրացման լոգիստիկ ծախսերի կրճատման, շուկայական ենթակառուցվածքների ձևավորման, արտադրանքի որակի և մրցունակության բարձրացման, արտահանող կազմակերպություններին և վերամշակման ոլորտին պահանջվող քանակությամբ և որակական ցուցանիշներով արտադրանքով ապահովման համար անհրաժեշտ է հանրապետական մասշտաբի մեծածախ շուկայի ստեղծումը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիրները մեղմելու համար առաջարկվում է ստեղծել նախադրյալներ՝ հետագայում մեծածախ շուկա հիմնելու նպատակով: Այդ իմաստով նախնական փուլում անհրաժեշտ է ստեղծել հիմքեր ներդրումային ծրագրի իրականացման համար:

**2. Ակնկալվող արդյունքները**

Միջոցառման իրականացման արդյունքում կստեղծվեն անհրաժեշտ հիմքեր գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկայի ստեղծման ներդրումային ծրագրի մշակման համար:

Մեծածախ շուկայի ստեղծմամբ՝

- կիսով չափ կկրճատվեն պտուղբանջարեղենի, կարտոֆիլի և այլ ապրանքների պահման, փաթեթավորման, տեղափոխման և այլ անհարմարությունների պատճառով արժեշղթայում առաջացող շուրջ 30-35 % կորուստները,
- մրցակցային պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվողների շրջանում, սեփական արտադրանքի արտադրության և վաճառքի ծավալների ընդլայնման ու որակի բարելավման ուղղությամբ,
- անցում կկատարվի գյուղատնտեսական մթերքների իրացման քաղաքակիրթ համակարգի և առևտրի կազմակերպման սկզբունքների՝ ապահովելով սննդամթերքի անվտանգության պահանջները,
- ապրանքային քանակների ձևավորման շնորհիվ զգալիորեն կավելանան գյուղմթերքի արտադրության և արտահանման ծավալները:

| | |
|---|---|
| 108 | **Գյուղատնտեսությունում կոոպերացիայի զարգացմանն օժանդակում, վերջիններիս կայացման համար անհրաժեշտ նվազագույն նախադրյալների սահմանում**<br><br>**<u>108.1 Արտոնյալ պայմաններով կոոպերատիվների մասնակցությունը պետական աջակցության ծրագրերին</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Գյուղատնտեսությունում կոոպերատիվների զարգացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսություն բաժին, 7-րդ պարբերության 1-ին դրույթ), 2010 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունից և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1476-Ն և 2014 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 442-Ն որոշումների դրույթներից:<br>Միջոցառման նպատակն է պետական ուղղակի աջակցության մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսությունում կոոպերատիվների զարգացման խթանումը և կարողությունների հզորացումը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ագրոպարենային համակարգում արդիական տեխնոլոգիաների, արտադրության կազմակերպման արդյունավետ ձևերի ներդրման համար անհրաժեշտ գիտելիքների ոչ բավարար լինելու, հողային, ջրային, աշխատանքային ռեսուրսների օգտագործման և կառավարման դեռևս ցածր արդյունավետության պայմաններում կարևորվում է պետական ակտիվ աջակցությունն ու պետական կարգավորման մեխանիզմների կիրառումը:<br>**<u>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները</u>**<br>Գյուղատնտեսությունում կոոպերատիվների տարբեր ձևերի խթանման, դրանց մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ է ապահովել պետական աջակցության ծրագրերի շրջանակներում կոոպերատիվների արտոնյալ պայմաններով մասնակցությունը:<br>**<u>2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը</u>**<br>Միջոցառման իրականացման արդյունքում նախադրյալներ կստեղծվեն պետական ուղղակի աջակցության մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորումը խթանելու համար: Կբարձրանա գյուղացիական տնտեսավարողների իրազեկվածության մակարդակը, գյուղացիական տնտեսությունների արդյունավետությունը, տնտեսավարողների մրցունակությունը, կբարելավվի արտադրանքի որակը, կավելանան պետական բյուջե ուղղվող վճարները: |
| 109 | **Գիտակրթական-արտադրական կլաստերների ստեղծում, գյուղատնտեսության և ագրարային ոլորտի կրթական, գիտական, գիտաարտադրական և խորհրդատվական կենտրոնների համագործակցության խորացում**<br><br>**<u>109.1 Գյուղատնտեսության ոլորտում գիտակրթական-արտադրական կլաստերների ստեղծման միջազգային փորձի ուսումնասիրում, արդյունավետ գյուղատնտեսության վարման նպատակով տնտեսավարման տվյալ ձևի հեռանկարային ուղղությունների վերհանում, հանրապետությունում կլաստերների ստեղծման հնարավորությունների ուսումնասիրում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման համար հիմք է հանդիսանում ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «5.10 Գյուղատնտեսություն» բաժնի 7-րդ պարբերության 2-րդ ենթապարբերությունը:<br>Միջոցառման իրականացման նպատակն է՝ ուսումնասիրել ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ագրարային ոլորտի կրթական, գիտաարտադրական և խորհրդատվական կառույցների համագործակցության |

բարելավման, գիտակրթական և արտադրական կազմակերպությունների ինտեգրման, գիտակրթական ներուժի օգտագործման և արտադրությունում ներդրման, գիտելիքահենք տնտեսության զարգացման և մրցունակ արտադրանքի թողարկման գործում գիտակրթական-արտադրական կլաստերների ստեղծման միջազգային փորձը, արդյունավետությունը և Հայաստանի Հանրապետությունում ներդրման հեռանկարները:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Միջոցառման համար ելակետային տվյալներ առկա չեն, միջոցառումը գտնվում է նախնական ուսումնասիրման փուլում:

Առկա խնդիրներն են՝ ոլորտի կարողությունների հզորացման նպատակով որակյալ և ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների պատրաստումը և կադրերի պահանջարկի բավարարումը, գիտահետազոտական և նորարարական գործունեության զարգացումը, գիտական արդյունքների ներդրումը և տնտեսության զարգացումը, մրցունակ արտադրանքի թողարկումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, նոր բիզնես-նախաձեռնությունների խթանումը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Գյուղատնտեսության ոլորտում գիտակրթական-արտադրական կլաստերների ստեղծման միջազգային փորձի ուսումնասիրում, արդյունավետ գյուղատնտեսության վարման նպատակով տնտեսավարման տվյալ ձևի հեռանկարային ուղղությունների վերհանում, հանրապետությունում կլաստերների ստեղծման գործոնների ուսումնասիրում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքները**

- գիտակրթական-արտադրական կլաստերների ստեղծման հայեցակարգի մշակման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների արդյունքում ձեռքբերված նյութերի և տվյալների ամփոփում,
- գիտակրթական-արտադրական կլաստերների ստեղծման հայեցակարգի մշակում:

**<u>109.2 «Գյուղատնտեսության ոլորտում գիտակրթական-արտադրական կլաստերների ստեղծման հայեցակարգի և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ընդունում, ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրագործում</u>**

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման համար հիմք է հանդիսանում ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «5.10 Գյուղատնտեսություն» բաժնի 7-րդ պարբերության 2-րդ ենթապարբերությունը:

Միջոցառման իրականացման նպատակն է՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ագրարային ոլորտի կրթական, գիտաարտադրական և խորհրդատվական կառույցների համագործակցության բարելավման, գիտակրթական և արտադրական կազմակերպությունների ինտեգրման, գիտակրթական ներուժի օգտագործման և արտադրությունում ներդրման, գիտելիքահենք տնտեսության զարգացման և մրցունակ արտադրանքի թողարկման գործում գյուղատնտեսության ոլորտում գիտակրթական-արտադրական կլաստերների ստեղծման միջազգային փորձի, արդյունավետության և Հայաստանի Հանրապետությունում ներդրման հեռանկարների ուսումնասիրության արդյունքները կյանքի կոչելու համար անհրաժեշտ իրավական ակտ(եր)ի ընդունումը և հետագա միջոցառումների իրականացումը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Միջոցառման համար ելակետային տվյալներ առկա չեն, միջոցառումը գտնվում է նախնական ուսումնասիրման փուլում:

Առկա խնդիրներն են՝ ոլորտի կարողությունների հզորացման նպատակով որակյալ և ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների պատրաստումը և կադրերի պահանջարկի բավարարումը, գիտահետազոտական և նորարարական գործունեության զարգացումը, գիտական արդյունքների ներդրումը և տնտեսության զարգացումը, մրցունակ արտադրանքի թողարկումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, նոր բիզնես-նախաձեռնությունների խթանումը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

«Գյուղատնտեսության ոլորտում գիտակրթական-արտադրական կլաստերների ստեղծման հայեցակարգի և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին»

ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը, ընդունումը և հետագա միջոցառումների իրականացումը

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքները**

Որակյալ մասնագետների ու ֆերմերների պատրաստման և վերապատրաստման, գյուղատնտեսական ուղղվածությամբ կրթական ծրագրերի նկատմամբ գրավչության բարձրացման, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների ակտիվացման և տեխնոլոգիաների փոխանցման, գյուղատնտեսական գիտելիքահենք արդյունքի ստեղծմամբ անձնական և ազգային բարեկեցության բարելավման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

110

**Ագրոպարենային համակարգի սարքավորումների, նոր տեխնոլոգիաների, սննդի անվտան-գության համակարգերի ներդրման աջակցություն**

**<u>110.1 Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի իրականացում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.9. Վերամշակող արդյունաբերությունը և 5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 7-րդ պարբերության 3-րդ դրույթ) և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զար-գացման ռազմավարությունից (IV-րդ բաժին, 39-րդ կետ, 11-րդ ենթակետի բ) պարբերություն)):

Ծրագրի իրականացման հիմնական նպատակը ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հանրապետության ագրոպարենային ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներն օգտագործում են 5-ից մինչև 70% մաշվածության տարբեր տեխնոլոգիական սարքավորումներ, իսկ առանձին կազմակերպություններում դրանք դեռևս Խորհրդային Միության արտադրության են՝ բարոյապես և ֆիզիկապես մաշված: Տնտեսավարողների կողմից վերջին երեք տարիների ընթացքում սարքավորումներ են ձեռք բերվել ինչպես սեփական և վարկային միջոցների հաշվին, այնպես էլ լիզինգով: Սարքավորումների ձեռքբերման նպատակով վարկային միջոցները տրամադրվել են ԱՄՆ դոլարով սկսած 4,2%-ից և ՀՀ դրամով մինչև 20% տարեկան տոկոսադրույքներով 6 ամսից մինչև 7 տարի մարման տևողությամբ, իսկ հարցմանը մասնակցած 33 տնտեսավարողների լիզինգով սարքավորումների ձեռքբերման պահանջարկը կազմում է ավելի քան 300 միավոր, իսկ արժեքը՝ շուրջ 10000.0 մլն դրամ:

Տնտեսությունների վերազինման գործընթացում առկա խնդիրները պայմանավորված են տնտեսավարողների ֆինանսական սուղ հնարավորություններով, կուտակված վարկային բեռով, տրամադրվող վարկային միջոցների ոչ նախընտրելի տոկոսադրույքներով և պայմաններով, ազատ գրավի առարկայի բացակայությամբ, ներմուծվող սարքավորումների բարձր գներով ու դրանց մատակարարման մատչելի մեխանիզմ-ների բացակայությամբ կամ եղածների անկատարությամբ:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ագրոպարենային ոլորտում գործող տնտեսավարողներին սարքավորումների ձեռքբերման համար լիզինգով տրամադրել մինչև 230,0 մլն դրամ, 8 տարի ներառյալ մարման ժամկետով, տարեկան մինչև 11 % տոկոսադրույքով, որի մինչև 7 տոկոսային կետը սուբսիդավորվում է, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 4 տոկոս, լիզինգառուն վճարում է լիզինգի առարկայի ձեռքբերման գնի 20 %-ի չափով կանխավճար, լիզինգի մայր գումարի մարման համար սահմանված արտոնյալ ժամկետը լիզինգը տրամադրելու պահից հաշվարկվում է առնվազն 3 ամիս, իսկ լիզինգի չսուբսիդավոր-վող տոկոսների վճարման պարտականությունը լիզինգառուի մոտ առաջանում է լիզինգի տրամադրման պահից

սկսած:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ռեսուրսների, իսկ սուբսիդավորման գումարը՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ֆինանսական կառույցների կողմից ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին լիզինգով սարքավորումների ձեռք բերման համար մինչև 11 տոկոս տոկոսադրույքով և մինչև 8 տարով տրամադրվող լիզինգի առարկան սուբսիդավորել մինչև 7 տոկոսային կետով, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող վարկի տարեկան տոկոսադրույքը կազմի 4 տոկոս, իսկ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար լիզինգի առարկան սուբսիդավորել 11 տոկոսային կետով, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 0 տոկոս:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի իրականացման արդյունքում՝

- նախադրյալներ կստեղծվեն մատչելի մեխանիզմների կիրառմամբ ագրոպարենային ոլորտի տնտեսավարողների վճարունակ պահանջարկի բավարարման և տնտեսությունները նոր սարքավորումներով վերազինման համար.

- որոշակիորեն կբարձրանա ագրոպարենային ոլորտի նորագույն սարքավորումներով հագեցվածության մակարդակը, տնտեսապես կամրապնդվեն շահառու տնտեսավարողները և պայմաններ կստեղծվեն վերջիններիս կողմից ապրանքային արտադրության կազմակերպման և հետագա զարգացման համար.

- կավելանա ագրոպարենային ոլորտի մրցունակության մակարդակը և կաճի գյուղատնտեսական մթերքների և դրանց վերամշակումից ստացված արտադրանքների արտադրության ու արտահանման ծավալները.

- հնարավորություն կստեղծվի ագրոպարենային ոլորտի որոշ արտադրատեսակների ներկրումը փոխարինելու տեղական արտադրությամբ:

## 110.2. Հայաստանի Հանրապե-տության սննդամթերքի անվտանգության ոլորտի գործող օրենսդրության կատարելագործում

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Սննդամթերքի անվտանգության ոլորտի գործող օրենսդրության կատարելագործման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին 7-րդ պարբերության 3-րդ դրույթ):

Միջոցառման իրականացման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության ոլորտի առկա խնդիրների և օրենսդրական բացերի վերհանումն է և դրանց հիման վրա համապատասխան իրավական ակտերի մշակումը և ընդունումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգությունը կարևոր և հրատապ հիմնախնդիրներից է, որը պահանջում է ժամանակակից պահանջներին և չափորոշիչներին համապատասխան լուծումներ: Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության համակարգը դեռևս լիարժեք չի երաշխավորում սպառողներին անվտանգ և որակյալ սննդամթերքով ապահովումը, ինչպես նաև տեղական արտադրության սննդամթերքի մրցունակության բարձրացումն արտաքին և ներքին շուկաներում:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության ոլորտի Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) հանձնաժողովի իրավական բնույթի նորմատիվ իրավական ակտերը Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ դնելու նպատակով, անհրաժեշտ է, որ ՀՀ կառավարությունը նորմատիվ իրավական ակտերով գործողության մեջ դնի այդ ակտերը, միաժամանակ ուժը կորցրած ճանաչելով ՀՀ կառավարության համապատասխան իրավական ակտերը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է ՀՀ կառավարություն ներկայացնել սանիտարական, անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական ոլորտների Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) հանձնաժողովի իրավական բնույթի մի շարք նորմատիվ իրավական ակտեր՝ ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերով գործողության մեջ դնելու նպատակով, միաժամանակ առաջարկելով ուժը

կորցրած ճանաչել ՀՀ կառավարության համապատասխան իրավական ակտերը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգությունն ապահովող կատարելագործված համակարգի ստեղծում, սպառողներին անվտանգ և որակյալ սննդամթերքի ապահովում, ինչպես նաև տեղական արտադրության սննդամթերքի մրցունակության բարձրացում արտաքին և ներքին շուկաներում՝ Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության բնագավառին առնչվող օրենսդրական դաշտի կատարելագործմամբ և համապատասխանեցմամբ ԵԱՏՄ և միջազգային պահանջներին:

111 **Տեղական սերմնաբուծության և սերմարտադրության, ինտենսիվ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի իրականացում**

**<u>111.1 «Հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացմանն աջակցություն» ծրագրի իրականացում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

«Հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացման աջակցություն» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 7-րդ պարբերության 4-րդ դրույթ):

Ծրագրի հիմնական նպատակն է հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային որոշ մշակաբույսերի տեղական արտադրության սերմացուների ինքնաբավության մակարդակի ավելացումը ու բարձրորակ սերմացուի օգտագործմամբ մշակաբույսերի բերքատվության բարձրացումը, հետևաբար նաև գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացումը:

**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս հանրապետության բուսաբուծության ոլորտի կարևորագույն հիմնահարցերից մեկը դարձել է սերմնաբուծության արդյունավետ միջոցառումների կազմակերպման անհրաժեշտությունը, որից էլ կախված է երկրում սերմնաբուծության բնագավառում առկա առանցքային խնդիրների կարգավորումը:

Երաշխավորված բարձր բերքի ստացման հիմնական գրավականը բարձրորակ սերմերով ցանքի կատարումն է: Հանրապետությունում բարձր վերարտադրության սերմացուների գները կարգավորելու, հողօգտագործողների համար այն մատչելի դարձնելու նպատակով Ծրագրի շրջանակներում որոշակիորեն կկարգավորվի սերմնաբուծական տնտեսությունների կողմից արտադրվող սերմացուների իրացման գինը՝ ի հաշիվ ծրագրով նախատեսված սուբսիդիաների:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվական դեկտեմբերի 21-ի նիստի N 53 արձանագրության 9-րդ կետով հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացում» ծրագրի շրջանակներում հանրապետություն ներկրած 5-ական տոննա ոլոռի, սիսեռի, հնդկացորեն և ոսպի սերմացուները պայմանագրային հիմունքներով տրամադրվել են 2 գիտական կենտրոնների (ՀՀ ԳՆ «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ և «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ) ու սերմնաբուծությամբ զբաղվող թվով 12 տնտեսավարողների՝ բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ սերմացուի կամ դրան համապատասխան դրամական արժեքի վերադարձման պայմանով: Սակայն բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների պատճառած վնասի հետևանքով վերջիններիս կողմից հնարավոր չէ 1:2 փոխհարաբերությամբ կամ դրան համապատասխան դրամական արժեքի վերադարձման պայմանի կատարումը:

**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է 1:2 փոխհարաբերությամբ դրամական արժեքի վերադարձման պայմանը փոխարինել 1:1 պայմանով, իսկ գիտական կենտրոնների ու ֆերմերային տնտեսությունների կողմից վերադարձման ենթակա սերմացուները հանձնել համապատասխան մարզպետարանների տնօրինությանը հետագա սորտափորձարկումների կամ 2019 թվականին տեղական սերմնաբուծական ծրագրերի իրականացման նպատակով՝ անվճար սկզբունքով:

**2. <u>Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը</u>**

Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

- հանրապետությունում առաջնային սերմնաբուծությամբ զբաղվող կազմակերպությունների արտադրական կարողությունների հզորացումը,
- հանրապետության տարածքում արտադրվող բարձր վերարտադրության հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի սերմացուի արտադրական ծավալների ավելացումը և տեղական սերմացուով ինքնաբավության մակարդակի բարձրացումը,
- սերմերի արտադրության բոլոր օղակներում պետական վերահսկողության բարելավումը,
- երկրի ագրոպարենային համակարգի կայուն իրավիճակի ձևավորման համար նախադրյալների ստեղծումը,
- ցանքատարածությունների և համախառն բերքի ծավալների ավելացումը, գյուղացիական տնտեսությունների եկամուտների բարձրացումը և տնտեսական աճի ապահովումը:

## 111.2 Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացում

### 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

«Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) անհրաժեշտությունը ծագում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 7-րդ պարբերության 4-րդ դրույթ): Ծրագրի ընդունման համար հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետության «Բույսերի նոր սորտերի պահպանության մասին» և «Սերմերի մասին» օրենքները, դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերը:

Ծրագրի նպատակներն են՝

- ՀՀ-ում նոր սորտերի արտոնագրման և օգտագործման գործընթացի կանոնակարգում, սելեկցիոն նվաճումների (բույսերի նոր սորտերի) իրավական պաշտպանության ապահովում,
- հանրապետության բնակլիմայական տարբեր գոտիներում մշակության երաշխավորվող բույսերի սորտային կազմի ընդլայնում,
- ցանքատարածությունների ֆիտոսանիտարական վիճակի վատթարացման, հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի զանգվածային բազմացման կանխարգելում:

Այս աշխատանքների կատարումը հիմնականում ենթադրում է բարձր վերարտադրության սերմադաշտերի ուսումնասիրությունների և արտադրված սերմերի որակի ստուգման հաշվին կանխարգելել գյուղացիական տնտեսությունների բերքի կորուստները անորակ սերմերի օգտագործման պատճառով (վերջիններս նպաստում են մոլախոտերի, հիվանդությունների և վնասատուների բազմացմանը):

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Բույսերի նոր սորտերի և հիբրիդների սորտափորձարկումների, դրանց արտոնագրման ու տնտեսական օգտակարության թույլտվության ձևակերպումների արդյունքում ՀՀ բնատնտեսական բոլոր գոտիների համար ընտրվում և շրջանառության մեջ են դրվում համապատասխան մշակաբույսերի տվյալ պայմաններին առավել հարմարված, բարձր բերքատու, որակական առավել մեծ արժեք ունեցող սորտեր և հիբրիդներ, որից շահում է հողօգտագործող սուբյեկտը, վերամշակող ձեռնարկությունը և սպառողը (ազգաբնակչությունը):

Սերմերի որակի լաբորատոր հետազոտությունները հնարավորություն են ընձեռում ցանքի համար օգտագործելու համապատասխան ծլունակությամբ, մաքրությամբ, հիվանդություններից ու վնասատուներից զերծ սերմացու և տնկանյութ, որի արդյունքում կրճատվում են միավոր տարածքի վրա ներդրվող ծախսերը, կրճատվում են թունաքիմիկատների օգտագործման չափաբաժինները, ինչպես նաև ստացվող գյուղմթերքում պարունակվող քիմիական նյութերի մնացորդային պարունակությունները:

Ոլորտում ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման միջոցով (տեղեկագրեր, ՀՀ գրանցամատյան) ապահովվում է շահագրգիռ կազմակերպությունների, ֆերմերային տնտեսությունների, հողօտագործողների տեղեկացված լինելու իրավունքը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով իր մասնակցությունն է բերում ՀՀ գյուղատնտեսության տարածքային զարգացման ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը:

Սերմերի որակի հետազոտության լաբորատորիաները տեղաբաշխված են ՀՀ վեց մարզում և լիովին

սպասարկում են հանրապետության բոլոր մարզերի ու Երևան քաղաքի գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ լաբորատոր հետազոտության ենթարկելով օգտագործվող սերմի և տնկանյութի հիմնական խմբաքանակները, կանխարգելելով հիվանդությունների, վնասատուների զարգացումն ու տարածումը սերմերի միջոցով:

Այս գործառույթի իրագործումն իր դրական ազդեցությունն է թողնում գյուղատնտեսական արտադրանքի որակի վրա, ինչպես նաև կրճատում է ֆինանսական միջոցների ծախսը միավոր տարածքի վրա:

Սորտափորձարկման 6 տեղամասերը տեղաբաշխված են հանրապետության չորս գյուղատնտեսական գոտիներում, որտեղ բույսերի նոր սորտերի փորձարկումների, դաշտային հետազոտությունների անցկացման միջոցով հայտնաբերվում և արտադրության են երաշխավորվում տվյալ պայմաններին առավել հարմարվող, բարձր բերքատու, որակական առավել լավ հատկանիշներ դրսևորող սորտերն ու հիբրիդները, ինչը իր հերթին նպաստում է գյուղատնտեսական արտադրության արդյունաբերության զարգացմանը, ֆիզիկական և իրավաբանական անձանց մոտ ծախսերի կրճատմանն ու եկամուտների աճին:

«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը հանդիսանում է «Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումներ» ծրագիրն իրականացնող միակ կազմակերպությունը, չունի այլ համակատարող (կամ գոյություն չունի մեկ այլ կազմակերպություն, որը կարող է իրականացնել գործառույթներից որևէ մեկը):

Միջոցառման ընթացքում նախատեսվում է՝

- սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննություններ, գրանցամատյանի վարում, օրիգինատորի հաշվառում, բույսերի սորտերի նկարագրությունների և բնութագրերի կազմում՝ տարեկան 15 հատ,
- բույսերի սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում՝ տարեկան 12.23 հազ. տոննա,
- բույսերի նոր սորտերի տեղեկագրի և գրանցամատյանի հրապարակում՝ 4800 էջ,
- բույսերի նոր սորտերի ստուգիչ ցանքերի իրականացում և դաշտային փորձարկումներ՝ տարեկան 115 հատ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.**

- մշակաբույսերի բերքատվության բարձրացում լավագույն սորտերի արտոնագրման, գրանցման և օգտագործման թույլտվության հատկացումների արդյունքում՝ 5-10 %,
- գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ֆիտոսանիտարական վիճակի բարելավում լաբորատոր հետազոտություն անցած բարձրորակ սերմերի օգտագործման արդյունքում՝ 5–10 %,
- հողօգտագործողների, ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների տեղեկացվածության, իրազեկման բարձրացում:

**112 Անասնաբուծության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի իրականացում, տոհմաբուծարանների ստեղծմանն աջակցություն**

**<u>112.1 Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրի իրականացում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 7-րդ պարբերության 4-րդ դրույթ):

Ծրագրի նպատակը ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների մատակարարումն է, ինչը հնարավորություն կընձեռի անհայտ ծագումնաբանությամբ, վերարտադրության համար ոչ պիտանի, ցածր մթերատու կենդանիների փոխարեն նախիրները համալրել արտադրատնտեսական արժեքավոր հատկանիշներով օժտված Տոհմային ԽԵԿ-ով, զարգացնել տոհմային գործը, միջցեղային տրամախաչումների միջոցով բարելավել տեղական կենդանիների մթերատվությունը, ավելացնել կաթի և մսի արտադրության ծավալները, նվազեցնել արտադրվող կաթի և մսի ինքնարժեքը՝ ներկրվող համանման

արտադրանքի նկատմամբ այն դարձնելով առավել մրցունակ:

**2.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետությունում անասնագլխաքանակի մասնատման, ինչպես նաև նախիրներում տոհմային կենդանիների գլխաքանակի կրճատման արդյունքում լուրջ խոչընդոտներ են առաջացել լայնածավալ տոհմասելեկցիոն աշխատանքների իրականացման գործում: Դրա հետևանքով կովերի միջին կաթնատվությունը տարիներ շարունակ տատանվում է 2000 կգ-ի սահմաններում: Մինչդեռ տավարաբուծության վարման ժամանակակից տեխնոլոգիաները և բարձր մթերատու ցեղերի գենոֆոնդի օգտագործումը հնարավորություն են ընձեռում կովերից ստանալ տարեկան առնվազն 4000 կգ կաթ, իսկ մսի համար բտված տավարն իրացնել 450 կգ և բարձր կենդանի զանգվածով: Ուստի անհրաժեշտ է պետական աջակցության միջոցով խթանել հանրա-պետությունում տոհմային կենդանիների ձեռք բերումը (տեղի արտադրողներից կամ արտերկրից)՝ նպաստելով հանրապետությունում տավարի նախիրները բարձր գենոֆոնդով օժտված կենդանիներով համալրմանը:

**2.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ծրագիրը նախատեսում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով իրականացնել Տոհմային ԽԵԿ-ի ձեռք բերման պետական աջակցություն, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնել նախիրների տոհմային արժեքը և տավարաբուծությունում վերականգնել տոհմային գործընթացը

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի իրականացումը կնպաստի գենետիկական բարձր ներուժով օժտված խոշոր եղջերավոր տոհմային կենդանիների ձեռք բերման ակտիվացմանը, հանրապետությունում տավարաբուծության ճյուղի աստիճանական ինտենսիվացմանը, տոհմային կենդանիների տեսակարար կշռի ավելացմանը, հանրապետությունում բուծվող ցեղերի ցեղայնության բարելավմանը և կատարելագործմանը, կաթի ու մսի արտադրության ծավալների ավելացմանը, տոհմասելեկցիոն աշխատանքների բարելավման միջոցով տոհմային մատղաշների աճեցմանը և այլն:

## <u>112.2 Թռչնաբուծության զարգացման ծրագրի մշակում և իրականացում</u>

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Թռչնաբուծության զարգացման ռազմավարական ծրագրի մշակումն ու իրականացումը (այսուհետ՝ Ծրագիր) բխում է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունըբաժին, 7-րդ պարբերության 4-րդ դրույթ):

Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել ճյուղի արդյունավետությունը, նվազեցնել թռչնամսի միավոր արտադրանքի ինքնարժեքը և ավելացնել թռչնամսի արտադրության ծավալները՝ տարեկան 4.5-5.5 հազար տոննայով (սպանդային զանգված):

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Թռչնաբուծությունը անասնաբուծության կարևոր ճյուղերից մեկն է: Թռչուններից ստանում են բնակչության կողմից մեծ պահանջարկ ունեցող բարձրարժեք սննդամթերք՝ ձու, թռչնամիս:

Հանրապետությունում գործող թռչնաբուծարանները ներկայումս ապահովում են տեղական շուկայի ձվի պահանջարկի 100 և թռչնամսի՝ շուրջ 25%-ը, մինչդեռ թռչնամսի արտարդրությամբ զբաղվող խոշոր և միջին առևտրային ընկերությունների առկա կարողությունների լիարժեք օգտագործման դեպքում թռչնամսի արտադրության տարեկան ծավալներն առաջիկա 5 տարիների ընթացքում կարելի է ավելացնել ավելի քան 3 անգամ: Նշված ցուցանիշին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ, որոնք կուղղվեն թռչնաբուծության զարգացմանը, կերի բազայի ամրապնդմանը և թռչնամսի արտադրության ծավալների ավելացմանը:

**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ծրագիրն իրականացնելու համար նախատեսվում է իրականացնել թռչնամսի արտադրության ծավալների ուսումնասիրություն և վերլուծություն, թռչնաբուծական տնտեսությունների հզորությունների ուսումնասիրություն,ինչպես նաև հանրապետությունում թռչունների ծնողական ձևերի արտադրության հնարավորությունների և ֆինանսական ծավալների գնահատում: Վերոնշյալ քայլերն իրականացնելուց հետո կկատարվի ծրագրի մշակում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի իրականացման արդյունքում՝

- հնարավորություն կընձեռնվի 3 անգամ ավելացնել թռչնամսի արտադրության տարեկան ծավալը,
- առավել արդյունավետ կօգտագործվեն առկա ենթակառուցվածքները և արտադրական կարողություններն ու կամրապնդվի թռչնաբուծության կերի բազան,
- ձվի արտադրությամբ զբաղվող թռչնաբուծարանների միջև կսահմանվեն ապրանքային ձվի արտադրության համամասնական չափաքանակներ, իսկ ձվի ավելցուկը կօգտագործվի վերամշակման նպատակով:

**<u>112.3 Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 7-րդ պարբերության 4-րդ դրույթ), ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունից (գլուխ V, մաս 83) և ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ծրագրից:

Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետությունում առկա գլխաքանակի, դրանց սեռի, ցեղի և գտնվելու վայրի, տեղաշարժի մասին հավաստի տեղեկությունների ստացումն ու անասնաբուծական արտադրանքի ծավալների կանխատեսումը, վաճառվող մսի և մսամթերքի նկատմամբ սպառողների վստահության բարձրացումը, պետական պատվերի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների լիարժեք իրականացումը և հիվանդությունների կանխարգելմանը և անասնաբուժական վերահսկմանը նպաստելը, անասնաբուժական մթերքի որակի փորձաքննությունը և երկրի ներսում կենդանիների տեղաշարժի վերահսկումը, ինչպես նաև միջազգային ստանդարտներով սահմանված պահանջների ապահովմամբ՝ միջազգային շուկա մուտք գործելը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետությունում մինչև այժմ կենդանիների համատարած հաշվառում տեղի չի ունեցել, որը խնդիր է ստեղծում անասնաբուծության բնագավառում կենդանիների գլխաքանակի և սեռատարիքային կազմի վերաբերյալ հստակ տեղեկատվություն ստանալու համար:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը՝

- Ստեղծել աշխատանքային խումբ
- Մշակել գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման իրականացման ծրագիր և ծրագրի իրականացմանն ուղղված միջոցառումներ
- Ներդնել գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման համակարգը

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների (այսուհետ՝ Կենդանիներ) համարակալման, հաշվառման և գրանցման համակարգի ներդրմանը, որը հնարավորություններ կստեղծի անասնաբուծական արտադրանքի ծավալների կանխատեսման համար, կնպաստի վաճառվող մսի և մսամթերքի նկատմամբ սպառողների վստահության բարձրացմանը, պետական պատվերի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների լիարժեք իրականացմանը, հիվանդությունների կանխարգելմանը և անասնաբուժական վերահսկմանը, ինչպես նաև անասնաբուժական մթերքի որակի փորձաքննությանը և երկրի ներսում Կենդանիների տեղաշարժի վերահսկմանը, միջազգային ստանդարտներով սահմանված պահանջների ապահովմամբ՝ միջազգային շուկա մուտք գործելուն:

**113** **Կենդանիների և բույսերի հիվանդությունների կանխարգելման արդյունավետ համակարգի ներդրման ապահովում**

**<u>113.1 Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 7-րդ պարբերության 6-րդ դրույթ), ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունից (գլուխ IV, մաս 39.9 և գլուխ V, մաս 70.16 ) և ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ծրագրից (219-րդ կետ):

Բույսերի պաշտպանության միջոցառումների նպատակն է հանրապետությունում իրականացնել առավել վնասակար օրգանիզմների մոնիտորինգի արդյունքների հիման վրա կատարված վարակվածությամբ վնասակարության շեմը գերազանցող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում պայքարի միջոցառումներ, կանխել դրանց գործունեությունը և նվազագույնի հասցնել դրանց տարածման արեալը, բարելավել՝ գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի բուսասանիտարական վիճակը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ-ում բուսաբուծության զարգացման հիմնական խնդիրներից մեկն է՝ բույսերի պաշտպանության և կարանտինի միջոցառումների իրականացումը և հանրապետության տարածքի բուսասանիտարական անվտանգության ապահովումը: Վարակվածության վնասակարության շեմը գերազանցող գյուղատնտեսական նշանակության հողերում անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ, քանի որ հաճախ գյուղացիական տնտեսությունները միայնակ պայքարելով վնասատուների դեմ, անհրաժեշտ արդյունք չեն ապահովում, որի պատճառով կրճատվում են համախառն արտադրանքի ծավալները, ընկնում է գյուղատնտեսական արտադրանքի որակն ու ապրանքային տեսքը:Հաճախ էլ պայքարի միջոցառումները դուրս են տնտեսավարող սուբյեկտների հնարավորություններից և պայմանավորված չեն նրանց գործունեությամբ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում կենտրոնացված կարգով իրականացնել պայքարի միջոցառումներ, մասնավորապես՝ պայքար մկնանման կրծողների, մորեխների դեմ և անտառի վնասակար օրգանիզմների դեմ:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

2019 թվականին նախատեսվում է ձեռք բերել 4142.6 լիտր (համարժեք կգ՝ ըստ տեսակարար կշռի) մկնասպան միջոց և 225 լիտր (համարժեք կգ՝ ըստ տեսակարար կշռի) միջատասպան միջոց, որոնցով «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայություններ կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքների հիման վրա, գարնանը և աշնանը հողօգտագործողների միջոցով պայքարի միջոցառումներ կիրականացվեն, մկնանման կրծողներով ու մորեխներով առավել վարակված շուրջ՝ 58.7 հազ հեկտար վարելահողում և բազմամյա տնկարկներում: Ծրագրի բյուջեն կազմում է 41036.6 հազ. դրամ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Նախատեսված միջոցառումների իրականացման շնորհիվ հնարավոր կլինի նվազագույնին հասցնել վնասակար օրգանիզմների վնասակարությունը և դրանց տարածման արեալի նվազեցումը, զգալիորեն կբարելավվի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի բուսասանիտարական վիճակը:

**<u>113.2 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի իրականացում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 7-րդ պարբերության 6-րդ դրույթ), ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշումից (4-րդ կետ, 1-ին ենթակետ):

Հանրապետության համայնքային մակարդակով միջոցառումների իրականացման նպատակն է կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ ստեղծել և պահպանել պատվաստված անասնագլխաքանակի կայուն վարակամերժության ֆոն, արդյունքում՝ անասնաբուժասանիտարական տեսակետից բարձրորակ անասնապահական մթերքի և հումքի արտադրության ապահովում, արտահանման և ներկրման գործընթացի խթանում, ինչպես նաև կայուն միջպետական տնտեսական կապերի հաստատում և բարելավում:

| | |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարների հաշվին իրականացվում են համաձայն ժամանակացույցի անհրաժեշտ չափաբաժիններով և համապատասխան քանակի պատվաստանյութերի, ախտորոշիչ նյութերի, ախտահանիչների և անասնաբուժական պարագաների ձեռքբերում, կանխարգելիչ և ախտորոշիչ հակաանասնա-համաճարակային միջոցառումներ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագրով նախատեսվում է գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների (բրուցելյոզ, տուբերկուլյոզ, լեյկոզ, սիբիրախտ, դաբաղ, խչխչան պալար, վարրոատոզ, խոշոր եղջերավոր կենդանիների վարակիչ մաշկաբորբ) դեմ պայքարի հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների իրականացում:<br>2019 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում անասնաբույժների կողմից նախատեսվում է համայնքային մակարդակով անասնագլխաքանակի նկատմամբ իրականացնել 9 կանխարգելիչ և 3 ախտորոշիչ անասնահակահամաճարակային 8547756 փաստացի միջոցառումներ՝ համաձայն պլան-ժամանակացույցի, անհրաժեշտ չափաբաժիններով անասնաբուժական պատվաստանյութերի, ախտորոշիչների, ախտահանիչ միջոցների և անասնաբուժական պարագաների բաշխման պարագայում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումը հնարավորություն է ընձեռնում հանրապետությունում յուրաքանչյուր տարի ունենալ շուրջ 596.5 հազ. գլուխ խոշոր եղջերավոր, 660.1 հազար գլուխ մանր եղջերավոր կենդանիների և գյուղատնտեսական այլ կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանության բարձր մակարդակ:<br><br>**<u>113.3 Դաբաղ հիվանդության շճահետազոտության միջոցառումների իրականացում</u>**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Դաբաղ հիվանդության շճահետազոտություն միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունըբաժին, 7-րդ պարբերության 6-րդ դրույթ), ՀՀ կառավարության 2006 թվա-կանի օգոստոսի 3-ի «Կենդանիների կարանտինային, հատուկ վտանգավոր և պարտադիր ծանուցման ինֆեկցիոն հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» N 1081-Ն որոշումից (ընգրկված է որոշման հավելվածի ցանկում):<br>Ծրագրի նպատակն է իրականացնել դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստումների արդյունավետության և պատվաստված կենդանիների մոտ ձևավորված վարակամերժության լարվածության գնահատում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Դաբաղը հանդիսանում է մշտական խնդիր տարածաշրջանային երկրների համար և չնայած վերջին տարիներին մեր հանրապետությունում ի հաշիվ հակադաբաղային պատվաստումների առկա էր կայուն համաճարակային իրավիճակ, սակայն 2016 թվականին գրանցվել է հիվանդության բռնկման դեպք, որը պայմանավորված է եղել գենտիկորեն նոր A AGVII դաբաղի վիրուսի ենթատեսակով: Անհրաժեշտություն է առաջացել իրականացնել մշտական և շարունակական պետական շճաբանական հետազոտություն՝ համաճարակային կայուն իրավիճակի ապահովման և գնահատման նպատակով:<br>Դաբաղ հիվանդության շճաբանական հետազոտությունն ունի ռազմավարական նշանակություն, իսկ վիրուսը համարվում է հատուկ վտանգավոր ախտածին և դրա վերաբերյալ տեղեկատվությունը պահանջում է գաղտնիության պահպանում:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառման շրջանակներում նմուշառման նպատակով ընդգրկված են ՀՀ բոլոր համայնքները, որոնք խմբավորվել են 2 գոտիների՝ բարձր ռիսկային գոտի (Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի, Իրանի սահմանամերձ համայնքները), որոնք անմիջական սահմանակից են Թուրքիային, Վրաստանին, Ադրբեջանին, Իրանին և ԼՂՀ-ին կամ այդ տարածաշրջաններում առկա են սեզոնային արոտավայրեր և ցածր ռիսկային գոտի:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացման արդյունքում կապահովվի շճաբանական հետազոտությունների վրա հիմնված |

հիվանդության հնարավոր ներթափանցման ռիսկերի գնահատում, ինչպես նաև գիտականորեն հիմնավորելու նպատակով թիրախային համայնքներում դաբաղ հիվանդության վիրուսի շրջանառության հայտնաբերելում կամ բացառելում: Մշտական և շարունակական կանխարգելիչ և մոնիտորինգային աշխատանքների արդյունքում կպահպանվի կայուն համաճարակային իրավիճակ:

**114 Գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական գործունեության ընդլայնում և ագրոտուրիզմի զարգացում**

**<u>114.1 Աջակցություն ոչ գյուղատնտեսական գործունեության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացմանը</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման կատարման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսություն բաժին, 7-րդ պարբերության 5-րդ դրույթ):

Միջոցառման իրականացման նպատակն է՝ գյուղական բնակավայրերում աշխատուժի, հումքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, բուն գյուղատնտեսական գործունեության մեջ չընդգրկված բնակչության ներառումը արտադրական և սպասարկման ոլորտներում, փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության զարգացումը, աղքատության մակարդակի կրճատումը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գյուղական բնակչության կենսամակարդակի բարելավման և աղքատության մակարդակի կրճատման առումով կարևոր նշանակություն ունի գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացումը և գյուղական բնակչության ներգրավումը ոչ գյուղատնտեսական գործունեության ոլորտում: Շուկայական հարաբերությունների պայմաններում այս բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն և դրանց կառավարման գործում գերակշռող դերակատարության հետ մեկտեղ պետության կողմից աջակցության կարիքը դեռևս պահպանվում է:

Նշված ենթատեքստում կարևորվում է՝

- կրթամշակութային և մարզական օբյեկտների գործունեությունը,
- ագրոտուրիզմի զարգացման ծրագրերի մշակումը և իրականացման տեխնիկական աջակցությունը,
- ոչ գյուղատնտեսական զբաղվածության նպատակով փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը,
- գյուղաբնակ կանանց և երիտասարդության գործարար ակտիվության բարձրացման նպատակային և այլ ծրագրերի իրականացումը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Միջոցառման իրականացման ընթացքում հիմնական շեշտը դրվելու է տարածաշրջանային և տեղական մակարդակներով առկա հնարավորությունների ուսումնասիրման, նոր նախաձեռնությունների բացահայտման, գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման և անհրաժեշտ տեղեկատվության տարածման մեխանիզմների մշակման վրա: Նախադրյալներ են ստեղծվելու ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ հայեցակարգի մշակման համար:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Գյուղական բնակչության կենսամակարդակի բարելավումը, գյուղական համայնքների ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացումը, համայնքներում աշխատունակ բնակչության զբաղվածության և 1 շնչին ընկնող եկամուտի մակարդակի փոփոխությունը, աղքատության մակարդակի կրճատումը:

**<u>114.2 Գյուղական բնակավայրերում գինու զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում</u>**

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման կատարման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսություն բաժին, 7-րդ պարբերության 5-րդ դրույթ):

Հայաստանի գինեգործության ոլորտի զարգացման ռազմավարության կարևոր բաղկացուցիչ մասն է կազմում Հայաստանի գինու տուրիզմի զարգացումը, հետևաբար, ոլորտի զարգացման գործողությունները հնարավոր չէ սահմանափակել միայն հայկական գինու հումքի, արտադրությամբ և իրացմամբ:

Միջոցառման հիմնական նպատակն է աշխարհին Հայաստանը որպես գինեգործության երկիր ներկայացնելը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի գինու հարուստ պատմությունը և մշակույթը, ինչպես նաև հյուրընկալությունը, սնունդը եւ բնությունը նախադրյալ են ստեղծում Հայաստանում գինու տուրիզմի զարգացման համար՝ միաժամանակ ստեղծելով նախապայմաններ համապատասխան ավելացված արժեքների ստեղծման համար:

Սակայն տուրիզմի տվյալ ուղղությունը զարգացնելու նպատակով դեռևս առկա են որոշ խոչընդոտներ, որոնք ընդհանուր առմամբ հանդիսանում են տուրիզմի ոլորտի խնդիրներ՝ տեղեկատվության և դրա հասանելիության պակաս, տուրիստական հիմնական ուղղությունների վրա թերի զարգացած ենթակառուցվածքների առկայություն, Հայաստանի՝ որպես գինու տուրիզմի ուղղություն, միջազգային տուրիստների շրջանակում ցածր ճանաչելիություն և այլն:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի գինու զբոսաշրջության տարածաշրջաններում ենթակառուցվածքների ստեղծում և բարելավում:

Փոքր և միջին արտադրողների որակյալ գինիների արտադրության աջակցում և նպաստում, ինչպես նաև հյուրընկալության ծառայությունների հմտությունների զարգացում: Հայաստանի «Գինու Ճանապարհի» /Wine Route/ մշակում:

Ճանապարհային ցուցանակների մշակում և տեղադրում՝ «Գինու Զբոսաշրջության» զարգացման և Հայաստանը որպես գինեգործության երկիր ներկայացնելու նպատակով:

Փառատոնների կազմակերպում, գրքերի, տեղեկատվական նյութերի տպագրություն և տարածում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Գինու տուրիզմի զարգացումը Հայաստանում կնպաստի հայկական գինու ճանաչողության բարձրացմանը, ներգնա տուրիզմի զարգացմանը, որը իր հերթին կհանգեցնի համայնքների զարգացմանը, Հայաստանում խաղողագործությամբ և գինեգործությամբ զբաղվող փոքր, միջին և խոշոր արտադրողների կողմից մատուցվող ծառայությունների դիվերսիֆիկացմանը, ներդրումային հնարավորությունների ներուժի բարձրացմանը, որն էլ իր հերթին կհանգեցնի ոլորտի զարգացմանը:

**115 Գյուղատնտեսական գիտելիքների և փորձի տարածման ու տեղեկատվության հասանելիության ապահովում**

**<u>115.1 Գյուղատնտեսությունում տնտեսավարողներին խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցման արդյունավետ մեխանիզմների մշակում և ներդրում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «5.10 Գյուղատնտեսություն» բաժնի 7-րդ պարբերության 7-րդ ենթապարբերության դրույթների իրականացման անհրաժեշտությամբ:

Գյուղատնտեսության հետագա զարգացման ապահովման գործում մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության համակարգված քաղաքականության իրականացման անհրաժեշտությունն ամրագրված է Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության դրույթներում: Գյուղացիական տնտեսությունների համար մասնագիտական դասընթացների կազմակերպման կարևորությունը իր արտացոլումն է գտել ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի 117-րդ կետում:

ՀՀ գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը և ՀՀ գյուղատնտեսության նախարարության

ընթացիկ և նախատեսվող ծրագրերի իրականացումը պահանջում է գիտելիքների և հմտությունների հետևողական կատարելագործում՝ ուսուցման և խորհրդատվություն միջոցով: Ծրագրի նպատակն է՝ գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գիտության նվաճումների, նոր տեխնոլոգիաների, գյուղատնտեսության արդյունավետ վարման և գյուղատնտեսության վերաբերյալ արդյունավետ խորհրդատվության տրամադրումը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս շարունակում է հրատապ մնալ ժամանակակից ագրոտեխնիկական կանոնների և տեխնոլոգիական նորարարությունների կիրառման ցածր մակարդակը, գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը: Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի լիարժեք գույքագրում, և որպես արդյունք ագրոպարենային համալիրի կառավարման արդյունավետության բարձրացում: Հանրապետության գյուղատնտեսության ներկայիս վիճակի և դրա զարգացման վերաբերյալ օբյեկտիվ և հավաստի տեղեկատվության տրամադրում: Գյուղատնտեսության կառավարման ոլորտում արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ հանրապետության գյուղատնտեսության ոլորտի մրցունակության բարձրացում:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ գյուղատնտեսության վարման ուղղությամբ մատուցվող խորհրդատվության տարածման վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հասանելիության և մատչելիության մակարդակի բարձրացում, գյուղացիական տնտեսություններին խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցման արդյունավետ մեխանիզմների մշակում, գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար գիտության նվաճումների, նոր տեխնոլոգիաների և միջազգային փորձի հասանելիության բարձրացում, մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության համակարգված քաղաքականության իրականացում:

**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**

Գյուղատնտեսությունում տնտեսավարողների տեղեկացվածության մակարդակի բարելավում, խորհրդատվության որակի բարձրացում, փորձացուցադրական տնտեսությունների ստեղծում, տնտեսավարողների կարողությունների հզորացում, տնտեսությունների վարման արդյունավետության բարձրացում, գյուղատնտեսության նորարարական տեխնոլոգիաների իրազեկվածության բարձրացում և կիրառություն, մասնագիտական գիտելիքների և տեղեկացվածության բարելավում, տնտեսավարողների մասնագիտական պատրաստվածության բարձրացում և աջակցություն՝ տեղեկատվություն, լրացուցիչ գիտելիք ու հմտություններ փոխանցելու և կարողություններ զարգացնելու միջոցով, գյուղատնտեսության ոլորտում ներդրումների ավելացում:

116

**Գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրում**

**<u>116.1 Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցություն, հետագայում պիլոտային ծրագրի արդյունքների հիման վրա հիմնական ծրագրի իրականացում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցություն ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 7-րդ պարբերության 8-րդ դրույթ):

Ծրագրի հիմնական նպատակը՝ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման միջոցով համակարգի աստիճանական ներդրման նախադրյալների ստեղծումն է՝ ապահովագրական համակարգի ամբողջական ներդրման հիմնական մոտեցումների հստակեցումը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետությունում բնական տարբեր աղետներից՝ գարնանային ցրտահարություններից, կարկտահարությունից տարեկան վնասվում են 30-35 հազ. հեկտար գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածքներ, որոնց վնասը հաշվարկվում է մինչև 18-23 մլրդ. դրամ, որը խիստ բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողների հետագա գործունեության ու սոցիալական վիճակի վրա: Յուրաքանչյուր տարի կարկուտի պատճառով վնասվում են հանրապետության այգետարածքների 10-15 %, որոշ դեպքերում կարկտահարված տարածքներում բերքի կորուստը կազմում է 80-100 %:

| | |
|---|---|
| | Հանրապետության գյուղատնտեսության բարձր ռիսկայնության պատճառով ոլորտը ապահովագրական ընկերությունների համար գրավիչ չի եղել: Դա բացատրվում է նաև այն հանգամանքով, որ գյուղատնտեսությունում արտադրությունը կազմակերպվում է ընդարձակ տարածքների վրա և բազմաբնույթ ուղղություններով, որը ապահովագրական ընկերությունների համար լրացուցիչ ծախսեր և ջանքեր է պահանջում ապահովագրական հիմնավորված սակագների սահմանման, ապահովագրական օբյեկտների կառավարման համար:<br>Նշվածից ելնելով, գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրմանը կարևոր դեր է հատկացվել ոլորտում տարվող պետական քաղաքականության մեջ:<br>**1.3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագրի իրականացման համար 2018 թվականին միջազգային խորհրդատվական կազմակերպությունը իրականացրել է ապահովագրության պիլոտային ծրագրի ներդրման նախապատրաստական աշխատանքներ:Նախատեսվում է, որ Ծրագիրը կընդգրկի 6 մարզ, նախկինում նախատեսված 2-3 մարզի փոխարեն: Ապահովագրվելու են ծիրանի և խաղողի այգիները՝ կարկուտի, ցրտահարության և հրդեհի ռիսկերից: Ծրագրի նախապատրաստական աշխատանքների շրջանակներում 2019 փետրվարի 25-27 իրականացվել է գյուղատնտեսության ոլորտում վնասի գնահատողների վերապատրաստման եռօյա դասընթացները:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝<br>- ռիսկերի նվազեցում,<br>- վնասի փոխհատուցման գործուն մեխանիզմների կիրառում,<br>- տնտեսավարող սուբյեկտների եկամուտների մակարդակի կայունության ապահովում,<br>- **հիմնական ծրագրի իրականացում:** |
| 117 | **Գյուղատնտեսության աջակցության հիմնական սկզբունքների, մեթոդաբանության և ռազմավարության սահմանում**<br><br>**117.1 Գյուղատնտեսության ոլորտի տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Գյուղատնտեսության ոլորտի տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 7-րդ պարբերության 9-րդ դրույթ):<br>Ծրագրի հիմնական նպատակն է՝ հանրապետության ագրոպարենային ոլորտում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, վարկավորման պայմանների բարելավման միջոցով նպաստել կապիտալ ներդրումների ծավալների ավելացմանը, արտադրական հզորությունների ընդլայնմանը, տնտեսությունների խոշորացմանն ու զարգացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության արտադրողականության բարձրացմանը և արտադրության ծավալների ավելացմանը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գյուղատնտեսական մթերքների արտադրության, մթերման, վերամշակման և հաջորդ տարվա գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման, արտադրական կարողությունների ընդլայնման, նոր արդիական տեխնոլոգիաների կիրառման համար գյուղատնտեսությունում տնտեսավարողներին խիստ անհրաժեշտ է ունենալ բավարար հիմնական և շրջանառու միջոցներ: Սեփական միջոցների անբավարարությունը վերջիններս փորձում են լրացնել ֆինանսական տարբեր կառույցների կողմից տրամադրվող փոխառու միջոցների հաշվին: Սակայն առևտրային բանկերի կողմից հիմնականում տրամադրվող վարկերի բարձր տոկոսադրույքների պատճառով դրանք գրեթե անմատչելի են արտադրատեխնիկական բարդ պայմաններ և իրացման դժվարություններ ունեցող բազմաթիվ տնտեսավարողների համար, ուստի պետական հովանավորչական քաղաքականության իրականացումն անհրաժեշտ պայման է հանդիսանում գյուղատնտեսությունում տնտեսավարողների կարողությունների հզորացման, արտադրության ծավալների ընդլայնման և գյուղատնտեսական արտադրության մրցունակության բարձրացման |

համար: Դրա հետ մեկտեղ կարևորագույն խնդիր է վարկերի նպատակայնության մակարդակի բարձրացումը, վարկերի գումարի և վարկավորման ժամկետների ավելացման միջոցով դրանց նպատակաուղղումը տնտեսությունների խոշորացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը և տնտեսավարողների գիտելիքների մակարդակի բարձրացմանը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Գյուղատնտեսության առջև ծառացած վերը նշված և այլ խնդիրների լուծման արդյունավետ միջոցներից է գյուղատնտեսությունում տնտեսավարողների վարկավորման մատչելիության բարձրացումը և վարկավորման պայմանների բարելավումը: Ծրագիրն ուղղվելու է ագրոպարենային ոլորտի զարգացման ծրագրերի վարկավորմանը: Ծրագրի շրջանակներում տրամադրվելու է 3-15 մլն դրամ վարկ մինչև 5 տարի մարման ժամկետով, սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար 0% տոկոսադրույքով, հանրապետության մնացած համայնքների համար՝ 5 %, իսկ գյուղատնտեսական կոոպերատիվներին՝ 3% տոկոսադրույքով:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի իրականացման արդյունքում՝

- կբարձրանա ոլորտում վարկունակ պահանջարկի մակարդակը, ինչը կհանգեցնի համախառն արտադրանքի աճին,
- էականորեն կնվազեն բանկերի և վարկային կազմակերպությունների ռիսկերը,
- կբարձրանա գյուղատնտեսության ոլորտի ներդրումային գրավչությունը,
- կընդլայնվեն գյուղատնտեսությունում տնտեսավարողների կարողությունները, սահմանված ժամկետում և պահանջներին համապատասխան կիրականացվեն գյուղատնտեսական մթերքների արտադրության կազմակերպման աշխատանքները, հնարավորություններ կապահովվեն ագրոտեխնիկական պահանջների կատարման, անասնապահությունում գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման, արտադրության արդյունավետության բարձրացման համար,
- կստեղծվեն հնարավորություններ գյուղատնտեսությունում արդիական տեխնոլոգիաների ներդրման, տնտեսությունների խոշորացման, վարկառուների ռեեստրի վարման միջոցով վարկավորման առաջնահերթ խնդիրների բացահայտման համար,
- ոլորտում մասնավոր ներդրումները կավելանան տարեկան միջին հաշվով 20.0 մլրդ դրամով, որը հնարավորություն կստեղծի շահառու տնտեսավարողների տնտեսությունների կայունացման, կապիտալ ներդրումների ավելացման, ընդլայնված ծավալներով արտադրության շարունակման և արդիական տեխնոլոգիաների ներդրման համար:

## 117.2 Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.9. Վերամշակող արդյունաբերությունը բաժին և 5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 7-րդ պարբերության 9-րդ դրույթ), ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունից» (V-րդ բաժին, 93 և 94-րդ կետեր) և ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ծրագրից» (180 և 182-րդ կետեր):

Ծրագրի իրականացման հիմնական նպատակը գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտում գործող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումն է:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերությունը հանդիսանում է գյուղատնտեսական

| | |
|---|---|
| | մթերքների երաշխավորված իրացման և վերարտադրության ապահովման կարևորագույն ոլորտներից մեկը և տնտեսության այդ ոլորտի զարգացման մակարդակը մեծապես պայմանավորում է գյուղատնտեսության զարգացումը: Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ձեռնարկությունները վերազինման և շրջանառու միջոցների համալրման կարիքները սեփական ազատ միջոցների սղության կամ բացակայության պատճառով մշտապես ապահովում են վարկային միջոցների հաշվին, որոնք սովորաբար լինում են միջնաժամկետ (3-5 տարի), երբեմն՝ երկարաժամկետ, դրամով և արտարժույթով, որոնց տոկոսադրույքը ՀՀ դրամով տատանվում է 12.3-ից 14.2, իսկ արտարժույթով՝ 8.8-ից 11.2%-ի սահմաններում:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագրի շրջանակներում տրամադրվող սուբսիդավորման ենթակա վարկերը պետք է նպատակաուղղվեն բացառապես մթերվող խաղողի, պտուղբանջարեղենի և կաթի արժեքի վճարմանը, իսկ տրամադրվող վարկի չափը (գումարը) չպետք է գերազանցի վարկառուի գյուղացիական տնտեսությունների հետ կնքված պայմանագրերում նշված հումքի գնման արժեքը, իսկ հումքի գնման նվազագույն գներով հաշվարկված լինելու դեպքում՝ հումքի գնման ակնկալվող արժեքի 120 տոկոսը:<br>Ծրագիրը նախատեսվում է իրականացնել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ռեսուրսների, իսկ սուբսիդավորման գումարը՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:<br>Ծրագրի շրջանակներում պտուղբանջարեղենի, խաղողի և կաթի մթերումների (գնումների) նպատակով ֆինանսական կառույցների կողմից տնտեսավարողներին մինչև 12 տոկոս տոկոսադրույքով և 1 տարով տրամադրվող վարկերը սուբսիդավորել մինչև 9 տոկոսային կետով, որպեսզի վարկառուի կողմից վճարվող վարկի տարեկան տոկոսադրույքը կազմի 3 տոկոս:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացման արդյունքում՝<br>- նախադրյալներ կստեղծվեն ոլորտում վարկունակ պահանջարկի մակարդակի բարձրացման համար, ինչը կհանգեցնի գյուղատնտեսական մթերքների գնման դիմաց գյուղատնտեսությունում տնտեսավարողներին կատարվող վճարումները կարճ ժամկետներում կատարելուն,<br>- վերամշակողների և գյուղացիական տնտեսությունների միջև կհաստատվեն հումքի գնման պայմանագրային հարաբերություններ, որը գյուղացիական տնտեսություններին կտա հումքի իրացման կայուն երաշխիքներ,<br>- 5-ից 7 տոկոսով կբարձրանա պտուղբանջարեղենային պահածոների, գինեգործական արտադրանքի և կաթնամթերքի մրցունակության մակարդակը, որի արդյունքում կավելանան արտադրության ու արտահանման ծավալները, ինչը դրականորեն կանդրադառնա նոր աշխատատեղերի ստեղծման, ոլորտում զբաղվածների եկամուտների ավելացման և արտաքին ապրանքաշրջանառության բարելավման վրա,<br>- որոշակիորեն կբարձրանա գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտի գրավչության մակարդակը, էականորեն կմեղմվի գյուղատնտեսական մթերքների իրացման հիմնախնդիրը, կմեծանա գյուղատնտեսական հումքի պահանջարկը, որը կնպաստի գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակի բարձրացման:<br><br>**117.3 Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության մշակում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության մշակման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից (5.10. Գյուղատնտեսությունը բաժին, 7-րդ պարբերության 9-րդ դրույթ):<br>Ռազմավարության հիմնական նպատակն է գյուղատնտեսության կայուն զարգացման մեխանիզմների ձևավորման միջոցով՝ նպաստել ճյուղի արդիականացմանը և մրցունակության բարձրացմանը, ոլորտի զարգացմանն ուղղված 2020-2030 թվականներին իրականացվելիք պետական քաղաքականության հիմնական ուղղությունների նախանշմանը և ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների իրականացմանը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** |

2020 թվականին ավարտին է մոտենում 2010-2020 թվականների գյուղի և գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության իրականացման ժամանակահատվածը: Ուստի ոլորտի զարգացմանն ուղղված քաղաքականության մշակման և իրականացման համար անհրաժեշտ է նոր ռազմավարական փաստաթղթի ընդունում:

Մշակվող ռազմավարության հիմնական խնդիրները նախանշված են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրով: Առաջիկա տաս տարիներին Կառավարության կողմից գյուղատնտեսության ոլորտում վարվող քաղաքականությունը միտված կլինի հետևյալ խնդիրների լուծմանը՝

– գյուղատնտեսության արդյունավետության բարձրացում,

– պարենային անվտանգության մակարդակի բարձրացում, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության ապահովում,

– արդի տեխնոլոգիաների ներդրում,

– արտահանման ծավալների ավելացում,

– գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված բոլոր սուբյեկտների՝ փոքր տնային տնտեսությունների, գյուղատնտեսական կոոպերատիվների, վերամշակող ընկերությունների և արտահանողների եկամտաբերության մակարդակի բարձրացում,

– հողօգտագործման արդյունավետության բարձրացում,

– օրգանական գյուղատնտեսության զարգացում,

– բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերի զարգացում,

– գյուղատնտեսական ռիսկերի մեղմում,

– ագրարային ոլորտի վարկավորման մատչելիության բարձրացում,

– ոլորտի գիտակրթական, խորհրդատվական համակարգի բարելավում,

– գյուղատնտեսությունում հաշվառման համակարգի արդիականացում:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Գյուղատնտեսության ոլորտի խնդիրների լուծմանը կնպաստի ոլորտում քաղաքականության մշակման հիմնական ուղենիշային փաստաթղթի՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության մշակումը՝ ռազմավարության հիմնական դրույթների գերակայությունների, առաջնահերթ նպատակների և խնդիրների սահմանում, իրականացվող քայլերի ժամկետների, կատարողների հստակեցում, արդյունքային ցուցանիշների, անհրաժեշտ ֆինանսական միջոցների գնահատում, աղբյուրների նախանշում: Նախարարության կողմից մշակվել է ՀՀ գյուղատնտեսության տնտեսական զարգացումն ապահովող 2019-2030 թթ. հիմնական ուղղությունների վերաբերյալ նախագիծը, որտեղ դրված են զարգացման 4 հիմնական ուղղություններ՝ նախարարության կարողությունների բարելավում, հողի շուկայի զարգացում, գյուղական ենթակառուցվածքների զարգացում, գյուղատնտեսության կայունություն և ռիսկերի կառավարում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Փաստաթղթի մշակման և ընդունման արդյունքում՝

- կբարելավվի նախարարության կարողությունները՝ քաղաքականությունը ստեղծելու, իրականացնելու և վերահսկելու վերաբերյալ,
- կզարգանա հողային շուկան,
- կզարգանան գյուղատնտեսական ենթակառուցվածքները,
- կապահովվի գյուղատնտեսական կայունությունը և կնվազեն ռիսկերը:

Մինչև 2030 թվականը ռազմավարության նախատեսված միջոցառումների իրականացումը կապահովի գյուղատնտեսական համախառն արտադրանքի կրկնակի աճ, տարեկան միջինը՝ 6.1 %-ի չափով, ինչպես նաև գյուղատնտեսության արտադրողականության և բնակչության եկամուտների աճ:

**Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն**

**118** **Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում**

**118.1 <u>Մշակել ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ զարգացման ուղիները</u>**

**<u>118.2 Մշակել Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի նոր հեռանկարային զարգացման ծրագիր</u>**

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.2. կետի՝ «Էներգետիկ բնագավառը» բաժնի դրույթից և ՀՀ վարչապետի 2017 թվականի ապրիլի 10-ի «Հաստատել Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև ստորագրված «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր. երկրորդ փուլ (ընթացիկ գործառնություններ)» վարկային համաձայնագրով նախատեսված երկրորդ մասնաբաժնի ստացման համար անհրաժեշտ գործողությունների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» N353-Ա որոշման հավելվածի 4-րդ կետի 14-րդ ենթակետի դրույթներից: Հայաստանում էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացված մոդելի անցնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ներքին շուկայի կարիքներով, ինչպես նաև կարևորվում է միջսահմանային առևտրի հնարավորություններն օգտագործելու համար: Միջսահմանային առևտուրն կընձեռնի փոխշահավետ հնարավորություններ և կնպաստի Հայաստանի ներքին շուկայի արդյունավետության բարձրացմանը:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկան մինչև վերջին տարիներն ամբողջությամբ կարգավորվում էր ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ հատվածներում: Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի «միակ գնորդ-վաճառող» մոդելը կիրառության մեջ էր դրվել 2004 թվականին, որի դեպքում էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին էր վերապահված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում արտադրողներից էլեկտրաէներգիա գնելու և այն սպառողներին վաճառելու իրավունքը: Էլեկտրաէներգետիկական շուկայի աստիճանական ազատականացման և այլ երկրների հետ էլեկտրական էներգիայի առևտրի խթանման ուղղությամբ, 2016 թվականից սկսած, արդեն իսկ կատարվել են առաջին քայլերը: Մասնավորապես, տարանջատվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին (այսուհետև՝ ՀԷՑ) տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիայով նախատեսված մատակարարման և բաշխման գործառույթները՝ վերանայելով ՀԷՑ-ի կողմից վերջնական սպառողներին էլեկտրական էներգիայի վաճառքի բացառիկ իրավունքը, սահմանվել են էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման սակագները, հաստատվել են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առևտրային կանոնները, որոնցով Շուկայի օպերատորի կողմից կանոնների համաձայն որակավորված ճանաչված սպառողների (այսուհետ՝ Որակավորված սպառող) համար ստեղծվել է հնարավորություն՝ իրենց սպառման պահանջարկի բավարարման համար էլեկտրական էներգիան գնել էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից՝ կարգավորվող սակագներով կամ այլընտրանքային մատակարարից՝ պայմանագրային գնով, ինչպես նաև անձամբ ներկրել: Անհրաժեշտություն է առաջացել վերանայել էներգետիկ բնագավառի երկարաժամկետ զարգացման ուղիները՝ հաշվի առնելով նոր զարգացումները, ինչպես նաև՝ էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցներին արդյունավետ ներդրումների իրականացման նպատակով, մշակել էլեկտրաէներգետիկական համակարգի նոր հեռանկարային զարգացման ծրագիր:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

Հայաստանի էներգետիկ համակարգի նվազագույն արժեքով զարգացման հայեցակարգի մշակում:

Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի նոր հեռանկարային զարգացման ծրագրի մշակում:

Փաստաթղթերի մշակումը նախատեսվում է իրականացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համատեղ:

Ներկայում ռազմավարական ծրագրերը մշակման փուլում են և կիրականացվեն կառավարության որոշմանը համահունչ:

**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**

Հայաստանի էներգետիկ համակարգի նվազագույն արժեքով զարգացման հայեցակարգով կնախանշվեն էներգետիկական բնագավառի զարգացման ուղիները՝ 2020-2040թթ համար, ինչի հիման վրա կմշակվի նաև Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի նոր հեռանկարային զարգացման ծրագիր, որով կնախանշվեն էլեկտրաէներգետիկական համակարգի զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ տասնամյա ժամանակաշրջանի համար: Արդյունքում կբարձրացվի էներգետիկ բնագավառում իրականացվող ներդրումների արդյունավետությունը, ինչպես նաև կհստակեցվեն ներդրումների կատարման ուղղությունները պոտենցիալ ներդրողների համար:

**118.3 «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության

| | |
|---|---|
| | էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը հաստատելու մասին» /այսուհետ՝ Ծրագիր/ թիվ 1010-Լ որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներից:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում էներգետիկայի բնագավառը կարգավորվում է «Էներգետիկայի մասին» ՀՀ ՀՕ-148 օրենքով: Օրենքի նոր լրացումներն ու փոփոխությունները ուժի մեջ մտան 2018 թվականի հուլիսի 1-ից, որի անցումային դրույթների համաձայն, կարգավորումներն ամբողջությամբ կսկսեն գործել 2020 թվականից: Դրանից հետո պարզ կլինեն օրենքում առկա խնդիրները և դրանց լուծմանն ուղղված կառաջարկվեն նոր կարգավորումներ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մշակել «Էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենք՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական շուկայի մոդելի և էլեկտրաէներգիայի առևտրի մեխանիզմների ներդման ընթացքում առաջ եկած խնդիրները:<br>Նոր օրենքով նախատեսվում է հստակեցել պետական քաղաքականության սկզբունքները, պետական տարբեր մարմինների և ոլորտում գործունեություն իրականացնող անձանց իրավասությունների շրջանակը, էլեկտրաէներգետիկական շուկայի հետագա կառուցվածքին ներկայացվող պահանջները, ինչպես նաև առաջադրել ազդակներ էլեկտրաէներգետիկական համակարգի հետագա կայուն զարգացման համար:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի իրավական դաշտի կատարելագործում: Օրենքի մշակումը նախատեսվում է իրականացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համատեղ: |
| **119** | **Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգում և արդիականացում**<br><br>**<u>119.1 Իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի ավարտական փուլի աշխատանքները</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Նախագահի 2013թ. հոկտեմբերի 23-ի ՆԿ-182-Ն հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը հաստատելու մասին» կարգադրության 8-րդ բաժնի 4-րդ մասի և 2014թ. հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 836-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1բ) կետի դրույթներից և ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.2. կետի՝ «Էներգետիկ բնագավառը» բաժնի դրույթից:<br>Հաշվի առնելով, որ ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրը հետաձգվում է (նախատեսվում էր անցկացնել ներդրողների կոնֆերանս 2011 թվականի ապրիլին, սակայն 2011 թվականի մարտին Ֆուկուսիմա ԱԷԿ-ում տեղի ունեցած վթարի պատճառով հետաձգվել է ներդրողների կոնֆերանսի անցկացումը), իսկ գործող Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետն ավարտվում 2016 թվականի սեպտեմբերին, ՀՀ կառավարությունը որոշել է երկարաձգել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը (2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 461-Ն ՀՀ կառավարության որոշում): 2014 թվականի մարտի 27-ին ՀՀ կառավարության 12-րդ նիստի 11-րդ հարցով հավանության է արժանացրել Հայկական ԱԷԿ-ի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման ծրագիրը: 2015 թվականի մայիսի 12-ին ուժի մեջ են մտել Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև ստորագրված Հայկական ատոմային էլեկտրակայանի N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության մասին և Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին համաձայնագրերը: Համաձայն համաձայնագրի իրականացվում են Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով նախատեսված աշխատանքները:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՌԴ-ի աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև կնքվել են՝ 2014թ. դեկտեմբերի 20-ին համագործակցության մասին և 2015թ. փետրվարի 5-ին վարկի տրամադրման մասին համաձայնագրերը (300 մլն |

| | |
|---|---|
| | ԱՄՆ դոլար, որից 270 մլն ԱՄՆ դոլար վարկ և 30 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհ): 2014թ. դեկտեմբերի 20-ին համագործակցության մասին կնքված համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն կողմերը նշանակել են լիազորված կազմակերպություններ՝ հայկական կողմից՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2015թ. մարտի 13-ի № 01/20.2/1197-15 գրությամբ նշանակվել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ռուսական կողմից՝ «Ռոսատոմ» պետական կորպորացիայի 2015թ. հունվարի 14-ի № 1-1/431 գրությամբ նշանակվել է «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ն: Ծրագրի իրականացման նպատակով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (Պատվիրատու) և «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ի (Կապալառու) միջև 2015թ. հունիսի 1-ին ստորագրվել է «Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների իրականացում, ծառայությունների մատուցում և ապրանքների մատակարարում» № 309/688-Д պայմանագիր, որի շրջանակներում ստորագրվել են թվով 60 լրացուցիչ համաձայնագրեր (ԼՀ):<br>ՀՀ կառավարությանը 2018թ. փետրվարի 1-ի № 4-27 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացրել ծրագրի իրականացումն ապահովող ԼՀ-ն՝ 57 117 520 ԱՄՆ դոլար արժողությամբ: Այնուհետև, պայմանավորված ծրագրի ավարտման ժամկետի երկարաձգմամբ՝ մինչև 2021թ. հուլիսի 1-ը և չփաստաթղթավորված մնացորդային միջոցների հաշվին նախատեսված աշխատանքների ծավալների մասով, լրացուցիչ համաձայնագիր կնքելու նպատակով ՀՀ կառավարությունը 2018թ. մայիսի 3-ին ընդունեց № 542-Ա որոշումը: ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից «Ռոսատոմ» ընկերությանը ներկայացվել է գրություն ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման նպատակով ՌԴ կողմից տրամադրված վարկի պայմանագրով նախատեսված օգտագործման ժամկետը 1 տարի 6 ամսով և վարկի մարման սկզբնաժամկետը երկարաձգելու առաջարկությամբ, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2018թ. հուլիսի 29-ին ՌԴ ֆինանսների նախարարությանը ներկայացվել է դիմում՝ համաձայնագրի ժամկետի երկարացման և համապատասխանաբար վարկի մարման սկզբնաժամկետի երկարացման վերաբերյալ:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման նպատակով ՌԴ կողմից տրամադրված վարկի պայմանագրով նախատեսված օգտագործման ժամկետը և վարկի մարման սկզբնաժամկետը երկարաձգելու հարցը քննարկվել է նաև 2019թ. մարտի 12-ին տեղի ունեցած Հայ-ռուսական համատեղ համակարգող կոմիտեի նիստում, որի ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն այն մասին, որ մինչև 2019թ. ապրիլի 15-ը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն կներկայացնի շահագործման ժամկետի երկարացման աշխատանքների ընդհանրացնող պլան-ժամանակացույց՝ համաձայնեցնելով ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի և «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ի հետ, որով վերջնականապես կհստակեցվեն աշխատանքային ծավալները և ավարտման ժամկետը: Ձեռք է բերվել նաև պայմանավորվածություն, որի համաձայն ՀՀ կառավարությունը կդիմի ՌԴ կառավարությանը՝ միջպետական համաձայնագրի ժամկետների տեղափոխման հարցով՝ կցելով վերոնշյալ պլան-ժամանակացույցը: Ներկայումս իրականացվում է նշված պլան-ժամանակացույցի համաձայնեցման գործընթաց:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու դեպքում ակնկալվում է արդիականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի երրորդ տուրբոագրեգատի արդիականացման ավարտ և չորրորդ տուրբոագրեգատի երկու կոնդենսատորների փոխարինում: Կատարված արդիակացումները շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում հնարավորություն կընձեռեն մեծացնել Հայկական ԱԷԿ-ի տուրբինային արտադրամասի նախագծային հզորությունը առնվազն 10%-ով: |
| 120 | **Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի մշակում**<br><br>**<u>120.1 Միջուկային էներգետիկական միջազգային շուկայում առկա նոր միջուկային էներգաբլոկների առաջարկների և ՀՀ էներգահամակարգում դրանց կիրառելիության առավել արդյունավետ տարբերակի ընտրություն</u>**<br>**<u>120.2 Հնարավոր ներդրողների և մատակարարների հետ բանակցությունների վարում</u>**<br>**<u>120.3 ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի մշակում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 182-ՆԿ կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի» 48-րդ կետի և 2014 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի |

| | |
|---|---|
| | Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր ժամանակացույցը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 836-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի կատարումն ապահովելուց և ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.2. կետի՝ «Էներգետիկ բնագավառը» բաժնի դրույթից:<br>Հաշվի առնելով, որ նոր միջուկային էներգաբլոկի կառուցման համար անհրաժեշտ է շուրջ 7 տարի ժամանակահատված՝ ներառյալ նախագծում, կառուցում և շահագործման հանձնում, անհրաժեշտ է հնարավորինս շուտ ձեռնարկել համապատասխան միջոցներ: Սույն միջոցառման նպատակն է միջուկային էներգաբլոկների միջազգային շուկայի ուսումնասիրության արդյունքների հիման վրա ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի մշակման մեկնարկումը:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքներն արդեն մեկնարկել են: Այս հանգամանքը հնարավորություն է ստեղծում ևս մեկ անգամ քննարկել ՀՀ-ում նոր ԱԷԿ-ի կառուցման ծրագիրը, հաշվի առնելով Հայաստանի էներգահամակարգի ռեժիմային գործոնները և հայկական էներգահամակարգում տնտեսական և տեխնիկական բնույթի հանգամանքները: Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում բացակայում են նավթի և գազի պաշարները, միջազգային շուկայում միջուկային վառելիքի համեմատաբար կայուն գները և Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային դիրքը (հարևան երկրների ոչ կառուցողական քաղաքականությունը՝ փակ սահմաններ՝ հետևաբար սահմանափակ հնարավորություններ) ՀՀ-ում էներգետիկ անվտանգության և անկախության անհրաժեշտ մակարդակի պահպանումը և ամրապնդումը հնարավոր է ապահովել միայն նոր միջուկային էներգաբլոկի կառուցմամբ: Հարկ է նշել, որ Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկին կարող է փոխարինել միայն համարժեք էներգաբլոկ (բազիսային ռեժիմում աշխատող, անկախ սեզոնային և օդերևութաբանական պայմաններից, ինչպես նաև ներկրվող ածխաջրածնային վառելիքից):<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>2009թ. դեկտեմբերի 12-ի ընդունված «ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկ կառուցելու մասին» ՀՀ օրենք (ՀՕ-192-Ն), 2013թ. հոկտեմբերի 23-ի 182-ՆԿ ՀՀ Նախագահի կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը» և 2014թ. հուլիսի 31-ի թիվ 836-Ն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը» փաստաթղթերով ռազմավարական խնդիր է դրված ՀՀ-ում շահագործման հանձնել նոր միջուկային էներգաբլոկ: Այն հնարավորություն կտա նախ և առաջ ապահովել երկրի անհրաժեշտ էներգետիկ անվտանգության մակարդակը և իրականացնել պետության կարիքների բավարարման համար մատչելի գներով, որակյալ և հուսալի էներգամատակարարում ամենօրյա պայմաններում, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում:<br>Հաշվի առնելով միջազգային փորձը՝ նոր միջուկային էներգաբլոկի կառուցման համար պահանջվում է շուրջ 7 տարի (ներառյալ նախագծման աշխատանքները), սակայն դա այն պարագայում, երբ հայտնի է ինչ տիպի և ինչ հզորության էներգաբլոկ է կառուցվում՝ այսինքն երբ առկա է կոնցեպտուալ նախագիծը, որի մշակումը նույնպես ժամանակատար է:<br>Նկատի ունենալով վերոգրյալը, ՀՀ էներգետիկ անվտնագության և անկախության ներկայիս մակարդակի պահպանման և բարձրացման նպատակով անհրաժեշտ է մշակել ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիր:<br>ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրով կկանոնակարգվի ծրագրում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի և կազմակերպությունների, ինչպես նաև ներդրողների համատեղ գործունեությունը: Ծրագիրը իրենից կներկայացնի գործողությունների և միջոցառումների ամբողջականություն և հիմնված կլինի Ատոմային էներգիայի միջազգային գործակալության առաջարկների և ստանդարտների վրա:<br>**2.Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացմամբ կիստակեցվեն նոր միջուկային էներգաբլոկի կառուցման համար անհրաժեշտ քայլերը՝ կոնցեպտուալ նախագիծ, ֆինանսավորման սխեմա, ֆինանսավորման աղբյուրներ, ներդրողներին ներգրավելու համար անհրաժեշտ մոտեցումներ, ինչպես նաև կիստակեցվեն նոր միջուկային էներգաբլոկի տիպը և հզորությունը: |
| **121** | **Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի և ենթակայանի կառուցում**<br><br>**<u>121.1 Հենասյուների, սարքավորումների ներկրման և ենթակայանի կառուցման, հենասյուների հիմքերի փորման, բետոնավորման, ինչպես նաև հենասյուների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների իրականացում</u>** |

| | |
|---|---|
| | **121.2 Հենասյուների, սարքավորումների ներկրման և ենթակայանի կառուցման, հենասյուների հիմքերի փորման, բետոնավորման, ինչպես նաև հենասյուների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների իրականացման ավարտ**<br>**121.3 Շահագործման հանձնել էլեկտրահաղորդման օդային գիծը և ենթակայանը**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.2. կետի՝ «Էներգետիկ բնագավառը» բաժնի դրույթից և ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի № 836-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12 կետի, ինչպես նաև ՀՀ Նախագահի 2013թ. հոկտեմբերի 23-ի ՆԿ-182-Ն կարգադրությամբ հաստատված հավելվածի 14 կետի 1-ին ենթակետի դրույթներից:<br>Իրան-Հայաստան 400 կՎ լարման երկշղթա էլեկտրահաղորդման գծի կառուցումը նպատակաուղղված է գազ-էլեկտրաէներգիայի դիմաց ծրագրով հայկական կողմի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովմանը, ինչպես նաև էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացմանը:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Իրան-Հայաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը կազմում է 300 ՄՎտ: Խնդիրներ են առաջանում էլեկտրահաղորդման գծի կառուցման նպատկով ձեռք բերվող հողերի սեփականատերերի հետ:<br>**1.2առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համապատասխան մարզպետարանների, համայնքների և շահագրգիռ այլ մարմինների հետ հողերի կատեգորիաները փոխելու և դրանց մի մասը սեփականության իրավունքով ձեռք բերելու ապահովումը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նոր էլեկտրահաղորդման գծի կառուցմամբ նկատելիորեն կբարելավվի ծառայության որակը, զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկ համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար: Արդյունքում՝ Իրան-Հայաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 300 ՄՎտ-ից կհասցվի 1000-1200 ՄՎտ-ի: |
| **122** | **Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման մեկնարկ**<br><br>**122.1. 220 կՎ և 400 կՎ ենթակայանների և օդային գծի կառուցման մրցութային գործընթացի մեկնարկ**<br>**122.2. 220 կՎ և 400 կՎ ենթակայանների և օդային գծի կառուցման մեկնարկ և ավարտ**<br><br>**1 Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.2. կետի՝ «Էներգետիկ բնագավառը» բաժնի և ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի № 836-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 13 կետի, ինչպես նաև ՀՀ Նախագահի 2013թ. հոկտեմբերի 23-ի ՆԿ-182-Ն կարգադրությամբ հաստատված հավելվածի 14 կետի 1-ին ենթակետի դրույթներից: Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման նպատակը Վրաստանի և Իրանի էներգահամակարգերի հետ կայուն աշխատանքի ապահովումն է՝ նպատակ ունենալով բոլոր երեք երկրների էներգահամակարգերի համատեղ աշխատանքը զուգահեռ ռեժիմում: Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման օդային գծի կառուցմամբ զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային հյուսիս-հարավ /ՌԴ-Վրաստան-ՀՀ-ԻԻՀ/ փոխշահավետ համագործակցության զարգացումը:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պետական պարտքի վրա ծրագրի ճնշումը մեղմելու և ծրագրի միջոցների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) հետ բանակցվել և համաձայնություն է ձեռք բերվել ծրագրի տեխնիկական լուծումների վերանայման և օպտիմիզացման վերաբերյալ: Ծրագրի իրականացման ընթացքում փոփոխվել են վերոնշյալ ծրագրի տեխնիկական պայմանները, մշակվել է նոր տեխնիկական առաջարկ և ծրագրի իրականացման հետ կապված խնդրի լուծման ճանապարհային քարտեզ: Ծրագրի իրականացման հետ կապված խնդրի լուծման ճանապարհային քարտեզի վերաբերյալ ՀՀ ԷԵԲՊ նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում ստեղծված տեխնիկական խորհրդի անդամների և մասնագետների հետ, որի արդյունքներով նպատակահարմար է համարվել դիմել KfW բանկին Ծրագիրը 3 փուլով իրականացնելու համար:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** |

| | |
|---|---|
| | 1-ին փուլով նախատեսված Դդմաշեն համայնքում կառուցվելիք 400/220 կՎ ենթակայանի փոխարեն նախատեսվում է վերակառուցել, վերազինել ՀրազԷԿ-ի 220 կՎ ենթակայանը: Արդյունքում չի կառուցվի 220 կՎ ԲԲՍ-ն և Ծրագրի արժեքը կնվազի: Այս փուլի մեկնարկի համար ՀՀ ԷԵԲՊ նախարարությունը բանակցում է «ՀրազԷԿ» ԲԲԸ-ի սեփականատերերի հետ՝ նոր ենթակայանն իրենց տարածքում տեղակայելու վերաբերյալ: Բանակցությունների հաջող ավարտի դեպքում մրցութային փաթեթը կձևավորվի ՀրազԷԿ-ի ենթակայանի վերակառուցման համար, հակառակ դեպքում կհայտարարվի նոր մրցույթ Դդմաշեն համայնքում ենթակայան կառուցելու համար:<br>2-րդ փուլով կնախապատրաստվի և կհայտարարվի մրցույթ ՀրազԷԿ-ի ենթակայանի և Այրում ենթակայանի միջև 400 կՎ երկշղթա օդային գծի կառուցման նպատակով, կամ հակառակ պարագայում Դդմաշենի և Այրումի ենթակայանների միջև 400 կՎ երկշղթա օդային գծի կառուցման նպատակով:<br>3-րդ փուլով ավարտին հասցնել տեխնիկական հարցերի քննարկումը հաստատուն հոսանքի ներդիրի (HVDC) կառուցման անհրաժեշտության վերաբերյալ: Ըստ ձևավորված արդյունքների, եթե կհաստատվի դրա կառուցման նպատակահարմարությունը, ապա կնախապատրաստվի և կհայտարարվի մրցույթ:<br>**2 Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նոր էլեկտրահաղորդման գծերի կառուցմամբ նկատելիորեն կբարելավվի ծառայության որակը, զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկ համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար: Առաջին փուլի արդյունքում՝ Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 200 ՄՎտ-ից կհասցվի 350 ՄՎտ-ի: |
| **123** | **Վերականգնվող էներգիայի աղբյուրների արդյունավետ օգտագործում և զարգացման խթանում**<br><br>**<u>123.1 Արևային համակարգային կայանների կառուցման ծրագրի իրականացման նպատակով Մասրիկ տեղանքում 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման ապահովում</u>**<br>**<u>123.2 Տարբեր փուլերով գումարային մոտ 60 ՄՎտ հզորությամբ ևս 5 արևային ֆոտովոլտային էլեկտրական կայանների կառուցման ծրագրերի իրականացում</u>**<br>**<u>123.3 Աջակցել գումարային մոտ 300 ՄՎտ հզորությամբ հողմային էլեկտրական կայանների կառուցման մասնավոր ծրագրերի իրականացման և ներդրումային ծրագրերի հաստատման գործընթացներին</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումը բխում է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.2. կետի՝ «էներգետիկ բնագավառը» բաժնի դրույթից:<br>Միջոցառման իրականացումն ուղղված է ՀՀ-ում վերականգնվող էներգետիկայի զարգացման պետական քաղաքականության և դրա իրագործման մեխանիզմների ապահովմանը՝ ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացմանը, ՀՀ տնտեսական և էներգետիկ անկախության ամրապնդմանը, էներգետիկ համակարգի հուսալիության աստիճանի բարձրացմանը, էներգախնայողությունը և վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանող նոր արտադրությունների ստեղծմանը և ծառայությունների կազմակերպմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեխնածին ազդեցությունների նվազեցմանը:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><u>Խնդիրները.</u> 2016 թվականին վերականգնվող առաջնային էներգիան կազմել է սպառվող ողջ էներգիայի մոտ 16%: ՀՀ էներգետիկ համակարգի ներկայիս դիվերսիֆիկացման մակարդակը բավարար չի՝ էներգետիկ անկախության անհրաժեշտ աստիճանի ապահովման տեսանկյունից: Վերոգրյալ նպատակներին հասնելու համար ՀՀ կառավարությունը որդեգրել է վերականգնվող էներգետիկայի առավելագույն և արդյունավետ կիրառման սկզբունքը:<br><u>Ներկա վիճակը.</u> 2018 թ. մարտի 21-ին կայացել է ՀՀ-ում Մասրիկ-1 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրի համար հայտարարված միջազգային մրցույթի երկրորդ փուլը: Մրցույթի պայմանների համաձայն նվազագույն սակագին է ներկայացրել նիդեռլանդական «Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչըս» և իսպանական «ԷՖԷսԷլ Սոլար» ընկերություններից կազմված կոնսորցիումը: Այն կազմում է 4.19 դոլար ցենտ 1 կՎտ·ժ- ի համար (մոտավորապես՝ 20.11 ՀՀ դրամ) առանց ԱԱՀ-ի: 2018թ. հուլիսի 18-ին՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունում ստորագրվեց «Հայաստանում՝ |

Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին» ՀՀ կառավարության աջակցության համաձայնագիրը: 2018 թվականի հոկտեմբերի 25-ին «ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ-ն (կառուցապատող) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից ստացել է էլեկտրական էներգիայի արտադրության գործունեության լիցենզիա, իսկ ներդրումների ծավալը գնահատվել է մոտ 58 մլն ԱՄՆ դոլար:

Մասրիկ-1 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրին հաջորդող գումարային մոտ 60 ՄՎտ հզորությամբ ևս 5 կայանների կառուցման ծրագրերի համար պատրաստ են նախնական տեխնիկա-տնտեսական հիմնավորումները: 2016 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՀ կառավարության նիստի 53-37 արձանագրային որոշման համաձայն այդ 5 կայանների կառուցման ծրագրերը նույնպես պետք է իրականացվեն մրցութային կարգով:

2017թ. մարտի 31-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և «Աքսիոնա Էներգիա Գլոբալ Էս. Էլ.» ընկերության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ Հայաստանում հողմային էլեկտրակայանների կառուցման ծրագրի մասին: Վերոհիշյալ փոխըմբռնման հուշագրով նախատեսվում է ՀՀ-ում 100-150 ՄՎտ հզորությամբ էլեկտրակայանների կառուցում: 2017 թվականի դեկտեմբեր ամսին ընկերությունը սկսել է քամու ներուժի գնահատման աշխատանքների իրականացումը: «Աքսիոնա Էներգիա Գլոբալ Էս. Էլ.» ընկերությունը արդեն լիազոր մարմնին է ներկայացրել նախնական տեխնիկա-տնտեսական հիմնավորումը, որը գտնվում է քննարկման փուլում:

**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է պետության կողմից աջակցություն ցուցաբերել մասնավոր ներդրողներին՝ գործընթացի ողջ ընթացքում ի հայտ եկած խնդիրների բացահայտման արդյունքում ծրագրերի պետական կառավարման լիազորությունների շրջանակներում՝ դրանց լուծում տալու միջոցով:

**2 Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**

Վերականգնվող էներգետիկ աղբյուրների կիրառմամբ արտադրական նոր հզորությունների ստեղծման արդյունքում՝ միջնաժամկետ հեռանկարում էներգետիկ համակարգում կստեղծվեն նորագույն և մաքուր («կանաչ») տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրական մոտ 415 ՄՎտ գումարային նոր հզորություններ, այդ թվում շուրջ 115 ՄՎտ գումարային հզորությամբ արևային էներգիայի կիրառմամբ, որոնք զգալիորեն կթեթևացնեն էներգետիկ համակարգում գործող արտադրական հզորությունների բեռը՝ նվազեցնելով կախվածությունը ներկրվող ածխաջրածնային վառելիքներից: Այդպիսով կդիվերսիֆիկացվի ՀՀ տնտեսությունը՝ էներգակիրների մատակարարման (ներկրման և(կամ) արտադրության) այլընտրանքային ուղիների ապահովման և նորագույն տեխնոլոգիաների կիրառման տեսակետից և կբարձրանա էներգետիկ անկախության աստիճանը:

Ակնկալվում է, վերականգնվող առաջնային էներգիան մինչև 2023 թվականը հասցնել սպառվող ողջ էներգիայի մոտ 20 տոկոսին, որը բխում է նաև ՀՀ և ԵՄ 2017 թվականի համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից:

**124**

**Օրենսդրական դաշտի կատարելագործում և համապատասխանեցում ստանձնած միջազգային պարտավորություններին**

**<u>124.1 էներգետիկայի բնագավառի մի շարք տեխնիկական կանոնակարգերի ուժը կորցրած ճանաչելու և էներգետիկ օբյեկտների շահագործման և անվտանգության նոր կանոնների ու պահանջների մշակում</u>**

**<u>124.2 Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առավելագույն և արդյունավետ օգտագործմանն ու էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված նոր նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումը համահունչ է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.2. կետին, իսկ անհրաժեշտությունը բխում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետի և 5.1-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետի պահանջներից, որոնց համաձայն էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է էներգետիկայի բնագավառի անվտանգության ապահովումը և էներգետիկայի բնագավառում իրականացվող

նորագույն և բարձր տեխնոլոգիաների ներդրման խթանման և զարգացմանն ուղղված շարունակական միջոցառումները: Հայաստանի Հանրապետությունում գործող էներգետիկայի բնագավառի տեխնիկական կանոնակարգերի թվում առկա են այնպիսիք, որոնք համաձայն նոր օրենսդրության պահանջների, չեն կարող հանդիսանալ որպես տեխնիկական կանոնակարգեր և հետևաբար, չեն կարող գրանցվել ոլորտի կանոնակարգումն իրականացնող համակարգող մարմնի կողմից վարվող տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանում: Ելնելով վերոգրյալից, ՀՀ էներգետիկայի բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերը «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելու դեպքում անհրաժեշտ է մշակել ՀՀ կառավարության նորմատիվ որոշման նոր նախագծեր, նկատի ունենալով, որ էներգահամակարգի ընկերություններն ունեն սեփականության տարբեր ձևեր և դրանք աշխատում են ՀՀ օրենսդրության շրջանակներում, իսկ խնդրո առարկա նորմատիվ ակտերը պարունակում են նաև այնպիսի նորմեր, որոնք պարտադիր են կատարման բոլոր կազմակերպությունների համար, անկախ դրանց սեփականության ձևից:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև ստորագրված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է սահմանված ժամկետներում աստիճանաբար մոտարկել իր օրենսդրությունը Եվրոպական միության համաձայնագրով ֆիքսված օրենսդրությանը, ինչպես նաև անհրաժեշտ է հնարավորինս նվազեցնել կախվածությունը ներկրվող ածխաջրածնային էներգակիրներից՝ դրանց այլընտրանք հանդիսացող սեփական վերականգնվող էներգառեսուրսների առավելագույն և արդյունավետ կիրառման նպատակով:

**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս էներգետիկայի բնագավառում գործող մի շարք տեխնիկական կանոնակարգեր հաստատվել են «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, որը ուժը կորցրել է պայմանավորված նոր օրենքի ընդունմամբ: Քանի որ համաձայն «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի, սահմանազատվել են ծառայություններին և արտադրանքին ներկայացվող պահանջները, ապա նշված տեխնիկական կանոնակարգերը նոր օրենսդրությամբ չեն կարող հանդիսանալ որպես տեխնիկական կանոնակարգեր և հետևաբար չեն կարող գրանցվել ոլորտի կանոնակարգումն իրականացնող համակարգող մարմնի կողմից վարվող տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանում, որի հետևանքով իրավական դաշտը բաց կմնա: Ուստի, անհրաժեշտ է մշակել նոր նորմատիվ իրավական ակտեր, որոնք կհամապատասխանեն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» և 5.1-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետերի պահանջներին, ինչպես նաև ԵԱՏՄ ստանձնած պարտավորություններին:

ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում որոշակի թիրախներ վերականգնվող էներգետիկայի հեռանկարային զարգացման համար: ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չեն նաև որոշ տերմինների սահմանումները, ինչպես նաև ածխաջրածնային վառելիքներին այլընտրանք հանդիսացող էներգակիրների շուկայահանումը և դրա համար համապատասխան ենթակառուցվածքների զարգացումը ապահովող համապատասխան դրույթները:

**1.2առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ուժը կորցրած ճանաչել էներգետիկայի բնագավառի մի շարք տեխնիկական կանոնակարգեր, մշակել էներգետիկ օբյեկտների շահագործման և անվտանգության նոր կանոններ ու պահանջներ, ինչպես նաև փոփոխություններ և լրացումներ կատարել «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում: Միջոցառման մշակման աշխատանքներում համակատարող հանդիսանում է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը՝ որպես ՀՀ-ում տեխնիկական կանոնակարգման պետական լիազոր մարմինն:

**2 Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**

Կսահմանվեն անվտանգության նոր պահանջներ մատակարարների և բնակիչ սպառողների համար՝ անկախ սեփականության ձևից:

Կստեղծվեն օրենսդրական հիմքեր վերականգնվող էներգետիկայի հեռանկարային թիրախային զարգացման, ինչպես նաև ածխաջրածնային վառելիքներին այլընտրանք հանդիսացող էներգակիրների շուկայահանմամ և դրա համար համապատասխան ենթակառուցվածքների զարգացման համար:

**125**

**Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2021-2030 թվականների ազգային ծրագրի մշակում**

<u>**125.1 Ազգային նոր ծրագրի մշակման աշխատանքների իրականացում**</u>

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

| | |
|---|---|
| | Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱժՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.2. կետի և «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» ենթակետի պահանջներից: Հաշվի առնելով էներգետիկ անվտանգության կարևորությունը երկրի տնտեսության զարգացման և ազգային անվտանգության համար, ՀՀ-ը որդեգրել է այն ամրապնդելու և բարձրացնելու քաղաքականությունը և շարունակական քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ: ՀՀ կառավարության նոր ազգային ծրագրի մշակումը պայմանավորված է ՀՀ տնտեսական և էներգետիկ անվտանգության, էներգետիկ համակարգի հուսալիության աստիճանի բարձրացման, տնտեսական և էներգետիկ անկախության ամրապնդման, էներգախնայողությունը և վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանող նոր արտադրությունների ստեղծման և ծառայությունների կազմակերպման, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեխնածին ազդեցության նվազեցմանն առնչվող հանգամանքներով:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Էներգախնայողության խթանմանն ուղղված հիմնական փաստաթղթերից մեկը Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիրն է, որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից 2007թ. № 2 արձանագրային որոշմամբ: Այդ ծրագիրը բխում է «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» ենթակետի դրույթից և սահմանում է միջոցառումներ մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածի համար: Ըստ այդ ծրագրի էներգախնայողության խթանման համար սահմանված են գործողություններ տասնամյա հեռանկարում՝ 2011-2020թթ.: Միաժամանակ սահմանված են փուլային մոտեցում՝ այդ գործողությունների և համապատասխան թիրախների վերանայման, դրանց արդյունքների գնահատման, փոփոխված իրավիճակի գնահատման արդյունքում՝ նոր գործողությունների և թիրախների սահմանման նպատակով: Ըստ այդմ, նոր ազգային ծրագրի մշակումը հանդիսանալու է 2011-2020 թվականների Հայաստանի Հանրապետության էներգախնայողության գործողությունների ազգային ծրագրի տրամաբանական շարունակությունը՝ հաջորդ տասնամյակի համար:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>2021-2030 թվականների հարար նոր ազգային ծարագրի մշակում:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Ազգային ծրագրով 2021-2030 թվականների համար կսահմանվեն նոր ճյուղային միջոցառումներ և թիրախներ, որոնք կօժանդակեն ՀՀ էներգախնայողության քաղաքականության հետագա ձևավորմանը և դրա իրականացման կոնկրետ քայլերի որոշակիացմանը: |
| 126 | **Էներգախնայողական պետական գնումների իրականացում**<br><br>**<u>126.1 «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</u>**<br>**<u>126.2 «Պետության կարիքների համար ձեռք բերվող էներգասպառող սարքերի և սարքվածքների էներգաարդյունավետության պահանջների սահմանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱժՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.2. կետի և ՀՀ կառավարության 2017թ. փետրվարի 2-ի նիստի N 4 արձանագրային որոշմամբ ընդունված էներգախնայողության գործողությունների ծրագրի երկրորդ փուլի 6-րդ կետի կատարմամբ, ինչպես նաև պետական միջոցների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտություն է առաջացել պետության կարիքների համար ձեռք բերվող էներգասպառող ապրանքատեսակների որոշակի խմբերի սարքերի և սարքվածքների ցանկի համար սահմանել էներգաարդյունավետության պարտադիր չափորոշիչներ՝ հետագայում դրանց արդիականացման հնարավորությամբ, ինչպես նաև ակնկալվող արդյունքների վերստուգելի մեխանիզմների ստեղծմամբ ու չափանիշների սահմանմամբ:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պետության կարիքների ապահովման համար ապրանքատեսակների և ծառայությունների ձեռք բերման գործընթացն իրականացվում է պետական գնումների համակարգի միջոցով՝ Գնումների մասին ՀՀ օրենքի |

դրույթներին համապատասխան, իսկ գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ: Որոշման Հոդված 21-ը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը հանդիսանում են գնման հայտի բաղկացուցիչ մաս, ընդ որում ապրանքների գնման դեպքում պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը, եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար: Միևնույն ժամանակ «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է, մասնավորապես էներգասպառող սարքերի և սարքվածքների շրջանառությանը ներկայացվող ընդհանուր պահանջները, բայց էներգաարդյունավետության բնութագրերի մասով պահանջներ չի ներառում: Կարգավորման բացակայության հետևանքով պետական գնումների համակարգով ձեռք են բերվում էներգասպառող ապրանքատեսակներ, որոնք խիստ անարդյունավետ են և դրանց հետագա շահագործման ընթացքում ծախսած էներգիայի դիմաց վճարումները պետությանը հասցնում են զգալի վնասներ:

**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

Սույն կարգավորման նպատակն է Հայաստանի Հանրապետության պետական գնումների շրջանակներում պետական կարիքների ապահովման նպատակով էներգասարքավորումների ձեռք բերմանը ներկայացվող նվազագույն էներգետիկ բնութագրերի պահանջները սահմանող կարգավորող շրջանակի ներդնումը: Էներգաարդյունավետության նվազագույն պարտադիր պահանջների սահմանումն ուղղված է պետական միջոցների արդյունավետ կառավարման բարձրացմանը, պետության կողմից էներգախնայողության և էներգաարդյունավետության խթանմանը, ինչպես նաև էլեկտրական էներգիայի՝ անընդհատ աճող պահանջարկի բավարարման համար անհրաժեշտ՝ էներգահամակարգի պահանջվող դրվածքային հզորության կրճատմանը: Միջոցառման մշակման աշխատանքներում համակատարող հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ որպես

ՀՀ-ում գնումների գործընթացը համակարգող պետական լիազոր մարմինն:

**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման և կիրարկման արդյունքում ակնկալվում են հետևյալ արդյունքները.

- Պետական գնումների շրջանակներում ձեռք բերվող միայն լուսավորման սարքերի նկատմամբ վերոնշյալ կարգավորումների կիրառման արդյունքում 10 տարվա կտրվածքով պետությունը կտնտեսի գումարային ավելի քան 27,6 մլրդ դրամ, ծախսերի ետգնման ընդհանուր ժամկետը կկազմի երեք տարի,
- Օդորակիչների էներգաարդյունավետության պահանջների ներդրմամբ պայմանավորված վերոգրյալ ցուցանիշները կկազմեն համապատասխանաբար մոտ 2,76 մլրդ դրամ և չորս տարի,
- Պետության կողմից սեփական օրինակով էներգաարդյունավետ տեխնոլոգիաների տարածման խրախուսում ու սպառողների լայն զանգվածներին դեպի էներգաարդյունավետ ապրանքատեսակների ձեռք բերման ուղղորդում,
- էներգահամակարգի զարգացման ռազմավարական հայեցակարգի որոշ կետերի կատարման նպաստում,
- ԷԳԾ-ի երկրորդ փուլի միջոցառումների 6-րդ կետով սահմանված գործողությունների կատարում,
- ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի ներդրման հետ կապված մարտահրավերներին դիմակայելու պատրաստականություն,
- ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (24.11.2017) ստանձնած պարտավորությունների մի մասի՝ կարգավորումների ներդաշնակեցման վերաբերյալ դիրքորոշման հստակեցում:

**127**

**Հանքարդյունաբերության ոլորտի զարգացում**

**127.1 Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակման նպատակով «Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծությունը և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա» ախտորոշիչ ուսումնասիրությունների իրականացում**

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հանաքարդյունաբերության ոլորտի զարգացումն ապահովելու նպատակով ռազմավարության մշակման հիմքի նախապատրաստում՝ հենվելով արդեն կատարված վերլուծական աշխատանքի վրա, տիրող իրավիճակի գնահատում և առաջարկության ներկայացում:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի N36-21 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգի պահանջների կատարման ապահովում:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծության իրականացում և առաջարկության ներկայացում հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման վերաբերյալ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական գնահատում, որը կկանխորոշի մշակվող ռազմավարությունում տրվող ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները:

**<u>127.2 Հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության մշակում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հանքարդյունաբերության ոլորտը հանդիսանալով Հայաստանի Հանրապետության արդյունաբերության կարևոր ոլորտներից մեկը դեռևս չունի հստակ քաղաքականություն և ռազմավարություն, որը թույլ կտա ունենալ տեսլական և իրականացնել կոնկրետ գործողություններ առկա խնդիրների լուծման և ոլորտի կայուն զարգացումն ապահովելու համար: Հանքարդյունաբերության ոլորտում իրականացված ախտորոշիչ ուսումնասիրությունների հիման վրա անհրաժեշտ է մշակել Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի N36-21 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգի պահանջների կատարման ապահովում

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Մշակվելիք ռազմավարական փաստաթղթում կտրվեն ոլորտի կայուն զարգացման համար խոչընդոտ հանդիսացող՝ բացահայտված խնդիրների լուծման ուղղությունները և հանքարդյունաբերության ոլորտում բարեփոխումներ ապահովելու համար իրականացվելիք միջոցառումները:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մեջ առկա բացթողումների հայտնաբերում, ազգային և տեղական մակարդակներում ֆիսկալային և ոչ ֆիսկալային օգուտները ավելացնելու և բաշխելու համար ինստիտուցիոնալ շրջանակի ստեղծում, բնապահպանական և սոցիալական խնդիրների վերհանում և օգուտ-ծախսերի գնահատում:

**<u>127.3 Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ ոլորտը կարգավորող օրենքների, ինչպես նաև դրանցից բխող իրավական այլ ակտերի մշակում և ինստիտուցիոնալ կարգավորումների իրականացում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Անհրաժեշտություն կա վերանայելու և ամբողջականացնելու ոլորտին առնչվող գործառույթներ ունեցող պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակները, ստեղծել օրենսդրական հիմքեր համաձայնեցված և փոխլրացնող գործառույթների համար, ապահովել կարողությունների զարգացում, որը վերաբերում է ինչպես տեխնիկական, այնպես էլ մարդկային կարողություններին: Նշված խնդիրների լուծման նպատակով Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ կիրականացվեն օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումներ:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության պահանջների կատարման ապահովում

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումների իրականացում

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորման ապահովում

**128 ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի կազմում և հրապարակում (շարունակական)**

**<u>128.1 ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի նախագծի կազմում</u>**

**<u>128.2 ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն)</u>**

**շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն և հրապարակում**

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հայաստանի Հանրապետությունը 2016 թվականից հանդիսանալով ԱՃԹՆ-ն թեկնածու անդամ, պարտավորություն է ստանձնել կատարել ԱՃԹՆ–ի 2016թ. Ստանդարտի պահանջները, որի 4.8 կետի պահանջի համաձայն ԱՃԹՆ իրականացնող երկրները տարեկան կտրվածքով պետք է հրապարակեն ազգային զեկույց՝ հասանելի դարձնելով հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունը:

**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ԱՃԹՆ–ի 2016թ. Ստանդարտի պահանջների կատարում, որը հնարավորություն կտա ստանալու համապատասխանող երկրի կարգավիճակ:

**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ԱՃԹՆ–ի 2016թ. Ստանդարտի պահանջների կատարման ապահովում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Հիմք կդրվի առավել թափանցիկ, հաշվետվողական պետական և գործարար համակարգերի ստեղծմանը, ինչը խթան կհանդիսանա կառավարության, տնտեսության մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության միջև երկխոսության կայացմանը:

**129**

**Ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասերի կոորդինատների ճշգրտում**

**129.1 ՀՀ տարածքում գործող WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգին համահունչ ընդերքի տեղամասերի կոորդինատների փոփոխության իրականացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 11-ի N 225 որոշման 1-ին կետի համաձայն՝ միջազգային գեոդեզիական և քարտեզագրական ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության տարածքում 2002 թվականից ներդրվել է WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգը:

Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում ընդերքի տեղամասերի ծայրակետերի և ընդերքօգտագործման իրավունքի անբաժանելի մաս հանդիսացող՝ լեռնահատկացման ակտով ամրագրված կոորդինատների չափագրման, ճշգրտման աշխատանքների (WGS-84 (ARMREF02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգին համապատասխան) իրականացման և ճշգրտված տվյալների հիման վրա ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում համապատասխան փոփոխություն կատարելու:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս ընդերքօգտագործման ոլորտի հիմնախնդիրներից է համարվում նաև ընդերքօգտագործող կազմակերպություններին տրամադրված ընդերքի տեղամասի և ընդերքօգտագործման իրավունքի անբաժանելի մաս հանդիսացող՝ լեռնահատկացման ակտի կոորդինատների անճշտության հարցը: Վերջինս խոչընդոտ է հանդիսանում ընդերքօգտագործման աշխատանքների լիարժեք իրականացմանը, այդ թվում՝ սեփականության իրավունքի իրացման, ինչպես նաև՝ ընդերքօգտագործման նկատմամբ համապատասխան պետական վերահսկողական գործառույթների իրականացման տեսանկյունից:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ընդերքօգտագործող կազմակերպություններին տրամադրված փաստաթղթերում առկա տեղամասերի և հողամասերի համապատասխան կոորդինատների անճշտությունները, փաստացի առկա անհամապատասխանությունները վերացնելու նպատակով անհրաժեշտ է յուրաքանչյուր տեղամասում իրականացնել կոորդինատների չափագրում, իրականի հետ համադրում և ներկայացնել առաջարկություն՝ Ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում փոփոխություն կատարելու նպատակով:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ընդերքօգտագործող կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովում, այդ թվում՝ սեփականության իրավունքի իրացման, ինչպես նաև՝ ընդերքօգտագործման նկատմամբ համապատասխան պետական

| | |
|---|---|
| | վերահսկողական գործառույթների իրականացման տեսանկյունից: |
| **130** | **Ընդերքօգտագործման համար անհրաժեշտ  հողատարածքների տրամադրման իրավական կարգավորում**<br><br>**130.1 «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում և ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի մշակում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Ընդերքօգտագործման համար անհրաժեշտ հողհատկացման խնդրի իրավակարգավորման նպատակով անհրաժեշտություն է առաջացել իրականացնելու միջազգային փորձի ուսումնասիրություն և վերջինիս արդյունքում ընդերքօգտագործման իրավունքների տրամադրման գործընթացի փոխկապակցված մեխանիզմի ներդրում:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հողամասերը սեփականության իրավունքով պատկանում են տարբեր սուբյեկտների՝ համայնքներ, ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրենք են տնօրինում իրենց գույքը և այդ իրավազորությունը պահպանված է ՀՀ սահմանադրությամբ: Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ օգտակար հանածոների արդյունահանման համար հողամասերը տրամադրվում են ընդերքի օգտագործման իրավունք հաստատող փաստաթղթերին համապատասխան: Ընդերքօգտագործման համար պահանջվող հողերի՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից սեփականաշնորհված կամ համայնքային հողերը վարձակալությամբ տրամադրված, օգտագործման իրավունքը ընդերքօգտագործողները կարող են ձեռք բերվել միայն բանակցային կամ խորհրդակցային գործընթացների միջոցով,որի ժամանակ էլ առաջանում են բավականին շատ խնդիրներ:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է մշակել Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում  փոփոխություններ և լրացումների կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ, որում կտրվի  Ընդերքօգտագործման համար անհրաժեշտ  հողատարածքների տրամադրման իրավական կարգավորումը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ընդերքօգտագործման իրավունքների տրամադրման գործընթացի փոխկապակցված մեխանիզմի ներդրում: |
| **131** | **Իրական սեփականատերերի ռեգիստրի ներդրում**<br><br>**131.1 ՀՀ ընդերքի մասին օրենսգրքից և հարակից օրենքներից բխող ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում**<br>**131.2 Իրական սեփականատերերի էլեկտրոնային ռեգիստրի ստեղծման տեխնիկական առաջադրանքի մշակում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հանքարդյունաբերության ոլորտի գործունեության թափանցիկության ապահովման նպատակով իրականացված քայլերից մեկն է իրական սեփականատերերի բացահայտումը, որի իրականացման համար անհրաժեշտ է ներդնել և վարել իրական սեփականատերերի ռեգիստր: Նշյալ ռեգիստրի  վարման համար անհրաժեշտ է ենթաօրենսդրական ակտերի միջոցով ամրագրել ռեգիստրի  վարման և վերջինիս հրապարակայնության ապահովման ընթացակարգ:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում Ընդերքօգտագործման իրավունքի ստացած մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման նպատակով ստեղծվելիք ռեգիստրը վարելու համար չկա համապատասխան վարման ընթացակարգը կարգավորող ենթաօրենսդրական ակտեր:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է մշակել ենթաօրենսդրական ակտեր, որոնցով կսահմանվի  ռեգիստրի վարման |

| | |
|---|---|
| | ընթացակարգը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ընդերքօգտագործման ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության ապահովում: |
| **132** | **Թույլտվությունների տրամադրման պարզեցված համակարգի ներդրում**<br><br>**<u>132.1 «ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պարզեցված համակարգի ներդրման (հատկապես պետական նշանակության ծրագրերի իրականացման դեպքում) համար անհրաժեշտ է մշակել օրենսդրական նախագծերի փաթեթ :<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ընթացակարգը նույնն է բոլոր տեսակի օգտակար հանածոների համար:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է մշակել օրենսդրական փաթեթ, որով կպարզեցվի ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացը՝ հատկապես պետական նշանակության ծրագրերի իրականացման դեպքում:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ընդերքօգտագործման իրավունքների տրամադրման գործընթացի պարզեցում: |
| **133** | **Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով կնքված ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակում**<br><br>**<u>133.1 «ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>*ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն* Լիազոր մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները՝ բացառելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության (տվյալների) հրապարակումը:<br>Ավելի թափանցիկ և հաշվետվողական պետական համակարգի ներդրման նպատակով անհրաժեշտ է ամրագրել ոլորտային օրենսդրական համապարփակ կարգավորումներ, համաձայն որոնց ոչ մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը ևս կհրապարակվեն Լիազոր մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Լիազոր մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված են միայն ոչ մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է մշակել օրենսդրական փաթեթ, որի ընդունումից հետո ոլորտի թափանցիկությունն և հաշվետվողականության բարձրացումը ապահովելու նպատակով Լիազոր մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն նաև ոչ մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման թվայնացված պայմանագրերը:<br><br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում: |
| 134 | **Ոլորտի ֆինանսական եկամուտներից համապատասխան համայնքներին հատկացումների ապահովում**<br><br>**<u>134.1 Հանքարդյունաբերության ոլորտի ֆինանսական եկամուտներից համապատասխան համայնքներին հատկացումների ապահովման նպատակով օրենսդրական նախագծի մշակում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Անհրաժեշտություն է առաջացել մշակել օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որի համաձայն մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընկերությունների կողմից վճարվող ռոյալթիներից համապատասխան համայնքներին տարեկան հատկացման մեխանիզմ կներդրվի:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընկերությունների կողմից ռոյալթիները վճարվում են պետական բյուջե, որից համապատասխան համայնքներին հատկացումներ չեն կատարվում:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է մշակել օրենսդրական փաթեթ, որի ընդունումից հետո մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարվող ռոյալթիներից որոշ մաս կհատկացվի համապատասխան համայնքներին:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Տեղական համայնքների զարգացմանը նպաստում և վերջինիս համար օգուտների ապահովման մեխանիզմների ներդրում |
| 135 | **Բնապահպանական հարկերից համայնքների մասհանման մեխանիզմի հստակեցում**<br><br>**<u>135.1 «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ և լրացումներ կատարել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, որով կորոշակիացվի բնապահպանական վճարներից համայնքների մասհանման մեխանիզմը:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքի համաձայն ընդամենը մի քանի մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից է մասհանումներ կատարվում:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող նախագծի ընդունումից հետո բոլոր մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարվող բնապահպանական հարկից մասհանումներ կկատարվեն և կփոխանցվեն պետական բյուջեից այն ազդակիր համայնքների բյուջեներ, որտեղ գործում են այդ ընկերությունները:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Տեղական համայնքների զարգացմանը նպաստում և վերջինիս համար օգուտների ապահովման մեխանիզմների ներդրում : |
| 136 | **Պետության կողմից երկրաբանական տեղեկատվության համակարգված վարման և վերլուծության իրականացում** |

| | |
|---|---|
| | **<u>136.1 «2002 թվականի հոկտեմբերի 31-ի ՀՀ կառավարության N 1758-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Անհրաժեշտություն է առաջացել պարբերաբար և մասնագիտորեն վերլուծել Հանրապետական երկրաբանական ֆոնդում առկա տեղեկատվությունը և կազմել համապատասխան հաշվետվություններ՝ ըստ ընդերքօգտագործման իրավունքով ծանրաբեռնվածության (ըստ տարածաշրջանների, ըստ օգտակար հանածոների պաշարների քանակի, ըստ տարիների՝ դրանց փոփոխության շարժի և այլն), ինչպես նաև ձևավորել պաշարների հետագա տրամադրման, տարածաշրջանների ներուժի, ոլորտի կառավարման և այլ հարցերի հետ կապված առաջարկություններ:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ներկայումս չի իրականացվում երկրաբանական տեղեկությունների՝ բազմակողմանի և մասնագիտական վերլուծություն, համաձայն որոնց կկազմվեն հաշվետվություններ ընդերքօգտագործման իրավունքով ծանրաբեռնվածության (ըստ տարածաշրջանների, ըստ օգտակար հանածոների պաշարների քանակի, ըստ տարիների՝ դրանց փոփոխության շարժի և այլն) վերաբերյալ:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող նախագծի ընդունումից հետո «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը կտրվեն լրացուցիչ գործառույթներ՝ երկրաբանական տեղեկատվության համակարգված վերլուծության և համապատասխան հաշվետվությունների կազմման համար:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Իրավական ակտի ընդունմամբ հնարավորություն կստեղծվի բազմակողմանիորեն և մասնագիտորեն վերլուծել երկրաբանական տեղեկությունները, ինչպես նաև այն կնպաստի հանքարդյունաբերության ոլորտում բարեփոխումների իրակացմանը: |
| **137** | **Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրները լուծելու, ոլորտում իրականացվող բարեփոխումների շարունակականության ապահովում, պետություն-մասնավոր գործընկերության սկզբունքով առաջնորդվելով ոլորտի զարգացմանն ուղղված հետևողական աշխատանքների իրականացում, մասնավորապես նաև վարձակալության գործող պայմանագրով նախատեսված միջոցառումների և թիրախային ցուցանիշների ապահովում**<br><br>**<u>137.1 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում: Կատարված ուսումնասիրություններից ելնելով, ըստ առաջնահերթության չսպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում:</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 6.4 «Ջրային տնտեսությունը» բաժինը և 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը և «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թթ. ռազմավարություն և ֆինանսավորման ծրագիրը»՝ իրականացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող բնակավայրերում ըստ առաջնահերթության (փուլային) ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների որակի բարելավման համար համապատասխան աշխատանքներ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող բնակավայրերի մեծ մասում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը գտնվում են տեխնիկապես անբավարար վիճակում կամ բացակայում են: |

**1.1 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Համապատասխան ներդրումների առկայության դեպքում կապահովվի համակարգերի արդիականացումը, արդյունավետ կառավարումը, ծառայությունների մատուցումը մասնագիտացված կազմակերպությունների կողմից

**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող բնակավայրերում հուսալի, կայուն և անվտանգ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների ապահովումը:

**137.2 ՀՀ հինգ մարզերում խմելու ջրի ռեսուրսների անհամաչափ բաշխվածության և հասանելիության խնդիրների լուծման նպատակով ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացում:**
**Սևանի և Մեծամորի կեղտաջրերի մաքրման կայանների շինարարությունների իրականացում**
**137.3 Վարձակալի կողմից չսպասարկվող 4 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում և շահագործում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հիմք ընդունելով 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածի 4-րդ մաս և «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թթ. ռազմավարություն և ֆինանսավորման ծրագիրը»՝ անհրաժեշտ է իրականացնել ՀՀ Լոռու, ՀՀ Շիրակի, ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Սյունիքի և ՀՀ Գեղարքունիքի մարզերում խմելու ջրի ռեսուրսների անհամաչափ բաշխվածության և հասանելիության ապահովում: Սևանի և Մեծամորի կեղտաջրերի մաքրման կայանների շինարարությունների իրականացում:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս ՀՀ բնակավայրերի որոշ մասի ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերը գտնվում են տեխնիկապես անբավարար վիճակում կամ բացակայում են:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Համապատասխան ներդրումների առկայությամբ կապահովվի ՀՀ Լոռու, ՀՀ Շիրակի, ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Սյունիքի և ՀՀ Գեղարքունիքի մարզերում ջրամատակարարման և ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերի արդիականացումը, արդյունավետ կառավարման ապահովումը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ջրագծերի վերանորոգման ու կառուցման աշխատանքների իրականացմամբ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների շարունակական բարելավում, ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացում, կորուստների նվազեցում, անխափան ջրամատակարարում:

Կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման նախապատրաստական աշխատանքների իրականացում և կառուցում:

**137.4 Երևան քաղաքի մի շարք վարչական շրջանների ջրամատակարարման բաշխիչ ցանցերի տեխնիկական բարելավման աշխատանքների իրականացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հիմք ընդունելով 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածի 15-րդ կետ և «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թթ. ռազմավարությունը և ֆինանսավորման ծրագիրը»՝ անհրաժեշտ է բարձրացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ընդգրկված Երևան քաղաքի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների հուսալիությունը, նվազեցնել ոչ արդյունավետ ջրօգտագործման մակարդակը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս Երևան քաղաքի մի շարք վարչական շրջանների ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերը տեխնիկապես մաշված վիճակում են և ունեն ներդրումների իրականացման կարիք:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Համապատասխան ներդրումային ծրագրերի իրականացմամբ կապահովվի Երևան քաղաքի մի շարք թաղամասերի սպառողների անխափան և հուսալի ջրամատակարարումը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Երևան քաղաքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակի բարձրացումը և հուսալիության ապահովումը:

| | |
|---|---|
| 138 | **Քաղաքային կեղտաջրերի հավաքման և մաքրման իրավիճակի գնահատում**<br><br>**<u>138.1 Կոմունալ կենցաղային կեղտաջրերը մաքրումից հետո դրանց համապատասխանությունը ջրերի ստանդարտներին</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հիմք ընդունելով Եվրոպական միության համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 91/271/ԵՀ հրահանգը և 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը 10-րդ կետը անհրաժեշտ է իրականացնել քաղաքային կեղտաջրերի հավաքման եւ մաքրման իրավիճակի գնահատում:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ բնակավայրերում կեղտաջրերի հավաքման և մաքրման ծառայությունների հասանելիությունը, ինչպես նաև կեղտաջրերի հեռացման ծառայությունները բավարար մակարդակի չեն գտնվում: Քաղաքային կեղտաջրերի մաքրման պահանջների իրականացման համար անհրաժեշտ են տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման աշխատանքների նախապատրաստում և իրականացում, ինչպես նաև կեղտաջրերի հեռացման բնագավառի հայեցակարգային մոտեցումների մշակում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Բաց գետավազան թափվող կոյուղաջրերի լիարժեք մաքրության ապահովում և համապատասխանեցում տվյալ գետի ջրի ստանդարտներին:<br><br>**<u>138.2 Երևանի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնման առաջին փուլի կառուցվածքների շահագործման ապահովում, կայանի վերակառուցման ծրագրի երկրորդ փուլի՝ տիղմի օգտահանման կառուցվածքների շինարարության նախապատրաստական աշխատանքների մեկնարկ</u>**<br>**<u>138.3 Կեղտաջրերի հեռացման բնագավառի հայեցակարգային մոտեցումների մշակում և առաջարկությունների ներկայացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 6.4 «Ջրային տնտեսությունը» բաժինը և 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերը՝ անհրաժեշտ է ապահովել Երևան քաղաքի Աերացիայի մաքրման կայան ներհոսող կեղտաջրերի ամբողջական մաքրումը և անջատված տիղմի օգտահանումը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ավարտվել է Երևանի Աերացիայի մաքրման մեխանիկական կայանի շինարարությունը: Անհրաժեշտ է ապահովել մաքրման կայանի վերականգնման առաջին փուլի կառուցվածքների շահագործումը և տալ տիղմի օգտահանման կառուցվածքների շինարարության նախապատրաստական աշխատանքների մեկնարկը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ապահովել Աերացիայի մաքրման մեխանիկական կայանի շահագործման հանձնելու գործընթացը: Համապատասխան ներդրումների առկայության դեպքում Ապահովել «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի շինարարության երկրորդ փուլի մեկնարկը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Բնապահպանական մի շարք խնդիրների լուծում: |
| 139 | **Ոռոգման ոլորտում իրականացնել անհրաժեշտ կառուցվածքային բարեփոխումներ՝ նպատակ ունենալով շարունակաբար նվազեցնել ջրի կորստի ցուցանիշները և ավելացնել համակարգում հավաքվող եկամուտները**<br><br>**<u>139.1 Ոռոգման համակարգի զարգացման տեսլականի ներկայացում</u>**<br>**<u>139.2 Ոռոգման համակարգի զարգացման հայեցակարգի մշակում և առաջարկությունների ներկայացում</u>**<br>**<u>139.3 Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների</u>** |

| | |
|---|---|
| | <u>**մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների իրականացում**</u><br><u>**139.4 ՋՕԸ-երի ինստիտուցիոնալ հզորացման տեսլականի ներկայացում**</u><br><u>**139.5 ՋՕԸ-երի ինստիտուցիոնալ հզորացման նպատակով կառավարման բարելավման պլանների կազմում, կոնկրետ գործողությունների պլանների մշակում և իրականացում միջոցառումների**</u><br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 6.4 «Ջրային տնտեսությունը» բաժինը անհրաժեշտ է ոռոգման ոլորտում իրականացնել օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել կանոնակարգել «Ջրառ» ՓԲԸ- ՋՕԸ-ջրօգտագործող իրավահարաբերությունները, կատարելագործել ոռոգման համակարգի կառավարումը, ՋՕԸ-երի գործադիր մարմնի ընտրության փոփոխություն իրականացնել, ուստի անհրաժեշտություն է առաջացել «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՋՕԸ-երի ինստիտուցիոնալ հզորացման նպատակով անհրաժեշտ է ոռոգման ոլորտում մշակել զարգացման հայեցակարգ, կատարել կառուցվածքային բարեփոխումներ, կազմել կառավարման բարելավման պլաններ, մշակել և իրականացնել կոնկրետ գործողությունների պլաններ:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Մատուցվող ծառայությունների որակի բարելավում և գործունեության արդյունավետության, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացում: |
| **140** | **Իրականացնել ոռոգման մեխանիկական համակարգերը ոռոգման ինքնահոս համակարգերով փոխարինելու քաղաքականություն**<br><br><u>**140.1 «Ոռոգման համակարգերի զարգացման» ծրագրի իրականացում**</u><br><u>**140.2 «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրի իրականացում**</u><br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ոռոգման ջրամատակարարման համակարգերի շահագործման հուսալիությամբ ու արդյունավետության բարձրացմամբ: Միջոցառման իրականացման հիմք է հանդիսանում «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, որով սահմանված է ջրային ռեսուրսների մատչելիության ապահովման ուղղությունները:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ոռոգման համակարգերի մայր, միջտնտեսային և ներտնտեսային ջրանցքներում առկա են վթարային հատվածներ: Համակարգում առկա են նաև ջրամատակարարման մեխանիկական ենթահամակարգեր, որոնք նպատակահարմար է արդիականացնել կամ հնարավորության դեպքում փոխարինել ինքնահոսով:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է կատարել վերանորոգման և վերականգնման աշխատանքներ, համակարգը դարձնելով անխափան և հուսալի:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Ոռոգման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները կապահովեն ոռոգման համակարգերի վերականգնումը և հետագա պահպանումը: Միաժամանակ՝ ինքնահոս համակարգերի, հեռացնող ջրանցքների և ջրատարների կառուցմամբ ու նորոգմամբ հնարավորություն կստեղծվի իրականացնելու ինքնարժեքի նվազեցման քաղաքականություն: |
| **141** | **Ջրամբարաշինության ծրագրերի հեռանկարային զարգացման քաղաքականության մշակում**<br><br><u>**141.1 «Ջրամբարաշինության և պաշարների կառավարման հայեցակարգային մոտեցումների մշակում և առաջարկությունների ներկայացում»**</u> |

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է 2016 թվականի օգոստոսի 25-ին հավանության արժանացած ՀՀ կառավարության N33-18 արձանագրային որոշմամբ, որի բաղադրիչներն ուղղված են նաև նոր ջրամբարների կառուցմանը, գոյություն ունեցող ենթակառուցվածքների արդիականացմանը, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացմանը, ինչպես նաև ջրօգտագործողների հետ թափանցիկ հարաբերությունների նոր մակարդակի ներդրմանը: Միջոցառման իրականացման հիմք է հանդիսանում «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, որով սահմանված է ջրային ռեսուրսների մատչելիության ապահովման ուղղությունները:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում առաջացած մակերևութային ջրերի հոսքի կառավարման համար ներկայումս կառավարության կողմից սահմանված չէ ջրամբարաշինության հեռանկարային ծրագրի հայեցակարգ, որի հիմքում պետք է դրվեն ջրամբարներում ջրի կարգավորման ծրագրի մշակման անհրաժեշտությունը, դրա հոսքերի կարգավորման հնարավորությունները և դրանց հետագա օգտագործման ռազմավարությունը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է հայեցակարգով ներառել ջրային ռեսուրսների հնարավոր բացասական հաշվեկշռի պայմաններում ոռոգման ջրի պահանջարկի բավարարման հեռանկարային խնդիրների լուծման ուղիները, օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիները, ոռոգելի հողատարածքների ավելացումը, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների իրականացման փուլային ծրագրերի իրականացումը և այլն:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Ջրամբարաշինության հայեցակարգի միջոցով հնարավորություն կստեղծվի ապահովելու ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի կառավարումը: Միաժամանակ՝ նշված խնդրի լուծումն անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ջրային պաշարների արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար: |
| 142 | **2019-2023 թվականների ընթացքում Ջրամբարաշինության (Կապսի և Վեդու ջրամբարներ) ծրագրերի նախապատրաստում և իրականացում**<br><br>**142.1 «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 1; Կապսի ջրամբարի կառուցում**<br>**142.2 «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 2; ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում**<br>**142.3 Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների, ջրի փոխադրող և ոռոգման համակարգի շինարարական աշխատանքների իրականացում: Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծային աշխատանքների ավարտ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է 2016 թվականի օգոստոսի 25-ին հավանության արժանացած ՀՀ կառավարության N33-18 արձանագրային որոշմամբ, որի բաղադրիչներն ուղղված են նաև նոր ջրամբարների կառուցմանը, գոյություն ունեցող ենթակառուցվածքների արդիականացմանը, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացմանը, ինչպես նաև ջրօգտագործողների հետ թափանցիկ հարաբերությունների նոր մակարդակի ներդրմանը: Միջոցառման իրականացման հիմք է հանդիսանում «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, որով սահմանված է ջրային ռեսուրսների մատչելիության ապահովման ուղղությունները:<br>**1.2 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կապսի և Վեդու ջրամբարների իշխման տակ ընկած տարածաշրջաններում ձևավորվող մակերևութային ջրահոսքերի ռեժիմի կառավարման բացակայության պատճառով տարեկան շուրջ 60-70 մլն.խոր.մ ջուր չի օգտագործվում հանրապետության տնտեսությունում, մասնավորապես, ոռոգման ոլորտում:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է Կապսի, Վեդու, ջրամբարների կառուցմամբ բարելավել ջրամբարների իշխման տակ ընկած հողատարածքների ջրամատակարարումը, ավելացնել նոր հողատարածքներ, մեխանիկական ջրարտադրության ինքնահոսով փոխարինելու արդյունքում համակարգի համար կտնտեսվի շուրջ 20-25 մլն,կՎտ ժամ էլ.էներգիա:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Ջրամբարաշինության միջոցով հնարավորություն կստեղծվի ապահովելու ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակը: Միաժամանակ՝ նշված խնդրի լուծումն անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ջրային համակարգերի օգտագործման արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար: |
| **143** | **2019 թվականին «Արփա-Սևան» N 2 թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների ավարտ**<br><br>**<u>143.1 «Արփա-Սևան» հիդրոտեխնիկական կառույցի վթարային հատվածների վերականգնում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 6.4 «Ջրային տնտեսությունը» բաժինը, 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխի 15-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 133-Ն որոշումը՝ անհրաժեշտություն է առաջացել ավարտել Արփա-Սևան թունելի վթարային հատվածների վերականգնման աշխատանքները:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Արփա-Սևան ջրատարը բաղկացած է 2 թունելներից: Կեչուտի ջրամբարից N1 թունելով ջուրը տեղափոխվում է Եղեգիս ջրանցույց և Եղեգիս գետի ջրառ կառույցը ընդունում է Եղեգիս գետի հոսքը: N1 թունելով բերված ջուրը ուղղորդվում է N2 թունել, որը ջուրը հասցնում է Սևանա լիճ: Նախատեսված է թունելով տեղափոխել 250մլն/մ$^3$ ջուր, սակայն «Արփա-Սևան» թունելի տեխնիկական վիճակով պայմանավորված ներկայումս Սևանա լիճ է տեղափոխվում 110-130մլն/մ$^3$ ջուր:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Արփա-Սևան թունելի վթարային հատվածների վերականգնման աշխատանքների ավարտում:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Սևանա լճի մակարդակի բարձրացում, թունելի անխափան աշխատանքի ապահովում: |
| **144** | **Խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքների իրականացում**<br><br>**<u>144.1 Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում: Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքների իրականացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 6.4 «Ջրային տնտեսությունը» բաժինը, 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը և 2005թ. մայիսի 20-ի <<Գյուղատնտեսական հողերի մելիորացիայի մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ հանրապետության ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, գրունտային ջրերի մակարդակների կարգավորման, հողատեսքերի աղակալման, բնակավայրերի ջրակալման և տարափոխիկ հիվանդությունների կանխման, մշակաբույսերի բնականոն աճի ապահովման նպատակներով, հանրապետության գերխոնավ հողերի տարածքներում սկսած 1950-ական թվականներից առ այսօր կառուցվել է շուրջ 1696.612 կմ դրենաժային ցանց, այդ թվում՝ բաց՝ 1065.662 կմ և փակ՝ 630.95 կմ, որի պահպանման, շահագործման նպատակով էլ պայմանավորված է միջոցառման իրականացումը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ-ում գործում է շուրջ 950 կմ կոլեկտորադրենաժային բաց համակարգեր, որոնց պահպանման և շահագործման համար ըստ նորմատիվի անհրաժեշտ է նվազագույնը 3 տարին մեկ պարբերականությամբ իրականացնել մաքրման և նորոգման աշխատանքներ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ պետական բյուջեի հատկացումներով հնարավորություն է ընձեռվում յուրաքանչյուր տարի մաքրել և նորոգել շուրջ 182կմ դրենաժային համակարգ:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է բարելավել ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակը, պահպանել գրունտային ջրերի մակարդակը |

| | |
|---|---|
| | թույլատրելի խորություններում, կանխարգելել հողատեսքերի երկրորդային աղակալումն ու ալկալիացումը, տարափոխիկ հիվանդությունների տարածումը և նպաստել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը: |
| **145** | **Հեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում, հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում, հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում**<br><br>**145.1 «Հանրապետության բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների ու բնակչության գույքը վարարումների և սելավների ռիսկից պաշտպանելու տվյալների բազայի ստեղծման, հակահեղեղային առաջնահերթ միջոցառումների իրականացման կանոնակարգման, կառավարման համակարգչային ծրագրի միջոցով ոլորտի կենտրոնացված կառավարման իրականացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հիմք ընդունելով Եվրոպական միության համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 91/271/ԵՀ հրահանգը, ջրային ոլորտների ռազմավարությունների մշակման միջոցառումները և ՀՀ ջրային օրենսգրքի 91-րդ հոդվածը և 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հանրապետության տարածքի կեսից ավելին ենթակա է սելավային երևույթների ազդեցությանը, որոնք յուրաքանչյուր տարի ունենում են տարբեր ուժգնություն: Վերջիններս պարբերաբար զգալի վնաս են հասցնում հանրապետության տնտեսության տարբեր ճյուղերին և նույնիսկ պատճառ են դառնում բնակավայրերի ավերման:<br>Հեղեղների հետևանքների վերացումը, պահանջում է առավել մեծ կապիտալ ներդրումներ, քան դրանց ծնող պատճառների վերացումը և արդյունքում, անբարենպաստ հետևանքների կանխումը: Հետևաբար առաջնահերթ անհրաժեշտ է հակահեղեղային կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, որոնցից առանցքային է համարվում հանրապետության բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների և բնակչության գույքը վարարումներից, սելավներից պաշտպանելու տվյալների բազայի ստեղծումը, կառավարման համակարգչային ծրագրի մշակումը:<br>Հեղեղաջրերը, դուրս գալով հուներից կամ փոխելով բնական հունը, ջրածածկում են առափնյա գյուղատնտեսական և այլ նշանակության հողատարածքները: Բացի այդ, հեղեղները մեծ չափի վնասներ են հասցնում առափնյա շենք-շինություններին, ինժեներական կառուցվածքներին, այդ թվում՝ կամուրջներին, ճանապարհներին, ոռոգման և չորացման ցանցերին, պոմպակայաններին, գազամուղներին, ջրմուղ-կոյուղու ցանցերին: Միաժամանակ տեղի են ունենում խոշոր չափերի հասնող հողատարման երևույթներ: Ընդհանուր առմամբ սակավահող Հայաստանի համար հիշատակված երևույթը չարիք է հանդիսանում:<br>Հակահեղեղային միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել յուրաքանչյուր տարի՝ ընտրելով գետերի և սելավատարների առավել վտանգավոր հատվածները:<br>**1.2 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2003-2013 թվականներին իրականացվել են ավելի քան 6,6 մլրդ դրամ արժեքով հակահեղեղային միջոցառումներ, սակայն դրանց պահպանման ու շահագործման գործառույթներ չեն իրականացվում:<br>Համայնքները, սուղ բյուջեների պատճառով, չեն կարողանում իրականացնել վերոհիշյալ գործառույթները, առավել ևս, որ ափապաշտպան կառույցներն արտացոլված չեն իրենց հաշվեկշիռներում:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է գույքագրել գետերի և հեղեղատարների ափապաշտպան կառույցները՝ դրանք ջրային կոմիտեի հաշվեկշռում արտացոլելու նպատակով:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Ափապաշտպան կառույցների վիճակի վերաբերյալ տեղեկատվական բազան, կենտրոնացնելով մեկ մասնագիտական կառույցում, հնարավորություն կստեղծվի պատշաճ կազմակերպել դրանց շահագործումն ու պահպանումը, ոչ մեծ ֆինանսական ներդրումներ կատարելով ապահովել ափապաշտպան ու հիդրոտեխնիկական այլ կառուցվածքների երկարակեցությունը: |
| **146** | **Մեխանիկական ջրարտադրության սարքավորումների տեխնիկական վիճակը բարելավելու և կառավարման արդի համակարգերով վերազինելու (փոխարինելու) ծրագրի կազմում**<br><br>**146.1 Գնահատել մեխանիկական ջրարտադրության սարքավորումների տեխնիկական վիճակը** |

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 6.4 «Ջրային տնտեսությունը» բաժինը, 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը՝ մատակարարված ոռոգման ջրի հստակ հաշվառում իրականացնելու, ինչպես նաև մեխանիկական ջրարտադրության սարքավորումների տեխնիկական վիճակը բարելավելու և կառավարման արդի համակարգերով վերազինելու ծրագրի մշակման նպատակով ոռոգման ջրամատակարարման համակարգերում անհրաժեշտ է գնահատել մեխանիկական ջրարտադրության սարքավորումների տեխնիկական վիճակը, ջրառի կետերը և մայր ջրատարներից մինչև ներտնտեսային ցանցի բաժանարար հանգույցները բերել պատշաճ վիճակի՝ կարգաբերելով և հագեցնելով դրանք ժամանակակից ջրաչափական սարքերով:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաշխարհային բանկի աջակցությամբ ոռոգման համակարգերի ջրաբաշխման հանգուցային կետերում տեղադրվել է թվով 83 SCADA համակարգի ջրաչափեր, որը թույլ է տալիս օպերատիվ կերպով, այդ թվում նաև առցանց այդ համակարգերում ջրամատակարարման վերաբերյալ ստանալ տվյալներ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ոռոգման ոլորտում ներդրված հստակ հաշվառման համակարգի շնորհիվ հնարավոր կլինի բարձրացնել ոռոգման գործընթացի արդյունավետությունը, կորուստների ցուցանիշի վերահսկումը, ավելի օպերատիվ արձագանքել համակարգում վթարների վերացմանը, իրականացնել ոռոգման ջրի ավելի օպտիմալ բաշխում, էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ առցանց տեղեկատվություն ստանալու արդյունքում հնարավոր կլինի զգալիորեն նվազեցնել տարատեսակ ռիսկերը, ինչը նաև կբերի սպասարկման և այլ ընթացիկ ծախսերի նվազեցմանը, հնարավորություն կստեղծվի ջրի կառավարման GIS ծրագրում կիրառել ոռոգման ջրի և էլ. էներգիայի ծախսի հաշվառման առցանց համակարգերը, որոնցից ստացվող տվյալները կօգտագործվեն ծրագրում առկա հաշվետվություններում, մեխանիկական ջրարտադրության գործընթացն կդառնա ավելի վերահսկելի և ավելի կազմակերպված շնորհիվ առցանց ստացվող էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ տեղեկատվությունից կազմված վերլուծություններից:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Հաշվառվող ոռոգման ջրի ծավալների և հասույթների մեծացում, գանձման տոկոսի բարձրացում, սուբսիդիայի պակասեցում, ՋՕԸ-երի նկատմամբ վերահսկելիության մեծացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, ջրօգտագործողների ընկերություններում ֆինանսական կայունության ապահովում, վերջիններիս նկատմամբ վստահության բարձրացում և ոռոգման ջրի մատակարարման բարելավում: |
| **147** | **Ոռոգման համակարգերը շարունակաբար արդի ջրաչափական սարքավորումներով կահավորում և տվյալների հավաքման ու վերահսկողական համակարգով հագեցում**<br><br>**<u>147.1 Հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկական վիճակի գնահատում և վերահսկելիության բարձրացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 6.4 «Ջրային տնտեսությունը» բաժինը, 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը՝ մատակարարված ոռոգման ջրի հստակ հաշվառում իրականացնելու, ինչպես նաև մեխանիկական ջրարտադրության սարքավորումների տեխնիկական վիճակը բարելավելու և կառավարման արդի համակարգերով վերազինելու ծրագրի մշակման նպատակով ոռոգման ջրամատակարարման համակարգերում անհրաժեշտ է գնահատել մեխանիկական ջրարտադրության սարքավորումների տեխնիկական վիճակը, ջրառի կետերը և մայր ջրատարներից մինչև ներտնտեսային ցանցի բաժանարար հանգույցները բերել պատշաճ վիճակի՝ կարգաբերելով և հագեցնելով դրանք ժամանակակից ջրաչափական սարքերով:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաշխարհային բանկի աջակցությամբ ոռոգման համակարգերի ջրաբաշխման հանգուցային կետերում տեղադրվել է թվով 83 SCADA համակարգի ջրաչափեր, որը թույլ է տալիս օպերատիվ կերպով, այդ թվում նաև առցանց այդ համակարգերում ջրամատակարարման վերաբերյալ ստանալ տվյալներ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** |

| | |
|---|---|
| | Ոռոգման ոլորտում ներդրված հստակ հաշվառման համակարգի շնորհիվ հնարավոր կլինի բարձրացնել ոռոգման գործընթացի արդյունավետությունը, կորուստների ցուցանիշի վերահսկումը, ավելի օպերատիվ արձագանքել համակարգում վթարների վերացմանը, իրականացնել ոռոգման ջրի ավելի օպտիմալ բաշխում, էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ առցանց տեղեկատվություն ստանալու արդյունքում հնարավոր կլինի զգալիորեն նվազեցնել տարատեսակ ռիսկերը, ինչը նաև կբերի սպասարկման և այլ ընթացիկ ծախսերի նվազեցմանը, հնարավորություն կստեղծվի ջրի կառավարման GIS ծրագրում կիրառել ոռոգման ջրի և էլ. էներգիայի ծախսի հաշվառման առցանց համակարգերը, որոնցից ստացվող տվյալները կօգտագործվեն ծրագրում առկա հաշվետվություններում, մեխանիկական ջրարտադրության գործընթացն կդառնա ավելի վերահսկելի և ավելի կազմակերպված շնորհիվ առցանց ստացվող էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ տեղեկատվությունից կազմված վերլուծություններից:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Հաշվառվող ոռոգման ջրի ծավալների և հասույթների մեծացում, գանձման տոկոսի բարձրացում, սուբսիդիայի պակասեցում, ՋՕԸ-երի նկատմամբ վերահսկելիության մեծացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, ջրօգտագործողների ընկերություններում ֆինանսական կայունության ապահովում, վերջիններիս նկատմամբ վստահության բարձրացում և ոռոգման ջրի մատակարարման բարելավում: |
| **148** | **Գործող ջրամբարների տեխնիկական վիճակի գնահատում և վերականգնման ծրագրի մշակում**<br><br>**148.1 Գործող ջրամբարների առկա տեխնիկական վիճակի գնահատում**<br>**148.2 Յուրաքանչյուր ջրամբարի անվտանգության ապահովման ծրագրի մշակում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման հիմք է հանդիսանում ՀՀ ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 6.4 «Ջրային տնտեսությունը» բաժինը և «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը՝ անհրաժեշտություն է առաջացել գործող ջրամբարների տեխնիկական վիճակի գնահատման և վերականգնման, ինչպես նաև յուրաքանչյուր ջրամբարի անվտանգության ապահովման համար մշակել ծրագիր:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ տարածքում գործող ջրամբարների հիմնականում կառուցվել են մինչև 1970-ական թվականները և տեխնիկապես մաշված վիճակում են և ունեն լուրջ հիմնանորոգման կարիք: Ջրամատակարման պատվարները, հանգույցները, և այլ սարքավորումներ և կառույցներ ունեն հիմնանորոգման կարիք: Վերը նշված իրավիճակի արդյունքում մեծ են ջրամբարներում կուտակված ջրի կորուստները, ինչպես նաև դրանց ջրամատակարարման համակարգերով մատակարարման կորուստները: Ջրամբարների ներկայիս տեխնիկական վիճակը առաջացնում է շահագործման անվտանգության կանոնների պահպանման խնդիրներ:<br>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մասնագիտացված կազմակերպությունների կողմից, ըստ առանձին ջրամբարների, կատարել առավել մանրամասն ուսումնասիրություններ՝ ծրագրերի իրականացվելիությունը գնահատելու և հետագայում սահմանված կարգով ընթացք տալու նպատակով:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագրերի մշակման արդյունքում հնարավոր կլինի բարելավել ոռոգելի հողատարածքների ջրամատակարարումը, ավելացնել նոր հողատարածքներ, մեխանիկական ջրարտադրության ինքնահոսով փոխարինելու արդյունքում համակարգի համար ապահովել էլեկտրաէներգիայի խնայողություն, ինչպես նաև ապահովել ջրամբարների անվտանգ շահագործումը::<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Գործող ջրամբարների և խոշոր ՀՏԿ-ների անվտանգ շահագործում: Բնակչության և բնակավայրերի անվտանգության բարձրացում: |
| **149** | **Ջրօգտագործման ու ջրերի կառավարման ռազմավարական նշանակության խնդիրների լուծման նպատակով կիրականացվի մասնավոր, մասնավոր-հանրային գործընկերությամբ տեղական և հանրապետական նշանակության ջրամբարների կառուցման և շահագործման համար անհրաժեշտ նորմատիվ-իրավական դաշտի մշակում և հնարավոր ներդրողների համար դրանց հասանելիության ու հանրայնացման ապահովում**<br><br>**149.1 Ջրօգտագործման ու ջրերի կառավարման ռազմավարական նշանակության խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ նորմատիվ-իրավական դաշտի նախնական ուսումնասիրությունների** |

| | |
|---|---|
| | **իրականացում**<br><br>**149.2 Ուսումնասիրությունների արդյունքում շահագրգիռ մարմինների հետ միջոցառումների ծրագրի մշակում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ներկայումս ՀՀ տարածքում առաջացող մակերևութային ջրերը հնարավոր չէ արդյունավետ կառավարել և անհրաժեշտություն է առաջացել ջրի պահանջարկի բավարարման համար կազմավորվող ջրային ռեսուրսները ամբարելու: Միջոցառման իրականացման հիմք է հանդիսանում ՀՀ ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման 6.4 «Ջրային տնտեսությունը» բաժինը և «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, որով սահմանված է ջրային ռեսուրսների մատչելիության ապահովման ուղղությունները:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ջրային կոմիտեն «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ համատեղ քննարկել է հանրապետությունում փոքր և միջին ջրամբարների կառուցման ծրագրերի իրականացման հնարավորությունները և առանձնացրել առաջնահերթ կառուցման ենթակա 22 ջրամբարներ՝ հիմք ընդունելով նախնական գնահատմամբ տեխնիկատնտեսական նպատակահարմարության ցուցանիշները:<br>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մասնագիտացված կազմակերպությունների կողմից, ըստ առանձին ջրամբարների, կատարել առավել մանրամասն ուսումնասիրություններ՝ ծրագրերի իրականացվելիությունը գնահատելու և հետագայում սահմանված կարգով ընթացք տալու նպատակով:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ջրամբարների կառուցմամբ նախատեսվում է բարելավել ոռոգելի հողատարածքների ջրամատակարարումը, ավելացնել նոր հողատարածքներ, մեխանիկական ջրարտադրության ինքնահոսով փոխարինելու արդյունքում համակարգի համար ապահովել էլեկտրաէներգիայի խնայողություն:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Ջրամբարաշինության միջոցով հնարավորություն կստեղծվի ապահովելու ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակը: Միաժամանակ՝ նշված խնդրի լուծումն անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ջրային համակարգերի օգտագործման արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար:<br>ծրացման և կայուն զարգացման համար: |
| **Կրթության և գիտության նախարարություն** | |
| 150 | **150.1 Կրթության ոլորտի զարգացման տեսլականի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**<br><br>**150.2 Կրթության ոլորտի միջին մակարդակի ռազմավարական փաստաթղթերի վերանայում և համաժամանակեցում (սինխրոնացում)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին պարբերությունից: Հաշվի առնելով, որ կրթության ոլորտն իր մեջ ներառում է ենթաոլորտներ / նախադպրոցական կրթություն,հանրակրթություն և այլն/ արդյունավետ բարեփոխումներ իրականացնելու համար անհրաժեշտ է կրթության ոլորտում առկա ռազմավարական փաստաթղթերի համադրում և համաժամանակեցում: Կրթության ոլորտի համընդհանուր զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է մեկ միասնական հայեցակարգի առկայություն, ինչն իրենից պետք է նվազագույնը ներկայացնի բարեփոխումների իրականացմանը միտված քայլերի և գործողությունների ամբողջականություն:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Կրթության բնագավառում ներկայիս բարեփոխումներն իրականացվում են «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքում (ՀՕ-246-Ն) ամրագրված բարեփոխումների շարունակականության համաձայն: Առկա ռազմավարական փաստաթղթերը և |

նախագծերը մշակվել են՝ ոչ միշտ հաշվի առնելով փոխկապակցվածությունը, փոխադարձ ազդեցությունը: Կա խնդիր դրանք համեմատելու և համաժամանակեցնելու:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նշված գործընթացներն իրականացնելու հետ կմշակվի կրթության ոլորտի զարգացման միասնական հայեցակարգ:

Միջոցառումն իրականացնելու նպատակով փոփոխություն կարվի «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետում, համաձայն որի Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը: Փոփոխության արդյունքում ՀՀ կառավարությանը կամ ոլորտի պետականկառավարման լիազորված մարմնին կտրվի լիազորություն՝ հաստատելու կրթության ոլորտի զարգացման միասնական հայեցակարգը::

**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Մշակված հայեցակարգը հիմք կհանդիսանա կրթության՝ զարգացման թիրախների և ռազմավարության մշակման համար: Ռազմավարական բնույթի նոր նախագծերը բովանդակային և ժամանակագրական առումով կլինեն կիրառելի:

**<u>150.3 «Կրթության՝ մինչև 2030թ. զարգացման թիրախների և 2020-2025թթ. զարգացման պետական ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>**

**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին պարբերությունից: Կրթության համակարգի ներկա փուլի զարգացման նպատակն է՝ ընդունելով ժամանակակից մարտահրավերները և ռազմավարության սկզբունքները, արձանագրել հիմնախնդիրների լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կվերականգնեն կրթության ու գիտելիքի վարկանիշը և կամրապնդեն Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի, հեղինակությունը:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի՝ կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է: Կրթության ոլորտի զարգացման առաջնահերթությունները, գերակայությունները, առկա խնդիրները, հիմնահարցերը, վերաձևակերպման կարիք ունեն, որոնք ունեն վերանայման, ընդհանրացման անհրաժեշտություն:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հիմք ընդունելով կրթության համակարգի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները՝ կմշակվի ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման թիրախների, ինչպես նաև մինչև 2025 թվականի զարգացման պետական ռազմավարության նախագիծը, որում կսահմանվեն ՀՀ կրթության ոլորտի զարգացման գերակայությունները, ռազմավարության սկզբունքներն ու ծրագրային ուղղությունները, ինչը ուղղորդիչ դեր կունենա կրթության բոլոր մակարդակների բարեփոխումների համաժամանեցման համար: ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման թիրախների և մինչև 2020-2025 թվականի զարգացման պետական ռազմավարության նախագիծը կմշակվի հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագիրը, կրթության համակարգի վերջին տարիների մարտահրավերները, ինչպես նաև ՄԱԿ-ի «Փոխակերպենք մեր երկիրը. Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգը» և «Կրթություն 2030. Դեպի ներառական և արդարացի որակյալ կրթություն ու կրթություն ողջ կյանքի ընթացքում բոլորի համար» Ինչիոնի հռչակագիրը: Միջոցառումն իրականացնելու համար տեխնիկական աջակցություն կտրամադրի Ասիական զարգացման բանկը:

Միջոցառումներն իրականացնելու նպատակով փոփոխություն կարվի «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ

| | |
|---|---|
| | հոդվածի 4-րդ կետում, համաձայն որի, Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը: Փոփոխության արդյունքում ՀՀ կառավարությանը կտրվի լիազորություն՝ հաստատելու Կրթության՝ մինչև 2030թ. զարգացման թիրախների և 2020-2025թթ. զարգացման պետական ռազմավարությունը:<br><br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>ՀՀ կրթության զարգացման մինչև 2025 թվականի պետական ռազմավարության նախագծում այնպիսի ռազմավարական մոտեցումների որդեգրում, որոնք կապահովեն կրթության կայուն զարգացման առավել նպատակասլացություն և արդյունավետություն: Կրթության ոլորտի հետագա զարգացումները կիրականացվեն՝ ըստ սահմանված գերակա ուղղությունների և զարգացման նպատակային ցուցանիշների, որոնք կնպաստեն Հայաստանի ընդհանուր մրցունակության բարձրացմանը: |
| 151 | **<u>151.1 ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) ամբողջականացման գործողությունների պլանի հաստատում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը:<br>Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին պարբերությունից: Միջոցառման նպատակն է ստեղծել գործողությունների պլան՝ կրթական համակարգում առկա տեղեկությունների, վիճակագրական նյութերի, սովորողների և դասավանդողների վերաբերյալ տվյալների և այլ բնույթի փաստերի դասակարգման, ամփոփման, կառավարման նպատակով:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Բարեփոխումների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում, քանի որ առկա է տարբեր մարմինների կողմից կատարված մեծ քանակությամբ վերլուծական նյութեր, վիճակագրական տվյալներ, որոնք որևէ կերպ փոխկապակցված չեն, լիարժեք չեն, չեն համապատասխանում Յունեսկօ-ի և ԵՎՐՈՍՏԱՏ-ի կողմից ներկայացվող վիճակագրական ձևաչափերին:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Առաջարկվում է ստեղծել գործողությունների պլան, ըստ որի կրթության կառավարման համար անհրաժեշտ տվյալների բազան կձևավորվի: Միջոցառումն իրականացնելու համար տեխնիկական աջակցություն կտրամադրի Ասիական զարգացման բանկը: Գործողությունների պլանի մշակման արդյունքում կիստակեցվի թե ինչպիսի իրավական ակտով այն կհաստատվի:<br><br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Միջոցառման իրականացման արդյունքում մշակված գործողությունների պլանը հիմք կդառնա մասնակից և շահագրգիռ կողմերի համար տվյալների բազայի ստեղծման համար: |
| | **<u>151.2 «Ուսումնական հաստատությունների վարչական ռեգիստրի» հաստատում ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին |

| | |
|---|---|
| | պարբերությունից: Միջոցառման նպատակն է մշակել ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ վարչական ռեգիստրը հաստատելու մասին, որում կամրագրվեն ամբողջական շտեմարանի վարման իրավական հիմքերը:<br>Միջոցառման համար հիմք է հանդիսանում ՀՀ վարչապետի՝ 11.06.2018թ. թիվ 703-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կրթության և գիտության նախարարության կանոնադրության 11-րդ կետի 19-րդ ենթակետը, համաձայն որինախարարությունն իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրում և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարում:<br><br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ներկայումս գոյություն չունի կրթության ոլորտի հաստատությունների տվյալների միասնական ցանց: Արդյունքում նույն օբյեկտի նկատմամբ տարբեր փաստերը և տվյալները ցրված են տարբեր բազաներում և դժվարացնում են դրանց հետ կապված աշխատանքները: Կա համապարփակ, շահառուներին հասանելի, կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծելուն ուղղված իրավական ակտի բացակայության խնդիր:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Մշակել իրավական ակտ, որում կամրագրվեն կրթության ոլորտում տվյալների ամբողջական վարման իրավական հիմքերը:<br>ՀՀ վարչապետի՝ 11.06.2018թ. թիվ 703-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կրթության և գիտության նախարարության կանոնադրության 11-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն նախարարությունն իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրում և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարում:<br><br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Կվերանան ուսումնական հաստատությունների վարչական ռեգիստրների ներդրմանը խոչընդոտող իրավական բացերը: |
| | **<u>151.3 Ուսումնական հաստատությունների վարչական ռեգիստրի ներդրում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը:<br>Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին պարբերությունից: Միջոցառման նպատակն է ներդնել ուսումնական հաստատությունների վարչական ռեգիստր՝ կրթական համակարգում առկա տեղեկությունների, վիճակագրական նյութերի, սովորողների և դասավանդողների վերաբերյալ տվյալների և այլ բնույթի փաստերի դասակարգման, ամփոփման, կառավարման նպատակով:<br><br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ներկայումս գոյություն չունի կրթության ոլորտի հաստատությունների տվյալների միասնական ցանց: Արդյունքում նույն օբյեկտի նկատմամբ տարբեր փաստերը և տվյալները ցրված են տարբեր բազաներում և դժվարացնում են դրանց հետ կապված աշխատանքները: Կա համապարփակ, շահառուներին հասանելի, կրթության կառավարման տեղեկատվական համակարգի բացակայության խնդիր:<br><br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները** |

| | |
|---|---|
| | Առաջարկվում է ստեղծել կրթության ոլորտի տվյալների ամբողջական շտեմարան և ուսումնական հաստատությունների վարչական ռեգիստր, որոնք կկանոնակարգեն տվյալ դաշտում իրականացվող գործողությունները: Միջոցառումն իրականացնելու համար տեխնիկական աջակցություն կտրամադրի Ասիական զարգացման բանկը:<br><br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Կստեղծվի համացանցում հասանելի, ՀՀ տարածքում գործող բոլոր ուսումնական հաստատությունների վերաբերյալ տեղեկատվական բազա: Շահառուները կկարողանան գտնել իրենց կարիքների համար անհրաժեշտ սպառիչ տեղեկությունները: |
| **152** | **<u>152.1 Կրթության և գիտության նախարարի հրամանով Հանրակրթության կառավարման համակարգի բարեփոխումների հայեցակարգի հաստատում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը:<br>Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Հանրակրթության ոլորտում սահմանված Կառավարության ծրագրային նպատակներից:<br>Նպատակն է՝ վերանայել և առավել արդյունավետ դարձնել հանրակրթական հաստատությունների կառավարումը: Հանրակրթական դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների կողմից իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման, խորհուրդների անդամների կողմից հստակ, իրագործելի և իրականացման պարտադիր կատարման ենթակա լիազորություններ և պարտավորություններ սահմանելու նպատակով անհրաժեշտ է գործող իրավական կարգավորումներում իրականացնել փոփոխություններ:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Հանրակրթականարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրներըուրդների կողմից իրականացվող աշխատանքներն ունեն արդյունավետության բարձրացման խիստ անհրաժեշտություն:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Իրականացնել հանրակրթական դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների՝ օրենսդրությամբ լիազորված իրավասությունների և պարտավորությունների պատշաճ կերպով իրականացման հմտություն և կարողությունների բարելավմանն ուղղված աշխատանքներ:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Հանրակրթական դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների կողմից օրենսդրությամբ լիազորված իրավասությունների և պարտավորությունների պատշաճ կերպով իրականացում: |
| | **<u>152.2 Հանրակրթական դպրոցների կառավարման օրենսդրական դաշտի վերանայում, այդ թվում՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի, օրինակելի կանոնադրության, կառավարման խորհուրդների ձևավորման կարգի, տնօրենների հավաստագրման և նշանակման կարգի, այլ իրավական ակտերի վերանայում և հաստատում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը:<br>Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Հանրակրթության ոլորտում սահմանված Կառավարության ծրագրային նպատակներից:<br>Կրթության կազմակերպման արդյունավետության բարձրացման և հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների վերանայման անհրաժեշտությունից ելնելով՝ նախատեսվում է հիմնովին բարելավել հանրակրթության բնագավառը կարգավորող օրենսդրությունը: |

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Կառավարման գործող համակարգը արդյունավետ չէ, վերանայման կարիք ունեն և տնօրենների ընտրության, նշանակման և գործունեության գնահատման մեխանիզմները, և կառավարման խորհուրդների ձևավորումը, գործունեությունն ու լիազորությունները, ինչպես նաև հաստատության գործունեության թափանցիկ և համագործակցային նոր մեխանիզմների կարիք կա:

**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հանրակրթության ոլորտի բարելավման, առկա խնդիրների կարգավորման նպատակով անհրաժեշտ է լրամշակել, փոփոխություններ կատարել գործող նորմատիվ իրավական ակտերում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ստեղծել կառավարման արդյունավետ համակարգ, վերանայել տնօրենների ընտրության, նշանակման և գործունեության գնահատման մեխանիզմները, և կառավարման խորհուրդների ձևավորումը, գործունեությունն ու լիազորությունները, ինչպես նաև ներդնել հաստատության գործունեության թափանցիկ և համագործակցային նոր մեխանիզմներ:

**152.3 Հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների վերակազմավորում**

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը:
Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Հանրակրթության ոլորտում սահմանված Կառավարության ծրագրային նպատակներից:
Հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդները քաղաքական գործընթացներից, շրջանակներից զերծ պահելու, հետևաբար՝ դպրոցի կառավարման գործընթացը ամբողջապես օբյեկտիվ իրականացնելու և դպրոցի համագործակցության շրջանակն ընդլայնելու նպատակով անհրաժեշտ է դպրոցների կառավարման խորհուրդների վերակազմակերպման գործընթաց իրականացնել:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդները (խոշոր հաշվով) ոչ միշտ են գործում օբյեկտիվ, այսինքն՝ նրանք իրենց իրավասությունների շրջանակն իրականացնելիս հանդիպում են գործունեությունը սահմանափակող կամ կաշկանդող հանգամանքների:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օրենսդրական համապատասխան փոփոխությունների արդյունքում ապահովել հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդների լիարժեք անկախ և ապաքաղաքական գործունեությունը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Արդյունքում կունենանք համապատասխան իրավական ակտերում հստակ ամրագրված պահանջների իրականացումն ապահովող, անկախ, անկաշկանդ գործող կառավարման խորհուրդներ:

**152.4 Հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների անդամների վերապատրաստումների իրականացում**

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

| | |
|---|---|
| | Միջոցառման գլխավոր նպատակն է կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը:<br>Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Հանրակրթության ոլորտում սահմանված Կառավարության ծրագրային նպատակներից:<br>Հանրակրթական դպրոցների կառավարումն ըստ էության իրականացնելու, օրենսդրությամբ վերապահված իրավասություններին և պարտականություններիո լիովին տիրապետելու, անհրաժեշտ կառավարչական կարողություններ յուրացնելու և դպրոցները հմուտ կառավարելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել խորհուրդների անդամների վերապատրաստում:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Հանրակրթականարաբերությոկառավարման խորհուրդների անդամները հիմնականում պատշաճ կերպով չեն տիրապետում իրենց իրավասությունների և պարտականությունների շրջանակին, ինչն ուղիղ անդրադառնում է դպրոցի ընդհանուր կառավարման արդյունավետության վրա:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդների անդամների կողմից վերապատրաստման միջոցով իրենց իրավասությունների և պարտավորությունների յուրացմանն ուղղված վերապատրաստումների կազմակերպում:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդների անդամների վերապատրաստման արդյունքում նախատեսվում է ունենալ օրենքով սահմանված կարգով ամրագրված իրավասությունները և պարտականություններին տիրապետող կոլեգիալ կառավարման մարմնի անդամներ: |
| **153** | **<u>153.1 Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների խոշորացում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը:<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 5-րդ պարբերությամբ: Ժամանակի մարտահրավերները պահանջում են կրթական ընթացակարգերի և գործընթացի կազմակերպման օպտիմալացում առավել քիչ միջոցների և ռեսուրսների օգտագործմամբ, սակայն առավել արդյունավետ կերպով նույն նպատակներին հասնելու հնարավորություն: Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է Մասնագիտական կրթության և ուսուցման /այսուհետ՝ ՄԿՈՒ/ ուսումնական հաստատությունների կառավարման և ծախսարդյունավետության բարձրացմամբ, ռեսուրսների համակենտրոնացմամբ: Միջոցառումը ենթադրում է առաջին հերթին կրթական հաստատությունների ցանցի վերափոխում: Ցանցի ստեղծումը նախատեսում է հորիզոնական գծով խոշորացում՝ Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջինմասնագիտական կրթության /այսուհետ՝ ՆՄԿԿ/ ուսումնական հաստատությունների վերակազմակերպում, որը հնարավորություն է տալիս օպտիմալացնել օգտագործվող տարածքները և ուսումնանյութական բազան: ՆՄՄԿ համակարգի ուսումնական հաստատությունները կվերակազմակերպվեն և դրա հիմքի վրա կստեղծվեն բազմագործառութային ուսումնական հաստատություններ: ՆՄՄԿ համակագի ռեսուրսների առավել օպտիմալ օգտագործումը կնպաստի մասնագիտական կրթության հետագա զարգացմանը և որակյալ մասնագետների պատրաստմանը:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագրեր իրականացվում են 54 պետական ուսումնական հաստատություններում (23 նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն, 26 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 4 կրթահամալիր, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն): Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացվում են 84 պետական ուսումնական |

| | |
|---|---|
| | հաստատություններում (68 միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություն, 9 ԲՈՒՀ, 2 կրթահամալիր, 2 հիմնադրամ, 3 ՓԲԸ):<br>ՀՀ կրթության և գիտության նախարարության համապատասխան մասնագետների կողմից իրականացվել Հայաստանի Հանրապետությունում գործող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների քարտեզագրում՝ ըստ մարզերի, ուսումնական հաստատությունների և շենք-շինությունների, ուսուցանվող մասնագիտությունների, ուսանողների թվի և աշխատողների: Հիմք ընդունելով քարտեզագրման ընթացքում իրականացված ուսումնասիրության և վերլուծության արդյունքները, ինչպես նաև հաշվի առնելով ուսումնական հաստատություններում ուսուցանվող որոշ մասնագիտությունների կրկնությունը, շենքային պայմանները, ուսանողների թվաքանակը, միմյանցից հեռավորությունը, նյութատեխնիկական բազայով հագեցվածությունը, մարզերի տնտեսական զարգացման տնտեսական ուղղությունները, տվյալ մարզում առաջատար հանդիսացող տարածաշրջանային պետական քոլեջների հզորացումը որպես գերազանցության և առաջնորդության կենտրոններ՝ անհրաժեշտություն է առաջացել օպտիմալացնել (խոշորացնել, վերակազմակերպել) որոշ ուսումնական հաստատություններ:<br>Օպտիմալացման (խոշորացման, վերակազմակերպման) արդյունքում կբարձրանա ուսումնական հաստատության կառավարման արդյունավետությունը, կբարելավվեն շենքային պայմանները, կվերանայվեն իրականացվող մասնագիտություններն ու պատրաստվող մասնագետները, ինչպես նաև հնարավորություն կստեղծվի մեկ հաստատության ներսում իրականացնել և՛ նախնական (արհեստագործական), և՛ միջին մասնագիտական կրթական ծրագրեր:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների պարբերական մշտադիտարկումներ ըստ մարզերի, ուսանողների թվի, մասնագիտությունների, ՄԿՈւ ուսումնական հաստատությունների արդյունավետ կառավարում, ռեսուրսների համակենտրոնացում, «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վերակազմակերպման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Միջոցառման իրականացման արդյունքում կվերակազմակերպվեն նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական 10 ուսումնական հաստատություններ, կօպտիմալացվեն օգտագործվող տարածքները և ուսումնանյութական բազան, կբարելավվեն շենքային պայմանները, կբարձրանա ուսումնական հաստատության կառավարման արդյունավետությունը, կվերանայվեն պատրաստվող մասնագիտությունները, ինչպես նաև հնարավորություն կստեղծվի մեկ հաստատության ներսում իրականացնել նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր: |
| | <u>**153.2.Գյուղատնտեսական ուղղվածությամբ ուսումնական կենտրոնների ստեղծում**</u><br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Ներկայումս բոլոր առանցքային փաստաթղթերում գյուղատնտեսության ոլորտի զարգացումը սահմանված է որպես Հայաստանի Հանրապետության հետագա տնտեսական զարգացման գերակա ոլորտ: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ներկայիս փուլում առանձնակի է կարևորվում գյուղատնտեսական արտադրության հմտություններին և ագրարային ոլորտում կիրառվող արդիական տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների պատրաստումը, վերջինիս գործընթացում միջազգային լավագույն փորձի օգտագործումը և մեր հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ դրա տեղայնացումը:<br>ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ներկայիս ցածր մակարդակը պայմանավորված է հիմնականում համապատասխան կադրերի բացակայությամբ, գյուղացիական տնտեսվարողների ժամանակակից մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների պակասով: Իսկ գյուղատնտեսության վարման համար բնակլիմայական ոչ նպաստավոր պայմաններում էլ ավելի է կարևորվում գյուղատնտեսության վարման կիրառական գիտելիքների, գործնական հմտությունների ձեռքբերման և արտադրության մեջ ժամանակակից տեխնոլոգիական միջոցների արդյունավետ ներդրման անհրաժեշտությունը:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** |

Ներկայումսբոլոր առանցքային փաստաթղթերումգյուղատնտեսության ոլորտի զարգացումը սահմանված է որպես Հայաստանի Հանրապետության հետագա տնտեսական զարգացման գերակա ոլորտ:ՀայաստանիՀանրապետությանգյուղատնտեսությանզարգացմանններկայիսփուլումառանձնակիէկարևորվումգյուղատնտեսականարտադրությանհմտություններինևագրարայինոլորտումկիրառվողարդիականտեխնոլոգիաներինտիրապետողմասնագետներիպատրաստումը, վերջինիսգործընթացումմիջազգայինլավագույնփորձիօգտագործումըևմերհանրապետությանգյուղա-տնտեսությանառանձնահատկություններըհաշվիառնելով ՝ դրատեղայնացումը:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ներկայիսցածր մակարդակը պայմանավորված է հիմնականում համապատասխան կադրերի բացակայությամբ, գյուղացիական տնտեսվարողների ժամանակակից մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների պակասով:Իսկգյուղատնտեսությանվարմանհամարբնակլիմայականոչնպաստավորպայմաններումէլավելիէկարևորվումգյուղատնտեսությանվարմանկիրառականգիտելիքների, գործնականհմտություններիձեռքբերմանևարտադրությանմեջժամանակակիցտեխնոլոգիականմիջոցներիարդյունավետներդրմանանհրաժեշտությունը:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Կրթական հաստատությունների միավորում մեկ կենտրոնում և նրանց ինտենսիվ համագործակցության հնարավորության ապահովում, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի, Ստեփանավանի և Գավառի ակադ. Ս. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջների, Ապարան համայնքի տարածքում վերանորոգված և վերազինված նոր ստեղծվող ուսումնական հաստատություններ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացման արդյունքում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի, Ստեփանավանի և Գավառի ակադ. Ս. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջների, Ապարան համայնքի տարածքում կստեղծվեն վերանորոգված և վերազինված նոր ուսումնական հաստատություններ, ինչը կնպաստի մասնագիտական բարձր գիտելիքների, բազմապրոֆիլ ենթակառուցվածքների ապահովմանը՝ մասնագիտական ուսումնական հաստատություններին որակյալ գործնական կրթություն տրամադրելու համար:

154

**<u>154.1 Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում արտաբյուջեի ձևավորումը, հաստատության ձեռնարկությունում ուսանողների համար պրակտիկ ուսուցման կազմակերպումը խթանելու նպատակով՝ հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների և ձևերի ընդլայնման մեխանիզմների ուսումնասիրություն</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 5-րդ պարբերությունից, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետից:

Ներկայիս գործարար միջավայրը, որում գործում են կազմակերպությունները, պահանջում է արագ փոփոխություններ և շարունակական զարգացում: Այս դինամիկ և անկանխատեսելի միջավայրում ձեռնարկատիրությունն ու նորարարությունը մրցունակության հիմքն են, որոնք կարող են ընդլայնել նոր լուծումների կիրառումը և բավարարել կազմակերպությունների կարիքները: ՆՄԿԿ ուսումնական հաստատությունների կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացումը, տնտեսական ընկերությունների ստեղծումը կնպաստի հաստատություններում արտաբյուջեի ձևավորմանը, հաստատության ձեռնարկությունում ուսանողների համար պրակտիկ ուսուցման կազմակերպմանը:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Ներկայումս ՆՄՄԿ ուսումնական հաստատությունները բյուջե ձևավորում են կրթական գործունեության ապահովմանն ուղղված պետական բյուջետային միջոցներից, վճարովի ուսուցման դիմաց ստացված միջոցներից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված գործունեության այլ ձևերից գոյացած միջոցներից:

Հաշվի առնելով ՀՀ պետական միջոցների սղությունը՝ ՄԿՈՒ համակարգի զարգացման համար ռազմավարական նշանակություն ունի ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների համար ձեռնարկատիրական գործունեության հնարավորության ստեղծումը, որը քոլեջներին և ուսումնարաններին կապահովի արտաբյուջե ձևավորելու հնարավորությամբ՝ խթանելով ինքնաֆինանսավորումը, ուսումնական հաստատության համալրումը և համապատասխան գույքով ու սարքավորումներով հագեցումը, ուսանողների համար տեսականին զուգահեռ աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպումը, սովորողների մոտ համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորումը:

ՄԿՈՒ հաստատություններն ունեն անհրաժեշտ ենթակառուցվածքներ և դրանց նպատակային օգտագործման համար պետք է ստեղծել համապատասխան միջավայր և իրավական դաշտ: Ուսումնական հաստատություններում տնտեսական ընկերությունների ստեղծումը կնպաստի հաստատություններում ինչպես արտաբյուջեի ձևավորմանը, այնպես էլ հաստատության ձեռնարկությունում ուսանողների համար պրակտիկ ուսուցման կազմակերպմանը: Ներկայումս ՄԿՈՒ 5 հաստատությունում գործում են նման ձեռնարկություններ, որոնք կարող են վերոնշյալ փորձի տարածման լավ նախադրյալ հանդիսանալ:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների գործունեությունն ընդլայնելու, ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում տնտեսական ընկերություններ ստեղծելու, արտաբյուջե ձևավորելու, հաստատության ձեռնարկությունում ուսանողների համար պրակտիկ ուսուցում կազմակերպելու հնարավորություն ստեղծելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու, տնտեսական ընկերություններ ստեղծելու կամ նրանց մասնակից դառնալու մեխանիզմների ուսումնասիրություն, դրանց վերաբերյալ առաջարկությունների մշակում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառումների իրականացման արդյունքում կիրականացվի նախնական (արհեստագործական) և միջին մանագիտական ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների և ձևերի ընդլայնման մեխանիզմների ուսումնասիրություն, կմշակվեն դրանց վերաբերյալ առաջարկություններ, ինչը կնպաստի հաստատություններում ինչպես արտաբյուջեի ձևավորմանը, այնպես էլ հաստատության ձեռնարկությունում ուսանողների համար պրակտիկ ուսուցման կազմակերպմանը:

155

**155.1 Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ պարբերությունից և բարձրագույն կրթության ոլորտի 1-ին պարբերությունից:

«Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակն է բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության և ակադեմիական ազատությունների ընդլայնման, արդյունավետ կառավարման, հավասարակշռված հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմների ինստիտուցիոնալ հենքի, իրավական հիմքերի ստեղծման ապահովմանը՝ բարձրագույն կրթության և գիտության ոլորտների բարեփոխումների իրականացման համար:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գործող «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» և «Գիտական և

գիտատեխնիկական գործունության մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտը կանոնակարգող «Կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան դրույթները համահունչ չեն բարձրագույն կրթության և գիտության մասին միջազգային չափանիշներին,չեն նպաստում բարձրագույն կրթության ու գիտության համակարգի ու հաստատությունների մրցունակությանը,չեն ապահովում կամ մասնակի են ապահովում բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտահետազոտական կազմակերպությունների գործունեության համար միասնական մոտեցումների և սկզբունքների կիրառումը ,դրանց արդյունավետ փոխգործակցությունը, բուհ-հետազոտություն-տնտեսություն կապը, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպաիրավական ձևից ու կարգավիճակից կախված բուհերի կառավարման և ինքնուրույնության հետագա զարգացման ապահովման նպատակով նրանց ինքնավարության, ակադեմիական ազատությունների, հաշվետվողականության և ֆինանսավորման անհրաժեշտ լիարժեք մեխանիզմները: Բարձրագույն կրթության կառավարման մոդելի բարեփոխման մասով օրենսդրությամբ անհրաժեշտ ամրագրման և կարգավորման դրույթներից են մասնավորապես՝ բուհերի կազմակերպաիրավական, կառավարություն-նախարարություն-բուհ իրավասության սահմանների, կառավարման մարմինների ու դրանց գործունեության տարանջատման հստակեցումը:

Գիտության ոլորտում հստակեցման կարիք ունեն նաև կառավարություն-պետական կառավարման լիազոր մարմին-գիտահետազոտական կազմակերպություն իրավասության սահմանները, միջազգային չափանիշներին համապատասխան գիտական կադրերի պատրաստման մեխանիզմները, ինչպես նաև գիտության ոլորտում օտարերկրյա ներդրումների հետ կապված հարաբերությունները և կրթություն-գիտություն-տնտեսություն կապի խրախուսման մեխանիզմները:

### 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Արդյունավետ կառավարվող բարձրագույն կրթության համակարգ ապահովելու համար անհրաժեշտ է ««Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ, որն ուղղված կլինի.

- բուհերի ինքնավարության և ակադեմիական ազատությունների ընդլայնմանը,
- հաշվետվողականության և թափանցիկությա մեխանիզմների բարձրացմանը,
- Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բուհերում և դրանց մասնաճյուղերում ուսանողների ակադեմիական առաջխաղացման, շնորհված որակավորման և նրան տրված ավարտական փաստաթղթի տեղեկատվության գրանցման միասնական շտեմարանի ստեղծմանը,
- Բարձրագույն կրթության ոլորտին վերաբերող հիմնական և կիրառվող հասկացությունների (համալսարան (այդ թվում՝հանրային և մասնավոր), կրթական ծրագիր, աստիճան, կրկնակի աստիճանակարգ, որակավորում և այլն) սահմանմանը,
- Բուհերի լիցենզավորման ու հավատարմագրման պայմանների ու պահանջների, ներքին և արտաքին որակի ապահովման (ինչպես նաև՝վերահսկողության մեխանիզմների) ու ընդլայնման հստակ ամրագրմանը,
- Ընդունելության նոր մեխանիզմների ու պայմանների ներդրմանը,
- Բուհերի կառավարման մոդելի բարեփոխման նպատակով նրանց կազմակերպաիրավական ձևերի (այդ թվում՝ ստեղծման, վերակազմակերպման և լուծարման), կառավարման մարմինների ու դրանց գործունեության տարանջատման հստակեցմանը,
- Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված կառուցվածքային փոփոխությունների իրագործման հիմքերը,
- գիտական ենթակառուցվածքների համապատասխանությանն արդի չափանիշներին,

գիտական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ներդրմանը և այլն:

Օրենքի հրապարակվելուց հետո սահմանվում են օրենքի ուժի մեջ մտնելու առնչությամբ ընդունվելիք օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը և դրանց կատարման ժամկետները:

### 2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

«Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում ամբողջական և հստակ կսահմանվեն՝

- բարձրագույն կրթության և գիտության բնագավառներում անհրաժեշտ քաղաքականության իրականացման հիմքերը և պայմանները,

- բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության կատարողականի արդյունքային ցուցիչների /KPI/ հիմքերը,

- կրթական, հետազոտական, տեխնոլոգիական և նորարարական գործունեություն իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատություններին և գիտահետազոտական կազմակերպություններին պետական աջակցության տրամադրման սկզբունքները և մեխանիզմները (օրենքի նախագծով հիմնականում նախատեսվելու են բուհերի ֆինանսավորման և ուսանողներին պետության կողմից կրթաթոշակների տրամադրման նոր սկզբունքների և մեխանիզմների սահմանումը, գիտահետազոտական գործունեության բնագավառում պետության կողմից ֆինանսավորման իրականացում ծրագրային սկզբունքով՝ գիտական փորձաքննության միջոցով),

- բարձրագույն ուսումնական հաստատության և գիտահետազոտական կազմակերպության գործունեության թափանցիկության և հրապարակայնության համար անհրաժեշտ մեխանիզմները և պահանջները, որը կարտացոլի հաստատության պատասխանատվությունը և կատարողականությունը պետության ու հասարակության առջև,

- բարձրագույն կրթության և գիտության բնագավառներում միջազգային պահանջներից ելնելով անհրաժեշտ պետական վերահսկողության իրականացման հիմքերը, սկզբունքները և մեխանիզմները:

**155.2 Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության սկզբունքների և մեխանիզմների վերանայում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 08.02.2019թ. թիվ 65-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.4 կետի՝ բարձրագույն կրթության ոլորտի 1-ին պարբերությունից:

Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության սկզբունքների և մեխանիզմների վերանայումը նպատակ է հետապնդում ստեղծելու ընդունելության նոր համակարգ, նոր մեխանիզմներ ու պայմաններ,ինչը կնպաստի կրթության որակի բարձրացմանը:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության գործընթացը ներառում է բուհերի մասնագիտությունների հայտագրումը, ընդունելության քննությունների կազմակերպումը, անցկացումը, դրանց արդյունքների բողոքարկումը, այդ արդյունքների հիման վրա բուհեր ընդունելության մրցույթի անցկացման և բուհերի ընդունելության արդյունքների հաստատման հետ կապված հարաբերությունները:

Գործող իրավակարգավորումներով բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության միասնական, կենտրոնացված քննությունները կազմակերպում և անցկացնում է «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ներբուհական քննությունները կազմակերպում և անցկացնում են բուհերը: Անվճար և վճարովի ուսուցման ընդունելության մրցույթներն անցկացվում են մեկ փուլով: Ընդունելության քննությունների ընթացքում ձևավորվում է Հանրապետական ընդունող հանձնաժողով, որի որոշմամբ հաստատվում են անվճար և վճարովի ուսուցման համակարգի մրցույթների արդյունքները, վերաբաշխվում են մրցույթի արդյունքներով անվճար, վճարովի ուսուցման համակարգում թափուր մնացած տեղերը, ինչպես նաև անվճար, վճարովի համակարգի պահուստային տեղերը:

Դիմորդը ընդունելության մրցույթին մասնակցում է ընդունելության քննություններից ստացած դրական միավորների գումարով: Բուհերում մասնագիտությունների մրցույթն անցկացվում է մասնագիտությունների համապատասխան ուղղվածությամբ՝ ըստ մասնագիտությունների, մասնագիտությունների խմբերի, ֆակուլտետների (դեպարտամենտների): Մասնագիտությունների մրցույթն անցկացվում է անվճար ուսուցման առաջին տողով հայտագրվածմասնագիտության գերակայությամբ: Առաջին հայտագրված մասնագիտության մրցույթով չանցած դիմորդների համար անվճար և վճարովի ուսուցման մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտում հայտագրված մասնագիտությունների հերթականությանը համապատասխան: Ընդունելության դիմում-հայտում հայտագրված որևէ մասնագիտությամբ (ըստ հայտագրման հերթականության) ընդունված դիմորդը չի մասնակցում հայտագրված հաջորդ մասնագիտությունների մրցույթին:

Ներկայումս դիմորդները բուհերի ընդունելության մրցույթի դիմում-հայտում հայտագրում են մինչև 2 անվճար և մինչև 8 վճարովի մասնագիտություն: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 5-րդ, 6-րդ տեղերում հայտագրված մասնագիտություններով բուհ ընդունվում են շատ քիչ քանակի դիմորդներ, իսկ 7-րդ տեղից հետո հայտագրված մասնագիտություններով՝ գրեթե բացառիկ դեպքերում: 8 մասնագիտություն հայտագրելու հնարավորությունը նվազեցնում է մասնագիտական կողմնորոշմամբ բուհ ընդունվելու հնրավորությունը, քանի որ դիմորդները հաճախ նախընտրած մասնագիտությունից բացի հայտագրում են այնպիսի մասնագիտություններ, որոնք ունեն պարզապես

նույն մրցութային քննությունները: Արդյունքում բազմաթիվ դիմորդներ, դուրս մնալով նախընտրած մասնագիտության մրցույթից, ընդունվում են այլ մասնագիտությունների մրցութային տեղերում: Ընդհանուր մրցույթի անցկացումից հետո տեղի է ունենում թափուր տեղերի մրցույթ՝ բուհ չընդունված դիմորդների համար: Թափուր տեղերի մրցույթը տեղի է ունենում միևնույն սկզբունքով, ինչ ընդհանուր մրցույթը: Այսպիսով հայտագրման այս եղանակը հնարավորություն է տալիս դրական միավորներ ստացած գրեթե բոլոր դիմորդներին ընդունվել բուհ:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության սկզբունքների վերանայմամբ կառաջարկվեն նոր մեխանիզմներ մասնագիտական հստակ կողմնորոշվածությանը նախապատվություն տալու, պատահական կամ չնախընտրած մասնագիտություններով /պատճառը՝ տարբեր մասնագիտություններով ընդունելության նույն քննությունների առկայություն/ բուհ ընդունվելու հնարավորության նվազեցման և հնարավորինս բացառման համար:

Համապատասխան օրենսդրական հիմքեր կստեղծվեն պետության լիազորած համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կողմից քննություններ կազմակերպելու և արդյունքում դրական միավորներ ստացած անձանց սահմանված ձևի վկայագրեր տրամադրելու համար:

Մրցույթի անցկացման հաստատված չափորոշիչների հիման վրա հնարավորություն կընձեռվի բուհերին սահմանելու մրցույթի անցկացման կարգը և ինքնուրույն կազմակերպել ընդունելության մրցույթ, որին կկարողանան մասնակցել վկայագիր ունեցող և բուհի ընդունելության մուտքային պահանջները բավարարող անձինք, միաժամանակ դիմորդների համար, որոնք ընդունելության մրցույթի արդյունքներով սահմանված կարգին համապատասխան իրավունք են ստացել սովորելու պետական բյուջեի ֆինանսավորմամբ մի քանի կրթական ծրագրերի կամ տարբեր բուհերի նույն ոլորտի կրթական ծրագրով նախատեսելով պահանջ մինչև համապատասխան կրթական աստիճանի ընդունելության վերջնաժամկետը ընտրելու մեկ բուհ (կրթական ծրագիր), որում ցանկանում են ստանալ բարձրագույն կրթություն:

Միջոցառման սահմանված ժամկետը պայմանավորված է նրանով, որ «Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ նախատեսվում է վերանայել ուսումնական հաստատություններ ընդունելության սկզբունքներն ու մեխանիզմները, որի նպատակն է ընդունելության նոր մուտքային պահանջների, մրցույթի անցկացման նոր պայմանների սահմանում, դիմորդների կողմից մասնագիտության ընտրության հնարավորությունների ընդլայնում՝ այն է ստեղծել նոր մեխանիզմներ մասնագիտական հստակ կողմնորոշվածությանը նախապատվություն տալու, պատահական կամ չնախընտրած մասնագիտություններով /պատճառը՝ տարբեր մասնագիտություններով ընդունելության նույն քննությունների առկայություն/ բուհ ընդունվելու հնարավորության նվազեցման և հնարավորինս բացառման համար, մրցույթի անցկացման հաստատված չափորոշիչների հիման վրա հնարավորություն ընձեռելու բուհերին սահմանել մրցույթի անցկացման կարգ և ինքնուրույն կազմակերպել ընդունելության մրցույթ, որին կկարողանան մասնակցել բուհի ընդունելության մուտքային պահանջները բավարարող անձինք: Վերոնշյալ բարեփոխումների բնականոն ներդրման համար անհրաժեշտ է որոշակի ժամանակահատված բարձրագույն կրթության համակարգը պատշաճ նախապատրաստելու:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ընդունելության նոր մուտքային պահանջների, մրցույթի անցկացման նոր պայմանների սահմանում, դիմորդների կողմից մասնագիտության ընտրության հնարավորությունների ընդլայնում:

**156**

**156.1 «Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության պետական ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է լեզվի բնագավառում կառավարման արդյունավետության բարձրացումը և հայերենի՝ որպես պետական լեզվի գործառության ապահովումը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում:

Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության մշակման և իրականացման պետական

պատվերն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով *(հավելված, 9-րդ մաս)*:

Միջոցառումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019-2023 թթ. գործունեության ծրագրի «4.4 Կրթությունը և գիտությունը» (գիտության ոլորտ) և «4.5. Մշակույթը» (մշակույթի հանրահռչակման ոլորտ) կետերով ամրագրված լեզվի բնագավառում երկարաժամկետ լեզվական պետական քաղաքականություն իրականացնելու՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության պարտավորությամբ, ինչպես նաև լեզվի բնագավառում առկա խնդիրների ու կարգավորումների համակարգային վերլուծությամբ ու գնահատմամբ արդյունավետ լեզվական պետական քաղաքականություն իրականացնելու, համակարգված կարգավորում երաշխավորող մեխանիզմներ ներդնելու անհրաժեշտությամբ:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Հայաստանի Հանրապետության 2002-2005 թվականների լեզվական քաղաքականության պետական ծրագրի» գործողության ժամկետն ավարտվել է 2005 թվականին, որից հետո լեզվական քաղաքականության պետական ծրագիր չի ընդունվել: «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 25-րդ կետի ուժով ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչությունը գործում է որպես Լեզվի կոմիտե: 2018 թ. մարտի 23-ին ընդունված ՀՕ-305-Ն օրենքով լրացում կատարվեց «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, որով նախատեսվեց նաև Լեզվի կոմիտեի՝ լեզվական քաղաքականության պետական ծրագրի իրականացումն ապահովելու պարտականությունը:

Լեզվի բնագավառում հայեցակարգային մոտեցումների, լեզվական քաղաքականության պետական ծրագրի բացակայության, ինչպես նաև ֆինանսական սուղ միջոցների պայմաններում պետական լեզվի գործառության ապահովմանն առնչվող միջոցառումներն առավելապես իրավիճակային բնույթ են ունեցել, իսկ հանրային կյանքի նոր ձևավորվող իրողություններին անհամաչափ արձագանքը բարդացրել է իրավիճակը՝ համակարգային լուծումների անհրաժեշտություն ստեղծելով:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության պետական ծրագրում նախանշվող նպատակների իրականացումն ապահովելու համար, ըստ առաջնահերթությունների՝ նախատեսվում են միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝

1) լեզվի բնագավառը կարգավորող օրենսդրական փոփոխություններ.

2) գրական հայերենի (արևելահայերենի և արևմտահայերենի) կանոնարկման գործուն մեխանիզմների ներդրում.

3) լեզվական հարաբերություններում հայերենի լիակատար գործառության ապահովումը երաշխավորող մեխանիզմների ներդրում (այդ թվում՝ հայերենի գործառությանն առնչվող պետական և միջազգային ստանդարտների մշակում).

4) թվային տիրույթում հայերենի հետևողական ու կայուն ներկայությունը երաշխավորող գործողություններ.

5) Հայաստանի Հանրապետությունում լեզվավիճակի շարունակական մշտադիտարկման ու գնահատման, լեզվական քաղաքականության իրականացման պատշաճ հաշվետվողականության ապահովում, մասնավորապես՝ ՀՀ լեզվավիճակի տարեկան զեկույց:

Գումարը նախատեսվում է հատկացնել ՀՀ 2019 թ. պետական բյուջեի «Կրթության և գիտության ոլորտի այլ ծրագրեր» միջոցառման շրջանակում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության պետական ծրագրի ընդունմամբ հնարավոր կլինի՝

1) բարձրացնել լեզվի բնագավառում կառավարման արդյունավետությունը և ապահովել հայերենի՝ որպես պետական լեզվի փաստացի գործառությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում.

2) բարելավել հայերենի՝ որպես պետական լեզվի գործառությունը ապահովող օրենքները, իրավական հիմքեր ստեղծել «Լեզվի մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունման համար, վերացնել հակասությունները «Լեզվի մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի միջև.

3) ապահովել գրական հայերենի (արևելահայերենի և արևմտահայերենի) կանոնարկումը՝ մասնագիտական խորհրդի ստեղծմամբ.

4) մշակել և ներդնել հայերենի գործառությունը ապահովող պետական և միջազգային ստանդարտներ.

5) ապահովել թվային տիրույթում հայերենի կայուն և զարգացող ներկայությունը.

6) ապահովել ՀՀ լեզվավիճակի շարունակական մշտադիտարկում ու գնահատում, լեզվական քաղաքականության իրականացման պատշաճ հաշվետվողականություն՝ ՀՀ լեզվավիճակի տարեկան զեկույցի հրապարակմամբ:

**156.2 «Հայերենի ընդհանուր տերմինարան» էլեկտրոնային միասնական շտեմարանի մշակում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը:

Միջոցառումը պայմանավորված է լեզվի բնագավառում երկարաժամկետ լեզվական պետական քաղաքականություն իրականացնելու, հանրային կյանքի նոր իրողություններին համաչափ արձագանքելու նպատակադրությամբ՝ արտացոլված ՀՀ կառավարության 2019-2023 թթ. գործունեության ծրագրի «4.4 Կրթությունը և գիտությունը» կետի երրորդ պարբերության մեջ՝ կրթության բովանդակության արդիականացումը և անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացումը առանցքային համարելու, ինչպես նաև «4.4 Կրթությունը և գիտությունը» կետի գիտության բաժնի վեցերորդ ենթակետով՝ հայերենի՝ իբրև ժամանակակից գիտության լեզվի գործառության ու զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու հանձնառություններով:

Միջոցառման նպատակը արդի հայերենի մասնագիտական (ճյուղային) բառարանների, տերմինարանների մեկտեղումն է էլեկտրոնային բառարանագրության և շտեմավորման արդիական տեխնոլոգիական լուծումներին համապատասխան, որը անհրաժեշտ հիմքեր կստեղծի շտեմարանի շարունակական ընդլայնման համար: Արդի հայերենում գործածվող տերմինների շտեմարանը ուսումնական, գիտատեխնիկական գործունեության ոլորտներում հայերենի լիակատար գործածությունը, ինչպես նաև թվային տիրույթում մասնագիտական հայերենի կայուն ներկայությունն ու զարգացումը երաշխավորելու կարևոր բաղադրիչ է:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Պետական կառավարման մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվության ստանդարտացման և թվայնացման, համապարփակ տեղեկատվական շտեմարանների ձևավորման, տեղեկատվական համակարգերի փոխադարձ համալրման գործողություններում եթե անգամ քննարկվում է դրանց լեզվական բաղադրիչը, ապա այն չի դիտարկվում միասնական, ստանդարտացված բառարանագրական արդիական մոտեցումներ կիրառող լուծումների հենքի վրա: Բացի այդ, լեզվական պետական քաղաքականություն վարելու տեսանկյունից պատշաճ ուշադրություն չի հատկացվել տերմինաստեղծման գործընթացին, որը խնդիրներ է ստեղծում ներ- և միջպետական իրավական, տեխնիկական կարգավորումներ ենթադրող փաստաթղթերում, ստանդարտներում, ինչպես նաև կրթության և գիտության ոլորտներում:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է գործարկել «Հայերենի ընդհանուր տերմինարան» էլեկտրոնային միասնական շտեմարանը, որը կամփոփի արդի գրական հայերենի գոյություն մասնագիտական բառարանները, տերմինային ցանկերը և անհրաժեշտ նվազագույն հիմք կապահովի առկա տերմինացանկը մեկտեղելու, տերմինների առցանց հասանելիությունն ապահովելու ու հնարավորինս միասնականացնելու, ինչպես նաև շարունակաբար ընդլայնելու համար:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.**

Միջոցառումը թույլ կտա ունենալ՝

- հայերեն տերմինների շարունակ թարմացվող և ընդլայնվող էլեկտրոնային միասնական շտեմարան.
- թվային տիրույթում մասնագիտական հայերենի հիմնարար ներկայությունը երաշխավորող էլեկտրոնային գործիք.
- մասնագիտական հայերենի կանոնարկումը երաշխավորող կայուն մեխանիզմ:

**157**

**157.1 « ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին » ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**

**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է կրթական ծրագրերի արդիականացումը՝ ուղղված տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին:

Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ

| | |
|---|---|
| | հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ պարբերության և հանրակրթության ոլորտի 6-րդ կետի պահանջներից:<br>Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության սահմանված պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, հանրակրթական նդպրոցի շրջանավարտին ներկայացվող ընդհանրական պահանջները վերանայելու, բարելավելու և կրթության արդի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ կառավարության համապատասխան որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Հանրակրթության պետական չափորոշիչն ամբողջովին չի ապահովում հանրակրթական հիմնական ծրագրերի՝ փոփոխությամբ նախատեսվող բաղադրիչները:<br><br>**1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Հանրակրթության պետական չափորոշչի պահանջների վերանայում՝ հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության սահմանված պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, հանրակրթական դպրոցի շրջանավարտին ներկայացվող ընդհանրական պահանջները վերանայելու, բարելավելու նպատակով:<br>Միջոցառումների իրականացմանը կաջակցեն ՀՀ Եվրամիությունը և Համաշխարհային բանկը՝ «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակում:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության, դրա սահմանված նվազագույն և առավելագույն ծավալի համապատասխանեցում արդի ոլորտի գիտակցական պատկերացումներին: |
| | **<u>157.2 Առարկայական ծրագրերի մշակում և հաստատում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է կրթական ծրագրերի արդիականացումը՝ ուղղված տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին:<br>Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ պարբերության և հանրակրթության ոլորտի 6-րդ կետի պահանջներից:<br>Կրթության բովանդակության համապատասխանության, համաշխարհային մանկավարժական նորօրյա ձեռքբերումների արծանագրման նպատակով անհրաժեշտ է փոփոխություններ իրականացնել գործող ծրագրերում:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Առարկայական ծրագրերը, փոխպայմանավորված տեղեկատվության ավելացմամբ, փոփոխությամբ, ունեն քննարկման, լրամշակման և հաստատման անհրաժեշտություն:<br><br>**1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Առարկայական ծրագրերը, ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած գերակայությունների, առաջնահերթությունների շրջանակում կլրամշակվեն:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Արդյունքում առարկայական ծրագրերը կհամապատասխանեն ՀՀ ԿԳՆ-ի սահմանած գերակայություններին և առաջնահերթություններին: |
| | **<u>157.3 ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. մարտի 30-ի «Նախադպրոցական կրթության</u>** |

| | |
|---|---|
| | **պետական կրթական չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 257 հրամանում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի հաստատում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է կրթական ծրագրերի արդիականացումը՝ ուղղված տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին:<br>Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ պարբերության և հանրակրթության ոլորտի 6-րդ կետի պահանջներից:<br>Նախադպրոցական կրթության մեջ ընդգրկված երեխաների կարիքները և հետաքրքրությունները, սոցիալականացումն առավել արդյունավետ իրականացնելու և նախադպրոցական կրթության վերաբերյալ մանկավարժագիտական ձեռքբերումներն ու նորարարությունները , ըստ անհրաժեշտության, ներառելու նպատակով անհրաժեշտ է վերանայել ն:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները նախադպրոցական կրթության արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունից ելնելով՝ ունեն վերանայման, լրամշակման կարիք:<br><br>**1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչների վերնայմամբ կիստակեցվեն ծրագրերը և բովանդակությունը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Նախադպրոցական պետական չափորոշչի վերանայման արդյունքում նախադպրոցական կրթության մեջ առավել արդյունավետ կկազմակերպվեն երեխաների սոցիալականացման հարցերը, նախադպրոցական կրթության վերաբերյալ մանկավարժագիտական ձեռքբերումներն ու նորարարություններ կներառվեն ծրագրերում: |
| | **157.4 Չափորոշչից բխող կրթական ծրագրերի վերանայում և հաստատում ՀՀ ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝**<br><br>Չափորոշչով պահանջների իրականացում:<br><br>**1.1. Կարգավորման ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները**<br><br>Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչների վերանայման արդյունքում ծրագրերի վերանայման անհրաժշետություն կառաջանա:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Միջոցառման իրականացման ապահովմամբ կկարգավորվեն չափորոշչի և ծրագրերի համապատասխանությունը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչների վերնայմամբ ծրագրերն ու ծրագրերի բովանդակությունը կհապատասխանեցվի չափորոշինչներով սահմանված բաղադրիչներին: |
| **158** | **158.1 ՀՀ մարզերի զարգացման ուղղություններից և աշխատաշուկայի պահանջներից ելնելով՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերի վերանայում, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու և ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N73-** |

**Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է կրթական ծրագրերի արդիականացումը՝ ուղղված տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ և 5-րդ պարբերություններից, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերից:

Մասնագիտությունների ցանկերի վերանայումը՝ տարածաշրջանային և ոլորտային զարգացմանը համապատասխան, կնպաստի աշխատաշուկայում պահանջարկ չվայելող մասնագիտությունների բաժինների փակմանը և պետության, ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող, ինչպես նաև աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների գծով նոր մասնագիտությունների ընդգրկմանը ցանկերում, ՄԿՈՒ ոլորտի մասնագիտությունների արդիականացմանը:

**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկերը վերանայվել են 2018 թվականին: Սակայն վերջին երկու տարիներին ՄԿՈւ համակարգում իրականացված և իրականացվելիք բարեփոխումները, կատարված ուսումնասիրությունները, ինչպես նաև ՆՄՄԿՈւ հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունները ՀՀ մարզային առանձնահատկություններին համապատասխանեցնելու գործընթացը առաջացրել են անհրաժեշտություն վերանայել մասնագիտությունների ցանկը:

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերի վերանայումը և համապատասխանաբար «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու և ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N73-Ն որոշման մեջ փոփոխությունների կատարումը հնարավորություն են ստեղծում Հայաստանում իրականացվող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը դարձնել առավել գրավիչ և համահունչ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման միտումներին և ժամանակակից զարգացումներին՝ կանոնակարգելով նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատություններում տրամադրվող կրթական ծառայությունների մատուցումը ըստ ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Տնտեսության գերակա ոլորտների, հետագա զարգացման միտումների, մարզերի զարգացման ծրագրերի, շահագրգիռ մարմիններից ստացված առաջարկությունների ուսումնասիրություն, դրա հիման վրա նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների ցանկերի վերանայում, աշխատաշուկայում պահանջարկ չվայելող մասնագիտությունների հանում ցանկից, նոր մասնագիտությունների ընդգրկում, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը:**

Միջոցառման իրականացման արդյունքում պարբերաբար կվերանայվեն նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը, կհանվեն պահանջարկ չվայելող մասնագիտությունները և կներառվեն աշխատաշուկայում պահանջարկ ունեցող նոր մասնագիտություններ, ինչը

| | |
|---|---|
| | կնպաստի մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտի մասնագիտությունների արդիականացմանը, գրավչության աճին, աշխատաշուկայի պահանջներին արագ արձագանքելուն, աշխատաշուկային համապատասխանության ցուցանիշի բարելավմանը, շրջանավարտների զբաղունակության խթանմանը: |
| | **<u>158.2 Նախնական (արհեստագործական) և միջին մանգիտական ուսումնական հաստատություններում ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող, աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների գծով նոր մասնագիտությունների ներդրում և ուսուցման կազմակերպում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ և 5-րդ պարբերություններից, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետով, CEPA-ի ճանապարհային քարտեզի 94-րդ հոդվածի (g) կետով:<br>ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող, ինչպես նաև աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների գծով ուսուցման կազմակերպումը՝ հաշվի առնելով գոյություն ունեցող նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցը, կնպաստի ուսումնական հաստատություններում պետության, ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող, ինչպես նաև աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների գծով նոր մասնագիտությունների ներդրմանը, ուսուցանվող մասնագիտությունների արդիականացմանը:<br>Միջոցառման իրականացումը հնարավորություն կտա լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են գրավչության աճը, աշխատաշուկայի պահանջներին արագ արձագանքելը, աշխատաշուկային համապատասխանության ցուցանիշի բարելավումը, շրջանավարտների զբաղունակության խթանումը:<br><br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br><br>Կրթության ոլորտում ամենից շատ քննարկվող հարցերից է, թե որքանով են հաշվի առնվում աշխատաշուկայի պահանջները մասնագետներ պատրաստելիս: Սոցիալ-տնտեսական զարգացմամբ պայմանավորված մի շարք մասնագիտություններ կորցնում են արդիականությունը, առաջանում են նոր մասնագիտություններ: 2017 թվականին 25 ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում ներդրվել են մարզերի զարգացման և պետության կողմից գերակա ճանաչված ուղղություններին համապատասխան 39 նոր մասնագիտություն:<br>Գերակա նպատակ ունենալով ժամանակի պահանջներին և չափանիշներին համապատասխան մասնագետներ պատրաստելը՝ վերջին տարիներին հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմամբ պայմանավորված մի շարք նոր մասնագիտությունների պահանջարկի մեծացումը, կատարված ուսումնասիրությունները, ՆՄՄԿՈւ հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունները ՀՀ մարզային առանձնահատկություններին համապատասխանեցնելու հանգամանքը առանցքային են դարձնում ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում աշխատաշուկայում պահանջվող մասնագիտությունների գծով ուսուցման կազմակերպումը, ինչը հնարավորություն է ստեղծում նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը դարձնել առավել գրավիչ և համահունչ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման միտումներին և ժամանակակից զարգացումներին՝ կանոնակարգելով նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատություններում տրամադրվող կրթական ծառայությունների մատուցումը՝ ըստ ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների, նպաստելով նաև շրջանավարտների զբաղվածությանը:<br><br>**<u>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները</u>**<br><br>Տնտեսության գերակա ոլորտների, հետագա զարգացման միտումների, մարզերի զարգացման ծրագրերի, մրցունակության զեկույցի ուսումնասիրություն, դրա հիման վրա համայնքի կարիքներին համապատասխան մասնագիտությունների զարգացման նպատակով՝ ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների զարգացման աշխարհագրական քարտեզի հստակեցում, ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում պահանջարկ չվայելող մասնագիտությունների բաժինների փակում, նոր ներդրված մասնագիտությունների գծով ուսուցման կազմակերպում, նոր ներդրված մասնագիտությունների գծով ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերի տրամադրում, |

մասնագետների պատրաստում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը:**

Միջոցառման իրականացման արդյունքում ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում կկազմակերպվի ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող, ինչպես նաև աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների առնվազն 25 նոր մասնագիտությունների գծով ուսուցում, ինչը կնպաստի ուսումնական հաստատություններում պետության, ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող, ինչպես նաև աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների գծով նոր մասնագիտությունների ներդրմանը, ուսուցանվող մասնագիտությունների արդիականացմանը, շրջանավարտների զբաղունակության խթանմանը:

**158.3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կազմակերպման մոդելի մշակում և փորձարարական ներդրում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է աշխատաշուկայում ՄԿՈւ ոլորտի մրցունակ կադրերի բացակայությամբ, ժամանակակից մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների պակասով, ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 5-րդ պարբերությամբ, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներով, «Սոցիալական գործընկերության» հայեցակարգով, ինչպես նաև ՀՀ սոցիալ-տնտեսական ներկայիս մակարդակով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտություն է առաջացել մշակել ուսումնական գործընթացի կազմակերպման մոդել և ընտրված ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում 5 մասնագիտությունների գծով փորձարարական կարգով ներդնել և ընդլայնել երկակի (դուալ) ուսուցման համակարգը, ինչը հնարավորությունը կտա ուսումնական գործընթացին զուգահեռ իրականացնել գործնականի վրա հիմնված ուսուցում: Գործատուի մոտ աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպումը կնպաստի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացմանը, սովորողների մոտ համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գործատուների ներգրավմանը և սոցիալական գործընկերության ընդլայնմանը, շրջանավարտների՝ իրենց մասնագիտությամբ զբաղունակությանը, ՄԿՈՒ ոլորտի գրավչության բարձրացմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը և որակավորումների փոխճանաչմանը:

Նման գործընթացը երաշխավորում է աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետների պատրաստումը բացառապես աշխատաշուկայի կողմից մասնագետներին ներկայացվող պահանջներին համապատասխան, ինչը կարևոր է նրանց մասնագիտական գործունեության, առաջխաղացման, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գործում իրենց անմիջական ազդեցությունն ունեցող կրթության ոլորտում առկա մի շարք խնդիրներ լուծելու, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացմանը, գործատուների ներգրավմանը և սոցիալական գործընկերության ընդլայնմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը և որակավորումների փոխճանաչմանը նպաստելու նպատակով՝ ՆՄՄԿ համակարգի զարգացման ընթացքում գերակա միտում ունի մասնագիտական կրթության համակարգում աշխատանքի վրա հիմնված կրթական համակարգի տարրերի ներդրման և կիրառման հնարավորությունների ընդլայնումը, ինչը թույլ կտա մի կողմից գործատուներին ներգրավված լինել կրթական գործընթացներում, ուսումնական հաստատությունների հետ համատեղ մասնակցել նորարարական նախագծերին, բարելավել սեփական տեխնոլոգիաներն ու արտադրանքը, իսկ մյուս կողմից կնպաստի սովորողների մոտ տեսական և գործնական համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը, զբաղվածության խթանմանը:

2017-2018թթ. նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական թվով 15 ուսումնական հաստատությունում 11 մասնագիտությունների գծով ներդրվել է երկակի ուսուցման համակարգ:

Հաշվի առնելով, որ ՆՄՄԿ համակարգը պատասխանատու է այն ռեսուրսի որակի համար, առանց որի հնարավոր չէ ապահովել տնտեսության և ամբողջ հասարակության նորարարական զարգացումը՝ երկակի (դուալ) ուսուցման համակարգի ընդլայնումը՝ որպես համակարգի զարգացման, շրջանավարտների զբաղվածության ապահովման, գործատուների ներգրավման կարևորագույն նախադրյալ, հանդիսանում է ոլորտի գերակա

ուղղություններից, որի զարգացման փուլում առանցքային գործոններ են կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավումն ուսուցման գործընթացին և վարպետային ուսուցման զարգացումը: Միջոցառումը կապահովի ՆՄՄԿ համակարգի զարգացման համար ձեռներեցության, պետության և ուսումնական հաստատությունների ռեսուրսների միավորմանը և կնպաստի որակյալ կադրերի պատրաստման համար առկա ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Պետության, ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտությունների և դրանց գծով ուսուցում իրականացնող ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների ընտրություն, ընտրված ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում փորձարարական երկակի ուսուցման համակարգի (դուալ) ուսումնամեթոդական փաստաթղթերի փաթեթ մշակող աշխատանքային խմբերի ձևավորում, տվյալ ոլորտում ուսումնական հաստատություն-մասնավոր հատվածի հիմքերի ստեղծում, աշխատանքային խմբերի կողմից մշակված կրթական ծրագրերի, ուսումնական պլանների, պրակտիկաների կազմակերպման նոր մեխանիզմների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ԿԳ նախարարի հաստատմանը, ընտրված ՆՄՄԿՈՒ ուսումնական հաստատություններում ընտրված մասնագիտությունների գծով փորձարարական կարգով երկակի (դուալ) ուսուցման համակարգի ներդրում, աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետների պատրաստում բացառապես աշխատաշուկայի կողմից մասնագետներին ներկայացվող պահանջներին համապատասխան:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը:**

Միջոցառման իրականացման արդյունքում կլուծվեն ՀՀ կրթության ոլորտում առկա մի շարք խնդիրներ, որոնք իրենց անմիջական ազդեցությունն են ունենում ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գործում, ինչը կնպաստի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացմանը, սովորողների մոտ համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գործատուների ներգրավմանը և սոցիալական գործընկերության ընդլայնմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը և որակավորումների փոխճանաչմանը:

**158.4. Օտար լեզուներ դասավանդող մանկավարժական կազմի կարողությունների հզորացում, կատարելագործում, ուսումնական նյութերի արդիականացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի մասնագիտական կրթության 1-ին պարբերությունից:

Լեզուների իմացությունը մեծ դեր ունի միջմշակութային հաղորդակցությունը և համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու առումով: Ժամանակակից հասարակություններին բնորոշ է միջպետական հարաբերությունների ընդլայնումը, առևտրատնտեսական կապերի խորացումը, գիտության և տեխնիկայի առաջընթացը և գիտատեխնիկական տեղեկատվության պարբերական փոխանակումը: Այս տեսանկյունից ավելի մեծ կարևորություն է ստանում օտար լեզուների դերը՝ որպես աշխարհում գիտատեխնիկական առաջընթացի, սոցիալ-տնտեսական զարգացումների և միջմշակութային հարաբերությունների, ինչպես նաև տարբեր մշակույթների ներկայացուցիչների շփման, հաղորդակցման գործուն միջոց:

Օտար լեզուների տիրապետումը կարևոր է նաև տարբեր մասնագետների համար՝ իրենց մասնագիտության մեջ միջազգային զարգացումներին հետևելու, այլալեզու գործընկերների հետ շփումների, միջազգային հարթակներում սեփական փորձը և ձեռքբերումները ներկայացնելու, այլոց փորձին ծանոթանալու և այլ նկատառումներով: Համակարգի գերակա խնդիրներից է մեր երկրում բազմալեզվության զարգացման խթանումը՝ պահպանելով մայրենի լեզուն:

**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Օտար լեզուների տիրապետումը կարևոր է նաև տարբեր մասնագետների համար՝ իրենց մասնագիտության մեջ միջազգային զարգացումներին հետևելու, այլալեզու գործընկերների հետ շփումների, միջազգային հարթակներում

սեփական փորձը և ձեռքբերումները ներկայացնելու, այլոց փորձին ծանոթանալու և այլ նկատառումներով: Կրթական բարեփոխումներից հետո ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում օտար լեզուների դասավանդման ասպարեզում որակական լուրջ տեղաշարժեր են կատարվել, որոնք դեռևս բավարար չեն: 21-րդ դարը, որպես միջազգային, միջմշակութային հաղորդակցությունների և տեղեկատվության ակտիվ փոխանակման դար, նոր մարտահրավերներ է առաջացնում ազգերի և պետությունների համար և այդ համատեքստում, առաջնային է լեզվական պատնեշների հաղթահարումը: Ակնհայտ է, որ նոր ժամանակների պահանջները բավարարելու համար օտար լեզուների դասավանդման նկատմամբ վերաբերմունքի արմատական փոփոխությունն անհրաժեշտություն է:Ուստի ժամանակի պահանջներից հետ չմնալու, ինչպես նաև կրթական ընդհանուր գործընթացը բարելավելու համար այսօր անհետաձգելի անհրաժեշտություն է խրախուսել հասարակության յուրաքանչյուր անդամի, և հատկապես երիտասարդությանը սովորելու և կիրառելու տարածաշրջանային և միջազգային հաղորդակցում ապահովող օտար լեզուներ, որոնք կարող են իրենց նպաստը բերել ինչպես անձի ձևավորման ու զարգացման, այնպես էլ հասարակության առաջընթացի գործում:

Համակարգի գերակա խնդիրներից է մեր երկրում բազմալեզվության զարգացման խթանումը՝ պահպանելով մայրենի լեզուն:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օտար լեզուների դասավանդման նկատմամբ վերաբերմունքի արմատական փոփոխություն, մասնագետների վերապատրաստում, ուսումնական նյութերի մշակում, ինչը կնպաստի անձի ձևավորմանն ու զարգացմանը, կրթական ընդհանուր գործընթացի բարելավմանը, հասարակության առաջընթացին, իրենց մասնագիտության մեջ միջազգային զարգացումներին հետևելուն, այլալեզու գործընկերների հետ շփումներին, շրջանավարտների զբաղունակությանը, միջազգային հարթակներում սեփական փորձը և ձեռքբերումները ներկայացնելուն:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը:**

Միջոցառման իրականացման արդյունքում յուրաքանչյուր տարի կիրականացվի ՆՄՄԿ ուսումնական հաստատություններից օտար լեզվի առնվազն 15 դասավանդողների վերապատրաստում, 1-2 ուսումնական նյութերի մշակում և տպագրում:

**159**

**159.1 Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին համապատասխան որակավորումների ոլորտային շրջանակների (ՈՈՇ) մշակում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է կրթական ծրագրերի արդիականացումը՝ ուղղված տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ պարբերությունից և բարձրագույն կրթության ոլորտի 2 և 4-րդ պարբերություններից:

Որակավորումների ոլորտային շրջանակի մշակման նպատակն է ՀՀ բուհական համակարգում և աշխատաշուկայում Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) գործնական կիրառության ապահովելիությունը: Որակավորումների ոլորտային շրջանակները (ՈՈՇ) տարբեր մասնագիտական ոլորտների համար նախատեսված յուրօրինակ անցումային կապակցող գործիք կհանդիսանան ՈԱՇ-ի և մասնագիտական բնագավառի ու կրթական ծրագրի միջև:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս առկա չեն որակավորումների ոլորտային շրջանակների, ուսանողի անհատական կրթական հետագծի մոդելի մշակման համար անհրաժեշտ իրավական հիմքերը, ինչպես նաև ասպիրանտուրան, որպես բարձրագույն կրթության երրորդ աստիճան, օրենսդրորեն ամրագրված չէ:

Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի առաջնային խնդիրներից են բարձրագույն կրթության բովանդակային հենքի և կրթական գործընթացի բարելավումը, արդիականացումը, որակի ապահովումը և բարձրագույն կրթության երրորդ աստիճանի /ասպիրանտուրա/ ազգային քաղաքականության բարելավումը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Բարձրագույն կրթության բովանդակային հենքի, կրթական գործընթացի բարելավման, արդիականացման և

ասպիրանտուրան որպես բարձրագույն կրթության երրորդ աստիճան ամրագրելու համար ««Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում ամրագրվել են համապատասխան դրույթներ, որոնք հնարավորություն կընձեռեն որակավորումների ոլորտային շրջանակների և ուսանողի անհատական կրթական հետագծի մոդելի մշակմանը, ինչպես նաև կստեղծի հիմքեր երրոդ աստիճանը կարգավորող օրենսդրական դաշտի համապատասխանեցմանը Ձալցբուրգյան սկզբունքներին: Միջոցառումը կիրականացվի ՀՀ պետական բյուջեի «Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ» միջոցառման շրջանակում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման կատարման արդյունքում կմշակվեն

- Որակավորումների ոլորտային շրջանակները՝ որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան, որոնք համապատասխանեցված կլինեն աշխատաշուկայի փոփոխվող պահանջարկներին:
- Ուսանողի անհատական կրթական հետագծի մոդելը, որը հնարավորություն կտա ուսանողին ուղղակի մասնակցություն ունենալ իր անհատական ուսումնական պլանի ձևավորմանը՝ այդ թվում ուսումնական պլանում ընդգրկված առարկաների ընտրությանը:
- Ձալցբուրգյան սկզբունքներին համապատասախան բարձրագույն կրթության երրոդ աստիճանի /ասպիրանտուրա/ ոլորտը կարգավորող իրավական ակտեր:

**159.2 ՀՀ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի /ասպիրանտուրա/ բարեփոխումների հայեցակարգի մշակումև հաստատում ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է կրթական ծրագրերի արդիականացումը՝ ուղղված տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ պարբերությունից և բարձրագույն կրթության ոլորտի 2-րդ և 3-րդ պարբերություններից:

Միջոցառման նպատակն է հանդիսանում բարձրագույն կրթության բովանդակային հենքի և կրթական գործընթացի բարելավումը երրորդ աստիճանում /ասպիրանտուրա/:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս առկա չեն անհրաժեշտ իրավական հիմքեր՝ ասպիրանտուրան, որպես բարձրագույն կրթության երրորդ աստիճան ամրագրելու համար: «Բարձրագույն և գիտահետազոտական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծում ասպիրանտուրան սահմանված է բարձրագույն կրթության երրորդ աստիճան: Սահմանված կարգով այն ընդունվելուց հետո անհրաժեշտություն է առաջանալու մշակել ՀՀ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի /ասպիրանտուրա/ բարեփոխումների հայեցակարգ, որի շրջանակներում հստակեցվելու են երրորդ աստիճանի զարգացման ուղղությունները:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՀՀ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի /ասպիրանտուրա/ բարեփոխումների հայեցակարգի մշակումը հնարավորություն է ընձեռելու հստակեցնել ՀՀ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի /ասպիրանտուրա/ բարեփոխումների զարգացման ուղղությունները՝ համապատասխանեցնելով դրանք Եվրոպական բարձրագույն կրթական և հետազոտական տարածքի պահանջներին: Միջոցառման կատարման համար սահմանված համապատասխան ժամկետներում կիրականացվեն հայեցակարգի մշակման աշխատանքներ, մինչ այդ օրենքով կամրագրվեն հայեցակարգի ընդունման համար լիազորող նորմեր:

**Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

| | |
|---|---|
| | ՀՀ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի /ասպիրանտուրա/ բարեփոխումների հայեցակարգի մշակման արդյունքում հստակեցվելու են ՀՀ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի /ասպիրանտուրա/ բարեփոխումների զարգացման ուղղությունները: |
| **160** | **160.1 Պետության համար միջազգայնացման թիրախային ուղղությունների և նպատակների սահմանմամբ, համապատասխան միջավայրի ձևավորմանը նպաստող ՀՀ բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային ռազմավարության մշակում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է կրթական ծրագրերի արդիականացումը՝ ուղղված տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին:<br>Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության ոլորտի 5-րդ պարբերությունից:<br>Միջոցառման նպատակն է նպաստել Հայաստանի բարձրագույն կրթական և հետազոտության համակարգի ճանաչման ու մրցունակության բարձրացմանը՝ բուհական կառուցվածքային ու մշակութային բաղադրիչներում միջազգայնացման զարգացման և ինտեգրման միջոցով:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության միջազգայնացումը առանց որակյալ բարձրագույն կրթության ծրագրերի և միջազգայնորեն մրցունակ հետազոտական միջավայրի առկայության ներկայումս անհնար է դիտարկել: Այսօր ՀՀ բուհերը կանգնած են լուրջ մարտահրավերների առջև կրթությունը և հետազոտությունը միջազգայնացման նոր մակարդակի բարձրացնելու, նորարարական և ստեղծագործ մոտեցումներ ցուցաբերելու, ենթակառուցվածքները բարելավելու, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը և նորարարությունները խթանելու ուղղությամբ, որոնք միջազգայնացման կարևոր նախապայմաններից են: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ բացի վերոհիշյալ հանգամանքներից, ներկայումս օտարերկրյա ուսանողների կողմից Հայաստանի Հանրապետությունում ուսումնառելու ոչ բավարար հետաքրքրվածությունը պայմանավորված է նաև պետությունում օտարերկրյա ուսանողների համար ոչ բարենպաստ պայմաններով, այն է՝ հանրակացարանների բացակայություն, կրթաթոշակների անհամապատասխանելիություն ՀՀ շուկայական գներին, ուսանողական արտոնությունների համակարգի բացակայություն, օտար լեզվով կրթության կազմակերպման ոչ բավարար հնարավորություններ, մարքեթինգի բացակայություն և այլն:<br>Բոլոնյան գործընթացին միանալուց հետո Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններն առաջընթաց ապահովելու հարցում հայտնվեցին անորոշ վիճակում՝ ազգային մակարդակով համապատասխան նպատակներ սահմանած չլինելու պատճառով: Նոր միջավայրը պարտադրեց ունենալ նոր հմտություններ և կարողություններ՝ ինստիտուցիոնալ մակարդակում միջազգայնացման խնդիրները լուծելու համար: Միևնույն ժամանակ, ինստիտուցիոնալ մակարդակում անհրաժեշտ են նաև բավարար հմտություններ ու կարողություններ՝ միջազգայնացումը պատշաճ մակարդակով համակարգելու համար:<br>Կրթական ծրագրերի բովանդակության տարբերությունները, միջազգայնացման վերաբերյալ գիտելիքի և հմտությունների պակասը, մարքեթինգի և մշակութային մարտահրավերները, այսօր ծառացել են բուհերի առջև: Վերջիններիս միջազգայնացումը խթանելու, տեսանելիությունը և գրավչությունը բարձրացնելու նպատակով պահանջվում է պետության կողմից ազգային մակարդակում համապարփակ և ռազմավարական մոտեցում:<br>Ուստի, ՀՀ-ում բարձրագույն կրթության և հետազոտության գրավչության բարձրացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ ինչպես իրավական հենքի բարելավման ուղղությամբ, այնպես էլ՝ ֆինանսական ներդրումների ավելացման և մարդկային ներուժի զարգացման ուղղությամբ:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Բարձրագույն կրթության միջազգայնացումը խթանելու համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան բարենպաստ միջավայր, որը ներառում է ինչպես ֆինանսական ապահովվածությունը և մարդկային ռեսուրսների արդյունավետ ներդնումը, այնպես էլ՝ իրավական կարգավորումները, միջազգայնացման ոլորտում սահմանված ռազմավարությունը և համապատասխան կառուցակարգերը:<br>Մասնավորապես, միջազգայնացման ռազմավարության մշակումը կարևոր է այն առումով, որ պետք է վերհանվեն առկա խոչընդոտները և արգելքները, սահմանվեն պետության համար միջազգայնացման թիրախային ուղղությունները և գործընթացները, նկատի ունենալով հետևյալ սկզբունքները՝ թափանցիկություն, |

| | |
|---|---|
| | ներգրավվածություն, կայունություն և նպատակայնություն:<br>Միջոցառման կատարման համար սահմանված համապատասխան ժամկետներում կիրականացվեն ռազմավարության մշակման աշխատանքներ, մինչ այդ օրենքով կամրագրվեն ռազմավարության ընդունման համար լիազորող նորմեր:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Միջոցառման իրականացմամբ կսահմանվեն պետության համար միջազգայնացման թիրախային ուղղությունները և գործընթացները, դրանց հասնելու միջոցները ու հնարավոր ֆինանսական ռեսուրսները, որի արդյունքում ակնկալվում է բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացմանը նպաստող միջավայրի ձևավորում, միջազգային մակարդակում բարձրագույն կրթական ծրագրերի և հետազոտության մրցունակության խթանում: |
| | **<u>160.2 Բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային հարթակի ստեղծում, միջազգայնացման ցուցիչների և գործիքակազմի մշակում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային հարթակի ստեղծումը միտված է ՀՀ բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային ռազմավարության և ռազմավարական նպատակների իրագործմանը, Հայաստանի Հանրապետությունում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների համար միջազգայնացման հավասար պայմանների ստեղծմանը՝ միջազգայնացման խթանման համար մշտադիտարկման, գնահատման ընթացակարգերի և ցուցիչների մշակմամբ:<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է կրթական ծրագրերի արդիականացումը՝ ուղղված տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին:<br>Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության ոլորտի 5-րդ պարբերությունից:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Այսօր, բուհերի միջազգայնացման, շարժունության ծավալների, տեսակների և ուղղությունների վերաբերյալ տեղեկատվությունն ամբողջական չէ, իսկ դրա հավաքագրման մեխանիզմը՝ անկատար: Հավաստի տվյալների հարթակի բացակայությունը թույլ չի տալիս իրականացնել փաստարկված քաղաքականություն բարձրագույն կրթության միջազգայնացման ուղղությամբ և ուղղորդել հայաստանյան բուհերին միջազգայնացման և շարժունության իրականացման ռազմավարական թիրախավորումներ կատարելու հարցում: Ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի միջազգային շարժունության վերաբերյալ ամբողջական տեղեկատվական հարթակ ունենալու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև շարժունության ազդեցության գնահատման անհրաժեշտությամբ և դրանից բխող բարելավման միջոցառումների իրականացմամբ՝ խթանելով շարժունության ծրագրերի մեջ նրանց ակտիվ մասնակցությունն ինչպես շարժունության ընթացքում, այնպես էլ՝ շարժունության ծրագրերից հետո:<br>Հարկ է նշել, որ բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացումը պահանջում է համապարփակ մոտեցումներ. դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ստեղծել բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային հարթակ՝ տեղադրելով համապատասխան գործիքակազմ, ինչպես նաև մշակել ռազմավարական նպատակների իրագործման մշտադիտարկման, գնահատման ընթացակարգեր և ցուցիչներ: Մշտադիտարկման ցուցիչների համակարգի մշակումը հնարավորություն կտա գնահատել բուհերի միջազգայնացման տեմպերը և ուղղությունները, իրականացվող միջոցառումների արդյունավետությունը՝ ըստ բարձրագույն կրթության համակարգի վրա իրենց ազդեցության՝ վերհանելով թույլ և ուժեղ կողմերը, այդ ուղղությամբ իրականացնելով բարելավման աշխատանքներ:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Բացի միջազգայնացման ոլորտում ռազմավարական նպատակներ սահմանելուց և դրանց գործողությունների պլանավորումից, Հայաստանի բարձրագույն կրթության և հետազոտության համակարգի տեսանելիության և գրավչության ապահովման նպատակով անհրաժեշտ է նաև ներդնել ռազմավարական նպատակների իրագործման մշտադիտարկման, գնահատման ընթացակարգեր և ցուցիչներ, ձևավորել օտարալեզու ազգային տեղեկատվական |

հարթակ (պլատֆորմ): Մշակել բուհերի միջազգային գործունեության իրավական կարգավորման միասնական փաթեթ, հաշվի առնելով միջազգային համաձայնագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները, ինչպես նաև միջազգային օրենսդրությանը պետության իրավական կարգավորումների և ընթացակարգերի համապատասխանեցման անհրաժեշտ ուղղությունները:

Տվյալ դեպքում, բացի բարձրագույն կրթության միջազգայնացման՝ պետության կողմից մշակված ռազմավարությունից, վերջինիցս բխող միջազգայնացման ռազմավարություններ կմշակվեն և կիրառվեն նաև բուհերի կողմից:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային հարթակի ստեղծման, միջազգայնացման ցուցիչների և գործիքակազմի մշակման և ներդրման արդյունքում ակնկալվում է

- բարձրագույն կրթության և հետազոտության միջազգային տեսանելիության ու գրավչության բարձրացում, բուհերի ուսանողների, դասախոսական և վարչական կազմի միջազգային շարժունության ընդլայնում:

161

**161.1 Գրուսուցման մանկավարժական-մեթոդական չափորոշիչների մշակում, այբբենարանի ձեռագիր տառապատկերների միասնական ուրվագծերի մշակում, համակարգչային ձեռագիր տառատեսակի տեխնիկական առաջադրանքի նախագծի մշակում և հաստատում**

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.**

Միջոցառման գլխավոր նպատակն է կրթական ծրագրերի արդիականացումը՝ ուղղված տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի երրորդ պարբերությամբ՝ կրթության բովանդակության արդիականացումը և անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացումը առանցքային համարելու հանձնառությամբ:

Միջոցառումը անհրաժեշտությունը բխում լեզվի բնագավառում միասնական ու երկարաժամկետ լեզվական պետական քաղաքականություն իրականացնելու, հանրային կյանքի նոր իրողություններին համաչափ արձագանքելու նպատակադրումից, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետությունում, Արցախի Հանրապետությունում և սփյուռքում գործածվող այբբենարաններում (արևելահայերեն և արևմտահայերեն) ձեռագրային արդիական տառատեսակ մշակելու նպատակից, մասնավորապես՝

- հայերեն ձեռագիր տառաձևերի (հատկապես մեծատառերի) տարատեսակությունը վերացնելու և դրանց գրության ձևերը հնարավորինս միասնականացնելու,

- ձեռագիր տառապատկերների միասնական ուրվագծեր մշակելու, ձեռագիր և տպագիր տառապատկերները հնարավորինս մերձեցնելու, այբեննարանների համար միասնական ձեռագրային տառատեսակ ստեղծելու առաջնահերթությունից:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Հայաստանի անկախության շրջանում, որը համընկավ համակարգչային միջոցների տարածման հետ, այբբենարաններում ձեռագիր տառապատկերների, ինչպես նաև գրատետրերում տառերի ընդօրինակման նմուշների համար հրատարակիչները կիրառում էին համակարգչային տառատեսակներ, որոնց հիմքում բավական վիճելի որակի ձեռագրատեսակի նմուշներ էին: Ընդ որում, այս նմուշների հիմքում հայերեն հարուստ գրչական ավանդույթի այնպիսի լուծումներ են, որոնք այսօր արդեն ժամանակավրեպ են: Ավանդական մի շարք տառաձևեր, որոնք ունեն ավելի վաղ ծագում ու միաժամանակ՝ միանգամայն արդիական կառուցվածք, անտեսված են:

Անցած այս ժամանակահատվածում այբբենարանների ձեռագրատեսակների փոփոխություններն ընթացել են երեք հիմնական ուղղություններով՝ ա) ձեռագիր մեծատառերի պարզեցում, բ) ձեռագիր և տպագիր մեծատառ տառապատկերների մերձեցում, գ) ձեռագիր մեծատառերի և փոքրատառերի տառապատկերների մերձեցում: Այս փոփոխությունների արդյունքում ձևավորված ձեռագրատեսակը՝ եզակի բացառություններով, ժամանակի ընթացքում քննություն է բռնել: Այդուհանդերձ, այսօր գործածվող այբբենարաններում, տառադարաններում, տարրական դասարանների գրատետրերում, ուսումնաօժանդակ նյութերում պահպանվում են որոշ մեծատառերի (Ճ, Յ, Ջ, Պ, Տ, Ց) զուգաձևություններ: Օրակարգային է մեծատառերի ու փոքրատառերի տառապատկերների պարզեցման հարցը, քանի որ մեկ հնչյունի համար միանգամից չորս տառ է ուսուցանվում՝ չորս պատկերով՝ տպագիր մեծատառ և փոքրատառ, ձեռագիր մեծատառ և փոքրատառ:

| | |
|---|---|
| | Այս և հարակից հարցերը քննարկման կարիք են զգում նախ տարրական դպրոցի համատեքստում, մասնավորապես՝ առաջին դասարանում ձեռագրի ձևավորման և ընթերցանության կարողության զարգացման խնդրի շրջանակում: Այբբենարանների, դասագրքերի հեղինակները տառապատկերների ընտրության խնդրի են բախվում նաև արևմտահայ դասագրքեր կազմելիս:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br><br>Դպրոցական ձեռագրատեսակներին առաջադրվող վայելչագրության, գրաճանաչության և ընթեռնելիության դյուրինության մանկավարժական-մեթոդական չափորոշիչները մշակելու, այբբենարանների ձեռագիր տառապատկերների ուրվագծերը մշակելու, համակարգչային ձեռագիր տառատեսակի տեխնիկական առաջադրանքի նախագիծ պատրաստելու և տառատեսակը ձեռքբերելու համար նախատեսվում է.<br>- ոլորտային մասնագետների ներգրավմամբ աշխատանքային խումբ՝ ձեռագիր տառատեսակի հիմնական բնութագրիչների ձևակերպման համար.<br>ա) տառատեսակը պետք է ներառի հայոց այբուբենի բոլոր գրանշանները (Յունիկոդ այլագրմամբ), օժանդակ գրանշաններ՝ թվանշաններ, կետադրական նշաններ, տառակապակցումներ ապահովող կցագրություններ, ուսումնական գործընթացում անհրաժեշտ տառամասնիկներ և այլն.<br>բ) պետք է ունենա նվազագույնը երկու ոճ՝ շեղ և թավ շեղ կամ շեղ և գերբարակ շեղ.<br>գ) պետք է ապահովի տառերի լծորդում. տառազույգերի համար, որոնց սովորական լծորդումը չի ապահովում բնական՝ գրելու իրական ընթացքին բնորոշ եղանակը, մշակվելու են հավելյալ կցագրություններ:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.**<br><br>Միջոցառումը թույլ կտա.<br>- միասնականացնել այբբենարաններում, տառադարաններում, գրատետրերում, ուսումնաօժանդակ նյութերում ձեռագիր տառապատկերների ուրվագծերը.<br>- ունենալ դպրոցական ձեռագրատեսակներին առաջադրվող մանկավարժական-մեթոդական, վայելչագրության, գրուսուցման և ընթեռնելիության դյուրինության պահանջներին համապատասխան համակարգչային ձեռագիր որակյալ տառատեսակ (Յունիկոդ այլագրմամբ, նվազագույնը երկու ոճով).<br>- ապահովել գրաճանաչության (մասնավորապես տարրական դպրոցում) և ձեռագիր տառերի ընթեռնելիության դյուրացում: |
| 162 | **162.1 Ուսուցիչների մասնագիտական որակավորումների բնութագրերի վերանայում և ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է դասավանդողների կարողությունների զարգացումը և մասնագիտական հեղինակության բարձրացումը:<br>Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Հանրակրթության ոլորտի 6-րդ, կետից ՝ ապահովելու համար կրթության որակն ու արդիականությունը, նոր բովանդակություն հաղորդելու 12-ամյա կրթությանը:<br>Հանրակրթական դպրոցների ուսուցիչների որակավորումների՝ միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով առկա է բնութագրերի վերանայման անհրաժեշտություն և դրանց հաստատում:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br><br>Հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական որակավորումների բնութագրերը լիովին չեն ներկայացնում/ապահովում այն շրջանակը, որին ուսուցիչը պետք է բավարարի, ուստի դրանք ունեն խիստ վերանայման կարիք՝ համեմատ միջազգային չափանիշների հետ համեմատությամբ:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br><br>Նախատեսվող նախաձեռնությամբ հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական |

որակավորումների բնութագրերը կուսումնասիրվեն, կքննարկվեն, կվերանայվեն և կհամապատասխանեցվեն միջազգային չափանիշներին, ինչի ապահովմամբ ուսուցչի գործունեության շրջանակը առավել կհստակեցվի:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Արդյունքում կսահմանվեն միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան ուսուցիչների մասնագիտական որակավորումների վերանայված բնութագրեր:

**162.2 Ուսուցիչների մասնագիտական որակավորման բնութագրերի ներդրման քաղաքականության և ժամանակացույցի մշակում և հաստատում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝**

Միջոցառման գլխավոր նպատակն է դասավանդողների կարողությունների զարգացումը և մասնագիտական հեղինակության բարձրացումը:
Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Հանրակրթության ոլորտի 6-րդ, կետից ՝ ապահովելու համար կրթության որակն ու արդիականությունը, նոր բովանդակություն հաղորդելու 12-ամյա կրթությանը:
Հանրակրթական դպրոցների ուսուցիչների որակավորումների՝ միջազգայնորեն ընդունված և հաստատված չափանիշները ամբողջականորեն ներդնելու համար անհրաժեշտ է հաստատել բնութագրիչների ներդրման քաղաքականություն և ժամանակացույց:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Ուսուցիչների մասնագիտական որակավորման բնութագրերի ներդրման համար անհրաժեշտ է մշակել քաղաքականություն և բնութագրերի ներդրման համար սահմանել ժամանակացույց:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

Միջոցառման ապահովմամբ պատշաճ կերպով կիրականացվի ուսուցիչների մասնագիտական որակավորման բնութագրերի ներդրման գործընթացը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Կսահմանվեն քաղաքականության սկզբունքները և դրանց իրականացման ապահովման ժամանակագրական տվյալները:

**162.3 Ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի վերանայում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է դասավանդողների կարողությունների զարգացումը և մասնագիտական հեղինակության բարձրացումը:
Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Հանրակրթության ոլորտի 6-րդ, կետից ՝ ապահովելու համար կրթության որակն ու արդիականությունը, նոր բովանդակություն հաղորդելու 12-ամյա կրթությանը:
Ուսուցիչների մասնագիտական կարողությունների և հմտությունների բարելավման նպատակով անհրաժեշտ է վերանայել վերապատրաստման ծրագիրը:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Ուսուցիչների վերապատրաստման ծրագրերը չեն համապատասխանում որակավորման նոր պահանջներին, ծրագրերի բովանդակությունն ունի էական բարելավման անհրաժեշտություն:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի պատշաճ կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ է լրամշակել և հաստատել վերապատրաստման ծրագիրը: Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի՝ նախարարությունը համաձայնություն է տալիս վերապատրաստման ծրագրերին:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Արդյունքում կհաստատվի ուսուցիչների վերապատրաստման լրամշակված և վերանայված ծրագիր

**162.4 Ուսուցիչների վերապատրաստման ատեստավորման կարգերի վերանայում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է դասավանդողների կարողությունների զարգացումը և մասնագիտական հեղինակության բարձրացումը:

Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Հանրակրթության ոլորտի 6-րդ, կետից ՝ ապահովելու համար կրթության որակն ու արդիականությունը, նոր բովանդակություն հաղորդելու 12-ամյա կրթությանը:

Ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման կարգերի պահանջների բարելավման և մատչելիության ապահովման նպատակով նշված կարգերի վերանայում:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման կարգերի պահանջներն ունեն խիստ բարելավման կարիք, չեն ապահովում ցանկալի և անհրաժեշտ արդյունք ու արդյունավետություն:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

Ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման գործընթացների կազմակերպման և իրականացման նպատակով անհրաժեշտ է այդ էապես բարելավես այդ գործընթացները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Արդյունքում կհաստատվի ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման լրամշակված կարգեր:

**162.5 Ուսուցիչների վերապատրաստում և ատեստավորում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝**

Միջոցառման գլխավոր նպատակն է դասավանդողների կարողությունների զարգացումը և մասնագիտական հեղինակության բարձրացումը:

Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Հանրակրթության ոլորտի 6-րդ, կետից ՝ ապահովելու համար կրթության որակն ու արդիականությունը, նոր բովանդակություն հաղորդելու 12-ամյա կրթությանը:

Ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման գործընթացներն անհրաժեշտ է կազմակերպել համաձայն հաստատված փոփոխությունների:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

| | |
|---|---|
| | Ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման գործընթացները կկազմակերպվեն լրամշակված և հաստատված կարգի պահանջներին համապատասխան:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br><br>Ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման գործընթացների արդյունավետ կազմակերպում՝ համաձայն իրավական լրամշակված կարգերի:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման գործընթացների արդյունավետ կազմակերպում: |
| **163** | **163.1.Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների վարչական, մանկավարժական կազմի և կառավարման խորհուրդների անդամների վերապատրաստում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է դասավանդողների կարողությունների զարգացումը և մասնագիտական հեղինակության բարձրացումը:<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 5-րդ պարբերությունից, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետից: Ժամանակակից տնտեսության պայմաններում մարդկային ռեսուրսների զարգացումը մշտական գործընթաց է՝ պայմանավորված գործարար միջավայրով և բազմաթիվ փոփոխություններով: ՆՄՄԿ ոլորտի դասավանդողների և դասընթացավարների որակավորման պահանջներն աստիճանաբար աճում են, և դեռևս շատ անելիքներ կան մասնագիտական կարողությունների զարգացման ուղղությամբ: Նոր մշակված պետական կրթական չափորոշիչների պահանջները, փոփոխվող աշխատաշուկայի պահանջներին արագ արձագանքելու, նոր տեխնոլոգիաների, գիտության և տնտեսության զարգացման արդյունքում նոր մոտեցումների ի հայտ գալը ընդգծում են վերապատրաստումների անհրաժեշտությունը: Բացի այդ՝ ուսուցման կամ վերապատրաստման անհրաժեշտություն առաջանում է ոչ միայն ընթացիկ գործընթացների կատարելագործման և կիրառման, այլև նոր համակարգերի ներդրման դեպքում: Ուստի վերապատրաստումը շարունակում է մնալ որպես առանցքային գերակայություն:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br><br>ՆՄՄԿ ոլորտում իրականացվող բարեփոխումների գերակա ուղղություններից է վերապատրաստումների միջոցով մարդկային ռեսուրսների հզորացումը: Այս ուղղությամբ յուրաքանչյուր տարի իրականացվել են ՆՄՄԿ վարչական, մանկավարժական կազմի և ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհուրդների անդամների վերապատրաստումներ. վերջին երեք տարիների ընթացքում ՆՄՄԿ համակարգի աշխատողների և այդ համակարգի աշխատանքներում ներգրավված այլ համակազմերի անձանց համար իրականացվել են վերապատրաստումներ, որոնց ընթացքում վերապատրաստվել է շուրջ 3000 անձ:<br>Սակայն դեռևս շատ անելիքներ կան մասնագիտական կարողությունների զարգացման ուղղությամբ: Նոր մշակված պետական կրթական չափորոշիչների պահանջները, փոփոխվող աշխատաշուկայի պահանջներին արագ արձագանքելը, նոր համակարգերի ներդրումը առաջնային են դարձնում վերապատրաստումների իրականացումը:<br>Վերապատրաստումների ընթացքում որակյալ և առաջատար մասնագետների հետ շփումը, ակտուալ նյութերի տրամադրումն ու ոլորտի զարգացումներին ծանոթացնելը օգնում են դասախոսական կազմին տիրապետել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին, ծանոթանալ ոլորտի նորարարություններին, իսկ վերապատրաստումներից հետո հետադարձ կապի, դասերի դիտարկումների անցկացումը, մանկավարժական անձնակազմի միջև համագործակցային աշխատաոճի սերմանումը նպաստում է կրթական գործընթացի բարելավմանը, արդիականացմանը:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Դասավանդողների և դասընթացավարների մասնագիտական կարիքների նախնական բացահայտում, գործատուների, առաջատար բուհերի և ոլորտի այլ շահառուների հետ համագործակցելով՝ ՆՄՄԿ ուսումնական |

հաստատությունների դասավանդողների համար մասնագիտական և մանկավարժական վերապատրաստման ծրագրերի մշակում, դրանց հիման վրա ուսումնական հաստատությունների դասավանդողների և ուսուցման վարպետների մասնագիտական կարողությունների հզորացման նպատակով՝ վերապատրաստումների կազմակերպում, ինչը կապահովի դասավանդողների շարունակական մասնագիտական զարգացումը և կհանդիսանա նրանց խրախուսման և շահադրդման համակարգի ստեղծման նախապայման: Գրծընթացը շարունակական է և նախատեսվում է իրականացնել ՀՀ պետական բյուջեի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ» միջոցառման շրջանակում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացման արդյունքում յուրաքանչյուր տարի կվերապատրաստվի ՆՄՄԿ վարչական, մանկավարժական կազմի և ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհուրդների 800 անձ (2019թ 450 անձի վերապատրաստում), ինչը կապահովի ՄԿՈՒ համակարգի մարդկային ռեսուրսների կարողությունների շարունակական զարգացումը, նոր մշակված ուսումնական ծրագրերով ուսուցանելու հմտությունների բարելավումը: Մանկավարժական կազմի պարբերական վերապատրաստումը (մեթոդական աջակցություն) կընդլայնի ՄԿՈՒ համակարգի կառավարման արդյունավետությունը՝ բարելավելով դասավանդման գործընթացը և բարձրացնելով ուսանողների որակավորումն ու զբաղունակությունը:

164

**164.1 «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ սահմանված կարգով ներկայացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է որակյալ կրթության հավասար մատչելիության և ընդգրկվածության ապահովումը:

Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 4-րդ պարբերության պահանջներից:

Նախադպրոցական կրթության կազմակերպման հիմնահարցերի լուծման, նախադպրոցական ոլորտի վերաբերյալ մասնագիտական քննարկումների արդյունքում առաջարկված փոփոխությունների իրականացման, նախադպրոցական կրթության առավել մատչելիության ապահովման նպատակով անհրաժեշտ է <<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենքում իրականացնել փոփոխություններ և լրացումներ:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Նոր խմբագրությամբ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումը պայմանավորված է ոլորտի գործունեության կանոնակարգմանն ու զարգացմանն ուղղված հիմնախնդիրների լուծման, նախադպրոցական կրթության ծառայությունների մատչելիության շարունակականության համար իրավական հիմքեր ապահովելու, ինչպես նաև «ներառական և բոլորի համար որակյալ կրթության ապահովում, ինչպես նաև ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորության խթանում» նպատակի պահանջներից:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը, կարգավորում է նախադպրոցական կրթության գործընթացին մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունները, ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված բոլորի համար հավասար կրթության իրավունքի, նախադպրոցական կրթության հասանելիության և մատչելիության հիմքերը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Նախադպրոցական ծառայությունների շարունակականության ապահովման, նախադպրոցական

հաստատությունների մանկավարժական կադրերի վերապատրաստման և մասնագիտական որակի բարձրացման, ատեստավորման, հաստատությունների գործունեության կանոնակարգման և զարգացման նորմատիվային դաշտի, ինչպես նաև վերահսկողության համակարգի ապահովման համար իրավական երաշխիքների, օրենսդրական հիմքի ստեղծում:

**164.2 2 «Նախադպրոցական կրթության մասին» նոր խմբագրությամբ Հ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակում և հաստատում**

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝**

Միջոցառման գլխավոր նպատակն է որակյալ կրթության հավասար մատչելիության և ընդգրկվածության ապահովումը:

Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 4-րդ պարբերության պահանջներից:

<<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենքի պահանջների իրականացման նպատակով առկա է ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակման և հաստատման անհրաժեշտություն:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Գործող ենթաօրենսդրական ակտերը ունեն լրամշակման կարիք և <<Նախադպրոցական կրթության մասին>> նոր խմբագրությամբ ՀՀ օրենքի նախագծի պահանջներին չեն բավարարում:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ենթաօրենսդրական դաշտի համապատասխանեցում:

2. **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

«Նախադպրոցական կրթության մասին» նոր խմբագրությամբ ՀՀ օրենքի պահանջների պատշաճ իրականացում:

**164.3 Նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների մշակում և ներդրում**

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝**

Միջոցառման գլխավոր նպատակն է որակյալ կրթության հավասար մատչելիության և ընդգրկվածության ապահովումը:

Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 4-րդ պարբերության պահանջներից

Ներկայացվող նախագծի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում ներդնել այլընտրանքային մոդելով նախադպրոցական կրթական հաստատությունների գործարկումը:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Վերջին տարիներին մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության հետևանքով Հայաստանի Հանրապետության նախադպրոցական համակարգը հայտնվել է անբարենպաստ պայմաններում, ինչի արդյունքում կրճատվել են նախադպրոցական հաստատությունների թիվը, գործող հաստատությունների կարողությունները, նվազել է դրանցում երեխաների ընդգրկվածությունը: Նախադպրոցական հաստատություններ համայնքային ենթակայության են և դրանց գործունեության հետ կապված ցանկացած խնդիր անմիջականորեն աղերսվում է տվյալ համայնքի բյուջետային միջոցների հետ: Արդյունքում անհավասար պայմաններ են ստեղծվում նախադպրոցական տարիքի երեխաների միջև:

| | |
|---|---|
| | **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Հանրապետության բազմաբնակավայր համայնքներում ձևավորվել այլընտրանքային նախադպրոցական կրթության հաստատություններ, որոնք հնարավորություն կընձեռեն մեծացնել երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ծառայություններում և ապահովել մատչելիություն՝ հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար:<br>Այլընտրանքային նախադպրոցական կրթություն կազմակերպող հաստատությունը ձևավորվելով որպես համայնքահեն հաստատություն, կդառնա ցածր արժողությամբ նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող կառույց նախադպրոցական հաստատություն չունեցող բնակավայրերում:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Այլընտրանքային մոդելների ներդրմամբ հնարավորություն ընձեռել համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ այլընտրանքային եղանակներով նախադպրոցական կրթությունը հասանելի դարձնելու համայնքի բոլոր երեխաներին: |
| **165** | **<u>165.1 Փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների կրթության կազմակերպման արդյունավետ մոդելների և հեռավար կրթության կազմակերպման կարգի մշակում և ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններով հաստատում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է որակյալ կրթության հավասար մատչելիության և ընդգրկվածության ապահովումը:<br>Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 4-րդ պարբերության պահանջներից:<br>Սովորողների սակավաթիվ համակազմ ունեցող դպրոցներում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժշետություն:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ներկայում նմանատիպ դպրոցներում ուսումնական գործընթացի կազմակերպումը՝ իր բոլոր բաղադրիչներով հանդերձ, արդյունավետ չի կազմակերպվում:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Ուսումնական գործընթացի (և ընդհանրապես կրթության կազմակերպումը) պատշաճ կերպով կազմակերպման նպատակով անհրաժեշտ նոր տեխնոլոգիաների, եղանակների և մեթոդների կիրառում:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Արդյունքում նմանատիպ դպրոցներում ուսուցման գործընթացը կկազմակերպվի արդյունավետ: |
| | **<u>165.2 Հեռավարության համակարգի ներդրում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Սովորողների Սահմանադրական իրավունքի իրացման ապահովման նպատակով նախատեսվում է մշակել և ներդնել հեռավարության համակարգը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ներկայում հեռավար ուսուցման իրականացման համար բացակայում են իրավական հիմքերը: |

| | |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Հեռավար համակարգով ուսուցման գործընթաց կազմակերպելու նպատակով կմշակվեն իրավական կարգավորումներ:<br><br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Հեռավար ուսուցման համակարգի ամբողջական գործարկում: |
| | **<u>165.3 Փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների դասավանդող ուսուցիչների վերապատրաստում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը՝**<br><br>Փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների ուսուցիչները վերապատրաստման արդյունքում կյուրացնեն այն տեխնոլոգիաները, ուսցման մեթոդներն ու եղանակները, որոնց կիրառման դեպքում ուսուցումը նմանատիպ դպրոցներում արդյունավետ կկազմակերպվի:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների ուսուցիչները նախատեսվող վերապատրաստման դասընթացներ չեն անցնում:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների ուսուցիչները կվերապատրաստվեն նախապես մշակված վերապատրաստման անհատական ծրագրով:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Վերապատրաստման արդյունքում ուսուցիչները պատրաստ կլինեն այլընտրանքային տարբերակով կազմակերպել ուսումնական գործընթացը: |
| **166** | **<u>166.1. Համընդհանուր ներառական հանրակրթության ներդնում, այդ թվում՝ հատուկ դպրոցների վերակազմակերպման միջոցով Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ հիմնադրելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է որակյալ կրթության հավասար մատչելիության և ընդգրկվածության ապահովումը:<br>Անհրաժեշտությունը բխում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-200-Ն) 21-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N141-Ն որոշման, ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի 18-44-րդ կետերի պահանջներից, ինչպես նաև ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 4-րդ պարբերությունից՝ ապահովելու համար անցումը համընդհանուր ներառական հանրակրթությանը հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում մինչև 2023 թվականը:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվեց «Հանրակրթության մասին» ՀՀ |

| | |
|---|---|
| | օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով էլ հիմք դրվեց հանրակրթության համակարգում համընդհանուր ներառական կրթությանն անցմանը:<br>Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, ինչպես նաև տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից:<br>Հաստատված ժամանակացույցի համաձայն, անցումը համընդհանուր ներառական կրթության համակարգին մեկնարկեց 2016 թվականին՝ ՀՀ Սյունիքի մարզից, 2017 թվականին համակարգը ներդրվեց ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում, 2018 թվականին՝ ՀՀ Արմավիրի մարզում:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրում Երևան քաղաքում և մնացած մարզերում ևս՝ հատուկ դպրոցների վերակազմակերպման միջոցով (կամ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների պատվիրակում նման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմաններ ունեցող կազմակերպության): Հայաստանի Հանրապետությունում հատուկ դպրոցներում ընդգրկված երեխաների ինտեգրում հանրակրթական դպրոցներ, եռամակարդակ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում դրա անհրաժեշտությունն ունեցող շահառուներին:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական կարիքների գնահատման և անհրաժեշտ աջակցող ծառայությունների հասցեականությունը և հասանելիությունը, յուրաքանչյուր երեխայի համար կրթությանն աջակցող ծառայությունների շարունակական մատուցումը իր ուսումնական հաստատության կրթական միջավայրում: |
| | **166.2. Հանրակրթական դպրոցների և նոր ձևավորված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է որակյալ կրթության հավասար մատչելիության և ընդգրկվածության ապահովումը:<br>Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N141-Ն որոշման, ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի 18-44-րդ կետերի պահանջներից, ինչպես նաև ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 4-րդ պարբերությունից՝ ապահովելու համար անցումը համընդհանուր ներառական հանրակրթությանը հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում մինչև 2023 թվականը: Վերապատրաստման նպատակը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ աշխատող անձնակազմին համապատասխան գիտելիքներով և հմտություններով զինելն է:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվեց «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով էլ հիմք դրվեց հանրակրթության համակարգում համընդհանուր ներառական կրթությանն անցմանը:<br>Համընդհանուր ներառական կրթության անցումը սկսվել է 2016 թվականից և ընթանում է փուլ առ փուլ: Հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական անձնակազմը ոչ բոլոր դեպքերում է պատկերացնում նոր իրավական դաշտում և նոր մեթոդներով աշխատելու սկզբունքները, ուստի կա անձնակազմին վերապատրաստելու անհրաժեշտություն:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստում՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի ռեսուրսների և |

| | |
|---|---|
| | վերապատրաստման ծառայություններ մատուցող այլ կազմակերպություններին պատվիրակելու միջոցով:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական կարիքների գնահատման և անհրաժեշտ աջակցող ծառայությունների հասցեականությունը և հասանելիությունը, յուրաքանչյուր երեխայի համար կրթությանն աջակցող ծառայությունների շարունակական մատուցումը իր ուսումնական հաստատության կրթական միջավայրում որակյալ մասնագետների կողմից: |
| 167 | **167.1 Ուսանողների ֆինանսական աջակցության պետական ծրագրերի ծավալների ընդլայնում և դրանց ձևերի բազմազանեցում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է որակյալ կրթության հավասար մատչելիության և ընդգրկվածության ապահովումը:<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի բարձրագույն կրթության ոլորտի 6-րդ պարբերությունից:<br>Միջոցառման նպատակն է հանդիսանում բարձրագույն կրթության հասանելիության և մատչելիության ապահովումը:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի առաջնային խնդիրներից են կրթության հասանելիության ու մատչելիության ապահովումը, սոցիալական պայմանների կամ աշխարհագրական առանձնահատկությունների հետ կապված խոչընդոտների նվազեցումը:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Միջոցառման շրջանակում նախատեսվում են ֆինանսավորման համակարգի բարեփոխման նպատակով մշակել մոդել՝ կրթաթոշակային ծրագիր, որը կունենա մի շարք ֆինանսավորման ձևեր՝ առաջադիմության վրա հիմնված կրթաթոշակային ծրագիր, կարիքավորության վրա հիմնված կրթաթոշակային ծրագիր, գերակա մասնագիտությունների գծով կրթաթոշակային ծրագիր, կեցության նպաստների ծրագիր:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Միջոցառման կատարման արդյունքում կընդլայնվեն պետության կողմից ուսանողների ֆինանսական աջակցության հասցեականությունը, նպատակայնությունը և ծավալները, ինչպես նաև կապահովի ուսանողների լայն ընդգրկվածությունը բարձրագույն ուսումնական հաստատություններ: |
| 168 | **168.1. ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցների ընդգրկում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում**<br><br>**168.2. ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների ընդգրկում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում**<br><br>**168.3.ՀՀ Լոռու մարզի հանրակրթական դպրոցների ընդգրկում «Կայուն դպրոցական սնունդ ծրագրում**<br><br>**168.4. ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցների ընդգրկում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում**<br><br>**168.5. ՀՀ Կոտայքի մարզի հանրակրթական դպրոցների ընդգրկում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում»**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է որակյալ կրթության հավասար մատչելիության և ընդգրկվածության ապահովումը:<br>ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N33 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությունն ու դրա իրականացման միջոցառումների |

ծրագիրն ու փորձնական ծրագիրը: Ծրագրի ռազմավարության գլխավոր նպատակն է ստեղծել կայուն դպրոցական սննդի համակարգ, որը հնարավորություն կտա ապահովելու ՀՀ բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների նախակրթարանների և տարրական դասարանների աշակերտների առողջ սնունդը, բարելավելու նրանց առողջությունն ու հաղթահարելու աղքատությունը՝ նպաստելով դպրոցականների հաճախելիության բարձրացմանն ու համընդհանուր տարրական կրթության ձեռքբերմանը:

Անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2013 թ. օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրային որոշման N 1 հավելվածի 21-րդ կետով, ինչպես նաև՝ ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 4-րդ պարբերության 1-ին և 4-րդ ենթակետերով:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի /ՊՀԾ/ կողմից իրականացվում է կայուն դպրոցական սննդի ծրագիրը, որում ընդգրկվել են հանրապետության մնացած վեց մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և նախակրթարանների շուրջ 60000 սովորողներ: ՄԱԿ-ի ՊՀԾ-ն նախատեսում է շարունակել դպրոցական սննդի ծրագիրը, աստիճանական, ֆինանսավորումը հանձնելով ՀՀ կառավարությանը՝ ՀՀ պետական բյուջեում ներառելու միջոցով: Մարզերը ՀՀ կառավարությանը հանձնելուց առաջ ՊՀԾ-ն իրականացնում է դպրոցների խոհանոցների վերանորոգման և խոհանոցային սարքավորումների տրամադրման աշխատանքներ:

Ներկայումս հինգ մարզերում /Արարատ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ, Շիրակ/ իրականացնում են կայուն դպրոցական սննդի ծրագիրը՝ ֆինանսավորվելով ՀՀ պետական բյուջեից: Սնունդը տրամադրվում է նախակրթարաններում և տարրական դասարաններում ընդգրկված երեխաներին օրը մեկ անգամ, դպրոցում: Ծրագիրն իրականացվում է ՀՀ մարզպետարանների միջոցով, որոնք գումարը բաշխում են իրենց ենթակայության՝ նախակրթարաններ և տարրական դասարաններ ունեցող հանրակրթական ուսումնական հաստատությունների միջև, որոնք էլ իրականացնում են ծրագիրը՝ հիմք ընդունելով գործող իրավական ակտերը, այդ թվում՝ գնումների մասին ՀՀ օրենքի պահանջները:

ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N33 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությունն ու դրա իրականացման միջոցառումների ծրագիրն ու փորձնական ծրագիրը: Ծրագրի ռազմավարության գլխավոր նպատակն է ստեղծել կայուն դպրոցական սննդի համակարգ:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

2019-2023 թվականներին, յուրաքանչյուր տարի մեկ մարզ կներառվի ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող Կայուն դպրոցական սնունդ ծրագրում: Ներառված մարզերի ուսումնական հաստատություններն ամբողջովին իրենք կիրականացնեն սննդի ձեռքբերման և կազմակերպման գործընթացը:

**2. Ակնկալվող արդյունքը**

Տարեցտարի կընդլայնվի ՀՀ պետական բյուջեից հանրակրթական դպրոցների նախակրթարանների և տարրական դասարանների սովորողներին դպրոցական սննդով ապահովման ծրագիրը, որի արդյունքում 2023 թվականին շահառուների թիվը կկազմի շուրջ 108000: Արդյունքում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողները կստանան առողջ, կայուն և ապահով սնունդ:

**<u>168.6 Վերապատրաստումների իրականացում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է որակյալ կրթության հավասար մատչելիության և ընդգրկվածության ապահովումը:

ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N33 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությունն ու դրա իրականացման միջոցառումների ծրագիրն ու փորձնական ծրագիրը: Ծրագրի ռազմավարության գլխավոր նպատակն է ստեղծել կայուն դպրոցական սննդի համակարգ, որը հնարավորություն կտա ապահովելու ՀՀ բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների

| | |
|---|---|
| | նախակրթարանների և տարրական դասարանների աշակերտների առողջ սնունդը, բարելավելու նրանց առողջությունն ու հաղթահարելու աղքատությունը՝ նպաստելով դպրոցականների հաճախելիության բարձրացմանն ու համընդհանուր տարրական կրթության ձեռքբերմանը:<br>Անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2013 թ. օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրային որոշման N 1 հավելվածի 21-րդ կետով, ինչպես նաև՝ ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 4-րդ պարբերության 1-ին և 4-րդ ենթակետերով:<br><br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Հայաստանում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի /ՊՀԾ/ կողմից իրականացվում է կայուն դպրոցական սննդի ծրագիրը, որում ընդգրկվել են հանրապետության մնացած վեց մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և նախակրթարանների շուրջ 60000 սովորողներ: ՄԱԿ-ի ՊՀԾ-ն նախատեսում է շարունակել դպրոցական սննդի ծրագիրը, աստիճանական, ֆինանսավորումը հանձնելով ՀՀ կառավարությանը՝ ՀՀ պետական բյուջեում ներառելու միջոցով: Մարզերը ՀՀ կառավարությանը հանձնելուց առաջ ՊՀԾ-ն իրականացնում է դպրոցների խոհանոցների վերանորոգման և խոհանոցային սարքավորումների տրամադրման աշխատանքներ: ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման անցման պարագայում դպրոցի անձնակազմը կարիք ունի լրացուցիչ հարցերի լուսաբանման, սեփական ռեսուրսներով սննդի ճիշտ կազմակերպման և այլ հարցերի մասով վերապատրաստման կարիք:<br><br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>2019-2023 թվականներին, յուրաքանչյուր տարի մեկ մարզ կներառվի ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող Կայուն դպրոցական սնունդ ծրագրում: Ներառված մարզերի ուսումնական հաստատություններն ամբողջովին իրենք կիրականացնեն սննդի ձեռքբերման և կազմակերպման գործընթացը: Անձնակազմը կունենա համապատասխան գիտելիքներ՝ սննդի տրամադրման գործընթացը անվտանգ և համակարգված իրականացնելու համար: Վերապատրաստումները նախատեսվում է իրականացնել օրենքով չարգելված այլ աղբյուրների միջոցների հաշվին:<br><br>**2.Ակնկալվող արդյունքը**<br><br>Տարեցտարի կընդլայնվի ՀՀ պետական բյուջեից հանրակրթական դպրոցների նախակրթարանների և տարրական դասարանների սովորողներին դպրոցական սննդով ապահովման ծրագիրը, որի արդյունքում 2023 թվականին շահառուների թիվը կկազմի շուրջ 108000: Վերապատրաստման արդյունքում ՀՀ բոլոր մարզերում հանրակրթական ուսումնական հաստատությունների համապատասխան անձնակազմը կկարողանա սովորողներին տրամադրել առողջ, կայուն և ապահով սնունդ: |
| | **<u>168.7. Իրավական դաշտի բարելավում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է որակյալ կրթության հավասար մատչելիության և ընդգրկվածության ապահովումը:<br>ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N33 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությունն ու դրա իրականացման միջոցառումների ծրագիրն ու փորձնական ծրագիրը: Ծրագրի ռազմավարության գլխավոր նպատակն է ստեղծել կայուն դպրոցական սննդի համակարգ, որը հնարավորություն կտա ապահովելու ՀՀ բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների նախակրթարանների և տարրական դասարանների աշակերտների առողջ սնունդը, բարելավելու նրանց առողջությունն ու հաղթահարելու աղքատությունը՝ նպաստելով դպրոցականների հաճախելիության բարձրացմանն ու համընդհանուր տարրական կրթության ձեռքբերմանը:<br>Անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրային որոշման N 1 հավելվածի 21-րդ կետով, ինչպես նաև՝ ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 4-րդ պարբերության 1-ին և 4-րդ ենթակետերով: |

| | |
|---|---|
| | **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ներկայումս հինգ մարզերում /Արարատ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ, Շիրակ/ իրականացնում են կայուն դպրոցական սննդի ծրագիրը՝ ֆինանսավորվելով ՀՀ պետական բյուջեից: Սնունդը տրամադրվում է նախակրթարաններում և տարրական դասարաններում ընդգրկված երեխաներին օրը մեկ անգամ, դպրոցում: Ծրագիրն իրականացվում է ՀՀ մարզպետարանների միջոցով, որոնք գումարը բաշխում են իրենց ենթակայության՝ նախակրթարաններ և տարրական դասարաններ ունեցող հանրակրթական ուսումնական հաստատությունների միջև, որոնք էլ իրականացնում են ծրագիրը՝ հիմք ընդունելով գործող իրավական ակտերը, այդ թվում՝ գնումների մասին ՀՀ օրենքի պահանջները:<br>ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N33 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությունն ու դրա իրականացման միջոցառումների ծրագիրն ու փորձնական ծրագիրը: Ծրագրի ռազմավարության գլխավոր նպատակն է ստեղծել կայուն դպրոցական սննդի համակարգ: Ծրագիրն իրականացնելու համար կա իրավական դաշտի բարելավման հարց, քանի որ գործող իրավական ակտերը լիարժեք չեն կարգավորում դպրոցներում սննդի տրամադրման հետ կապված բոլոր հարցերը:<br>Քանի որ կայուն դպրոցական սննդի տրամադրումը ՀՀ պետական բյուջեի միջոցներից սկսվել է 2014 թվականին, իսկ ուսումնական հաստատությունների գործունեությունը կարգավորող հիմնական իրավական ակտերը ստեղծվել են ավելի վաղ, խնդիր է առաջացնում դրանցում դպրոցական սննդին առնչվող դրույթների բացակայությունը, որի արդյունքում ուսումնական հաստատություններում ծագել են մի շարք հարցեր, որոնց կարգավորումը օրենսդրական ներկա դաշտով հնարավոր չէ: Միաժամանակ, քանի որ հարցերը բազմազան են, աշխատանքի ընթացքում միայն պարզ կլինի օրենքների և իրավական ակտերի այն փաթեթը, որոնք ստեղծելու, փոփոխություններ և լրացումներ իրականացնելու անհրաժեշտություն կառաջանա:<br><br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>2019-2023 թվականներին, յուրաքանչյուր տարի մեկ մարզ կներառվի ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող Կայուն դպրոցական սնունդ ծրագրում: Ներառված մարզերի ուսումնական հաստատություններն ամբողջովին իրենք կիրականացնեն սննդի ձեռքբերման և կազմակերպման գործընթացը: Իրավական ակտերում կկատարվեն համապատասխան փոփոխություններ և լրացումներ:<br><br>**2. Ակնկալվող արդյունքը**<br><br>Փոփոխված իրավական դաշտի պայմաններում բոլոր դպրոցներում կկիրառվեն միասնական մոտեցումներ, գործընթացները կլինեն ավելի թափանցիկ, հաշվետվողականությունը կլինի համակարգված և մանրամասն: |
| 169 | **<u>169.1 Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավումը և սպառնացող աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացումը:<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 2-րդ պարբերությունից:<br>Ծրագրի նպատակն է գյուղական համայնքի փոքրաթիվ դպրոցները վերածել կրթամշակութային կենտրոնների, որը հնարավորություն կտա գյուղական համայնքներում միաժամանակ մեկտեղել նախակրթարանի, դպրոցի և մշակութային կենտրոնի գործառույթները: Միաժամանակ, ծրագիրը կլուծի գյուղական համայնքների փոքրաթիվ դպրոցների արդյունավետ կառավարման խնդիրը:<br><br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցումը հատկապես գյուղական համայնքներում հնարավորություն կտա այդ դպրոցները վերածել մշակութային կենտրոնների՝ լուծելով համայնքի համար մի շարք խնդիրներ: |

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2018 թ.-ի դեկտեմբերի 27-ի 1515-Ն որոշմամբ Քաղաքաշինության կոմիտեին կտրամադրվի բյուջեով սահմանված գումար՝ նախագծահետազոտական, գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքներ իրականացնելու նպատակով:
Քաղաքաշինության կոմիտեի համապատասխան եզրակացության հիման վրա կիրականացվի փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցում կամ վերակառուցում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Կբարելավվի փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի ֆիզիկական վիճակը՝ հետագայում դրանք կրթամշակութային կենտրոնների վերածելու հեռանկարով: Տարեցտարի ծրագրի շրջանակը կընդլայնվի՝ ընդգրկելով փոքրաքանակ երեխաներով համալրված ավելի շատ դպրոցներ:

**<u>169.2 Օժանդակություն դպրոցների աղետների ռիսկերի կառավարմանը</u>**

**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 4.4 կետի 2-րդ պարբերությունից:
Օժանդակելով հանրակրթական ուսումնական հաստատություններում ԱՌՆ պլանների իրականացմանը՝ ծրագիրը կնպաստի հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ սեյսմիկ աղետներին պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացմանը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության տարածքը գտնվում է աշխարհի առավել բարձր սեյսմիկ անվտանգության գոտում: Շենքերի և շինությունների, հատկապես հանրակրթական ուսումնական հաստատությունների սեյսմակայունության բարձրացման միջոցով հնարավոր կլինի նվազեցնել առկա սեյսմիկ ռիսկը և լուծել բնակչության, մասնավորապես երեխաների անվտանգության ապահովման հիմնախնդիրը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը կիրառելով ներառական և երեխայակենտրոն մոտեցում՝ կօժանդակի ՀՀ մարզերի 30 դպրոցներում ԱՌԿ պլանների ներդնմանն ու իրականացմանը՝ ինչը կնպաստի դպրոցների անձնակազմի և աշակերտների անվտանգության ապահովման մակարդակի բարձրացմանը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագիրը ունի շարունակական բնույթ: Տարեցտարի կընդլայնվի ծրագրում ընդգրկված դպրոցների շրջանակը: Միջոցառումը կնպաստի հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ աղետներին դիմակայունության մակարդակի բարձրացմանը և աղետներին արձագանքման կարողությունների հզորացմանը:

**<u>169.3 ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ավագ դպրոցների հիմանորոգում՝ «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակում</u>**

**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավումը և սպառնացող աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացումը:

| | |
|---|---|
| | Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 2-րդ պարբերությունից:<br>Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Կրթության բարելավում» ծրագրի նպատակն է բարձրացնել կրթության որակը և համապատասխանությունը ավագ դպրոցների համակարգում, իրականացնել սահմանված չափանիշներով ընտրված ավագ դպրոցների կարողությունների հզորացում:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>2016-2018 թթ. ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են ՀՀ մարզերի 5 ավագ դպրոցներ: Ավագ դպրոցների հիմնանորոգմանը հաջորդելու են ավագ դպրոցներում բնագիտական առարկաների գծով ժամանակակից ռեսուրսներով և կահավորված լաբորատորիաների հիմնում:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Մինչև 2021 թվականը նախատեսվում է ավարտել Երևան քաղաքի և մարզերի ընդհանուր 7 դպրոցների հիմնանորոգման աշխատանքները:<br><br>**1. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Կհիմնանորոգվեն 12 ավագ դպրոցներ՝ անհրաժեշտ չափանիշներին համապատասխան, ինչը կնպաստի ավագ դպրոցների կարողությունների հզորացմանը: |
| **170** | **170.1 Հանրապետությունում գործող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների շենք շինությունների և ենթակառուցվածքների ուսումնասիրություն և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավումը և սպառնացող աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացումը:<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2019թ. ծրագրի 4-րդ գլխի 4.4 կետով (5-րդ պարբերություն), <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով:<br>Վերջին տարիներին ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների վերակառուցման, վերանորոգման ուղղությամբ էական փոփոխություններ չեն կատարվել: Ուսումնական հաստատությունների ակնհայտ անմխիթար վիճակը հանգեցնում է տնտեսության պահանջների անհամապատասխանության, որն իր հերթին վտանգում է կրթության որակի և արդյունավետության ապահովումը: Ելնելով վերոնշյալից, ինչպես նաև հաշվի առնելով ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների օպտիմալացման անհրաժեշտությունը՝ հրատապ է դառնում համապատասխան աշխատանքային խմբի կողմից հանրապետությունում գործող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների ուսումնասիրությունը, շենքերի և ենթակառուցվածքների արդի վիճակի օբյեկտիվ գնահատումը և դրանով պայմանավորված վերանորոգման ենթակա ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների առաջնահերթության սահմանումը, համապատասխան շինարարական աշխատանքների նախնական նախագծման, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումը, շենքային ոչ բարվոք պայմաններ ունեցող ուսումնական հաստատությունների վերակոմպլեկտավորման կամ այլ հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների մշակումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**.<br><br>2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագրեր իրականացվում են 56 պետական ուսումնական հաստատություններում (24 նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն, 26 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 4 կրթահամալիր, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն): |

Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացվում են 81 պետական ուսումնական հաստատություններում (68 միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություն, 9 ԲՈՒՀ, 2 կրթահամալիր, 1 հիմնադրամ, 1 ՓԲԸ):

Ներկայումս առկա չէ որևէ ուսումնասիրություն, որը թույլ կտա առավել առարկայական պատկերացում կազմել հանրապետությունում գործող ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների շենքային պայմանների և ենթակառուցվքածների արդի վիճակի մասին:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՀՀ կրթության և գիտության նախարարության, քաղաքաշինության պետական կոմիտեի, մարզպետարանների ներկայացուցիչների, ինչպես նաև անկախ փորձագետների ընդգրկմամբ համապատասխան աշխատանքային խմբի ձևավորում, վերջինիս կողմից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, վերանորոգման ենթակա ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների առաջնահերթության սահմանում, ուսումնասիրության արդյունքում ընտրված ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների և դրանց ենթակառուցվածքների էներգաարդյունավետ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար ՄԿՈՒ հաստատությունների հասանելիության ապահովման. համապատասխան շինարարական աշխատանքների նախնական նախագծման, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության, շենքերի տեխնիկական վիճակի հետազննության իրականացում, շենքային ոչ բարվոք պայմաններ ունեցող ուսումնական հաստատությունների վերակոմպլեկտավորման կամ այլ հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների մշակում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը:**

Միջոցառման իրականացման արդյունքում կունենանք ուսումնասիրություն, որը թույլ կտա առավել առարկայական պատկերացում կազմել հանրապետությունում՝ մասնավորապես մարզերում, գործող ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների շենքային պայմանների և ենթակառուցվքածների ներկայիս վիճակի մասին, ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների վերանորոգման գործընթացն իրականացնելիս առաջնորդվել համապատասխան աշխատանքային խմբի կողմից ձևավորված վերանորոգման ենթակա ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների առաջնահերթության ժամանակացույցով, ունենալ շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ճշտգրիտ չափը:

**<u>170.2 ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների վերակառուցում, վերանորոգում</u>**

**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավումը և սպառնացող աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացումը:

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2019թ. ծրագրի 4-րդ գլխի 4.4 կետով (5-րդ պարբերություն), <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով:

Վերջին տարիներին ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների վերակառուցման, վերանորոգման ուղղությամբ էական փոփոխություններ չեն կատարվել: Ուսումնական հաստատությունների ակնհայտ անմխիթար վիճակը հանգեցնում է տնտեսության պահանջների անհամապատասխանության, որն իր հերթին վտանգում է կրթության որակի և արդյունավետության ապահովումը: Համապատասխան կրթական միջավայրի ստեղծումը կնպաստի համակարգի շարունակական զարգացմանը, ՆՄՄԿ ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացմանը, մասնավորապես, մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը, մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության և վարկանիշի բարձրացմանը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Վերջին տարիների ընթացքում քայքայվել է կրթության համակարգի շենքային հիմքը: Հարկ է նշել, որ ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների շենքերը վերջին 15-20 տարիներին, հիմնականում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, չեն վերանորոգվել կամ վերականգնվել՝ դառնալով վթարային, չապահովելով համապատասխան կրթական միջավայր: Դրանց մի մասը վերջին տարիներին վերականգնվել է պետական բյուջեի և միջազգային կազմակերպությունների միջոցներով: Սակայն ՆՄՄԿ շատ կրթօջախներ չունեն շենքային բավարար պայմաններ, մասնավորապես, հրատապ է տանիքների, կոյուղագծերի և սանհանգույցների նորոգումը:

| | |
|---|---|
| | Ուսումնական հաստատությունների ակնհայտ անմխիթար վիճակը հանգեցնում է տնտեսության պահանջների անհամապատասխանության, որն իր հերթին վտանգում է կրթության որակի և արդյունավետության ապահովումը: Ելնելով վերոգրյալից՝ առաջնային խնդիր է դառնում ապահով և անվտանգ միջավայրի ստեղծումը, մասնավորապես, ըստ գնահատված կարիքների՝ շենքերի հիմնանորոգումը, սեյսմակայունացումը՝ հաշվի առնելով կրթության նորացող մեթոդաբանությունը, անվտանգության և համընդհանուր մատչելիության չափանիշները:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համապատասխան կրթական միջավայրի ստեղծումը կնպաստի համակարգի շարունակական զարգացմանը, մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացմանը, մասնավորապես, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը, հաշմանդամություն ունեցող անձանց համար լիարժեք ֆիզիկական մատչելիության, շրջանավարտների զբաղվածության ապահովմանը, մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության, որակի և վարկանիշի բարձրացմանը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը:**<br><br>Միջոցառման իրականացման արդյունքում 2023թ. դրությամբ կվերանորոգվեն, կվերակառուցվեն թվով 6 ՆՄՄԿ ուսումնական հաստատություն: Համապատասխան կրթական միջավայրի ստեղծումը կնպաստի համակարգի շարունակական զարգացմանը, սահմանափակ կարողություններ ունեցող անձանց համար կրթության մատչելիության ապահովմանը, ՆՄՄԿ ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացմանը, մասնավորապես, մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը, մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության և վարկանիշի բարձրացմանը: |
| | **<u>170.3 ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների համալրում և հագեցում համապատասխան գույքով և սարքավորումներով</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավումը և սպառնացող աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացումը:<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2019թ. ծրագրի 4-րդ գլխի 4.4 կետով (3-րդ և 5-րդ պարբերություններ), <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով:<br>Նյութատեխնիկական և ուսումնաարտադրական բազայի ակնհայտ ետ մնալը ժամանակակից բարձր տեխնոլոգիական արդյունաբերությունից հանգեցնում է տնտեսության պահանջների անհամապատասխանության, որն իր հերթին վտանգում է կրթության որակի, արդյունավետության, հետևաբար որակյալ մասնագիտական կադրերի պատրաստման ապահովումը:<br>Ուսումնական հաստատությունների համալրումը և համապատասխան գույքով ու սարքավորումներով հագեցումը կնպաստեն համակարգի շարունակական զարգացմանը, սարքավորումների և ենթակառուցվածքների արդիականացմանը, մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը: Այն հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ կազմակերպել մասնագիտական կրթությունը և ուսուցումը, բարելավել շրջանավարտների զբաղունակությունը, մասնագիտական հմտություններն ու կարողությունները՝ համապատասխանեցնելով դրանք աշխատաշուկայի պահանջներին, նպաստելով մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության և վարկանիշի բարձրացմանը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br><br>Հարկ է նշել, որ ՄԿՈւ ուսումնական հաստատությունների շենքերը վերջին 15-20 տարիներին, հիմնականում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, չեն վերանորոգվել կամ վերականգնվել և հետևաբար չեն հագեցվել համապատասխան սարքավորումներով, գույքով և չունեն անհրաժեշտ ենթակառուցվածք, այդ իսկ պատճառով էլ ուսումնարանները/քոլեջները չեն ապահովում համապատասխան կրթական միջավայր և կարողությունների և հմտությունների ձևավորմանը միտված որակյալ կրթություն:<br>Գործնարար ոլորտում տեխնոլոգիաների արագ զարգացումները, նոր մասնագիտությունների ի հայտ գալը, որակյալ, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կադրերի պատրաստումը, աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպումն ընդլայնելու, տեսականին զուգահեռ գործնական ուսուցում |

| | |
|---|---|
| | կազմակերպելու, կարողութենամետ նոր մոդուլային ուսումնական պլանների իրականացման անհրաժեշտությունը հրատապ են դարձնում ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների համալրման և համապատասխան գույքով և սարքավորումներով հագեցման միջոցառման իրականացումը:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համապատասխան կրթական միջավայրի ստեղծումը կնպաստի համակարգի շարունակական զարգացմանը, մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացմանը, մասնավորապես, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը, շրջանավարտների զբաղունակության, մասնագիտական հմտությունների և կարողությունների բարելավմանը, մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության, որակի և վարկանիշի բարձրացմանը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը:**<br><br>Միջոցառման իրականացման արդյունքում 2023թ. դրությամբ թվով 6 ՆՄՄԿ ուսումնական հաստատություն կհամալրվի և կհագեցվի համապատասխան գույքով և սարքավորումներով, ինչը կնպաստի համակարգի շարունակական զարգացմանը, սարքավորումների և ենթակառուցվածքների արդիականացմանը, մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը, մասնագիտական կրթության և ուսուցման առավել արդյունավետ կազմակերպմանը, շրջանավարտների զբաղունակության բարելավմանը, մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության և վարկանիշի բարձրացմանը: |
| 171 | **171.1 Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակում**<br><br>**171.2 Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում կատարողականի վրա հիմնված պետական ֆինանսավորման մեխանիզմների ներդրում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:<br>Միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնի 1-ին և 5-րդ պարբերություններից՝ նպատակ ունենալով գնահատել գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետությունը և ներդնել գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում կատարողականի վրա հիմնված պետական ֆինանսավորման մեխանիզմներ:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ներկայումս գիտական կազմակերպությունների ֆինանսավորման զգալի մասը (մոտ 75%) իրականացվում է բազային ֆինանսավորման ձևով՝ ծրագրային հիմունքներով: Այսինքն, ֆինանսավորման ժամանակ հաշվի է առնվում կազմակերպությունում իրականացվող ծրագիրը, աշխատողների թվաքանակը, նախկինում ձևավորված ավանդույթները և այլն: Հաշվի չեն առնվում կազմակերպության ունեցած ձեռքբերումները և ֆինանսավորումը փաստորեն իրականացվում է համահարթեցման սկզբունքով, այն է՝ մեկ պայմանական միավորի հաշվարկով նույն չափի պետական ֆինանսավորում են ստանում և՛ բարձր, և՛ ցածր արդյունավետությամբ աշխատող կազմակերպություններ, այդ թվում բացակայում են բարձր արդյունավետության խրախուսումը և մրցակցային միջավայրը:<br><br>**1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Առաջարկվում է գնահատել գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների արդյունավետությունը, ներդնել դրա և պետական ֆինանսավորման ծավալների համապատասխանության հստակ մեխանիզմները: |

**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառումների իրականացման արդյունքում կբարձրանա գիտական հետազոտությունների արդյունավետությունը, գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների պետական ֆինանսավորման ծավալները կհամապատասխանեցվեն իրականացվող աշխատանքների արդյունավետությանը:

**171.3 Գիտության ոլորտի օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների ծրագրի մշակում և իրականացում**

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի Գիտության ոլորտի 1-ին և 5-րդ պարբերություններից՝ նպատակ ունենալով օպտիմալացնել գիտության ոլորտը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում միավորելով միևնույն գիտական ուղղության պետական գիտական կազմակերպությունները կամ բուհերի կազմում ընդգրկել այս կամ այն գիտական կազմակերպությունը, ինչպես նաև ՀՀ գիտության ոլորտում ներդնելով գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի կառավարման ու աշխատանքների կազմակերպման ժամանակակից համակարգ:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում դանդաղ են իրականացվում կառուցվածքային բարեփոխումները, գիտական կազմակերպություններում ներդրված չէ աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման ժամանակակից համակարգը:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է գիտության բնագավառի ոլորտային և միջոլորտային մոտեցմամբ օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների իրականացում, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, անկախ գերատեսչական պատկանելությունից, միևնույն գիտական ուղղության պետական գիտական կազմակերպությունների միավորմանը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ՀՀ գիտության ոլորտում ներդնել գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի կառավարման ու աշխատանքների կազմակերպման ժամանակակից համակարգ, որն էլ իր հերթին կբարձրացնի գիտական հետազոտությունների արդյունավետությունը:

**171.4 «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2021-2025 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**

**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Աժ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնի 1-ին և 5-րդ պարբերություններից՝ նպատակ ունենալով ամրագրել ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում 2021-2025 թվականներին իրականացվելիք պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, նպատակները, այդ նպատակների ձեռքբերմանն ուղղված մարտավարություններն ու դրանց պատասխաններին ուղղված հիմնական լուծումներն ու այդ լուծումներով պայմանավորված միջոցառումները:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում 2017-2020 թվականներին իրականացվելիք պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, նպատակները և դրանց ձեռքբերմանն ուղղված միջոցառումներն ամրագրված են ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրով, որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշմամբ: Ռազմավարական ծրագրով նախատեսվում են ՀՀ գիտության ոլորտի առջև ներկայումս ծառացած հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ՝ հստակ ժամկետներով, պատասխանատու կատարողներով, ակնկալվող արդյունքներով և վերջիններիս գնահատման գիտաչափական մեխանիզմներով: Ռազմավարական ծրագիրը 2021 թվականից դադարելու է գործել:

**1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է հիմք ընդունելով ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված միջոցառումների կատարման ընթացքը, ընթացիկ և վերջնական արդյունքները՝ մշակել ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2021-2025 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը:

**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում 2021-2025 թվականներին իրականացվելիք պետական քաղաքականության հիմնական ուղղությունների, նպատակների և այդ նպատակների ձեռքբերմանն ուղղված մարտավարությունների ամրագրում, մարտավարություններին համապատասխան միջոցառումների և արդյունքների գնահատման առանցքային ցուցանիշների առկայություն:

**<u>171.5 «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2020-2024 թվականների գերակայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ պարբերությունը, «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնի 1-ին և 5-րդ պարբերություններից՝ նպատակ ունենալով վերասահմանել ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման 2020-2024 թվականների գերակայությունները:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման ներկայումս գործող 2015-2019 թվականների գերակայությունները սահմանվել են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 54 արձանագրային որոշմամբ և հետևյալներն են՝

1) հայագիտություն,
2) գիտություններ կյանքի մասին,
3) արդյունավետ և անվտանգ էներգետիկա,
4) հիմնական արդյունավետ տեխնոլոգիաներ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ,
5) տիեզերքի ուսումնասիրություն, երկրի մասին գիտություններ, խնայողական բնօգտագործում,
6) գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված հիմնարար հետազոտություններ:

ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման ներկայումս գործող 2015-2019 թվականների գերակայությունները 2020 թվականից դադարելու է գործել:

**1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1558-Ն որոշմամբ

հաստատված սկզբունքները և չափանիշները, ՀՀ տնտեսության տարբեր ոլորտների զարգացման ռազմավարությունները և հայեցակարգերը, ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2014-2018 թվականների արդյունքները, այդ թվում՝ միջազգային առաջատար գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված հրապարակումները, հանրապետությունում առկա գիտական ներուժի և ենթակառուցվածքների գնահատականը, պետական գիտական ծրագրերի և թեմաների արդյունքները, ինչպես նաև միջազգային փորձը՝ առաջին հերթին գիտության և նորարարության բնագավառում Եվրամիության «Հորիզոն 2020» շրջանակային ծրագրի գերակայությունները՝ սահմանել ՀՀ-ում գիտության և տեխնիկայի զարգացման 2020-2024 թվականների գերակայությունները, ապահովել հանրապետության տնտեսության պահանջներից բխող և (կամ) միջազգայնորեն արդիական համարվող գիտահետազոտական աշխատանքների պետական ֆինանսավորման առաջնահերթությունները:

**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

2020-2024 թվականներին իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ծրագրերի և թեմաների համապատասխանեցում հանրապետության գիտական ներուժի առկա հնարավորություններին և ունեցած ձեռքբերումներին, ինչպես նաև գիտության և տեխնիկայի զարգացման համաշխարհային միտումներին: Հասցեական, այդ թվում՝ նաև հանրապետության տնտեսության պահանջներից բխող, հետազոտությունների և մշակումների իրականացում, արդյունքում՝ պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացում:

**171.6 Տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական մրցունակ արտադրանքի ստեղծմանն ուղղված մեխանիզմների մշակում և ներդրում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ պարբերությունը Գիտության ոլորտի 1-ին և 5-րդ պարբերություններից՝ նպատակ ունենալով աջակցել և խթանել տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև երկակի նշանակություն ունեցող գիտական արդյունքի ձեռքբերմանն ուղղված ծրագրերը:

**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում իրականացվում են երկակի նշանակության և կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված մրցույթներ, որոնք նպատակաուղղված են տնտեսության պահանջներից բխող հետազոտությունների խրախուսմանը: Սակայն, այսօր ժամանակի հրամայականն է, որպեսզի ՀՀ գիտության ոլորտը լինի միջազգայնորեն մրցունակ և երկրի տնտեսության կարիքներից բխող, ինչպես նաև երկակի նշանակության հետազոտություններում գերազանցությունը խթանող համակարգ, որի համար անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել այդ ուղղություններում հետազոտությունների քանակն ավելացնելու նպատակով:

**1.2.առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Անհրաժեշտ է մշակել և ներդնել տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական մրցունակ արտադրանքի ստեղծմանն ուղղված մեխանիզմներ՝ այդ ուղղություններում իրականացվող հետազոտությունների քանակի ավելացման նպատակով:

**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Տնտեսության պահանջներից բխող հետազոտությունների պատվերների ձևավորման մեխանիզմների առկայություն, երկակի նշանակություն ունեցող գիտական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խրախուսման մեխանիզմների առկայություն:

| | |
|---|---|
| 172 | **172.1 «Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**<br><br>**172.2 Օտարերկրյա պետություններում աշխատող գիտական և (կամ) գիտակրթական կադրերի վերաինտեգրման ծրագրերի իրականացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:<br>«23.1. «Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ», 23.2. Օտարերկրյա պետություններում աշխատող գիտական և (կամ) գիտակրթական կադրերի վերաինտեգրման ծրագրերի իրականացում» միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնի 2-րդ պարբերությունից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրից՝ նպատակ ունենալով երիտասարդ գիտնականների համար Հայաստանում ստեղծել ապրելու և ստեղծագործելու ժամանակակից պայմաններ, Հայաստանի զարգացման ծրագրերում ներգրավել օտարերկրյա պետություններում գտնվող հայ գիտնականներին:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ներկայումս իրականացվում են մի շարք միջոցառումներ՝ նպատակաուղղված երիտասարդ գիտնականների և նրանց կողմից կատարվող հետազոտությունների աջակցմանը: Մասնավորապես, պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաների հայտերի մրցույթների ժամանակ սահմանվել են երիտասարդ կատարողների (ասպիրանտներ և մագիստրանտներ) մասնակցության նվազագույն սահմանը, իրականացվում են ասպիրանտների և երիտասարդ գիտնականների աջակցության, բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողների խրախուսման, ինչպես նաև շարժունակության ապահովման ծրագրեր: Սակայն դրանք բավարար չեն գիտական և գիտամանկավարժական կադրերի արդյունավետ վերարտադրության և բնագավառի կադրային կազմի տարիքային կառուցվածքի անհրաժեշտ փոփոխությունն ապահովելու համար: Ներկայումս գիտության ոլորտի առջև ծառացած կարևորագույն հիմնախնդիրներից է գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության հարցը: Շարունակվում է գիտական կադրերի, առաջին հերթին, երիտասարդների զգալի արտահոսք գիտության ոլորտից, այդ թվում նաև՝ օտարերկրյա պետություններ: Արդյունքում՝ գիտության ոլորտի կադրային կազմի այդպիսի փոփոխությունները բերեցին գիտության արագ «ծերացման», գիտական հետազոտությունների մասնագիտական մակարդակի որակական փոփոխության, խախտվեցին գիտական և գիտամանկավարժական դպրոցների շարունակականությունը, սերնդափոխության սահուն ընթացքը: Նպատակին կարելի է հասնել միայն պետական ծրագրային քաղաքականության միջոցով, որի արդյունավետությունը պայմանավորված է համակարգային բնույթով և, որը հնարավորություն կտա կենտրոնացնել ռեսուրսները՝ բնագավառը երիտասարդ կադրերով համալրելու և ամրապնդելու առաջնայնությունների վրա:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Միջոցառումների կատարումը նպատակաուղղված են գիտության ոլորտում այնպիսի միջոցառումների մշակմանն ու իրականացմանը, որոնց արդյունքում հնարավոր կլինի ներդնել ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման և հաստատման մեխանիզմներ, մեծացնել երիտասարդների դերը ոլորտի զարգացման գործում, բարձրացնել գիտական աշխատողի վարկանիշը և հետաքրքրություն առաջացնել երիտասարդների մեջ գիտության նկատմամբ:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա ՀՀ գիտության ոլորտում ներդնել գիտական ու գիտամանկավարժական կադրերի պատրաստման ժամանակակից եղանակներ, կնպաստի գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելու խնդրի լուծմանը, կբերի գիտական կադրերի վերարտադրության արդյունավետության բարձրացմանը: Համապատասխան ծրագրերը կներառեն տաղանդավոր երիտասարդներին |

| | |
|---|---|
| | գիտության ասպարեզ ներգրավումը խթանող, օտարերկրյա պետություններում աշխատող կամ բուհերում սովորող հայ երիտասարդների վերադարձին նպաստող մասնագիտական ու սոցիալական պատշաճ պայմանների ստեղծման նախադրյալներ:<br>Արդյունքում կունենանք օտարերկրյա պետություններում աշխատող բարձր վարկանիշ ունեցող հայազգի գիտնականների ՀՀ-ում հետազոտական միավորի ղեկավարման և միջազգային չափանիշներին համապատասխան աշխատանքային պայմանների ձևավորման համապատասխան մեխանիզմներ, ինչպես նաև գիտական աշխատողների 35-50 տարիքային միջակայքի մասնաբաժնի ավելացում ընդհանուրի մեջ: |
| **173** | **173.1 Միջազգային չափանիշներին համապատասխան գիտական հետազոտություններ իրականացնելու պայմանների ձևավորման մեխանիզմների մշակում և ներդրում**<br><br>**173.2 Գիտանորարարական ենթակառուցվածքների ստեղծման աջակցության մեխանիզմներ**<br><br>**173.3 Եվրոպական հետազոտական տարածքում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերմանն ուղղված ծրագրերի իրականացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:<br>«24.1 Միջազգային չափանիշներին համապատասխան գիտական հետազոտություններ իրականացնելու պայմանների ձևավորման մեխանիզմների մշակում և ներդրում», «24.2.Գիտանորարարական ենթակառուցվածքների ստեղծման աջակցության մեխանիզմներ», «24.3.Եվրոպական հետազոտական տարածքում խելացի մասնագիտացման տիրույթի ձեռքբերմանն ուղղված ծրագրերի իրականացում» միջոցառումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի 3-րդ պարբերությունից, Գիտության ոլորտին վերաբերող բաժնի 3-րդ և 4-րդ պարբերություններից՝ նպատակ ունենալով նպաստել գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում գերազանցության խթանմանը, ինչպես նաև միջազգային ասպարեզում, այդ թվում՝ Եվրոպական հետազոտական տարածքում մրցունակ ազգային գիտահետազոտական համակարգ ստեղծելուն:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ոլորտի առկա խնդիրներից է կրթության և գիտության կապերի ամրապնդումը: Ներկայումս գոյություն ունեն և առանձին գործում են բարձրագույն ուսումնական հաստատություններ և գիտահետազոտական ինստիտուտներ, այդ թվում՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում: Շատ կարևոր է բարձրագույն կրթության մեջ գիտական բաղադրիչի ներգրավումն ու մեծացումը, հատկապես մագիստրոսական և հետբուհական կրթական ծրագրերում, ինչը հնարավորություն կստեղծի բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում օգտագործել գիտական հետազոտական ներուժը: Գիտական և գիատեխնիկական գործունեությամբ զբաղվող առաջադեմ և արդյունավետ հետազոտողների անմիջական մասնակցությունն ու ներգրավումը կրթական գործընթացներում կբարձրացնի բուհերում հետազոտական և գործնական հատվածը:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Անհրաժեշտ է նաև գիտության ֆինանսավորման մեջ արտաբյուջետային միջոցների ներգրավումը և տնտեսության կարիքներից բխող կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական հետազոտություններին աջակցությունը: Այն ոչ միայն կնպաստի բարձրագույն կրթության, գիտության և արտադրության կապի ձևավորմանն ու զարգացմանը, այլև կծառայի տնտեսության կոնկրետ խնդիրների լուծման համար գիտակրթական ներուժի օգտագործմանը: Տեխնոլոգիաների փոխանցմանն աջակցելու համար կարևոր է նաև պետական և ոչ պետական գիտահետազոտական կազմակերպությունների հիմքի վրա գիտական նորամուծությունների և գերազանցության կենտրոնների ստեղծումը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Բնագիտության և ճարտարագիտության բնագավառներում միջազգային չափանիշներին համապատասխան |

| | |
|---|---|
| | գիտական հետազոտություններ իրականացնող գիտական կենտրոնների առկայություն, գիտական կազմակերպություններում և բուհերում գիտանորարարական միավորների առկայություն, Եվրոպական հետազոտական տարածքում խելացի մասնագիտացման տիրույթի ծեռքբերմանն ուղղված ծրագրերի իրականացում: |
| 174 | **174.1 Հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովում, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացման մակարդակի բարձրացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:<br>«4.1 «Հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովում, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացման մակարդակի բարձրացում» միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ ԱԺ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնի 6-րդ պարբերությունից՝ նպատակ ունենալով ապահովել հայագիտության ոլորտի առաջանցիկ զարգացումը:<br><br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովումը պետական քաղաքականության գերակա ուղղություններից է և կոչված է պահպանելու ժողովրդի ազգային նկարագիրը, իրականացնելու սերունդներին կրթելու, հայեցի դաստիարակելու և Հայրենիքին նվիրված քաղաքացիներ պատրաստելու գործը՝ նպատակաուղղված պետականության հզորացմանը, հայոց ազգային գաղափարախոսության ձևավորմանը: Աշխարհի տարբեր երկրներում եղել ու գործում են հայագիտական կենտրոններ, բայց հայագիտության զարգացման գլխավոր կենտրոնն այսօր ՀՀ-ն է, ուր հայագիտության ներդաշնակ և համակողմանի զարգացումն ապահովվում է պետության մշտական օժանդակությամբ ու հոգածությամբ: Հայագիտության ոլորտում այսօր հրատապ խնդիրներից է, մասնավորապես, օտարալեզու լսարանին հասու աշխատանքների սակավությունը, քանի որ հայագիտության ոլորտի գիտական աշխատանքները հիմնականում տպագրվում են հայերեն լեզվով:<br><br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Անհրաժեշտ է մշակել միջազգային համագործակցությունը խթանող մեխանիզմներ, ինչպես նաև ապահովել այլ պետությունների գիտական կառույցների հետ համագործակցության իրականացումը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Միջազգային մակարդակին համապատասխան հայագիտական հետազոտություն իրականացնող գիտական միավորների առկայություն, հայագիտական հետազոտությունների միջազգային տեսանելիության մակարդակի բարձրացում: |
| 175 | **175.1 ՀՀ կառավարության 09. 07. 2001թ. թիվ 615 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի փոփոխությունների նախա-գծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է 2018 թվականի հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1141-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 133-Ն որոշմամբ հաստատված «Կրթության ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված միջոցառումների» ծրագրի 26-րդ կետի կատարման պահանջից և ՀՀ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից ( «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնի վերջին պարբերություն): Կանոնակարգի վերանայման և փոփոխման անհրաժեշտությունը |

պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Կանոնակարգում գիտական կոչման շնորհման համար անհրաժեշտ պայմաններից մեկը «գիտամանկավարժական» ստաժի առկայությունն է: Վերջինս խնդրահարույց է այն առումով, որ գիտամանկավարժական ստաժ հասկացությունը սահմանված չէ որևէ իրավական ակտով և հաշվարկման համար հիմք է տալիս սուբյեկտիվ մոտեցման և տարակարծության համար: Գիտական կոչման շնորհման չափանիշները ընդհանուր առմամբ ունեն վերանայման կարիք, սակայն որոշ բնագավառներ՝ մշակույթ, սպորտ, ճարտարապետություն, կարգավորվում են տարբերակված չափանիշների հիման վրա: Վերջիններս ունեն լուրջ վերանայման և հստակեցման կարիք: Կարգում առհասարակ բացակայում է ռազմական գիտությունների բնագավառը, ինչն էլ այս պահին խոչընդոտ է հանդիսանում ռազմական գիտությունների բնագավառում գիտական կոչումների շնորհման գործընթացում: Վերանայման կարիք ունի կոչումների շնորհման ընթացակարգը:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Այսօր անհրաժեշտություն կա վերանայելու նշված կարգը՝ կոչումների շնորհման չափանիշները հստակեցնելու, կարգում նոր ձևակերպումներ տալու, դրույթների սուբյեկտիվ մեկնաբանման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման առումով:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Բուհերի, գիտական կազմակերպությունների և անհատ գիտնականների ներգրավմամբ հարկավոր է մշակել կոչումների շնորհման նոր չափանիշներ, որոնք կլրացնեն գործող կարգում առկա բացերն ու հակասությունները:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառումների արդյունքում նախատեսվում է ունենալ Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու նոր կարգ, որտեղ չափանիշները սահմանված կլինեն ըստ բնագավառների յուրահատկությունների:

**175.2 Գիտական աստիճանների և գիտամանկավարժական կոչումների շնորհման անվանացանկերի վերանայում**

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից ( «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնի վերջին պարբերություն): Գիտական աստիճանների և գիտամանկավարժական կոչումների շնորհման անվանացանկերի վերնայումը թելադրված է ժամանակի պահանջով, ըստ որի գիտության ճյուղերի անընդհատ զարգացումը բերում է արդի գիտահետազոտական ուղղությունների և աստիճանաշնորհման ու կոչումների շնորհման անվանացանկի անհամապատասխանության և վերջիններիս վերանայումն ու լրացումը անհրաժեշտ են դառնում գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Անհրաժեշտ է վերանայել և արդիականացնել գիտական աստիճանների և գիտամանկավարժական կոչումների շնորհման անվանացանկերը՝ մասնագիտական խորհուրդներում մասնագիտության թվանիշին համապատասխան մասնագիտական կազմ հաստատելու և գիտական թեմաները ճշգրիտ թվանիշով հաստատելու նպատակով: Ներկա պահին այս հարցը աստիճանաշնորհման գործընթացում հաճախ հանդիպող խնդիրներից է:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Վերանայել և վերահաստատել գիտական աստիճանների և գիտամանկավարժական կոչումների շնորհման անվանացանկերը:

| | |
|---|---|
| | **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Միջոցառումների արդյունքում նախատեսվում է ունենալ Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների և գիտամանկավարժական կոչումների շնորհման նոր անվանացանկեր: |
| | **175.3 Մասնագիտական որակավորման քննությունների ծրագրերի ընդգրկման վերանայում՝ ըստ նոր անվանացանկի**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից («4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնի վերջին պարբերություն): Մասնագիտական որակավորման քննությունների ծրագրերի վերանայման անհրաժեշտությունը բխում է մասնագիտությունների ընդգրկմանը համապատասխանեցված որակավորման քնությունների արդիականացված ծրագրերի և աստիճանաշնորհման անվանացանկին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից: Գիտությունը անընդհատ զարգանում և համալրվում է նոր դրույթներով, իսկ զարգացումները չեն արտահայտվում քննական ծրագրերում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Անհրաժեշտ է վերանայել և արդիականացնել մասնագիտական որակավորման քննությունների ծրագրերը: Գիտության դաշտ մտնող ապագա գիտնականների մասնագիտական պատրաստվածության և որակի չափորոշիչներից մեկը մասնագիտական որակավորման քննությունների արդյունքներն են, իսկ վերջիններս պետք է հիմնվեն գիտության զարգացմանը համընթաց թարմացվող և համալրվող ծրագրերի վրա:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերանայել և վերահաստատել մասնագիտական որակավորման քննությունների ծրագրերը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառումների արդյունքում նախատեսվում է ունենալ մասնագիտական որակավորման քննությունների արդիական ծրագրեր: |
| | **175.4 Հայաստանի Հանրապետությունում հրատարակվող գիտական պարբերականների գնահատման չափանիշների մշակում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից («4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնի վերջին պարբերություն): Ատենախոսությունների հիմնական դրույթների արտացոլման համար ընդունելի գիտական պարբերականների գնահատման համար բացակայում են գնահատման մշակված չափանիշներներ, որոնք հնարավոր կդարձնեն միջազգային չափորոշիչներին համապատասխան գիտական պարբերականների ցանկի ստեղծումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հրատապ է նաև ՀՀ-ում հրատարակվող գիտական պարբերականների գնահատման չափանիշների մշակման անհրաժեշտությունը, քանի որ ատենախոսությունների հիմնական դրույթների արտացոլման համար ընդունելի գիտական պարբերականների գնահատման գործընթացը պետք է հիմնված լինի գիտական հանրույթի մասնակցությամբ մշակված չափորոշիչների վրա:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Գիտական պարբերականների գնահատման չափանիշների մշակումը հարկավոր է ապահովել մասնագետների լայն ընդգրկմամբ կազմված աշխատանքային խմբի շրջանակներում:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Գիտական պարբերականների գնահատման չափորոշիչները կնպաստեն անկողմնակալ և օբյեկտիվ գնահատման արդյունքում հաստատված ատենախոսությունների հիմնական դրույթների արտացոլման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկի ստեղծմանը: |
| | **175.5 Գիտական աստիճանի հայցման նպատակով գիտահետազոտական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման և գործող կարգերի պահպանման նպատակով ասպիրանտների, հայցորդների և գիտական ղեկավարման իրավունք ունեցողների համար գործընթացի լուսաբանման, գիտական աշխատանքի իրականացման տեխնոլոգիաների պարզաբանման սեմինարներ և վերապատրաստման դասընթացներ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից («4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնի վերջին պարբերություն): Ելնելով աստիճանաշնորհման գործընթացում անընդհատ ծագող խնդիրների բնույթից և ծավալից, կարելի է հստակ արձանագրել, որ խնդիրների գերակշիռ մասը իրազեկվածության պակասի արդյունք են: Ասպիրանտները, հայցորդները և գիտական ղեկավարման իրավունք ունեցողները լիարժեք չեն տիրապետում ինչպես աստիճանաշնորհման գործող կարգին և իրականացվող փոփոխություններին, այնպես էլ գիտահետազոտական գործընթացի պատշաճ կազմակերպման կառուցակարգերին և էթիկայի նորմերին: Ոչ ճիշտ կազմակերպված գիտահետազոտական աշխատանքի արդյունքում տեղի է ունենում ռեսուրսների վատնում, ինչի արդյունքում տուժում են ասպիրանտներն ու հայցորդները:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Անհրաժեշտություն կա բարձրացնելու ասպիրանտների, հայցորդների և գիտական ղեկավարների իրազեկվածության մակարդակը: Հարկավոր է ստեղծել և կայացնել աստիճանաշնորհման գործընթացի լուսաբանման կայուն ինստիտուտ:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Իրազեկված ատենախոսների և գիտական ղեկավարների հանրության ձևավորումը հնարավոր է փոխշահավետ համագործակցային կապի ստեղծմամբ և հրատապ լուծման կարիք ունեցող խնդիրների որոշակիացմամբ:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Քննարկումների, սեմինարների և պարբերական բնույթ կրող հանդիպումների ընթացքում գիտական աստիճանի հայցման նպատակով գիտահետազոտական գործընթացը կկազմակերպվի գործող կարգերին համարժեք և կձևավորվի իրազեկված ատենախոսների և գիտական ղեկավարների հանրույթ: |
| 176 | **176.1 Հայաստանի Հանրապետությունում գիտական կադրերի տվյալների միասնական էլեկտրոնային շտեմարանի ստեղծում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից ( «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնի 2-րդ պարբերություն): Էլեկտրոնային հարթակի ստեղծման նպատակն է գիտության ոլորտի կադրային բազայի ստեղծումը:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Միջազգայնորեն մրցունակ գիտության, գիտական կադրերի և վերջիններիս սերնդափոխության ապահովման |

հնարավոր ճանապարհներից մեկը գիտական աստիճանաշնորհման և կոչումների շնորհման գործընթացի թափանցիկության, հանրայնացման, արդյունավետության բարձրացման, հանրային վերահսկողության ապահովման տարբերակն է:

Գիտական կադրերի շրջանում խիստ արդիական խնդիրներից մեկը՝ կադրերի արտահոսքը, բերեց մրցունակ և ներուժ ունեցող կադրային կազմի պակասի:

Երկրում գործող անհատ գիտնականների մեծամասնությունը չունի հնարավորություն իր գիտական գործունեության վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հանրայնացման համար: Սա ապագա ասպիրանտների և հայցորդների համար առաջացնում է խնդիր իրենց հետազոտական ուղղվածությանը համապատասխան գիտական ղեկավարների ընտրության հարցում:

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Էլեկտրոնային «Գիտական հարթակ» – ի ստեղծում: Հարթակի ստեղծմամբ տեխնիկական աջակցություն է ցուցաբերվում անհատ գիտնականներին:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում նախատեսվում է ունենալ միջազգային չափանիշներին համապատասխան, բաց հասանելիությամբ, եռալեզու հարթակ, որտեղ համատեղված կլինեն Հայաստանում և Հայաստանից դուրս գործող գիտնականների անհատական պլատֆորմները:

**176.2 Հայաստանի Հանրապետությունում հրատարակվող գիտական պարբերականների հարթակից օգտվելու աջակցություն**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից ( «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնի 2-րդ պարբերություն): Էլեկտրոնային հարթակի ստեղծման նպատակն է հրապարակվող գիտական պարբերականների կայքի ձևավորման, պահպանման և վարման տեսանկյունից աջակցության ցուցաբերումը, հրատարակվող գիտական նյութերի լայն հասանելիության և միջազգայնացման ապահովումը:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գիտական պարբերականները ֆինանսական սղության պատճառով չեն ապահովում կամ մասամբ են ապահովում պարբերականի էլեկտրոնային կայք էջի գործարկումը, ինչն էլ խոչընդոտում է գիտական նյութերի հասանելիությանը, հանրայնացմանը և միջազգայնացմանը: Որոշ դեպքերում կայքերի պահպանության համար պահանջվող ֆինանսական միջոցների ապահովման նպատակով հոդվածները պարբերականներում տպագրվում են վճարովի հիմունքներով:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հարթակի ստեղծմամբ տեխնիկական աջակցություն է ցուցաբերվում ոչ միայն անհատ գիտնականներին, այլ նաև գիտական պարբերականներին: Հարթակը կծառայի որպես գիտության դաշտում ակտիվ գործող գիտնականների և վերջիններիս հրապարակումների վերաբերյալ տեղեկատվության գեներացման միջավայր:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում գիտական պարբերականները կունենան անվճար սպասարկվող կայք և տպագրվող նյութերի ավելի լայն հասանելիություն:

**176.3 Գիտական աստիճանի հայցման համար ատենախոսությունների պաշտպանության գործընթացի լուսաբանում «Գիտական հարթակում»**

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից ( «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնի 2-րդ պարբերություն): Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը գիտական աստիճանի հայցման համար ատենախոսությունների գործընթացի լուսաբանումն է:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գիտական աստիճանաշնորհման գործընթացի կազմակերպման համար խնդրահարույց է ոչ միայն լիազոր մարմնի կողմից գործող կարգերի վերաբերյալ համալրված տեղեկատվության տրամադրումը, այլ նաև վերջիններիս վերաբերյալ գիտական հանրույթի կողմից արձագանքի և կարծիքների ստացման հնարավորությունը:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Էլեկտրոնային «Գիտական հարթակ» – ի ստեղծմամբ տեխնիկական աջակցություն է ցուցաբերվում ոչ միայն անհատ գիտնականներին և գիտական պարբերականներին, այլ նաև վերջինիս միջոցով հնրավոր է դառնում աստիճանաշնորհման գործընթացի լիազոր մարմնի և գիտական հանրույթի միջև հետադարձ և անընդհատ կապի ապահովումը:

Հարթակը կնպաստի նաև գիտական կադրերի համալրմանը՝ գիտական ատենախոսությունների պաշտպանության գործընթացում հարթակում կազմակերպվող հեռահար քննարկումներում արտասահմանում գործող հայ գիտնականների ներգրավմամբ :

2. **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում նախատեսվում է ունենալ միջազգային չափանիշներին համապատասխան, բաց հասանելիությամբ, եռալեզու հարթակ, որտեղ համատեղված կլինեն Հայաստանում և Հայաստանից դուրս գործող գիտնականների անհատական պլատֆորմները, հրատարակվող գիտական պարբերականները և համակողմանի լուսաբանվող գիտական ատենախոսությունների պաշտպանության գործընթացը՝ ներառյալ հեռահար քննարկումները:

177

**<u>177.1 Հայաստանի Հանրապետության գերատեսչությունների հետ համատեղ գիտական հետազոտության անհրաժեշտություն ունեցող թեմաների առաջադրում</u>**

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման գլխավոր նպատակն է գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանեցումը երկրի տնտեսության կարիքներին, հետազոտությունների իրականացման միջազգային արդի պահանջներին և սկզբունքներին:

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից ( «4.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» կետի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնի 1-ին պարբերություն): Միջոցառման նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետությունում գիտական հետազոտությունների ուղղությունների արդիականացմանը, արդի պահանջներին համապատասխանող գիտական թեմաների հստակեցմանը և գիտության բնագավառում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը:

**1. 1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Բուհերում և գիտական կազմակերպություններում հետազոտությունների թեմաները հաճախ ընտրվում և հաստատվում են առանց հաշվի առնելու տվյալ ուղղությամբ հետազոտման անհրաժեշտության և ընտրված թեմաների արդիականության գործոնները:

Հաճախ գիտական հետազոտությունների համար պետական միջոցներից տրամադրվող ռեսուրսները չեն ուղղվում երկրի տնտեսության և այլ ոլորտների կարիքների բավարարմանը:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի Հանրապետության գերատեսչությունների, պետական այլ մարմինների և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ գիտական հետազոտության անհրաժեշտություն ունեցող թեմաների առաջադրումը կնպաստի ասպիրանտական թեմաների վերանայմանը և համապատասխանեցմանը գիտական հետազոտություններ և նոր լուծումներ պահանջող առկա խնդիրներին: Թեմաների առաջադրումից հետո միայն հնարավոր կլինի պարզել հասցեատեր համակատարող պետական մարմիններին:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման համատեղ և համակարգված իրականացումը կաջակցի գիտահետազոտական գործունեության պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը, երկրի տնտեսության կարիքներից բխող մասնագիտություններով արդի պահանջներին համապատասխանող գիտահետազոտական գործունեության կազմակերպմանը:

**Մշակույթի նախարարություն**

178

**178.1 «Մշակույթի պահպանման, տարածման և զարգացման հեռանկարային ծրագրի» ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ կառավարության վարած մշակութային քաղաքականությանը համապատասխան, մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, ազգային արվեստների հենքի և ավանդույթների հիմքի վրա ժամանակակից մարդու ընկալումներին ու ձգտումներին համահունչ ժամանակակից արվեստի ստեղծման և տարածման, ազգաբնակչության ստեղծագործական ներուժի խթանման, նոր մտահղացումների ու գաղափարների ներդրման անհրաժեշտ պայմանների ապահովման, ժամանակակից մշա-կութային մրցունակ արտադրանքի ստեղծման, մշակութային միջոցառումների իրականացման և այլ ծառայություն-ների ապահովումն է: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայյասատանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայում մշակույթի ոլորտը կարգավորվում է «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին», «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին», «Արխիվային գործի մասին», «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին», «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքներով:

Մշակույթի ոլորտի խնդիրներն են.

- մշակույթի ոլորտի իրավական դաշտի կատարելագործումը,
- թանգարանային և գրադարանային հավաքածուների պահպանվածության ապահովումը, համալրումը, անվտանգության համակարգերի ստեղծումը՝ ժամանակակից տեխնոլոգիական և տեխնիկական միջոցների օգտագործմամբ, թանգարանային ժամանակակից ցուցադրությունների կազմակերպումը, հանրահռչակման և պետական հաշվառման համակարգում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը, գրադարանային տեղեկատվական համակարգի կատարելագործումը, մշակութային արժեքների վերականգնողական աշխատանքներ իրականացնող կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը,
- պատմամշակութային անշարժ հուշարձանների պետական հաշվառումը, պահպանական գոտիների նախագծերի կազմումը և հուշարձանների պետական կադաստրի վարումը, ուսումնասիրումը, վկայագրումը, պետական ցուցակների կազմումը և տեղեկատվական բազայի ստեղծումը, զբոսաշրջության երթուղիներում

ընդգրկված հուշարձանների բարեկարգումը, այցելուների սպասարկման կազմակերպումը, համապատասխան ուղեցույցների և տեղեկատու վահանակների ապահովումը, պատմամշակութային և բնապատմական արգելոցների, արգելոցների թանգարանների ֆոնդերի համալրումը, հուշարձանների հետազոտման, ամրակայման և վերականգնման ծրագրի մշակումը՝ միջազգային դրամաշնորհների և հովանավորչական ու նվիրատվական ֆինանսավորմամբ,

- թատրոնների, երաժշտական համույթների, համերգային կազմակերպությունների գործունեության ապահովումը, թատերարվեստի և երաժշտարվեստի զարգացման խթանումը, ազատ ժամանցի կազմակերպումը, պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության ապահովումը,

- կինոարվեստի զարգացման համար պայմանների ստեղծումը, այդ թվում՝ խաղարկային, մուլտիպլիկացիոն, վավերագրական կինոնկարների արտադրությունը, կինոշուկաներին մասնակցությունը, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանումը:

- ոլորտի զարգացմանը նպաստող տարածաշրջանային, միջազգային ծրագրերին մասնակցությունը և համագործակցության ընդլայնումը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ոլորտում առկա խնդիրների լուծման կարևոր մեխանիզմը օրենսդրական դաշտի կարգավորումն է, կառավարման ժամանակակից համակարգերի ներդրումը, հայ մշակույթի հանրահռչակումը, մշակութային կյանքի մատչելիության և հանրային լայն մասնակցության ապահովումը, մշակույթի և կրթության կապի խթանումը, ՀՀ մարզերում մշակութային ծառայությունների համաչափության, մատչելիության և հասանելիության ապահովումը, Ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայրի ապահովումը, որը հնարավոր է «Մշակույթի պահպանման, տարածման և զարգացման հեռանկարային ծրագրի» ընդունմամբ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի իրականացման արդյունքում կապահովվի մշակութային ժառանգության շարունակական պահպանությունը, մշակութային զբոսաշրջության զարգացումը և խթանումը, գրքի և գրական արտադրանքի բազմազանության ապահովումը, ստեղծագործական գործընթացների խթանումը, մրցունակ արվեստային արտադրանքի ստեղծումը, ստեղծագործական գործընթացների խթանումը, արվեստի նոր նախագծերի ներդրումը և մշակութային կյանքին հասարակության ներգրավումը, կինոարտադրության ընդլայնումն ու տարածումը, ՀՀ մարզերում մշակույթի հասանելիության և մշակութային կյանքին մարզային բնակչության ընդգրկվածության ընդլայնումը, ստեղծագործական ունակությունների ձևավորումը և զարգացումը, Հայաստանում և նրա սահմաններից դուրս հայկական մշակույթի ճանաչելիության բարձրացումը:

179

**179.1 Թանգարանային ոլորտի օրենսդրական դաշտի մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

«Հայաստանի Հանրապետության թանգարանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է թանգարանների ստեղծման, գործունեության, գործունեության դադարեցման և հավատարմագրման հետ կապված հարաբերությունները կարգավորելու, ինչպես նաև թանգարանների տեսակները, գործառույթները սահմանելու, հանրապետության թանգարանային ֆոնդի ձևավորման, համալրման, հաշվառման, պահպանության և անվտանգության օրենսդրական հիմքերն ապահովելու անհրաժեշտությամբ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայյաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ արդեն ընդունվել են Հայաստանի Հանրապետության օրենքներ («Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին», «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», «Արխիվային գործի մասին»), որոնք կարգավորում են մեր մշակութային ժառանգության որոշակի բնագավառները:

Սակայն ներկայում կարգավորված չեն մշակութային ժառանգության մաս կազմող Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի, ինչպես նաև յուրաքանչյուր թանգարանի ֆոնդի օգտագործման, տնօրինման, թանգարանների ստեղծման (անկախ սեփականության ձևից), հավատարմագրման և այլ խնդիրները: Ներկայում ՀՀ մշակույթի նախարարության համակարգի թանգարանների գործունեությունը կարգավորվում է ՀՀ մշակույթի նախարարի հրամաններով հաստատած իրավական ակտերով: Կիրարկման մեջ են թվով 6 հրամաններ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ոլորտում առկա խնդիրների լուծման կարևոր մեխանիզմը օրենսդրական դաշտի կարգավորումն է, որը հնարավոր է «Հայաստանի Հանրապետության թանգարանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունմամբ: Կկարգավորեն թանգարաններում հաշվառված մշակութային ժառանգության պահպանության գործընթացներում ծագող իրավահարաբերությունները, ներառյալ՝ մշակութային արժեքների նույնականացման, փաստաթղթավորման, հետազոտման, կիրառման, վերականգնման, այդ արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանությունը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի թանգարանային բնագավառում պետական միասնական քաղաքականության կիրարկումը, թանգարանների ստեղծման, գործունեության, գործունեության դադարեցման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորում, թանգարանների տիպաբանության սահմանում, թանգարանային առարկաների համալրման, հաշվառման, պահպանության և պաշտպանության իրավական հիմքերի կարգավորում: Օրենքը կսահմանի այդ ոլորտում ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև պետական մարմինների իրավասությունները:

**179.2 Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման ոլորտում օրենսդրական դաշտի փոփոխությունների փաթեթի մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Բնագավառի կայունության ապահովման համար անհրաժեշտ է հստակեցնել օրենքների բովանդակությունը, օրենքներում առկա բացերը նվազագույնի հասցնելու և միջազգային լավագույն փորձին մոտեցնելու նպատակով պետք է իրականացվեն մի շարք միջոցառումներ և ստեղծվեն իրավական հիմքեր՝ օրենքից բխող մի շարք ենթաօրենսդրական ակտեր ընդունելու համար, որոնք թույլ կտան ամբողջությամբ կանոնակարգել բնագավառի իրավական դաշտը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայասատանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գործող օրենքն ընդունվել է 1998 թվականին, որից հետո ընդունվել են մի շարք նոր օրենքներ՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք և այլն, որոնք ուղղակի կամ անուղղակի առնչվում են պատմամշակութային անշարժ ժառանգության պահպանությանը և օգտագործմանը: Միևնույն ժամանակ վավերացվել են «Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պահպանության մասին» և «Հնագիտական ժառանգության պահպանության մասին» եվրոպական կոնվենցիաները:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օրենքի նախագծում առաջարկվում է՝

- սահմանել պատմամշակութային անշարժ ժառանգության պահպանությանը և օգտագործմանը վերաբերող հասկացությունները,
- հստակ սահմանել լիազոր մարմնի լիազորությունները,
- ներդնել հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում մասնագետների հավաստագրման կամ լիցենզավորման կարգը,
- սահմանել հուշարձանների հաշվառման, նորահայտ օբյեկտը պետական ցուցակում ընդգրկելու կարգը,

| | |
|---|---|
| | • հստակ սահմանել հնագիտական հետախուզական աշխատանքների և հնագիտական պեղումների ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները,<br>• արձանագրել անշարժ գույքի սեփականության վկայականներում հուշարձան լինելու մասին փաստը:<br>Նախագիծը նպատակ ունի ամբողջությամբ կանոնակարգելու բնագավառի իրավական դաշտը, սահմանելու պատմամշակութային անշարժ ժառանգությանը վերաբերող հասկացությունները, հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, օգտագործման, ամրակայման, նորոգման, վերականգնման բնագավառի սուբյեկտների լիազորությունները և պարտականությունները, հնագիտական հետազոտությունների իրականացման գործընթացը, հուշարձանին վնաս պատճառելու դեպքում հնարավոր փոխհատուցման սկզբունքները, մասնագետների լիցենզավորման պայմանները և այլն: Նախագծով նախատեսվում է ներդնել բնագավառում առկա խնդիրների համապարփակ լուծման մեխանիզմներ: Միաժամանակ, պատմամշակութային անշարժ ժառանգության օրենսդրության կատարելագործումը միտված է բնագավառի միջազգային կոնվենցիաների պահանջներին և չափանիշներին գործող օրենքը համապատասխանեցնելուն:<br>Օրենքի նախագծի մշակման ընթացքում առաջացած խնդիրների լուծումները գտնելու նպատակով ուսումնասիրվել է հուշարձանների վերաբերյալ միջազգային առաջավոր փորձը՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի, Գերմանիայի, Լեհաստանի, Լատվիայի, Ուկրաինայի պատմության և մշակույթի պահպանության և օգտագործման բնագավառը կարգավորող օրենսդրությունը՝ մասնավորապես կիրառվող հասկացությունները, հանրապետական գործադիր իշխանությանը՝ կառավարության և տարածքային կառավարման մարմինների լիազորությունները և այլն:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունմամբ և կիրարկմամբ կապահովվի հուշարձանների պահպանության, ուսումնասիրման, վերականգնման, ամրակայման, նորոգման, օգտագործման գործառույթների կանոնակարգումը,, իրավական դաշտը միաժամանակ կնպաստի պատմության և մշակույթի հուշարձանների բնագավառում իրականացվող մշակութային գործունեության նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը՝ էապես նպաստելով համակարգում առկա հիմնախնդիրների լուծման արդյունավետությանը, ինչպես նաև պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ոլորտում միասնական պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:<br><br>**179.3 Կինոարվեստի ոլորտում օրենսդրական դաշտի մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Նախագծի մշակումը համապատասխանում է պետական քաղաքականության հայեցակարգային նպատակներին և խնդիրներին, ուղղված է հուշարձանների պահպանության, օգտագործման ամրապնդմանն ու բարձրացմանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, պետություն-մասնավոր համագործակցության ակտիվացմանը, որի իրականացումը կնպաստի ոլորտի զարգացմանը, առաջիկա տարիներին ներդրումների աճի ապահովմանը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայասատանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում գործող օրենսդրությունը ամբողջությամբ թույլ չի տալիս հստակորեն առանց որևէ խնդրի հուշարձանները տրամադրել օգտագործման: Բացակայում են հուշարձանների օգտագործման տրամադրման մեխանիզմները, տրամադրվելիք արտոնությունները և այլն:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից այլ օրենքների նախագծին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից հետո կմշակվի ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով կսահմանվի |

| | |
|---|---|
| | հուշարձանների օգտագործման մեխանիզմները:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունումը կնպաստի պետական և տեղական ինքնակառավարման եկամուտների էական ավելացմանը, պատմամշակութային և բնական ժառանգության պահպանությանը, զարգացմանը և պատշաճ ներկայացմանը: Արտոնության առկայությունը լուրջ խթան կհանդիսանա նոր ներդրումային ծրագրերի իրականացման և որպես հետևանք նոր աշխատատեղերի ստեղծման, ներդրումների ներգրավման համար:<br><br>**179.4 Թատերարվեստի և երաժշտարվեստի ոլորտներում օրենսդրական դաշտի մշակում և գործող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների փաթեթի ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Կինեմատոգրաֆիայի օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է կինոոլորտի համապարփակ կարգավորման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է կանոնակարգել կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացման պետական քաղաքականության սկզբունքները և ձևերը, դրա գործունեության հետ կապված իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերութիւնները, պետական կառավարման և այլ մարմինների լիազորությունները՝ որոնք մասնակցություն կունենան ֆիլմարտադրության աջակցության, միջազգային համագործակցության ընդլայնման և կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացման ծրագրերն առավել արդյունավետ իրականացնելու գործընթացում: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայյասատանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանում իրականացվում են կինոոլորտի բարեփոխման տարբեր ծրագրեր, միջազգային համագործակցության երկխոսության նախաձեռնություններ, միջոցառումներ, փառատոներ, սակայն կինեմատոգրաֆիայի օրենքի բացակայության պատճառով կարգավորված չեն ֆիլմարտադրության, ցուցադրման և տարածման, հեղինակային իրավունքների, կինոժառանգության պահպանման, հայոց լեզվի կիրառման, ազգային կինոյի քաղաքականության, միջազգային համագործակցության, ներդրումային ծրագրերի, կինոփառատոների և կինոշուկաների մասնակացության պետական ֆինանսավորման և պետական աջակցության այլ ձևեր:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ապահովել Կինեմատոգրաֆիայի մասին ՀՀ օրենքի նախագծի մշակման արդյունավետ գործընթացը, հստակեցնել կինեմատոգրաֆիայի ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, պետական կառավարման մարմինների լիազորությունները, կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի գործառույթները: Միջազգային համագործակցությունը խթանելու համար ապահովել միջազգային մասնագիտական կառույցների հետ անդամակցությունը և իրականացնել միջմշակութային կապերի ամրապնդման, զարգացման ծրագրեր: Սահմանել ֆիլմարտադրության և հայ կինոյի հանրահռչակման համար անհրաժեշտ ստեղծագործական ծրագրերի, իրավական կարգավորումների գործընթացը, ինչպես նաև կինեմատոգրաֆիայի ոլորտում առաջարկություններ ներկայացնելու համար ներգրավել մասնագիտական կառույցներին: Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է կինեմատոգրաֆայի ոլորտում իրավահարաբերությունների կարգավորման և ոլորտի զարգացման անհրաժեշտությամբ, որը կապահովի նորմատիվ դաշտում օգտագործվող եզրույթների միասնականությունը և հիմք կհանդիսանա այլ իրավական ակտերի մշակման և կիրառման համար:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայկական ֆիլմարտադրության զարգացում և միջազգայնացում, կինեմատոգրաֆիայի պետական ֆինանսավորման և աջակցության այլ ձևերի արդյունավետության բարձրացում, նյութատեխնիկական ենթակառուցվածների զարգացում, տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավում, հեղինակային իրավունքների հստակեցում և ազգային կինոյի քաղաքականության ձևավորում, կինոժառանգության պահպանման |

| | |
|---|---|
| | և հանրահռչակման գործընթացի կարգավորում, հայոց լեզվի կիրառման կարգավորում՝ տեղական և արտասահմանյան ֆիլմերի տարածման գործընթացում, միջազգային համագործակցության զարգացում, այդ թվում՝ ֆիլմների համատեղ արտադրություն, հանրահռչակում, փորձի փոխանակման հարթակների ստեղծում, միջազգային չափորոշիչներին համապատասխան կինոարդյունաբերական և կրթական ծրագրերի իրականացում:<br>**179.5 Գրադարանային ոլորտի օրենսդրական դաշտի փոփոխությունների փաթեթի մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Օրենքների նախագծերի ընդունումը պայմանավորված է կատարողական արվեստների (թատրոն, պարարվեստ, երաժշտարվեստ, կրկես և ներկայացման այլ տեսակներ) ոլորտների գործունեության կարգավորման անհրաժեշտությամբ, մասնավորապես, անհրաժեշտ է կանոնակարգել կատարողական արվեստների զարգացման պետական քաղաքականության սկզբունքները և ձևերը, դրա գործունեության հետ կապված իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները: Նախատեսվում է կանոնակարգել ոլորտի պետական կառավարման և այլ մարմինների լիազորությունները, որոնք մասնակցություն կունենան մշակութային գործունեության ողջ դաշտն առավել արդյունավետ ներկայացնելու գործընթացում: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայասատանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում բացակայում է կատարողական արվեստների գործունեության ոլորտը կարգավորող օրենք, որի արդյունքում մի շարք կարևոր հարաբերություններ օրենսդրական կարգավորում չեն ստացել, իսկ առկա կարգավորումները չեն ապահովում եզրույթների օգտագործման միասնականությունը: Կարգավորված չէ կատարողական արվեստների գործունեությանը վերաբերող որևէ դրույթ՝ մասնավորապես պետական և ոչ պետական կազմակերպությունների օրենսդրական դաշտը, անհատ ստեղծագործողի և մշակութային կազմակերպությունում գործող աշխատակցի փոխհարաբերությունները գործատուի և պետության հետ, և այլ նույնատիպ խնդիրներ:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օրենքների նախագծերի ընդունմամբ կհստակեցվեն կատարողական արվեստների գործունեության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, պետական կառավարման մարմինների մշակութային դաշտում գործող անկախ կազմակերպությունների լիազորությունները, արվեստների գործունեության տեսակները, դաշտում ներգրավված կազմակերպությունների իրավահարաբերությունները և սահմանելու Հայաստանի Հանրապետությունում կատարողական արվեստների արտադրանքի պարտադիր դասակարգումը: Օրենքների նախագծերի ընդունումը պայմանավորված է կատարողական արվեստների գործունեության ոլորտում իրավահարաբերությունների կարգավորման և ոլորտի զարգացման անհրաժեշտությամբ, որը կապահովի նորմատիվ դաշտում օգտագործվող եզրույթների միասնականությունը և հիմք կհանդիսանա այլ իրավական ակտերի մշակման և կիրառման համար: Կատարողական արվեստների մասին օրենքի նախագծի մշակման նպատակով ստեղծվել է հանձնաժողով:<br>Միջազգային փորձի ուսումնասիրությունների հիման վրա կմշակվի նախագիծը, որում հատկապես կկարևորվի պետական աջակցության, լիազորությունների, միջազգային համագործակցության և մի շարք այլ հարցեր:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետությունում կատարողական արվեստների գործունեության զարգացում, մշակութային կազմակերպությունների և մշակութային արտադրանքի պետական ֆինանսավորման, ինչպես նաև աջակցության այլ ձևերի արդյունավետության և մշակութային գործունեության եկամտաբերության բարձրացում, նյութատեխնիկական ու ենթակառուցվածքների զարգացում, կատարողական արվեստի դաշտում հավասար մեկնարկային պայմանների ապահովում: |

**179.6 Սոցիալական գովազդի ոլորտում օրենսդրական դաշտի փոփոխությունների փաթեթի մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Գրադարանային ոլորտի համաչափ զարգացման, համայնքային և պետական գրադարանների միջև խզված կապերի վերականգնման, ինչպես նաև համահայաստանյան գրացուցակների ամբողջացման, գրադարանային առարկաների համալրման, հաշվառման, պահպանության և պաշտպանության հետ կապված օրենսդրական դաշտի կատարելագործում: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործում են 2 ազգային և 10 մարզային գրադարան, որոնք հիմնականում ապահովված են համապատասխան գույքով ու տեխնիկայով, սակայն ժամանակակից տեխնիկական հնարավորությունները և լուրջ մարտահրավերներն ազդարարում են գրադարանների տեղում չդոփելու, այլ ժամանակին համահունչ փոփոխությունների իրականացում և զարգացում, ինչպես նաև նոր ծրագրերի և նոր գաղափարների իրագործում: Գրադարանային ոլորտը այսօր Հայաստանում խիստ անհամաչափ է զարգանում, մի կողմից ունենք ժամանակակից թվայնացվող էլեկտրոնային գրադարանների աճ, լայն հնարավորություններով՝ աշխարհին ներկայացվող գրավոր ժառանգության հայատառ, ինչպես նաև Հայաստանի և հայերի մասին էլեկտրոնային շտեմարաններից օգտվելու հնարավորություն, մյուս կողմից՝ ունենք ոչ բարվոք պայմաններ ունեցող, օրեցօր կրճատվող քանակով՝ փակվող կամ լուծարվող համայնքային գրադարաններ, չհամալրվող, չթարմացվող գրքային հավաքածուներով: Վտանգված են նաև համայնքային գրադարանների գրքային հավաքածուները: Մոտավոր հաշվարկներով խոսքը մինչև 10 միլիոն գրադարանային հավաքածուների մասին է. գրադարանը փակվելուց հետո դրանք ենթակա են կամայական վերաբերմունքի: Հավաքածուները գույքագրված չեն և սահմանված կարգով հաշվառված չեն:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առկա խնդիրները կարող են լուծվել միայն օրենսդրական դաշտում փոփոխություններ կատարելով՝ հստակ սահմանելով համայնքային գրադարանային առարկաների համալրման, հաշվառման, պահպանության և պաշտպանության, գրավոր ժառանգության ֆոնդերի թվայնացման, ինչպես նաև համահայաստանյան գրացուցակների ամբողջացման կարգ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Իրավական դաշտի կարգավորումը կբացառի սուբյեկտիվ վերաբերմունքի դերը համայնքային գրադարանների գրադարանային հավաքածուների պահպանության և նրանց հետագա բնականոն առաջընթացն ապահովելու գործում, ինչպես նաև համահայաստանյան գրացուցակների ամբողջացման հետ կապված գործառույթներում:

**180**

**180.1 Հուշարձանների և դրանց տարածքների տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանությանն ուղղված միջոցառումների լիարժեք կազմակերպում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների կադաստրի ստեղծման նպատակով հաշվառման աշխատանքների իրականացումը հնարավորություն կտա ապահովել ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 21-26-րդ կետերով նախատեսված գործընթացները՝ լիարժեք հաշվառել հատուկ պահպանվող հողերի մակերեսները և կարգավիճակը, ճշտել պահպանական գոտիների տարածքներում գտնվող հողատեսքերը, դրանց մակերեսները, գույքային իրավունքի գրանցման դեպքերը, սեփականության իրավունքի փոփոխությունները, վարել հուշարձանների կադաստրը, ապահովել հուշարձանների կադաստրի վերաբերյալ մատչելի տեղեկատվությունը, ձեռք բերել հուշարձանների և դրանց տարածքների գույքային իրավունքի վկայական-ները, հուշարձանների կադաստրը ներառել Հայաստանի Հանրապետության պետական կադաստրային

| | |
|---|---|
| | համակարգի մեջ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց տարածքների վերաբերյալ ներկայում բացակայում է ճշգրիտ տեղեկատվությունը, անհրաժեշտության դեպքում հնարավոր չէ հստակեցնել դրանց նկատմամբ գույքային իրավունքի գրանցումների առկայությունը և սեփականության սուբյեկտին, սեփականության ձևի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Հուշարձանների կադաստրի ստեղծման հետաձգումը հնարավորություն չի տալիս կատարել դրանց ու զբաղեցրած տարածքների տարածքների գույքային իրավունքի վկայականների ձեռք բերումը, ինչը վտանգում է նորահայտ հուշարձանների և պետական ցուցակներում ընդգրկված, սակայն կադաստրային քարտեզագրական նյութերից զանազան պատճառներով դուրս թողնված հուշարձանների պահպանությունը: Միաժամանակ, հուշարձանների պահպանական գոտիների տարածքներում գտնվող և անձանց սեփականություն համարվող հողերի նպատակային նշանակության վերաբերյալ տեղեկատվության գրեթե բացակայությունը խիստ դժվարեցնում է հողերը օգտագործողների հետ հուշարձանների պահպանական միջոցառումների իրականացումը և դրանցում հնարավոր հնագիտական շերտերի պահպանությունը:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պատմության և մշակույթի անշարժ **h**ուշարձանների, դրանց զբաղեցրած և պահպանական գոտիների տարածքներում իրականացնել գույքային պատկանելության հաշվառման աշխատանքներ՝ հստակեցնելով դրանց նկատմամբ կադաստրային գրանցումների առկայությունը և օգտագործման բնույթը՝ հուշարձանների և դրանց տարածքների օգտագործման պայմանակարգերը ճշտելու, դրանց և տարածքներում առկա հնագիտական շերտերը անխաթար պահպանելու և պատմագեղարվեստական արժանիքների կորուստը կանխելու նպատակով: Հուշարձանների կադաստրի ստեղծում, դրանց և տարածքների սահմանների հստակեցում, գույքային իրավունքի գրանցում և վկայականների ձեռքբերում՝ հուշարձանների կադաստրի ներառում Հայաստանի Հանրապետության պետական կադաստրային համակարգի մեջ՝ դրանց տարածքներից հողերի օտարումը կամ օգտագործման հանձնումը կանխելու, դրանց նկատմամբ գույքային այլ բնույթի գրանցումները կանխելու, անխաթար պահպանությունն ապահովելու նպատակով:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Գործընթացների իրականացման դեպքում կճշտվեն հուշարձանների և զբաղեցրած տարածքների, դրանց պահպանական գոտիների տարածքների գույքային պատկանելիության հարցերը, ձեռք կբերվեն գույքային իրավունքի վկայականներ, հուշարձանների և զբաղեցրած, ինչպես նաև պահպանական գոտիների տարածքները կնկներառվեն կադաստրային քարտեզներում և կարտահայտվեն քաղաքաշինական շրագրային փաստաթղթերում՝ դրանց առնչվող բոլոր գործընթացները լիազորված մարմնի հսկողության տակ վերցնելու և հուշարձանների ու պատմական միջավայրի անխաթար պահպանությունն ապահովելու համար:<br><br>**180.2 Մասնավոր ներդրողների կողմից հուշարձանների վերականգնողական աշխատանքների նախաձեռնության դեպքում՝ պետության կողմից դրանց նախագծերի կազմում և տրամադրում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ներկայում պետական բյուջեի սահմանափակ քանակի պայմաններում տարեկան հատկացվող գումարը չի բավարարում ՀՀ տարածքում առկա 24 հազարից շատ հուշարձանների վերականգնմանն ուղղել: Այդ պայմաններում տարիներ շարունակ առաջնահերթության կարգով նախապատվությունը տրվում է առավել վտանգված և վաղ միջնադարյան հուշարձանների վերականգնմանը: Սակայն անգամ տարեկան մի քանի հուշարձանների վերականգնումը ամբողջությամբ չի կարողանում իրականացվել՝ ելնելով սուղ ֆինանսական միջոցներից: Ուստի պետություն-մասնավոր համագործակցությունը կնպաստի վերականգնման ենթակա հուշարձանների թվաքանակի ավելացմանը և կնվազեցնի պետական հոգածության բեռը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության |

կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայում լիազոր մարմինը, բացի տարեկան պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումներով նախատեսված հուշարձանների ամրակայման, նորոգման ու վերականգնման գործընթացն իրականացնելուց, խնդիր ունի առավել շատ հուշարձաններ վերականգնել: Յուրաքանչյուր տարի բազմաթիվ քաղաքացիներ, համայնքներ, մարզպետարաններ դիմում են ՀՀ մշակույթի նախարարությանը՝ այս կամ այն հուշարձանը վերականգնելու խնդրանքով: Սակայն ոչ բավարար միջոցները թույլ չեն տալիս լուծելու այդ խնդիրները, որի հետևանքով մեր պատմամշակութային ժառանգությունը գնում է կործանման:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ծրագրի իրականացման գործընթացում առաջարկվում է համագործակցություն մասնավոր ներդնողների հետ, ինչի շրջանակներում կթեթափվի պետական հոգածությունը հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման բնագավառում: Համագործակցությունը մասնավոր ներդրողների հետ կնայի այնպես էլ ոչ բավարար պետական բյուջեից տրամադրվող գումարները, ինչպես նաև կխթանի վերականգնող հուշարձանների և դրանց հարակից տարածքներում ենթակառուցվածքների ու զբոսաշրջության զարգացմանը: Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում նախկին փորձը կարող է պիլոտային համարվել հետագա նման համագործակցության համար:
Նշյալ գործնթացը հնարավորություն կընձեռի պետության պարտավորությունների շրջանակում վերականգնվող հուշարձանների թվաքանակի ավելացմանը և պետական հոգածության թեթևացմանը: Պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված ուսումնասիրությունների և նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայությամբ (տեխնիկական վիճակի վերաբերյալ ակտ, նախագծային առաջադրանք, էսքիզային նախագիծ) մասնավոր ներդրումների շնորհիվ ավելի շատ ֆինանսական միջոցներ կհատկացվեն մշակված փաստաթղթերի հիման վրա իրականացվող վերականգնողական աշխատանքների իրականացմանը և կընդլայնվեն պատմամշակութային անշարժ ժառանգության պահպանմանը միտված վերականգնման գործընթացները, ինչպես նաև իրականացվող ծրագրերի շրջանակներում շահառուների քանակը, կբարձրանա հասարակական, միջազգային կազմակերպությունների, անհատ բարերարների, համայնքի բնակչության ներգրավվածության և մասնակցության մակարդակը:
Ծրագիրը կնպաստի պատմամշակութային հուշարձանների նպատակային օգտագործմանը, հանրահռչակմանը, զբոսաշրջությանը զարգացմանը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Պետություն-մասնավոր համագործակցության զարգացում, պետական հոգածության թոթափում, վերականգնվող հուշարձանների թվաքանակի ավելացում, հուշարձանների հանրահռչակում, ենթակառուցվածքների զարգացում, զբոսաշրջության խթանում, շահառուների ընդգրկվածություն, նոր աշխատատեղերի ստեղծում, արտագաղթի կանխում:

## 180.3 Կինոարվեստի ոլորտում կառավարման մեխանիզմների բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացում

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հայաստանում կինոարտադրության զարգացման և մշակութային տնտեսավարման գործընթացը խթանելու համար անհրաժեշտ է ստեղծել մեկ կառույց «ՀԱՅՖԻԼՄ» հիմնադրամ, որը կիրականացնի Հայաստանում կինոոլորտի պետական ռազմավարական և կառավարման գործառույթները, ինչպես նաև կնպաստի ոլորտում միջազգային համագործակցության և մասնավոր ներդրումային ծրագրերի իրականացմանը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

| | |
|---|---|
| | Հայաստանում գործում է կինեմատոգրաֆիայի կարգավորումների երկու պետական ոչ առևտրային կազմակերպություն, որոնք իրականացնում են կինոոլորտի աջակցության, կինոարտադրության, միջոցառումների կազմակերպման, միջազգային համագործակցության խթանման, կինոժառանգության պահպանման գործառույթներ, սակայն ոլորտում պետական ռազմավարական գործընթացների հստակ ձևաչափի, կրթական համակարգի, ինչպես նաև ֆինանսական հատկացումների փոքրաթիվ և անարդյունավետ կառավարման արդյունքում հայկական կինոարտադրությունը դեռևս մրցունակ չէ միջազգային շուկայում: Ներկայումս Հայաստանում գործող կինեմատոգրաֆիայի կառավարման համակարգը և ֆիլմարտադրության համար նախատեսված բյուջետային հատկացումները ենթակա են նպատակային կարգավորումների: Կինոոլորտի զարգացման, իրավահարաբերությունների կարգավորման և միջազգային համագործակցության արդյունավետության համար անհրաժեշտ է նաև ՀՀ կինոմատոգրաֆիայի մասին օրենքի առկայությունը, որը առավելագույնս կխթանի կինոյի ոլորտում պետություն-մասնավոր հատվածի համագործակցությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ոլորտի բարեփոխման համար անհրաժեշտ է միավորել ներկայումս ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող երկու ՊՈԱԿ-ները՝ «Հայաստանի ազգային կինոկենտրոն», «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» և Գույքի պետական կառավարման կոմիտեի ենթակայությամբ գործող «Հայֆիլմ» ՓԲԸ-ն՝ ստեղծելով «ՀԱՅՖԻԼՄ» հիմնադրամ: Հիմնադրամի ներսում անհրաժեշտ է ստեղծել կինոարտադրության ենթակառուցվածքների համար անհրաժեշտ հետարտադրական աշխատանքների և նկարահանումների տաղավարներ, կինոարխիվի պահպանման նպատակով թվայնացման և վերականգնման լաբորատորիա, նկարահանման տեխնիկական սարքավորումների բազա, նկարահանող խմբերի աշխատանքների և միջազգային նախագծերի կազմակերպման համար համապատասխան ծառայությունների հնարավորություններ՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի և մասնավոր ներդրումների հաշվին:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>«ՀԱՅՖԻԼՄ» հիմնադրամի ստեղծման արդյունքում հնարավոր կլինի կարգավորել ՀՀ պետական բյուջեից կինեմատոգրաֆիայի հատկացումների արդյունավետ կառավարումը, միջազգային համագործակցության լայն ծրագրերի իրականացումը, պետություն և մասնավոր համագործակցության շնորհիվ ստեղծել կինոոլորտի զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ, որոնք կնպաստեն Հայաստանում կինոարտադրության նոր մեխանիզմների կիրառմանը, կինոարտադրության արտաբյուջեի ձևավորմանը, որը կուղղվի ոլորտի անհրաժեշտ նյութական բարելավումների ծրագրերին, ինչպես նաև միջազգային դրամաշնորհային ծրագրերի շնորհիվ կստեղծվի կինոժառանգության պահպանման և վերականգնման հնարավորություն, միջմշակութային կապերի ամրապնդում: |
| 181 | **181.1 Հայաստանում միջազգային և հանրապետական փառատոների և մրցույթների, հեղինակավոր նախագծերի, ցուցահանդեսների իրականացում**<br><br>1. **Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է համաշխարհային մշակույթի, տեսարվեստի և կատարողական արվեստների ժամանակակից միտումները հայ հանդիսատեսին ներկայացման, միջմշակութային առնչությունների, փորձի փոխանակման և ստեղծագործական համագործակցության ամրապնդման, ինչպես նաև հանրության մշակութային կրթության մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայասատանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում Հայաստանում իրականացվում են տարբեր մշակութային միջազգային ծրագրեր, միջոցառումներ, փառատոներ, որոնք մեծ դերակատարություն ունեն հայ մշակույթի զարգացման և միջազգայնացման, հայկական արվեստի և մշակույթի հանրահռչակման գործում: Սակայն բավարար չէ ծրագրերի միջազգային ճանաչումը, հանրային ուշադրությունը իրականացվող միջոցառումների նկատմամբ, զբոսաշրջության ներգրավումը, հանրության լայն շերտերի հաղորդակցումը, ինչպես նաև ծրագրերի ֆինանսավորումը: |

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ապահովել միջազգային նախագծերի իրականացման շարունակականությունն ու գեղարվեստական ընդլայնումը, միջազգային հեղինակավոր կառույցների անդամակցության գործընթացի ապահովումը, անցկացվող ծրագրերի աշխարհագրության ընդլայնումը, ծրագրերում աշխարհահռչակ արվեստագետների ներգրավումը, բարձր նշաձողով ստեղծագործական նոր ծրագերրի իրականացումը, մշակութային զբոսաշրջության զարգացման գործընթացում միջազգային նախագծերի ներուժի ամբողջական օգտագործումը, հասարակության լայն շերտերի համար իրականացվող ծրագրերի հասանելիության ապահովումը:

2. **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Հայկական մշակույթի և ժամանակակից արվեստների հանրահռչակում, համաշխարհային մշակութային գործընթացներում հայաստանյան մշակույթի ներկայացում, հայկական մշակութային միջավայրի բարձր նշաձողի ապահովում, հայ արվեստագետների, մշակույթի գործիչների արժևորում և հանրահռչակում, մշակութային զբոսաշրջության զարգացում, արվեստի տարբեր բնագավառների համաչափ զարգացում, փործի փոխանակման հարթակի ստեղծում, համաշխարհային մշակութային գործընթացներին ինտեգրում, մշակութային տնտեսության զարգացում:

**181.2 Թանգարաններում և գրադարաններում ընդհանուր գիտակրթական ծրագրերի իրականացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Արդի թանգարաններն ու գրադարանները զուտ ցուցադրական կամ ընթերցանության կազմակերպման տարածքներ չեն, այլև մշակութային գիտակրթական հաստատություններ են, որոնք որպես սոցիալ-մշակութային համակարգ իրականացնում են մշակույթին հաղորդակցության ապահովման և մշակութային ժառանգության փոխանցման գործառույթ: Միջոցառման իրականացումը պայմանավորված է հասարակության տարբեր շերտերին՝ անկախ տարիքից և սոցիալական խմբից մշակութային արժեքների վերաբերյալ գիտելիքների փոխանցման, թանգարաններում և գրադարաններում մշակութային կրթության իրացման անհրաժեշտությամբ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայում թանգարնների և գրադարանների սոցիալական դերի վերաարժևորման և նրանց դերի վերաիմաստավորման գործընթացներ են իրականացվում, ինչը առաջ է բերում հասարակություն-թանգարան/գրադարան հարաբերությունների նոր մոդելների մշակման անհրաժեշտություն:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Թանգարաններում և գրադարաններում ընդհանուր գիտակրթական ծրագրերի իրականացումը միտված է հասարակության մշակութային կրթության ապահովմանը և թանգարանների, գրադարանների գիտակրթական ներուժի կիրարկմանը: Թանգարանային և գրադարանային հավաքածուների հանրահռչակման բնագավառում արդյունավետության, որպես գիտական և կրթական հաստատություններ վերջիններիս գրավչության մեծացում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրերի իրականացման ընդունման արդյունքում կապահովվի մշակութային ժառանգության պահպանության կարևորության գիտակցության բարձրացումը, կմեծանա թանգարանային և գրադարանային գործունեության նկատմամբ ճանաչողությունը, կբարձրանա հասարակակն կյանքում թանգարանների և գրադարանների դերն ու նշանակությունը, ընթերցանության խրախուսում:

**181.3 Բացօթյա միջոցառումների (այդ թվում՝ օտարերկրյա) իրականացում պատմամշակութային բարձրարժեք հուշարձանների տարածքներում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Պատմության և մշակույթի բարձրարժեք հուշարձանների տարածքներում բացօթյա միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա ապահովել «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի ը) կետով նախատեսված հուշարձանների պահպանության քարոզչությունն ապահովելու նպատակով:
Հայ ժողովրդի հարուստ մշակութային ժառանգությունը որպես ժողովրդի մտավոր հարստության՝ գիտական և ստեղծագործական մտքի նվաճում լիարժեք և ամբողջությամբ չի ներկայացված հանրությանը, թույլ է կամ բացակայում է հետաքրքրությունը և սրտացավ վերաբերմունքը հուշարձանների նկատմամբ, մինչդեռ առավել բարձրարժեք հուշարձանները հանրահռչակելու և դրանց պահպանության գործընթացների նկատմամբ հոգատար վերաբերմունք ձևավորելու անհրաժեշտություն կա, ինչպես նաև՝ ժամանակակից մշակութային կյանքը և արվեստները մշակութային ժառանգության հետ մոտեցնելու խնդիր կա: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայասատանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**
Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց պահպանության անհրաժեշտության քարոզչությունն իրականացվում է հեռուստատեսային մեկ կամ երկու ալիքներով և դիպվածային հաղորդումների միջոցով, որոնք երբեմն անհասանելի են հանրությանը, կրում են միայն ճանաչողական բնույթ և կրում են տեղեկատվություն տրամադրելու նպատակ:
Հուշարձանների տարածքներում մշակութային միջոցառումները սակավաթիվ են, ինչի պատճառով բացակայում է ակտիվ հետաքրքրությունը հայկական հարուստ մշակութային ժառանգության նկատմամբ, գրեթե բացակայում է դրանց պահպանության գործընթացներին մասնակցելու ցանկությունը, փոքրաթիվ են այդ ուղղությամբ նախաձեռնությունները և մասնակցությունը հուշարձանների պահպանության գործընթացներին, շատերը բոլորովին տեղյակ չեն հանրապետության տարածքում գտնվող հուշարձանների մասին, հուշարձանների պահպանության գործընթացին վերաբերում են անձնական շահերի պաշտպանության տեսանկյունից, ինչի պատճառով վնասում, քանդում կորստյան են մատնում հատկապես բարձրաժձեք հնագիտական հուշարձանները և մշակութային շերտերը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**
Պատմության և մշակույթի անշարժ բարձրարժեք հուշարձանների հանրահռչակումը, բարձրարժեք հուշարձանների տարածքներում բացօթյա միջոցառումների կազմակերպումը հուշարձանների հանրահռչակման, դրանց պահպանությանը մասնակցելու հոգատար վերաբերմունքի դրսևորման պատճառ կարող են դառնալ:
Զբոսաշրջիկների մասնակցությունը նման միջոցառումներին կարող է կրել ոչ միայն ճանաչողական բնույթ, այլև հանրահռչակել դրանք, ինչպես նաև դրանց պահանությանը նպատակաուղղված համատեղ հետազոտական ծրագրերի, վերականգնման նպատակով լուրջ ներդրումների միջոց հանդիսանալ՝ գործընթացներին մասնակիցների շրջանակը ընդլայնելու հնարավորություն ստեղծելով, ինչպես նաև օտարերկրյա գիտական կազմակերպություններին Հայաստանի Հանրապետություն ներգրավվելու և համատեղ ծրագրեր իրականացնելու համար: Բարձրարժեք հուշարձանների տարածքներում բացօթյա միջոցառումների կազմակերպումը հնարավորություն կտա հանրահռչակել հայկական մեծարժեք հուշարձանները, ապահովել հուշարձանների պահպանությանը միտված քարոզչությունը, հանրությանը հրավիրել մասնակցելու հուշարձանների պահպանության գորընթացներին:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**
Բարձրարժեք հուշարձանների տարածքներում բացօթյա միջոցառումների արդյունքում հնարավոր կլինի ապահովել հայ մշակութային ժառանգության պահպանության գործընթացներին հանրության մասնակցությունը, մեծացնել օտարերկրյա զբոսաշրջիկների այցելությունների թվաքանակը, հանրահռչակել հայ պատմամշակութային ժառանգությունը, իրականացնել համատեղ ծրագրեր հուշարձանների պահպանության ուղղությամբ:

**181.4 Ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանի ստեղծում**

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն» կայքէջը հասանելի է www.int-heritage.am հղումով: Կայքէջի գործարկման անհրաժեշտությունը պայմանավորված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի, «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1173-Ն «Ոչ նյութական մշակութային արժեքների նույնականացման, փաստաթղթավորման, պահպանության և տեղեկատվության փոխանակման կարգը ու ոչ նյութական մշակութային արժեքի վկայագրի ձևը հաստատելու մասին» որոշման պահանջների կատարմամբ:<br>«Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն» կայքէջը ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության տեղեկատվական համակարգ է, որի նպատակն է ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների մասին համապարփակ տեղեկատվության ապահովումը, ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտի իրավական դաշտի զարգացումների, միջազգային համագործակցության ծրագրերի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ իրականացվող գործընթացների, համապատասխան ցանկերի բովանդակության, ինչպես նաև ոլորտի գիտահանրամատչելի նյութերի ներկայացման, նախատեսվող ծրագրերի վերաբերյալ հայտարարությունների տարածման ապահովումը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Տեղեկատվական դաշտի միջոցով ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտի և դրա պահպանության, պաշտպանության, փոխանցման և տարածման ծրագրերի իրականացման մասին տեղեկությունների տարածում, ոլորտի ձեռքբերումների հանրահռչակում:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն» կայքէջի գոյությունն ու ակտիվ գործունեությունը միտված է այդ ժառանգության մասին տեղեկատվության տարածմանը, թվային տարածքում համակարգմանն ու դասակարգմանը, ինչպես նաև հասարակության մեջ ոչ նյութական մշակութային ժառանգության ճանաչելիության բարձրացմանը, տեղի ու դերի կարևորմանը: «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն» կայքէջի գոյությունն ու ակտիվ գործունեությունը ապահովում է ոլորտի վերաբերյալ հասարակության շրջանում տեղեկատվության տարածման ընդլայնումը, ժառանգության պահպանության, պաշտպանության և փոխանցման ծրագրերի, կրողների, ոլորտի նորությունների, տեղական և միջազգային միջոցառումների մասին տեղեկությունների տարածումը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>«Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն» կայքէջի գոյությունն ու ակտիվ գործունեությունը հնարավորություն կստեղծի լայն հասարակությանը ծանոթանալու ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգությանը, ոլորտի նորություններին, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ իրականացվող ծրագրերին և գրանցված ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների պահպանության գործընթացներին: Կայքի կառուցվածքն ու ձևավորումը, նյութերի ռուսերեն և անգլերեն թարգմանությունները, ինչպես նաև սոցցանցերում համապատասխան հղումների առկայությունը էապես նպաստելու է ոչ նյութական մշակութային ժառանգության մասին հասարակության ճանաչելիության բարձրացմանը և գնահատանքին: |
| 182 | **182.1 «Քո արվեստը դպրոցում» դրամաշնորհային ծրագրի իրականացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ծրագրի իրականացումը պայմանավորված է մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, նպատակ ունի սիրելի և հասանելի դարձնելու ազգային և համաշխարհային արվեստն ու մշակույթը դպրոցականներին ներգրավվելու մշակութային կյանքում, դաստիարակելու վաղվա բարձրաճաշակ և արվեստասեր քաղաքացուն: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման |

«4.5. Մշակույթ» բաժին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայում հանրապետությունում հանրակրթական դպրոցներում սովորող շուրջ 350000 աշակերտներից չնչին տոկոսն է մշտապես հաղորդակցվում արվեստի տարբեր բնագավառներին և մշակութային կյանքին ընդհանրապես, որն իր հերթին մեծապես խոչընդոտում է անձի ներդաշնակ զարգացման գործընթացին: Ոլորտում կատարված հետազոտությունները վկայում են, որ արվեստի և մշակույթի հետ պարբերաբար առնչություն ունեցող երեխաները զգալիորեն տարբերվում են իրենց հասակակիցներից, առավել հաջողակ են ուսուցման և դասընկալման գործընթացներում:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է իրականացնել «Քո արվեստը» ծրագիրը, որը թույլ կտա ապահովել գեղագիտական դաստիարակության բնականոն զարգացման գործընթացը, ապահովել հայկական և համաշխարհային մշակույթի հանրահռչակման գործընթացը հանրակրթության ոլորտում հաղորդակցումը ժամանակակից արվեստագետների հետ: Հանրակրթական դպրոցներում արվեստին նվիրված դասընթացների իրականացում, արվեստագետների վարպետության դասերի կազմակերպում, մշակույթ-կրթություն կապերի ամրապնդում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Կրթական հաստատություններում քննադատական, վերլուծական և ստեղծագործ մտքի զարգացում, ընթերցանության, դասական երաժշտության և կերպարվեստի նկատմամբ հետաքրքրության մեծացում, ժամանակակից արվեստագետների արժևորում, նրանց գործունեության հանրահռչակում արվեստագետ-աշակերտ անմիջական կապի և շփման ստեղծում:

**182.2 «Բաժանորդային համակարգի ներդրման» ծրագրի իրականացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Բաժանորդային համակարգի ներդրումն ապահովում է ամեն հերթական ուսումնական տարվա բոլոր աշակերտների մշակութային հաստատություններ անվճար այցելելու հնարավորությունը և մշակութային կյանքով ապրելու իրավունքը: Թեև ներկայումս նախատեսվում են որոշ ներառման մեխանիզմներ, որոնք ապահովում են աշակերտների կամ ուսանողների անվճար կամ նվազեցված տոմսարժեքով մուտքը մշակութային հաստատություններ, սակայն կարիք կա համապետական մասշտաբով իրականացվող քաղաքականության, որը Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր աշակերտին թույլ կտա տարվա ընթացքում մեկ անգամ անվճար մուտք գործել թատրոն, համերգասրահ կամ թանգարան: Ծրագրի նպատակներն են մշակութային միջոցառումներին հաղորդակցվելու հնարավորություն ստեղծելը, վաղ հասակից մշակութային հաստատություն այցելելու ավանդույթի ձևավորումը, մշակութային հաստատությունների աշխուժացումը և դրանց համար մրցակցային պայմաններ ստեղծելը՝ խթանելով մասնագիտական աճի ձգտումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Մարզային և հատկապես հեռակա համայնքների բնակիչները և հատկապես դպրոցահասակները առավել հազվադեպ են այցելում մշակութային հաստատություններ, ինչի պատճառներից են մշակութային հաստատությունների անհավասար բաշխվածությունը, ինչպես նաև սոցիալական անբավարար հնարավորությունները: Մի շարք համայնքներում և նույնիսկ մարզերում առկա չեն թատրոններ, համերգասրահներ կամ թանգարաններ, իսկ միջհամայնքային կամ միջքաղաքային փոխադրումները հավելյալ ֆինանսական բեռ են ծնողների համար: Մյուս կողմից հատկապես մարզային մշակութային հաստատությունները կարիք ունեն նոր հանդիսատեսի հոսքերի և մրցակցային միջավայրի ձևավորման, ինչն ապահովվում է աբոնեմենտային համակարգի ներդրմամբ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ներդնել բաժանորդային համակարգի ծրագիր բոլոր դպրոցների աշակերտների համար մշակութային հաստատությունների եռակի մուտքի հնարավորությամբ՝ հիմնված «dasaran.am»-ում ստեղծված միասնական տոմսային համակարգի, խաղացանկի և սոցիալական հարթակի վրա: Բաժանորդային համակարգի ներդրման

ծրագիրը հնարավորություն է տալիս մոտ 380,000 աշակերտի՝ անկախ սոցիալական ծագուցից, բնակության վայրից և մշակութային հաստատության հասանելիությունից, մասնակցել իր համայնքի կամ ցանկացած այլ քաղաքի մշակութային միջոցառմանը: Ծրագիրը երաշխավորում է դպրոցահասակների մշակութային իրավունքի իրացման նվազագույն հնարավորությունը՝ միաժամանակ մշակութային հաստատություններին ընձեռելով նոր թիրախային խմբեր և մրցակցային հնարավորություններ: Վերջինս առավել կարևոր է հատկապես ճգնաժամային վիճակում գտնվող մարզային հաստատությունների համար, քանի որ երաշխավորում է ամբողջական դահլիճի վարձավճարը՝ անկախ հանդիսատեսի քանակից:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման հիմնական արդյունքներն են՝ աշակերտների պարբերական այցերը մշակութային հաստատություններ, մշակութային հաստատությունից օգտվելու ավանդույթի ձևավորումը վաղ հասակից, ճաշակի ձևավորումը դպրոցահասակների շրջանում, մշակութային գիտելիքների և տեղեկության տրամադրումը՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիական միջոցները, հատկապես մարզային մշակութային կյանքի ակտիվացումը՝ ի հաշիվ նոր հանդիսատեսների հոսքի, մրցակցային միջավայրի ձևավորումը և դրա արդյունքում առավել բարձրորակ մշակութային արտադրանքի տրամադրումը:

**182.3 Հայաստանի Հանրապետությունում տաղանդավոր պատանի երաժիշտ-կատարողների զարգացման, կատարելագործման և խրախուսման նպատակային ծրագրի իրականացում**

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումն ուղղված է 11-20 տարեկան առավել տաղանդավոր պատանի երաժիշտ-կատարողների (դասական երաժշտական գործիքներ՝ դաշնամուր, ջութակ, թավջութակ) զարգացմանը, կատարելագործմանը և խրախուսմանը՝ հետագայում միջազգային ասպարեզում հայկական կատարողական արվեստը ներկայացնելու նպատակով: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Մշակութային կրթության ոլորտում իրականացվող ծրագրերն ու միջոցառումներն ուղղված են ոլորտի կայուն զարգացմանն ու մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության մատչելիության և կրթական ծառայությունների համահարթեցման ապահովմանը, որը սակայն, չի ապահովում օժտված երեխաների և պատանիների բացահայտման, նրանց հետագա կատարելագործման և նպատակային զարգացման բավարար պայմանները: Մշակութային կրթության գործող համակարգը թերի է՝ օժտված և տաղանդավոր երեխաների բացահայտման, նրանց մասնագիտական զարգացման, խորացված ուսուցման կազմակերպման և կատարողական արվեստների բնագավառում անհրաժեշտ այլ կարողություններ և հմտություններ փոխանցելու գործառույթներում:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ծրագրի իրականացումը կստեղծի համապատասխան հարթակներ, որը հնարավորություն կտա ապահովվել ուսուցման նոր մեթոդիկայի, կատարելագործման և ունակությունների զարգացման հատուկ պլան, որի շնորհիվ շահառուները հնարավորություն են կստանա առավել նպաստավոր պայմաններում զարգացել մասնագիտական կարողություններն ու տաղանդը, ձեռք բերել բեմական փորձ, միջազգային շփումներ, մասնակցել վարպետության դասերի աշխարհի լավագույն մանկավարժների և երաժիշտների մոտ:

2. **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի մասնակիցների պրոֆեսիոնալ աճ և զարգացում, դասական կատարողական արվեստի ոլորտում բնականոն սերնդափոխության հիմքերի ձևավորում, միջազգային ասպարեզում և մշակութային շուկայում հայ կատարողական արվեստի մրցունակության ապահովում, ազգային և համամարդկային հոգևոր-մշակութային արժեքների պահպանում, զարգացում և հանրահռչակում, մշակութային համաչափ զարգացում, հայկական կատարողական դպրոցի լավագույն ավանդույթների պահպանում և փոխանցում:

**182.4 Թանգարանային գիտակրթական ծրագրերում հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրերի**

| | |
|---|---|
| | **բաղադրիչի ներառում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Թանգարանային գիտակրթական ծրագրերում հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրերի բաղադրիչի ներառում» ծրագրի իրականացումը պայմանավորված է թանգարան-դպրոց կրթական գործընթացների ինտեգրման անհրաժեշտությամբ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության բոլոր թանգարաններն ի թիվս այլ գործառույթների իրականացնում են նաև կրթական բազմաբնույթ ծրագրեր, որոնք ապահովում են երեխաների մշակութային գիտելիքների և ճանաչողության ընդլայնումը: Այդ կրթական ծրագրերը հիմնականում տվյալ թանգարանի բնույթին և հավաքածուի ընձեռած հնարավորությունների շրջանակում են իրականացվում և անկախ են երեխայի պարտադիր կրթական ծրագրից: Գիտակրթական ծրագրերում հանրակրթական ուսումնական ծրագրերի բաղադրիչի ներառումը կօգնի դպրոցական պարտադիր ծրագրի ճիշտ և արդյունավետ ընկալմանը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գիտակրթական ծրագրերում հանրակրթական ուսումնական ծրագրերի բաղադրիչի ներառումը կօգնի դպրոցական պարտադիր ծրագրի ճիշտ և արդյունավետ ընկալմանը: Ծրագրի կարգավորման առարկան թանգարան-հանրակրթական հաստատություն կապի սերտացումն է, նոր հարաբերությունների մոդելի կիրառումը երեխայի ընդհանուր գիտելիքների ստացման պրոցեսում:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացմամբ կապահովվի դպրոցական կրթական պրոցեսները թանգարանային միջավայրում առավել համընդգրկուն իրականացնելուն և կրթական ծրագիրը արդյունավետ յուրացնելուն: |
| 183 | **183.1 Համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության ծրագրերի իրականացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Արար». ազգային մշակույթի պահպանման, տարածման, զարգացման և հանրահռչակման» ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության 6 մարզերի 27 համայնքներում՝ Կոտայքում (Եղվարդ, Թեղենիք, Քարաշամբ, Հացավան, Գեղադիր համայնքներ), Տավուշում (Նոյեմբերյան, Այրում, Բերդավան, Բաղանիս, Դովեղ, Ջուջևան, Լճկաձոր, Պտղավան, Ոսկեվան համայնքներ), Արմավիրում (Հացիկ, Մյասնիկյան, Խանջյան, Վանանդ, Երվանդաշատ, Բագարան,Կողբավան, Արտամետ, Տալվորիկ համայնքներ), Վայոց Ձորում (Խաչիկ համայնք), Արարատում (Դվին, Ջրահովիտ համայնքներ), Սյունիքում (Տեղ համայնք) ուր ստեղծվել են հայ արվեստի 18 «Արար» կենտրոններ: Տեղաբնակ 14 մասնագետներ դասավանդում են ավանդական երգ ու պար, ազգային նվագարաններ, կերպարվեստ, գորգագործություն ու կարպետագործություն, ժանեկագործություն ու ասեղնագործություն, խեցեգործություն, քարի, փայտի և մետաղի գեղարվեստական մշակում, խաչքարագործություն: Դասընթացներում ներգրավված են 500 մասնակիցներ:<br>Ծրագրի նպատակն է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության և տարածման ապահովումը ՀՀ մարզերում, ազգային ոչ նյութական մշակութային ժառանգության հանդեպ հասարակության հոգածության և հարգանքի արմատավորումը, ոչ նյութական մշակութային ժառանգության կիրառման ապահովումը և ոչ նյութական մշակութային ժառանգության փոխանցումը սերունդներին: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ծրագրի իրականացումը միտված է մշակութային ժառանգության պահպանության արդի մարտահրավերներին համընթաց գործընթացների արդյունավետության ապահովմանը և այդ խնդրի ապահովման համար հատկացված |

| | | |
|---|---|---|
| | | ֆինանսական միջոցների նպատակային տնօրինմանը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Արար». ազգային մշակույթի պահպանման, տարածման, զարգացման և հանրահռչակման» ծրագրի ընդլայնում, նոր համայնքների ընդգրկում, ծրագրում ընդգրկված շահառուների թվաքանակի մեծացում, որը միտված է մշակութային ծառայությունների ապակենտրոնացմանը՝ մարզերի մշակութային կյանքը աշխուժացնելու և համաչափ զարգացման համար: Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության և տարածման ապահովում ՀՀ մարզերում, ազգային ոչ նյութական մշակութային ժառանգության հանդեպ հասարակության հոգածության և հարգանքի արմատավորում, ոչ նյութական մշակութային ժառանգության կիրառման ապահովում և ոչ նյութական մշակութային ժառանգության փոխանցում սերունդներին:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացման արդյունքում ապահովվում է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, վերականգնման ու փոխանցման գործընթացում համայնքների մասնակցությունը: Աշխատանքներում մարզաբնակ մասնագետների ներգրավմամբ աշխուժանում է մարզային մշակութային կյանքը, նպաստավոր պայմաններ են ստեղծվում ոչ նյութական մշակութային ժառանգության ճանաչելիության, համայնքների կյանքում դրա տեղի ու դերի կարևորման առումով: Ծրագիրը կընդլայնի մարզերի բնակչության ներգրավվածությունը ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, տարածման, զարգացման ու հանրահռչակման գործում:<br>Ծրագրի արդյունքում կենտրոնի սաների կողմից ստեղծված ազգային մշակույթի նմուշները նշանակալի տեղ ու դեր կունենան համայնքի մշակութային կյանքում, ձևավորելով տեղական մշակութային առանձնահատկությունների համահավաք պատկերը և այդ կերպ նպաստելով մշակութային տուրիզմի զարգացմանը:<br><br>**183.2 Մարզային կենտրոններում և համայնքներում առկա մշակույթի տների արդիականացման մեխանիզմների մշակում**<br><br>**1. Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Մարզային կենտրոններում և համայնքներում առկա մշակույթի տների վերագործարկման ծրագրի անհրաժեշտությունը պայմանավորված է մշակույթի ապակենտրոնացման, մշակույթի տարածքային համաչափ զարգացման և մարզաբնակչության՝ երկրի մշակութային կյանքի լիիրավ մասնակցության ապահովման, մարզերում ստեղծարար արտադրությունների զարգացման և մշակութային տնտեսության խթանման անհրաժեշտությամբ: Ռազմավարական խնդիր է դիտարկվում ոչ միայն տարբեր միջոցառումների կազմակերպումը մարզերում, այլև մշակութային տներում տեղի մշակութային և արվեստային գործունեության կազմակերպումը, մշակութային, կրթության, ժամանցի, զբոսաշրջության և ստեղծագործ ներուժի լիարժեք դրսևորման, ստեղծարար արտադրության հիմնման և դրանք մշակութային կենտրոնների վերածելու տեսլականը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում պետության մշակութային կյանքը կենտրոնացած է առավելապես մայրաքաղաքում, մեծամասշտաբ և միջազգային մակարդակով մշակութային միջոցառումները իրականացվում են Երևանում և, ըստ այդմ, մարզերում ապրող քաղաքացիներին հասանելի չեն մշակութային բարիքները, մշակութային բարձրարժեք արտադրանքն ու ծառայությունները: Բազմաթիվ սոցիալ-տնտեսական խնդիրներով պայմանավորված՝ մարզերի և համայնքների մշակութային օջախները մղվել են հետին պլան, այլևս չեն կատարում նախկին դերակատարությունը, բարոյապես և ֆիզիկապես մաշվել են շենք-շինությունները:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող ծրագրով նախատեսվում է իրականացնել մարզային կենտրոններում և համայնքներում առկա մշակույթի տների վերագործարկման համալիր ծրագիրը, որը կիրականցվի փուլերով: 2019-2020 թթ. առաջին |

փուլով կկատարվեն ուսումնասիրություններ և քարտեզագրում, կմշակվի վերագործարկամն և մշակութային կյանքի աշխուժացման հայեցակարգ-նախագիծը՝ համապատասխան արդիականացման կոնցեպտուալ մոդելների, որը հնարավորությունն կտա ամբողջապես տիրապետել մշակույթի տների վերագործարկման հետ կապված խնդիրներն ու առաջարկվող լուծումները՝ հաշվի առնելով տարածաշրջանային առանձնահատկությունները:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միասնական մշակութային հարթակի ձևավորում ՀՀ մարզերում, որի միջոցով կիրականացվի միասնական մշակութային քաղաքականությունը, բնակչության մշակութային կրթության և ժամանցի որակի բարելավում, մարզային մշակութային զբոսաշրջության զարգացում, հանրապետական և միջազգային մշակութային նախագծերի իրականացման հնարավորության մշակութային ինքնավարության ապահովում, ստեղծագործ կարողությունների զարգացում, ներուժի վերհանում, ստեղծարար արտադրությունների հիմնում՝ մշակութային տնտեսության խթանում:

**183.3 «Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման» ծրագրի իրականացում**

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման նպատակն է ապահովել հանրապետության տարածքում գործող երաժշտական կրթօջախների նյութատեխնիկական հագեցվածությունը, որն իր հերթին թույլ կտա ներգրավել աշակերտների մեծ թվով համակազմ՝ նպաստելով մանուկների ու պատանիների գեղարվեստական կրթությանը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

1996 թվականին մշակութային կազմակերպությունները, այդ թվում նաև գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունները՝ երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցները անցան տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության: Համայնքային բյուջեները մեծ դժվարությամբ են կարողանում ապահովել ամենաանհրաժեշտ պահպանման ծախսերի միայն մի մասը: Անհրաժեշտ իրավական դաշտի բացակայությունը, համայնքների ոչ բավարար տնտեսական ներուժը, ոչ բավարար բարոյահոգեբանական պատրաստվածությունը, առկա սոցիալ-տնտեսական պայմանները, ընդհանուր չափորոշիչների բացակայությունը առաջացրեցին մի շարք նոր հիմնախնդիրներ (կառավարման, ֆինանսավորման, կադրային ապահովման, կրթության մատչելիության, նյութատեխնիկական հագեցվածության, ուսումնամեթոդական ապահովվածության ոլորտներում): Անբավարար են նաև գույքային պայմանները, եղած գործիքները բարոյապես և ֆիզիկապես մաշված են, որը բացասաբար է անդրադառնում ուսումնական գործընթացի վրա: Երաժշտական, արվեստի դպրոցներում հատկապես մեծ է դաշնամուրի, հարվածային, ժողովրդական, փողային և լարային գործիքների պահանջարկը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է շարունակաբար իրականացնել երաժշտական գործիքների տրամադրման գործընթացը, կատարելագործել գործիքների գնման և հանձնման ընթացակարգերի թափանցիկությունը, առավել հասցեական դարձնել գործիքների բաշխումը՝ հիմնական շեշտադրումը կատարելով մարզերում նոր մասնագիտական դասարանների ձևավորմանն ու շնորհալի երեխաների կատարողական ունակությունների քաջալերմանն ու խթանմանը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Երաժշտական և արվեստի դպրոցների նյութատեխնիկական բազայի համալրում, նոր մասնագիտական դասարանների ձևավորում, մարզերի շնորհալի երեխաների համար ուսուցման մատչելի և որակյալ պայմանների ապահովում:

**183.4 «Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և**

| | |
|---|---|
| | **հրատարակման» ծրագրի իրականացում**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է մշակութային կրթության որակի բարելավման, ժամանակակից պահանջներին համահունչ ուսումնամեթոդական ձեռնարկների, առարկայական ծրագրերի, աշխատանքային տետրերի, դասագրքերի, ժողովածուների և ուղեցույցների մշակման և կիրառման, դպրոցների գրադարանների համալրման, դասական և ժամանակակից արվեստագետների ստեղծագործությունների և պրակտիկ նյութերի տարածման և հանրահռչակման անհրաժեշտությամբ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում Հայաստանում գործող երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի 207 դպրոցները երկար տարիներ չեն համալրվել անհրաժեշտ գրականությամբ և ուսումնամեթոդական ձեռնարկներով, որն, իր հերթին բացասաբար է անդրադառնում կրթության կազմակերպման գործընթացին: Մշակութային կրթության հաստատությունների ուսուցիչները հնարավորություն չունեն ծանոթանալու դասավանդման ժամանակակից մեթոդներին, արդի գրականությանը: Եղած ուսումնամեթոդական գրականությունը հիմնականում ռուսերեն է, և հայալեզու գրականության պակասը ոլորտի հիմնական խնդիրներից է:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագրի իրականացմամբ լուծվում է հայալեզու գրականության հրատարակման և տարածման խնդիրը, ապահովվում է մասնագիտական նոր դասագրքերի, ժողովածուների և գրականության հասանելիությունն ու մատչելիությունը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների մասնագիտական գրականության անվճար բաշխում, նոր ուսումնական ձեռնարկների, դասագրքերի, ժողովածուների ստեղծում, մշակութային կրթության իրականացնող հաստատություններում ուսումնառության որակի բարձրացում:<br><br>**183.5 Շրջայցերի և հանդիպում-քննարկումների կազմակերպում մարզերի ոլորտի, ինչպես նաև արվեստի, երաժշտական և գեղարվեստի դպրոցների պատասխանատուների հետ**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է մարզերում երաժշտական, գեղարվեստի և արվեստի դպրոցների գործունեության և զարգացման, մարզերի մշակութային կյանքում մշակութային ուսումնական հաստատությունների դերակատարության բարձրացման, մշակութային և գեղարվեստական կրթություն ստանալու իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համայնքային ենթակայության մշակութային ուսումնական հաստատություններն ունեն բազում խնդիրներ.<br>- շենքային պայմանների բարելավում՝ որոշ համայնքներում գեղարվեստական կրթություն և գեղագիտական դաստիարակություն իրականացնող հաստատությունները տեղակայված են մշակույթի տներում և ակումբներում, որոնց մի մասը ներկայում լիարժեք չեն գործում և ունեն հիմնանորոգման կարիք,<br>- համայնքային բյուջեները դժվարությամբ են կարողանում ապահովել պահպանման ծախսերի միայն մի մասը: Անբավարար են նաև գույքային պայմանները, եղած գործիքները, նկարչական պարագաները, դրանք բարոյապես և ֆիզիկապես մաշված են, որը բացասաբար է անդրադառնում ուսումնական գործընթացի վրա: Բացի այդ, լուծված չեն ուսումնական հաստատությունների և մանկավարժների կարգավիճակի, պետության կողմից իրականացվող սոցիալական ծրագրերում նրանց ներառման, արժանապատիվ վարձատրության, ինչպես նաև մշակութային |

կրթության ոլորտում ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ներդրման խնդիրները,
- հաստատությունների մեծ մասն ունի կադրային խնդիր, մասնագետ-մանկավարժների պակաս, ինչպես նաև որոշ հաստատություններում չեն գործում մասնագիտական դասարաններ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՀՀ մարզերում ՀՀ մշակույթի նախարարության նոր քաղաքականությունն ու մարզային մշակութային կյանքի զարգացման նոր տեսլականի ներկայացում, քարտեզագրում, իրական խնդիրների և կարիքների գնահատում, համապատասխան լուծումների առաջադրում, մշակութային կրթության հաստատությունների միջև կապերի ամրապնդում, փորձի փոխանակման նոր հարթակների ստեղծում:

**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Գեղարվեստական կրթություն իրականացնող կրթական հաստատությունների նյութատեխնիկական բազայի և մասնագետների պահանջարկի ադեկվատ բավարարում, ոլորտում առկա տեղական խնդիրների լուծում, գեղարվեստական կրթություն իրականցնող հաստատությունների դերի բարձրացում, մշակութային կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների և շտեմարանի ստեղծում, միջմարզային դպրոցական կապերի ամրապնդում, գործունեության բարելավում, որակի բարձրացում:

**183.6 Հուշարձանների տարածքներում ենթակառուցվածքների զարգացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հուշարձաններն առավել մատչելի, գրավիչ և զբոսաշրջության զարգացման համար ավելի այցելելի դարձնելու նպատակով հրատապ անհրաժեշտություն է առաջացել դրանց շուրջ ենթակառուցվածքներ զարգացնելը՝ ապահովելով նվազագույն պահանջները: Նշյալ խնդիրներից ելնելով՝ անհրաժեշտ է նորոգել և բարեկարգել դեպի հուշարձաններ տանող մայրուղիները և մոտեցման ճանապարհները, զարգացնել հարակից համայնքների ենթակառուցվածքները, ստեղծել հարմարավետ և բարենպաստ պայմաններ տեղի բնակչության, աշխատանքի, կյանքի և կենսամակարդակի բարձրացման համար՝ ստեղծելով մատչելի պայմաններ այցելուների քանակի ավելացման համար, ինչով հուշարձանները կկարողանան հանրահռչակվել ոչ միայն Հայաստանում, այլ նաև Հայաստանի սահմաններից դուրս: Այդ նպատակով անհրաժեշտություն է դարձել կայանատեղիների, սանհանգույցների, սննդի կետերի, հանգստի վայրերի և այլնի ստեղծումը հուշարձանների պահպանական գոտիներից դուրս: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայում ՀՀ տարածքում խնդիր կա հասնել հուշարձաններին՝ թե հիմնական մայրուղիներով, թե մոտեցման ճանապարհներով: Առկա վիճակը խիստ կրճատում է այցելուների քանակը՝ հատկապես ձմեռային, գարնանային և աշնանային եղանակներին: Բացի ճանապարհների խնդիրներից բացակայում են հուշարձանապատկան տարածքներում տարրական ենթակառուցվածքները՝ սանհանգույցները, սննդի կետերը, կայանատեղիները, հանգստյան գոտիները և այլն, որոնք ոչ միայն նվազեցնում են հուշարձաններ այցելուների քանակը, այլև նպաստում տեղի բնակչության արտագաղթին:

Հուշարձանի պատշաճ պահպանության և հատկապես զբոսաշրջային ներուժի լիարժեք օգտագործման առումով առկա են մի շարք խնդիրներ, որոնցից առանձնացվում են.

- այցելուների սպասարկման, հանգստի կազմակերպման անբավարար պայմանները,
- համալիրի պատմամշակութային արժեքների հետ հաղորդակցման և պահպանության համար անձնակազմի բացակայությունը և միջոցների պակասը,
- համալիրի զբոսաշրջային ներուժի չօգտագործված լինելը,
- հուշարձանների տարածքում մշակութային միջոցառումների կազմակերպման համար պայմանների բացակայությունը և այլն:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ծրագրի իրականացման գործընթացում առաջարկվում է ՀՀ մշակույթի նախարարության և շահագրգիռ բոլոր մարմինների/կազմակերպությունների միջև համագործակցություն, մասնավոր ներդրումների ներգրավում հուշարձանների օգտագործման ոլորտում: Ենթադրվում է երկու հիմնական փուլեր՝ նախապատրաստական և իրականացման: Առաջին փուլում կազմվելու է ծրագրային փաստաթղթերի փաթեթը, ներկայացվելու քննարկման, ապա հաստատման (ըստ համապատասխան ընթացակարգի): Այս փուլում է ձևավորվելու նաև աշխատանքային խումբը:

Ըստ վերոհիշյալ նպատակների և խնդիրների՝ իրականացման փուլում նախատեսվում են հետևյալ հիմնական աշխատանքների իրականացումը.

- դեպի հուշարձան տանող և մոտեցման ճանապարհների նորոգում և բարեկարգում,
- հուշարձանների համալիրների համապատասխան վայրերում աղբամանների տեղադրում, կանոնավոր աղբահանություն ապահովում, կանաչապատման և բնական լանդշաֆտի ձևավորման աշխատանքների կատարում, այդ թվում հանգստի գոտիների առանձնացում,
- այցելուների կենտրոնի կառուցում և զբոսավարների ու սպասարկման ոլորտի աշխատակիցների խմբերի ձևավորում՝ պայմանագրային և կամավոր-հասարակական հիմունքներով,
- համալիրի մերձակա տարածքում՝ պահպանական գոտիներից դուրս, սանհանգույցների և կայանատեղիների կառուցում,
- պարբերաբար ազգագրական, մշակութային միջոցառումների, ժողովրդական արհեստների և արվեստների ցուցահանդես-վաճառքների կազմակերպում,
- հուշարձանների տարածքում էլեկտրականության ապահովում և գիշերային լուսավորում,
- պատմական միջավայրին հարիր սննդի կետերի կառուցում, ազգային ուտեստների պատրաստում և մատուցում,
- ըստ պահանջի՝ այցելուներին մոտակա հանգստի գոտիների վերաբերյալ տեղեկատվության, վրանների ու քննապարկերի տրամադրում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Գործընթացների իրականացման դեպքում կավելանա հուշարձաններ այցելուների թվաքանակը, կզարգանան զբոսաշրջությունն ու ենթակառուցվածքները, կբարեկարգվեն ճանապարհները, կբացվեն նոր աշխատատեղեր և կկանխվի արտագաղթը:

**183.7 Հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի ծառայությունների մատուցման ընդլայնում՝ ՀՀ մարզկենտրոններում մեկ պատուհանի ներդրում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Ելնելով պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ոլորտում քաղաքացիներին սպասարկման շահերից, ինչպես նաև ՀՀ մարզերում տարածաշրջանային խնդիրների և տեղական մարմինների հետ խնդիրների լուծումների կազմակերպման նպատակով՝ անհրաժեշտություն է առաջացել ծառայությունների մատուցման՝ «Մեկ պատուհան» համակարգի ներդրումը, ինչը նվազագույնի կհասցնի քաղաքացու առնչությունը պետական լիազոր մարմնի հետ, երկուստեք կնպաստի ժամանակի, միջոցների և ռեսուրսների խնայմանն ու տվյալների տրամադրման մատչելիությանը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայում ՀՀ հուշարձանների սեփականատերերը իրազեկված չեն իրենց իրավունքների ու պարտականությունների մասին: Հուշարձանի պատշաճ պահպանության օգտագործման առումով առկա են մի շարք խնդիրներ, որոնցից առանձնացվում են.

- ՀՀ հուշարձանի սեփականատերոջ անիրազեկ լինելը հուշարձան կառույցի հանդեպ իր իրավունքների ու պարտականությունների մասին և խորհրդատվության պակաս:
- համալիրի պատմամշակութային արժեքների հետ հաղորդակցման և պահպանության համար անձնակազմի բացակայությունը և միջոցների պակաս:

| | |
|---|---|
| | **1.3 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Մեկ պատուհան» ծառայության համակարգի ներդրումը ենթադրում է էլեկտրոնային կայքի ձևաչափ՝ առանց ֆինանսավորման, և յուրաքանչյուր մարզպետարանում /ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ/ գույքային և տեխնիկական հագեցվածություն (10 մարզ և Երևան քաղաք) պետական միջոցների հաշվին: Ծախսերը նախատեսվում է իրականացնել առաջին տարում: «Մեկ պատուհան»-ի ներդրմամբ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի ծառայությունների մատուցման ընդլայնում, ժամանակի, ռեսուրսների խնայում:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>«Մեկ պատուհանի» համակարգի ներդրումը նվազագույնի կհասցնի քաղաքացու առնչությունը պետական լիազոր մարմնի հետ, կնպաստի ժամանակի, միջոցների և ռեսուրսների խնայմանն ու տվյալների տրամադրման մատչելիությանը, կբարձրացնի քաղաքացիների իրազեկվածությունը՝ հուշարձանի պահպանման և օգտագործման վերաբերյալ օրենսդրության առումով: |
| 184 | **184.1 Մշակույթի տարբեր ոլորտներում ստեղծագործական ծրագրերի աջակցություն՝ դրամաշնորհների հատկացման բաց-մրցութային համակարգի միջոցով**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է մրցակցային, արդարացի և թափանցիկ սկզբունքի կիրառման անհրաժեշտությամբ, արվեստի տարբեր ոլորտներում որակի և արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ոլորտներում ստեղծագործական, պետական, ոչ պետական կազմակերպությունների և անհատ ստեղծագործողների հավասար մեկնարկային պայմանների ապահովմանը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Արվեստի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ժամանակակից արվեստի զարգացմանն ուղղված և մշակութային միջոցառումների աջակցության նպատակով պետության կողմից հատկացվող դրամաշնորհները մինչև 2019 թվականը բաշխվել են սահմանված ընթացակարգով, որը, սակայն, չի ապահովել գործընթացի թափանցիկությունն ու մրցակցային բնույթը, պարունակում է կոռուպցիոն ռիսկեր՝ բացասական ազդեցություն ունենալով պետական միջոցների բաշխման արդյունավետության և հաշվետվողականության ողջ գործընթացի վրա: Դրամաշնորհների բաշխման ընթացակարգը, որոշումների կայացման կենտրոնացվածությամբ և վարչահրամայական բնույթով պայմանավորված, առաջ էր բերում մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ արվեստի տարբեր բնագավառների ոչ համաչափ զարգացում, ստեղծագործող անհատների, միավորումների և մշակութային կազմակերպությունների համար մրցակցային դաշտի բացակայություն, մշակութային արտադրանքի ստեղծման և իրացման գործընթացներում անհավասար պայմանների առկայություն:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>2019 թվականի համար ներդրվեց դրամաշնորհների տրամադրման նոր ընթացակարգ, որով կանոնակարգվեց պետական միջոցների տրամադրման ողջ գործընթացը: Դրամաշնորհների տրամադրման նոր ընթացակարգում սկբունքային դերակատարություն է վերապահվելու հատուկ ձևավորված մրցութային հանձնախմբերին, որոնց միջոցով կտրվի մասնագիտական եզրակացություն յուրաքանչյուր ստացված հայտի վերաբերյալ և ըստ այդմ, որոշիչ դերակատարություն կունենան դրամաշնորհների բաշխման գործընթացում՝ ապահովելով ողջ գործընթացի բաց-հրապարակային և բնույթն ու թափանցիկությունը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Մշակույթի ոլորտում գործունեություն իրականացնող անհատների և կազմակերպությունների համար պետական աջակցության ծրագրերի մասնակցության հավասար մեկնարկային պայմանների ապահովում, արվեստի տարբեր բնագավառների համաչափ զարգացում, մշակութային միջոցառումների բազմազանության և ստեղծագործական բարձր նշաձողի ապահովում, պետական միջոցների բաշխման թափանցիկության ապահովում: |

**184.2. Օտարերկրյա պետությունների հետ թիրախավորված համագործակցություն՝ մշակութային կոնկրետ ուղղությունների զարգացման, փորձի փոխանակման համար**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Մշակույթի զարգացման, պահպանման, ստեղծարար ոլորտների աշխատանքների խթանման, մշակութային դաշտի մասնագիտական որակների զարգացման, լավագույն փորձի ներդրման և միջազգային ստանդարտներին համապատասխանելու նպատակով կոնկրետ պետությունների և կազմակերպությունների հետ անհրաժեշտ է իրականացնել ծրագրեր՝ մասնագետների փոխանակման, ուսուցման, փորձագիտական աջակցության, վարպետության դասընթացների և խորհրդատվությունների միջոցով: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մշակույթի բոլոր ոլորտներում կա միջազգային չափորոշիչներին համապատասխան մրցունակ ստեղծարար արտադրանքի և ոլորտի թարմացման ու նոր մասնագիտական հայացքների անհրաժեշտություն և լիարժեք չէ ոլորտում կառավարման արդյունավետության, նոր տեխնոլոգիաների ճիշտ կիրառման և մշակութային արտադրանքի և ծառայությունների մատուցման որակի բարձրացմանն ուղղված ծրագրերը, անհրաժեշտ է իրականացնել նպատակաուղղված քայլեր, մասնավորապես՝ մշակութային ժառանգության պահպանության, վերականգնման, թանգարանային գործի կազմակերպման, գիդերի վերապատրաստման, տեսողական, լսողական, կատարողական արվեստների, գրահրատարակչության և այլ ոլորտներում:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Մասնագիտական, տեխնիկական նորագույն մեթոդներին և նորագույն տենդենցներին հնարավորինս մոտենալու և կիրառելու նպատակով իրականացվում է բոլոր ոլորտներում որակավորման բարձրացման ուսումնասիրություն: Խնդիրների լուծման համար դիտարկվում են Հայաստանի Հանրապետության հետ երկկողմ ակտիվ հարաբերություններ ունեցող, վավերացված միջպետական կամ միջգերատեսչական փաստաթղթերի շրջանակներում համագործակցող պետությունները և միջազգային կազմակերպությունները: Կոնկրետ մշակութային ոլորտի կարգավորման համար պետական ոչ առևտրային կազմակերպության ներկայացուցիչների հետ համագործակցության արդյունքում ընտրվում և մշակվում են կոնկրետ միջոցառումներ /օրինակ՝ խորեոգրաֆների և բալետային տեխնիկայի զարգացման համար ընտրվել է Բ. Էյֆմանի բալետի դպրոցը, իսկ թանգարանային գործի և կուրատորական դպրոցի զարգացման ծրագրերի համար համագործակցում ենք ԻԿՈՄ-ի, Սմիթսոնյան կազմակերպության, Էրմիտաժի հետ/:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառումների հետևողական և պարբերական իրականացման արդյունքում մշակույթի ոլորտները կզարգանան, կաշխատեն ավելի արդյունավետ, ճկուն համակարգերով և միջազգային չափանիշներին համապատասխան կներկայացնեն ժառանգությունն ու ժամանակակից արվեստը: Հայ մշակութային ժառանգությունը ու ժամանակակից արվեստները միջազգային համատեքստում ինտեգրելու, արժևորելու խնդիր է լուծում, ինչպես նաև այլոց հասկանալի ու հասանելի խնդիր է լուծում, որը քաղաքական և դիվանագիտական նպատակով շատ կարևոր է:

**184.3 Դեբյուտային ստեղծագործական ծրագրերի և արվեստի փորձարարական և նորարարական ձևերին խրախուսում**

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացումը հնարավորություն կընձեռի ոլորտը համալրել նոր ստեղծագործական ուժերով, ապահովել սահուն սերնդափոխության գործընթացը, ստեղծագործական դեբյուտային, նորարարական ծրագրերի

ընդլայնմամբ խրախուսել երիտասարդ արվեստագետների գործունեությունը, ստեղծել բարենպաստ միջավայր՝ նոր սերնդի ստեղծագործական կարողությունների արտահայտման և ինքնիրացման համար: Հայ մշակույթի զարգացման հեռանկարները ապահովում է մշակութային բազմազանության սկզբունքով: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստատնի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Երիտասարդության ստեղծարար ներուժը քաղաքակրթական և մշակութային գործընթացների շարժիչ ուժն է, և յուրաքանչյուր հասարակության հաջողությունն ու մշակութային առաջընթացն անհնար է պատկերացնել առանց երիտասարդության մասնակցության, նրանց կողմից նորարարական ստեղծագործական ծրագրերի իրականացման: Երիտասարդական, դեբյուտային և նորարարական ստեղծագործական ծրագրերը մշակութային կյանքում արմատավորված մի շարք բացասական գործոնների, այդ թվում՝ մշակույթի հիերարխիկ բնույթի և հովանավորչության պատճառով հիմնականում լուսանցքային են, ոչ լիարժեք՝ թե մշակութային դաշտում ունեցած ազդեցության և թե պետության կողմից ցուցաբերվող աջակցության առումով: Ներկայում երիտասարդ արվեստագետները դիմագրավում են նաև կրթություն-աշխատաշուկա շղթայի ոչ բավարար գործունեության, պետության կողմից երաշխավորված աջակցության բացակայության հետ կապվածմի շարք այլ մարտահրավերների:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Երիտասարդության ստեղծարար ներուժի զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել համալիր ծրագիր, որը թույլ կտա ապահովել մշակույթի համընդհանուր անխաթար գործընթացը, շարունակել ստեղծագործող անձանց ինքնադրսևորման հավասար և արդարացի պայմանների ապահովման, ստեղծագործական ծրագրերի և գործունեության աջակցության խրախուսման գործընթացները:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Երիտասարդ արվեստագետների արտահոսքի կանխում, մշակույթի տարբեր ոլորտների սահուն սերնդափոխության ապահովում, Նորարարական ծրագրերի, ինչպես նաև մշակութային դաշտում նոր անունների բացահայտում և վերհանում, երիտասատրդության շրջանում մշակույթի նկատմամբ հետաքրքրվածության խթանում, հայ մշակույթի զարգացման դիվերսիֆիկացում:

**184.4 Գրական և մշակութային մամուլին պետական աջակցություն**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

«Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրի շրջանակում ՀՀ մշակույթի նախարարության աջակցություն են ստանում բացառապես գրական,մշակութային տպագիր և էլեկտրոնային պարբերականները: Ծրագիրը միտված է գրական, մշակութային դաշտի իրադարձությունները, խնդիրները, նորությունները հասարակական լայն զանգվածներին հասցնելուն, ինչպես նաև մշակույթի, արվեստի տարբեր ոլորտների վերաբերյալ մասնագիտական լուրջ խոսքի (գրականագիտություն, թատերագիտություն, երաժշտագիտություն, արվեստաբանություն և այլն) խթանմանը: Ծրագրի նպատակն է ԶԼՄ-ների ընտանիքում ունենալ մշակույթ, արվեստ լուսաբանող մասնագիտացված, պրոֆեսիոնալ լրատվամիջոցներ, նպաստել մասնագիտական խոսքի խթանմանը, խթանել լրագրության գրական ժանրերի զարգացումը, հոնորարներ տրամադրելու միջոցով հնարավորություն տալ ոլորտի մասնագետներին ստեղծագործական աշխատանքով ապրել և զարգացնել մասնագիտական խոսքը՝ այն հասցնելով հասարակության տարբեր շերտերին:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Մեր օրերում, երբ մշակույթի, արվեստի ոլորտում տեղի ունեցող իրադարձությունները հիմնականում լուսաբանվում են զուտ լրատվական ժանրի շրջանակում, մասնագիտական-վերլուծական հոդվածներ սակավ ենք հանդիպում, ինչը չի նպաստում հասարակության մշակութային հաղորդակցության զարգացմանը: Գրական և մշակութային իրադարձություններն ու ստեղծագործական ծրագրերը ոչ բավարար լուսաբանման արդյունքում՝ դուրս են մնում

| | |
|---|---|
| | հասարակական կյանքից: Բացի այդ պրոֆեսիոնալ տեսարանների համար սահմանափակ են արտահայտման միջոցները:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պետական աջակցության ծավալով գրական և մշակութային մամուլի հրատարակումը կկարգավորի ստեղծագործող-հասարակություն հարաբերությունները, կխթանի մշակութային և գրական բնագավառների կրողների ճանաճելիությանն ու հանրահռչակմանը: Մյուս կողմից էլ՝ ծրագրի շրջանակում լրատվամիջոցին հատկացված գումարի մի մասը կուղղվի հոնորարների տրամադրմանը, ինչը ևս իր հերթին մոտիվացնում է ոլորտի լուրջ մասնագետներին:<br><br>2. **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Գրական և մշակութային կյանքի տեղեկատվության և վերլուծության հանրայնացման ընդլայնում՝ բովանդակային, մասնագիտացված մամուլի միջոցով:<br><br>**184.5 «Ստեղծագործողներին և հետազոտողներին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի գործարկում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ստեղծագործողների և հետազոտողների աշխատանքներին տրվող աջակցության ծրագիրը ստեղծվել է մշակութաբանական հետազոտությունների, գրականության և գրաքննադատության նախագծերին աջակցելու համար: Այն լրացնում է անկախ մշակութային դաշտում պետական քաղաքականության բացը՝ տեղափոխելով շեշտադրումը գրքաստեղծման հրատարակչական-տպագրական փուլից ստեղծագործական փուլ: Ծրագրի հեռանկարային նպատակն է խթանել նշանակալի, մնայուն և հանրօգուտ աշխատանքների ստեղծումը, որն էլ իր հերթին կնպաստի գրականության և հասարակական գիտությունների զարգացմանը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության զարգացմանը: Դրամաշնորհային ծրագիրը կրելու է ամենամյա բնույթ և ամեն տարի ֆինանսավորվելու է գրական տարբեր ժանրերի նախագծեր:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում մշակութային, գիտական բնագավառների ոչ բավարար պետական ֆինանսավորումը և այս բնագավառում նպատակային ծրագրերի սակավությունը, ինչպես նաև ստեղծագործողի, հետազոտողի նկատմամբ պետական ոչ պատշաճ վերաբերմունքի պատճառով՝ խզվել է պետություն- ստեղծագործող կամ հետազոտող կապը: Պետական աջակցությունը տրամադրվում է հրատարակչին և ստեղծագործողի, հետազոտողի հետ կապը իրականացվում է միջնորդավորված:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագիրը միտված է պետություն-հետազոտող/ստեղծագործող կապի վերականգնմանը և անմիջական, չմիջնորդավորված հարաբերությունների կարգավորմանը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ստեղծագործական, հետազոտական ներուժի բացահայտում և ակտիվացում, պետության դերի և մասնակցության զարգացում՝ ստեղծագործական, հետազոտական իրական դաշտի ձևավորման գործում: |
| 185 | **185.1 «Դաշտադեմ ամրոց», պատմաճարտարապետական արգելոց-թանգարան ստեղծելու, «Դաշտադեմ ամրոց» պատմաճարտարապետական արգելոց-թանգարան մասնաճյուղ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 312-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Դաշտադեմ» հուշարձանն ունի հանրապետական նշանակություն և ընդգրկված է պետական ցուցակում: Պատմամշակութային արգելոցների ստեղծումը բխում է նաև «Պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահռչակման 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրից»: |

Պատմամշակութային արգելոցի ստեղծումը չի հանգեցնում լրացուցիչ ֆինանսական պարտավորության: Դրանց հետագա պահպանությունն ու շահագործումն իրականացվելու է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին հատկացված միջոցների հաշվին: Արգելոցի ստեղծումը ամբողջությամբ համապատասխանում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետի և 17-րդ հոդվածի պահանջներին, քանի որ նրանք ստեղծվում են պատմական միջավայրի և հուշարձանների շուրջը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայասատանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հուշարձանները պետական սեփականություն են և 2005 թվականից վերականգնվում են պետական միջոցների հաշվին: Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է լինելու պատմամշակութային զբոսաշրջության հիմքի վրա զբոսաշրջության բոլոր ձևերի համակցությամբ զբոսաշրջային գրավիչ միջավայրի ձևավորմանը, մասնավորապես՝ համայնքներում զբոսաշրջության զարգացում, տեղական ավանդույթների վերականգնում, զբոսաշրջային ներուժի բացահայտում, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորում և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացում, այդ թվում՝ ավանդական տոնակատարությունների, փառատոների կազմակերպման միջոցով:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է պատմական, հնագիտական, ճարտարապետական հուշարձանների, համալիրների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի, մշակութային այլ արժեքների ուսումնասիրման և հանրահռչակման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ համայնքներում տնտեսական և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ծրագրի իրականացմանը: Արգելոց-թանգարանի հուշարձանների շուրջ պատմամշակութային արգելոցների ստեղծում,պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործման և հանրահռչակման բնագավառում արդյունավետության, ներդրումային դաշտի գրավչության բարձրացում և զբոսաշրջության ծավալների ընդլայնում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի հուշարձանախմբի ամբողջ տարածքի պատշաճ պահպանությունը, մասնագիտական ամբողջական ուսումնասիրման ու հանրահռչակման հնարավորությունը, զբոսաշրջության երթուղիներում արգելոցների ներգրավումը, ինչպես նաև պետական ֆինանսավորման առավել արդյունավետ օգտագործումը:Միաժամանակ, արգելոցների ստեղծումը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը և զբոսաշրջիկների թվի աճին:

**185.2 «Մայրաքաղաք Արտաշատ», «Մայրաքաղաք Դվին» պատմամշակութային արգելոցներ ստեղծելու, «Մայրաքաղաք Արտաշատ», «Մայրաքաղաք Դվին» պատմամշակութային արգելոցների մասնաճյուղեր ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 312-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

«Մայրաքաղաք Արտաշատ», «Մայրաքաղաք Դվին» պատմամշակութային արգելոցների ստեղծումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Մայրաքաղաք Արտաշատ», «Մայրաքաղաք Դվին» հուշարձաններն ունեն հանրապետական նշանակություն և ընդգրկված է պետական ցուցակում: Պատմամշակութային արգելոցների ստեղծումը բխում է նաև «Պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահռչակման 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրից»:

Պատմամշակութային արգելոցների ստեղծումը չի հանգեցնում լրացուցիչ ֆինանսական պարտավորության: Դրանց հետագա պահպանությունն ու շահագործումն իրականացվելու է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և

պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին հատկացված միջոցների հաշվին: Արգելոցների ստեղծումը ամբողջությամբ համապատասխանում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետին և 17-րդ հոդվածի պահանջներին, քանի որ նրանք ստեղծվում են պատմական միջավայրի և հուշարձանների շուրջը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաասատանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հուշարձանները պետական սեփականություն են և վերականգնվում են պետական, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին: Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է լինելու պատմամշակութային զբոսաշրջության հիմքի վրա զբոսաշրջության բոլոր ձևերի համակցությամբ զբոսաշրջային գրավիչ միջավայրի ձևավորմանը, մասնավորապես՝ համայնքներում զբոսաշրջության զարգացում, տեղական ավանդույթների վերականգնում, զբոսաշրջային ներուժի բացահայտում, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորում և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացում, այդ թվում՝ ավանդական տոնակատարությունների, փառատոների կազմակերպման միջոցով:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է պատմական, հնագիտական, ճարտարապետական հուշարձանների, համալիրների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի, մշակութային այլ արժեքների ուսումնասիրման և հանրահռչակման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ համայնքներում տնտեսական և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ծրագրի իրականացմանը: Արգելոց-թանգարանի հուշարձանների շուրջ պատմամշակութային արգելոցների ստեղծում,պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործման և հանրահռչակման բնագավառում արդյունավետության, ներդրումային դաշտի գրավչության բարձրացում և զբոսաշրջության ծավալների ընդլայնում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի հուշարձանախմբի ամբողջ տարածքի պատշաճ պահպանությունը, մասնագիտական ամբողջական ուսումնասիրման ու հանրահռչակման հնարավորությունը, զբոսաշրջության երթուղիներում արգելոցների ներգրավումը, ինչպես նաև պետական ֆինանսավորման առավել արդյունավետ օգտագործումը: Միաժամանակ, արգելոցների ստեղծումը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը և զբոսաշրջիկների թվի աճին:

**185.3 «Աղձք», պատմահնագիտական արգելոց-թանգարան ստեղծելու, «Աղձք», պատմահնագիտական արգելոց-թանգարան մասնաճյուղ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 312-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Արգելոց-թանգարանի հետագա պահպանությունն ու շահագործումն իրականացվելու է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին հատկացված միջոցների հաշվին: Արգելոցի ստեղծումը ամբողջությամբ համապատասխանում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետին և 17-րդ հոդվածի պահանջներին, քանի որ նրանք ստեղծվում են պատմական միջավայրի և հուշարձանների շուրջը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաասատանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

| | |
|---|---|
| | 1.1 **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հուշարձանները պետական սեփականություն են և 2015 թվականից իրականացվում են պեղման աշխատանքներ պետական միջոցների հաշվին: Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է լինելու պատմամշակութային զբոսաշրջության հիմքի վրա զբոսաշրջության բոլոր ձևերի համակցությամբ զբոսաշրջային գրավիչ միջավայրի ձևավորմանը, մասնավորապես՝ համայնքներում զբոսաշրջության զարգացում, տեղական ավանդույթների վերականգնում, զբոսաշրջային ներուժի բացահայտում, զբոսաշրջայինարդյունքի դիվերսիֆիկացում, նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորում և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացում, այդթվում՝ ավանդական տոնակատարությունների, փառատոների կազմակերպման միջոցով:<br><br>1.2 **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է պատմական, հնագիտական, ճարտարապետական հուշարձանների, համալիրների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի, մշակութային այլ արժեքների ուսումնասիրման և հանրահռչակման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ համայնքներում տնտեսական և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ծրագրի իրականացմանը: Արգելոց-թանգարանի հուշարձանների շուրջ պատմամշակութային արգելոցների ստեղծում, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործման և հանրահռչակման բնագավառում արդյունավետության, ներդրումային դաշտի գրավչության բարձրացում և զբոսաշրջության ծավալների ընդլայնում:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի հուշարձանախմբի ամբողջ տարածքի պատշաճ պահպանությունը, մասնագիտական ամբողջական ուսումնասիրման ու հանրահռչակման հնարավորությունը, զբոսաշրջության երթուղիներում արգելոցների ներգրավումը, ինչպես նաև պետական ֆինանսավորման առավել արդյունավետ օգտագործումը: Միաժամանակ, արգելոցների ստեղծումը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը և զբոսաշրջիկների թվի աճին: |
| 186 | **186.1 Հասարակության խոցելի խմբերի համար նպատակային միջոցառումների կազմակերպում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Իրականացվող գործընթացները նպատակաուղղված են լինելու հասարակության խոցերի խմբերի մշակութային կյանքին լիարժեք ինտեգրմանը, նրանց ստեղծագործական հետագա զարգացման և առաջխաղացման պայմանների ապահովմանը, ինքնադրսևորման հնարավորությունների ստեղծմանը, ինչպեա նաև հասարակության մեջ հանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հասարակության խոցերի խմբերի ստեղծագործական ներուժի բացահայտման, արվեստի տարբեր բնագավառներում նրանց ինքնադրսևորման և մշակութային գործընթացներին ներգրավման խնդիրը հասարակության առաջընթացի և մշակութային զարգացման կարևոր պայմաններից է: Մինչ այժմ, արվեստի և մշակութային կյանքի զարգացման ուղղությամբ իրականացվող ծրագրերում հիմնական շեշտադրումն ուղղվել է մշակութային ենթակառուցվածքների գործունեության բնականոն պայմանների ապահովման, արվեստի բնագավառում ստեղծագործող անհատների խրախուսման և նրանց գործունեության խթանման գործընթացներին: Իրականացմամբ կլուծվեն նրանց ինքնադրսևորման, մշակութային կյանքին հաղորդակցման և լիիրավ մասնակցության խնդիրը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներառական արվեստի զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել համալիր ծրագիր, որը թույլ կտա ապահովել մշակույթի համընդհանուր ներառականության անխաթար գործընթացը, շարունակել ստեղծագործող անձանց ինքնադրսևորման հավասար և արդարացի պայմանների ապահովման, ստեղծագործական ծրագրերի և |

| | |
|---|---|
| | գործունեության աջակցության խրախուսման գործընթացները:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում հնարավորություններ կստեղծվեն հասարակության առանձին խավերի ստեղծագործական ներուժի բացահայտման և խթանման համար, ինչպես նաև մշակույթի միջոցով կապահովվի նրանց ինտեգրումը հասարակություն՝ առանձին խավերի և նրանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ստեղծագործական ծրագրերի նպատակային աջակցմամբ:<br><br>**186.2 «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի ընդլայնում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանում տարեցները, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով անձիք բախվում են բազմաթիվ խնդիրների: Այդ խնդիրներից մեկը գրադարանային սպասարկման անմատչելիությունն է: Դրա լուծմանն էր միտված «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի իրականացումը Շիրակի և Լոռու մարզային գրադարաններում: Ծրագրի նպատակը տնային պայմաններում տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով մարդկանց համար գրադարանային սպասարկում ապահովելն է, որի շնորհիվ գրադարանը դառնում է հասանելի հանրության բոլոր շերտերի համար:<br>Տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով անձանց համար մատչելի և հավասար պայմաններ ստեղծելու, հասարակական կյանքին նրանց ներառելու համար անհրաժեշտություն է առաջացել ընդլայնել ծրագիրը, իրականացնել նաև մարզային 8 պետական գրադարաններում: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում «Ընտանեկան գրադարանավար» ծրագիրը իրականացվում է ՀՀ Շիրակի և Լոռու մարզային գրադարաններում,սպասարկում է 120-ից ավելի տարեցների և հաշմանդամների: Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզային գրադարաններում ևս անհրաժեշտություն է առաջացել իրականացնել այս ծրագիրը, քանի որ բոլոր մարզերում էլ առկա է տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով մարդկանց որոշակի քանակ, ովքեր ընթերցանության պահանջ ունեն:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներկայում շենքային պայմանները բավարար հարմարեցված չեն տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով մարդկանց սպասարկելու համար՝ մասնավորապես տեղաշարժման սահմանափակումներ ունեցողների, ծրագիրը հնարավորություն է տալիս գրադարանավարին այցելելու շահառուին, և տնային պայմաններում սպասարկելու գրքերով: Հավասար հնարավորությունների ապահովումն է տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով մարդկանց համար:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի ընդլայնումը հնարավորություն կտա ՀՀ մարզերի 800-1000 տարեցների, սահմանափակ կարողություններ և հնարավորություններ ունեցող շահառուների տնային պայմաններում մատուցել գրադարանային ծառայություններ:<br><br>**186.3 Պատմամշակութային արգելոցներում և դրանց թանգարաններում հասարակության խոցելի խմբերի համար թեքահարթակների, բրայլյան այբուբենով տեղեկատու վահանակների տեղադրում և խուլ-համրերի հետ հաղորդակցվող զբոսավարների ներգրավում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Թեև ՀՀ հարուստ է պատմամշակութային վայրերով՝ հատկապես հուշարձաններով և թանգարաններով, դրանք |

| | |
|---|---|
| | մեծամասամբ հասանելի չեն սահմանափակ կարողություններ ունեցող մարդկանց համար՝ հենաշարժողական խնդիրներ ունեցողներին կամ կույրերին: Նման մարդիկ մշտապես զրկված են մշակույթին հաղորդակից լինելուց, ուստի մշտական է նաև խոցելի խմբի մարդկանց մշակութային կյանքին հաղորդակից դարձնելու բաղձալի երազանքը իրական դարձնելը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում խոցելի խմբերի ներկայացուցիչները մեծամասամբ հնարավորություն չունեն այցելել հուշարձան կամ թանգարան, քանի որ այնտեղ նախատեսված չեն նման մարդկանց համար հարմարություններ՝ թեքահարթակներ, համապատասխան վերելակներ, սանհանգույցներ, բրայլյան այբուբեն և այլն: բացի դրանից բացակայում են նման մարդկանց հետ աշխատող համապատասխան զբոսավարներ: Նման խնդիրները անհավասարություն է դնում առողջական խնդիրներ ունեցող և առողջ մարդկանց միջև, ինչը անթույլատրելի է և խախտում է մարդու իրավունքները:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է հուշարձաններում և թանգարաններում, համաձայն համապատասխան օրենքի ընթացակարգի, ստեղծել համապատասխան հարմարություններ՝ թեքահարթակներ, համապատասխան վերելակներ, սանհանգույցներ, բրեյլյան այբուբենով տեղեկատուներ և խուլ-համրերի հետ զրուցող զբոսավարներ պատրաստել: 2016-2017 թթ. որոշ մշակութային հաստատությունների համար մշակվել են համապատասխան նախագծեր, մի քանիսը նաև ՀՀ մշակույթի նախարարությանն են տրամադրել մոտավոր նախահաշիվները: Սակայն մինչ օրս դրանք չեն իրականացվել ֆինանսական աղբյուրների բացակայության պատճառով: Հասարակության խոցելի խմբերի համար ստեղծել հավասարազոր պայմաններ պատմամշակութային վայրեր, թանգարաններ և այլ մշակութային վայրեր այցելելու համար՝ ստեղծելով համապատասխան պայմաններ օրենքի թույլատրելի շրջանակներում միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ թեքահարթակներ, վերելակներ, կույրերի համար բրայլյան այբուբենով տեղեկատու վահանակներ տեղադրել, իսկ խուլ-համրերի հետ հաղորդակցվող զբոսավարներ պատրաստել:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ստեղծել հավասարազոր պայմաններ հասարակության խոցելի խմբերի համար այցելելու պատմամշակութային հուշարձաններ և թանգարաններ, բարձրացնել հուշարձաններին առնչվող տեղեկացվածության մակարդակը, հասանելիության մատչելիությունը, ինչով նաև կավելանա այցելուների թվաքանակը: |
| 187 | **187.1 Մշակույթի վերաբերյալ հաղորդաշարերի, հաղորդումների նկարահանում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Իրականացվող միջոցառումները նպատակաուղղված են լինելու մշակութային, կրթական, դաստիարակչական, բարոյախրատական ուղղվածություն ունեցող գիտահանրամատչելի և ճանաչողական հեռուստահաղորդումների ստեղծմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի ռեսուրսների ներգրավմանը հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման գործընթացում: Միջոցառման նպատակն է ապահովել մշակութային ժառանգության վերաբերյալ առկա տեղեկատվության մատչելիությունը, մշակույթի վերաբերյալ հաղորդաշարերի, հաղորդումների նկարահանման, սոցիալական գովազդային հոլովակների, մրցույթ-վիկտորինաների, քննարկումների կազմակերպման միջոցով խթանել մշակութային ժառանգության պահպանության, ուսումնասիրման, հրատարակման և հանրահռչակման բնագավառի զարգացումը, ստեղծել նպաստավոր պայմաններ երիտասարդության մեջ մշակութային ժառանգության վերաբերյալ գիտելիքների ամրագրման, ճանաչողության մեծացման համար: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** |

| | |
|---|---|
| | Վերջին տարիներին հայկական գրեթե բոլոր հեռուստաընկերությունները, հետևելով բացառապես իրենց նեղ կոմերցիոն շահերից, եթերը լցրել են ագրեսիվ, հակասոցիալական հաղորդումներով և «հումորային» ծրագրերով, որոնք բացասաբար են անդրադառնում հասարակության առողջության, մտավոր ու ֆիզիկական զարգացման և դաստիարակության վրա, իսկ մշակութային ժառանգության վերաբերյալ հաղորդումների, սոցիալական գովազդների գրեթե բացակայությունը խոչընդոտում է հասարակության շրջանում ժառանգության պահպանության վերաբերյալ ճանաչողության ձևավորմանը, հանրահռչակմանը և սերունդներին անխաթար փոխանցման համար պայմանների ձևավորմանը: Ապահովված չէ մշակութային ժառանգությանը նվիրված և հեռարձակվող հաղորդումների բազմազանությունը՝ հնարավոր հաղորդաշարերի և հաղորդումների տեսակների տեսքով: Հեռուստառադիոընկերություններում ապահովված չեն հաղորդումների լեզվի անաղարտությունը, բնագավառի հիմնական հասկացությունների ճիշտ օգտագործումը: Հաշվի չեն առնված Հայաստանի տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է ստեղծել աշխատանքային խումբ, որն էմպիրիկ մակարդակով կզբաղվի հեռուստաեթերի բովանդակային հետազոտություններով և կանխատեսումներով: Աշխատանքային խմբում անհրաժեշտ է ներգրավել ակտիվ գիտական գործունեությամբ զբաղվող մշակութաբանների, պատմաբանների, ազգագրագետների, հնագետների, սոցիոլոգների, հոգեբանների և բնագավառի հետ կապ ունեցող այլ մասնագետների, ովքեր հեռուստաեթերի ամենօրյա գիտական ուսումնասիրություններ կանեն ու մշակութային ժառանգությանը նվիրված հեռուստահաղորդումներ ստեղծելու վերաբերյալ լուծումներ և առաջարկություններ կներկայացնեն: Կկազմակերպվեն նաև հանրային քննարկումներ, որոնց շրջանակներում կքննարկվեն աշխատանքային խմբի առաջարկությունները հեռուստահաղորդումների և սոցիալական գովազդների վերաբերյալ: Միջոցառման կարգավորման առարկան մշակութային ժառանգությանը հասարակության հաղորդակցման մատչելիության ապահովումն է հեռուստաեթերի, ռադիոյի, մամուլի և սոցիալական մեդիայի ռեսուրսներում:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում ակնկալվում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի ռեսուրսների ներգրավմամբ՝ մշակութային արտադրանքի հասանելիության ապահովում, դրան հաղորդակցվող հանրության շրջանակների ընդլայնում, հայ արվեստի և մշակույթի հանրահռչակում, հասարակության ճաշակի բարձրացում, հեռուստաեթերը մշակութային ժառանգության վերաբերյալ գիտահանրամատչելի, ճանաչողական հաղորդումներով համալրում, երիտասարդներին ազգային մշակութային ժառանգության փոխանցման և սերունդների միջև շղթայական կապի ապահովում, սեփական մշակույթի նկատմամամբ պատշաճ վերաբերմունքի ու արժևորման ամրապնդում:<br><br>**187.2 Նախադպրոցական և դպրոցական ցածր տարիքի լսարանի համար հատուկ ծրագրերի (ուսումնական, ճանաչողական հաղորդումներ, ֆիլմեր, մուլտֆիլմեր) միջոցով գրական հայերենի իմացության ամրապնդում Հայաստանում և սփյուռքում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Իրականացվող միջոցառումները նպատակաուղղված են լինելու մշակութային, կրթական, դաստիարակչական, բարոյախրատական ուղղվածություն ունեցող գիտահանրամատչելի և ճանաչողական հեռուստահաղորդումների ստեղծմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի ռեսուրսների ներգրավմանը հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման գործընթացում: Միջոցառման նպատակն է ապահովել մշակութային ժառանգության վերաբերյալ առկա տեղեկատվության մատչելիությունը, մշակույթի վերաբերյալ հաղորդաշարերի, հաղորդումների նկարահանման, սոցիալական գովազդային հոլովակների, մրցույթ-վիկտորինաների, քննարկումների կազմակերպման միջոցով խթանել մշակութային ժառանգության պահպանության, ուսումնասիրման, հրատարակման և հանրահռչակման բնագավառի զարգացումը, ստեղծել նպաստավոր պայմաններ երիտասարդության մեջ մշակութային ժառանգության վերաբերյալ գիտելիքների ամրագրման, ճանաչողության մեծացման համար: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության |

կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Վերջին տարիներին հայկական գրեթե բոլոր հեռուստաընկերությունները, հետևելով բացառապես իրենց նեղ կոմերցիոն շահերից, եթերը լցրել են ագրեսիվ, հակասոցիալական հաղորդումներով և «հումորային» ծրագրերով, որոնք բացասաբար են անդրադառնում հասարակության առողջության, մտավոր ու ֆիզիկական զարգացման և դաստիարակության վրա, իսկ մշակութային ժառանգության վերաբերյալ հաղորդումների, սոցիալական գովազդների գրեթե բացակայությունը խոչընդոտում է հասարակության շրջանում ժառանգության պահպանության վերաբերյալ ճանաչողության ձևավորմանը, հանրահռչակմանը և սերունդներին անխաթար փոխանցման համար պայմանների ձևավորմանը: Ապահովված չէ մշակութային ժառանգությանը նվիրված և հեռարձակվող հաղորդումների բազմազանությունը՝ հնարավոր հաղորդաշարերի և հաղորդումների տեսակների տեսքով: Հեռուստառադիոընկերություններում ապահովված չեն հաղորդումների լեզվի անաղարտությունը, բնագավառի հիմնական հասկացությունների ճիշտ օգտագործումը: Հաշվի չեն առնված Հայաստանի տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Անհրաժեշտ է ստեղծել աշխատանքային խումբ, որն էմպիրիկ մակարդակով կզբաղվի հեռուստաեթերի բովանդակային հետազոտություններով և կանխատեսումներով: Աշխատանքային խմբում անհրաժեշտ է ներգրավել ակտիվ գիտական գործունեությամբ զբաղվող մշակութաբանների, պատմաբանների, ազգագրագետների, հնագետների, սոցիոլոգների, հոգեբանների և բնագավառի հետ կապ ունեցող այլ մասնագետների, ովքեր հեռուստաեթերի ամենօրյա գիտական ուսումնասիրություններ կանեն ու մշակութային ժառանգությանը նվիրված հեռուստահաղորդումներ ստեղծելու վերաբերյալ լուծումներ և առաջարկություններ կներկայացնեն: Կկազմակերպվեն նաև հանրային քննարկումներ, որոնց շրջանակներում կքննարկվեն աշխատանքային խմբի առաջարկությունները հեռուստահաղորդումների և սոցիալական գովազդների վերաբերյալ: Միջոցառման կարգավորման առարկան մշակութային ժառանգությանը հասարակության հաղորդակցման մատչելիության ապահովումն է հեռուստաեթերի, ռադիոյի, մամուլի և սոցիալական մեդիայի ռեսուրսներում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Արդյունքում ակնկալվում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի ռեսուրսների ներգրավմամբ՝ մշակութային արտադրանքի հասանելիության ապահովում, դրան հաղորդակցվող հանրության շրջանակների ընդլայնում, հայ արվեստի և մշակույթի հանրահռչակում, հասարակության ճաշակի բարձրացում, հեռուստաեթերը մշակութային ժառանգության վերաբերյալ գիտահանրամատչելի, ճանաչողական հաղորդումներով համալրում, երիտասարդներին ազգային մշակութային ժառանգության փոխանցման և սերունդների միջև շղթայական կապի ապահովում, սեփական մշակույթի նկատմամբ պատշաճ վերաբերմունքի ու արժևորման ամրապնդում:

**187.3 Հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի ճանաչողական հեռուստահաղորդաշարի ստեղծում և ցուցադրում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հաշվի առնելով պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ոլորտում տեղեկատվության ու կրթական ծրագրերի պակասը և այն հանգամանքը, որ ազգային արժեքները, մշակույթը և ավանդույթները խեղաթյուրված վիճակով են հեռարձակվում եթեր, անհրաժեշտ է ստեղծել որակյալ հաղորդաշար, որի միջոցով հասարակությունը կիրազեկվի և կկրթվի:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ազատ շուկայի մրցակցության և հասարակության կենսամակարդակի ներկա պայմաններում որակյալ

| | |
|---|---|
| | հեռարձակուման ապահովումը հիմնականում ոչ շահավետ է: Հաղարդումները, որոնց մեջ խոսվում է հուշարձանների մասին, հիմնականում գովազդային բնույթ է կրում, մինչդեռ անտեսվում է այն փաստը, որ ճարտարապետական հուշարձանը անցյալի ականատեսն է, որը իր մեջ պարունակում է կոդավորված տվյալներ ու գաղտնիքների բացահայտելու հնարավորություններ:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Աշխատանքային խմբի ընտրությունը մրցութային հիմքով՝ աշխատանքների ու հայեցակարգային ծրագրերի որակի և սրամտության գնահտմամբ: Փաստագրական ֆիլմերի ստեղծում պրոֆեսիոնալ և շնորհալի, միջազգային ասպարեզում ուշադրությանը արժանացած մասնագետների կողմից: Տեղեկատվական հոլովակների հեռաոձակում եթերում: Բարձր չափանիշվերի հանդեպ հավատարմության պահպանում: Հաղորդաշարի ստեղծման և հեռարձակման միջոցով հասարակության կրթամակարդակի բարձրացում, հուշարձանների ու պատմական միջավայրի պատասխանատու վերաբերմունք:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ակտիվացում ստեղծագործական ոլորտում, որպես հետևանք, եթերի զտում: Որակյալ հաղորդումներ ստեղծելու դեպքում, Հայկական մշակույթի հանրահռչակում: Հայաստանի միջազգային վարկանիշի բարձրացում: Հայաստանի բնակչության իրազեկում: |
| 188 | **188.1 Երկկողմ համագործակցություն մշակույթի օրերի ձևաչափով**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Մշակույթի նախարարությունն ունի երկկողմ մշակութային համագործակցության նպատակով մշակված ծրագրերի տարբեր ձևաչափեր, որոնցից մեկը հայկական մշակույթի օրերի անցկացումն է տարբեր պետություններում: Մշակույթի օրերի անցկացման անհրաժեշտությունը բխում է ստորագրված երկկողմ փաստաթղթերից և այդ պետությունում հայկական մշակույթը բազմակողմ և հնարավորինս լայն ներկայացնելու քաղաքական և մշակութային դիվանագիտության անհրաժեշտությունից: Միջոցառման նպատակն է լավագույնս հանրահռչակել հայ մշակույթը՝ հաշվի առնելով կոնկրետ պետության քաղաքական, մշակութային, հասարակական առանձնահատկությունները կոնկրետ ժամանակաշրջանում: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաասատանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մշակութային օրերի ձևաչափով այժմ իրականացվում են միջոցառումներ տարբեր երկրների հետ փոխադարձության սկզբունքով յուրաքանչյուր տարի: Միջոցառումների ծավալը և բովանդակությունը որոշվում է տվյալ պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների, մշակույթի նախարարությունների հետ համագործակցության արդյունքում: Մշակութային օրերի ձևաչափով իրականացվող միջոցառումների խնդիրն է հնարավորինս բովանդակալից և ներկայանալի նախագծերի ներկայացումը և նման ձևաչափով համագործակցության աշխարհագրության ընդլայնումը:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառումների իրականացումը լուծում է կոնկրետ պետություններում մշակութային նպատակաուղղված քաղաքականության իրականացման խնդիրը՝ հանրահռչակելով և ներկայացնելով կոնկրետ տվյալ պետության համար մշակված մշակութային կոնցեպտ: Մշակութային օրերի յուրաքանչյուր ծրագրի համար ստեղծվում են համապատասխան աշխատանքային ստեղծագործական խմբեր, որոնք մշակում են տվյալ երկրի համար հատուկ ծրագիր:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Մշակույթի օրերի իրականացման արդյունքում հաստատվում են նոր և ամրապնդվում են ավանդական դարձած մշակութային կապերը, միջազգային հանրությանն է ներկայացվում հայկական մշակույթը, հայ արվեստագետները հնարավորություն են ստանում համալիր ծրագրով ներկայանալու այլ պետությունների լավագույն սրահներում և |

| | |
|---|---|
| | կապեր հաստատելու ոլորտի առաջատար մասնագետների հետ, ընդլայնելու համագործակցության աշխարհագրությունը:<br><br>**188.2 Հայ մշակույթին և արվեստներին նվիրված ցուցահանդեսների կազմակերպում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայ մշակույթը և արվեստները օտարերկրյա պետություններում ներկայացնելու, մշակութային քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ է կազմակերպել նախապես մշակված հայեցակարգերով ցուցադրություններ աշխարհի հեղինակավոր հարթակներում: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում կազմակերպվում են քաղաքակրթական և թեմատիկ ցուցահանդեսներ, որոնք ընդգրկում են հավաքածուներ Հայաստանի առաջատար թանգարաններից: Նման միջոցառումների առջև դրված են հետևյալ խնդիրները՝ ներկայացնել Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը լավագույն հայեցակարգերի և ժամանակակից լուծումների միջոցով աշխարհի ամենահեղինակավոր հարթակներում և միջազգային լայն հասրակության համար լավագույն հաստատությունների հետ համատեղ մշակված ձևաչափով:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայկական պատմամշակութային ժառանգությունը և ժամանակակից արվեստը միջազգային ձևաչափերով ներկայացնելու համար ընտրվում են թիրախային հաստատություններ, ընթանում են բանակցություններ և մասնագետների խորհրդատվություններ, Հայաստանի թանգարանները մշակում և հաստատում են պայմանագրեր, մշակույթի նախարարության հսկողությամբ և աջակցությամբ իրականացնում են ցուցահանդեսների անցկացումն ու տարածումը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայ մշակույթի ճանաչելիության բարձրացում, պատմության և արվեստի գործերի ներկայացում, նոր հայացք մեր պատմամշակութային ժառանգությանը՝ ժամանակակից լուծումների, տեխնոլոգիաների միջոցով:<br><br>**188.3 Հայ մշակույթի և ժամանակակից արվեստների հանրահռչակում սփյուռքում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Աշխարհասփյուռ հայերին ներկայացնել հայկական մշակութային ժառանգությունը, ժամանակակից արվեստները և ինտեգրել Հայաստանի մշակութային կյանքին, ընդլայնելով սփյուռքում ստեղծագործող արվեստագետների համագործակցության շրջանակները ու մեծացնել ծավալները: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում իրականացվում են մշակութային ծրագրեր սփյուռքահայ համայնքների հետ համագործակցությամբ՝ հաշվի առնելով կոնկրետ համայնքի խնդիրները, պահանջները և անհրաժեշտությունը: Խնդիր կա համագործակցության խորացման և ընդլայնման, ինչպես նաև բովանդակությամբ պայմանավորված ստեղծարար ծրագրերի ու նախագծերի ներկայացման:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սփյուռքահայ համայնքներին հայ մշակույթին հնարավորինս հաղորդակից դարձնելու համար օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հայ համայնքների ներկայացուցիչների հետ համատեղ մշակվում և իրականացվում են տարբեր մշակութային ծրագրեր: |

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Սփյուռքում ապրող հայերին հնարավորինս հաղորդակից դարձնել հայկական մշակույթին, ծանոթացնել և խորացնել գիտելիքները հայ պատմամշակութային ժառանգության վերաբերյալ, բացահայտել տաղանդներ սփյուռքահայ երիտասարդների մեջ և ամրապնդել կապերը հայրենիքի հետ:

**188.4 Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ՝ ՅՈՒՆԵՍԿՕ, ԵՄ, ԵԽ, ԱՊՀ, ԵԱՏՄ և այլն**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ մշակույթի նախարարությունն իրականացնում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԵՄ-ի, ԵԽ-ի, ԱՊՀ և ԵԱՏՄ կառույցների հետ մշակութային բնագավառում ստանձնած պարտավորությունները, ինչը շատ կարևոր է միջազգային ճանաչելիության և ժառանգության պահպանման, հանրահռչակման, ստեղծարար ինդուստրիայի զարգացման համար: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայում մշակույթի նախարարությունն աշխատում է ՅՈՒՆԵՍԿՕ-յի հետ՝ վավերացված կոնվենցիաների շրջանակներում պարտավորությունների իրականացման, ինչպես նաև հայկական մշակութային ժառանգությունը /նյութական և ոչ նյութական/ համապատասխան ցանկերում ներառելու, պահպանելու և համաշխարհային ճանաչելիություն ապահովելու համար:

ԵՄ հետ համագործակցության համատեքստում այս տարիներին մեծապես կարևորվում է ստեղծարար արտադրությունների զարգացումը «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի Մշակույթ ենթաբաժնի շրջանակներում: ԵԽ հետ համագործակցությունն իրականացվում է ինչպես ստեղծարար ինդուստրիայի, այնպես էլ մշակութային ժառանգության ոլորտում: Մշակույթի նախարարությունն աշխատանքներ է տանում ԵԽ «Մշակութային ուղիներ» ծրագրում հնարավորինս հանրահռչակելու և ներկայացնելու հայկական և եվրոպական մշակութային ընդհանրությունները:

ԱՊՀ կառույցի հետ իրականացվում են միջոցառումներ բոլոր ոլորտներով՝ ժառանգություն, թանգարանային գործ, կինեմատոգրաֆիա, գրահրատարակչություն, փառատոներ և այլն: Նախատեսվում է զարգացնել համագործակցությունը բոլոր ուղղություններով:

Առկա համագործակցության շարունակության և խորացման նպատակով անհրաժեշտ է անընդհատ ապահովել ներկայություն և ակտիվ մասնակցություն վերոհիշյալ կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին, համապատասխան բովանդակությամբ և հիմնավորումներով, զեկույցներով հանդես գալ և ՀՀ այլ համատապատասխան գերատեսչությունների հետ համատեղ իրականացնել համագործակցության զարգացումը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Կինեմատոգրաֆիայի օրենքի ընդունման հետ զուգահեռ հնարավոր կլինի նաև դիտարկել նույն ծրագրի Մեդիա բաժնին միանալու հնարավորությունը, ինչը կինոլորտին կընձեռի նոր և լայն հնարավորություններ եվրոպական համատեղ կինոարտադրության և տարածման համար: 2020 թ. նախատեսվում է Բրյուսելում որպես հատուկ հյուր մասնակցել Եվրոպալիա փառատոնին, ինչը մեծապես կբարձրացնի ԵՄ-ում Հայաստանի մշակույթի ճանաչելիությունը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են լրացուցիչ միջոցներ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Նշյալ կառույցների հետ ակտիվ և հետևողական համագործակցության արդյունքում հնարավոր է պահպանել, հանրահռչակել հայկական մշակութային ժառանգությունը, աշխահին հայտնի դարձնել հայկական պատմամշակութային առանձնահատկությունները, վարել ճիշտ մշակութային դիվանագիտություն և ներկայացնել միջազգային հանրությանը հայկական մշակույթի և ստեղծարար մտքի պոտենցիալը:

**188.5 Միջազգային հեղինակավոր փառատոներին, մրցույթներին, կոնֆերանսներին հայ արվեստագետների, ոլորտի մասնագետների մասնակցության ապահովում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Աշխարհում մեծ ճանաչում և բարձր հեղինակություն ունեցող միջոցառումներին Հայաստանի մասնակցության ապահովումը Հայաստանի ճանաչելիության բարձրացման, որակական առումով ոլորտի պատասխանատուների, մասնագետների, արվեստագետների փոխանակումների և մրցունակության հիմնական երաշխիքներից է: Այն նպատակ ունի ներկայացնել, արժևորել և ճիշտ գնահատել մշակութային արդի ներուժը, մշակել նոր կոնցեպտներ, հիմք ստեղծել նոր համագործակցության և մշակութային արծեքների ստեղծման համար, բացահայտել հայ տաղանդներին և փոխանակել անհրաժեշտ տեղեկատվություն միևնույն ժամանակ նույն վայրում գտնվող աշխարհի լավագույն մասնագետների հետ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Նախարարությունը նպատակաուղղված մասնակցություն է ապահովում համապատասխան հեղինակավոր միջազգային միջոցառումներին, որոնցից են՝ Վենետիկի ժամանակակից արվեստի բիեննալեն, Կաննի, Բեռլինի, Ռոտերդամի կինոփառատոները, Վոմեքս երաժշտական փառատոնը, թատերական և կատարողական արվեստի մի շարք փառատոներ և մրցույթներ, գրքի տոնավաճառներ, ազգային-ավանդական մշակույթին և ծեսերին ուղղված միջազգային հարթակներ և այլն: Մշակութային արտաքին քաղաքականությունն ուժեղացնելու և ազգային ու ժամանակակից հայ ստեղծարար ոլորտները հանրահռչակելու համար անհրաժեշտ է մրցունակ պայմաններ ստեղծել ամբողջ մշակութային դաշտի մասնակցությունը միջազգային միջոցառումներին ապահովելու համար: Անհրաժեշտ է նաև ապահովել հավասար պայմաններ և թափանցիկ ընթացակարգեր մշակութային կազմակերպությունների և անհատ ստեղծագործողների միջև մրցակցային դաշտի կայացման համար:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հեղինակավոր հարթակներում և միջազգային հռչակավոր միջոցառումներին Հայաստանի Հանրապետության մշակութային դաշտի հավասար պայմաններ ապահովելու և մասնակցությանն աջակցելու նպատակով նախարարի հրամանով ստեղծվում են մասնագիտական հանձնաժողովներ, որոնք բաց մրցույթի արդյունքում ընտրում են մասնակցին՝ Հայաստանը ներկայացնելու համար /օրինակ՝ Վենետիկի ժամանակակակից արվեստի բիեննալե/: Անհրաժեշտ է ընդլայնել հնարավոր միջոցառումներին Հայաստանի արվեստագետների և ոլորտի ներկայացուցիչների մասնակցությունը, ընդգրկել նորանոր հարթակներ մասնակցության համար:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ներկայանալով միջազգային հեղինակավոր հարթակներում աշխարհի լավագույն արվեստագետների և ոլորտի ներկայացուցիչների կողքին՝ Հայաստանին հնաավորություն է ընձեռվում ներկայացնել հայ մշակույթը, հասկանալ տվյալ պահին միջազգային հարթակում մեր մրցունակությունը, գնահատել, բարելավել և այլ որակական հարթության վրա բերել մեր մշակութային արտադրանքն ու ներկայացնելու ձևը, միանալ միջազգային մասնագիտական ցանցին, լավագույն փորձը ներդնել Հայաստանում:

189

**189.1 Այլ երկրների որակյալ և հեղինակավոր մշակութային արժեքների, մշակութային արտադրանքի ներկայացում Հայստանում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հայաստանում մշակութային կյանքի ակտիվացման, հայ մշակութասեր հասարակությանը աշխարհի հեղինակավոր մշակութային արժեքների, մշակութային նորարարական միջոցառումների, միջազգային չափանիշներին համապատասխան ցուցադրությունների, պերֆորմանսների և ստեղծարար ինդուստրիայի հետ ծանոթացնելու նպատակով անհրաժեշտ է համագործակցել և Հայաստանում ներկայացնել միջազգային ճանաչում, համակրանք և հեղինակություն վայելող մշակութային երևույթները՝ տեսողական, լսողական, կատարողական արվեստներից մինչև

| | |
|---|---|
| | գրահրատարակչական ոլորտի նորամուծություններ, նոր մոտեցումներ ավանդական ցուցադրություններին և այլն: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում աշխարհի օրեցօր զարգացող և մեծ ճանաչում ձեռք բերող ստեղծարար ոլորտները և մշակութային ժառանգությունը լավագույնս Հայաստանում ներկայացնելու, հանրահայտ արվեստի գործերին, կատարողական բարձր արվեստին հայ հանդիսատեսին հաղորդակից դարձնելու համար մեծ ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ, որը հնարավոր չէ ապահովել միայն պետական միջոցներով:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջազգային տենդենցներից անմասն չմնալու և հայ մշակութային կյանքում աշխարհահռչակ համաշխարհային երևույթները ներկայացնելու, հասարակության կրթական ցենզը բարձրացնելու, մտավոր, համաշխարհային մշակութային բազմազանությանը հաղորդակից դարձնելու, հանդուժողականության սերմանման նպատակով նախարարությունը և պետական ոչ առևտրային կազմակերպությունները դիմում են պետություն-մասնավոր համագործակցությանը: Ֆինանսական հարցերը լուծելու և ծրագրերը հնարավոր դարձնելու համար անհրաժեշտ է համապատասխան առաջարկությունների փաթեթներով հանդես գալ և հնարավորինս ներգրավել տեղական և միջազգային կազմակերպություններին: Անհրաժեշտ է մշակել համակարգված օրակարգ և առաջնահերթություններ, որոնք կապված են նաև քաղաքական տեղաշարժերի և միջազգային աշխարհաքաղաքական նախընտրությունների հետ:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայ հասարակությանը համաշխարհային մշակույթին ծանոթացնելը, հայկական մշակութային հաստատությունների՝ այլ մշակույթների բարձրարժեք արվեստին ծանոթանալը կբարձրացնի մշակութային ճանաչողությունը, ճաշակը, հստակ գնահատելի կդարձնի մեր երկրի մշակութային ներուժն ու կընձեռի համագործակցության նոր հնարավորություններ: Մշակութային նպատակաուղղված դիվանագիտության, ըստ անհրաժեշտության մշակված հստակ քաղաքական օրակարգերի և թիրախավորված ծրագրերի միջոցով միջազգային համագործակցության հաստատում և ընդլայնում:<br><br>**189.2 Մշակույթի գործիչների և ոլորտի օտարերկրյա պատասխանատուների, հեղինակավոր անձանց հետ համագործակցություն Հայստանում՝ որակյալ փորձի փոխանակման և նորարարական ծրագրերի իրականացման համար**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Մշակույթի զարգացման, պահպանման, ստեղծարար ոլորտների աշխատանքների խթանման, մշակութային դաշտի մասնագիտական որակների զարգացման, լավագույն փորձի ներդրման և միջազգային ստանդարտներին համապատասխանելու նպատակով կոնկրետ պետությունների և կազմակերպությունների հետ անհրաժեշտ է իրականացնել ծրագրեր՝ մասնագետների փոխանակման, ուսուցման, փորձագիտական աջակցության, վարպետության դասընթացների և խորհրդատվությունների միջոցով:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում ՀՀ մշակույթի նախարարությունը աշխատանքներ է իրականացնում Հայաստանի և այլ պետությունների հեղինակավոր մշակութային գործիչների հետ խայմանավորվածություններ ձեռք բերելու և նրանց տարեկան միջոռացումների մեջ ընդգրկման ուղղությամբ: Մշակույթի տարբեր ոլորտներում առկա է մասնագետների փոխանակման, ուսուցման, փորձագիտական աջակցության, վարպետության դասընթացների և խորհրդատվությունների խնդիրը:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Տեղում մասնագիտական աչքով ծանոթանալու, նորարարական մոտեցումներ ցուցաբերելու, տեղայնացված |

ծրագրեր մշակելու և արդիական մտքերի իրականացման նպատակով անհրաժեշտ է Հայաստանում կազմակերպել տարբեր մշակութային ոլորտների մասնագիտական այցեր, նոր ռազմավարական ուղղությունների մշակման, արվեստագետների և ոլորտի մասնագետների միջև շփումների և խորհրդատվությունների իրականացման համար:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառումների իրականացման արդյունքում հնարավոր կլինի կոնկրետ մշակութային ոլորտներում բարձրացնել մասնագիտական, կատարողական որակները, ներդնել նորագույն տեխնոլոգիաներ, որդեգրել նոր մոտեցումներ միջազգային գործընթացներին համընթաց առաջ շարժվելու համար:

**189.3 ՀՀ-ում անցկացվող միջազգային ծրագրերին, փառատոներին, մրցույթներին, գիտաժողովներին օտարերկրյա մասնակցիների ապահովում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ-ում յուրաքանչյուր տարի իրականացվում են միջազգային տարբեր փառատոնային և մրցութային ծրագրեր: Երկրի և մշակույթի ճանաչելիության բարձրացման, ինչպես նաև այդ միջոցառումներին լրացուցիչ որակ և անհրաժեշտ ռեզոնանս ապահովելու նպատակով անհրաժեշտ է օտարեկրյա արվեստագետների և ոլորտի մասնագետների ներգրավվածությունը: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման «4.5. Մշակույթ» բաժին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Նշյալ փառատոներն այժմ անցկացվում են Հայսաստանում՝ ներգրավելով նաև օտարերկրյա մասնակիցներին: Ավելի մեծ թվով մասնակիցների և հայտնի անունների ներգրավելու համար անհրաժեշտ է անընդհատ հետևողական աշխատանք՝ ֆինանսների մեծացման և միջազգային հարթակներում միջոցառումների մասին տեղակացվածության բարձրացման ուղղությամբ: Անհրաժեշտ է բարձրացնել իրականացվող ծրագրերի միջազգային ճանաչելիությունը, ներգրավել հանրահայտ արվեստագետների և զարգացնել պետություն-մասնավոր համագործակցությունը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նշյալ միջոցառումների ճանաչելիության բարձրացման, ֆինանսական միջոցների մեծացման և հանրահայտ արվեստագետներ ներգրավելու համար անհրաժեշտ է պետական և մասնավոր համագործակցությամբ, ծրագրի մասնագիտական-որակական հատկանիշների և պետական քաղաքականության վրա հիմնված նպատակաուղղված ծրագրերի և մասնակիցների ընտրություն:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջազգային հանրության կողմից և համապատասխան մասնագիտական հարթակներում ճանաչելի պարբերական մշակութային միջոցառումները և հայտնի անունների, ինչպես նաև երիտասարդ ստեղծագործողների ներգրավվածությունը հնարավորություն կտա մշակույթի նշյալ ոլորտներում իրականացնել նպատակային զարգացնող և հանրահռչակող քաղաքականություն, կերտել միջազգային ստեղծարար միջավայր և զարգացնել այն:

**189.4 Սփյուռքահայերի ներգրավում Հայաստանի մշակութային կյանքին**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Սփյուռքահայ արվեստագետների և ոլորտի մասնագետների ներգրավվածություն Հայաստանի մշակութային կյանքին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Նախարարության տարեկան ծրագրերում և միջազգային միջոցառումների ժամանակ անհրաժեշտ է օգտագործել

| | |
|---|---|
| | սփյուռքահայ ներուժը՝ միաժամանակ ևիրենց հայկական մշակութային կյանքին հաղորդակից դարձնելու և լավագույն փորձի փոխանակման, կապերի ամրապնդման համար:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սփյուռքահայ համայնքներին հայ մշակույթին հնարավորինս հաղորդակից դարձնելու համար օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հայ համայնքների ներկայացուցիչների հետ համատեղ մշակվում և իրականացվում են տարբեր մշակութային ծրագրեր:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Սփյուռքում ապրող հայերին հնարավորինս հաղորդակից դարձնել հայկական մշակույթին, ծանոթացնել և խորացնել գիտելիքները հայ պատմամշակութային ժառանգության վերաբերյալ, բացահայտել տաղանդներ սփյուռքահայ երիտասարդների մեջ և ամրապնդել կապերը հայրենիքի հետ: |
| **Պաշտպանության նախարարություն** | |
| 190 | **190.1-190.4 Զսպման ուժերի և միջոցների զարգացման, զորքերի մարտական կարողությունների բարձրացման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ելնելով հավանական պատերազմի բնույթի գնահատման արդյունքներից և հաշվի առնելով ՀՀ զինված ուժերի ու հակառակորդի մարտական կարողությունների (ներուժի) հարաբերակցությունը, հավանական ագրեսիայի դիմագրավումը երաշխավորելու համար անհրաժեշտ է ունենալ այնպիսի ՍՌՏ միջոցներ և ուժեր, որոնք հնարավորություն կտան պահպանել ուժերի հավասարակշռությունը և ապահովել Հայաստանի Հանրապետության նկատմամբ ցանկացած բնույթի զինված ոտնձգության կանխումը, հակառակորդի կրիտիկական կարևոր օբյեկտների ոչնչացմամբ անընդունելի վնասի հասցնումը, արդյունքում ռազմական գործողությունների հնարավորինս վաղ փուլում դադարեցումը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հակառակորդի զինված ուժերը ՀՀ ԶՈՒ-ի համեմատ ունեն ուժերի ու միջոցների քանակական գերակշռություն, իսկ ՀՀ զինված ուժերի առկա կրակային հեռահար միջոցներով հակառակորդի զորքերի պոտենցիալն իջեցնելու հնարավորությունները սահմանափակ են:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդիրների լուծումներն արտացոլված են ՀՀ զինված ուժերի 2019-2024 թվականների զարգացման պլանում և ՀՀ սպառազինության և ռազմական տեխնիկայի 2019-2024 թվականների զարգացման պետական ծրագրի նախագծում:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կստեղծվի Հայաստանի Հանրապետության նկատմամբ ցանկացած բնույթի զինված ոտնձգության կանխման ներուժ, զինված ուժերի կարողությունները կհամապատասխանեցվեն ռազմական սպառնալիքների գնահատված (կանխատեսվող) մակարդակին և հավանական ռազմական գործողությունների բնույթին: |
| 191 | **191.1-191.4 ԶՈՒ կառավարման համակարգի զարգացման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումների իրականացումը պայմանավորված է հակառակորդի նկատմամբ որոշումների կայացման գործընթացում առաջանցման ապահովման, կապի համակարգի կայունությունը, շարժունակությունը, թողունակությունը և ծածուկությունը պահանջվող գործակիցներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ցածր է կապի միջոցներով համալրվածությունը, միջոցների մի մասն ունեն բարոյական և ֆիզիկական մաշվածություն, բացակայում է պահուստը, առկա են ռեսուրսը սպառած շարժական տեխնիկաներ, բավարար չէ կապի գաղտնագրման արդիական միջոցների քանակը, մարտական գործողությունների վարման շրջանները կապի առումով ունեն ցածր կահավորվածություն: |

| | |
|---|---|
| | **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդիրների լուծումներն արտացոլված են ՀՀ զինված ուժերի 2019-2024 թվականների զարգացման պլանում և ՀՀ սպառազինության և ռազմական տեխնիկայի 2019-2024 թվականների զարգացման պետական ծրագրի նախագծում:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կբարձրանա կառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը, զորքերի կառավարման կայունությունը, անընդհատությունը, օպերատիվությունն ու ծածուկությունը: |
| 192 | **192.1-192.4 Մարտական հերթապահության արդյունավետության և անվտանգության բարձրացման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է մարտական հերթապահության արդյունավետության ու անվտանգության բարձրացմամբ, մարտական խնդիրների լիարժեք կատարմամբ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Դեռևս ավարտված չեն շփման գծի ողջ երկայնքով տեսադիտարկման և ազդարարման համակարգերի տեղադրման աշխատանքները, բարելավման կարիք ունեն մարտական դիրքերում ծառայություն իրականացնող անձնակազմի կենցաղային պայմանները:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդիրների լուծումներն արտացոլված են ՀՀ զինված ուժերի 2019-2024 թվականների զարգացման պլանում և ՀՀ սպառազինության և ռազմական տեխնիկայի 2019-2024 թվականների զարգացման պետական ծրագրի նախագծում:<br><br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կբարձրանա հակառակորդի դիտարկման, խոցման, խնդիրների կատարման արդյունավետության, անձնակազմի քողարկման, պատսպարման և պաշտպանվածության աստիճանը, կբարելավվեն կենցաղային պայմանները: |
| 193 | **193.1-193.3 Անձնակազմի բարոյահոգեբանական և ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է զինծառայողների մոտ բարոյահոգեբանական այնպիսի ունակությունների ձևավորմամբ, որոնք կնպաստեն ժամանակակից մարտի պայմաններում տարբեր բարդության մարտական խնդիրների ինքնուրույն կատարմանը՝ ցուցաբերելով նախաձեռնողականություն և ստեղծագործ մոտեցում:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Զինված ուժեր զորակոչվածների շարքում դեռևս զգալի թիվ են կազմում անբավարար բարոյահոգեբանական, ֆիզիկական ու մտավոր հատկություններով անձիք, ինչը հանգեցնում է հասարակական արատավոր երևույթների, ցածր բարոյահոգեբանական մթնոլորտի և արատավոր բարքերի ներթափանցմանը ՀՀ զինված ուժեր:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է մշակել (լրամշակել) գաղափարա-իրավական, հասարակական-պետական և ֆիզիկական պատրաստության հատուկ ծրագրեր, բարձրացնել հայրենիքին անձնվիրաբար ծառայելու, զինվորական պարտքն անմնացորդ նվիրումով կատարելու գիտակցականությունը, գիտելիքի, մասնագիտական հմտության, ազգային գաղափարների արժեքային վարկանիշը:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Զինված ուժերում կամրապնդվի բարոյահոգեբանական վիճակը, զինվորական կարգապահությունը և կբարձրանա ֆիզիկական պատրաստվածության մակարդակը: |
| 194 | **194.1-194.6 Թիկունքային և բժշկական ապահովման որակի բարձրացման վերաբերյալ** |

| | |
|---|---|
| | **1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է անձնակազմի պարենային և իրային, բժշկական ապահովման բարելավմամբ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ցածր է պարենի և իրային ունեցվածքի զորային ու օպերատիվ պաշարների համալրվածությունը, բարելավման կարիք ունեն անձնակազմի սննդակարգը և բուժսպասարկումը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է բարձրացնել անձնակազմի սննդի կազմակերպման արդյունավետությունը, ներդնել զինվորական համազգեստի ազգային տարրեր, արդիականացնել հոսպիտալներն ու բժշկական ջոկատները:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Զինծառայողները կապահովվեն ավելի որակյալ սննդով, հարմարավետ զինվորական համազգեստով, հնարավորություն կընձեռվի կուտակել և պահպանել թիկունքի ծառայությունների նյութական միջոցները, մատուցել ԶՈՒ պահանջներին համապատասխանող արդի բժշկական ծառայություն: |
| 195 | **195.1-195.2 Տեխնիկական ապահովման կատարելագործման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումների իրականացումը պայմանավորված է զինված ուժերը սպառազինության և ռազմական տեխնիկայով ապահովելու, դրանց մշտական մարտունակությունը պահպանելու անհրաժեշտությամբ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Թարմացման և արդիականացման կարիք ունի զինված ուժերում շահագործվող սպառազինությունը և ռազմական տեխնիկան, մի շարք միջոցներ սպառել են շահագործման առավելագույն ժամկետները և պահանջում են փոխարինում:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդիրների լուծումներն արտացոլված են ՀՀ սպառազինության և ռազմական տեխնիկայի 2019-2024 թվականների զարգացման պետական ծրագրի նախագծում:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Զինված ուժերը կսպառազինվեն հրթիռահրետանային սպառազինությամբ, զրահատանկային, ավտոմոբիլային տեխնիկայով, կբարձրանա նորոգման և վերականգնման ստորաբաժանումների արդյունավետությունը: |
| 196 | **196.1-196.2 Մարդկային ռեսուրսի առումով զորահավաքային նախապատրաստության, պահեստազորի համակարգի և անձնակազմի զորահավաքի գործընթացի կատարելագործման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումների իրականացումը պայմանավորված է պահեստազորային ծառայության կատարելագործման և զորահավաքային խնդիրների արդյունավետ կատարման անհրաժեշտությամբ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կատարելագործման կարիք ունի պահեստազորային ծառայությունը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կուտակել անհրաժեշտ քանակի մասնագիտացված պահեստուժ, ներդնել և զարգացնել ակտիվ պահեստա-զորի ծառայությունը:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կպահպանվի զինված ուժերի համալրվածության անհրաժեշտ թվաքանակը և կբարձրացվի ստորաբաժանումների համալրվածության աստիճանը: |
| 197 | **197.1-197.2 Տնտեսության զորահավաքային նախապատրաստության ոլորտում պետական ու տեղական մարմինների, կազմակերպությունների համաձայնեցված գործունեության, ինչպես նաև պլանավորման և վերահսկման մեխանիզմների արդյունավետության բարձրացման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումների իրականացումը պայմանավորված է պետական ու տեղական մարմինների, կազմակերպությունների համաձայնեցված գործունեության, ինչպես նաև պլանավորման և վերահսկման |

| | |
|---|---|
| | մեխանիզմների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ:<br>**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի իրականացումն ապահովելու ոլորտում.<br>1) ճշգրտման կարիք ունի Հանրապետության տնտեսության զորահավաքային պլանը,<br>2) զորահավաքային նախապատրաստության և զորահավաքային առաջադրանքները կատարելու համար այսօր ընդունված մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում, ընդգրկված ընկերությունների հետ զորահավաքային առաջադրանքները կատարելու համար կնքված համապատասխան պայմանագրերով նախատեսված առաջադրանքները սահմանված ժամկետում կատարելու համար առկա են մի շարք խնդիրներ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պետության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի գործընթացների կանոնակարգման և դրանց կազմակերպումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է ձևավորել ՀՀ-ում զենքի, ռազմամթերքի արտադրության, սպառազինության և ռազմական տեխնիկայի նորոգման զորահավաքային պահանջարկները և զորահավաքային պահուստում կուտակման ենթակա նյութական արժեքների կարիքները:<br>**2.Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառումների իրականացումը կիստակեցնի գործընթացի կանոնակարգումը և կնպաստի ընկերությունների կողմից զորահավաքային առաջադրանքների կատարմանը: |
| 198 | **198.1-198.2 Ռազմական արդյունաբերության համալիրի զարգացման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումների իրականացումը պայմանավորված է հայրենական արտադրության սպառազինության և ռազմական տեխնիկայի նմուշների արտադրության, ՌԱՀ-ի ընկերություններին աջակցության, գիտության և կրթության ոլորտների հետ համագործակցության զարգացման անհրաժեշտությամբ:<br>**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Անկախ պետականության կայացման տարիներին Հայաստանում տնտեսությունը վերակազմավորվել է առանց ռազմարդյունաբերության պետական համակարգված քաղաքականության և զարգացման հստակ ծրագրերի.<br>- Գերակայությունների և որոշումների կայացման բնագավառում կարիք կա համակարգային մոտեցման և հստակ մեխանիզմների մշակման ու ներդրման:<br>- Ռազմարդյունաբերության զարգացման հեռանկարների և ծրագրերի բացակայության արդյունքում առաջացած խնդիրները հիմնականում լուծվում էին ընթացիկ կարիքներից ելնելով:<br>- Չափազանց թույլ է ԲՈՒՀ-երի հետ համագործակցությունը՝ հատուկ կրթական ծրագրերի մշակման, համապատասխան կադրերի վերապատրաստման, հետազոտական աշխատանքների իրականացման բնագավառում:<br>- Ֆինանսավորման մեխանիզմները սահմանափակ են:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների լուծման, ռազմարդյունաբերական համալիրի զարգացման գործընթացի կանոնակարգման և դրանց կազմակերպումը առավել արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է սահմանել սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական ունեցվածքի զարգացման ուղղություններն ու առաջնահերթությունները, ինչպես նաև ապահովել տեխնոլոգիաների ու տեխնիկայի հարցերում բարձր բանիմացությամբ զորակոչիկների ներգրավումը ռազմարդյունաբերական ոլորտում իրականացվող աշխատանքներին.<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառումների իրականացումով կապահովվի ՍՌՏ մշակման, սերիական արտադրության, արդիականացման և վերանորոգման հարցերում ԶՈւ միջնաժամկետ ու երկարաժամկետ կարիքների և առաջնահերթությունների մասին ռազմարդյունաբերական ձեռնարկությունների իրազեկվածությունը և դրանք բավարարելու համար ձեռնարկությունների կողմից գիտաարտադրական հզորությունների և մասնագիտական ներուժի պլանավորումը: Միաժամանակ՝ կապահովվի երիտասարդ մասնագետների ներգրավումը ռազմարդյունաբերության ոլորտ: |
| 199 | **199.1-199.8 Պաշտպանության ոլորտում բարեվարքության, զինված ուժերի անձնակազմի կարգապահության** |

**և բանակում մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդման վերաբերյալ**

**1.Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Ամրապնդել բարեվարքության, կարգապահության, հաշվետվողականության, մարդու իրավունքների պաշտպանության և կանանց համար հավասար հնարավորությունների ապահովման մշակույթը Զինված ուժերում, ինչը կնպաստի կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, ռեսուրսների կառավարման ունակությունների զարգացմանը, անհատական և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացմանը: Միջոցառումների իրականացումը պայմանավորված է նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերի  և ՀՀ Սահմանադրության պահանջների կատարման, ինչպես նաև անձնակազմի իրազեկվածության ու իրավագիտակցության մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս կարգապահական իրավախախտումների շրջանակներում ծառայողական քննությունների անցկացման գործընթացին, զինծառայողին իր իրավունքներին և պարտականություններին պարտադիր ծանոթացնելու, կիրառված կարագապահական տույժի վերաբերյալ զինծառայողին տեղեկացնելու և զինծառայողի կողմից այն բողոքարկելու, բողոքի քննարկման արդյունքներով ընդունվող որոշումների հետ կապված հարաբերությունները հստակեցման կարիք ունեն:

Միևնույն ժամանակ՝ ՊՆ կառուցվածքում գործում է ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնը (ՄԻԲԿ), որի նպատակը ՊՆ համակարգում մարդու իրավունքների և բարեվարքության ամրապնդման, մարդու իրավունքների պաշտպանության և կանանց համար հավասար հնարավորությունների ստեղծման ապահովումն է: «Թեժ գիծ» ծառայության և այլ գործիքակազմի միջոցքվ Կենտրոնը հանդիսանում է նաև առերևույթ կոռուպցիոն դեպքերի և այլ հանցագործությունների (այդ թվում՝ մարդու իրավունքների ոտնահարման առումով) վերաբերյալ ահազանգման և ներքին ու արտաքին ազդարարման պատասխանատու: Ընդ որում՝ ՀՀ ՊՆ-ն 2013թ.-ից միացել է ՆԱՏՕ-ի  բարեվարքության ամրապնդման ծրագրին, որի շրջանակներում մասնակցում է ինքնագնահատման և փորձագիտական խմբի վերանայման գործընթացին: Չնայած նրան, որ ինքնագնահատման գործընթացը հնարավորություն է տվել ուրվագծել պաշտպանության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունները, և բացահայտել հիմնական կոռուպցիոն ռիսկերը, այնուամենայնիվ, գոյություն չունի այս ոլորտում ՊՆ քաղաքականության դրույթները ամրագրող համապարփակ հայեցակարգային փաստաթուղթ:

Զուգեհառաբար՝ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով հաստատված «ՊՆ կանանց իրավունքների պաշտպանության և հավասար հնարավորությունների ապահովման ուղեցույցում» ամրագրված է, որ ՊՆ համակարգի բարեփոխումների անհրաժեշտ նախապայմաններից է անձնակազմի քանակական և որակական ցուցանիշների համամասնական ու փոխկապակցված զարգացումը, որի շրջանակներում հատուկ կարևորություն է ձեռք բերում ՊՆ համակարգում կանանց ներգրավման ուղղությամբ քաղաքականության վերանայումն ու առկա անորոշությունների վերացումը, ինչպես նաև զինծառայողների կանանց համար զինվորական ավաններում բնակվելու ընթացքում կամ զինվորական ծառայության բերումով բնակության վայրի փոփոխություններին արագ հարմարվելու համար պայմանների ստեղծումը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է՝

«ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համապատասխան փաստաթղթերի փաթեթի մշակմամբ և ներկայացմամբ,

- հզորացնել ՊՆ համակարգում Մարդու իրավունքների և բարեվարքության ամրապնդման հարցերով մասնագիտացված կառույցի կարողությունները՝ անձնակազմի վերապատրաստման, այդ թվում՝ թեժ գծի տեխնիկական հագեցվածության ապահովման ուղղություններով,

- ՊՆ ռազմակրթական հաստատություններում ներդնել ՀՀ ՊՆ մասնագետների, ՆԱՏՕ-ի «Պաշտպանական կրթության զարգացման» և «Բարեվարքության հարցերով» միացյալ թիմը համատեղ մշակած «Լավ կառավարում և բարեվարքության ամրապնդում պաշտպանության և անվտանգության ոլորտում» առարկայի ուսումնական ծրագիրը,

- բարեվարքության հարցերով ներկայացված ինքնագնահատման հարցաշարի վերլուծության հիման վրա մշակել պաշտպանության ոլորտի հակակոռուպցիոն ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր,

| | |
|---|---|
| | - ապահովել մարդու իրավուքների վերաբերյալ շարունակական կրթություն, ինչի նպատակով առարկայի հեռուսուցումը կազմակերպել ՊՆ համակարգում հեռուսուցման կարողությունների ներդրմանը զուգընթաց,<br>- ապահովել մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկման միջոցառումների շարունակականությունը և ինստիտուցիոնալացումը՝ դրանցում ընդգրկելով հնարավորինս մեծ թվով զինծառայողների,<br>- հետևողական աշխատանքներ իրականացնել կին զինծառայողների և զինծառայողների կանանց խնդիրների վերլուծության, զինվորական միջավայրին նրանց արագ ինտեգրմանը խոչընդոտող պատճառները ուսումնասիրության ուղղությամբ, ինչպես նաև մշակել նրանց սոցիալ-հոգեբանական ադապտացման համար անհրաժեշտ համալիր միջոցառումների ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կապահովվի ՀՀ Կառավարության ծրագրի՝ կոռուպցիայի դեմ պայքարի դրույթների իրականացումը:Կբարձրանա անձնակազմի իրազեկվածությունը բարեվարքության, կոռուպցիայի կանխարգելման, դրա դեմ պայքարի, ինչպես նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների միջազգային սկզբունքների և ՀՀ օրենսդրության պահանջների վերաբերյալ: Հնարավորություն կստեղծվի առավել արագ և արդյունավետ արձագանքել առերևույթ կոռուպցիոն դեպքերի/հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներին և ահազանգերին: Կապահովվի զինված ուժերի անձնակազմի կարգապահության ամրապնդման և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ գործընթացի իրականացումը: Թեժ գիծը կկարողանա սպասարկել ավելի մեծ թվով զանգեր, փորձառու մասնագետների կողմից կտրամադրվի առավել հասցեական օժանդակություն մարդու իրավունքներին առնչվող դեպքերի վերաբերյալ: ՀՀ ՊՆ ՄԻԲ կենտրոնի կարողությունների զարգացումը թույլ կտա անհրաժեշտության դեպքում իրականացնել «արագ արձագանքման» և անակնկալ այցեր ստորաբաժանումներ, ինչը հնարավորություն կտա զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ օպերատիվ գնահատական և օբյեկտիվ պատկեր ունենալ՝ նպաստելով ԶՈւ-ում մարդու իրավունքների խախտումների թվի նվազմանը: Կապահովվի ՀՀ Կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65–Ա որոշման հավելվածի (ՀՀ Կառավարության ծրագիր) 4-րդ բաժնի (Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացին), 4.2 ենթաբաժնի (Աղքատության հաղթահարումը, սոցիալական պաշտպանությունը և ժողովրդագրությունը) 6-րդ պարբերությամբ սահմանված նպատակադրման իրականացումը, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2019-2021 թվականների ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» N197-Լ որոշմամբ նախատեսված Պաշտպանության նախարարությանը վերաբերող միջոցառումների իրականացումը: |
| 200 | **200.1-200.4 Հանրային իրազեկման, թափանցիկության և հասարակական վստահության, ամրապնդման, աճող սերնդի հայրենասիրական դաստիարակության և ազգային ինքնագիտակցության մակարդակի բարձրացման, հավանական հակառակորդի տեղեկատվաքարոզչական ազդեցության դեմ պայքարի ուժգնացման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումների իրականացումը պայմանավորված է հանրային իրազեկման, թափանցիկության ամրապնդման, ժողովրդավարական վերահսկողության և հավանական հակառակորդի տեղեկատվաքարոզչական ազդեցության դեմ պայքարով, աճող սերնդի հայրենասիրական դաստիարակության և ազգային ինքնագիտակցության մակարդակի և ԶՈՒ-ի նկատմամբ հասարակության վստահության աստիճանի բարձրացմամբ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կանոնակարգված է ՊՆ-ում ԶԼՄ-ների հավատարմագրման գործընթացը, նրանց հետ պարբերաբար կազմակերպվում են ռազմական լրագրության, տեղեկատվական անվտանգության հիմունքների, ռազմական տերմինալոգիայի և ոլորտին առնչվող այլ հարցերի իրազեկման դասընթացներ: Սակայն դասընթացներին ԶԼՄ-ներից ուղարկում են սկսնակ և ամեն անգամ ոչ նույն լրագրողներին ու օպերատորներին, ինչը խանգարում է վերջիններիս արհեստավարժության զարգացմանը:<br>ԶԼՄ-ները հաճախ հղում են անում ադրբեջանական կայքերի տեղեկատվությանը, որը խոչընդոտում է հավանական հակառակորդի տեղեկատվաքարոզչական ազդեցության դեմ պայքարում միասնական տեղեկատվական քաղաքականության իրականացմանը: |

| | |
|---|---|
| | Զինվորական ծառայության գրավչության քարոզչության ուղղությամբ այլ գերատեսչությունների և ուսումնական հաստատությունների առաջարկությունների հիման վրա մշակվել է միջոցառումների ծրագիր, սակայն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով այն ամբողջությամբ կյանքի չի կոչվել:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներկայումս ՊՆ Տ և ՀԿ վարչությունում մշակվում է ՊՆ-ում ԶԼՄ-ների հավատարմագրման նոր կարգ, որը հնարավորություն կտա հավատարմագրել միայն արհեստավարժ լրագրողների ու օպերատորների: Նրանց հետ կազմակերպվող ռազմական լրագրության արագացված դասընթացների միջոցով կպատրաստվեն ռազմական լրագրողներ, ովքեր էլ կներգրավվեն թեժ կետերից և սահմանային դիրքերից հեռարձակվող ռեպորտաժներին:<br>Հասարակության շրջանում զինվորական ծառայության գրավչության բարձրացման համար անհրաժեշտ է պետական մոտեցում և իրատեսական միջոցառումների համալիր ծրագիր՝ պետական և հասարակական շահագրգիռ կառույցների ընդգրկմամբ:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՊՆ-ում ԶԼՄ-ների հավատարմագրման նոր կարգի ընդունում, զինվորական ծառայության գրավչության վերաբերյալ քաղաքականության մշակում՝ ներառելով իրավական, ֆինանսական, սոցիալական և հիմնախնդրային այլ հարցեր: Ներքին և արտաքին լսարանում պաշտպանական գերատեսչության վերաբերյալ շահեկան կարծիքի ստեղծում, ԶԼՄ-ներով ու համացանցով ՀՀ տարածքում և Սփյուռքում զինվորական ծառայության գրավչության քարոզչության ապահովում, բնակչության շրջանում պաշտպանության շահերից բխող հավաստի տեղեկությունների տարածում՝ բացառելով խուճապային տրամադրությունները և ապատեղեկատվությունը, զինվորականի մասնագիտության նկատմամբ պատանիների հետաքրքրության մեծացում, ինչի հետևանքով՝ ՌՈՒՀ-երի, հետագայում նաև՝ զինված ուժերի համալրում, բանակի մարտունակության բարձրացում՝ լուծելով առկա մարդկային ռեսուրսի խնդիրը: |
| 201 | **201.1-201.5 Միջազգային ինտեգրման հնարավորությունների ընդլայնման վերաբերյալ**<br><br>**1. <u>Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը</u>**<br>Միջացառումների իրականացումը պայմանավորված է դաշնակցային և գործընկերային հարաբերությունների իրավապայմանագրային դաշտը և իրագործման մեխանիզմները կատարելագործելու, փոխադարձ հանձնառությունների կատարումն ավելի արդյունավետ դարձնելու և ՀՀ ՊՆ համակարգի ու ԶՈւ կարողությունները զարգացնելու և բարեփոխումները կյանքի կոչելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Միջազգային ռազմաքաղաքական և ռազմական համագործակցության իրավապայմանագրային դաշտում և գործնական իրականացման մեխանիզմներում առկա են որոշակի անորոշություններ փոխադարձ հանձնառությունների և դրանց կենսագործման պայմանների վերաբերյալ: Միաժամանակ, ՀՀ ԶՈւ՝ արդիական ռազմական նշանակության արտադրանքով համալրման գործընթացը պահանջում է ռազմատեխնիկական համագործակցության անխափանության ապահովում: Ավելին, ՀՀ ԶՈւ որոշ փոխգործունակ կարողություններ դեռևս չեն անցել համապատասխան մակարդակի միջազգային գնահատում և հավաստագրում, մինչդեռ ծագում է նոր ձևաչափերով և նոր աշխարհագրությամբ միջազգային գործողություններին ներգրավման անհրաժեշտություն: Այս ամենով հանդերձ, առկա է ՀՀ պաշտպանության ոլորտի բարեփոխումներին միջազգային առաջադեմ խորհրդատվության աջակցության անընդհատության ապահովման խնդիր:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ընդլայնել հավաքական անվտանգության գործող ընթացակարգերի հնարավորությունները, շարունակել բազմակողմ և երկկողմ ձևաչափով նախաձեռնողական ռազմաքաղաքական, ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության իրականացումը, ամրապնդել տարբեր անվտանգային համակարգերի հետ ՀՀ ԶՈւ փոխգործունակ կարողությունները և այդ համակարգերի հովանու ներքո միջազգային գործողություններին մասնակցելու հնարավորությունները, ինչպես նաև առավել նպատակային դարձնել պաշտպանական բարեփոխումներին միջազգային խորհրդատվական ու փորձագիտական աջակցությունը:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ռազմաքաղաքական դաշինքների և գործընկերությունների զարգացում՝ պահպանելով ՀՀ ազգային շահերից բխող և առկա ռազմաքաղաքական ընդհանրությունների վրա հիմնված հարաբերությունների ձևավորման հավասարակշռությունը: |

| | |
|---|---|
| 202 | **202.1-202.6 Պաշտպանության ռազմավարական վերանայման (ՊՌՎ) հերթական շրջափուլի իրականացման վերաբերյալ**<br><br>**1. <u>Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը</u>**<br>Ամրագրված լինելով «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում (հոդված 3, 4-րդ կետ)՝ պաշտպանության ռազմավարական վերանայումը միտված է պաշտպանության ռազմավարական պլանավորման նպատակների և խնդիրների սահմանմանը: Միջոցառումների իրականացումը պայմանավորված է անվտանգության միջավայրի և առկա ու հնարավոր սպառնալիքների համընդգրկուն գնահատման, ինչպես նաև պաշտպանության ռազմավարության առաջնահերթությունների հիման վրա ռեսուրսների բաշխումը և կարողությունների ձևավորումը, կառավարման և բյուջետային որոշումների ներդաշնակեցումը, բյուջետային ծրագրերի՝ նյութա-տեխնիկական առումով կայունությունը և մրցակցող պահանջների միջև ռացիոնալ որոշումների կայացումը երաշխավորելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>ՀՀ շուրջ ձևավորված անկայուն անվտանգային միջավայրով պայմանավորված՝ առկա սպառնալիքների (հատկապես ռազմական) գնահատումը, դրանց իրագործման սցենարների կանխատեսումները և դիմագրավման համար ՀՀ կողմից ձեռնարկվելիք հակազդեցությունների մտահղացումներն ու պահանջվող կարողությունների պլանավորումը արագորեն կորցնում են իրենց փաստարկությունը և հիմնավորությունը, որը վերաբերում է նաև ՊՌՎ 2014-2015թթ. գործընթացի արդյունքում կատարված եզրահանգումներին: Ուստի առաջ է եկել ՊՌՎ նոր շրջափուլ անցկացնելու անհրաժեշտություն՝ որն ամրագրված է նաև Կառավարության ծրագրում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ձևավորված մեթոդաբանության համաձայն՝ ՊՌՎ գործընթացն իրականացնել 6 փուլով, 2019-2020թթ, ժամանակահատվածում՝ Պաշտպանության նախարարի գլխավորությամբ միջգերատեսչական հանձնաժողովի վերահսկողությամբ և դրան կից՝ միջգերատեսչական ու ՊՆ գերատեսչական աշխատանքային խմբերի կողմից աշխատանքների անմիջական կատարմամբ:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Պաշտպանության ռազմավարական պլանավորման նպատակներ և խնդիրների սահմանում, խնդիրների կատարման մտահղացումների մշակում, անհրաժեշտ կարողությունների պլանավորում: |
| 203 | **203.1-203.2 Անձնակազմի կառավարման, կրթության և պատրաստության ոլորտների բարեփոխումների իրականացման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումների իրականացումը պայմանավորված է ծառայողական առաջխաղացման քաղաքականության և ճանապարհային քարտեզի ներդրման ու մշակման և ՌՈՒՀ-երում դասընթացների ծավալների ընդլայնման անհրաժեշտությամբ:<br>**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Միջոցառումները նախատեսվել են հիմք ընդունելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի» մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ ենթակետը և 35-րդ հոդվածի 1-ին մասը, որտեղ նշվում է, որ զինվորական պաշտոնի համար սահմանվում է պաշտոնի անձնագիր, որը հանդիսանում է տվյալ պաշտոնն զբաղեցնող զինծառայողի համար սույն օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները նկարագրող և տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար զինծառայողին մասնագիտական գիտելիքների ու ծառայողական ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող փաստաթուղթ և, որ պայմանագրային զինծառայողի՝ նոր մասնագիտական զինվորական պաշտոնի նշանակմանը պետք է նախորդի համապատասխան վերապատրաստումը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համապատասխան պաշտոնի անձնագրում փոփոխությունների կատարում և տվյալ պաշտոնի համար պահանջվող որակավորման չափանիշների և կրթական ցենզի սահմանում ու վերապատրաստումների կազմակերպում և իրականացում:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հնարավորություն կստեղծվի գծանշել ծառայողական առաջխաղացման հստակ ճանապարհային քարտեզ, |

| | |
|---|---|
| | որը կբարձրացնի պաշտոնների նշանակման գործընթացում արդարացի որոշումների կայացման և զինված ուժերում անձնակազմի արհեստավարժության մակարդակները, ինչպես նաև ունենալ վաշտի, գումարտակի հրամանատարների տեղակալների և հրամանատարների հաստիքներ զբաղեցնող համապատասխան մասնագիտական որակներով օժտված զինծառայողներ: Ընդլայնելով այդ դասընթացների քանակներն ու մասնագիտացումները՝ հնարավոր կլինի արտասահմանյան երկրներում իրականացվող մասնագիտական վերապատրաստումների փոխարեն դրանք իրականացնել երկրի ներսում՝ սեփական ռեսուրսների հաշվին: |
| 204 | **204.1-204.5 Պաշտպանության պլանավորման և ռեսուրսների կառավարման միասնական համակարգի ներդրման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հաշվի առնելով պաշտպանության ոլորտի և զինված ուժերի համար անհրաժեշտ կարողությունների ձևավորման երկարաժամկետ բնույթը (5 տարի և ավել), առաջ է եկել սպառնալիքների վերլուծությունը, դրանց դիմագրավման համար անհրաժեշտ մտահղացումները, ռազմական հզորության գործիքակազմի զարգացման ու կիրառման հայեցակարգերը, ինչպես նաև պահանջվող ուժերի, միջոցների ու ռեսուրսների պլանավորումը ամբողջարկող (ինտեգրող) համընդգրկուն համակարգ ունենալու անհրաժեշտություն: Ի թիվս այլ առավելությունների, այդ համակարգը հաշվի կառնի ինչպես առկա և ՄԺԾԾ գործընթացով նախատեսվող, այնպես էլ ապագայի և կոնցեպտուալ ուժերի կարիքները, այսինքն՝ կմիավորի ԶՈւ պահպանման և զարգացման պլանավորումը:<br><br>**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Թեև «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը ՀՀ իրականության մեջ առաջին անգամ սահմանում է «Պաշտպանության ռազմավարական պլանավորում» հասկացությունը, այն հստակորեն չի մանրամասնում այդ գործընթացի բովանդակությունը և իրականացման հերթականությունը: Միևնույն ժամանակ, ներկայում գոյություն չունի որևիցե նորմատիվ ակտ, որը կսահմաներ ռազմավարական պլանավորման, միջնաժամկետ ծախսերի ծրագրման և ռեսուրսների կառավարման փոխկապվածությունը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է մշակել, նորմատիվ-իրավական ակտերով ամրագրել, ՊՆ համակարգում հաստատությենացնել (ինստիտուցիոնալացնել) և կենսագործել Պաշտպանության պլանավորման և ռեսուրսների կառավարման միասնական համակարգ (մեխանիզմներ և ընթացակարգեր):<br><br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կապահովվի պաշտպանության ռազմավարության առաջնահերթությունների հիման վրա ռեսուրսների զարգացումը, բաշխումը, կառավարման և բյուջետային որոշումների ներդաշնակեցումը, բյուջետային ծրագրերի՝ նյութատեխնիկական առումով կայունությունը, մրցակցող պահանջների միջև ռացիոնալ որոշումների կայացումը: |
| 205 | **205.1-205.3 Պարտադիր ժամկետային և պայմանագրային ծառայության փոխլրացնող համակարգի շարունակական բարելավման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջացառման իրականացումը պայմանավորված է տեսանելի հեռանկարում ԶՈւ համալրման խառը (պարտադիր և պայմանագրային) եղանակի պահպանման պայմաններում անձնակազմի անհրաժեշտ թվաքանակը պահպանելու, բանակի շարքեր ինքնատիպ քաղաքացիական բանիմացություններ ներգրավելու և գործող բանակի համար ավելի պատրաստված ու արհեստավարժ ռեզերվ ունենոլու անհրաժեշտությամբ:<br>**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2018թ. մեկնարկած քաղաքացիական բարձրագույն կրթությամբ սպայակազմի պատրաստման «Պատիվ ունեմ» և պարտադիր պայմանագրային հիմունքներով ծառայության կրման «Ես եմ» ծրագրերը կարիք ունեն շարունակման՝ դրանց ամբողջական ներզոր կարողությունները օգտագործելու նպատակով, մինչդեռ առաջ է եկել ակտիվ պահեստազորի համակարգի ներդրման միջոցով պահեստազորայինների հասանելիությունը, արհեստավարժությունը և շարժառիթավորվածությունը բարձրացնելու անհրաժեշտություն: |

| | |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Շարունակել «Պատիվ ունեմ» և «Ես եմ» ծրագրերի իրականացումը, ընդլայնելով դրանց շրջանակները, ինչպես նաև ներդնել ակտիվ պահեստազորի համակարգ:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կապահովվի բնակչության և ռեսուրսների նկատմամբ անհամաչափ մեծաքանակ զինված ուժերի՝ անձնակազմով համալրումը, հասանելի կլինեն պարտադիր զինվորական ծառայության այլընտրանքային լուծումներ, բանակ կներգրավվեն բանիմացությունների բարձր մակարդակով պրոֆեսիոնալ կադրեր: |
| 206 | **206.1-206.4 Սոցիալական պաշտպանության համակարգի զարգացման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջացառման իրականացումը պայմանավորված է անձնակազմի դրամական բավարարման, բնակարանային և ստացիոնար բուժապահովման ցուցանիշների բարելավման միջոցով նրանց սոցիալական պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու անհրաժեշտությամբ:<br>**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պաշտպանության ոլորտի զինծառայողների և քաղծառայողների աշխատավարձերը վերջին անգամ բարձրացվել են 2014թ.: Այսինքն այս ամբողջ ժամանակահատվածում, հաշվի առնելով գնաճը, տեղի է ունեցել աշխատավարձերի փաստացի նվազում: Դրա հետ մեկտեղ, ք.Երևանում տեղակայված կենտրոնական և կայազորային զինվորական հոսպիտալները ծանրաբեռնված են և ունեն կարողությունների պակաս՝ հոգալու համար բոլոր կատեգորիաների հիվանդների կարիքները: Միևնույն ժամանակ, նախկինում գործող ընթացակարգերը թույլ չեն տալիս համակողմանի լուծում տալ ՀՀ ՊՆ համակարգում որպես բնակարանային պայմանների կարիքավոր հաշվառված զինծառայողների և քաղծառայողների՝ բնակարանով ապահովման հիմնախնդրին:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Բարձրացնել պաշտպանության համակարգի անձնակազմի և զինվորական թոշակառուների դրամական բավարարման մակարդակը, բարձրացնել բուժապահովման որակը՝ ջանքերը կենտրոնացնելով ք.Երևանում նոր միասնական հոսպիտալի կառուցման վրա, ներդնել բնակարանային պայմանների կարիքավոր անձնակազմի արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիպոթեքային վարկավորման ծրագիր, միաժամանակ փոխհատուցում ապահովելով որպես բնակարանային կարիքավոր հաշվառված սակայն սահմանված կարգով ծառայությունից արձակված անձանց համար:<br>**2. Միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կավելանա ՊՆ համակարգում և զինված ուժերում ներգրավված անձնակազմի ու նրանց ընտանիքի անդամների, զոհված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքի անդամների, զինվորական հաշմանդամների նկատմամբ հոգածության մակարդակը, կստեղծվեն ծառայության համար ավելի բարենպաստ պայմաններ, կապահովվի անձնակազմի արժանավայել վարձատրությունը: |
| **Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն** | |
| 207 | **207.1 «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Անհրաժեշտություն է ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության ոլորտների զարգացումը՝ նպատակ ունենալով՝<br>նպաստել անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բնակչության առողջության ամրապնդմանն ու առողջ ապրելակերպի ձևավորմանը և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ առողջ, ֆիզիկապես ուժեղ ու կամային բարձր որակներով օժտված երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովմանը, աջակցել ակտիվ հանգստի կազմակերպմանը, հանրային կյանքում բարձրացնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերը, նպաստել երիտասարդության ներուժի լիարժեք իրացմանը և զարգացմանը, երիտասարդների |

| | |
|---|---|
| | ինքնադրսևորման համար անհրաժեշտ բոլոր նախապայմանների ստեղծմանը՝ կարևորելով քաղաքական, քաղաքացիական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության աստիճանի բարձրացումը, նրանց սոցիալական կայացումը, հասարակական-մասնագիտական գործունեությանն աջակցությունը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության ոլորտների զարգացման հիմնական ուղղությունները հստակեցման կարիք ունեն, պետք է կատարելագործվի իրավական դաշտը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>Հստակեցնել ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության ոլորտների զարգացման հիմնական ուղղությունները, կատարելագործել ոլորտների իրավական դաշտը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.**<br>Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդական ոլորտների զարգացման հիմնական ուղղությունների սահմանում, համապատասխան իրավական ակտի (ակտերի) առկայություն: Ռազմավարության իրականացման շրջանակներում ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության ոլորտների իրավական դաշտի կատարելագործում՝ համապատասխանեցում գործող օրենսդրության պահանջներին (ըստ անհրաժեշտության նաև նոր իրավական ակտերի մշակում, այդ թվում նաև՝ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ՝ նախագծերը ներկայացնելով ՀՀ վարչապետի աշխատակազմ): |
| 208 | **208.1. «ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով ամրագրված պետական քաղաքականության հիմնական նպատակների ցանկի՝ «11) ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը» ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության ծրագրի 4.6. կետի պահանջներից: Բացի այդ՝ հայրենական սպորտի մասնագետները վկայում են, որ անհատի ֆիզիկական դաստիարակությունը պետք է լինի բազմամյա, հարաշարժ, անընդհատ, հաջորդական և համակարգված գործընթաց, շարունակվի ամբողջ կյանքում, ներգրավի բնակչության տարբեր սեռատարիքային խմբերն ու սոցիալական բոլոր շերտերը: Այսպիսով՝ հիշյալ նպատակների համալիր իրագործումը հնարավոր է միայն ներկայիս գործող համակարգի արդիականացման միջոցով, ինչը ենթադրում է մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության զարգացման հայեցակարգի և դրանից բխող ռազմավարական ծրագրի մշակում: Միջոցառման նպատակն է՝ մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության զարգացման միջոցառումների շարունակականության ապահովումը և արդիականացումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման պետական նպատակային ծրագրերում ընդգրկված մասսայական սպորտային միջոցառումները հատվածաբար են լուծում առկա խնդիրները, ինչպես նաև ցայսօր բացակայում է քաղաքացիների ֆիզիկական դաստիարակության մշակույթի զարգացման և սպորտի մասսայականացման ընդհանուր տեսլականը: Օրինաչափորեն առաջին պլան է մղվում համակարգային լուծումներ գտնելու հրամայականը, այն է՝ Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և մասսայական սպորտի բնագավառի զարգացման երկարաժամկետ հեռանկարի ապահովման ուղիների և միջոցների որոշումն ու սահմանումը:<br>Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ զանգվածային սպորտի զարգացման հիմնախնդիրների շարքում անհրաժեշտ է կարևորել բնակչության, այդ թվում՝ նաև հաշմանդամություն ունեցող անձանց՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով գիտակցաբար զբաղվելու պահանջարկի ձևավորումը, մարզական պարապմունքների և միջոցառումների մասսայականացման ապահովումը, կանոնավոր մարզումների նկատմամբ դրական վերաբեր-մունքի ձևավորումը, շահառուների առավել նպաստավոր՝ թիրախային խմբերի առանձնացումը, նրանց առողջական վիճակի և աշխատունակության բարձրացումը, պաշտպանության համար անհրաժեշտ պատրաստականության ապահովումը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** |

| | |
|---|---|
| | Նշված խնդիրների լուծման հիմնական ուղղությունները որոշվում են ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և մասսայական սպորտի զարգացման հիմնարար նպատակներով, որոնք միտված են տարբեր տարածաշրջանների կենսագործունեությամբ ամբողջացած 2 խումբ էֆեկտների ու որակական ցուցանիշների նվաճմանը՝<br>• «ենթակառուցվածքների և միջավայրի», որոնք ՀՀ բնակչության տարբեր տարիքային և սոցիալ-տնտեսական կատեգորիաների համար ապահովում են առողջ կենսակերպի, նաև ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների հասանելիությունը,<br>• «կրթական և սոցիալ-մշակութային», որոնք դրսևորվում են ՀՀ քաղաքացիների ֆիզիկական կուլտուրայի և անհատի շարժողական ակտիվության մակարդակի բարձրացման մեջ:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.**<br>Մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության զարգացման առաջնային ուղղությունների, ակտիվ կենսակերպի ապահովման ուղիների արդի տեսլական: |
| 209 | **209.1 «ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Մանկապատանեկան սպորտի զարգացման հայեցակարգը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար կծառայի որպես ուղղորդիչ միջոց՝ մանուկների և պատանիների ֆիզիկական դաստիարակությանը, մանկապատանեկան սպորտի զարգացմանը վերաբերող խնդիրների և հարցերի լուծման համար: Միջոցառման նպատակն է մանկապատանեկան սպորտի զարգացումը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մանկապատանեկան սպորտի հիմնախնդիրները ամբողջական լուծում չեն ստանում, այդ թվում՝ նյութատեխնիկական բազայի կատարելագործումը, անհրաժեշտ մարզագույքով ապահովումը, որակյալ մանկավարժական կադրերով, ինչպես նաև մանկապատանեկան սպորտում և ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության մեթոդական ապահովումը, մարզական հերթափոխի պատրաստման համակարգի արդիականացումը, ուսուցման նոր՝ ժամանակի պահանջներին համահունչ ծրագրերի մշակումը և այլն:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Մանկապատանեկան սպորտի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունմամբ կհստակեցվեն մանկապատանեկան սպորտի հիմնախնդիրների լուծման ուղիները (նյութատեխնիկական բազայի կատարելագործում, անհրաժեշտ մարզագույքով ապահովում, որակյալ մանկավարժական կադրերով ապահովում, ֆիզիկական դաստիարակության մեթոդական ապահովում մանկապատանեկան սպորտում և ուսումնական հաստատություններում, մարզական հերթափոխի պատրաստման համակարգի արդիականացում, ուսուցման նոր՝ ժամանակի պահանջներին համահունչ ծրագրերի մշակում և այլն):<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ոլորտի նյութատեխնիկական բազայի կատարելագործում, անհրաժեշտ մարզագույքով ապահովման միջոցների ձեռնարկում, մարզական հերթափոխի պատրաստման համակարգի արդիականացում, իրավական դաշտի կատարելագործում:<br>Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցների (անկախ ենթակայությունից) կառավարման միասնական մոդելի ձևավորում:<br>Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների մարզադահլիճների օգտագործման և նյութատեխնիկական բազայի համալրման միասնական գործիքակազմի ձևավորում: |
| 210 | **210.1 «ՍՊՈՐՏԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** |

| | |
|---|---|
| | Հստակեցնել սպորտի բարձրագույն նվաճումները խթանող ուղղությունները, նպաստել Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիկների մարզական արդյունքների աճին:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2018 թվականին պետական աջակցության ծրագրում ընդգրկված 34 ազգային ֆեդերացիաները պետական աջակցության գումարներով կազմակերպել են 137 ուսումնամարզական հավաք, 96 Հայաստանի Հանրապետության առաջնություններ (մեծահասակների, երիտասարդների, պատանիների), մասնակցել են 185 միջազգային մրցաշարերի, այդ թվում՝ Եվրոպայի և աշխարհի առաջնությունների: 2018 թվականին ՀՀ հավաքական թիմերի մարզիկները մեծահասակների, երիտասարդների և պատանիների ՀՀ առաջնություններում նվաճել են 71 ոսկե, 57 արծաթե և 75 բրոնզե մեդալ, ընդհանուր հաշվարկով՝ 203 մեդալ: 2019 թվականին պետական աջակցության ծրագրում ընդգրկված են 35 ազգային ֆեդերացիա: Առկա խնդիրներն են մարզաբազաներով հավաքական թիմերի ոչ բավարար ապահովումը, քանի որ անհրաժեշտ է, որ բոլոր հավաքական թիմերն ունենան հիմնական մարզումների վայր՝ ապահովված մարզումների և կեցության անհրաժեշտ պայմաններով:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայեցակարգի մշակմամբ ակնկալվում է համակարգային լուծում տալ մեծահասակների, երիտասարդներու ու պատանիների ՀՀ հավաքական թիմերի մարզումների համար անհրաժեշտ պայմանների ապահովման խնդրին:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Մարզական արդյունքների աճի խթանում, մարզական բարձր արդյունքների հաստատունություն: Սպորտի բարձրագույն նվաճումների մարզական արդյունքների աճ՝ մասնավորապես՝ 2021-2025 թվականներին՝ հինգ տոկոսով: |
| 211 | **211.1 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Պետության զարգացման և հասարակական առաջընթացի գրեթե բոլոր բնագավառներում իր ակտիվ մասնակցությունն ու արժանի ներդրումն է ունեցել երիտասարդությունը: Չկա որևէ ոլորտ՝ մշակույթ, կրթություն, գիտություն, սպորտ, ձեռներեցություն, կառավարում և այլն, որտեղ առկա խնդիրներն ու հիմնահարցերը այս կամ այն կերպ չառնչվեն երիտասարդությանը:<br>Կարևորելով երիտասարդության դերը մեր երկրի կայացման գործընթացներում՝ անհրաժեշտություն է համակարգված ու համալիր քաղաքականություն որդեգրել երիտասարդության նկատմամբ:<br>Կարևորագույն խնդիր է երիտասարդական պետական քաղաքականությունը համապատասխանեցնել ժամանակի պահանջներին: Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը սահմանելու է երկարաժամկետ կտրվածքով ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության խնդիրները, սկզբունքներն ու ուղղությունները: Նպատակն է բարձրացնել երիտասարդության մասնակցությունը բոլոր մակարդակներում, ապահովել երիտասարդության սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների բարելավումը, զարգացնել երիտասարդական աշխատողի ինստիտուտը, պահպանել և զարգացնել երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային արժեքները, բարձրացնել հայրենասիրական ոգին ու նպաստել միջմշակութային երկխոսության և երիտասարդների շարժունակության բարձրացմանը:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի N 54 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը, որը չի կարող իրավական հիմք հանդիսանալ ոլորտում որևէ բնույթի իրավական ակտի ընդունման համար, այդ թվում՝ նաև նորմատիվ, քանի որ համաձայն փոփոխված ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:<br>Հաշվի առնելով վերոնշյալը՝ երիտասարդական պետական քաղաքականության ոլորտում այլևս հնարավոր |

| | |
|---|---|
| | չէ ընդունել նորմատիվ բնույթի իրավական ակտ՝ առանց համապատասխան իրավական հիմքի:<br><br>**1.1 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Երիտասարդության ոլորտի գործունեության համար անհրաժեշտ իրավական հիմքերի ստեղծումը կնպաստի երիտասարդության ներուժի իրացմանն ու զարգացմանը, երիտասարդական մասնակցության խթանման համար սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային պայմանների ստեղծմանը՝ ի շահ Հայաստանի Հանրապետության զարգացման և հզորացման, ազգային անվտանգության ամրապնդման: Իրավական հիմք պետք է ստեղծել երիտասարդական քաղաքականության ոլորտում նորմատիվ, անհատական և ներքին (լոկալ) որոշումներ ընդունելու համար:<br><br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Երիտասարդության հիմնահարցերի կարգավորում: Երիտասարդական պետական քաղաքականության արդյունավետ իրականացում: |
| 212 | **212. «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ, ՕՐԵՆՔԻ՝ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Անհրաժեշտ է կատարելագործել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի օրենսդրական դաշտը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի օրենսդրության ներկա վիճակը բարվոք է, սակայն անհրաժեշտ է «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքը համապատասխանեցնել ներկայիս պահանջներին: Օրինակ՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի (այն է՝ «Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները») «դ» կետով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմինը մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի նորմատիվ ակտերը: Անհրաժեշտ է կատարել փոփոխություն և լիազորել Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելու ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի իրավական ակտերը (անհատական և լոկալ): Միջոցառման իրականացման նպատակն է հնարավորություն ընձեռել Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնին՝ ունենալու ավելի լայն գործունեության շրջանակ: Նախագծի ընդունման համար հիմք են հանդիսանում «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 10-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Փոփոխություններ և լրացումներ կատարել «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքում, օրենքը ներկայացնել նոր խմբագրությամբ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի օրենսդրական բացերի լրացում: Հիմնահարցերի կարգավորման իրավական հիմքերի առկայություն: |
| **Սփյուռքի նախարարություն** | |
| 213 | **213.1 «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման |

| | |
|---|---|
| | և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Հայրենադարձությունը, որպես պետական քաղաքականության կարևոր բաղադրիչ, համահայկական ներուժի համախմբմանն ուղղված մի շարք միջոցառումների մշակումն ու իրականացումն է: Հայրենադարձությունը դիտարկվում է հայրենիքում բնակություն հաստատելու յուրաքանչյուր հայի իրավունք, և որպես հայապահպանության կարևոր գործոն գտնվում է պետության հովանավորության ներքո:<br><br>**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Խթանել հայրենադարձության գործընթացը, զգալիորեն ամրապնդել Հայաստանի Հանրապետության տնտեսական, քաղաքական, մտավոր ու պաշտպանական ներուժը: «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի (հիմնական նպատակը հայրենադարձության հետ կապված իրավահարաբերությունների կարգավորումն է: Օրենքի հիմնական խնդիրներն են սահմանել՝ հայրենադարձների կարգավիճակը, հայրենադարձության վերաբերյալ պետական քաղաքականության հիմնական նպատակները, ուղղությունները և սկզբունքները, հայրենադարձության հարցերով պետական մարմինների լիազորությունները, հայրենադարձության դիմումի ներկայացման, հայրենադարձի կարգավիճակի տրամադրման և հայրենադարձի ինտեգրման կարգը, արտոնությունները և դրանց տրամադրման կարգերը:<br><br>**2.Կարգավորման առարկան**<br><br>«Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ կկարգավորվի հայրենադարձության գործընթացի իրականացման հետ կապված իրավահարաբերությունները:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>«Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի ընդունումը հնարավորություն կընձեռի կազմակերպելու հայրենադարձության գործընթացի իրավական հիմքերը, կնպաստի սփյուռքահայերի արագ և սահուն ինտեգրմանը հասարակության մեջ, ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, հնարավորություն կընձեռի հայկական մասնագիտական ներուժի համախմբմանը: |
| | **213.2 Հայրենադարձության քարոզչական ծրագրի իրականացում և հայրենադարձության գործընթացի խթանմանը նպաստող նյութերի մշակում և հրապարակում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից: Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս հայրենադարձության վերաբերյալ իրազեկվածության և հանրայնացման մակարդակը և սփյուռքում և ՀՀ-ում դեռևս գտնվում է ոչ բարձր հիմքերի վրա:<br><br>**2.Կարգավորման առարկան**<br><br>Քարոզչական ծրագիրը հնարավորություն կընձեռի սփյուռքի առնվազն 10 համայնքներում տարվող աշխատանքների արդյունքում վերհանել առնվազն 3 թիրախային խմբեր, համախմբել առկա ներուժը, հայրենադարձության կազմակերպման միջոցով նրանց ներգրավել ՀՀ սոցիալ տնտեսական զարգացման, պաշտպանունակության ու մրցունակության բարձրացման գործին:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է քարոզչական նպատակով քննարկումներ իրականացնել սփյուռքյան համայնքներում, գումարել առնվազն 4 տեսաժողովներ ու համաժողովներ, տեսակոնֆերանսներ, «կլոր սեղան» քննարկումներ, նկարահանել 1 |

| | |
|---|---|
| | ֆիլմ՝ հայրենադարձների կյանքին, աշխատանքին ու ներդրումներին նվիրված հաջողված պատմություններով, առնվազն 2 տեսաերիզներ, առնվազն 6 գովազդային նյութեր, տպագրել բուկլետներ և թերթոններ: Կստեղծվի Hayrenadardz.am կայք-էջը: Կբարելավվի հայրենադարձության վերաբերյալ իրազեկվածության և հանրայնացման մակարդակը ինչպես սփյուռքում և ՀՀ-ում: |
| | **213.3 «Սփյուռք և հայրենադարձություն» խորագրով միջազգային ֆորումի կազմակերպում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Դեռևս անհրաժեշտ է ֆորումների միջոցով ներգրավել հայրենադարձության միջազգային փորձը նախարարության աշխատանքներում:<br><br>**2.Կարգավորման առարկան**<br><br>Հայրենադարձության ոլորտի լավագույն փորձի փոխանակում:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջազգային ֆորումը հնարավորություն կընձեռի ուսումնասիրելու ու համադրելու հայրենադարձության միջազգային փորձը (Իսրայել, Իռլանդիա, Լեհաստան, Չինաստան), քաղաքականության կիրառման այլ երկրների պետական ու մասնագիտական շրջանակների փաստարկված կարծիքները, խորհրդատվությունը, դիրքորոշումները, ստացված արդյունքները և հնարավոր հիմնախնդիրները:<br><br>Միջազգային ֆորումի արդյունքները մեծապես կնպաստեն միջազգային փորձի կիրառմանը: |
| | **213.4 «Հայրենադարձության ռազմավարությունը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Հայրենադարձության ռազմավարությամբ կսահմանվի պետական քաղաքականությունը, Հայաստան սփյուռք գործակցության խորացման, ամրապնդման և Մեծ հայրենադարձության միասնական քաղաքականության իրականացման համար:<br><br>**2.Կարգավորման առարկան**<br><br>Նախագծի ընդունմամբ կկարգավորվի հայրենադարձության գործընթացի իրականացման հետ կապված իրավահարաբերությունները և դրանցից բխող նոր ծրագրերի մշակումը և միջոցառումները:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ռազմավարության մշակումն ու ընդունումը կնպաստի հայրենադարձության գործընթացի կազմակերպման հայեցակարգային դրույթների, ժամկետների, արդյունքների, ծրագրերի առաջադրմանը, իսկ հայրենադարձության խթանումը հնարավորություն կտա լուծելու կարևոր հիմնախնդիրներ՝ ՀՀ ժողովրդագրական, պաշտպանական, տնտեսական իրավիճակի բարելավումը, ինչպես նաև սոցիալական, կրթական և մշակութային պայմանների ու երաշխիքների ձևավորումը սփյուռքահայության համար, նրանց ներուժի ներգրավումը հայրենաշինության գործում: |
| | **213.5 Հայրենադարձների ինտեգրման ու ադապտացման ծրագրերի մշակում և իրականացում** |

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

*Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:*

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայրենադարձների ինտեգրման ու ադապտացման վերաբերյալ մշակվող միջոցառումների և գործողությունների փուլային ծրագրերը միտված են կրթամշակութային, սոցիալ-տնտեսական, իրավական ոլորտներում ակնկալվող արդյունքների բարելավմանը:

**2.Կարգավորման առարկան**

Նպատակաուղղված են իրավական, ֆինանսական և կազմակերպչական համապատասխան գործիքակազմի ներդրման միջոցով հայրենադարձված, հայրենադարձվելու ցանկություն հայտնած և Հայաստան վերադարձող անձանց բնակարանային և սոցիալ տնտեսական խնդիրների լուծման նպատակով պետական աջակցության տրամադրմանը:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Հայրենադարձների ինտեգրման ու ադապտացման մասնագիտական հայրենադարձության «Հորիզոն», բնակարանային ապահովության «Օջախ» և «Երիտասարդ ընտանիք» հայրենադարձության ծրագրերի իրականացումը հնարավորություն կընձեռի տարեկան մինչև 5000 հայրենադարձներին և վերադարձողներին լիարժեք ներառել հայաստանյան կյանքին ու իրականությանը, նրանց վերջնական հաստատմանը Հայաստանում:

**213.6 Սփյուռքի համայնքներում մշտադիտարկում՝ հայրենադարձության հնարավորությունների վերաբերյալ և արդյունքների գնահատում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս հայրենադարձության հնարավորությունների վերաբերյալ մշտադիտարկման մեխանիզմները գործում են ոչ լիարժեք, որոնք վերացնելու անհրաժեշտություն է առաջացել:

**2.Կարգավորման առարկան**

Կարգավորման առարկա է հանդիսանում նոր մոտեցումներով մշտադիտարկման մեխանիզմների կատարելագործումը:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Սփյուռքի հայահոծ խոշոր 4 համայնքային կենտրոններում (Մոսկվա, Բեյրութ, Փարիզ, Լոս Անջելես) իրականացված հայրենադարձության գործընթացի վերաբերյալ ուսումնասիրության անցկացումը, ստացված նյութերի հավաքումը, մշակումը և արդյունքների գնահատումը հարցախույզի միջոցով:

**213.7 ՀՀ-ում սիրիահայերի և իրաքահայերի ինտեգրման գործընթացի արագացմանն ուղղված ծրագրերի շարունակականության ապահովում: Սիրիահայերի բնակարանային և զբաղվածության, առողջապահական խնդիրների, սիրիահայ ուսանողների ուսման վարձավճարների մասնակի փոխհատուցմանն աջակցություն**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետությունը 1999թ.-ից սկսած պաշտպանություն է տրամադրում միջազգային

պաշտպանության կարիք ունեցող՝ այդ թվում նաև հայազգի օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց: Իրաքյան ճգնաժամի պատճառով (սկսած 2002թ.-ից)՝ 1450, իսրայելա-լիբանանյան հակամարտության հետևանքով (2006թ.)՝ 650, վրաց-օսեթական հակամարտության հետևանքով (2008թ.)՝ 207, ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով (սկսած 2014թ.-ից)՝ 255 անձինք ՀՀ-ում ստացել են փախստականի կարգավիճակ: Սիրիական հակամարտության սկսվելուց ի վեր ավելի քան 22.000 մարդ, առավելապես ազգությամբ հայեր, ինչպես նաև արաբներ, քրդեր, ասորիներ տեղահանվել և պաշտպանություն են գտել Հայաստանում:

**2.Կարգավորման առարկան**

Շարունակել նպաստել միջազգային բեռի թեթևացմանը և ներդրում ունենալ միջազգային խնդիրների լուծմանը՝ նպաստելով Սիրիայից Հայաստան տեղափոխվել ցանկացող հայերի տեղափոխմանը Հայաստան, Հայաստանում վերջիններիս պատշաճ ընդունմանը և երկարաժամկետ ինտեգրմանը, նպաստավոր պայմաններ ստեղծելով Սիրիայից այլ փախստականների պատշաճ ընդունման և ինտեգրման համար: Տեղահանված անձանց համար Հայաստանում պաշտպանության տարբերակների մշակում միջազգային չափանիշերին համապատասխան՝ ապաստան հայցելու ընթացակարգերի հասանելիություն և ներկայացվող հայցերի արագացված կարգով ուսումնասիրություն, պարզեցված և արագացված կարգով ՀՀ քաղաքացիության շնորհում կամ պարզեցված և արագացված կարգով կացության կարգավիճակի տրամադրում:

**3. Ակնկալվող արդյունքը**

Ծրագրի իրականացմամբ կապահովվի ՀՀ-ում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի սոցիալ-տնտեսական լիարժեք ինտեգրմանն ուղղված՝ առաջնահերթ միջամտություն և բարեփոխումներ պահանջող ոլորտների երկարաժամկետ կարգավորման գործընթացը, ինչպես նաև սիրիահայերի և իրաքահայերի կրթական, մշակութային, սոցիալ-տնտեսական ինտեգրման խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերի շարունակականությունը՝ լուծելով ինտեգրման գործընթացի արագացմանը խոչընդոտող խընդիրները՝ միաժամանակ՝ նպաստելով Կառավարության նկատմամբ վստիության ամրապնդմանը, խթանելով ինչպես տարածաշրջանից, այնպես էլ համայն սփյուռքից հայրենադարձների հոսքի մեծացմանը:

**213.8 Սփյուռքի երիտասարդների «ներՈՒԺ» ծրագրի իրականացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Աջակցել Հայաստանի Հանրապետությունում ներդումների իրականացմանը, որը կբերի նոր աշխատատեղերի ստեղծման: Այդ աշխատանքներում կարևոր է սփյուռքի երիտասարդության ներուժի ներգրավումը: Ծրագրի նպատակն է սփյուռքի հայազգի ձեռներեցների համար հնարավորություն ստեղծել Հայաստանում խթանելու սթարթափ էկո համակարգի կայացումը, ինչպես նաև Հայաստանի տնտեսության տարբեր ճյուղերում ներդնել նորարարական տեխնոլոգիաներ, նպաստել փոքր և միջին բիզնեսի զարգացմանը: Միևնույն ժամանակ ծրագրի իրականացումը կնպաստի հայրենադարձության խթանմանը

**2.Կարգավորման առարկան**

Տարեկան մինչև 100 սփյուռքահայ գործարարներին ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում ներդրումային միջավայրը, սթարթափ հիմնելու հնարավորությունները, ինչպես նաև ստեղծել հնարավորություն սկսել սթարթափ Հայաստանի Հանրապետոթյունում

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Սփյուռքի երիտասարդների «ներՈՒԺ» ծրագրի իրականացմամբ առնվազն 200 սփյուռքահայ գործարարներին կներկայացվի ՀՀ-ում ներդրումային միջավայրը, արտոնությունները, սթարթափ հիմնելու հնարավորությունները. Հնարավորություն կստեղծվի, որ սփյուռքահայ գործարարները ներկայացնեն շուրջ 100 բիզնես նախագծեր, իսկ

| | |
|---|---|
| | լավագույն մինչև 10 բիզնես ծրագրեր կֆինանսավորվեն մինչև 15 մլն. ՀՀ դրամի չափով: |
| | **213.9 Սփյուռքի երիտասարդների համար «Արի տուն» հայրենաճանաչության և վերապատրաստման ծրագրի իրականացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշման հավելվածի 2.4. բաժնի «Սփյուռքի հետ կապերը» գլխի դրույթներից:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Սփյուռքում վտանգված է հայապահպանությունը, հայոց լեզուն, հայկական մշակույթը: Սփյուռքի կենսունակության գրավականը հայրենիքի հետ երիտասարդության մշտական և բազմաբնույթ կապերն ու հարաբերություններն են, պատանիների ու աղջիկների Հայաստան ճանաչողական այցելություններն են, իրենց հասակակիցների հետ ծանոթություններն ու շփումները, հայկական հարուստ ժառանգության հետ նրանց մշտական առնչությունները:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>«Արի տուն» ծրագրի մշակման ու իրականացման միջոցով հնարավոր է Սփյուռքի երիտասարդության համար ճանաչելի դարձնել սեփական հայրենիքը, լեզվամշակութային արժեքները, այդ ճանապարհով նպաստել Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը, հայապահպանությանը Սփյուռքում:<br><br>**2.Կարգավորման առարկան**<br><br>«Արի տուն» ծրագրի իրականացումը թույլ է տալիս յուրաքանչյուր տարի հայաստանյան ընտանիքներում հյուրընկալել հարյուրավոր սփյուռքահայ երիտասարդների, նրանց համար կազմակերպել ճանաչողական շրջայցեր ու դասընթացներ:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>13-18 տարեկան մինչև 500 պատանիներ ու աղջիկների մասնակցություն, 19-24տ. մինչև 100 երիտասարդների համար ծրագրի իրականացում մարզերում: Երեք ուղղությամբ վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝<br><br>1) հայրենադարձության և դեպի Հայաստան զբոսաշրջության քարոզչության 30 երիտասարդ կազմակերպիչների երկշաբաթյա դասընթացներ.<br><br>2) հայոց լեզվի, հայագիտական առարկաների մինչև 40 ուսուցիչների մեկամսյա վերապատրաստում.<br><br>3) Ազգային երգի ու պարի 30 մասնագետների երկշաբաթյա դասընթաց: |
| 214 | **214.1. Աջակցություն սփյուռքի հայ համայնքներին ծրագրի իրականացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Հայկական համայնքներում ազգային ինքնության արմատավորման ու պահպանման նպատակով սփյուռքի կազմակերպությունների հետ լեզվամշակութային ծրագրեր իրականացնելու համար միջոցներ ձեռնարկումը, ինչպես նաև այլալեզու և այլադավան հայերի շրջանում հայկական ազգային ինքնության հաստատմանն ու արմատավորմանը նպաստումը կարևորագույն խնդիրներից է: Հայապահպանությունը, համահայկական ներուժի համախմբմանն ուղղված մի շարք միջոցառումների մշակումն ու իրականացումն է: |

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայապահպանության գործընթացի խթանումը զգալիորեն կամրապնդի Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի կապերը և հայ ժողովրդի հոգևոր միասնությունը մտավոր ու պաշտպանական ներուժը:

**2.Կարգավորման առարկան**

Հայության ուծացմանը դիմակայումը  և կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցությունը և հայ համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորումն պատմամշակութային արժեքների սերունդներին փոխանցումը և հայկական ինքնությունը պահպանումը:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

«Սփյուռքի կրթօջախների համար  ուսումնական գրականության և ուսումնաօժանդակ նյութերի մշակում և տրամադրում» ծրագրով տարեկան մինչև 50.000 կտոր  ուսումնական նյութերի տրամադրում սփյուռքյան շուրջ 150 հայկական կրթօջախներին և 60 մեկօրյա ու ամենօրյա կրթօջախներին ուսումնական նյութերի առաքում, ինչպես նաև մինչև 20.000 կտոր ուսումնական գրականության և ուսումնաօժանդակ նյութերի փոստային առաքում սփյուռքի հայ համայնքներ:

**214.2 «Օտարերկրյա պետություններում գտնվող հայկական ունեցվածքի պահպանման և տնօրինման խնդիրների լուծմանն աջակցության ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:

**1.1Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի գործակցության ապահովումը, դրանց միջև կապերի ամրապնդումը և հայ ժողովրդի հոգևոր միասնությունը Կառավարության քաղաքականության կարևոր բաղադրիչն է: Հայապահպանության և հայ համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը, համահայկական ծրագրերի մշակմանն ու իրականացմանն աջակցությունը:

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայապահպանության գործընթացի խթանումը զգալիորեն կամրապնդի Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի կապերը և հայ ժողովրդի հոգևոր միասնությունը մտավոր ու պաշտպանական ներուժը:

**2.Կարգավորման առարկան**

Օտարերկրյա պետություններում գտնվող հայկական ունեցվածքի պահպանման և տնօրինման խնդիրների լուծմանն աջակցության ծրագրի և համապատասխան գործիքակազմի մշակման նպատակով հոգևոր կառույցների, օտարերկրյա պետություններում ՀՀ լիազոր ներկայացուցիչների, ինչպես նաև սփյուռքի և Հայաստանի համապատասխան ոլորտների ներկայացուցիչների մասնակցությամբ հանձնաժողովի ստեղծում. Տվյալ երկրի ՀՀ դեսպանության, տեղի հայկական համայնքի հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում հանձնաժողովի կողմից հայկական ժառանգության իրավահաջորդության գործընթացի կազմակերպման և իրագործման վերաբերյալ գործողությունների հստակ ձևակերպված մեխանիզմների մշակում:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ակնկալվում է առնվազն 6 երկրում հայկական ունեցվածքի փաստաթղթավորում, պատկանելության ճանաչում, տնօրինում, պահպանում, միջազգային հանրության շրջանակներում հայկական ունեցվածքի արժևորում, հայկական պատմամշակութային արժեքների տեղափոխում ՀՀ (ձեռագրեր, հնատիպ գրքեր, արխիվային փաստաթղթեր, պատմական իրեր և այլն): Հայկական ունեցվածքը տնօրինելու անհնարինության  պարագայում հայկական պատմամշակութային ժառանգության ներառում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից պահպանվող համաշխարհային արժեքների

ցանկերում:

**214.3 «Աջակցություն մերձավոր սփյուռքի հայ համայնքներին» ծրագրի իրականացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:

**1.1Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի գործակցության ապահովումը, դրանց միջև կապերի ամրապնդումը և հայ ժողովրդի հոգևոր միասնությունը Կառավարության քաղաքականության կարևոր բաղադրիչն է: Հայապահպանության և հայ համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը, համահայկական ծրագրերի մշակմանն ու իրականացմանն աջակցությունը:

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայապահպանության գործընթացի խթանումը զգալիորեն կամրապնդի Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի կապերը և հայ ժողովրդի հոգևոր միասնությունը մտավոր ու պաշտպանական ներուժը:

**2.Կարգավորման առարկան**

Հայության ուծացմանը դիմակայումը  և կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցությունը և հայ համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորումն պատմամշակութային արժեքների սերունդներին փոխանցումը և հայկական ինքնությունը պահպանումը:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**
Վրաստանում գործող կրթամշակութային և  երիտասարդական կենտրոնների գործունեության ակտիվացում, հայկական մշակույթի պահպանում և զարգացում  Ջավախքի հայկական գյուղերի մշակութային  և գործող երիտասարդական  կենտրոններին նյութատեխնիկական աջակցություն (յուրաքանչյուր տարի՝ 5 մշակութային և 7՝ երիտասարդական կենտրոնների).

-Վիրահայոց թեմին կից ործող «Հայարտուն» կենտրոնի նախակրթարանին, կիրակնօրյա դպրոցին և մշակութային խմբերին՝ ֆինանսական աջակցություն.

-Սամցխե-Ջավախքի և Ծալկայի փոխառաջնորդարանին կից գործող կենտրոններին ֆիանսական աջակցություն (Ախալքալաք, Նինոծմինդա, Ախլցխա և Ծալկա):

**214.4.«Աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին» ծրագրի իրականացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:

**1.1Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի գործակցության ապահովումը, դրանց միջև կապերի ամրապնդումը և հայ ժողովրդի հոգևոր միասնությունը Կառավարության քաղաքականության կարևոր բաղադրիչն է: Հայապահպանության և հայ համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը, համահայկական ծրագրերի մշակմանն ու իրականացմանն աջակցությունը:

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայապահպանության գործընթացի խթանումը զգալիորեն կամրապնդի Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի կապերը և հայ ժողովրդի հոգևոր միասնությունը մտավոր ու պաշտպանական ներուժը:

**2.Կարգավորման առարկան**

Հայության ուծացմանը դիմակայումը  և կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցությունը և հայ համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորումն պատմամշակութային արժեքների սերունդներին փոխանցումը և հայկական ինքնությունը պահպանումը

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Վրաստանի հայալեզու 9 լրատվամիջոցների գործունեության ապահովում

**214.5.«Աջակցություն Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանմանը» ծրագրի իրականացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:

**1.1Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի գործակցության ապահովումը, դրանց միջև կապերի ամրապնդումը և հայ ժողովրդի հոգևոր միասնությունը Կառավարության քաղաքականության կարևոր բաղադրիչն է: Հայապահպանության և հայ համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը, համահայկական ծրագրերի մշակմանն ու իրականացմանն աջակցությունը:

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայապահպանության գործընթացի խթանումը զգալիորեն կամրապնդի Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի կապերը և հայ ժողովրդի հոգևոր միասնությունը մտավոր ու պաշտպանական ներուժը:

**2.Կարգավորման առարկան**

Հայության ուծացմանը դիմակայումը և կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցությունը և հայ համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորումն պատմամշակութային արժեքների սերունդներին փոխանցումը և հայկական ինքնությունը պահպանումը:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Խոջիվանքի պանթեոնի պահպանում, բարեկարգում և փոխանցում սերունդներին:

215

**215.1 Ուծացման և ինքնության պահպանման հիմնախնդիրների ուսումնասիրություններ Ռուսաստանի Դաշնությունում, Լատինական Ամերիկայում, Հյուսիսային Ամերիկայում և Արևելյան Եվրոպայում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:

**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Սփյուռքի համայնքների պատմության, նրանց խնդիրներին (ուծացում, խառնամուսնություն, համայնքային կյանքից հեռացում, լեզվի իմացության կորուստ, ազգային ինքնության մյուս բաղադրիչներից հեռացում, ներուժի համախմբում, հայրենիքի հետ կապերի աշխուժացում), համահայկական նշանակության հարցերին նվիրված ուսումնասիրությունները, հետազոտական հիմնախնդիրները Հայաստան-սփյուռք գործակցության կարևոր ոլորտներից են: Սփյուռքին նվիրված հետազոտությունները հնարավորության կընձեռի հաղթահարել առկա կարծրատիպերը, վեր հանել աշխարհասփյուռ հայության տարբեր հատվածների իրական կարիքները: Օտար

միջավայրի սոցիալ-մշակութային ազդեցությունը սփյուռքահայության վրա, սպառնալիք է արտերկրում ապրող հայության մշակութային և հոգևոր անվտանգությանը, ուստիև խիստ կարևոր է սփյուռքին նվիրված տարատեսակ հետազոտությունների իրականացումը և նյութերի տարածումը: Առկա խնդիրներից են հայոց լեզվի, հայկական մշակույթի, պատմական հիշողության աստիճանական մարումը սփյուռքահայության շրջանում: Հիմնախնդիրներից է նաև խառնամուսնությունները:

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Խնդիրների լուծման նպատակով  անհրաժեշտ է իրականացնել համապատասխան հետազոտություններ, ուսումնասիրություններ, հարցախույզեր:

**2.Կարգավորման առարկան**

Վերոնշյալ միջոցառումների իրականացումը թույլ է տալիս  բացահայտել ուծացման պատճառները, այն խմբերը, որոնք առավել խոցելի են, դրա դիմակայելու ուղիները և այդ խմբերի հայրենադարձության կազմակերպման հարցը:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի իրականացումը կնպաստի վերհանել Ռուսաստանի Դաշնության առնվազն 10 հայահոծ համայնքներում ուծացման հիմնական դրդապատճառները և ներկայացնել համապարփակ լուծումներ իրականացնել հետազոտության հրատարակությունը: Կնպաստի նաև հայկական ինքնության, դիմագծի պահպանմանը, կխթանի հայկական արմատներին վերադարձը, պատմական հիշողությունը: Ինչպես նաև կնպաստի Լատինական Ամերիկայում (Բրազիլիա, Արգենտինա, Ուրուգվայ) առնվազն 6 հայահոծ համայնքներում վերհանել հիմնական խնդիրները՝ հայոց լեզվի, հայկական մշակույթի, պատմական հիշողության աստիճանական մարումը հայերի շրջանում, ինչպես նաև խառնամուսնությունները, որի դեպքում նոր սերունդն ավելի անմիջականորեն է ենթարկվում օտար միջավայրի սոցիալմշակութային ազդեցությանը: Կնպաստի վերհանել Հյուսիսային Ամերիկայի առնվազն 7 հայահոծ համայնքներում ուծացման հիմնական դրդապատճառները և ներկայացնել համապարփակ լուծումներ հրատարակության տեսքով: Ծրագրի իրականացումը կնպաստի վերհանել Արևելյան Եվրոպայի առնվազն 5 հայահոծ համայնքներում ուծացման հիմնական դրդապատճառները և ներկայացնել համապարփակ լուծումներ հրատարակության տեսքով:

216

**216.1 Սփյուռքի մարդկային ներուժի հաշվառում, համախմբում, արդյունքում գիտական, ֆինանսական տնտեսական մասնագիտական ցանցերի ստեղծում և  դրանց շարունակական համալրում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը  և նպատակը**

Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Սփյուռքում ներկա իրավիճակը պահանջում է իրականացնել համակարգված գիտական, ֆինանսական տնտեսական և մարդկային ներուժի հաշվառում, իրականացնել  քայլեր՝ ներուժի համախմբման, մասնագիտական ցանցերի ստեղծման և շարունակական համալրման համար:

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Այդ նպատակով անհրաժեշտ է քարտեզագրման նոր մոտեցումներ և աշխատանքների ակտիվացում:

**2.Կարգավորման առարկան**

Կարգավորման առարկա է հանդիսանում մարդկային ներուժի հաշվառման, համախմբման, մասնագիտական ցանցերի հետ ստեղծման և շարունակական համալրման հարաբերությունները:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Սփյուռքի ներուժի հաշվառումը, համախմբումը, ըստ մասնագիտական 3 ցանցերի ստեղծումը և շարունակական

| | |
|---|---|
| | համալրումը թույլ կտա իրական պատկերացում կազմել սփյուռքում առկա հնարավորությունների վերաբերյալ, որոնք կնպաստեն սփյուռքի մասնակցության ներառմանը Հայաստանի հանրային կյանքին: |
| | **216.2 Հայկական սփյուռքի կրթական, գիտական, տնտեսական, մշակութային և այլ տվյալների միասնական համակարգի (սփյուռքի ներուժի էլեկտրոնային շտեմարան) կատարելագործում և դրա զարգացման նոր ուղիների մշակում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Հայկական սփյուռքի կրթական, գիտական, տնտեսական, մշակութային և այլ տվյալների միասնական համակարգի (սփյուռքի ներուժի էլեկտրոնային շտեմարան) շարունակականության ապահովում և կատարելագործում, դրա զարգացման նոր ուղիների մշակում:<br><br>**2.Կարգավորման առարկան**<br><br>Հայկական սփյուռքի կրթական, գիտական, տնտեսական, մշակութային և այլ տվյալների միասնական համակարգի (սփյուռքի ներուժի էլեկտրոնային շտեմարան) շարունակականության ապահովման և դրա զարգացման նոր ուղիների մշակմանն ուղղված հարաբերությունները:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայկական սփյուռքի կրթական, գիտական, տնտեսական, մշակութային և այլ տվյալների միասնական համակարգի (սփյուռքի ներուժի էլեկտրոնային շտեմարան) կատարելագործումը հնարավորություն կտա պարբերաբար համալրել և արդիականացնել տեղեկատվական բազան տարեկան մինչև 6500 տվյալներով, որը կարող է օգտագործվել հանրային կյանքի տարբեր ոլորտների առաջընթացի համար |
| | **216.3 Հայկական առևտրային ցանցի (ՀԱՑ) բիզնես ֆորումի կազմակերպում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>ՀԱՑ-ի կազմում են գործում հայ-հունական, հայ-ամերիկյան, հայ-ռումինական, հայ-ավստրալական, հայ-բրազիլական, հայ-արգենտինական, հայ-ֆրանսիական, հայ-եգիպտական, հայ-նիդերլանդական, հայ-բելգիական, հայ-իրանական առևտրաարդյունաբերական պալատները, գործարարների հայ-կանադական, հայ-լիբանանյան խորհուրդները, Հայաստանի և Արցախի առևտրաարդյունաբերական պալատները: Ֆորումների կազմակերպման խնդիրն է նշված միջոցառումները դարձնել էլ ավելի ընդգրկուն՝ ներգրավելով սփյուռքահայ նոր գործարարներ և պոտենցիալ ներդրողներ, առավելագույնս օգտագործել սփյուռքի գործարար համայնքի ներուժը Հայաստանի բիզնես միջավայրի զարգացման, երկրի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, ինչպես նաև դեպի Հայաստան հայերի ներգաղթի հնարավորությունները մեծացնելու համար:<br><br>**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Հայաստանի համար մշակված բիզնես ծրագրերի, Հայաստանի ներդրումային հնարավորությունների մասին ներկայացում, Հայաստանում ներդրումներ կատարելու հնարավորությունների քննարկում:<br><br>**2.Կարգավորման առարկան** |

Բիզնես ֆորումին մասնակցելու նպատակով սփյուռքի բոլոր առևտրային պալատների ներկայացուցիչներին, անհատ գործարարներին, նրանց միջոցով նաև օտարազգի պոտենցիալ գործարարներին Հայաստան հրավիրում:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Պոտենցիալ ներդրողին ներկայացնել ճշգրիտ տեղեկատվություն և հստակ նախագծված բիզնես ծրագրեր՝ Հայաստանում ներդրումներ կատարելու համար: Հայաստանում ներդրումների խրախուսում: Պոտենցիալ ներդրողների և համապատասխան ոլորտների գերատեսչությունների հետ կապերի ստեղծում: Հայաստանի և սփյուռքի գործարարների և պոտենցիալ ներդրողների միջև համագործակցության ակտիվացում: Բիզնես ներդրումների միջոցով երկրի քաղաքացիների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում: Արտագաղթի նվազեցում և հայրենադարձությանը նպաստում:

**216.4.Սրտաբանության Եվրակովկասյան համաժողովի և մասնագիտական սեմինարների կազմակերպում՝ Հայաստան հրավիրելով աշխարհի տարբեր երկրներից շուրջ 30-40 արհեստավարժ ու հայտնի սրտաբանների և նրանց միջոցով Հայաստանի սրտաբանության ոլորտի մասնագետներին սրտաբանության ոլորտում առկա մարտահրավերների դեմ պայքարի լավագույն փորձի, նորարարական լուծումների, սրտանոթային հիվանդությունների բուժման արդի ձևերի ներկայացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Սրտաբանության Եվրակովկասյան համաժողովի և մասնագիտական սեմինարների կազմակերպման ծրագրի խնդիրներն են Հայաստանի և Արցախի սրտաբանների համար անվճար վերապատրաստվելու հնարավորությունների ընձեռումը, առողջապահության բնագավառում Կառավարության կողմից նմանատիպ վերապատրաստումների համար հատկացվող ֆինանսական միջոցների տնտեսումը, սփյուռքի օգնությամբ Հայաստանում սրտաբանության ոլորտը զարգացնելը:

**2.Կարգավորման առարկան**

5. Հայաստանում սրտաբանության ոլորտի մասնագետների զգալի մասը հնարավորություններ չունեն վերապատրաստվելու աշխարհի առաջատար կլինիկաներում և ստանալ նոր ու արդիական գիտելիքներ: Հետևաբար, սփյուռքի համապատասխան ոլորտի մասնագետների ներուժի օգտագործմամբ Հայաստանի սրտաբանների համար Հայաստանում վերապատրաստումներ անցկացնելն արդիական է և արդյունավետ, քանի որ վերապատրաստումներն անցկացվում են անվճար հիմունքներով և մասնագետների՝ Հայաստան գալու և հետադարձի ինքնաթիռի տոմսերը, գիշերակացն ապահովում է «Ակցիա առողջություն Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպության կողմից: Կազմակերպությունն իր վրա է վերցնում նաև կազմակերպչական բնույթի ծախսերի զգալի մասը:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ամրապնդել ոլորտի մասնագետների միջև գործակցությունն ու կապերը Հայրենիք-սփյուռք ձևաչափով:Հայաստանի և Արցախի սրտաբանության ոլորտի մասնագետների համար անվճար վերապատրաստվելու և նոր գիտելիքներ ձեռք բերելու համար հնարավորությունների ստեղծում:

Հայաստանում սրտաբանության ոլորտի զարգացմանը նպաստում:Առողջապահության բնագավառում կառավարության կողմից նմանատիպ վերապատրաստումների համար հատկացվող շուրջ 30 մլն. դրամի ֆինանսական միջոցների տնտեսում: Ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է նաև, որ այն առողջապահության նախարարությունը տրամադրի սրտաբանական կլինիկաներին՝ սրտաբաններին տեղեկացնելու համար:

217 **217.1 Արևմտյան Հայաստանում իսլամացված հայերի հիմնախնդիրների ուսումնասիրության նպատակով տեղում (Արևմտյան Հայաստան) հետազոտական աշխատանքներ կատարողներին աջակցություն**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:

**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հիմնական խնդիրը Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը և հետևանքների վերացմանը նպատակաուղղված տարբեր միջոցառումների իրականացման միջոցով հայկական ու համաշխարհային հանրությանը 20-րդ դարի ամենախոշոր ոճրագործության մասին բարձրաձայնելն է, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդումը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը նպաստելը և այդ գործում սփյուռքի ներուժի օգտագործումը:

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հետազոտությունների իրականացում՝ հիմնախնդրին առնչվող արժեքավոր նյութերի՝ տարբեր լեզուներով թարգմանությունների կազմակերպում:

**2.Կարգավորման առարկան**

Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը և հետևանքների վերացմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացում:

**3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի արդյունքում կհանրայնացվեն արևմտահայության չուսումնասիրված հիմնախնդիրները, շուրջ 9 հետազոտության/ ուսումնասիրության իրականացմանն աջակցություն: Կիրականացվի Արևմտյան Հայաստանի պատմամշակութային ժառանգության հաշվառում, տվյալների թարմացում՝ ոչնչացումից և անհայտությունից փրկելու նպատակով

**217.2 Արևմտյան Հայաստանից, Ստամբուլից հայ երիտասարդների և հայոց լեզվի ուսուցիչների ներգրավումը Հայաստանում մշակութային և կրթական միջոցառումներին**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:

**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հիմնական խնդիրը Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը և հետևանքների վերացմանը նպատակաուղղված տարբեր միջոցառումների իրականացման միջոցով հայկական ու համաշխարհային հանրությանը 20-րդ դարի ամենախոշոր ոճրագործության մասին բարձրաձայնելն է, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդումը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը նպաստելը և այդ գործում սփյուռքի ներուժի օգտագործումը:

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Քարոզչական ֆիլմերի նկարահանում, ինչպես նաև գրքերի և արխիվային փաստաթղթերի, տարբեր ժողովածուների և անհրաժեշտ փաստաթղթերի հրատարակությունների իրականացում, հիմնախնդրին առնչվող արժեքավոր նյութերի՝ տարբեր լեզուներով թարգմանությունների կազմակերպում:

**2.Կարգավորման առարկան**

Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը և հետևանքների վերացմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացում:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի արդյունքում կիրականացվեն Թուրքիայում թրքախոս հայերի համար հայագիտության, մշակութային առանձնահատկությունների ծանոթացման ծրագրերի կազմում, սեփական պատմության ուսումնասիրում, վերադարձ հայկական արմատներին, ինչպես նաև կրոնափոխ հայերին հայոց լեզվի ուսուցում:Նախատեսվում է առնվազն 14 միջոցառումների կազմակերպում:

**217.3 Հայոց ցեղասպանության և իսլամացված հայերի հիմնախնդիրներին նվիրված միջոցառումներ (գրքերի հրատարակություն, ֆիլմերի նկարահանում, Հայոց ցեղասպանությանը նվիրված նյութերի ցուցադրությունների կազմակերպում)**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:

**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հիմնական խնդիրը Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը և հետևանքների վերացմանը նպատակաուղղված տարբեր միջոցառումների իրականացման միջոցով հայկական ու համաշխարհային հանրությանը 20-րդ դարի ամենախոշոր ոճրագործության մասին բարձրաձայնելն է, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդումը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը նպաստելը և այդ գործում սփյուռքի ներուժի օգտագործումը:

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Քարոզչական ֆիլմերի նկարահանում, ինչպես նաև գրքերի և արխիվային փաստաթղթերի, տարբեր ժողովածուների և անհրաժեշտ փաստաթղթերի հրատարակությունների իրականացում, հիմնախնդրին առնչվող արժեքավոր նյութերի՝ տարբեր լեզուներով թարգմանությունների կազմակերպում:

**2.Կարգավորման առարկան**

Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը և հետևանքների վերացմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացում:

**3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի արդյունքում կհավաքագրվեն և կիրատարակվեն համշենահայության մասին տեղեկատվության և բանահյուսության նյութեր, կհանրայնացվեն կրոնափոխ արևմտահայության և Հայոց ցեղասպանության մասին տեղեկատվության հիմնախնդիրները, ինչպես նաև Հայոց ցեղասպանության մասին նոր տեղեկատվության հանրահռչակում, երիտասարդ սերնդի դաստիարակությանն ուղղված աշխատանքների շրջանակում: Նախատեսվում է առնվազն 10 միջոցառումների կազմակերպում:

**217.4 Աջակցություն հետազոտությունների անցկացմանը Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի և Պոլսո Հայոց պատրիարքության արխիվներում**

**1. 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի

զարգացմանը:

**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հիմնական խնդիրը Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը և հետևանքների վերացմանը նպատակաուղղված տարբեր միջոցառումների իրականացման միջոցով հայկական ու համաշխարհային հանրությանը 20-րդ դարի ամենախոշոր ոճրագործության մասին բարձրաձայնելն է, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդումը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը նպաստելը և այդ գործում սփյուռքի ներուժի օգտագործումը:

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հետազոտությունների իրականացում և արխիվային փաստաթղթերի, տարբեր ժողովածուների և անհրաժեշտ փաստաթղթերի հրատարակությունների իրականացում, հիմնախնդրին առնչվող արժեքավոր նյութերի՝ տարբեր լեզուներով թարգմանությունների կազմակերպում:

**2.Կարգավորման առարկան**

Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը և հետևանքների վերացմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացում:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի արդյունքում կհանրայնացվի Հայոց ցեղասպանության մասին տեղեկատվությունը, տեղի կունենա նյութերի հավաքում, թվայնացում և ըստ անհրաժեշտության թարգմանչական աշխատանքների իրականացում և այլն, նախատեսվում է 2 միջոցառում:

**Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն**

218

***<u>Մարզպետարանների կազմակերպական կառուցվածքների վերանայում</u>***

**218.1 «Մարզպետարանների կանոնադրությունները և կառուցվածքները հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**1.Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակ)**

Մարզպետարանների կազմակերպական կառուցվածքների վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական բարեփոխումներով՝ ելնելով «Տարածքային կառավարման մասին» նոր ՀՀ օրենքի ընդունման և դրանից բխող ՀՀ մարզպետարանների կառուցվածքի և գործառույթների նկարագրման անհրաժեշտությամբ: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժնով նախատեսված հանձնառություններից:

**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Տարածքային կառավարման մասին» նոր ՀՀ օրենքով նախատեսվում է նկարագրել մարզպետների լիազորությունները վերջիններիս գործունեության հիմնական ոլորտներում, ինչպես նաև մարզպետների հարաբերությունները պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ: Վերջինիս հիման վրա պետք է նկարագրվեն մարզպետարանների գործառույթները և դրանց հետ կապված քաղաքացիաիրավական հարաբերությունները:

**1.2 Առկա խնդիրների համար առաջարկվող լուծումները**

Խնդրի լուծումն առաջարկվում է իրականացնել ««Մարզպետարանների կանոնադրությունները և կառուցվածքները հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի ընդունմամբ:

**2. Կարգավորման առարկան**

Տարածքային կառավարման մարմինների միատեսակ գործառույթների և կառուցվածքի սահմանում՝ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ նոր օրենքի նկաագրված լիազորությունների շրջանակներում:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.**

Տարածքային կառավարման մարմինների միատեսակ գործառույթների և կառուցվածքի սահմանում:

| 219 | ***Հանրապետության տարածքային համաչափ զարգացման, տարածքների սոցիալ-տնտեսական կայունության և հետագա տնտեսական ակտիվության և աճի ապահովում*** |
|---|---|

Հայաստանի Հանրապետությունում տարածքային զարգացման անհամաչափությունները խորությամբ նկարագրվել են Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությամբ, որով սահմանվել են նաև տարածքային զարգացման ծրագրավորման ընթացքում կիրառվող հիմնական սկզբունքները, գերակայությունները և արդյունքային ցուցանիշները: Տարածքային զարգացման ապահովմանն են ուղղված նաև ՀՀ բոլոր մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունները, ինչպես նաև ՀՀ 2018-2020 թվականների տարածքային զարգացման գործառնական ծրագիրը: Նշված փաստաթղթերի տրամաբանությամբ են նկարագրվել հետևյալ միջոցառումները՝

**219. 1 ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, համայնքների կողմից ներկայացված և սահմանված չափորոշիչներին բավարարող ծրագրերի իրականացման համար՝ ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի ապահովում**

**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)**

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ տարածքային համաչափ զարգացումն ապահովելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշման 2-րդ կետով հաստատված Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման գործընթացի ապահովմամբ: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված հանձնառություններից:

1. 1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ տարածքային համաչափ զարգացումն ապահովելու՝ ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման նպատակով ՀՀ կառավարությունը 2018 թվականից նախաձեռնել և իրականացրել է համայնքներին սուբվենցիաների տրամադրման գործընթացը, որի շրջանակներում համայնքներում տնտեսական ենթակառուցվածքների զարգացման դեպքում (ոռոգում, գյուղատնտեսական և կոմունալ տեխնիկայի ձեռք բերում) ծրագրի արժեքի մինչև 60 տոկոսը համաֆինանսավորվել է պետական բյուջեից, իսկ սոցիալական ենթակառուցվածքների՝ մանկապարտեզի, մշակութային տների, փողոցների լուսավորության համակարգի կառուցման, վերանորոգման գործընթացի պարագայում՝ պետության կողմից համաֆինանսավորվել է ծրագրի արժեքի մինչև 40 տոկոսը:

2018 թվականի ընթացքում ՀՀ 117 համայնքներից ստացվել և ուսումնասիրվել են թվով 230 սուբվենցիայի հայտ: Ուսումնասիրության և շահագրգիռ մարմինների հետ քննարկման արդյունքներով՝ սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կայացած թվով 7 նիստերի ընթացքում քննարկվել և հանձնաժողովի կողմից հավանության են արժանացել 180-ը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ համայնքներում կազմակերպված մրցույթների արդյունքներով նոյեմբերի-դեկտեմբեր ամիսներին նախարարության կողմից մշակվել և Կառավարության կողմից հաստատվել են կառավարության թվով 7 որոշումներ, որոնցով 152 սուբվենցիայի ծրագիր համաֆինանսավորվել է ՀՀ պետական բյուջեից 1,620 մլրդ ՀՀ դրամի չափով:

2018 թվականի ընթացքում իրականացված ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման պիլոտային գործընթացի ընթացքում խնդիրներ էին առաջանում սուբվենցիայի հայտերի սոցիալական և տնտեսական ուղղությունների տարբերակման, փոքր բյուջե ունեցող համայնքների ծրագրին մասնակցության անհնարինության, ինչպես նաև ծրագրով չէր նախատեսվում բնակավայրերի գազաֆիկացման, բազմաբնակարան շեքների ընդհանուր բաժնային սեփականության տարրերի նորոգման աշխատանքները:

**1.2.** Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի

Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման կարգի համաձայն, նախատեսվում է մեծ թվով համայնքների ներգրավում սուբվենցիայի տրամադրման գործընթացում, ինչը հնարավորություն կտա զարգացնել համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքները: Ընդ որում ՀՀ վարչապետի 2019 19 մարտի 2019 թվականի N 278 – Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում նախատեսվում է մրցակցային սկզբունքով սուբվենցիայի տրամադրում լավագույն ծրագրեր ներկայացրած համայնքներին:

2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման կատարման արդյունքում ՀՀ համայնքներում կիրականացվեն կապիտալ ծախսեր՝ նպատակաուղղված ճանապարհների, այգիների, հրապարակների կառուցմանն ու վերանորոգմանը, էներգախնայող լուսավորության անցկացմանը, հանրային և համայնքային շենքերի վերանորոգմանը, խմելու և ոռոգման ջրագծերի կառուցմանն ու վերանորոգմանը, համայնքների գազաֆիկացմանը, բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության տարրերի նորոգմանը և այլն: Միաժամանակ, այս գործընթացում չափազանց կարևորվում է համայնքների դերակատարությունն ու անմիջական մասնակցությունը՝ համայնքների կարիքների գնահատման, առաջնահերթ խնդիրների բացահայտման և դրանց լուծումների ապահովման մասով:

**219.2 Տարածքային համաչափ զարգացմանն ուղղված տարածքային զարգացման 8 փորձնական ծրագրի իրականացման ապահովում**

**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)**

Թվով 8 փորձնական ծրագրերի իրականացումը պայմանավորված է մարզերում տարածքային համաչափ զարգացում ապահովող ենթակառուցվածքների ձևավորման, ինչպես նաև փաստացի արդյունք ստանալու անհրաժեշտությամբ: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժնով նախատեսված հանձնառություններից:

Տարածքային զարգացման 8 փորձնական ծրագրերն իրականացվում են ԵՄ ֆինանսավորմամբ և ՀՀ կառավարության ու առանձին ՀԿ-ների ու տեղական ինքնակառավարման մարմինների համաֆինանսավորմամբ: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 10 մլն Եվրո:

**2. Ակնկալվող արդյունքը**

Ծրագրերի իրականացմամբ կստեղծվի շուրջ 500 նոր աշխատատեղ և գրեթե նույնքան կազմակերպություններ՝ մեծամասամբ ՓՄՁ-ներ կընդլայնեն իրենց գործունեությունը, կձևավորվեն կայուն ենթակառուցվածքներ և հմտություններ, ինչը կարող է խթանել սոցիալական և տնտեսական հետագա առաջընթացը մարզերում:

**219.3 Շարունակել և ընդլայնել սահմանամերձ համայնքներում իրականացվող սոցիալական ու տնտեսական աջակցության ծրագրերը**

**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)**

Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցությունն իրականացվում է <<Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքի հիման վրա, որի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը: Նշվածը ենթադրում է, որ առնվազն մինչև նշված ժամկետի ավարտը սահմանամերձ համայնքների բնակիչներին պետք է տրամադրվի <<Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքով նախատեսված աջակցությունը: Նշված աջակցությունը տրամադրվում է Կառավարության 18.12.2014 թ-ի N 1444-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ սահմանամերձ 16 համայնքների 38 բնակավայրերի բնակիչներին: ՀՀ պետական բյուջեով այս ծրագրի իրականացման համար հատկացվել է 928,8 մլն դրամ գումար:

Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժնով նախատեսված հանձնառություններից:

**2. Ակնկալվող արդյունքը**

Ծրագրի իրականացման արդյունքում 17736 տնտեսության 58043 բնակչի կտրամադրվի առնվազն հետևյալ աջակցությունը՝

1) էլեկտրաէներգիա - օրացուցային տարվա ընթացքում գումարային մինչև 1440 կՎտ/ժ էլեկտրաէներգիայի վճարումները գանձվում են հաստատված սակագնից նվազեցված գնով՝ 50 %-ի չափով (ներառյալ ավելացված

| | |
|---|---|
| | արժեքի հարկը): <br> 2) բնական գազ - օրացուցային տարվա ընթացքում գումարային մինչև 360 խ.մ. բնական գազի վճարումները գանձվում են հաստատված սակագնից նվազեցված գնով՝ 50 %-ի չափով (ներառյալ ավելացված արժեքի հարկը), <br> 3) բնական գազի փոխարեն փոխհատուցում էլեկտրաէներգիայի տեսքով - «էլեկտրաէներգիայի ծախս ունեցող ամիսներին տրամադրվում է 15 խոր. մետր, տարվա ընթացքում աճողական մինչև 180 խոր. մետր բնական գազի քանակության արժեքին համապատասխան գումար: <br> 4) ոռոգման ջուր - ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից օգտագործված ոռոգման ջրի դիմաց տվյալ տարում գանձվող վարձավճարների 50 %-ի չափով: <br> 5) հողի հարկ և անշարժ գույքի գույքահարկ - վճարման ենթակա հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկը Կառավարությունը նրանց փոխարեն համապատասխան համայնքի բյուջե է վճարում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված գումարներից: <br><br> ***219. 4 - 219.7 կետերի միջոցառումներ (ՀՀ տարածքներում տարածքային աճի բևեռների ձևավորում)*** <br><br> **1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)** <br><br> ՀՀ տարածքներում տարածքային աճի բևեռների ձևավորման անհրաժեշտությունը բխում է ստորև ներկայացված իրավական հիմքերից. <br> • *ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի N29 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարություն:* <br> • *ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ին N 53 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Տարածքային աճի բևեռների զարգացման հայեցակարգ»:* <br> • *ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի դրույթներից բխող ՀՀ կառավարության կողմից կազմված ՀԸԳՀ-ի կիրառումն ապահովող ճանապարհային քարտեզի 175-րդ կետ:* <br> • ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժին: <br> **1.1. *կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)*** <br> Չնայած այն բանի, որ վերջին երկու տասնամյակում ՀՀ-ում տարածական տնտեսական քաղաքականության իրականացման համար ստեղծվել էին որոշակի նախադրյալներ, մշակվել և կենսագործվում են տարաբնույթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր, տարածքային զարգացման անհամաչափություններն շարունակում են խորանալ և հիմնականում արտահայտվում են մայրաքաղաքի տնտեսական դերի և նշանակության աճով, ինչի արդյունքում էլ ավելի է աճել Երևանի և մարզերի միջև կենսամակարդակի ճեղքվածքը: <br> Գյուղական բնակավայրերի մեծ մասը 60% և ավել գտնվում են քաղաքների ազդեցության գոտում և գյուղական բնակչության մեծ մասը բնակվում է Երևանի, Վանաձորի և Գյումրու մերձակա գյուղերում: Հեռավոր տարածաշրջանների և սահմանամերձ գոտու բնակավայրերի սոցիալ-տնտեսական վիճակն ունի վատթարացման միտում, ինչը գլխավորապես պայմանավորված է գործարար ակտիվության ցածր մակարդակով, աշխատատեղերի բացակայությամբ, սոցիալական ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակով: <br> Հետևապես, ՀՀ մարզերն առանձնակի ***ոլորտային զարգացման կենտրոնների ձևավորման անհրաժեշտություն ունեն:*** <br> Դրան միտված ՀՀ ՏԿԶՆ կողմից մշակվել և 2017 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ կառավարության N 53 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Տարածքային աճի բևեռների զարգացման հայեցակարգը»: ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Տարածքային աճի բևեռների զարգացման հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որը Մշտապես գործող տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի 2018 թվականի նոյեմբերի 16-ի նիստի N 24.9/[491359]-18 արձանագրության 1-ին կետի համաձայն առաջարկվել է իրականացնել |

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության լիազորությունների շրջանակներում:

Ներկայումս ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունն արդեն իսկ ձեռնարկել է վերոնշյալ միջոցառումների ծրագրով նախատեսված՝ տարածքային աճի բևեռների ձևավորման և զարգացման հարցերով աշխատանքային խմբի ձևավորման աշխատանքները:

**1.2.** ***առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)***

ՀՀ տարածաշրջաններում տարածքային աճի բևեռների զարգացումը թույլ կտա անցում կատարել միաբևեռ, յրաքաղաքում կենտրոնացած տնտեսությունից բազմաբևեռ, կայուն, համաչափ զարգացող տնտեսությանը: Այդ ատակով առաջարկվող լուծումներն են. տարածքային աճի բևեռի տեղակայման և զարգացման ուղղվածության որություն չափորոշիչների և երկրի զարգացման տեսլականի հիման վրա, տարածքային աճի բևեռներում առաջնային գույներ ապահովող նախագծերի իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովում, րածքային աճի բևեռների զարգացման կոնցեպտին (ուղղվածությանը) համապատասխան զարգացման առաջնային գուսներ ապահովող նախագծերի մշակում և իրականացում, տարածքային աճի բևեռների հարակից համայնքներում եռի զարգացմանը նպաստող հարակից ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում:

**2.** ***Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

ՀՀ տարածքներում տարածքային աճի բևեռների զարգացումը հնարավորություն կընձեռի համակարգված և փուլային եղանակով իրականացնել ՀՀ տարածքային համաչափ սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացը:

Ձևավորված տարածքային աճի բևեռներում գործարար ակտիվության մակարդակի բարձրացումը կապահովի տեղական և օտարերկրյա ներդրումների անընդհատ ներհոսք, տարածքային աճի բևեռներում կբարելավվեն տեղական ենթակառուցվածքները ստեղծելով բարենպաստ պայմաններ բիզնես միջավայրի ակտիվացման համար, կարձանագրվի կյանքի որակի և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում՝ ի հաշիվ գործազրկության և աղքատության նվազեցման, կլուծվեն տրանսակցիոն և արտադրական ծախքերի նվազեցման խնդիրները, կաճեն տարածաշրջանի և երկրի մրցակցային առավելությունները:

Տարածքային աճի բևեռների ձևավորումը և զարգացումը կապահովի մարզերի և երկրի որակական զարգացում, մարզային ՀՆԱ-ի և երկրի ՀՆԱ-ի փաստացի աճ ՝ ի հաշիվ ընտրված տարածքների կոնցեպտուալ և համակարգված զարգացման:

***219. 8 ՀՀ տարածքների համաչափ զարգացմանը միտված հարթակի շահագործում***

***Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը (նշելով նաև ծրագրի համաձայն ընդունման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար հիմք հանդիսացող ՀՀ Սահմանադրության կամ օրենքների դրույթները, ինչպես նաև կառավարության ծրագրի համապատասխան կետը)***

ՀՀ տարածքների համաչափ զարգացմանը միտված հարթակի շահագործումը բխում է ստորև ներկայացված իրավական հիմքերից.

- *ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի N29 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարություն:*
- ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժին

**1.1.** ***կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները (նշելով նաև ելակետային տվյալներ, եթե դրանք առկա են)***

Չնայած այն բանի, որ վերջին տասնամյակում ՀՀ տարածքների համաչափ զարգացմանը, համայնքների սոցիալ-տնտեսական կենսապայմանների բարելավմանն ու զարգացմանը միտված պետությունը վարում է ակտիվ քաղաքականություն և տարբեր ծավալներով իրականացնում է տարբեր ծրագրեր ինչպես պետական բյուջեից տրամադրվող միջոցների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ, այնուամենայնիվ դրանց արդյունքների և ընթացքի վերաբերյալ միասնական բազայի բացակայությունը հնարավորություն չի տալիս ամբողջական պատկեր կազմել այդ ուղղությամբ պետության կողմից վարվող

քաղաքականության մասին: Մյուս կողմից համայնքներում տնտեսական ակտիվության խթանումը, փոքր և միջին բիզնես նախագծերի իրականացումը մշտապես լինելով օրակարգային խնդիր կարիք ունի ինչպես ֆինանսավորման այլ միջոցների ներգրավման, այնպես էլ ինֆորմացիոն աջակցության: Բացի այդ մարզերում առկա ռեսուրսների վերաբերյալ միասնական բազայի բացակայությունը դանդաղեցնում է մի շարք գործընթացներ ծրագրերի իրականացման փուլում՝ առաջացնելով երբեմն թե ժամանակի, թե ռեսուրսների կորուստ:

**1.2.** ***առկա խնդիրների առաջարկվող լուծումները (միջոցառումը համակատարող ունենալու դեպքում նշելով նաև համակատարողի կողմից համապատասխան միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները)***

Վերոնշյալ խնդիրների լուծմանն ուղղված ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը 2018 թվականին արդեն իսկ նախաձեռնել է ՀՀ տարածքների համաչափ զարգացմանը միտված հարթակի ստեղծման աշխատանքները: Հարթակում կըդգրկվեն ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված պետական աջակցությամբ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ/համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերը, ՀՀ տարածքների տնտեսական ակտիվությունը խթանելու, տեղական և օտարերկրյա ներդրումներ ներգրավելու նպատակով մարզային ներդրումային ծրագրերը՝ այդ թվում «Իմ քայլը հանուն մարզի» համաժողովների շրջանակում ներկայացված, ՀՀ մարզերում առկա ռեսուրսների վերաբերյալ ամբողջական բազան:

**2.** ***Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***

ՀՀ տարածքների համաչափ զարգացմանը միտված հարթակի շահագործումը հնարավորություն կընձեռի ներկայացնել և գնահատել համայնքների համաչափ սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ պետության կողմից վարվող քաղաքականությունը, ենթակառուցվածքների և ՀՀ տարածքների համաչափ զարգացմանը միտված միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ/ համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերը, պատկերացում կազմել ՀՀ մարզերում առկա ռեսուրսային պոտենցիալի մասին՝ նպատակաուղղված գործունեություն ծավալելու համար, յուրաքանչյուր փոքր կամ սկսնակ գործարարին իր բիզնեսը ստեղծելու, վերագործարկելու, ընդլայնելու համար ներգրավել ֆինանսական միջոցներ, տեղեկանալ բիզնես գործունեության համար տրամադրվող պետական աջակցության գործող գործիքակազմի մասին: Բացի այդ, հարթակում «Իմ քայլը հանուն մարզի» համաժողովների շրջանակներում ներկայացվող ծրագրերի ներկայացումը և պարբերական թարմացումը կապահովի ացկացվող համաժողովների շարունակական արդյունքը երկարաժամկետ հեռանկարում:

**220**

**Վարչատարածքային բարեփոխումների շարունակականության ապահովում (220.1-220.3 միջոցառումներ)**

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Վարչատարածքային բարեփոխումներն ավարտին հասցնելու և լիազորությունների ապակենտրոնացման համար բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով՝ անհրաժեշտություն է առաջացել շարունակել համայնքների միավորման գործընթացը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժնով նախատեսված հանձնառություններից:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Մինչ այս պահը գործընթացն իրականացվել է 3 փուլով.

1-ին փուլ՝ թվով 22 համայնքի միավորման արդյունքում ձևավորվեց 3 համայնք,

2-րդ փուլ՝ թվով 118 համայնքի միավորման արդյունքում ձևավորվեց 15 համայնք,

3-րդ փուլ՝ թվով 325 համայնքի միավորման արդյունքում ձևավորվեց 34 համայնք:

Այսպիսով, ներկայումս Հայաստանում առկա է թվով 502 համայնք (մինչ միավորումը՝ 915), որից 52-ը՝ միավորված համայնքներ են:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Համայնքների միավորման հետագա ծրագրերն իրականացնելիս ավելի մեծ ուշադրություն և ժամանակ է տրամադրվելու շահառու համայնքների բնակչության իրազեկման աշխատանքներին, կազմակերպվելու են քննարկումներ, որոնց ընթացքում կպարզաբանվեն բնակչության կողմից բարձրացվող հարցերը, մտահոգությունները, միավորման գործընթացի արդյունքում ակնկալվող ձեռքբերումները, ինչպես նաև կներկայացվեն արդեն միավորված համայնքներում ֆինանսական նոր հնարավորությունները, ինչի արդյունքում հնարավոր կլինի ունենալ համապատասխան համայնքային կառույցներ, ենթակառուցվածքներ, որոնք էապես

| | |
|---|---|
| | կբարելավեն համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյուքում կապահովվի վարչատարածքային բարեփոխումների շարունակականությունը, ինչի ընթացքում 425-430 համայնքի միավորման արդյունքում կձևավորվի շուրջ 65-70 համայնք:<br>Միջոցառման իրականացումը լիազորությունների հետագա ապակենտրոնացման, համայնքի կառավարման արդյունավետության բարձրացման, ռեսուրսների համախմբման, առավել մրցակցային ավագանու ձևավորման, համայնքային ծրագրերի մշակման և իրականացման հնարավորությունների բարձրացման, բնակչությանը մատուցվող ծառայությունների քանակի ավելացման, որակի և մատչելիության բարձրացման կարևորագույն նախապայման կդառնա: |
| 221 | **Լիազորությունների ապակենտրոնացում (221.1-221.2 միջոցառումներ)**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումը հնարավորություն կընձեռի ծավալելու ապակենտրոնացման քաղաքականության խորացում և դրա արդյունքում տեղական ինքնակառավարման մարմիններին նոր լիազորությունների փոխանցում: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Լիազորությունների ապակենտրոնացման համար լուրջ խոչընդոտ էր հանդիսանում համայնքների մեծ թիվը և դրանց կարողությունների ցածր մակարդակը: Համայնքների միավորման և դրանց կարողությունների ամրապնդմանը միտված վարչատարածքային վերջին բարեփոխումներն արդեն ստեղծում են բավարար հիմքեր՝ լիազորությունների ապակենտրոնացում իրականացնելու համար:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականին տեղական ինքնակառավարման ոլորտում իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում համայնքների միավորումը հնարավորություն է ընձեռել խորացնելու լիազորությունների ապակենտրոնացման քաղաքականությունը՝ նոր կազմավորված բազմաբնակավայր համայնքներում տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահելով ավելի մեծ ծավալի լիազորություններ՝ մեծացնելով դրանց դերը հանրային կառավարման համակարգում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Օրենսդրորեն տեղական ինքնակառավարման մարմիններին կփոխանցվեն նոր լիազորություններ, ինչի արդյունքում կբարձրանան տեղական ինքնակառավարման արդյունավետությունը և բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների որակն ու մատչելիությունը: |
| 222 | **Համայնքների միավորմանը զուգընթաց՝ անցում տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգին (222.1-222.2 միջոցառումներ)**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015թ. փոփոխությունների 181-րդ հոդվածի 1-ին մասի՝ ընտրական օրենսգրքով կարող են սահմանվել համայնքի ղեկավարի ուղղակի կամ անուղղակի ընտրություն: Նշված սահմանադրական նորմի հիման վրա 25.05.2016թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանվեցին համայնքի ավագանու երկու տարբեր ընտրակարգեր: Համամասնական ընտրակարգ՝ որը վերաբերում է միայն Երևան քաղաքի և Գյումրի, Վանաձոր համայնքների ավագանիներին, և մեծամասնական ընտրակարգ, որը վերաբերում է Հայաստանի Հանրապետության մնացած բոլոր համայնքներին: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ընտրական օրենսգրքով, Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանիների մասով համամասնական ընտրակարգի անցումով պայմանավորված, համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարվեցին նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Մասնավորապես՝ 16.12.2016թ. |

| | |
|---|---|
| | ընդունված և 2017 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (նոր խմբագրությամբ) 5-րդ գլխով սահմանվեցին տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները Գյումրի և Վանաձոր համայնքներում: Վերը նշված գլխի շրջանակներում, ամրագրվեց նաև համայնքի ղեկավարի անուղղակի ընտրության կառուցակարգերը, այն է՝ համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավար ընտրելու մեխանիզմները:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է, որպեսզի նույն սկզբունքը, որը ընդունված է Երևան, Գյումրի և Վանաձոր համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման մասով, կիրառվի նաև 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքերում: Նախատեսվում է անցնել 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքի ավագանու ընտրության ամբողջական համամասնական ընտրակարգի և համապատասխանաբար համայնքի ղեկավարի ընտրության մասով՝ անուղղակի ընտրակարգի:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ղեկավարների մասով կգործի համայնքի ավագանու կողմից վերջինիս անվստահություն հայտնելու ինստիտուտը: Այն ոչ միայն կհանդիսանա որպես փոխզսպման մեխանիզմ ավագանու և համայնքի ղեկավարի փոխհարաբերություններում, այլև հնարավորություն կընձեռի լիարժեքորեն ապահովելու սահմանադրական նորմի իրացումը, այն է՝ «Համայնքի ղեկավարը պատասխանատու է համայնքի ավագանու առջև» (ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի 4-րդ մաս): 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում անցում կկատարվի համայնքի ավագանու ընտրության ամբողջական համամասնական ընտրակարգի, որով օրենսդրական մակարդակով համայնքի ներկայացուցչական մարմնի համար կընձեռվեն մրցակցային պայմաններ, կապահովվի լայն քաղաքական ներգրավվածություն և ուժերի հարաբերակցություն: Այն լրացուցիչ խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում՝ համայնքի ավագանու ինստիտուտի զարգացման մասով: |
| **223** | **Միջհամայնքային համագործակցության տարբեր ձևերի ներդրում (223.1-223.2 միջոցառումներ)**<br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 9-րդ գլխում նկարագրվում է միջհամայնքային համագործակցության ձևերից մեկը՝ միջհամայնքային միավորումները: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սակայն, առկա են միջհամայնքային համագործակցության այլ ձևեր ևս՝ ասոցիացիաներ, կոմիտեներ, աշխատանքային միություններ, հանրային-իրավական համաձայնություն, նպատակային միություններ, համատեղ վարչական մարմիններ և այլն:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 9-րդ գլուխը վերանվանել «Միջհամայնքային համագործակցություն» և ըստ այդմ այդ գլխում նկարագրել միջազգային պրակտիկայում առկա և միջհամայնքային համագործակցության Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և կառավարման համակարգին համապատասխանող ձևերը:<br>**2. Ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում՝ համայնքների համար օրենսդրորեն հնարավորություն կընձեռնվի ընտրելու իրենց առջև դրված նպատակներին համապատասխանող միջհամայնքային համագործակցության ձևեր: |
| **224** | **Միավորված բազմաբնակավայր համայնքներում տեղեկատվական համակարգերի ներդրում, քաղաքացիներին տրամադրվող վարչական ծառայությունների որակի բարելավում (224.1-224.2 միջոցառումներ)**<br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «6.1 Տարածքային կառավարումը և տեղական ինքակառավարումը» կետի՝ վարչատարածքային բարեփոխումներին վերաբերող ենթակետից («- կշարունակվեն |

միավորված բազմաբնակավայր համայնքներում կառավարման տեղեկատվական համակարգերի, «մեկ պատուհան» սկզբունքով քաղաքացիների սպասարկման գրասենյակների ներդրման աշխատանքները»):

**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Համայնքների միավորման պարագայում, ի թիվս այլ խնդիրների, անհրաժեշտություն է առաջանում քայլեր ձեռնարկել ՏԻՄ-երի կողմից տրամադրվող վարչական ծառայությունների որակի բարելավման և դրանք՝ միավորված բազմաբնակավայր համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի համար հավասարապես հասանելի ուղղությամբ:

Ներկա դրությամբ միավորված համայնքների թիվը հանրապետությունում 52 է: Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ) ներդրված է դրանցից 37-ում, քաղաքացիների սպասարկման գրասենյակներ ունեն միավորված համայնքներից 33-ը:

**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Միավորված համայնքներում ՀԿՏՀ-ի և ՔՍԳ-ների ներդրման նպատակը վարչական ծառայությունների որակի բարելավումն է, այդ ծառայությունների հասանելիության ընդլայնումը:

**2. Ակնկալվող արդյունքը**

2019 թվականի ընթացքում ՀԿՏՀ կներդրվի միավորված համայնքներից 15-ում, իսկ քաղաքացիների սպասարկման գրասենյակներ կհիմնվեն այդ համայնքներից առնվազն 6-ում:

Այդպիսով, 2019 թվականի ավարտին ներկայումս գործող բոլոր 52 միավորված համայնքները ապահովված կլինեն ՀԿՏՀ-ով և ՔՍԳ-ներ կունենան դրանցից առնվազն 39-ը: Մնացած՝ առավելագույնը 13 համայնքներում ՔՍԳ-ները կհիմնվեն 2020-2023թթ. ընթացքում:

ՀԿՏՀ-ի կիրառությունը հնարավորություն կտա միավորված համայնքին մեկ միասնական տեղեկատվական տարածության մեջ ներառել համայնքի կենտրոնի և բնակավայրերի վարչական ղեկավարների գրասենյակները՝ համայնքային ծառայությունները բնակիչների համար հավասարապես դարձնելով համայնքի բոլոր բնակավայրերում:

ՔՍԳ-ներում, «մեկ պատուհան, մեկ կանգառ» սկզբունքի կիրառման շնորհիվ, կբարելավվի քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը, կբարձրանա համայնքապետարանի աշխատանքի արդյունավետությունն ու թափանցիկությունը, կհեշտանան վարչական գործընթացները:

Ինչ վերաբերում է 2020-2023 թվականներին վերոնշյալ երկու ուղղություններով ակնկալվող վերջնական արդյունքներին, ապա դրանք կախված կլինեն վարչատարածքային բարեփոխումների հետագա ընթացքից և դրա արդյունքում ձևավորվելիք միավորված բազմաբնակավայր համայնքների թվից: Դրանց վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ վարչապետի աշխատակազմ կներկայացվի ՀՀ վարչապետի 2019 թվականի մարտի 14-ի N 244-Լ որոշմամբ հաստատված հավելվածով սահմանված կարգի 6-րդ կետին համապատասխան:

225 **Համայնքային ծառայության համակարգի զարգացում**

**225.1 «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**1.Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակ)**

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործընթացների դիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրներին լուծում տալու, ինչպես նաև սույն օրենքով և <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենքով սահմանված համանման գործընթացների համապատասխանեցման անհրաժեշտությամբ: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժնով նախատեսված հանձնառություններից:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործընթացների դիտարկման արդյունքներով բացահայտվել են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

- համայնքային ծառայության թափուր պաշտոնների համալրման գործընթացում օրենսդրությամբ սահմանված աշխատանքային փորձի չափանիշների կիրառման հարցում.
- պետական մարմիններին վերապահված լիազորությունը համայնքին պատվիրակելու հետևանքով

| | |
|---|---|
| | համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում ընդգրկված պաշտոնները Կառավարության կողմից նախատեսված լինելու դեպքում միավորվող համայնքներում  արտամրցութային կարգով համալրման հարցում.<br>**1.2 Առկա խնդիրների համար առաջարկվող լուծումները**<br>Վերոնշյալ խնդիրներին լուծում տալու համար առաջարկվում է «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ներկայացված օրենքի նախագծի նպատակը՝ «Համայնքային ծառայության մասին»  և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքներով սահմանված համանման գործընթացների համապատասխանեցումն է, ինչպես նաև համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործընթացների դիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրներին լուծում տալը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.**<br>Նախագծի ընդունմամբ ակնկալվում է.<br>- համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար սահմանված աշխատանքային փորձի չափանիշների վերանայում և համայնքային ծառայության պաշտոնների համալրման գործընթացի դյուրացում.<br>- պետական մարմիններին վերապահված լիազորությունը համայնքին պատվիրակելու հետևանքով համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում ընդգրկված պաշտոնները Կառավարության կողմից նախատեսված լինելու դեպքում արտամրցութային կարգով համալրելու հնարավորության ընձեռում:<br><br>225.***<u>2 Համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի կատարելագործում</u>***<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակ)**<br>Համայնքային ծառայողների վերապատրաստման կարիքների գնահատումը և դրա արդյունքներին համապատասխան  վերապատրաստման ծրագրի մշակումը պայմանավորված է համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների փոխանցման գործընթացի արդյունավետության բարձրացմամբ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս վերապատրաստման գործող ծրագրում ներառված են ընդհանուր թեմաներ, որոնց համաձայն իրականացվող վերապատրաստումները լիարժեքորեն չեն ապահովում համայնքային ծառայողների մասնագիտական վերապատրաստման կարիքները:<br>**1.2 Առկա խնդիրների համար առաջարկվող լուծումները**<br>Վերոնշյալ խնդիրներին լուծում տալու համար առաջարկվում է գնահատել համայնքային ծառայողների վերապատրաստման կարիքները և դրանց արդյունքներին համապատասխան  մշակել վերապատրաստման ծրագիր:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Համայնքային ծառայության վերապատրաստման գործընթացի կատարելագործու :<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Համայնքային ծառայողների վերապատրաստման միջոցով համայնքային ծառայողների մասնագիտական կարողությունների կատարելագործում,  ինչը կապահովի համայնքների զարգացման ռազմավարական խնդիրների արդյունավետ իրականացումը: |
| **226** | **Բնակչության  համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ ապահովելու նպառակով Հայաստանի Հանրապետության բնակավայրերում աղբահանության  և կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավում**<br><br>**226. 1 «Աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում  լիազոր մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**<br>**1.  Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» |

| | |
|---|---|
| | Հայաստանի Հանրապետության օրենքի 4. 2 հոդվածի դրույթների կատարմամբ: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**1. 1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանվում են աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում: «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված են տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները թափոնների գործածության ոլորտում: «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված են տարածքային կառավարման մարմինների լիազորություններն ու իրավասությունները այդ բնագավառում:<br>Սակայն հաշվի առնելով ներկայումս հանրապետությունում առկա աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների ցածր որակը և դրանց ընդգրկվածության ծավալները, ինչպես նաև այն փաստը, որ անարդյունավետ ինստիտուցիոնալ դաշտի, ֆինանսական հոսքերի և ներդրումների ոչ համակարգված կիրառումը հանգեցրել են աղբահանության և սանիտարական մաքրման անարդյունավետ համակարգի՝ բնագավառի համակարգված և միասնական քաղաքականության վարման անհրաժեշտություն է առաջանում:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների ցածր մակարդակը, դրա հետ կապված սոցիալական, բնապահպանական և ընդհանուր սանիտարական խնդիրները, անհրաժեշտություն է առաջանում ՀՀ բնակավայրերի աղբահանության և սանիտարական մաքրման, կոշտ կենցաղային թափոնների կառավարման բնագավառում պետական միասնական և համակարգված քաղաքականության գերակայությունների ձևավորման, հիմնական սկզբունքների և ուղղությունների սահմանման և ոլորտում պետական-տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման:<br>Աղբահանության և սանիտարական մաքրման բնագավառի պետական լիազոր մարմնի ճանաչումը հնարավորություն կտա հանրապետությունում կիրառել աղբահանության և սանիտարական մաքրման արդյունավետ, համակարգված և միասնական քաղաքականություն: Մասնավորապես. հնարավորություն կընձեռվի կանոնակարգել նորմատիվա-իրավական դաշտը, մշակել աղբահանության կառավարման մոդելներ, բնակավայրերի աղբահանության և սանիտարական մաքրման «խելացի» սխեմաներ, աղբավայրերի շահագործման, նոր աղբավայրերի նախագծման ու շինարարության, բարելավել պայմանագրային դաշտը, սահմանել և վերահսկել բնագավառում ներգրավված անձնաց գործունեության պայմանները և ոչ պատշաճ գործունեություն իրականացնելու դեպքում կիրառել հարկադրանքի միջոցներ, ինչպես նաև ձևավորել մշտադիտարկման միասնական համակարգ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման կատարման արդյունքում ակնկալվում է բարելավել հանրապետության աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակը, ձևավորել բնագավառում կայուն կառավարման համակարգ, ապահովել հանրապետության բոլոր համայնքների ընդգրկումը կազմակերպված աղբահանության և սանիտարական մաքրման համակարգում, ինչպես նաև կատարելագործել ոլորտի նորմատիվատեխնիկական դաշտը ու ներդնել բնագավառում պետական կառավարման, վիճակագրական հաշվառման և մոնիթորինգի միասնական համակարգ:<br><br>**226. 2 ՀՀ բնակավայրերում աղբահանության ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրման մակարդակի բարձրացում, այդ թվում՝ ՀՀ բոլոր համայնքների ներգրավում աղբահանության համակարգում, տնտեսվարող սուբյեկտների հետ աղբահանության ծառայությունների մատուցման իրավա-պայմանագրային դաշտի կանոնակարգում:**<br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթների կատարմամբ: Դա բխում է նաև ՀՀ |

| | |
|---|---|
| | Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**1. 1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման համակարգը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, մասնավորապես՝<br>-կազմակերպված աղբահանություն իրականացվում է հանրապետության քաղաքային համայնքներում և մի շարք քաղաքամերձ գյուղական համայնքներում: Գյուղական համայնքների զգալի մասում կազմակերպված աղբահանություն չի իրականացվում:<br>- ցածր է մատուցվող ծառայությունների որակը և հանրային իրազեկման մակարդակը<br>-ոչ բոլոր տնտեսվարող սուբյեկտներն են աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքում և այլն:<br>2018 թվականին ՀՀ մարզերում աղբահանության և սանիտարական մաքրման ուղղությամբ կատարված ծախսերը կրկնակի անգամ ավել են քան աղբահանության ծառայությունների դիմաց հավաքագրված վարձավճարները:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է բարելավել հանրապետության բոլոր մարզերում աղբահանության ծառայությունների որակը՝ աղբահանության համակարգում ընդգրկելով ՀՀ բոլոր բնակավայրերը: Բարելավել հանրապետության բոլոր համայնքների աղբահանության եկամուտների և ծախսերի ցուցանիշները, աղբահանության համակարգում ընդգրկել աղբ առաջացնող բոլոր սուբյեկտներին և բարելավել իրավապայմանագրային հարաբերությունները:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է բարձրացնել ՀՀ համայնքներում մատուցվող աղբահանության ծառայությունների որակը, ապահովել աղբահանության ինքնածախսածակող համակարգի ինչի դեպքում աղբահանության գծով եկամուտների ավելացմամբ և աղբահանության ծախսերի հստակեցամբ համայնքային բյուջեներից խնայվող ֆինանսական զգալի միջոցներ կուղղվեն համայնքների զարգացմանման ուղղված կապիտալ այլ ծախսերին:<br><br>**226. 3 Աղբահանության համակարգի ռազմավարության մշակում**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)**<br><br>Միջոցառման կատարումը բխում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4. 1 և 4. 2 հոդվածներից և անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ տարածքներում բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովմամբ:<br><br>**1. 1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հանրապետության բնակավայրերում չի գործում կազմակերպված աղբահավաքություն: Եթե քաղաքային համայնքներում աղբը ինչ որ կերպ հավաքվում է, ապա գյուղական շատ համայնքներում այն չի իրականացվում, կամ իրականացվում է շաբաթը մեկ կամ երկու շաբաթը մեկ, ինչը բացասական ազդեցություն է թողնում շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա: Համայնքային միջոցների սղությունն ու մասնավոր հատվածի կողմից հետաքրքրվածության բացակայությունը բավարար չեն բարձրորակ ծառայություններ մատուցելու համար, իսկ ֆոնդային միջոցների բացակայությունը պատճառ է ներդրումների բացակայության:<br>Բացակայում են նվազագույն չափանիշներին համապատասխանող աղբավայրերը: Բնակավայրերում տարիների ընթացքում ստեղծվել են կամ տարերայնորեն ձևավորվել են բազմաթիվ աղբավայրեր և աղբանոցներ, որոնք զբաղեցնում են զգալի տարածքներ և առաջացնում են լուրջ բնապահպանական և սանիտարական խնդիրներ: Պրակտիկայում կենցաղային աղբը թափվում է աղբի համար նախատեսված վայրերից դուրս՝ պատահական վայրերում՝ բակային տարածքներում, այգիներում, բանջարանոցներում, ավտոճանապարհների եզրերին, ձորերում, գետափերին՝ առաջացնելով հողերի, մակերևութային և ստորգետնյա ջրերի, մթնոլորտային օդի ախտոտման ռիսկեր: |

| | |
|---|---|
| | Բացակայում են նաև աղբի տեսակավորման և վերամշակման ենթակառուցվածքները, բացառությամբ մի քանի օրինակների:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է մշակել հանրապետության բոլոր բնակավայրերում աղբի հավաքման, հեռացման և անվնաս տեղադրման կամ վերամշակման սխեմաները, հաշվի առնելով հանրապետությունում գոյացող աղբի քանակն ու տեսակը՝ ըստ տարածքների, և ներդնել կոշտ կենցաղային թափոնների վերամշակման մեխանիզմները:<br>հաշվի առնելով, որ Հայաստանի աղբավայրերի մեծ մասը չի համապատասխանում սանիտարահիգիենիկ և բնապահպանական պահանջներին և հետևաբար անպատշաճ շահագործման հետևանքով գրեթե բոլոր աղբավայրերում տեղի է ունենում թափոնների տարերային այրում, նախատեսվում է միջոցներ ձեռնարկել նման աղբանոցների փակման կամ բարելավման ուղղությամբ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման կատարման արդյունքում ակնկալվում է ունենալ ռազմավարություն՝ նպատակաուղղված՝ ՀՀ տարածքներում բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովմանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա կոշտ կենցաղային թափոնների բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցմանը, ինչպես նաև բնապահանական և տնտեսական տեսանյունից թափոնների վերամշակման արդյունավետ համակարգի ներդրմանը: |
| **227** | **Համայնքների վարչական տվյալների շտեմարանի զարգացում**<br>**(227.1-227.2 միջոցառումներ)**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)**<br>Վարչական տվյալների շտեմարանի ձևավորման համար մշակվել է նոր հարցաշար, որի համաձայն համայնքներից արդեն ստացվում են համապատասխան տեղեկություններ՝ ըստ համայնքներում ընդգրկված յուրաքանչյուր բնակավայրի: Համայնքների վարչական տվյալների շտեմարանի ձևավորումը հնարավորություն կստեղծի շահագրգիռ կողմերին կատարել ոլորտային վերլուծություններ: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**2.Ակնկալվող արդյունքը**<br>Համայնքների վարչական տվյալների շտեմարանի ձևավորմամբ, ըստ բնակավայրերի, կիավաքագրվի մեծածավալ տեղեկատվություն, որը կօգտագործվի ոլորտում անհրաժեշտ ուսումնասիրություններ և վերլուծություններ կատարելու գործում: |
| **228** | **Ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում տեղակայված առևտրի կետերում, այդ թվում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում առկա սանիտարական հանգույցների վիճակի բարելավման ուղղությամբ շարունակականության գործընթացների ապահովում**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)**<br>Ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում տեղակայված առևտրի կետերում առկա բազմաթիվ հասարակական զուգարաններ գտնվում են ոչ բարվոք վիճակում, ինչը որոշ դեպքերում հանգեցնում է դրանցից օգտվելու անհնարինության: Ներկայացված պատկերը խոչընդոտում է նաև զբոսաշրջության զարգացմանը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**2. Ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման կատարման արդյունքում Ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում տեղակայված առևտրի կետերում կլինեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համպատասխանող հասարակական զուգարաններ: Միջոցառման կատարման ընթացքում կքննարկվի նաև հասարակական զուգարանների նկատմամբ օրենսդրական նոր պահանջներ նախատեսելու հարցը, որի նպատակահարմարության դեպքում կմշակվի և շրջանառության մեջ կդրվի իրավական ակտերի նախագծերի փաթեթ: |

| | |
|---|---|
| 229 | **Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության վերանայում՝ հաշվի առնելով ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ճանապարհային քարտեզի դրույթներին ու ՀՀ կառավարության միջազգային համագործակցության ծրագրերին համապատասխանության անհրաժեշտությունը**<br><br>**229.1 Հայաստանի Հանրապետության 2020-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)**<br>Միջոցառման կատարումը բխում է Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ճանապարհային քարտեզի դրույթներին ու ՀՀ կառավարության միջազգային համագործակցության ծրագրերին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.1 բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է վերլուծել ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ճանապարհային քարտեզի դրույթներն ու ՀՀ կառավարության միջազգային համագործակցության ծրագրերը և վերանայել Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման գործող ռազմավարությունը՝ դրանում նկարագրելով վերը նշված փաստաթղթերին համահունչ ուղղություններ և գործիքակազմ:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման կատարման արդյունքում կապահովվի ռազմավարության և վերը նշված փաստաթղթերի տրամաբանական կապը և դրանով հանդերձ՝ տարածքային զարգացման անհամաչափությունները մեղմելուն ուղղված փոխկապակցված միջոցառումների պլանավորումն ու իրականացումը: |
| 230 | **Աղտոտված, ինչպես նաև դեգրադացված հողերի վերականգնում**<br>**230.1 Աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի արդյունքների հիման վրա հողերի վերականգնման միջոցառումների մշակում և իրականացում**<br><br>***1. Միջոցառման իրակացման անհրաժեշփությունը և նպափակը***<br>Հողերի վիճակի ուսումնասիրության, գնահատման և դրա փոփոխության ժամանակին բացահայտման (աղտոտվածության մոնիթորինգը) անհրաժեշտությունը բխում է ՀՀ հողային օրենսգրքի 32-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 19.02.2009թ.-ի N 276-Ն դրույթներից: Աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի արդյունքների հիման վրա հողերի վերականգնման միջոցառումների մշակման և իրականացման արդյունքում ակնկալվում է աղտոտված, դեգրադացված հողերի ընդհանուր մակերեսների կրճատում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի իրականացման անհրաժեշտությունը ամրագրված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4.8 գլխում՝ որպես շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություն, ինչպես նաև Կառավարության 22.03.2018թ.-ի N 11 արձանագրային որոշմամբ հաստատված շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ն միջոցառումների 2018-2022 թվականների ծրագրում:<br>Հողային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակման և իրականացման արդյունքում իրականացվող մոնիթորինգի արդյունքների հիման վրա կիրականացվեն հողերի վերականգնման միջոցառումներ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Իրականացված մոնիթորինգի տեղեկատվության հավաքարման, գրանցման արդյունքներով կմշակվեն և կիրականացվեն հողերի վերականգնման միջոցառումներ:<br>***2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Միջոցառման իրականացման արդյունքում կկրճատվեն աղտոտված, դեգրատացված հողերի ընդհանուր |

| | |
|---|---|
| | մակերեսները: |
| 231 | **Տեղական հարկերի, տուրքերի և վճարների վճարման համակարգի ընդլայնում**<br>**231.1 Տեղական հարկերի, տուրքերի և վճարների վճարման դիվերսիֆիկացված համակարգի ներդրում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման նպատակն է մշակել և ներդնել էլեկտրոնային գործիքներ, որոնց միջոցով քաղաքացիները հնարավորություն կունենան առանց համայնքապետարաններ այցելելու կատարել տեղական հարկերի, տուրքերի և վճարների մասով ունեցած իրենց պարտավորությունները:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրումն իրականացվում է ավելի քան 400 համայնքապետարաններում շահագործվող էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ: Այս պարագայում, տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ ունեցած իրենց ֆինանսական պարտավորությունների կատարման նպատակով համապատասխան անձինք ստիպված են այցելելու համայնքապետարան:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է մշակել և ներդնել էլեկտրոնային գործիքներ, որոնք հնարավորություն կընձեռեն համայնքային ծառայություններից օգտվող քաղաքացիներին՝ տեղական հարկերի, տուրքերի և վճարների մասով իրենց ունեցած վճարումներն իրականացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ առանց համապատասխան համայնքապետարան այցելելու:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Տեղական հարկերի, տուրքերի և վճարների վճարման համակարգի հասանելիության ընդլայնում: |
| 232 | **Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ընդունման մեխանիզմների Շարունակական կատարելագործում**<br><br>**232. 1 «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը**<br>«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի կիրարկման ընթացքում ի հայտ են եկել մի շարք բացեր, որոնք խոչընդոտում են Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ընդունման և միջազգային պաշտպանությնա տրամադրման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7-րդ բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**Միջոցառման իրականացման նպատակը**<br>Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ընդունման իրավական հիմքերի կատարելագործումը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս օրենքի կարգավորումները գործնական որոշակի խնդիրներ են առաջացնում: Մասնավորապես, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով այն դեպքում, երբ ապաստան հայցողը չի բավարարում փախստականի սահմանմանը, սակայն նրա նկատմամբ կիրառելի է չվերադարձելիության սկզբունքը, այսինքն՝ ծագման երկիր վերադառնալու դեպքում իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում կենթարկվի դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների, բացակայում է ապաստան հայցողին արդյունավետ պաշտպանության մեխանիզմները և լիազոր մարմնի լիազորությունները այս հարցում հստակ չեն: Գործնականում խնդիրներ են առաջանում նաև Ազգային անվտանգության ծառայության կողմից տրամադրվող եզրակացության առնչությամբ, ուստի անհրաժեշտ է ավելի արդյունավետ կառուցակարգ մշակել Միգրացիոն ծառայության և ԱԱԾ-ի միջև փոխշահավետ համագործակցության ապահովման համար:<br>Բավականին խնդրահարույց է նաև ապաստան հայցողների հատուկ կարիքների բացահայտումը հենց |

ապաստանի դիմում ներկայացնելու ժամանակ: Ժամանակին հատուկ կարիքների չբացահայտումը խոչընդոտներ է առաջացնում վարչական վարույթի պատշաճ իրականացման համար:

Գործնականում խնդիրներ են ծագում նաև ապաստան հայցողների կամավոր վերադարձի դեպքում հարուցված վարչական վարույթի ավարտման հետ:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է չվերադարձնելիության սկզբունքի կիրառելիության, սակայն փախստականի կարգավիճակի տրամադրման մերժման դեպքում սահմանել ապաստան հայցողին ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ տրամադրելու հնարավորությունը:

Օրենքով հստակեցնել ԱԱԾ լիազորությունները և վերջինիս կողմից տրամադրվող եզրակացության ներկայացվող պահանջները:

Ապաստանի հայց ներկայացվելու դեպքում ապաստան հայցողները նախնական պարտադիր բուժզննում անցնեն վերջիններիս հատուկ կարիքները բացահայտելու համար:

Օրենքում անհրաժեշտ է համակողմանի կարագավորել ապաստանի հայցով վարչական վարույթի կարճման և կասեցման հիմքերը, մասնավորապես ապաստան հայցողի կամավոր վերադարձի դեպքում:

Անհրաժեշտ է վերանայել արագացված կարգով քննվող գործերի իրավակարագավորումները, որը կնպաստի գործնականում արագացված ընթացակարգով արդյունավետ վարույթ ի իրականացմանը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի կիրարկման ընթացքում ի հայտ եկած բացերը վերացված են:

**232.2. ժամանակավոր տեղավորման նոր կենտրոնի գործունեության վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում,** որով կսահմանվեն նոր կենտրոնի կողմից իրականացվելիք գործառույթները, ուղղված ապաստան հայցողների տեղավորմանը և նրանց կենսաապահովման հետ կապված հարցերի լուծմանը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Կառուցված և կահավորված է ապաստան հայցողների համար ժամանակավոր տեղավորման նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխան կենտրոն :

**232. 3 Ապաստան հայցողների համար նախատեսված ժամանակավոր տեղավորման նոր կենտրոնի կառուցում, կահավորում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը**

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողները մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելը տեղավորվում են ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որն այդ նպատակով ստեղծված հատուկ հաստատություն է: Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորված ապաստան հայցողներին տրամադրվում են կենսաապահովման պայմաններ՝ համաձայն օրենքի 24-րդ հոդվածի: Ներկայիս գործող կացարանը նախատեսված է 45 անձի համար և գտնվում է Երևանի համեմատաբար խիտ բնակեցված թաղամասում: Սիրիական ճգնաժամը և այլ երկրներից ապաստան հայցողների շարունականան հոսքը ցույց է տալիս, որ նրանց ընդունելու համար եղած հնարավորությունը խիստ անբավարար է: Վերջին հինգ տարիների ընթացքում ՀՀ-ում ստացված ապաստանի հայցերի վիճակագրությունը փաստում է որ միջին հաշվով տարեկան 200 անձ դիմում է ՀՀ իշխանություններին ապաստանի խնդրանքով:

**Միջոցառման իրականացման նպատակը**

Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնի ընդունման հնարավորության համապատասխանեցումը առկա պահանջարկի հետ, ապաստան հայցողների տրամադրվող կենսապահովման պայմանների բարելավումը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային չափանիշների հետ:

**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի քաղաքային համայնքի կողմից ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայությանը 2017թ. թվականի սեպտեմբեր ամսին Աբովյան քաղաքում հատկացվել է 2,0 հեկտար հողատարածք՝ ժամանակավոր տեղավորման նոր կենտրոնի կառուցման նպատակով: Միգրացիոն քաղաքականության

զարգացման միջազգային կենտրոնի (ՄՔԶՄԿ) հայաստանյան գրասենյակը «Աջակցություն Հայաստանին միգրացիայի և սահմանների կառավարման ոլորտներում» ծրագրի շրջանակներում մշակել է ժամանակավոր տեղավորման նոր կենտրոնի ստեղծման նախագծային-նախահաշվային փաստաթուղթը: Կենտրոնի շինարարության նպատակով Դանիայի կառավարությունը ՄՔԶՄԿ-ին է փոխանցել 800 . 000 եվրո, իսկ Հոլանդիայի կառավարությունը՝ 400. 000 եվրո: ՄԱԿ ՓԳՀ-ի հայաստանյան գրասենյակը հանձն է առել շենքի ամբողջ կահավորման ծախսերը՝ 80. 000 դոլլարի չափով: Ինտենսիվ աշխատանքներ են տարվում շինարարության համար անհրաժեշտ մնացած գումարը դոնոր այլ աղբյուրներից հայթայթելու ուղղությամբ:

**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՄՔԶՄԿ հայաստանյան գրասենյակի կողմից կենտրոնի շինարարության համար 2019թ. մարտին հայտարարված մրցույթի արդյունքների ամփոփումից հետո, կսկսվեն բուն շինարարարական աշխատանքները: Զուգահեռ աշխատանքներ կտարվեն շինարարության համար պակասող գումարը հայթայթելու նպատակով:

**233** **Հայաստանի Հանրապետություն վերադարձող քաղաքացիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված ու երկարաժամկետ իմիգրանտների ինտեգրման միասնական քաղաքականության մշակում**

**233.1 «Հայաստանի Հանրապետություն վերադարձող քաղաքացիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված ու երկարաժամկետ իմիգրանտների ինտեգրման միասնական քաղաքականության ռազմավարության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում**

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը**

ՀՀ կառավարության 2017 թ.-ի օգոստոսի 31-ի նիստի թիվ 37 արձանագրային որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրով» նախատեսվում է 2019 թվականին մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման ապահովմանն ուղղված հայեցակարգ:

Սույն հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը բխում է այն իրողությունից, որ այսօր գոյություն չունի Հայաստանում վերադարձող միգրանտների վերաինտեգրմանն ուղղված համապարփակ քաղաքականություն, չեն իրականացվում պետական նպատակային ծրագրեր, ինչպես նաև իրավասու պետական մարմինների համար սահմանված հստակ գործառույթներ չկան: Գործում են վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված որոշ ծրագրեր, որոնք իրականացվում են հիմնականում հասարակական կազմակերպությունների կողմից՝ գլխավորապես միջազգային կառույցների և միգրանտներին վերադարձնող երկրների ֆինանսավորմամբ, որոնց երբեմն մասնակցում են նաև պետական կառավարման որոշ մարմիններ: Այդպիսի ծրագրերը, սակայն, շարունակական բնույթ չեն կրում: Բաց է մնում նաև այս ուղղությամբ տարբեր կառույցների կողմից իրականացվող աշխատանքների համակարգման հարցը, ինչը բացասաբար է անդրադառնում ոչ միայն պետական մարմինների, այլև այդ ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների գործունեության ու համագործակցության վրա: Տարբեր են նաև իրականացվող ծրագրերի միջոցով տրամադրվող աջակցող ծառայությունների փաթեթները:

Մյուս կողմից վերջին տարիներին նկատվում է Հայաստանում տարբեր նպատակներով բնակություն հաստատող օտարերկրացիների թվի աճ, և դրանով իսկ մեր պետությունը բացառապես էմիգրանտների ծագման երկրից վերածվում է նաև իմիգրանտներ ընդունող երկրի: Այս անձանց խնդիրներին լուծում տալու նպատակով ՀՀ կառավարությունը 2016թ. հուլիսի 21-ի թիվ 28 արձանագրային որոշմամբ ընդունել է ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկրաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգը, 2017թ. փետրվարի 23-ի թիվ 8 արձանագրային որոշմամբ էլ հաստատել է հայեցակարգի կիրարկման ուղղված գործողությունների ծրագիրը:

Ըստ էության, ինչպես Հայաստան վերադարձողների, այնպես էլ ՀՀ-ում գտնվող օտարերկրացիների ինտեգրման նպատակով իրականացվելիք միջոցառումները նույնն են լինելու՝ հայոց լեզվի ուսուցում, քաղաքացիական կողմնորոշման դասընթացների կազմակերպում, կացարանի խնդրի լուծում և տնտեսական

| | |
|---|---|
| | ինտեգրում՝ զբաղվածության ապահովման ճանապարհով: Հարաբերությունները ուրվագծվելու են միասնական հայեցակարգի ԳԾճներում ՝ ըստ թիրախային խմբերի: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7-րդ բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**Միջոցառման իրականացման նպատակը**<br>Հայաստանի Հանրապետություն վերադարձող քաղաքացիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված ու երկարաժամկետ իմիգրանտների ինտեգրման քաղաքականության միասնականացումն ու հստակեցումը:<br>Միջոցառման իրականացման համար հիմք է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նախատեսվում էր 2019 թվականին մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման ապահովմանն ուղղված հայեցակարգ:<br>Մյուս կողմից առկա է ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկրաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգ:<br>Հաշվի առնելով այն հանգամանքը որ ինչպես Հայաստան վերադարձողների, այնպես էլ ՀՀ-ում գտնվող օտարերկրացիների ինտեգրման նպատակով իրականացվելիք միջոցառումները նույնն են լինելու՝ հայոց լեզվի ուսուցում, քաղաքացիական կողմնորոշման դասընթացների կազմակերպում, կացարանի խնդրի լուծում և տնտեսական ինտեգրում՝ զբաղվածության ապահովման ճանապարհով. խնդիր է դրվում մշակել մեկ միասնական փաստաթղութ որն ուղղված կլինի վերոհիշյալ բոլոր խմբերի ինտեգրման կարիքների բավարարմանը:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է ունենալ մեկ ռազմավարական փաստաթուղթ, որը կունենա գործողությունների երեք ծրագիր՝ առաջինն ուղղված Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների, երկրորդը ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկրաժամկետ միգրանտների ինտեգրմանը, իսկ երրորդ ծրագիրը՝ հատուկ սիրահայերի համար:<br>Միջոցառման համակատարողներն են՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունները, ՀՀ ոստիկանությունը որոնք անդամակցում են ռազմավարության մշակման նպատակով ստեղծված աշխատանքային խմբին, և պետք է մասնակցեն նախագծի մշակմանը՝ յուրաքանչյուրն իր մարմնի գործառույթներին առնչվող մասով:<br>Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ) փաստաթղթի մշակման նպատակով վարձելու է տեղացի փորձագետ, իսկ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը (OSCE ODHIR)ոլորտի միջազգային փորձը ներկայացնելու նպատակով միջազգային փորձագետ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ամբողջացված է Հայաստանի Հանրապետություն վերադարձող քաղաքացիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած և փախստական ճանաչված ու երկարաժամկետ իմիգրանտների ինտեգրման ուղղությամբ պետության կողմից վարվող քաղաքականությունը: |
| **234** | **Դեպի Հայաստան ուղղված իմիգրացիոն հոսքերիկառավարմանն ու կանոնակարգմանն ուղղված իմիգրացիոն ամբողջական քաղաքականության մշակում**<br><br>**234. 1 «Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 23-ի թիվ 12 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի մշակում**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը**<br>Վերջին շրջանում արձանագրվում է դեպի Հայաստան ուղղված իմիգրացիոն հոսքերի աճ, մասնավորապես |

աշխատանքի նպատակով: Անհրաժեշտ է ունենալ այդ հոսքերի կառավարմանն ու կանոնակարգմանն ուղղված իմիգրացիոն ամբողջական քաղաքականություն՝ նկատի ունենալով նաև այդ համատեքստում երկրի ազգային անվտանգությանը սպառնացող վտանգները չեզոքացնելու անհրաժեշտությունը: Նաև անհրաժեշտ է այդ քաղաքականությունը ներառել Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 ռազմավարության մեջ: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7-րդ բաժնով նախատեսված հանձնառություններից:

**Միջոցառման իրականացման նպատակը**

Իմիգրացիայի ոլորտի պետական քաղաքականության մշակում, որում ներառված կարգավորումները համարժեք են այս ոլորտում պետության առջև կանգնած մարտահրավերներին, մասնավորապես կապված սոցիալ-տնտեսական զարգացման, ժողովրդագրության, ազգային անվտանգության խնդիրների հետ:

Միջոցառման իրականացման համար հիմք է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը:

**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի մարտի 23-ին ընդունված Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 ռազմավարությունը Հայաստանի միգրացիոն քաղաքականության սահմանման 4-րդ հիմնարար փաստաթուղթն է 2000 թվականից ի վեր: Այս փաստաթղթում ներառված են են 8 հիմնորոշ ուղղություններ որոնք պետք է իրականացվեն 78 միջոցառումների միջոցով: Եվս մեկ՝ 9-րդ ուղղությունը վերաբերում է ռազմավարության մոնիթորինգին և գնահատմանը: Փաստաթուղթը չի անդրադառնում իմիգրացիոն քաղաքականության հետ կապված խմդիրներին, մինչդեռ ռազմավարության ընդունումից՝ 2017թ. -ից հետո ի հայտ են եկել նոր իրողություններ՝ աշխուժացել են դեպի ՀՀ ուղղված իմիգրացիոն հոսքերը՝ իրենց հետ բերելով բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է պետության կողմից համապատասխան կարգավորող մեխանիզմների մշակում և ներդրում:

**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 ռազմավարությունը լրացնել նոր ուղղությամբ, որը կվերաբերի իմիգրացիոն քաղաքականությանը:

Միջոցառման համակատարողներն են՝ ՀՀ ոստիկանությունը, ազգային անվտանգության ծառայությունը, արտաքին գործերի,կրթության և գիտության, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները, որոնք պետք է մասնակցեն նախագծի մշակմանը՝ յուրաքանչյուրն իր մարմնի գործառույթներին առնչվող մասով:

Միգրացիոն քաղաքականության միջազգային կենտրոնը ստանձնել է նախագծի մշակման նպատակով փորձագետ վարձելու պարտավորությունը, իսկ հասարակական կազմակերպությունները իրենց մասնակցությունը կունենան նախագծի հանրային քննարկման փուլում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Մշակված են Հայաստան մուտք գործող օտարերկրացիների ազատ և անվտանգ տեղաշարժը ապահովող՝ երկրի ազգային անվտանգության պահպանման շահերի հետ հավասարակշռված քաղաքականության հիմնադրույթները, որոնք արտացոլված են Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարության մեջ

**234.2 «Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 31-ի թիվ 37 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի մշակում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը**

Դեպի Հայաստան ուղղված իմիգրացիոն հոսքերի կառավարմանն ու կանոնակարգմանն ուղղված իմիգրացիոն քաղաքականության կիրարկումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է մշակել համապատասխան միջոցառումների ծրագիր և այն ներառել Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրում: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ

| | |
|---|---|
| | հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7-րդ բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**Միջոցառման իրականացման նպատակը**<br>Հայաստան ուղղված իմիգրացիոն հոսքերի կառավարմանն ու կանոնակարգմանն ուղղված իմիգրացիոն քաղաքականության կիրարկման ապահովումը:<br>Միջոցառման իրականացման համար հիմք է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրում ներառված են են 9 հիմնորոշ ուղղություններով իրականացվելիք միջոցառումներ: Միջոցառումների ծրագրում առկա չեն իմիգրացիոն քաղաքականության կիրարկման ապահովմանն ուղղված միջոցառումներ:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիրը լրացնել նոր ուղղությամբ, որը կվերաբերի իմիգրացիոն քաղաքականության կիրարկմանը:<br>Միջոցառման համակատարողներն են ՀՀ ոստիկանությունը, ազգային անվտանգության ծառայությունը, արտաքին գործերի, կրթության և գիտության, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները, որոնք պետք է մասնակցեն նախագծի մշակմանը՝ յուրաքանչյուրն իր մարմնի գործառույթներին առնչվող մասով:<br>Միջազգային կազմակերպությունները կմասնակցեն նախագծի մշակմանը իրենց մանդատի շրջանակներում, իսկ հասարակական կազմակերպությունները ՝ նախագծի հանրային քննարկման փուլում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Սահմանված են դեպի Հայաստան ուղղված իմիգրացիոն հոսքերի կառավարմանն ու կանոնակարգմանն ուղղված կոնկրետ գործողությունները, որոնք ներառված են Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրում: |
| 235 | **Արտագնա աշխատանքի մեկնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով, մուտքի երկրների պատկան մարմինների հետ համագործակցության հաստատում, ներգրավելովայդ երկրներում գործող սփյուռքի կառույցները**<br><br>**235. 1 ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում՝ մուտքի, այդ թվում ԵԱՏՄ անդամ պետությունների միգրացիոն օրենսդրության վերաբերյալ**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը**<br>Հայաստանից սկիզբ առնող միգրացիոն հոսքերը հիմնականում ունեն աշխատանքային բնույթ: Ռուսաստանի Դաշնությունը հանդիսանում է Հայաստանի աշխատանքային միգրացիոն հոսքերի հիմնական նպատակակետ երկիրԸ: Միևնույն ժամանակ, վերջին շրջանում նկատվում են նաև դեպի այլ երկրներ ուղղված հոսքեր, և այդ երկրներից հիմնականը Չինաստանն է:<br>Վերոհիշյալ երկրներում ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների իրավունքների պաշտպանության բաղադրիչներից մեկը մուտքի երկրների միգրացիոն և աշխատանքային օրենսդրության վերաբերյալ ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների շրջանում տեղեկատվության տարածումն է:<br>Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7-րդ բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**Միջոցառման իրականացման նպատակը**<br>ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների իրազեկվածության մակարդակի բարձրացում մուտքի, այդ թվում՝ ԵԱՏՄ անդամ պետությունների միգրացիոն օրենսդրության վերաբերյալ:<br>**1. 1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված |

միջոցառումներ իրականացվել են նաև միգրացիայի կարգավորման քաղաքականության նախորդ հայեցակարգերիշրջանակներում: Մասնավորապես 2015թ.-ից հետոկազմակերպված տեղեկատվական արշավները հիմնականում ուղղված են եղել «Եվրասիական տնտեսական միության» մասին պայմանագրի աշխատանքային միգրացիայի վերաբերյալ դրույթների պարզաբանմանը:
Այդ թեմաներով պատրաստվել են տասնյակ հեռուստատեսային, ռադիո և մուլտիմեդիա լրագրողական նյութեր, ԶԼՄ-ների համար կազմակերպվել մրցույթներ:

ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների իրազեկվածության մակարդակի բարձրացման խնդիրը այսօր էլ շարունակում է մնալօրակարգային, քանի որ մուտքի երկրների և հատկապես Ռուսաստանի Դաշնության միգրացիոն օրենսդրությունը պարբերաբար փոփոխությունների է ենթարկվում և ՀՀ քաղաքացիների կողմից դրանց չիմացությունը հանգեցնում է անցանկալի հետևանքների՝ ընդհուպ մինչև ՌԴ-ից արտաքսում և մուտքի արգելում: Մյուս կողմից, մեր քաղաքացի աշխատանքային միգրանտների կողմից վերջին շրջանում որպես աշխատանքային միգրացիայի ուղղություն ընտրվող Չինաստանի պարագայում առկա է այդ երկրի միգրացիոն և աշխատանքային օրենսդրությունը ուսումնասիրելու և դրա վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտություն:

**1. 2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Արտագնա աշխատանքի մեկնող քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով նախատեսվում է միգրացիոն գործընթացում գործնականում հանդիպող իրավական, սոցիալական, մշակութային և հոգեբանական բնույթի մարտահրավերներին նրանց նախապատրաստումը, կոնկրետ երկրների երկրների առնչությամբ կողմնորոշման միջոցառումների կազմակերպումը:

Միջոցառման համակատարողն է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, քանի որ նախարարության զբաղվածության գործակալության տարածքային կենտրոններում գործող միգրացիոն ռեսուրս կենտրոնները պետք է ակտիվ մասնակցություն ունենան իրականացվելիք միջոցառումների կազմակերպմանը:

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը հանձն է առել ծրագրի ֆինանսավորումը:

**235.2. ՀՀ-ի համար աշխատանքային միգրացիայի տեսանկյունից առավել հետաքրքրություն ներկայացնող պետություններին առաջարկությունների ներկայացում աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության հարցերով միջպետական համաձայնագրերի կնքման նպատակով**

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը**

Հայաստանից սկիզբ առնող միգրացիոն հոսքերը հիմնականում ունեն աշխատանքային/սեզոնային բնույթ և ուղղված են հիմնականում դեպի Ռուսաստանի Դաշնություն, և ոչ մեծ ծավալով նաև դեպի ԵՄ երկրներ:

Աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության հարցերով միջպետական համաձայնագրերի կնքումը կապահովի միջպետական համաձայնագրերի շրջանակում ՀՀ-ից մեկնող ՀՀ աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների և շահերի պաշտպանությունը:

**Միջոցառման իրականացման նպատակը**

Օրինական աշխատանքային էմիգրացիայի ուղիների ստեղծման ճանապարհով կանխարգելել ՀՀ-ից սկիզբ առնող անօրինական աշխատանքային միգրացիան:

**1. 1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՌԴ-ում գտնվող ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերը կարգավորվում են «ԵԱՏՄ մասին» պայմանագրի շրջանակներում:

ԵՄ երկրները զգուշավոր քաղաքականություն են վարում երրորդ երկրների աշխատանքային միգրանտների նկատմամբ և նրանց մուտքը այդ երկրների աշխատաշուկա բավականաչափ դժվարացված է: Այնուհանդերձ այսօր, ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման շուրջ սկսված երկխոսության ֆոնին իրատեսական է քննարկումներ ծավալել Կողմերի քաղաքացիների որոշակի խմբերի շարժունակության ակտիվացման և համապատասխան փաստաթղթեր ստորագրելու շուրջ՝ «Հայաստանի Հանրապետության

| | |
|---|---|
| | Կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության Կառավարության միջև միգրացիոն գործընկերության վերաբերյալ» 2016թ. հոկտեմբերի 27-ի համաձայնագրի օրինակով:<br>**1. 2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կնքվելիք համաձայնագրերի առանցքը զարգացման նպատակ հետապնդող բնակչության տեղաշարժերին օժանդակելն է՝ կանոնակարգելով ուսանողների, մասնագիտական փորձ ձեռք բերելու նպատակով երիտասարդ մասնագետների փոխանակումների, և որակյալ մասնագետների տեղաշարժերի հետ կապված խնդիրները:<br>Համաձայնագրերը Կողմերի համար որպես պարտավորություն են սահմանում Կողմերի տարածք մուտք գործելու, այնտեղ բնակվելու և աշխատելու համար անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրումը՝ հնարավոր կարճ ժամկետներում:<br>Առանձին անդրադարձ է կատարվում Հայաստանում վերաինտեգրման խնդիրներին, ընդ որում խոսքը վերաբերում է ոչ միայն այն հայ ուսանողներին և մասնագետներին, ովքեր Հայաստան են վերադառնում ԵՄ երկրներում իրենց փորձառությունը ավարտելուց հետո, այլև այդ երկրներում անօրինական գտնվող Հայաստանի այն քաղաքացիներին, ովքեր Հայաստան կամավոր վերադարձի մտադրություն ունեն:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Օժանդակություն է ցուցաբերվում զարգացման նպատակ հետապնդող բնակչության տեղաշարժերին, ինչը նպաստում է Հայաստանից սկիզբ առնող անկանոն միգրացիոն հոսքի կանխարգելմանը և դրա վերափոխմանը օրինական շրջանառու միգրացիոն հոսքի:<br>Աշխատանքային միգրանտների իրազեկվածությունը բարձրացված է, նրանց օրինական աշխատելու հնարավորությունները մեծացված են: |
| **236** | **Հետվերադարձի (ռեադմիսիայի) գործընթացների արդյունավետ կազմակերպման շարունակում՝ այդ բնագավառում ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան**<br><br>**236. 1 ՀՀ-ԵՄ ռեադմիսիոն համաձայնագրի կիրարկման արձանագրությունների ստորագրման հարցի շուրջ բանակցությունների վարում ԵՄ անդամ պետությունների հետ**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը**<br>«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը ստորագրվել է 2013 թվականի ապրիլի 19-ին և ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ից:<br>Համաձայնագրի նպատակն է փոխադարձության հիման վրա ստեղծել արագ և արդյունավետ ընթացակարգեր այն անձանց հայտնաբերման և անվտանգ ու կանոնակարգված վերադարձի համար, որոնք չեն բավարարում, կամ այլևս չեն բավարարում Հայաստանի կամ Եվրոպական միության անդամ պետություններից մեկի տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու, կամ բնակվելու համար պահանջներին, և դյուրացնելու այդպիսի անձանց տարանցումը:<br>Համաձայնագրով սահմանված են հետընդունման մասով Հայաստանի և Եվրոպական միության պարտավորությունները, հետընդունման ընթացակարգը, տարանցման գործողությունները, ծախսերը, տվյալների պաշտպանությունը և մի շարք այլ հարցեր:<br>Միաժամանակ Համաձայնագրի 20-րդ հոդվածը սահմանում է որ Կողմերը կարող են կազմել Կիրարկող Արձանագրություն որում ի թիվս այլի կորոշակիացվի նաև տեղեկատվությունը իրավասու մարմինների և կոնտակտային անձանց, սահմանային անցակետերի, ուղեկցությամբ վերադարձի պայմանների, քաղաքացիության ապացուցման միջոցների, արագացված ընթացակարգի ներքո հետընդունման ձևերի,հարցազրույցների ընթացակարգի և այլնի մասին: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7-րդ բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**Միջոցառման իրականացման նպատակը**<br>Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» Համաձայնագրի շրջանակներում ԵՄ պետությունների կողմից ներկայացրած հետընդունման հայցերին պատշաճ կարգով և սահմանված ժամկետներում պատասխանելու հնարավորության ապահովումը: |

| | |
|---|---|
| | **1. 1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի» կիրարկման մասին արձանագրությունները ստորագրված են Էստոնիայի, Ֆրանսիայի և Բենիլյուքսի պետությունների հետ: Չեխիայի և Բուլղարիայի հետ արձանագրությունները պատրաստ են ստորագրման: Արձանագրությունների տեսքտերի շուրջ փոխհամաձայնեցման աշխատանքներն ընթացքի մեջ են Լեհաստանի, Լիտվայի, Լատվիայի, Շվեդիայի, Գերմանիայի հետ:<br>**1. 2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Շարունակել բանակցությունները արձանագրությունների տեսքտերի փոխհամաձայնեցման շուրջ Լեհաստանի, Լիտվայի, Լատվիայի, Շվեդիայի, Գերմանիայի հետ: Ընթացք տալ արձանագրությունների ստորագրման վերաբերյալ ԵՄ այլ պետություններից ստացվելիք առաջարկներին:<br>Միջոցառման համակատարողն է ՀՀարտաքին գործերի նախարարությունը որպես օտարերկրյա պետությունների հետ շփումն ապահովող իրավասու մարմին:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ-ԵՄ ռեադմիսիոն համաձայնագրի կիրարկման պայմանները համաձայնեցված են երկկողմ մակարդակում<br><br>**236.2 Ռեադմիսիոն էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջականացում՝ ընդլայնելով այդ համակարգով աշխատող երկրների թիվը**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը**<br>***Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի*** ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է հետընդունման (ռեադմիսոն) համաձայնագրերի շրջանակներում ստացվող հայցերի տարեց տարի աճով, ինչպես նաև հետընդունման գործընթացն արագ և արդյունավետ իրականացնելու նպատակով՝ ժամանակակից, ավտոմատացված համակարգի ներդրման միջոցով: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7-րդ բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**Միջոցառման իրականացման նպատակը**<br>***Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի*** շնորհիվ անձի վերաբերյալ ռեադմիսիոն հայցի և դրա պատասխանի փոխանցման ավարտական գործընթացի իրականացումը:<br>**1. 1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանում համակարգի ներդրմանն աջակցում է ԵՄ-ի ֆինանսական աջակցությամբ Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD) կողմից ՀՀ-ում իրականացվող «Միգրացիայի և սահմանների կառավարմանն աջակցություն» ծրագիրը:<br>Համակարգի ստեղծման առնչությամբ առկա է ՀՀ կառավարության 2016թ-ի նոյեմբերի 4-ի թիվ 02/24.10/17194-16 հանձնարարականը:<br>*Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի* մշակման աշխատանքներն ավարտվել են և ներկայումս ԵՄ առանձին անդամ երկրների համապատասխան կառույցների հետ աշխատանքներ են տարվում համակարգի շահագործման ուղղությամբ: 2019թ-ի հունվարի 22-ին ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության կողմից նախապատրաստվել և ԵՄ անդամ երկրների համապատասխան կառույցներին ուղարկվել են գրություններ՝ համակարգին միանալու նպատակով: Ներկայումս համակարգին միացել են Գերմանիան (առանձին երկրամասեր), Նիդերլանդերը և Լեհաստանը:<br>**1. 2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիա) մասին» համաձայնագրի հետընդունման հարցերով համատեղ կոմիտեի 2019թ-ի ապրիլի 2-ին կայացած հերթական՝ 5-րդ նիստի ընթացքում հայկական կողմից բարձրացվել է ԵՄ անդամ երկրների համապատասխան կառույցների՝ համակարգին միանալու հարցը: Նիստին մասնակցող Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչները խոստացան հարցը բարձրացնել ԵՄ անդամ երկրների առջև:<br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Ռեադմիսիոն հայցերի և դրանց պատասխանների փոխանցման արդյունավետ գործընթացն ապահոված է ***Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի միջոցով***: |
| **237** | **Միգրանտների, այդ թվում՝ վերադարձող միգրանտների, ինչպես նաև աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների տնտեսական և մարդկային ներուժի օգտագործման համար պայմանների ստեղծում՝ միգրացիայի դրական ազդեցություններն առավելագույնս օգտագործելու ադրանք երկրի տնտեսության զարգացմանը ծառայացնելու նպատակով**<br><br>**237. 1 Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ միգրանտների, այդ թվում՝ վերադարձած, ինչպես նաև աշխատանքային միգրանտների և նրանց ընտանքիների անդամների ներդրումների համար համահավասար ֆինանսավորմամբ փորձնական ծրագրերի մշակում և իրականացում**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը**<br>Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների՝ ֆիզիկական անձանց կողմից ոչ առևտրային նպատակով դեպի Հայաստան կատարված դրամական փոխանցումների ընդհանուր ծավալը 2017թ. կազմել է 1.6 մլն ԱՄՆ դոլար, որը կազմում է ՀՆԱ-ի 15% տոկոսը: Դեպի Հայաստան դրամական փոխանցումների հիմնական աղբյուր երկրներն են՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ն, Ղազախստանը, Գերմանիան և Ֆրանսիան: Միգրանտների տրանսֆերտների ճնշող մեծամասնությունը ուղղվում է սպառմանը, ընդ որում գերազանցապես առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների ծախսածածկմանը (սննդամթերք, հագուստ, կոմունալ ծառայությունների վարձավճարներ և այլն): Դրամական փոխանցումների հաշվին կուտակված և ձեռնարկատիրական գործունեության մեջ ներդրված դրամական միջոցների մասնակցությունը Հայաստանում շատ ցածր է: Վերադարձած միգրանտների մեծամասնության՝ 57,7%-ի գնահատմամբ միգրացիոն ուղևորության արդյունքում տեղի է ունեցել իրենց գիտելիքների և հմտությունների ավելացում, ընդ որում բավական պատկառելի մասի՝ 15,5%-ի, կարծիքով՝ «զգալի»:<br>Միգրացիայի դրական ազդեցության ուժեղացումը ուղղակիորեն կապված է էմիգրանտների, ինչպես նաև իմիգրանտների և վերադարձող միգրանտների ֆինանսական ռեսուրսների համախմբման և բոլոր այս խմբերին ազգային ու տեղական մակարդակներում տնտեսության զարգացման մեջ ընդգրկման հետ: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7-րդ բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**Միջոցառման իրականացման նպատակը**<br>Միգրանտների տնտեսական և մարդկային ներուժի ուղղորդումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործին: Միգրանտների հյուրընկալ երկրում կուտակած ֆինանսական ռեսուրսները Հայաստանում ներդնելու համար նպաստավոր միջավայրի ստեղծում, աշխատանքային միգրանտներին և վերադարձողներին իրականացնելու իրենց ձեռնարկատիրական/բիզնես գաղափարների աջակցում՝ արդյունքում ապահովելով հայ միգրանտների արդյունավետ և հաջող վերադարձը հայրենիք:<br>**1. 1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության կողմից մշակվել է «***Միգրանտները վերադառնում և գործում են. 1+1***» ծրագրի նախագիծը: Ծրագրի շնորհիվ միգրանտները, այդ թվում՝ վերադարձած, ինչպես նաև աշխատանքային միգրանտների և նրանց ընտանքիների անդամներին, տրվում է հնարավորություն սկսելու փոքր կամ միջին բիզնես իրենց համայնքներում:<br>Ծրագրի ձևաչափը հետևյալն է՝ միգրանտը, այդ թվում՝ վերադարձած, ինչպես նաև աշխատանքային միգրանտների և նրանց ընտանքիների անդամները, հյուրընկալ երկրում կուտակած իրենց ֆինանսական ռեսուրսների և դոնոր կազմակերպությունից ստացած համահավասար ֆինանսավորմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարում է ներդրում՝ սեփական ձեռնարկատիրական և բիզնես ծրագրերը իրականացնելու համար: Ծրագրային նախագիծը քննարկվում է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության հետ՝ ծրագրի հետագա ֆինանսավորման հարցը դոնոր կազմակերպությունների միջոցով լուծելու նպատակով:<br>**1. 2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջազգային կազմակերպությունների հետ համատեղ մշակել և իրականացնել թիրախային ծրագրեր՝ ապահովելու արտերկրում բնակվող աշխատանքային միգրանտների հմտությունների, մտավոր ներուժի, փորձի և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը Հայաստանում: |

| | |
|---|---|
| | **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայ միգրանտների հաջողված և կայուն վերաինտեգրումը հայրենիքում, տեղական ձեռնարկատիրության խրախուսում, ինչպես նաև Հայաստանի համայնքների, մասնավորապես՝ գյուղական համայնքների զարգացում:<br><br>**237.2 Միգրանտների կողմից Հայաստանի համայնքներում կատարած ներդրումների հաջողված պատմությունների ներկայացում պետական մարմինների կայքէջերի, սոցիալական ցանցերի և տեղեկատվական այլ միջոցներով**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը**<br>ՀՀ բնակչության մի զգալի հատվածը ներգրավված է աշխատանքային միգրացիայի գործընթացում, ինչի արդյունքում բավականին մեծ գումարներ դրամական փոխանցումների տեսքով փոխանցվում են ՀՀ և մասնավորապես համայնքներ:<br>Ստացված դրամական փոխանցումները դեպի ներդրումներ ուղղելու արդյունքում հնարավորություն կստեղծվի ոչ միայն ապահովել համայնքային զարգացումը, այլև կրճատել աշխատանքային միգրացիայում ներգրավված անձանց թիվը, ինչը իր հերթին կհանգեցնի համայնքի բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավմանը: Դա բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.7-րդ բաժնով նախատեսված հանձնառություններից:<br>**Միջոցառման իրականացման նպատակը**<br>Պայմանավորված տարբեր համայնքների զարգացվածության աստիճանից, ինչպես նաև կարիքներից և բնակլիմայական պայմաններից յուրաքանչյուր համայնքում ծրագրի իրականացումը կարող է ունենալ տարբեր նպատակներ:<br>Ծրագրի իրականացման նպատակն է թիրախավորված տեղեկատվության տրամադրում կոնկրետ համայնքներում առկա զարգացման հնարավորությունների մասին միգրանտների կոնկրետ խմբերին:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի արդյունավետ կիրարկման արդյունքում հնարավոր կլինի.<br>1. Դրամական փոխանցումների ուղղումը դեպի համայնքային զարգացման ծրագրեր՝ ներդրումների տեսքով,<br>2. Համայնքների ներդրումային ներուժի և գրավչության աճ,<br>3. Միգրանտների օտարերկրյա կապերի շնորհիվ օտարերկյա ուղղիղ ներդրումների հոսքի ապահովում: |
| **238** | **Պետական կառավարման մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվության թվայնացման, միասնական և համապարփակ տեղեկատվական շտեմարանների ձևավորման, պետական տեղեկատվական ծրագրերի համաժամանակեցման իրականացում, տեղեկատվական համակարգերի փոխադարձ համալրում և ռացիոնալ օգտագործում**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ՀՀ կառավարության ծրագրում (7.2 ենթաբաժին) մեծ տեղ է հատկացվում քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, որի իրականացման առաջին գրավականը քաղաքացիներին էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցումն է: Նրանց անհրաժեշտ արխիվային տեղեկությունների տրամադրման գործընթացների դյուրացումը կարևոր նշանակություն ունի հասարակությունում վստահության ամրապնդմանն ուղղված ՀՀ կառավարության որդեգրած ծրագրերի կենսագործման գործընթացում: Ուստի Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի ցուցակների թվայնացում և տեղադրում համացանցում առավել մատչելի կդարձնի քաղաքացիների կողմից արխիվային տեղեկությունների ստացումը, կրճատելով տեղեկության ստացման տևողությունը:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի ցուցակները թվայնացված չեն, ինչը հնարավորություն չի համացանցի միջոցով ծանոթանալ, ուսումնասիրել և ձևակերպել անհրաժեշտ պատվերներ:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>1.Ցուցակների արդի պահանջներին համապատասխան խմբագրում,<br>2. Ցուցակների PDF տարբերակների ստեղծում, |

3.Ցուցակների տեղադրում <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ-ի կայքէջում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

1.Միասնական տեղեկատվական դաշտ ստեղծում և քաղաքացիների իրավունքը արխիվային փաստաթղթերի՝ որպես Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական պաշարների բաղկացուցիչ մաս, օգտագործման ապահովում,

2. Քաղաքացիների հնարավորություն կունենան Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմի և բովանդակության վերաբերյալ համակարգված տեղեկությունը որոնել, դիմել և ստանալ առցանց համակարգով,

3.Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի տեղեկատվական կարողությունների զարգացում:

**Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն**

**239**

**«Զրոյից» բիզնես ստեղծելու ձգտում ունեցող քաղաքացիների հմտությունների զարգացում, քաղաքացիների ստեղծարար ներուժի, գործարար կարողությունների, աշխատանքային ունակությունների ընդլայնման աջակցություն և նորագույն տեխնոլոգիաների կիրառության խրախուսում, ՓՄՁ սուբյեկտների ֆինանսների հասանելիության բարձրացում**

***239.1 Գործարար խորհրդատվության ապահովման միջոցառումների իրականացում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման հիմքերն են «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը (4-րդ հոդված), ՀՀ կառավարության 19 դեկտեմբերի 2018թ. 1515-Ն որոշումը (13-րդ կետի 1-ին ենթակետ) ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.1, 5.2 բաժինները:

Ծրագրի նպատակներն են պետական ուղղակի աջակցության մեխանիզմների (գործիքների) միջոցով երկրում ՓՄՁ-ի զարգացման խթանումը, ՓՄՁ-ի զարգացման միջոցով երկրի, հատկապես նրա հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը նպաստելը, երկրի տնտեսության բազմազանեցմանը նպաստելը և զբաղվածության ու ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման ապահովումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՓՄՁ սուբյեկները, հատկապես սկսնակ գործարարները, ձեռնարկատիրական անհրաժեշտ կրթության և կարողությունների զարգացման կարիք ունեն նոր տեխնոլոգիաների, շուկայավարման, բիզնես պլանավորման, հաշվապահական հաշվառման, մարդկային ռեսուրսների և ֆինանսական կառավարման և այլ հարցերում: Այս հմտությունների բացակայությունը լուրջ խոչընդոտ է հանդիսանում ոլորտի զարգացման համար, և այն առավել հաճախ հանդիպող պատճառներից է, որի հետևանքով շատ ընկերություններ դադարում են գործել:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նշված նպատակների իրականացման համար ՓՄՁ պետական աջակցության շրջանակներում առաջարկվում է միջոցառումների շրջանակ, որի իրականացմամբ տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական համալիր օգնություն կցուվաբերվի ՓՄՁ սուբյեկտներին՝ գործունեության պլանավորման, մեկնարկի, ընթացիկ կառավարման և զարգացման փուլերում՝ օգտագործելով անհատական և խմբային խորհրդատվության/ուսուցման, տեղեկատվության ընդհանրացման և ստանդարտացման, ինչպես նաև տեղեկատվության տարածման և հեռահաղորդակցության առցանց հնարավորությունները:

Մասնավորապես կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական հմտությունների զարգացման «Հաջող սկիզբ» ծրագրի իրականացում, գիտելիքային առցանց հարթակի մշակում և գործարկում, ձեռնարկատիրությանն առնչվող թեմատիկ ուսուցողական և պարզաբանող տեսանյութերի պատրաստում և տարածում, գործարար ծրագրի մշակման առցանց գործիքի ներդրում, օրինակելի բիզնես մոդելների/ձեռնարկների մշակում և տարածում, ձեռնարկատիրությանն առնչվող իրավաօրենսդրական դաշտի վերաբերյալ անհատական խորհրդատվությունների իրականացում և օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ իրազեկման միջոցառումների իրականացում: ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը որպես համակատարող աջակցություն կցուցաբերի հատկապես գիտելիքային

| | |
|---|---|
| | առցանց հարթակի մշակման և գործարկման, գործարար ծրագրի մշակման առցանց գործիքի ներդրման մասերով:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների ձեռնարկատիրական կարողությունները և մրցունակությունը, նվազեցնել ձախողումների ռիսկերը, բարձրացնել իրազեկվածության մակարդակը, արագացնել ձեռնարկատիրական պլանավորման և մեկնարկի փուլերը:<br><br>***239.2 Շուկաների հասանելիության և միջազգայնացման կարողությունների զարգացման միջոցառումների իրականացում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման մշակման և իրականացման հիմքերն են «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը (4-րդ հոդված), ՀՀ կառավարության 19 դեկտեմբերի 2018թ. 1515-Ն որոշումը (13-րդ կետի 1-ին ենթակետ) ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.1, 5.2 բաժինները:<br>Ծրագրի նպատակներն են պետական ուղղակի աջակցության մեխանիզմների (գործիքների) միջոցով երկրում ՓՄՁ-ի զարգացման խթանումը, ՓՄՁ-ի զարգացման միջոցով երկրի, հատկապես նրա հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը նպաստելը, երկրի տնտեսության բազմազանեցմանը նպաստելը և զբաղվածության ու ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման ապահովումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի ներքին շուկայի սահմանափակությունը, բնակչության ցածր գնողունակությունը և տեղական տեխնոլոգիաների ու փորձի սակավությունը ՓՄՁ ոլորտի զարգացման համար կենսական անհրաժեշտություն են դարձնում արտաքին շուկաների հասանելիությունը և բիզնեսի միջազգայնացումը: Այս տեսակետից հայաստանյան ՓՄՁ սուբյեկտների խնդիրները հիմնականում կապված են արտադրության որակի կառավարման, միջազգային ստանդարտներին համապատասխանեցման, արտահանման առկա ռեժիմների, արտաքին գործընկերների հետ համագործակցության հաստատման և փորձի փոխանակման, ապրանքների սերտիֆիկացման, արտաքին շուկաներում շուկայավարման և մի շարք այլ կարևոր հարցերում փորձի, գիտելիքի և համապատասխան ծառայությունների անբավարարության հետ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված նպատակների իրականացման համար առաջարկվում է իրականացնել միջոցառումներ ուղղված ՓՄՁ-ների շուկաների հասենլիության ապահովմանը, միջազգայնացման կարողությունների զարգացմանը: Մասնավորապես ՓՄՁ սուբյեկտներին կտրամադրվի անհատական տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն արտահանման գործընթացի բոլոր փուլերում (արտահանման ռեժիմներ, ընթացակարգեր անհրաժեշտ փստաթղթեր, սերտիֆիկացման հետ կապված հարցեր), որոշ դեպքերում համաֆինանսավորման սկզբունքով աջակցություն կցուցաբերվի որակի և սննդի անվտանգության կառավարման համակարգերի ներդրման, միջազգային ցուցահանդեսներին մասնակցության, արտահանմանը վերաբերող համապատասխան դասընթացների/զարգացման ծրագրերի մասնակցության և այլն: Հայաստանում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (https://een.ec.europa.eu, http://eenarmenia.am/) գործունեության շրջանակներում ՓՄՁ սուբյեկտներին աջակցություն կցուցաբերվի միջազգայնացման կարողությունների գնահատման, արտերկրյա շուկաների պահանջների պարզաբանման, արտաքին գործընկերների որոնման, գործարար կապերի հաստատման, բանակցությունների վարման և այլ հարցերում: Նորարարական ՓՄՁ-երին աջակցություն կցուցաբերվի ԵՄ Հորիզոն 2020 ծրագրի ՓՄՁ ֆինանսավորման գործիքին դիմելու համար: Սկսնակ գործարարնների միջազգայնացման կարողությունների, փորձի փոխանակման և գործարար կապերի զարգացման նպատակով վերջիններիս աջակցություն կցուցաբերվի «ԷՐԱՍՄՈՒՍ երիտասարդ ձեռնարկատերերի» փոխանակման ծրագրի շրջանակներում:<br>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը որպես համակատարող աջակցություն կցուցաբերի նորարարական կարողությունների զարգացման նպատակով աջակցության նոր մխանիզմների մշակման և ներդրման մասով:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացումից ակնկալվում է բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների մրցունակությունը արտաքին |

| | |
|---|---|
| | շուկաներում, ավելացնել արտաքին ներդրումները ՓՄՁ ոլորտում, ՓՄՁ-երի կողմից արտահանման ծավալները, նոր տեխնոլոգիաների ներթափանցումը Հայաստան, տեղական ՓՄՁ-երի կողմից արտադրվող նոր տեսակի ապրանքատեսակները և ծառայությունները:<br><br>***239.3 ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսների հասանելիության ապահովման միջոցառումներ***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման մշակման և իրականացման հիմքերն են «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը (4-րդ հոդված), ՀՀ կառավարության 19 դեկտեմբերի 2018թ. 1515-Ն որոշումը (13-րդ կետի 1-ին ենթակետ) ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.8 բաժինը:<br>Ծրագրի նպատակներն են պետական ուղղակի աջակցության մեխանիզմների (գործիքների) միջոցով երկրում ՓՄՁ-ի զարգացման խթանումը, ՓՄՁ-ի զարգացման միջոցով երկրի, հատկապես նրա հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը նպաստելը, երկրի տնտեսության բազմազանեցմանը նպաստելը և զբաղվածության ու ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման ապահովումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ֆինանսական ռեսուրսներին հասանելիությունը ՓՄՁ զարգացման հիմնական խոչընդոտներից մեկն է, որը բազմիցս արտացոլվել է տարբեր հետազոտություններում և զեկույցներում: Հայաստանում ՓՄՁ-ները բավարարված չեն շուկայում առկա բիզնեսի ֆինանսավորման պայմաններով: Առավել բացասական են գնահատվել վարկի տոկոսադրույքի և այլ միջնորդավճարների, գրավի վերաբերյալ պահանջների (գրավի գնահատում, գրավ/վարկ հարաբերակցություն), երաշխավորներ ներկայացնելու պահանջի և երաշխավորների թվի, երաշխավորի գույքի և եկամտի վերաբերյալ պահանջների պայմանները: Խնդիրը էլ ավելի արդիական է սկսնակ գործարարների վարկավորման տեսակետից, քանի որ վարկի բարձր տոկոսադրույքին և գրավի անբավարարությանը ավելանում է նաև նախկինում դրամական հոսքերի բացակայությունը, ինչը լրացուցիչ արգելք է առևտրային բանկերի վարկային ռեսուրսների հասանելիության համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված խնդիրների մեղմացման համար առաջարկվում է իրականացնել միջոցառումներ ուղղված ՓՄՁ-ների ֆինանսական հասանելիության ապահովմանը: Այս նպատակով, որպես հիմնական գործիքակազմ առաջարկվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի վարկային երաշխավորությունների դրամագլխի (շուրջ 1.8 մլրդ ՀՀ դրամ) շրջանակներում իրականացվող ֆինանսական աջակցության հետևյալ ծրագրերը.<br>- Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորության տրամադրմամբ): Այս բաղադրիչի շրջանակներում առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած և/կամ գործունեության կենսունակությունն ապացուցած սկսնակ գործարարներին կտրամադրվեն վարկային երաշխավորություններ՝ գործընկեր առևտրային բանկերից արտոնյալ պայմաններով (առանց գրավ, ցածր տոկոսադրույքով, 5 տարի մարման ժամկետով) վարկ ստանալու նպատակով:<br>- Վարկերի դիմաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից երաշխավորությունների տրամադրում: Այս բաղադրիչի նպատակաուղղված է ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման միջոցով գրավադրման խնդրի հաղթահարմանը, ՀՀ մարզերում, հատկապես սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում ՓՄՁ-ի սուբյեկտների վարկավորման հնարավորությունների ընդլայնմանը: ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման առավելագույն ժամկետը 5 տարի է: Ծրագրի շրջանակներում գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվող վարկային երաշխավորության գումարը չի կարող գերազանցել վարկի գումարի 70 տոկոսը և 15.0 մլն ՀՀ դրամը:<br>Վերոնշյալ ծրագրերի միջոցով 2019թ. ընթացքում նախատեսվում է աջակցություն ցուցաբերել շուրջ 100 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների, որոնց կտրամադրվի շուրջ 500 մլն դրամ գումարի վարկային երաշխավորություններ: Սրան զուգահեռ, նշված ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է աշխատանքներ իրականացնել բանկերի կողմից վարկային ռիսկը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հետ հավասարաչափ կիսելու, ինչպես նաև հիմնադրամի կողմից գրավադրված մեկ միավոր գումարի դիմաց մինչև չորս միավոր վարկ տրամադրելու հնարավորությունների ստեղծման ուղղությամբ: Վարկային երաշխավորությունների դրամագլխի հնարավորություններն օգտագործելով նախատեսվում է նաև լիզինգով ձեռքբերվող գույքի կանխավճարի գումարի |

| | |
|---|---|
| | մասնակի կամ ամբողջական երաշխավորման ծրագրի իրականացում ԱԳԲԱ լիզինգի հետ համատեղ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական/վարկային ռեսուրսների հասանելիությունը՝ հնրավորություն ընձեռելով կյանքի կոչել ծրագրավորված գործարար նախաձեռնությունները և ստեղծել նոր աշխատատեղեր: |
| **240** | **ՓՄՁ ոլորտում խոչընդոտների վերացում՝ ձեռնարկատիրական մշակույթի զարգացման, նպաստավոր օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի կայացման, ՓՄՁ կարողությունների զարգացման ճանապարհով. փոքր խոշորացման խթանների համակարգի զարգացում**<br><br>***240.1 «ՓՄՁ ոլորտի զարգացման ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ՓՄՁ ոլորտի զարգացման ռազմավարության մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1515-Ն որոշման 13-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթով, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.8 բաժնի դրույթներով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2001թ. սկսած մշակվում և իրականացվում են ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրեր, որոնք նպատակաուղղված են իրականացնելու «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ամրագրված ՓՄՁ ոլորտի պետական աջակցության հետևյալ ուղղությունները՝ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում, գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում), ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, ֆինանսական և ներդրումային աջակցություն, տեղական տնտեսական զարգացում, ոլորտային բիզնեսներին աջակցություն, կանանց ձեռներեցությանն աջակցություն, տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում, միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում:<br>Վերոնշյալ ուղղությունները մշակվում են մեկ տարվա համար և համարվում են կարճաժամկետ փաստաթղթեր՝ ինչը հնարավորություն չի տալիս սահմանել ոլորտում իրականացվող երկարաժամկետ քաղաքականության նպատակները, նախանշել պետական քաղաքականության սկզբունքներն ու հիկնական ուղղությունները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համատեքստում առկա խնդիրների հաղթահարման նպատակով հարկ է շարունակել համապատասխան պետական քաղաքականության իրականացումը՝ միտված երկրում գործարար միջավայրի բարելավմանը: Հատկապես կարևորվում է աշխատանքների իրականացումը հետևյալ ռազմավարական նպատակների իրականացման ուղղությամբ.<br>• Ինստիտուցիոնալ, օրենսդրական և գործառնական միջավայրի բարելավում ՓՄՁ-ների ստեղծման և զարգացման համար,<br>• ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսավորման հասանելիության բարելավում,<br>• Ձեռնարկատիրական կարողությունների (մշակույթի) խթանում և զարգացում,<br>• ՓՄՁ սուբյեկտների ներքին և արտաքին մրցունակության բարձրացում,<br>• Պետություն–մասնավոր հատված երկխոսության բարելավում,<br>• ՓՄՁ ոլորտի զարգացմանն աջակցող կառույցների ուժեղացում,<br>• Կանանց ձեռներեցության խթանում, ինչպես նաև սկսնակ գործարարներին աջակցության տրամադրում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՓՄՁ ոլորտի զարգացման երկարաժամկետ ռազմավարության իրականացման միասնական նպատակը գիտելիքի և նորարարության հիման վրա, կառավարման որակի բարձրացման միջոցով, ՓՄՁ սուբյեկտների և ընդհանրապես |

| | |
|---|---|
| | ոլորտի որակական զարգացման ու մրցունակության բարձրացումն է:<br><br>***240.2 «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի N1281-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Նախագծի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.8 բաժնի դրույթներով, ինչպես նաև ՓՄՁ աջակցություն տրամադրող դոնոր կազմակերպությունների, միջազգային ծրագրերի, մասնավոր նախաձեռնությամբ իրականացվող ՓՄՁ աջակցության ծրագրերի ու պետական աջակցության ծրագրերի համախմբման և փոխլրացման հրամայականով: Միաժամանակ, կարևորվում է նաև ՓՄՁ և խոշոր կազմակերպությունների համագործակցության հնարավորությունների բացահայտումը և դրանց խորացման ուղղությամբ աշխատանքների իրականացումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս դոնոր կազմակերպությունների, միջազգային ծրագրերի, ինչպես նաև մասնավոր նախաձեռնությամբ իրականացվում են ՓՄՁ աջակցության բազմաթիվ միջոցառումներ, որոնք երբեմն հատվածային են, կրկնում են միմյանց և պետական աջակցության ծրագրերին ու հասանելի չեն ՓՄՁ լայն շրջանակներին:<br>Միաժամանակ՝ ներկայումս գնահատված չէ խոշոր կազմակերպություններին անհրաժեշտ այն ապրանքների և ծառայությունների ծավալն, որը հնարավոր է որոշակի աջակցության կամ ուղղորդման դեպքում արտադրել/մատուցել ՓՄՁ-ների կողմից:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները և կարգավորման առարկան**<br>Նշված խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է ՓՄՁ զարգացման խորհրդի և ենթախորհրդի ձևաչափի և կազմի փոփոխություն, ներկայումս իրականացվող գործառույթների ընդլայնում, ինչը հնարավորություն կտա խորհրդի և ենթախորհրդի նիստերում քննարկել դոնոր կազմակերպությունների, միջազգային ծրագրերի, ինչպես նաև մասնավոր նախաձեռնությամբ իրականացվող ՓՄՁ աջակցության ծրագրերի ու պետական աջակցության ծրագրերի փոխլրացման հարցերը, դրանց արդյունավետության բարձրացման հնարավորությունները, բացահայտել ծրագրերի իրականացման ընթացքում առաջացած խնդիրները և քննարկել հնարավոր լուծումները:<br>Առաջարկվում է նաև ՓՄՁ զարգացման խորհուրդը և ենթախորհուրդը դարձնել հարթակ ՓՄՁ և խոշոր կազմակերպությունների համագործակցության հնարավորությունների բացահայտման և դրանց խորացման համար, ինչպես նաև բոլոր շահագրգիռ կառույցների կողմից ՓՄՁ-ին վերաբերվող միջոցառումների ամսական կտրվածքով հավաքագրման և տեղեկատվությունը ՓՄՁ հնարավորինս լայն շրջանակին հասանելի դարձնելու համար:<br>Նշված փոփոխությունների իրականացման արդյունքում ՓՄՁ աջակցության ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը կլինի առավել արդյունավետ և թիրախավորված, կբարելավվի աջակցության ծրագրերի մոնիտորինգն ու գնահատումը և ոլորտում առկա խնդիրների լուծման նպատակով կխթանվի տարբեր շահառուների միջև առավել սերտ համագործակցությունը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՓՄՁ որորտի զարգացմանը ուղղված պետական առավել նպատակային և արդյունավետ քաղաքանության իրականացում և որպես արդյունք ՓՄՁ սուբյեկտների թվի ավելացում, նոր աշխատատեղերի ստեղծում: |
| **241** | **Մասնավոր հատվածում արտադրողականության բարձրացմանն ուղղված ծրագրային նախաձեռ-նությունների խրախուսում**<br><br>***241.1 Թեթև արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին բարձրորակ կադրեր և տեխնոլոգիաներ ապահովող ծառայությունների կենտրոնի գործարկում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.9 բաժնի դրույթներով: Միջոցառման իրականացման նպատակը պայմանավորված է թեթև արդյունաբերության ոլորտը տեխնոլոգիական զինվածության |

մակարդակի բարձրացման և որակյալ կադրերով ապահովման անհրաժեշտությամբ:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Թեթև արդյունաբերության ոլորտում ներկայումս առկա է բարձրորակ կադրերով և նոր տեխնոլոգիաներով համալրման կարիք: Թեթև արդյունաբերության ոլորտի ընկերությունների՝ արտերկրի ընկերությունների հետ համագործակցության և արտահանման ծավալների ընդլայնմամբ պայմանավորված անհրաժեշտ է ոլորտը համալրել որակյալ կարդրերով՝ մրցունակ արտադրանքով արտերկրում ներկայանալու նպատակով:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է թեթև արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին տեխնոլոգիական և բարձրորակ կադրերով ապահովման ծառայությունների կենտրոնի հիմնում՝ համապատասխան տարածքի տրամադրման, կադրերի վերապատրաստման և սարքավորումներով կահավորման միջոցով:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման արդյունքում ակնկալվում է հագուստի, կոշիկի և կաշվե իրերի արտադրության ոլորտներում գործող կազմակերպությունների համար հասանելի կդառնան ծախսատար և նոր տեխնոլոգիաները:

**242**

**Տեխնոլոգիական վերազինման ուղղությամբ մասնավոր հատվածի ծրագրերը խթանող գործիքակազմի կիրառում**

***242.1 «Արդյունաբերական քաղաքականության ռազմավարության և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.9 բաժնի դրույթներով:

Հաշվի առնելով տեխնոլոգիական վերազինման ուղղությամբ մասնավոր հատվածի ծրագրերը խթանող գործիքակազմի կիրառման կարևորությունը՝ անհրաժեշտություն է առաջանում մշակելու համապատասխան ռազմավարություն և միջոցառումների ծրագիր, որով կնախանշվեն ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները և ռազմավարական մոտեցումները, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ոլորտի հետագա զարգացման ուղղությամբ իրականացվելիք գործողությունները:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 17-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգը, որի ներքո իրականացվել են ոլորտի զարգացմանն ուղղված մի շարք նախաձեռնություններ:

Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել մշակելու արդյունաբերության ոլորտում գիտության, տեխնոլոգիաների և նորարարության զարգացման ռազմավարություն և միջոցառումների ծրագիր, որը կանդրադառնա արդյունաբերության ոլորտում ինովացիոն արդյունքների առևտրայնացման, ինովացիոն գործունեության խթանման նախաձեռնությունների ինստիտուցիոնալ հիմքերի զարգացման, ինովացիոն ենթակառույցների ձևավորման ու զարգացման, ինովացիոն ոլորտում միջազգային համագործակցության ակտիվացման և ոլորտի զարգացմանն ուղղված այլ կարևոր հարցերի: Այս ուղղությամբ, ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն Հայաստանում ՓՄՁ զարգացմանը» ծրագրի շրջանակում Գերմանական միջազգային համագործակցության ընկերակցության /GiZ/ աջակցությամբ ներգրավված տեղական և միջազգային փորձագետների հետ համատեղ արդեն իսկ իրականացվել է ինովացիոն էկոհամակարգի քարտեզագրում, և ներկայումս «Արտահանման և նորարարությանն ուղղված արդյունաբերական զարգացման» ծրագրի շրջանակում աշխատանքներ են իրականացվում Ասիական զարգացման բանկի հետ համատեղ Արդյունաբերության ոլորտում գիտության, տեխնոլոգիաների և նորարարության զարգացման ռազմավարության և միջոցառումների ծրագրի մշակման ուղղությամբ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել Արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը: ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը որպես համակատարող

աջակցություն կցուցաբերի հատկապես տեխնոլոգիական վերազինման աջակցության ամրագրված մեխանիզմների, ուղղությունների և գործողություններ մշակման մասերով:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ակնկալվում է ռազմավարությամբ ամրագրել արդյունաբերության ոլորտի տեխնոլոգիական վերազինման աջակցության ամրագրված հիմնական մեխանիզմներ, ուղղություններ և գործողություններ:

**243** **Մասնավոր հատվածում կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառության խրախուսում և այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերի առաջխաղացմանն աջակցություն**

***243.1 «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N1769-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ, վերանայված կանոնակարգի ներդնման ուղեցույցի մշակման աշխատանքների համակարգում***

**1. Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.3 բաժնի դրույթներով:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառումը հանդիսանում է մասնավոր հատվածի կայուն զարգացման և փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության կարևոր գործոններից մեկը՝ ՀՀ կառավարությունը կարևորում է նշված սկզբունքների ներդնումը՝ կազմակերպությունների կառավարման մարմինների պատասխանատվության, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացման նպատակով:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Առաջարկվող միջոցառումը պայմանավորված է կազմակերպությունների կառավարման մարմինների պատասխանատվության, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացման անհրաժեշտությամբ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Վերոգրյալի համատեքստում կորպորատիվ կառավարման մշակույթի ձևավորման և վերջինիս ՏՀԶԿ ներկայումս գործող սկզբունքներին մոտարկելու և ներդնելու նպատակով նախատեսվում է վերանայել Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրքը և մշակել վերջինիս ներդրման ուղեցույցը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը կորպորատիվ կառավարման կանոնակարգի կիրառման դաշտի ընդլայնումն է:

***243.2 Կորպորատիվ կառավարման վերանայված կանոնակարգի հիման վրա օրենսդրական փոփոխությունների նախաձեռնում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ մ***

**1. Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.3 բաժնի դրույթներով: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառումը հանդիսանում է մասնավոր հատվածի կայուն զարգացման և փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության կարևոր գործոններից՝ ՀՀ կառավարությունը կարևորում է նշված սկզբունքների ներդնումը՝ կազմակերպությունների կառավարման մարմինների պատասխանատվության, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացման նպատակով:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Առաջարկվող միջոցառումը պայմանավորված է կազմակերպությունների կառավարման մարմինների պատասխանատվության, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացման անհրաժեշտությամբ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Վերոգրյալի համատեքստում կորպորատիվ կառավարման մշակույթի ձևավորման և վերջինիս սկզբունքների ներդնման ապահովման նպատակով նախատեսվում է վերանայել Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնակարգը և մշակել վերջինիս ներդրման ուղեցույցը: Միաժամանակ, վերոգրյալ աշխատանքների հիման վրա նախատեսվում է նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և ներկայացնել

| | |
|---|---|
| | դրանք ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ ապահովելով կորպորատիվ կառավարման սկզբունքների գործնականում կիրառումը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը կորպորատիվ կառավարման կանոնակարգի կիրառման դաշտի ընդլայնումն է: |
| **244** | **Կարգավորիչ արդյունավետ մեխանիզմների գործարկման միջոցով տնտեսական մրցակցության պաշտպանության ապահովում**<br><br>***244.1 Սահմանափակ ռեսուրսներից օգտվելու նպատակով լիցենզիաների և թույլտվությունների տրամադրումը՝ բացառապես աճուրդի միջոցով իրականացնելու վերաբերյալ վերլուծության իրականացում և դրա արդյունքների հիման վրա առաջարկությունների ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ***<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.4 բաժնի դրույթներով:<br>Միջոցառման իրականացման նպատակը սահմանափակ ռեսուրսներից օգտվելու նպատակով բացառիկ լիցենզիաների և թույտվությունների տրամադրումը մրցակցային պայմաններով իրականացնելն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարությունը կարևորում է տնտեսական մրցակցության պաշտպանությունը՝ ելնելով այն իրամայականից, որ տնտեսական գործունեության որևէ ոլորտում չպետք է անհամաչափ սահմանափակվի գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը: Տնտեսական մրցակցության ապահովման կարևորագույն գործոններից մեկը տնտեսավարողների համար հավասար պայմանների և խաղի միևնույն կանոնների ապահովումն է, քանի որ ներկայումս սահմանափակ ռեսուրսներից օգտվելու նպատակով բացառիկ լիցենզիաների և թույտվությունների տրամադրումն իրականացվում է ոչ մրցակցային պայմաններով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է պետական գերատեսչությունների կողմից սահմանափակ ռեսուրսներից օգտվելու նպատակով լիցենզիաների և թույտվությունների տրամադրումը՝ բացառապես աճուրդի միջոցով իրականացնելու վերաբերյալ իրականացնել համապատասխան վերլուծություն և առաջարկություններ ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ:<br>ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից նախկինում իրականացվել են խնդրի առնչությամբ ուսումնասիրություններ: Վերջիններս, ինչպես նաև ՀՀ ՏՄՊՊ-ում կուտակված փործառությունն ու գործնական դրսևորումների առնչությամբ առկա դիտարկումները մեծապես կնպաստեն արժեքավոր վերլուծություն իրականացնելու և համարժեք առաջարկություններ ձևավորելու գործում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը սահմանափակ ռեսուրսներից օգտվելու նպատակով բացառիկ լիցենզիաների և թույտվությունների տրամադրումը մրցակցային պայմաններով իրականացնելն է: |
| **245** | **Ապրանքների և ծառայությունների շուկաներում նոր մասնակիցների մուտքի եվ առաջխաղացման խրախուսում՝ այդ թվում, պետության կողմից սահմանված ինստիտուցիոնալ կամ այլ տնտեսական (լիցենզավորման պահանջներ և այլն) արգելքների կամ սահմանափակումների թվաքանակի կրճատման միջոցով**<br><br>***245.1 «Էլեկտրոնային առևտրի մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ***<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.4 բաժնի դրույթներով:<br>Միջոցառման իրականացման նպատակը Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրի ապրանքների և ծառայությունների շուկաներում առկա ժամանակակից պահանջներին համապատասխանության խնդրի լուծումն է: |

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս էլեկտրոնային առևտրի մասով բացակայում են մի շարք օրենսդրական կարգավորումներ, ինչը խոչընդոտներ է ստողծում երկրում էլեկտրոնային առևտրի զարգացման համար:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է մշակել «Էլեկտրոնային առևտրի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որտեղ առկա կլինեն համապատասխան իրավական կարգավորման մեխանիզմները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդուհանդերձ ոլորտն առանձնահատկություններ ունի, որոնցով այն տարբերակվում է ընդհանուր առևտրի ոլորտից, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը և ՀՀ կենտրոնական բանկը նախատեսվել են որպես համակարատարողներ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրակացման արդյունքն է Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրի իրականացման մեխանիզմի կատարելագործումը, իրավական կարգավորման ապահովումը:

***245.2 Երրորդ երկրներից ՀՀ ներմուծման և արտահանման քվոտաների համակարգի ընթացակարգերը սահմանող ՀՀ կառավարության որոշումների նախագծերի մշակում և իրականացում***

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.4 բաժնի դրույթներով:

Միջոցառման իրականացման նպատակը երրորդ երկրներից ՀՀ ներմուծման և ՀՀ-ից արտահանման ժամանակ ՀՀ տնտեսվարող սուբյեկտների համար ազատ առևտրի համաձայնագրերով ամրագրված արտոնություններից օգտվելու հնարավորության ստեղծումն է, ինչպես նաև ներքին շուկայում տնտեսվարող սուբյեկտների շահերի պաշտպանությունը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ տնտեսվարող սուբյեկտների համար գործող ազատ առևտրի համաձայնագրերով ամրագրված որոշ ապրանքների մասով արտոնություններից օգտվելու հնարավորության բացակայությունը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է ՀՀ ներմուծման և ՀՀ-ից արտահանման ժամանակ քվոտավորման համակարգի ներդրում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրակացման արդյունքն է կնքված ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում մի շարք ապրանքատեսակների մասով արտոնյալ դրույքաչափերի կիրառմամբ քվոտավորման մեխանիզմի ներդրումը:

246

**«Գործարար միջավայրի վրա պետական քաղաքականության ազդեցության գնահատում համաշխարհային տնտեսական ֆորումի գլոբալ մրցունակության ինդեքսի և ներառական զարգացման ինդեքսի, համաշխարհային բանկի գործարարությամբ զբաղվելը» զեկույցի միջոցով**

***246.1 «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում հh վարչապետի աշխատակազմ***

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.4 բաժնի դրույթներով:

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը նպատակ է հետապնդում Հայաստանում ստեղծել բարենպաստ գործարար միջավայր, ինչպես նաև Հայաստանը՝ որպես ներդրումների ներգրավման առումով գրավիչ երկիր ապահովելու տեսանկյունից բարելավել վերջինիս դիրքը միջազգային հեղինակություն վայելող զեկույցներում:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Իրականացված միջոցառումների արդյունքում վերջին տարիներին էական առաջընթաց է գրանցվել մի շարք ուղղություններով, որոնք իրենց արտացոլումն են գտել նաև Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական

| | |
|---|---|
| | կորպորացիայի գնահատումներում: Մասնավորապես, «Գործարարությամբ զբաղվելը 2019. Վերապատրաստում և բարեփոխումներ» վարկանիշային զեկույցի տվյալներով Հայաստանը 190 երկրների շարքում արձանագրել է դիրքի առաջընթաց 6 կետով՝ 47-րդ տեղից բարձրանալով 41-րդ տեղը: «Գործարարությամբ զբաղվելու դյուրինության» ցուցանիշով գրանցվել է 75.37 միավոր՝ 73.31 միավորի փոխարեն: Չնայած մի շարք ոլորտներում Հայաստանի արձանագրած լուրջ հաջողությունների՝ գործարարությամբ զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների բարելավումն իրականացվում է ոչ համաչափ և որոշ ոլորտներում առկա են խնդիրներ՝ առավելապես վարչարարական բնույթի:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված խնդիրների լուծման և գործարար միջավայրի զարգացման համաչափությունն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից կատարվելու են գործարար միջավայրի բարելավման միջոցառումների տարեկան ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներ: Միջոցառումների իրականացման արդյունքում կապահովվի ՀՀ գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների շարունակականությունը, առաջին հերթին կթեթևացվի կատարելագործման մեծ պոտենցիալ ունեցող ոլորտներում առկա վարչարարական և ֆինանսական բեռը՝ միաժամանակ ապահովելով վերջին տարիներին հաջողություններ գրանցած ոլորտների զարգացումը, իսկ դրա արդյունքում նաև՝ ՀՀ դիրքի բարելավումը՝ ՀԲ-ի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է պարբերաբար նվազեցնել պետական և համայնքային մարմինների հետ շփման վարչարարական բեռը, կրճատել կոռուպցիոն ռիսկերը, բարձրացնել գործարարներին ծառայություններ մատուցող մարմինների գործունեության թափանցիկությունը, իսկ դրա արդյունքում նաև բարելավել Հայաստանի դիրքը Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում, մասնավորապես՝ ակնկալվում է, որ Հայաստանն առաջիկա 2-3 տարիների բարեփոխումների արդյունքում այլ հավասար պայմաններում կդիրքավորվի Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի լավագույն 10 երկրների շարքում: |
| **247** | **Գործարար միջավայրի բարելավում**<br>**247.1 Գործարար միջավայրի բարելավման ռազմավարական փաստաթղթի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման նպատակը ՀՀ գործարար միջավայրի բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների շարունակականության ապահովումն է, մասնավորապես՝ պետական կարգավորումների, ծառայությունների և վարչարարական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայրի ձևավորումը, բոլոր տնտեսվարողների համար բարենպաստ պայմանների ապահովումը, գործարարների շահերի ներկայացման և դրանց պաշտպանության համակարգի կատարելագործումը:<br>**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործարարությամբ զբաղվելու բարենպաստությամբ դասակարգելու նպատակով Համաշխարհային բանկի կողմից յուրաքանչյուր տարի գնահատվում է 190 երկրի տնտեսություն, որոնց շարքերում է նաև Հայաստանի Հանրապետությունը: Ընդունելով Համաշխարհային բանկի գնահատման մեթոդաբանությունը որպես ուղեցույց՝ ՀՀ կառավարության կողմից յուրաքանչյուր տարի ընդունվում է Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիր: Սակայն առավել երկարաժամկետ տեսլական ունենալու համար անհրաժեշտ է մշակել համապարփակ ռազմավարություն, որը ՀԲ-ի դասակարգման մեթոդաբանությամբ դիտարկվող կոմպոնենտներից զատ կընդգրկի բնագավառների և կարգավորումների ավելի լայն սպեկտոր:<br>**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է բիզնես միջավայրի բարելավմանն ուղղված մահապարփակ ռազմավարական փաստաթղթի մշակում, որը կընդգրկի կարգավորման հարաբերությունների լայն շրջանակ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ բարեփոխումների քաղաքականության ուղղությունների երկարաժամկետ տեսլական: |

| 248 | **Թիրախային շուկաներում հայաստանյան արտադրողների համար բարենպաստ առևտրային պայմանների պահպանում, նորերի հաստատում և դրանց կիրառության խորացում, մասնավորապես՝ եմ, աիկ, եատմ, ինչպես նաեվ եատմ համագործակցության շրջանակում երրորդ երկրների հետ հարաբերություններում արտոնյալ պայմանների ստացում** |
|---|---|

***248.1 ԵԱՏՄ շրջանակներում Սինգապուրի և Սերբիայի հետ ազատ առևտրի համաձայնագրերի կնքման գործընթացի՝ հայաստանի անունից համակարգում***

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ արտոնյալ առևտրային ռեժիմների առևտրատնտեսական համագործակցության շրջանակի, դրանց կիրառության գործիքակազմի ընդլայնմամբ, ԵԱՏՄ անդամ պետությունների և երրորդ երկրների հետ համագործակցությամբ: Միջոցառման իրակացման նպատակն է կնքվող ազատ առևտրի համաձայնագրերի շրջանակներում հայրենական արտադրանքի մրցունակության ապահովումը, ինչպես նաև նոր շուկաներ մուտք գործելու ընթացակարգերի դյուրացումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Մինչ այժմ Սինգապուրի և Սերբիայի հետ փոխադարձ առևտրում չի կիրառվում արտոնյալ առևտրային ռեժիմ: Սերբիայի հետ երկկողմ ձևաչափով Ռուսաստանի Դաշնությունը, Ղազախստանը և Բելառուսը արդեն իսկ ունեին գործող ազատ առևտրի համաձայնագրեր:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում Սինգապուրի և Սերբիայի հետ ազատ առևտրի համաձայնագրերի կնքում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրակացման արդյունքն է ազատ առևտրի համաձայնագրերի կողմ հանդիսացող երկրների շուկաներ արտոնյալ պայմաններով հասանելիության ընդլայնումը:

***248.2 ԵԱՏՄ շրջանակներում Իսրայելի եվ Եգիպտոսի հետ ազատ առեվտրի համաձայնագրերի կնքման գործընթացի՝ հայաստանի անունից համակարգում***

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ արտոնյալ առևտրային ռեժիմների առևտրատնտեսական համագործակցության շրջանակի, դրանց կիրառության գործիքակազմի ընդլայնմամբ, ԵԱՏՄ անդամ պետությունների և երրորդ երկրների հետ համագործակցությամբ: Միջոցառման իրակացման նպատակն է կնքվող ազատ առևտրի համաձայնագրերի շրջանակներում հայրենական արտադրանքի մրցունակության ապահովումը, ինչպես նաև նոր շուկաներ մուտք գործելու ընթացակարգերի դյուրացումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Մինչ այժմ Իսրայելի և Եգիպտոսի հետ փոխադարձ առևտրում չի կիրառվում արտոնյալ առևտրային ռեժիմ: Եգիպտոսի հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքման ոչ պաշտոնական նախաձեռնող կողմն է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում Իսրայելի և Եգիպտոսի հետ ազատ առևտրի համաձայնագրերի կնքումը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրակացման արդյունքն է ազատ առևտրի համաձայնագրերի կողմ հանդիսացող երկրների շուկաներ արտոնյալ պայմաններով հասանելիության ընդլայնումը:

***248.3 Հայաստանի համար թիրախային շուկաներում գործող ներմուծման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվական ամբողջական հասանելիության ապահովում***

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով, ինչպես նաև Հայաստանի համար թիրախային շուկաների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապհովմամբ: Միջոցառման իրակացման նպատակն է ՀՀ տնտեսվարող սուբյեկտների համար նշված շուկաներում ըստ առանձին ապրանքատեսակների արտահանման գործընթացի և ընթացակարգերի մասով տեղեկատվական հասանեուլիության ապահովումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի համար թիրախային շուկաների վերաբերյալ ՀՀ տնտեսվարող սուբյեկտների ոչ բավարար իրազեկված լինելը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է թիրախային շուկաներ արտահանվող առանձին ապրանքատեսակների մասով հայրենական արտահանողներին տեղեկակացվածության մակարդակի բարձրացումը՝ առնվազն 3 շուկաների մասով, ըստ առանձին ապրանքատեսակների, հայրենական արտահանողների տեղեկացվածության ապահովման միջոցով:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրակացման արդյունքն է արտահանման խթաննմանն ուղված գործիքակազմի կիրառումը, արտահանման ծավալների աճի ապահովումը:<br><br>***248.4 ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում խոչընդոտների և արգելքների բացահայտում և վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում***<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում ներքին շուկայի պաշտպանությամբ: Միջոցառման իրակացման նպատակն է ՀՀ տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների հավաքագրումը և դրանց լուծման մեխանիզմների մշակումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում առկա են մի շարք խոչընդոտներ և ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժի սահմանափակումներ<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է իրականցնել ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում խոչընդոտների ռեեստրի վարում և նշված խոչընդոտների վերացման ուղղությամբ ճանապարհային քարտեզի ձևավորում, ինչպես նաև իրավական կարգավորման ապահովում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրակացման արդյունքն է փոխադարձ առևտրում առկա սահմանափակումների վերացումը, ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժի ապահովումը:<br><br>***248.5 ԵԱՏՄանդամակցությամբ պայմանավորված ԱՀԿ-ում ՀՀ մաքսապուրքերի սահմանային դրույքաչափերի պարտավորությունների փոփոխության բանակցությունների անցկացման ապահովում և ամփոփում***<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով, ինչպես նաև ԱՀԿ Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրով:<br>Միջոցառման իրականացման նպատակը ԱՀԿ համաձայնագրերով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարումն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** |

Համաձայն ԱՀԿ համաձայնագրերի դրույթների՝ ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված ՀՀ 2014թ.-ից մեկնարկել է ԱՀԿ-ում ՀՀ մաքսատուրքերի սահմանային ամրագրված դրույքաչափերի պարտավորությունների փոփոխման փոխհատուցումային բանակցությունների գործընթացը: Բանակցային գործընթացում ներառված են 11 ԱՀԿ անդամ երկրներ: Բանակցային գործընթացի անհաջողության դեպքում նշված ԱՀԿ անդամ երկրները իրավունք կունենան միակողմանի ՀՀ արտահանումների նկատմամբ կիրառել բարձրացված մաքսատուրքեր: Ներկա պահին բանակցություններն ընթանում են ԵՄ հետ, սակայն դեռ որոշակի համաձայնություն չկա:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Շարունակվելու են բանակցությունները գործընթացում ընդգրկված ԱՀԿ անդամ երկրների հետ՝ առաջարկելով փոխհատուցումային փաթեթ, որը ձեռնտու կլինի ՀՀ տնտեսությանը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացումը կապահովի ՀՀ ԱՀԿ պարտավորությունների պատշաճ իրականացումը, ԱՀԿ անդամ երկրների հետ երկկողմ բանակցությունների ավարտը, ՀՀ մաքսատուրքերի սահմանային դրույքաչափերի պարտավորությունների նոր ժամանակացանկի ամրագրումը:

***248.6 ԵՄ «արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի» (GSP+) երկրի տարեկան զեկույցի պատրաստում, արտոնյալ առևտրային ռեժիմի և նրա ներքո գործող «գրանցված արտահանողների համակարգի» (REX) կիրառման ապահովում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով:

Միջոցառման իրականացման նպատակը ԵՄ շուկայի մատչելիության ավելացումն է, դեպի ԵՄ ՀՀ արտահանման աճի և դիվերսիֆիկացիայի հնարավորության ստեղծումը:

**1.1. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

2009թ. հունվարի 1-ից ՀՀ-ն օգտվում է կայուն զարգացման և արդյունավետ կառավարման համար ԵՄ կողմից տրամադրվող «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգից» (GSP+): 2014թ. հունվարի 1-ից Եվրոպական Հանձնաժողովի որոշմամբ ՀՀ-ն ընդգրկվել է ԵՄ վերանայված «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի (GSP+)» արտոնյալ առևտրային ռեժիմի նոր փուլում: «GSP+» համակարգից օգտվելու նախապայման է հանդիսանում մարդու իրավունքներին, աշխատանքային իրավունքներին, բնապահպանությանը և արդյունավետ կառավարմանն առնչվող 27 միջազգային կոնվենցիաների արդյունավետ իրականացման ընթացքը երկրում: «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմը հնարավորություն է տալիս հայկական ծագման ավելի քան 6200 ապրանքատեսակ ԵՄ շուկա արտահանել զրոյական կամ նվազեցված մաքսատուրքերով: Նոր փուլի կանոնակարգի համաձայն՝ Եվրոպական Հանձնաժողովը ներդրել է «GSP+» դիտանցման նոր մեխանիզմ, որի համաձայն շահառու երկրները պարբերաբար զեկույցներ են ներկայացնում նշյալ կոնվենցիաների իրականացման ընթացքի վերաբերյալ: Սույն տարվա ընթացքի վերաբերյալ զեկույցը պատրաստման փուլում է:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Կոնվենցիաների իրականացման ընթացքի վերաբերյալ պատրաստվելու են և ԵՄ-ին են տրամադրվելու անհրաժեշտ զեկույցները:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացումը հնարավորություն կստեղծի ԵՄ երկերներ արտահանման խթանման, արտահանման ծավալների աճի և ապրանքատեսակների դիվերսիֆիկացիայի համար:

***248.7 ՀՀ-ԵՄ «համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» առևտուր և առևտրին առնչվող հարցեր» մասում ամրագրված դրույթների իրականացման համակարգում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.4 բաժնի դրույթներով: Միջոցառման իրականացման իրավական հիմքն է ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը», իսկ նպատակը բխում է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով ՀՀ կողմից ստանձնած պարտավորություններից:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

2018թ. հունիսի 1-ից պայմանականորեն ուժի մեջ է մտել ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը»: ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը հանդիսանում է Համաձայնագրի «Առևտուր և առևտրին առնչվող հարցեր» մասի իրականացման համակարգող մարմինը: Համաձայնագրով նախատեսված է յուրաքանչյուր տարի անցկացնել ՀՀ-ԵՄ Առևտրի գործընկերության կոմիտեի, ինչպես նաև առևտրի ոլորտում համապատասխան ենթակոմիտեների նիստեր, որոնց ընթացքում քննարկվելու են Համաձայնագրի իրականացման ընթացքը, ինչպես նաև ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության խորացման հնարավորությունները:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Իրականացվելու է ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» «Առևտուր և առևտրին առնչվող հարցեր» մասի իրականացման գործընթացը համակարգումը, կազմակերպվելու են ՀՀ-ԵՄ Առևտրի գործընկերության կոմիտեի, ինչպես նաև առևտրի ոլորտում համապատասխան ենթակոմիտեների նիստերը, ուսումնասիրվելու են և ԵՄ կողմի հետ քննարկվելու են ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության խորացման հնարավորությունները:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ակնկալվում է ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության խորացում:

---

**249**

**ԵՄ կողմից ՀՀ-ին տրամադրվող աջակցության համակարգում**

***249.1 ԵՄ 2019թ. տարեկան գործողությունների ծրագրի ներքո ֆինանսավորման համաձայնագրերի շուրջ քննարկումների և բանակցությունների համակարգում, դրանց ներքո իրականացվելիք ենթածրագրերի համակարգում, ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ապահովում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՋՋ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով: ԵՄ 2019թ. տարեկան գործողությունների ծրագրի ներքո ֆինանսավորման համաձայնագրերի և դրանց ներքո իրականացվելիք ենթածրագրերի և միջոցառումների մասով աշխատանքների իրականացումը բխում է Եվրամիության կողմից ՀՀ-ին տրամադրվող աջակցության համակարգման անհրաժեշտությունից: Նպատակն է ԵՄ տեխնիկական աջակցության շրջանակներում ֆինանսավորման համաձայնագրերի շուրջ բանակցությունների համակարգումը, համաձայնագրերի ստորագրման և ուժի մեջ մտնելու համար օրենքով սահմանված բոլոր ընթացակարգերի ապահովումը, ֆինանսավորման համաձայնագրերի շրջանակներում նախատեսված ծրագրերի իրականացման ընթացքի մշտադիտարկումը և գնահատումը, թիրախային ոլորտներում զարգացման ծրագրերի իրականացման ապահովումը:

**1.1. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Եվրոպական Միության «Միասնական աջակցության շրջանակ» (Single Support Framework) փաստաթղթով սահմանվում է 2017-2020թթ. համար Հայաստանին տրամադրվելիք երկարաժամկետ աջակցությունը: Նախատեսված աջակցության ինդիկատիվ գումարը 144 մլն-176 մլն եվրո է՝ հետևյալ 4 ուղղություններով՝

- Տնտեսական զարգացում ու շուկայական հնարավորություններ,
- Ինստիտուցիոնալ հզորացում և լավ կառավարում,
- Հաղորդակցություն, էներգետիկ արդյունավետություն, բնապահպանություն ու կլիմայի փոփոխություն,
- Շարժունակություն ու մարդկանց միջև շփումներ:

Միասնական աջակցության շրջանակով նախատեսված աջակցությունը տրամադրվում է տարեկան գործողությունների ծրագրի ներքո ֆինանսավորման համաձայնագրերի միջոցով, որոնց հաստատումը և իրականացումը ՀՀ-ԵՄ երկկողմ արդյունավետ աշխատանքի գրավականն է: Պատրաստվել և եվրոպական կողմին են տրամադրվել ԵՄ բյուջետային աջակցության 4 ֆինանսավորման համաձայնագրերով ամրագրված պայմանների իրականացման մասով գնահատման զեկույցները: 4 համաձայնագրերով նախատեսված որոշ պայմանների վերախմբագրման և/կամ իրականացման ժամկետների երկարաձգման խնդրանք-գրություններ են տրամադրվել եվրոպական կողմին: Որոշ նախապայմանների մասով անհրաժեշտ են համապատասխան օրենքների և իրավական ակտերի ընդունում:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Տարեկան գործողությունների ծրագրերի կազմման գործընթացում, որպես ԵՄ աջակցության ազգային համակարգող, համագործակցելով ՀՀ շահագրգիռ նախարարությունների և մարմինների հետ, իրականացվելու է կարիքների և կարողությունների գնահատում, ինչպես նաև թիրախավորված ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացման համակարգում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացումը կապահովի թիրախային ոլորտներում բարեփոխումների և զարգացման ծրագրերի իրականացում, կարողությունների և ենթակառուցվածքների զարգացում:

***249.2 ԵՄ բյուջետային աջակցության ընթացիկ ֆինանսավորման համաձայնագրերով նախատեսված տարեկան հատկացումների (տրանշների) շրջանակներում ամրագրված նախապայմանների իրականացման ընթացքի մշտադիտարկում, տարեկան առաջընթացի զեկույցների պատրաստման համակարգում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՅՅ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով: ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրերի ներքո ամրագրված պայմանների իրականացումը բխում է Եվրամիության կողմից ՀՀ-ին տրամադրվող աջակցության համակարգման անհրաժեշտությունից: Նպատակն է ԵՄ բյուջետային աջակցության 4 ֆինանսավորման համաձայնագրերի ներքո ամրագրված ընդհանուր և հատուկ պայմանների իրականացման ընթացքի կիսամյակային մշտադիտարկումը և ՀՀ պատասխանատու պետական կառավարման մարմինների կողմից ներկայացվող տարեկան առաջընթացի զեկույցների պատրաստման համակարգումը:

**1.1. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Եվրոպական Միության «Միասնական աջակցության շրջանակ» (Single Support Framework) փաստաթղթով է սահմանվում 2017-2020թթ. Համար Հայաստանին տրամադրվելիք երկարաժամկետ աջակցությունը: Փաստաթղթով նախատեսված աջակցության ինդիկատիվ գումարը 144 մլն-176 մլն եվրո է՝ հետևյալ 4 ուղղություններով՝

- Տնտեսական զարգացում ու շուկայական հնարավորություններ,
- Ինստիտուցիոնալ հզորացում և լավ կառավարում,
- Հաղորդակցություն, էներգետիկ արդյունավետություն, բնապահպանություն ու կլիմայի փոփոխություն,
- Շարժունակություն ու մարդկանց միջև շփումներ:

Միասնական աջակցության շրջանակով նախատեսված աջակցությունը տրամադրվում է տարեկան գործողությունների ծրագրի ներքո ֆինանսավորման համաձայնագրերի միջոցով, որոնց հաստատումը և իրականացումը ՀՀ-ԵՄ երկկողմ արդյունավետ աշխատանքի գրավականն է: Պատրաստվել և եվրոպական կողմին են տրամադրվել ԵՄ բյուջետային աջակցության 4 ֆինանսավորման համաձայնագրերով ամրագրված պայմանների իրականացման մասով գնահատման զեկույցները: 4 համաձայնագրերով նախատեսված որոշ պայմանների վերախմբագրման և/կամ իրականացման ժամկետների երկարաձգման խնդրանք-գրություններ են տրամադրվել եվրոպական կողմին: Որոշ նախապայմանների մասով անհրաժեշտ են համապատասխան օրենքների և իրավական ակտերի ընդունում:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ԵՄ բյուջետային աջակցության ծրագրերի իրականացման գործընթացում, որպես ԵՄ աջակցության ազգային համակարգող, համագործակցելով ՀՀ պատասխանատու պետական կառավարման մարմինների հետ, իրականացվելու են 4 ֆինանսավորման համաձայնագրերով ամրագրված պայմանների իրականացման ընթացքի մշտադիտարկումը և իրականացման ռիսկայնության գնահատումը, ինչը կապահովի համաձայնագրերի շրջանակներում բյուջետային հատկացումների ժամանակին տրամադրումը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ԵՄ բյուջետային աջակցության 4 ֆինանսավորման համաձայնագրերի ներքո ամրագրված պայմանների արդյունավետ իրականացման արդյունքում կապահովվի բյուջետային հատկացումների (տրանշների) տրամադրում:

***249.3 ՀՀ-ում ԵՀԿ գործիքի ներքո (թվինինգ, թայեքս, սոսյու, սևծովյան ավազանի անդրսահմանային***

| | |
|---|---|
| | ***համագործակցություն, սիգմա և այլն) տեխնիկական աջակցության ծրագրերի մշակման, հաստատման և իրականացման համակարգում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՅՅ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով: Կառավարության ծրագրից բխող ՀՀ-ում ԵՀՔ գործիքի ներքո (Թվինինգ, Թայեքս, Սոսյու, Սևծովյան ավազանի անդրսահմանային համագործակցություն, ՍԻԳՄԱ և այլն) տեխնիկական աջակցության ծրագրերի մշակման, հաստատման և իրականացման համակարգման անհրաժեշտությունը բխում է ԵՄ կողմից ՀՀ-ին տրամադրվելիք աջակցության արդյունավետության և թիրախավորված ու կառավարության առաջնահերթությունների համապատասխանելության ապահովման տեսանկյունից:<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսանում Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ), որի կիրարկումը դիտվում է որպես Հայաստանի զարգացմանն ուղղված Կառավարության բարեփոխումների օրակարգին նպաստող նշանակալից գործոն: (Կառավարության ծրագիր՝ 2.3. Արտաքին քաղաքականություն):<br>**1.1. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**<br>ՀՀ-ԵՄ հարաբերությունների կարգավորման առանցքային փաստաթղթերից է հանդիսանում Եվրոպական Միության «Միասնական աջակցության շրջանակը», որով նախատեսված է ՀՀ-ին տրամադրվելիք աջակցությունը 2017-2020 թվականների համար: Աջակցության ընդհանուր ծավալը նախատեսված է 144 մլն-176 մլն եվրո: Ներկա փուլում է գտնվում ՀՀ կողմից առաջնային ոլորտների գնահատման գործընթացը, որոնցով հետագայում կիրականացվեն համապատասխան ծրագրերը::<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար աշխատանքներ են իրականացվելու ոլորտային պետական կառավարման մարմինների հետ ծրագրերի հնարավորությունների և դրանց իրագործման հմտությունների փոխանցման նպատակով:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացումը կապահովվի ՀՀ կառավարության ծրագրի վերոնշյալ դրույթի իրականացումը, ինչպես նաև ծրագրի իրականացման ոլորտներում բարեփոխումների իրականացման, ԵՄ օրենսդրության մոտարկման, ռազմավարությունների և հայեցակարգերի մշակման, և մարմինների կարողությունների զարգացման և հզորացման ապահովումը: |
| **250** | **Արտահանմանն առնչվող մաքսային ընթացակարգերի և դրանցով պայմանավորված վարչարարության պարզեցում**<br>***250.1 Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող երկակի նշանակության հսկվող ապրանքների, ինչպես նաև փոխանցվող երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների՝ հսկվող ոչ նյութական արժեքների ցանկի հաստատում, ընթացակարգերի վերանայում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով: Միջոցառման իրակացման նպատակը վերահսկվող ապրանքների և մտավոր գործունեության արդյունքների կարգավորումների եվրոպական երկների օրենսդրությանը ներդաշնակեցումն է և արտահանման ընթացակարգերի պարզեցումը:<br>**1.1. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանում օգտագործվում են երկակի նշանակության հսկվող ապրանքների, ինչպես նաև փոխանցվող երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների՝ հսկվող ոչ նյութական արժեքների 2011 թվականի ցանկերը, որոնք որոշակիորեն կորցրել են իրենց արդիականությունը:<br>**1.2. 1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է երկակի նշանակության հսկվող ապրանքների, ինչպես նաև փոխանցվող երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների՝ հսկվող ոչ նյութական արժեքների ցանկը համահունչ |

դարձնել եվրոպական երկրներում օգտագործվող 2016 թվականին հաստատված ցանկերի հետ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Երկակի նշանակության ապրանքների արտահանման և տարանցիկ փոխադրման թույլտվությունների տրամադրման համար գործընթացի կանոնակարգում, միջազգային պահանջներին համապատասխանե-ցում, ռիսկերի նվազեցում, ընթացակարգերի պարզեցում:

**251** **Որակի ենթակառուցվածքի համակարգի արդյունավետության բարձրացում, համապատասխանության գնահատման փաստաթղթերի, ինչպես նաև փորձարկման լաբորատորիաների կողմից իրականացվող լաբորատոր փորձաքննությունների հասանելիության և մատչելիության բարձրացում, հիմնական արտահանման շուկաներում համապատասխանության գնահատման փաստաթղթերի ճանաչելիության ապահովում**

*251.1 «Չափագիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը և միջոցառումների ցանկը հաստատելու վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ*

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՅՅ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով: ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարությանը հավանություն տալու մասին» N1693-Ն որոշմամբ հաստատվել էր ՀՀ որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարությունը, ինչպես նաև ռազմավարության գործողությունների ծրագիրը (2010-2020թթ.), որը ներառում է չափագիտության ոլորտը: Ծրագրի գործողության ժամկետը թեև 1 տարի հետո ավարտվում է, սակայն ոլորտում առկա է փոփոխությունների անհրաժեշտություն, ուստի ոլորտային, կառուցվածքային բարեփոխումներ իրականացնելու համար անհրաժեշտ է լիովին վերհանել և վերլուծել առկա թերությունները՝ սահմանելով համակարգի ոլորտների զարգացման միտումներն ու հնարավոր ուղղությունները, միջազգային պահանջներին համապատասխան համակարգի բարեփոխումը՝ չհակասելով ԵԱՏՄ շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորություններին:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս երկրում ցածր է չափումների միասնականության ապահովման մասին իրազեկության մակարդակը, բավարար չեն մարդկային և ֆինանսական ռեսուրսները, ցածր է վերապատրաստման և միջազգային փորձի փոխանակման մակարդակը, ինչպես նաև առկա է ԵՄ և ԵԱՏՄ փորձագիտական խորհրդատվական խմբերի աջակցության անհրաժեշտություն:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Չափագիտության ոլորտը կարևորվում է արտադրանքի անվտանգության և որակի ապահովման, նոր տեխնոլոգիաների ներդրման, համապատասխանության գնահատման արդյունքների ճշտության և հավաստիության, վկայագրված մեթոդիկաների կիրառման, հավատարմագրման արդյունքների ճանաչման և այլնի համար: Սա ևս մեկ անգամ ապացուցում է Որակի ենթակառուցվածքների փոխկապակցվածության անհրաժեշտու-թյունը: Որպես առաջարկվող լուծում չափագիտության ռազմավարության վերանայման համար նախատեսվում է ստեղծել համապատասխան աշխատանքային խումբ՝ խորհրդատվական խմբի, շահագրգիռ մարմինների հետ համատեղ, որի միջոցով կվերանայվի դեռևս գործող ռազմավարությունը, կվերհանվեն և կվերլուծվեն ոլորտում առկա թերությունները, 2019-2024թթ. համար կսահմանվեն հնարավոր փոփոխությունները և դրանց կիրարկման հնարավորությունները, համատեղելով Համաշխարհային բանկի որակի ենթակառուցվածքի զարգացման վարկային ծրագրով նախատեսված միջոցառումների և ԵՄ կողմից տրամադրվող աջակցության հետ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է.

- Ոլորտի օրենսդրության բարելավմանն ուղղված՝ 2019-2024թթ. ռազմավարության և ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի մշակում,
- ՀՀ չափագիտության ոլորտը կանոնակարգող օրենսդրության վերանայում, ոլորտի ազատականացում, ազգային գործող օրենսդրության և չափագիտության ոլորտի ԵԱՏՄ, միջազգային համանման

օրենսդրության ուսումնասիրման արդյունքում համապատասխան թիրախների սահմանում,

- ՀՀ չափագիտության ոլորտը միջազգային պահանջներին համապատասխանեցնելու համար ոլորտի զարգացման հեռանկարային ուղղությունների սահմանում,
- Միջազգային լավագույն փորձի կիրառման համար ՉԱԻ կառուցվածքի, գործառույթների վերանայում, կարողությունների հզորացում և մարդկային ռեսուրսների զարգացում,
- Չափագիտության ոլորտում միջազգային ճանաչում ունեցող մարմինների հետ համագործակցության, փոխըմբռնման և մասնագիտական փորձի փոխանակման հուշագրերի/համաձայնագրերի կնքում:

***251.2 ՀՀ-ում գործող ոչ պարենային, ԵԱՏՄ գործող, տեխնիկական կանոնակարգերի վերանայում, ԵԱՏՄ նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի մշակմանը մասնակցություն***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՅՅ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով: ԵԱՏՄ պայմանագրով ամրագրված է ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի ուղիղ կիրառման պահանջ ԵԱՏՄ անդամ պետություններում: ԵԱՏՀ խորհրդի 2011թ. N526 որոշմամբ սահմանված է թվով 66 արտադրանք, որոնց նկատմամբ միայն ԵԱՏՄ շրջանակներում պետք է գործեն տեխնիկական կանոնակարգեր և ցանկում չներառված արտադրանքին ներկայացվող պահանջների սահմանումը արգելվում է: Միաժամանակ արգելվում է ցանկում ներառված արտադրանքի ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի ուժի մեջ մտնելուց հետո տվյալ արտադրանքի համար ազգային օրենսդրության առկայությունը (կամ լրացուցիչ պահանջների սահմանումը): Բացի այդ ՀՀ կառավարության 09.08.2012թ. «**Ոչ պարենային արտադրանքի տեխնիկական կանոնակարգերի վերանայման պլանավորման ծրագիրը հաստատելու մասին**» N1015 որոշմամբ սահմանված է թվով 7 ազգին գործող տեխնիկական կանոնակարգերի (ԵԱՏՄ-ում դեռևս չգործող) վերանայում ԵՄ համանման կանոնակարգերին մոտարկելու տեսանկյունից: Գործող տեխնիկական կանոնակարգերում անհրաժեշտ է միջազգային ընդունված ստանդարտներին ներդաշնակ այնպիսի ստանդարտների ներառում, որոնք միտված կլինեն ապահովել և նպաստել տեղական արտադրողների կողմից անվտանգ արտադրանքի արտադրմանը, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում արտադրանքի մրցունակության բարձրացմանը, առևտրում առկա տեխնիկական խոչընդոտների նվազեցմանը, տեղական արտադրանքի համար նոր շուկաների ձեռքբերմանը:

ԵԱՏՄ գործող տեխնիկական կանոնակարգերի վերանայման, ինչպես նաև նոր տեխնիկական կանոնակարգերի նախագծերի մշակմանը մասնակցության անհրաժեշտությունը պայմանավորված է տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված հնացած կամ ուժը կորցրած ստանդարտների արդիականացմամբ, ցանկում բացակա ստանդարտների ներառմամբ, ԵԱՏՀ 2018թ. դեկտեմբերի N44 որոշմամբ պայմանավորված նոր տիպային սխեմաների (համապատասխանության գնահատման ընթացակարգերի) վերանայմամբ, ԵԱՏՄ ԱՏԳԱԱ ծածկագրերի արդիականացմամբ:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս ՀՀ-ում գործում են թվով 64 ոչ պարենային տեխնիկական կանոնակարգեր, որոնք ենթակա են վերանայման «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի, ԵԱՏՄ պայմանագրի, ԵԱՏՄ տվյալ ոլորտում գործող օրենսդրության, ԵՄ համանման դիրեկտիվների մոտարկման տեսանկյունից: «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև «Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրով սահմանված է առնվազն 5 տարին մեկ գործող տեխնիկական կանոնակարգերի վերանայում: Դեռևս 2012թ. ԵՄ համանման դիրեկտիվների մոտարկման տեսանկյունից ՀՀ կառավարության 2012թ. 1015-Ն որոշմամբ սահմանվել է թվով 46 ազգային տեխնիկական կանոնակարգերի (32 ոչ պարենային, 14 պարենային) վերանայում մինչև 2020թ. , ինչի արդյունքում վերանայվել են թվով 3 տեխնիկական կանոնակարգեր (ծխախոտ, խաղալիք, ցածր լարման սարքավորումներ), ինչը ՀՀ ԵԱՏՄ-ի պայմանագրին միացման պատճառով հետագայում շարունակականություն չի ունեցել: 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին ՀՀ-ի միացումից հետո ՀՀ ազգային ՏԿ-ների ԵՄ համանման դիրեկտիվներին մոտարկման գործընթացը սառեցվել է, այս ուղղությամբ աշխատանքների իրականացումը, արդի պահանջներին համապատասխանեցումը ներկայումս հրատապ է ու անհետաձգելի: Հաշվի առնելով ՀՀ-ԵՄ համագործակցության վերսկսումը, միաժամանակ ԵԱՏՄ պայմանագրով ՀՀ-ի ստանձնած պարտավորությունները կրկին անհրաժեշտություն է առաջացել այդ համատեքստում վերանայել գործող ազգային տեխնիկական

կանոնակարգերը: Ներկայումս առկա է ստանդարտացման, ինչպես նաև որակի ենթակառուցվածքի մյուս ոլորտներում առկա իրազեկության ցածր մակարդակ, ինչը պայմանավորված է նաև մասնավոր հատվածի, տեղական արտադրողի համեմատաբար անտարբերությամբ և պասիվությամբ: Գործող տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն ապահովող ստանդարտները հաճախ արդիականացված և ներդաշնակ չեն ստանդարտացման միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված ստանդարտներին, կամ տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկերում բացակայում են անվտանգության բոլոր ցուցանիշներն ապահովող ստանդարտներ և չեն արտացոլում արդի պահանջները, ինչպես նաև չեն ապահովում շուկայահանման, համապատասխանության գնահատման գործընթացների իրականացումն ամբողջ ծավալով: Վերոնշյալը հանգեցնում է տեղական արտադրողների կողմից անմրցունակ և ոչ անվտանգ արտադրանքի արտադրմանը:

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը մշակվել և ընդունվել են դեռևս 2011-2012թթ., իսկ գիտատեխնիկական զարգացման արդյունքում մշակվել են նոր ստանդարտներ: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկերի վերլուծության ընթացքում, ինչպես նաև շահագրգիռ մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում պարզվել է, որ ստանդարտները հնացել կամ ուժը կորցրած են ճանաչվել կամ փոխարինվել են նոր ստանդարտներով: Բացի այդ տեխնիկական կանոնակարգերով կան սահմանված ցուցանիշներ, որոնց համապատասխանությունն ապահովող մեթոդիկաները բացակայում են: ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի զգալի մասում համապատասխանության գնահատման ընթացակարգերը հին տիպային սխեմաներով են նախատեսված: Ոլորտում առկա իրավիճակի վերլուծության արդյունքում անհրաժեշտություն է առաջացել արդիականացնել տեխնիկական կանոնակարգերը՝ ստանդարտների, ցուցանիշների և գնահատման ընթացակարգերի տեսանկյունից:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ներկայումս ՀՀ-ում գործում են թվով 64 ոչ պարենային տեխնիկական կանոնակարգեր, որոնց.

- մի մասը չեն կարող հանդիսանալ տեխնիկական կանոնակարգեր, քանի որ դրանցում ներառված պահանջները չեն վերաբերում արտադրանքին կամ արտադրանքին և դրա հետ կապված գործընթացներին (այդ իրավական ակտերը պետք է ուժը կորցնեն),
- մյուս մասի օբյեկտ հանդիսացող արտադրանքն արդեն իսկ կանոնակարգվում է ԵԱՏՄ օրենսդրությամբ ուստի դրանցով սահմանված պահանջները պետք է վերանայվեն,
- մյուս մասի օբյեկտ հանդիսացող արտադրանքը ներառված է ԵԱՏՀ ցանկում, սակայն դրա ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը բացակայում է (նախագծային փուլում է կամ դեռևս մշակված չէ), ուստի տվյալ արտադրանքի համար ազգային օրենսդրությունը արդիականացման/վերանայման անհրաժեշտություն ունի:

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի մասով առաջարկվում է շահագրգիռ կողմ հանդիսացող մարմինների՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի, համապատասխանության գնահատման մարմինների, հավատարմագրման ազգային մարմնի, ինչպես նաև կանոնակարգող մարմինների աջակցությամբ և համապատասխան աշխատանքային խմբերի ստեղծմամբ ազգային հետաքրքրություն ներկայացնող ստանդարտների, ինչպես նաև ստանդարտացման միջազգային կազմակերպությունների կողմից մշակված արդի ստանդարտների ներառում տեխնիկական կանոնակարգերի միասնական ցանկերում, ինչպես նաև ԵԱՏՄ գործող տեխնիկական կանոնակարգերի վերանայում՝ համապատասխանության գնահատման ընթացակարգերը ԵԱՏՀ 2018թ. դեկտեմբերի N44 որոշմամբ սահմանված նոր տիպային սխեմաներին համապատասխանեցնելու նպատակով:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Գործող ազգային տեխնիկական կանոնակարգերի վերանայման արդյունքում կապահովվի.

- Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների արդիականացում՝ ժամանակակից ստանդարտներով, մեթոդիկաներով, համապատասխանության գնահատման ընթացակարգերով (վերանայված ՀՀ կառավարության «Համապատասխանության գնահատման ընթացակարգերը սահմանելու մասին» N56-Ն որոշում)
- արտադրանքի արտադրմանը, շուկայահանմանը, մակնշմանը ներկայացվող արդի պահանջների սահմանում
- առևտրում առկա տեխնիկական խոչընդոտների նվազեցում

| | |
|---|---|
| | - մրցունակ արտադրանքի արտադրություն<br>- արտահանման ծավալների ավելացում, տեղական արտադրանքի համար նոր շուկաների ձեռքբերում տեղական արտադրողների կողմից անվտանգ արտադրանքի արտադրում:<br><br>***251.3 ՀՀ-ում հավատարմագրման և համապատասխանության գնահատման գործընթացների էլեկտրոնային համակարգերի մշակում և ներդնում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՅՅ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով: Հավատարմագրման ազգային մարմնի կարողությունների զարգացման և հավատարմագրման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը նախատեսում է էլեկտրոնային հավատարմագրման գործընթացի (e-accreditation) ավտոմատացման համակարգի մշակում և ներդրում: Բացի այդ համապատասխանության գնահատման մարմինների կարողությունների զարգացման և վերջիններիս կողմից իրականացվող համապատասխանության գնահատման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է ՀՀ-ում գործող հավատարմագրված համապատասխա-նության գնահատման մարմինների համար մշակել համապատասխանության գնահատման գործընթացի էլեկտրոնային համակարգ: Վերոգրյալ համակարգերի ներդրումը կնպաստի ՀԱՄ-ի կողմից հավատարմագրման գործընթացի իրականացման թափանցիկությանը, համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամանակի կրճատմանը, համապատասխանության գնահատման մարմինների կարողությունների զարգացում, համապատասխանության գնահատման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2016թ. նոյեմբերի 24-ին ՀԱՄ-ի և Հավատարմագրման եվրոպական համագործակցության (EA) միջև կնքված անդամակցության համաձայնագրի համաձայն ՀԱՄ-ը հանդիսանում է կազմակերպության ասոցացված անդամ: 2017թ. ընթացքում իրականացվել են աշխատանքներ հավատարմագրման արդյունքների բազմակողմ և երկկողմ ճանաչման համաձայնագրերի կնքման ուղղությամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պետության կողմից ոլորտը վերահսկելի դարձնելու համար միջազգային փորձագետների կողմից համապատասխան մեխանիզմների սահմանումը, ՀՀ-ում ներդրումը և կիրառումը կնպաստի ՀԱՄ-ի կողմից հավատարմագրման գործընթացի իրականացման ապահովմանը՝ միջազգային ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտի պահանջներին համապատասխան: Միաժամանակ նշված մեխանիզմների ներդրումը հնարավորություն կընձեռնի ապահովել ՀԱՄ-ի կողմից հավատարմագրման գործընթացում գնահատվող՝ փորձարկման լաբորատորիաների կողմից իրականացվող փորձարկումների թափանցիկությունը, կփաստի համապատասխան ՓԼ-ներում ռեագենտների օգտագործումը և պահեստային ֆոնդում առկա մնացորդները, ինչպես նաև հնարավորություն կընձեռի պահպանել/արխիվացնել իրականացված փորձարկումների վերաբերող համապատասխան տեղեկատվությունները: Վերը թվարկվածները կբացառեն հավատարմագրման գործընթացում (ներառյալ պարբերական և արտահերթ գնահատումների ժամանակ) ռիսկերի առկայությունը և կհանդիսանան միջազգային ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտի պահանջների բավարարման ապացույցներ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է.<br>- Հավատարմագրման ազգային մարմնի կարողությունների զարգացում<br>- Հավատարմագրման գործընթացի մատչելիության, թափանցիկության ապահովում, արդյունավետության բարձրացում<br>- Համապատասխանության գնահատման մարմինների կարողությունների զարգացում<br>- Համապատասխանության գնահատման գործընթացի արդյունավետության բարձրացում, թղթավաճառության նվազեցում<br>- Հավատարմագրման և համապատասխանության գնահատման գործընթացների վերահսկելիության ապահովում: |

***251.4 Հավպարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված երկկողմ և բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքում փարածաշրջանային և միջազգային հավպարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC, IAF)***

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՅՅ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով: Հավատարմագրման հիմնական նպատակներից է Հավատարմագրման ազգային մարմնի հավատարմագրման աշխատանքների արդյունքների, հավատարմագրված ՀԳՄ-ների կողմից տրամադրվող փաստաթղթերի (համապատասխանության սերտիֆիկատների, փորձարկման արձանագրությունների և այլն) միջազգային ճանաչման համար պայմանների ստեղծումը: Հավատարմագրման ազգային մարմինը նշված նպատակին հասնելու համար հավատարմագրման արդյունքների բազմակողմ և երկկողմ ճանաչման համաձայնագրերում պետք է ստորագրող կողմ հանդիսանա: Նշված պահանջն ապահովելու համար ՊՈԱԿ-ի կողմից 2016 թվականի հուլիսի 22-ին հայտ է ներկայացվել EA-ի քարտուղարություն՝ եվրոպական (EA) հավատարմագրման համագործակցությանը որպես ասոցացված անդամ դառնալու նպատակով: Պետք է արձանագրել, որ անդամակցությունը արդյունավետ կերպով կկրճատի ինչպես արտադրողի, այնպես էլ ներմուծողի ծախսերը, քանի որ անդամակցության դեպքում կրճատվում կամ վերանում է արտադրանքի (ծառայության)՝ մյուս երկրում վերագնահատման:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

2016 թվականի հուլիսի 22-ին «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից հայտ է ներկայացվել հավատարմագրման եվրոպական համագործակցության (EA) քարտուղարություն՝ ասոցացված անդամ դառնալու նպատակով: Նույն թվականի նոյեմբերի 22-24-ը Շվեդիայում կայացած գագաթնաժողովում միաձայն ընդունվել է ՀՀ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը (ARMNAB) (EA)-ի ասոցացված անդամ դառնալու վերաբերյալ որոշում և ստորագրվել է անդամակցության համաձայնագիր: Թեև ՊՈԱԿ-ը ներկայումս հանդիսանում է EA-ի ասոցացված անդամ, սակայն ազգային համապատասխանության գնահատման մարմինների կողմից տրամադրված համապատասխանության գնահատման փաստաթղթերը միջազգային ճանաչում չունենն:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC, IAF) հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված երկկողմ և բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքմանը հասնելու համար անհրաժեշտ է.

- ՀՀ հավատարմագրման օրենսդրության համապատասխանեցում միջազգային պահանջներին
- ՀԱՄ կարողությունների զարգացում, անձնակազմի շարունակական վերապատրաստում
- Տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների կողմից մշակված փաստաթղթերի թարգմանություն, ներդնում, տեղայնացում
- ԻՍՕ/ԻԵԿ 17011-2017 նոր ստանդարտի ներդնում հավատարմագրման ազգային մարմնում
- ՀԱՄ-ի և ՀԳՄ-ների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, թափանցիկության ապահովում
- Եվրոպական հավատարմագրման համագործակցության կոմիտեների աշխատաժողովներին և գագաթնաժողովներին մասնակցություն:

2. **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է.

- ՀՀ համապատասխանության գնահատման փաստաթղթերի ճանաչելիության ապահովում
- Առանց լրացուցիչ համապատասխանության գնահատման, առանց խոչընդոտների ԵՄ երկրներ արտադրանքի արտահանում
- Արտաքին առևտրի պայմանների դյուրացում, արտահանման ծավալների մեծացում և բիզնեսի զարգացում,
- Համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամանակի և ֆինանսական ռեսուրսների կրճատում՝ կրճատելով տեղական արտադրողի, ներմուծողի ծախսերը, ստեղծելով բարենպաստ պայմաններ տեղական արտադրողի համար և բացառելով նույն արտադրանքի վերագնահատման (կրկնակի փորձարկման և սերտիֆիկացման) անհրաժեշտությունը:

***251.5 Միջազգային ճանաչում ունեցող փրամաչափարկման լաբորափորիաների սփեղծման ապահովում***

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՅՅ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով: Արդյունաբերական չափագիտությունը չափագիտության այն ճյուղն է, որն ապահովում է գրեթե բոլոր ոլորտներում կիրառվող չափման միջոցների ճիշտ աշխատանքը, միջազգային մակարդակով չափումների հետևելիությունը, ինչը նպաստում է այդ ոլորտների, գիտության, տեխնիկայի, տնտեսության զարգացմանը, քաղաքացիների կյանքի որակի բարձրացմանը: Չափումների միասնականության ապահովման բնագավառում լուրջ և հիմնարար դեր է խաղում ժամանակակից պահանջներին համապատասխան սարքավորումներով հագեցված՝ արդյունաբերական չափագիտության կենտրոնի, տրամաչափարկման լաբորատորիաների առկայությունը, որը կապահովի արդյունաբերական ձեռնարկությունների չափագիտական սպասարկման որակի էական աճ, ինչպես նաև օրենսդրական և գիտական չափագիտության զարգացում: Ներկայումս խիստ կարևոր է և հրատապ ՀՀ-ում հիմնական չափագիտական ուղղություններն ընդգրկող ժամանակակից տրամաչափարկման լաբորատորիաների հիմնումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նշված նպատակի իրականացման համար առկա հիմնական խնդիրներն են.<br>- ՉԱԻ վերակազմակերպում, միջազգային չափանիշներին համապատասխան արդյունաբերական կենտրոն ստեղծելու նպատակով, ինչը կապահովի միջազգայնորեն ճանաչված որակի կառավարման համակարգերի /ՈԿՀ/ ներքո գործող չափագիտական ծառայություններ,<br>- Արդյունաբերական չափագիտության կենտրոնի շենքի և լաբորատորիաների վերանորոգում, լաբորատորիաների համար անհրաժեշտ սարքավորումների, գույքի ձեռք բերում,<br>- ՉԱԻ անձնակազմի մասնագիտական կարողությունների ոչ բավարար մակարդակ՝ սարքավորումներով աշխատելու համար ոչ բավարար հմտություններ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ելնելով ՀՀ-ում տրամաչափարկման ենթակա սարքավորումների պահանջարկի վերաբերյալ կատարված ուսումնասիրություններից, գործող, հավատարմագրված, փորձարկման լաբորատորիաներում կիրառվող սարքավորումների տեսականու վերլուծությունից, ՉԱԻ ՓԲԸ-ում առկա օրենսդրական չափագիտության ոլորտում կիրառվող սարքավորումների ներքին տրամաչափարկման պահանջարկից, գերակա է ՉԱԻ ՓԲԸ-ում արդյունաբերական 3 հետևյալ չափագիտական լաբորատորիաների հիմնումը՝<br>- Զանգվածի և հարակից մեծությունների չափումների լաբորատորիա,<br>- Ջերմային չափումների լաբորատորիա:<br>- Ուժի և հարակից մեծությունների չափումների լաբորատորիա:<br>Նշված երեք տրամաչափարկման լաբորատորիաների առկայությունը կստեղծեն նախադրյալներ գիտական չափագիտության զարգացման, չափագիտական բարձր որակի ծառայությունների մատուցման և տրամաչափարկման առկա ներքին կարիքների բավարարման համար:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Տրամաչափարկման լաբորատորիաների կողմից կիրականացվեն տրամաչափարկման աշխատանքներ՝ ստեղծելով նախադրյալներ գիտական չափագիտության զարգացման, իրականացվող փորձարկումների հավաստիության, չափումների ճշտության համար: Կստեղծվեն զանգվածի և հարակից մեծությունների, ջերմային չափումների և հարակից մեծությունների, ուժի և հարակից մեծությունների, ինչպես նաև այլ ուղղություններով տրամաչափարկման լաբորատորիաներ՝ ապահովելով ռազմական արդյունաբերության, առողջապահության, էներգետիկայի, բնապահպանության, գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, շինարարության, մետաղամշակման, գործիքաշինության ոլորտներում, գազալցակայաններում, հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում ճշգրիտ և միջազգային մակարդակով հետևելի չափումներ:<br>Արդյունքում, Չափագիտության ազգային մարմինը.<br>- կհամալրվի միջազգային ճանաչում ունեցող լաբորատորիաներով,<br>- կմասնակցի միջլաբորատոր համեմատություններին, մասնագիտական որակավորման ծրագրերին և CMC տվյալների հրապարակմանը Չափի և կշռի միջազգային բյուրոյի տվյալների բազայում, ուստի կհանդիսանա չափումների բնագավառում ազգային և միջազգային մակարդակներում կապող կամուրջ,<br>- կկարողանա կատարել միջազգային ստանդարտներին համապատասխան տրամաչափարկման |

աշխատանքներ՝ բավարարելով ներկա տեղական պահանջարկը,
- կնպաստի պետական և մասնավոր ձեռնարկությունների արտադրանքի որակի լավացմանը, ինչը թույլ կտա արտահանել կամ ներմուծել մրցունակ և որակյալ արտադրանք,
- կապահովի ՀՀ-ի բազմաթիվ ոլորտներում կիրառվող սարքավորումների ճշգրտությունը և չափագիտական անկախությունը,

լաբորատոր փորձարկումների հիման վրա կկատարվեն ճշգրիտ ախտորոշումներ և այլն:

252

**Արտաքին շուկաներում Հայաստանի՝ որպես բրենդ դիրքավորում, հաջողված ոլորտներում հայաստանյան արտահանող ապրանքների և ծառայությունների ճանաչելիության արմատավորում**

***252.1 « Պետական աջակցություն՝ ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2019 թվականի ծրագրի» հասպատում***

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով, ինչպես նաև 2011 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ կառվարության «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությանը հավանություն տալու մասին» N49 արձանագրային որոշման դրույթների կատարման անհրաժեշտությամբ: Միջոցառման իրականացման նպատակը պետական աջակցությամբ արտահանման խթանումն է և տեղական կազմակերպությունների մրցունակության բարձրացումը: Պետական աջակցության գործիքակազմը կրում է շարունակական բնույթ: Այդ իսկ նպատակով առաջարկվում է 2019 թվականի պետական աջակցության աշխատանքները շարունակել ըստ նախատեսված գործիքակազմի:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ արտահանման ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը միտված է տնտեսական աճի նոր շարժիչ ուղղությունների ձևավորմանն ու զարգացմանը՝ ի հաշիվ ներկայումս արտահանող և արտահանման ներուժ ունեցող ոլորտների զարգացման:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Պետական աջակցությունը տրամադրվում է հետևյալ ուղղություններով.
- գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների, ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցություն և (կամ) կազմակերպում,
- ֆինանսական գործիքների կիրառմամբ՝ արտադրական գործունեության վարկավորման մասնակի սուբսիդավորում,
- օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում,
- ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում,
- գործարար կապերի հաստատում
- ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում:

2. **Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Արտահանմանն ուղղված պետական աջակցության տրամադրում, մասնավորապես ցուցահանդեսների կազմակերպման, տեղական արտադրանքի առաջմղման և ճանաչելիության բարձրացում, պոտենցիալ գնորդների և դիստրիբյուտորների ներգրավում:

***252.2 ՀՀ առևտրական կցորդների/ ներկայացուցչությունների համակարգի բարեփոխումների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների ներկայացում***

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.5 բաժնի դրույթներով: Առևտրական ներկայացուցիչների հիմնական գործառույթը առևտրի և արտահանման խթանումն է, ինչպես նաև երկրի տնտեսական շահերի ներկայացումն ու պաշտպանումը տարբեր կառույցներում: Աշխարհում առևտրական ներկայացուցիչի ինստիտուտի կառուցվածքի երկու հիմնական մոտեցում կա: Հայաստանի համար ընդունելի և կիրառելի մոդելի որդեգրման նպատակով կմշակվեն հայեցակարգային մոտեցումները:

| | |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն ունի մի քանի զուգահեռ ձևաչափեր: ԵՄ-ում և ԱՀԿ-ում մշտական ներկայացուցիչներ, Չինաստանում, ԱՄՆ-ում պետական բյուջեի հաշվին պահվող առևտրական ներկայացուցիչներ, ՌԴ-ում առևտարական ներկայացուցիչ, որը չնայած բյուջեից ուղղակիորեն չի ֆինանսավորվում, սակայն ծախսում է պետությանը հատկացված գույքի օգտագործումից առաջացող ռեսուրսներ, Բելոռուսում դեսպանատան հաստիքացուցակում վճարվող առևտրական հարցերով ներկայացուցիչ, Ավստրիայում և Լիբանանում կամավորության սկզբունքով (անվճար) համագործակցող ներկայացուցիչներ, Թուրքմենստանում, Բիզնես Արմենիայի կողմից կազմակերպության ներկայացոցիչներ նշանակված շուրջ երկու տասնյակ անձինք (նույնպես՝ պետության կողմից չվճարվող): Շատ հաճախ, ներդրումների և արտահանման հարցերի քննարկումներում ներգրավվում են նաև արտերկրում դիվանագիտական անձնակազմը, ովքեր չունեն տնտեսական քաղաքականությանը վերաբերվող բավարար փորձ ու գիտելիքներ՝ արդյունավետ լինելու համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համակարգի արդյունավետության բարձրացման տեսանկյունից շեշտադրվում են մի շարք հարցադրումներ, որոնք լուծման նպատակով նախատեսվում է մշակել հայեցակարգային մոտեցումները: Մասնավորապես՝ հարցադրումների շրջանակը ներառում է.<br>– Տնտեսական համագործակցության օրակարգի ձևավորում, հայկական արտահանողների շահերի սպասարկում, ներդրումների ներգրավման խթանում.<br>– Թվարկված ֆունկցիաների տեսանկյունից նշանակման երկրում առևտրական մշտական ներկայացուցիչներ ունենալու արդյունավետություն.<br>– Նշանակնման երկրում կամավորության սկզբունքով համագործակցել ցանկացող անձանց հետ հետ հարաբերությունները.<br>– ԱԳՆ դիվանագիտական անձնակազմի ներգրավվածության հարցեր:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ՀՀ առևտրական կցորդների/ներկայացուցչությունների համակարգի առավել արդյունավետ մոդելի բացահայտում: |
| **253** | **Օտարերկրյա ներդրումների պաշտպանության մեխանիզմների զարգացում**<br>***253.1 Ներդրումային քաղաքականության ուսումնասիրություն, վերանայում և զեկույցի պատրաստում ՄԱԿ-ի Առևտրի և Զարգացման Համաժողովի (UNCTAD) աջակցությամբ***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով: Հայաստանում ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝ ներդրումային միջավայրի բարելավում, օրենսդրական դաշտի կատարելագործում և Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանում: Ներդրումային քաղաքականության կատարելագործմամբ կիրագործվեն հետևյալ նպատակները՝ ներդրողների համար առանցքային նշանակության ոլորտներ մուտք գործելու խոչընդոտների նվազում, ներդրողների պաշտպանվածության, երաշխիքների մակարդակի և օրենսդրական դաշտի կայունության բարձրացում, ավելի թափանցիկ, արդյունավետ և գործուն խթանների համակարգ, ինչի արդյունքում կարձանագրվի ներդրումների աճ:<br>ՄԱԿ-ի Առևտրի և Զարգացման Համաժողովը (UNCTAD) ՄԱԿ-ի Քարտուղարության առևտրի և զարգացման հարցերով, ներառյալ օտարեկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) հիմնական կոնտակտային կենտրոնն է: Այս առումով, այն համարվում է ներդրումային խորհրդատվական ծառայությունների և ՕՈՒՆ վերաբերող կարողությունների զարգացման աջակցության լավագույն կենտրոնը: Ներդրումային քաղաքականության վերանայումը (IPR) այդ ծրագրերից մեկն է, այն համապարփակ, պահանջարկի հիման վրա հիմնված կոնկրետ երկրի տեխնիկական աջակցության միջնաժամկետից երկարաժամկետ գործընթաց է:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վերջին տարիներին ՀՀ-ում նկատվում է ներդրումների, մասնավորապես օտարերկրյա ներդրումների նվազման միտում, ինչը նաև կարող է պայմանավորված լինել ներդրումային միջավայրի խոչընդոտներով, ներդրումային |

| | |
|---|---|
| | քաղաքականության անարդյունավետությամբ, ներդրողների անվստահությամբ և պաշտպանության մեխանիզմների անկատարությամբ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներդրումային քաղաքականության վերանայումը գնահատում է երկրի քաղաքականությունը, նորմատիվ և ինստիտուցիոնալ միջավայրը ՕՈՒՆ համար՝ ընդհանուր տնտեսական և սոցիալական զարգացման նպատակներին համապատասխան:<br>ՄԱԿ-ի Առևտրի և Զարգացման Համաժողովի (UNCTAD) կողմից նախատեսվում է Հայաստանի համար պատրաստել «Ներդրումային քաղաքականության ուսումնասիրություն» զեկույցը, որից հետո կմշակվի դրանում տեղ գտած առաջարկությունների իրականացման ճանապարհային քարտեզը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Երկրի կարիքներին համարեցված ուսումնասիրություն (ՕՈՒՆ իրավական, կարգավորիչ և ինստիտուցիոնալ հիմքերի գնահատում), որում ներառված առաջարկությունները հստակ են և ուղղված կոնկրետ գործողությունների:<br><br>***253.2 «Ներդրումային քաղաքականության ուսումնասիրություն» զեկույցի արդյունքների ներկայացում Հայաստանում և ՄԱԿ Առևտրի և Զարգացման Համաժողովի գլխամասում (Ժնև) կայանալիք նիստում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով: ՄԱԿ-ի Առևտրի և Զարգացման Համաժողովը (UNCTAD) ՄԱԿ-ի Քարտուղարության առևտրի և զարգացման հարցերով, ներառյալ օտարեկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) հիմնական կոնտակտային կենտրոնն է: Այս առումով, այն համարվում է ներդրումային խորհրդատվական ծառայությունների և ՕՈՒՆ վերաբերող կարողությունների զարգացման աջակցության լավագույն կենտրոնը: Ներդրումային քաղաքականության վերանայումը (IPR) այդ ծրագրերից մեկն է, այն համապարփակ, պահանջարկի հիման վրա հիմնված կոնկրետ երկրի տեխնիկական աջակցության միջնաժամկետից երկարաժամկետ գործընթաց է: ՄԱԿ-ի Առևտրի և Զարգացման Համաժողովի (UNCTAD) կողմից նախատեսվում Հայաստանի համար պատրաստել «Ներդրումային քաղաքականության ուսումնասիրություն» զեկույց: Զեկույցը արդյունքները ներկայացվելու են Հայաստանում և ՄԱԿ Առևտրի և Զարգացման Համաժողովի (Ժնև) միջկառավարական մակարդակի Ներդրումների և Ձեռնարկությունների Զարգացման Հանձնաժողովի կայանալիք նիստում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վերջին տարիներին ՀՀ-ում նկատվում է ներդրումների, մասնավորապես օտարերկրյա ներդրումների նվազման միտում, ինչը նաև կարող է պայմանավորված լինել ներդրումային միջավայրի խոչընդոտներով, ներդրումային քաղաքականության անարդյունավետությամբ, ներդրողների անվստահությամբ և պաշտպանության մեխանիզմների անկատարությամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Զեկույցի արդյունքները ներկայացվելու են Հայաստանում և ՄԱԿ Առևտրի և Զարգացման Համաժողովի (Ժնև) միջկառավարական մակարդակի Ներդրումների և Ձեռնարկությունների Զարգացման Հանձնաժողովի կայանալիք նիստում: Ներկայացման ընթացքում մասնագիտական քննարկումների և զեկույցում տեղ գտած առաջարկությունների հիման վրա կմշակվի միջոցառումների ծրագիր, որի իրականացումը կհանգեցնի ՀՀ ներդրումային միջավայրի կատարելագործման և ներդրումային քաղաքականության արդյունավետության և երկրի ներդրումային համբավի բարձրացման:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Բարեփոխումների միջոցառումների ծրագրի առկայություն, օտարերկրյա հանրությանը ՀՀ ներդրումային միջավայրի մասին տեղեկացում, ներդրումային համբավի բարձրացում:<br><br>***253.3 Ամփոփված առաջարկությունների հիման վրա միջոցառումների ծրագրի մշակում և իրականացում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով: Հայաստանում ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝ ներդրումային միջավայրի |

բարելավումը, օրենսդրական դաշտի կատարելագործումը և Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման խթանումը: Ներդրումային քաղաքականության կատարելագործմամբ կիրագործվեն հետևյալ նպատակները՝ ներդրողների համար առանցքային նշանակության ոլորտներ մուտք գործելու խոչընդոտների նվազում, ներդրողների պաշտպանվածության, երաշխիքների մակարդակի և օրենսդրական դաշտի կայունության բարձրացում, ավելի թափանցիկ, արդյունավետ և գործուն խթանների համակարգ, ինչի արդյունքում կարձանագրվի ներդրումների աճ:
ՄԱԿ-ի Առևտրի և Զարգացման Համաժողովը (UNCTAD) ՄԱԿ-ի Քարտուղարության առևտրի և զարգացման հարցերով, ներառյալ օտարեկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) հիմնական կոնտակտային կենտրոնն է: Այս առումով, այն համարվում է ներդրումային խորհրդատվական ծառայությունների և ՕՈՒՆ վերաբերող կարողությունների զարգացման աջակցության լավագույն կենտրոնը: Ներդրումային քաղաքականության վերանայումը (IPR) այդ ծրագրերից մեկն է, այն համապարփակ, պահանջարկի հիման վրա հիմնված կոնկրետ երկրի տեխնիկական աջակցության միջնաժամկետից երկարաժամկետ գործընթաց է:
ՄԱԿ-ի Առևտրի և Զարգացման Համաժողովի (UNCTAD) կողմից նախատեսվում է Հայաստանի համար պատրաստել «Ներդրումային քաղաքականության ուսումնասիրություն» զեկույց: Զեկույցը արդյունքները ներկայացվելու են Հայաստանում և ՄԱԿ Առևտրի և Զարգացման Համաժողովի (Ժնև) միջկառավարական մակարդակի Ներդրումների և Ձեռնարկությունների Զարգացման Հանձնաժողովի կայանալիք նիստում:
Արդյունքում կմշակվի կոնկրետ գործողություններին միտված միջոցառումների ծրագիր, որի իրականացումը կբերի ՀՀ ներդրումային միջավայրի կատարելագործման և ներդրումային քաղաքականության արդյունավետության և երկրի ներդրումային համբավի բարձրացման:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Վերջին տարիներին ՀՀ-ում նկատվում է ներդրումների, մասնավորապես օտարերկրյա ներդրումների նվազման միտում, ինչը նաև կարող է պայմանավորված լինել ներդրումային միջավայրի խոչընդոտներով, ներդրումային քաղաքականության անարդյունավետությամբ, ներդրողների անվստահությամբ և պաշտպանության մեխանիզմների անկատարությամբ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Զեկույցի արդյունքները ներկայացվելու են Հայաստանում և ՄԱԿ Առևտրի և Զարգացման Համաժողովի (Ժնև) միջկառավարական մակարդակի Ներդրումների և Ձեռնարկությունների Զարգացման Հանձնաժողովի կայանալիք նիստում: Ներկայացման ընթացքում մասնագիտական քննարկումների և զեկույցում տեղ գտած առաջարկությունների հիման վրա կմշակվի միջոցառումների ծրագիր, որի իրականացումը կբերի ՀՀ ներդրումային միջավայրի կատարելագործման և ներդրումային քաղաքականության արդյունավետության և երկրի ներդրումային համբավի բարձրացման:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ներդրումային քաղաքականության բարելավման ճանապարհային քարտեզի մշակում:

254 **Պետություն-մասնավոր գործընկերության իրավական կարգավորումների և դրանց կիրառության ինստի-տուցիոնալ կարողությունների զարգացում**

***254.1 «Պետական-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո անհրաժեշտ կանոնակարգերի և մեթոդաբանական ձեռնարկների մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով: Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) օրենսդրական դաշտի բարելավմամբ, ինչպես նաև Հայաստանում արդյունավետ ՊՄԳ ծրագրի պատրաստման, գնման և կառավարման աշխատանքների ապահովման նպատակով անհրաժեշտ կանոնակարգերի ու մեթոդաբանական ձեռնարկների և ուղեցույցների մշակմամբ, որտեղ մանրամասն կնկարագրվեն միջազգային լավագույն փորձին համապատասխան հաջողված ՊՄԳ ծրագրեր իրականացնելու ընթացակարգերը, քայլերն ու դրանց իրականացման հաջորդականությունը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս ՊՄԳ-ն կարգավորող համակողմանի օրենդրության բացակայությունը խոչընդոտում է ինստիտուտի լիարժեք զարգացումը՝ որոշակի ռիսկեր առաջացնելով ՊՄԳ ծրագերի ընտրության և իրականացման բոլոր փուլերում:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանում ՊՄԳ-ների սահմանման, շնորհման և իրականացման մասով կիրառելի կանոնների և ընթացակարգերի հստակ համախմբի մշակում, որը կօժանդակի ՊՄԳ նոր համակարգն առավել ամբողջական դարձնելուն և վերջինիս համար հստակ իրավական շրջանակ ձևավորելուն:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացմամբ կձևավորվեն ՊՄԳ ծրագրի ստեղծման, խթանման նպատակով անհրաժեշտ օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերը, կապահովվի ՊՄԳ արդյունավետ կիրառության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը, ինչպես նաև կընդլայնվեն ՊՄԳ ձևաչափով ենթակառուցվածքային ծրագրերում և՛ տեղական, և՛ օտարերկրյա մասնավոր հատվածների ներգրավման հնարավորությունները:

***254.2 ՊՄԳ ծրագրերի մշակման, սպուգման, կառուցվածքի սահմանման, իրականացման և մշտադիտարկման կարողությունների ձևավորում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով, ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) օրենսդրական դաշտի բարելավմամբ, ինչպես նաև Հայաստանում արդյունավետ ՊՄԳ ծրագրի պատրաստման, գնման և կառավարման աշխատանքների ապահովման նպատակով անհրաժեշտ կանոնակարգերի, մեթոդաբանական ձեռնարկների մշակմամբ:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս ՊՄԳ-ն կարգավորող համակողմանի օրենդրության բացակայությունը խոչընդոտում է ինստիտուտի լիարժեք զարգացումը՝ որոշակի ռիսկեր առաջացնելով ՊՄԳ ծրագերի ընտրության և իրականացման բոլոր փուլերում:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանում ՊՄԳ-ների սահմանման, շնորհման և իրականացման մասով կիրառելի կանոնների և ընթացակարգերի հստակ համախմբի մշակում, որը կօժանդակի ՊՄԳ նոր համակարգն ավելի ամբողջական դարձնելուն և վերջինիս համար հստակ, ուժեղ իրավական շրջանակ ձևավորելուն:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացմամբ նախատեսվում է առավել արդյունավետ ՊՄԳ ծրագրերի մշակում ու խթանում, ինչպես նաև նոր ենթակառուցվածքների զարգացում:

***254.3 ՊՄԳ-ների վերաբերյալ տվյալների շտեմարանի ստեղծում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով, ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) օրենսդրական դաշտի բարելավմամբ, ինչպես նաև Հայաստանում արդյունավետ ՊՄԳ ծրագրի պատրաստման, գնման և կառավարման աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ կանոնակարգերի մշակմամբ, ինչն էլ կբարելավի ՊՄԳ ծրագրերի մշտադիտարկման գործընթացի իրականացումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս ՊՄԳ-ն կարգավորող համակողմանի օրենդրության բացակայությունը խոչընդոտում է ինստիտուտի լիարժեք զարգացումը՝ որոշակի ռիսկեր առաջացնելով ՊՄԳ ծրագերի ընտրության և իրականացման բոլոր փուլերում:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանում ՊՄԳ-ների սահմանման, շնորհման և իրականացման մասով կիրառելի կանոնների և ընթացակարգերի հստակ համախմբի մշակում, որը կօժանդակի ՊՄԳ նոր համակարգն ավելի ամբողջական դարձնելուն և վերջինիս համար հստակ, ուժեղ իրավական շրջանակ ձևավորելուն:

| | |
|---|---|
| | **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացմամբ կձևավորվի և կբարելավվի ՊՄԳ ծրագրերի մշտադիտարկման իրականացման գործընթացը և կխթանվի արդյունավետ ծրագրերի մշակումը:<br><br>***254.4 Հանրային ներդրումների կառավարման ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով, ինչպես նաև Հայաստանում հանրային ֆինանսների կառավարման առկա համակարգի և հանրային ներդրումային որոշումների կայացման գործընթացի զարգացման անհրաժեշտությամբ: Այն նոր մակարդակի վրա կբարձրացնի հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը՝ հիմքեր ստեղծելով երկարաժամկետ ծրագրերի, քաղաքականությունների և իրականացվող ներդրումների միջև կապի ամրապնդման, հանրային ներդրումների սոցիալական և տնտեսական տարբեր ազդեցությունների ամբողջական գնահատման և կառավարման համար:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պետական բյուջեից ֆինանսավորվող ներդրումային ծրագրերի գնահատման իրականացման և գերակայությունների սահմանման ընթացքում առկա են ինստիտուցիոնալ բացեր և անհրաժեշտ է ձևավորել համապատասխան համակարգ և կիրառելի մեխնիզմներ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հանրային ներդրումների կառավարման ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորված համակարգը կնպաստի հանրային ռեսուրսների առավել արդյունավետ բաշխմանն ու կառավարմանը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացմամբ նախատեսվում է ներդնել հանրային ներդրումների կառավարման ժամանակակից մեխանիզմներ պետական միջոցներն առավել արդյունավետ կառավարելու նպատակով: |
| **255** | **Պոտենցիալ ներդրողների նախնական ուսումնասիրությունների հետ կապված ծախսերի կրճատում և արդյունավետության բարձրացում, հետներդրումային սպասարկման ծառայությունների տրամադրում՝ տեղական միջավայրին հարմարվելու նպատակով**<br><br>***255.1 Հայաստանում ներդրումային որոշումների նախապատրաստման փուլում օտարերկրյա ներդրողների ժամանակային և ֆինանսական ծախսերը կրճատելու, ներդրումները և վերաներդրումները խթանելու համար «մեկ կանգառի» ծառայություններ մատուցող համակարգի ներդնում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով: Տնտեսության և նրա ոլորտների ներդրումային վարկանիշի ձևավորման, պետական մարմինների և գործարարների միջև համագործակցությանը, պետություն-մասնավոր հատված արդյունավետ երկխոսության և համագործակցության շարունակական կատարելագործմանը նպաստման, օտարերկրյա ներդրողներին Հայաստանի Հանրապետությունում ներդրումային և գործարար միջավայրի, առավելությունների և հնարավորությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրման, օտարերկրյա ներդրումներ ներգրավման, քարոզարշավների իրականացման, հետներդրումային սպասարկման ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ է ստեղծել ներդրողներին, այդ թվում օտարերկրյա՝ «մեկ կանգառի» ծառայություններ մատուցող կառույց:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ-ում բացակայում է «մեկ կանգառի» ծառայություններ մատուցող կառույց (այդ գործառույթը որոշակի ծավալով իրականացնող «Բիզնես Արմենիա» հիմնադրամը լուծարման գործընթացում է): Վերջինիս առկայությունը հնարավորություն կտա առավել արագ կազմակերպել մի շարք գործընթացներ, աջակցել օտարերկրյա ներդրողների ներգրավմանը, առավել դյուրին դարձնել պետական մարմինների և գործարարների միջև համագործակցությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** |

Հայաստանում ներդրումային որոշումների նախապատրաստման փուլում օտարերկրյա ներդրողների ժամանակային և ֆինանսական ծախսերը կրճատելու, ներդրումները և վերաններդրումները խթանելու համար «մեկ կանգառի» ծառայություններ մատուցող կառույցի ստեղծում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

«Մեկ կանգառի» ծառայություններ մատուցող կառույցի ստեղծման դեպքում օտարերկրյա ներդրողը հնարավորություն կունենա ստանալ իրենց անհրաժեշտ ամբողջական և համապարփակ տեղեկատվությունը մեկ վայրից, հնարավորինս կրճատել տարբեր փաստաթղթերի հավաքման գործընթացը, նվազեցնել պետական մարմինների հետ ուղիղ կապը, ստանալ հետներդրումային սպասարկման մի շարք ծառայություններ, ինչն իր հերթին կխթանի ներդրումները Հայաստանում:

256

**Մտավոր սեփականության պահպանության իրավական դաշտի կատարելագործում**

***256.1 «Գյուտի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող գյուտերի գաղտնիության աստիճանի որոշման, դրանց օգտագործման և դրանց մասին տեղեկությունների հրապարակման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության ոլորտում հարաբերությունների կարգավորման իրավական դաշտի կատարելագործման անհրաժեշտությամբ, մասնավորապես՝ գյուտերի իրավական պահպանության տրամադրման, ինչպես նաև պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող գյուտերի գաղտնագրման, գաղտնիության աստիճանի որոշման, գաղտնազերծման, դրանց օգտագործման և դրանց մասին տեղեկությունների հրապարակման հետ կապված հարցերի կարգավորման առավել կատարելագործված համակարգի ներդրմամբ:

Միջոցառման նպատակն է՝ «Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ընթացակարգերի համապատասխանեցումը օրենքի դրույթներին:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Մինչ այժմ գործող՝ «Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման» կարգում պարզաբանված են արդյունաբերական սեփականության միաժամանակ երեք օբյեկտներին վերաբերող ընթացակարգերը, որոնք իրենց հերթին բխում են «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքում տեղ գտած ընթացակարգերից, որոնցից շատերը «Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության նոր մշակված  օրենքում տեղ գտած ընթացակարգերից էականորեն տարբերվում են, մի շարք էական (գյուտի ըստ էության փորձաքննության, լրացուցիչ իրավական պահպանության տրամադրման, ժամկետների հաշվառման, գյուտի կարճաժամկետ արտոնագիր տալու դեմ առարկություն ներկայացնելու և այլն) ընթացակարգեր նոր են ընդգրկվել օրենսդրության մեջ, իսկ արդյունաբերական նմուշներին վերաբերող ընթացակարգերը ընդհանրապես հանված են «Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից, քանի որ արդյունաբերական նմուշներին վերաբերող օրենսդրական կարգավորումներն այժմ տրվում են առանձին օրենքով:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախատեսվում է ընդունել «Գյուտի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման» և «Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող գյուտերի գաղտնիության աստիճանի որոշման, դրանց օգտագործման և դրանց մասին տեղեկությունների հրապարակման» կարգեր, որոնցով կսահմանվեն «Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության նոր մշակված օրենքով նախատեսված՝ գյուտի հայտի ձևակերպմանը, ներկայացմանը և հատկապես քննարկմանը վերաբերող ընթացակարգերի առանձնահատկություններն ու պարզաբանումները, ինչպես նաև կհստակեցվեն պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի, գյուտերի օգտագործման և դրանց մասին տեղեկությունների հրապարակման հետ կապված հարցերը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

| | |
|---|---|
| | Սույն նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ունենալ առավել հստակեցված, ամբողջականացված ենթաօրենսդրական իրավական ակտեր: Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի իրավակիրարկման պրակտիկայում առկա խնդիրների լուծումը, ինչը հնարավորություն կտա հուսալի և արդյունավետ կարգավորել գյուտերին իրավական պահպանություն տրամադրելու հետ կապված հարաբերությունները:<br><br>***256.2 «Արդյունաբերական դիզայնի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման անհրաժեշտությամբ, մասնավորապես՝ արդյունաբերական դիզայններին իրավական պահպանության տրամադրման առավել կատարելագործված համակարգի ներդրմամբ:<br>Միջոցառման նպատակն է՝ «Արդյունաբերական դիզայնի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ընթացակարգերի համապատասխանեցումը օրենքի դրույթներին:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մինչ այժմ գործող՝ «Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման» կարգում պարզաբանված են արդյունաբերական սեփականության միաժամանակ երեք օբյեկտներին վերաբերող ընթացակարգերը, որոնք իրենց հերթին առաջացնում են մի շարք խնդիրներ, քանի որ հայտերի լրացնելու և ներկայացնելու, դրանց քննարկման հետ կապված հարաբերությունները ներկայացված են բավական ընդհանրացված, որն էլ կիրառողների համար դժվարություններ է առաջացնում: Բացի դրանից, նոր օրենքով նախատեսված՝ արդյունաբերական դիզայնին իրավական պահպանության տրամադրման ընթացակարգը ենթադրում է նաև արդյունաբերական դիզայնի հայտի հրապարակում, դրանց վերաբերյալ հնարավոր առարկությունների ստացում ու քննարկում, ինչպես նաև ավելի համակողմանի փորձաքննության անցկացում: Նշված ընթացակարգի իրականացման համար նախատեսվող փաստաթղթով առավելագույնս պետք է սահմանվեն Գործակալություն-հայտատու-երրորդ անձինք հարաբերություններով, ինչպես նաև փորձաքննության առանձնահատկություններով պայմանավորված պահանջների հստակ մոտեցումներ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է ընդունել «Արդյունաբերական դիզայնի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման» կարգ, որով կնախատեսվեն «Արդյունաբերական դիզայնի մասին» Հայաստանի Հանրապետության նոր մշակված օրենքով նախատեսված՝ արդյունաբերական դիզայնի հայտի ձևակերպմանը, ներկայացմանը և հատկապես քննարկմանը վերաբերող ընթացակարգերի պարզաբանումները:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Սույն նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ունենալ առավել հստակեցված, ամբողջականացված ենթաօրենսդրական իրավական ակտ: Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի իրավակիրարկման պրակտիկայում առկա խնդիրների լուծումը, ինչը հնարավորություն կտա հուսալի և արդյունավետ կարգավորել արդյունաբերական դիզայնին իրավական պահպանություն տրամադրելու հետ կապված հարաբերությունները:<br><br>***256.3 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N1538-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով: ինչպես նաև բխում է «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի պահանջներից, ինչպես նաև ապրանքային նշանների հայտերը լրացնելու և ներկայացնելու, դրանց նախնական և ըստ էության փորձաքննություններ անցկացնելու, զատելու, դրանցում փոփոխություններ կատարելու հետ կապված հարաբերությունների կատարելագործումից և |

հստակեցումից:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի կիրառման պրակտիկայում առաջացած մի շարք խնդրահարույց դրույթներ, որոնց կիրառման պարզաբանումները ներառված են գործող՝ Հայաստանի հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N1538–Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված՝ Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգում (այսուհետ՝ Կարգ,) օրենքի փոփոխությամբ պայմանավորված պետք է ստանան իրենց կիրառման պարզաբանումները:

Բացի դրանից, Կարգով նախատեսված դրույթների կիրառման ընթացքում ի հայտ են եկել Կարգում առկա որոշ վիպակներ և մի շարք խնդիրներ, որոնց լուծման, ինչպես նաև համապատասխան ընթացակարգերի կարգավորման համար անհրաժեշտ է սահմանել հստակ մոտեցումներ:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախատեսվում է ընթացակարգային դրույթների կարգավորման համար սահմանել հստակ մոտեցումներ, մասնավորապես՝ հստակեցնել ապրանքային նշանների տարբերակիչ հատկությունները, որոնք ձեռք են բերվել այն ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնց համար գրանցման հայտ է ներկայացվել: Բացի այդ, կիրառման նպատակահարմարությունից ելնելով՝ կհստակեցվեն ապրանքային նշաններում չպահպանվող տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելուն վերաբերող որոշ մոտեցումներ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Սույն նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ունենալ առավել հստակեցված, ամբողջականացված ենթաօրենսդրական իրավական ակտ:

***256.4 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գյուտերի իրավական պահպանության տրամադրման առավել կատարելագործված համակարգի ներդրմամբ:

Միջոցառման նպատակը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում Մտավոր սեփականության ոլորտը կարգավորող ընթացակարգերի կատարելագործման անհրաժեշտությամբ, մասնավորապես՝ որոշմամբ հաստատված համապատասխան կարգով չնախատեսված այն մոտեցումները որոնք վերաբերում են գյուտի կարճաժամկետ արտոնագիր տալու դեմ, ինչպես նաև նոր օրենքով սահմանված կարգով՝ արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու դեմ բողոքարկման խորհուրդ բողոքներ ներկայացնելուն, որոնց վերաբերյալ ներկայումս գործող կարգով հստակ պարզաբանումներ նախատեսված չեն:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գործող՝ «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման» կարգում պարզաբանված են արդյունաբերական սեփականության տարբեր օբյեկտներին վերաբերող բողոքների քննարկման ընթացակարգերը, որոնք իրենց հերթին բխում են ոլորտը կարգավորող տարբեր իրավական ակտերից, այդ թվում՝ «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքից: «Արտոնագրերի մասին» և «Արդյունաբերական դիզայնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում տեղ են գտել մի շարք բովանդակային փոփոխություններ, մասնավորապես՝ դուրս է եկել «օգտակար մոդել» հասկացությունը, որի փոխարեն օրենսդրության մեջ ներառվել է «գյուտի կարճաժամկետ արտոնագիր» հասկացությունը: Բացի այդ «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է նոր՝ գյուտի կարճաժամկետ արտոնագրի տալու դեմ բողոքարկման խորհուրդ առարկություն ներկայացնելու ընթացակարգ, որի վերաբերյալ պարզաբանումները գործող կարգով նախատեսված չեն: «Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքով սահմանվել են մի շարք ընթացակարգային ու փորձաքննության բովանդակային փոփոխություններ, որոնց համաձայն նախատեսվում է հայտի հրապարակում, առարկությունների ստացում և քննարկում, ինչպես նաև հայտարկված արդյունաբերական դիզայնի ըստ էության փորձաքննություն, որոնց հետ կապված վեճերի վերաբերյալ բողոքների ներկայացման և

քննության անցկացման կարգը պետք է ներառվի նշված փաստաթղթում:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախատեսվում է ընդունել «ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների և առարկությունների քննարկման» կարգ, որում տեղ կգտնեն «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ գյուտի կարճաժամկետ արտոնագիր տալու հետ կապված, ինչպես նաև «Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքով սահմանված՝ արդյունաբերական դիզայնի իրավական պահպանության տրամադրման հետ կապված բողոքարկման խորհուրդ բողոքներ ներկայացնելուն վերաբերող ընթացակարգերի պարզաբանումները:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Սույն նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ունենալ առավել հստակեցված, ամբողջականացված ենթաօրենսդրական իրավական ակտ, որտեղ ի թիվս այլոց ներառված կլինեն գյուտի կարճաժամկետ արտոնագրի տալու և արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու հետ կապված վիճելի հարցերի վերաբերյալ բողոքարկման խորհուրդ բողոքներ ներկայացնելու ընթացակարգերի պարզաբանումները:

***256.5 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի N506-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների բնագավառի հարաբերությունները կարգավորող առավել կատարելագործված համակարգի ներդրմամբ:

Միջոցառման նպատակն է՝ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»» ՀՀ նոր օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ընթացակարգերի համապատասխանեցումը օրենքի դրույթներին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ նոր օրենքի համաձայն՝ գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություններն օգտագործողների հետ լիցենզային պայմանագրեր կնքելիս պետք է կիրառեն ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ հաստատված դրույքաչափերից ոչ պակաս դրույքաչափեր, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Ռեստորաններում, սրճարաններում և հասարակական այլ վայրերում երաժշտական ստեղծագործությունների կենդանի կատարման կամ ձայնագրությունների միջոցով օգտագործման ձևի համար (հրապարակային կատարում) անհրաժեշտ է դրույքաչափի փոփոխություն, որը պայմանավորված է հեղինակներին գոնե նվազագույն վարձատրություն ապահովելու անհրաժեշտությամբ, քանի որ նույնիսկ պարզ հաշվարկներով էլ երևում է, որ սահմանված դրույքաչափերով հավաքված գումարները հեղինակների միջև բաշխելիս՝ ստացվում են չնչին գումարներ, որոնք ողջամիտ վարձատրություն համարել չի կարելի:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի համապատասխան դրույթով սահմանում է դրույքաչափերի հաշվարկման մեթոդ, որն էլ իր հերթին հիմք կհանդիսանա նվազագույն դրույքաչափերը սահմանելու համար:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախատեսվում է սահմանել և ընդունել ստեղծագործությունների հրապարակային կատարման, հեռարձակման, ձայնագրությունների միջոցով վերարտադրության, վարձույթով տալու, դիզայնի ստեղծագործություններն արդյունաբերության մեջ վերարտադրելու համար հեղինակային վարձատրության նոր նվազագույն դրույքաչափեր:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Սույն նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ունենալ առավել հստակեցված, ամբողջականացված ենթաօրենսդրական իրավական ակտ, որով կսահմանվեն ստեղծագործությունների օգտագործման դիմաց հեղինակային վարձատրության առավել հստակեցված, ամբողջականացված և խելամիտ դրույքաչափեր, ինչը և հնարավորություն կտա խթանել գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունների ստեղծման գործընթացը, հեղինակների համար ստեղծել հուսալի և արդյունավետ պայմաններ և ապահովել նրանց

բարեկեցությունը:

***256.6 Մարաքեշի «Կույրերի, տեսողական խնդիրների հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած կամ ընթերցողական այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրապարակված ստեղծագործությունների հասանելիությունը դյուրացնելու մասին» պայմանագրին միանալու նպատակով պայմանագրի նախագիծը և կից փաստաթղթերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների բնագավառի հարաբերությունները կարգավորող առավել կատարելագործված համակարգի ներդրմամբ:

Միջոցառման նպատակն է՝ մտավոր սեփականության բնագավառին վերաբերող կարևոր միջազգային պայմանագրերով նախատեսված դրույթներից բխող առանձնահատկու-թյունների կիրառումը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս մի շարք դժվարություններ են առաջանում կույրերի, տեսողական խնդիրների հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած կամ ընթերցողական այլ դժվարություններ ունեցող անձանց համար հասանելի ձևաչափով կրթական նյութերը առանց իրավատիրոջ համաձայնության ներմուծելու կամ արտահանելու ընթացքում:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Կնախատեսվեն սահմանափակումներ և բացառություններ, որոնք հնարավորություն կտան վերարտադրել, տարածել և մատչելի դարձնել հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունները այն ձևաչափով, որով տեսողությունից հաշմանդամ կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար դրանք կլինեն հասանելի:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Սույն նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կույրերի, տեսողական խնդիրների հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած կամ ընթերցողական այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների հասանելի ձևաչափով օրինակների մատչելիության ապահովում:

***256.7 Պեկինի «Տեսալսողական կատարումների մասին» պայմանագրին միանալու նպատակով պայմանագրի նախագիծը և կից փաստաթղթերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.6 բաժնի դրույթներով, ինչպես նաև տեխնիկական սարքավորումների զարգացմամբ ու կատարելագործմամբ, հատկապես նոր թվային տեխնոլոգիաների առաջացմամբ, ինչպես նաև տեսալսողական ամրագրումներում ամրագրված կատարումների կատարողներին՝ ավելի լայն իրավական պահպանության տրամադրմամբ:

Միջոցառման նպատակն է՝ մտավոր սեփականության բնագավառին վերաբերող կարևոր միջազգային պայմանագրերով նախատեսված դրույթներից բխող առանձնահատկու-թյունների կիրառումը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հաշվի առնելով տեղեկատվության և կապի տեխնոլոգիաների, տեխնիկական թվային սարքավորումների մեծ ազդեցությունը կատարումների ստեղծման և օգտագործման վրա՝ անհրաժեշտ է նախատեսել երգչների, երաժիշտների, պարողների և դերասանների իրավունքներին վերաբերող նոր մոտեցումներ իրենց տեսալսողական կատարումների նկատմամբ:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հարակից իրավունքների բնագավառում՝ երաշխիքներ կստեղծվեն հարակից իրավունքների իրավատերերի և հասարակության շահերի միջև հավասարակշռության պահպանման համար, ինչպես նաև անդամ պետությունը լիարժեք պահպանություն կապահովեն մյուս անդամ պետության քաղաքացուն, դրանով իսկ երաշխավորելով տեղական արտադրողներին և կատարողներին օգտվելու իրենց գույքային իրավունքներից, երբ նրանց ֆիլմերը, հեռուստասերիալներն ու այլ տեսալսողական ստեղծագործությունները կցուցադրվեն կամ այլ կերպ մատչելի

| | |
|---|---|
| | կդառնան այլ երկրներում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Սույն նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է տեսալսողական ամրագրումներում ամրագրված կատարումների կատարողներին՝ ավելի լայն իրավական պահպանության տրամադրում: |
| **257** | **Զբոսաշրջային արդյունքի մրցունակության ապահովմանն ուղղված քայլերի մշակում, զբոսաշրջային ենթակառուցվածքների և հարակից ծառայությունների բարելավում**<br><br>***257.1 «Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացում» Համաշխարհային բանկի վարկային ծրագրի վերանայում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.7 բաժնի դրույթներով, ինչպես նաև Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացման, ժամանակակից ենթակառուցվածքների ստեղծման և կատարելագործման անհրաժեշտությամբ:<br>Միջոցառման նպատակն է դեպի զբոսաշրջային վայրեր հասանելիության ապահովման բարելավումը, Հայաստանում առաջնային զարգացման վայրերում զբոսաշրջային և այլ ենթակառուցվածքների ստեղծում և շարունակական զարգացումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաշխարհային բանկի «Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացում» վարկային ծրագրի իրականացումը մեկնարկել է 2017 թվականին, իրականցվում են և նախատեսվում են մի շարք ենթածրագրեր: Ներկա փուլում առաջացել է ծրագրի կառավարման բարելավման, ինչպես նաև ծրագրում ընգրկված զբոսաշրջային վայրերի ընտրության, հաստատման և հստակեցման խնդիր:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրների լուծման ուղղությամբ առաջարկվում է բարելավել ծրագրի կառավարման համակարգը, մասնավորապես փոփոխություններ իրականացնել ծրագրի կառավարման կոմիտեիկազմում, ինչպես նաև վերանայել աշխատանքային խմբի անհարաժեշտությունը: Նախատեղվում է նաև Ծրագրի առաջին բաղադրիչի (Ժառանգության վերածնունդ և զբոսաշրջային հանգույցների զարգացում) շրջանակներում հստակեցնել ընդգրկված զբոսաշրջային վայերի շրջականը, իրականացվող աշխատանքները և մշակել նոր ժամանակացույց:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է բարձրացնել ծրագրի կառավարման և իրականացման արդյունավետությունը, բարելավել զբոսաշրջային ենթակառուցվածքները, զբոսաշրջային վայրերի հասանելիությունը, ինչպես նաև բարձրացնել ընդգրված համայնքների բնակչության ներգրավվածությունը զբոսաշրջային գործընթացներին: |
| **258** | **Զբոսաշրջության ոլորտի ինստիտուցիոնալ բարեփոխումներ**<br><br>***258.1 «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխապակազմ***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.7 բաժնի դրույթներով: Գործող իրավական դաշտի բարելավման անհրաժեշտությունն առաջացել է զբոսաշրջության բնագավառին բնորոշ դինամիկ զարգացման և նոր մարտահրավերների պայմաններում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի՝ համաշխարհային զբոսաշրջային շուկայում մրցունակության ամրապնդման ու բարձրացման անհրաժեշտությունից:<br>Օրենքի նախագծի և առնչվող այլ իրավական ակտերի մշակմամբ նպատակ է դրվում գործող օրենսդրական դաշտի կատարելագործման՝ արդյունքում անհրաժեշտ իրավական հիմքեր ապահովելով զբոսաշրջության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության համար համարժեք տեղեկատվական ռեսուրսների հավաքագրման, ինչպես նաև՝ մատուցվող ծառայությունների որակի ու ներդրումային միջավայրի բարելավման համար:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** |

| | |
|---|---|
| | Զբոսաշրջության բնագավառում վարչական ռեգիստրի և ծառայությունների որակավորման համակարգերի ներդրման, գործարար ներդրումային դաշտի բարելավման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորում:<br>Օրենսդրական փաթեթն ուղղվելու է ոլորտում վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավմանն ու այդ նպատակով նաև վարչական ռեգիստրի, ծառայությունների որակավորման համակարգերի ներդրմանը, գործարար ներդրումային միջավայրի բարելավմանը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է մասնավոր հատվածի և միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ ու միջազգային համարժեք փորձի ուսումնասիրության հիման վրա օրենսդրական փաթեթի մշակում: Մասնավորապես նախատեսվում է՝<br>- Հստակեցնել զբոսաշրջության բնագավառում օգտագործվող հասկացությունները, սահմանել հասկացություններ,<br>- Զբոսաշրջության բնագավառում ճշգրիտ վիճակագրության վարում<br>- Զբոսաշրջային ծառայությունների որակի բարելավում, ծառայությունների նկատմամբ չափանիշների սահմանում և պահպանում, սպառողի իրավունքների լիարժեք իրականացման ապահովման և այդպիսով Հայաստանի զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացման նպատակով նախատեսել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների, զբոսավարների, ուղեկցորդների հաշվառում, հյուրանոցային ծառայությունների որակավորում, ռեստորանների և զբոսաշրջային ավտոբուսների կամավոր որակավորում, ինչպես նաև պահանջներ զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների նկատմամբ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Առաջարկվող օրենսդրական կարգավորումները հիմք են հանդիսանալու վարչական ռեգիստրի ներդրմանը՝ ի նպաստ զբոսաշրջության ոլորտում վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավման և քաղաքականության վերաբերյալ որոշումների ընդունման համար անհրաժեշտ ուսումնասիրությունների ու վերլուծությունների<br>Նախագծով նախատեսվող որակյալ ուսումնասիրությունների իրականացումը, զբոսաշրջային ռեսուրսների գույքագրումն ու դրա տվյալների հիման վրա նոր մրցունակ զբոսաշրջային արդյունքների մշակումն ու խթանումը, հայկական զբոսաշրջային արդյունքի և զբոսաշրջային շուկաների դիվերսիֆիկացումը, զբոսաշրջային ծառայությունների որակի բարձրացումը, սպառողի իրավունքների իրականացման ապահովումը էապես կնպաստեն Հայաստանում զբոսաշրջության զարգացմանը, զբոսաշրջային համաշխարհային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի և Հայաստանի՝ որպես զբոսաշրջային երկրի մրցունակության բարձրացմանը: Նախագծերի ընդունումը նշանակալի ներդրում կունենա Հայաստանում տնտեսական զարգացման, Հայաստանի տարածքային համաչափ զարգացման, մարզերում և համայնքներում ենթակառուցվածքների զարգացման և եկամուտների լրացուցիչ աղբյուրների ձևավորման, հանրապետությունում զբաղվածության ավելացման խնդիրների լուծման գործում: Այն նաև լայն թափ կհաղորդի ընթացիկ զբոսաշրջային ծրագրերի բարեհաջող իրականացմանը և նոր ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, այդ թվում՝ նպաստելով հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, մարդկային ռեսուրսների զարգացմանը, միջազգային համագործակցության ակտիվացմանը և այլն:<br><br>***258.2 Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի օգտագործմամբ զբոսաշրջության ոլորտի վիճակագրության բարելավման աշխատանքների իրականացում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.7 բաժնի դրույթներով: Այն բխում է նաև «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության» մասին ՀՀ օրենքի և «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգի» դրույթներից, որոնց համաձայն զբոսաշրջության վիճակագրության բարելավումը և ստույգ վիճակագրական տվյալների հիման վրա բարձրորակ հետազոտությունների ու վերլուծությունների ապահովումը ոլորտում վարվող պետական քաղաքականության հիմնական խնդիրներից են:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** |

| | |
|---|---|
| | Ներկայումս ստացվող վիճակագրական տվյալները բավարար չեն զբոսաշրջության ճշգրիտ վիճակագրության վարման և ճշգրիտ վերլուծությունների իրականացման, թիրախային շուկաների բացահայտման և համագործակցության հստակ ռազմավարության մշակման համար: Բացակայում են առավելագույն ճշգրտությամբ տվյալներ, մասնավորապես Հայաստան այցելած զբոսաշրջիկների քանակի վերաբերյալ՝ ըստ քաղաքացիության, սեռատարիքային խմբերի, սահմանային անցման կետերի, ինչպես նաև զբոսաշրջային այցելությունների թվում կրկնվող այցելությունների քանակի վերաբերյալ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Աշխատանքային քննարկումների արդյունքում ձևավորվել է ընդհանուր ընկալում, որ ՍԷԿՏ համակարգի օգնությամբ հնարավոր է էապես բարելավել զբոսաշրջության վիճակագրությունը՝ ապահովելով առավելագույն ճշգրտությամբ տվյալներ Հայաստան այցելած զբոսաշրջիկների քանակի վերաբերյալ: Դա հնարավոր է իրականացնել ՍԷԿՏ համակարգի տվյալների հիման վրա համապատասխան համակարգչային ծրագրի կիրառմամբ՝ բոլոր սահմանային անցման կետերով Հայաստան ժամանած անձանց մասին տվյալներից առանձնացնելով այն անձանց քանակները, ովքեր ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության (ՄԱԿ ԶՀԿ) մեթոդաբանությանը և «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքին համապատասխան համարվում են զբոսաշրջիկներ:<br>«Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վիճակագրության վարման մեթոդի կատարելագործմանն ուղղված միջոցառումներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության N14-24 արձանագրային որոշման իրականացումն ապահովելու նպատակով շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ հաստատվել է համապատասխան համակարգչային ծրագրի մշակման տեխնիկական առաջադրանքը: Տեխնիկական առաջադրանքն ուղարկվել է համապատասխան կազմակերպությունների՝ գնային առաջարկ ստանալու նպատակով: Գնային առաջարկների քննարկումից հետո նախատեսվում է հայտարարել տենդեր՝ տեխնիկական առաջադրանքի իրականացման համար համապատասխան կազմակերպություն ընտրելու նպատակով:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՍԷԿՏ համակարգի օգնությամբ էապես կբարելավվի զբոսաշրջության վիճակագրությունը՝ ապահովելով առավելագույն ճշգրտությամբ տվյալներ Հայաստան այցելած զբոսաշրջիկների քանակի վերաբերյալ, այդ թվում ըստ քաղաքացիության, սեռատարիքային խմբերի, սահմանային անցման կետերի, ինչպես նաև զբոսաշրջային այցելությունների թվում կրկնվող այցելությունների քանակի վերաբերյալ:<br><br>***258.3 Սատելիտային հաշիվ համակարգի ներդրման նպատակով Հայաստանի սահմանային անցման կետերում միջազգային այցելությունների վերաբերյալ ընտրանքային երրորդ հետազոտության իրականացում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.7 բաժնի դրույթներով: Այն բխում է նաև «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության» մասին ՀՀ օրենքի և «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգի» դրույթներից, որոնց համաձայն զբոսաշրջության վիճակագրության բարելավումը և ստույգ վիճակագրական տվյալների հիման վրա բարձրորակ հետազոտությունների ու վերլուծությունների ապահովումը ոլորտում վարվող պետական քաղաքականության հիմնական խնդիրներից են:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, ՀՀ վիճակագրական կոմիտեի, Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի Դաշնային ծառայության, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության և Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի համագործակցությամբ ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության մեթոդաբանության համաձայն 2007-2008թթ. և 2013թ. ՀՀ սահմանային անցման կետերում իրականացվել են վիճակագրական հետազոտություններ: Վիճակագրական հետազոտությունների նպատակն էր իրականացնել հանրապետություն ժամանողների և հանրապետությունից մեկնողնեի շրջանում զբոսաշրջիկների վերաբերյալ հնարավորինս հավաստի տվյալների հավաքագրումը: Հավաքագրված տվյալները բնորոշում են զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածությունը, ժամանման/մեկնման նպատակը, զբոսաշրջիկների սեռատարիքային կազմը, ճամփորդության կազմակերպման տարբերակները, կատարված ծախսերի կառուցվածքը և այլն:<br>Ներկա դրությամբ ոլորտային վերլուծություններ իրականացնելու նպատակով օգտագործվում են 2013թ. |

| | |
|---|---|
| | իրականացված հետազոտության արդյունքում ստացված տվյալները, որոնք այլևս արդիական չեն և թույլ չեն տալիս բացահայտել Հայաստանի զբոսաշրջության ոլորտի խնդիրները, վերանայել զբոսաշրջության ռազմավարությունը, մշակել զբոսաշրջային նոր փաթեթներ և բարելավել զբոսաշրջության ոլորտում իրականացվող ծառայությունների որակը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի զբոսաշրջային վիճակագրության կայուն հիմքերի ապահովման, զբոսաշրջության ողջ բնագավառն արտացոլող, ներառյալ՝ տնտեսական ցուցանիշների, զբոսաշրջիկների քաղաքացիության աշխարհագրական բաշխվածության, սեռի և տարիքի, այցելության նպատակի, տևողության և կրկնվողականության, զբոսաշրջային վարքագծի և զբոսաշրջիկների նախասիրությունների վերաբերյալ ամբողջական վիճակագրական տվյալների հավաքումը և մշակումը հնարավոր կլինի իրականացնել Հայաստանի սահմանային անցման կետերում զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտություն իրականացնելու և արդյունքում ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՄԱԿ ԶՀԿ) կողմից մշակված մեթոդաբանությանը համապատասխան զբոսաշրջության սատելիտային հաշիվ ներդնելու միջոցով:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի սահմանային անցման կետերում զբոսաշրջային այցելությունների վերաբերյալ ընտրանքային երրորդ հետազոտության իրականացումը կնպաստի առաջիկայում Հայաստանում Սատելիտային հաշիվ համակարգի ներդրմանը, ինչն ուղղված կլինի երկրի զբոսաշրջային արդյունաբերության ողջ բնագավառն արտացոլող ամբողջական վիճակագրական տվյալների հավաքագրմանն ու մշակմանը, ճշգրիտ հետազոտությունների և վերլուծությունների իրականացմանը:<br><br>***258.4 Պետության կողմից սոցիալական փաթեթի շրջանակներում իրականացվող ծառայությունների համակարգման էլեկտրոնային համակարգի ներդնում***<br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.7 բաժնի դրույթներով: Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում զբոսաշրջային փաթեթների և առանձին հյուրանոցային ծառայությունների ամրագրման և հաշվետվական էլեկտրոնային համակարգի ներդրման նպատակն է սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության բաղադրիչը դարձնել առավել թափանցիկ և վերահսկելի՝ չխոչընդոտելով մասնավոր հատվածի բնականոն գործունեությանը, նվազագույնի հասցնել հնարավոր չարաշահումների ռիսկը: Համակարգի ներդրումը նպատակ ունի պարզեցնել սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկված զբոսաշրջային օպերատորների, ծառայություններ մատուցող այլ անձանց (այդ թվում՝ հյուրանոցային ծառայություններ մատուցող անձանց) գործառույթները՝ ծառայությունների մատուցումը առավել մատչելի դարձնելով շահառուների համար:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում զբոսաշրջային փաթեթները և առանձին հյուրանոցային ծառայությունները ներկայումս իրացվում են ավելի քան 70 զբոսաշրջային օպերատորների կողմից: Հետզհետե ավելի է բարդանում զբոսաշրջային օպերատորների նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև դժվարանում է զբոսաշրջային օպերատորների կողմից հնարավոր չարաշահումները բացահայտումը: Առկա են նաև բազմաթիվ խնդիրներ հյուրանոցային ծառայություն մատուցող անձ և զբոսաշրջային օպերատոր համագործակցության շրջանակներում (կուտակված պարտքեր, հյուրանոցային ծառայություն մատուցող անձանց կողմից հայտարարված մանրածախ գնից առավել ցածր գնով վերջնական սպառողին ծառայությունների մատուցում և այլն):<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է ներդնել Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում զբոսաշրջային փաթեթների և առանձին հյուրանոցային ծառայությունների ամրագրման և հաշվետվական էլեկտրոնային համակարգ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում զբոսաշրջային փաթեթների և առանձին հյուրանոցային ծառայությունների ամրագրման և հաշվետվական էլեկտրոնային համակարգի ներդրմամբ |

հնարավորություն կստեղծվի կանխել հնարավոր չարաշահումները: Համակարգը հնարավորություն կտա ցանկացած պահին ունենալ վերլուծական տեղեկատվություն տվյալ պահին կնքված, իրացված, վաղաժամկետ դադարած պայմանագրերի, շահառուների քանակի, նախընտրելի ուղղությունների և այլնի վերաբերյալ:

Այս դեպքում կարիք չի լինի նաև զբոսաշրջային օպերատորների կողմից եռամսյակային հաշվետվությունների ներկայացման, քանի որ համակարգում առկա կլինի ամենօրյա տեղեկատվություն: Համակարգի միջոցով հնարավորություն կստեղծվի նաև կանխել հյուրանոցային ծառայություն մատուցող անձանց և զբոսաշրջային օպերատորների համագործակցության ընթացքում առաջացած խնդիրները:

***258.5 «Հայաստանի զբոսաշրջության ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարութ-յան որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.7 բաժնի դրույթներով: Հայաստանի զբոսաշրջության ռազմավարության մշակման նպատակն է ստեղծել զբոսաշրջության ոլորտի հիմնարար փաստաթուղթ՝ ուղղված ոլորտի պետական քաղաքականության արդյունավետ իրականացմանը: Ռազմավարության անհրաժեշտու-թյունը բխում է ուղղորդված միջոցառումների համակարգի առկայությունից, որոնց լուծմանը ուղղված կլինի ոլորտի քաղաքականությունը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկա փուլում գործող փաստաթուղթն է Հայաստանի զարգացման հայեցակարգը հաստատված 2008 թվականին, որը արդեն իսկ արդիկան չէ: Փաստաթղթում ներառված միջոցառումները հստակեցման և լրամշակման կարիք ունեն:

Զբոսաշրջության բնագավառին բնորոշ դինամիկ զարգացման և նոր մարտահրավերների պայմաններում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի՝ համաշխարհային զբոսաշրջային շուկայում մրցունակության ամրապնդման ու բարձրացման անհրաժեշտությունից ելնելով առաջացել է զբոսաշրջության ոլորտի ռազմավարության մշակման անհրաժեշտություն:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Լուծումները ուղղված կլինեն հետազոտությունների, վերլուծությունների իրականացմանը, որոնց հիման վրա կմշակվեն միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներ՝ ուղղված ոլորտի դինամիկ աճի պահպանմանը: Ռազմավարության մշակման համար անհրաժեշտ է ներգրավել համապատասխան ռեսուրսներ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի/ժամանակացույցի առկայությունը հիմք կհանդիսանա զբոսաշրջության բնակագավառում զարգացման գործընթացների պլանավորման և իրականացման համար:

**259** **Երկրի ճանաչողությանն ուղղված ծրագրի իրականացում**

***259.1 Զբոսաշրջության զարգացման 2019 թվականի փարեկան ծրագրի իրականացում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.7 բաժնի դրույթներով: Միջոցառման իրականացումն ուղղված է Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության և մրցունակության, վիճակագրական տեղեկատվական համակարգի կատարելագործման ապահովմանը, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացմանը, միջազգային համագործակցության ակտիվացմանը:

Միջոցառման նպատակն է նպաստել.

- Հայաստան զբոսաշրջային այցելությունների շարունակական ավելացմանը,
- Հայաստանի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, ազգային եկամտի ավելացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը,
- Հայաստանի, որպես զբոաշրջության համար գրավիչ երկրի նկարագրի ձևավորմանը,

կատարելագործմանը և պատշաճ ներկայացմանն ու խթանմանը,

- Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի համաշխարհային ճանաչելիության բարձրացմանը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն յուրաքանչյուր տարի մշակվում և իրականացվում է զբոսաշրջության զարգացման ծրագիր, որի շրջանակներում իրականացվում են մարքեթինգային միջոցառումներ, միջոցառումներ ուղղված զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, մարդկային ռեսուրսների և ենթակառուցվածքների զարգացմանը, միջազգային համագործակցության ապահովմանը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

«Զբոսաշրջության զարգացման 2019 թվականի տարեկան ծրագրի» իրականացման շրջանակներում մասնավորապես նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- իրականացնել Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացում և թիրախավորված զբոսաշրջային շուկաներում առավել ակտիվ մարքեթինգային քաղաքականություն,
- զբոսաշրջության զարգացման գործընթացներում Հայաստանի համայնքների և դրանց բնակչության առավել ակտիվ ներգրավում, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, զբոսաշրջային նոր, գրավիչ և մրցունակ փաթեթների ձևավորում,
- մարդկային ռեսուրսների զարգացում և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում,
- երկկողմ և բազմակողմ համագործակցության ակտիվացում,
- զբոսաշրջային մեծ ներուժ ունեցող զբոսաշրջային ձևերի զարգացմանն ուղղված նոր երթուղիների մշակում՝ զբոսաշրջիկների համար մեր երկիրն առավել գրավիչ դարձնելու նպատակով:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

- Հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացում,
- Համաշխարհային շուկայում Հայաստանի, որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկրի նկարագրի ամրապնդում,
- Հայաստանը թիրախավորված դիրքավորում,
- ծառայությունների որակի շարունակական բարձրացում՝ ոլորտը որակյալ և պահանջարկին համապատասխանող կադրերով ապահովում,
- համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերությանը Հայաստանի արդյունավետ ինտեգրում,
- հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքների ձևավորում՝ էկոտուրիզմի, գաստրոտուրիզմի, արկածային զբոսաշրջության ձևերի զարգացման վերաբերյալ ռազմավարական միջոցառումների ծրագիր
- համաշխարհային հանրությանը Հայաստանի ու հայկական պատմամշակութային ժառանգության պատշաճ ներկայացում,
- Միջազգային երկկողմ և բազմակողմ կապերի ամրապնդում և զարգացում:

**260**

**Վերամշակող արդյունաբերության ոլորտում խնդիրների վերհանում և կարգավորումների վերանայում**

***260.1 Տնտեսության ճյուղերի էներգախնայողության հեփազոփության իրականացում, էներգափար ճյուղերի վերհանում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.9 բաժնի դրույթներով: Միջոցառման իրականացման նպատակն է խթանել տնտեսության ճյուղերին կիրառելի ժամանակակից, էներգախնայող տեխնոլոգիաներ:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս ընկերությունները օգտագործում են հիմնականում ոչ ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք առավել էներգատար են, ինչի արդյունքում արտադրվում է ավելի բարձր ինքնարժեքով արտադրանք:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ուսումնասիրությունների արդյունքում տնտեսության ճյուղերի համար մշակել էներգատարության նորմատիվներ՝

սահմանելով բարձր, միջին և ցածր մակարդակներով ցուցանիշներ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Էներգակիրների խնայողաբար օգտագործում և մրցունակ ապրանքների արտադրություն:

261 **Ձեռնարկատիրական գործունեության պայմանների պարզեցմանը և ԵԱՏՄ շուկաներում առաջխաղացման հնարավորությունների ընդլայնմանն ուղղված ԵԱՏՄ շուկաներում սահմանված տարիֆային և ոչ տարիֆային կարգավորումների զարգացման միջոցների ձեռնարկում**

***261.1 Տարիֆային և ոչ փարիֆային կարգավորման մասով ՀՀ համար զգայուն ապրանքների ցանկի ձևավորում, դրանց ուղղությամբ մաքսապուրքի դրույքաչափերի և/կամ ոչ փարիֆային միջոցների կիրառման առնչությամբ սահմանված ընթացակարգերի նախաձեռնում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.9 բաժնի դրույթներով, ինչպես նաև ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում սակագնային և ոչ սակագնային կարգավորման ոլորտում իրականացվող միջոցառումների մշակմամբ և համակարգմամբ, ԵԱՏՄ չափանիշներին համապատասխանեցմամբ: Միջոցառման իրակացման նպատակն է ՀՀ տնտեսվարող սուբյեկտների համար արտահանման և ներմուծման գործընթացների դյուրացումը, բարենպաստ պայմանների ապահովումը, արտադրական հզորությունների ավելացումը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս ՀՀ տնտեսվարող սուբյեկտների համար որոշ ապրանքների մասով գործող մաքսատուրքերի դրույքաչափերի, ինչպես նաև ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման հետ կապված առկա են որոշակի դժվարություններ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է իրականացնել ՀՀ համար զգայուն հանդիսացող ապրանքների մասով գործող մաքսատուրքերի դրույքաչափերի, ինչպես նաև ոչ սակագնային կարգավորման միջոցների մասով հիմնախնդիրների ուսումնասիրություն և դրանց լուծման ուղղությամբ աշխատանքների իրականացում: Մասնավորապես առաջարկվում է ՀՀ համար զգայուն հանդիսացող ապրանքների մասով Եվրասիական տնտեսական հանձնաժողով առաջարկությունների ներկայացում՝ իրավական կարգավորումն ապահովման նպատակով:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրակացման արդյունքում ակնկալվում է մի շարք ապրանքատեսակների մասով հայրենական արտադրողների և/կամ սպառողների համար առավել նպաստավոր պայմանների ապահովում:

262 **Արտահանման մեծ ներուժ ունեցող ոլորտներում ներդրումային ծրագրերի օժանդակություն՝ օրենսդրությամբ սահմանված հարկային և մաքսային խթանիչ պայմաններ ստեղծելու ճանապարհով**

***262.1 ՀՀ-ում ազատ տնտեսական գոտիների զարգացման հայեցակարգային մոտեցումների մշակում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Ներկա դրությամբ Հայաստանում գործում է 4 ազատ տնտեսական գոտի: Վերոնշյալ ազատ տնտեսական գոտիներում շահագործողների ներգրավվածության մակարդակի և փաստացի արդյունքների կատարման ուսումնասիրությունը ցույց տվեց հայտարարագրված ցուցանիշների էական թերկատարում, որը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Վերոնշյալ խնդիրները լուծելու և դրա արդյունքում ազատ տնտեսական գոտիների գործունեությունն ակտիվացնելու համար անհրաժեշտություն է առաջացել ազատ տնտեսական գոտիների զարգացման հայեցակարգային մոտեցումների մշակման:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանում ազատ տնտեսական գոտիների ստեղծման հիմնական նպատակներից են ուղղակի օտարերկրյա ներդրումների ներգրավումը, դրա արդյունքում առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման միջոցով արտահանման ծավալների աճի խթանումը, նոր աշխատատեղերի ստեղծումը: Հայաստանում գործում է 4 ազատ տնտեսական գոտի, որոնցից ամենահինը՝ 2013 թվականից: Այնուամենայնիվ ներկա փուլում ազատ տնտեսական գոտիները գրանցում են հայտարարված ցուցանիշների թերկատարում ներդրումների և աշխատատեղերի մասով:

Ուսումնասիրությունների արդյունքում դուրս են բերվել ազատ տնտեսական գոտիների արդյունավետությանը խոչընդոտող մի շարք գործոններ, ինչպիսիք են, օրինակ, հարկային արտոնությունների ոչ ամբողջ ծավալով գործելը, ԵԱՏՄ շրջանակներում մաքսային կարգավորումները, մաքսային կարգավորումների բազմազանությունը, (և մաքսային կարգավորումները, ԱՏԳ կառավարման խնդիրները, շահագործողների ներգրավման / մարկետինգային պասիվ քաղաքականությունը, կազմակերպիչների կարողությունների պակասը, ենթակառուցվածքների թերզարգացվածությունը և այլն: Վերոնշյալ խնդիրները պահանջում են շահագրգիռ կողմերի ընդգրկվածություն և համալիր լուծումներ, որոնք համահունչ կլինեն երկրի տնտեսական զարգացման տեսլականին:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ազատ տնտեսական գոտիների արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսված է ազատ տնտեսական գոտիների զարգացման համակարգի մշակում, որով կգնահատվի ազատ տնտեսական գոտիների զարգացման մասով տարվեղ քաղաքականությունը, նորմատիվ և ինստիտուցիոնալ միջավայրը, կազմակերպման խնիրները, պետության և մասնավոր կազմակերպիչների համագործակցության մոտեցումները, ինչպե նաև կառաջարկվեն վերոնշյալ խնդիրների լուծումները:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Հայաստանում ազատ տնտեսական գոտիների զարգացման հայեցակարգային մոտեցումների առկայություն:

**263**

**Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխում**

**263.1 Պետական գույքի ոլորտի ռազմավարական փաստաթուղթը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

---

**1. Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**

Պետական գույքի կառավարման ռազմավարական փաստաթուղթը մշակվել է ելնելով ՀՀ-ում ներկայումս վարվող ընդհանուր տնտեսական քաղաքականության բովանդակությունից և ՀՀ կառավարության ծրագրի պահանջներից, ինչպես նաև պետական գույքի կառավարման ոլորտում բարեփոխումների կատարաման անհրաժեշտությունից:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ Սահմանադրության համաձայն ՀՀ կառավարության գործառույթների շարքում շատ կարևոր տեղ է հատկացվում պետական սեփականության կառավարմանը, ինչը նշանակում է, որ կառավարության մաս կազմող ցանկացած պետական մարմնի կողմից տիրապետվող և օգտագործվող գույքի արդյունավետ կառավարման հիմնական պատասխանատուն ՀՀ կառավարությունն է: Ըստ էության, պետական սեփականություն համարվող այս կամ այն գույքի տիրապետման և օգտագործման իրավունքը ՀՀ կառավարության անունից տրված է նրա կազմի մեջ մտնող պետական մարմիններին (ՀՀ նախարարություններ, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետին ենթակա մարմիններ, ՀՀ նախարարությանը ենթակա մարմիններ), իսկ դրա տնօրինման իրավունքը վերջին հաշվով վերապահված է ՀՀ կառավարությանը:

ՀՀ կառավարության գործունեության կարևոր բնութագրիչների շարքում առանձնանում է պետական գույքի կառավարման որակը և այդ կառավարումից շարունակական ստացվող արդյունքների մեծությունը՝ դինամիկան: Հետևաբար, պետք է նկատի ունենալ, որ պետական գույքի կառավարման որակի բարելավման և արդյունավետության բարձրացման հիմնախնդիրն առաջանում է գրեթե ամեն անգամ, երբ որոշում է կայացվում պետական գույքի կա՛մ դրա որևէ տարրի օգտագործման, կա՛մ դրա ամենատարածված ձևերով՝ վարձակալության, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու, պետական գույքի օտարման եղանակով առքուվաճառքի, նվիրատվության, նվիրաբերության, փոխանակության կա՛մ մասնավորեցման մասին որոշումներ կայացնելու, պետական գույքը հավատարմագրային կառավարման կամ կոնցեսիայի իրավունքով մասնավոր անձանց փոխանցելու, ինչպես նաև պետական գույքի սպասարկման, պահպանման և օգտագործման նկատմամբ հսկողություն սահմանելու ժամանակ:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ինչպես և տնտեսության բոլոր ոլորտները, այնպես էլ պետական գույքի կառավարման բնագավառն այժմ պահանջում է նոր մոտեցումների կիրառում, որի նպատակն է աշխուժացնել պետական գույքի շրջանառությունը և

| | |
|---|---|
| | ավելացնել այդ գույքի օտարումից և օգտագործումից ներկայումս ուղղակի ստացվող և ապագայում անուղղակի ստացվելիք եկամուտները, իսկ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների դեպքում՝ շահույթը:<br>Պետական գույքի կառավարման ոլորտում արդյունավետ որոշումներ ընդունելու ճանապարհին առաջին հերթին խոչընդոտ է հանդիսացել ՀՀ-ում տնտեսական ակտիվության գոյություն ունեցող շրջանակները, որոնք վերջին տարիներին գնալով ավելի են նեղացել: Որպես հետևանք իրավաբանական անձանց և հասարակության լայն շրջանակները մասնակցություն չեն ցուցաբերել պետական գույքի ձեռք բերման և արդյունավետ օգտագործման գործընթացին, հատկապես այն պատճառով, որ տվյալ ոլորտի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մակարդակը հեռու է եղել բավարար լինելուց և նրանց համար ուրվագծված չեն եղել այդ գույքի օգտագործման հեռանկարները և գույքի օգտագործումից ստացվող եկամուտները: Այլ կերպ, հասարակության բոլոր շերտերի պահանջարկը և նրանց պոտենցիալ ջանքերը հաշվի չի առնվել պետական գույքի առաջարկի ոլորտում քաղաքականությունը մշակելիս և իրականացնելիս:<br>Ելնելով վերը նշվածից՝ պետք է ամբողջությամբ վերանայել պետական գույքի կառավարման ոլորտում ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը և պետական գույքի կառավարումն իրականացնող լիազոր մարմնի կողմից իրականացվող գործառույթների բովանդակությունը և նպատակային ուղղվածությունը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ռազմավարական փաստաթղթի ընդունմամբ ոչ միայն փոփոխության կենթարկվեն պետական գույքի կառավարման ընդհանուր քաղաքականությունը, այլ նաև կվերանայվեն պետական գույքի հաշվառման, մասնավորեցման, օտարման, պետական գույքի օգտագործման ու սպասարկման և ծառայությունների մատուցման, պետական գույքի պահպանման և օգտագործման վերահսկման, ինչպես նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման բնագավառներում իրականացվող քաղաքականությունը: |
| **264** | **Պետական գույքի հաշվառման գործընթացի բարելավում անշարժ գույքի մոնիտորինգի համակարգի ներդրում**<br><br>***264.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N346-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը***<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N346-Ն որոշման մեջ փոփոխությունները և լրացումները պայմանավորմած է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6-րդ բաժնի 6.6.-րդ կետի 1-ին պարբերության կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ: Մասնավորապես՝ պետական սեփականություն հանդիսացող շենքերն ու տարածքները պետական գույքի կառավարման լիազոր մարմնին հանձնելը, սեփականության իրավունքի գրանցում չունեցող շենքերի, շինությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի գրանցման աշխատանքների իրականացնելը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N346-Ն որոշմամբ իրականացվում է պետական ոչ առևտրային կազմակերպություններին (բացառությամբ ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների), պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված շենքերն ու շինությունները հանձնումը Կոմիտեին:<br>Պետական գույքի կառավարման արդյունավետության հիմնախնդիրն առաջանում է գրեթե ամեն անգամ, երբ որոշում է կայացվում այդ գույքն օգտագործման, վարձակալության, հավատարմագրային կառավարման, կոնցեսիայի իրավունքով մասնավոր անձանց փոխանցելու, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու, ինչպես նաև պետական գույքի օտարման կամ մասնավորեցման մասին որոշումներ կայացնելու ժամանակ: Կոմիտեի կողմից արձանագրվել են պետական մարմիններին, պետական ոչ առևտրային և այլ կազմակերպություններին ամրացված մի շարք անշարժ գույք, որոնք փաստացի չեն օգտագործվում կամ օգտագործվում են ոչ արդյունավետ, ոչ մասնակի և միաժամանակ այդ գույքի սպասարկման և պահպանման ծախսերը հիմնականում իրականացվում են պետական բյուջեի միջոցներով: Կարելի է ասել, որ պետական գույքի արդյունավետ, նպատակային և խելամիտ կառավարումն այսօր լուրջ խնդիր է դարձել պետական կառույցների |

| | |
|---|---|
| | համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Այդ հիմնախնդիրները լուծելու համար նպատակահարմար է որ լիազորված մարմինը՝ Կոմիտեն (որի իրավասությունն որպես լիազոր մարմին ամրագրված է նաև «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածով) ապահովվի պետության սեփականություն համարվող գույքի կառավարումը, որի արդյունքում կբարձրանա դրա օգտագործման արդյունավետությունը: Դա է վկայում նաև պետական գույքի օգտագործման օրենսդրական դաշտի կատարելագործումը, որն հանգեցնում է պետական գույքի հիմնականում մեկ՝ կառավարման լիազորված մարմնի և դրան համապատասխան գործառույթներով օժտելու մոդելի ձևավորումը:<br>Նախագծով առաջարկվում է պետական մարմիններին ամրացված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի տնօրինումն իրականացնել Կոմիտեի կողմից:<br>Պետական գույքի կառավարման և դրա օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները բացահայտելու համար անհրաժեշտություն է առաջանում պետական մարմիններին ամրացված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը հստակ ամրագրված ժամանակահատվածում հանձնել Կոմիտեի տնօրինությանը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունման դեպքում՝ կապահովվի պետական սեփականություն համարվող անշարժ գույքի կառավարման ոլորտում պետական գույքի ամբողջական հաշվառումն ու հրապարակայնությունը, թափանցիկ գործընթացների միջոցով կվարվի լիարժեք միասնական քաղաքականություն, կիրականացվի բոլոր պետական մարմինների ենթակայության իրավունքի գրանցման վկայական ունեցող և չունեցող գույքի հանձնումը Կոմիտեին, որի արդյունքում կբարձրացվի պետական գույքի կառավարման և դրա օգտագործման արդյունավետությունը:<br><br>***264.2 Սեփականության իրավունքի գրանցում չունեցող անշարժ գույքի ցանկի առանձնացման և Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի գրանցման աշխատանքների կազմակերպման և իրականացման նպատակով միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում***<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6-րդ բաժնի 6.6.-րդ կետի 1-ին պարբերության դրույթի կատարումն ապահովելու, մասնավորապես՝ պետական սեփականություն համարվող, բայց սեփականության իրավունքի գրանցում չունեցող գույքի նկատմամբ պետական սեփականության իրավունքի ճանաչման անհրաժեշտությունից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս առկա են զգալի քանակությամբ պետական սեփականություն հանդիսացող շենքեր և շինություններ, որոնց նկատմամաբ ավարտված չէ համապատասխան ընթացակարգով սեփականության իրավունքի գրանցման աշխատանքները: Նման վիճակը պայմանավորված է հիմնականում գրանցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների անբավարարությամբ և պետական տարբեր մարմինների կողմից տվյալ բնագավառում տարվող աշխատանքների չհամակարգմամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պետական սեփականություն հանդիսացող վերոնշյալ գույքի գրանցման գործընթացն ապահովելու համար նախատեսվում է ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով, որն իրականացնելու է պետական գրանցում չունեցող պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության հստակեցում, ամփոփում և գրանցման խնդիրների լուծում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է, որ ավարտին կհասցվի գույքի նկատմամբ պետական սեփականության իրավունքի ճանաչման գործընթացը:<br><br>***264.3 Շահագրգիռ պետական մարմինների և Երևանի քաղաքապետարանի կողմից Կոմիտեին պետական սեփականության իրավունքի վկայական ունեցող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների ավարտում*** |

**1. Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6-րդ բաժնի 6.6.-րդ կետի 1-ին պարբերության դրույթի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Պետական գույքի կառավարման և դրա օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները բացահայտելու համար անհրաժեշտություն է առաջանում պետական մարմիններին և Երևանի քաղաքապետարանի ամրացված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը հստակ ամրագրված ժամանակահատվածում հանձնել Կոմիտեի տնօրինությանը:

**1.1. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Պետական գույքի կառավարման մեկ մարմնի կողմից իրականացնելու համար պետական մարմինների և Երևանի քաղաքապետարանի կողմից Կոմիտեին պետական սեփականության իրավունքի վկայական ունեցող գույքը հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Պետական գույքի միասնական կառավարման և դրա օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը, հստակ ամրագրված ժամանակահատվածում, Կոմիտեի տնօրինությանը հանձնելու աշխատանքների կատարում:

***264.4 «Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու և գույքի վիճակի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ <u>ներկայացնելը</u>***

**1. Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**

Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6-րդ բաժնի 6.6.-րդ կետի 1-ին պարբերության կատարումն ապահովելու, մասնավորապես՝ պետական գույքի օգտագործման և պահպանման վիճակը բացահայտելու նպատակով լիազոր մարմնին հանձնված պետական գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ ֆինանսատնտեսական մոնիտորինգի իրականացման անհրաժեշտությամբ:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Պետական գույքի կառավարման և դրա օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները բացահայտելու համար անհրաժեշտություն է առաջանում պետական մարմիններին ամրացված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օգտագործման վիճակի վերաբերյալ ֆինանսատնտեսական դիտարկում (մոնիտորինգ) իրականացնել: Վերջինս չափազանց կարևոր գործիքակազմ է պետական գույքի հետագա կառավարման ժամանակ հիմնավորված որոշումներ ընդունելու համար: Դրա հետ կապված անհրաժեշտ է հնարավոր սեղմ ժամկետում ստեղծել նաև անշարժ գույքի մոնիտորինգի համակարգ, որը մինչ օրս գոյություն չունի և որի պատճառով չի կատարվել անշարժ գույքի օգտագործման արդյունավետության գնահատում:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու նպատակով առաջարկվում է ստեղծել մոնիտորինգի համակարգ, որի ներդրման շնորհիվ լուծում կստանան հետևյալ հարցերը.

- պետական գույքի բոլոր տարրերի վերաբերյալ նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ տեղի ունեցած փոփոխությունների դինամիկան, այդ փոփոխությունների դրական կամ բացասական միտումները,
- չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործող պետական գույքի մակերեսները և բնութագրիչները,

- մասնավոր անձանց օգտագործման հանձնված պետական գույքի օգտագործման վիճակը և օգտագործումից ստացված արդյունքների դինամիկան և միտումը,
- պետական մարմիններին և կազմակերպություններին ամրացված և օգտագործման հանձնված անշարժ գույքի պահպանման և օգտագործման վիճակը,
- օտարման ենթակա գույքի առանձնացումը և անվանացանկի սահմանումը,
- օգտագործման տրամադրման ենթակա պետական գույքի առանձնացումը և անվանացանկի սահմանումը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Իրավական ակտի ընդունման դեպքում՝ պետական գույքի օգտագործման և պահպանման վիճակի բացահայտման համար կստեղծվի պետական սեփականություն համարվող անշարժ գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու գործուն համակարգ, որի շնորհիվ կբարձրացվի օգտագործման արդյունավետությունը:

***264.5 Գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ հսկողության գործուն համակարգի մշակում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6-րդ բաժնի 6.6.-րդ կետի 1-ին պարբերության դրույթի կատարումն ապահովելու, մասնավորապես՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի նպատակային և արդյունավետ օգտագործման ու պահպանման նկատմամբ հսկողության գործուն գործիքակազմի ստեղծման անհրաժեշտությունից:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս գործնականում առկա են բազմաթիվ դեպքեր, երբ պետական գույքը օգտագործվում է ոչ նպատակային ու ոչ արդյունավետ: Մասնավորապես, անհատույց օգտագործման պայմանագրերով տրամադրված գույքն օգտագործվում է ոչ արդյունավետ և նույնիսկ օրենսդրության պահանջների խախտումներով այն կարող է տրվել վարձակալության և վարձակալությունից ստացված միջոցները ՀՀ պետական բյուջե չեն մուտքագրվում, կամ ամրացված տարածքների մի մասը ընդհանրապես չի օգտագործվում և պատշաճ ձևով չի պահպանվում:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Պետական գույքը նպատակային և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև պատշաճ պահպանման համար առաջարկվում է արդիական գործիքակազմի մշակում և կիրառում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Գույքի օգտագործման նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով առաջարկվում է փոփոխություն կատարել անհատույց օգտագործման պայմանագրի օրինակելի ձևում: Օգտագործման տրամադրված գույքի օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար Կոմիտեում նախատեսվում է առանձին ստորաբաժանման ստեղծում:

**265** **Պետական գույքի մասնավորեցման եվ օտարման գործընթացների բարելավում**

***265.1 Պետական գույքի մասնավորեցման և օտարման բնագավառներում աճուրդային և մրցութային ձևերի ընդլայնում և ներդրումների դիմաց ուղղակի ձևով գնահատված շուկայական արժեքից ցածր գնով վաճառքի կազմակերպման սահմանափակում***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6-րդ բաժնի 6.6.-րդ կետի 1-ին պարբերության դրույթի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս պետական գույքի մասնավորեցման և օտարման գործընթացներում լայնորեն կիրառված չեն պետական գույքի վաճառքի կազմակերպման արդիական, արդյունավետ եղանակները և մեթոդները: Մասնավորապես, լիկվիդային գույքի օտարման դեպքում բավարար չափով չեն կիրառվում գույքի ներգրավմամբ տարածքային և ոլորտային ներդրումային ծրագրերի իրականացումը, ոչ լիկվիդային գույքի վաճառքի դեպքում՝

|  |  |
|---|---|
|  | հանրային իրազեկման միջոցով հանրային լավագույն գնային առաջարկությունների հիման վրա հրապարակային սակարկությունների միջոցով գույքի վաճառքի կազմակերպումը, ինչպես նաև շարժական գույքի էլեկտրոնային աճուրդի միջոցով վաճառքի կազմակերպումը և որոշակի պարտավորությունների կատարման դիմաց (որոնք համապատասխանում են տարածքի, համայնքի, ոլորտի տվյալ պահին գործող զարգացման ծրագրերին) պետական գույքի սեփականության իրավունքի անհատույց փոխանցումը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է գույքի ներգրավմամբ տարածքային և ոլորտային ներդրումային ծրագրերի մշակում և պետական գույքի օտարման և մասնավորեցման բնագավառներում հնարավորինս սահմանափակել ուղղակի վաճառքի ձևով ներդրումների դիմաց պետական գույքի շուկայական գնահատված արժեքից ցածր գնով վաճառքի կազմակերպման քաղաքականությունը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Պետական գույքի մասնավորեցման և օտարման բնագավառներում աճուրդային և մրցութային ձևերի կիրառման շրջանակների ընդլայնում, ինչպես նաև վաճառքի կազմակերպման արդիական գործիքակազմի ներդրում և դրանց արդյունքների թափանցիկության և հրապարակայնության ապահովում:<br><br>***265.2 «Օտարման ենթակա պետական գույքն առանց գնային առաջարկի վաճառքը կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը***<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված օտարման ենթակա պետական գույքն առանց գնային առաջարկի վաճառքի կանոնակարգման, ինչպես նաև է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6-րդ բաժնի 6.6.-րդ կետի 2-րդ պարբերության կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Օտարման ենթակա պետական սեփականություն հանդիսացող գույքն առանց գնային առաջարկի վաճառքի կազմակերպման գործընթացն իրականացնելու նպատակով Պետական գույքի կառավարման կոմիտեն ուսումնասիրել է օտարերկրյա պետությունների փորձը: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա որոշվել է գույքի օտարման գործընթացը կազմակերպել 2 փուլով և դրան համապատասխան մշակել մեթոդական և իրավական դաշտ: Այս գործընթացը նախատեսվում է կիրառել հիմնականում օտարման ենթակա դժվար իրացվելիք պետական սեփականություն համարվող անշարժ և շարժական գույքը վաճառելու դեպքում: Դժվար իրացվելիք գույք համարվում է պետական այն գույքը, որը մեկ և ավելի անգամ գնահատված շուկայական արժեքով դրվում է վաճառքի և չի վաճառվում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող մեխանիզմի ներդրման արդյունքում կսահմանվի օտարման ենթակա գույքի ցանկը և պայմանները: Գույքի օտարման գործընթացն առաջարկվում է իրականացնել երկու փուլով. առաջին փուլը՝ աճուրդի մասնակիցների որակավորման փուլն է, որի ընթացքում հանրային իրազեկման ճանապարհով, օտարման ենթակա յուրաքանչյուր գույքի վերաբերյալ գնային առաջարկների ստացման և այն քննարկման ճանապարհով սահմանվում է օտարման ենթակա գույքի վաճառքի մեկնարկային գինը և մասնակիցների շրջանակը, երկրորդ փուլը՝ սահմանված մեկնարկային գնով՝ դասական աճուրդի միջոցով գույքի վաճառքի կազմակերպումն է:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման դեպքում նախատեսվում է օտարման ենթակա դժվար իրացվելիք պետական սեփականություն համարվող անշարժ և շարժական գույքը վաճառել առանց գնային առաջարկի:<br><br>***265.3 Օտարման ենթակա գույքի անվանացանկի սահմանում, շուկայական գնահատում և հանրության իրազեկում***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6-րդ բաժնի 6.6.-րդ կետի 1-ին պարբերության դրույթի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** |

Ներկայումս պետության սեփականություն համարվող անշարժ և շարժական գույքը հիմնականում բարոյապես և ֆիզիկապես մաշված է, այդ թվում՝ չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող օտարման ենթակա անշարժ և շարժական գույքի իրացվելության մակարդակը և ներդրումային գրավչությունը բավականին ցածր է: Նման վիճակը պայմանավորված է նաև տվյալ գույքի վաճառքի կազմակերպման բնագավառում առկա բազմաթիվ թերություններով ու բացթողումներով, ինչպես նաև վաճառքի ենթակա գույքի վերաբերյալ հանրային իրազեկման ոչ անհրաժեշտ մակարդակով:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հանրությունը տեղեկություններ չունի օտարման ենթակա պետական գույքի անվանացանկի, այդ անվանացանկում ընդգրկված յուրաքանչյուր միավոր գույքի շուկայական արժեքի և վաճառքի պայմանների մասին: Ներկայումս պետական գույքի շուկայական արժեքը որոշվում է միայն մասնավորեցման կամ օտարման մասին որոշում նախապատրաստելու փուլում, երբ մասամբ հայտնի է վաճառքի սցենարը: Ընդհանրապես ներկա դրությամբ հստակ սահմանված չէ նաև օտարման ենթակա գույքի անվանացանկը, բացակայում է այդ գույքի դասակարգումը՝ ըստ տարածքային և ոլորտային բաշխվածության, ըստ իրացվելության աստիճանի՝ դժվար իրացվող և իրացվելի: Օտարման ժամանակ հստակ սահմանված չեն ըստ գույքի տեսակների օտարման ձևերի կիրառման և վաճառքի գների սահմանման մոտեցումները:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Հնգամյա կտրվածքով օտարման ենթակա գույքի անվանացանկի սահմանում, դրանում ընդգրկված յուրաքանչյուր գույքի շուկայական արժեքի որոշում, հանրային իրազեկման ապահովում, բաց մրցակցության շնորհիվ ՀՀ պետական և համայնքային բյուջեների մուտքերի ավելացում:

***265.4 «Պետական գույքի օտարման և վարձակալության նպատակով էլեկտրոնային աճուրդի անցկացման կարգը հաստատելու մասին և ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N882-Ն որոշման 6-րդ գլուխն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը***

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է պետական գույքի վաճառքի կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով ներդնել պետական գույքի օտարման էլեկտրոնային աճուրդների իրականացման համակարգը: Միաժամանակ, նախատեսվում է պետական և համայնքային (առաջարկության դեպքում) սեփականություն հանդիսացող գույքի օտարումը, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրականացվող գույքի վաճառքը կամ վարձակալությունը իրականացնել մեկ միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով, որի ստեղծման և գործարկման պատասխանատուն կհանդիսանա Կոմիտեն և ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6-րդ բաժնի 6.6.-րդ կետի 2-րդ պարբերության կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Պետական գույքի կառավարումն այժմ պահանջում է նոր մոտեցումների կիրառում, որոնց նպատակն է բարձրացնել պետական գույքի տնտեսական շրջանառության արդյունավետությունը և ավելացնել անշարժ գույքից ստացվելիք եկամուտները:

Պետական գույքի մասնավորեցման, օտարման, օգտագործման և սպասարկման ոլորտներում արդիական ձևեր և մեթոդներ չեն կիրառվում, տվյալ ոլորտներում չեն իրականացվում արդյունավետ և նպատակային ծրագրեր, նշված գործընթացների կազմակերպման համար չեն ներդրվում պրակտիկայում լայնորեն կիրառվող գործիքները (նկատի ունենք էլեկտրոնային աճուրդների կազմակերպումը, որակյալ գովազդի իրականացումը, միջնորդավորված բրոքերային կազմակերպությունների ներգրավումը և այլն): Պետության կողմից վարվող քաղաքականությունը պետական գույքի կառավարման ոլորտում վարչարարության պարզեցման ուղղությամբ դեռևս բավարար արդյունքներ չի ապահովում, այդ ոլորտում տարվող աշխատանքների մասին հանրային իրազեկման և թափանցիկ կազմակերպման մակարդակը չի համապատասխանում ներկայացվող պահանջներին, ապահովված չէ կառավարման գործընթացին առաջարկությունների հիման վրա հանրային մասնակցությունը, որի պատճառով չի գործում շահերի հավասարակշռության սկզբունքը, որը նախատեսում է տնտեսական արդյունավետության և սոցիալական պատասխանատվության տեսանկյունից երկկողմանի հիմնավորված արդար և մրցակցային դաշտ ապահովող որոշումների ընդունումը, ինչպես նաև կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների սահմանումը:

| | |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներկայացված նախագծով առաջարկվում է պետական գույքի օտարման և պետական գույքի վարձակալության տրամադրման նպատակով ներդնել էլեկտրոնային աճուրդների կազմակերպման համակարգ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունմամբ հնարավորություն կստեղծվի պետական գույքը վաճառել և վարձակալությամբ տրամադրել էլեկտրոնային եղանակով, ինչը հնարավորություն կտա ապահովել գործարքների թափանցիկությունը, հանրության լայն շրջանակներին տեղեկատվության հասանելիությունը, ինչպես նաև կնպաստի պետական գույքի վաճառքի արդյունավետության բարձրացմանը: |
| **266** | **Պետական գույքի օգտագործման բարելավում**<br><br>***266.1 «Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգելու և ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N1106-Ն և 2001 թվականի փետրվարի 22-ի N125 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը***<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N125 և 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N1106-Ն ներկայումս գործող որոշումներով կանոնակարգված ՀՀ պետական կառավարչական հիմնարկներին, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի (տարածքի) վարձակալության տրամադրման ընթացակարգերի փոխարեն գործընթացը կանոնակարգող մեկ միասնական ընթացակարգով և մոտեցումներով իրականացման անհրաժեշտությամբ, որը կնպաստի պետական գույքի վարձակալության տրամադրման գործընթացի արդյունավետության բարձրացմանը և ծառայությունների որակի բարելավմանը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող ՀՀ կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N125 և 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N1106-Ն որոշումներով կանոնակարգված են ՀՀ պետական կառավարչական հիմնարկներին, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի (տարածքի) մինչև մեկ տարի և մեկ տարուց ավելի ժամկետով վարձակալության տրամադրման գործընթացը: Գործող կարգերի համաձայն ըստ էության նույն գործընթացն իրականացվում է երկու տարբեր ընթացակարգերի և մոտեցումների հիման վրա:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով առաջարկվում է պետական գույքի վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգել մեկ միասնական կարգով: Մասնավորապես առաջարկվում է սահմանել վարձակալական վճարների որոշման և գանձվող վարձակալական վճարների բաշխման գործընթացում միասնական մոտեցումներ, որով կբացառվեն գործընթացում տեղ գտած թերությունները և կպարզեցնեն վարձակալության տրամադրման պայմանները, ինչպես նաև պետական գույքի վարձակալության տրամադրման գործընթացում կիրառել արդյունավետ և ժամանակակից ձևեր (էլեկտրոնային աճուրդ), մրցակցային դաշտի ապահովում և սակարկությունների ձևով վարձակալության տրամադրման պրակտիկայի լայն կիրառում, գույքի բարելավման և ներդրումների ներգրավման նպատակով վարձակալության տրամադրման ժամանակ ներկայացվող ներդրումային ծրագրերի հիմնավորվածության մակարդակի բարձրացում և դրանց հիմնավորվածության վերաբերյալ ընտրանքային փորձաքննության իրականացում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունմամբ պետական մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրինմանը, տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված գույքի վարձակալությամբ տրամադրման գործընթացը կիրականացվի մեկ միասնական կանոնակարգով և մոտեցմամբ, ինչը կնպաստի գործընթացների թափանցիկության և հրապարակայնության աճին, ՊՈԱԿ-ներին անհատույց օգտագործման տրամադրված գույքի վարձակալությունից գանձվող միջոցների բաշխման գործընթացում միասնական սկզբունքների կսահմանմանը (80%-ն ուղղվի պետական բյուջե, իսկ 20%-ը ՊՈԱԿ-ի բյուջե), իսկ վարձակալական վճարների մեծությունը կսահմանվի շուկայական գնահատման արդյունքներից ելնելով: |

| | |
|---|---|
| | ***266.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N304-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը***<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է պետական գույքը (տարածքները) անհատույց օգտագործման տրամադրելու դեպքում հստակ չափորոշիչների, ինչպես նաև գործարար ծրագրերի օրինակելի ձևում կատարման տեսանկյունից իրատեսական պահանջներ և պայմաններ սահմանելու ու ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ գործուն վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N304-Ն որոշման 3-րդ կետով սահմանվել է պետական գույքն անհատույց օգտագործման տրամադրվող սուբյեկտների շրջանակը և պայմանները: Պետական սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման հանձնելու գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է բոլոր սուբյեկտների համար տարածքների անհատույց օգտագործման տրամադրման դեպքում բացառել տարատեսակ մոտեցումների առկայությունը, հստակեցնել սուբյեկտներին ներկայացվող պայմանները (չափորոշիչները), բարեփոխել գործարար ծրագրերի օրինակելի ձևը, ստեղծել պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունավետ գործիքակազմ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պետական գույքի անհատույց օգտագործման տրամադրման գործընթացում պահանջվող գործարար ծրագրերի իրականացման հավաստիության մակարդակը բարձրացնելու և տարածքների տրամադրման պայմանների նկատմամբ վերահսկողությունն արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկվում է գործարար ծրագրի և կնքվող պայմանագրի օրինակելի ձևերում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Առաջարկվում է նաև հստակ սահմանել ներդրումային ծրագրերի պարտադիր պայմանները և կատարման ժամկետները, ինչպես նաև ըստ ոլորտների գույքն անհատույց օգտագործման տրամադրման ժամանակ սահմանել հստակ չափորոշիչներ՝ վարչարարության կրճատումն ապահովելու նպատակով:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում կվերացվի պետական գույքի անհատույց օգտագործման հանձնելու գործընթացում վարչարարական քաշքշուկները, կսահմանվեն տարածքների անհատույց տրամադրման կիրառելի, արդար և բոլոր շահառուների գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստող և գործունեության համար լիարժեք աջակցությունն ապահովող չափանիշներ և պայմաններ, ինչպես նաև բոլոր սուբյեկտների համար հստակ և միասնական պահանջներ սահմանելու շնորհիվ կբարձրացվի գործընթացի արդյունավետությունը և ծառայությունների մատուցման որակը: |
| **Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն** | |
| 267 | **Կանոնավոր ուղևորափոխադրումներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում, կանոնավոր ուղևորափոխադրումների արդյունավետ կարգավորում, այդ թվում միասնական երթուղային ցանցի ձևավորում**<br><br>267.**1 Միասնական երթուղային ցանցի օպտիմալ տարբերակի մշակում**<br>**267.2. Օպտիմալ երթուղային ցանցի փաստացի ուղևորահոսքի հաշվարկ**<br>**267.3. Միասնական երթուղային ցանցի չվացուցակների և ուղեգծերի հաստատում լիազոր մարմնի կողմից**<br>**267.4.Միասնական երթուղային ցանցի օպերատորների ընտրության մրցույթի կազմակերպում և սպասարկման իրավունքի հատկացում**<br>**267.5. Էլեկտրոնային երթակարգավարական ծառայության ձևավորում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5-րդ կետի 1-ին և 5-րդ պարբերությունների կատարման ապահովում: Ներկայումս Հայաստանի Հանրապետության ոչ բոլոր համայնքներն են ապահովված տրանսպորտային սպասարկմամբ: Այդ խնդիրը կարգավորելու նպատակով անհրաժեշտ է հանրապետությունում ձևավորել միասնական երթուղային ցանց, որի շրջանակներում ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 20-ի նիստի N 31 արձանագրության 32- |

| | |
|---|---|
| | րդ կետով ընդունվել է Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հանրապետության բնակավայրերի (ազգաբնակչության թիվը (բացառությամբ Երևան քաղաքի) կազմում է 1 706 775 մարդ) տրանսպորտային սպասարկումն իրականացվում է 153 միջմարզային և 263 ներմարզայի նկանոնավոր երթուղիների միջոցով, որոնք սպասարկում են 682 բնակավայր: Գործող երթուղային ցանցում ներգրավված են 1096 (913 շահագործվող+183 պահուստային) տրանսպորտային միջոցներ:<br>Մինչև 2017 թվականը հանրապետության 220 բնակավայրեր տրանսպորտային սպասարկմամբ ապահոված չէին: 2017 թվականին 50 բնակավայր ներառվել են միջմարզային երթուղային ցանցում:<br>Ընդհանուր առմամբ մոտ 170 համայնք ապահոված չէ կանոնավոր ուղևորափոխադրմամբ, իսկ մոտ 100 համայնքի տրանսպորտային կանոնավոր սպասարկումը խոցելի է (վտանգ կա, որ սպասարկող կազմակերպությունները կարող է հրաժարվեն երթուղիների ոչ շահութաբերության պատճառով):<br>**1.2  Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ բնակչությանը մատուցվող տրանսպորտային սպասարկման առայությունններն առավել հասանելի դարձնելու և սպասարկման որակն ու անվտանգությունը բարձրացնելու նպատակով: Միասնական երթուղային ցանցի ձևավորման հիմնական նախապայման կհանդիսանա հանրապետության բոլոր բնակավայրերը մարզկենտրոններին կամ մարզի խոշոր քաղաքների հետ առնվազն մեկ երթուղով կապելը:<br>Միասնական երթուղային ցանցի ձևավորման համար անհրաժեշտ է հավաքագրել հիմնական ելակետային տվյալները:<br>Որպես հիմնական ելակետային տվյալ հանդիսանում է ուղևորահոսքը: Ուղևորահոսքի վերաբերյալ հստակ տվյալներ առկա են միայն գործող երթուղիների մասով, սակայն անհրաժեշտ է ունենալ նաև չսպասարկվող համայնքներից ուղևորահոսքը: Այդ նպատակով 2017 թվականի հուլիսի 20-ի նիստի N 31 արձանագրության 32-րդ կետով ՀՀ կառավարության կողմից ընդունված Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքի շրջանակներում մարզպետարաններից ստացել ենք հանրապետության բոլոր բնակավայրերի ուղևորահոսքը ըստ ժամերի և ուղղությունների:<br>Միասնական երթուղային ցանցի արդյունավետ կառավարման նպատակով ցանցի ձևավորման ժամանակ կներդրվի միասնական էլեկտրոնային երթակարգավարական ծառայություն և միասնական տոմսային համակարգ, իսկ տրանսպորտային միջոցները կկահավորվեն տեղորոշման համակարգով:<br>Միասնական երթուղային ցանցում փոխադրողի ընտրությունը կկազմակերպվի ըստ տարածաշրջանների, մրցութային պայման կսահմանվի ինչպես բարձր, այնպես էլ ցածր ուղևորահոսք ունեցող բնակավայրերի սպասարկումը մեկ փաթեթում: Օպտիմալ երթուղային ցանցի մաթեմատիկական մոդելավորումից հետո կհաստատվեն օպտիմալ երթուղիների չվացուցակներն ու սխեմաները ըստ մարզերի:<br>Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ներդրման նպատակով անհրաժեշտ է սահմանել երթուղային ցանցի ձևավորման քայլերի հաջորդականությունը, դրանց  կատարման ժամկետները: Նախատեսվում է ներմարզային երթուղային ցանցը կապել միջմարզային երթուղային ցանցի հետ, որի դեպքում ներմարզային երթուղիների մրցույթները կանցկացվեն մեկ փաթեթով միջմարզային երթուղիների մրցույթների հետ մեկտեղ: Կընտրվի այնպիսի փոխադրող, որը կսպասարկի մարզի (մարզերի) միջմարզային և ներմարզային երթուղիները համատեղ:<br><br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Միջոցառման իրականացման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում կներդրվի միասնական երթուղային ցանց, որը հանրապետության բոլոր համայնքները կապահովի որակյալ, անվտանգ և հասանելի տրանսպորտային սպասարկմամբ, կկրճատվի ուղևորության համար ծախսվող ժամանակահատվածը, կանոնավոր ուղևորափոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցները կհամապատասխանեցվեն փաստացի ուղևորահոսքի ծավալներին, կբարձրանա ուղևորափոխադրումների արդյունավերտությունը, կներդրվի միասնական տոմսավորման համակարգ և ինտերակտիվ քարտեզ, կձևավորվի էլեկտրոնային երթակարգավարական ծառայություն, կբարձրանա ուղևորափոխադրումների սպասարկման որակն ու անվտագությունը: |
| 268 | **Կանոնավոր ուղևորափոխադրումների արդյունավետ կարգավորում**<br><br>**268.1 ՀՀ կառավարության  <<ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում** |

| | |
|---|---|
| | **1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5-րդ կետի 1-ին պարբերության կատարման, ինչպես նաև ՀՀ-ԵՄ միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության CEPA համաձայնագրի պահանջների ապահովում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հանրապետությունում կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառում իրականացվում են փոփոխություններ, մասնավորապես ներդրվում է միասնական երթուղային ցանց, որի օպերատորների ընտրությունը կանոնակարգված չէ:<br>Բացի այդ, Եվրամիության օրենսդրությամբ սահմանվում են սոցիալական օրենսդրական կարգավորումներ, որոնք անհրաժեշտ է տեղայնացնել:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետությունում կանոնավոր ուղևորափոխադրումների արդյունավետության բարձրացման, սպասարկման որակի բարելավման նպատակով նախատեսվում է ներդնել միասնական երթուղային ցանց, որի արդյունքում հանրապետության բոլոր համայնքները կապահովվեն տրանսպորտային սպասարկմամբ, կբարձրանա ուղևորափոխադրումների սպասարկման որակն ու անվտանգությունը:<br>Միասնական երթուղային ցանցի ներդրման համար անհրաժեշտ է սահմանել միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորների ընտրության պայմանները:<br>Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ներդրման նպատակով անհրաժեշտ է սահմանել երթուղային ցանցը սպասարկող օպերատորների ընտրությանը ներկայացվող պահանջները: Նախատեսվում է ներմարզային երթուղային ցանցը կապել միջմարզային երթուղային ցանցի հետ, որի դեպքում ներմարզային երթուղիների մրցույթները կանցկացվեն մեկ փաթեթով միջմարզային երթուղիների մրցույթների հետ մեկտեղ: Կընտրվի այնպիսի փոխադրող, որը կսպասարկի մարզի (մարզերի) միջմարզային և ներմարզային երթուղիները համատեղ: Միջոցառման իրականացման արդյունքում կկանոնակարգվի կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող օպերատորների ընտրության մրցութային կարգը:<br><br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետությունում կներդրվի միասնական երթուղային ցանց, որի արդյունքում հանրապետության բոլոր համայնքները կապահովվեն տրանսպորտային սպասարկմամբ, կբարձրանա ուղևորափոխադրումների սպասարկման որակն ու անվտագությունը: |
| 269 | **Ավտոտրանսպորտի տեխնիկական զննման նոր կանոնակարգերի մշակում, տեխնիկական զննման կտրոնների փոխարինում էլեկտրոնային համակարգով և տեխնիկական զննման փաստացի իրականացման վերահսկողական մեխանիզմների ներդրում**<br><br>**<u>269.1 «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</u>**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).**<br>ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5-րդ կետի 3-րդ պարբերության կատարման ապահովում:<br>**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>«Ճանապարհային երթևեկության մասին» Վիեննայի 1968 թ. Կոնվենցիայի 39-րդ հոդվածը սահմանում են, որ<br>1) միջազգային երթևեկության մեջ գտնվող յուրաքանչյուր ավտոմեքենա, յուրաքանչյուր կցասայլ փոխադրամիջոցների յուրաքանչյուր շարժակազմ պետք է բավարարի նույն Կոնվենցիայի 5-րդ Հավելվա դրույթներին: Բացի այդ, նրանք պետք է լինեն սարքին վիճակում.<br>2) ազգային օրենսդրությունում պետք է նախատեսված լինի՝<br>ա) ուղևորների փոխադրման համար օգտագործվող և, վարորդի նստելու տեղից բացի, 8-ից ավելի նստելու տ ունեցող ավտոմեքենաների, |

| | |
|---|---|
| | բ) բեռների փոխադրման համար օգտագործվող այն ավտոմեքենաների տեխնիկական ստուգումնե պարբերական անցկացում, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցում է 3500 կգ, ինչպես նա այդպիսի փոխադրամիջոցների կցասայլերի տեխնիկական ստուգումների պարբերական անցկացում.<br>3) ազգային օրենսդրությունը հնարավորության դեպքում պետք է 2-րդ կետի դրույթները տարա փոխադրամիջոցների այլ տեսակների վրա:<br>«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն Հայաստա Հանրապետության տարածքում շահագործվող տրանսպորտային միջոցները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգ ենթակա են տեխնիկական զննության: ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեություն իրականացնելու լիցենզավորման կարգ լիցենզիայի պայմաններն ու պահանջները, ներառյալ՝ տվյալ լիցենզիայի հիման վրա շահագործվող հոսքագծե նվազագույն քանակը, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն անցկացնելու կարգը, տեխնիկակ արատորոշման միջոցների օգտագործմամբ տեխնիկական զննության ընթացքում տրանսպորտային միջոցնե տեխնիկական վիճակի ստուգման աշխատանքներին ներկայացվող պահանջները, տրանսպորտային միջոցնե տեխնիկական զննման փաստաթղթին (կտրոնին) ներկայացվող պահանջները:<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են լիցենզավորված 35 տեխնիկական զննությ կայաններ՝ 41 հոսքագծերով: Ստեղծված է միասնական էլեկտրոնային շտեմարան, որը հնարավորություն է տա վարելու տեխնիկական զննություն անցած և սարքին ճանաչված տրանսպորտային միջոցների ռեգիստր՝ պարունակե տվյալներ տեխնիկական զննության անցկացման ժամի, հայտնաբերված թերությունների վերաբերյալ: Շտեմարա տվյալները հասանելի են նաև ՀՀ ճանապարհային ոստիկանությանը:<br>Տեխնիկական զննության արդյունքում շահագործման պահանջներին համապատասխանող տրանսպորտա միջոցի համար զննություն իրականացրած լիցենզավորված անձը տրամադրում է սահմանած նմուշի կտրոն, որը պետ է փակցվի տրանսպորտային միջոցի վրա՝ վարորդի կողմից առջևի հողմապակու ներքևի աջ անկյունում, սակա փաստ է, որ ներկայումս տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացումը կրում ձևական բնույթ, քանի որ տեխնիկական զննության կտրոնը բանկերից ձեռք բերելուց հետո տրանսպորտային միջո սեփականատերը կամ տիրապետողը տրանսպորտային միջոցը չի ներկայացնում տեխնիկական զննության, ի ճանապարհային ոստիկանությունը վերահսկողությունը իրականացնում է ուժի մեջ գտնվող տեխնիկական զննությ կտրոնը տրանսպորտային միջոցի՝ օրենսդրությամբ սահմանված տեղում չփակցված վիճակով տրանսպորտային միջ վարելու մասով միայն: Այլ վերահսկողական մեխանիզմներ թե սեփականատերերի (տիրապետողների), թե կայաննե նկատմամբ չկան:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>Առկա խնդիրները կարգավորելու և տեխնիկական զննության գործընթացի նկատմամբ վերահսկողությո բարձրացնելու նպատակով առաջարկվում է տեխնիկական զննության կտրոնի տրամադրման պահանջը հան Վերահսկոսությունը իրականացնել էլեկտրոնային շտեմարանի և արատորոշման քարտի միջոցով: Տեխնիկակ զննության արատորոշման քարտը ներառում է անհրաժեշտ տեղեկատվությունը տրանսպորտային միջոց տեխնիկական զննության, ինչպես նաև կրկնակի տեխնիկական զննության անցնելու վայրի, օրվա, ժա տեխնիկապես սարքին ճանաչվելու կամ հայտնաբերված թերությունների վերաբերյալ: Ուստի դրա առկայությո բավարար է տեխնիկական զննություն անցնելու կամ չանցնելու վերաբերյալ վերահսկողություն իրականացնելու համա<br>Արատորոշման քարտը լրացվում է էլեկտրոնակին եղանակով և պահպանվում էլեկտրոնային շտեմարանում, ին հնարավորություն է տալիս վերահսկողություն իրականացնել նաև էլեկտրոնային եղանակով, առա տրանսպորատային միջոցը կանգնեցնելու: Միաժամանակ գործող էլեկտրոնային ծրագիրը թույլ է տալիս վերահս տեխնիկական զննության փաստացի իրականացումը: Այն արձանագրում է տրանսպորտային միջոցի արգելակայ ստենդի վրա բարձրանալը՝ ֆիքսելով տվյալ տրանսպորտային միջոցի քաշը: Համապատասխան տողում «0» թ առկայությունը փաստում է տեխնիկական զննության կարգի պահանջների չկատարումը կայանի կողմից, ո «Պարամետր 1, 2. 3, 4» սյունակներում առկա «0»-ները փաստում են, որ տվյալ տրանսպորտային միջոցի տեխնիկակ զննությունը կատարվել է առանց արգելակային ստենդի վրա բարձրանալու:<br>ՀՀ-ում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննությ անցկացման կարգը հաստատված է ՀՀ կառավարության 15.02.2007թ. թիվ 344-Ն որոշմամբ, համաձայն ո տեխնիկական զննության կայաններում կատարվում են տրանսպորտային միջոցների հետևյալ հանգույցների համակարգերի տեխնիկական վիճակի ստուգման աշխատանքներ՝<br>1. Արգելակային համակարգ<br>2. Ղեկային կառավարում<br>3. Արտաքին լուսավորման սարքեր<br>4. Հողմապակու ապակեմաքրիչներ և ապակելվացներ<br>5. Անիվներ և դողեր<br>6. Շարժիչը և դրա համակարգերը<br>7. Կառուցվածքի այլ տարրեր |

| | |
|---|---|
| | 8. Այլ աշխատանքներ<br>Սույն նախագծերի ընդունումից հետո կփոփոխվի ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի թիվ 344 որոշմամբ հաստատված կարգը, որով կնախատեսվի տեխնիկական զննության պահանջների որոշ մասը պարտադ լինեն ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների և մինչև 3500 կգ առավելագույն ընդհանուր զանգվ ունեցող բեռնատար տրանսպորտային միջոցների համար: Նոր թողարկվածների դեպքում առաջին զննությունը եր տարի, երկրորդը՝ 2 տարի հետո, այնուհետ տարին մեկ պարբերությամբ: Ամբողջ ծավալով կստուգվեն միս ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցները /մոտ 12000 միավոր/ և 3500 կգ-ից ավել ընդհանուր զանգվ ունեցող բեռնատար տրանսպորտային միջոցները, կցորդ/կիսակցորդները, հատուկ և մասնագիտացվ տրանսպորտային միջոցները տարին մեկ պարբերականությամբ:<br>Արդյունքում ներկայիս 41 կետերից /62 ենթակետ/ կմնա 27-ը /48 ենթակետ/, որից 9-ը /36 ենթակետ/ պարտադ կլինեն ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների և մինչև 3500 կգ առավելագույն ընդհանու զանգված ունեցող բեռնատար տրանսպորտային միջոցների համար:<br>Բոլոր տեսակի տրանսպորտային միջոցները կրկնակի տեխնիկական զննության ներկայացվեն միայն 1-ին և 2- կետերով հայտնաբերված թերությունները կամ անսարքությունները վերացնելուց հետո: Մնացած դեպքեր արատորոշման քարտում և էլեկտրոնային շտեմարանում կլրացվեն անսարքությունները կամ թերությունները:<br>20-օրյա ժամկետում ներկայանալու դեպքում տեխնիկական զննությունը կանցկացվի կոնկրետ թերության կ անսարքության մասով և անվճար:<br>**2. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.**<br>ա) բացառել տրանսպորտային միջոցների սեփականատերերի կամ տիրապետողների կողմից տեխնիկակ զննության կտրոն ձեռք բերելու և առանց տեխնիկական զննության կայան ներկայանալու հողմապակուն փակցնել տրանսպորտային միջոցների շահագործումը,<br>բ) վերահսկողություն իրականացնել ոչ թե կտրոնի առկայության կամ բացակայության, այլ տրանսպորտայ միջոցի փաստացի տեխնիկական զննություն անցնելու կամ չանցնելու նկատմամբ՝ հիմք ընդունելով արատորոշմ քարտի և էլեկտրոնային շտեմարանի տվյալները,<br>գ) բացի տրանսպորտային միջոցների սեփականատերերին կամ տիրապետողներին վարչակ պատասխանատվության ենթարկելուց, սահմանել նաև վարչական պատասխանատվություն կայանների նկատմամ տեխնիկական զննության գործընթացը սահմանված կարգով չիրականացնելու համար: |
| 270 | ***Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և բալոնների պարբերական վկայագրման գործընթացների կանոնակարգում***<br><br>**<u>270.1 «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</u>**<br><br>**1. Իրավական ակտերիի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5-րդ կետի 4-րդ պարբերության կատարման ապահովում:<br>**1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական կանոնակարգը գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգը և բալոնների պարբերական վկայագրման ու գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկման աշխատանքներ կատարող կազմակերպությունների արտադրական բազաներին և բանվորական ու ինժեներատեխնիկական անձնակազմերի գիտելիքներին ներկայացվող պահանջները հաստատված են ՀՀ կառավարության 2005 թ սեպտեմբերի 28-ի թիվ 2388-Ն որոշմամբ, ինչը հակասում է ոչ միայն «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքին, այլև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, համաձայն որի բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց |

| | |
|---|---|
| | պարտականությունները:<br>Գործընթացի իրականացման ընթացքում առաջ են եկել մի շարք խնդիրներ, որոնք օրենսդրական կարգավորման կարիք ունեն:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ոլորտում իրականացվող քաղաքականության ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտություն է առաջացել իրականացնել գազաբալոնային համակարգերով լրակազմված ավտոտրանսպորտային միջոցների շահագործման անվտանգության ապահովմանը ուղղված օրենսդրական համալիր լուծումներ:<br>Հաշվի առնելով բնագավառի կազմակերպման միջազգային փորձը, առաջարկվում է<br>1. Լիցենզավորել Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման, բալոնների պարբերական վկայագրման գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին՝ սպառողների իրավունքների պաշտպանության, ծառայությունների որակի բարձրացման, նրանց նկատմամբ պատշաճ հսկողություն իրականացնելու նպատակով,<br>2.ՀՀ կառավարությանը օրենքով տալ լիազորություն սահմանելու սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և բալոնների պարբերական վկայագրման կարգը<br>*3.Սահմանել վերահսկողական մեխանիզմներ՝ վարչական պատասխանատվության ենթարկելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտողներին:*<br><br>**2. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման, բալոնների պարբերական վկայագրման և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի հերմետիկության ստուգման գործընթացների կարգավորում: Այդ աշխատանքները կատարող անձնակազմերի որակավորման և գազավառելիքային համակարգով լրակազմված ավտոտրանսպորտային միջոցների շահագործման անվտանգության բարձրացում: |
| 271 | ***Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով իրականացվող փոխադրումների կանոնակարգում***<br><br>**271.1 «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>***1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)***.<br>ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5-րդ կետի 1-ին պարբերության կատարման ապահովում:<br>**1.1 Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս հանրապետությունում տաքսի ծառայություններ են մատուցում 190 կազմակերպություններ, որոնցից 46-ը 1-4 ավտոմոբիլով և վճարում են լիցենզիայի համար տարեկան 100000 դրամ պետական տուրք, իսկ 117-ը՝ 5 և ավելի ավտոմոբիլներով, որոնք վճարում են լիցենզիայի համար տարեկան 200000 դրամ պետական տուրք: Այսինքն անհավասար պայմաններ են ստեղծվում տարբեր մեքենաքանակով նույն գործունեությունն իրականացնողների համար լիցենզիայի տրամադրման պետական տուրքի մասով: Բացի այդ, կազմակերպությունները վճարում են նաև այլ հարկեր, որը էականորեն տարբերվում է ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի-ավտոմոբիլով ուղևորափոխադրումների համար սահմանված պետական տուրքի դրույքաչափերից: Հարկային պարտավորությունների մասով առկա են անհավասար պայմաններ գործունեություն |

իրականացնողների համար:

Օրենսդրորեն կարգավորված չէ նաև էլեկտրոնային հարթակների միջոցով տաքսի ծառայությունների մատուցման ոլորտը, որը գործող օրենսդրությամբ չի կարգավորվում և ստեղծում է անհավասար մրցակցային պայմաններ ոլորտում գործունեություն իրականացնողների համար, ինչպես նաև նպաստում է ոլորտում անօրինական փոխադրումների կազմակերպմանը:

Բացի այդ, ներկայումս մեկ ավտոմոբիլով մարդատար-տաքսի ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց լիցենզիայի պետական տուրքի դրույքաչափերը տարբեր են ըստ հաշվառման վայրերի, ինչը հանգեցնում է գործունեություն իրականացնողների արդարացի դժգոհությունը:

Ոլորտում ստեղծված անհավասար պայմանները և էլեկտրոնային հարթակով տաքսամոտորային փոխադրումների չկարգավորված հարաբերությունները նպաստել են օրինական գործունեություն իրականացնողների կողմից լիցենզիաների հանձնմանը, մասնավորապես 2019թվականի դրությամբ մոտ 8000 ֆիզիկական անձանց լիցենզիաները ուժը կորցրած են ճանաչվել, մոտ 2800 լիցենզիայի գործողությունը կասեցվել է:

Ոլորտում գործունեություն իրականացնողների կողմից կուտակվել են լիցենզիայի պետական տուրքի չվճարման մեծաքանակ տուգանքներ, որոնք անընդհատ աճում են լիցենզավորված անձանց կողմից լիցենզիաները չհանձնելու և պետական տուրքը չվճարելու հետևանքով: Մասնավորապես պարտքի չափը 2019թ. փետրվարի դրությամբ կազմում է մոտ 1,5 մլրդ. դրամ, իսկ վճարված տորքը մոտ 1,2 մլրդ. դրամ: Պարտքի մասով ԴԱՀԿ-ի վարույթում են գտնվում 583 գործեր, դատական կարգով քննվում են 34 գործեր:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օրենսդրական փաթեթով նախատեսվում է օրենսդրական բարեփոխումներ իրականացնել տաքսամոտորային փոխադրումների ոլորտում, այդ թվում՝

1. Մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրում իրականացնող ֆիզիկական անձանց համար կսահմանվեն տարեկան պետական տուրքը 0 դրամ, իսկ կազմակերպությունների համար՝ յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար տարեկան 10000 դրամ:

2. Ուղևորների փոխադրման պատվերներ ձևակերպող ներառյալ էլեկտրոնային հարթակներով և այլ տեխնիկական միջոցներով կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի համար պարտադիր պայման է սահմանվել պատվերները փոխանցել միայն լիցենզավորված տաքսամոտորային փոխադրումներ իրականացնողների հետ և լիազոր մարմնին տրամադրեն տվյալների բազան: Նրանց գործունեությունը կկարգավորվի <<Գործունեության իրականացման ծանուցման մասին>> օրենքով:

3. Սակաչափիչ սարք է ընդունվում արբանյակային տեղորոշման համակարգով (GPS, ГЛОНАСС և այլն) վազքի միավորի հիման վրա փոխադրավարձը հաշվարկող ծրագրային հավելվածներով ներբեռնված էլեկտրոնային սարքը:

4. Սահմանվում է դրույթ, որով լիազոր մարմինը 3 ամսից ավելի լիցենզիայի տուրքը չվճարելու դեպքում դադարեցնում է լիցենզիայի գործունեությունը:

5. Պարտադիր պայման է սահմանվել, որ 30 և ավելի տրանսպորտային միջոցներ ունեցող կազմակերպությունները ունենան հաշմանդամների համար նախատեսված մեկ հատ տրանսպորտային միջոց:

6. Ֆիզիկական անձանց լիցենզավորման պահանջ է սահմանվում թմրաբանական բժշկական հաստատություններում հաշվառված անձանց ցանկում չլինելու հանգամանքը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված առողջական վիճակի պարտադիր նախնական բժշկական զննություն անցնելու վերաբերյալ տեղեկանքը ներկայացնելը:

7. Կանոնակարգվում են օդանավակայանների, ավտոկայարանների, ավտոկայանների և միջմարզային երթուղիները սպասարկող երթակարգավարական կետերի տարածքում մարդատար-տաքսի ավտոմոբիլների փոխադրումների գործընթացը:

**2. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Օրենսդրական փաթեթով կթեթևացվի պետական տուրքի մասով տաքսի ծառայություններ մատուցողների հարկային բեռը, ինչը կհանգեցնի որոշակի թվով անձանց համար որակական էական դրական փոփոխություններ: Կկանոնակարգվի էլեկտրոնային հարթակներով տաքսու ծառայությունների մատուցման գործընթացը, կբարձրանա ոլորտի վերահսկողությունը, անվտանգությունն ու սպասարկման որակը: Կբացառվեն ոլորտում անօրինական փոխադրումները:

272

**ՀՀ-ԵՄ միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության CEPA համաձայնագրի պահանջների ապահովման նպատակով ջրային տրանսպորտի գործունեության կարգավորմանն ուղղված միջոցառումների իրականացում**

***<u>272.1 Ջրային տրանսպորտի գործունեության իրավական կարգավորում</u>***

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5-րդ կետի 6-րդ պարբերության կատարում, ինչպես նաև ՀՀ-ԵՄ միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության CEPA համաձայնագրի պահանջների ապահովում:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս հանրապետությունում կանոնակարգված չէ ջրային տրանսպորտի գործունեության բնագավառը: Բացակայում են ջրային տրանսպորտի միջազգային համաձայնագրերի պահանջներին համապատասխան օրենսդրական կարգավորումները, ինչը հնարավորություն չի տալիս լիարժեք իրականացնել ջրային տրանսպորտի ոլորտում միջպետական համագործակցությունը:

Օրենսդրական կարգավորումների բացակայությունը խոչընդոտում է ջրային տրանսպորտով միջպետական փոխադրումների իրականացման գործընթացներին:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Անհրաժեշտ է միանալ ջրային տրանսպորտի ոլորտում գործող միջազգային համաձայնագրերին, տեղայնացնել դրանցից բխող ջրային տրանսպորտային միջոցներին ներկայացվող պահանջները, կանոնակարգել ջրային տրանսպորտի ոլորտում գործունեություն իրականացնողների պարտականություններն ու պատասխանատվությունը, դրոշի պետությունների պարտականությունների սահմանումը, նավերի ստուգումների և տեխնիկական զննության գործընթացը, ջրային տրանսպորտի ոլորտում վթարների հետաքննությունը կարգավորող հիմնարար սկզբունքները, ծովային անվտանգության ապահովման և նավերից առաջացող աղտոտման կանխարգելման պահանջները, ծովային վթարների և պատահարների հետաքննության մեթոդաբանությունը, նավաստիների աշխատանքի ու հանգստի ռեժիմի և վերապատրաստումների գործընթացը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ջրային տրանսպորտի գործունեության իրավական կարգավորումը հնարավորություն կտա ստեղծելու դրոշի պետության նավատորմ, իրականացնելու ջրային տրանսպորտով բեռնափոխումներ և ուղևորափոխադրումներ, զարգացնելու միջպետական համագործակցությունը ջրային տրանսպորտի ոլորտում: Ոլորտի օրենսդրական կարգավորումները կնպաստեն միջպետական ջրային փոխադրումների ոլորտում Հայաստանի Հանրապետության ճանաչելության բարձրացմանը:

273

**ՀՀ-ԵՄ միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության CEPA համաձայնագրի պահանջների ապահովման նպատակով ավտոմոբիլային տրանսպորտի բեռնափոխադրումների գործընթացի կանոնակարգում**

**<u>273.1 ՀՀ կառավարության <<Հայաստանի Հանրապետության կառավարության 30.07.2007թ. թիվ 1226-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5-րդ կետի 1-ին պարբերության կատարման, ինչպես նաև ՀՀ-ԵՄ միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության CEPA համաձայնագրի պահանջների ապահովում:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հանրապետության բեռնափոխադրումների ոլորտը առավելագույն ազատականացվել է ոլորտի զարգացման և բեռնափոխադրող ընկերությունների գործունեությունը դյուրացնելու նպատակով:

Եվրամիության օրենսդրությամբ սահմանվում են առավել խիստ պահանջներ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների, նրանց մենեջերների և վարորդների որակավորման համար:

ՀՀ-ԵՄ գործընկերության շրջանակներում առկա են օրենսդրական կարգավորումների տարբերություններ, որոնք խոչընդոտում են հայկական բեռնափոխադրողների միջպետական բեռնափոխադրումների իրականացման գործընթացին:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայկական բեռնափոխադրողների մուտքը դեպի եվրոպական շուկա ապահովելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված միջոցառումների շրջանակներում մոտարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ԵՄ օրենսդրական կարգավորումներին:

Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների գործունեության ոլորտում նախատեսվում է ճանապարհային փոխադրումների սոցիալական օրենսդրության ներդաշնակեցում Եվրամիության օրենսդրության պահանջներին, միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ իրականացնող օպերատորի գործունեությամբ զբաղվելու համար նրա կողմից բավարարվելիք պայմաններին վերաբերող ընդհանուր կանոնների սահմանում:

**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների շուկայի կարգավորում, ավտոմոբիլային տրանսպորտով ճանապարհային փոխադրումների սոցիալական օրենսդրության ներդաշնակեցում Եվրամիության օրենսդրության պահանջներին, բեռնափոխադրումների ոլորտի ռազմավարության հստակեցում, միջազգային ավտոճանապարհային փոխադրումների օրենսդրական կարգավորումների համապատասխանեցում միջազգային պահանջներին:

**273.2 «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5-րդ կետի 1-ին պարբերության կատարում, ինչպես նաև ՀՀ-ԵՄ միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության CEPA համաձայնագրի պահանջների ապահովում:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հանրապետության ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների ոլորտը առավելագույն ազատականացվել է ոլորտի զարգացման և բեռնափոխադրող ընկերությունների գործունեությունը դյուրացնելու նպատակով:

Ելնելով անվտանգության ապահովման, վարորդների աշխատաժամանակի և հանգստի ռեժիմի ապահովման անհրաժեշտունից, Եվրամիության օրենսդրությամբ սահմանվում են առավել խիստ պահանջներ ավտոմոբիլային փոխադրումներ իրականացնելու համար:

ՀՀ-ԵՄ գործընկերության շրջանակներում առկա են օրենսդրական կարգավորումների տարբերություններ, որոնք խոչընդոտում են հայկական փոխադրողների միջպետական փոխադրումների իրականացման գործընթացին:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայկական բեռնափոխադրողների մուտքը դեպի եվրոպական շուկա ապահովելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված միջոցառումների շրջանակներում մոտարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ԵՄ օրենսդրական կարգավորումներին:

Նախատեսվում կանոնակարգել թվային տախոգրաֆի համակարգի ճանապարհային ստուգումների գործընթացը, սահմանել միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ իրականացնող օպերատորի գործունեությամբ զբաղվելու համար նրա կողմից բավարարվելիք պայմաններին վերաբերող ընդհանուր կանոնները, որոշակի տիպի տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի ճանապարհային ստուգումների գործընթացի կազմակերպումը և ստուգումների վիճակագրության վարման գործընթացը:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ավտոճանապարհային տրանսպորտի գործունեության ոլորտում նախատեսվում է ավտոմոբիլային տրանսպորտով ճանապարհային փոխադրումների սոցիալական օրենսդրության ներդաշնակեցում Եվրամիության օրենսդրության պահանջներին, ճանապարհային փոխադրումներում ներգրավված աշխատողների

| | |
|---|---|
| | աշխատաժամանակի կազմակերպման դրույթների սահմանում, ճանապարհային ստուգումների կանոնակարգում, ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացում:<br><br>**<u>273.3 ՀՀ կառավարության <<Հայաստանի Հանրապետության 20.07.2006թ. թիվ 1106-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5-րդ կետի 1-ին պարբերության կատարում, ինչպես նաև ՀՀ-ԵՄ միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության CEPA համաձայնագրի պահանջների ապահովում:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս հանրապետությունում կանոնակարգված է ծանրաքաշ կամ մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների չափորոշիչների սահմանման գործընթացը, սակայն միջպետական համագործակցության շրջանակներում առկա են օրենսդրական կարգավորումների տարբերություններ, որոնք խոչընդոտում են հայկական փոխադրողների միջպետական փոխադրումների իրականացման գործընթացին:<br>Հաշվի առնելով միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները և կարևորելով միջպետական բեռնափոխադրումներին հայկական բեռնափոխադրողների ինտեգրման գործընթացը, փոփոխություններ են կատարվել <<Ավտոմոբիլային ճանապարհների մասին>> ՀՀ օրենքում: Անհրաժեշտ է օրենքի ընդունումից հետո համապատասխան փոփոխություններ կատարել օրենքի կիրակումն ապահովող ենթաօրենսդրական ակտերում:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է ավտոմոբիլային ճանապարհներից օգտվող ծանրաքաշ կամ մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների չափորոշիչները համապատասխանեցնել միջազգային չափանիշներին:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծանրաքաշ բեռներ փոխադրելու համար օգտագործվող կամ ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված եզրաչափերը կհամապատասխանեցվեն միջազգային պայմանագրերի պահանջներին և կկարգավորվեն չմասնատվող բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցներին թույլտվության տրամադրման հետ կապված հարաբերությունները, կդյուրացվի վարչարարությունը: |
| 274 | **Երկաթուղային տրանսպորտով երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում**<br><br>**<u>274.1 Երկաթուղային շարժակազմի նորացում և արդիականացում, ուղղված երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5 կետի 10-րդ պարբերության պահանջներից: Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է երկաթուղային շարժակազմի հրատապ նորացման և արդիականացման անհրաժեշտությամբ, ուղղված երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս <<Հարավկովկասյան երկաթուղի>> ՓԲԸ-ի կողմից շահագործվող շարժակազմը հնացած է և չի համապատասխանում ներկայացվող տեխնիկական պահանջներին: Շահագործվող շարժակազմը թույլ չի տալիս ապահովվել մատուցվող ծառայությունների անհրաժեշտ որակի մակարդակը և երթևեկության անվտանգությունը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մերձքաղաքային հաղորդակցությունում նոր շարժակազմի ձեռքբերում, գործող շարժակազմի արդիականացում: Նշված շարժակազմերի ձեռքբերումը նախատեսված է իրականացնել Կոնցեսիոն պայմանագրով հաստատված Ծրագրով սահմանված ծավալների շրջանակներում: |

| | |
|---|---|
| | **2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում և բազմազանեցում: Երկաթուղային շարժակազմի (ներառյալ մերձքաղաքային հաղորդակցությունում) նոր շարժակազմի ձեռքբերում, գործող շարժակազմի արդիականացում: |
| 275 | **Երկաթուղու սակագնային բարելավում**<br><br>**<u>275.1 ԱՊՀ երկրների երկաթուղային տրանսպորտի աշատակազմերի սակագնային քաղաքականության փորձագետների հետ բանակցությունների վարում, նոր մոտեցումների ձևավորում, համաձայնությունների ձեռք բերում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5-րդ կետի 9-րդ պարբերության պահանջներով և ուղղված է երկաթուղային սակագնային քաղաքականության կատարելագործմանը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս յուրաքանչյուր տարի ԱՊՀ երկրների աշխատակազմերի փորձագետների կողմից մշակվում է և երկաթուղային Սակագնային Համաձայնագրի մասնակցող աշխատակազմերի Սակագնային Համաժողովի ԱՊՀ մասնակից երկրների երկաթուղային աշխատակազմերի կողմից հաստատվում է հաջորդ տարվա ՍՔ-ը: ԵՏՄ անդամ երկրների համար ԵՏՄ տարածքում գործում է միասնականացված երկաթուղային սակագներ:<br>Գործող Սակագնային Քաղաքականությունը թույլ չի տալիս երկաթուղային փոխադրումներին մրցակից լինել տրանսպորտային այլ տեսակների փոխադրումների հետ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ԱՊՀ երկրների երկաթուղային տրանսպորտի աշխատակազմերի սակագնային քաղաքականության փորձագետների հետ բանակցությունների վարում, նոր մոտեցումների ձևավորում, համաձայնությունների ձեռք բերում:<br>2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Երկաթուղային սակագների կատարելագործում՝ սակագների սահմանում մատուցվող ծառայություններին համարժեք, հնարավորինս ապահովելով իրականացվող փոխադրումների մրցակցության բարձրացմանը: |
| 276 | **Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև կնքված համապարփակ և ընդլայված գործընկերության համաձայնագրի պահանջների ապահովման նպատակով երկաթուղային տրանսպորտի ոլորտը կարգավորող օրենսդրության ներդաշնակեցում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության այլ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները**<br><br>**<u>276.1 Երկաթուղային բեռնափոխադրումների ծառայությունների մրցունակության ապահովելու մասով և Երկաթուղով իրականացվող հանրային ուղևորափոխադրումների ծառայությունների մասով «Երկաթուղային տրասպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</u>**<br><br>**<u>276.2 Երկաթուղային տրանսպորտից օգտվող ուղևորների իրավունքների և պարտականությունների մասով «Տրասպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ՀՀ կառավարության <<ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 14-ի թիվ 1346-Ն և ՀՀ կառավարության 2015թ.սեպտեմբերի 10-ի թիվ 1081-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշումների նախագծերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</u>**<br><br>**<u>276.3 Երկաթուղային տրանսպորտի ոլորտում՝ կառավարման անկախության ներդրման, ենթակառուցվածքի կառավարման և տրանսպորտային գործունեության առանձնացման, լիցենզիաների ներդրման մասով, Երկաթուղային տրանսպորտի համակարգում գնացքաքարշեր և գնացքներ վարող մեքենավարների հավաստագրման մասով և Երկաթուղային տրանսպորտի անվտանգության բարձրացման, երկաթուղային տրանսպորտի ծառայությունների շուկայի ավելի բարձր մակարդակի մատչելիության ապահովման մասով «Երկաթուղային տրասպորտի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ</u>** |

| | |
|---|---|
| | <u>**օրենքի նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**</u><br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5-րդ կետի 1-ին պարբերության պահանջներով և Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի պահանջների ստանձնած պարտավորությունների կատարմամբ:<br>**1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի պահանջների ապահովման նպատակով երկաթուղային տրանսպորտի ոլորտը կարգավորող օրենսդրության ներդաշնակեցում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության այլ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օրենսդրական նոր իրավական ակտերի մշակում, գործող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարում և դրանց համապատասխանեցում Եվրոպական Միության օրենսդրությանը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Գործող օրենսդրության արդիականացում և կատարելագործում, ներդաշնակեցում, մատուցվող ծառայությունների որակի և երթևեկության անվտանգության մակարդակների բարձրացում |
| 277 | **Ավիաչվերթերի աշխարհագրության ընդլայնման և ավիաընկերությունների թվի ավելացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում**<br><br><u>**277.1. Գործընկեր պետությունների հետ աշխատանքներ տանել ՀՀ շուկա նոր ավիաընկերությունների ներգրավման նպատակով, ստեղծել համապատասխան իրավական դաշտ՝ պայմանագրային մակարդակով տնտեսվարողների համար ազատականացված առևտրային պայմանների երաշխավորմամբ և մասնավոր հատվածի համար կանխատեսելի կարգավորման մեխանիզմների ապահովմամբ: Բանակցություններ տանել նաև առանձին ավիաընկերությունների հետ՝ ոլորտի ազատականացման վերաբերյալ իրազեկվածության բարձրացման, դեպի Հայաստան նրանց կողմից փոխադրումների իրականացման հեռանկարների և հնարավորությունների բացահայտման ուղղությամբ:**</u><br><br><u>**277.2. Բազմակողմ միջազգային համաձայնագրերի միջոցով և դրանց շրջանակներում (ՀՀ և ԵՄ և ԵՄ անդամ-պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագիր, ԵԱՏՄ հարթակ և այլն) մեծացնել ՀՀ տեղական ավիաընկերությունների հնարավորությունները և ընդլայնել ՀՀ օդային կապակցվածությունը**</u><br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5 կետի 7-րդ պարբերության պահանջներով, երկաթուղային տրանսպորտով փոխադրվող ուղևորներին դեպի ՀՀ և ՀՀ-ից մեկնման հարմար երթուղիների և ուղիղ չվերթերի հնարավորության տրամադրման և շուկայում առողջ մրցակցության հաստատմամբ, բարենպաստ իրավա-պայմանագրային դաշտի ապահովմամբ: Ավիաչվերթերի աշխարհագրության ընդլայնմամբ և ավիաընկերությունների թվի ավելացմամբ կապահովվի Հայաստանն աշխարհի տարբեր կետերին կապող երթուղիների լայն ցանց:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն պարբերաբար բանակցություններ է վարում տարբեր ավավիաընկերությունների հետ՝ վերջիններիս ներկայացնելով ՀՀ ավիացիոն շուկայի հնարավորությունները: Վերջին ամիսների ընթացքում հանդիպում է կազմակերպվել ավելի քան 25 ավիաընկերությունների՝ ներառյալ բյուջետային ավիաընկերությունների հետ, և վերջիններիս կողմից դեպի ՀՀ թռիչքների իրականացման իրենց հստակ մտադրությունների մասին պատասխան դեռևս չի ներկայացվել:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գործընկեր պետությունների, ավիաընկերությունների հետ բանակցությունների և խորհրդակցությունների |

| | |
|---|---|
| | իրականացում:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ընդլայնել Հայաստանն աշխարհի տարբեր կետերին կապող երթուղիների ցանցը, նորանոր ավիաընկերությունների ներգրավում ՀՀ ավիացիոն շուկա, ՀՀ տեղական ավիաընկերությունների հնարավորությունների ընդլայնում: |
| 278 | **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից ակտիվ աշխատանքների իրագործում՝ ուղղված Հայաստանում ավիացիոն էկոհամակարգերի զարգացման նպատակով մասնավոր հատվածից նախագծերի (գաղափարների) ներգրավմանը**<br><br>**<u>278.1 Ընդհանուր նշանակության ավիացիայի զարգացման շրջանակներում անօդաչու թռչող սարքերի շահագործում ապահովող նոր կանոնակարգերի և կարգավորումների մշակում՝ մասնավոր հատվածի ակտիվ մասնակցությամբ:</u>**<br><br>**<u>278.2 Աջակցություն ՀՀ-ում փոքր ավիացիայի զարգացման ծրագրի շրջանակներում ներքին օդանավակայանների ցանցի վերականգնման նախագծերին:</u>**<br><br>**<u>278.3 Մասնակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համագումարի աշխատանքներին (WCIT 2019)՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտն ավիացիայում արդյունավետորեն կիրառելու հնարավորության նպատակով, պոտենցիալ ներդրողներին ներկայացնելով հայկական ավիացիոն շուկայի հնարավորությունները:</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 5.7 կետի 3-րդ և 6.5-րդ կետի 8-րդ պարբերությունների, ավիացիոն ոլորտի տարբեր շահագրգիռ կողմերի միջև մշտական կապի ապահովման անհրաժեշտությամբ: Նպատակն է նպաստել ոլորտի խնդիրների կանխարգելմանը կամ դրանց հաջող լուծմանը, մեծացնել շահառու հանդիսացող մարմինների, ընկերությունների գործունեության արդյունավետությունը:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս աշխատանքներ են տարվում ընդհանուր նշանակության ավիացիայի զարգացման շրջանակներում անօդաչու թռչող սարքերի շահագործումն ապահովող նոր կանոնակարգերի և կարգավորումների մշակման ուղղությամբ՝ մասնավոր հատվածի ակտիվ մասնակցությամբ:<br>2018 թվականին "Արմենիան Հելիքոփթերս", "Սքայբոլ", "Ատլանտիս Արմենիան Էյրլայնզ" ավիաընկերություններին առաջին անգամ տրամադրվել է օդանավ շահագործողի վկայականներ. այս ավիաընկերությունների ստեղծմամբ Հայաստանում սկիզբ է դրվել փոքր ավիացիայի զարգացմանը:<br>2018 թվականի ընթացքում ՀՀ փոքր ավիացիայի գործարկման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման ուղղությամբ իրականացվել են հետևյալ միջոցառումները՝<br>ա/ ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 15-ի N 143-Ն որոշման համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության "Արզնի" օդանավակայանի աերոդրոմը սահմանվել է որպես համատեղ բազավորման աերոդրոմ՝ մասնավոր օդաչուների պատրաստման գործընթացի շրջանակներում քաղաքացիական ուսումնավարժական թռիչքների իրականացման համար,<br>բ/ տրամադրվել է շարունակական աջակցություն՝ ուղղված ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի օդանավակայանի վերագործարկմանը,<br>գ/ փոքր ավիացիայի թռիչքների անվտանգության ապահովման նպատակով իրականացվել են միջոցառումներ՝ ուղղված 1:500000 մասշտաբի աերոնավիգացիոն քարտեզի լրամշակմանը՝ դրանց վրա արտապատկերելով 60 մետր և ավելի բարձրություն ունեցող արհեստական խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչի համար Կոմիտեն ՀՀ կառավարության միջոցով դիմել է համապատասխան գերատեսչություններին:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կայուն և մշտական կապ ապահովել ավիացիոն ոլորտի տարբեր շահագրգիռ կողմերի հետ ՀՀ-ում տեղական օդային փոխադրողների ներգրավման նպատակով: |

| | |
|---|---|
| | **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Իրականացվող միջոցառումները կնպաստեն Հայաստանում ավիացիոն էկոհամակարգերի զարգացմանը, օդային փոխադրումների գների վերանայմանը, նոր գաղափարների ներգրավմանը: |
| 279 | **Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների ապամոնտաժում և կանխարգելում**<br><br>**<u>279.1 <<Ավտոմոբիլային ճանապարհների մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում իրականացվող կառուցապատման թույլատվությունների տրամադրման պահանջների հաստակեցման միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5. կետը և դրա նպատակն է Անվտանգ երթևեկության ապահովում, խանգարող օբյեկտների բացառում, միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում կառուցապատման խստացումն է:<br><br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում առկա են առանց համապատասխան համաձայնեցման կառուցված հասարակական օգտագործման օբյեկտները, որոնք խանգարում են դրանցով անվտանգ երթևեկության ապահովումը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անվտանգ երթևեկության ապահովում, խանգարող օբյեկտների բացառում, միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում կառուցապատման խստացում:<br>2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>ՀՀ ավտամաբիլային ճանապարհների երկանքվ ապօրինի տեղակայված օբյեկտների նկատմամբ միասնական մոտեցման ձևավորում, թույլտվությունների տրամադրման գործընթացի հստակեցում և անվտանգ երթևեկության ապահովում: |
| 280 | **Միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային Ճանապարհների որակի և երկարակեցության շարունակական բարձրացում**<br><br>**<u>280.1 ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների նորոգում (հիմնանորոգում, միջին նորոգում), պահպանում և շահագործում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների որակի բարձրացման միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5. կետի 12-րդ պարբերության պահանջը և դրա նպատակն է մշտապես ապահովել ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների և դրանց վրա գտնվող կառույցների պահպանվածությունը այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկացած ժամանակ անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:<br>Հաշվի առնելով ավտոմոբիլային ճանապարհների պահպանման կարևորությունը ՀՀ տնտեսության զարգացման համար, նախարարությունը հատուկ ուշադրություն է դարձնում նաև ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանմանը:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման արդյունքների վրա հիմնված երկարաժամկետ պայմանագրերի համակարգը: Նշված համակարգը թույլ է տալիս արդյունավետ օգտագործել ՀՀ պետական բյուջեից ավտոմոբիլային ճանապարհների պահպանմանը հատկացվող գումարները: Համաշխարհային Բանկի մասնագետների կողմից իրականացված հետազոտումները ցույց են տալիս, որ ավտոմոբիլային ճանապարհների պահպանությունը կարևորագույն գործոններից է ճանապարհային ցանցում կապիտալ ներդրումները ժամանակին իրականացնելու և ճանապարհների ծառայության ժամկետը երկարացնելու համար: |

| | |
|---|---|
| | Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհները նախագծվել են 30-40 տարի առաջ և կառուցվել են 6.5տոննա առանցքային բեռնվածքի հաշվարկով: Ներկայումս փաստացի առանցքային բեռնվածքի նորմատիվային ցուցանիշը դարձել է 13.5 տոննա, հետևաբար կտրուկ մեծացել է նաև ճանապարհների ծածկի մաշվածությունը: Միաժամանակ նորմատիվով սահմանված ժամկետում նորոգումներ չկատարելու պատճառով ծածկի մաշվածությունը գերազանցում է թույլատրելի բոլոր նորմերը և ծածկը ինտենսիվ քայքայվում է, ինչի հետևանքով կտրուկ մեծանում է փոսերի և ցանցաձև ճաքերի մակերեսը: Ընթացիկ պահպանման ծախսերի 40-70%-ը կազմում են հենց փոսերի և ցանցաձև ճաքերի վերցման ուղղված ծախսերը, հետևաբար ճանապարհների պահպանության համար հատկացվող գումարների մեծացման չափը կախված է ոչ միայն ճանապարների երկարությունից, այլև անմիջական կապի մեջ է գտնվում նախորդող ժամանակահատվածում կատարված նորոգումների, երթևեկության ինտենսիվության և առանցքային բեռնվածության հետ:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հատկացվող ֆինանսական միջոցների շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել առաջնային վերանորոգման կարիք ունեցող ճանապարհահատվածները, իսկ լավ վիճակում գտնվող ճանապարհներում ապահովել դրանց պահպանման և շահագործման աշխատանքները:<br><br>2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Ավտոմոբիլային ճանապարհների բարելավում՝ ապահովելով անվտան երթևեկություն, ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում վերանորոգումների և հիմնանորոգումների իրականացում, ինչը կնպաստի ուղևորա և բեռնափոխադրումների անվտանգ և արդյունավետ իրականացմանը, ճանապարհների վիճակի հետ կապված ճանապարհատրանսպորտային պատահարների նվազեցմանը: |
| 281 | **Ճանապարհների պետական գրանցում**<br><br>**<u>281.1 Միջպետական և հանրապետական ճանապարհների չափագրում և պետական գրանցում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Ճանապարհների պետական գրանցման միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5. կետի 15-րդ պարբերության պահանջը և դրա նպատակն է միջպետական և հանրապետական ճանապարհների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ ավտոմոբիլային ճանապարհները հաշվառված են ՀՀ անունով, սակայն բացակայում է դրանց սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականները:<br>**<u>1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները</u>**<br>Միջպետական և հանրապետական ճանապարհների սեփականության իրավունքի գրանցումման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում՝ համապատասխան մասնագիտացված կազմակերպության հետ համատեղ:<br>**<u>2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը</u>**<br>Միջպետական և հանրապետական ճանապարհների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում: |
| **282** | **Ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի բարելավում**<br><br>**<u>282.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ճանապարհային նշաններով վերազինում</u>**<br><br>**<u>282.2 Զբոսաշրջային ուղղությունների հասանելիության բարձրացման նպատակով միջպետական և տարանցիկ նշանակության ճանապարհներին և հանրային տրանսպորտի կանգառներում զբոսաշրջային բազմալեզու ցուցանակների և նշանների տեղադրում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի բարելավման միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ |

| | |
|---|---|
| | կառավարության ծրագրի 5.7 կետի 1-ին և 6.5. կետի 16-րդ պարբերության պահանջը և դրա նպատակն է ստեղծել ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների (ճանապարհային նշաններ, ճանապարհային լուսացույցներ, ճանապարհային ցանկապատներ, ճանապարհային գծանշում) բարելավված ստանդարտներ, ճանապարհային նշանների տարաբաշխումների հաստատված նախագծեր:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ճանապարհայի նշանների տարաբաշխումների բացակայություն:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ավտոմոբիլային ճանապարհների այն մասերում որտեղ անհրաժեշտ են սակայն բացակայում են ճանապարհային նշանները ձեռք բերել և համալրել դրանք:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Երթևեկության մանակիցների անվտանգության մակարդակի բարելավում, զբոսաշրջային վայրերի մասին անհրաժեշտ տեղեկատվության (մոտեցումների) առկայություն: |
| **283** | **Անդրեվրոպական ճանապարհային ցանցի թունելներին և ճանապարհային ենթակառուցվածքին ներկայացվող անվտանգության պահանջները միջազգային նորմերին համապատասխանեցում**<br><br>***<u>283.1 <<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի մեջ փոփոխության իրականացում</u>***<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ներկայացված միջոցառումը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5. կետի պահանջներից: <<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի մեջ փոփոխության իրականացում միջոցառման համար հիմք է հանդիսացել ԵԽ և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի 2004/54/ԵՀ հրահանգը՝ Անդրեվրոպական ճանապարհային ցանցի թունելներին ներկայացվող նվազագույն անվտանգության պահանջների մասին և ԵԽ և Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/96/ԵՀ հրահանգը՝ ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման մասին:<br><br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ոլորտում գործող օրենսդրությամբ բացակայում է ԵԽ-ի կողմից ընդունված որոշակի պահանջները ճանապարհային երթևեկության անվտանգության մասով:<br><br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ճանապարհային ոլորտում գործող օրենսդրության ներդաշնակեցում ԵԽ-ի կողմից ընդունված հրահանգների պահանջներին, այդ թվում թունելների և կամուրջների պահպանման և շահագործման անվտանգության պահանջները:<br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում: |
| **284** | **Ճանապարհների, այդ թվում կամուրջների և թունելների, անձնագրավորում և տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծում**<br><br>**284.1 Ճանապարհների մասին տվյալների ամբողջական տեղեկատվության կազմում և թվայնացում**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Ճանապարհների անձնագրավորում և տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծում միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5. կետի 14-րդ պարբերության պահանջը և դրա նպատակն է ճանապարհների անձնագրավորումը, տվյալների կառավարման կարողությունները:<br><br>1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս ՀՀ ավտոմոբիլային ճանապարհները չունեն այն բազան, որում ներառված կլինի Ճանապարհների կարգը, դրանցով երթևեկելու առավելագույն արագությունը և ծանրաքարշ տրանսպորտային միջոցի |

| | |
|---|---|
| | առավելագույն քաշը, տեղակայված ճանապարհային նշանները, սպասարկման օբյեկտները և այլն:<br><br>1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Միջպետական և հանրապետական ճանապարհների սեփականության իրավունքի գրանցման համար անհրաժետ միջոցառումների իրականացում՝ համապատասխան մասնագիտացված կազմակերպության հետ համատեղ, որի արդյունքում կմշակվի յուրաքանչյուր ավտոմոբիլային ճանապարհի համար անձնագիր, որը կպարունակի ի թիվս անհրաժեշտ այլ տեղեկատվությունից նաև Ճանապարհների կարգը, դրանցով երթևեկելու առավելագույն արագությունը և ծանրաքարշ տրանսպորտային միջոցի առավելագույն քաշը, տեղակայված ճանապարհային նշանները, սպասարկման օբյեկտները և այլն<br><br>2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Ճանապարհային տնտեսության կառավարման դյուրացում, ավտոմոբիլային ճանապարհների մասին տեղեկատվական բազայի առկայություն: |
| **285** | **Ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկության անվտանգության ապահովում**<br><br>**285.1 «ՀՀ ավտոմոբիլային ճանապարհային ենթակառուցվածքի զարգացման տեսլականի» ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**<br>**285.2 Ճանապարհային ռազմավարության մշակում՝ այդ թվում ճանապարհային անվտանգության ռազմավարություն (միջնաժամկետ 2020-2030, երկարաժամկետ 2030-2050)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5. կետի 13-րդ պարբերության 1-ին մասի պահանջներից ելնելով նախատեսվում է Ճանապարհային ռազմավարության մշակում՝ այդ թվում ճանապարհային անվտանգության ռազմավարություն (միջնաժամկետ 2020-2030, երկարաժամկետ 2030-2050) միջոցառման համար հիմք է հանդիսացել ճանապարհների ֆինանսավորման նպատակով հատկացվող միջոցների ծախսման արդյունավետության բարձրացմամբ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս չկան ավտոմոբիլային ճանապարհների կառավարման երկարաժամկետ ծրագրեր, որոնք կսահմանեն Ճանապարհային ցանցի արդիականացման և արդյունավետ կառավարման մեխանիզմները:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ճանապարհային ցանցի վերականգնման համար տրամադրվող ֆինանսական միջոցների ավելացում, արդյունավետ օգտագործում և կայուն զարգացում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում, կառավարում և բարձրացում, ֆինանսական միջոցների արդյունավետ ծախսում, ճանապարհային ցանցի կայուն զարգացում |
| **286** | **Ավտոմոբիլային բետոնածածկ ճանապարհների և արհեստական կառույցների ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման գործընթացի հստակեցում**<br><br>**286.1 «ՀՀ կառավարության 2010 թ.-ի դեկտեմբերի 4-ի 1419- Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Բետոնե պատվածքով ճանապարհային ծածկով ավտոմոբիլային ճանապարհների և արհեստական կառույցների ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման աշխատանքների կանոնակարգում» միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5. կետը և դրա նպատակը բետոնե պատվածքով ճանապարհային ծածկով ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման գործընթացի սահմանումն է, ինչն կապահովի տվյալ ճանապարհների երկարակեցությունը:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ամառային և ձմեռային պահպանման աշխատանքների առանձնահատկությունների ուսումնասիրման անհրաժեշտություն<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Շահագրգիռ մարմինների, մասնագիտացված կազմակերպույունների հետ համատեղ բետոնե պատվածքով ճանապարհային ծածկով ավտոմոբիլային ճանապարհների և արհեստական կառույցների ընթացիկ ամառային և |

| | |
|---|---|
| | ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման գործընթացը, ինչը կապահովի տվյալ ճանապարհների երկարակեցությունը:<br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում կսահմանվի համապատասխան մեխանիզմներ բետոնե պատվածքով ճանապարհային ծածկով ավտոմոբիլային ճանապարհների և արհեստական կառույցների ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման համար, որի արդյունքում կապահովվի այդ ճանապարհներով անվտանգ երկարակեցությունը: |
| 287 | **«Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի իրականացման շարունակություն**<br><br>**<u>287.1 «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի Տրանշ 4-ի Քաջարան-Ագարակ հատվածի կառուցման աշխատանքների իրականացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5. կետի 13-րդ պարբերության 2-րդ մասի պահանջներով: «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի կառուցման շարունակությունը ապահովելու նկատառումներով: «Հյուսիս-Հարավ» միջանցքը պետք է լինի միջազգային ստանդարտներին համապատասխանող մայրուղի, որն պետք է անցնի Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով՝ միմյանց կապելով Վրաստանի և Իրանի սահմանները: «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի նպատակն է՝ դառնալ տարածաշրջանային մրցունակ միջանցք, որն կկապի Ասիան Սև ծովին և կներգրավվի տարանցիկ տրանսպորտային հոսքեր:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի մաս կազմող Քաջարան-Ագարակ հատվածը իր հաշվարկային արագությամբ, երկրաչափական և ճանապարհային անվտանգության չափանիշներով չի համապատասխանում տարանցիկ մայրուղու համար նախատեսվող միջազգային ստանդարտներին:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է կառուցել II-րդ տեխնիկական կարգի (100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) շուրջ 32 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատված (Ագարակ-Վարդանիձոր-Քաջարանի նախատեսվող թունելի մուտք):<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Տարանցիկ բեռնափոխադրումների և ընդհանրապես երթևեկության հոսքի տեղափոխում հայաստանյան ուղղությամբ, որը կբերի ինչպես հարակից տարածքների այնպես էլ ընդհանրապես երկրի տնտեսության վրա էական ազդեցության:<br><br>**<u>287.2 «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի Տրանշ 4-ի Սիսիան-Քաջարան հատվածի Ֆինանսավորում և կառուցում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5. կետի 13-րդ պարբերության 2-րդ մասի պահանջներով: «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի կառուցման շարունակությունը ապահովելու նկատառումներով: «Հյուսիս-Հարավ» միջանցքը պետք է լինի միջազգային ստանդարտներին համապատասխանող մայրուղի, որն պետք է անցնի Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով՝ միմյանց կապելով Վրաստանի և Իրանի սահմանները: «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի նպատակն է՝ դառնալ տարածաշրջանային մրցունակ միջանցք, որն կկապի Ասիան Սև ծովին և կներգրավվի տարանցիկ տրանսպորտային հոսքեր:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նախատեսվում է կառուցել II-րդ տեխնիկական կարգի (100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) շուրջ 60 կմ ընդհանուր երկարությամբ նոր ճանապարհահատված , այդ թվում՝ 4.7 կմ ընդհանուր երկարությամբ կամուրջներ և 12.5 կմ ընդհանուր երկարությամբ թունելներ (ամենաերկարը Բարգուշատի թունելն է, որի երկարությունը կկազմի |

շուրջ 8.7 կմ) ։ Հաշվի առնելով, որ Սիսիան-Քաջարան հատվածը նախագծվել է նոր ծրագծով, որը գոյություն ունեցող ճանապարհի ծրագծից դուրս է և ներկայումս գործող ճանապարհը հանդիսանալու է այլընտրանքային ճանապարհ, հատվածի կառուցումը հնարավոր է իրականացնել պետություն-մասնավոր գործընկերություն հիմունքների վրա՝ կառուցումից հետո այն դարձնելով վճարովի։

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Անհրաժեշտ է ապահովել նշված նախագծի իրականացման համար ֆինանսական միջոցների (շուրջ 1 040 000 000 ԱՄՆ դոլար) հասանելիությունը։ Կանխատեսվում է վարկային միջոցների ներգրավում։

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Տարանցիկ բեռնափոխադրումների և ընդհանրապես երթևեկության հոսքի տեղափոխում հայաստանյան ուղղությամբ, որը կբերի ինչպես հարակից տարածքների այնպես էլ ընդհանրապես երկրի տնտեսության վրա էական ազդեցության։

**287.3 «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի Տրանշ 5՝ Գյումրի-Բավրա ճանապարհահատվածի կառուցում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 6.5. կետի 13-րդ պարբերության 2-րդ մասի պահանջներով և «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի կառուցման շարունակությունը ապահովելու նկատառումներով։ «Հյուսիս-Հարավ» միջանցքը պետք է լինի միջազգային ստանդարտներին համապատասխանող մայրուղի, որն պետք է անցնի Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով՝ միմյանց կապելով Վրաստանի և Իրանի սահմանները։ «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի նպատակն է՝ դառնալ տարածաշրջանային մրցունակ միջանցք, որն կկապի Ասիան Սև ծովին և կներգրավվի տարանցիկ տրանսպորտային հոսքեր։

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի առկա վիճակը որոշ հատվածներում՝ հատկապես հարավային, չի համապատասխանում երթևեկության անվտանգության այնպիսի պահանջների, որպիսիք թույլ կտային միջազգային տարանցիկ երթևեկության հոսքի տեղափոխում ներհայաստանյան ուղղությամբ։ Այդ պատճառով տարածաշրջանի միջազգային բեռնափոխադրումները հիմնականում նախընտրում են հարևան Ադրբեջանի և Թուրքիայի տարածքները, չնայած որ Հայաստանի տարածքով տարանցիկ ուղղությունը (Մ-1 և Մ-2 միջպետական ավտոճանապարհներով) հանդիսանում է Պարսից ծոցը Սև ծովին կապող ամենակարճ ուղին։

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նոր միջազգային ներդրումների և հնարավոր ֆինանսավորող կազմակերպություններից լրացուցիչ միջոցների ներգրավում Հյուսիս-հարավ ծրագիրն ամբողջությամբ և հնարավորինս շուտ ավարտին հասցնելու համար։

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Տարանցիկ բեռնափոխադրումների և ընդհանրապես երթևեկության հոսքի տեղափոխում հայաստանյան ուղղությամբ, որը կբերի ինչպես հարակից տարածքների այնպես էլ ընդհանրապես երկրի տնտեսության վրա էական ազդեցության։

**288** **ՀՀ ողջ տարածքում շուրջօրյա ռադիոհսկման իրականացում, անխափան հեռարձակման նպատակով**

**288.1 ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգերի արտադրությամբ զբաղվող առաջադեմ ընկերությունների կողմից առաջարկվող լավագույն համակարգերի ուսումնասիրություն և ընտրություն**

**288.2 ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգերի ձեռքբերում, ՀՀ տարածքում (10 մարզ կենտրոններում) ռադիոհսկման կայանների կառուցում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

| | |
|---|---|
| | Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 7.2 կետի 8-րդ պարբերության պահանջներով: Հայաստանի Հանրապետության տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման նպատակն է ապահովել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջները, ինչը հնարավորություն կտա ՀՀ ողջ տարածքում իրականացնել շուրջօրյա ռադիոհսկում, որի արդյունքում կհայտնաբերվեն և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կբացառվեն չթույլատրված հեռարձակումները՝ զերծ պահելով եթերը վնասակար խանգարումներից:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>ՀՀ տարածքում ներկայում շուրջօրյա ռադիոմոնիթորինգ իրականացվում է միայն Երևան քաղաքում, որի համար տեխնիկական բազա է հանդիսանում 2002 թվականին կանադական Aerosystems International ֆիրմայի կողմից տեղակայված ռադիոմոնիթորինգի համակարգը՝ իր ծրագրային ապահովմամբ, որը կազմված է 3 բազային և 1 շարժական կայաններից, Գյումրի և Վանաձոր քաղաքներում 8 ժամյա աշխատանքային ռեժիմով մինիմալ տեխնիկական հնարավորություններով:<br>Ներկա վիճակում առկա սարքավորումներով հնարավոր չէ ՀՀ ողջ տարածքում իրականացնել շուրջօրյա մշտադիտարկում, և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիարժեք ապահովել և զերծ պահել եթերային հեռուստառադիոծրագրերի հեռարձակման, շարժական բջջային կապի ծառայությունների մատուցման ընթացքում վնասակար և չարտոնված խանգարումներից՝ չթույլատրված ռադիոհաճախականությունների հեռարձակումներից:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Նոր տեխնոլոգիաներով և համապատասխան սարքավորումներով վերազինել ռադիոմոնիթորինգի բազային և շարժական կայանների միասնական համակարգը, որը հնարավորություն կտա ՀՀ ողջ տարածքով իրականացնել շուրջօրյա մշտադիտարկում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ռադիոեթերը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին չհամապատասխանող վնասակար ռադիոհեռարձակումներից:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման ծրագրի ընդունման արդյունքում կունենանք ժամանակակից տեխնիկական լուծումներով կառուցված ցանց, որը հնարավորություն կտա ՀՀ ողջ տարածքում իրականցնել շուրջօրյա մոնիթորինգ՝ ժամանակին հայտնաբերելու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բացառելու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին չհամապատասխանող ռադիոհեռարձակումները, որն էլ կապահովի պետության անվտանգության համակարգերի, տնտեսվարող սուբյեկտների ռադիոէլեկտրոնային միջոցների անխափան աշխատանքը: |
| **289** | **Հայաստանի Հանրապետության տարածքում լայնաշերտ, շարժական և ամրակցված գերարագ ինտերնետ կապի հասանելիության ապահովման**<br><br>**289.1 Հայաստանի Հանրապետության տարածքում ազգային լայնաշերտ, շարժական և ամրակցված գերարագ ինտերնետ կապի հասանելիության ռազմավարությունը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում**<br><br>**289.2 Ինտերնետ հասանելիության վերաբերյալ հետազոտությունների իրականացում:**<br>**289.3 Փորձագիտական առաջադրանքների մշակում:**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 7.2 կետի 9-րդ պարբերության պահանջներով: Հայաստանի Հանրապետության տարածքում լայնաշերտ, շարժական և ամրակցված գերարագ ինտերնետ ցանցի ձևավորման նպատակն է ՀՀ բոլոր բնակավայրերում բարձր արագությամբ լայնաշերտ ինտերնետ կապի ապահովումը, հանրապետության ողջ տարածքում քաղաքացիների և գործարար միջավայրի համար հասանելի հեռահաղորդակցական ցանցային ենթակառուցվածքի ստեղծումը, ինչպես նաև հիմնական ենթակառուցվածքի հիման վրա հետագա հեռահաղորդակցական, գործարար, կրթական-գիտական, մշակութային և ժամանցային հնարավորությունների ընդլայնումը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական |

| | |
|---|---|
| | տեխնոլոգիաների նախարարությանը վերապահված գործառույթների շրջանակում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում աշխատանքներ են իրականացվել Հայաստանի Հանրապետության տարածքում լայնաշերտ ինտերնետ ցանցի աշխարհագրության ընդլայնման, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների և ծառայությունների ներդրման ուղղությամբ:<br>Ներկա դրությամբ Հայաստանի Հանրապետության բնակավայրերի 100%-ն ապահոված է լայնաշերտ շարժական կապի 3G տեխնոլոգիայի ծածկույթով:<br>2018 թվականի ընթացքում տեղի է ունեցել 4G+ տեխնոլոգիայի վրա հիմնված ցանցի ենթակառուցվածքի էական ընդլայնում, որի արդյունքում հանրապետության բնակավայրերի առնվազն 88 տոկոսն ապահովվել է 4G+ տեխնոլոգիայի լայնաշերտ շարժական կապի ծածկույթով, մինչդեռ 2017 թվականին նշված ցուցանիշը կազմում էր 72,3 տոկոս (726 բնակավայր):<br>Միաժամանակ, հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետի հասանելիությամբ ապահոված են հանրապետության բոլոր բնակավայրերը (100 տոկոս), այդ թվում՝ 997 (99.4 տոկոս) բնակավայր անլար եւ 373 (37.2 տոկոս) բնակավայր՝ լարային տեխնոլոգիաների կիրառմամբ, մասնավորապես՝ Wi-Fi, Wi-Max, xDSL, FTTx, Ethernet:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերը լայնաշերտ, շարժական և ամրակցված գերարագ ինտերնետ կապի հասանելիությամբ ապահովելով՝ հնարավորություն կընձեռնվի հանրապետությունում ձևավորել համաշխարհային մակարդակի տեղեկատվական/ հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ենթակառուցվածք:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում լայնաշերտ շարժական և ամրակցված ինտերնետ կապի արդիականացումը տեղեկատվական հասարակության կայացման առաջնահերթ միջոցառումներից է, որը թույլ կտա հանրապետությունում ձևավորել համաշխարհային մակարդակի տեղեկատվական/հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ենթակառուցվածք: Ինչն էլ խթան կհանդիսանա էլ-առևտրի, էլ-կառավարման, էլ–ուսուցման և այլ էլեկտրոնային ծառայությունների կիրառությանը, որն իր հերթին կբարձրացնի Հեռահաղորդակցության միջազգային միության ՏՀՏ ցուցանիշների սանդղակում Հայաստանի Հանրապետության դիրքը: |
| **290** | **Թվային ինտերակտիվ հեռուստատեսության արդիականացում**<br><br>**290.1 Հայաստանի Հանրապետությունում թվային ինտերակտիվ հեռուստատեսության զարգացման ծրագրի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում**<br>**290.2 Ստանդարտների ընդունում**<br>**290.3 Համակարգի ներդրում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 7.2 կետի 10-րդ պարբերության պահանջներով: Թվային ինտերակտիվ հեռուստատեսության արդիականացման նպատակն է թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստադիտողին մատուցել լսարանի ժամանակակից պահանջներին համապատասխան ինտերակտիվ կոնտենտ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում թվային հեռուստատեսությունը սկսել է գործել 2016 թվականից: DVB-T2 ստանդարտի թվային հեռարձակման ցանցի ներդրմամբ հեռուստադիտողին մատուցվեց թվային գերազանց որակի հեռուստատեսություն՝ որոշակի լրացուցիչ հնարավորություններով (օրինակ EPG):<br>Սակայն, անալոգայինի համեմատ ունեցած իր առավելություններով հանդերձ, այն դասվում է ավանդական գծային հեռուստատեսության շարքին, որն ադապտիվ չէ և չունի ինտերակտիվություն: Հիմնականում այդ պատճառով էլ թվային եթերային հեռուստատեսությունը, հատկապես երիտասարդության շրջանում, զիջում է հեռարձակման այլ հարթակներին, ինչպիսիք են IP TV-ն և OTT-ն: Փորձը ցույց է տալիս, որ հեռուստադիտողը ցանկանում է դիտել իր նախընտրած կոնտենտը՝ իր համար նախընտրելի ժամանակահատվածում:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներկայիս գործող թվային հեռուստատեսության ինտերակտիվության բաղադրիչի բացակայությունը հնարավոր կլինի լրացնել տարբեր հավելվածների ներդրման միջոցով՝ հետադարձ կապի համար օգտագործելով ինտերնետը: |

| | |
|---|---|
| | **2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Ինտերակտիվ հավելվածների ներդրմամբ հնարավորություն է ընձեռվում ձևավորել լսարանի ժամանակակից պահանջներին համապատասխան կոնտենտ, մասնավորապես. Catch-Up և Time Shift, 24/7 օպերատիվ լրատվություն, Rich EPG, լրացուցիչ տեղեկատվություն (եղանակի տեսություն, տարադրամի փոխարժեք և այլն), տեսավարձույթ (VoD), սոցիալական ցանցերի մատչելիություն, կոմունալ վճարումներ, հարցումների անցկացում, E-Gov, E-Health, E-Dram, Dasaran.am, կրթական և ուսուցողական ծրագրեր, վիրտուալ տուրիզմ և այլն: |
| 291 | **Փոստային ոլորտի իրավական դաշտի բարեփոխում**<br><br>**<u>291.1 <<Փոստի մասին>> նոր օրենքի նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում</u>**<br>**<u>291.2 <<Փոստի մասին>> նոր օրենքից բխող իրավական ակտերի մշակում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման  անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է Ստամբուլի համաշխարհային փոստային ռազմավարությամբ, ինչպես նաև փոստային ոլորտում գործունեության իրավական հիմքերի կատարելագործման հետ՝ հաշվի առնելով փոստային կապի ոլորտի զարգացման ժամանակակից միտումները, փոստային ծառայությունների մատուցման շուկայի զարգացումը, ինչպես նաև փոստային ոլորտի իրավական կարգավորման միջազգային փորձը և ԵՄ օրենսդրության պահանջները:<br>**1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Ներկայումս փոստային ոլորտը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է «Փոստային կապի մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով: Փոստային ոլորտի ընդհանուր զարգացումը հիմնովին կախված է ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտից, որի բարեփոխումների նպատակով ուսումնասիրվել է միջազգային լավագույն փորձը:<br>Փոստային ոլորտի առկա խնդիրը ոլորտի կարգավորման առավել ընդգրկուն օրենսդրական դաշտի ստեղծման անհրաժեշտությունն է:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներկայումս հիմք ընդունելով ոլորտի զարգացման միջազգային միտումները, ինչպես նաև Ստամբուլի Համաշխարհային փոստային ռազմավարութունը փոստային կապի բնագավառում լիազորված մարմնի կողմից իրականացվում է քաղաքականության համապատասխանեցման գործընթացը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում փոստային ոլորտի օրենսդրական դաշտը կհամապատասխանեցվի եվրոպական երկրներում գործող փոստային ոլորտի օրենսդրական դաշտին, մասնավորապես, փոստային ունիվերսալ ծառայությունների մատուցման մասով: |
| 292 | **Փոստային կապի ազգային օպերատոր՝ <<Հայփոստ>> ՓԲԸ-ի կառավարման մոդելի ընտրություն**<br><br>**<u>292.1 ՀՀ կառավարության որոշմամբ հանձնաժողովի ստեղծում, դրա կազմի և իրավասությունների սահմանում, մոդելի ընտրության վերաբերյալ առաջարկության ներկայացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման  անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Փոստային կապի ազգային օպերատոր՝ <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերության կառավարման մոդելի ընտրություն միջոցառման իրականացումը պայմանավորված է <<Հայփոստ>> ՓԲ ընկերության կառավարման մոդելի ընտրության անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման  ենթակա  հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>ՀՀ կառավարության 2006թ. սեպտեմբերի 22-ի N 1379-Ա որոշմամբ «Հայփոստ» ՓԲԸ-ի բաժնետոմսերը հանձնվել է  հավատարմագրային կառավարման՝ «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին և 2006թ. նոյեմբերի 30-ին ստորագրվել է Հավատարմագրային կառավարման պայմանագիր: Պայմանագրով՝ հավատարմագրային կառավարման ժամկետը սահմանվել է 5 տարի (ավարտը՝ 2011թ. նոյեմբերի 30), որը հետագայում երկու անգամ փոփոխությունների արդյունքում երկարացվել է մինչև 2016թ.-ի նոյեմբերի 30-ը:<br>ՀՀ կառավարության 2016թ. նոյեմբերի 24-ի թիվ 1240-Ա որոշմամբ «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքները հանձնվել են «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության հավատար-մագրային կառավարման (ավարտը 2017թ. սեպտեմբերի 30), սակայն ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1335-Ա որոշմամբ  պայմանագրի ժամկետը  երկարաձգվել է մինչև 2019թ. փետրվարի 15-ը: |

| | |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով միջազգային փորձը՝ փոստային կապի ազգային օպերատորի հետագա կառավարման մոդելի ընտրության նպատակով նպատակահարմար է ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացմամբ ակնկալվում է ընտրել <<Հայփոստ>> ՓԲ ընկերության կառավարման մոդելը:<br>Նոր մոդելի ընտրությունը հնարավորություն կտա <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերությանը ապահովել միջազգային չափանիշներին համահունչ որակյալ փոստային ծառայությունների մատուցումը (այդ թվում փոստային կապի ունիվերսալ ծառայությունների): |
| **293** | **Ազգային վենչուրային հիմնադրամի ստեղծում**<br><br>**<u>293.1 Միջազգային փորձի ուսումնասիրություն</u>**<br>**<u>293.2 Կենսունակության գնահատման հետազոտություն</u>**<br>**<u>293.3 Ներդրողների ներգրավում</u>**<br>**<u>293.4 Վենչուրային հիմնադրամի գործարկում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.1 «Բարձր տեխնոլոգիաները» ենթաբաժնի 2-րդ պարբերության պահանջներից, որի նպատակն է ստեղծել համապատասխան ֆոնդ ընկերությունների կամ ստարտափների կողմից գաղափարների, գիտական արդյունքների կամ ծրագրերի իրականացման ֆինանսական աջակցության տրամադրման համար:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վերջին տարիների Հայաստանի Հանրապետությունում աճել է բարձր և նորարական տեխնոլոգիաների ոլորտում աշխատող կազմակերպությունների քանակը, ինչպես նաև աշխատանքներ են իրակացվում թիմերի կողմից ստարտափ գաղափարների գեներացման, գիտական արդյունքների կամ ծրագրերի առևտրայնացման ուղղությամբ:<br>Չնայած այն հանգամանքի, որ ՀՀ-ում արդեն իսկ գործում է «Գրանատուս Վենչուրս» Հայաստանի առաջին վենչուրային ընկերությունն, սակայն վերջինիս կառավարումը իրականացվում է մասնավոր ներդրողների կողմից, իսկ ազգային վենչուրային հիմնադրամի ստեղծվելու է ՀՀ կառավարության կողմից և կառավարմանը գործընթացը կառավարվելու է ՀՀ կառավարության մասնակցությամբ:<br>Միաժամանակ «Գրանատուս Վենչուրս» վենչուրային ընկերության կողմից տրամադրվող ֆինանսավորումը կախված է միայն կազմակերպության ղեկավարության հայեցողությունից, սակայն ստեղծվող հիմնադրամի կողմից ոլորտի ընկերություններին տրամադրվող ֆինանսավորման մասնաբաժին է ունենալու ՀՀ կառավարությունը, ուստի ֆինանսավորման բաշխումը լինելու է ավելի արդյունավետ և թափանցիկ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կազմակերպություններին ֆինասական աջակցություն իրականացման նպատակով նախատեսվում է ստեղծել ազգային վենչուրային ֆոնդ՝ պետության և մասնավոր հատվածի ներգրավմամբ, որտեղ ներդրողները կիրականացնեն համապատասխան ներդրումներ՝ համապատասխան շահաբաժնի ակնկալիքով:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ-ում կստեղծվեն բարձր տեխնոլոգիաների ոլորտի թվով ավելի շատ կազմակերպություններ, աշխատատեղեր, նոր արտադրանքներ և ծառայությունները և արդյունքում կբարձրանա ՀՀ-ի վարկանիշը միջազգային շուկաներում: |
| **294** | **Հայաստանի ինժեներական, նորարարությունների և ստարտափ էկոհամակարգի զարգացում**<br><br>**<u>294.1 Ինժեներական նորարարական գաղափարների նախատիպերի ստեղծման և թեստավորման համար անհրաժեշտ լաբորատոր պայմանների ստեղծում</u>**<br><br>**<u>294.2 Ստարտափների գաղափարների և գիտահետազոտական արդյունքների առևտրայնացում</u>**<br><br>**<u>294.3 Բարձր տեխնոլոգիական գիտաարտադրական միավորումների/ ինստիտուտների և տնտեսության իրական հատվածի միջև համատեղ նախագծերի քննարկման և իրագործման պլատֆորմների և մոդելների ստեղծում և իրագործում՝ վերջինիս կողմից տնտեսության իրական հատվածում առկա պահանջարկի ձևակերպման և ինժեներական համայնքի կողմից լուծումների նախագծման նպատակով</u>** |

| | |
|---|---|
| | ***294.4 Նորարարական լուծումների հիման վրա տեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների ստեղծում, այդ թվում նաև դրամաշնորհային ծրագրերի միջոցով***<br><br>***294.5 Արտադրական ենթակառուցվածքների ստեղծում***<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.1 «Բարձր տեխնոլոգիաները» ենթաբաժնի 3-րդ պարբերության պահանջներից, որի նպատակն է ստեղծել նոր գաղափարների գեներացման, գաղափարների և գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման աշխատանքային համապատասխան միջավայր և պայմաններ, ինչպես նաև արտադրական ենթակառուցվածք:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաշխարհային տնտեսության զարգացման զուգահեռ առաջանում են նոր պահանջներ: Պահանջների բավարարման հիմնակ միջոցներից են բարձ տեխնոլոգիանական և նորարարական լուծումների կիրառումը: Նշված լուծումները մշակվում են գործող և ստարտափ կազմակերպությունների կողմից:<br>Նորարարական նոր գաղափարների գեներացման, գաղափարների և գիատհետազոտական արդյունքների առևտրայնացման գործընթացը շարունակական գործընթաց է և այն այժմ ամբողջական չէ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված գործընթացի ամբողջական ապահովման համար անհրաժեշտություն է առաջացել իրականացնել գործընթաց գաղափարների ձևավորման նպաստելու և աջակցելու ուղղությամբ, ինչպես նաև արտադրանքի և ծառայությունների վերածելու և արտահանմանը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նոր գաղափարների գեներացում, գաղափարների և գիահետազոտական արդյունքների առևտրայնացում աշխատանքային համապատասխան միջավայրի ստեղծում (տեխնոլոգիական և այլ կենտրոններ, ինկուբատորներ, հայկական բրենդի առաջմղում, որի արդյունքում կավելանա  և կզարգանա ստարթափ ընկերությունները, ինչպես նաև երկրում կստեղծվի արտադրական ենթակառուցվածք: |
| 295 | **Ստեղծել ձեռներեցության, գործարարական, վաճառքի և շուկայաբանության գիտելիքների զարգացման մեխանիզմներ՝ օգտագործելով միջազգային աքսելերատորների հետ համագործակցելու հնարավորություն ներ, նպաստել Հայաստանում աքսելերատորների ստեղծմանն ու զարգացմանը և մշակել համատեղ ծրագրեր՝ ստարտափների ինտենսիվ զարգացումն ապահովելու նպատակով**<br><br>***295.1 Հայկական և արտերկրյա աքսելերատորների միջև կապերի զարգացում համագործակցության հարթակների ստեղծում***<br>***295.2 Գլոբալ շուկաների ժամանակակից պահանջներինք համապատասխան ակսելերացիոն ծրագրերի մշակում***<br>***295.3 Գործող և նորաստեղծ աքսելերատորների ընտրության համար մրցույթի հայտարարում, հաղթողների ընտրություն և պայմանագրի կնքում***<br>***295.4 Փոխադարձ փորձի, գիտելիքների և ծրագրերի փոխանակման նպատակով հայկական և արտերկրյա աքսելերատորների միջև միջոցառումների կազմակերպում:***<br>***295.5 Հայաստանյան աքսելերատորների կողմից միջազգային ստանդարտներին համապատասխան աքսելերացիոն ծրագրերի իրականցում՝ ապահովելով հայաստանյան ստարտափերի համար հնարավորություն օգտվելու համապատասխան միջազգային աքսելերատորական ընկերությունների կողմից ընձեռած հնարավորություններից:***<br>***295.6 իրականացված ծրագրերի արդյունքների վերաբերյալ  հաշվետվությունների ապահովում***<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.1 «Բարձր տեխնոլոգիաները» ենթաբաժնի 4-րդ և 5-րդ պարբերությունների պահանջներից, որոնց նպատակն է մշակել ծրագիր, որի հիման վրա հայկական կազմակերպությունները կծանոթանան միջազգային աքսելերատորների փորձին՝ վերջինս ՀՀ-ում ներդնելու նպատակով, միջազգային փորձի հիման վրա Հայաստանում կստեղծվեն նոր աքսելերատորներ:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Անընդհատ զարգացող բարձր տեխնոլոգիաների ոլորտում աշխատող կազմակերպությունների և ստարտափ |

| | |
|---|---|
| | թիմերի միջև ձևավորվում են նորարական գաղափարներ, որոնց իրականացման համար անհրաժեշտ է իրականացնել աքսելերացիա: ՀՀ-ում գործում են սակավ թվով աքսելերացիոն կենտրոններ, որտեղ իրականացվում են աքսելերացիոն պրոցեսներ:<br>Գործող աքսելերատորների հնարավորությունները բավարար չեն ստեղծվող նորարարական գաղափարներին միջազգային չափանիշներին համապատասխան աքսելերացիայի իրականացման համար:<br>Ստարտափ գաղափարը կյանքի կոչելու համար անհաժեշտ է ցուցաբերել աջակցություն ինչպես պետության, այնպես էլ դոնոր կազմակերպությունների ներգրավվմամբ:<br>**1.1. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանում ստարտափ ընկերությունների նորարական գաղափարները հնարավոր է կյանքի կոչել միջազգային փորձին համապատասխան աքսելերացիաների ավելացմամբ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ-ում կստեղծվեն բարձր տեխնոլոգիաների ոլորտի թվով ավելի շատ կազմակերպություններ, նոր աշխատատեղեր, նոր արտադրանքներ և ծառայություններ, որոնք կհամապատասխանեն միջազգային շուկայի չափանիշներին: |
| **296** | ***Հայաստանում մտավոր սեփականության միջազգային ճանաչման և դրա պաշտպանության համար ստեղծել պատշաճ մեխանիզմներ և օրենսդրական դաշտ***<br><br>***296.1 Հայաստանյան բարձր տեխնոլոգիական կազմակերպությունների շրջանում հետազոտության իրականացում՝ տեխնոլոգիական նորարարությունների մտավոր սեփականության գրանցման, պաշտանության և առևտրայնացման դաշտերում խնդիրների բացահայտման նպատակով***<br>***296.2 Քննարկում շահագրգիռների հետ,***<br>***296.3 Միջազգային փորձի ուսումնասիրում,***<br>***296.4 ՀՀ-ում առկա օրենսդրական դաշտի բացերի վերլուծություն, համադրում և մոտարկում միջազգային ստանդարտներին***<br>***296.5 Նորմատիվ-իրավական դաշտի բարելավման ուղղված փաթեթի մշակում***<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.1 «Բարձր տեխնոլոգիաները» ենթաբաժնի 6-րդ պարբերության պահանջներից, որի նպատակն է մշակել համապատասխան մեխանիզմներ և օենսդրական դաշտ՝ միջազգային չափանիշներին համապատասխան մտավոր սեփականության պաշտպանության նպատակով:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Բարձր տեխնոլոգիաների ոլորտում աշխատող կազմակերպությունների և ստարտափ թիմերի նորարական գաղափարների զարգացմանը զուգահեռ անհրաժեշտություն է առաջանում դրանց պաշտպանության: Մտավոր սեփականության պաշտպանությունը պետք է կարգավորել օրենսդրական դաշտի կարգավորմամբ՝ միջազգային չափանիշներին համապատասխան:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մտավոր սեփականության պաշտպանության համար ՀՀ օրենքի մի շարք դրույթներ չեն համապատասխանում ներկայումս միջազգային պրակտիկայում կիրառվող որոշ մոտեցումներին և ենթակա են վերանայման: Գործող օրենքով լիարժեք չի կարգավորվում բարձր տեխնոլոգիաների ոլորտում մտավոր սեփականության պաշտպանության մեխանիզմները:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետությունում կներդրվի տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի գյուտերի, արդյունաբերական նմուշների և հեղինակային իրավունքի իրավական պահպանության առավել կատարելագործված համակարգեր: |
| **297** | ***Բարձր տեխնոլոգիաների ոլորտի խնդիրների, դրանց լուծման մեխանիզմների, հեռանկարային զարգացման ուղղությունների սահմանում***<br><br>***297.1 «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ*** |

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.1 «Բարձր տեխնոլոգիաները» ենթաբաժնի պահանջներից, որի նպատակն է սահմանել բարձր տեխնոլոգիաների ոլորտի խնդիրների, դրանց լուծման մեխանիզմների, հեռանկարային զարգացման ուղղությունները ։<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ դրական միտումների հետ մեկտեղ, առաջ են գալիս նոր մարտահրավերներ բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման և առաջընթացի ապահովման ուղղությամբ:<br>Նման խնդիրների վերհանման և լուծման նպատակով անհրաժեշտություն է առաջանում մշակել և իրականացնել միջոցառումներ, որոնք միտված են ոլորտի առաջմղմանը, զարգացմանը, ՀՀ բրենդի համաշխարհային ճանաչմանը, կադրերի պատրաստմանը և այլ խնդիրների լուծմանը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների ապահովման նպատակով անհրաժեշտություն է առաջացել մշակել բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարությունը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում կմաշկվեն բարձր տեխնոլոգիաների ոլորտի ոլորտի զարգացման ռազմավարություն, որով կսահմանվի բարձր տեխնոլոգիաների ոլորտի խնդիրները, դրանց լուծման մեխանիզմները, հեռանկարային զարգացման ուղղությունները և իրականացվող քայլերը, ինչպես նաև պատասխանատու գերատես չությունները և կատարման ժամկետները: |
| **298** | **«Կառավարությունը որպես պատվիրատու» հասկացությամբ նպաստել հայկական բարձր տեխնոլոգիական կազմակերպությունների մրցունակության բարձրացմանը**<br><br>**298.1 Կատարել ուսումնասիրություն և գնահատել պետական կարիքները**<br>**298.2 Մշակել պետական կարիքների համար առաջարկություններ**<br>**298.3 Մշակել տեխնիկական առաջադրանքներ և կազմակերպել գնումներ**<br>**298.4 Գնման պահանջներին համապատասխան պիլոտային ծրագրերի իրականացում**<br>**298.5 Համապատասխան ոլորտային նշանակության պիլոտային ծրագրի ներդրում**<br>**298.6 Ապահովել գնման գործընթացը**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.1 «Բարձր տեխնոլոգիաները» ենթաբաժնի 7-րդ պարբերության պահանջներից, որի նպատակն է կառավարությունը որպես գնորդ կոնցեպտի միջոցով զարգացնել հայկական արտադրանքների և ծառայությունների շուկան:<br>1.1 **կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ պետական մարմինների կարիքների համար գնումները իրականացվում են գնման գործընթացին համապատասխան, որին մասնակցում են և՛ տեղական, և՛ օտարերկրյա ընկերություններ: Հաճախ տեղական կազմակերպությունների ֆինանսական հնարավորությունները և փորձը չեն բավարարում մրցույթում հաղթելու համար:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է խթանել տեղական ընկերությունների մասնակցությունը ՀՀ պետական մարմինների կարիքների համար նախատեսված գնման գործընթացներում՝ վերջիններիս ապրանքների և ծառայությունների գնման միջոցով տեղական արտադրանքների խթանման և զարգացման նպատակով:<br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Միջոցառման իրականացման արդյունքում կխթանվի բարձր տեխնոլոգիաների ոլորտում հայկական ծառայությունների և արտադրանքի շուկան, ինչպես նաև համապատասխան գնման միջոցով հայկական կազմակերպությունների արտադրանքները և ծառայությունները կունենան պատվիրատու, որը իր հերթին առաջ կբերի հայկական ապրանքի նկատմամբ վստահության բարձրացման և խթան կհանդիսանա միջազգային շուկայում վերջիններիս ներկայացման համար: |
| **299** | **Հայաստանի ստարտափ և տեխնոլոգիական կենտրոնների միջազգային հեղինակության բարձրացում**<br><br>**299.1 Ուսումնասիրությունների իրականացում**<br>**299.2 Համապատասխան ծրագրերի մշակում**<br>**299.3 Սեմինարների, ֆորումների մասնակցության աջակցում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.1 «Բարձր տեխնոլոգիաները» ենթաբաժնի 8-րդ պարբերության պահանջներից, որի նպատակն է մշակել ծրագիր հայկական ստարտափ և գործող ընկերությունները միջազգային շուկայում ներկայացնելու համար:<br>1.1 **կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Բարձր տեխնոլոգիական ոլորտում պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ՝ հայկական ստարտափ կազմակերպությունների և գործող ընկերությունների մասնակցությամբ: Հայկական ստարտափ կազմակերպություններից և գործող ընկերություններից շատ քչերն ունեն հնարավորություն մասնակցելու միջազգային ֆորումներին, սեմինարներին և ցուցահանդեսներին:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է ստեղծել հարթակ և մշակել ծրագիր՝ հայկական արտադրանքը և ապրանքանիշը միջազգային շուկայում ներկայացնելու նպատակով: Անհրաժեշտ է ՀՀ կառավարության աջակցությամբ կազմակերպել միջազգային հարթակներին, ֆորումներին, սեմինարներին, ցուցահանդեսներին մասնակցություն, գովազդել տեղական արտադրանքը, որը համագործակցության հեռանկարներ կբացի բարձր տեխնոլոգիաների ոլորտում բարձր վարկանիշ ունեցող միջազգային կազմակերպություններին:<br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրերի իրականացման արդյունքում ՀՀ ստարտափ և տեխնոլոգիական ընկերությունները կմասնակցելով սեմինարներին, ֆորումներին կներկայացնեն իրենց արտադրանքները և ծառայությունները, որի արդյունքում հայկական տեխնոլոգիական ընկերությունները հնարավորություն կունենան դուրս գալ միջազգային շուկա, ՀՀ-ում կավելանան ներդրումները, կկնքվեն նոր պայմանագրեր, կլավանան միջպետական հարաբերությունները: |
| **300** | **Մշակել և իրագործել բարձր տեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների արտերկրում առաջխաղացման և վաճառքի ծրագիր**<br><br>**300.1 կատարել շուկայի ուսումնասիրություն**<br>**300.2 հայկական բարձր տեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների գույքագրում**<br>**300.3 ըստ ուղղությունների դասակարգում**<br>**300.4 համապատասխան ծրագրերի մշակում**<br>**300.5 միջազգային շուկայում հայկական արտադրանքի ներկայացում**<br>**300.6 Առևտրի կարգավոր ման համար համապա տասխան օղակների ստեղծում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.1 «Բարձր տեխնոլոգիաները» ենթաբաժնի 10-րդ պարբերության պահանջներից, որի նպատակն է մշակել ծրագիր բարձր տեխնոլոգիաների ոլորտում հայկական ապրանքները և ծառայությունները արտերկրում առաջխաղացման նպատակով: |

| | |
|---|---|
| | **1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Բարձր տեխնոլոգիական ոլորտում գործունեություն ծավալող հայկական ստարտափ կազմակերպությունները և գործող ընկերությունները հաճախ իրենց արտադրանքները, ծառայությունները և նորարարական գաղափարները չեն կարողանում ճիշտ մատուցել և դուրս գալ միջազգային շուկա: Արդյունքում միջազգային շուկայի պահանջներին համապատասխան տեղական արտադրանք և համապատասխան փորձ ունենալով հանդերձ հայկական արտադրանքը չի կարողանում մրցել ոլորտի բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների հետ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ուսումնասիրելով միջազգային փորձը և շուկան, անհրաժեշտ է մշակել ծրագիր՝ հայկական արտադրանքը և ծառայությունները միջազգային շուկա արտահանելու և վաճառելու նպատակով: Ծրագրի շրջանակներում պետք է ստեղծել համապատասխան կարգավորող օղակ, որը կուսումնասիրի տեղական արտադրանքը, կհամագործակցի տեղական արտադրանքներ և ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ և կմշակի մեխանիզմներ վերջիններիս միջազգային շուկա արտահանելու ուղղությամբ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրերի իրականացման արդյունքում կունենանք հայկական բարձր տեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների արտահանում միջազգային շուկա, վաճառքի իրականացում, ոլորտի շրջանառության աճ, ոլորտի զարգացման խթանում, ապրանքների և ծառայությունների արտահանման և վաճառքի մեխանիզմների կանոնակարգված ընթացակարգ: |
| 301 | **Երևանում և մարզերում տեխնոլոգիական կենտրոնների ստեղծում, գոյություն ունեցող կենտրոնների արդյունավետ գործունեության ապահովում՝ հետագա զարգացման համար բավարար տեխնոլոգիական և արտադրական հնարավորությունների ապահովմամբ**<br><br>**301.1 Գործունեության տարեկան ծրագրի մշակում**<br>**301.2 Շահագրգիռ գերատեսչությունների հետ քննարկում**<br>**301.3 Գործունեության ծրագրի ընդունում**<br>**301.4 Ծրագրի շրջանակներում իրականացվող գործունեության ֆինանսավորում**<br>**301.5 Նոր տեխնոլոգիական կենտրոնների ստեղծման նպատակով ծրագրերի մշակում, քննարկում և համապատասխան ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով բանակցությունների իրականացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.1 «Բարձր տեխնոլոգիաները» ենթաբաժնի 11-րդ պարբերության պահանջներից, որի նպատակն մշակել տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ապահովման ծրագրեր, պետական աջակցություն ցուցաբերել ծրագրային միջոցառումների իրականացմանը, որոնք կնպաստեն ժամանակակից գիտելիքահենք ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեության ապահովմանը:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող տեխնոլոգիական կենտրոնի գործունեության կառավարում-միջոցառման շրջանակում իրականացվում է կենտրոնի աշխատակազմի բնականոն գործունեության ապահովումը: Ներգրավված մասնագետների միջոցով կենտրոնի կողմից իրականացվում են ծրագրեր, մասնավորապես՝ նորաստեղծ կազմակերպությունների հիմնադրման աշխատանքների, գործունեության բիզնես պլանավորման փաստաթղթերի մշակման, գործարար կապերի հաստատման, կազմակերպություններին խորհրդատվական ծառայությունների տրամադրման նպատակով:<br>Ընդհանուր առմամբ, գործող և նոր տեխնոլոգիական կենտրոնների ստեղծման շրջանակներում ակնկալվում է մասնագիտական դասընթացների կազմակերպում, բիզնես աջակցության և խորհրդատվական ծառայությունների տրամադրում, որոնց իրականացման համար անհրաժեշտ է ֆինանսական աջակցություն:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է շարունակել Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ապահովումը՝ մշակելով գործող տեխնոլոգիական կենտրոնների գործունեության տարեկան ծրագիր և նոր տեխնոլոգիական կենտրոնների ստեղծման նպատակով մշակել ծրագրեր, քննարկել և համապատասխան |

| | |
|---|---|
| | ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով կատարել բանակցություններ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրերի իրականացման արդյունքում կկազմակերպվեն մասնագիտական դասընթացներ, կտրամադրվեն բիզնես աջակցության և խորհրդատվական ծառայություններ, աջակցություն կցուցաբերվի նոր, բարձր հավելյալ արժեք ձևավորող սկսնակ ընկերությունների և աշխատատեղերի ստեղծմանն աջակցություն, կհիմնվեն ՏՏ և ԲՏ ոլորտների ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաներ, կիրականացվեն հետազոտական ծրագրեր: |
| **302** | **Նոր տեխնոլոգիաների և գիտելիքի զարգացման, ինչպես նաև Հայաստանը՝ որպես տեխնոլոգիական կենտրոնի վարկանիշի բարձրացման նպատակով ապահովել պայմաններ և ձեռնարկել ակտիվ քայլեր՝ միջազգային բարձր տեխնոլոգիական կազմակերպություններին Հայաստան ներգրավելու նպատակով**<br><br>**302.1 Համապատասխան ընկերությունների հետ բանակցությունների վարում**<br>**302.2 Համագործակցության պայմանագրերի նախագծերի մշակում**<br>**302.3 պայմանագրերի սահմանված կարգով հաստատում և ստորագրում**<br>**302.4 պայմանագրով նախատեսված գործառույթների իրականացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.1 «Բարձր տեխնոլոգիաները» ենթաբաժնի 12-րդ պարբերության պահանջներից, որի նպատակն է իրականացնել միջոցառումներ, որի արդյունքում Հայաստան Հանրապետություն կներգրավվեն միջազգային ճանաչում վայելող բարձր տեխնոլոգիական ոլորտի կազմակերպություններ:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ-ում գործում են մի շարք հեղինակավոր վերազգային ընկերություններ, որոնց հետ շարունակվել են աշխատանքները, մասնավորապես «Մայքրոսոֆթ», «ԱյԲիԷմ», «Նեյշնլ Ինսթրումենթս» և այլ վերազգային կազմակերպությունների հետ կնքված փոխըմբռնման հուշագրերի շրջանակում, ինչպես նաև ձեռնարկվել են միջոցառումներ այս և նմանատիպ այլ նոր ընկերությունների հետ համագործակցություն հաստատելու և ընդլայնելու ուղղությամբ:<br>Վերազգային ընկերությունների ներգրավումը պայմանավորված է նրանց կողմից նոր տեխնոլոգիաների, մշակույթի և կրթական մոտեցումների ներմուծմամբ, որոնց համար ՀՀ-ում պետք է ստեղծվեն նպաստավոր պայմաններ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է վերը նշված գործընթացի ամբողջական ապահովման համար շարունակել քննարկումները վերազգային կազմակերպությունների ներգրավման ուղղությամբ, բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացմամբ հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազ¬գային կառույցների հետ համագործակցության հաստատման և ընդլայնման միջոցով ապահովել Հայաստանում նշված երկրների փորձի շարունակական ներդրումը, մշակել համագործակցության առաջարկներ և պայմանագրերի նախագծեր:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառումների իրականացման արդյունքում տեղի կունենա ներդրումների ներգրավում, ՏՏ ոլորտի՝ վերջիններիս փորձի, հեղինակության ու կապերի շնորհիվ Հայաստանի վարկանիշի բարձրացում և Հայաստանի, որպես տարածաշրջանային ՏՏ հանգույցի իմիջի ձևավորում, որը իր հերթին ոլորտում կներմուծի նորագույն տեխնոլոգիական գիտահետազոտական արտադրանք, կրթական և միջազգային փորձ: |
| **303** | **Տեխնոլոգիական ընկերությունների և բուհերի արդյունավետ համագործակցության զարգացում՝ տեխնոլոգիական և ինժեներական մասնագիտական ներուժի խթանման նպատակով**<br><br>**303.1Ստեղծել ոլորտի ընկերությունների և ԲՈՒՀերի միջև կանոնավոր երկխոսության հարթակներ**<br>**303.2 Ուսումնասիրել տեխնոլոգիական ոլորտում մասնագետների վերապատրաստման կարիքները**<br>**303.3 Մշակել կադրերի վերապատրաստման համապատասխան ծրագրեր իրականացնել վերապատրաստման դասընթացներ** |

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.1 «Բարձր տեխնոլոգիաները» ենթաբաժնի 13-րդ պարբերության պահանջներից, որի նպատակն է իրականացնել միջոցառումներ բարձր տեխնոլոգիաների ոլորտում կադրերի պատրաստման համար:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ-ում գործում են մի շարք բարձր տեխնոլոգիաների ոլորտի դասընթացներ իրականացնող ԲՈՒՀ-եր, ինչպես նաև կադրերի վերապատրաստման կենտրոններ, որոնց միջոցով կազմակերպվում են մասնագիտական դասընթացներ, տրամադրվում է բիզնես աջակցություն և խորհրդատվական ծառայություններ:<br>Բարձր տեխնոլոգիաների անընդհատ զարգացմանը զուգահեռ այժմ ունենք բարձր տեխնոլոգիաների ոլորտում կադրերի պակաս, որի նպակով պետք է իրականացնել շուկայի պահանջներին համապատասխան վերապատրաստման դասընթացներ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Բարձր տեխնոլոգիաների ոլորտում անհրաժեշտ է մշակել և իրականացնել կադրերի պատրաստման և վերապատրաստման ծրագրեր միջազգային կրթական և ՀՀ-ում արդեն գործող կազմակերպությունների ներգրավմամբ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառումների իրականացման արդյունքում կձևավորվի բարձր տեխնոլոգիաների ոլորտում զարգացած և մրցունակ աշխատանքային շուկա, կստեղծվեն արտադրանքներ և կմատուցվեն ծառայություններ՝ միջազգային չափանիշներին համապատասխան: |
| **304** | **ՀՀ տնտեսության թվային փոխարկման ազգային օրակարգի և դրանից բխող ռազմավարական գործողությունների պլանի մշակում.**<br><br>**304.1 Միջազգային փորձի ուսումնասիրում**<br>**304.2 Փորձագիտական աշխատանքային խմբերի ձևավորում և կարողությունների զարգացում**<br>**304.3 Մինչ այժմ ստեղծված թվային ծառայությունների և թվայնացման ոլորտում իրականացված միջազգային զարգացման ծրագրերի արդյունքների, իրականացված հետազոտական աշխատանքների գույքագրում, վերլուծություն, դեռևս չթվայնացված ծառայությունների թվայնացման կարիքների քարտեզագրում**<br>**304.4 Հայաստանի թվային փոխակերպման տեսլականի շուրջ քննարկումների կազմակերպում պետական, մասնավոր և հասարակական հատվածների միջև**<br>**304.5 Թվային փոխակերպման ռազմավարական գնահատման և ստացված տվյալների վերլուծության փորձագիտական խմբի ձևավորում և կարողությունների զարգացում**<br>**304.6 Թվային տնտեսության ռազմավարական գնահատում (DESA)**<br>**304.7 Թվային փոխարկման ռազմավարական ուղղությունների, չափանիշների, թեմաների, նպատակների, խնդիրների, թիրախների, մոտեցումների և սկզբունքների, զարգացման սցենարների շուրջ քննարկումների, խորհրդակցությունների և աշխատաժողովների կազմակերպում կառավարության և մասնավոր ու հասարակական սեկտորների ներգրավմամբ:**<br>**304.8 Թվային փոխարկման ազգային օրակարգի իրականացման ճանապարհային քարտեզի շուրջ քննարկումների կազմակերպում, գործողությունների ծրագրի սահմանում**<br>**304.9 Թվային փոխարկման ազդեցության գնահատման գործիքակազմի սահմանում և մարդկային կարողությունների զարգացում**<br>**304.10 Հայաստանի թվային փոխարկման օրակարգի իրագործման գործընկերների և ներդրումների ներգրավում /մարքեթինգային պլան/**<br>**304.11 Թվային փոխարկման ազդեցության գնահատման գործիքակազմի և մոնիթորինգի ռազմավարության ու պլանի մշակում**<br>**304.12 Մարդկային կարողությունների զարգացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր |

| | |
|---|---|
| | տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.2 «Կապը և թվայնացումը» ենթաբաժնի 1-ին, 3-րդ և 4-րդ պարբերությունների պահանջներից, որի նպատակն է սահմանել ՀՀ տնտեսության թվայնացման ոլորտի խնդիրները, դրանց լուծման մեխանիզմները, հեռանկարային զարգացման ուղղությունները:<br><br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ դրական միտումների հետ մեկտեղ, առաջ են գալիս նոր մարտահրավերներ տնտեսության թվայնացման ոլորտի զարգացման և առաջընթացի ապահովման ուղղությամբ:<br><br>Նման խնդիրների վերհանման և լուծման նպատակով անհրաժեշտություն է առաջանում մշակել և իրականացնել միջոցառումներ, որոնք միտված են ՀՀ տնտեսության բոլոր ճյուղերում բարձր տեխնոլոգիական լուծումների և ծառայությունների ներդրմանը, որը իր հերթին կբերի տնտեսության զարգացմանը և հավելյալ արժեքի ստեղծմանը:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների ապահովման նպատակով անհրաժեշտություն է առաջացել մշակել ՀՀ տնտեսության թվային փոխարկման ազգային օրակարգ և դրանից բխող ռազմավարական գործողությունների ծրագիր:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Միջոցառումների իրականացման արդյունքում կմշակվի ՀՀ տնտեսության թվային փոխարկման ազգային օրակարգ և դրանից բխող ռազմավարական գործողությունների ծրագիր, որով կսահմանվի ոլորտի խնդիրները, դրանց լուծման մեխանիզմները, հեռանկարային զարգացման ուղղությունները և իրականացվող քայլերը, ինչպես նաև պատասխանատու գերատեսչությունները և կատարման ժամկետները: |
| **305** | **Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի «Գլոբալ փոխգործելիության հարթակի» (GIP) անվտանգ, անխափան և տեխնիկական ընդհանուր պահանջների համապատասխան գործարկման ապահովում**<br><br>**305.1 Գլոբալ փոխգործելիության հարթակի շարունական սպասարկում, պահպանում, համակարգային թարմացումներ և հզորացում**<br>**305.2 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մոտ առկա տվյալների շտեմարանների տրանսֆոմացիա և համապատասխանեցում GIP հարթակի միանսական ստանդարտներին**<br>**305.3 Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ստեղծվող նոր տվյալների շտեմարանների նախագծում՝ համաձայն GIP հարթակի միանսական ստանդարտներին**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 1-ին բաժնի 2-րդ կետի 3-րդ պարբերության և 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.2 «Կապը և թվայնացումը» ենթաբաժնի 5-րդ պարբերության պահանջներից, որի նպատակն է մշակել և ՀՀ-ում ներդնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային փոխգործակցություն «Գլոբալ փոխգործելիության հարթակի» (GIP):<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ներկա պահին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծվել են էլեկտրոնային ծառայությունների մատուցման տարատեսակ հարթակները, որոնց ծրագրային ապահովումները էապես իրարից տարբերվում են և տեխնիկապես չեն կարող համատեղվել միասնական հարթակում՝ հաշվի առնելով տեղեկատվության հավաքագրման և պահպանման միասնական մոտեցումներ և ստանդարտներ:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների ապահովման նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել հարթակ, որի միջոցով արդեն իսկ գործող շտեմարանները կհամապասխանեցվեն: |

| | |
|---|---|
| | **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառումների իրականացման արդյունքում կբարելավի հանրային կառավարման թափանցիկությունը և կբարձրացվի քաղաքացիների սպասարկման գործընթացների արդյունավետությունը: |
| 306 | **Դոնորների, զարգացացման միջազգային գործակալությունների, հիմնադրամների, ՀՀ պետական բյուջեի, միջազգային ֆինանսական կառույցների, մասնավոր ներդրումների միջոցներով իրականացվող ոլորտային զարգացման և ներդրումային ծրագրերի արդյունավետ կառավարման և արդյունքների մշտադիտարկման համար նախատեսված էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում**<br><br>**<u>306.1 Կարիքների գնահատում: տեխնիկական առաջադրանքի մշակում:</u>**<br>**<u>306.2 Հաջողված փորձերի հավաքագրում և ուսումնասիրություն:</u>**<br>**<u>306.3 Համակարգի հայեցակարգի մշակում և քննարկումներ շահագրգիռ կողմերի և հավանական կատարողների հետ:</u>**<br>**<u>306.4 Քննարկումներ աղյունքների հիման վրա հայեցակարգի լրամշակում և համակարգի տեխնիկական նկարագրի մշակման ծառայության գնման տեխնիկական առաջադրանքի մշակում:</u>**<br>**<u>306.5 Տեխնիկական առաջադրանքի համապատասխան կատարող կազմակերպության ընտրության մրցույթ և պայմանագրի կնքում:</u>**<br>**<u>306.6 Համակարգի տեխնիկական նկարագրի և տիպային համակարգի ստեղծում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.2 «Կապը և թվայնացումը» ենթաբաժնի պահանջներից, որի նպատակն է մշակել և ՀՀ-ում ներդնել դոնորների, զարգացացման միջազգային գործակալությունների, հիմնադրամների, ՀՀ պետական բյուջեի, միջազգային ֆինանսական կառույցների, մասնավոր ներդրումների միջոցներով իրականացվող ոլորտային զարգացման և ներդրումային ծրագրերի արդյունավետ կառավարման և արդյունքների մշտադիտարկման էլեկտրոնային կառավարման համակարգի:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկա պահին դոնորների, զարգացացման միջազգային գործակալությունների, հիմնադրամների, ՀՀ պետական բյուջեի, միջազգային ֆինանսական կառույցների, մասնավոր ներդրումների միջոցներով իրականացվող ոլորտային զարգացման և ներդրումային մի շարք ծրագրեր, սակայն վերջիններիս վերահսկման մեխանիզմները հստակ և կանոնակարգված չեն:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների ապահովման նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել հարթակ, որի միջոցով կկանոնակարգվի ոլորտային զարգացման և ներդրումային ծրագրերը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառումների իրականացման արդյունքում կբարելավի հանրային կառավարման թափանցիկությունը և կբարձրացվի ոլորտային զարգացման և ներդրումային ծրագրերը արդյունավետությունը: |
| 307 | **Տնտեսության մեջ առկա զբաղմունքների և որակավորումների վերաբերյալ տվյալների առցանց շտեմարանի ստեղծում՝ իր մեջ ինտեգրված թափուր աշխատատեղերի (ըստ մասնագիտությունների և առաջարկվող վարձատրու-թյան չափերի) լրացման և համադրման գործիքով**<br><br>**<u>307.1 Կարիքների գնահատում</u>**<br>**<u>307.2 Հաջողված փորձերի հավաքագրում և ուսումնասիրություն</u>**<br>**<u>307.4 Արդյունքների հիման վրա համակարգի տեխնիկական նկարագրի մշակման ծառայության գնման տեխնիկական առաջադրանքի մշակում</u>**<br>**<u>307.5 Տեխնիկական առաջադրանքի համապատասխան կատարող կազմակերպության ընտրության մրցույթ և պայմանագրի կնքում</u>** |

| | |
|---|---|
| | <u>**307.6 Համակարգի տեխնիկական նկարագրի նախագծի և տիպային շտեմարանի ստեղծում**</u><br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.2 «Կապը և թվայնացումը» ենթաբաժնի 4-րդ պարբերության պահանջներից, որի նպատակն է մշակել և ՀՀ-ում ներդնել Տնտեսության մեջ առկա զբաղմունքների և որակավորումների վերաբերյալ տվյալների առցանց շտեմարան:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ-ում հստակեցված չեն առկա զբաղմունքները, թափուր աշխատատեղերը, չկա որակավորում ունեցող մասնագետների վերաբերյալ հստակ տեղեկատվություն, որի բացակայության դեպքում հստակ չի կարող նկարագրվել զբաղվածության առկա վիճակը, ինչպես նաև վերապատրաստման անհրաժեշտություն ունեցող մասնագետների պահանջը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների ապահովման նպատակով անհրաժեշտ է ստեղծել մշակել և ՀՀ-ում ներդնել Տնտեսության մեջ առկա զբաղմունքների և որակավորումների վերաբերյալ տվյալների առցանց շտեմարան, որում կզետեղվի ՀՀ զբաղվածության վերաբերյալ հստակ տեղեկատվություն:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում կստեղծվի ըստ տնտեսության ճյուղերի զբաղմունքների վերաբերյալ համապարփակ, շարունակաբար թարմացվող և արդիական միասնական թվայնացված համակարգ, որը կապահովի տվյալների և փաստերի հիման վրա քաղաքականությունների և ռազմավարությունների մշակում բոլոր ոլորտներում (զբաղվածություն, կրթություն և այլն), կբարձրացվի ՀՀ զբաղվածության մակարդակը: |
| **308** | **Հայաստանի բարձր տեխնոլոգիական ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավման հնարավորությունների ստեղծում**<br><br><u>**308.1 Հետազոտությունների տեխնիկական առաջադրակնքի մշակում և քննարկում դոնոր կազմակերպության հետ**</u><br><u>**308.2 Հետազոտությունների իրականացման կազմակերպության ընտրություն**</u><br><u>**308.3 Հետազոտությունների իրականացում**</u><br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.2 «Կապը և թվայնացումը» ենթաբաժնի պահանջներից, որի նպատակն է գնահատել ՀՀ-ում ներդրումների ներգրավման հնարավորությունները :<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ ընկերությունները և ստարտափերը այցելում են միջազգային տոնավաճառներ, էքսպոներ և ցուցադրում են իրենց կողմից ստաղծված արտադրանքը և ծառայությունները, սակայն այդ գործընթացը իրականացվում է վերջիններիս նախաձեռնությամբ, ինչպես նաև չկան միջազգային շուկաներում հետաքրքրություն ներկայացնող արտադրանքի և ծառայությունների վերաբերյալ վիճակագրություն:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների ապահովման նպատակով իրականացվում է հետազոտություն, որի արդյունքում կհստակեցվի արտաքին շուկաներում առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող տեխնոլոգիական ապրանքները և ծառայությունները:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում հնարավորություն կստեղծվի ապահովել բարձր տեխնոլոգիաների ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավման համար, կարտադրվեն այն տեխնոլոգիական ապրանքները որոնք արտաքին շուկաներում առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում և կապահովվեն դրանց արտահանումը այդ |

| | |
|---|---|
| | շուկաներ: |
| **309** | **Հայկական տեխնոլոգիական արտադրանքի՝ համաշխարհային արժեշղթաների մեջ ինտեգրման հնարավորությունների ուսումնասիրում**<br><br>**<u>309.1 Միջազգային փորձագետի կողմից պրոդուկտների ուսումնասիրություն և առավել մրցունակ պրոդուկտների բացահայտում:</u>**<br>**<u>309.2 Գլոբալ արժեշղթաների մեջ ինտեգրման ռազմավարության մշակում և իրագործում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.2 «Կապը և թվայնացումը» ենթաբաժնի 11-րդ պարբերության պահանջներից, որի նպատակն է իրականացնել հետազոտություն համաշխարհային արժեշղթաների մեջ Հայկական տեխնոլոգիական պրոդուկտների ինտեգրման հնարավորությունների բացահայտման ուղղությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նշված հետազոտությունը իրականացվում է առաջին անգամ, հետևաբար հետազոտությունը նպատակ ունի բացահայտելու ներկա վիճակը և առկա խնդիրները:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հետազոտության արդյունքում կբացահայտվեն հայկական ապրանքի և ծառայությունների քարտեզագրում և համաշխարհային արժեշղթաների դրանց ինտեգրման հնարավորությունների բացահայտում և ինտեգրման նպատակով Հայկական և համաշխարհային ընկերությունների միջև գործնական կապերի ստեղծում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառումների իրականացման արդյունքում կբարձրացվի Հայակական տեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների միջազգային ճանաչելիության բարձրացում և արտահանման ծավալների խթանում, ինչպես նաև ստեղծվում հիմքեր և դաշտ համագործակցության ընդլայնման ուղղությամբ: |
| **310** | **Տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված պետական ստանդարտների ներդրման ապահովում**<br><br>**<u>310.1 Միջազգային փորձի ուսումնասիրություն</u>**<br>**<u>310.2 Ազգային ստանդարտների մշակում՝ ներդաշնակ միջազգային և տարածաշրջանային (եվրոպական) ստանդարտներին</u>**<br>**<u>310.3 Միջպետական (ԳՕՍՏ) ստանդարտների ներդրման և կիրառման ապահովում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 7-րդ «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.2 «Կապը և թվայնացումը» ենթաբաժնի 6-րդ պարբերության պահանջներից, որի նպատակն է մշակել և ՀՀ-ում ներդնել տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակով ստանդարտներ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>21-րդ դարում զգալիորեն աճել է տեղեկատվության նշանակությունը, դրա ազդեցությունը անձի, հասարակության ու պետության կենսագործունեության գրեթե բոլոր բնագավառներում՝ դառնալով ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական ազդեցիկ գործոն:<br>Համաշխարհայնացման նոր պայմաններում ի հայտ են գալիս սպառնալիքներ, որոնց դեմ մղվող պայքարում տեղեկատվական անվտանգությանը տրվում է կարևոր նշանակություն: Թվայնացումը և էլեկտրոնային հասարակության ձևավորումը անհրաժեշտություն են առաջացրել վերանայելու և զարգացնել տեղեկատվական անվտանգության ոլորտում գործող ստանդարտները:<br>Հայաստանի Հանրապետությունում գործում են տեղեկատվական անվտանգության ապահովման |

միջազգային ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 27000 խմբի ստանդարտները, որոնք բավարար չեն երկրում տեղեկատվական անվտանգության ապահովման համար:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Վերը նշված խնդիրների ապահովման նպատակով անհրաժեշտ է մշակել ազգային ստանդարտներ և տեղայնացնել տեղեկատվական անվտանգության ապահովման միջազգային և միջպետական ստանդարտները:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Արդյունքում տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակով մշակվելու և ներդրվելու են ստանդարտներ, որոնց միջոցով կսահմանվեն միասնական կանոններ և նորմեր՝ ՀՀ-ում տեղեկատվության անվտանգության ապահովման ուղղությամբ:

311 **Ռազմարդյունաբերական ոլորտում նպատակային ներդրումների շնորհիվ, ստեղծել նպաստավոր ներդրումային միջավայր մասնավոր ներդրողների համար՝ որպես առաջնային ուղղություններ նախորոշելով տեխնոլոգիական վերազինումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը և սպառազինության ու ռազմական տեխնիկայի ներկրումներից կախվածության նվազեցումը**

**311.1 Նպատակային ներդրումային հիմնադրամի ստեղծում՝ պետություն-մասնավոր ներդրումային համագործակցության կազմակերպման համար**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 7.1 կետի 15-րդ պարբերության պահանջներից, Ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարությունից և Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման ծրագրից: Նպատակն է ստեղծել նպատակային ներդրումային հիմնադրամ՝ պետություն-մասնավոր ներդրումային համագործակցության կազմակերպման համար:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Վերջին տարիների Հայաստանի Հանրապետությունում աճել է ռազմարդյունաբերության ոլորտում աշխատող կազմակերպությունների քանակը, ինչպես նաև աշխատանքներ են իրականացվում գիտահետազոտական և փործակոնստրուկտորական աշխատանքների մակարդակի և ծավալի մեծացման ուղղությամբ:

Միաժամանակ ընկերությունների կողմից նոր տեխնոլոգիաների ներդրումը պահանջում է ֆինանսական ներդրումներ և պետական կառավարման մարմինների աջակցություն, և ընկերությունները ի վիճակի չեն ինքնուրույն լուծել առաջացող խնդիրները:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ռազմարդյունաբերության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման և արդյունավետ արտադրությունների ֆինասական աջակցություն իրականացնելու նպատակով նախատեսվում է ստեղծել ռազմարդյունաբերական ներդրումային հիմնադրամ՝ պետության և մասնավոր հատվածի ներգրավմամբ, որտեղ մասնավոր ներդրողները կիրականացնեն ներդրումներ՝ համապատասխան շահաբաժնի ակնկալիքով կամ ռիսկերի բաշխմամբ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ-ում կստեղծվեն ռազմարդյունաբերության ոլորտում թվով ավելի շատ կազմակերպություններ, աշխատատեղեր, նոր արտադրանքներ և ծառայություններ, կնվազի սպառազինության ու ռազմական տեխնիկայի ներկրումներից կախվածությունը:

312 **Զինված ուժերի զարգացման ծրագիրը և դրանից բխող միջոցառումները կարևորելով շեշտակի ավելացնել ռազմարդյունաբերական համալիրի արտադրանքի ծավալը և այն դարձնել արդյունաբերության ոլորտի առաջատար ճյուղերից մեկը**

**312.1 Նոր արտադրությունների հիմնում, ներկրման և արտադրության մեխանիզմի ստեղծում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 7. 1 կետի 16-րդ պարբերության պահանջից,դրույթներից, Ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարությունից և Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման ծրագրից: Նպատակն է հիմնել ռազմարդյունաբերության ոլորտում նոր արտադրություններ:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զենքով և զինամթերքով ապահովումը ավանդաբար

| | |
|---|---|
| | կատարվել է ներկրման հաշվին, ինչը բերել է համարյա 100% կախվածության: Ներկայումս ՀՀ-ում արտադրվում է որոշ տեսակների ուսումնական զինամթերք և հրազենի սահմանափակ տեսականի: Սերիական արտադրվում է միայն ինժեներական զինամթերք: Միևնույն ժամանակ, բարձր տեխնոլոգիական ռազմական տեխնիկայի արտադրության ծավալների աճին զուգահեռ աճում է էլեկտրոնային բաղադրիչների և տպասալիկների պահանջարկը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Զենքի և զինամթերքի արտերկրից մատակարարումների կախվածությունը թուլացնելու համար առաջարկվում է ՀՀում հիմնել՝ գրոհային և դիպուկահար հրացանների, փոքր, միջին և մեծ տրամաչափի փամփուշտների, հրետանային արկերի, հրթիռների, պինդ հրթիռային վառելիքի, էլեկտրոնային բաղադրիչների և տպասալիկների արտադրություն:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ-ում կստեղծվեն ռազմարդյունաբերության ոլորտում թվով ավելի շատ կազմակերպություններ, աշխատատեղեր, նոր արտադրանքներ, կնվազի սպառազինության ու ռազմական տեխնիկայի ներկրումներից կախվածությունը: |
| 313 | **Ռազմական ոլորտում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գիտական մակարդակի բարձրացումը և նորագույն ու բարձր տեխնոլոգիաների խորը ներթափանցումը ռազմարդյունաբերության ոլորտ և դրա շնորհիվ հայրենական ռազմական ապրանքների մրցունակության կտրուկ բարձրացումը միջազգային շուկաներում՝ հաշվի առնելով հակամարտություններում տեխնոլոգիական բաղադրիչների կշռի սրընթաց ավելացումը**<br><br>**<u>313.1 Հատուկ ԳՀՓԿ աշխատանքների ծավալի ավելացում, գիտակրթական համակարգի ներգրավում ԳՀՓԿ աշխատանքների կատարմանը, երկակի նշանակության ծրագրերի ֆինանսավորման ավելացում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 7.1 կետի 17-րդ պարբերության պահանջից, Զինված ուժերի զարգացման ծրագրից, Ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարությունից և Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման ծրագրից: Նպատակն է ավելացնել ռազմական ոլորտում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների ծավալը և բարձրացնել աշխատանքների գիտական մակարդակը, հաշվի առնելով ժամանակակից հակամարտություններում տեխնոլոգիական բաղադրիչների կշռի սրընթաց ավելացումը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ռազմական ոլորտում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների ներկայիս ֆինանսավորման ծավալը զգալիորեն զիջում է անմիջական մրցակիցներին և թույլ չի տալիս մշակել և արտադրության պատրաստել մրցունակ և հեռանկարային արտադրատեսակներ: Միևնույն ժամանակ պետական գնումների ներկայիս ընթացակարգերը խիստ սահմանափակում են ռիսկային հետազոտությունների պետական ֆինանսավորման հնարավորությունները:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ավելացնել հատուկ ԳՀՓԿ աշխատանքների ծավալը, ԳՀՓԿ աշխատանքների կատարմանը ներգրավում գիտակրթական համակարգի հաստատությունները, գիտահետազոտական ինստիտուտներում հեռանկարային հետազոտական աշխատանքներ իրականացնել:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հատուկ ԳՀՓԿ աշխատանքների գիտական մակարդակի բարձրացում, ժամանակակից և ապագայի հակամարտությունների պահանջներին համապատասխան սպառազինության և ռազմական տեխնիկայի նմուշների մշակումներ: |
| 314 | **Ռազմարդյունաբերության ոլորտ երիտասարդ, տաղանդավոր մասնագետների ներգրավման նպատակով հետամուտ լինել ռազմարդյունաբերության և գիտակրթական համակարգի հետ համագործակցության հետագա զարգացմանը**<br><br>**<u>314.1 Նպատակային կրթական և գիտական ծրագրերի մշակում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ |

| | |
|---|---|
| | հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 7. 1 կետի 18-րդ պարբերության պահանջից, Ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարությունից և Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման ծրագրից: Նպատակն է՝ նպատակային կրթական և գիտական ծրագրերի հիմնման, ասպիրանտական և մագիստրական թեմաների կատարման միջոցով խթանել ռազմատեխնիկական մասնագիտություններով երիտասարդ մասնագետների պատրաստությունը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ռազմարդյունաբերական համալիրում կա գիտական պատրաստությամբ մասնագետների պակաս, հետևաբար անհրաժեշտ է զարգացնել գիտակրթական համալիրի հետ համագործակցությունը և աջակցել ռազմատեխնիկական մասնագիտություններով երիտասարդ մասնագետների պատրաստությանը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է հիմնել նպատակային կրթական և գիտական ծրագրեր, պետական պատվերի շրջանակում կատարել ռազմատեխնիկական ուղղվածության ասպիրանտական և մագիստրական թեմաներ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կապահովվի ռազմարդյունաբերության ոլորտ ավելի մեծ թվով երիտասարդ մասնագետների ներհոսքը, ինչը կբերի աշխատանքի արդյունավետության և որակի բարձրացմանը, նոր տեխնոլոգիաների և արտադրատեսակների յուրացմանը: |
| 315 | **Պաշտպանական ոլորտում գոյություն ունեցող խնդիրների ուսումնասիրության և առաջադրանքների ձևավորման նպատակով ռազմարդյունաբերության (ռազմատեխնիկական ԳՀԻ) ինստիտուտի ստեղծում**<br><br>**315.1 Նոր ստեղծվող սպառազինության և ռազմական տեխնիկայի մարտավարատեխնիկական բնութագրերի մշակում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 7. 1 կետի 19-րդ պարբերության պահանջից, Պաշտպանական ոլորտում գոյություն ունեցող խնդիրների ուսումնասիրության և առաջադրանքների ձևավորման նպատակով ռազմարդյունաբերության (ռազմատեխնիկական ԳՀԻ) ինստիտուտի ստեղծումը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում բացակայում է պաշտպանական ոլորտում գոյություն ունեցող խնդիրների ուսումնասիրման և առաջադրանքների ձևավորման մասնագիտացված հետազոտական հաստատություն, որտեղ բացի թվարկվածներից հնարավոր կլինի նաև մշակել նոր ստեղծվող սպառազինության և ռազմական տեխնիկայի բնութագրերը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Բարձրացված խնդիրների լուծման համար նախատեսվում է նոր ստեծղվող սպառազինության և ռազմական տեխնիկայի մարտավարատեխնիկական բնութագրերի մշակում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում, կբարձրանա զինված ուժերի մարտունակությունը, կմշակվի ժամանակակից պատերազմների պահանջներին համապատասխան սպառազինության և ռազմական տեխնիկայի մարտավարատեխնիկական բնութագրերը: |
| 316 | **Հետամուտ լինել հայկական ռազմարդյունաբերական արտադրանքի առաջխաղացմանը և վաճառքի ռազմավարության մշակմանն ու իրականացմանը**<br><br>**316.1 Ռազմատեխնիկական ցուցահանդեսների մասնակցություն**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 7.1-րդ կետի 20-րդ պարբերության պահանջներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հետամուտ լինել հայկական ռազմարդյունաբերական արտադրանքի առաջխաղացմանը և վաճառքի ռազմավարության մշակմանն ու իրականացմանը: |

| | |
|---|---|
| | **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ռազմատեխնիկական ցուցահանդեսների մասնակցություն, արտահանման գործակալության ստեղծում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայկական ռազմարդյունաբերության արդյունքի արտահանում, ոլորտի ընկերությունների տնտեսական հզորացում և մրցունակության բարձրացում: |
| 317 | **Տնտեսության զորահավաքային նախապատրաստության ոլորտում պետական ու տեղական մարմինների, կազմակերպությունների համաձայնեցված գործունեության, ինչպես նաև պլանավորման և վերահսկման մեխանիզմների արդյունավետության բարձրացում**<br><br>**317.1 Հաստատել զորահավաքային առաջադրանքները և պահանջարկները, ստեղծել զորահավաքային առաջադրանքների կատարման համար զորահավաքային պահուստում անհրաժեշտ ապրանքների չնվազեցվող պաշարներ, հաստատել ամրագրման ենթակա մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 7.1-րդ կետի պահանջներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Տնտեսության զորահավաքային նախապատրաստության ոլորտում պետական ու տեղական մարմինների, կազմակերպությունների համաձայնեցված գործունեության, ինչպես նաև պլանավորման և վերահսկման մեխանիզմների արդյունավետության բարձրացում:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաստատել զորահավաքային առաջադրանքները և պահանջարկները, ստեղծել զորահավաքային առաջադրանքների կատարման համար զորահավաքային պահուստում անհրաժեշտ ապրանքների չնվազեցվող պաշարներ, հաստատել ամրագրման ենթակա մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ընկերությունների կողմից զորահավաքային առաջադրանքների կատարման արդյունավետության և ոլորտում փոխգործակցության մակարդակի բարձրացում: |
| 318 | **Բարձր տեխնոլոգիաների բիզնես միջավայրի բարելավում**<br><br>**318.1 Բարձր տեխնոլոգիական ընկերությունների հետ քննարկումների իրականացում՝ առկա խնդիրների բացահայտման համար**<br><br>**318.2 Բարձր տեխնոլոգիաների բիզնես միջավայրի բարելավման ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի հաստատմանը**<br><br>**1. 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 7.1 կետի պահանջներից:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նկատի ունենալով, որ բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հետ զուգահեռ պարբերաբար խնդիրներ են առաջանում, կապված բիզնես գործընթացների իրականացման առանձնահատկությունների հետ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նման խնդիրների վերհանման և լուծման նպատակով անհրաժեշտություն է առաջանում մշակել համապարփակ ծրագիր, որի արդյունքում կխեշտացվի ոլորտում բիզնեսի ստեղծման և դրա հետագա զարգացման համար:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում կմաշկվեն համապատասխան միջոցառումների ծրագիր և կիրականացվեն բիզնես միջավայրի բարելավ,մանը ուղղված անհրաժեշտ միջոցառումներ: |

**319** **Տիեզերական գործունեության կանոնակարգում**

**319.1 «Տիեզերական գործունեության մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող այլ օրենքների նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 7.2-րդ կետի 11-րդ պարբերության պահանջներից: Ժամանակակից աշխարհում տեխնոլոգիաների զարգացումը, մասնավորապես՝ տիեզերական տարածությունում առկա տիեզերական օբյեկտների միջոցով մի շարք գործառույթների իրականացումը առաջ է բերել այդ ոլորտի ձևակերպման, դրա հստակեցման, հսկողության ամրագրման, իրականացման համար օրենսդրական կարգավորումներ մշակելու անհրաժեշտություն: Ներկայումս տիեզերական գործունեությունը կանոնակարգող իրավական որևէ կարգավորում գոյություն չունի:

Տիեզերական արդյունաբերության համաշխարհային շուկայի ծավալները կազմում են տարեկան մոտավորապես 270 մլրդ ԱՄՆ դոլար: Հայաստանի Հանրապետությունում տիեզերական արդյունաբերություն, որպես այդպիսին, գոյություն չունի, չկան կազմակերպություններ, որոնք թողարկում են տիեզերական ոլորտին առնչվող արտադրանք, կամ մատուցում համապատասխան ծառայություններ: Հետևաբար, տիեզերական արդյունաբերության ոլորտից ՀՀ բյուջե է մուտքագրվում 0 (զրո) ՀՀ դրամ:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Տիեզերական զարգացած արդյունաբերություն ունեցող երկրներում առկա է մեծ մրցակցություն մասնավոր ընկերությունների միջև: Նշված ընկերությունները որոնում են ազատական և մեղմ հարկային դաշտ ունեցող նոր երկրներ, որտեղ կարող են գործունեություն ծավալել: Այն երկրները, որոնք խնդիր են դնում զարգացնել տիեզերական արդյունաբերությունը սեփական տարածքում օրենսդրական փոփոխություններ են կատարել ներպետական օրենսդրության մեջ կամ ներկայումս գտնվում են այդ գործընթացում: Օրինակ՝ Եգիպտոսը, Թուրքիան, Հարավաֆրիկյան հանրապետությունը և այլն:

Միևնույն ժամանակ, նույնիսկ զարգացած արդյունաբերությամբ երկրները փորձում են հարկային արտոնություններ սահմանել տիեզերքի բնագավառում գործունեություն ծավալելու համար, որպեսզի այդ ոլորտում գործող ընկերությունները շարունակեն տնտեսական գործունեություն ծավալել իրենց տարածքում և չփնտրեն նոր, ավելի մեղմ հարկային կարգավորումներով երկրներ, որտեղ կկարողանան ավելի շահավետ գործունեություն ծավալել:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կդառնա տիեզերքի բնագավառում գործունեություն ծավալելու համար ամենագրավիչ երկրներից մեկը:

Հարկ է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում տիեզերական ոլորտի ստեղծումը և այդ ոլորտում գործունեության իրականացման խրախուսումը մեծ նշանակություն կարող է ունենալ ոչ միայն նոր աշխատատեղերի, այլ նաև ենթակառուցվածքների ստեղծման տեսանկյունից: Նշվածը հիմք կհանդիսանա, որպեսզի տեսանելի ապագայում Հայաստանի Հանրապետությունում ձևավորվի տիեզերական արդյունավերության ոլորտի մասնագետների (ինժեներներ, կոնստրուկտորներ, մեխանիկներ և այլն) որակյալ սերունդ, ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետությանը իրականացնել սեփական տիեզերական ծրագրեր, այդ թվում՝ տիեզերական տարածք արձակել հայկական տիեզերանավեր և արբանյակներ:

**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Վերոնշյալ ձեռքբերումների, ինչպես նաև տնտեսության, գիտության և տեխնիկայի, պաշտպանության և անվտանգության ամրապնդման, Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցության զարգացման և հետագա ընդլայնման և Հայաստանի Հանրապետության կողմից տիեզերքի խաղաղ օգտագործման համար կա անհրաժեշտություն նշվածը «Տիեզերական գործունեության մասին» օրենքով ամրագրելու համար:

Նշված օրենքով կսահմանվեն տիեզերական գործունեության, տիեզերական տարածքի, տիեզերական օբյեկտի և մի շարք այլ հասկացությունները, նախատեսվում է այդ ոլորտի նպատակները, սկզբունքները, այն իրականացնող մարմինը, հսկողության կարգը և այլն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նպատակահարմար է ունենալ «Տիեզերական գործունեության մասին» օրենք:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունը միացել է ՄԱԿ-ի տիեզերքի խաղաղ օգտագործման հինգ հիմնական համաձայնագրերին.

1. <<Լուսնի և այլ երկնային մարմինների վրա պետությունների գործունեության կարգավորման մասին>> համաձայնագիր ,

| | |
|---|---|
| | 2. <<Տիեզերական տարածություն արձակված օբյեկտների գրանցման մասին>> կոնվենցիա,<br>3. <<Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի եւ այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին>> պայմանագիր<br>4. <<Տիեզերական օբյեկտների կողմից հասցված վնասի համար միջազգային պատասխանատվության մասին>> կոնվենցիա<br>5. <<Տիեզերագնացներին փրկելու, տիեզերագնացների վերադարձի եւ տիեզերական տարածություն արձակված օբյեկտների վերադարձի մասին>> համաձայնագիր: |
| **320** | **Միջազգային զարգացումներին համապատասխան տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի պետական ստանդարտների մշակում, ներդրում և վերահսկողություն՝ միջազգային մրցունակության և համագործակցության խթանման նպատակով**<br><br>**320.1 Միջազգային զարգացումներին համապատասխան տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի պետական ստանդարտների մշակում (պատվիրում)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումը բխում է ՀՀ Ազգային Ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 7.2-րդ կետի 7-րդ պարբերության պահանջներից: Նկատի ունենալով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների աննախադեպ արագ զարգացումները, անհրաժեշտություն է առաջանում Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակին ընդունել ստանդարտներ, որոնք հնարավորություն կընձեռնեն լայնորեն կիրառել նոր սերնդի տեխնոլոգիաները բոլոր ոլորտներում:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործող տեխնոլոգիաների կիրառումը ՀՀ տարածքում իրականացվում է միջազգային և եվրոպական ստանդարտներին համահունչ, սակայն ՀՀ տարածքում դրանց էլ ավելի արդյունավետ կիրառելու համար անհրաժեշտ է համարվում դրանց տեղայնացումը:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նոր ստեղծվող, ինչպես նաև տարբեր երկրներում գործող սակայն դեռևս Հայաստանի Հանրապետությունում չկիրառվող տեխնոլոգիաների և ստանդարտների մոնիթորինգի իրականացում և տեխնոլոգիայի ներդրման որոշման կայացման հետ զուգահեռ անհրաժեշտ ստանսդարտների մշակում: Գործող տեխնոլոգիաների շահագործման ընթացքում, արդեն իսկ արդիականացված սարքավորումներով, ստուգելու և հսկելու նոր ստանդարտի աշխատանքի համապատասխանությունը:<br>**2. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջազգային զարգացումներին համապատասխան՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի պետական ստանդարտների մշակում, ներդրում և վերահսկողություն՝ միջազգային մրցունակության և համագործակցության խթանման նպատակով: Նպաստել, խթանել և կարգավորել Հայաստանի Հանրապետությունում նոր սերնդի տեխնոլոգիաների ներդրմանը և զարգացմանը: |
| **Ֆինանսների նախարարություն** | |
| 321 | **«Պետական ֆինասների կառավարման համակարգի արդիականացում»**<br><br>**321.1 Պետական ֆինանսների կառավարման համակարգի (ՊՖԿՀ) բարեփոխումների ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է Պետական ֆինանսների կառավարման համակարգի զարգացման առաջնահերթությունների վերագնահատման և վերանայման անհրաժեշտությունից՝ ապահովելով փողի դիմաց արժեք, ինչպես նաև երաշխավորելով, որ պետական միջոցները օգտագործվեն օգտավետ, արդյունավետ ու խնայողաբար: Այն բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «8. Պետական ֆինանսների կառավարումը» բաժնից:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** |

| | |
|---|---|
| | ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի նիստի N 42 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարությունը» և բարեփոխումների շրջանակում իրականացվելիք միջոցառումների ծրագիրը:<br>Միաժամանակ 2014թ. Եվրոպական Միության կողմից տրամադրված տեխնիկական աջակցության շրջանակում գնահատվել է 2011-2014թթ. իրականացված միջոցառումները և հիմք ընդունելով գնահատման արդյունքները, ինչպես նաև Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության (ՊԾՖՀ-PEFA) 2016 թվականի փետրվարին ՊԾՖՀ-PEFA քարտուղարության կողմից ընդունված ՊԾՖՀ-2016 նոր շրջանակը, մշակվել և ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրության 15-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշմամբ ընդունվել է Պետական ֆինանսների կառավարման համակարգի (ՊՖԿՀ) բարեփոխումների վերանայված ռազմավարությունը և 2016-2020 թվականներին ՊՖԿՀ բարեփոխումների ոլորտում իրականացվելիք գործողությունների ծրագիրը:<br>Սակայն 2016 թվականի փետրվարին ՊԾՖՀ-PEFA քարտուղարության կողմից ընդունված ՊԾՖՀ-2016 նոր շրջանակում ներառվել են մի շարք նոր կատարողական ցուցանիշներ, որոնք կամ չեն ներառվել ՊՖԿՀ գործողությունների ծրագրում, կամ դրանց իրականացման հետ կապված առկա են որոշ խնդիրներ, որոնք դեռևս լուծված չեն: Մասնավորապես՝ անհարժեշտություն կա վերանայելու Գործողությունների ծրագրի միջոցառումների թիրախները, արդյունքի գնահատման ցուցանիշները և իրականացման ժամկետները:<br>Միաժամանակ ՍԻԳՄԱ-ի փորձագետների խմբի «Հայաստանի հանրային կառավարման համակարգի վերաբերյալ փաստերի ստուգման ելակետային գնահատման զեկույցի» նախագծով «Հանրային ֆինանսների կառավարման» ոլորտի վերաբերյալ կատարված վերլուծությունների և գնահատականների արդյունքում վերջիններիս կողմից ներկայացվել են կարճաժամկետ և երկարաժամկետ առաջարկությունները: Զեկուցի վերջնական տարբերակի ընդունումից հետո կքննարկվի նաև այդ առաջարկությունները ՊՖԿՀ բարեփոխումների ռազմավարության նախագծում ներառելու նպատակահարմարության հարցը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառման իրականացման արդյունքում կվերանայվեն ՊՖԿՀ բարեփոխումների ռազմավարությամբ և Գործողությունների ծրագրով սահմանված նպատակներն ու թիրախները, արդյունքի գնահատման ցուցանիշները և իրականացման ժամկետները, որը հնարավորություն կտա նվազեցնելու ՊՖԿ համակարգի տարբեր հատվածների ցուցանիշների միջև առկա տարբերությունը և հստակեցնելու հետագա աշխատանքների առավել առաջնահերթ ուղղությունները: ՊՖԿՀ բարեփոխումների ռազմավարությամբ կնախատեսվեն նաև միջոցառումներ պետական ծախսերի արդյունավետության և հարկային ոլորտի ռազմավարությունների մշակման ուղղությամբ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՊՖԿՀ բարեփոխումները, որոնք կիրականացվեն 2020-2023 թվականների ընթացքում, կնպաստեն պետական ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ ապահովելով ընթացակարգերի ու մատուցվող ծառայությունների որակը, որը ենթադրում է՝<br>1) ֆիսկալ կարգապահության բարձրացում, որի միջոցով պետք է ապահովի մակրոտնտեսական կայունություն և բյուջետային համակարգի կանխատեսելիության բարձրացում,<br>2) հավաստիացում, որ միջոցները կապակցված են հիմնական քաղաքականությունների հետ և համապատասխանում են գերակայություններին,<br>3) փողի դիմաց արժեքի ապահովում՝ երաշխավորելով, որ միջոցներն օգտագործվեն օգտավետ, արդյունավետ և խնայողաբար,<br>4) հանրային միջոցների օգտագործման շնորհիվ հաշվետվողականության ապահովում: |
| 322 | **Կառավարման տարբեր մակարդակներում պետական ֆինանսների կառավարման հետ կապված գործընթացների ավտոմատացում և գործարքների արդյունավետվության ու թափանցիկության ապահովում (Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (GFMIS/ԿՖԿՏՀ-) ներդրում)**<br><br>322**.1 «Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ)» ներդրման նպատակով ԿՖԿՏՀ տեխնիկական առաջադրանքի նախագծում**<br>322**.2 ԿՖԿՏՀ-ի գնում**<br>322**.3 ԿՖԿՏՀ-ի ներդրում** |

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Պետական ֆինանսների կառավարման համակարգում բարեփոխումների իրականացման գործընթացում առանձնակի կարևորվում է կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ամբողջական ներդրման աշխատանքները: Համակարգի ստեղծման և ներդրման աշխատանքները նախատեսված է իրականացնել Համաշխարհային բանկի (ՀԲ) պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի (PSMP-3) շրջանակներում, որը պայմանավորված է կառավարման տարբեր մակարդակներում պետական ֆինանսների կառավարման հետ կապված գործընթացների ավտոմատացման և գործարքների արդյունավետության ու թափանցիկության ապահոման անհրաժեշտությամբ: ԿՖԿՏՀ-ի ներդրման ընդհանուր նպատակն է պետական հատվածի կազմակերպությունների ամբողջական ֆինանսական տեղեկատվության համախմբման և փոխադարձ ինտեգրման միջոցով՝ պետական հատվածի բարեփոխումների և ֆինանսական համակարգի հաշվառման և հաշվետվողականության գործառույթների, ինչպես նաև հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության, որակի և թափանցիկության բարձրացմանն աջակցումը: Այն բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «8. Պետական ֆինանսների կառավարումը» բաժնից:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ԿՖԿՏՀ ստեղծման և ներդրման նախապատրաստական աշխատանքներին աջակցելու նպատակով Համաշխարհային բանկի կողմից ՌԴ կառավարության «Վստահության հիմնադրամի» միջոցների հաշվին տրամադրված TF 012529 դրամաշնորհի շրջանակում կազմակերպված մրցույթի արդյունքներով ընտրված խորհրդատվական կազմակերպության կողմից մշակվել և ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել ԿՖԿՏՀ-ի մանրամասն տեխնիկական և գործառութային բնութագիրը և դրա հիման վրա իրականացված անհրաժեշտ ֆինանսական միջոցների մանրամասն հաշվարկը: Ծրագիրը իրականացվելու է ՀԲ PSMP-3 ծրագրով նախատեսված վարկային և ՌԴ կառավորության կողմից հատկացվող դրամաշնորհային միջոցների հաշվին:

Հիշյալի շրջանակներում ԿՖԿՏՀ ստեղծման և ներդրման նախապատրաստական աշխատանքներին աջակցելու նպատակով Համաշխարհային բանկի կողմից Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) կառավարության «Վստահության հիմնադրամի» միջոցների հաշվին տրամադրված TF 012529 դրամաշնորհի շրջանակում կազմակերպված մրցույթի արդյունքներով ընտրված խորհրդատվական կազմակերպության կողմից մշակվել և ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել ԿՖԿՏՀ-ի տեխնիկական և գործառութային բնութագիրը և ծրագրի իրականացման նախահաշվային արժեքը:

**1.1 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Միջոցառումների շրջանակներում նախատեսվում է վերանայել և ավարտական տեսքի բերել ԿՖԿՏՀ մրցութային փաստաթուղթը: Կիրականացվի ԿՖԿՏՀ-ի մրցույթի իրականացման փաստաթղթերի ամբողջական փաթեթի կազմում, մրցույթի իրականացում: Կիրականացվի համակարգի փորձարարական թեստավորում (տվյալների փորձնական փոխակերպում և միգրացիա): Կձևավորվեն ԿՖԿՏՀ-ից օգտվողների խմբեր, կկազմվի ուսուցումների ծրագիր և ժամանակացույց, կիրականացվեն ԿՖԿՏՀ-ի օգտվողների ուսուցում:

**2 Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ԿՖԿՏՀ-ն հնարավորություն կընձեռի պետական հատվածի բոլոր մակարդակներում բարելավել ֆինանսական պլանավորման և կառավարման գործընթացները՝ տեղեկատվության և հաշվետվությունների ժամանակին գրանցման և ներկայացման միջոցով:

Համակարգի ներդրման արդյունքում հնարավորություն կընձեռվի պետական կառավարման բոլոր մակարդակներում լիովին ավտոմատացնել և ինտեգրել պետական ֆինանսների կառավարման (այսուհետ՝ ՊՖԿ) գործընթացները, մասնավորապես.

1) բարձրացնել պետական միջոցների օգտագործման արդյունավետությունը,
2) բարելավել բյուջետային գործընթացները՝ ծրագրերի վրա հիմնված պետական բյուջեի կազմման միջոցով,
3) ամրապնդել ներքին հսկողությունը,
4) բարձրացնել ֆինանսական հաշվետվությունների որակը՝ մասնավորապես կառավարության ակտիվների և պարտավորությունների մասով,
5) բարելավել վճարումների ու գնումների գործընթացները և այլն:

323 **Բյուջետային ծրագրերի ծախսերը կազմելու հաշվարկման գործընթացի ավտոմատացում, ծախսակազմման գործընթացի արդյունավետության ապահովում**

**323.1 Բյուջետային ծրագրերի ծախսակազման ավտոմատացված համակարգի փուլային ներդրում**

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Բյուջետային ծրագրերի ծախսակազման ավտոմատացված համակարգի ներդրումը պայմանավորված է պետական բյուջեների ծախսերի կազմման և բյուջետավորման օպտիմալացման նպատակով պետական ծախսերը բյուջետավորելու (համախմբելու) գործընթացների ավտոմատացման և վերջինս պետական կառավարման համակարգում գործող այլ ավտոմատացված համակարգերի հետ ինտեգրելու՝ տեղեկատվության փոխանակման հնարավորություն ստեղծելու անհրաժեշտությամբ: Այն բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «8. Պետական ֆինանսների կառավարումը» բաժնից:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Բյուջետային գործընթացի շրջանակներում ՀՀ պետական բյուջեում արտացոլվող պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի հաշվարկման և ֆինանսական ծրագրավորման աշխատանքներն իրականացվում են համապատասխան պետական մարմինների աշխատակիցների անհատական հաշվարկների հիման վրա, որոնք կատարվում են՝ հիմք ընդունելով բազմաթիվ ելակետային տվյալներ, այդ թվում՝ որոշակի ծախսերի հաշվարկման համար ՀՀ կառավարության առանձին որոշումներով հաստատված նորմատիվային ցուցանիշները, աշխատանքի վարձատրությանն առնչվող առանձին օրենսդրական ակտերով հաստատված կարգավորումները և, վերջապես, հաշվի են առնվում յուրաքանչյուր ծախսին առնչվող այլ ցուցանիշներ: Սակայն բյուջեի կազման հիշյալ գործընթացներում բազմաթիվ գործառույթներ ավտոմատացված չեն, որի արդյունքում բյուջետային ծրագրերի կազմման փուլում մեծանում է բյուջետային հսկողության ռեսուրսատարությունը, մեծանում է սխալների կատարման և խեղումների հավանականությունը, հետագայում ծրագրերը հնարավորություն չեն ունենում ավտոմատ համակցել կատարողական համակարգերի հետ: Վերջինս նվազեցնում է պետական ֆինանսների կառավարման արդյունավետությունը: Հիշյալի շրջանակներում 2018 թվականի ընթացքում իրականացվել է՝

1) ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրմամբ պայմանավորված ծրագրերի կառուցվածքների, ներառյալ ծրագրերի ծախսակազմման կարգի փոփոխություն և վերջնականացում.

2) բոլոր բյուջետային ծրագրերի (սահմանելով յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար մեկ գերատեսչության/պետական մարմնի պատասխանատվության սկզբունք), ինչպես նաև բյուջետային հայտերի կազմման մեթոդաբանության և հայտերի ներկայացման ձևաչափերի վերանայում.

3) մշակվել է պետական ծախսերը կազմելու ավտոմատացված համակարգ, որը ներկայումս գտնվում է փործարկման փուլում:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Բյուջետային ծրագրերի ծախսակազման ավտոմատացված համակարգը հնարավորություն կընձեռնի ստեղծելու ՀՀ պետական բյուջեում պետական իշխանության բոլոր մարմինների տարբեր տեսակի ծախսերի հաշվարկման միասնական մեխանիզմի կիրառման, ամփոփ հաշվետվությունների ավելի արագ դուրսբերման, ամփոփման և վերլուծության միասնական ավտոմատացված համակարգ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Բյուջետային ծրագրերի ծախսակազման ավտոմատացված համակարգի ներդրման արդյունքում կբարձրանա հանրային ֆինանսների կառավարման թափանցիկությունը և հաշվետվողականությունը: Համակարգի ներդրման հետևանքով բյուջետային ծրագրերի ծախսակազման գործընթացում կկրճատվի սխալների կատարման և խեղումների հավանականությունը:

324 **Էլեկտրոնային գնումների համակարգի նոր ծրագրային ապահովման մշակում**

**324.1 Նախաձեռնել նոր ծրագրային ապահովում մշակելու գործընթաց**

**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 8.2 կետի դրույթներից: Միջոցառման նպատակն է գնումների բնագավառում արդար և թափանցիկ էլեկտրոնային գնումների համակարգի ներդրումը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**

Ներկայումս գործում է էլեկտրոնային գնումների համակարգ, որի միջոցով բոլոր պետական կառավարման

| | |
|---|---|
| | մարմինները, քաղաքային համայնքները, պետության կողմից ստեղծված առևտրային կազմակերպությունները և հիմնադրամները իրականացնում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցային և հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնումները: Նկատի ունենալով, որ նշված համակարգը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին՝ անհրաժեշտություն է առաջացել նախաձեռնել էլեկտրոնային գնումների համակարգի նոր ծրագրային ապահովման մշակման գործընթաց:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված միջոցառման արդյունքում նախատեսվում է նախաձեռնել էլեկտրոնային գնումների նոր ծրագրային ապահովման մշակման գործընթաց, որը թույլ կտա նաև ընդլայնել համակարգը շահագործող պատվիրատուների շրջանակը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Սույն միջոցառման ակնկալվող արդյունքը ժամանակակից ֆունկցիոնալ պահանջներին համապատասխան էլեկտրոնային գնումների համակարգի շահագործումն է: |
| 325 | **Պատվիրատուի կողմից հաստատվող գնման հայտերի հրապարակային փորձաքննության համակարգի ներդրում**<br>**325.1 Համապատասխան իրավական ակտի մշակում**<br>**1.Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Սույն միջոցառման նպատակն է հնարավորինս նորմավորել և միասնականացնել գնումները, նկատի ունենալով, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պատվիրատուների միանման կարիքները պետք է բավարարվեն միասնական բնութագրեր ունեցող գնման առարկաներով:<br>**1.1 <u>Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը</u>**<br>«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պատվիրատուների կողմից միանման կարիքները բավարարվում են տարբեր բնութագրեր ունեցող գնման առարկաներով: Նշվածով պայմանավորված՝ նախատեսվում է հնարավորինս նորմավորել և միասնականացնել պատվիրատուների կողմից իրականացվող գնումները:<br>**1.2 Առկա խնդիրների լուծման առաջարկվող միջոցառումները.**<br>Մշակել ՀՀ կառավարության որոշման նախագիծ և այն ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո ապահովել խտրականության բացառման պահանջների պահպանումը:<br>**2. <u>Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը</u>**<br>Պատվիրատուների միանման կարիքները բավարարել միանման բնութագրեր ունեցող գնման առարկաներով: |
| **326** | **Էլեկտրոնային գործիքների միջոցով՝ ավտոմատ եղանակով, նախահաշվային գների որոշման և պլանավորման միասնական համակարգի ներդրում**<br>**326.1 Համապատասխան իրավական ակտի մշակում**<br>**1.Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառումը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 8.2 կետի դրույթներից: Միջոցառման նպատակն է գնումներում միևնույն գնման առարկայի ձեռքբերման համար միևնույն նախահաշվային գների սահմանումը:<br>**1.1 <u>Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը</u>**<br>Ներկայումս պետության միջոցների հաշվին իրականացվող գնումների շրջանակում միևնույն գնման առարկայի ձեռքբերման համար պլանավորվում են տարբեր նախահաշվային գներ, որի արդյունքում ի հայտ են գալիս տվյալ առարկաների՝ շուկայում գործող գներից էական շեղումներ:<br>**1.2.Առկա խնդիրների լուծման առաջարկվող միջոցառումները.**<br>Մշակել ՀՀ կառավարության որոշման նախագիծ և այն ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո էլեկտրոնային գործիքակազմի միջոցով ներդնել՝ ավտոմատ եղանակով նախահաշվային գների որոշման և պլանավորման համակարգ:<br>**2. <u>Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը</u>**<br>Սույն միջոցառման իրականացման արդյունքում գնումներում հնարավոր կլինի նվազեցնել միևնույն գնման առարկայի ձեռքբերման համար հատկացվող ֆինանսական միջոցների՝ գործող գներից էական շեղումները, որ |

| | |
|---|---|
| | կնպաստի ՀՀ պետական բյուջեի միջոցների խնայողություններին: |
| 327 | **Հարկային օրենսդրության բարեփոխում**<br><br>**327.1 Հարկային բարեփոխումների ռազմավարական փաստաթուղթը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ հարկային օրենսդրության կատարելագործման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացվելիք քայլերը, հարկային քաղաքականության և վարչարարության կատարելագործման հիմնական ուղղությունները և սկզբունքները նախանշելու անհրաժեշտությամբ.<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ հարկային օրենսդրության մեջ իրականացվելիք փոփոխությունների համար հիմք են ընդունվում ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված՝ ՀՀ հարկային օրենսդրության փոփոխությունների հիմնական ուղղությունները:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Փորձը ցույց է տալիս, որ ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված՝ ՀՀ հարկային օրենսդրության փոփոխությունների հիմնական ուղղությունները, նախանշելով ՀՀ կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականության առանցքային ուղղությունները, այդուհանդերձ ընդհանրական են և առկա են օրենսդրական փոփոխություններ պահանջող մի շարք այլ ուղղություններ, որոնք արտացոլված չեն ՀՀ կառավարության ծրագրով նախանշված՝ ՀՀ հարկային օրենսդրության կատարելագործման հիմնական ուղղություններում, սակայն հարկային համակարգի հետագա կատարելագործման և գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ ունեն առանցքային նշանակություն: Այդ առումով, անհրաժեշտություն է առաջացել ՀՀ կառավարության կողմից հաստատվող ռազմավարական փաստաթղթի միջոցով նախանշել հարկային օրենսդրության հետագա փոփոխությունների ուղղությունները և սկզբունքները, որոնցով կկոորդինացվեն միջնաժամկետ հեռանկարում հարկային օրենսդրության փոփոխությունները:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է մշակել հարկային համակարգի հետագա փոփոխությունների ուղղությունները և սկզբունքները նախանշող ռազմավարական փաստաթուղթ, որը ուղենիշ կհանդիսանա հարկային համակարգի հետագա փոփոխություններն իրականացնելու առումով: |
| 328 | **Գույքային հարկերի համակարգը կատարելագործելու և անշարժ գույքի հարկը գույքի իրական՝ շուկայական արժեքի հիման վրա հաշվարկելու նպատակով օրենսդրական փոփոխությունների իրականացում**<br><br>**328.1 Անշարժ գույքի հարկման համակարգի կատարելագործման ուղղությամբ հարկային օրենսդրության մեջ կատարվելիք փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների մշակում,**<br>**328.2 ներկայացված առաջարկությունների քննարկում շահագրգիռ պետական կառավարման մարմինների և մասնագիտական-հասարակական կազմակերպությունների հետ,**<br>**328.3 քննարկումների արդյունքների հիման վրա ՀՀ հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում:**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է անշարժ գույքի հարկման համակարգը կատարելագործելու և անշարժ գույքի հարկը գույքի իրական՝ շուկայական արժեքի հիման վրա հաշվարկելու ընթացակարգեր ներդրնելու, այն առավել արդարացի սկզբունքներով գործարկելու և համայնքային բյուջեների հարկային եկամուտների կարևոր աղբյուր դարձնելու անհրաժեշտությամբ (հիմքը՝ ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 8.1-ին՝ «Հարկային համակարգը» մասի 3-րդ պարբերություն): |

| | |
|---|---|
| | **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Անշարժ գույքի հարկման՝ ներկայումս գործող համակարգի շրջանակներում անշարժ գույքի հարկը հաշվարկվում է անշարժ գույքի կադաստրային արժեքների հիման վրա, ինչը գործնականում չի ապահովում հարկման ուղղահայաց արդարության սկզբունքը և չի նպաստում համայնքների ֆինանսական կայունության մակարդակի բարձրացմանը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ կառավարության նշյալ միջոցառմամբ նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել անշարժ գույքի հարկման համակարգի կատարելագործմանն ուղղված օրենքի նախագիծ՝ նպատակ ունենալով անցում կատարել անշարժ գույքի շուկայական արժեքների հիման վրա անշարժ գույքի հարկի հաշվարկմանը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Անշարժ գույքի հարկման համակարգի կատարելագործում և անշարժ գույքի հարկը գույքի իրական՝ շուկայական արժեքի հիման վրա հաշվարկելու ընթացակարգերի ներդրում՝ այն առավել արդարացի սկզբունքներով գործարկելու և համայնքների բյուջեների հարկային եկամուտների կարևոր աղբյուր դարձնելու նպատակով: |
| **329** | **Ակտիվ աշխատանքների իրականացում՝ ուղղված միջազգային հարկային հարաբերություններում ՀՀ ներգրավվածության ապահովմանը և միջազգային առևտրի հարկման լավագույն փորձին համապատասխան հարկային հարաբերությունների կարգավորումների կատարելագործմանը**<br><br>**329.1 Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)՝ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումին անդամակցության շրջանակներում ըստ հարցման կամ ինքնաշխատ կերպով տեղեկատվության փոխանակման համակարգերի ներդրման աշխատանքների համակարգում,**<br>**329.2 Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի ցանցի ընդլայնում և արդիականացում:**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «8. Պետական ֆինանսների կառավարումը» բաժնից:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս տարբեր միջազգային կազմակերպությունների (հատկապես Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության) և միավորումների կողմից բավականին ակտիվ աշխատանքներ և քննարկումներ են իրականացվում՝ ուղղված միջազգային առևտրին վերաբերող կարգավորումների հստակեցմանը, տարբեր պետություններում ձևավորվող հարկման բազաների պաշտպանության ուղղությամբ համապատասխան կարգավորումների ձևավորմանը, հարկման բազաներին վերաբերող տեղեկատվության փոխանակման միասնական համակարգերի ներդրմանը:<br>Խնդիրը կայանում է նրանում, որ անհրաժեշտություն է առաջացել ավելի ակտիվացնել միջազգային հարկային հարաբերություններում ՀՀ ներգրավվածությունը և իրականացնել ակտիվ աշխատանքներ միջազգային առևտրի հարկման մոտեցումներում կատարվող փոփոխությունները ՀՀ հարկային օրենսդրության մեջ տեղայնացնելու համար:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով առաջարկվում է՝<br>ա. ակտիվ աշխատանքներ իրականացնել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)՝ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի անդամակցության շրջանակներում ըստ հարցման կամ ինքնաշխատ կերպով տեղեկատվության փոխանակման համակարգերի ներդրման ուղղությամբ,<br>բ. ակտիվ աշխատանքներ իրականացնել կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի ցանցի ընդլայնման և արդիականացման ուղղությամբ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ապահովել միջազգային հարկային հարաբերություններում ՀՀ ներգրավվածությունը և իրականացնել ակտիվ աշխատանքներ միջազգային առևտրի հարկման մոտեցումներում կատարվող փոփոխությունները ՀՀ հարկային օրենսդրության մեջ տեղայնացնելու համար: |
| **Անշարժ գույքի կադաստրի կոմիտե** | |
| 330 | **Ինտեգրված կադաստրի ստեղծում (330.1-330.10)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ինտեգրված կադաստրի միջոցառման իրականացումը տարածական հիմամբ պետական միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումն է, որը կենտրոնացնում է հանրապետության բնական և մարդածին ռեսուրսների, դրանց իրավական կարգավիճակի և արժեքի վերաբերյալ ամբողջական տեքստային ու գրաֆիկական տվյալները և նպատակաուղղված է ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը:<br>Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա են ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության, վարչապետի որոշումներ, ընդունման համար հիմք են հանդիսանում ՀՀ Սահմանադրության 153-րդ հոդվածը, ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 1-ին բաժնի 4-րդ կետը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության տնտեսության կառավարման մի շարք ոլորտներ կարգավորող օրենսդրությամբ՝ օրենսգրքերով և օրենքներով, համապատասխան կառավարման մարմինների համար սահմանվել են իրենց ոլորտների կառավարման ներքո գտնվող օբյեկտների, գույքի և ռեսուրսների կադաստրների վարման գործառույթներ, սակայն դրանք հիմնականում չեն իրականացվել, իսկ որոշ դեպքերում ստեղծվել են տեղեկատվական ֆոնդեր կամ համակարգեր այլ ոլորտներից՝ անկախ, չհամաձայնեցված, որը լուրջ դժվարություններ է հարուցում պետական համալիր ծրագրերի մշակման և արդյունավետ իրագործման համար:<br>Ակնհայտ է, որ ոլորտային կադաստրների վարումը անհամեմատ ավելի արդյունավետ կարող է լինել՝ դրանք ամբողջական միասնական համակարգի մեջ ընդգրկելով: Այն փոխկապակցված և փոխհամաձայնեցված կադաստրների և ռեգիստրների համալիր է՝ ընդհանուր և միասնական մեթոդական սկզբունքներով և տեղեկատվական հիմքով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ում զգալի աշխատանքներ են կատարվել երկրատեղեկատվական բազային համակարգերի ստեղծման ուղղությամբ: Ժամանակակից թվային տեխնոլոգիաների կիրառմամբ մշակվել են Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգերը: Ձեռք են բերվել մասնագիտական անհրաժեշտ փորձառություն, համապատասխան տեխնիկական միջոցներ, պատրաստվել են կադրեր: Կոմիտեի ստորաբաժանումներում կուտակած տեղեկատվական բանկը և երկրատեղեկատվական համակարգի բազան հնարավորություն են տալիս կազմակերպելու և համակարգելու ոլորտների թեմատիկ կադաստրների տեղեկատվական բանկի ստեղծումը և դրանք ամբողջացնելով՝ ընդգրկել ինտեգրված կադաստրի և երկրատեղեկատվական համակարգի մեջ:<br>Ծրագրի իրականացման համար ստեղծվելու է միջգերատեսչական հանձնաժողով, որում ընդգկվելու են համակատարող մարմիններ՝ Բնապահպանության նախարարությունը, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը, Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, Մշակույթի նախարարությունը, Գյուղատնտեսության նախարարությունը, Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Քաղաքաշինության կոմիտեն, Ոստիկանությունը, Երևանի քաղաքապետարանը: Նշված մարմինների կողմից միջոցառման առնչությամբ կատարման ենթակա գործողությունները կհաստատվեն ստեղծվելիք հանձնաժողովի աշխատակարգով:<br>**Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝**<br>1. Հայեցակարգի մշակում և ներկայացում,<br>2. Միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում և աշխատակարգի հաստատում,<br>3. Տեխնիկական առաջադրանքի կազմում, որը արտացոլված է լինելու նաև ռազմավարական ծրագրում, |

| | |
|---|---|
| | 4. Ինտեգրված կադաստրի ստեղծման ռազմավարական ծրագիր,<br>5. Համակարգի տեխնիկական (սերվերային համակարգ և կառավարման կենտրոն) և ծրագրային ապահովման միջոցների ձեռքբերում և տեղադրում,<br>6. Տարածական տվյալների կառավարման (ԵՏՀ/GIS) մասնագետների վերապատրաստում,<br>7. Գործող իրավական ակտերում փոփոխությունների իրականացում, անհրաժեշտության դեպքում նոր կարգավորումների, այդ թվում՝ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի (ստանդարտների), նախագծերի մշակում,<br>8. Բազային կադաստրի մշակման աշխատանքների իրականացում և գործարկում,<br>9. Պիլոտային ոլորտային կադաստրի ստեղծում և ներդրում,<br>10. Ինտեգրված կադաստրի ոլորտային բաղադրիչների ստեղծում և համակարգի ամբողջական գործարկում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>1) Ինքնաշխատ ամբողջական տեղեկատվական ռեսուրսի ստեղծում՝ փոխկապակցված տեղեկատվական փաստաթղթերի հիման վրա.<br>2) Տարածքների, տնտեսության, բնական պաշարների, բնապահպանական, քաղաքաշինական և այլ գործընթացների արագ և արդյունավետ կառավարում.<br>3) Իրական ժամանակի ռեժիմում, փոխկապակցված, հավաստի տեղեկության միջոցով իրավիճակի համալիր վերլուծությամբ հիմնավորված որոշումների ընդունում՝ կրճատելով համաձայնեցումների գրավոր ձևերին տրամադրվող ժամանակը.<br>4) Ֆինանսական միջոցների և աշխատանքային ռեսուրսների խնայողություն.<br>5) Հասարակության իրազեկվածության և տեղեկատվության հասանելիության բարձր մակարդակ.<br>6) Նորագույն ինֆորմացիոն տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների ներդրման արագություն և արդյունավետություն: |
| 331 | **Առցանց, ինքնաշխատ, անթուղթ անշարժ գույքի կադաստրի ներդրում (331.1-331.7)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումն է էականորեն պարզեցնել և դյուրացնել կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավորություն ընձեռել դրանցից օգտվել հիմնականում առանց կադաստր վարող մարմին ներկայանալու և հնարավորինս կարճ ժամկետներում հնարավորինս բացառել քաղաքացիների և պաշտոնատար անձանց անմիջական շփումը, ինչպես նաև նվազեցնել կադաստրի աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և հնարավոր դարձնել համակարգի և աշխատակիցների օպտիմալացումը, արդյունքում՝ նվազեցնել համակարգի պահպանման ծախսերը և ավելացնել եկամուտները:<br>Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա է ՀՀ օրենք, ընդունման համար հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 274-րդ կետը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մշակված և 2012 թվականից ներդրված է ARPIS գրանցման ինքնաշխատ համակարգը: Այն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ է, որը թույլ է տալիս դիմումների ընդունումից սկսած մինչև դրանց հիման վրա կազմված իրավունքների պետական գրանցման վկայականների և տեղեկատվության տրամադրման տեղեկանքների տրամադրումն իրականացնել էլեկտրոնային եղանակով:<br>Կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազա և գրանցման ինքնաշխատ համակարգ ունենալը հնարավորություն ընձեռեց անցնելու էլեկտրոնային եղանակով իրավունքների պետական գրանցմանը և տեղեկատվության տրամադրմանը: Արդյունքում դյուրինացվեց կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավոր եղավ մատուցել էլեկտրոնային առցանց ծառայություններ:<br>Չնայած վերոգրյալին՝ տեղեկատվության տրամադրման գործընթացը հիմնականում իրականացվում է մարդկային մեծ ռեսուրսների ներգրավմամբ, քանի որ էլեկտրոնային շտեմարաններում առկա է տվյալների ամբողջականացման խնդիր, և անհրաժեշտ է յուրաքանչյուր դիմումի ժամանակ հավաստիանալ հարցվող տեղեկատվության ճիշտ և ամբողջական լինելու մեջ: Տրամադրվող տեղեկանքները պետք է լինեն թղթային, քանի որ հավաստվում են սպասարկման գրասենյակների կնիքով:<br>2018 թվականից ներդրվել է առցանց՝ ինքնաշխատ եղանակով որոշ տեղեկատվությունների տրամադրման |

| | |
|---|---|
| | համակարգ, սակայն այն դեռևս չունի բավարար պահանջարկ տրամադրվող տեղեկությունների սահմանափակ լինելու, ինչպես նաև տրամադրված տեղեկանքները կնքված չլինելու պատճառով: Տվյալ ծառայության զարգացմանը խոչընդոտում է նաև քաղաքացիների ոչ իրազեկված լինելու հանգամանքը ևս:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրները լուծելու նպատակով նախատեսվում է ընդլայնել առցանց տրամադրվող տեղեկությունների տեսակները, մշակել նոր տեղեկատվական փաթեթներ, ստեղծել տեղեկատվության որոնման առցանց գործող տարածական հարթակ, վերացնել տրամադրվող ավարտական փաստաթղթի կնքված լինելու պահանջը, զարգացնել էլեկտրոնային ծառայությունների մատուցման համար նախատեսված www.e-cadastre.am կայքը, քաղաքացիներին, անշարժ գույքի շուկայի մասնակիցներին իրազեկել ներդրված նոր ծառայությունների և դրանցից հարմարավետ օգտվելու տարբերակների մասին:<br>Միջոցառման համակատարող հանդիսացող Տարածքային կառավարման և զարգացման նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Ոստիկանության կողմից կատարման ենթակա գործողությունները կսահմանվեն աշխատանքային խումբ ստեղծելու միջոցով:<br>**Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝**<br>1. Օրենսդրական դաշտի կարգավորում, որի արդյունքում կիրականացվեն իրավունքների գրանցման ու տեղեկատվության տրամադրման բարեփոխումներ գրանցման, տարածական տվյալների և արխիվի ոլորտներում,<br>2. Էլեկտրոնային համակարգի տեքստային տվյալների բազայում գործող և դադարած իրավունքների սուբյեկտների ճշգրտում և նույնականացում, այդ թվում համայնքներում և այլ պետական մարմիններում առկա տեղեկատվության հիման վրա,<br>3. Կադաստրային գործերի ամբողջական և վերջնական թվայնացումը տեքստային (OCR) տեսաներածմամբ,<br>4. Կադաստրային հաշվառման առցանց գրասենյակի գործարկում,<br>5. Առցանց տրամադրվող տեղեկությունների տեսակների ընդլայնում՝ նոր տեղեկատվական փաթեթների մշակում, տեղեկատվության որոնման առցանց գործող տարածական հարթակի ստեղծում,<br>6. Յուրաքանչյուր պետական մարմնի պահանջմունքներին համապատասխանող առցանց մատուցվող ծառայության ներդրում,<br>7. Կադաստրի կոմիտեի կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման համար նախատեսված պաշտոնական կայքի զարգացում, քաղաքացիներին, անշարժ գույքի շուկայի մասնակիցներին իրազեկում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է հնարավորինս բացառել քաղաքացիների և պաշտոնատար անձանց անմիջական շփումը, նվազեցնել այդ շփումներով պայմանավորված առկա կոռուպցիոն ռիսկերը, բարելավել ՀՀ դիրքը «Գործարարությամբ զբաղվելը զեկույց»-ում, էականորեն պարզեցնել տեղեկատվության ձեռքբերման ընթացակարգը, դիմումներ ներկայացնել, ավարտական փաստաթղթեր ստանալ առանց կադաստր վարող մարմին անձամբ այցելելու, կրճատել տեղեկատվության տրամադրման ժամկետները, ընդհուպ հարցումից հետո անմիջապես ստանալու հնարավորությամբ, նվազեցնել տարածքային ստորաբաժանումների և սպասարկման գրասենյակների աշխատակիցների ծանրաբեռնվածությունը, հնարավորություն ընձեռել համակարգի և աշխատակիցների օպտիմալացման, էականորեն կրճատել համակարգի պահպանման ծախսերը և ավելացնել կոմիտեի եկամուտները: |
| 332 | **Հայաստանի Հանրապետության հասցեների միասնական ռեգիստրի ստեղծում և ներդրում (332.1-332.5)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հանրապետությունում հասցեների ճշգրիտ և լիարժեք ռեեստր ստեղծելու համար անհրաժեշտ է ունենալ հավաստի, չկրկնվող և ամբողջական տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության հասցեների վերաբերյալ: Նշված արդյունքին հասնելու համար պետք է հստակեցնել և պարզեցնել բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման և անվանափոխման գրանցման և անշարժ գույքի համարակալման, հասցեավորման ընթացակարգերը՝ դրանք դարձնելով համակարգված և ինքնաշխատ: Անհրաժեշտ է ապահովել անշարժ գույքի հասցեների վերաբերյալ տեղեկատվության միատեսակությունը պետական մարմինների գործառույթների իրականացման գործում՝ բացառելով անշարժ գույքի տարբեր օբյեկտների նույնական հասցեների առկայությունը: |

| | |
|---|---|
| | Միջոցառման իրականացման համար ընդունման ենթակա է ՀՀ կառավարության որոշում, ընդունման համար հիմք են հանդիսանում ՀՀ Սահմանադրության 153-րդ հոդվածը, ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 02/24.4/42655-18 հանձնարարականը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման և անվանափոխման մասին որոշումների ընդունումը և անշարժ գույքի հասցեավորումն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, իսկ հասցեների գրանցումը, ռեեստրի վարումը՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից: Գործառույթների՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև բաժանված լինելը ոլորտում առաջացնում է տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքների) և պետական մարմնի միջև տվյալների փոխանակմանն առնչվող մի շարք խնդիրներ, ինչի արդյունքում հասցեների ռեեստրը պարունակում է որոշ դեպքերում սխալ և թերի տեղեկատվություն, մասնավորապես բազմաթիվ համայնքներում անշարժ գույքի առաջին հասցեավորմանը հաջորդող ժամանակաշրջանում կատարված փոփոխությունները չեն ընդգրկվել հասցեների ռեեստրում և կադաստրային քարտեզներում, քանի որ նոր հասցեավորումներն ու համարակալումները սահմանված կարգով չեն ներկայացվել պետական գրանցման, չեն ներառվել հասցեների ռեեստրում, ինչպես նաև որոշ դեպքերում անվանակոչման լիազոր մարմինների կողմից անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին որոշումները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներին և այլն:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հասցեավորված գույքերի մասով էլեկտրոնային հարթակի ստեղծում, որը հնարավորություն կտա այն հետագայում ինտեգրելու այլ թվային բազաների հետ, այդ թվում՝ ինտեգրված կադաստրին:<br>Միջոցառման համակատարող Տարածքային կառավարման և զարգացման նախարարության և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից իրականացվելիք գործառույթները սահմանված են ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվող հայեցակարգով:<br>**Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝**<br>1. Հասցեների միասնական ռեգիստրի ստեղծման հայեցակարգի մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության հավանության քննարկմանը ներկայացում,<br>2. Հայեցակարգից բխող օրենսդրական փոփոխությունների նախագծերի մշակում,<br>3. Հասցեների միասնական ռեգիստրի և տեղեկատվական համակարգի ստեղծում, երկու համայնքներից հասցեավորված օբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքագրում, մուտքագրում, համակցում կադաստրային քարտեզներին և համակարգի պիլոտային գործարկում,<br>4. Մարզկենտրոններում, քաղաքային համայնքներում համայնքի ղեկավարների հետ հանդիպումների կազմակերպում, հասցեների ռեեստրի ինքնաշխատ տեղեկատվական համակարգից օգտվելու կարգի ներկայացում, մասնագետների վերապատրաստում, ինչպես նաև բոլոր համայնքներից հասցեավորված օբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքագրում, մուտքագրում և համակցում կադաստրային քարտեզներին,<br>5. Հասցեների միասնական ռեգիստրի և հասցեների ռեեստրի ինքնաշխատ տեղեկատվական համակարգի գործարկում՝ ինտեգրված կադաստրի և փոխգործելիության շրջանակներում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգի ընդունումը հիմք կհանդիսանա ոլորտի բարեփոխումների համար, առկա խնդիրներին կտրվեն համապատասխան լուծումներ: Մասնավորապես հասցեների միասնական ռեգիստրի և հասցեների ինքնաշխատ տեղեկատվական համակարգ ստեղծելով և այն կառավարության փոխգործելիության հարթակին համակցելով՝ հասցեների ռեեստրում ներառված տեղեկատվությունն առցանց տարբերակով կթարմացվի և հասցեի անվանափոխման, համարակալման ցանկացած փոփոխություն անմիջապես կարտացոլվի համակարգում և հասանելի կլինի օգտվողների համար: Տեղական ինքնակառավարման մարմինները հնարավորություն կստանան մուտք գործելու համակարգ և ներկայացնելու անշարժ գույքի հասցեավորման կամ համարակալման հայտ, ռեեստրի տեղեկատվությունն ինքնաշխատ ձևով կարտացոլվի կադաստրային, ինչպես նաև առցանց տիրույթում առկա քարտեզներում (Google Maps, Yandex.Map և այլն): |
| 333 | ***Անշարժ գույքի շուկայի զարգացման աջակցություն (334.1-334.3)***<br><br>***1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը*** |

| | |
|---|---|
| | Միջոցառման նպատակը Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի շուկայի զարգացման աջակցությունն է:<br>Միջոցառման իրականացման համար նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջանում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայիս իրավիճակում ուսումնասիրվում է անշարժ գույքի շուկան, սակայն չի կատարվում շուկայի զարգացման վրա ազդող գործոնների համապարփակ և խորը վերլուծություն:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝<br>Գործարքների տեսակների կառուցվածքների, անշարժ գույքի գների, վարձավճարների դինամիկայի և դրանց փոփոխման միտումների վերլուծություններ, ինչպես նաև հանրապետության քաղաքներում անշարժ գույքի գների վրա ազդող ենթակառուցվածքների տեղային ուսումնասիրություններ՝ անշարժ գույքի շուկայի զարգացման վերլուծության կազմման նպատակով: Անշարժ գույքի գործակալների գործունեության կարգավորում, զարգացում և օրենսդրական նախաձեռնությունների մշակում:<br>**Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝**<br>1. Գործարքների տեսակների կառուցվածքների, անշարժ գույքի գների, վարձավճարների դինամիկայի և դրանց փոփոխման միտումների վերլուծությունների, ինչպես նաև հանրապետության քաղաքներում անշարժ գույքի գների վրա ազդող ենթակառուցվածքների տեղային ուսումնասիրություններ,<br>2. Վերլուծության հիման վրա շուկայի զարգացմանը միտված առաջարկությունների ներկայացում,<br>3. Անշարժ գույքի գործակալների գործունեության կարգավորում և զարգացում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Անշարժ գույքի շուկայի զարգացման վրա ազդող գործոնների վերլուծության արդյունքում ակնկալվում է առաջարկների մշակում և ներկայացում օրենսդրական փոփոխությունների համար: |
| 334 | **Հայաստանի Հանրապետության միասնական տարածագնահատման նոր գոտևորման սահմանում և Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի հարկով 2020-2022 և 2023-2025 թվականների հարկման բազաների ձևավորում (334.1-334.3)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետության միասնական տարածագնահատման նոր գոտևորման սահմանումը:<br>Միջոցառման իրականացման համար «Անշարժ գույքի հարկման նպատակով շուկայական գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո անհրաժեշտություն կառաջանա ընդունելու նորմատիվ իրավական ակտեր:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս անշարժ գույքի հարկը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ շենքերի, շինությունների գույքահարկից և հողամասերի հողի հարկից:<br>Շենքերի, շինությունների կադաստրային գնահատությունն իրականացվում է դեռևս 2000-2002 թվականներին անշարժ գույքերի համակարգված դիտարկումների և շուկայական տվյալների վերլուծությունների արդյունքում՝ ըստ անշարժ գույքի շուկայական մոտեցումների հիման վրա մշակված կարգերի (բանաձև-հաշվարկների հիման վրա): Շենքերի, շինությունների կադաստրային գնահատման գործընթացը ներկայումս կարգավորվում է 2002 թվականին ընդունված «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով, և շինությունների կադաստրային արժեքների բանաձև-հաշվարկներում գնագոյացման գործոններ են հանդիսանում 2002 թվականի դրությամբ շուկայական մեխանիզմների հիման վրա վերլուծությունների արդյունքում ձևավորված չափորոշիչները, մասնավորապես շինությունների տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցները հաստատված են ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ: Արդյունքում՝ նշված գնագոյացման գործոնները չեն արտացոլում ներկայիս անշաժ գույքի շուկայի իրական պատկերը:<br>Ինչ վերաբերում է հողամասերի կադաստրային գնահատմանը, ապա ներկայումս դրանք գնահատվում են ՀՀ կառավարության 1994, 1997, 2002, 2003 թվականներին տարբեր որոշումներով սահմանված կարգերով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** |

| | |
|---|---|
| | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝<br>1) Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքներում անշարժ գույքի շուկայական գնահատություններ.<br>2) Անշարժ գույքի շուկայական գնահատությունների տվյալների և ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից կատարված վերջին 5 տարիների փաստացի գործարքների պայմանագրային գների, ինչպես նաև անշարժ գույքի առաջարկի շուկայի տվյալների վերլուծություններ.<br>3) Պայմանագրային և գնահատված գների անցկացում (մուտքագրում) քարտեզների վրա, գնային գոտիների առանձնացում, գոտուց գոտի անցման գործակիցների, առանձնացված գնային գոտիների նկարագրում, բազային արժեքների որոշում:<br>**Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝**<br>1. Հայաստանի Հանրապետության միասնական տարածագնահատման նոր գոտևորման սահմանմամբ և «Անշարժ գույքի հարկման նպատակով շուկայական գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պայմանավորված միջոցառումներ,<br>2. Հայաստանի Հանրապետության հողերի և դրանց բարելավումների (շինությունների) գնահատումներ (վերագնահատումներ) և դրանց վերաբերյալ տեղեկությունների (2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով) տեղադրում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կայքէջում,<br>3. Հայաստանի Հանրապետության հողերի և դրանց բարելավումների (շինությունների) գնահատումներ (վերագնահատումներ) և դրանց վերաբերյալ տեղեկությունների (2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով) տեղադրում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կայքէջում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ՀՀ կառավարության որոշմամբ կսահմանվեն Հայաստանի Հանրապետության հողերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի) գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցներն ու սահմանները, և որոշմամբ սահմանված գները հիմք կհանդիսանան պետության և համայնքային սեփականությանը պատկանող հողամասերն օտարելու, ինչպես նաև վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքերում՝ վաճառքի կամ մեկնարկային նվազագույն գների հաշվարկման համար:<br>Միջոցառման իրականացումը հիմք կհանդիսանա նաև Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի միասնական հարկման համակարգի ներդրման համար, և կոմիտեի կողմից ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացված «Անշարժ գույքի հարկման նպատակով շուկայական գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո սույն միջոցառման արդյունքում ձևավորված համապատասխան տվյալների հիման վրա ՀՀ կառավարության որոշմամբ կսահմանվեն անշարժ գույքի հարկման նպատակով շուկայական գնահատման մեթոդաբանությունը, հողամասի 1 քառակուսի մետր մակերեսի բազային արժեքը, շինությունների բազային արժեքները, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները, շինությունների քանակական և որակական բնութագրիչների գործակիցներն ու մեծությունները, ինչը հնարավորություն կընձեռի, Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի հարկով արդարացի հարկման մեխանիզմներ ներդնելու, կապահովի անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվությունը, կխթանի պարապուրդում գտնվող գույքի մասնակցությունը տնտեսությունում ավելացված արժեքի ստեղծման գործընթացում:<br>Կձևավորվեն Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի՝ հողամասերի և (կամ) դրանց բարելավումների (շինությունների) 2020-2022 թվականների հարկման բազաները, ինչը տեղական ինքնակառավարման մարմիններին հնարավորություն կտա հաշվառելու և իրականացնելու 2020-2022, 2023-2025 թվականների անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը: |
| 335 | **Հայաստանի Հանրապետության տարածքի երկրատեղեկատվական համակարգերի բազային շերտերի թարմացում» (335.1-335.3)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 86-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ ՀՀ մասշտաբային շարքի տեղագրական քարտեզները արդիականացնելու նպատակով իրականացվելու է նոր առաջացած տարածական տվյալների և տեղագրական տարրեր պարունակող օբյեկտների տեղադրում տեղագրական քարտեզների վրա: Այս աշխատանքները լինելու են շարունակական: Միաժամանակ անհրաժեշտ է |

ՀՀ ամբողջ տարածքի արդեն իսկ ստեղծված թվային քարտեզները տեղափոխել ArcGis ծրագրային փաթեթ:

Միջոցառման իրականացման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջներին բավարարող բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծումն է, որն անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների վերաբերյալ տվյալների (ինչպես քարտեզագրական, այնպես էլ տեքստային) պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

Հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ունենալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն ՀՀ և նրա առանձին վարչատարածքային միավորների տնտեսության վիճակի ու բնական ռեսուրսների, այդ թվում՝ հողային, ջրային, անտառային ռեսուրսների, օգտակար հանածոների, տնտեսական զարգացման, արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների, անշարժ գույքի, բնակչության տեղաբաշխման, ճանապարհային ցանցի ու ենթակառուցվածքների այլ տարրերի, էկոլոգիական վիճակի վերաբերյալ:

Միջոցառման իրականացման համար իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ պետական մասշտաբային շարքի քարտեզները՝ տեղափոխված ԵՏՀ միջավայր, հիմք են հանդիսանում գերատեսչական տարբեր ոլորտների (քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերության, կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության և այլն) խնդիրների լուծման նպատակով ստեղծվելիք քարտեզագրական նյութերի համար:

Նորվեգական դրամաշնորհով 2014 թվականին նախատեսվել և իրականացվել է ՀՀ տարածքի օդալուսանկարահանում՝ 10 ppm թույլատրելիությամբ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների համար 20 ppm թույլատրելիությամբ՝ և մնացած քաղաքների ու բնակավայրերի հարակից տարածքների համար՝ 1:2000 մասշտաբի օրթոֆոտոհատակագծերի ստեղծման նպատակով:

2013 թվականից մասշտաբային շարքի բոլոր տեղագրական քարտեզները տեղափոխվում են ArcGIS միջավայր, իսկ 2015 թվականից ՀՀ քաղաքների տեղագրական հատակագծերը արդեն իսկ ստեղծվում են ԵՏՀ միջավայրում:

Այս ուղղությամբ 2005-2012 թվականներին Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում իրականացվել են բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներ, որոնց հիմնական նպատակն աշխարհագրական անվանումների, հողային ֆոնդի, անշարժ գույքի նպատակային, գործառնական նշանակության, հողատեսքերի, ջրագրության, ռելիեֆի, գծային ենթակառուցվածքների օբյեկտների մասին քարտեզագրական և տեքստային տվյալների տեղեկատվական բանկի ստեղծումն ու կառավարումն էր: Ֆինանսավորման առկայության դեպքում այս նյութերը ենթակա են թարմացման:

2016-2017 թվականներին ավարտվել են Գյումրի և Վանաձոր քաղաքների, իսկ 2017-2018 թվականներին՝ Սևան և Սպիտակ քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի ապահովումն է նոր օրթոֆոտոհատակագծերով, որոնց կիրառմամբ ստեղծվող քարտեզները անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

Պետական մակարդակով երկրատեղեկատվական համակարգերի ստեղծումը և ներդնումը թույլ կտա բացառել ոչ բավարար հիմնավորում ունեցող որոշումների ընդունումը և անցնել պետական կառավարման որակապես նոր մակարդակի:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառում ժամանակակից երկրատեղեկատվական համակարգի օգտագործումը կնպաստի՝

Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների տնտեսական ծրագրերի արդյունավետ մշակմանը,

Ա. կառավարման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման և մշակման ստանդարտացման աստիճանի բարձրացմանը,

| | |
|---|---|
| | Բ. տնտեսության տարբեր ոլորտներում օգտագործվող տարածական տեղեկատվության անհարկի կրկնօրինակման և տվյալների հակասականության բացառմանը,<br>Գ. տարածական տվյալների ստեղծման գործընթացի հեշտացմանը, օպերատիվության բարձրացմանը և ծախսերի նվազեցմանը,<br>Դ. տարածական տվյալների մատչելիության ապահովմանը,<br>հանրության համար տեղեկատվության հասանելիության ապահովմանը,<br>Ե. տվյալների ամբողջականության, հավաստիության, ճշտության ստուգման ներքին մեխանիզմների մշակմանը,<br>Զ. տարածական տվյալների արդիականության և անընդհատության ապահովմանը:<br>Միջոցառման համակատարող Տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Վաղարշապատի համայնքապետարանի գործողությունները կսահմանվեն համատեղ աշխատանքային խումբ ստեղծվելու արդյունքում:<br>**Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝**<br>1. Հանրապետության տարածքի օդալուսանկարահանում, օրթոֆոտոհատակագծերի և թվային բարձունքային մոդելի ստեղծման աշխատանքներ,<br>2. Վաղարշապատ քաղաքի պիլոտային քարտեզագրական հենքի ստեղծման աշխատանքներ,<br>3. Երկրատեղեկատվական համակարգում Հայաստանի Հանրապետության քաղաքների քարտեզագրական հենքի ստեղծման աշխատանքներ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Այս աշխատանքների իրականացման արդյունքում նախատեսվում է ունենալ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի օրթոֆոտոհատակագծերի և թվային բարձունքային մոդելի թարմացված ժամանակագրական շարք, Վաղարշապատ քաղաքի տարածական տվյալների բազա և քարտեզագրական հենք, Հայաստանի Հանրապետության քաղաքների քարտեզագրական հենքի թարմացված ժամանակագրական շարք: |
| 336 | **«Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի (ստանդարտի) մշակում» (336.1-336.2)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Տարածական տվյալների ենթակառուցվածքը (ՏՏԵ) տեխնոլոգիաների, իրավական կարգավորումների, ստանդարտների, մարդկային ռեսուրսների և հարակից գործունեությունների համակարգ է, որն անհրաժեշտ է տարածական տվյաների ստեղծումը, հավաքագրումը, պահպանումը, մշակումը, տարածումը և օգտագործումը արդյունավետ և ճկուն դարձնելու համար:<br>Միջոցառման նպատակն է ստեղծել Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածք (ստանդարտ), որը կուղղորդի տարածական տվյալների հետ առնչվող բոլոր շահագրգիռ կողմերին:<br>Միջոցառման իրականացման համար նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջանում հիմքը՝ «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում մինչ այժմ ստեղծված չի եղել ազգային ՏՏԵ, ինչը տարածական տվյալների հետ առնչվող անհատների և կազմակերպությունների անհամաձայնեցված գործողությունների պատճառ է դարձել:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մշակվելիք ստանդարտների շրջանակներում կհստակեցվեն բոլոր այն մոտեցումները, որոնք անհրաժեշտ են տարածական տվյալների ստեղծման, պահպանման և տարածման համար: Կսահմանվեն պահանջներ որակի ապահովման համար, և կստեղծվի մետատվյալների ալբոմ:<br>**Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝**<br>1. Հայաստանի Հանրապետության տարածական տվյալների՝ պետական, ճյուղային, տարածքային և համայնքային, ինչպես նաև մետատվյալների բանկերի վերաբերյալ նորմատիվ-տեխնիկական և իրավական փաստաթղթերի մշակում և արդիականացում,<br>2. ԵՄ տարածական տվյալներին վերաբերող INSPIRE դիրեկտիվների տեղայնացում և ներդաշնակեցում ՀՀ գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտներում գործող նորմատիվ-տեխնիկական և իրավական փաստաթղթերին:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում կստեղծվի Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի մշակման և ներդրման համար անհրաժեշտ իրավական կարգավորումների և ստանդարտների փաթեթ: |

| | |
|---|---|
| 337 | **Անշարժ գույքի գրանցման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով կառուցվածքային բարեփոխումների իրականացում (337.1-337.5)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համակարգում գործող վեց տարածքային ստորաբաժանումների գործառույթների ներառմամբ 3 հիմնական, միմյանցից տարանջատված ուղղություններում և գործող 40 սպասարկման գրասենյակների վերակազմակերպմամբ մարզային գրասենյակների, որի նպատակն է կոռուպցիոն ռիսկերի բացառումը և ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացումը:<br>Միջոցառման իրականացումը նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կոմիտեի համակարգում ներկայումս գործում է 4 տարածքային ստորաբաժանում, որից 1-ը՝ Երևանում (Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում), 3-ը՝ մարզերում (Շիրակ, Լոռի, Սյունիք) և 40 սպասարկման գրասենյակ, որից 3-ը՝ Երևանում, 37-ը՝ բոլոր 10 մարզերում, որոնց պահպանության ու շահագործման ծախսերն իրականացվում են կոմիտեի միջոցների հաշվին, և հաստիքների որոշակի քանակի անհրաժեշտություն է առաջանում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Բարեփոխումների արդյունքում նախատեսվում է 6 ստորաբաժանումների գործառույթները ներառել երեք միասնական ուղղությունների մեջ ու դրանք տեղակայման առումով տարանջատել միմյանցից, իսկ մարզերի տարբեր համայնքներում գործող սպասարկման գրասենյակները վերակազմակերպել մարզային կառուցվածքների՝ միաժամանակ աջակցելով այլ կառույցների կողմից (նոտար, բանկեր և այլն) նշված գրասենյակների գործառույթների իրականացմանը:<br>**Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝**<br>1. Տարածքային ստորաբաժանումների փոխարեն գործառնական ստորաբաժանումների ստեղծում, մասնավորապես անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման ստեղծում,<br>2. Տարածական տվյալների կառավարման ստորաբաժանման ստեղծում,<br>3. Կադաստրային գործերի (արխիվի) համար նախատեսված նոր ստորաբաժանման ամբողջական արխիվային շենքի կառուցում և շահագործում,<br>4. Կադաստրային քարտեզների ուղղման հանձնաժողովի ստեղծում,<br>5. Առկա և նախատեսվող ծանրաբեռնվածությունների հիման վրա սպասարկման գրասենյակների ցանցի վերանայում, վերադասավորում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կոմիտեի համակարգում գործող տարածքային մարմինների գործառույթների վերափոխում, օպտիմալացում, ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի բացառում: |
| 338 | **Հողային հարաբերությունների կարգավորումների պարզեցում (338.1)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից 5-ամյա միջոցառումներից բխող նորմատիվ իրավական ակտերի մշակման, հողային հարաբերությունների պարզեցման և հստակեցման անհրաժեշտությամբ:<br>Ծրագրի համաձայն նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջանում հիմքը՝ ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդված:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ հողային օրենսգրքում հողային ֆոնդը դասակարգված է ըստ 9 նպատակային նշանակությունների: Նպատակային նշանակությունների փոփոխությունները կարգավորվում են մի շարք օրենքներով, կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներով: Յուրաքանչյուր նպատակային նշանակության հողեր ներառում են սահմանափակ քանակի գործառնական նշանակություններ (հողատեսքեր): Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, որևէ նպատակով հողհատկացման, |

| | |
|---|---|
| | կառուցապատման ծրագրերի իրականացման, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում յուրաքանչյուր տարբեր նպատակային և գործառնական նշանակության տարածքների, շինությունների համար հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել հողային օրենսգրքի դասակարգմանը համապատասխան, կամ որևէ կառուցապատման ծրագիր իրականացնելիս անհրաժեշտություն է առաջանում հողամասի տվյալ հատվածի նպատակային և գործառնական նշանակությունը ևս փոփոխել:<br>Հողային օրենսգրքում հողային հարաբերությունների կարգավորման առկա վիճակը առաջացնում է որոշակի շփոթություն, պարունակում է կոռուպցիոն ռիսկեր, ժամանակատար է, քանի որ հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու համար օրենսդրությամբ պահանջվում է տարբեր մարմինների հետ համաձայնեցումներ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հողերի նպատակային և գործառնական նշանակությունների վերախմբավորում՝ նվազեցնելով նպատակային նշանակությունների քանակը:<br>Օրենսդրական և առնչվող նորմատիվ իրավական ակտերի ընդունում:<br>**Կիրականացվի հետևյալ միջոցառումը՝**<br>1. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ իրականացնելու միջոցով հողերի նպատակային նշանակության, հողատեսքերի, գործառնությունների վերախմբավորման իրականացում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>1) հողերի նպատակային նշանակության փոփոխության պահանջի նվազեցում.<br>2) պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, հողի սեփականատերի և հողօգտագործողների համար բյուրոկրատական քաշքշուկների նվազեցում.<br>3) հողային հարաբերությունների կարգավորման համար պահանջվող ժամանակի և միջոցների խնայում: |
| 339 | **Գնահատման ոլորտի բարելավում և ընդլայնում (339.1-339.3)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման նպատակը մատուցվող գնահատման ծառայությունների որակի բարելավումն է:<br>Ծրագրի համաձայն նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջանում (ՀՀ օրենք, ՀՀ կառավարության որոշումներ) հիմքը՝«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում գնահատման գործունեության կանոնակարգումը ներկայումս իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի և «ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման ստանդարտ»-ի հիման վրա: «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2005 թվականի հոկտեմբերի 4-ին: Մինչև 2011 թվականի հունվարի 1-ն անշարժ գույքի գնահատման գործունեությունը լիցենզավորվում էր, իսկ գնահատողը՝ որակավորվում լիազոր մարմնի կողմից: 2010 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունված N ՀՕ-237-Ն օրենքով անշարժ գույքի գնահատման գործունեության լիցենզավորման պահանջը վերացվեց:<br>Վերոնշյալ օրենքի գործողությունը տարածվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող անշարժ գույքի գնահատման գործունեության վրա:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Անշարժ գույքի գնահատման գործունեության ոլորտը կարգավորող և հսկողություն իրականացնող լիազոր մարմին սահմանելու մասին» N 2277-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման գործունեությունը կարգավորող, ինչպես նաև ֆիզիկական անձանց որակավորող և հսկողություն իրականացնող լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեն է:<br>Կադաստրի կոմիտեն կարգավորում է գնահատման ոլորտը, կազմակերպում և անցկացնում է որակավորման քննությունները, ինչպես նաև գնահատողների կողմից վերոնշյալ օրենքի, գնահատման ստանդարտների, նորմատիվ իրավական հսկողություն է իրականացնում իր կողմից ստեղծված որակավորման և մասնագիտական հանձնաժողովների միջոցով: Կադաստրի կոմիտեն որակավորման հանձնաժողովի միջոցով կազմակերպում և անցկացնում է որակավորման քննությունները: Որակավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են կադաստրի կոմիտեի ներկայացուցիչներ և առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող գնահատողներ՝ իրենց համաձայնությամբ: Կադաստրի կոմիտեն մասնագիտական հանձնաժողովի միջոցով |

| | |
|---|---|
| | իրականացնում է հսկողություն անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող անձանց և գնահատողների կողմից «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի, գնահատման ստանդարտների և օրենսդրությամբ սահմանված կարգերի, նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ:<br>Գնահատողների կողմից «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի, գնահատման ստանդարտների և օրենսդրությամբ սահմանված կարգերի, նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ հսկողություն կադաստրի կոմիտեն իրականացնում է միայն շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա կամ լիազոր մարմնի հաստատած ուսումնասիրությունների իրականացման տարեկան ժամանակացույցով նախատեսված լինելու դեպքում:<br>Մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա գնահատողի որակավորման գործողությունը դադարեցվում է միայն այն դեպքում, եթե գնահատողը գնահատման հաշվետվությունում «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքով, գնահատման ստանդարտով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պահանջների և պայմանների խախտում (խախտումներ) կատարելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, առնվազն չորս այլ հաշվետվություններում ևս խախտումներ է կատարել: Որևէ այլ դեպքերում պատասխանատվության այլ միջոցներ ինչպես որակավորված գնահատողների, այնպես էլ գնահատման գործունեություն իրականացնող անձանց նկատմամբ օրենսդրությունը չի նախատեսում:<br>Ներկայիս գործող օրենսդրությամբ չեն կարգավորվում մի շարք իրավահարաբերություններ, որոնցում գույքի շուկայական արժեքի արտացոլման անհրաժեշտության կա, ինչպես նաև խիստ սահմանափակվում են այդ ոլորտը պետական լիազոր մարմնի կողմից կարգավորելու հնարավորությունները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝<br>1. ««Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը.<br>2. Գնահատման ոլորտի ընդլայնում և կայացում, մատուցվող գնահատման ծառայությունների որակի բարելավում, ինչպես նաև պետական և համայնքային բյուջեների եկամուտների աճ և ծախսերի տնտեսում,<br>3. Օրենքից բխող գնահատման ստանդարտների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը,<br>4. Որակավորված գնահատողների դաշտի կարգավորմանը միտված երկարաժամկետ զարգացման հայեցակարգի մշակում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>1) Գնահատման ոլորտի ընդլայնում և կայացում.<br>2) Գնահատման գործունեություն իրականացնողների նկատմամբ շուկայի մասնակիցների ու հանրության վստահության բարձրացում.<br>3) Մատուցվող գնահատման ծառայությունների որակի բարելավում.<br>4) Պետական և համայնքային բյուջեների եկամուտների աճ և ծախսերի տնտեսում: |
| 340 | **Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի որակական և տնտեսական գնահատում (340.1-340.4)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի որակական և տնտեսական նոր գնահատումը:<br>Ծրագրի համաձայն նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջանում (ՀՀ կառավարության որոշում):<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային զուտ եկամուտների հողային կադաստրի տվյալները հաստատվել են ՀՀ կառավարության 1999 թվականի հունվարի 20-ի N 31 որոշմամբ, և գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային զուտ եկամուտների հաշվարկների համար հիմք են հանդիսանում դեռևս 1970-1980-ական թվականներին իրականացված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի մշտադիտարկման տվյալները, ինչպես նաև այդ |

| | |
|---|---|
| | ժամանակահատվածում հողաշինարարական, հողագիտական, երկրաբուսաբանական և գյուղատնտեսական հողատեսքերի որակական ու տնտեսական գնահատման աշխատանքների հիման վրա մշակված մեթոդիկան: Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գները յուրաքանչյուր տարի հաստատվում են ՀՀ կառավարության կողմից՝ դրանց չափերը յուրաքանչյուր տարի թողնելով անփոփոխ, որոնց տվյալների հիման վրա ձևավորվում են գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի հարկման բազաները:<br>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ գյուղատնտեսական հողատեսքերի վիճակի վերաբերյալ վերջին 30 տարիների ընթացքում ոչ մի համալիր հետազոտություններ և ուսումնասիրություններ չեն կատարվել, և գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային գները չեն արտացոլում ներկայիս անշարժ գույքի շուկայի իրավիճակը, իսկ գործող օրենսդրությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի հարկի մեծության հիմքում ընկած է հողի պոտենցիալ եկամտաբերությունը, հետևաբար արդարացի հարկման դաշտի ստեղծման նպատակով անհրաժեշտություն է առաջանում նոր հետազոտական նյութերի հիման վրա իրականացնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի որակական և տնտեսական նոր գնահատում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրը լուծելու նպատակով նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատման մեթոդիկայի մշակման և մեթոդական ցուցումների ստեղծման, հողաշինարարական, հողագիտական երկրաբուսաբանական, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի նոր տնտեսական գնահատման աշխատանքներ:<br>**Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝**<br>1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատման մեթոդիկայի մշակման և մեթոդական ցուցումների ստեղծման աշխատանքներ,<br>2. Հողատեսքերի դաշտային տեղազննման աշխատանքներ,<br>3. Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի տնտեսական գնահատման աշխատանքներ,<br>4 Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ՀՀ կառավարության որոշմամբ կսահմանվեն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գները, որոնց տվյալների հիման վրա կձևավորվեն Հայաստանի Հանրապետության ըստ համայնքների և բնակավայրերի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի հարկման բազաները, ինչը հնարավորություն կընձեռի ներդնելու Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի արդարացի հարկման մեխանիզմներ, կապահովի անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվությունը, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի նոր կադաստրային գները հիմք կհանդիսանան վաճառքի կամ մեկնարկային նվազագույն գների հաշվարկման համար՝ պետության և համայնքային սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը օտարելու, ինչպես նաև վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքերում: |
| 341 | **Հայաստանի Հանրապետության համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերի գույքագրում և կադաստրային քարտեզներում առկա անճշտությունների ուղղում (341.1-341.3)**<br><br>**1. Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Կադաստրային քարտեզագրման աշխատանքների իրականացման ընթացքում որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով (ցածր ճշտությամբ գործիքներ, թեքությունների անտեսում, քարտեզագրումից հետո հողերի վերաբաշխում, կոորդինատների բացակայություն և այլն) անշարժ գույքը քարտեզներում արտահայտվել է որոշակի սխալներով: Հողերի սեփականաշնորհումից հետո տարիների ընթացքում, տեղի են ունեցել հողատեսքերի փոփոխություններ, որոնց մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեին պատշաճ չտեղեկացնելու պատճառով դրանք կադաստրային քարտեզներում չեն արտահայտվել:<br>Գույքագրման աշխատանքների նպատակն է ստանալ ճշտված տվյալներ գյուղատնտեսական նշանակության |

հողերի օգտագործման վիճակի, հողատեսքերի փոփոխության, բազմամյա տնկարկների և ոռոգվող հողերի առկայության վերաբերյալ, որոնց հիման վրա համապատասխան ճշտումներ կատարել համայնքների կադաստրային քարտեզներում, հողային հաշվեկշիռներում և հողի հարկի բազայում: Ճշտված տվյալները կարող են հիմք հանդիսանալ գյուղատնտեսական նշանակության հողերի բարելավման ծրագրերի, գյուղատնտեսական շրջանառությունից դուրս մնացած հողերը շրջանառության մեջ դնելու և գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ այլ ծրագրերի մշակման համար:

Կադաստրային քարտեզների ուղղման նպատակն է ունենալ ճշտված կադաստրային քարտեզներ, վերացնել կամ նվազագույնի հասցնել համայնքների, քաղաքացիների և իրավաբանական անձանց միջև առկա սահմանային վեճերը, նվազագույնի հասցնել իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու հիմքերը:

Միջոցառման իրականացումը նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հողերի գույքագրումը պետական միջոցառում է, որը նախկինում իրականացվում էր յուրաքանչյուր 5 տարին մեկ: Հողերի սեփականաշնորհման գործընթացից հետո (1991-1993 թթ.) Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի գույքագրման աշխատանքներ չեն իրականացվել: Տարիների ընթացքում տեղի են ունեցել հողերի նպատակային և գործառնական նշանակության (հողատեսքերի) բազմաթիվ փոփոխություններ, որոնք ամբողջությամբ չեն արտահայտվել համայնքների կադաստրային քարտեզներում (հատակագծերում) և հողային հաշվեկշիռներում: Մասնավորապես շատ համայնքներում մասնավորեցվել են գյուղատնտեսական նշանակության անջրդի արոտներ և այլ հողատեսքեր, որոնք արդեն փոխադրվել են ոռոգվող, ավելի բարձրարժեք հողատեսքերի (վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ), սակայն դրանք կադաստրային քարտեզներում չեն արտահայտվել: Առկա են պետության, համայնքների, քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող մեծ թվով չօգտագործվող հողեր, հատկապես լեռնային և բարձրլեռնային շրջաններում, որոնք հաշվառված չեն:

Կադաստրային քարտեզագրման աշխատանքների իրականացման ընթացքում որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով (ցածր ճշտությամբ գործիքներ, թեքությունների անտեսում, քարտեզագրումից հետո հողերի վերաբաշխում, կոորդինատների բացակայություն և այլն) անշարժ գույքը քարտեզներում արտահայտվել է որոշակի սխալներով: Նշված քարտեզները հիմք են հանդիսացել իրավունքների առաջին պետական գրանցման և համայնքների վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողերը այդ համայնքներին անհատույց սեփականության իրավունքով փոխանցելու համար: Ներկայումս իրավունքների պետական գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի փաթեթում ներառվում են նաև համապատասխան որակավորում ունեցող անձի կողմից կազմված, ճշտված կոորդինատներով հատակագծեր, որոնք կադաստրային քարտեզում տեղադրելիս առաջացնում են վերադրումներ (համադրումներ) և բազմաթիվ վեճերի ու իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու պատճառ դառնում: Որոշ սահմանակետերի կոորդինատների անճշտության, ինչպես նաև որոշ սահմանակետերի բացակայության պատճառով կադաստրային քարտեզներում սխալ են արտահայտվել նաև համայնքների վարչական սահմանները, ինչի արդյունքում նույնպես առաջանում են բազմաթիվ վեճեր, վերադրումներ (համադրումներ) և բաց տարածքներ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման վիճակի, հողատեսքերի փոփոխության, բազմամյա տնկարկների և ոռոգվող հողերի առկայության վերաբերյալ ճշտված տվյալներ հնարավոր է ստանալ միայն գույքագրման միջոցով, իսկ համայնքների կադաստրային քարտեզներում տեղ գտած անճշտությունների և վարչական սահմանների ուղղման համար հիմք ընդունել բավարար ճշտություն ունեցող օրթոֆոտո հատակագծերը (լուսանկարներ), անհրաժեշտության դեպքում իրականացնել նոր սահմանակետերի տեղադրման և չափագրման աշխատանքներ:

**Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝**

1. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների վարչական սահմանների, կադաստրային քարտեզներում առկա անճշտությունների ուղղման և գյուղատնտեսական նշանակության հողերի գույքագրման աշխատանքներ (պիլոտային),

2. ՀՀ համայնքների վարչական սահմանների ուղղման, գյուղատնտեսական նշանակության հողերի, այդ թվում՝ բազմամյա տնկարկների և ոռոգվող հողերի գույքագրման աշխատանքներ,

3. Կադաստրային քարտեզներում առկա անճշտությունների ուղղման աշխատանքներ:

| | |
|---|---|
| | **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ստանալ ճշտված տվյալներ գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման վիճակի, հողատեսքերի փոփոխության, բազմամյա տնկարկների և ոռոգվող հողերի առկայության վերաբերյալ, որոնց հիման վրա կճշտվեն համայնքների կադաստրային քարտեզները, հողային հաշվեկշիռները և հողի հարկի բազաները: Ճշտված տվյալները կարող են հիմք հանդիսանալ գյուղատնտեսական նշանակության հողերի բարելավման ծրագրերի, գյուղատնտեսական շրջանառությունից դուրս մնացած հողերը շրջանառության մեջ դնելու և գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ այլ ծրագրերի մշակման համար:<br>Համայնքների կադաստրային քարտեզների և վարչական սահմանների ուղղման արդյունքում կունենանք ճշտված կադաստրային քարտեզներ, կվերանան կամ նվազագույնի կհասցվեն իրավունքների պետական գրանցման խոչընդոտները, ինչպես նաև սահմանային վեճերը հարևան համայնքների, քաղաքացիների և իրավաբանական անձանց միջև: |
| 342 | **«Պետական գեոդեզիական (GNSS) ցանցի արդիականացում» (342.1-342.3)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Նորվեգիայի Թագավորության քարտեզագրության և կադաստրի վարչության (Statens Kartverk) գույքային իրավունքների ու զարգացման կենտրոնի հետ համատեղ իրականացվող «Հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման գործիքներ» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականին ստեղծվել է մշտապես գործող տասներկու ռեֆերենց կայաններից կազմված ցանց, որոնք հավասարապես բաշխված են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով:<br>ՀՀ տարածքը «Ռեֆերենց կայանների» ծածկույթով ապահովելու նպատակով ստեղծվել է 40 կմ շառավղով 12 մշտական գործող կայան, որոնք տեղադրվել են հարմարավետ վայրերում: Այդ վայրերը ընտրելիս հաշվի են առնվել.<br>1) հարևան ռեֆերենց կայաններով ծածկույթների հեռավորությունը (40 կմ),<br>2) խոշոր բնակավայրերի առկայությունը,<br>3) գլխավոր ճանապարհներով կապը,<br>4) օդերևութաբանական կայանների առկայությունը:<br>Որպեսզի կայանների գործունեությունը լինի առավել արդյունավետ և աշխատի անխափան, իրական ժամանակում մշտական գործող կայանի տեղադրման վայրի ընտրության ժամանակ հաշվի են առնվել հետևյալ հանգամանքները.<br>5) երկնքի տեսանելիության ապահովումը,<br>6) ալեհավաքի կայունությունը,<br>7) ալիքների անդրադարձումը,<br>8) սարքավորումների պահպանությունը,<br>9) ֆիզիկական անվտանգությունը,<br>10) տեղադրման վայրի եղանակային պայմանները,<br>11) էլեկտրասնուցման և մայրուղային կապերի առկայությունը:<br>Ավելին՝ կոորդինատների որոշման՝ հավասարակշռման աշխատանքներում ներգրավված են եղել նաև 8 գեոդեզիական կետեր: Կոորդինատների հաշվարկումը իրականացվել է միջազգային ստանդարտ ռեֆերենց շրջանակում (ITRF2008/IGS08): Վերջնական արդյունքում դրանք փոխակերպվել են ARMREF02 համակարգ՝ օգտագործելով որոշ մշտապես գործող ռեֆերենց կայանների (CORS) ռեֆերենց կոորդինատները:<br>ARMREF02 համակարգը Հայաստանի համար գեոդեզիական ռեֆերենց պաշտոնական համակարգ է, որը համապատասխանում է Համաշխարհային գեոդեզիական ռեֆերենց համակարգին (ITRS) ITRF2000 էպոխայի (epoch) 2002.9-ի միջոցով:<br>Միջոցառման իրականացումը նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մշտապես գործող ռեֆերենց կայանները դիտարկվել և հաշվարկվել են 2013 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի 11-ը (տարվա օրերն են 265-284) կատարած GPS C1/L1/P2/L2 չափագրումների 20-օրյա, 30-օրյա նմուշառման չափի շարքով: Ելնելով առաջիկայում Հայաստանի Հանրապետության տարածքում նախատեսվող |

| | |
|---|---|
| | տեղագրագեոդեզիական աշխատանքների արագ և ճշգրիտ իրականացման պահանջներից անհրաժեշտություն է առաջացել իրական ժամանակում մշտական գործող ռեֆերենց կայանների ցանցը խտացնել՝ կայաններն ավելացնելով ևս 2-ով:<br>Քանի որ Հայաստանի Հանրապետությունում տեղագրագեոդեզիական աշխատանքների առավել զգալի բաժինը իրականացվում է խիտ բնակեցված և կառուցապատված Երևան քաղաքի և Արարատյան դաշտի տարածաշրջանում, ուստի անհրաժեշտություն է առաջացել կայաններից մեկը տեղադրել Երևան քաղաքում:<br>Երևանում նախատեսվող կայանը նպատակահարմար է տեղադրել մայր ապարի վրա՝ գեոդեզիական գրունտային հիմնակետի տեսքով, որպեսզի հնարավոր լինի ավելի ճշգրիտ հետևել երկրակեղևի ուղղաձիգ և հորիզոնական շարժերին (քանի որ 12 մշտական գործող ռեֆերենց կայանները տեղադրված են շենքերի տանիքների վրա):<br>Հյուսիսային տարածքներում նախատեսվում է համագործակցություն Վրաստանի Հանրապետության մշտական գործող կայանների հետ, ուստի երկրորդ ռեֆերենց կայանը նպատակահարմար է տեղադրել Տաշիր քաղաքում, հայ-վրացական սահմանի՝ նախատեսվող սահմանազատման և սահմանագծման աշխատանքները բարձր ճշտությամբ իրականացնելու համար:<br>Մշտական գործող ռեֆերենց կայանների ցանցի ղեկավարումն իրականացվում է վերստուգիչ կենտրոնում՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման տեխնիկական բազայում առկա հզոր սերվերի, համապատասխան ծրագրային ապահովման միջոցով:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մշտական գործող նոր կայանները հնարավորություն են տալիս GPS ռովեր կայանի միջոցով իրական ժամանակում, ծածկույթի ընդգրկման շրջանում, կարճ ժամանակամիջոցում ստանալու տեղադիրքի կոորդինատները վերը նշված տարածաշրջանների համար, որոնց տվյալները կկիրառվեն դիրքորոշման բազմաթիվ բնագավառներում:<br>Որպես գեոդեզիայի բնագավառի զարգացում՝ ստեղծվելիք նոր երկու ռեֆերենց մշտական գործող կայանների ներդրմամբ կհասցվեն 14-ի:<br>**Կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝**<br>1. Ցանցի խտացում ևս 2 կայանով, հավասարակշռում, ծրագրային ապահովումների արդիականացում,<br>2. Հայաստանի Հանրապետության մշտապես գործող GNSS ռեֆերենց կայանների ցանցի ընդհանուր դիտարկում և վերահավասարակշռում,<br>3. Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան և հարավարևելյան անտառապատ տարածքներում GNSS 2-րդ դասի 20 նոր հիմնակետերի տեղադիրքերի որոշում, տեղադրում և հավասարակշռում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումից հետո ակնկալվում է ունենալ.<br>1) մշտական գործող երկու ռեֆերենց կայաններ նախատեսված տարածաշրջաններում,<br>2) ռեֆերենց երկու կայանների տեղադիրքերի հավասարակշռված կոորդինատներ,<br>3) ՀՀ տարածքում մշտական գործող 14 ռեֆերենց կայանների Միջազգային արբանյակային նավիգացիոն համակարգին կապակցված ցանց: |
| 343 | **«Աշխարհագրական անվանումների առցանց քարտադարանի ստեղծում և վարում» (343.1)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարման և թարմացման աշխատանքները կրում են շարունակական բնույթ և բխում են «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներից: Նախապատրաստվող և հրատարակվող տեղեկատուների անհրաժեշտությունը բխում է «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի և 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից և կարևոր նշանակություն ունի լրատվական, գիտական, կրթական, քարտեզագրական և այլ ոլորտներում:<br>Դրանց անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ վերջին տարիների ընթացքում շատացել է հայալեզու հրատարակչական արտադրանքը, ստեղծվել են նոր հեռուստատեսային և ռադիոընկերություններ, գրահրատարակչություններ, թերթեր և ամսագրեր, որոնց կողմից ներկայացվող նյութերում տեղ են գտնում բազմաթիվ աշխարհագրական անվանումներ: Անճշտություններից և կոպիտ վրիպակներից խուսափելու |

նպատակով շատ կարևոր է ունենալ հավաստի և պաշտոնական տեղեկատու, որոնց միջոցով կներկայացվեն աշխարհագրական անվանումների ճշգրիտ գրելաձևերը:

Աշխատանքների իրականացման արդյունքում ստացված տեղեկատուները անհրաժեշտ են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև համապատասխան պետական կազմակերպություններին, կրթական և գիտական հիմնարկներին:

Միջոցառման իրականացումը նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ծրագրի հիմնական նպատակն է «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան ոլորտի զարգացման և արդյունավետության բարձրացման համար Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարումը, ՀՀ սահմաններից դուրս գտնվող աշխարհագրական անվանումների տեղեկատվական բանկի ստեղծումը և տարբեր տեղեկատուների ու բառարանների առցանց հրատարակումը:

Այս բնագավառում ՀՀ կառավարության 2001 թվականի հունիսի 9-ի N 502 որոշմամբ հաստատված «ՀՀ աշխարհագրական անվանումների հաշվառման ու գրանցման, պետական քարտադարանի ստեղծման և վարման կարգ»-ի պահանջներին համապատասխան՝ 2002-2007 թվականներին ավարտվել են Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքները, միաժամանակ ստեղծվել է աշխարհագրական անվանումների պետական քարտադարանը, որը պարբերաբար թարմացվում է:

2002-2014 թվականների ընթացքում կատարվել են ՀՀ տարածքի ավելի քան 41000 աշխարհագրական օբյեկտների անվանումների հաշվառման աշխատանքներ: ՀՀ կառավարության կողմից ստեղծված ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի աշխատանքի արդյունքում ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի աշխարհագրական օբյեկտների անվանումները: Աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի թարմացման արդյունքում 2009-2017 թվականներին ՀՀ կառավարության կողմից հաստատվել են համապատասխանաբար մոտ 3200 նոր աշխարհագրական օբյեկտների անվանումներ: Գրանցվել է ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի աշխարհագրական օբյեկտների ավելի քան 41 հազար անվանում: Անվանափոխվել են ՀՀ 59 բնակավայրեր, նախատեսվում է անվանափոխել ևս 21 բնակավայր: Այս բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքում հրատարակվել են ՀՀ մարզերի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուները՝ գազետիրները, որոնցում զետեղված են ՀՀ մարզերի տարածքներում գտնող աշխարհագրական օբյեկտների անվանումները: Հրատարակվել է նաև «ՀՀ բնակավայրերի բառարան»-ը, «ՀՀ ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարան»-ը, «Աշխարհագրական անվանումների հայերեն լեզվով էկզոնիմների ցանկ»-ը, «ՀՀ վարչատարածքային բաժանման տեղեկատուն», «ՀՀ պատմաճարտարապետական հուշարձանների համառոտ տեղեկատուն», «ՀՀ լեռնագրական օբյեկտների համառոտ տեղեկատուն», ինչպես նաև «Աշխարհի պետությունների համառոտ տեղեկատու բառարանը» և «Աշխարհի խոշորագույն և կարևորագույն քաղաքների համառոտ տեղեկատու-բառարան»-ը:

**1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Աշխարհագրական անվանումների ոլորտում բացի շարունակական բնույթ կրող Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարման և թարմացման աշխատանքներից, իրականացնել առցանց և տպագիր բառարանների և տեղեկատուների ստեղծման աշխատանքներ:

**Կիրականացվի հետևյալ միջոցառումը՝**

1. Աշխարհագրական անվանումների ոլորտու՝ բացի շարունակական բնույթ կրող Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարման և թարմացման աշխատանքների իրականացումը առցանց և տպագիր բառարանների և տեղեկատուների ստեղծման աշխատանքներ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ և աշխարհի աշխարհագրական անվանումների փոփոխված և վերականգնված հայերեն շտեմարան, որն անհրաժեշտ է պետական, հասարակական, գիտական և կրթական համակարգերի համար:

344 **«Հայաստանի ազգային նոր ատլասի ստեղծում» (344.1)**

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Թեմատիկ քարտեզագրությունը դիտարկվում է որպես պետական նշանակության ոլորտ: Այն ամրագրված է նաև «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի է/ կետում: Պետական նշանակության թեմատիկ քարտեզագրության հրատարակումները համարվում են պաշտոնական նյութեր, որոնց վրա կարելի է հղում կատարել և օգտագործել հավաստի տեղեկատվություն ստանալու համար:<br>Այդ աշխատանքների շարքնն են դասվում հիմնարար ատլասները (Ազգային ատլաս, Աշխարհի մեծ ատլաս), ինչպես նաև կրթական համակարգի համար նախատեսված հավաստի նյութ պարունակող ուսումնական քարտեզներն ու ատլասները:<br>Միջոցառման իրականացումը նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքում նախկինում հրատարակվել են Հայաստանի ազգային ատլասի Ա և Բ հատորները, շարունակվում են նաև Հայաստանի ազգային ատլասի Ա հատորի անգլերեն տարբերակի ստեղծման աշխատանքները, պատրաստվում են նաև ռուսաց լեզվով միավորված մեկ հատորյակը, ինչպես նաև 32 անվամբ ուսումնական քարտեզներ:<br>**1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հիմք ընդունելով «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածի դրույթները և հաշվի առնելով օգտագործողների մեծ պահանջարկը անհրաժեշտություն է առաջացել պետական մակարդակով ստեղծելու նոր հիմնարար ատլաս՝ Հայաստանի ազգային նոր ատլասի ստեղծում: Դա հիմնավորվում է նաև նրանով, որ նախատեսվում է իրականացնել Աշխարհի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուի ստեղծման աշխատանքներ, որի արդյունքում ստեղծված հսկայածավալ նյութը կօգտագործվի այդ ատլասի նախապատրաստման համար:<br>Նախկինում ստեղծված քարտեզագրական նյութերի հիման վրա նոր ձևաչափով բազմալեզու և բազմահատոր Հայաստանի ազգային ատլասի հրատարակում, որը կներառի Աշխարհի մեծ ատլաս, Սպայի ատլաս և այլ նմանատիպ, անհրաժեշտ ատլասներ:<br>**Կիրականացվի հետևյալ միջոցառումը՝**<br>1. Առկա քարտեզագրական նյութերի հիման վրա նոր ձևաչափով բազմալեզու և բազմահատոր Հայաստանի ազգային ատլասի հրատարակում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Այս աշխատանքների իրականացման արդյունքում նախատեսվում է ունենալ թարմացված բազմալեզու Հայաստանի ազգային ատլաս: |
| 345 | **«Հայաստանի Հանրապետության սեյսմակտիվ շրջաններում երկակեղևի գործող խզվածքների բացահայտման համար I դասի ընթացքների կրկնակի նիվիլիրացման աշխատանքների իրականացում» (345.1)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Երկրակեղևի ուղղահայաց շարժումներն ուսումնասիրելու նպատակով նախատեսվում է իրականացնել I դասի նիվելիրացման աշխատանքներ ՀՀ Սյունիքի մարզի Կապան-Քաջարան-Մեղրի սեյսմակտիվ երկրակեղևի գործող խզվածքային շրջանում, թարմացնել նախկինում կատարված նիվելիրացման տվյալներն ու ցանցը և ստանալ հիմնակետերի բացարձակ բարձրությունները:<br>Միջոցառման իրականացումը նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության սեյսմիկ ակտիվ նշված շրջանում ճշգրիտ գեոդեզիական չափագրումների հիման վրա կարելի է կանխորոշել, թե որտեղ է գտնվելու ապագա երկրաշարժի էպիկենտրոնը, ինչը թույլ կտա ճիշտ տեղադրել երկրաշարժագիտական սարքերն ու համակարգերը: Երկրակեղևի այն մասերում, որտեղ կան կրկնվող նիվելիրային ընթացքներ, ժամանակակից ուղղաձիգ տեղաշարժերի տվյալներով հնարավոր է հայտնաբերել դեֆորմացիաների տարածաշրջանները:<br>Նախատեսվում է իրականացնել I դասի նիվելիրացում՝ շուրջ 500 կմ ընթացքով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Աշխատանքների իրականացման նպատակով նախատեսվում են. |

| | |
|---|---|
| | ա) I դասի նիվելիրացման աշխատանքներ,<br>բ) I դասի նիվելիրացման նյութերի մշակում, կետերի կոորդինատների և բարձրությունների կատալոգի կազմում:<br>**Կիրականացվի հետևյալ միջոցառումը՝**<br>1. Երկրակեղևի սեյսմաակտիվ գործող խզվածքների շրջաններում I դասի կրկնակի նիվելիրացում, ստացված տվյալների հավասարակշռում:<br>**2. Աշխատանքների իրականացումից ակնկալվող արդյունքները**<br>Իրականացումից հետո ակնկալվում է ունենալ.<br>1) խզվածքների տարածքում 500 կմ նիվելիրային ընթացքի հավասարակշռված հենանիշների, դրոշմանիշների բացարձակ ու հարաբերական բարձրությունների ցուցակներ,<br>2) գրավիմետրական կետերի դիտարկման տվյալներ: |
| 346 | **Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի ըստ նպատակային նշանակության հողերի կադաստրային գների սահմանում (346.1)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող հողամասերի հարկման բազաների ստեղծման համար հողամասի բազային գների ապահովում:<br>Ծրագրի համաձայն նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջանում (ՀՀ կառավարության որոշում) հիմք՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի ըստ նպատակային նշանակության հողերի կադաստրային գները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության որոշման նախագծի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի պահանջներից, ըստ որի՝ հողերի կադաստրային գները, ըստ նպատակային նշանակության, յուրաքանչյուր տարի հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործող օրենսդրության համաձայն՝ նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հողերի կադաստրային գները չեն կարող կիրառելի լինել յուրաքանչյուր տարվա համար, ուստի որոշման նախագծի ընդունումն անհրաժեշտ է:<br>Կիրականացվի հետևյալ միջոցառումը՝<br>1. «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի ըստ նպատակային նշանակության հողերի կադաստրային գները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման արդյունքում կսահմանվեն յուրաքանչյուր տարվա հողերի կադաստրային գները, ինչը կնպաստի հողի շուկայի զարգացմանը, հողի հարկի բազայի և համայնքային բյուջեների ձևավորմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասերի կադաստրային գները կկիրառվի օտարման, վարձակալության, կառուցապատման իրավունքով տրամադրելու կամ այլ դեպքերում: |
| 347 | **Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվության (հողային հաշվեկշռի) կազմում (347.1)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջներից, ըստ որի՝ հողամասերը, անկախ սեփականության ձևից, ենթակա են պետական հաշվառման:<br>Ծրագրի համաձայն նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն է առաջանում (ՀՀ կառավարության որոշում) հիմք՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հողամասերի պետական հաշվառումն իրականացվում է հողամասերի որակի և քանակի, նպատակային |

| | |
|---|---|
| | նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության, սեփականության ու օգտագործման սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տվյալներ ստանալու նպատակով: Պետական հաշվառումն իրականացվում է անընդհատ՝ սկզբնական հաշվառման ելակետային տվյալների հիման վրա՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխություններն արտացոլելով հաշվառման տեքստային ու գրաֆիկական փաստաթղթերում: Հողամասերի պետական հաշվառման նպատակը Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի տարեկան հաշվետվության (հողային հաշվեկշռի)՝ յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ կազմումն է, որը հաստատում և հրապարակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br>Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդում կատարվում են նպատակային և գործառնական նշանակությունների, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների, ինչպես նաև ոռոգվող հողերի փոփոխություններ: Անհրաժեշտ է վերոհիշյալ փոփոխություններն արտացոլել Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա ընթացիկ հողային հաշվեկշռում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Որոշման նախագծի ընդունմամբ կկատարվի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջը, և տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխությունները կարտացոլվեն յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռում:<br>**Կիրականացվի հետևյալ միջոցառումը՝**<br>1. «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ յուրաքանչյուր տարվա հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի փաթեթի կազմում և սահմանված կարգով ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման յուրաքանչյուր տարվա նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվելուց հետո կհրապարակվի, որի նորացված և ճշտված տվյալներից կկարողանան օգտվել շահագրգիռ բոլոր պետական մարմինները, կազմակերպություններն ու անձինք:<br>Որոշման յուրաքանչյուր տարվա նախագիծը կտեղադրվի Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի պաշտոնական www.cadastre.am կայքէջում: |
| **Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե** | |
| 348 | **348.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 24-ի N 400-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Վերոհիշյալ իրավական ակտի ընդունումը բխում է «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածից:<br>**1. 1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 24-ի «Միջուկային տեղակայանքների շահագործման լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 400-Ն որոշումն ընդունվել է, երբ Հայկական ատոմային էլեկտրակայանի (այսուհետ՝ ՀԱԷԿ) 2-րդ էներգաբլոկը գտնվում էր շահագործման նախագծային ժամկետի փուլում և շահագործման նախագծային ժամկետի երկարացման խնդիր օրակարգում չկար, ուստի լիցենզիայի հայտին կից ներկայացվող փաստաթղթերում պահանջվում էր ներկայացնել նախագծային տվյալներ և հիմնավորել նախագծային ժամկետում էներգաբլոկի անվտանգ շահագործումը:<br>ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման լիցենզիայի ժամկետը լրանում է 01. 04. 2021թ. և հաշվի առնելով ««Հայկական ԱԷԿ» փակ բաժնետիրական ընկերության N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը երկարացնելու մասին» ՀՀ կառավարության 19 ապրիլի 2012 թվականի N 461-Ն և «Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման նկատմամբ պահանջները հաստատելու |

| | |
|---|---|
| | մասին» ՀՀ կառավարության 23 օգոստոսի 2012 թվականի N 1085-Ն որոշումները, անհրաժեշտություն է առաջացել կարգավորել ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման լիցենզիայի ժամկետի երկարացման իրավահարաբերությունները՝ արտանախագծային փուլում:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման մեջ, որոնցով կսահմանվեն պահանջներ՝ ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի արտանախագծային ժամկետում անվտանգ շահագործումն ապահովելու համար:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Վերոհիշյալ որոշման մեջ կամրագրվեն ատոմակայանի շահագործման ժամկետի երկարացման հետ կապված համապատասխան դրույթներ, կսահմանվեն պահանջներ, որոնց կատարմամբ կփաստվի, որ լիցենզավորված անձը պատրաստ է տրված լիցենզիայի հիման վրա իրականացնել ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգ և հուսալի շահագործումը նախագծային ժամկետից հետո, միաժամանակ որոշումը կհամապատասխանեցվի ԱԷՄԳ-ի՝<br>• «Անվտանգության կառավարական, իրավական և կարգավորող կառուցվածքը» (Governmental, Legal and Regulatory Framework for Safety), GSR Part 1 rev.1 (2016);<br>• «ԱԷԿ-ների ծերացման կառավարման և երկարաժամկետ շահագործման ծրագրի մշակում» (Ageing Management and Development of a Programme for Long Term Operation of Nuclear Power Plants), SSG-48 (2018);<br>անվտանգության ստանդարտների պահանջներին: |
| 349 | **349.1 «Ատոմային էներգիայի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Վերոհիշյալ իրավական ակտի ընդունումը բխում է «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածից:<br>«Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո (01. 02. 1998թ. ) թեև կատարվել են մի շարք փոփոխություններ եւ լրացումներ, սակայն դրանք ամբողջությամբ չեն կարգավորում ատոմային էներգիայի բնագավառում ծագող իրավահարաբերությունները՝ մասնավորապես՝ ռադոն ռադիոակտիվ գազից բնակչության պաշտպանությունը:<br>**1. 1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կողմից վավերացրած «Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին» կոնվենցիայի փոփոխության (2013թ. ), «Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին» համատեղ կոնվենցիայի կարգավորումների ամրագրումը, Ատոմային էներգիայի միջազգային գործակալության առաքելությունների (կարգավորող ենթակառուցվածքի դիտարկման միջազգային ծառայություն (IRRS), ֆիզիկական պաշտպանության միջազգային խորհրդատվական ծառայություն (IPPAS), նախագծային անվտանգության դիտարկում (DSR) առաջարկությունները, ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից բխող պարտավորությունների կատարումը ինչպես նաև բնագավառի մի շարք կարևոր հարցերի կարգավորումները, և «Միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգության գծով Համայնքի համակարգի սահմանումը» 2009/71/ 25. 06. 2009, «Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների պատասխանատու ու անվտանգ կառավարման գծով Համայնքի իրավական համակարգի սահմանումը» 2011/70/ 19 07 2011 Եվրադիրեկտիվների մոտարկումն ու ԱԷՄԳ անվտանգության ստանդարտների պահանջների ամրագրումը անհրաժեշտություն են առաջացնում մշակել նոր օրենք:<br>**1. 2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նոր օրենքով բնագավառի հասկացությունները կսահմանվեն ԱԷՄԳ-ի վերանայված հասկացություններին համապատասխան, կտրվեն միջուկային տեղակայանքների կենսական բոլոր ցիկլերին՝ հրապարակի ընտրում, նախագծում, կառուցում, շահագործում, շահագործումից հանում, վերաբերող կարգավորումները, կամրագրվեն ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի դրույթները, ԱԷՄԳ-ի առաքելությունների առաջարկությունները:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Օրենքը կկարգավորի բնագավառի հարաբերությունները ՀՀ միջազգային պայմանագրերի պահանջներին, ԱԷՄԳ-ի |

| | |
|---|---|
| | անվտանգության ստանդարտների և Եվրամիության վերը նշված դիրեկտիվների պահանջներին համապատասխան: |
| 350 | **350.1 «Սպառման համար նախատեսված ջրում ռադիոակտիվ նյութերի թույլատրելի սահմանաքանակները հաստատելու մասի» ՀՀ կառավարության որոշման ընդունման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Նորմատիվ իրավական ակտի ընդունումը բխում է ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից (ստորագրված՝ 2017թ. նոյեմբերի 24-ին, Բրյուսելում - CEPA) բխող պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից և «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջից, համաձայն որի կարգավորող մարմինը մշակում եւ վարչապետին է ներկայացնում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի իրավական ակտերի նախագծեր:<br>**1. 1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրում ռադիոակտիվ նյութերի մասով առողջության պահպանմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» 2013/51/ 22. 10 2013 Եվրադիրեկտիվի դրույթների ներառում ՀՀ իրավական ակտերում (ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 2-րդ հավելվածով նախատեսված՝ միջուկային էներգետիկա բաժնին վերաբերող դիրեկտիվ):<br>**1. 2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Ատոմային էներգիայի մասին» ՀՀ օրենքով ՀՀ կառավարությունը կլիազորվի ընդունելու վերոհիշյալ որոշումը, որով կսահմանվեն խմելու ջրում ռադիոակտիվ նյութերի թույլատրելի սահմանաքանակները, վերը նշված դիրեկտիվների դրույթներին համապատասխան:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարում՝ ապահովելու բնակչության, շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից: |
| 351 | **351.1 «Իոնացնող ճառագայթման անվտանգության և իոնացնող ճառագայթումից պաշտպանության անվտանգության պահանջները հաստատելու մասին»» ՀՀ կառավարության որոշման ընդունման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Նորմատիվ իրավական ակտի ընդունումը բխում է ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից (ստորագրված՝ 2017թ. նոյեմբերի 24-ին, Բրյուսելում- CEPA) բխող պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից և «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջից, համաձայն որի կարգավորող մարմինը մշակում եւ վարչապետին է ներկայացնում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի իրավական ակտերի նախագծեր:<br>**1. 1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից պաշտպանության անվտանգության հիմնական ստանդարտները սահմանելու մասին» 5. 12. 2013/59/ 89/618 90/641, 96/29/ , 97/43 և 2003/122/ Եվրադիրեկտիվների դրույթների ներառում ՀՀ իրավական ակտերում (ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 2-րդ հավելվածով նախատեսված՝ միջուկային էներգետիկա բաժնին վերաբերող դիրեկտիվ):<br>**1. 2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Ատոմային էներգիայի մասին» ՀՀ օրենքով ՀՀ կառավարությունը կլիազորվի ընդունելու վերոհիշյալ որոշումը, որով կսահմանվեն իոնացնող ճառագայթման անվտանգության և իոնացնող ճառագայթումից պաշտպանության անվտանգության պահանջներ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարում՝ ապահովելու բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի անվտանգության ապահովումը, շրջակա միջավայրի պաշտպանությունն իրոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից, այդ թվում բնական ճառագայթումից. մասնավորապես՝ ռադոն ռադիոակտիվ գազ, շինարարական նյութերի ռադիոակտիվություն և այլն: |
| 352 | **352.1«Ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի առաքման մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման վերաբերյալ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը նպատակը**<br>Նորմատիվ իրավական ակտի ընդունումը բխում է ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից (ստորագրված՝ 2017թ. նոյեմբերի 24-ին, Բրյուսելում - CEPA) բխող պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից և «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջից, համաձայն որի կարգավորող մարմինը մշակում եւ վարչապետին է ներկայացնում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի իրավական ակտերի նախագծեր:<br>**1. 1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի առաքումը ստուգելու եւ վերահսկելու մասին» 2006/117 20. 11. 2006 Եվրադիրեկտիվի դրույթների ներառում ՀՀ իրավական ակտերում (ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 2-րդ հավելվածով նախատեսված՝ միջուկային էներգետիկա բաժնին վերաբերող դիրեկտիվ):<br>**1. 2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Ատոմային էներգիայի մասին» ՀՀ օրենքով ՀՀ կառավարությունը կլիազորվի ընդունելու վերոհիշյալ որոշումը, որով կսահմանվեն ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի ներմուծման, արտահանման, ներպետական փոխադրումների նկատմամբ կարգավորող նոր պահանջներ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարում՝ ապահովելու բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի, անվտանգությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունն իրոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից: |
| **Պետական եկամուտների կոմիտե** | |
| **353** | **Հարկային ստվերի գնահատում և կրճատում (353.1-353.5)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Նշված միջոցառումը պայմանավորված է հարկունակ ոլորտային ստվերային տնտեսության կրճատման անհրաժեշտությամբ, որը կապահովվի վերլուծական կարողությունների ընդլայնմամբ և հսկողության արդյունավետության բարձրացմամբ:<br>Միաժամանակ ներկայումս կարևորվում է հասցեական և արդյունավետ հսկողության իրականացումը՝ այսինքն հարկային վարչարարության բարելավման աշխատանքներում հիմնական մոտեցումն այն է, որ հարկային հսկողական գործիքները կիրառվեն հիմնականում այն հարկ վճարողների նկատմամբ, որոնք վերլուծությունների արդյունքներով կդիտվեն ռիսկային՝ ակնկալելով կրճատել տնտեսության ստվերային հատվածը: (ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 8.1 կետի 4-րդ, 5-րդ, 7-րդ և 13-րդ պարբերություններ)<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս շարունակվում է արդիական մնալ ստվերի դեմ պայքարը: Տնտեսվարող սուբյեկտների կողմից հարկվող օբյեկտի և հարկման բազայի թերհայտարարագրման արդյունքում պետական բյուջե չեն հավաքագրվում դրանցից հաշվարկվող հարկային եկամուտները:<br>Արդիական է շարունակում մնալ նաև ռիսկերի արագ բացահայտման և արդյունավետ կառավարման համակարգերի կիրառությունն ու դրա հիման վրա թիրախավորված հարկային հսկողության իրականացումը: Այս |

| | |
|---|---|
| | տեսանկյունից կարևորվում է վերլուծական կարողությունների զարգացումը՝ ուղղված ռիսկերի բացահայտմանը և կառավարման մեխանիզմների կատարելագործմանը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները:<br>1.1) Մշակել հարկունակ ոլորտներում ստվերի գնահատման մեթոդաբանություն, և գնահատման արդյունքների հիման վրա թիրախային ոլորտներում ուսումնասիրությունների իրականացում:<br>1.2) Վերանայել և կատարելագործել հարկային և մաքսային հսկողության ռիսկերի գնահատման համակարգերը (հիմք՝ ՀՀ հարկային օրենսգրքի 336-րդ հոդված և «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 121-րդ հոդված):<br>1.3) Կատարելագործել հարկային և մաքսային հսկողության գործիքակազմը և ավտոմատացնել վերլուծական գործիքները:<br>1.4) Կատարելագործել երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների մշակման էլեկտրոնային համակարգերը:<br>1.5) Ընդլայնել ՀՀ ՊԵԿ մոնիթորինգային կենտրոնի կարողությունները՝ իրականացվող վերլուծություններն աստիճանաբար կենտրոնացնելով մոնիթորինգային կենտրոնում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրագործմամբ  նախատեսվում է կրճատել ստվերային տնտեսությունը, որի արդյունքում կավելանան պետական բյուջե մուտքագրվող հարկային եկամուտները՝ բարելավելով Հարկեր/ՀՆԱ ցուցանիշը: |
| **354** | **ՏՏ ենթակառուցվածքների կատարելագործում  (354.1-354.7)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Նշված միջոցառումը պայմանավորված է տեղեկատվական հոսքերի կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ, ինչպես նաև էլեկտրոնային կառավարման համակարգի կարողությունների համալրմամբ ու կատարելագործմամբ: (ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 3.2 կետի 7-րդ և 8.1 կետի 9-րդ պարբերություններ)<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՊԵԿ կողմից շարունակվում են նորարարական ծրագրերի կիրառմանն ուղղված աշխատանքները, այդ թվում՝ մեծ ծավալի տվյալների (Big Data) ժամանակակից կառուցվածքով տվյալների շտեմարանների մշակման գործիքների ստեղծումը, ինքնաուսուցանվող (machine-learning) արհեստական ինտելեկտով համակարգերի մշակումը, ինչպես նաև ԵԱՏՄ մաքսային օրենսգրքին և դրա կիրարկումն ապահովող իրավական այլ ակտերին մաքսային մարմիններում էլեկտրոնային կառավարման և հսկողության համակարգի համապատասխանեցում: Այս աշխատանքները կրելու են շարունակական բնույթ, քանի որ ՊԵԿ կողմից կարևորվում է ժամանակին համընթաց ՏՏ ենթակառուցվածքների առկայության անհրաժեշտությունը: Առավելագույնի հասցնելով հարկ վճարողների և հարկային ծառայության աշխատակիցների կողմից  ՏՏ համակարգերի կիրառումը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br>2.1) Կատարելագործել ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգերը և ապահովել դրանց տեխնիկական և ծրագրային վերազինումը:<br>2.2) Ներդնել Մեծ Ծավալի Տվյալների (Big Data) ժամանակակից NoSQL կառուցվածքով տվյալների շտեմարաններ:<br>2.3) Մշակել ինքնաուսուցանվող (machine-learning) արհեստական ինտելեկտով համակարգեր:<br>2.4) Ապահովել հաշվարկային փաստաթղթերում (հարկային հաշիվներ, ՀԴՄ կտրոններ և այլն) արտացոլվող տվյալների արտածման հնարավորությունը:<br>2.5) Մշակել և ներդնել մաքսային վճարների և մաքսային մարմինների կողմից գանձվող այլ վճարների էլեկտրոնային եղանակով վճարման համակարգ:<br>2.6) Ներդնել ապրանքների և տրանսպորտային միջոցների ինքնաշխատ բացթողման էլեկտրոնային համակարգ: |

| | |
|---|---|
| | 2.7) Համապատասխանեցնել մաքսային մարմիններում էլեկտրոնային կառավարման և հսկողության համակարգերը ԵԱՏՄ-ի մաքսային օրենսգրքի պահանջներին:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրագործման արդյունքում ակնկալվում է ունենալ ժամանակակից չափանիշներին համապատասխան ՏՏ ենթակառուցվածքներ, ինչպես նաև ապահովել էլեկտրոնային կառավարման համակարգի համապատասխանությունը ԵԱՏՄ իրավական ակտերին: Ավտոմատացնելով ՀՀ ՊԵԿ գործընթացները՝ առավելագույնի հասցնել հարկ վճարողների և ՀՀ ՊԵԿ աշխատակիցների կողմից ՏՏ համակարգերի կիրառումը՝ հնարավորինս սահմանափակելով ՀՀ ՊԵԿ-հարկ վճարող անմիջական շփումը: |
| 355 | **Հարկային մարմին - հարկ վճարող գործընկերային հարաբերությունների ամրապնդում (355.1-355.3)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Նշված միջոցառումը պայմանավորված է հարկ վճարողների հետ գործընկերային հարաբերությունների ամրապնդման անհրաժեշտությամբ, որը կանխատեսելի կդարձնի հարկային միջավայրը և կբարելավի հարկային կարգապահությունը: (ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 8.1 կետի 8-րդ և 12-րդ պարբերություններ)<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վերջին տարիներին լայնածավալ աշխատանքներ են իրականացվել հարկային մարմին-հարկ վճարող գործընկերային հարաբերություններ ձևավորելու ուղղությամբ, բայց այնուամենայնիվ ներկայումս հարկ վճարողների շրջանում դեռևս չկա բավարար չափով վստահություն հարկային և մաքսային մարմինների նկատմամբ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br>3.1) Ներդնել հորիզոնական մոնիթորինգի համակարգ (հիմք՝ ՀՀ հարկային օրենսգրքի 316-րդ հոդված):<br>3.2) Կատարելագործել հարկ վճարողներին իրազեկման և ուսուցման համակարգը (հիմք՝ ՀՀ հարկային օրենսգրքի 309-րդ հոդված):<br>3.3) Կազմակերպել հարկային և մաքսային վարչարարության ընթացակարգերի վերաբերյալ հարցումներ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրագործման արդյունքում ակնկալվում է ապահովել հարկ վճարողների շրջանում հարկային օրենսդրության և վարչարարության վերաբերյալ իրազեկվածության բավարար մակարդակ: |
| 356 | **Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված վարչարարության կազմակերպում (356.1-356.8)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Նշված միջոցառման իրականացումը պայմանավորված է հարկ վճարողների կողմից հարկերի վճարման և արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվելու գործընթացների բարելավման անհրաժեշտությամբ՝ նպատակ ունենալով բարձրացնելու միջազգային վարկանիշային սանդղակում հարկային և մաքսային մարմինների մրցունակությունը, ինչպես նաև ՀՀ ներդրումային միջավայրի գրավչությունը: (ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 8.1 կետի 1-ին, 9-րդ պարբերություններ և 5.4 կետի 4-րդ պարբերություն)<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ իրականացվել են լայնածավալ աշխատանքներ, սակայն այս տեսանկյունից հարկային և մաքսային վարչարարությունը դեռևս զիջում է միջազգային լավագույն փորձին, ինչն էլ իր հերթին ազդեցություն է թողնում ձեռնարկատիրական գործունեության և ներդրումային միջավայրի վրա:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br>4.1) և 4.2) Կրճատել ԱԱՀ գումարների վերադարձի (միասնական գանձապետական հաշվին փոխանցման) ժամկետները (հիմք՝ ՀՀ հարկային օրենսգրքի 348-րդ հոդված):<br>4.3) Ընդլայնել հարկային մարմնի և հարկ վճարողների էլեկտրոնային եղանակով հաղորդակցվելու հնարավորությունը:<br>4.4) Գործարկել հարկերի վճարման էլեկտրոնային համակարգը (հիմք՝ ՀՀ հարկային օրենսգրքի 313.1 |

| | |
|---|---|
| | հոդված):<br>4.5) Ընդլայնել հարկային հաշվարկների ինքնաշխատ լրացման Pre-filing համակարգի շրջանակները:<br>4.6) Ստեղծել մաքսային ձևակերպումների ժամանակակից կենտրոն:<br>4.7) Ապահովել հարկային մարմնի յուրաքանչյուր սպասարկման կենտրոնին բոլոր սպասարկման կենտրոնների կողմից մատուցված ծառայությունների միասնական շտեմարանին հասանելիությունը:<br>4.8) Կրճատել սահմանահատման գործընթացում ծախսվող ժամանակը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է բարելավել գործարար միջավայրը՝ հարկային և մաքսային պարտավորությունները կատարելը դարձնելով առավել պարզ և հարմարավետ: |
| **357** | ***Հարկային և մաքսային մարմինների կառավարման համակարգի կատարելագործում (357.1-357.4)***<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Նշված միջոցառումը պայմանավորված է հարկային և մաքսային մարմինների կառավարման գործընթացների կատարելագործման անհրաժեշտությամբ: (ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 3.2 կետ)<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՊԵԿ կողմից կարևորվում է հարկային և մաքսային մարմինների կառավարման համակարգի կատարելագործումը և գործընթացների վերակառուցումը, ինչը կհանգեցնի մարդկային ռեսուրսների կառավարման և աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև հարկային և մաքսային ծառայողների մասնագի-տական գիտելիքների, աշխատանքային ունակությունների և կոռուպցիայի ընկալման մակարդակի բարձրացմանը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br>5.1) Մշակել և իրականացնել հարկային և մաքսային ծառայողների ուսումնական և վերապատրաստման ծրագրեր:<br>5.2) Խստացնել հարկային և մաքսային ծառայողների գործողությունների նկատմամբ վերահսկողությունը՝ կոռուպցիոն և հովանավորչության դեպքերի բացահայտման ուղղությամբ:<br>5.3) Հարկային վարչարարության բարեփոխումների շրջանակում սահմանել հարկային համակարգի օպտիմալ կառուցվածք, կատարելագործել հարկային մարմնի կողմից իրականացվող հսկողական մեխանիզմները, վերացնել գործառույթների կրկնությունները:<br>5.4) Մաքսային գործի իրականացման նպատակով մաքսային լաբարատորիայի հիմնադրում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է կատարելագործել հարկային և մաքսային մարմինների կառավարման համակարգերը՝ ունենալով բարձր մասնագիտական կարողություններով օժտված, հստակ տարանջատված և գործառույթների կրկնություններ չունեցող, կոռուպցիայից զերծ, հասարակության վստահությունը վայելող հարկային և մաքսային ծառայության համակարգ: |
| **358** | ***Միջազգային համագործակցության ամրապնդում (358.1-358.3)***<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Նշված միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմամբ, ինչպես նաև հարևան երկրների մաքսային մարմինների հետ համագործակցության ամրապնդմամբ: (ՀՀ Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 8.1 կետի 4-րդ պարբերություն և 2.3 կետ)<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս բացակայում են տեղեկությունների փոխանակման ՏՀԶԿ համապատասխան ազգայնացված ստանդարտները, որոնց գծով նախատեսվում են օրենսդրական կարգավորումների նախագծման աշխատանքներ: Վրաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային մարմինների հետ նախնական տեղեկատվության փոխանակման գործընթացը գտնվում է ներդրման փուլում:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները. |

| | |
|---|---|
| | 6.1) Օժանդակել Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումին ՀՀ անդամակցության շրջանակներում՝ հարցումների հիման վրա և ավտոմատացված տեղեկությունների փոխանակման ՏՀԶԿ ստանդարտների ներդրման համար օրենսդրության մշակմանը: Նշված ստանդարտների ընդունումից հետո դրանց կիրառումն ապահովող աշխատանքների իրականացում:<br>6.2) ՏՀԶԿ «Հարկվող բազայի քայքայումը և շահույթի տեղաշարժ» ծրագրի՝ հարկային մարմնի գործառույթներին առնչվող նվազագույն ստանդարտների կիրառումն ապահովող աշխատանքների իրականացում:<br>6.3) Ապահովել հարևան երկրների մաքսային մարմինների հետ նախնական տեղեկատվության փոխանակման գործընթացը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ապահովել ՏՀԶԿ ստանդարտների ներդրումը, ինչպես նաև հարևան երկրների մաքսային մարմինների հետ համագործակցության ամրապնդմամբ բարձրացնել մաքսային հսկողության արդյունավետությունը: |
| **Քաղաքաշինության կոմիտե** | |
| 359. | **Քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարության ամրագրում**<br><br>**<u>359.1. «Քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ օրենքի (14.02.2019թ. N ԱԺՕ-002-Ն) «1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ» գլխի Կառավարության խնդիրների 13-րդ պարբերության և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» պարբերության դրույթներից նպատակը՝ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարության ամրագրումն է:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ քաղաքաշինության նախարարությունն ունեցել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության ծրագիրը, որում արտացոլված են եղել նախարարության կողմից տարվող քաղաքականության հիմնական ուղղությունները և իրականացվելիք միջոցառումները:<br>Վերջին տարիներն ՀՀ կառավարության կառուցվածքի փոփոխություններով պայմանավորված՝ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը վերակազմակերպվել է նախ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի,այնուհետև՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի:<br>Վերակազմավորմամբ պայմանավորված՝ վերանայվել են նաև մարմնի գործառույթները, իրավասությունների և լիազորությունների շրջանակը, սակայն, այդ փոփոխություններին համապատասխան քաղաքաշինության բնագավառի ռազմավարական հիմնական փաստաթուղթ չի մշակվել:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ կառավարության ծրագրից և երկրի զարգացման նոր իրողություններից բխող Քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի մշակում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Քաղաքաշինության բնագավառի զարգացման ապահովող հիմնական ուղղությունների նախանշում, դրանց իրագործումն ապահովող միջոցառումների հաստատում, առանձին տարածքների և թաղամասերի (այդ թվում՝ Երևան քաղաքի Սարի թաղ, Կոնդ, Նորագյուղ թաղամասերի և այլն) զարգացմանն ուղղված մոտեցումների ամրագրում: |
| 360 | **Հայաստանի Հանրապետության տարածքի բազմակենտրոն զարգացման ապահովում**<br><br>**<u>360.1 «Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» 2017-2024</u>** |

**թվականների ծրագրի շրջանակներում՝ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 և 10.4 հոդվածներից և նպատակն է՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման միջոցով ՀՀ համայնքներն ապահովել տարածական պլանավորման փաստաթղթերով և խնայել ֆինանսական միջոցները՝ տարբեր մակարդակների փաստաթղթերի համատեղման շնորհիվ:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Միկրոռեգիոնալ պլանավորման միջոցով քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը սահմանված է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.4 հոդվածով, իսկ 14.3 հոդվածի 32-րդ մասով համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման համար վերջնաժամկետ է սահմանված 2021 թվականի հունվարի 1-ը:

Ներկայումս ՀՀ բնակավայրերից ընդամենը 126-ն ունեն հաստատված գլխավոր հատակագծեր:

Ծրագրի շրջանակներում 2017 թվականին մշակվել են ՀՀ Տավուշի մարզի (բացառությամբ Դիլիջան խոշորացված համայնքի) միկրոռեգիոնալ փաստաթղթերը, իսկ 2018 թվականին՝ ՀՀ Սյունիքի և Արարատի մարզերինը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախատեսված է «Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» 2017-2024 թվականների ծրագրի շրջանակներում՝

- 2019 թվականին մշակել ՀՀ Վայոց ձորի և Արմավիրի մարզերի ու Դիլիջանի խոշորացված համայնքի,
- 2020 թվականին՝ ՀՀ Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերի,
- 2021 թվականին՝ ՀՀ Լոռու և Կոտայքի մարզերի (մասնակի),
- 2022 թվականին՝ ՀՀ Կոտայքի և Շիրակի մարզերի,
- 2023 թվականին՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի համար:
- 2024 թվականին՝ ՀՀ տարաբնակեցման և տարածքների կազմակերպման գլխավոր նախագծի մշակում (ՀՀ տարածքի 20 տարվա զարգացման ռազմավարությունը):

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

ՀՀ բոլոր համայնքների ապահովում տարածական պլանավորման փաստաթղթերով:

**360.2 «Սևան» ազգային պարկի Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության առաջադրանքի մշակում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 հոդվածի 14-րդ մասից և նպատակը՝ ներդրումների ներգրավման միջոցով «Սևան» ազգային պարկի տարածքում տնտեսական ակտիվության բարձրացման և Սևանա լճի զբոսաշրջային հնարավորությունների ընդլայնումն է:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս օգտագործվում է Սևանա լճի ռեկրեացիոն ռեսուրսների չնչին մասը, կառուցապատումը կանոնակարգված չէ, գերակշռում են անշուք, ոչ հիմնական շինությունները, լքված, չօգտագործվող կամ անավարտ կառույցներն, ընդ որում դրանց մի մասը ջրածածկման գոտում են:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

«Սևան» ազգային պարկի Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության մշակմամբ կանոնակարգել առկա կառուցապատումը՝ նախատեսվող կարգավորումները համաձայնեցնելով միջոցառման համակատարող դիտարկված մարմինների հետ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Սևանա լճի ռեկրեացիոն գոտում ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծում:

**360.3 «Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N728-Ն**

**որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 հոդվածի 15-րդ մասի դրույթներից և նպատակը՝ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանում **առկա հիմնախնդիրներից բխող կառուցապատման կանոնակարգման լրացուցիչ և հատուկ պայմանների ու նորմերի սահմանումն է:**

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հաշվի առնելով Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի հասարակական և քաղաքաշինական դերն ու նշանակությունն՝ ինչպես նաև վերլուծելով դրանից բխող կառուցապատման առանձնահատկությունները, հարկ է արձանագրել, որ ներկայումս գործող օրենսդրական գործիքակազմը բավարար չէ մայրաքաղաքի կենտրոնի կառուցապատումը լիարժեքորեն կանոնակարգելու համար:

Ներկայումս բացակայում է Երևանի կենտրոնի՝ օրենքով ամրագրված հատուկ կարգավիճակն, ինչն անհնարին է դարձնում նշված տարածական գոտուն բնորոշ առանձնահատուկ կամ լրացուցիչ պայմանների սահմանումը:

Առկա խնդիրները՝ կառուցապատման ընթացքում պետական, հանրային և մասնավոր շահերի անբավարար հավասարակշռվածությունն, ինչպես նաև քաղաքաշինական գործունեության սուբյեկտների (պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններ, մասնավոր հատված, հասարակություն, մասնագիտական շրջանակներ) միջև համագործակցության մեխանիզմների անկատարությունն է:

**1.2Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օրենսդրական կարգավորման առաջարկների նախանշում և վերջիններիս լուծման ուղղությունների ամրագրում:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Մայրաքաղաքի քաղաքաշինական դիմագծի ձևավորման վրա գերիշխող ազդեցություն ունեցող տարածական գոտու պահպանման ու ներդաշնակ զարգացման իրական բարելավումը, հարմարավետ և բարձրարժեք գեղագիտական հատկանիշներով օժտված կենսամիջավարի ձևավորումը, հատուկ կարգավորման օբյեկտի տարածք սահմանելը:

**360.4 Սահմանամերձ համայնքներում քաղաքաշինական գործունեության իրականացման քաղաքականության մշակում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-7-րդ կետերի, 14.4 հոդվածի դրույթներից և նպատակը՝ սահմանամերձ համայնքներում քաղաքաշինական գործունեության իրականացման քաղաքականության մշակումն է:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Երկրի միակենտրոն զարգացման, ինչպես նաև անբարենպաստ աշխարհաքաղաքական պայմանների արդյունքում ՀՀ սահմանամերձ համայնքներում արձանագրվում է բնակչության թվաքանակի, տնտեսական գործունեության, ներդրումների անկում: Հաճախ գյուղատնտեսության վարումը դառնում է անհնարին, հողատարածքների անբարենպաստ տեղադիրքի պատճառով: Նշված համայնքներում առաջնահերթ խնդիր է բնակչության անվտանգության ապահովումը և բնակվելու համար բավարար պայմանների ապահովումը:

Ներկայումս իրականացվող «Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» 2017-2024 թվականների ծրագիրն ուղղված է նաև սահմանամերձ համայնքների խնդիրների գնահատմանը և զարգացման, բնակչության անվտանգության, շրջանցող ճանապարհների և ռեզերվային ջրամբարների, ջրագծերի և այլ անհրաժեշտ միջոցառումների նախատեսմանը: Օրինակ, ՀՀ Տավուշի մարզի միկրոռեգիոնալ փաստաթղթերով առաջարկվել են մարզի սահմանամերձ համայնքների համար շատ կարևոր միջոցառումներ, դրանց իրականացմանը ներգրավելով շահագրգիռ բոլոր մարմիններին:

Խնդիր է համարվում նաև հատուկ նորմերի և կանոնների մշակումը, ուղղված բնակչության անվտանգության ապահովմանը, որոշ արտոնությունների նախատեսումը, որը կխթանի ներդրումները և այլ տնտեսական գործունեությունը:

| | |
|---|---|
| | **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է հետևողականորեն հետամուտ լինել միկրոռեգիոնալ փաստաթղթերի մշակման արդյունքում սահմանամերձ բնակավայրերում ի հայտ եկած խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների իրագործմանն աջակցելու գործընթացին, ուսումնասիրել առկա այլ խնդիրները և միջոցառման համակատարող դիտարկված մարմինների հետ մշակել առաջարկությունների, մասնավորապես կառուցապատման ներդրումային ծրագրերի փաթեթ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Առաջնահերթության կարգով սահմանամերձ համայնքների քաղաքաշինական հիմնախնդիրների լուծում, անվտանգ կենսամիջավայրի ապահովում, բնակչության աճ: |
| **361** | **Քաղաքաշինության բնագավառում սահմանված ընթացակարգերի բարելավում**<br><br>**<u>361.1 «ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N408 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 հոդվածի 3-րդ կետի 3-րդ մասի դրույթներից և նպատակը՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված դրույթների համապատասխանեցումն է վերջին տարիների ընթացքում «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններին, ՀՀ հողային օրենսգրքին, գործառնական գոտիների ցանկի, դրանց համապատասխանող կոդերի, մի շարք կառուցապատման չափորոշիչների առավելագույն կամ նվազագույն ցուցանիշների սահմանումը, նախագծերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջների հստակեցումը, նախագծերին ներկայացվող պահանջների համապատասխանեցումը ստեղծվող երկրատեղեկատվական համակարգի միասնական չափորոշիչներին:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N408 որոշմամբ հաստատված կարգում արտացոլված չեն 2001 թվականից հետո գործողության մեջ դրված օրենքի մի շարք դրույթներ, որոնք առնչվում են նախագծերի համաձայնեցման և հաստատման ընթացակարգերին միջգերատեսչական հանձնաժողովի մասնակցությանը (օրենքի 14.3 հոդվածի 7-րդ և 8-րդ մասեր):<br>Տարբեր նախագծային կազմակերպությունների կողմից մշակվող գոտևորման նախագծերում միատեսակ գործառնական գոտիներին տրվում են տարբեր անվանումներ, հապավումներ և պայմանական նշաններ: Նախագծից նախագիծ տարբերվում են նաև կառուցապատման չափորոշիչների ու թույլատրելի օգտագործման ձևերի ամփոփ աղյուսակները:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համապատասխանեցնել նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման ընթացակարգն օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման դրույթներին, սահմանել միասնական մոտեցումներ գործառնական գոտիների անվանումների, դրանց հապավումների, կոդերի և գծագրերում պայմանական նշանների նկատմամբ, հաստատել կառուցապատման չափորոշիչների ու թույլատրելի օգտագործման ձևերի ամփոփ աղյուսակների օրինակելի ձևերը, սահմանել գոտիներում թույլատրելի օգտագործման (հիմնական և ոչ հիմնական՝ ուղեկցող) ձևերի ցանկը, ներառել դրույթներ, գոտևորման նախագծերի՝ ստեղծվող երկրատեղեկատվական համակարգի միասնական պահանջներին համապատասխանության մասով:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Գոտևորման նախագծերի համաձայնեցման ու հաստատման գործընթացի կանոնակարգում, նախագծերի որոշակի միասնական սկզբունքներով և տեսքով մշակում, երկրատեղեկատվական համակարգ նախագծերով սահմանվող տվյալների և պահանջների մուտքագրման դյուրինացում:<br><br>**<u>361.2 Ինքնակամ շինարարության կանխարգելմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների փաթեթի</u>** |

**մշակում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 հոդվածի 3-րդ կետի 3-րդ մասի դրույթներից և նպատակն՝ ինքնակամ շինարարության կանխման համար նախադրյալների ստեղծումն է:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ինքնակամ շինարարությունը կրում է համատարած բնույթ, բազմաթիվ ծուղակներ կան օրինական ընթացակարգը շրջանցելու և ինքնակամ կառույցն օրինականացնելու համար: Ընդ որում՝ վերջինս շահավետ է դառնում ինչպես կառուցապատողի, այնպես էլ համայնքի ղեկավարների համար: Արդյունքում հիմնականում անտեսվում են նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները, խախտվում են հակահրդեհային տարածությունները, սեյսմակայունությունը, փակվում է հարևան շենքերի բնական լուսավորությունը, մուտքը, ելքը և այլն: Նշվածը վատթարացնում է կենսամիջավայրը՝ խախտելով այլ անձանց իրավունքները:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օրենսդրական կարգավորումերի միջոցով ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման գործող կարգը վերանայել, որի պայմաններում ինքնակամ շինարարությունը կրում է համատարած բնույթ, բացառել կարգում հայտնաբերված կրկնությունները:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 6-ի N912-Ն որոշմամբ հաստատված դրույթները համապատասխանեցնել՝ ՀՀ հողային, ՀՀ քաղաքացիական, վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքերում, «Պետական տուրքի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքներում նախատեսվող փոփոխություններին և լրացումներին:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման արդյունքում կկանոնակարգվեն ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման հետ կապված խնդիրները՝ ՀՀ հողային, քաղաքացիական, վարչական իրավախախտումների մասին օրենսգրքերում, «Պետական տուրքի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքներում առաջարկվող փոփոխություններին և լրացումներին համապատասխան:

**361.3 «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի և «Տարածքի հատակագծման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անրաժեշտությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 հոդվածի 3-րդ կետի 3-րդ մասի դրույթներից, նպատակը՝ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքում «տարածքի հատակագծման նախագիծ» հասկացության և մանրամասն հատակագծման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգի սահմանումն է:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում «տարածքի հատակագծման նախագիծ» հասկացության սահմանված չէ: Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի հիերարխիկ կառուցվածքում գլխավոր հատակագծից միանգամից անցում է կատարվում կառուցապատման նախագծին, ինչի արդյունքում հնարավոր է, որ իրար հետ սերտ կապված տարածքներում միմյանց փոխկապակցված միջավայր չձևավորվի:

Բացի այդ, ներկայումս քաղաքաշինական նախագծման հիերարխիական կառուցվածքում գլխավոր հատակագծին հաջորդում է գոտևորման նախագիծն, այնուհետև կառուցապատման նախագիծը: Գոտևորման նախագիծը սահմանում է գլխավոր հատակագծում ամրագրված գործառնական գոտիների նկատմամբ կիրառվող կարգավորիչները՝ թույլատրելի հողօգտագործումներին ներկայացվող հիմնական պահանջները ու կառուցապատման ծավալատարածական կարգավորիչները: Կառուցապատման նախագծի ընդգրկման շրջանակներն առավել սահմանափակ են, ուստի միմյանց հարող, սակայն առանձին կառուցապատման նախագծերով իրականացված թաղամասերը կարող են քաղաքաշինական միասնական, գործառնական և

հատակագծային կապերով միմյանց փոխկապակցված միջավայր չձևավորել:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 և 17-րդ հոդվածներում լրացում կատարելու միջոցով սահմանել «տարածքի հատակագծման նախագիծ» հասկացությունը:

Նախկինում կիրառվող մանրամասն հատակագծման նախագծերի կիրառման փորձի վերականգնումը հնարավորություն կտա որպես գոտևորման և կառուցապատման նախագծերի միջև միջանկյալ փուլ դիտարկել վերոնշյալ նախագիծը, որում միասնական լուծումներ կտրվեն 1.1 կետում լուսաբանված խնդիրներին:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Սահմանված կարգով հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքում կառուցապատման նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման նոր վերջնաժամկետի սահմանում:

Հաջորդող կառուցապատման նախագծերը՝ անկախ ընդգրկման սահմանից, հաջորդականությունից ի վերջո կկազմեն մեկ միասնական քաղաքաշինական միջավայրի փոխկապակցված բաղադրիչներ:

**<u>361.4 «ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N792-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2404-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 3-րդ մասի 6-րդ կետի դրույթներից և նպատակն է հատուկ կարգավորման օբյեկտներում քաղաքաշինական գործունեության հստակեցումը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներում քաղաքաշինական գործունեության համակարգման փորձը և խնդիրների վերլուծությունը ցույց են տալիս, որ կան որոշակի խնդիրներ՝ կապված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական փաստաթղթերի մշակման համար պատասխանատուների, փաստաթղթերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջների, համաձայնեցման ներկայացվող փաստաթղթերի սպառիչ ցանկի սահմանման հետ:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Վերանայել կամ լրացնել քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական փաստաթղթերին վերաբերող դրույթները, համաձայնեցման պահանջները և համաձայնեցման ներկայացվող փաստաթղթերի ցանկերը, հստակեցնել, թե որ օբյեկտների վրա են տարածվում ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26- ի N792-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2404-Ն որոշումները, իրականացնել են նաև այլ ճշգրտումներ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Որոշման նախագծի ընդունման արդյունքում կվերացվեն իրավական ակտերում առաջացած անհամապատասխանությունները, կկանոնակարգվեն հատուկ կարգավորման գոտիներում քաղաքաշինական գործունեությանը ներկայացվող պահանջները, գործընթացը կիրականացվի հստակ սահմանված պայմանների շրջանակներում:

362

**Կառուցապատման նպատակով թույլտվությունների տրամադրման գործընթացում էլեկտրոնային հարթակի կիրառության ընդլայնում**

**<u>362.1 «Կառուցապատման թույլտվությունների էլեկտրոնային համակարգին անցնելու 2019-2021 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

| | |
|---|---|
| | Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ օրենքի (14.02.2019թ. ՆԱԺՈ-002-Ն) «3.2 ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ» բաժնի վերջին պարբերության դրույթներից և նպատակն է՝ կառուցապատման ընթացակարգերի կանոնակարգումը՝ ուղղված ամբողջ գործընթացի, իրավասու մարմինների վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման կարգերի պարզեցմանը, հայցողական լիազորությունների հստակեցմանը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործող ընթացակարգի համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի (այսուհետ՝ ՃՀԱ) հետ միասին իրավասու մարմինը (համայնքի ղեկավար) կառուցապատողին պետք է տրամադրի նաև մատակարար կազմակերպություններից ստացված ինժեներական ենթակառուցվածքին միանալու տեխնիկական պայմանները: Գործնականում՝ նշվածը մեկ քայլով չի իրականացվում և ՃՀԱ ստանալուց հետո, կառուցապատողները ստիպված են լինում ինքնուրույն դիմել մատակարար կազմակերպություններ՝ տեխնիկական պայմանները հստակեցնելու, ինժեներական ենթակառուցվածքի արտաքին գծերի ուղեգծերը համաձայնեցնելու, ինչպես նաև յուրաքանչյուր ուղեգիծը նաև այլ մատակարար կազմակեպությունների և իրավասու մարմնի հետ:<br>2016-2017 թվականներին գործարկվել է կառուցապատման թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային e-permits համակարգը, որի ռացիոնալ, արագ և թափանցիկ գործելու, միաժամանակյա համաձայնեցումներ ստանալու և թվային միջավայրում բացվող բազմաթիվ այլ հնարավորությունները պրակտիկորեն չեն օգտագործվում, քանի որ առցանց գործելու ընտրությունը թողնված է կառուցապատողի հայեցողությանը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսում է գործառույթների զգալի մասը իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ e-permits միասնական համակարգի միջոցով, դիտարկելով այն որպես էլեկտրոնային Մեկ պատուհան, որում կգործեն ընթացակարգին մասնակից բոլոր մարմինները և կազմակերպությունները:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կառուցապատման թույլտվությունների էլեկտրոնային համակարգի անցումը կնպաստի հարմար, թափանցիկ գործելու միջավայրի (էլեկտրոնային Մեկ պատուհան) ստեղծմանը, որը հնարավորություն կտա մի կողմից ապահովել բոլոր մարմինների և կազմակերպությունների պահանջները, մյուս կողմից առցանց և միաժամանակյա գործելու շնորհիվ կկրճատի կառուցապատողների շփումները վերջիններիս հետ, կխնայի ժամանակը: Համակարգը թույլ կտա նաև իրականացնել գործընթացների մոնիթորինգը և կծառայի շինարարության բնագավառի միասնական տեղեկատվական շտեմարան:<br><br>**<u>362.2 «ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ օրենքի (14.02.2019թ. ՆԱԺՈ-002-Ն) «3.2 ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ» բաժնի վերջին պարբերության, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի դրույթներից և նպատակն է կառուցապատման ընթացակարգերի կանոնակարգումն՝ ուղղված ամբողջ գործընթացի հստակեցմանը, իրավասու մարմինների վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման կարգերի պարզեցմանը, հայցողական լիազորությունների հստակեցմանը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործող ընթացակարգի համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի (այսուհետ՝ ՃՀԱ) հետ միասին իրավասու մարմինը (համայնքի ղեկավար) կառուցապատողին պետք է տրամադրի նաև մատակարար կազմակերպություններից ստացված ինժեներական ենթակառուցվածքին միանալու տեխնիկական պայմանները: Գործնականում՝ նշվածը մեկ քայլով չի իրականացվում և, կառուցապատողները ստիպված են լինում ՃՀԱ ստանալուց հետո ինքնուրույն դիմել մատակարար կազմակերպություններ («Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ներ)՝ տեխնիկական պայմանները հստակեցնելու, ինժեներական ենթակառուցվածքի արտաքին գծերի ուղեգծերը համաձայնեցնելու, ինչպես նաև յուրաքանչյուր ուղեգիծը նաև այլ մատակարար կազմակեպությունների և իրավասու մարմնի հետ: |

| | |
|---|---|
| | Դրա հետ մեկտեղ 2016-2017 թվականներին գործարկվել է կառուցապատման թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային e-permits համակարգը, որի ռացիոնալ, արագ և թափանցիկ գործելու, միաժամանակյա համաձայնեցումներ ստանալու և թվային միջավայրում բացվող բազմաթիվ այլ հնարավորությունները պրակտիկորեն չեն օգտագործվում, քանի որ առցանց գործելու ընտրությունը թողնված է կառուցապատողի հայեցողությանը:<br>Հաջորդ խնդիրն, որ բացահայտվել է բազմաթիվ քննարկումների և փաստացի իրավիճակի ուսումնասիրության արդյունքում հետևյալն է՝ հաճախ շինարարության թույլտվություններ են տրամադրվում ոչ լրիվ կազմով ներկայացվող նախագծերի հիման վրա, մասնավորապես՝ նախագծային փաստաթղթերը մշակվում են առանց ինժեներական ենթակառուցվածքին միանալու արտաքին գծերի նախագծային բաժինների, թողնելով նշվածը հետագայի համար՝ որպես առանձին գործընթաց յուրաքանչյուր մատակարար կազմակերպության կողմից իրականացվելու պայմանով: Վերջինս, բացի այն որ խախտում է գործող օրենսդրության պահանջները, առաջացնում է նաև բազմաթիվ խնդիրներ՝ կառուցված շենքի պահանջներին համապատասխան հզորություններ ապահովվելու տեսանկյունից, ինչպես նաև մեկ կառույցի համար տրամադրվող շինարարության թույլտվությունները մեկի փոխարեն դառնում են մի քանիսը (մեկը՝ շենքի կառուցման համար, մյուսը արտաքին էլեկտրամատակարարման գծի անցկացման, մյուսը՝ ջրամատակարարման և ջրահեռացման արտաքին գծերի կառուցման համար և այլն):<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու միջոցով նախատեսել նոր ընթացակարգ, որը նախատեսում է գործառույթների զգալի մասը իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ e-permits միասնական համակարգի միջոցով, դիտարկելով այն որպես էլեկտրոնային Մեկ պատուհան, որում կգործեն ընթացակարգին մասնակից բոլոր մարմինները և կազմակերպությունները:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման արդյունքում կկանոնակարգվեն կառուցապատման հիմնական փուլերի (ՃՀԱ-ի տրամադրում, նախագծի համաձայնեցում և շինարարության թույլտվության տրամադրում) հետ կապված առկա խնդիրները, կստեղծվի հարմար, թափանցիկ գործելու միջավայր (էլեկտրոնային Մեկ պատուհան), որը հնարավորություն կտա մի կողմից ապահովել բոլոր մարմինների և կազմակերպությունների պահանջները, մյուս կողմից առցանց և միաժամանակյա գործելու շնորհիվ կկրճատի կառուցապատողների շփումները վերջիններիս հետ, կխնայի ժամանակը: Համակարգը թույլ կտա նաև իրականացնել գործընթացների մոնիթորինգը և կձևավորի շինարարության բնագավառի միասնական տեղեկատվական շտեմարան: |
| 363 | **Քաղաքաշինական ոլորտում գործունեության լիցենզավորման տեսակների սահմանում եվ մասնագետների որակավորման գործընթացի կանոնակարգում**<br><br>**<u>363.1 «Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության (06.12.2015թ. փոփոխություններով) 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 59-րդ հոդվածի, 86-րդ հոդվածի 1-ին մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «բ» մասի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 18-րդ կետերի, 21-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների և ՀՀ կառավարության ծրագրի 5-րդ գլխի 5.1 և 5.8 կետերի պահանջներից:<br>Միջոցառման իրականացման նպատակն է հստակեցնել և առավելագույնս համապատասխանեցնել քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման խնդիրներին առնչվող իրավական ակտերի պահանջները (դրույթները)՝ ոլորտում գործունեություն ծավալող քաղաքաշինական սուբյեկտների նկատմամբ, դրանց կիրառելիությունը պարզ, մատչելի և արդար դարձնելու նպատակով:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն, քաղաքաշինության բնագավառում (ինժեներական- |

| | |
|---|---|
| | ճարտարագիտական մասնագիտությունների մասով) գործունեության առանձին տեսակների համար սահմանված են լիցենզավորման, իսկ «Ճարտարապետական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ քաղաքաշինության բնագավառում ճարտարապետական և կոնստրուկտորական գործունեության համար արտոնագրման պարտադիր պահանջներ:<br>Լիցենզավորման գործող կարգերը և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը չեն նպաստում լիցենզավորման գործընթացի արդյունքում զարգացող շուկայի պահանջարկին համապատասխան և անհրաժեշտ որակավորմամբ ոլորտում տնտեսվարող սուբյեկտների ձևավորմանը, հիմնականում չեն տարանջատվում տարբեր որակավորում և փորձառություն ունեցող անձանց կամ կազմակերպությունների գործունեությունները: Նշված արդյունքում հնարավոր չէ ապահովել սպառողների իրավունքների պաշտպանությունը, ապրանքների և ծառայությունների որակի բարձրացումը, ինչպես նաև շուկայական հարաբերությունների կարգավորումը:<br>Լիցենզավորման ներկա կարգերը համահունչ չեն միմյանց և վերանայման, միավորման և քաղաքաշինության բնագավառի լիցենզավորման բոլոր տեսակների համար միասնական կարգով սահմանելու անհրաժեշտություն կա: Հարկավոր է սահմանել նաև այնպիսի վավերապայմաններ, որոնք հավասար դաշտ կստեղծեն համապատասխան կրթությամբ տարբեր մասնագետների համար:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գործող կարգավորումներում առկա անհամապատասխանություններն ու օրենսդրական հակասությունները վերացնելու նպատակով գործող իրավական ակտերի համալիր վերանայում և արդիականացում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հավասար, մրցակցային պայմաններում գործարար հմտություններ ունեցող յուրաքանչյուր անձի համար բիզնես արդյունքի ստեղծման և բարեկեցության պայմանների ապահովում և արդի պահանջարկին համապատասխան որակավորված տնտեսվարող սուբյեկտների ձևավորում: |
| **364** | **Ճարտարապետա-շինարարական նախագծերի և շինարարության որակի բարելավում**<br><br>**364.1 ««Քաղաքաշինության մասին» և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն և 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշումների վերանայում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 86-րդ հոդվածի 9-րդ մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» մասի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի և ՀՀ կառավարության ծրագրի Կառավարության խնդիրների 5-րդ գլխի 5.3 կետի պահանջներից:<br>Միջոցառման իրականացման նպատակն է հավասար, մրցակցային պայմաններում համապատասխան որակավորում և ներուժ ունեցող կապալառուների (այդ թվում նախագծողների, տեխնիկական և հեղինակային հսկողների) ընտրությունը, շինարարական ծրագրի ընթացքի արդյունավետության և պատշաճ վերահսկողության, ծախսերի հասցեականության և որպես հետևանք վերջնական արդյունքի՝ կատարման ենթակա նախագծային և շինարարական աշխատանքների և ծառայությունների մատուցման որակական բարձր չափանիշների ապահովումը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջով՝ հայտերի գնահատման հիմնական սկզբունքը՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալն է:<br>Ակնհայտ է, որ ծավալուն և ծախսատար շինարարական օբյեկտների գնման գործընթացի արդյունքային ցուցանիշը փոխկապակցված է մի շարք պատասխանատու և ժամանակատար գործընթացների հետ և ունի ռիսկայնության բարձր գործոն:<br>Արդյունքում, հաճախ ընտրված մասնակիցների մեծ մասը չի համապատասխանում որակավորման, փորձառության, գիտելիքների, հմտությունների ակնկալվող մակարդակին, իրականացնում են աշխատանքներ կամ մատուցում ծառայություններ ոչ համարժեք (գործող շուկայի իրական կարիքին չհամապատասխանող գնային նվազագույն (մինչև 40-45% շեղումով) առաջարկի ներկայացմամբ) ֆինանսական միջոցների ծախսմամբ, ինչը հանգեցնում է նրան, որ ծրագրի կատարման ընթացքում բախվում ենք գրեթե անլուծելի խնդիրների հետ (մշակում |

| | |
|---|---|
| | են թերի լրակազմով և էական բացթողումներով նախագծային փաստաթղթեր, կատարում են անորակ վերահսկողություն, շինարարական աշխատանքների ընթացքում չեն ապահովում նորմատիվ փաստաթղթերով ամրագրված շինարարության բարդ տեխնոլոգիայի բնորոշ միջոցառումները):<br>Գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրերի կազմման, պայմանագրերի կատարման և կառավարման գործում թերի գործիքակազմի առկայության հետևանքներն են՝<br>- ընտրված մասնակցի (Կատարողի) բարձր ռիսկային գործոնը,<br>- ծրագրի ընթացքի լիարժեք վերահսկողության գրեթե անհնարինությունը,<br>- պայմանագրային պարտավորությունների չկատարման և դրա հիմքով պայմանագրերի լուծման հավանականության բարձր աստիճանը,<br>- ծրագրով նախատեսված ժամկետների էական խախտումները,<br>- կապիտալ ներդրումների ոչ նպատակային ծախսը և ցածրորակ արտադրանքի ձեռքբերման մեծ հավանականությունը<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է գնումների իրավերի պահանջներում ներդնել գնահատման նոր չափանիշներ՝ «Քաղաքաշինության մասին», «Գնումների մասին» ՀՀ օրենքներում և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշումներում փոփոխություն կատարելու միջոցով:<br>**2 Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հավասար, մրցակցային պայմաններում գործարար հմտություններ ունեցող յուրաքանչյուր անձի համար բիզնես արդյունքի ստեղծման և բարեկեցության պայմանների ապահովում և արդի պահանջարկին համապատասխան որակավորված տնտեսվարող սուբյեկտների ձևավորում, իսկ շինարարական ծրագրերի դեպքում պատշաճ կապալառուների և հսկողական ծառայություններ մատուցողների, նախագծային և շինարարական բարձրորակ արտադրանքի ձեռքբերում:<br><br>**<u>364.2 «ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N879-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Շուկայական հարաբերությունների և միջազգային ինտեգրացիոն գործընթացների զարգացման պայմաններում պետական ներդրումային ծախսերի արդյունավետ պլանավորման, շինարարության ոլորտի զարգացման և բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ծախսերի գնահատման համակարգի բարեփոխում:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N879-Ն որոշմամբ հաստատվել է գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը: Կարգը կազմվել է 1994–1995 թվականների մեթոդաբանության հիմքով, երբ դեռևս բացակայում էին շուկայական հարաբերությունները: Ներկայումս շինարարական աշխատանքների արժեքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով 1984 թվականի նորմատիվ բազան, այդ թվում աշխատավարձի և մեքենամեխանիզմների շահագործման արժեքը հաշվարկվում է նախկինում գոյություն ունեցող գներով՝ կիրառելով համապատասխան գործակիցներ, որտեղ հաշվի չեն առնված նոր տեխնոլոգիաների, նոր մեքենաների և սարքավորումների շահագործման, ինչպես նաև աշխատավարձի ներկայիս պահանջները: Ներկայումս գործող վերոնշյալ կարգով շինմոնտաժային աշխատանքների նախահաշվով նախատեսված ծախսերի և փաստացի ծախսերի միջև առկա են անհամապատասխանություններ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է քաղաքաշինության ոլորտում պետական և համայնքային բյուջեների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների գնագոյացման արդիականացման հայեցակարգի մշակում՝ գնագոյացման բազիսաինդեքսային մեթոդաբանությունից անցնելով ժամանակակից, Եվրոպական և ԱՊՀ երկրներում կիրառվող ռեսուրսային մեթոդաբանությանը, պետական ներդրումային ծախսերի պլանավորման պայմաններում առավելությունը տալով խոշորացված գներով շինարարության արժեքի հաշվարկման կարգին, որն ավելի |

| | |
|---|---|
| | կպարզեցնի բյուջեների ծախսային ծրագրերի պլանավորման և գնման գործընթացի կազմակերպումը:<br>Որպես միջոցառման կատարմանն ուղղված քայլ՝ շինարարական աշխատանքների գնագոյացման արդիականացման հայեցակարգը հաստատելու մասին նորմատիվ իրավական ակտի ընդունման համար կմշակվի ՀՀ կառավարության որոշման նախագիծ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Քաղաքաշինության ոլորտում պետական և համայնքային բյուջեների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների գնագոյացման արդիականացմամբ շինարարական նեդրումային ծրագրերի և առանձին տեսակի շինարարական աշխատանքների գնահատման գործընթացում կխուսափենք 1984 թվականի գներից և դրանց ինդեքսավորման մեթոդներից:<br>Կունենանք շուկայական հարաբերությունների և միջազգային ինտեգրացիոն գործընթացների զարգացման պայմաններում շինարարության ոլորտում պետական ներդրումային ծախսերի արդյունավետ պլանավորում:<br>Գնագոյացման ռազմավարության արդիականացմամբ կստեղծվի բարենպաստ ներդրումային միջավայր, որը կնպաստի ոլորտի զարգացմանը:<br><br>**<u>364.3 «Մի շարք օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և «Հայաստանի Հանրապետության կառավարությնա 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն և 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության (06.12.2015թ. փոփոխություններով) 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 86-րդ հոդվածի 3-րդ, 9-րդ, 10-րդ մասերի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 10.1 հոդվածների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների և ՀՀ կառավարության ծրագրի Կառավարության խնդիրների 2-րդ գլխի պահանջներից:<br>Միջոցառման նպատակն է ՀՀ պետական բյուջեի միջոցների՝ այդ թվում վարկերի (եթե վարկային պայմանագրով այլ բան նախատեսված չէ), դրամաշնորհների, համայնքին տրամադրվող սուբվենցիաների, ինչպես նաև արտաբյուջետային և պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջոցների հաշվին ֆինանսավորվող քաղաքաշինական ծրագրերի առաջնահերթությունների, նպատակային և արդյունավետ ծախսերի կանխատեսումը՝ միասնական պատվիրատուի կողմից մշակվող քաղաքականության հիմնական սկզբունքներին և իրական պահանջարկին համապատասխանեցումը, քաղաքաշինական գործունեության օբյեկտի նկատմամբ սահմանվող նախագծման միասնական պարտադիր պայմանների, պահանջների և սահմանափակումների ապահովումը, պետական կառավարման արդյունավետության բարձրացումը և հանրային ֆինանսների ծախսարդյունավետ կառավարումը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված Կարգով սահմանվում է, որ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մինչև 70 մլն. դրամ նախահաշվային արժեք ունեցող շինարարական ծրագրերի՝ ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումներն իրականացվում են պետական կառավարման այն մարմինների կողմից, որոնց կամ որոնց ենթակա կազմակերպությունների օգտագործման տակ գտնվում է տվյալ գույքը:<br>Շինարարական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումներն իրականացվում են շինարարության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող մարմնի (մարմինների) կողմից, իսկ շինարարական ծրագրերի (շինարարական աշխատանքների) գնումները՝ պետական կառավարման այն մարմինների կողմից, որոնց կամ որոնց ենթակա կազմակերպությունների օգտագործման տակ գտնվում է տվյալ գույքը:<br>Գործնականում, շինարարական ծրագրերի գնման գործընթացների նախապատրաստական փուլում վերը նշված պատվիրատու-կառուցապատողների (պետական կառավարման մարմինների կամ կազմակերպությունների) կողմից իրականացվում են գնումների պլանավորման (ծախսերի բաշխման և ընթացակարգերի սահմանման), |

| | |
|---|---|
| | գնման առարկայի բնութագրերի մշակման և հաստատման գործառույթներ, որոնք պահանջում են մասնագիտական մոտեցում:<br>Սակայն, մեկ շինարարական ծրագրի մասով երկու պատվիրատուների՝ մի կողմից շինմոնտաժային աշխատանքների, իսկ մյուս կողմից տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների համար սահմանումը՝ հանգեցնում է պատվիրատուների (ի դեմս ՀՀ պետական կառավարման մարմինների, ՀՀ մարզպետարանների, համայնքների) չհամաձայնեցված գործողությունների, ժամկետների անհիմն երկարաձգման, ծրագրի անարդյունավետ ընթացքի, ինչպես նաև վերահսկողության, նորմատիվ պահանջների ապահովման, մոնիտորինգի և կոնֆլիկտների կառավարելիության նվազեցման:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրները կարգավորելու համար առաջարկվում է ՀՀ պետական բյուջեների միջոցների հաշվին՝ այդ թվում վարկերի (եթե վարկային պայմանագրով այլ բան նախատեսված չէ), դրամաշնորհների, համայնքին տրամադրվող սուբվենցիաների, ինչպես նաև արտաբյուջետային և պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջոցների հաշվին ֆինանսավորվող քաղաքաշինական ծրագրերի իրականացման համար սահմանել միասնական պատվիրատու:<br>**1. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ պետական բյուջեի միջոցների (այդ թվում վարկային) իրականացվող քաղաքաշինական ծրագրերի միասնական պատվիրատուի սահմանում՝ գերատեսչությունների կրկնվող գործառույթների համախմբման արդյունքում ծախսարդյունավետության և աշխատանքի արդյունավետության բարձրացման, ծրագրերի արդյունքների համար պատասխանատվության որոշակիացման, նույնանման հարցերի վերաբերյալ կամայական որոշումներ ընդունելու հնարավորություն բացառելու նպատակով:<br><br>**<u>364.4 Պետական մարմինների կողմից քաղաքաշինական ծրագրերի ֆինանսավորման հայտերի կազմման համար պարտադիր (միասնական) պահանջների սահմանում՝ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների միջոցով</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 86-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի «բ» մասի, 6-րդ հոդվածի «ը» և «թ» մասերի, 10-րդ հոդվածի «ա» մասի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 17-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի և ՀՀ կառավարության ծրագրի Կառավարության խնդիրների 2-րդ մասի պահանջներից:<br>Միջոցառման իրականացման նպատակն է պատվիրատու հանդիսացող մարմինների կողմից շինարարական ծրագրերի ֆինանսավորման հայտերի ներկայացման համար միասնական չափանիշների կիրառումը՝ ոլորտում գործող քաղաքականության միջոցառումներին և ռազմավարական խնդիրներին համապատասխան:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս, ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման համաձայն հաստատված գնման հայտերը՝ ըստ գնման առարկայի տեխնիկական բնութագրի, քանակի, մեկ միավորի առավելագույն գնի, մատակարարման վայրի և ժամկետների, վճարման պայմանների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մատակարարվելիք ապրանքի, կատարվելիք աշխատանքի կամ մատուցվելիք ծառայության որակի գնահատման նպատակով նաև փորձագիտական եզրակացություն ներկայացնելու պահանջի և այլն:<br>ՀՀ ՄԺԾԾ և ՀՀ պետական բյուջեների նախագծերով նախատեսվող շինարարական ծրագրերի համար ներկայացվող հայտերը գնահատվում են առանձին ծախսերի հաշվարկմամբ՝ այն է՝ նախագծային աշխատանքներ և շինարարական աշխատանքներ (այդ թվում տեխնիկական և հեղինակային հսկողություններ):<br>Ոլորտի կարճաժամկետ և երկարաժամկետ խնդիրների լիարժեք գնահատման համար անհրաժեշտ է բյուջետային հայտերում՝ հատկապես նոր օբյեկտների նախագծային և շինարարական աշխատանքների ծախսերի (խոշորացված) հանրագումարի արտահայտումը՝ ծախսերի մեկ փաթեթի ներքո:<br>Հակառակ պարագայում՝<br>- տարեկան կամ եռամյա կտրվածքով նոր օբյեկտի միայն նախագծային ծախսերը թույլ չեն տալիս կանխատեսելի դարձնել ծրագրի իրագործումը |

| | |
|---|---|
| | - նախօրոք մշակված և 2-3 տարվա վաղեմություն ունեցող նախագծային փաստաթղթերը մի շարք դեպքերում հանդիսանում են շինարարական ծրագրի իրագործման խոչընդոտ՝ չհամապատասխանելով արդեն իսկ արդիականցված քաղաքականության միջոցառումներին<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է՝ ՀՀ ՄԺԾԾ և ՀՀ պետական բյուջեների ձևավորման մեթոդաբանությունում կատարել համապատասխան փոփոխություններ և սահմանել լրացուցիչ պահանջներ շինարարական ծախսային ծրագրերի ամբողջական (այդ թվում նախագծման փուլի, ելակետային տվյալների, տեխնիկական պայմանների, փորձագիտական եզրակացությունների ձեռքբերման) խոշորացված գնահատման և ներդրման նպատակահարմարության գործընթաց՝ շինարարական ծրագրերի իրագործման ողջամիտ ժամկետների սահմանմամբ՝ մինչև 3 տարի:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ ՄԺԾԾ և ՀՀ պետական բյուջեների ձևավորում՝ ոլորտի քաղաքականության միջոցառումներին համապատասխան, ծրագրերի արդյունավետություն, կանխատեսելիության ապահովում: |
| **365** | **Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի ապահովում (մշակում, տեղայնացում, արդիականացում)**<br><br>**365.1 Շինարարական նորմերի, ինչպես նաև կանոնների հավաքածուների մշակում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 5-րդ, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից և ՀՀ կառավարության ծրագրի 2-րդ մասի «2.2» ուղղության 7-րդ, 8-րդ և 10-րդ պարբերությունների պահանջներից:<br>Միջոցառման նպատակն է քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերի արդիականացումը, վերանայումը, մշակումը (տեղայնացումը), ԽՍՀՄ ժամանակներից գործողության մեջ մնացած նորմատիվ փաստաթղթերը միջազգային և եվրոպական ստանդարտներին համապատասխանեցումը և ներդաշնակեցումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերի համակարգի արդիականացման, միջպետական (տարածաշրջանային), միջազգային և եվրոպական նորմերին ու ստանդարտներին համապատասխանեցման ու ներդաշնակեցման ուղղությամբ հանրապետությունում աշխատանքներ տարվում են սկսած 1993 թվականից և կրում են շարունակական բնույթ:<br>Անցած տարիների ընթացքում, ըստ ամփոփ տվյալների, Հայաստանի Հանրապետությունում գործող ավելի քան 1000 նորմատիվ փաստաթղթերից վերանայվել, մշակվել (տեղայնացվել) և գործողության մեջ են դրվել շուրջ 436-ը:<br>Այդ ուղղությամբ ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N8 նիստի արձանագրային որոշմամբ հաստատվել է «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում) ծրագրին հավանություն տալու մասին» ծրագիրը, համաձայն որի 2017-2019 թվականների ՀՀ տարեկան պետական բյուջեներով նախատեսված 60,00 մլն դրամ (տարեկան 20,0-ական մլն ՀՀ դրամ) գումարի հաշվին իրականացվում է թվով 8 նորմատիվ փաստաթղթերի մշակում (տեղայնացում):<br>Եվս 15 նորմատիվ փաստաթղթերի մշակում (տեղայնացում) էլ նախատեսվում է 2020-2022 թվականներին՝ ՀՀ օրենքով չարգելված միջոցների հաշվին (անհրաժեշտ միջոցները ներառվել են ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտում):<br>Միջոցառման իրականացման համար հիմք են ընդունվում նաև ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի հայեցակարգին հավանություն տալու մասին» N17 արձանագրային որոշումը, ինչպես նաև ԱՊՀ շրջանակներում կնքված Միջկառավարական համաձայնագրերը, ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության և համագործակցության համաձայնագրի դրույթները, Առևտրի Համաշխարհային Կազմակերպության «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագիրը, Եվրասիական տնտեսական միությանն (ԵԱՏՄ) անդամակցելու հետ կապված մարտահրավերները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** |

| | |
|---|---|
| | Միջպետական (տարածաշրջանային), միջազգային և եվրոպական նորմերին ու ստանդարտներին համահունչ Հայաստանի քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերի արդիականացում՝ համաձայնեցնելով միջոցառման համակատարող դիտարկված մարմինի հետ:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Բնակչության առողջության և բարեկեցության բարելավման, շրջակա միջավայրի պաշտպանության, շենքերի ու շինությունների սեյսմակայունության, հուսալիության և էներգաարդյունավետության բնութագրերի բարձրացման ուղղությամբ միջպետական (տարածաշրջանային), միջազգային և եվրոպական նորմերին ու ստանդարտներին համահունչ արդիականացված քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթեր: |
| **366** | **«Շինարարությունում նոր տեխնոլոգիաների ներդրում եվ տեղական հումքի կիրառության ոլորտների ընդլայնում**<br><br>**<u>366.1 Շինարարությունում նոր տեխնոլոգիաների ներդրման և տեղական հումքի կիրառության ոլորտների ընդլայնման ուղղությամբ անհրաժեշտ գիտափորձարարական հետազոտությունների իրականացմանն աջակցության ցուցաբերում</u>**<br><br>**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ե» մասի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 19-րդ կետի, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից և ՀՀ կառավարության ծրագրի 5-րդ մասի «5.3» կետի 1-ին և 5-րդ պարբերությունների պահանջներից:<br>Նպատակն է՝ շինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրում և տեղական հումքի կիրառության ոլորտների ընդլայնում:<br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում շինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ աշխատանքներ են տարվում նոր կառուցվող և գոյություն ունեցող շենքերում սեյսմամեկուսացման համակարգերի կիրառության, բազալտապլաստե պոլիմերային կոմպոզիտ ամրանների արտադրության և կիրառության, բազալտե նուրբ մանրաթելերի հենքի վրա էկոլոգիապես մաքուր ջերմամեկուսիչ բամբակի և այլ անօրգանական ջերմամեկուսիչ նյութերի արտադրության տեխնոլոգիաների ներդրման, բազալտե և ապակե մանրաթելերի հենքի վրա փուլթրուզիոն եղանակով բազալտեպլաստե և ապակեպլաստե պոլիմերային կոմպոզիտներից տարբեր շինվածքների ու կոնստրուկտիվ տարրերի արտադրության տեխնոլոգիայի ներդրման և թողարկվող արտադրատեսակների կիրառության, թեթև ցինկապատ պողպատե բարակապատ տրամատներից շինարարական կոնստրուկցիաների արտադրության, ինչպես նաև այլ նոր տեխնոլոգիայի ներդրման համար:<br>Շինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման համար մշակված չեն Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրառության համար պահանջվող նորմատիվ փաստաթղթերը, լիարժեք չեն տեղական հումքի կիրառության անհրաժեշտ գիտափորձարարական հետազոտությունների տվյալները:<br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Շինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման և տեղական հումքի կիրառության խնդիրների լուծման համար նախատեսվում է աջակցել դրանց կիրառության համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերի մշակման:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում կապահովվի շինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառության համար պահանջվող համապատասխան նորմատիվ փաստաթղթերի առկայությունը:<br><br>**<u>366.2 Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնի արդիականացում և գործառույթների ընդլայնման համար իրավական հիմքերի ստեղծում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** |

| | |
|---|---|
| | Միջոցառման իրականացումը նախատեսվել է՝ հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 20-րդ կետը և նպատակը՝ քաղաքաշինության բնագավառի գիտահետազոտական և փորձարարական կենտրոնի ստեղծումն է:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնը քաղաքաշինության բնագավառի միակ գիտահետազոտական կազմակերպությունն է, որի գործունեության նպատակն է ապահովել հանրապետության շինարարական ոլորտի տեխնիկական առաջընթացը: Շինարարության ոլորտում կիրառվող շինանյութերի բնական հումքի, դրանցից կոնստրուկտիվ տարրերի ստացման տեխնոլոգիական առանձնահատկությունների հետազոտությունների արդյունքների հիման վրա ընկերության գործունեությունն ուղղված է սեյսմակայուն համակարգերի, շինարարական նորմերի, տեղական հումքով շինանյութերի և շինարարության որակի հսկման մեթոդների մշակմանն ու իրագործմանը:<br>Վերջին շրջանում միջոցների սղության պատճառով ընկերությունը հնարավորություն չի ունեցել արդիականացնել լաբորատոր սարքավորումների բազան և ապահովել բնագավառի զարգացումը՝ ժամանակակից պահանջներին համապատասխան:<br>Նշված խնդիրները արդիական են նաև ազգային անվտանգության համատեքստում. դրանք թելադրում են ոլորտի նորմատիվատեխնիկական բազայի, շինարարության որակի հսկման գործընթացի զարգացման անհրաժեշտությունը՝ ընկերությունում գիտահետազոտական և փորձարարական բազայի, գիտական կադրերի պատրաստման համակարգերի ստեղծման միջոցով:<br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնի վերակազմավորում՝ Քաղաքաշինական ծրագրերի գիտահետազոտական և փորձարարական կենտրոնի:<br>**Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Քաղաքաշինության ոլորտում տարվող քաղաքականության ճկունության բարձրացում՝ սեյսմակայուն համակարգերի, շինարարական նորմերի, տեղական հումքով շինանյութերի և շինարարության որակի հսկման մեթոդների մշակման ու իրագործման, գիտահետազոտական և փորձարարական բազայի, գիտական կադրերի պատրաստման համակարգերի ստեղծման միջոցով: |
| **367** | **Շենքերի (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերի) եվ շինությունների անձնագրավորման, ինչպես նաև անբավարար վիճակում գտնվող շենքերի եվ շինությունների հետագա շահագործման հետ կապված հարցերի կանոնակարգում**<br><br>**367.1 «Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրություն 82-րդ և 86-րդ հոդվածների, «Քաղաքացիական օրենսգրքի» 285-րդ հոդվածի 1-ին մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» մասի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 12-րդ և 20-րդ կետերի, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից և ՀՀ կառավարության ծրագրի Կառավարության խնդիրների 2-րդ կետի 7-րդ և 14-րդ ու Ծրագրի 2-րդ մասի «2.2» ուղղության 7-րդ, 8-րդ և 10-րդ պարբերությունների, 6-րդ մասի «6.6» ուղղության պահանջներից:<br>Նպատակն է կարգավորել նոր կառուցվող և շահագործման մեջ գտնվող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման գործընթացը, սահմանել անձնագրերի վերաբերյալ պահանջներ:<br>**1.2 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Տարբեր նշանակության շենքերի ու շինությունների կառավարման, հուսալի և անվտանգ շահագործման գործառույթների լիարժեք իրականացման որակի ու արդյունավետության ապահովումը պայմանավորված է շենքերի նախագծային լուծումների, շինարարության կատարողական փաստաթղթերի, ինչպես նաև շենքերի փաստացի տեխնիկական վիճակի և մոնիթորինգային դիտարկումների տվյալների առկայությամբ: Մինչդեռ, շատ դեպքերում, նշված տեխնիկական փաստաթղթերը պահպանված չեն, ինչի արդյունքում շենքերի և շինությունների |

կառավարումն ու շահագործումն իրականացնող մարմինները, սեփականատերերը չեն կարող տիրապետել անհրաժեշտ տեխնիկական տվյալների:

Ներկայումս շահագործվող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների մեծ մասի շահագործման սահմանված նորմատիվային ժամկետներն արդեն վաղուց լրացել են ու տարբեր վտանգավոր բնական երևույթների և տեխնածին ազդեցությունների հետևանքով առկա է դրանց վնասվածության և ֆիզիկական մաշվածության զգալի աճ, իսկ առանձին շինություններ շահագործվում են այլ նպատակային նշանակությամբ: Այդ պատճառով նման շենքերի ու շինությունների ըստ նպատակային նշանակության հուսալի շահագործումն ապահովելու համար անհրաժեշտ է համակարգված վերահսկողություն իրականացնել դրանց տեխնիկական վիճակի նկատմամբ:

Վտանգավոր բնական երևույթների և տեխնածին ազդեցությունների նվազեցման ու չեզոքացման, ժամանակին արտակարգ իրավիճակների հայտնաբերման և սեյսմիկ ռիսկի գնահատման նպատակով անհրաժեշտ է ստեղծել բոլոր շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ տվյալների միասնական բազա և ներդնել մոնիթորինգային դիտարկումներ համակարգ: Դրա համար անհրաժեշտ է ապահովել նոր կառուցվող և կազմակերպել գոյություն ունեցող տարբեր նպատակային նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորում, որի արդյունքում տրվող տեխնիկական անձնագրերի տվյալներն անհրաժեշտ և բավարար հիմք կհանդիսանան շենքերի ու շինությունների պահպանմանն ու անվտանգ շահագործմանը նպատակաուղղված համակարգված ծրագրային մոտեցումների մշակման, ինչպես նաև ՀՀ օրենսդրության և գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան սեյսմակայունության անհրաժեշտ մակարդակ ապահովելու միջոցառումներ իրականացնելու համար:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Տարբեր նշանակության շենքերի ու շինությունների կառավարման, հուսալի և անվտանգ շահագործման գործառույթների լիարժեք իրականացման համար նախագծով նախատեսվում է կարգավորել նոր կառուցվող և շահագործման մեջ գտնվող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման գործընթացը, սահմանել անձնագրերի վերաբերյալ պահանջներ:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման արդյունքում կսահմանվեն նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման իրականացման, անձնագրերի ձևերի և լրացմանը ներկայացվող պահանջներ:

Շենքերի ու շինությունների կառավարման, հուսալի և անվտանգ շահագործման համար կապահովվի անհրաժեշտ տվյալներ պարունակող անձնագրեր:

**367.2. «Տարբեր նշանակության շենքերի ու շինությունների սեյսմակայունության բարձրացման մեթոդաբանությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**

**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա», «բ» և «գ» մասերի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ, 12-րդ և 20-րդ կետերի, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից և ՀՀ կառավարության ծրագրի 2-րդ մասի «2.2» ուղղության 7-րդ, 8-րդ և 10-րդ պարբերությունների պահանջներից:

Նպատակն է Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անվտանգ և հուսալի շահագործումն ապահովելու համար դրանց սեյսմակայունությունը բարձրացնելու նպատակով իրականացվող ծրագրերում ներառելու առաջնայնության չափորոշիչների սահմանումը:

**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանում Հանրապետությունում շահագործվող շենքերի ու շինությունների մեծ մասի շահագործման սահմանված նորմատիվային ժամկետները վաղուց լրացել են: Տարբեր վտանգավոր բնական երևույթների և տեխնածին ազդեցությունների հետևանքով առկա է դրանց վնասվածության և ֆիզիկական մաշվածության զգալի աճ: Այդ պատճառով նման շենքերի ու շինությունների բնականոն և հուսալի շահագործումն ապահովելու

| | |
|---|---|
| | նպատակով անհրաժեշտ է համակարգված վերահսկողություն իրականացնել դրանց սեյսմակայունության բարձրացման ուղղությամբ:<br>Հանրապետությունում շենքերի և շինությունների պահպանման և հուսալի շահագործման համար նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան բավարար ծավալով միջոցառումներ և համակարգված մոտեցումներ չեն ցուցաբերվել: Արդյունքում, ֆիզիկական մաշվածության, ինչպես նաև տեխնածին ու արտածին գործոնների ազդեցության հետևանքով շենքերի և շինությունների զգալի մասը հայտնվել է անբավարար կամ վթարային տեխնիկական վիճակում: Նման շենքերը սեյսմակայունության տեսանկյունից հուսալի չեն և դրանց հետագա շահագործումը վտանգավոր է բնակչության անվտանգության և շրջակա միջավայրի համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հանրապետությունում սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ շենքերի ու շինությունների անվտանգ և հուսալի շահագործման նպատակով գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան սեյսմակայունության անհրաժեշտ մակարդակի ապահովման միջոցառումներ իրականացնելու նպատակով իրականացվող ծրագրերում ներառելու համար նախատեսվում է սահմանել շենքերի սեյսմակայունությունը բարձրացնելու առաջնայնության չափորոշիչներ:<br>**2.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում սեյսմիկ ռիսկի նվազեցման նպատակով կսահմանվի տարբեր նպատակային նշանակության շենքերի ու շինությունների սեյսմակայունությունը բարձրացնելու ուղղությամբ իրականացվող ծրագրերում շենքերը ներառելու առաջնայնության չափորոշիչները:<br><br>**<u>367.3 «Հասարակական և արտադրական նշանակության վթարային շենքերը և շինությունները քանդման ենթակա ճանաչելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>**<br><br>**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրություն 82-րդ և 86-րդ հոդվածների, «Քաղաքացիական օրենսգրքի» 285-րդ հոդվածի 1-ին մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» և «ե» մասերի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 12-րդ կետի, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից և ՀՀ կառավարության ծրագրի Կառավարության խնդիրների 2-րդ կետի 7-րդ և 14-րդ ու Ծրագրի 2-րդ մասի «2.2» ուղղության 7-րդ, 8-րդ և 10-րդ պարբերությունների, 6-րդ մասի «6.6» ուղղության պահանջներից:<br>Նպատակն է տարածքների համալիր զարգացման նպատակով կառուցապատման ծրագրերի իրականացման համար վթարային հասարակական և արտադրական նշանակության շենքերը և շինությունները քանդելու խնդրի իրավական կարգավորումը:<br>**1.2 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում առկա են պետության, կազմակերպությունների և իրավաբանական անձանց սեփականություն իրավունքով գրանցված հասարակական և արտադրական նշանակության շենքեր ու շինություններ, որոնց պահպանման և հուսալի շահագործման համար բավարար և համակարգված մոտեցումներ չեն ցուցաբերվել, շահագործման սահմանված նորմատիվային ժամկետներն վաղուց լրացել են և տարբեր վտանգավոր բնական երևույթների ու տեխնածին ազդեցությունների և ֆիզիկական մաշվածության հետևանքով դարձել են վթարային:<br>Հանրապետության տարածքի սեյսմիկ ռիսկով պայմանավորված, նման շենքերը հետագա շահագործման համար հուսալի չեն, դրանց շահագործումը վտանգավոր է մարդկանց առողջության և շրջակա միջավայրի համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես քաղաքային համայնքներում անվտանգության պահանջների ապահովման և կառուցապատման ծրագրերի իրականացման նպատակով առաջարկվում է կանոնակարգել վթարային հասարակական և արտադրական նշանակության շենքերի ու շինությունների քանդման խնդիրը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում կապահովվի կառուցապատման ծրագրերի իրականացման համար |

| | |
|---|---|
| | վթարային հասարակական և արտադրական նշանակության շենքերի ու շինությունների քանդման գործընթացի իրավական կարգավորումը:<br><br>**<u>367.4 «Տեխնիկական վճակից ելնելով բազմաբնակարան բնակելի շենքերը, բնակարանները, անհատական բնակելի տները բնակության համար ոչ պիտանի ճանաչելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>**<br><br>**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրություն 82-րդ և 86-րդ հոդվածի 3-րդ և 10-րդ մասերի, «Քաղաքացիական օրենսգրքի» 285-րդ հոդվածի 1-ին մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» և «ե» մասերի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 12-րդ կետի, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից և ՀՀ կառավարության ծրագրի 2-րդ մասի «2.2» ուղղության 7-րդ և 10-րդ պարբերությունների պահանջներից:<br>Միջոցառման նպատակն է մարդկանց կյանքի, առողջության և շրջակա միջավայրի անվտանգության ապահովումը:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանում Հանրապետությունում բազմաբնակարան շենքերի պահպանմանը և հուսալի շահագործմանը նպատակաուղղված բավարար և համակարգված մոտեցումներ չեն ցուցաբերվել: Անբավարար են եղել նաև շենքերի ուժեղացման, վերականգնման և սեյսմակայունության բարձրացման ուղղությամբ իրականացված աշխատանքների ծավալները: Քիչ չեն նաև այն շենքերը, որոնցում ընթացիկ վերանորոգում պահանջող առկա թերությունների (ջրամատակարարման կամ ջրահեռացման համակարգերի վնասվածքներ, տանիքի անբավարար տեխնիկական վիճակ, սալվածքի քայքայվածություն և այլն) ոչ ժամանակին վերացումը կամ բնակիչների կողմից կրող կոնստրուկցիաների ձևափոխության և ամբողջականության խախտման (բացվածքների իրականացում, կառուցվածքային կրող տարրերի կոնստրուկտիվ ձևափոխություններ և այլն) անթույլատրելի միջամտությունները շենքերի նախնական սեյսմակայունության մակարդակի նվազեցման պատճառ են դարձել՝ հանգեցնելով անբավարար տեխնիկական վիճակի, իսկ հետագայում՝ հնարավոր վթարների առաջացման:<br>Արդյունքում, ֆիզիկական մաշվածության, ինչպես նաև զանազան տեխնածին ու արտածին գործոնների ազդեցության հետևանքով շենքերի զգալի մասը հայտնվել է անբավարար կամ վթարային տեխնիկական վիճակում: Նման շենքերը սեյսմակայունության տեսանկյունից հուսալի չեն և դրանց հետագա շահագործումը վտանգավոր է մարդկանց անվտանգության և շրջակա միջավայրի համար:<br>Ներկայումս շահագործվող շենքերի ու շինությունների մեծ մասի շահագործման սահմանված նորմատիվային ժամկետներն վաղուց լրացել են: Տարբեր վտանգավոր բնական երևույթների և տեխնածին ազդեցությունների հետևանքով առկա է դրանց վնասվածության և ֆիզիկական մաշվածության զգալի աճ: Այդ պատճառով նման շենքերի ու շինությունների բնականոն և հուսալի շահագործումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է համակարգված վերահսկողություն իրականացնել դրանց տեխնիկական վիճակի նկատմամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կարևորելով մարդկանց կյանքի, առողջության և շրջակա միջավայրի անվտանգության ապահովումը՝ առաջարկվում է վթարային վիճակում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերը, բնակարանները, անհատական բնակելի տները բնակության համար ոչ պիտանի ճանաչելու խնդրի իրավական կարգավորումը:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում կապահովվի մարդկանց կյանքի, առողջության և շրջակա միջավայրի անվտանգության իրավական կարգավորումը: |
| **368** | **Բազմաբնակարան շենքերի պահպանման, շահագործման, արդիականացման հետ կապված հարցերի կանոնակարգում**<br><br>**<u>368.1 Բազմաբնակարան շենքերի պահպանման և շահագործման, արդիականացման (այդ թվում՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման) կանոնների մշակում</u>** |

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» և «գ» մասերի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 12-րդ կետի դրույթներից և նպատակը՝ Շենքերի (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերի), շինությունների պահպանման և շահագործման, ինչպես նաև դրանց արդիականացման (այդ թվում՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման) հետ կապված հարցերի կանոնակարգումն է:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում առկա են տարբեր նշանակության ավելի քան 545 հազար շենքեր և շինություններ, որոնցից մոտ 19 հազարը՝ բազմաբնակարան շենքերն են:<br>Բազմաբնակարան շենքերի սեփականատերերի, կամ նրանց կողմից ընտրված՝ կառավարման գործառույթներ իրականացնող անձանց կողմից այդ շենքերի պահպանման և շահագործման աշխատանքները պատշաճ կարգով չեն կազմակերպվում, չեն իրականացվում արդիականացման աշխատանքներ, ինչը հանգեցնում է դրանց շահագործման ժամկետների կրճատմանը, հուսալիության և սպառողական հատկանիշների նվազեցմանը:<br>Վերը նշվածն՝ իր հերթին, հանգեցնում է այդ շենքերի տեխնիկական վիճակի վատթարացմանը, և անդառնալի հետևանքները բացառելու համար անխուսափելի է դառնում այդ դրանց անվտանգ շահագործման և հուսալիության բարձրացման աշխատանքներին պետության մասնակցությունը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Բազմաբնակարան շենքերի պահպանման և շահագործման կանոնների մշակում, պահպանման, շահագործման և արդիականացման (այդ թվում՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման) աշխատանքներին պետական աջակցության մոտեցումների մշակում, *կառավարման գործառույթներ իրականացնող անձանց* մասնագիտական որակավորմանը *ներկայացվող պահանջների մշակում:*<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Բազմաբնակարան շենքերի՝<br>- շահագործման ժամկետների երկարաձգում, հուսալիության, հարմարավետության և շահագործման սպառողական հատկանիշների բարձրացում, էներգետիկ ռեսուրսների ծախսի նվազեցում,<br>- պահպանման, շահագործման և արդիականացման աշխատանքներին պետության մասնակցության դեպքերի, չափի և ուղղությունների հստակեցում,<br>- պահպանմանն ուղղված՝ կառավարման գործառույթի արդյունավետության բարձրացում:<br><br>**<u>368.2 «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10.1 հոդվածի 3-րդ մասի 12-րդ կետի դրույթներից և նպատակը բազմաբնակարան շենքերի անվտանգ շահագործման ապահովմանն ուղղված գործառույթի՝ բազմաբնակարան շենքի կառավարման հետ կապված կարգավորումների բարելավումն է:<br>**1.2 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2002 թվականին, սակայն բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման և պահպանման գործառույթները լիովին չեն իրականացվել՝ հիմնականում պայմանավորված օրենսդրական և ինստիտուցիոնալ միջավայրի բացերով, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների սահմանափակությամբ:<br>Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքում, նպատակ ունենալով կարգավորել բնագավառում առկա խնդիրները և իրավահարաբերությունները՝ տարանջատելով շենքի կառավարման և պահպանման գործառույթները և ամրագրելով բնագավառում գործող բոլոր սուբյեկտների իրավասություններն ու պարտականությունները, պարզեցնել կառավարման մեխանիզը, վերանայել որոշումների կայացման համար անհրաժեշտ ձայների հարաբերակցությունը և այլն:<br>**1.3 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու միջոցով՝<br>- սահմանել բազմաբնակարան շենքի կառավարման սկզբունքները. |

| | |
|---|---|
| | - սահմանել պետական լիազոր մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները.<br>- հստակեցնել բազմաբնակարան շենքի կառավարման և պահպանման գործառույթները, ինչպես նաև ընդհանուր բաժնային սեփականության կառավարմանն ու պահպանմանն առնչվող դրույթները, այդ թվում շենքի կառավարման մարմնի իրավասությունները և լիազորությունները,<br>- ամրագրել պարտադիր նորմերը և սահմանել դրանց իրականացման համար շենքի շինությունների սեփականատերերի կողմից վճարման ենթակա գումարների հաշվարկման և վճարման կարգը, յուրաքանչյուր շենքի համար ընթացիկ և կուտակային հաշվեհամարներ բացելու դրույթները.<br>- ամրագրել պետական աջակցության նպատակային ծրագրերի իրականացման վերաբերյալ դրույթներ:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարմանը սեփականատերերի առավել արդյունավետ մասնակցության բարձրացման, կառավարման մարմինների կայացումը և հզորացման, ինչպես նաև պետական աջակցության նպատակային ծրագրերի իրականացմամբ բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակի բարելավման և բնագավառում ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման համար նախադրյալների ստեղծում:<br><br>**<u>368.3 Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջների սահմանում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» և «գ» մասերի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 12-րդ կետի դրույթներից և նպատակը՝ բազմաբնակարան շենքերի պահպանմանն ուղղված՝ կառավարման գործառույթի արդյունավետության բարձրացումն է:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>1991 թվականից հետո բնակարանային ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքում ձևավորվել է ինստիտուցիոնալ նոր միջավայր, մասնավոր սեփականության գերակայությամբ՝ բազմաբնակարան շենքերի բնակարանների 99%-ը ներկայումս մասնավոր սեփականություն է:<br>Բնակարանային տնտեսության բնագավառում իրականացված բարեփոխումները անհրաժեշտություն առաջացրեցին վերակազմավորել բնակարանային ֆոնդի կառավարման ինստիտուցիոնալ համակարգը: Արդյունքում, բազմաբնակարան շենքի կառավարման առավել արդյունավետ ձև ընտրվեց շենքերի շինությունների սեփականատերերի կողմից կառավարման մարմինների, մասնավորապես, համատիրությունների ստեղծումը: Վերջիններս հիմնական խնդիրը՝ հավաքագրել շենքերի սեփականատերերի միջոցները ու դրանք ուղղել սահմանված պարտադիր նորմերի շրջանակներում տվյալ շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման ու անվտանգ շահագործման ապահովմանը:<br>Այդուհանդերձ, բազմաբնակարան շենքերի կառավարման բնագավառում առկա են խոչընդոտներ, որոնք էապես սահմնափակում են առաջընթացի հնարավորությունները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջների մշակում:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Բազմաբնակարան շենքերի պահպանմանն ուղղված՝ կառավարման գործառույթի արդյունավետության բարձրացում: |
| **369** | **Աղետի գոտու հիմնախնդիրների կանոնակարգում**<br><br>**<u>369.1 Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագրի ավարտ</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** |

| | | |
|---|---|---|
| | | Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ օրենքի (14.02.2019թ. ՆԱԺՈ-002-Ն) 4.2 բաժնի վերջին պարբերության և «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 7-րդ բաժինների դրույթներից և նպատակն է ապահովել աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանքիների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների բնակարանային խդիրների լուծման նկատմամբ ձևավորված պետական պարտավորությունների կատարումը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաշվառված և աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում 2008-2019 թվականների ընթացքում շահառու է ճանաչվել մոտ 5396 ընտանիք (2018 թվականի նկատմամբ թիվը 5381-ից աճել է բնակապահովման իրավունքը վերականգնած ընտանիքների հաշվին):<br>Նշված ընտանիքներից լուծվել է 4839 ընտանիքի բնակարանային խնդիրը լուծվել է 2008-2017 թվականներին, 44 ընտանիքի բնակարանային խնդիրը կլուծվի ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հատկացված մոտ 560.0 մլն. դրամի հաշվին՝ ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի N1339-Ն որոշմամբ նախատեսված կարգով:<br>Արդյունքում, դեռևս լուծման կարիք ունի Ծրագրի շահառու ճանաչված 513 ընտանիքի բնակարանային խնդիր (320-ը՝ ՀՀ Լոռու, 163-ը՝ ՀՀ Շիրակի և 30-ը՝ ՀՀ Արագածոտնի մարզերի բնակավայրերում), որի համար կպահանջվի մոտ 3.5 մլրդ. դրամ *(գումարը հաշվարկված է ֆինանսական աջակցության տրամադրման համար և բնակարանային ապահովման ուղղությունը բնակարանային շինարարություն դիտարկելու դեպքում այն կփոփոխվի՝ աճման միտումով),* որից ՀՀ 2019 թվականի բյուջեով նախատեսվել է 560.0 մլն. ՀՀ դրամ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով, որ.<br>- երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարաններով ապահովելու խնդիրն առավելագույն սեղմ ժամկետում լուծելու հարցը ներառված է, ինչպես ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N581-Ա, այնպես էլ ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 14-ի N65-Ա որոշումներով հավանության արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրերում:<br>- ՀՀ կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով Ծրագրի շահառու ճանաչված, սակայն Ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները դեռևս չբարելավված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պարտավորությունների կատարման ժամկետ էր սահմանվել 2020 թվականը, Առաջարկվում է՝<br>- 2020 թվականին ավարտին հասցնել Ծրագրի շահառու ճանաչված, սակայն Ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները դեռևս չբարելավված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պետական պարտավորությունների կատարումը,<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի շահառու ճանաչված, սակայն Ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները դեռևս չբարելավված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պետական պարտավորությունների կատարում:<br><br>**369.2 Ոչ հիմնական շինությունների քանդման և տարածքների ազատման, ինչպես նաև որպես ոչ հիմնական շինություն համարակալված, սակայն քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխանող շինությունների օրինականացմանն ուղղված մոտեցումների սահմանում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ օրենքի (14.02.2019թ. ՆԱԺՈ-002-Ն) 4.2 բաժնի վերջին պարբերության և «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 7-րդ բաժինների դրույթներից: |

Միջոցառման նպատակը՝ աղետի գոտու հետևյալ հիմնախնդիրների կանոնակարգումն է Աղետի գոտու քաղաքային բնակավայրերի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու և այդ շինություններում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման պետություն-մասնավոր գործակցության ծրագրերի մշակման համար համար նախադրյալների ստեղծումը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինությունների, ինչպես նաև այդ շինություններում բնակվող ընտանիքների վերաբերյալ ամբողջական և արժանահավատ տվյալներ առկա չեն, չկա նաև տեղեկատվություն ոչ հիմնական շինությունների վիճակի, տեղաբաշխման, օգտագործման նպատակի, այդ ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների՝ անօթևանի կարգավիճակում հայտնվելու հիմքերի վերաբերյալ:

ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի N1658–Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ (այսուհետ՝ Աշխատանքային խումբ), որին առաջադրվել են հետևյալ հիմնական խնդիրները՝

- երկրաշարժից հետո աղետի գոտու բնակավայրերում տեղադրված կամ կառուցված ժամանակավոր կացարանների՝ ըստ մարզերի և համայնքների բաշխվածության, պատկանելության, վիճակի, դրանցում բնակվող ընտանիքների թվի, այդ պայմաններում հայտնվելու պատճառների մասին տեղեկատվության (այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների, հանրային խմբերի ուսումնասիրությունների և հետազոտությունների) հավաքագրում և ամփոփում,
- հավաքագրված տեղեկատվության հիման վրա ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման՝ բնակարանային պայմանների բարելավման գործընթացի վերաբերյալ առաջարկությունների մշակում և այդ գործընթացում պետական պարտավորության ծավալների գնահատում,
- տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու և քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխանող շինություններն օրինականացնելու վերաբերյալ առաջարկությունների մշակում
- խնդրի լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափի հաշվարկում:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Աղետի գոտու քաղաքային բնակավայրերի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու և այդ շինություններում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման պետություն-մասնավոր գործակցության ծրագրերի մշակման համար համար նախադրյալների ստեղծման նպատակով իրականացնել ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի N1658–Ա որոշմամբ նախատեսված միջոցառումները:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Երկաշարժից հետո աղետի գոտու բնակավայրերում տեղադրված/կառուցված ոչ հիմնական շինությունների փաստագրման արդյունքների ամփոփում, դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցման վերաբերյալ առաջարկությունների մշակում, խնդրի լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափի հաշվարկում՝ պետական պարտավորության ծավալների գնահատում:

**370**

**Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի արդիականացում**

**<u>370.1 Ալ.Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի արդիականացման միջոցառումների ցանկ և ժամանակացույցի հաստատում՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացումը նախատեսվել է՝ հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 25-րդ կետերը, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը:

Միջոցառման նպատակն է Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի («Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ) տարածքային պայմանների բարելավումը և գործառույթների իրականացման կանոնակարգումը:

| | |
|---|---|
| | **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Թանգարան-ինստիտուտի տարածքը գտնվում է անբարեկարգ վիճակում, ինչպես նաև անհրաժեշտություն կա վերջինիս գործառույթների կանոնակարգման:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է մշակել թանգարան-ինստիտուտի տարածքային պայմանների բարելավման և գործառույթների իրականացման ծրագիր<br>**Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Արդի պահանջներին համապատասխան գործառույթներով հագեցած ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ: |
| **Ոստիկանություն** | |
| 371 | **371.1-371.3 Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման կազմակերպական նոր երաշխիքների ամրագրում**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է երթևեկության բնագավառում անվտանգության մակարդակը բարձրացնելու, չարամիտ և պարբերաբար կատարվող խախտումների կանխարգելման անհրաժեշտությամբ: Այն բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2019 թվականի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «2.2. Ներքին անվտանգությունը» բաժնից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված՝ տրանսպորտում և ճանապարհային տնտեսության բնագավառում մի շարք վարչական իրավախախտումների համար նախատեսված տուգանքները սոցիալական տարբեր խավերի վարորդների հետագա վարքի վրա թողնում են տարբեր ազդեցություն և ոչ միշտ է, որ բարձր տուգանքները նպաստում են ճանապարհատրանսպորտային պատահարների հիմնական պատճառ հանդիսացող իրավախախտումների ընդհանուր և հատուկ կանխարգելմանը: **Վերջին տարիների վիճակագրությունը փաստում** է, որ ճանապարհատրանսպորտային պատահարների արդյունքում զոհված և վնասվածքներ ստացած անձանց թիվը աճի միտում ունի: Մասնավորապես, 2016 թվականին ՃՏՊ հետևանքով զոհված և վնասվածքներ ստացած անձանց թիվը եղել է համապատասխանաբար **267 և 4451**, **2017** թվականին՝ **279 և 5179** , իսկ **2018** թվականին արդեն այս թիվը հասել է **343-ի և 5950**-ի: Ճանապարհատրանսպորտային պատահարները կանխարգելելու նպատակով ՀՀ ոստիկանության կողմից արդեն իսկ նախապատրաստվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համապատասխան օրինագիծ և ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ: Օրինագծով առաջարկվել է վերանայել երթևեկության ոլորտում թույլ տրվող վարչական իրավախախտումների համար նախատեսված տուգանքների չափերը, միաժամանակ ներդնելով տուգանային (ոչ նյութական) միավորների համակարգ (տուգանային միավորը որպես լրացուցիչ վարչական տույժ նախատեսելու եղանակով): Օրինագծի ընդունմանը զուգահեռ անհրաժեշտ է լինելու իրականացնել տուգանային միավորների ավտոմատ հաշվարկման համակարգի ծրագրային ապահովումը: Բացի այդ, քաղաքացիներին տրանսպորտային միջոցների հաշվառման ընթացքում ոստիկանության կողմից մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով նախատեսվում է ստեղծել այնպիսի համակարգ, որի միջոցով քաղաքացին կկարողանա տրանսպորտային միջոցը հաշվառել, ինչպես նաև տրանսպորտային միջոցը շահագործող անձին ամրակցել նաև էլեկտրոնային՝ առցանց եղանակով՝ առանց հաշվառման ստորաբաժանում այցելելու:<br>Կարիք է առաջանալու նաև վերապատրաստել Ոստիկանության համապատասխան ծառայողներին՝ նոր համակարգի շահագործման համար անհրաժեշտ կարողություններ և հմտություններ սովորեցնելու համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառման շրջանակում առաջարկվում է ներդնել վարորդների նկատմամբ տուգանային (ոչ նյութական) միավորների ավտոմատ հաշվարկման համակարգ՝ հիմնված Ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության գործունեության վրա: Միաժամանակ, անհրաժեշտ կլինի իրականացնել էլեկտրոնային եղանակով տրանսպորտային միջոցների հաշվառման համակարգի համար անհրաժեշտ ծրագրային ապահովում: Միջոցառման իրականացման շրջանակներում Ոստիկանության համապատասխան |

| | |
|---|---|
| | պարեկային տրանսպորտային միջոցները կկահավորվեն անհրաժեշտ սարքավորումներով և համակարգերով, ինչի համար (առկա 300 տրանսպորտային միջոցի հաշվարկով) կպահանջվի 1.135.500,0 հազ. դրամ: Ֆինանսավորումը նախատեսվում է հատկացնել ՀՀ պետական բյուջեից՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում: ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի անհրաժեշտություն չի առաջանալու:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ՀՀ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում կներդրվի նոր համակարգ, որը թույլ կտա երաշխավորել անվտանգության առավել բարձր մակարդակ առանց խիստ տուգանքներ կիրառելու: Պատժիչ ֆունկցիայի ուժեղացման փոխարեն տուգանային (ոչ նյութական) միավորների համակարգը միտված կլինի ճանապարհային երթևեկության ոլորտում թույլ տրվող իրավախախտումների կանխարգելմանն ու անվտանգության նոր երաշխիքների ամրագրմանը: Էլեկտրոնային եղանակով տրանսպորտային միջոցները հաշվառելու, ինչպես նաև տրանսպորտային միջոցը շահագործող անձին էլեկտրոնային եղանակով ամրակցելու հնարավորության նախատեսում թույլ կտա նվազեցնել վարչարարության ընթացքում պետական մարմնի կողմից ծախսվող ռեսուրսներն ու ժամանակը, բարձրացնել քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը: |
| 372 | **372.1-372.3 Պարեկային ոստիկանության՝ շարժական շուրջօրյա պարեկային միասնական ստորաբաժանման ստեղծում**<br><br>**1.Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Պարեկային ոստիկանության՝ շարժական շուրջօրյա պարեկային միասնական ստորաբաժանման ստեղծումը նպատակ ունի օպտիմալացնելու համայնքային ոստիկանության և օպերատիվ հետախուզական ստորաբաժանումների աշխատանքը, բարձրացնելու սեփականության դեմ ուղղված և հատկապես հանրային վայրերում իրավախախտումների կանխարգելման արդյունավետությունը, առավել օպերատիվ արձագանքելու իրավախախտումներին և պատահարներին: Միջոցառման իրականացումը համահունչ է ՀՀ Ազգային ժողովի 2019 թվականի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրին և բխում է վերջինիս «2.2. Ներքին անվտանգությունը» բաժնից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Ներկայումս ոստիկանության պարեկային (պարեկապահակետային և ճանապարհապարեկային) ծառայությունները չունեն բավարար լիազորություններ և տեխնիկական հագեցվածություն իրավախախտումների առավել արդյունավետ կանխարգելման համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հանցագործությունների և այլ իրավախախտումների առավել օպերատիվ ու արդյունավետ կանխարգելման համար առաջարկվում է ոստիկանությունում ստեղծել շարժական շուրջօրյա պարեկային նոր ստորաբաժանում (ծառայություն):<br>Պարեկային ծառայությունը հիմնադրելու և կազմակերպչական գործունեությունը ապահովելու համար պահանջվելու է 42.32 մլն. եվրոյի չափով ծախսեր, որից 6.44 մլն. եվրոն ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծման, կահավորման, պահպանման և տարեկան սպասարկման համար:<br>Երևան քաղաքում պարեկային ծառայության են ներգրավվելու 250 հատուկ կահավորված տրանսպորտային միջոցներ, իսկ մարզերում՝ 430, ընդհանուր՝ 680:<br>Նախատեսվում է Երևան քաղաքում պարեկային ծառայությունը կազմակերպել պարեկային ծառայության նորաստեղծ գնդի ուժերով և միջոցներով՝ 1399 ծառայող, իսկ մարզերում՝ 1248 ծառայող, ընդհանուր՝ 2647 ծառայողներ:<br>Միջոցառման իրականացումը նախևառաջ ենթադրում է Ոստիկանության պարեկային ծառայության ենթակառուցվածքի՝ օպերատիվ կառավարման կենտրոնի ձևավորում, տեխնիկական վերազինում, ռադիոկապի համակարգի արդիականացում, պարեկային տրանսպորտային միջոցների ձեռքբերում և կահավորում: Օպերատիվ կառավարման ժամանակակից կենտրոնի ձևավորման արդյունքում, մասնավորապես, հանցագործությունների և պատահարների վերաբերյալ հաղորդումների հավաքագրման ժամանակակից համակարգի ստեղծման միջոցով, կապահովվի Ոստիկանության ուժերի և միջոցների արդյունավետ կառավարում: Օպերատիվ կառավարման կենտրոնի հնարավորությունները թույլ կտան նաև հանցագործության դեպքերի քրեաբանական վերլուծության և կանխատեսման համար կիրառել համապատասխան ծրագրային միջոցներ, ինչն նույնպես կնպաստի |

| | |
|---|---|
| | հանցագործությունների կանխարգելման (նախականխման) արդյունավետության բարձրացմանը:<br>Միջոցառման շրջանակներում պարեկային ոստիկանության ծառայողները կապահովվեն անհատական պաշտպանության միջոցներով և նոր մոդելի հրազենով, կստեղծվի պարեկային մասնագիտացմամբ ոստիկանների մասնագիտական որակավորման համար նախատեսված ուսումնական ծրագիր:<br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Պարեկային նոր ծառայության ստեղծումը կնպաստի քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի առավել արդյունավետ պաշտպանությանը, իրավախախտումներին և հանրորեն վտանգավոր դեպքերին արագ (օպերատիվ) արձագանքմանը, իրավախախտումների՝ հատկապես սեփականության դեմ ուղղված և (կամ) հանրային վայրերում հանցագործությունների կանխարգելմանը, երթևեկության կազմակերպմանը: |
| 373 | **373.1-373.2 «Ոստիկանության մասին» նոր օրենքով ոստիկանության լիազորությունների այնպիսի շրջանակի սահմանում, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ կանխարգելել մարդու իրավունքների նկատմամբ հանցավոր և այլ ոտնձգությունները, քաղաքացիներին աջակցել իրենց խախտված իրավունքների վերականգնման գործում, խթանել համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Ոստիկանության մասին» ՀՀ գործող օրենքը գլխավորապես հանդիսանում է պետական մարմնի հիմնադիր փաստաթուղթ, որը 2001 թվականի դրությամբ խիստ արդիական էր, քանի որ ուներ համակարգաստեղծ նշանակություն: Հասարակական հարաբերությունների զարգացման ներկայիս մակարդակը և հակաիրավական երևույթներին հակազդելու՝ հասարակության ավանդաբար մեծ սպասելիքները ոստիկանությունից, թելադրում են ունենալ ոչ միայն հիմնադիր, այլև՝ իրավապահական «ներուժ» ունեցող որակապես նոր իրավական ակտ: Նոր օրինագծի մշակման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ Ազգային ժողովի 2019 թվականի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «2.2. Ներքին անվտանգությունը» բաժնից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>«Ոստիկանության մասին» գործող օրենքը, որպես ոստիկանության իրավապահ գործունեության ընթացքում ծագող որոշակի հարաբերությունների կարգավորիչ, ունի նոմինալ ֆունկցիա: Պատճառն այն է, որ իրավապահ գործունեության հիմնական ուղղությունները կարգավորվում են առանձին օրենսդրական ակտերով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով: Բացի այդ, «Ոստիկանության մասին» օրենքը ոստիկանության հիմնական խնդիրներից է համարում հանցագործությունների նախականխումը, կանխումն ու խափանումը, սակայն այս խնդրի կենսագործումն ապահովող արդյունավետ իրավակարգավորումներն օրենքում բացակայում են: Սահմանված չեն նաև հասարակական կարգի պահպանման և հասարակական անվտանգության ապահովման ոլորտում ոստիկանության այնպիսի լիազորություններ, որոնք ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, այնպես էլ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նույնպես չէին կարող ամրագրվել: Այսինքն՝ առկա է օրենսդրական բաց, որի հաղթահարման նպատակով անհրաժեշտ են իրավական նոր կարգավորումներ:<br>Մինչ օրս օրենքում 12 անգամ կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որոնցից ամենաէականը պայմանավորված էր 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններից հետո «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ միջազգային իրավական փաստաթղթերի պահանջներին համապատասխանեցնելու և այդ ժամանակահատվածում հանրությանը հուզող օրակարգային մի շարք հարցերի իրավական լուծումներ տալու անհրաժեշտությամբ: Մյուս փոփոխություններն էական բնույթ չեն ունեցել և ոստիկանության գործունեության վրա որոշիչ ազդեցություն չեն թողել:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառման շրջանակում նախապատրաստվելիք նոր օրենքով լրացվելու են Ոստիկանության խնդիրները (գործունեության հիմնական ուղղությունները): Մասնավորապես, ամրագրվելու է անհայտ կորած անձանց, հափշտակված գույքի, ուրիշի կողմից ապօրինի տիրապետվող տրանսպորտային միջոցների, հանցանք կատարելու մեջ կասկածվող (ոչ թե կասկածյալ) և այլ կատեգորիայի անձանց որոնման (հետախուզման) գործառույթը, որպես ինքնուրույն խնդիր է սահմանվելու իրավախախտումներից և պատահարներից տուժած, անօգնական կամ կյանքի |

համար վտանգավոր իրավիճակներում հայտնված անձանց օգնության ցուցաբերումը և այլն: Առաջին անգամ օրենքով ամրագրվելու են ոստիկանության լիազորությունները հանցագործությունների պրոֆիլակտիկայի և իրավախախտումների խափանման բնագավառում: Սահմանվելու է ոստիկանության բաժին բերված անձի՝ փաստաբանին զանգելու իրավունքը, հստակեցվելու են իրավաբանական օգնություն ստանալու մեխանիզմները ոստիկանության բաժիններում, նախատեսվելու են խոշտանգումների կանխարգելմանն ուղղված նոր կարգավորումներ, հստակեցվելու են ոստիկանության կողմից մշակվող անձնական տվյալների շրջանակը, սահմանվելու են հանցագործության մեջ չկասկածվող, սակայն օրենքով որոշակի պարտականությունների կատարումից խուսափող անձանց վարչական կարգով բերման ենթարկելու դեպքերը: Կատարելագործվելու են ոստիկանության գործունեության հրապարակայնության, հասարակական վստահության և քաղաքացիներից աջակցություն ստանալու իրավական մեխանիզմները, դրվելու են ժամանակակից տեխնիկական համակարգերի և տեխնոլոգիաների օգտագործման իրավական հիմքերը:

Նոր օրենքի շրջանակներում կլուծվի նաև Ոստիկանության զորքերի ապառազմականացման հարցը. Ոստիկանության զորքերը կգործեն որպես ոստիկանական ստորաբաժանում, որը օրենքով սահմանված կարգով կմասնակցի զանգվածային անկարգությունները կանխելու և խափանելու գործին, հակաահաբեկչական միջոցառումներին, ռազմական և արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելուն, որոնողական-փրկարարական աշխատանքներին:

**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացման շրջանակներում նոր օրենքի ընդունմամբ կսահմանվի ոստիկանության լիազորությունների այնպիսի շրջանակ, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ կանխարգելել մարդու իրավունքների նկատմամբ հանցավոր և այլ ոտնձգությունները, քաղաքացիներին աջակցել իրենց խախտված իրավունքները վերականգնելիս, խթանել համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ:

374

**374.1-374.2 Հայաստանի Հանրապետության ոստիկանության զարգացման ռազմավարության մշակում**

**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացումը բխում ՀՀ Ազգային ժողովի 2019 թվականի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրով նախանշված Կառավարության որդեգրած քաղաքականությունից: Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրից բխող՝ ոստիկանության 5-ամյա միջոցառումների ծրագրում նախատեսվում են 1 իրավաստեղծ («Ոստիկանության մասին» նոր օրենքի նախագծի ընդունում) և 2 կազմակերպական միջոցառումներ (Օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծում և Պարեկային ծառայության հիմնադրում), որոնք շրջադարձային նշանակություն են ունենալու առաջիկա հինգ տարիների ընթացքում ոստիկանության զարգացման համար:

Ոստիկանության գործունեության ոլորտը ընդգրկում է հասարակական անվտանգության առանցքային մասը, որի արդյունավետությունը պայմանավորված է նաև ոստիկանության կառավարման լիազորությունների ապակենտրոնացման, ոստիկանությանն ոչ բնորոշ լիազորությունների օտարման, արդյունավետ կառուցվածքի, օպտիմալ թվակազմի, բավարար լիազորությունների, հաշվետվողականության, թափանցիկության և վերահսկողության հիմնահարցերի լուծման հետ:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**

Ոստիկանությունում բարեփոխումների անհրաժեշտության մասին հայտարարվել է բազմիցս և տարբեր ժամանակներում: Բարեփոխումները պետք է ունենան սկիզբ և ավարտ, իսկ կայուն և մշտական բնույթ պետք է կրի ոստիկանության գերատեսչական զարգացման իրավական քաղաքականությունը: Ընդ որում, քաղաքականությունը և դրանից բխող բարեփոխումները պետք է հստակ սահմանազատվեն միմյանցից, բայց նաև փոխկապակցված լինեն:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է մշակել ոստիկանության զարգացման գերատեսչական ռազմավարություն, որի դրույթները հավանության արժանանալու դեպքում կամրագրվեն կառավարության քաղաքականության մեջ:

| | |
|---|---|
| | **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ոստիկանության զարգացման ռազմավարության մշակումը հնարավորություն է տալու բացառել հակասությունները և անհամապատասխանությունները տարբեր, սակայն ոստիկանության բնագավառի հետ հատվող ոլորտների հիմնադրույթների հետ, ինչպես նաև սկզբունքների և հիմնական ուղղությունների մակարդակով ամրագրել բարեփոխումների հիմնական ուղղվածությունն ու ակնկալվող արդյունքները, իրականացվելիք իրավաստեղծ և կազմակերպական միջոցառումների ընթացքը, ապահովել դրանց համակարգվածությունը, փուլայնությունը և վերահսկելիությունը: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ